Google

Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.

**Правила пользования**

Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:

- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.

**О программе**

Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу http://books.google.com.

THE UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES
THE UNIVERSITY OF MICHIGAN
ARTES SCIENTIA VERITAS
1817
Digitized by Google

# ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

# ՆԵՐՍԻՍԻ

---

## ԼԱՄԲՐՈՆԱՑՒՈՅ

Digitized by Google

Digitized by Google

62 738 բ

ՎԱՐՔ

# ՍՐԲՈՑ ՀԱՐԱՆՑ

ԵՒ

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆՔ ՆՈՑԻՆ

ԸՍՏ

ԿՐԿԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

ՆԱԽՆԵԱՑ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ԳՐԱԴԱՐԱՆ
444/2



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄԻ 1855 ՌՅԴ

Digitized by Google

Digitized by Google

# ՎԱՍՆ ԱՐԻՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՄԲԵՐՈՒԹԵԱՆ

Եղբայր՝ ոմն 'ի խուցմն խաղէր յորժամ նստէր առանձինն, և երթեալ առաց ցհայրն Թէոդորոս փերմացի։ Ասէ ցնա ծերն. երթ խոնարհեցո զխորհուրդս քո և հնազանդեաց լինել ընդ եղբարս։ Եւ երթեալ 'ի լեառնն առ եղբարս լինէր։ Եւ դարձեալ եկեալ առ ծերն ասէ ցնա՝ թէ ոչ և ընդ եղբարսն կարեմ համբերել։ Ասէ ցնա ծերն. եթէ առանձինն ոչ համբերես և ընդ եղբարսն ոչ կեաս, զի՞ ելեր և եղեր միայնակեաց. բայց սակայն ասա ցիս՝ քանի՞ ժամանակս ունիս 'ի ձևդ յայդ։ Ասէ ցնա. ութ ամ։ Ասէ ցնա ծերն. ահա ունիմ ես զձևս զայս զեօթանասուն ամ, և ոչ մի օր ոչ է լեալ ինձ հանգիստ, և դու ութ ամիդ հանգիստ խնդրես։ Զայս լուեալ ծերոյն զօրացեալ գնաց։

Այր՝ ոմն ծեր որ ունէր աշակերտ լաւ, և նեղեալ երբեմն եհան զնա արտաքոյ դրացն հանդերձ մախաղաւն իւրով։ Իսկ եղբայրն համբերեաց նստելով առ դրանն։ Եւ բացեալ ծերոյն եգիտ զնա զի նստէր առ դրանն, և

1 Աբ հայրն Թէոդորէ փերմեցին գնացեալ ոմն եղբայր պատմեաց նմա զգործս իւր, քանզի միայն նստէր 'ի խցի և չփոթէր միշտ։ Ասէ ցնա հայրն. գնա խոնարհեա զխորհուրդս քո և զմիտս, և բնակեա ընդ այլում եղբարց։ Եւ նա գնացեալ եկաց այլ եղբարս և կայր ընդ նմա։ Եւ դարձեալ եկն առ ծերն և ասէ. և ոչ ընդ այլում կարեմ չփոթեմ, հայր։ Ասէ ցնա ծերն. եթէ միայն կալով ոչ հանգչիցես, նոյնպէս և ոչ ընդ այլոց կալով, ապա ընդէ՞ր եղեր միայնակեաց. մի՞ գիտես զի կրօնաւորութիւն է համբերել միշտ և նեղութեանց. ասա ինձ քանի՞ ամ ունիս 'ի սուտակդ յայդ։ Ասէ եղբայրն. ութ ամք են։ Ասէ ցնա ծերն. Թող զայդ, եղբայր, ունիմ ես ութսուն ամ 'ի սուտակս յայս և 'ի ձևս և ոչ գտի մի օր հանգիստ, և դու, յութ ամի զիարդ կամիս գտանել հանգիստ։ Իբրև լուաւ զայս եղբայրն, գնաց հաստատեալ սրտիւ կատարեաց [illegible]։

2 Իսկ եղբայր ոմն պատմէր մեզ եթէ էր ծեր ոմն 'ի Սկիտէ և ունէր նա աշակերտ բարի և առաքինի յոյժ. յաւուր միում կարճամտեալ ծերոյն վարեաց արտաքս զաշակերտն իւր գնալ [illegible]։ Իսկ եղբայրն հնազանդեալ ծերոյն՝ նստեալ արտաքոյ դրան ծերոյն համբերէր։ Իբրև եբաց ծերն զդուռն, եգիտ զնա նստեալ զառաջին և հեղ-

Digitized by Google

արկեալ ծերոյն զինքն առ ոտս նորա ասաց. ո՛վ Պետրէ, խոնարհութիւն երկայնմտութեան քո յաղթեաց իմում նեղասրտութեանս. արդ եկեալ 'ի ներքս՝ յայսմհետէ դու ծեր և հայր, և ես մանուկ և աշակերտ, վասն զի գործովք անցուցեր զծերութեամբս իմով*:

ԱՂԲԱՅՐ՝ ոմն անկաւ 'ի փորձութիւն, և 'ի նեղութենէն կորոյս զկարգն իւր զմենակեցութեան. և դարձեալ կամեցաւ սկիզբն առնել, և տեսանէր զնեղութիւնս և խափանէր՝ զայս ասելով. Երբ ունիմ զիս դարձեալ գտանել նոյնպէս որպէս էի: Եւ 'ի վատասրտութենէն ոչ արար սկիզբն գործոյն, այլ պատմեաց ծերոյ ումեմն զիրսըն, և ած նմա առակ ծերն այսպիսի ինչ: Այր ոմն հեղգացաւ յանդաստանի իւրում, և լցաւ անդաստանն փշովք և այլովք նիւթօք. առաքեաց զորդի իւր զկնի և ասաց՝ երթ մաքրեա զանդաստանն: Եւ նորա ելեալ և տեսեալ զբազմութիւն նիւթոյն որ բուսեալ էին՝ երկեաւ և ասէ. Երբ ունիմ ես մաքրել զայս ամենայն. ածեալ 'ի քուն եմուտ: Զայս առնէր 'ի բազում աւուրս: Ելեալ հայր նորա, գտեալ զնա և տեսեալ զի ոչ ինչ էր

տարաւ զնա 'ի ներքս և անկաւ յոտս նորա և ասէ. ով որդեակ, խոնարհութիւն քո յաղթեաց կարճմտութեանս իմոյ. եկ, որդեակ, զի յայսմհետէ քեզ կոչեսցի ծեր և հայր, և ինձ աշակերտ և տղայ, քանզի արին և համբերողն իցէ ծեր:

* Այս օրինակ գործելով 'ի հին Թարգմանութեան. Ծեր ոմն բարկացաւ աշակերտին և եհան արտաքս 'ի խցէն մախացուցեալ իւրով. և նա ելեալ նստէր 'ի դուրս խցին բազում ժամս: Եւ յորժամ ել ծերն և ետես, անկաւ յոտս նորա և ասէ. դու վարդապետ, որդեակ, և ես աշակերտ յայսմհետէ, զի խոնարհութիւն է մեծ քան զամենայն և համբերութիւն՝ որով ած փառաւորի յաւիտեանս:

Եղբայր ոմն անկեալ եղև 'ի փորձութիւն մեղաց, և 'ի բազում տրտմութենէն լքեալ և եթող զկանոնն կրօնաւորական. և յորժամ կամէր սկսանել դարձեալ, ոչ տայր թոյլ գործել տրտմութիւն սրտին, այլ ասէր 'ի միտ. Երբ կարասցեմ լինել այնպէս որպէս էի: Եւ այնու վհատէր և ոչ կարէր սկսանել 'ի կանոն միանձնական: Եւ յարուցեալ գնաց առ ծեր ոմն և պատմեաց նմա զամենայն անցսն իւր: Իբրև լուաւ ծերն զամենայն վշտագնութիւն նորա, եբեր օրինակ նմա այսպէս և ասէ. մարդ ումեմն էր անդաստան, և 'ի ծուլութենէ իւրմէ կորուսեալ եղև այն լուր փշալից անտառ, և լի եղև փշով և տատասկով: Ցետոյ կամեցեալ մարդն այն սրբել և կազմել զնա, ասէ ցորդի իւր. գնա, որդեակ, սրբեա զարտն զայն: Իսկ նա գնաց, և իբրև ետես զբազմութիւն փշոյն՝ երկմտեալ վհատեցաւ և ասէ. Երբ կարասցեմ սրբել զսա: Եւ անկեալ անդ ննջեաց մինչև ցերեկոյն. զայս արար զաւուրս բազումս: Եւ ապա գնացեալ հայրն մանկանն տեսանել թէ զինչ գործեալ իցէ.

Digitized by Google

գործեալ՝ ասէ ցնա. զի՞նչ զայդ տառապիր զի ոչ ինչ գործեցեր։ Եւ նա ասէ՝ եթէ յորժամ կամիմ զի գործեցից, զարհուրիմ տեսանելով զբազմութիւն անտառիդ։ Եւ ասէ ցնա. որդեակ, հաւասար անկողնոյդ քում արա յաւուր միում զգործդ։ Եւ նորա լուեալ արար այնպէս։ Եւ իբրեւ սկիզբն արար, հանապազօր յաւելոյր 'ի գործն, եւ 'ի սակաւ ժամանակս սրբեցաւ այնպիսի անդաստան։ Որդ այդպէս եւ դու մի ինչ զարհուրիր, այլ արա սկիզբն, եւ ած շնորհօքն իւրովք հաստատէ զքեզ յառաջին կարգն. եւ այսպէս արարեալ յառաջադիմեսցես 'ի փորձութենէդ։

ԱՍԱՑ՝ ծերն. եթէ եկեսցէ մարդոյ փորձութիւն յամենայն կողմանց բազմացեալ զի նեղիցի եւ տրտնջեսցէ, մի 'ի փորձութեան ամենայն սիրելեացն 'ի բաց դարձցին 'ի նմանէն։ Եւ պատմեաց այսպէս. էր ոմն 'ի խրձիթան եւ եկն 'ի վերայ նորա փորձութիւն. եւ եթէ տեսանէր զոք զնա 'ի սիրելեաց նորա եւ եթէ այլ զոք, ոչ կամէր ողջոյն տալ նմա եւ ոչ մատուցանել զնա 'ի տուն. եւ եթէ երբեք պէտք լինէին հացի, ոչ ոք տայր նմա փոխ. եւ երթեալ 'ի հունձս եւ եկեալ՝ ոչ կայր հաց 'ի խղի նորա։ Սովորութիւն էր 'ի խրձիթան, որք թէ գան 'ի հնձոց՝ ճաշակեն յեկեղեցւոջ. եւ երթեալ յեկեղեցին 'ի շաբաթուջ՝ ոչ ոք արգել զնա, եւ եկեալ 'ի տուն իւր՝ գոհանայր զած։ Եւ տեսեալ ած զհամբերութիւն նորա՝

նորա, եւ եգիտ զի բնաւ ոչ աշխատեալ էր, եւ ասէ. զի՞նչ է այս, որդեակ, զի ոչ ինչ գործեալ է քո։ Ասէ մանուկն ցհայրն. յորժամ եկեալ տեսանեմ զբազմութիւն փշոցս՝ զարհուրիմ, եւ 'ի յահէ անտի թմրեալ ննջեմ ցերեկ։ Ասէ հայրն ցնա. որդեակ, յամենայն աւուր չափեալ՝ գործեա անկողնին քեզ եւ անդ ննջեա, եւ ուղղեսցին գործք քո։ Իսկ որդին արար ըստ բանին հօրն, եւ 'ի սակաւ աւուրս սրբեցաւ անդաստանն այն, եւ սերմանեալ ցորեան՝ առին բազմապատիկ զարդիւնս կենաց 'ի նմանէ։ Այսպէս արասցես եւ դու, եղբայր. սակաւիկ մի աշխատեսցիս եւ մի ձանձրասցիս, եւ ած ողորմութեամբ իւրով հանցէ զքեզ յառաջին չափ քո։ Իսկ եղբայրն իբրեւ լուաւ զայս 'ի ծերոյն, նստաւ 'ի խցի իւրում համբերութեամբ եւ արար որպէս ուսաւ, եւ եգիտ զհանգիստ։

՛ Ասաց հայրն Գերեմոն. եթէ գայցէ փորձութիւն 'ի վերայ մարդոյ եւ յամենայն կողմանց բազմանայցեն վշտք նորա, որպէս զի վհատեալ տրտնջեսցէ։ Եւ ասէր. եղբայր ոմն կայր 'ի սենեկին, եւ եկն 'ի վերայ իւր փորձութիւն, զի ամենեքեան ատէին զնա, եւ նա զնոսա ատէր. թէ տեսանէր զոք՝ ոչ հարցանէր զնա, եւ ոչ ոք թողոյր զնա 'ի սենեակ իւր. եւ եթէ կարօտէր հացի՝ ոչ ոք տայր նմա, եւ մինչ գայր 'ի հնձոց՝ ոչ ոք տանէր նմա սէր որպէս օրէն էր. 'ի վերայ այսր ամենայնի գոհանայր

Digitized by Google

առ 'ի բաց 'ի նմանէ զփորձութիւնն ։ Եւ ահա բախեաց ոմն զդուրս նորա՝ որ ունէր ուղտ մի ըն հացիւ յԵգիպտոսէ տանել բերել. և սկսաւ լալ և ասել՝ թէ, չեմ արժանի նեղութե ։ Եւ իսկոյն մերժեցաւ փորձութիւն, կալեալ զնա և հանգուցին. և այլ եղբարքն աղաչէին զի երթիցէ 'ի խուցս նոցա ։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ծեր և ասէ. եթէ կամիցիմ կատարել իրս ինչ, և լինիցի արգելումն ինչ և խափանեսցէ զիս 'ի գործոյն՝ բարի է համբերել մինչև կատարեցից, եթէ թողից 'ի բաց ։ Ասէ ցնա ծերն. եթէ համբերեսցես աղօթելով առանց նեղելոյ՝ բարի է համբերել; ապա եթէ եկեսցէ նեղսրտութի՝ թող 'ի բաց ։

Ասէ՝ երբեմն հայրն Մակար սկիւթացի 'ի Տերենութ և եմուտ 'ի բնակս ուրեմն ննջել. և էին անդ հին մարմինք մեռելոց հեթանոսաց, և առեալ եդ ընդ գլխովն որպէս սնարս, զի հանգիցէ փոքր մի ։ Իսկ դիւացն տեսեալ զնորա զքաջութիւնն, նախանձեցան և կամեցան զնա զարհուրեցուցանել ։ Կոչէր որպէս թէ զկնոջ անուն և ասէր. այս անուն, եկ ընդ մեզ 'ի բաղանիս ։ Տուաւ այլ դև 'ի ներքոյ նորա՝ որպէս թէ 'ի մեռելոյն՝ և ասէ. օտար ունիմ 'ի վերայ իմ և ոչ կարեմ գալ ։ Իսկ ծերն ոչ զարհուրեցաւ, այլ համարձակեալ հարկանէր զնա և ասէր. արի երթ 'ի խաւարն եթէ կարես ։ Եւ զայս

զնոյ ։ Եւ իսկոյն եկեալ առեր զհամբերութիւն նորա, երթալ 'ի նմանէ զպատերազմն զայն ։ Եւ ժամանակին բախեաց ոմն զդուռն նորա որ ունէր բարձեալ յուղտ սաղ հաց Եգիպտոսէ և տանել. տալով զհացս զդոյս ։ Եւ առեալ զհացն գոհացաւ զաստուծոյ, բայց տրտմեցաւ յոյժ և ասաց. տէր, ոչ եմ արժանի համբերել այցելութեանդ վասն անուան քո, վասն այսպիսի բարձեալ զնեղութիւնս իմ ։ Եւ առեալ եկեր 'ի հացէն և գոհացաւ, քանզի 'ի շնձոյ եկեալ հաց ոչ ունէր ։ Եւ իսկոյն անդ պատերազմն, սկսան ամենեքեան սիրել զնա ։ Այսպէս համբերեալ էին և սպասեալ էին 'ի նեղութիւնս և 'ի վիշտս երանելիքն ։

։ Ասէին երբեմն հայրն Մակարիոս 'ի Սկիւթեայ 'ի Տերենութ. և 'ի գնալն իւրում եմուտ 'ի տաճար կռոց, որ էր ամայի. զի ննջեսցէ 'ի գիշերի. և էին անդ ոսկերք չորացեալք հեթանոսաց թաղեալ յոյժ ։ Եւ առեալ գլուխ մի չոր 'ի նոցանէ, եդ ընդ գլխովն իւր 'ի սնարս և ննջեաց 'ի վերայ նորին ։ Իսկ դևքն իբրև տեսին զհամարձակութիւն նորա և զքաջութե, նախանձեցան յոյժ և հնարեցան երկեցուցանել զնա այսպէս ։ Սկսան դևքն գոչել ձայնիւ և ասէին ցգլուխն այն. այս անուն կին դու, արի գնասցուք 'ի բաղանիս ։ Իսկ դևն 'ի ներքոյ գլխոյն պատասխանի ետ և ասէ. օտար ոմն ննջեալ կայ 'ի վերայ իմ և կոխեալ փակեալ զինեն, ոչ կարեմ յառնել և գալ ընդ ձեզ ։ Իսկ ծերն առանց երկիւղի հարկանէր 'ի վերայ ոսկերին և ասէր. արի

լուեալ դիւացն` աղաղակեցին 'ի ձայն մեծ և ասացին. յաղթեցեր մեզ: Այլ փախեան ամօթալից:

ԵՐԲԵՄՆ շինէր հայրն Մոյի փոքր տուն վասն ջերմ առնելոյ, և ոչ կարէր շինել, և դարձեալ աւերէր. և դիտէր Տայխս և ոչ ասէր նմա: Ապա զկնի ասէ ցնա Տայխս. կամիս այսպէս առնել զդա, հայր: Իսկ եհար զնա և ասէ. ես ոչ գիտէի զդա այդպէս առնել:

ԶՈԳԱՒ` երբեմն Աբրահամ աշակերտ հօրն Սիսոյ 'ի պատարաւորութեն նմա, և 'ի բազում աւուրս ոչ կամէր յայլմէ ումեքէ սպասաւորել առնելով` եթէ այլում մարդոյ ոչ առնեմ ընդ իս սովորութիւն աւանց եղբօրն իմոյ: Այլ ոչ կալաւ յանձին մինչև եկն աշակերտն իւր` հանգերելով աշխատութեամբ:

ԱՍԷԻՆ` վասն հօրն Գերեմնի 'ի Սկիւթ` թէ այր նորա 'ի մէջնն էր և հեռագոյն էր յեկեղեցւոյն քառասուն մղոնաւ. և այսպէս տանէր զձեռագործ իւր, և երկու սափոր ջրոյ փոխ առ փոխ համբառնալով տանէր 'ի խուցն իւր և նստէր խաղաղութեամբ:

ԱՅՐ` միայնակեաց առ միաբանակեացս զինն ամ պատրաստեալ և հանապազ պատերազմեալ` պատրաստէր զմախաղ իւր ընդ երեկս ասելով` եթէ վաղիւն գնամ աստի. և իբրև լինէր առաւօտ` ասէր 'ի խորհուրդս իւր. բռնադատեցից զիս և արգելից առ օրս վասն տեառն:

և գնա թէ կարող ես` 'ի խուցդ տրտմջին, գև գու: Իբրև լուան դևքն, աղաղակեալ բարձին և ասեն. յաղթեցեր մեզ Մակարէ, յաղթեցեր:

։ Գնաց երբեմն աշակերտ հօրն Սիսոյի Աբրահամ 'ի պատառաւորութեն և յամենայ աւուրս բազումս. իսկ հայրն զայլ ոք ոչ ընկալաւ առ ինքն զի սպասաւորեսցէ իւրն, և ասէր. ոչ է սովոր ոք 'ի տուն իմ, բայց միայն եղբայրն իմ: Եւ այնպէս կեցաց զաշխատութիւն մինչ եկն նա. և ոչ հաւանեաց անժուժկալութեն սպասաւորել յայլոց, այլ համբերութեն եկաց մինչև եկն եղբայրն:

։ Ասէին և վասն հօրն Գերեմնոյ սկիւթացւոյ` եթէ էր այր նորա հեռի յեկեղեցւոյն իբրև մղոնս քառասուն, և 'ի ջրոյ և 'ի մայրենաց էր հեռի մղոնս երկոտասան. այսպիսի աշխատութեն բերէր զգործս իւր յայրն. տանէր և սափորս ջրոյ, և մի 'ի շաբաթու բերէր ջուր և հանդարտէր, և համբերութեն կատարէր զկեանս իւր յուսով:

։ Իսկ ոմն եղբայր պատերազմէր զինն ամ զի ելցէ 'ի միաբանակեցաց վանաց ժողովոյ եղբարցն, և հանապազ պատրաստէր զմախաղ իւր գնէր մերձ իւր զի ելցէ 'ի վանացն անտի: Եւ իբրև լինէր երեկոյ, ասէր` առաւօտուն ստուգապէս գնացից աստի. և առաւօտուն ասէր` կացից այսօր վասն սիրոյն Այ և յայլում գնացից. և եկաց այսպէս նա զամս ինն: Եւ ետես Տէր զհամբերութիւն նորա և եհան 'ի նմանէ զխորհու-

Այս իսկ և կատարեցաւ նմա առ, թեթևացոյց Ած զպատերազմն 'ի նմանէ վասն համբերութեն նորա*։

ԱՍԱՑ՝ հայրն Ամոն՝ եթէ զչորեքտասան ամ եղէ 'ի Սկիւթ պաղատելով առաջի տեառն 'ի տուէ և 'ի գիշերի և յամ ժամ, զի շնորհեսցէ ինձ յաղթել երկրի։

ԱՍԷ՝ աբբայ Աղիա՝ եթէ ոմն ծեր օթեվանս կալաւ 'ի տաճար կռոցն, և եկեալ դևքն ասեն. գնա 'ի տեղւոջէս մերմէ։ Այլ ծերն ասէ. ձեր տեղի ոչ ունիք։ Այլ սկսան ցնդել զարմաւենիսն մի մի, և մնայր ծերն և ժողովէր զայն։ Յետոյ բանեաց դևն զձեռանն և արտաքս քարշեաց։ Այլ յորժամ եհաս առ դուռնն, գոչեաց և ասէ. Յն, օգնեա ինձ. և առժամայն փախստական եղև դևն, և ծերն սկսաւ արտասուել։ Այլ տէրն ասէ ցնա. ընդէ՞ր լաս։ Այլ ասէ ծերն. համարձակին ըմբռնել զմարդ և այսպէս առնել։ Այլ ասէ ցնա. տես թէ յորժամ խնդրեցեր զիս որպէս գտեր, բայց ոչ առանց աշխատութեն. զի թէ ոչ լինէր աշխատութի, ոչ կարէր մարդ ունել զԱծ ընդ իւր. վասն զի բնութեամբ է ստեղծեալ մարդ 'ի Ջանս, և զնոյն խնդրէ Ած 'ի նմանէ. արդ մի կալցի-

թիւնն զայն. և արդ արիաբար համբերութեամբն իւր եհաս 'ի վարս խաղաղութեանն։

* Այսօրինակ պատմի և 'ի հին թարգմանութեան. Եղբայր ոմն նեղեալ 'ի խորհրդոց, կամէր ելանել 'ի միաբանակեցաց վանիցն, և ասէր առաջնորդն՝ եթէ այսօր վասն սիրոյն Քի կացից աստ. և յերեկոյն հասեալ ասէր՝ վաղիւն գնամ ըստոյգ. և այնպիսի խորհրդով եկաց զամս իննն։ Իսկ տեսեալ տէրն զհամբերութի նորա՝ եհան զձանձրութիւնն 'ի նմանէ։

1 Ասաց հայրն Ամոնաս՝ եթէ չորեքտասան ամ կացի ես 'ի Սկիւթ, և աղաչէի զԱծ զտիւ և զգիշեր, որպէս զի շնորհեսցէ ինձ յաղթութի բարկացողութեան։

2 Ծեր ոմն բնակէր 'ի մեհեանս կռոց, և եկեալ առ նա 'ի գիշերի դևքն ասէին. գնացես, ծեր դու, 'ի տեղւոջէս մերմէ։ Իսկ ծերն ասէր. ոչ գոյ ձեր տեղի 'ի վերայ երկրի։ Յայնժամ սկսան դևքն ցրուել զանկերս արմաւոյ նորա, իսկ ծերն աշխատէր և ժողովէր զնա։ Յետոյ կալաւ դևն զձեռանէ ծերոյն և ձգէր զնա արտաքոյ։ Իսկ երբ եբեր զնա մինչև ցդուռն, կալաւ ծերն ձեռամբ զդուռն, և ասէ ծերն. Յիսուս Քս Ած իմ, օգնեա ինձ։ Եւ առժամայն փախեաւ դևն 'ի ծերոյն, իսկ ծերն սկսաւ լալ։ Ասէ ցնա տէր. զի՞ ողբաս, ծեր դու։ Պատասխանի ետ ծերն. վասն այն լամ, զի բնաւ իշխեն մերձենալ դևք 'ի մարդ։ Ասէ ցնա տէր. դու հեղգացեալ էիր, այլ մինչ կոչեցեր զանուն իմ՝ տեսեր զօր։ Ահա տես որպէս վաղվաղակի օգնէ տէր կարդացողաց զանուն տեառն։ Իսկ ես ասեմ քեզ, որդեակ, եթէ աշխատել մեզ

Digitized by Google

զպատուհաս ինչ 'ի մարմնական նուիթս մինչև 'ի փոքր ողոր-ձան, քանզի կարէ ռանկապել զքեզ և նենգել զխոստա-թեանն ըստ՝ զպաղանգքն:

ԵՂԲԱՅՐ ոմն գնաց առ աբբայն Մակարիոս 'ի վանս աբբայ Պերսաիսոյ, որ է մերձ 'ի սուրբն Հռոմայեցւոց, և ասէ ցնա. Ո՞րպէս ասա ինձ, աբբայ, զի ունիս այս-պիսի խորշակ և այսպիսի մեծերս: Նա ասէ ծերն. Վասն այսորիկ Հանդուրժեմ սոցա, զի մի անդ 'ի չարչարանս մաշեցայց:

ԱՅԼ ոմն եղբայր գնաց 'ի փարախ Պերսախսոյ Հօր առ աբբայն Աղեքսանդրոս և ասէ ցնա. Աբբայ, կամիմ որոշիլ 'ի տեղւոյն ուր նստիմ, զի ամենևին նեղասրտիմ: Նա ասէ աբբայն Աղեքսանդրոս. անխայեա, որդեակ, քանզի ոչ ունիս 'ի մտի զչարչարանս դժոխոցն և ոչ ըղ-ձոյս արքայութեան երկնից. զայս մտածելով ոչ կայցես նեղասրտութիւն:

ՀԱՅՐՆ [1] Բեսարիոն զքառասուն օր եկեաց 'ի մէջ փշոց, և զքառասուն ամ ոչ ընկողմեցաւ, և ոչ ստացաւ խուղ և ոչ ընաւ գոյութիւն ինչ:

ՍՈՒՐԲ [2] Գրիգոր Ածաբան. Եթէ ոք գայ 'ի կրօնաւո-րութիւն և ոչ պատրաստէ զանձն վշտաց, անփորձ է ճանապարհի փրկութեան:

ՈՄՆ [3] անարգեալ յումեքէ ասաց. Եթէ ոչ տեառն պատուիրանն կարկէ զբերան իմ, և ես գիտեմ այդպի-սի ինչ:

ԵՂԲԱՅՐ [4] ոմն աղխիւ բնակէր առ եղբարսն՝ ուր կատա-

տարս է և զայսուք զունէր. իսկ որ ոչ աշխատի, ոչ կարէ օգնական լինել տանել զնա:

1 Հայրն Բեսարիոն ասաց՝ եթէ զքառասուն օրն և զքառասուն գիշեր կեցի 'ի կանգուն 'ի մէջ փշոց որ ոչ ննջեցի կողմանելով. այլ 'ի կանգուն և կամ նստեալ ներհեկի սակաւ մի՝ խնդրելով 'ի տեառնէ զողորմութիւն:

2 Հայրն Գրիգոր Ածաբան ասաց. Եթէ գայցես ուսանել զկրօնա-ւորութիւն, և ոչ ունիցիս չար պատրաստմանց, անմիտ է ... այս. ապա թէ մնասցես վշտաց և ոչ եկեսցէ՝ բարի է. իսկ եթէ ոչ մնա-ցես և եկեսցէ և դու անպատրաստ գտցիս՝ կրկին առնէ լիցի. վասն զի լքանիցիս 'ի վշտացն անժուժկալ գոլով և յանպատրաստութենէդ՝ որ ոչ մնացեր վշտաց գալոյն, որում ընդդէմ պատրաստել պարտ է քեզ համբերութիւն:

3 Եղբայր ոմն անարգեալ եղև յումեմնէ և ասէ ցնա. պատուիրանն Քրիստոսի կարկէ զբերան իմ, ապա թէ ոչ՝ զոր ասես դու և ես ասել կարող եմ:

4 Եղբայր ոմն բնակէր 'ի ժողովս եղբարցն, և էր հեզագնաց եղ-

ընէր ինձ առաքինութիւն. և զի մինչ պանդուխտ էր 'ի պատե-րազմէ ինչ՝ գնայց յայլ վանս ուր կատարէր զութն, և զեր-կուսն չկարէր առնել. վասն որոյ և գնայց յայլ վանս, ուր զմեկն կարէր կատարել։ Այլ առաջ նստեալ խորհե-ցաւ՝ եթէ աՀա ուր և գնամ պակասիմ։ Գոչեաց և ա-սէ. Ո՛հ անձն, լեր մեկայ, զի զինչ և գայ ինձ փորձութիւն, Համբերեմ։ Այլ յորժամ շարժէր ինչ պատերազմն, կալ-պայր զգլուխն և Հանգչէր։ Այլ տեսեալ զգլխն այլոցն՝ ա-

բարցն բազում խոնարհութեամբ, և շահէր 'ի նոցանէ ինն առաքինութիւն և զեկեր զմինն. և ելեալ անտի գնաց յայլ վանս, և պանդխտեաց մերս նա, և շահէր ութ և զերկէր զերկուան։ Յայնժամ և անտի ևս ելեալ գնաց յայլ վանս, և զի շահէր անդ եօթն և զերկէր յերիցն. և գնաց յայլ վանս ևս, և շահէր անդ վեց և զերկեալ լինէր 'ի չորիցն. և ել անտի ևս և գնաց յայլ վանս և 'ի կէսս եղև, զի շահէր հինգ և զերկեալ լինէր 'ի հնգէն, այլ և ինչն 'ի հնգից գործոց լինէր. և 'ի հնգիցն տխտամնայր։ Յետոյ կամեցաւ մտանել 'ի յայլ վանս միաբանից, և նախ քան զմտանելն անդ առեալ 'ի ձեռսն քարտէզ և նստեալ առաջ ցան-ձըն իւր. եթէ հնազանդես խորհրդոց քոց, ոչ է բաւական քեզ գնալ յամենայն երկիր, և ուր և գնացես՝ վաստակ ևս եղեր. և արդ ուխ-տէ ինձ 'ի սրտի եթէ զինչ համբերեսցես, և գրեա զայն 'ի գիրտակս յայս. ելեր յառաջին վանիցն, զի ունէր չփոթ. ելեր և յերկրորդէն վասն այլ պատճառի. ելեր և յերրորդէն վասն այս ինչ պատճառի։ Եւ գրեաց զամենայն պատճառսն վասն որոց ել 'ի վանիցն։ Իսկ յե-տոյ գրեաց՝ եթէ զայս ամենայն պատճառսն յորոց փախչէիրն՝ գտա-նես աստ յոր եկեալ ես լինել, արդ համբերեսցես եթէ ոչ։ Եւ իբրև հաս-տատեաց զանձն կեալ անդ՝ գրեաց այսպէս. անուամբն Յսի Քսի որ-դւոյն Այ համբերեմ ամենայն չարակրութեանց։ Եւ ծալեալ զնամակն եդ 'ի գօտի իւր, և մտեալ 'ի վանսն յոր եկեալ էր՝ բնակեցաւ անդ։ Իսկ զկնի ժամուց սկսաւ տեսանել գործ ինչ զոր ոչ հաճէր, և ե-ածայր սիրտ իւր 'ի զայրացումն, և վաղվաղակի հանեալ զնամակն ըն-թեռնոյր՝ եթէ անուամբն Յսի Քսի որդւոյն Այ համբերեմ ամենայ-նի։ Եւ յորժամ ընթեռնոյր, զիջանէր և հանգչէր և ասէր. Այ խնա-մացոյ և նա օգնեսցէ ինձ։ Զայսուսիկ մինչ առնէր նա, կայր հանգստեան 'ի մերոյ եկեղեցւոյն չարեաց։ Իսկ դեւն չարութեամբ իւրով տեսանելով ըզ-համբերութիւն եղբօրն ոչ կարաց ժուժկալել. յայնժամ լկտեալ յան-դըգնեաց զեղբարսն վանուցն՝ զարմանել վասն գործոյն այնորիկ՝ թէ մրջէս կարգայ եղբայրն՝ զնամակն և առնու զզօշկութիւն։ Եւ սկսան դըդզել և ասել՝ կախարդ է սա և ընթեռնու զաղանդ ինչ և ոչ չփո-թի։ Եւ արարեալ ամբոխ եկին առ հայրն և պատմեցին նմա զայս և ասեն. ոչ կարեմք մեք կալ ընդ նմա, զի գիւթ է և մոգ և կախարդ, և 'ի գօտին իւր ունի զաղանդ իւր. և եթէ կամիս զնա՝ դու կալ ընդ նմա և զմեզ արձակեա զի գնասցուք աստի։ Իսկ հայրն հմուտ և առաքե-էր և գիտէր զխոնարհութիւն եղբօրն, և ծանեաւ զի գիւական էր նա-խանձն, ասէ ցեղբարսն. գնացէք աղօթեցէք զերիս աւուրս և աղօ-թեցից և ես, և տէր յայտնեսցէ զինչ պարտ է գործել մեզ։ Գնացին եղբարցն լռա հրամանի նորա։ Իսկ ինքն հայրն արարոյ 'ի քաղն գտա-նել զեղբայրն առ 'ի տեսանել զնամակ գօտւոյն. և եգիտ 'ի քաղն զեղ-

զանազան ինչ կարծեցին, մինչև յայտնեցաւ նոցին՝ և ընտրաց պատուհասացն :

Ի ՑԱՍԵԼՆ՝ եղբօր ցծերոյն՝ եթէ ընդէր ձանձրանամ նստելով ՚ի խրճիթն, ասէ. զի չգիտես դու զարքայութիւնն և զտանջանսն որ կան առաջի. զի թէ գիտէիր՝ թէ և որդամբ լի էր խուցդ քո, ոչ նեղէիր ՚ի նմա մնալ առանձինկայ յաւէտն, զի հաւաքար ամ աստէն տանջանք չարաչարութիւն ժամանակ միոյ ամսոյ տանջանացն. այլ և Աբրահամ յորժամ տեսանէ զփառս Հայրապետացն՝ աշխարհէր զի ոչ առաւել Հաճեցաւ իմաստն, զի առաւելագոյն առնոյր զփառսն :

ԾԵՐ՝ ոմն ձանձրացեալ ՚ի հեռաւորութէ ջրոյն, զի մղոնս հեռի էր, խորհեցաւ մերձ ջրոյն առնել զխցիս իւր.

բայցն, և առեալ գշիրն ՚ի գլուոյն ընթերցաւ հայրն. և եդ զնա զարձեալ ՚ի գլուխ նորա և գնաց: Եւ ահա զինի երից աւուրց ժողովեալ գարձեալ եղբարքն առեն ցհայրն. հրամայեա մեզ, հայր, թէ զինչ արասցուք: Եւ նա ասէ. կոչեցէք աստ զեղբայրն զայն. և կոչեցաւ նա ըստ հրամանի հօրն: Եւ իբրև եկն, ասէ հայրն. ընդէր արամեցուցեր զեղբարսդ, ով եղբայր: Եւ նա ասէ. մեղայ և թողցեն ինձ: Այսպ ասէ և ցեղբարսն. զինչ ասէիք լեալ զեղբայրս դայս: Եւ նոքա ասեն. մեղ է սա և ունի զաղանդակս ՚ի գլուխ իւր: Ասէ հայրն. առէք ՚ի գմանէ զաղանդս իւր: Նա ոչ տայր թոյլ արձակել զգլուխ իւր: Ասէ հայրն. հատէք զգլուխ գորա: Եւ արարեալ այնպէս՝ գտին զալխաւէն: Ասէ հայրն ցեղբայրս անն. եւ ՚ի բարձրաւանդակ տեղւոյ մի և կարգա զգա բարձրաձայն, զի ամաչեսցէ զևն: Եւ իբրև սկսաւ ընթեռնուլ և ասէ՝ անուամբն Յսի Քսի որդւոյն Այ հաւանեցայց ամենայն չարեաց սաս, յայնժամ իբրև լուաւ զայս՝ զզանչացաւ ընդ առաքինութիւն եղբօրն և աղաչաւեցին ընդ չարախօսելն, և սկսան անկանել ՚ի վերայ երեսաց խոստովանեցին զաւստի եղբարքն առաջի եղբօրն այն և խնդրեցին զթողութիւն ՚ի նմանէ և ասեն. մեղաք, եղբայր, թող մեզ: Եւ նա ասէ. թողցէ ձեզ Տր և մեզ: Ասէ հայրն ցեղբայրսն. խնդրեսջիք ՚ի տեառնէ զի թողցէ սոցա: Եւ արարին այնպէս, և եղև յայնմհետէ խաղաղութիւն մեծ ՚ի մէջ նոցա:

։ Եղբայր ոմն եհարց ցծերն և ասէ՝ եթէ ընդէր ձանձրանամ ես, հայր, և նեղիմ նստել ՚ի սենեկի իմում: Ասէ ցնա ծերն. վասն այնորիկ նեղիս, զի ոչ տեսեր դու կամ խնդրեր զերկնաւորութեան արքայութիւնն Այ, նա և ոչ զտանջանս մեղաւորաց. այլ եթէ տեսեալ էր քո զայսոսիկ, թէպէտ և լի որդամբք լինէր խուց քո՝ և դու թաղեալ մինչև ցպարանոց քո, ոչ ձանձրանայիր ՚ի նմանէ: Այսոմ քեզ, որդեակ, զի Աբրահամ աշխարհէ զի ոչ առաւել Հաճեցաւ, յորժամ տեսանիցէ զպարգևսն Այ զպատրաստեալսն Հայրերուն:

։ Ծեր ոմն նստէր յանապատ հեռի ՚ի ջրոյն մղոնս քսան, և ՚ի բերելն ջրոյն աշխատեալ բազում անգամ ձանձրացաւ և ասէ ՚ի միտ. ընդէր ՚ի նմին աշխատիմ, երթեալ բնակեցայց մերձ ՚ի ջուրս: Զայս իբրև ասաց, հայեցաւ յետս և ետես զոմն որ գայր զհետ նորա և թուէր դնել զթուեալս ոտից նորա. եհարց ցնա և ասէ՝ ո՞ իցես դու: Եւ նա ասէ ցնա.

Digitized by Google

և 'ի յընթանալն՝ հայեցեալ յետս տեսանէր զհրեշտակ մի զի թուէր զքայլափոխս ոտից նորա, զի ըստ ամենայնի վարձս առցէ. և չոգաւ հեռացոյց այլ ևս հինգ մղոնաւ:

ԱՍԱՑ՝ ծերն. եթէ գիտէի քեզ փորձութիւն և ելցես վասն այնորիկ 'ի տեղւոյս, ուր և երթայցես՝ դիպեսցի քեզ և անդ այլ ևս աւելի. այլ կացցես մինչև անցցէ փորձն, զի խաղաղութեամբ երթիցես և մի զոք խռովեցուսցես: Ոմն 'ի անձն զայրացեալ յոյժ տրտմէր յեղբարցն, և ասաց. երթայց յայսմհետէ նստայց ուր ոչ կայցէ պատճառ բարկութեան: Եւ եկեալ 'ի գնալն անդ և 'ի լնուլ զամանն ջրոյն 'ի գետնին՝ երկիցս անգամ շրջեցաւ ամանն, և նորա բարկացեալ ընհար զքարի, և առաքս եկեալ 'ի միտս ասաց. այս գործ դիւի է, յարուցեալ գնացից առ եղբարսն իմ: Եւ արար այնպէս, և հանդարտեաց փորձութիւնն:

ՄՈՒ՝ 'ի ծերոցն հարցեալ եղև թէ զինչ արարից զծոյլ և զքնոտ* անձնս, զի ոչ ինչ շահեցայ յաբեղայու-

եւ հրեշտակ տեսանեմ և ստուգեցայ թուել զքայլս քո և տալ ըստ վարձս քո: Զայս լուեալ ծերոյն մխիթարեցաւ, և յօժարամտեալ գնաց և այլ ևս հեռացոյց զտուն իւր 'ի ջրոյն հինգ մղոնա: Այսպէս ամենայն աշխատութիւնք որ վասն Այ լիցէ, մինչև 'ի քայլափոխն վարձատրութեամբ են յԱյ:

1 Ասաց ծերն. եթէ գիտասցի քեզ փորձութիւն ինչ 'ի տեղին ուր նստիցիս, մի թողցես զտեղին զայն վասն փորձութեան. զի եթէ ոչ՝ ուր և երթիցես՝ առաջի քո պատահի այն գործ յորմէ փախեար դու. այլ համբերեա մինչև անցցէ փորձութիւնն այն, որպէս զի խաղաղութեամբ եղիցի ելն քո անտի, զի մի բնակիչք տեղւոյն տրտմեսցին 'ի քեն 'ի մեկնելն քո 'ի նոցանէ: Արդ եղբայր ոմն բնակէր 'ի ժողովս եղբարցն. և տրտում շարժէր 'ի բարկութիւն. և ասէ. գնացից առանձին և միայն բնակեցայց և ազատեցայց յայս ախտէ: Արդ ելեալ 'ի վանիցն գնաց 'ի հեռի անապատ 'ի յայր ինչ և հանդարտեաց անդ միայն: Իսկ 'ի միում աւուր լցեալ զսափոր իւր ջրով և եդ մերձ իւր, և հեղաւ առժամայն. ելից դարձեալ, և այն ևս թափեցաւ թաւալեալ. ելից երրորդ անգամ, և եղև դարձեալ այնպէս. յայնժամ բարկացեալ վասն այնորիկ, առեալ զսափորն եհար զքարի և խորտակեաց զնա: Եւ եկեալ 'ի միտս իւր գիտաց զի խաբեցաւ 'ի դիւէն և ասէ. ահա և 'ի միայն կեալս իմ յաղթեալ եղէ բարկացեալ. այլ գնացից դարձեալ 'ի վանս իմ, և յամենայնի ճգնել և համբերել պարտ է: Յայնժամ եկն դարձեալ 'ի վանս իւր, և արիացեալ համբերէր ամ նեղութեանց ողջ դարուն:

2 Եւ եղբայր ոմն նեղեալ 'ի խորհրդոց իւրոց ելանել 'ի վանիցն՝ պատմեաց զայն հօրն: Ասէ ցնա ծերն. գնացեալ նստցիս 'ի սենեակ քո և տուեալ զքեզ ընդ ցանկով որմոյ նորա և մի ելցես անտի, և մինչ

* Եւ յայլս օրինակս զգենեալ . . . յաբեղայութենէս:

Digitized by Google

թենէս ։ Այլ աստ գնա ․ գնա համբերութեամբ լաւս 'ի խուղն քո վասն տեառն, և ած մեծ համարի զայն քան զԱնտոնեին յիւրում աւուրսն ․ քանզի խուղն կրօնաւորին հնոցն է երից մանկանցն՝ ուր տեսին զորդին ած, և սիւն ամպոյն է՝ ուստի խօսի ած ։

ՄՈՎՍԷՍ՝ երևելի որ 'ի Սկեթայիդ՝ սովորութիւն միշտ յամենայն երեկոյի խրատեալ զաշակերտսն, և աղօթեալ 'ի վերայ նոցա, և ապա արձակեալ 'ի մահիճս իւր ․ և եղև զի քունն կալաւ զնա 'ի խօսելն, և յամեաց մինչև ցմէջ գիշերոյն ։ Այլ աշակերտսն եօթն անգամ նեղեալ 'ի խորհրդոյն՝ կամէր գնալ և ննջել, և դիմացաւ և ոչ գնաց ․ և զարթուցեալ ծերոյն աղօթեցին և գնացին ։ Այլ ծերն եղև 'ի տեղեան ․ և աչաց կայլին առաջի նորա եօթն թագ թագաւորականս և ասէին ցնա ․ զայդոսիկ աշակերտսն քո ստացաւ յայսմ գիշերի ։ Այլ յինքն եկեալ ծերն՝ կոչեաց զաշակերտսն, հարցանէր թէ զինչ

կեցցէ մարմին քո անդ՝ թող գնասցեն խորհուրդք քո ուր և կամիսցին ․ զի անմեղն կրօնաւորի հնոց Բաբելոնի իցէ՝ ուր գտին երեք մանկունքն զորդին ած, և դարձեալ սիւն ամպոյ իցէ նա՝ յորմէ խօսեցաւ ած ․ արդ մի ելանիցես անտի, որդեակ, և գտցես զորդին ած անդ ամենայն ստուգութեամբ ։

։ Ծեր ոմն բնակէր 'ի Թեբայիդա յայր ինչ, և էր նորա աշակերտ ընտրեալ ․ և էր սովորութիւն ծերոյն յամենայն երեկոյի ուսուցանել նմա զբանս կենաց, և աղօթս առնել նմա և արձակել, զի գնասցէ հանգիցէ 'ի մահիճս իւր ։ Յաւուր միոջ եկեալ առ ծերն արք երկիւղածք ած աշխարհիկք, որք գիտէին զճգնութիւն նորա, բանադատեցին զնա մխիթարել ինչ զնոսա և ասել ընդ նոսա ։ Իսկ իբրև գնացին նոքա, նստաւ ծերն և խրատէր զաշակերտն իւր յերեկոյին, և 'ի խօսելն իւր կալաւ զնա քուն ․ և եղբայրն մնայր զի զարթիցէ ծերն և աղօթս արասցէ 'ի վերայ նորա և արձակեսցէ ։ Եւ իբրև յամեաց եղբայրն, և ծերն ոչ զարթեաւ, խորհեցաւ գնալ ննջել առանց հրամանի ծերոյն ․ բայց բռնադատեաց ինքն և ընդդէմ կայր խորհրդոյն ոչ գնալ, և խորհուրդն նեղէր զնա ․ արդ այս եղև եօթն անգամ և ոչ գնաց ննջել ։ Եւ իբրև եղև մէջ գիշերի, զարթեաւ ծերն և եգիտ զեղբայրն նստեալ և ասէ ․ ո՞չ գնացեր աստի, որդեակ, մինչև ցայժմ ։ Ասէ եղբայրն ․ ոչ իշխեցի, հայր, զի մի նեղեցից զքեզ ։ Եւ յարուցեալ առաջնորդեցին զառաւօտին, և գնաց եղբայրն, և ծերն մնաց անդր ։ Եւ աչաց անկաւ հիացումն 'ի վերայ ծերոյն ․ և տեսեր ծերն զի եցոյց նմա ոմն տեղի փառաւոր յոյժ, յորում կայր աթոռ մեծ զարդարեալ և 'ի վերայ աթոռոյն պսակ եօթն թագաւորական ։ Եհարց ծերն ցայն որ եցոյցն և ասէ ․ ո՞ւմ իցեն պսակքս այսոքիկ ։ Իսկ նա ասէ ․ աշակերտին քո են զորս, զի զտեղիդ զայդ և զաթոռ պարգևեաց նմա ած վասն հնազանդութեան իւրոյ ․ իսկ զեօթնեքին պսակքս զայսոսիկ առացաւ 'ի գիշերիս յայսմիկ ։ Զայս իբրև լուաւ ծերն՝ երկեաւ, կոչեաց զեղբայրն և ասէ ցնա ․ ասա ինձ եթէ զինչ գործեցեր 'ի գիշերիս յայս-

գործեցեք զզինչս զայս: Այս նա ասաց զխորհուրդս, և փառաւորեաց ծերն զՊիռ՝ եթէ վասն փոքր համբերութեան տայ անպարտ հատուցումն. և աշակերտացն իւրոց ոչ եհան 'ի վեր զանեսինն, բայց վասն օգտութեան պատմեաց այլոց եղբարց:

ՀՈՎԱՆԴԱՑԱՒ՝ եղբայր ոմն, և ոչ տեսանէին զնա եղբարքն զաւուրս երեսուն, և եկեալ հրեշտակ տեառն սպասաւորէր նմա զաւուրս եօթն. և 'ի գալ եղբարցն տեսանել թէ զի՞ եղև նմա, անդէն եղև հրեշտակն, և կատարեցաւ եղբայրն 'ի տէր. և ահա չթողու ած զյուսացեալսն իւր:

ԾԵՐ՝ ոմն զի ուխտեալ էր զկիսում օր պահոցն չելանել յայրէն, և լցաւ այրն մժղով և պիծակով, և կըծէին զնա. և 'ի միջոցս պահոցն եկին մրջմունք իբրև

մեկ: Եւ նա ասէ առ հեղութեան. ոչ ինչ առնէի բնաւ, հայր: Իսկ ծերն բանադատեաց և ասէ. ոչ թողից զքեզ՝ եթէ ոչ պատմեսցես ինձ եթէ զինչ խորհէիր 'ի միտ քո: Ասէ եղբայրն. հաւատա ինձ, հայր, զի ոչ ինչ գիտեմ, բայց միայն զայս՝ զի եօթն անգամ ննջեցին զիս խորհուրդք իմ գնալ ննջել առանց հրամանի քո, իսկ ես պատերազմեցայ ընդ խորհուրդս իմ և ոչ գնացի: Իբրև լուաւ զայս ծերն՝ խնդացաւ զի որքան պատերազմեր եղբայրն խորհրդով յաղթեն, այնքան պսակեցաւ յոյժ. և եղբօրն ինչ ոչ ասաց, այլ 'ի սակս օգտի բազմաց պատմեաց զանեսինն այլոց, զի ծանիցուք և մեք զի յաղագս և փոքր ինչ համբերութեան տացէ ած զպսակն: Արդ բարւոք է յամենայնի բանադատել զանձն, քանզի բանադատողացն է արքայութիւն ած:

1 Ծեր ոմն երկեամբ հիւանդացաւ, որ բնակէր 'ի սենեակին միայն, և ոչ ունէր զոք զի սպասաւորեսցէ նմա. այլ ինքն յառնէր և խնդրէր և ոչ գտանէր ինչ 'ի խցի իւրում զի ճաշակեսցէ զդարմանութեանն. այսպէս արար աւուրս բազումս, և ոչ ոք գնաց տեսանել զնա: Իբրև եանց 'ի վերայ աւուրս երեսուն և ոչ ոք եկեալ զնա, առաքեաց ած զհրեշտակս իւր 'ի սպասաւորել նմա: Եւ իբրև եկաց առ նմա հրեշտակն եօթն աւուրս, յիշեցին զնա հարքն և ասեն. միթէ մեռաւ այս ոմն ծեր, զի ոչ ել առ մեզ: Եւ գնացեալ զարկին զնա հիւանդ: Եւ ասէ հիւանդ ծերն ցնոսա. երեսուն օր է յորմէ ակարացայ, և արդ եօթն օր է զի հրեշտակ սպասաւորէ ինձ ապրեցուցանել 'ի վերայ անապաշաւ հիւանդիս. և իբրև եկիք դուք, մեկնեցաւ յինէն: Զայս իբրև ասաց, ննջեաց վախճանեցաւ: Իսկ եղբարցն և հարցն լուեալ փառաւորեցին զած, որ ոչ թողու զորս յուսան 'ի նա. և համբերողաց 'ի նեղութիւնս՝ մխիթարութիւն և օգնական է:

2 Ի հարանցն ոմն արգել զանձն իւր յայր ինչ յաւուրս սուրբ պահոցն, և ուխտեաց ոչ ելանել անտի. իսկ զկնի որ մեծ պատերազմեն ընդ սուրբն՝ զայրն բազմապատիկ զայրն զայս բազմացուցիչ և մժեխսն՝ մինչև ոչ կարել ամենայն մնալոյն միոյ, և համբերէր բազմութեան փորձութեանն այնմիկ ծերն և ասէր. թէ և մեռանել հասանէ ինձ, ոչ ելից 'ի սմանէ մինչև յաւուր զատկին: Իսկ յերրորդ եօթնեկի պահոցն եկն զօրծ ինչ արտաքին, զի եհան անդ բազմութիւն մրջմանց անթիւ յոյժ, և մահու

զպատերազմողս և կրեցին արտաքս և կոտորեցին 'ի դրանն զբովանդակն ։

ԽԸՂԲԱՑՐ' ոմն զկնի ինն ամի պատերազմելոյ նորա ընդ պոռնկական խորհուրդն՝ սկսաւ գնալ յաշխարհ, և եկն առ նա ձայն 'ի վերուստ և ասէ . ահա վասն ինն ամի ճգնութե քո պատրաստեցի քեզ պսակ, դարձիր 'ի խրճիթն քո, և այլ մի ինչ արասցես ։ Նա դարձաւ և հանգեաւ 'ի պատերազմէն ։

Ասաց ծերն . ալիք զվէմ ոչ կարեն մնասել, և ոչ խորհուրդ զմիայնակեաց առանց գործոյ՝ յորժամ փութով 'ի բաց վարէ յիւրմէն ։

Ասաց ծերն՝ եթէ ձկունք ոչ կարեն առնել զի մի արկցէ որսորդ զցանցս իւր . այլ երբ իմանան, խոյս տան և ապրին . Նոյնպէս միայնակեաց ոչ կարէ զսատանայ արգելուլ 'ի փորձելոյ, այլ իմացեալ խոյս տայ 'ի ցանկութենէ և 'ի ցասմանէ ։

ՀԱՐՑԱՒ ծեր՝ եթէ ընդէ՞ր վախեմ գնալով յանապատն ։ Ասաց . զի միայն համարիս զքեզ, և ոչ զԱծ ընդ քեզ տեսանես ։

ՀԱՐՑԱՒ ծերն՝ թէ ընդէ՞ր զբաղէ սատանայ յաղօթս ։ Ասէ . զի ինքն սատանայ վասն այնորիկ անկաւ, զի ոչ կամեցաւ երկրպագել Այ ։

ԱՍՏԷՐ[2] ծեր ոմն ամս բազումս յանապատի և աշխատեցաւ յոյժ, և երթեալ առ նա եղբարք ոմանք և զարմացեալ ընդ նա ասէին . զիա՞րդ ժուժկալես այդմ աշխատութեանց, հայր ։ Նա պատասխանի ետ և ասէ .

'ի յայրն կորուսանել զբաղցինքն ըստ օրինի պատերազմողաց . և հանեալ զնոսա յայրէն 'ի դրանն կոտորեցին անդ և կրեալ զնոսա ձգեցին արտաքս և որբեցին զաւազին զայն ։ Տեսէք թէ որքան բարի էցէ համբերելն 'ի փորձութիւն, զի կատարումն 'ի բարիս լինի ։

1 Եղբայր ոմն փորձէր 'ի խորհրդոց զինն ամ, և խոնարհութեամբ դատէր զանձն իւր և ասէր . կորուսի զանձն իմ մեղօք, այլ դարձայց յաշխարհ և եկեց անդր ։ Եւ յարեաւ և գնայր 'ի գիւղս ։ Եւ իբրև գնայր յուղին, լուաւ ձայն յերկնից որ ասէր ցնա՝ եթէ ինն այդ տարիք յորում փորձեցար դու՝ պսակ պատրաստեցին քեզ, և թէ այլ ոչ կարես համբերել՝ մի երկնչես ինչ, դարձիր 'ի տեղ քո և ես որբեցից 'ի մնաց քոց զխորհուրդս քո ։ Եւ արդ եթէ այդպէս է, ապա ուրեմն ոչ է բարի հատանել զյոյս սակս չար խորհրդոց, զի նոքին պատճառք պսակաց լինին մեզ՝ եթէ բարւոք կալցուք զնոսա ։

2 Գնացեալ երբեմն եղբարք առ ծեր ոմն մեծ յանապատն և ասեն ցնա . որպէս համբերես, հայր, այսու վշտաց ։ Իսկ նա ասէ ցնո.



Digitized by Google

ամենայն աշխատութեանն ժամանակիս զոր աշխատի աստ, և ոչ մի ժամու բովանդակէ տանջանացն:

ԵՂԲԱՅՐ՝ ոմն եհարց ծեր և ասէ. խորհուրդք իմ յածին այսր և անդր և նեղեն զիս: Ասէ ցնա ծերն. դու նիստ 'ի խցի քում, և խորհուրդք քո դարձեալ գան առ քեզ. զոր օրինակ եթէ զէշ կապեալ իցէ, և յաւանակ նորին խայտասցէ յայսկոյս և յայնկոյս, սակայն անդրէն առ մայր իւր դառնայ. ապա եթէ արձակեսցես զմայրն, երկոքեան կորնչին. նոյնպէս և խորհրդոց:

ՊԱՏՄԵԱՑ՝ ոմն 'ի հարանցն և ասէ. մինչդեռ էի ես յՍքիւթինքս, եկին աղքատք յերիկուն շաբաթուն զի առցեն տուրս. և մինչդեռ ննջէին, էր ոմն 'ի նոցանէ որ ունէր պատուեղէն, արկանէր զկէսն 'ի ներքոյ և զկէսն 'ի վերոյ. և էր ցուրտ յոյժ: Եւ իմ ելեալ 'ի պէտս ինչ արտաքոյ և լուեալ զձայն նորա զի հառաչէր 'ի ցրտոյն, և դարձեալ կրկնեալ զխորհուրդս իւր մխիթարէր զինքն գոհանալով զտեառնէ և ասէր. քանի իցեն արդեօք 'ի բանտի մեծատունք երկաթս ունելով. այլք դարձեալ զոտս ունին 'ի կոճեղս պնդեալ, և ոչ զպէտս իւրեանց կարացեալ վճարել. իսկ ես որպէս թագաւոր եմ, ձգեմ զոտս՝ և ուր կամիմ երթամ: Եւ նորա զայս խօսեցեալ՝

տա. յամենայն ժամանակն զոր կացեալ է իմ աստ, ոչ կարեն հաւասարել վշտաց միոյ ժամու որ կրին 'ի հանդերձեալն տանջանս:

: Եղբայր ոմն եհարց ցծերն և ասէ. խորհուրդք իմ ցրուեին միշտ, և ես տրտում եմ ընդ այն: Ասէ ցնա ծերն. դու նստջիր 'ի խցի քո, և ուր և ցրուեին՝ դարձեալ գան առ քեզ. զի զոր օրինակ յաւանակ եթէ կապեալ կայցէ՝ քուռակ նորին աստ և անդ շրջեալ հրճուի և դարձեալ դառնայ առ նա, այսպէս և խորհուրդքն իցեն. որ ոք նստցի վասն տեառն 'ի սենեկի իւրոյ, թէպէտ և սակաւիկ մի ցրուեսցին՝ դարձեալ անդրէն գայցեն:

: Պատմէր մեզ՝ ոմն 'ի հարանցն եթէ մինչ էի ես յՍքիւթինքս, եկին անդ եղբարքն 'ի շաբաթ երեկոյին զի առցեն սէր. և իբրև ննջեցաք 'ի քուն, էր անդ աղքատ մի որ ունէր քուրձ ինչ, զկէս նորա 'ի ներքոյ իւր արկանէր և կիսովն ծածկէր զինքն. և էին տառապանք յոյժ: Եւ տեսի զնա զի վհատեալ էր 'ի ցրտոյ անտի, և մխիթարէր զանձն իւր և ասէր. գոհանամ զքէն, ած իմ և թագաւոր իմ, և զանչափ ողորմութ քումս, որքան մեծատունք կան կապեալք 'ի բանտի շղթայիւք, իսկ այլք 'ի կոճեղս պնդեալք որ ոչ են կարող և ջուր հեղուլ. իսկ ես միզաւոր գոլով իբրև զթագաւոր հանգչիմ, մեկնեմ զոտս իմ և զձեռս որպէս և կամիմ, և յառնեմ և նստիմ յորժամ ախորժեմ, և գնամ ուր և կամիմ, և փառաւորեմ զանուն քո տէր: Զայս լսեալ շահ մեծ եղև մեզ ամենեցուն 'ի կամս մեր: Այսպիսի ի-

Digitized by Google

կայի մնայի մինչև լուայ զձայնն, և մտեալ պատմեցի զձայնն եղբարցն, և օգտեցան 'ի բանից աղքատին:

ՀԱՒԱՏՈՒՀԻՆ Սառա ասաց ընդ քոյր իւր՝ թէ այս է իմ աղօթքն հանապազորդ, զի ոչ լինին ամենայն հաւատացեալք իբրև զիս, այլ ես իբրև զնոսա զամենեսեան: Իսկ ոմն 'ի քերցն ասէ ցնա. և մեղաւորացն այլ նմանել բաղձաս: Իսկ ասէ ցնա. այո, կամիմ նմանել երկայնմտութեն նոցա, որ ասեն միշտ յուսով թէ վաղվաղակի ապաշխարեսցեն:

ԽՕՍԱՑ հաւատուհին Մարուհի ընդ քոյր իւր. երեք առաւելութիւն գոյ 'ի յարու կրօնաւորսն քան 'ի մեզ: Իսկ ասեն քորքն. որք են: Իսկ ասէ ցնոսա. մի զի շրջին նոքա բաց երեսօք, և մի զի խորհուրդ նոցա արու է և քաջ, և միւսն զի սատանայ առաւել տայ ընդ նոսա պատերազմ քան ընդ մեզ, և յայտ է զի վարձս առնուն նոքա ընդ վաստակոցն:

ՊԱՏՄԵՑԻՆ վասն ուրումն հօր՝ եթէ ունէր գիրս, և արժէր ութ և տասն դահեկանս, և կայր յեկեղեցւոջ նորա, և ունէր զհին և զնոր կտակարանս: Իսկ եկեալ եղբայր օտարի և տեսեալ ցանկացաւ նմա, և գողացեալ զնսա գնաց: Իսկ ծերոյն գիտացեալ թէ նա առ, ոչ չոգաւ զհետ նորա: Իսկ երթեալ եղբօրն 'ի մօտակայ քաղաք կամեցաւ վաճառել զնսա, և խնդրէր ըզգինսն վեշտասան դահեկան: Իսկ ասէ ցնա որ գնէրն. տուր ցիս զի փորձեցից զդա: Իսկ բերեալ զնսա առ ծերն որ կորոյս զնսա՝ կամեցեալ ուսանել զգինսն, ասէ ցնա ծերն. քանի՞ ինչ խնդրէ ընդ դորա: Իսկ լուեալ եթէ այսքան, ասէ՝ ազնիւ է: Իսկ երթեալ այրն ասէ ցայրն որ զնոյն տայր, ասէ. ահա ցուցի զգիրսդ այս առն ծերոյ, և ասաց թէ մեծագին կարի է: Իսկ ասէ եղբայրն. այլ ինչ ո՞չ ասաց քեզ: Իսկ նա ասէ՝ ոչ: Ասէ եղբայրն. ոչ վաճառեցից զդա: Իսկ զղջացեալ եկն առ ծերն և անկաւ առաջի նորա զի առցէ զգիրսն, և նա ոչ կամէր: Իսկ աղաչէր զնա եղբայրն և ասէր. եթէ ոչ առնուս ըզգիրսդ, ոչ գտանեմ հանգիստ: Իսկ լուեալ ծերոյն ընկալաւ զգիրսն, և եկաց առ նմա եղբայրն մինչև 'ի մահ, և համբերութեամբ ծերոյն ապրեցաւ եղբայրն:

մնացութեն բանիւ ըզհամբերութեն խնդութեամբ կատարէր և արիանայր 'ի նոյն:

ՀԱՐՑԱՒ ծեր մի՝ թէ զի՞նչ է ասել մարգարէին, թէ որպէս փափագէ եղջերուն յաղբերս ջուրց: Եւ պատասխանեաց ասելով. եղջերուն հանապազ ճճիս և օձս ուտէ, և յայրմանէ թունից նոցա այրի և ցամաքի և կարօտի ջրոյ և դիմէ առ աղբիւր: Նոյնպէս և միտք մարդկան 'ի պէսպէս ցնորից և 'ի խայթմանէ բանսարկուին և յօձատեսիլ ցանկութեանցն և 'ի թունաւոր ժիժմանց ախտիցն նեղեալ և պաշարեալ ցանկայ այնմ աղբեր՝ որ 'ի տանէ տեառն ելանէ, որ ասաց. եթէ ոք ծարաւի իցէ, եկեսցէ առ իս և արբցէ. և առ նա դիմեալ հանգչի:

ՄԻՆ յեղբարցն հարցաւ ցծեր մի և ասէ. ընդէ՞ր ծուլանամ և գաղարկ անցուցանեմ զօրն և ոչ կարեմ արիանալ: Եւ ասէ ծերն. վասն զի ոչ յիշես դու զհանգիստ ճգնաւորացն և զտանջանս ծուլիցն տաղտկացելոց:

ՀԱՅՐՆ Մակար ասէր ցեղբայրն Զաքարէ կրտսեր. զի՞նչ է գործ միայնակեցի: Եւ ասէ Զաքարէ. գոհանալն 'ի վերայ փորձութեանցն և լալն:

ԷՐ[1] ոմն մի ներքինի 'ի ներքսագոյն անապատն ութ և տասն մղոնաւ հեռի 'ի Սկիւթայ լեռնէն: Եւ հրամայեաց մեծն Դանիէլ ծերունին միոյ յաշակերտաց իւրոց, և յերեկորեայ լնոյր փոքր աման ջրով և դնէր արտաքոյ այրին և մտանէր յայրն: Եւ ներքինին յամ շաբաթ 'ի գիշերի լռելեայն երթայր զութ և տասն մղոնն, առնոյր զջուրն ըմպէր և դառնայր 'ի քարանձաւեայ բնակութիւն իւր՝ ոչ տեսանելով զոք և ոչ խօսելով ընդ ումեք: Եւ յետ ութ և տասն ամաց գտանէ աշակերտն Դանիէլի 'ի դրան այրին խեցի գրեալ՝ բեր ինձ զկնի քո, հայր Դանիէլ, մի յաշակերտացն և փայ-

[1] Ներքինի ոմն բնակէր 'ի ներքսագոյն անապատն Սկիւթոյ, և էր հեռի սենեակ նորա 'ի Սկիւթոյ երկոտասան մղոնս: Նա գնայր մի անգամ 'ի շաբաթուն առ հայրն Դանիէլ 'ի գիշերի, և ոչ ոք գիտէր, բայց միայն ինքն և աշակերտ իւր. և զի պատուիրեալ էր ծերն աշակերտին իւրոյ, զի մի անգամ յեօթնեկին տարցէ նմա ջուր ամանով. և տարեալ դնէր արտաքոյ դրան նորա, և բախելով միայն զգացուցանէր նմա և դառնայր լռելեայն. զի պատուէր տուեալ էր ծերն աշակերտին մի ինչ խօսել, այլ դառնալ անդրէն: Ասաց և զայս. եթէ գտցես տախտակ ինչ գրեալ արտաքոյ դրան նորա, զայն ես բերցես ընդ քեզ: Եւ այնպէս առնէր աշակերտ ծերոյն զբաղում աւուրս և զամս, որպէս պատուիրեաց հայրն: Եւ յաւուր միում մինչ տարաւ զջուրն, գտաւ տախտակ գրեալ արտաքոյ այրին դրանն աշակերտ ծե-

Digitized by Google

տառ և Թի։ Եւ ընթերցեալ ծերունւոյն ասէ. աւաղ ներքսագոյն անապատին՝ որ այսպիսի սիւն կորուսանէ։ Եւ ասէ ցաշակերտն իւր, որ զջուրն դնէր արտաքոյ այրին զքսան և ութ ամս. առ փայտատ և Թի և փութասցուք երթալ, թերևս հասցուք ծերունւոյն կենդանի և առցուք զաղօթս նորա, զի հանդերձեալ է երթալ առ Ած։ Եւ յուղի անկեալ գնացին լալով։ Եւ յորժամ հասին, գտին զնա 'ի ջերմութենէ տապեալ հուր. անկաւ ծերունւոյն 'ի վերայ լանջացն և ողբաց բազում արտասուօք և ասէ. երանի է քեզ, որ յիշելով զայս զօրս և արհամարհեցեր զմեծութիւն աշխարհիս։ Ասէ ներքինին. երանի է քեզ, Դանիէլ, զի ընդ նախահօրն Աբրահամու դասաւորեալ է հոգի քո, վասն զի բազում պտուղս վաստակոց քոց ընծայեցեր Այ։ Ասէ Դանիէլ. արա մեզ աղօթս և օրհնեա զմեզ։ Ասէ ներքինին. մանաւանդ դու արա աղօթս և օրհնեա զիս։ Ասէ ծերն. եթէ ես յառաջ երթայի առ Ած, առնէի աղօթս. արդ դու յառաջեալ ես, օրհնեա զմեզ։ Եւ նորա համբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա յոյժ, և դիրկս արկեալ ծերոյն համբուրեաց զգլուխն. և առեալ հաղորդութիւն՝ պատուիրեաց ծերունւոյն զի մի՛ հանցէ յանձնէն զպատուեղէնն. և առժամայն աւանդեաց զհոգին իւր

րոյն, և էր գրեալ այսպէս. հայր, աշխատեաց միայն մինչև առ իս դու և աշակերտ քո, բերէք և բրիչ ընդ ձեզ։ Իբրև ընթերցաւ ծերն, եկաց զարմացեալ և ասէ. վայ, որդեակ, զի սիւն մեծ և լուսեղէն մեկնի 'ի մէնջ այսօր։ Եւ ասէ. առ զբրիչ և զանօթս զայս և եկ զկնի իմ և գնասցուք առ նա, միթէ հասցուք ծերոյն և մի պակասեսցուք յաղօթից նորա, զի գնալոց է առ Տէր։ Եւ եկեալ գտին զնա 'ի ջերմ տառապեալ. և եդեալ ծերն զգլուխ իւր 'ի վերայ լանջաց ծերոյն և ողբաց յոյժ և ասէ. երանի է քեզ, զի վասն այսու ժամու հոգայիր յոյժ, և թողեալ արհամարհեցեր զթագաւորական կեանս քո և զփառս աշխարհի։ Ասէ ցնա ներքինին. և քեզ երանի, նոր Աբրահամ օտարասէր և ընդունող Քի, զի բազում ծածկեալ ծառայս առեալ է Քս 'ի ձեռաց քոց։ Ասէ ծերն. աղօթեա վասն իմ առ Ած։ Ասէ ներքինին. և ես կարօտ եմ բազմաց աղօթից 'ի ժամս յայս։ Ասէ ծերն. եթէ ես յառաջ քան զքեզ գնայի, ես աղօթէի վասն քո։ Եւ նստաւ 'ի վերայ փափաթին ներքինին և համբուրեաց զծերն և ասէ. Ած որ եբեր զիս 'ի տեղւս յայս, կատարեսցէ 'ի վերայ ծերութեան քո զոր արար Աբրահամու։ Եւ ընկէց ծերն զաշակերտ իւր յոտս նորա և ասէ. օրհնեա և զսա։ Իսկ նա յարոյց զնա և համբուրեաց և ասէ. Ած որ կայ մերձ իմ աւանդել զհոգի իմ, որ գիտէ զթիւ քայլի ոտից քոց զոր եդեր 'ի գալ 'ի սենեակ սպասաւորութեան իմոյ, նա ողորմութեամբ իւրով հանգուսցէ զհոգի հօր քո 'ի վերայ քո որպէս զԵղիային 'ի Ե-

առ Ա՟ծ, և փայլեաց երեսն իբրև հուր։ Լացին յոյժ, և փորեցին առաջի այրին և եդին զնա անդ։ Եւ հանեալ ծերունին զպարեգօտն իւր ետ յաշակերտն իւր, զի սփռեսցէ 'ի վերայ մարմնոյն։ Եւ բացեալ աշակերտին զլանջսն զի համբուրեսցէ, ետես կնոջ ստինս իբրև զտերև չորացեալս, և ծածկեաց՝ եդեալ սալ, և զհողն կուտեցին 'ի վերայ, և սաղմոսիւք և օրհնութեամբ յուղարկեցին առ Տ՟ր և դարձան 'ի Սկիւթ։ Ասէ աշակերտն ցծերն. ոչ գիտես, հայր, զի ներքինին կին էր։ Ասէ ծերն. արդ ես պատմեցից քեզ վասն նորա։ Եւ սկըսաւ ասել՝ եթէ նա կին էր պատրկի մեծի 'ի թագաւորական քաղաքէն Կոստանդնուպօլսէ մեծատուն յոյժ։ Եւ յորժամ վախճանեցաւ այրն իւր, վասն գեղեցիկ գեղոյ նորա ցանկացաւ նմա թագաւորն Յուստինիանոս, և գաղտ առաքէր 'ի նա պատգամաւորս բազում գանձիւք։ Եւ նորա թողեալ զայնչափ մեծութիւնս, զանունն և

րայ Եգիպտէի։ Եւ ապա ասէ ներքինին ցծերն. վասն յուսոյն և սիրոյն որ առ Ա՟ծ ունիմք, մի՛ մերկացուցանիցէք յինէն զոր զգեցեալս եմ, այլ որպէս և եմ՝ այսպէս դիցէք զիս 'ի գերեզմանի և ասացես հօրդ ըղհօրս, և մի՛ այլ ոք գիտասցէ զինէն, այլ դուք երկուքեանդ միայն։ Եւ ասէ ցծերն. բերէք ինձ մասն 'ի մարմնոյն Քրիստոսի զի հաղորդեցայց նորա։ Եւ իբրև եկն զաւուրք խորհուրդն ասէ. առէք ինձ զհամբոյրն սիրոյն Քրիստոսի և աղօթեցէք վասն իմ։ Եւ նայեցեալ յաջակողմն ասէ. բարւոք եկիք։ Եւ պայծառացան երեսք նորա իբրև զպայծառ լուսոյ, և կնքեաց խաչիւն զերեսն և ասէ. 'ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ, Ա՟ծ հայր իմ։ Եւ այսպէս ետ զհոգի իւր 'ի ձեռս Ա՟յ հօր. իսկ ծերն աբբայ Դանիէլ ողբաց յոյժ։ Եւ բրեցին առաջի դրան այրին գերեզմանն, և հանեալ ծերն զհանդերձն իւր ասէ ցաշակերտն իւր. զգեցո զայս 'ի վերայ հանդերձին զոր ունի։ Եւ ունէր զգեցեալ նա սանիր որ է հիւսեալ տերև արմաւոյ, և փիլոն քրձէից։ Իբրև զգեցուցանէր եղբայրն՝ ետես զստինսն նորա զի էին որպէս կնոջ, այլ իբրև զտերև ծառոյ չորացեալ էին. այլ լռեաց և ինչ ոչ ասաց եղբայրն։ Եւ իբրև արարին աղօթս և թաղեցին զնա, ասէ ծերն ցաշակերտն իւր. լուծցուք զպահս այսօր և արասցուք սէր 'ի գերեզմանի ծերոյս։ Եւ հաղորդեալ նոցա, գային սուպն թրջեալ և հաց սակաւ և ճաշեցին մերձ 'ի գերեզմանն. և առեալ զմիրոյն զոր գործեալ էր նա, դարձան 'ի սենեակս իւրեանց և գոհանային զԱ՟յ։ Իսկ իբրև գնային յաւուրն, ասէ ցծերն աշակերտն այն. գիտես, ով հայր, զի ներքինին այն կին էր. և ես մինչ զգենուի զնա, տեսի զստինս նորա իբրև զտերև չորացեալ զի էին կնոջ։ Ասէ ցնա ծերն. գիտեմ, որդեակ, զի կին էր. արդ եկ զի պատմեցից քեզ զկեանս նորա։ Կոյսս այս 'ի մեծամեծ իշխանաց պալատին էր որդի մեծի 'ի նոսա, և Յուստինիանոս թագաւորն կամեցաւ կին առնուլ զսա վասն գեղեցկութեան և իմաստութեան և մեծազգութեան սորա։ Իսկ Թէոդորա թագուհին լուեալ բարկացաւ յոյժ և կամէր հալածել զսա. զոր իմացեալ սորա, և մտեալ 'ի նաւ 'ի գիշերի՝ ա-

Digitized by Google

զծառայս և զաղախնայս, փախեաւ միայն 'ի գիշերի գաղտ՝ գնաց յԱղեքսանդրիա քաղաքն, և 'ի լերինս շինեաց վանս մեծ և ժողովեաց բազմութիւն կանանց, և կոչի Պատրիկիա վանս մինչև ցայսօր: Այլ մեծ առաքինութիւն ձգնէր, և անուն ածային վարուցն ել ընդ ամենայն սահմանս ընդ այնուսիկ, որ և յականջս թագաւորին եհաս վասն սրբութեան. և բազումք երթային առ նա վասն առնլոյ զաղօթսն և օրհնիլ 'ի նմանէն: Այլ նորա զգեցեալ արեղայի զգեստ փախեաւ 'ի գիշերի և եկն առ իս 'ի վանացն իւրոյ և պատմեաց ինձ զամենայն խորհուրդս իւր, և խնդրեաց յինէն զայն քարայրն և ետու նմա, և էր անուն նորա Անաստասիա. և ամենևին ոչ ոք գիտաց զքսան և ութ ամն մինչև 'ի մահուանն՝ որ ծանեար դու միայն: Այլ թագաւորն և պատրիարգն Աղեքսանդրու բազում յուզողս առաքէին, զի գտցեն զնա և օրհնեսցին 'ի նմանէ, և ոչ կարացին գտանել զնա: Այնպէս և վանաց կրօնաւոր կանայքն խնդրէին զնա մեծաւ փափագանօք և ոչ գտանէին, քանզի Ած ծածկեաց և պահեաց զնա մինչև ցմահ:

ուեալ ընդ ինքն ինչս, եկն յԱղեքսանդրիա և բնակեցաւ 'ի Պէմպէոն վանս կանանց. և շինեաց սա այլ վանս կանանց, որ կոչի և Պատրիկեա: Իսկ երբև մեռաւ Թէոդորոս թագաւորն, ծանեաւ սա զի խնդրէր թագաւորն զնա և կամէր տանել, յայնժամ սա փախեաւ յԱղեքսանդրիոյ 'ի գիշերի և եկն առ իս միայն և պատմեաց ինձ զամենայն, և աղաչեաց զիս զի տացեմ նմա սենեակ ինչ հեռի 'ի Սկիտոյ. և ես ետու նմա զայրս զայս, և զգեցուցի նմա հանդերձ առն: Իսկ է որդեակ, քսան և ութ ամ յորմէհետէ բնակէր սա 'ի Սկիտէ. և ոչ ոք ծանեաւ զնմանէ, բայց միայն ես, և աշակերտ դու. բայց մի ոմն այլ՝ և աշակերտ իւր. այլ նոքա յայն սակս գիտացին, զի մինչ գնայի ես ուրեք, պատուիրէի նոցա տանել ջուր նմա. և ոչ ոք գիտաց զնմանէ թէ ո՛ է կամ ով ոք է, բայց միայն ես և դու: Իսկ բազում մագիստրոս առաքեաց թագաւորն խնդրել զնա և ոչ եգիտ. նոյնպէս և պապն Աղեքսանդրու և ամենայն իշխանքն խնդրեցին զնա և ոչ ծանեան ինչ: Տեսանես, որդեակ, թէ յորպիսի՛ թագաւորութենէ մնացեալ էր սա, և որպիսի՛ ձգնութեանց հեռեցաւ յաղագս աստուծոյ, և թէ որպէս պատերազմեալ յաղթեաց դիւաց՝ զամբարհաւն խորտակեալ և խոնարհեալ: Իսկ մեր 'ի գեղջս անարգս ծնեալ և սնեալ, որպէս աղքատաց գոլով և ոչ երբէք յագեալ հացիւ, և մինչ գամք 'ի միաբանութիւն՝ 'ի հանգիստ և փափկութիւն կերամք և ոչ ստանամք ձգնութիւն: Այլ արդ աղօթեսցուք և մեք, զի արժանացուք գտանել զշնորհս արդարոց և ընդ սորայն Անաստասիայ նշխարացն, զի այս է անուն նորա, գտցուք և մեք ողորմութիւն յաւուրն դատաստանին աղօթիւք նորա առաջի աթոռոյն Քնի:

Այր ոմն ծեր բնակեալ 'ի խցի արտաքոյ Աղեքսանդրիա քաղաքի, և էր ծերն յոյժ ստամբակ և կարճամիտ։ Եւ լուեալ զնմանէ ոմն մանուկ այր՝ պայմանեաց ընդ այ խոստումն ասելով. տէր, փոխանակ ամենայն չարեացն զոր գործեալ եմ, երթամ դադարեմ առ ծերոյն և ծառայեմ և հանգուցանեմ զնա։ Եւ գնացեալ բնակեաց ընդ ծերոյն. իսկ ծերն անարգէր զնա զորհանապազ որպէս զշուն։ Եւ տեսեալ այ զհամբերութիւն և զխոնարհութիւն եղբօրն, յետ վեց տարւոյ բնակելոյ նորա ընդ ծերոյն՝ ետես եղբայրն յանուրջս զոմն ահագին եթէ ունէր քարտէս մեծ, և ցուցանէր նմա զկէս քարտիսին ջնջեալ, իսկ կէսն ևս գրեալ կային, և ասէ ցնա. ահաւասիկ զկէսն զոր պարտէիր՝ ջնջեաց տէր, ջանացիր և յաղագս այլոցն։ Եւ էր այլ ոմն ծեր հոգևոր մերձ բնակեալ, և լսէր հանապազ եթէ զիարդ թախանձէր ծերն և անարգէր և տրտմեցուցանէր զեղբայրն, և զիարդ նա ծունր արկանէր, և ծերն ոչ հաշտէր ընդ նմա։ Եւ որքան հանդիպէր եղբօրն հոգևոր ծերն որ դրացին էր, հարցանէր ցնա՝ զիա՞րդ է, որդեակ, զիա՞րդ էանց այսօր, շահեցա՞ք ինչ արդեօք, ջնջեցա՞ք ինչ 'ի քարտիսէ անտի։ Եւ գիտացեալ եղբօրն եթէ հոգևոր ծեր է՝ ոչ ինչ թաքուցանէր 'ի նմանէ, այլ ասէր. այո, հայր, շահեցաք։ Ապա եթէ արդեօք երբէք պակասաւոր անցանէր, և ոչ անարգէր զնա և թքանէր յերեսն կամ հալածէր ծերն իւր, երթայր առ դրացի ծերն յերեկոյն լալով եղբայրն և ասէր. վայ ինձ, աբբայ, չար էր ինձ այսօր, քանզի ոչ ինչ շահեցայ, այլ հանգստեամբ անցուցի։ Եւ այլ յետ վեց տարւոյն նընջեաց եղբայրն, և հաւաստեաց հոգևոր ծերն՝ եթէ տեսի զնա զի կայր ընդ մարտիրոսս բազում համարձակութբ, և վասն ծերոյն իւրոյ աղաչէր զտէր և ասէր. տէր, որպէս ինձ 'ի ձեռն նորա ողորմեցար, ողորմեաց և նմա վասն գթութեց քոց ինև մաղթել։ Եւ յետ քառասուն աւուր էառ առ ինքն և զծերն 'ի տեղի հանգստեան։ Ահաւասիկ որպիսի համարձակութիւն ունին որ վասն Այի նեղութեանց համբերեն։

ԵՐԱՆԵԼԻՆ Իսիդորոս երթեալ առ սուրբն Անտոնիոս, լուեալ 'ի նմանէ պատմեաց այսպէս՝ եթէ Պոտամիենա անուն գեղեցիկ մանկամարդ 'ի ժամանակս

Մաքսիմիանոսի հալածչի աղախին էր ուրումն յանառակաց, և ստէպ ստէպ խիլք տէրն նորա կամեցեալ պատրել և ոչ կարաց ։ Իսկ յետոյ բարկացեալ տէրն նորա մատնեաց զնա դատաւորին, որ ըստ ժամանակին էր յԱղեքսանդրիա քաղաքին, որպէս քրիստոնեայ և հայհոյիչ դիցն նոցա ։ Եւ դատաւորին խոստացեալ նմա զանձ բազում, ասելով. եթէ հաւանեցուցես զնա յանձին ունել անկանել ընդ իս, թող զնա առանց տանջանաց. ապա թէ 'ի նոյն յառաջին խոստովանութեան կայցէ, տանջանօք սպանցես, զի մի կենդանի գոլով ծիծաղեսցի զզեղխութ̃ն իմով ։ Իսկ առաջի ատենին մատուցեալ քաջին այսպէս գործարանօք տանջիւր, և ընդդէմ բազմապիսի խմացիցն մարտնչէր, յորս և դառնագոյն ևս տանջանաց ձարակ գտեալ դատաւորին հրամայեաց կասսայ մեծ ձիթով լնուլ և հրով ահագին վառել. և իբրև եռաց ձէթն յոյժ, իբրև զալիս կուտակեալ, ասէ իշխանն ցերջանիկն այսպէս. եթէ կամ երթալ հնազանդել կամաց տեառն քո, կամ գիտութ̃ի լիցի քեզ թէ և 'ի կասսայս հրամայեմ արկանել զքեզ ։ Եւ նա ասէ. մի լիցի երբէք անիրաւ դատաւոր՝ որ հրամայէ ինձ հնազանդ լինել անառակութ̃ե ։ Յայնժամ հրամայեաց դատաւորն մերկացուցանել զնա և ընկենուլ 'ի կասսայն ։ Յայնժամ աղաղակեաց և ասէ. երդմնեցուցանեմ զքեզ 'ի գլուխ թագաւորին յորում դու երկրնչիս. թէ հաճոյ եղև քեզ զիս այսպէս դատել, մի հրամայեր մերկացուցանել զիս, այլ սակաւ սակաւ հրամայեա իջուցանել զիս յեռանդուն ձէթս, զի տեսցի որքան համբերութ̃ի շնորհէ ինձ Ք՟ս զոր դու ոչ ճանաչես ։ Եւ իջուցեալ զնա հանդարտիւ ըստ սակաւու՝ յերկարեալ իբրև երիս ժամս՝ վախճանեցաւ, հասեալ ձիթոյն մինչև 'ի սուրբ պարանոց նորա ։ Եւ այլ բազում արք և կանայք կատարեցան 'ի Ք՟ս 'ի ժամանակին յայնմիկ յԱղեքսանդրիա քաղաքի 'ի փառս ամենասուրբ երրորդութեան ։

ՀԱՅՐՆ Պիմէն և եղբայր իւր Յոբ կային յանապատին Սկիւթիայ, և մայր նոցա գնաց տեսանել զնոսա, և իմացան որդիքն և մտին յեկեղեցին և փակեցին զդուռն, և մայրն լայր 'ի դրանն ողորմագին ձայնիւ և կարօտ բարբառով, և լսէին նոքա ։ Եւ Յոբն եկեալ

առ դուան ասէ. զի՞ է քեզ, կի՛ն դու, զի՞ լաս: Եւ մայրն ասէ. Ներգիմ 'ի կարօտութենէս և խորովիմ զԹուալքն զոր սնուցի զձեզ և ծնայ, և ընդէ՞ր փախչիք 'ի մօրէս ձեր: Եւ ասէ Յովհ. կամիս ասո՞ւն տեսանել զմեզ, թէ կամիս ընդ մեռուցական կեանսն վայելել ընդ մեզ: Եւ ասէ մայրն, թէ աստ ո՞չ տեսանեմ: Եւ ասաց որդին. Թէ կարես ժուժկալել յայսմ աշխարհի, անդ միշտ ընդ մեզ լիցես: Եւ ուրախ եղև և դարձաւ մխիթարեալ և գնաց ուրախութեամբ: Եւ ասէն ընդ միմեանս եղբար-քըն. զմայրն ոչ տեսաք, և միմեամբք մխիթարիլ և կալ 'ի միասին ոչ է պարտ: Եւ մեկնեցան 'ի միմեանց, Պի-մէն յարևելս, Յովհ. յարևմուտս կոյս յերկր ծովուն: Եւ յետ բազում ժամանակաց 'ի ժամ կատարմանն գնաց առ նա Յովհ. և տեսանէր զի ուտէր արմատ, և ասէ Յովհ. զմայրն անմխիթար թողեր, և դու արմատով մխիթարիս: Եւ ասէ ցնա. մեղայ տուաքի ոյ, զի հա-սաւ ինձ մահու օրս, խնդրեաց բարքս և կերայ, և ասէ ցՅոհ. գնա յիսկէն, զի 'ի ժամ քակտման մարմնոյս և հոգւոյս մի՛ լիցիս ինձ մխիթար ինչ: Եւ գնաց, և զկնի եօթն աւուր եկեալ ամփոփեաց զնա ողբալով:

ԱՍԷԻՆ վասն փոքր Յովհաննու աշակերտի Ամմոնայ՝ թէ երկոտասան ամս արար սպասաւորելով ծերոյն. յոր-ժամ կատարեցաւ, և ընդ նմա էր նստեալ 'ի ծործա-սըն. իսկ նուաղելով ծերոյն՝ բազում աշխատութիւնս կրեաց վասն նորա, և ոչ երբէք լուաւ 'ի ծերոյն՝ թէ կեցցես: Իսկ յորժամ հանդերձեալն էր 'ի վախճանել, նստելով առ նմա և այլ ծերոց, կալաւ ծերն զձեռանէ նորա և ասէ ցնա. կեցցես կեցցես կեցցես: Եւ յանձ-նեաց զնա ծերոցն ասէ. սա հրեշտակ է և ոչ մարդ:

ԱՂԲԱՅՐ՝ ոմն եհարց ցծեր և ասէ. եթէ եմ 'ի տե-ղւոջ ուրեք և եկեացէ ինձ նեղութիւն և ոչ ունիմ առ ումեք զկամս իմ կատարել առ 'ի պատմել զնեղութիւնս՝ զի՞նչ գործեցից: Ասէ ցնա ծերն. հաւատամ յԱծ զի նա առաքէ զշնորհս իւր և կատարէ զկամս քո եթէ

[1] Եղբայր ոմն եհարց ցծերն իւր և ասէ. եթէ եկեսցեն վիշտք 'ի վերայ իմ և ոչ վստահանամ ումեք պատմել զնա, զի՞նչ արարից. հայր: Ասէ ցնա ծերն. հաւատամ յԱծ զի առաքեսցէ 'ի քեզ զշնորհս իւր և օգնեսցէ քեզ եթէ դու հաւատով խնդրեսցես 'ի նմանէ: Զի լուայ ես եթէ եղև 'ի Սկիւտէ այսպիսի գործ. զի էր անդ եղբայր ոմն

Digitized by Google

ճշմարտութեամբ պաղատեսցիս ։ Լուայ եթէ 'ի Սկիւթ ե-ղեն իրքդ այդպիսի՝ եթէ էր ոմն Ճգնաւոր, և վասն զի ոչ ունէր առ ումեք կատարել զկամս իւր և երթալ առ ողջ, պատրաստեաց զմախաղն իւր յերեկորեայ զի գնասցէ ։ Եւ ահա երևեցաւ 'ի գիշերին նմա շնորհն այ իբ-րև զկուսան, և մխիթարեաց զնա և ասէ . մի՛ ուրեք եր-թար, այլ նիստ աստ ընդ իս, վասն զի ոչ ինչ լինի 'ի չարէն յայնմանէ զոր լուար ։ Եւ նորա լուեալ նստաւ, և վաղվաղակի ողջացաւ սիրտ նորա ։

Ճգնաւոր յոյժ և ոչ ումեք հաւանեալ էր նա, վասն այնորիկ գնալ յաջորդեալ էր նա անձամբ ։ Եւ ահա երևեցաւ նմա շնորհքն այ յայտ-նապէս իբրև զկոյս մն և ասէ . կայցես առ իս և մի՛ գնասցես այլուր, զի ոչ ումեք արարի չար ընդ ում կացի ։ Իսկ նա լուեալ զայս 'ի նմա-նէ՝ բժշկեցաւ սիրտ նորա և բնակեցաւ անդ հաւանեալ ամենեցուն ։ Այսպէս, որդեակ, որ 'ի վհատութեն իցէ, շնորհացն այ ապաւինեսցի . և հոգևոր հօրն վստահասցի պատմել զվիշտս սրտին ։

# ՄՆԱՑՈՐԴՔ

## յերկրորդ թարգմանութեան

Գնացին երբեմն եղբարք առ հայրն Անտոնիոս և ասեն ցնա. ասասցես մեզ, հայր, բան ինչ որով կեցցուք։ Ասէ ցնոսա ծերն. լուեալ էք դուք յաւետարանէն, զի անդ ամենայն բարուք գրեալ են, զայն առնիջիք և կեցցէք։ Ասեն ցնա եղբարքն. այլ և ՚ի քէն կամիմք լսել, հայր, բան։ Ասէ ցնոսա ծերն. յաւետարանին գրեալ է այսպէս, եթէ որք հարկանէ զաջոյ ծնօտ քո, մատո նմա և զմիւսն. զայս արասջիք դուք։ Ասեն ցնա եղբարքն. զայս ոչ կարող եմք առնել։ Ասէ ծերն. եթէ ոչ կարէք մատուցանել զմիւսն, ապա և զմի կողմն համբերեցէք։ Ասեն ցնա. և ոչ զայդ առնել կարող եմք։ Ասէ ծերն. և եթէ ոչ զայս կարէք, ապա և դուք մի լինիք ՚ի հարկանողացն։ Ասեն ցնա. և ոչ զայս կարող եմք։ Յայնժամ ասէ ծերն ցաշակերտն իւր. արասցես եղբարցդ կերակուր, քանզի հիւանդ են. զի եթէ զայսոսիկ ոչ կարեն, ես զինչ արարից սոցա։

Եղբայր ոմն եհարց ցհայրն Ագաթոն և ասէ ցնա. պատուիրան եհաս ինձ, և է պատուիրեալն տեղի պատերազմի. կամիմ ես զի գնացից անդ, այլ երկնչիմ ՚ի պատերազմէն։ Ասէ ցնա ծերն. եթէ էր Ագաթոն, ընդ պատուիրանն կատարէր և զպատերազմն զայն յաղթէր աղօթիւք հօրն և հնազանդութեան կարողութեամբ։

Ասէին վասն հօրն Բեսարիոնի աշակերտքն իւր՝ եթէ այնպէս էին կեանք նորա իբրև զթռչնոց և կամ իբրև զվայրենի ինչ որսոյ՝ բնաւ հրահանգ և անշփոթ, և այսու հանդարտութեամբ կատարեաց զաւուրս իւր. ոչ հոգաց վասն տան և ոչ ցանկաց կեալ ՚ի տեղի հանգըստեան և ոչ երբէք յագեցաւ կերակրով և ոչ ստացաւ

Digitized by Google

ինչ 'ի պիտոյից աշխարհիս, նա և ոչ զբեանս, այլ իբրև զանմարմնոց վերագոյն մարմնոյ եղև ամենևին և ան-տից նորա. այլ յուսով հանդերձեալ բարեացն կերակ-րէր և հաւատովն ընդ հաստատեալ քաղաքավարէր և համբերէր ամենայն վշտաց և իբրև զգերեալ մերկ շր-ջէր։ Այս 'ի ձմերայնոց սառամանեաց և 'ի տօթոյ ա-մարայնոյ նեղէր. շրջէր նա յանկոխ և յանմարդաբնակ տեղիս, 'ի դժուարին փապարս, 'ի պարեխս և 'ի կա-պանս և յանմխիթար տեղիս և յափունս ծովու շր-ջէր, և ուր պատահէր՝ անդ կայր 'ի գիշերի և անօթի գնայր։ Իսկ եթէ երբեմն գայր առ միանձունս 'ի վանս, նստէր արտաքոյ դրան վանիցն և լայր, և իբրև զերծեալ յալեաց ծովու ողբայր։ Այլ եթէ ելանէր ոք յեղբարցն և տեսանէր զնա այնպէս ողբալով իբրև զմուրացիկ ոք յերկիր անկեալ, գթայր 'ի նա և խանդաղատէր և ա-սէր. զի՞ լաս, ով մարդ, զի՞ է քեզ։ Այլ եթէ հարկէր ոք տանել 'ի տուն կամ կերակրել, ասէր նա. ոչ կա-րեմ բնաւ ընդ յարկաւ մտանել, եթէ ոչ նախ գտից զհարստութիւն տան իմոյ. զի կորեաւ ինձ իմ բազում տեսակօք, վասն զի անկայ 'ի ձեռս աւազակաց 'ի ցա-մաքի, և 'ի ծովու նաւաբեկ եղէ, և անկայ յաղքատու-թիւն, և 'ի փառաց և 'ի պատուոյ իմոյ յանպատուու-թիւն և յաղքատութիւն մատնեցայ։ Իսկ եթէ լսէր ոք բանից նորա, տայր նմա հաց և ասէր. առցես զայս 'ի կերակուր, և զայն զոր լքեր՝ ած տացէ քեզ զհայրե-նիս և զինչս քո։ Իսկ նա իբրև լսէր զայս, առաւել ող-բայր և ասէր. ոչ գիտեմ եթէ կարող եմ գտանել զոր կորուսի. այլ խնդրեմ ինձ զմահ, զի ոչ մնամ յայսմ հետէ գտանել ներումն վշտաց և տառապանաց իմոց, և զի պարտ է կատարել զշաւղ իմ։

Ասաց հայրն Անտոնին. զճանապարհս առաքինի գնացէք և թուեցէք զմղոնս և ոչ ձանձրանայք։

Աղբայր ոմն գնաց առ հայրն Ափկտոր միայնակեաց 'ի վանսն որ կոչի Աղերզին, և ասէ ցնա. զինչ արարից, հայր, զի նեղեն զիս ախտք վհատութեան և կարճամտու-թեան։ Ասէ ցնա ծերն. այդ հիւանդութիւն է հոգւոյ. և զոր օրինակ որոց տեսարանքն ցաւեն՝ կարծեն թէ ա-ռաւել զլոյս տեսանեն, իսկ որոց ողջ իցեն ակն՝ սակաւ տեսանեն, այսպիսիք իցեն և կարճամիտք. զի 'ի փո-

Digitized by Google

քունոց վշտաց խորտակին, և կարծեն եթէ անհամբերելի վիշտ են 'ի վերայ նոցա. իսկ որոց հոգիք ողջք իցեն, առաւել խնդան 'ի հասանել վշտաց և նեղութեանց:

ՊԱՏՄԷՐ մեզ հայրն Դանիէլ՝ եթէ էր ոմն կրօնաւոր որոյ անուն էր Դուլաս, որ և ընդ մեծ հարս համարեալ էր: Նոյն Դուլաս 'ի միաբանաց ժողովս բնակէր զամս քառասուն. և ասէր նա՝ եթէ բազում տեսակս քաղաքավարութեան փորձեալ է իմ, և գտի ես զի 'ի մէջ ժողովոյ բազում եղբարցն դիւրաբար ուղղին գործք առաքինութեցն՝ եթէ բոլորով սրտիւ եկեալ բնակեսցին անդ: Քանզի էր եղբայր ոմն տեսակաւ խոնարհ և արհամարհեալ, իսկ գործովք բարձր և պատուեալ յոյժ. 'ի ժողովս միաբան եղբարց բնակէր: Սա յամենեցուն անարգեալ լինէր, զի եղբարքն ամենեքեան նախանձով չարին նեղէին զնա. զի ոմն հարկանէր, իսկ ոմանք թքանէին, և ոմանք նախատէին և անարգէին զնա: Զամս քսան լեալ այս, այլ ոչ համբերեաց զևն տեսանելով զմեծութի անձին նորա և զարիութի մտաց նորա և զմեծ համբերութի սրտին. այլ եգիտ հնարս այսպիսի վհատութեան զնա, զի զգացոյց եղբօր ումեմն, և մտեալ 'ի գիշերի յեկեղեցին՝ յորժամ ննջեալ էին եղբարքն՝ և գողացաւ զամենայն քահանայական անօթսն և ելեալ 'ի վանիցն գնաց: Իսկ իբրև եղև ժամ աղօթիցն և եմուտ սարկաւագն 'ի խնկել, եգիտ զամենայն կողոպտեալ, և ելեալ պատմեաց զայն հօրն: Եւ հարեալ ժամ ժողովեցան եղբարքն և սկսան շփոթել, և եղև աղմուկ յոյժ, և ասեն ամենեքեան՝ եթէ ոչ այլ ոք արար զայն, եթէ ոչ այս ոմն եղբայր. վասն որոյ և ոչ յեկեղեցին եկն այսօր. և եթէ ոչ էր արարեալ զայս, որպէս հանապազ նախ քան զամենեսեան գայր, նոյնպէս և այժմ եկեալ էր: Եւ առաքեցին առ նա և գտին զնա՝ զի կայր յաղօթս, և խորտակեցին զդուռն և մտեալ 'ի ներքս քարշեցին զնա արտաքս: Իսկ նա աղաչէր զնոսա և ասէր. զի՞նչ ինչ գործեալ է իմ: Եւ նոքա անարգանօք ասէին. ել առ մեզ, եկեղեցակողոպտող դու և ոչ արժանի կենաց, ել առ մեզ. ո՞չ էր բաւական քեզ զի այսչափ ժամանակս նեղեցեր և շփոթեցեր զմեզ, և արդ զհոգիս մեր կորուսանել ձեռն արկեր: Իսկ նա ասէր. մեղայ, թողէք ինձ:

Digitized by Google

Եւ բերեալ առ առաջնորդն զնա և ասէին. սա է, հայր, յառաջնմէ աւերող վանից մերոց։ Եւ սկսան իւրաքանչիւր ’ի նոցանէ ասել. մինն ասէր՝ ես տեսի զսա զի բանջար ուտէր գաղտ, և այլ ոմն ասէր՝ ես տեսի զի գողացեալ հաց տայր արտաքոյ, իսկ այլ ոմն ասէր՝ ես տեսի զդա զի յեկեղեցին գինի էառ։ Այլ զայս ամենայն և որ նման սոցին սուտ վկայէին ամենեքեան ’ի վերայ արդարոյն այնմիկ։ Իսկ նա զճշմարիտն ասէր՝ եթէ ոչ ինչ գիտեմ յայդոցիկ զոր ասէքդ։ Եւ նոքա ոչ հաւատային նմա ամենեքին։ Յայնժամ մերկացոյց ’ի նմանէ առաջնորդն զսեաւ կրօնաւորի և ասէ. քո գործքդ այդոքիկ ոչ են քրիստոնէի։ Եւ դրին յոտս և ’ի ձեռս նորա շղթայս, և ետուն զնա ’ի կանոնս վանիցն ’ի տանջանս։ Իսկ նա մերկացոյց զնա և գանեաց ուժգին արջառաջլօք, և ապա եհարց զնա և ասէ՝ եթէ ճշմարիտ իցէ զոր ասեն վասն քո։ Իսկ նա ժպտելով ասէր. ներեա ինձ զի յանցեայ և ոչ գիտեմ։ Դժուարեալ ընդ այն կրօնաւորն տանջեաց ահագին, և ապա եդ ’ի բանտի և ագուցեաց զոտս նորա ’ի կոճեղս, և գրեաց առ դուքսն վասն նորա։ Եւ եկեալ սպասաւորք դքսին տարան զնա անդ, և էին շղթայք ’ի վերայ նորա։ Եւ իբրև կացուցին առաջի, ասէ դուքսն. ուստի ես, այր դու, և կամ յորմէ աշխարհէ, և ընդէ՞ր եղեր կրօնաւոր։ Եւ նա ինչ ոչ ասաց, բայց միայն զայս՝ եթէ թող ինձ։ Բարկացեալ իշխանն և հրամայեաց պարզել զարդարն և արջառաջլօք հարկանել և հերձել զթիկունս նորա։ Եւ մինչ սկսան հարկանել, ասէ ժպտելով ցիշխանն. հարկանելով հարցես զարծաթ իմ, զի առաւել ևս պայծառասցի։ Ասէ դուքսն. և ես իբրև զձիւն սպիտակ արարից զյիմարութիւն քո։ Եւ հրամայեաց հուր արկանել ’ի ներքոյ որովայնի նորա, և քացախ և աղ վաթել ’ի վերայ կիզեալ տեղւոյն խոցից։ Իսկ որք տեսանէին, հիանային ընդ քաջութեան և համբերութեան նորա և ասէին. ասա մեզ՝ ո՞ւր են անօթք եկեղեցւոյն, և թողցուք զքեզ։ Իսկ նա ասէր. զոր ոչ գիտեմ, զի՞նչ ասացից, զի ոչ է իմ գործ։ Եւ հազիւ ասաց դուքսն դադարել ’ի հարկանելոյ դատաւորքն, և դնել ’ի բանտի։ Իսկ ’ի վաղիւն կոչեաց դուքսն զհայր վանիցն և զեղբայրսն, և իբրև եկին առ նա՝ ասէ ցնոսա. ահաւասիկ և խիստ տանջեցի զնա և ոչ խոստովանեցաւ

ինչ գործ ։ Ասեն եղբարքն . ամենապատիւ իշխան , և այլ ևս բազում չարիս գործեալ է այրն այն , և մեք հանբերեալ նմա մեծայաք դարձի նորա , և նա զյետին չարիս գործեաց ։ Ասէ դուքսն . և զինչ կամիք զի արարից զնա ։ Ասեն ցնա . զոր ինչ ասեն օրէնքն ։ Ասէ դուքսն . ասեն օրէնքն՝ եթէ եկեղեցականզողպատուոն մեռանի ։ Ապա նոքա ասեն . մեռցի և սա ։ Յայնժամ դուքսն արձակեաց զնոսա , իսկ զեղբայրն ետ ցդահճին զի սպանցեն զնա ։ Ապա առեալ տարան զսուրբն և զարդարն 'ի տեղի ուր սպանանելոց էին ։ Յայնժամ իբրև ետես եղբայրն որ խոբեալն էր զանօթսն՝ զի հատաւ վճիռն , զղջացաւ և ասէ . եղէ գող և լինիմ սպանող ևս . սա մեռանի անմեղ և կեցցէ հոգւով , իսկ ես մեղական և կորնչիմ . ով եղկելի անձն իմ , եթէ այժմ և եթէ յապայն ոչ կարեն թաքչել անօթքն , և մինչ յայտնի՝ մեռանելոց ես . և դուցէ եթէ աստ ծածկեսցի , սակայն յայտ ոչ է 'ի ծածուկ , և զինչ տացես պատասխանի յաւուրն դատաստանի ։ Ապա գնաց փութով առ առաջնորդն և ասէ . ողնեա , հայր , զի մի մեռցի արդարն , ես գիտեմ ուր իցեն անօթքն ։ Յայնժամ առաքեաց հայրն և պատմեաց զայն իշխանին . իսկ իշխանն գնաց առ դահճին , և եգիտ զեղբայրն կապեալ և զսուրն մերկացեալ և զսուրբն պատրաստ առ 'ի սպանումն . և լուծեալ զեղբայրն 'ի կապանացն ետ զնա 'ի դագաղն և առաքեաց 'ի վանսն ։ Իսկ եղբարքն սկսան անկանել առաջի նորա և ասել . մեղաք քեզ , այլ թողութիւն շնորհեսցես մեզ ։ Իսկ նա սկսաւ ողբալ և ասել . թողութիւն արարէք , եղբարք , զի շնորհապարտս համարիմ զձեզ , զի յաղագս փոքր այսորիկ ցաւոց և չարչարանաց մնամ ես մեծի ողորմութեն այ . վասն այնորիկ ուրախ էի ես 'ի չարախօսելն իմ և ժպտելով խօսէի , զի վասն սակաւիկ այսու արհամարհանաց վարձս մեծամեծս առից . այլ վասն ձեր արտմէի , զի ոչ էր կամ ինձ ձերովդ յանցանօք արդարանալ ինձ ։ Ապա եկաց եղբայրն այն երանելին այլ ևս երիս աւուրս կենդանի 'ի մահիճս և գնաց առ տէր որում կարօտէր միշտ ։ Ապա եղբայր ոմն գնաց տեսանել զնա թէ որպէս իցէ , և գտաւ զնա զի յաղօթսն 'ի ծունկս լեալ աւանդեալ էր զհոգին և կայր ևս այնպէս դեռ . և գնացեալ եղբայրն պատմեաց հօրն , իսկ հայրն հրամայեաց բե-

Digitized by Google

ընել յեկեղեցին զմարմին նորա, զոր անդ թաղեսցեն զնա։ Այլ դրին զմարմին նորա 'ի տարկաւագանոցն, և կնքեալ զդուռն մինչև հօրն մեծի լաւրայն, զոր գայցէ և առա թաղեսցեն զնա պատուով իբրև զվկայ Քրիստոսի։ Այլ իբրև եկին հարք և եղբարք մեծի վանիցն, և երգիչքն կատարեցին զկարգ թաղմանն, առէ հայրն մեծի վանիցն ցառաջնորդս անդուոյն. բացէք զդուռն տարկաւագանոցին և հանէք զմարմին սրբոյն զոր թաղեսցի, զի ինն ժամ է։ Այլ իբրև բացին՝ ոչ ինչ գտին, բայց միայն ըզսանդալ իւր, զոր փոխադրեալ էր զնա Ած յերկինս կենդանեաց*։ Այլ զարմանալեօք հիացան ամենեքեան ընդ մեծի սքանչելեացն ընդ այն, և փառաւոր առնէին զԱծ և սրտառուօք ասէին. տեսէք թէ զինչ շնորհեն մեզ երկայնամտութիւն և համբերութիւն և խոնարհութիւն և չարչարկութիւն։ Այլ մեք տեսեալ զայս սքանչելի պատիւն համբերութեան, և նախանձեալ ընդ լաւ շնորհքն համբերութեան և խոնարհութեան և գնացեալ ճգնեսցուք, և համբերեսցուք անօթոյ և արհամարհանաց, և քաջալերեալ մխիթարեսցուք 'ի ժամ փորձութեան, որք շնորհեն մեզ զարքայութիւն երկնից շնորհօքն Քրիստոսի Տեառն մերոյ։

ԱՍԱՑ հայրն Ամոյէս. ոչ այլ ինչ շահ լիցի և խրատեսցէ զնորեկան եղբայր՝ իբրև անարգել և թշնամանել. զի զոր օրինակ տունկ որ ըստ օրէ ոռոգի և փութապէս աճեսցի, նոյնպէս և նորեկ եղբայր առաքինանայ եթէ համբերեսցէ թշնամանաց և նախատանաց։

ԴԱՐՁԵԱԼ ասէ. երանի այնոցիկ որք գիտութեամբ աշխատին, զի համբուրանէ զնոսա հանճար յամենայն ծանրութեանց, և յետոյ զարձուցանէ զպատրանս և զդաւաճանութիւն դիւաց՝ որք խափանողս լինին ամենայն գործոց բարեաց, և առաւել ևս յաղօթս ծուլացուցանեն զորս ջանան Այ ծառայել. վասն այսորիկ երանելի է զգուշել զմիտքն յանձն, և խնամուք և չափաւորապէս ճգնել։

ԱՍԱՑ դարձեալ. առաջին ամենայն ճգանց է օտարութիւն յորժամ միայն ոք փախիցէ՝ թողեալ զիւրն բնակութիւն և այլուր երթիցէ. իսկ այնպիսւոյն պարտ իցէ զի ունիցի ընդ իւր ընկեր զհաւատս, զյոյս և զսէր և զխիղճ հաստատութիւն, և քաջալեր լինել յամենայնի 'ի

* Չէ պարտ խնամել էին մարմնոյ նոխորշեալ ինչ յերկինս, այլ վասն առաքինութեանց երանելւոյն առանձնացուցանել զնոսա որպէս նինն գիրք։



Digitized by Google

կամս իւր: Վասնզի յայնժամ պաշտրեն զնա յամ կող-մանց պատերազմունք, և բազմօրինակ բերեն զփորձս 'ի մտի և երկեցուցանեն՝ եթէ անկանիցիս 'ի փորձութիւնս և յաղքատութիւն, 'ի հիւանդութիւնս և յատելութիւնս բազմաց. եթէ դիպեսցին այսոքիկ, զի՞նչ յայնժամ արասցես մինչ ոչ ոք իցէ ծանօթ քո և ոչ ողորմած քո և ոչ գթած քո և ոչ հոգաբարձու, ոչ տուն, նա և ոչ տեղի ապաստանի: Զայսոսիկ յիշեալ հեղձի 'ի մտի: Բազում անգամ է զի գթութիւն տյ փորձէ զնա այսպէս, որպէս զի յայտնեսցի փոյթ և սէրն նորա զոր ունի առ ած: Այլ դու 'ի վերայ այսր ամի մի՛ երկիցես, զի ոչ թողու ած երբէք և ոչ զոք յայնցանէ որ խնդրեն զնա:

ԱՍԱՑ դարձեալ հայրն Եսայիաս. եթէ ոչ և միտքս քո աղօթեսցեն ընդ մարմնոյդ, ունայն է վաստակ քո. զի եթէ սիրեսցես դու զփորձս, յետոյ յուրախութիւն փոխեսցի քեզ:

ԵՂԲԱՅՐ ոմն պատերազմեալ եղև 'ի խորհրդոց զօր-ծով, և պատմեաց զայն հօրն Իլակրեի: Իսկ ծերն կա-մեցաւ հաստատել զնա. ասէ ցնա. կրօնաւոր ոմն 'ի Սկի-տէ ունէր աշակերտ հնազանդ յոյժ, և կացեալ ընդ նմա ամս բազումս՝ և պատերազմեալ եղև խիղճն և ասէ ցծերն. արասցես զիս միայնակեաց, հայր, 'ի խորին տեղւոջ ուրեք: Ասէ ծերն. գնացեալ խնդրեսցես տեղի ուր և հաճոյ թուեսցի քեզ, և շինեսցուք անդ սենեակ քեզ: Եւ գնացեալ եգիտ տեղի հեռի մղոն մի 'ի ծերոյն սենեկէ, և գնացեալ շինեցին անդ սենեակ: Ասէ ծերն ցեղբայրն. զոր ինչ պատուիրեմ քեզ՝ արասցես. յոր-ժամ քաղցիցես՝ կերիցես, և մինչ ծարաւեսցիս՝ արբ-ցես, և յորժամ նիրհես՝ ննջեսցես, բայց միայն 'ի սենեկէ քումմէ մի՛ ելանիցես մինչև ցշաբաթն. և ա-պա ել և եկ առ իս: Արար եղբայրն ըստ հրամանի ծե-րոյն յաւուրս երկուս: Իսկ յերրորդումն աւուրն ձանձ-րացաւ և ասէ 'ի մտի. զի՞նչ է այս զոր արար ինձ ծերն: Եւ յարուցեալ ասաց աւելի սաղմոս, և զկնի մտանելոյ արևու ճաշակեաց, և գնաց 'ի մահիճս զի ննջեսցէ. և ետես 'ի մահիճսն իւր կազմեալ սեաւ ոմն հնդիկ զի կրճտէր զատամունս 'ի վերայ նորա: Եւ նա յահէ նո-րա վաղվաղակի փախեաւ և եկն առ ծերն, և բախէր զդուռն և ասէր. հայր, ողորմեաց ինձ և բաց զդուռս քո: Իսկ ծերն գիտացաւ զի ոչ պահեաց զպատուիրանս

իւր, վասն այն ոչ եբաց նմա զդուռն մինչեւ ցառաւօտն։ Իսկ յառաւօտուն բացեալ եգիտ զնա զի կայր արտաքոյ եւ լայր եւ աղաչէր. գթացաւ 'ի նա հայրն եւ տարաւ 'ի ներքոյն։ Ասէ եղբայրն՝ եթէ ներու ինձ իբրեւ զհնդիկ անտի 'ի մահճիձս իմ մինչ կամէի ննջել։ Ասէ ծերն ցնա. յայն սակս դիպեցաւ քեզ այն, զի ոչ պահեցեր զբանս իմ։ Այնժամ կարգեաց նմա կանոնս զոր կարող էր տանել. եւ եղեւ աշակերտն այն կրօնաւոր ընտրեալ։

ԵՀԱՐՑ ոմն եղբայր ցհայրն Թէոդորէ եւ ասէ. եթէ լինիցի յանկարծակի երկեղուս ինչ գործ, դու ո՞չ երկիցես, հայր։ Ասէ ցնա ծերն. եթէ անկցին երկինք 'ի վերայ երկրի, Թէոդորէ ոչ երկիցէ։ Զի խնդրեալ էր նա յԱյ, եւ բարձեալ էր 'ի նմանէ ահեր զերկչոտութի։

ԱՍԷԻՆ վասն հօրն Թէոդորեայ եւ վասն հօրն Լուկիայ՝ եթէ յիսուն ամ խափանեալ էին զխորհուրդս իւրեանց եւ ասէին՝ զկնի ձմերանս երթիցուք աստի. եւ 'ի գալ ամարայնոյն ասէին՝ թէ զկնի այսու ամարայնոյս երթիցուք։ Այսպէս կատարեցին զամենայն աւուրս կենաց իւրեանց։

ԵՂԲԱՅՐ ոմն եղեւ բարոտ յոյժ անհամբերութեան, որ եւ էր ինքն որդի ազատաց. առ որ ասէին զելոքն՝ այդ 'ի կրօնաւորութենէդ եղեւ, դու ընդէ՞ր համբերես դմա, զի ծանրացուցի եւ որոմնեցուցի մեղք քո։ Իսկ եղբայրն համբերութեամբ իւրով յաղթեաց զչարին խորհուրդս եւ զերծաւ յորոգայթէ թշնամւոյն։ Քանզի տեսեալ Տէր զհամբերութի նորա, ազատեաց զնա 'ի ցաւոց եւ բժշկեաց 'ի բարոտութէ. զի որք համբերեն յուսով՝ օգնէ նոցա, զի մերձ է տէր առ երկիւղածս իւր։

ԱՍԱՑ հայրն Իսիդորէ. իմաստութի սրբոցն այս է զի ծանիցեն զկամս Այ, եւ ամենայնի յաղթեսցէ մարդ համբերութեամբն իւրով, զի հնազանդեսցի ճշմարտութեանն, եւ զի պատկեր Այ է մարդ. վասն այնորիկ դիւական է հետեւել իւրն կամաց եւ խորհել զիւրն հաճոյս, եւ ոչ հետեւել եւ հնազանդել օրինացն Այ։ Արդ այժմ ժամ է ծառայել Այ, եւ ահա օր փրկութե յարամ իցեն միշտք. եւ որք որդւոց զնամն եւ համբերութի, տաստան զանձինս իւրեանց։

ԱՍԱՑ հայրն Պիմէն վասն հօրն Յովհաննու կարճկանն՝ եթէ խնդրեաց յԱյ, եւ բարձաւ 'ի նմանէ ամե-

Digitized by Google

նոյն պատերազմունքն մարմնոյ, և եղև ազատ յամենայնէ. Իբրև ետես զայս, գնաց առ ծեր ոմն մեծ և պատմեաց նմա զայն և ասէ. տեսանեմ զիս 'ի հանգիստ մեծ, զի ոչ մի ինչ պատերազմ կայ 'ի վերայ իմ։ Ասաց ցնա ծերն. գնա դարձեալ և աղաչեա զտէր, զի թողցէ 'ի քեզ զպատերազմն քո, քանզի պատերազմաւ ուղղին մեծամեծ բարութիւնք։ Եւ աղաչեաց զտէր, և եկն դարձեալ պատերազմն, և այլ ոչ բնաւ աղօթէր զի բարձցէ զայն 'ի նմանէ տէր. այլ խնդրէր զի համբերեսցէ ամենայն փորձութեանց նորա։

ԱՍԱՑ դարձեալ հայրն Պիմէն վասն հօրն Նայղրիոսի՝ եթէ յայսպիսի չափ եհաս, մինչ զի հիւանդացեալ դնէր 'ի մահիճս ամս բազումս, և ոչ երբէք կամեցաւ առնել զկամս իւր, այլ ասէր. երանեալ է այր որ համբերեսցէ փորձութեանց։

ՊԱՏՄԵՑ երբեմն հայրն Մակարիոս մեծն առ հայրն Անտոնիոս 'ի լերինն. և իբրև բախեաց զդուռն, ել առ նա հայրն Անտոն և ասէ. ո՞վ ես դու։ Եւ նա ասէ. ես եմ Մակար։ Իսկ ծերն փակեաց զդուռն և եթող զնա արտաքս, և ինքն 'ի ներքս 'ի խցին էր ժամ ինչ այնպէս կացեալ։ Իսկ իբրև ետես զհամբերութիւն ծերոյն Մակարայ, եբաց զդուռն և ուրախութեամբ ընկալաւ զնա և ասէ ցնա. 'ի բազում ժամանակաց ցանկայի տեսանել զքեզ, քանզի 'ի բազմաց լուեի զքէն։ Եւ հիւրընկալեալ բարւոք հանգոյց զնա, զի 'ի հեռաւոր բազում աշխատութեամբ եկեալ էր։ Իսկ իբրև երեկոյ եղև, թրջէր հայրն Անտոնիոս զարմաւենիս առ 'ի գործ։ Ասէ Մակարի. եթէ հրամայես՝ թրջեցից և ես ինձ։ Անտոնիոս ասէ. թրջեսցես և դու։ Եւ կապեալ խուրձն մի մեծ զովացոյց, և նստեալ երկոքեան 'ի միասին յերեկոյէ մինչև ցառաւօտն հիւսէին զփիրայն և խօսէին զշահս հոգւոյ և զհիւսեալն թողուին 'ի դուրս ընդ պատուհանն այրին։ Եւ ետես զհիւսս Մակարայ զի շատ էր յոյժ, և ասէ. զօրութիւն բազում ելանէ յերանելի ձեռացս յայսցանէ։ Այսպիսիք էին երանելիքն 'ի գործ և յաշխատութիւն մեծ, և 'ի հոգևորն առաւելագոյն 'ի հրեշմանս աղօթից։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց զհայրն Մակարիոս և ասէ. զի՞նչ իցէ. հայր, քաղցութիւն և աղօթք։ Ասէ ծերն. քաղցութիւն

և աղօթք են յորժամ յաղթէ ոք ամենայն փորձութեանց որք գայցեն 'ի վերայ՝ թէ 'ի դիւաց և թէ 'ի մարդկանէ, որպէս գրեալ է՝ համբերելով համբերի տեառն և լուաւ աղօթից իմոց։ Վասնզի բարի են աղօթք, բարի է և համբերելն փորձանաց, զի օգնեսցէ մեզ տէր, և ուղղեսցուք յամենայն գործս բարիս. և զի օտար է 'ի կրօնաւորէ բարկանալ եղբօրն, օտար է և տրտմեցուցանել զընկերն, այլ պարտ է ածանել նախ և ապա ուսուցանել։ Նաև զի ունիցի կատարեալ խոնարհութիւն ըստ առաքելոյ որ ասէ՝ եթէ առաւել նշաւակի եղաք ամենայն աշխարհի. և թէ մեք յիմարք և դուք իմաստունք, և մեք անարգք և դուք փառաւորք. և արդ վասն այսորիկ պարտ է խնդալ մինչ անարգիցիմք, և փրկութիւն համարել միշտ զվիշտս և զտուգանս՝ զոր յաղագս ա̃յ եկեսցեն 'ի վերայ մեր։ Նաև զի Պետրոս առաքեալ ասէ. եթէ արհամարհեսջիք վասն անուան տեառն, երանելիք էք դուք, և հոգի ա̃յ բնակեսցէ 'ի ձեզ։ Նաև արդ եթէ այս այսպէս իցէ, ապա խնդալ պարտ իցէ յորժամ արհամարհեալ լիցուք վասն անուան տեառն. և զի ասէ՝ խնդային յորժամ վասն անուան տեառն ձաղեալ լինէին։ Նաև արդ ոչ գիտէք եթէ պարտական են որդիք նմանել հարցն. նոյնպէս և մեք նմանեսցուք առաքելոցն Ք̃ի, որք աւետարանաւն ծնան զմեզ. և եթէ որդիք նոցա իցեմք, պարտական եմք և գործոց նոցա նմանող լինել. քանզի նոքա մինչ անարգեալ լինէին՝ խնդային, և մինչ զրպարտէինն՝ ոչ շարժէին 'ի մտի. և զի լսէին 'ի Հրէից և 'ի հեթանոսաց՝ եթէ նոքա աղանդիւք և դիւթութեամբ իւրեանց շփոթեն զաշխարհ ամենայն. և 'ի վերայ այսոց ամենայնի ոչ միայն ոչ տրտմէին, այլ և խնդային ևս և զանիծիչսն օրհնէին։ Նաև զի այս ամենայն վասն այնորիկ գրեցան, զի ընթերցցուք և նմանեսցուք նոցա. և յորժամ դիպեսցին մեզ չարիք կամ անարգանք, և տուժիցիմք ինչ և կամ հարկանիցիմք և կամ զրպարտիցիմք և կամ սուտ վկայեալ լինիցիմք, այսու գիտութեամբ և յուսով ցնծասցուք սրտիւ իբրև 'ի վերայ բազում շահեալ պատուոց, որով արժանի լիցուք հաղորդակից լինել Ճգանց առաքելոց և մարտիրոսաց և հարց ամենեցուն. և զի թէ վշտացն հաղորդեսցուք, և փառացն հաղորդք եղիցուք։ Օ այսուհետև ա-

Digitized by Google

միայն քրիստոնէից պարտ է գործել, զի այս հաստատա-
կաց է օրէնք, որպէս զի լիցուք աշակերտք քարոզչաց
նոցուն: Նոյն և առաւել կրօնաւորք, որք են աղքատք,
պարտին առնել զայսոսիկ՝ որք կամաւն իւրեանց հրա-
ժարեալ իցեն յերկրէ և յամենայն գործոց նորա:

ՀԱՅՐՆ Մելխի բնակէր երբեմն 'ի սահմանս Պար-
սից ընդ երկու աշակերտս իւր. և ելին երկու որդիքն Թա-
գաւորին Պարսից եղբարք մարմնով որսալ 'ի մայրիս ըստ
սովորութեան իւրեանց. և եգիտն մեծ ուռկան որոյ հե-
ռագոյն իբրև երկոտասան մղոնս, և մղոնս քառասուն,
իբր զի զորս գտցեն որս՝ ձգեսցեն 'ի նմա և նիզակօք խո-
ցեալ սպանցեն: Որդ յանկարծակի գտաւ ծերոյն և ա-
շակերտք իւր 'ի դամն յայն: Իսկ իբրև տեսին զնոսա
մարդս մերկս և վայրենիս ծածկեալք գխոտովք իւրեանց,
զարմացան և հայէին ընդ նոսա սքանչացեալք ժամ մի,
և ապա ասեն ցսուրբ ծերն. մարդ իցես արդեօք եթէ
որս ինչ նոր՝ ասա մեզ: Ասէ ծերն. մարդ եմ մեղա-
պարտ և ելի աստ ողբալ զմեղս իմ, և երկիր պագանեմ
Յսի Քսի որդւոյն Այ կենդանւոյ: Ասեն ցծերն մեն
կուռք արքային. ոչ գոյ այլ Ած, բայց միայն արեգակն
և հուր զոր մեք պաշտեմք, և դու փութա և եկ յեր-
կրպագութիւն նոցա: Իսկ իբրև լուաւ զայս ծերն, ասէ
ցնոսա. դոքա ստեղծուածք են Այն մերոյ, և զձեզ մո-
լեն դէպ առ նոսա. այլ աղաչեմ զձեզ՝ թողէք զմոլո-
րութիւնդ զայդ և ծաներուք զճշմարտութիւն և խոստո-
վանեցէք զԱծ՝ որ ստեղծ զերկինս և զերկիր և զամե-
նայն ստեղծուածս: Իսկ նոքա ասեն. զխաչեալն և զմե-
ռեալն զայն ասես Ած ճշմարիտ գոլ: Ասէ ծերն. այո՛
զայն ասեմ Ած ճշմարիտ, որ խաչեցաւ և ջնջեաց ըզ-
մեղս, մեռաւ և եսպան զմահ, զնա հաւատամ Ած ճըշ-
մարիտ: Իսկ նոքա տանջեցին զնոսա խիստ, և բռնա-
դատէին զոհել հրոյ: Այլ զկնի բազում տանջանացն
սպանին զերանելի աշակերտսն նորա. իսկ զծերն Մե-
լխի այլ բազում տանջեցին, և յետոյ դրին նշաւակ
իբր նպատակ, և կացեալ նոքա երկոքեանն աստի և ան-
տի և հարին նետիւ մինն զսիրտն և միւսն զթիկունս նո-
րա: Իսկ երանելի ծերն Մելխի ասէ ցնոսա. զի խոր-
հեցայք զարիւն իմ հեղուլ անպարտ զծառային Քրի-
ստի, 'ի միում պահու յեզուց 'ի յայսմ ժամու անորդի

Digitized by Google

եղիցի մայրն ձեր 'ի ձէնջ և պակասեսցի 'ի սիրոյ ձերմէ, և նեղութիւնք ձերովք մեռցիք և դուք 'ի միմեանց խոցոտեալ, և խնդրեսցի արիւն մեր 'ի ձէնջ: Զայս ասացեալ ննջեաց երանելի ծերն սուրբն Մ՝եղիսի՝ նահատակեալ վկայական մահուամբ վասն անուան տեառն Ք՝րիստոսի: Իսկ 'ի վաղիւն ելին անդրէն 'ի յորս երկոքեան եղբարքն այնոքիկ որդիք Թագաւորին. և ահա գայլ շրջուցեալ եղջերու մեծ յանապատէ, որոյ զհետ չոգան երիվարիւքն. և ընկեցաւ 'ի մէջ նոցա որսն, և ձգեցին նետս երկոքեանն միանգամայն, և հարեալ ընդ սիրտ միմեանց սպանին զիրեարս: Եւ կատարեցաւ 'ի վերայ նոցա մարգարէութիւն սրբոյ նահատակին ծերոյն Մ՝եղիսի, զոր անէծ զնոսա ըստ գուշակելոյն նմա 'ի տեառնէ:

ՊԱՏՄԵԱՑ մեզ հայրն Ոսկեայ վասն հօրն Մ՝արկելլի՝ եթէ բնակէր նա հանդարտեալ միայն յայր մի որ մերձ էր 'ի գիւղ մի մեծ 'ի կողմանս Լիբանանու լերինն, զի 'ի կատար լերինն էր այրն ուր բնակէր նա: Եւ էր հայրս այս Մ՝արկելլէ հեզ յոյժ և քաղցր ընդ այլոց բազում առաքինութեանց, և ունէր յինքն կատարեալ զերկիւղն այ և սրբութիւն մարմնոյ. վասն որոյ հաւատ յոյժ ունէին առ նա արք գեղջն այնորիկ, մինչ զի բազումք երանէին առ նա և ուսանէին 'ի նմանէ: Եւ եկաց նա յայսչափ դժուարին տեղ և յայրն այն վեց ամ, և բազում փորձութեանց համբերեաց և դիւաց հակառակորդաց սրբութեանց, որպէս և ինքն ասէր՝ թէ ջանային հանել զնա յայրէ անտի և խափանել զբարի գործս նորա, այլ նա ժուժկալեաց ամենայնի: Իսկ դևն յարուցանել փորձանք 'ի վերայ նորա կամելով, մատնեաց գործ նմանն չարութեան իւրոյ. քանզի եղև ինքն դևն 'ի կերպարանս ծերոյն Մ՝արկելլէ, և գնացեալ 'ի գիւղ անդր կայր արտաքոյ գեղջն. և ուր տեսանէր կին միայն ելեալ 'ի շինէն, գնայր առ նա 'ի կերպս ծերոյն, խօսէր ցնա և ասէր. մեզ ինչ ոչ է մերձենալ 'ի կին, զի բնութիւն է այն: Եւ պատրէր զնա և անկանէր 'ի նա և գնայր 'ի լերինն կողմն: Եւ զայս առնէր դևն տեսակաւ կրօնաւորին բազում անգամ. և ուր տեսանէր կին միայն՝ դիմէր 'ի վերայ նորա ձևովն Մ՝արկելլոսի և բռնանայր և ննջէր ընդ նմա: Իսկ կանայքն ձանձրացեալ ընդ այսոսիկ՝ պատմեցին արանց գեղջն: Եւ եւ [illegible]

Digitized by Google

այս ընդ ամենայն գիւղն, և ժողովեցան ժողովուրդք բազում յաւուր կիրակէի յեկեղեցին, և եղև աղաղակ մեծ: Իսկ քահանայապետն կոչեաց զկանայսն զայնոսիկ և հարցանէր ստուգիւ՝ եթէ այս այսպէս իցէ, ննջեալ իցէ ընդ ձեզ ծերն: Եւ էին կանայքն այնոքիկ իբր քսան, որք ասացին՝ եթէ արդարև այդպէս իցէ. ոչ մի անգամ կամ երկիցս, այլ բազում անգամ. զի այս ե-րեք ամ է որ կալեալ բանադատէ և նեղէ զմեզ: Զայս իբրև լուաւ քահանայապետն, ոչ իմացաւ եթէ խար-դախութիւն գիւին և առաջօք ինչ իցէ: Եւ առաքեցին մանկունս զարս կանանց այնոցիկ և ասեն. գնացէք հա-լածեցէք զչար ծերն այն չարեօք 'ի տեղւոջէն յայնմա-նէ: Եւ իբրև գնացեալ հասին անդ արքն գեղջն, սկը-սան հարկանել զանպարտ ծերն զայն բրօք սաստկապէս յոյժ: Եւ կալեալ զմորուսն փետէին բնաւ և զանէին և ասէին. մոլի և չար, մեք հաւատացեալ էաք զքեզ իբ-րև 'ի սրբոց մի, և դու անառակ գործով քով խայտա-ռակեցեր զկանայս մեր պղծելով զնոսա: Եւ այնչափ վիրաւորեցին զնա, մինչ յոտից մինչև ցգլուխ չէր 'ի նմա տեղ ողջ. և կալեալ զոտիցն քարշեցին զնա 'ի վայր մինչև 'ի ստորոտ լերինն և ձգեցին զնա անշունչ 'ի վե-րայ Ճանապարհին: Իսկ ուղևորքն բուրիստացւոց անցա-նէին ընդ այն, և գտին զսուրբ ծերն Մարկելլ անկեալ 'ի Ճանապարհի շաղախեալ արեամբ և հարցանէին. վասն է՞ր այս և յումմէ՞ գիտեցաւ քեզ այդ: Իսկ ծերն ոչ ինչ յայտնեաց նոցա, բայց միայն աղաչէր զի բարձեալ տանիցեն զնա յայրն յայն. և բարձեալ տարան զնա յայրն իւր, և օրհնեալ 'ի նմանէ գնացին: Իսկ մարդիկ գեղջն մինչ լուան թէ կենդանի է, գնացին անդ, հայ-հոյէին և նախատէին և անարգէին զնա: Եւ ծերն սուրբ զայս ամենայն եկեալն 'ի վերայ իւր ոչ ինչ զրէր, և գո-հանայր զՏէր վասն եկեալ փորձանացն 'ի դիւաց 'ի վե-րայ իւր: Եւ յոյժ 'ի յամօթ և 'ի պատկառանս և 'ի նախատինս էր սուրբ ծերն յայրն յայն զամ մի, և աղա-չէր միշտ զԱստուած զի թողցէ նոցա զայն: Իսկ յետ այնորիկ յայտնեցաւ 'ի տեսլեան քահանայապետին՝ թէ այն ա-մենայն պատրանք դիւաց էր և առաջօք եղեալ էր այն առ կանայսն, և ծերն սուրբ է և ոչ գիտէ զայնմանէ և ոչ ինչ: Այլ և կանայքն այնոքիկ և արքն իւրեանց յայնմ

Digitized by Google

գիշերի դիւահարեալ փոփոխէին և ըմպեալք թաւալէին. յորժամ իմացան ամենայն բնակիչք գեղջն եթէ դիւահան էր երեւմունքն զոր տեսին կանայքն այնոքիկ. զոր և ինքեանք իսկ կանայքն պատմէին 'ի միտս եկեալ, եթէ իբրև չփոթ ինչ և երեւմունք այնպէս խառնակէր ընդ նոսա, և սրաթափ լինէր ընդ լեռնակողմն: Յայնժամ ապաշաւեալք և զղջացեալք կոծէին զինքեանս վասըն տանջելոյ և գանելոյ զանպարտ սուրբ ծերունին զայն: Այլ յարուցեալք ամենեքեան միանգամայն գեօղն ընդ կանանց և մանկանց իւրեանց գնացին յայրն թողութի̃ խնդրել 'ի ծերոյն: Իսկ ծերն Մ՝արկելլ գիտացեալ զայն փախեաւ և ոչ երեւեցաւ նոցա, և գնացեալ բնակեցաւ 'ի լեառն Նիտրիոյ, և ոչ բնաւ եւս կամ խօսեցաւ ընդ նոսա այլ: Իսկ մարդիկ գեղջն իբրև ոչ գտին զմարդն այ̃ յայրն իւր, անմխիթար սգով դարձան անդրէն 'ի գեօղն իւրեանց. և միշտ սգային և լային ըզ-փորձանս իւրեանց զոր պատահեաց նոցա 'ի դիւացն չարութէ, և խնդրէին հանապազօր զթողութի̃ 'ի տեառնէ զոր մեղան անպարտ սրբոյ ծերոյն՝ գանելով զնա ան-ողորմ: Իսկ ծերն Մ՝արկելէ ասէր ցնա. ասեմ քեզ, հայր Թէոփիլոս, եթէ կամիս անշփոթ կալ և անշարժ 'ի բարիս և խաղաղութե̃ կատարել զկեանս քո, մերձ 'ի գիւղս կամ 'ի քաղաքս և ուր իցեն կանայք և մանկունք՝ մի բնակեսցես երբէք. զի յարուցմունք փորձանաց՝ որք են գայթագղեցուցիչք, 'ի նոցանէ յառաջագայի. այլ որք կամիցին զերծանել յայսմ ամենայնէ, փախիցեն յայնցանէ ուր նոքա իցեն:

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ցհայրն Պիմէն և ասէ ցնա. ես ուր և գնացից, հայր, գտից զօգնականութիւն այ̃, զի փորձիւ գիտեմ որ օգնէ ինձ յարաժամ: Ասէ ցնա ծերն. և որք զսուրն 'ի ձեռն ունին սպանանել զմարդ, գտանեն և նոքա զօգնականութիւն այ̃ 'ի յայս կեանս. դու ընդ այդ մի հպարտանար, այլ ճգնեա և հոգեա զի կեցցես 'ի յաւիտեան. զի ոչ է բաւական հանգիստ յայսմ կենացս և ուրախութիւն մարմնական:

ԱՍԱՑ հայրն Իսիդորէ 'ի Սկիւտէ ցժողովն եղբարցն. ոչ վասն ճգնութե̃ և աշխատութեան ժողովեալ է ձեր աստ. և արդ ոչ վիշտ գոյ աստ և ոչ աշխատութիւնք 'ի տեղիս յայս. և գնամ առաջի անդ՝ ուր իցեն վիշտք և աշխատութիւնք, գուցէ հանգիցեմ յետոյ:

Digitized by Google

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ցՀայրն Պիմէն և ասէ. Զի՞մ ումէք անկ լիցի բանն որ գրեալ է՝ եթէ մի հոգայք վաղըն վաղուի։ Ասէ ցնա ծերն. անկ է սա ամենայնի մարդոյ հաւատացելոյ, այլ և առաւել կրօնաւորի, որպէս զի զամենայն յոյս մեր ունիցիմք 'ի տէր և մի 'ի հոգս մեր. զի զոր ինչ ունի ոք, ամենայն տեառն է։ Անկ է սա և որոց 'ի փորձութիւն անկանին, զի մի ձանձրացեալ վհատիցին; այլ աւելի կայցեն միշտ օգնականութեան այ։

ՀԱՅՐՆ Պաւղոս գաղատացւոց ասաց՝ եթէ կրօնաւոր որ ունիցի ինչ 'ի պէտս 'ի սենեկի, և ելցէ հոգալ այլ նա կատակի 'ի դիւաց. զի աւելի պէտս որ լիցի առ կրօնաւորս՝ այն ոչ է յայ, այլ 'ի սատանայէ լիցի։

ԾԵՐ ոմն գնայր վաճառել զմախաղս իւր, և գտեալ յանկարծ դեւն 'ի ճանապարհն և կորոյս զամենայն ձեռագործս նորա։ Իսկ ծերն իբրև ետես զայն ինչ գործ դիւին, եկաց յաղօթս և ասէր. գոհանամ զքէն, տէր, զի փրկեցեր 'ի վշտաց զանձն իմ։ Եւ ոչ կարաց համբերել դեւն ընդ խոնարհութիւն ծերոյն, ձայնեաց և ասէ. Ահա աստ են մախաղք քո, չար ծեր։ Ո՜ի յամօթ եղև դեւն ընդ համբերութիւն ծերոյն, զի ոչ նեղացաւ 'ի կորնչելն ձեռագործին, այլ խնդալից եղև. և առեալ ծերոյն զմախաղ իւր վաճառեաց զնոսա։

ԱՍԷՐ ծեր ոմն՝ եթէ Ղազարոս աղքատն առաքինութիւն ինչ ոչ արար, այլ միայն զի ոչ տրտնջեաց առ այծ՝ թէ ոչ փրկեցեր զիս 'ի վշտաց իմոց, այլ գոհութեամբ կրէր զվիշտս իւր, և ոչ բամբասէր զմեծատունն զայն. վասն այսորիկ այծ ընկալաւ զնա։

ԱՍԱՑ ոմն 'ի հարցն. եթէ ոչ շարժէր 'ի հողմոյ ծառ, ոչ մեծանայր և ոչ ելանէր 'ի բարձունս և ոչ արմատ ձգէր 'ի խորս. նոյնպէս և կրօնաւոր եթէ ոչ փորձեսցի և համբերեսցէ, ոչ կարիցէ քաջ և ախոյեան լինել։

ԱՍԱՑ և այլ ոմն ծեր՝ եթէ վասն այսորիկ ոչ ճանաչեմք զչափ մեր, զի ոչ ունիմք համբերութիւն 'ի գործս, այլ դիւրաւ կամիմք ստանալ զառաքինութիւն. վասն զի շրջիմք տեղւոջէ 'ի տեղի գտանել տեղի ուր դեւ ոչ իցէ։

ԱՍԱՑ ծերն՝ եթէ զոր օրինակ մոմ եթէ լուծեալ ոչ ձկեսցի՝ ոչ ընդունի յինքն զգիր կնքոյն, նոյնպէս և մարդ եթէ ոչ 'ի վիշտս և յաշխատութիւնս փորձեսցի՝ ոչ ընդունի զկնիք սուրբ հոգւոյն, որպէս և տէրն ցՊաւ-

զայս ասէր՝ բաւական է քեզ շնորհք իմ, զի զօրութիւն իմ 'ի տկարութեան քո կատարի։

ՈՒՆԷՐՆ Մերոժենի բնակէր 'ի Լուբայի. և յայնչափ ճգնութեամբ և 'ի վիշտս եւ զմարմին իւր, մինչև Ջրգողական ախտիւն հիւանդացեալ եղև, և ասէր նա զամենեսեան որք գային առ նա 'ի հարանցն մխիթարել զնա. աղօթեցէք վասն իմ, հարք, առ տէր զի մի գուցէ ներքին մարդն իմ Ջրգողեսցի. այլ զայս մարմնոյ իմոյ ցաւ յերկարաձգիլ խնդրեմ 'ի տեառնէ այ իմոյ։ Իբր լուաւ զայնմանէ Եւստաթիոս պատրիարքն Երուսաղէմի և կամէր առաքել սմա ինչս 'ի պէտս սորա։ Իսկ ծերն Մերոժենի պատասխանեաց նմա և ասէ. աղօթս արասցես վասն իմ, տէր, զի փրկեսցայց 'ի տանջանացն յաւիտենից և բաւական է ինձ. և ոչ էառ ինչ 'ի նմանէ։ Նոյնպէս անարգ և խոտան ունէին զհանգիստն աշխարհիս այսմիկ, և զնեղութիւն սիրէին։

ԵՀԱՐՑ ցհայրն Պիմէն եղբայր ոմն և ասէ ցնա. զինչ արարից, հայր, զի սիրտ իմ լուծանի և թուլանայ եթէ փոքր ինչ աշխատիմ։ Ասէ ցնա ծերն. ո՛չ զարմանաս դու ընդ Յովսէփ թէ որպէս համբերեաց փորձութեանց մինչ մանուկն էր՝ յերկիրն եգիպտացւոց, և ոչ լուծաւ սիրտ նորա, և եթէ որպէս ած յետոյ մեծացոյց զնա. Նոյնպէս և Յակոբ ոչ եղած զսիրտ իւր և կամ անկաւ 'ի վայր 'ի յուսոյն այ և ոչ մեկնեցաւ 'ի կատարեալ սիրոյ նորա. Նոյնպէս և դու մի լուծցիս, զի առաքինութիւն կրօնաւորի 'ի փորձութիւնս երևեսցին փառաւորեալք։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ցհայրն Միսոյի և ասէ. եթէ նստայց յանապատի և գայցեն բարբարոսք և կամեսցին սպանանել զիս՝ զինչ բարւոք է, այն՝ եթէ ես մեռայց 'ի նոցանէ, թէ այն՝ զի թէ կարացից սպանանել 'ի նոցանէ՝ սպանից։ Ասէ ցնա ծերն՝ ոչ, այլ ընկեա յած զայն գործ. զի որպէս և իցեն փորձութիւնք և գայցեն 'ի վերայ մարդոյ, պարտ է ասել՝ թէ վասն մեղաց իմոց եկն այս 'ի վերայ իմ. և եթէ բարի ինչ գայցէ, ասասցէ թէ այս յայ եկեալ է։

ԱՍԱՑ հայրն Միսոյի. եթէ բնակեալ իցես ընդ միաբան եղբարց, մի փոփոխեսցես զտեղին. զի թէ փոխես, յոյժ վնասեսցիս. զի որպէս օրինակ թռչուն եթէ թողցէ խաւթ ձուսն՝ ձագս ոչ հանիցէ 'ի նոցանէ, նոյնպէս և

Digitized by Google

ծեր 'ի փոփոխել տեղւոյն ցամաքի 'ի հաստատոյն և յուխ-տէն ։ Բազում են որոգայթք թշնամւոյն. զի թէ ոչ կարիցէ որսալ զանձն աղքատութ՟բ, զհարստութիւն դնէ առաջի ցանցս. և թէ անարգութ՟բ և պատկառանօք ոչ կարիցէ գթել, զգովութիւն և զփառս դնէ որոգայթ. և եթէ յաղթողութ՟բ ոչ յաղթի, զցաւս և զհիւանդութիւս բերէ. իսկ եթէ որկրամոլութ՟բ ոչ կարասցէ ձգել, 'ի մնացուած պահօք ձգէ զհոգին, և ածէ 'ի վերայ ցաւս և հիւանդութիւս, տոկս և ծարաւս, զի լքեասցէ յանձնէ զսէրն այ ։ Նոյն եթէ մեղաւոր իցես և դիպեսցի քեզ այս, յիշեա զահագին ատեանն և զանաչառ դատաւորն, և մի՛ յուսահատեսցիս երբեք. այլ ջանա զի աստէն կամեցաւ այծ ընջել զպարտս մեղաց քոց, և աղաղեսցես. խրատելով խրատեաց զքեզ տէր և 'ի մահ ոչ մատնեաց. երկաթ գոլով դու՝ հրով սրբեսցես ըղձանկ քո ։ Իսկ եթէ արդար իցես և ցաւք ինչ դիպին քեզ, 'ի վերադոյն բարիսն հասցես և 'ի մեծամեծս. և ոսկի գոլով դու՝ հրով հալածչացն այն մաքրեսցիս յաղտոյ. թէ և մարմնոյ քո տացի հրեշտակ սատանայ՝ խնդասցես, զի Պաւղոսի վիճակին եղեր դու ։ Այլ զի ջերմամբ փորձեցար և փորձանօք մաքրեցար ըստ գրեցելոյն՝ թէ անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր, և հաներ զմեզ 'ի հանգիստ քո. եթէ դիպեցար առաջնոյն, մնասցես և երկրորդին ևս ։ Այլ գործեա զառաքինութի և գոցես ողջախոհութի, որպէս և գրեալ է՝ եթէ աղքատ և անանկ եմ ես. և զի կրկին վշտօք կրկին և զհատուցումն առցես շնորհօքն Քի ։

ՆՈՅՆ դարձեալ. եթէ հիւանդասցիս, մի՛ դժուարասցիս և ասասցես՝ եթէ ոչ կարեմ հսկել և աղօթել, վասն զի պահք և աղօթք և ամենայն դժուարին գործք առ 'ի ցամաքել զխորհուրդս կարգեալ են ։ Այլ եթէ զոր ինչ գետնախշտութի և պահք և աղօթք և չարչարկութիւն կատարել կարեն 'ի մարմնի, զայն և հիւանդութիւք կատարեն. ապա ոչ է պարտ տխրել ընդ այն, այլ պարտ է համբերել գոհութ՟բ ցաւոցն և լռութ՟բ փառաբանել զած ։

ՆՈՅՆ դարձեալ. եթէ որք 'ի յաշխարհի մեղանչեն՝ ակամայ 'ի բանտի արգելլին, նոյնպէս և մեք կամաւ արգելլուք զմեզ վասն մեղաց մերոց, որպէս զի կամա-

ւոր վշտաց մերոցք փրկեսցուք 'ի յաւիտենից տանջանացն։ Այլ եթէ պահեսցես՝ մի պատճառեսցես զհիւանդութիւն, զի որք որկրամոլքն են և ուտեն՝ նոքա առաւել ևս ախտանան. եթէ սկսար զբարին՝ մի ձանձրացիր, այլ կարդա զտէր, և նա օգնեսցէ քեզ և տացէ քեզ համբերել ամենայնի, և յամօթ լիցի թշնամին քո։

ԱՍԱՑ դարձեալ. որք կամին նաւել և անցանել ընդ ծով, բազում անգամ և նոքա խմանան զհողմ. իսկ եթէ մտանեն ընդ խոր՝ և դիպեսցի հակառակ հողմ, ոչ հատանեն զյոյսն և ոչ անկանին 'ի ծով. այլ որքան հնար իցէ աշխատին և պահեն և մնան խաղաղել օդոց։ Այսպէս և մեք արասցուք և ընդդէմ կացցուք փորձութեանց, և օգնեսցէ մեզ Տէր։

ԱՍԷԻՆ զծերոյ ումեմնէ՝ թէ զամս վաթսուն կայր բնակեալ յեզր գետոյն, և բնաւ ոչ նայեցաւ տեսանել զգետն. և այսպէս զհամբերութիւն և զժուժկալութիւն փորձեալ հաստատեաց յինքն լիով։

ՊԻՆԱՑԵՍՍ, ոմն դիւահար 'ի Սկիտէ և ոչ բժշկեցաւ զբազում ժամս. յետոյ գթացաւ 'ի նա ոմն ծեր, կնքեաց 'ի նմա խաչիւ և հալածեաց զդեւն 'ի նմանէ։ Յար կացեալ ընդ այն դեւն և ասէ ցծերն. զի դու հաներ զիս 'ի բնակութենէ իմմէ, ես եկից 'ի վերայ քո։ Ասէ ծերն. եկեսցես և ոչ զժուարիմ ես յայդ, եկ առ իս։ Այլ յարեաւ 'ի վերայ նորա. և եկաց 'ի վերայ ծերոյն զերկոտասան ամ, և նեղէր զնա դեւն այն և խորտակէր և հարկանէր և շարժէր զնա։ Այլ էր կերակուր ծերոյն օր ըստ օրէ երկոտասան կորիզս արմաւոյ, և ձգնէր զինքն 'ի յաշխատութիւն և 'ի պահս աղօթիւք արթուք։ Այլ տեսեալ դեւն զայնպիսի յօժարութիւն և զհամբերութիւն ծերոյն և զաշխատութիւն՝ ոչ ժուժկալէր, այլ փախստական եղեալ գնայր 'ի ծերոյն։ Այսպէս զնա ծերն և ասէ ցնա. ընդէ՞ր գնաս, դեւ դու, և փախչիս յինէն. եկ կացցուք 'ի միասին։ Ասէ դեւն. անիծեսցէ զքեզ տէր, չար ծեր, զի ամօլով տանջեր զիս. և ընդ քեզ ոչ ոք կարող իցէ կեալ, բայց միայն ա՟ծ։ Այսպէս սիրէին զհամբերութեանն ժուժկալութիւն և ուրախ էին 'ի նեղութիւնս։

ԱՍԱՑ ծերն. առաջին հարքն մեր ոչ դիւրաբար շարժէին 'ի տեղւոջէ իւրեանց, բայց թէ յերիցս յայսոցպատճառաց, մին թէ լինէր ոմն մարդ նենգաւոր՝ որ փոյթ

բարկանայր և գիտէր ոչ հաշտէր ընդ ընկերն, և երկրորդ եթէ փառաւորէր ինչ 'ի բազմաց, և երրորդ եթէ փորձութիւն պոռնկութեան գիտէր անդ. սակս ազգին միայն փախչէին և հեռանային 'ի տեղւոջէն. և ոչ վասն նեղութեան ինչ հոգային, այլ ուրախ էին 'ի նեղութիւնս և զնա խնդրէին յարաժամ և գտանէին:

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ծերոն և ասէ. զինչ արարից, հայր, զի խորհուրդք իմ նեղեն զիս և ասեն ցիս՝ ոչ ես կարող պահել և պաշտել դու, գնացեալ այսր անտի հիւանդաց, զի և այն սէր է: Ասէ ցնա ծերն. գնա, որդեակ, կերիցես և ըմպիցես 'ի չափու, բայց 'ի սենեկի քո կացցես. վասն զի համբերելն 'ի սենեկի ծնող է ամենայն առաքինութեան: Որդ ըստ հրամանի ծերոյն եկաց եղբայրն այսպէս 'ի սենեկի զերիս աւուրս: Ապա ձանձրացեալ՝ սկսաւ հիւսել զարմաւենի. և իբրև քաղցեաւ, ասէ՝ կատարեցից զփոքր և ապա կերայց. և իբրև կատարեաց զարմաւն, ասէ՝ և ընթերցայց փոքր և ապա կերայց. և զկնի ընթերցանելոյն ասէ՝ աղօթեցից նախ և ապա ճաշակեցից: Այսպէս առ սակաւ սակաւ աւգնեցաւ և ել յառաջին ճգնութիւն եղբայրն համբերութեամբ և ժուժկալութեամբ որ 'ի սենեկին:

ԶԾԵՐ ոմն աղաչէին եղբարքն զի հանգիցէ փոքր մի 'ի ծանր աշխատութենէ ճգանցն, զի էր ճգնաւոր մեծ յոյժ: Ասէ ցնոսա ծերն. ասեմ ձեզ, որդեակք, զի Աբրահամ աշխարէ զի ոչ առաւել ճգնեցաւ, յորժամ տեսանիցէ զպարգևսն այ զպատրաստեալսն ճգնողաց:

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ծերոն և ասէ. զինչ արարից, հայր, զի ոչ շահեցայ ինչ 'ի կրօնաւորութենէս. այլ ծուլութեամբ կամ, ուտեմ ըմպեմ և ննջեմ և 'ի խենէշ խորհուրդս շրջիմ 'ի գիշերի և 'ի տուընջեան, և յընդունայն գործոց 'ի չար գործս փոփոխիմ: Ասէ ցնա ծերն. նստ 'ի խցի քո, և զոր ինչ կարող ես առնել՝ արա անշփոթ. քանզի կամի և հաճի այ զփոքր առաքինութիւն զոր առնես դու անդ 'ի խցկանն արդէօք, քան զմեծամեծ գործըս սրբոյն Անտոնի զոր առնէր յանապատի. քանզի որ ոք նստցի 'ի սենեկի իւր վասն տեառն և պահեսցէ ըզխորհուրդս անշփոթ, գտանի նա 'ի տեղի հօրն Անտոնի:

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ծերոն և ասէ. որպէս կարելի է ոչ բամբասել զեղբայրն որ դառնայ յաշխարհ. Ասէ

Ծերն. պարտ է մեզ առնել ըստ օրինակի շանց որսոր-դաց, որք վարին զհետ նապաստակաց. զի մինն 'ի նոցա-նէ տեսեալ զնապաստակն՝ հետևի նմա և ոչ դադարէ և ոչ խորշի 'ի փշոյ կամ 'ի քարէ և կամ 'ի ջրոյ և ոչ խափանի յընթացիցն, մինչև կալցէ զնա. իսկ այլ շունքն որք տեսանեն զընթացս նորա, փոքր մի դիմեն վասն հաճելոյ զնա և ապա դադարեն, զի ոչ տեսանեն զորսն և դառնան առ որսորդսն. և նա միայն ընթանայ որ նախ ետես և հետևեցաւ նմա: Նոյնպէս պարտ իցէ և կրօ-նաւորի որ հետևեսցի Քրիստոսի, որպէս զի յօժարութեամբ ընթասցի զհետ նորա, և առաջնորդ ընթացիցն ունիցի զխաչն նորա, և զամենայն գայթակղութիւնս աշխարհիս զանց արասցէ, և փութասցի մինչև հասցէ, և ոչ հայեսցի այսր անդր և դատեսցէ զեղբայր իւր կամ բամբասեսցէ, այլ միայն 'ի նա հոգ տարցէ որում բաղձայ հասա-նել: Իսկ որք ոչ են հետևեալ Քրիստոսի, և ոչ են յընթացս զհետ նորա, նոքա են որ հայեն այսր անդր և քննեն զեղ-բարսն և բամբասեն զնոսա և դատեն:

ԱՍԱՑ ծերն. զոր օրինակ ծառ որ փոյթ խլեսցի և տնկեսցի՝ արմատանալ ոչ կարէ, նոյնպէս և կրօնաւոր շրջող ոչ կարէ ստանալ զառաքինութիւն:

ԾԵՐ ոմն նստէր առանձինն և փոյթ ընդ փոյթ հի-ւանդանայր: Նա եղև երբեմն զի անց 'ի վերայ ամ մի և ոչ հիւանդացաւ, և տրտմեցաւ յոյժ վասն այսորիկ և սկսաւ լալ և ասէր. մոռացաւ զիս ած ստուգիւ և ոչ նայեցաւ յիս: Զի վիշտք և մարմնոյ նեղութիւնք սրբեն զհոգի և մերձեցուցանեն առ ած:

ԱՍԱՑ ծերն. մի խնդրեր դու քեզ հիւանդութիւն մարմնոյ, զի մի վհատեալ կարճամտեսցիս. զի եթէ տէր քո կամեսցի ճնշել զմարմին քո, դու զի՞ ծանրանաս, նա հոգայ վասն քո, և ոչ ես կարող կեալ առանց նո-րա. այլ համբերեսցես և խնդրեսցես 'ի նմանէ զոր ինչ օգուտ քո իցէ, և կեցցես երկայնմտութեամբ:

ԱՅՐ ոմն կրօնաւոր ձգնող յամենայնի, և պատրանօք չարին անկաւ 'ի փորձութիւն, զի կուրացան աչք նորա. իսկ նա 'ի յաղօթսն իւրում բնաւ ոչ խնդրեաց յիւր լոյս աչաց իւրոց, այլ խնդրեաց զհամբերութիւն: Վասն այսորիկ ած դարձեալ զլոյս շնորհեաց աչաց նորա պայ-ծառ քան զառաջինն. զի տեսեալ զհամբերութիւնն՝ յորժ

կատարի համբերութեն, որում հաճի տէր ած և յորմէ շնորհին ամենայն բարութիւնք և փառք։

Էր այր մի արծաթավաճառ 'ի քաղաքին Անտիոքայ մեծանուն հարուստ, որոյ անուն էր Անդրոնիկէ. ունէր և կին ազնուական, որ կոչէր անուն նորա Աթանասիա։ Եւ էին երկոքեանն սնեալ յերկիւղն այ 'ի տղայութէ և լի ամենայն գործովք բարեաց, և էին մեծատունք յոյժ երկոքեանն։ Իսկ կեանք նոցա էին այսպէս. ամենայն ինչք նոցա բաժանեալ յերիս մասունս առնէր և զործէր. մի մասն աղքատաց, և մի մասն կրօնաւորաց և եկեղեցեաց, և մի 'ի պէտս իւրեանց և ամենայն ծառայից իւրեանց։ Եւ սիրէր զնոսա ամենայն քաղաքն և իշխանքն, և պատրիարքն զԱնդրոնիկէ վասն հեզութե և բարեգործութե և սրբութե և բազում առաքինութեան իւրոյ։ Եւ ծնաւ կին նորա որդի, և կոչեցին զանուանն Յովհաննէս. և յաւել ծնանել դուստր, և անուանեցին զնա Մարիամ։ Եւ յայնմհետէ ուխտեցին այ երկոքեանն այլ ոչ գիտել զմիմեանս և սրբութե կեալ կրօնաւորական կենօք մինչև ցզարգանալ մանկանցն և ժառանգել զհայրենիս, և ապա գնալ նոցա որպէս և կամք լինէին այ։ Բայց էր ամենայն փոյթ նոցա յողորմութիւս աղքատաց և 'ի սպաս եկեղեցեաց և կրօնաւորաց, և զօր սուրբ կիրակէին հսկելով յերեկոյէ առանց քնոյ անցուցանէին յեկեղեցւոջն յաղօթս և 'ի տուրս աղքատաց և քահանայից և կրօնաւորաց. իսկ զերկուշաբթի և զչորեքշաբթի և զուրբաթ անսուաղ անցուցանէին։ Եւ յառաւօտէ մինչև ցերեկոյ շրջէին 'ի փողոցս քաղաքին 'ի հիւանդանոցս և 'ի բանտս և դարմանէին, և լուային զձեռս աղքատաց և հիւանդաց և կալանաւորաց. այսպիսի կենցաղավարութե էին բազում ամս։

Եւ զկնի երկոտասան ամի յաւուր միում եկն աշխատեալ 'ի սպասուց հիւանդացն Աթանասիա և մտեալ 'ի տունն եգիտ զերկոսեան մանկունսն տապացեալ ջերմամբ մահաբերիւ, զի հեծէին և հառաչէին յանկողնի. Ել առ նոսա և նստաւ տխրեալ և ննջեաց։ Իսկ Անդրոնիկէ եկեալ յեկեղեցւոյն ետես զկինն տխրեալ և զմանկունսն տապացեալ. իբրև մերձեցաւ ձեռամբ 'ի մանկունսն և ետես զնոսա յայնպիսի հրդեհի մեծի 'ի տապի, ապշեցաւ և հառաչեաց և ասէ. կամք տեառն

եղիցին յանձի։ Այլ եւ առժամայն 'ի քաղաքէն արտաքոյ յեկեղեցին Յուլիանէ վկային՝ ուր էր գերեզման հարց իւրոց, եւ ժամս վեց եկաց անդ հսկելով լալով եւ աղօթիւք։ Իսկ իբրեւ դարձաւ 'ի տունն, լուաւ ձայն կոծոյ եւ ողբոց մեծի, քանզի 'ի մէջ գիշերի վախճանեալ էին երկոքեան մանկունքն 'ի միասին, եւ ժողովեալ էին քաղաքն ամենայն եւ կոծէին զնոսա։ Իբրեւ ետես զմանկունսն անշունչս եդեալ 'ի միասին 'ի վերայ մահճակի, եմուտ 'ի սենեակ իւր, եդ ծունր առաջի փրկչին պատկերի եւ ասէ արտասուօք. մերկ եկի յորովայնէ մօր եւ մերկ գնալոց եմ յերկրէ, տէր ետ եւ տէր էառ, եղիցի անուն տեառն օրհնեալ յաւիտեան։ Իսկ մայր մանկանցն խնդրէր զանձն եւ ասէր՝ թէ զինչ զմայրս թաղեցէք ընդ մանկունսն իմ։ Այլ ժողովեալ էին քաղաքն ամենայն եւ պատրիարգն իսկ ուխտիւն իւրով, եւ հանեալ զմանկունսն տարան արտաքոյ քաղաքին յեկեղեցին Յուլիանէ վկային եւ թաղեցին 'ի գերեզմանս հարց իւրոց։ Իսկ զողբոց եւ զկոծոյ դառնութեանն ո՞ կարէ պատմել, որովհետեւ ողջ քաղաքն ամենայն անդ էր եւ միապէս ցաւէին ամենեքեան։ Իսկ զԱնդրոնիկէ տարաւ ընդ ինքն պատրիարգն 'ի պատրիարգարանսն։

Իսկ մայր մանկանցն ոչ կամեցաւ գնալ 'ի տուն իւր, այլ մնաց անդրէն յեկեղեցին Յուլիանէ վկային առ գերեզմանս մանկանցն եւ լայր։ Այլ ահա 'ի մէջ գիշերին երեւեցաւ նմա սուրբ վկայն Յուլիանէ տեսակաւ կրօնաւորի եւ ասէ ցնա. ընդէ՞ր ոչ թողուս, կին դու, ննջել դոցա կամ սոսա։ Պատասխանի ետ եւ ասէ. մի բարկանար ինձ, տէր իմ, զի ցաւագնեալ է սիրտ իմ. քանզի երկուս որդիս ունէի միայն, եւ զերկոսեանն 'ի միասին թաղեցի այսօր։ Ասէ սուրբ վկայն. քանի՞ ամաց էին նոքա։ Այլ նա ասէ. մինն երկոտասանամեայ եւ միւսն տասն։ Ասէ սուրբ վկայն. ապա ընդէ՞ր ողբաս դու զանմեղսն եւ զսուրբսն, եւ ոչ ողբաս դու զմեղս քո. ասեմ քեզ, կին դու, զի զոր օրինակ մտանէ 'ի մարմին հարկ կերակրոյն եւ անհնար է թէ ոչ տացէ զնա, այնպէս զան մանկունքն քո առաջի Քրիստոսի 'ի հանդերձեալ բարիսն եւ ասեն ցնա. տէր եւ սուրբ դատաւոր արդար, զրկեցեր զմեզ 'ի կենցաղոյս բարեաց, արդ մի զրկեր յարքայութենէ քումմէ. եւ այլ զնա նոքա։ Զայս ասացեալ գնաց կրօնաւորն 'ի



Digitized by Google

տեսիլն։ Իբրեւ լուաւ զայս Աթանասիա, մխիթարեցաւ և ասէ. զի կան որդիքն իմ յարքայութեանն երկնից, ապա ընդէ՞ր ողբացից զնոսա. և եթէ ողբացից, ասա՛ ՚ի մահու, զի՞նչ օգտեցայց։ Այլ յարեաւ և խնդրէր զկրօնաւորն, և ոչ եգիտ. և զի կային փակեալ դրունք եկեղեցւոյն, և ՚ի խնդրելն լուաւ ձայն ՚ի խորանէն որ ասէր՝ Յուլիանէ վկայն է և ոչ այլ ոք ծեր։

Յայնժամ գոհացեալ ուրախութեամբ ընդ տեսիլն, գնաց ՚ի տուն իւր և պատմեաց զտեսիլն Անդրոնիկեայ և ասէ. Ճշմարիտ հաւատա ինձ, զի ՚ի կենդանութեան մանկանցն կամէի ասել հանապազօր զայս ինչ ընդ քեզ և ամաչէի, մինչդեռ և զարգանային մանկունքն. քանզի ես ուխտեցի աստուծոյ, ահա տասն ամ է, արդ աղաչեմ քեզ՝ լուր աղաչանաց քո և տուր զիս ՚ի վանս կանանց, զի եղէց կրօնաւոր և անդ ողբացից զմեղս իմ։ Ասէ ցնա Անդրոնիկէ. փորձեսցես զխորհուրդս քո զայդ զեօթն օր. եթէ կացցես զաւ ՚ի միտս յայդ, արասցուք զորս և արժան է։ Այլ սորա ասաց այնպէս. յետ եօթնեկին եկն և զնոյն ասաց։ Յայնժամ Անդրոնիկէ կոչեաց ըզհայրն Յովհաննէս և ասէ. մեք գնամք յԵրուսաղէմ աղօթել ՚ի սուրբ տեղիսն յայն, և ահա ՚ի ձեռս քո է ամենայն ինչք մեր. եթէ հասանէ մեզ անդ մեռանել, զոր ինչ արասցես զաւ ընդ մեզ անդ ընչիւք մերովք՝ ըզփորձս յոյս գտցես աստ և ՚ի հանդերձեալն. արդ կամիմ զի շինեսցես տեղւոյ հիւանդանոցս և հիւրանոցս և վանս ՚ի յայս տեղի տանց մերոց։ Այլ յանձնեցին ՚ի նա զամենայն ինչս իւրեանց, և առեալ սակաւ ինչ յընչիցն ընդ իւրեանս ՚ի պէտս և զգաստս երկուս և ելին ՚ի գիշերի ՚ի քաղաքէն։ Այլ իբրեւ ելին, նայեցաւ Աթանասիա ՚ի տունն իւրեանց, և ամբարձ զաչս իւր յերկինս և ասէ. Տէր, որ ասացեր Աբրահամու և Սառայի ելանել յերկրէ և յազգէ և ՚ի տանէ իւրեանց, և դու նոյն լինիցիս մեզ, առաջնորդեա մեզ յերկիւղ քո. զի վասն անուան քո թողաք բացեալ զդրունս տանց մերոց, և մի փակեսցես ընդդէմ մեր զդրունս արքայութեան քո։

Այլ գնացին երկոքեան ՚ի միասին յԵրուսաղէմ, և աղօթեալ շրջեցան ընդ ամենայն ուխտսն, և տեսին բազում կրօնաւորս սուրբս և օրհնեցան ՚ի նոցանէ. և եւտուն սէր ամենեցուն։ Այլ անտի գնացեալ յԵգիպ-

ամօթալից 'ի տաճար սրբոյն Մինայի, և պատուով ըն-կալան զնոսա քահանայքն: Իսկ յետ երկուց ժամուց ել Անդրոնիկէ 'ի մերձաւորն վանդակն և հայեր 'ի քաղա-քէն, և ետես 'ի փողոցին զի կրօնաւոր ոմն կռուէր ընդ ամենեսին: Ասէ Անդրոնիկէ ցայրն այն. ընդէր, այր դու, շփոթիս ընդ կրօնաւորիդ և նեղես զդա: Ասէ այրն այն. սա 'ի վարձու կալաւ զգրաստն իմ գնալ 'ի Սկիտէ, և ես ասեմ զսա՝ արդեօք եկ գնասցուք 'ի գիշերի զի մի տաղտկասցուք, և սա ոչ կամի գալ: Ասէ ցնա Անդրոնիկէ. ունիս այլ գրաստ: Իսկ նա ասէ. ունիմ, հայր: Ասէ ցնա. գնա բեր աստ և ես կալայց 'ի վարձու և երթիցուք 'ի միասին արդեօք, զի և ես 'ի Սկիտէ գնամ: Դարձաւ և ասէ ցԱթանասիա. կացցես դու աստ 'ի սուրբ Մի-նա մինչև ես եկից 'ի Սկիտէ և աղօթեցից անդ և առ-նից զհարան և դարձայց այսր: Ասէ ցնա կինն. տարցես և զիս ընդ քեզ: Պատասխանի ետ Անդրոնիկէ և ասէ. կին մարդ ոչ մտանէ 'ի Սկիտէ: Իսկ նա ասէ արտա-սուօք. դու տացես պատասխանի ինձ և սրբոյն Միննայի, եթէ ոչ տանիցես և ածցես զիս 'ի վանս կանանց: Յայն-ժամ ողջունեցեալ զմիմեանս բաժանեցան 'ի միմեանց:

Իսկ Անդրոնիկէ գնաց և ել 'ի Սկիտէ և ետես զսուրբ հայրսն ամենայն վանորէից լերինն, և գնաց առ հայրն Դանիէլ յանապատն բազում աշխատութեամբ և հանգ-կարաց տեսանել զնա, և պատմեաց ծերոյն զամենայն զպատահարսն: Ասէ ցնա ծերն. գնացեալ բերցես դու աստ զկինդ քո, և գրեցից քեզ թուղթ զի տարցես զնա 'ի Թեբայիդա 'ի Տաբեննեսեաց վանս կանանց: Յայնժամ Անդրոնիկէ արար որպէս ասաց նմա հայրն, և գնացեալ եբեր զԱթանասիա առ ծերն. իսկ ծերն ասաց նմա բանս կենաց, և առաքեաց զնա 'ի վանս կուսանաց. և դարձաւ Անդրոնիկէ առ հայրն Դանիէլ և զգեցաւ զկարգ կրօ-նաւորութեան, և ուսոյց նմա հայրն զգործս կրօնաւորա-կանս, և եկաց առ ծերոյն ամս երկոտասան Անդրոնիկէ:

Յետ այսորիկ խնդրեաց 'ի ծերոյն զի երթիցէ աղօ-թել 'ի սուրբ տեղիսն Երուսաղէմի: Իսկ ողջունեալ զծերն ետ աղօթս և արձակեաց զնա: Իսկ եղև մինչ գնայր յաւուրսն 'ի սահմանս Եգիպտոսի, և նստաւ 'ի տա-[illegible] 'ի [illegible] ինչ անդուլ եւր զի հանգիցէ փոքր մի. 'ի [illegible], և ահա կամաւ իմն եկն Աթանա-

սէս և զգեցեալ էր հանդերձ առն, վասն զի գնայր և նա յԵրուսաղէմ ։ Եւ հարցէին զնորա, և աղաւնին ծանեաւ զկենակից իւր, իսկ Անդրոնիկէ ոչ ծանեաւ զնա՝ որոյ տեսակ և գեղ թառշամեալ էր 'ի բազում Ճգնութեանցն, և սևացեալ էր մորթն ողջոյն և լեալ իբրև զՀնդիկ ոք ։ Ասէ ցնա Աթանասիոս. ուր գնալոց ես, հայր ։ Եւ նա ասէ. յԵրուսաղէմ զսուրբ տեղիսն տեառըն գնամ տեսանել ։ Ասէ ցնա. և ես անդ ուղևոր եմ, և եթէ կամիս գնասցուք 'ի միասին. այլ այսպէս լռութեամբ երթիցուք, զի մի ընաւ խօսեսցուք ինչ ։ Ասէ Անդրոնիկէ. զայն արասցուք ։ Ասէ Աթանասիէ, զի զայս եդ զանուն իւր, ոչ դու աշակերտ հօրն Դանիէլի իցես ։ Եւ նա ասէ՝ այո ։ Եւ Աթանասիէ ասէ. և ոչ Անդրոնիկէ կոչի անուն քո ։ Իսկ նա ասէ՝ այո ։ Եւ նա ասէ. աղօթք ծերոյն օգնական մեր լիցի ։ Անդրոնիկէ ասէ՝ ամէն ։ Եւ երթային 'ի միասին ։ Եւ եկեալ յԵրուսաղէմ աղօթեցին յամենայն տեղիսն, և դարձեալ գնային յԱղեքսանդրիա, և ընաւ ոչ խօսեցան ընդ միմեանս ։ Ասէ Աթանասիէ ցհայրն Անդրոնիկէ. եթէ կամեսցիս բնակեսցուք 'ի միասին ։ Եւ Անդրոնիկէ ասէ. արասցուք որպէս և ասես, քանզի ներքինի գոլ կարծէր զնա, և ասէ՝ բայց նախ ելանեմ ես 'ի Սկիւթէ և հարցանեմ հօր իմոյ ։ Ասէ Աթանասիէ. գնա և ես մնամ քեզ 'ի վանս երկոտասանիցն. այլ եթէ գայցես այսպէս լռութեամբ որ 'ի Ճանապարհին էաք, կացցուք 'ի միասին և մի ընաւ խօսեսցուք. իսկ եթէ լռել ոչ կարես, մի գայցես այսր, զի ես յութևտասանից վանս կամիմ բնակել ։ Արդ գնաց Անդրոնիկէ և եսես զհայրն և պատմեաց նմա զամենայն և զվասն ներքինւոյն ։ Ասաց նմա հայրն Դանիէլ. գնացեալ կացցես առ նմա և պահես զլռութիւն, զի այն Ճգնաւոր մեծ ոմն է ։ Եւ իբրև եկն և եգիտ զԱթանասիէ և բնակեցան 'ի միասին՝ պարապեալ 'ի յահճն ժբ զամս երկոտասանս, և ոչ խօսեցան ընդ միմեանս, և ոչ ծանեաւ Անդրոնիկէ զնա թէ ո իցէ ։

Իսկ հայրն Դանիէլ ելանէր երբեմն տեսանել զնոսա և խօսէր զօգուտ նոցա և դառնայր անդրէն ։ Եկեալ էր երբեմն տեսանել զնոսա, և առեալ ողջոյն նոցա, դարձաւ և եկն 'ի սուրբ Մինա ։ Իսկ Անդրոնիկէ եհաս զհետ նորա և ասէ. հայր, եղբայրն Աթանասիէ հիւանդ է և

գնայ առ տէր և խնդրէ զքեզ։ Իբրև լուաւ զայս ծերն, դարձաւ անդրէն և եկն և եգիտ զնա 'ի ջերմեռանդութեան յոյժ և լայր դառնապէս։ Ասէ ցնա ծերն. վասն որոյ ցնծալ պարտ էր քեզ զի գնաս առ տէր, և դու ողբաս զնա։ Ասէ Աթանասիա. ոչ վասն իմ ողբամ, հայր, այլ վասն Անդրոնիկէի. բայց իբրև թաղեսցես զիս, գտցես թուղթ 'ի սնարս իմ. առեալ ընթերցջիր դու և տացես զայն յեղբայրն Անդրոնիկէ եւս։ Եւ հաղորդեալ 'ի սուրբ խորհրդոյն, և զկնի այսոց բանից ննջեաց Աթանասիա զքուն արդարոց։ Եւ իբրև եկին եղբարքն պատանել զնա, իմացան եթէ կին մարդ է. իսկ ծերն ընթերցեալ զթուղթն, ետ ցԱնդրոնիկէ. և իմացեալ 'ի թղթոյն եթէ կենակիցն Անդրոնիկեայ էր Աթանասիա և ոչ ներքինի ոմն, վասն որոյ օրհնելով զտէր գոհանային զնմանէ՝ որ տայ համբերութիւն ծառայից իւրոց յամենայնի։ Եւ լուր եղև այս յամենայն վանորայսն։ Եւ կոչեաց ծերն զՍկիւտէ, և եկին միանգամայն ամենայն սկիտացիքն՝ զգեցեալ սպիտակ հանդերձս. եկին անդ ամենայն գունդք կրօնաւորացն ոստովք արմաւենեօք և տարեալ պատուով եդին 'ի գերեզմանի հարցն, և գոհանային զԱյ որ ետ այսպիսի զօրութիւն և քաջութիւն կնոջականն մարմնոյ. և գնացին ամենեքեան 'ի տեղիս իւրեանց։ Իսկ հայրն եկաց անդ մինչև ցեօթներորդ օր թաղմանն Աթանասիայի։

Եւ զկնի այնորիկ կամեցաւ հայրն Դանիէլ տանել ընդ իւրն զԱնդրոնիկէ, այլ նա ոչ կամեցաւ գնալ ընդ նմա և ասէ. 'ի վերայ գերեզմանի Աթանասիայի մեռայց։ Յայնժամ ետ հայրն աղօթս և գնաց մինչև 'ի սուրբ Սիոն։ Իբրև էջ անդ, եհաս զկնի այլ եղբայր և ասէ ցնա. հայր Դանիէլ, եղբայրն Անդրոնիկէ փոխի առ Ած։ Իբրև լուաւ ծերն, պատուիրեաց սկիտացւոց և ասէ. դարձեալ եկայք աստ, զի ծերն Անդրոնիկէ հետևի ծերոյն Աթանասիայի։ Եւ իբրև լուան նոքա, ելին վաղվաղակի անդ և գտին զնա կենդանի դեռ ևս և օրհնեցան 'ի նմանէ, և ննջեաց և նա խաղաղութեամբ 'ի տէր։ Յայնժամ եղև պատերազմ 'ի մէջ հարցն Սկիտոյ և նորին վանաց ուր կատարեցան սուրբքն՝ որ կոչէր տասնևութից։ Ասէին սկիտացիքն. մեր է եղբայրս, անդ տարցուք զմարմինն սորա։ Իսկ նոքա ասէին.

տա. քայր իւր պատուիրեալ է թաղել զինքն, քանզի Սկի-տացիքն բազում էին և մարտնչէին. Այնժամ ասա-ցին ամենայն առաջնորդք լերինն. զոր ինչ և ասասցէ Հայրն Դանիէլ, զայն արասցեն: Իսկ Հայրն ասաց. ասա 'ի միասին թաղել աւանդեաց ինձ եղբայրն: Նայց ծերքն Սկիտայ ոչ առնուին յանձն, այլ ասէին. Հայրն Դա-նիէլ յերկինս է և ոչ երկնչի 'ի պատերազմաց դիւաց, այլ մեք երկնչիմք. և առնումք զեռ ևս մնասցէ գաղտ՝ և պիտոյ է սա մերձ առ մեզ, զի օգնեսցէ մեզ. բռնաբար է ձեզ քոյր սորա Աթանասիա զի է առ ձեզ. Այդ իբ-րև ետես Հայրն Դանիէլ զշփոթն, ասէ ցեղբարսն. Ե-թէ ոչ թողուցուք զիս աստ, ես ոչ եկից ընդ ձեզ, այլ կացից աստ ընդ ողջեակս իմ և թաղեցայց ընդ նոսա: Իբրև լուան զայս եղբարքն՝ լռեցին, և հանեալ զերա-նելին Անդրոնիկէ թաղեցին առ սուրբն Աթանասիայ, և ասեն եղբարքն ցՀայրն. եկ գնասցուք 'ի Սկիտէ: Իսկ նա ասէ. թոյլ տուք ինձ աստ կատարել զեօթն օր ա-րա: Իսկ նոքա թոյլ ոչ ետուն առնել զայն, այլ առին զնա և գնացին: Զայս պատմեաց Հայրն Դանիէլ աշակեր-տաց իւրոց: Իսկ մեք խնդրեսցուք 'ի տեառնէ զի ողոր-մեսցի և մեզ աղօթիւք և բարեխօսութբ Անդրոնիկէի և Աթանասիայի և ամենայն սրբոց իւրոց: Նմա յաւիտեանս են արիութիւնք և համբերութիւնք և ճգնաւորութիւնք.

Digitized by Google

Ը

## ՎԱՍՆ ՈՉ ԱՌՆԵԼ ԻՆՉ Ի ՑՈՅՑ ՄԱՐԴԿԱՆ

Լուան' երանելի աբբային Սերապիոնի վասն ուրումն մենական կրօնաւորի զի նշանաւոր էր ՚ի ճանապարհին, այսինքն զի մինչդեռ ճանապարհորդէր ընդ ծերս ոմանս, վայրենի իշավայրոյ հրաման ետ գալ և բառնալ զինքն: Եւ ծերքն պատմեցին զայս աբբայ Սերապիոնի, և ասէ ցնոսա. խնայեմ յեղբայրս յայս' որ լի է և առաւելեալ բարութեամբ, և ոչ գիտեմ թէ հասանէ ՚ի նաւահանգիստն գիտան: Եւ յետ փոքու ինչ ժամանակի գայր հասանէր հայրն Սերապիոն, արտաքուստ ցուցէր զմտրաւն և բախէր զկուրծսն. Եւ ասեն աշակերտքն նորա. ընդէ՞ր լաս, հայր: Ասէ ծերն. մեծ սիւն եկեղեցւոյ անկաւ այժմ: Եւ ասէր զայս յաղագս մենական կրօնաւորին: Ասէ գնացէք, ասէ, մինչև ցնա և տեսէք զեղբայրն: Գնացին աշակերտքն և տեսին զմիայնակեացն ՚ի վերայ պլլաւեալ նոյն նստեալ զի լայր վասն մեղացն իւրոց զոր գործեալ էր: Եւ տեսեալ զաշակերտս ծերոյն ասէ. ասացէք ցծերն աղաչել զնա' տալ որ միայն տալ ինձ, և յուսամ պատասխանի տալ և ապաշխարել: Եւ յետ հինգ օրեայ աւուրց վախճանեցաւ:

: Լուաւ հայրն Սերապիոն վասն մենաւոր կրօնաւորի ուրումն' որ առաջ պատմեցաք այսուհետ: Զծերս ոմանս եւեթ վասն աւետեաց ՚ի ճանապարհի որք գային առ նա, և հրամայեաց զի վայրի ցիռք գնասցեն և բառնայցեն զնոսա և բերցեն առ ինքն. որ և եղև իսկ: Եւ եկեալ պատմեցին զայս ծերքն հօրն Սերապիոնի: Իբրև լուաւ ծերն' ասէ. Նման իցէ կրօնաւորն այն նաւու որ լի իցէ ամենայն բարութեամբ, այլ ոչ գիտէ թէ որպէս հասցէ ՚ի նաւահանգիստն: Եւ զկնի ժամուց ինչ սկսաւ հայրն Սերապիոն լալ և փակել զմորուսն իւր և կոծել յոյժ: Ասեն աշակերտքն իւր. ընդէ՞ր ողբաս, հայր: Ասէ ծերն. մեծ սիւն լուսոյ եկեղեցւոյ անկաւ այժմ: Եւ զայն մենաւոր կրօնաւորէ ասէր, որ զյառաջագոյն արար: Ասէ. գնացէք մինչև առ նա և տեսէք: Գնացին աշակերտքն ծերոյն և տեսին զնա անկեալ ՚ի վերայ գետնոյն և լայր զմեղսն զոր գործեալն էր: Իբրև ետես նա զաշակերտսն Սերապիոնի. ասէ ցնոսա. գնացէք ասացէք ծերոյն զի աղաչեսցէ վասն իմ զՏէր, զի ընդունեսցէ զինձ աւուրս սակաւ առ ապաշխարել զայս մեղս: Եւ զկնի հինգ աւուրց վախճանեցաւ նա:

ԵԿՆ[1] երբեմն իշխան մի տեսանել զաբբայն Սի-մեոն: Եւ եկեալն կղերիկոսքն և ասեն. աբբայ, պատրաս-տեա զանձն քո, զի իշխանն եկեալ է վասն քո, և եկն օրհնութիւն առնուլ 'ի քէն: Եւ նա ասէ. այո ահա պատրաստեմ: Զգեցաւ զկենդանական իւր, և առեալ հաց և պանիր 'ի ձեռին՝ նստեալ 'ի վերայ դրանն կե-րակրէր: Եկն իշխանն սպասաւորօքն և տեսեալ զնա հայհոյեաց և ասէ. ա՞յս է անապատաւորն վասն որոյ լուաք: Եւ առժամայն դարձաւ:

ՅԱՐԵԱՒ[2] երբեմն աբբայն Դանիէլ սկիւթացին աշակերտաւն իւրով գնայր 'ի Թեբայիդն վերին՝ ընթա-ցեալ 'ի յիշատակն աբբայ Ապողոսի. ելին հարքն ընդ առաջ նորա եօթն մղոնաւ, և էին մինչև 'ի հինգ հա-զարս: Եւ էր տեսանել զնոսա իբրև զպարս հրեշտա-կաց, որք մնան [illegible]՝ մածեալս 'ի վերայ աւազոյն. ո-մանք տարածանէին զհանդերձս առաջի նորա, այլք զվե-րարկուս տփաէին, և զեղոյր արտասուքն 'ի նոցանէ իբ-րև զվտակս աղբերաց: Եկն նախագահութին վանօրէիցն, երկրպագեաց եօթն անգամ յընթացանմանէ առ ծերոյն: Եւ յորժամ ողջունեցին զմիմեանս, աղաչեաց լսել եղբարցն 'ի նմանէ բան ինչ, քանզի ոչ փութայր հայրն խօսել ընդ ումեք. և անգէն նստան սրտաքեղ 'ի վերայ աւա-

[1] Եկն երբեմն իշխան մը 'ի տեսանել զհայրն Սիմեոն: Եւ եկեալ եղբարքն ասեն ցնա. պատրաստ լեր, ծեր, զի լուեալ է զքեն իշ-խանն և գայ տեսանել զքեզ և օրհնել 'ի քէն: Իսկ նա ասէ. այո պատ-րաստ եմ: Եւ յարուցեալ զգեցաւ պատառատուն քուրձ, և առեալ 'ի ձեռս հաց և պանիր և ել 'ի տանէն խելք իւրոյ և սկսաւ ուտել ընդ վայր իբրև զմոլի: Իբրև եկն իշխանն զինուորօք իւրով և զինուորօք, և ե-տես զնա այնպէս, արհամարհեցին և ասեն. ա՛ս իցէ միայնակեացն զոր լսեաք: Եւ առժամայն դարձան 'ի յետս:

[2] Ել երբեմն մեծն Դանիէլ 'ի Սկիտեայ ընդ աշակերտս իւր 'ի վե-րինն Թեբայիդա 'ի յաւուրն յիշատակի հօրն Ապողլոսի. և ժողովե-ցան ամենայն հարքն և ելին ընդ առաջ նորա վտակաւ եօթն, և էին նոքա թուով իբրև հինգ հազար: Եւ տեսանէին նոքա զնա իբ-րև զհրեշտակ մը, և անկան ամենքեան 'ի վերայ երեսաց իւրեանց ահիւ և դողութեամբ, և ընկալան զնա իբրև զանձն Քի. զի ոմանք սփռէին զհանդերձս իւրեանց առաջի ճանապարհին, և այլք մերձեցուցանէին 'ի հանդերձս նորա զինկուղս իւրեանց, և այլք բերէին սուրբ աւետա-ւէնեաց. և տեսանիւր անդ աղբիւրս արտասուաց որպէս զվտակս հե-ղեղաց հոսեալս: Եւ եկն արքիմանդրիտ նոցա և երկիր եպագ ծերոյն եօթն անգամ մինչև մերձեցաւ առ նա. և ողջունեալ զմիմեանս նըս-տան: Յայնժամ աղաչեաց արքիմանդրիտն զծերն, որպէս թէ լսել-ցեն 'ի բերանոյ նորա զբանս կենաց. և զի ոչ վաղվաղակի խօսէր ու-

Digitized by Google

զդին միաբան, քանզի ոչ տանէր փառս եկեղեցին: Այլ ասէ աբբայն Դանիէլ ցաշակերտն իւր. գրեա այսպէս. եթէ կամիք կեալ, բռնադատեցէք զանձինս և գնացէք զկնի անստացուածութեան և լռութեան, զի յայս երկու վարս կախեալ կայ ամենայն արիութի միայնակեցին: Այլ աշակերտն նորա ետ ումեմն յեղբարցն զայսպիսի գիրս, և Թարգմանեաց զայն յեգիպտացի բարբառ: Հաւանեցան յայս ամենեքեան, առաքեցին զծերն յուղարկեալք, և ոչ ոք համարձակեցաւ ասել ցնա թէ արա սէր: Եկն՝ յԱրիմաւպաւղիս ծերն, և ասէ ցաշակերտն իւր. գնա բախեա 'ի վանս կուսանացն և ասա զմայրն՝ եթէ աստ եմ ես: Քանզի էր անդ վանք մի կոչեցեալ աբբայ Արխինու, բնակեալ էին անդ իբրև երեք հարիւր անձինք: Գնաց աշակերտն բախեաց, և ասէ ցնա դռնապանն. կեցցես, բարի եկիր, զի՞նչ հրամայես: Ասէ ցնա. ընդ մայրդ պետին կամիմ խօսել: Այլ նա ասէ. նա ոչ երբեք խօսի ընդ ումեք. այլ ասա ինձ եթէ զի՞նչ հրամայես, և ես յիշեցուցանեմ նմա: Այլ նա ասէ. ասասցես՝ եթէ միայնակեաց ոմն կամի խօսել ընդ քեզ: Գնացեալ ասաց զամենայն: Այլ դարձաւ և ասէ նուրբ ձայնիւ. պետ մայրն հրամայեաց եթէ զի՞նչ կամիս՝ հրամայեա: Ասէ եղբայրն. զի արասջիք

մեք ծերն. և նստէին ամենեքեան արտաքոյ վանիցն 'ի վերայ գետոյ, քանզի ոչ տանէր զնոսա վանքն: Յայնժամ ասէ հայրն Դանիէլ ցաշակերտն իւր. գրեա դու և տուր ցհարս այսօրինակ. եթէ կամիք կեալ, ստացիք անընչութիւն և լռութիւն, և զի յերկուքին յայս առաքինութիւնք կախեալ կան ամենայն կեանք կրօնաւորի: Եւ գրեաց զայս աշակերտն և ետ յեղբարցն ումեմն զգրեալն զի Թարգմանեսցէ նոցա 'ի բանս եգիպտացւոց, քանզի հելլենացի գրեաց: Եւ եղև իբրև ընթերցան զգրեալըն, և լուեալ հարցն ամենեցուն օգտեցին յոյժ, և յուղարկեցին ընդ ծերն բազում պատուութեամբ կրելով 'ի մեկնելն նոցա 'ի նմանէ, և ոչ ոք իշխեաց ասել ցնա եթէ տացես սէր, հայր դու: Իսկ զկնի այսորիկ եմուտ ծերն Դանիէլ 'ի քաղաքն Եմոյի, և ասէ ցաշակերտ իւր. գնասցես դու 'ի վանս կանանց, և ասա ցսարկաւագուհին թէ աստ եմ: Զի էր անդ կանանց վանս որ կոչէր Միաւանոն, յորս բնակէին քոյրք երեք հարիւր: Իսկ աշակերտ ծերոյն գնացեալ բախեաց ընդ դրունս վանիցն. ասէ դռնապանն 'ի ներքուստ ցածն ձայնիւ. բարեաւ եկիր և զի՞նչ հրամայես: Ասէ ցնա եղբայրն. կոչեսցես առ իս զմայր ձեր, զի ունիմ ինչ ասել նմա: Ասէ դռնապանն. ոչ ումեք խօսի նա երբեք, այլ ասա ինձ զի՞նչ և խօսիս, և ես պատմեցից նմա: Ասէ եղբայրն. ասասցես նմա՝ եթէ կրօնաւոր ոմն կամի խօսել ընդ քեզ: Գնաց դռնապանն և ասաց նմա, և նա առաքեաց նմա զերկրորդ իւր քոյր, և նա եկեալ ասէ. սարկաւագուհին առաքեաց զիս և ասէ ցքեզ՝ ո՞ ես դու և կամ զի՞նչ խնդրես: Ասէ եղբայրն. ա-

սէր, տալով մեզ օթեվանս ընդ քո և ընդ այլ ծերոց, քանզի գիշեր է. և մի բացօթեայ կենալով կերիցեն ըզմեզ գազանք: Ասէ ցնա մայրն. ոչ երբեք մնացեալ է այսր այր. բարիոք է զարտաքինս քո կերակրել գազանաց քան զներքինս: Յայնժամ ասէ եղբայրն. աբբայն Դանիէլ է: Իսկ լուեալ առժամայն բացին զերկուս դրունսըն, և ելին փութանակի ամենայն ժողովն, և զմերկնազգեստս իւրեանց տարածանէին 'ի դրանէն մինչև ուր էր ծերն. թաւալէին առ ոտս նորա և համբուրէին զոտնատեղիսն: Իսկ յորժամ եբերին 'ի վանսն զնա, մատուցին կոնք մի և լցին զնա ջրով եռեալ խառնեալ անուշահոտիւք, և կանգնեցան 'ի քուերցն երկուք և լուացին զոտս ծերոյն և զաշակերտացն, առին բաժակս, և բաժանեցին քուերցն 'ի վերայ կոնքին, և 'ի լուացարանէն հեղուին 'ի վերայ գլխոց իւրեանց. յետոյ և ինքն մայրն ալեա էառ և եդից 'ի վերայ գլխոյ իւրոյ: Իսկ էր տեսանել զնոսա իբրև զվէմս անշարժ և անխօսունս, և երթևեկ նոցա ամենայն հրեշտակական: Ասէ ծերն ցմայրն. ամաչեն զմեզ քուերքդ եթէ այդպէս են յամենայնի: Իսկ նա ասէ. այսպէս են յամենայնի աղախնայքս քո, հայր. այլ աղօթեա վասն դոցա: Ասէ աբբայն. տէր կեցուսցէ զսոսին: Մին 'ի նոցանէ այծեա էր զգեցեալ, անկեալ կայր 'ի մէջ սրահին և ննջէր: Ասէ ծերն. ով

բարեք սէր և տուր օթևանս մեզ աստ, զի ընդ երեկս է օրս: Ասէ սարկաւագուհին. ոչ երբեք մարդ մտեալ իցէ աստ, և լաւագոյն իցէ ձեզ զի արտաքոյ կերիցեն զձեզ գազանք և ոչ 'ի ներքուստ: Յայնժամ ասէ եղբայրն. հայրն Դանիէլ սկիտացին է: Նա իբրև լուաւ զայս, եբաց զերկուս դրունս վանիցն, և փութով ընդ առաջ ելեալ նորա հանդերձ բազմութեամբ քերցն, և զփակեղուանս իւրեանց սփռէին 'ի վերայ ճանապարհին 'ի դրանէ վանիցն մինչև ցեկեղեցին, և համբուրէին զոտս ծերոյն և ջնջէին զփոշի սանդալոյն: Եւ իբրև մտին 'ի վանսն, առեալ մայրն այն գլանակն զտաշտ և զսափոր, և ելից զտաշտն ջերմ ջրով և անուշահոտ ծաղկօք, և կացոյց զքորսն երկուս դասս և լուաց զոտս ծերոյն և զաշակերտին նորա. և ապա առեալ 'ի ջրոյ լուացելոյն մայրն վանիցն և արկանէր և 'ի վերայ իւրաքանչիւրոց քերցն, և յետոյ քան զամենեսեան ինքն արկանէր 'ի վերայ գլխոյ իւրոյ: Եւ էր տեսանել նոցա իբրև զանշարժ քարանց և զանմարմին հրեշտակաց անբանք և լռեալք, բայց միայն սակաւ նշանիւք յօդէին միմեանց զոր պարտն էր գործել: Ասէ ծերն ցսարկաւագուհին. 'ի մէ՞նջ պատկառին քորքս այս, եթէ հանապազ այսպէս լռեալ կան անմռունչ: Ասէ մայրն. միշտ այսպէս են, հայր. այլ աղօթեա վասն նոցա: Ասէ ծերն. Ած կեցուսցէ զամենեսեան զսոսա ողորմութեամբ իւրով: Իսկ մի ոմն 'ի նոցանէ անկեալ դնէր 'ի միջի և ննջէր, և պատառատուն քրձիւ ծած-

Digitized by Google

իցէ սա որ 'ի քամն է։ Ասէ. մի 'ի քուերցս. արբեցող է, եւ թէ զինչ արարացուք սմա՝ ոչ գիտեմք. Եթէ հանեմք 'ի վանիցս՝ երկնչիմք 'ի մեղաց, եւ եթէ արտաքսեմք սմա՝ տարտամեցուցանէ զքուերս։ Ասէ ծերն ցաշակերտն իւր. առ զջուրն կանգնեա եւ հեղ 'ի վերայ նորին։ Եւ արար այնպէս։ Իսկ նա զարթուցեալ որպէս զարթեալ՝ յարեաւ։ Ասէ մայրն. տես, այդպէս է յամենայնի։ Յետ այսօրիկ ասացեալ մայր վանիցն զծերն՝ մատոյց 'ի տուն ճաշակերանն յընթրիս։ Եւ 'ի ժողովել քուերցն, ասէ ցծերն. օրհնեա զաղախնայքս քո, զի առաւելն քո մեծաշահեսցեն։ Եւ նա օրհնեաց։ Եւ 'ի բազմելն 'ի սեղանատանն ինքն եւ եղբայրն միայն նստան ընդ ծերոյն. եւ բերին առաջի ծերոյն տապն՝ որ ունէր թրջեալ եւ հում բանջար եւ արմաւ եւ ջուր, եւ աշակերտի նորին մատուցանեն ձկնեալ եւ փոքր մի հաց եւ գինի. Իսկ քուերցն եդին նըկանակ բազմապէս եւ գինի. ուտէին փափկապէս, եւ ոչ ոք խօսէր սեղանոյն։ Իսկ յետ գնալոյն գոհութեան յեկեղեցին, ասէ ծերն ցմայրն. զինչ եր այդ զոր արարեր, քանզի մեզ մենաւորաց այլոյ էր կերակրել ձկամբքն եւ խորտկօքն զորս դուք կերայք։ Ասէ մայրապետն ցծերն. դու միայնակեաց ես եւ կերակուր միայնակեցի եդի քեզ, եւ աշակերտին քո աշակերտ միայնակեցի եւ ես կերակուր

կեալ էր։ Ասէ ծերն ցմայր նորա. մի՛ իցէ սա, որ այսպէս զգուշութեամբ ն անուանէր անձկեալ զնի առաւել եւ նիրհէ։ Ասէ ցնա մի ոմն 'ի քուերցն անդէն. յանձն է այդ եւ խենթեալ է միշտ, հալածել եւ ոչ գիտեմք զինչ արարացուք դմա. զի արտաքսել վասն յանցանաց համարիմք եւ խնայեմք 'ի դա, եւ եթէ թողումք զդա աստ՝ ամօթալից առնէ զքորսն յաչս ամենեցուն։ Ասէ ծերն ցաշակերտ իւր. առեալ զաւազան արկցես զդորա ջուր 'ի վերայ նորա։ Եւ երթեալ արկին 'ի նա զջուրն, յարեաւ իբրեւ զարթեալ ոք։ Ասէ մայրն ցծերն. այսպէս յաճախեալ կայ առաւել միշտ, տէր։ Եւ առաջի աւուրամտից վանացն զծերն 'ի սեղանն եւ ամենայն քուերքն եկն 'ի միասին, եւ արարին ոչ ամենեցուն, եւ ասէ ցծերն. օրհնեա, տէր, զաղախնայքս քո, զի առաւելի քո կերակրեսցեն սոքա։ Իսկ ծերն օրհնեաց զնոսա. եւ մայրն եւ եղբայրութիւն նստան ընդ ծերոյն միայն, եւ այլքն ուրոյն նստան 'ի սեղանին։ Եւ եդ առաջի ծերոյն տապն թրջեալ եւ բանջար զաղար ոչ խառնեալ եւ արմաւ եւ ջուր թմպա. Իսկ աշակերտին ծերոյն եդ առաջի նոցա ձկնեալ եւ հաց եւ գինի խառնեալ ջերմ ջրով։ Իսկ քուերցն առաջի եդ բազմազան կերակուրս եւ ձուկն եւ գինի. եւ հանապազ բարւոք եւ կերան զամենայն եւ ոչ խօսեցան ինչ։ Իսկ զկնի յառնելոյն 'ի սեղանոյն՝ ասէ ծերն ցառաջնորդուհին. զինչ է այս զոր արարեր. զի մեզ առնէ՛ր հիւրոցս բարի կերակուրս, եւ ձեզ յաւէտ, եւ դուք կերակրեցայք զբարին։ Ասէ ցնա մայրն. դու կրօնաւոր ես եւ ձեզ կերակուր ճգնաւորի եդաք առաջի, եւ աշակերտին քո աշակերտ ծերոյ էր եւ նորա եդաք զնո-

աշակերտաւն եղի առաջի նորա. մեք սակս եկք և կերակուր սակս կերակրոյ։ Ասէ ծերն. յիշատակեսցի սէր քո, օգտեցուցեր զմեզ։ Այլ 'ի գնալն նոցա 'ի հանգիստ, ասէ աբբայն Պամփիէլ ցաշակերտսն իւր. գնա տես թէ մեր է արբեցողն ննջեալ։ Անցին և ասէ ցծերն. յեր աղօթիցն է։ Այլ ասէ ծերն ցաշակերտսն իւր. հսկեա ընդ իս զգիշերս զայս։ Արդ յորժամ հանգեան քնեցին ամենեքեան, առ ծերն զաշակերտսն իւր և եկաց յետոյ վանդակապատին. և ահա կարծեալն արբեցող՝ կանգնեալ կայր, և ձեռք նորա յերկինս համբարձեալ, և արտասուքն իւրև գետ հեղուին զերեսաւք, անկանէր յերկիր և ծունր մատուցանէր. բայց յորժամ իմանայր զոք 'ի քուերցն եկեալ 'ի պխտոյն, ընկենոյր զանձն յերկիր և խորդայր. և ըստ այսմ սովորութիւնն նորա էր 'ի բնակել նորա 'ի միջի նոցա։ Յայնժամ ասէ ծերն ցաշակերտսն իւր. կոչեա ինձ զմեծն [illegible], ընդ նմին և զերկրորդն։ Եկին և զամենայն գիշերն տեսանէին զինչ և գործէր։ Ասէ ծերն. զայսպիսի արբեցողս սիրէ ա̃ծ, և ես վասն դորա եկի։ Այլ մայրն սկսաւ լալ և ասէր. ոհ, քանի՜ չարչարանս մատուցաք դմա։ Այլ յորժամ հարցին զփայտն ժամու, ամբոխումն եղև առ քուերս

մանն իւր. իսկ մեք նորեկք և անկար գոլով, որպէս վայել էր յաւրախութեան պատրաստեան ձերոյ հանգեաք և մխիթարեցաք։ Ասէ ծերն. յիշեսցէ զսէրն ձեր աստուածպաշտ, զի շահ եղև մեզ մեծ։ Իսկ և գնացեալ նոցա ննջել և հանգչել, ասէ հայրն Պամբեէլ ցաշակերտս իւր. գնացեալ տեսցես թէ մայր նիրհէ թմբրեալն այն յիմարն որ անկեալ կայր 'ի արտաքին։ Գնաց եղբայրն տես, և եկեալ ասէ ցծերն. 'ի գուռն արտաքիննոցին անկեալ կայ թմբրեալն։ Ասէ ծերն ցաշակերտսն իւր. հսկեա ընդ իս և արթուն կաց 'ի գիշերիս յայսմիկ։ Եւ յորժամ ննջեցին 'ի քուն ամենեքեան, առեալ ծերն զաշակերտսն գնացեալ կացին պատէ յետոյ վանդակին, և տեսանէին զկոյսն զայն թմբրեալ զի յարուցեալ համբարձ զձեռս իւր յերկինս, և որպէս զհեղեղս հոսէին արտասուքն յաչաց նորա, և շրթունքն շարժէին յաղօթս, և ձայն լսել ոչ լինէր 'ի բերանոյ նորա. այլ և սիսքէր և հառաչէր և անկանէր 'ի վերայ երեսաց. և յորժամ իմանայր թէ անցանէ ոք ուրեք 'ի կուսից մայրենոյ, առժամայն անկանէր և խորդայր, և զի զայս առնէր զգիշերն ողջոյն, և այսպէս կացեալ էր զամենայն աւուրս կենաց իւրոց. և ոչ ոք գիտէր։ Ասէ ծերն ցաշակերտսն. գնա զաղտ և կոչեսցես առ ատ զառաջնորդուհին և զերկրորդն նորա։ Եւ գնացեալ կոչեաց։ Եւ եկին անդ և տեսանէին զայն զգիշերն ողջոյն զի առնէր։ Եւ սկսաւ մայրն ողբալ և ասել. վայ է ինձ թէ քանի չարիս արարեալ է իմ դմա։ Եւ իբրև եղև ժամ աղօթիցն, լուր եղև վասն նորա յամենայն ժողովս քերց. և անկաւ ահ 'ի վերայ նոցա. իսկ սուրբն այն իմացաւ զայն նոսա

որն վասն նորա։ Իսկ նա զաղօթս եկեալ ուր էր ծերն ննջեալ, առ զգաւազանն իւր և ել 'ի վանիցն. գրեաց 'ի դրունսն՝ աղօթս արարէք 'ի վերայ իմ, և թողութիւն արարէք քանզի անգամ զձեզ տրտմեցուցի. և անդ այս եղեալ։ Խնդրեցին զնա և ոչ գտին, և գտեալ զգաւազան բացեալ և զգիրն՝ աշխարեցին մեծ. եղև 'ի վանսն, և ամենայն ժողովն խոստովանեցին ծերոյն զինչ և գործեցին առ նա։ Իսկ արարեալ ծերն աղօթս 'ի վերայ քուեղին՝ դարձոյց աշակերտումն յանապատն իւր փառաւորեալ զԱծ, որպէս յինքն միայն գիտէ մերձաւոր ծառայ ունի։ Որպէս և այս որ ոչ երբէք ծառայեալ էր զինքն, և զանձն իւր արբեցող համարէր. բայց մեք զի բարւոք ինչ ոչ ունիմք, զնոցին բարեգթութեան աղաչեսցուք։

ՆՈՅՆ՝ ամն աղաչեցեալ յոյժ 'ի սպասաւորէն իւրմէ զննալ 'ի բժշկութիւն մանկանն միոյ որ Հիւանդ կայր 'ի մերձակայ գեօղն. և յառաջեաց սպասաւորն և եհան ընդ առաջ նորա զպատգամութիւնն խաչիւ և խնկօք։ Իսկ իբրև եստես ծերն, մերկացաւ զպատմուճանն Հանդերձն և սկսաւ լուանալ 'ի ջուրն առընթերակայ. զոր նախ տեսեալ սպասաւորին, դարձաւ յետս և դարձոյց զգեօղն յետս ասելով՝ եթէ աղձատեցաւ ծերն։ Իսկ 'ի Հարցա-

քան զլուանալն, և գնաց զաղօթս ուր էին, մանկունք ծերոյն, և գոհացաւ զՄխիթարոյն և զգաւազանն ծերոյն, և բացեալ զդուռն վանիցն անմատոյց, և գրեալ թուղթ եդ 'ի դրան վանիցն, և էր գրեալ այսպէս. աղօթեցէք վասն իմ, և թողէք ինձ զոր ինչ մեղայ ձեզ։ Եւ ելեալ գնաց և անյայտ եղև։ Եւ իբրև լուսացաւ, խնդրեցին զնա և ոչ ուրեք գտին. և առեալ բերին զթուղթն զոր գտին 'ի դրան վանիցն և ընթերցան զնա, և եղև սուգ և կոծ մեծ 'ի մէջ քերցն 'ի վանսն յայն։ Այսէ ծերին ցնոսա. վասն այսորիկ եկի ես այդր, զի զայսպիսի յեղանս ընդրեալ ինձ և սերտ զայսպիսիսն։ Ցայնժամ սկսան պատմել ծերոյն թէ որքան չարիս արարին նմա իւրաքանչիւր ոք։ Եւ արարեալ աղօթս ծերոյն 'ի վերայ նոցա, ել և գնաց 'ի սենեակ իւր։

Այսէին վասն ծերոյ ումեմն որ նախքա միայնացեալ, և սպասաւորէր նմա ամն աշխարհիկ մեծատուն յոյժ։ Եւ եղև հիւանդանալ երբեմն որդի մարդոյն այնորիկ՝ և բազում աղաչանօք եկեալ ծերն 'ի սենեկէն և իջեալ գնաց ընդ նմա, զի խնդրէր աղերսանօք 'ի ծերոյն իջանել և մտանել 'ի տունն և աղօթել 'ի վերայ որդւոյ նորա տկարի։ Եւ յառաջեաց քան զծերն մարդն այն և եմուտ 'ի տուն իւր և ասէ ընդ ընտանիս իւր. ելէք ընդ առաջ սրբոյ մեծի անապատականի ծերոյ։ Եւ ելին բազումք։ Իբրև ետես ծերն ժողովուրդ բազում զի գային ընդդէմ նորա զամբարօք և խնկօք, խանգաւ զգլուխ և մերկացաւ զամենայն Հանդերձս իւր և սկսաւ լուանալ միրկ 'ի ջուրս գետոյն։ Իսկ սպասն այն սպասաւոր իբրև ետես զծերն այնպէս, ամաչեալ յոյժ՝ աղաչէր

նմին թէ ընդդէմ գործեցեր զայդ, զի առաւել ամբարտաւան՝ թէ դև կալաւ զքեզ, և ասէր ծերոյն. այդ եղև պատճառ զի զայդ առաւացեն խնձ։

ԵՀԱՐՑ՝ հայրն Մակար աշակերտացն ցհայրն Սիսոյ՝ եթէ յարժամ կարդամ, զրել կամիմ խորհրդոյս իմ և պատրաստել զբանսն զի ընկալայց զնա 'ի հարցումն։ Ասէ ցնա ծերն. ոչ ինչ են պէտք, այլ անմտութեամբ թէ յաւել խորհրդոց և մտածել և ասել ինչ։

ԱՍՏՈՒՆ՝ ասեն եթէ երբեմն 'ի խաչիթեան 'ի տօնի ճաշակելին եղբարքն յեկեղեցւոջն. և էր անդ եղբայր մի զի առաւել եթէ ոչ ճաշակեաց գինի ինչ, այլ ջուր։ Եւ կերակրոց պատառ այլ ամն եղբայր առաւելն ամենեցուն և ասէ. այս անունն ընդդէմ ոչ ճաշակելոյ, այլ բեր ամն փոքր մի ջուր։ Եւ յարուցեալ ամն 'ի ծերոցն ասէ ցնա. բաւական էր քեզ այսօր միս ուտել 'ի խցին քում, քան եթէ լսել զբանս զայդ առաւել ամենեցուն։

ԵՂԲԱՅՐ՝ ամն եհարց ցհայրն Մատոյէ և ասէ. եթէ երթամ 'ի տեղիս ուրեք բնակել, զիարդ կամիս եթէ վարեցայց անդ։ Ասէ ծերն. եթէ կամիս բնակել ուրեք, մի կամիր անուն հանել քեզ եթէ չերթամ 'ի ժողովս, և յարժամ պահել ոչ ուտեմ և ըմպեմ. վասն զի այս է ընդունայն անուն, և զկնի գտանես ձանձրութի

ընդդէմ յետոյ գտանել 'ի նմանէ, և ասէ. գործեցեր գործեցեր, զի խաբեալ պարտեալ է ծերն։ Եւ ասաց նմա եղբայրն առ նա և ասէ. ծեր, ընդդէմ արարեր զայդ, զի անմնաբերան առէին՝ թէ գիւղահարեալ է ծերն։ Ասէ ծերն. և ես այդ զայդ կամէի լսել և վասն այն արարի։

1 Հարցուց երբեմն հայրն Անայէ աշակերտացն զհայրն Սիսոյ և ասէ. յարժամ ընթեռնում զգիրս, կամիմ խորհրդածել իմ զի ասացի զայն, և պատրաստ ունիմ առ 'ի յառնել զնա։ Ասէ ցնա ծերն. ոչ պիտոյ է քեզ այդ, այլ ստացիր 'ի միտս քո լռութիւն, և ոչ հոգալ ինչ և գիտել զբանս բարիս։

2 Եղև երբեմն տօն 'ի սկետնա, և ճաշէին եղբարքն յեկեղեցւոջն. և էր անդ եղբայր մի և առաւել յաղագս սպասաւորին կերակրոյն՝ եթէ ես ոչ ճաշակեմ եփեալ ինչ կերակուր, այլ աղ միայն։ Եւ ասէ սպասաւորն այն բարձրաձայն ցմիւսն. սա ոչ ճաշակէ կերակուր, բեր սմա աղ։ Ասէ ծերն ցեղբայրն, լաւագոյն էր քեզ այսօր ուտել միս, քան լսել զայս վասն քո 'ի ժողովս յայս։

3 Եղբայր ամն եհարց ցհայրն Մատոյէ և ասէ. եթէ գնացից 'ի վանս ուրեք կալ անդ, զիարդ պարտ է զի կեցից անդ։ Ասէ ցնա ծերն. եթէ կեցցես 'ի տեղւոջ ուրեք, մի հանիցես 'ի վեր զանուն քո եթէ արգելական իցեմ և ոչ եղանեմ յեկեղեցին, ոչ ուտեմ, ոչ ըմպեմ և այլն՝ և այլս այսպիսիս. զի այսպիսիք առաւել ընդունայնք են, և յետոյ գտանես ձանձրութիւն. զի ասոր և լսել այսպիսեաց զայսմ, ամենեցուն

և խաղաղութիւն. վասն զի մարդիկ ուր եմէ · պայծառ ինչ զամենեն, անոյ երկնային: Ո՛րչ ցնծու երջանիկն. իսկ զինչ արարից եւ: Ո՛րչ ցնծայ ծերոն. ուր և Նոյս, հաստարարակ ամենեցուն գնեալ երկր, և զխառն տեսանելս զերկիւ-ղածս թէ զարծիցեն՝ հաւատոր նոցա կատարեալ զքո կամօք և այնպէս հանդիպեա, վասն զի այս և խոնար-հութիւն է. քեզ հաւատարել նոցա. և մարդիկ յորժամ տեսանեն զքեզ ընդ նոսա, ամենեցուն հաւատոր ունին զքեզ, և ոչ ոք ծնցէ և խռովեցուցանէ զքեզ:

ՍԻՄՈՆ՝ ծերքն վասն երանելւոյն հօրն Արքէոյ և հօրն Թէոդորոսի փիլիսոփայից՝ եմէ քան զառաքուած ու-նեյին առաքելութիւն ընդ մարդկայինս փառս: Որդ հայրն Արքէոս ոչ երբեք երթայր 'ի պատմութիւն մարդոյ. իսկ հայրն Թէոդորոս թէպէտև պատահէր, այլ որպէս և զառաւօտ էր, վասն զի ձեռք և ցամաքոտ էր, և աւ և եր-կիւղ ամենայն Նի պարապահանման խորհուրդ:

ՊՂԱՏՈՆԱՑ՝ ասէ 'ի հարանցն փիլիսոփայի՝ եմէ զէտ եղև ինձ ընդ երանելւոյ երթալ առ հայրն Թէոդորոս. և զանեալ զնա զի ունէր ցնցոտեն լիքխառն, և կուրծք նո-րա բաց կային և ծնգաւքն էր առաւօտ կողկանէ: Եւ ասէ հոնն ասէ եղեն զի տեսցէ զնա, և բախեալ զդուրսն՝ եր-ծերին բացեալ նմա, և պատասխանեալ նմա առ զդրանն նո-րանն զնոցէն և խօսէր ընդ նմա: Եւ առեալ իմ հաւատք մի նահապետական ծառայեցի զօսս նորա. իսկ ծերոյն ա-ռնել զայն 'ի բաց ընկեց: Եւ իբրև զնաց կամին, ա-

մարդիկ գտնեն առ նա և չքնաղն. [illegible] հաւատոյ այլոց եղբարցն, և զոր առնեն 'ի նոսա փոյթքն՝ զայն արասցես և դու և հանդիպես. զի այս խոնարհութիւն է քեզ հաւատալ նոցա. և մարդիկ տեսցեն զքեզ նոցա ընդ, և ոչ ներկեսցեն և չխռովեսցեն զքեզ:

1 Սիմոն վասն հօրն Արքէոյ և հօրն Թէոդորոսի փիլիսոփայից՝ ե-թէ քան զամենայն [illegible] մարդկան. զի [illegible] հօրն Թէոդորոսի հանդիպէր. այլ [illegible]:

2 Պղատոն մեզ աւանդէ զհօրն Թէոդորոսի փիլիսոփայի վասն նորա՝ [illegible] 'ի [illegible] ծերոյն և [illegible] զնա զի [illegible], և [illegible] և թէպէտ [illegible] 'ի [illegible] նորա: Եւ իբրև [illegible] ծերն և [illegible]; և [illegible] նմա: [illegible] ընդ [illegible]: Եւ իբրև զնաց կամին, [illegible] ծերն. ընդէր [illegible]

սեմ ցնա. Հայր, ընդէ՞ր զայդ արարեր. Եւ՞ն այդ՞ն զի օգտեսցի, մի զուցէ զայթակղեցաւ լինել 'ի մէնջ: Ասէ ցծերն. զի՞նչ ասես, հայր. մինչև ցայժմ մարդկան ծառայեցից. կատարեցան պէտքն և անցին. որ կամիցի շահել շահեսցի, և որ կամի գայթակղել գայթակղեսցի. Եւ առ անգամ մի զխարդ և պատրաստ 'ի ժամու նորին-պէս երանեմ 'ի պատահման: Այս պատուիրեաց աշակերտին խոնարհ և ասէ. եթէ եկեսցէ ոք և կամիցի տեսանել զիս, մի լինիցիս նմա մարդկորէն. այլ եթէ ուտիցեմ, ասա նմա թէ ուտէ. և եթէ ննջիցեմ, ասա եթէ ննջէ:

ԱՍԷԻՆ ' վասն սուրբ կրօնաւորի՝ եթէ ոչ ճաշակէր հաց, այլ սիսեռն թրջեալ. և եթէ դէպ լինէր նմա երթալ և ճաշակել առ ոք, զնէր առաջի իւր զթրջեալ սիսեռն և ճաշակէր: Դէպ եղև նմա երթալ առ մեծ ծեր, և էին և այլ օտարականք անդ. և եփեաց ծերն փոքր մի սակս վասն նոցա: Այս իբրև նստան ճաշակել, եբեր զարձեալ զթրջեալ սիսեռն իւր և եդեալ առաջի իւր ուտէր: Իսկ ծերոյն տեսեալ լուռ եկաց, զի մի յանդիմանեսցէ զնա առաջի նոցա: Այս իբրև յարեան նոքա, առեալ զնա 'ի մի կողմ ասէ. եղբայր իմ, եթէ դէպ լինի քեզ երթալ առ ոք, մի երևեցուցաներ զընտրելիս քո. այլ ըստ եղելոյն ճաշակեա, զի մի երևեսցիս որպէս զատապարտել զնոսա. այլ եթէ կամիս առնել զկամս քո, նիստ 'ի տան քում և մի ուրեք ելաներ: Այս նորա լուեալ բանից ծերոյն, եղև հաւասարաբարոյ կերակրոց 'ի դիպել եղբարց այն և ասաց նմա ծերն:

զայդ, հայր. զի եկին առ քեզ իշխանքն որպէս զի շինեսցի, և արդ զնոսա տրտմեալ: Իսկ ծերն ասէ ցնա. զի՞նչ ասես, եղբայր, գնա ես զմարդիկ պաշտեցից. զոր պարտ է ունել տրտմութիւն ինչ, և որ ոք կամի շահել շահեսցի, և որ ոք կամի գայթակղել գայթակղեսցի. ես որպէս և էի՝ ցուցայ նոցա. և ես ասեմ քեզ, աշակերտ, եթէ ոք գայ առ իս՝ մի ասասցես նմա սուտ, այլ թէ իցեմ յուտել, ասասցես՝ ճաշակէ, և թէ ննջեալ է իմ՝ աշակերտ ննջէ ասասցես:

: Եղբայր մի ճգնաւոր ոչ երբէք ճաշակէր հաց: Եւ գնաց նա տեսանել զծեր ոմն մեծ, և էին անդ և այլ ծերք. իբրև եղև ժամ ընթրեաց և բերին 'ի սեղանն հաց և կերակուրս, իսկ եղբայրն այն եդ առաջի իւր սիսեռն թրջեալ և ուտէր զայն: Իբրև յարեան 'ի սեղանոյն, առեալ զնա առանձին ծերն ասէ ցնա. եթէ գնասցես առ ումեք՝ մի յայտնեսցէ զգործ քո, իսկ եթէ կամիս առնել զկամսն քո՝ նստցիս 'ի սենեկի քո և մի ելանիցես առ ոք: Իսկ նա առեալ 'ի ծերոյն, եղև հաւասար այլոց:

ՊԱՏՄԵՑԻՆ[1] ոմանք վասն հօրն Եւլոգեայ երիցու աշակերտի որբոյն Յովհաննու ոսկեբերանի հայրապետին Կոստանդնուպոլսի՝ եթէ մեծ կրօնաւորութիւն ունէր պահելով զերկուս զերկուս աւուրս և շաբաթս համելով, և ոչ գինի ճաշակէր և ոչ ձէթ, այլ աղ և հաց միայն, և ունէր ՚ի մարմնականն մեծ փառս : Սորա լուեալ վասն սկիւթացւոց՝ եթէ մեծ վարս ունին, եւս ակն ունելով այսպէս թէ առաւելագոյն ինչ գիտիցէ քան զնոսա : Ընդ երթեալ նորա ՚ի Պիղուզ՝ հարցանէր թէ զիարդ իցէ Սկիւթ : Եւ պատմեցին եթէ աւերեցաւ ՚ի Մազքթաց, և լուեալ տրտմեցաւ յոյժ : Ասացին ոմանք՝ եթէ է աստ ծեր մի սկիւթացի ՚ի Պանեփոսի հայրն Յովսէփ, երթ առ նա : Եւ երթեալ առ հայրն Յովսէփ, ակն ունէր աւելի ինչ խստակրօնութիւն տեսանել ՚ի նմանէ : Ընկալաւ զնա ծերն խնդութեամբ և ասէ ցսպասաւորն իւր . զինչ և ունիս մխիթարութիւն՝ արա մեզ զայս օր վասն օտարացս : Եւ իբրեւ նստան ճաշակել, ասեն որք ընդ նմայն էին՝ թէ հօրս Եւլոգիոս բերէք սակաւ մի աղ, վասն զի սա ոչ ճաշակէ աստի : Իսկ հայրն Յովսէփ լուռ լինէր, կերան և արբին : Եւ եղաք առ նմա աւուրս երիս, ոչ ՚ի սաղմոսելոյ նոցա լուաք և ոչ զաղօթս նոցա տեսաք . վասն զի զամենայն զոր ինչ առնէին, ՚ի ծածուկ գործէին : Եւ գնացեալ ՚ի նոցանէն ոչ ինչ օգտեցան : Եւ ըստ մատակարարութեան Ա՟յ դէպ լինի յաւուր յայնմիկ՝ մոլորեցան և եկին մերձ ՚ի յերեկոյն դարձեալ անդրէն ՚ի խուց ծերոյն : Եւ յառաջ քան զբախելն նոցա լուան ՚ի նոցանէն զի սաղմոսէին . և կացեալ

[1] Եւլոգիոս անուն որ էր աշակերտ լեալ Աթանասի աղեքսանդրացւոյ, և էր սա քահանայ և ճգնաւոր յոյժ, և մեծանուն հռչակեալ էր . պահէր երբեմն զերկուս աւուրս, և երբեմն մի անգամ ճաշակէր ՚ի շաբաթուն, և կերակրէր հաց և աղ միայն, և էր փառաւորեալ յամենեցունց : Յորժամ սա երբեմն և գնաց ՚ի Պանեփոսա առ հայրն Յովսէփ, կարծէր խստագոյն ինչ վարս տեսանել : Եւ ընկալաւ զնա ծերն ուրախութեամբ, և հիւրընկալեալ զնա կերակրեաց բարւոք : Ասեն ծերոյն աշակերտքն Եւլոգիոսի . ոչ ինչ աղաղակեաց կերակուր քահանայք, այլ միայն հաց և ջուր : Իսկ հայրն Յովսէփ լռեաց և եկեր զամենայն : Եւ կացին նոքա անդ զերիս աւուրս և ոչ լուան յաշակերտացն Յովսէփու սաղմոս կամ երգ, զի ՚ի ծածուկ և անմռունչ աղօթէին . և ելեալ անտի ոչ ինչ շահեցան ՚ի նոցանէ : Եւ եղև խաւարիքն այդ մութին մեծ և մառախուղ յամենայն, և մոլորեալ նոցա յաւուրն դարձեալ անդրէն առ ծերն . և նախ քան զբախելն զդրանն լուան զձայն սաղմոսաց նոցա ՚ի ներքուստ և մնացին բաղխել ժամս զի կատարեսցեն, և ոչ եղև վճար

մնացեալ նոցա 'ի շատ ժամս՝ յետոյ բախեցին, և նոքա դարձեալ լռեցին 'ի սաղմոսելոյն ։ Արդ մնացեալ նոցա, ընկալաւ զնոսա խնդութեամբ ծերն. և վասն խորշակին որ եթէ ընդ նմայն էին՝ առին զկուժն և եդուն նմա ջուր, և էր ջուրն խառն 'ի ծովէն և 'ի գետոյ ։ Այլ զմտաւ ածեալ առանձինն՝ մնացեալ առ ծերն անկաւ առաջի նորա և աղաչէր զնա՝ կամելով ուսանել զվարս նոցա, եթէ զիա՞րդ իցէ զի զառաջինն ոչ սաղմոսէիք, և յորժամ չու-գայք՝ սաղմոսէք 'ի բազում ժամս. և դարձեալ համեցեալ ըմպել իմ, գտի զջուրդ աղի ։ Ասէ ցնա ծերն. եղբայրդ անմիտ է, և խառնեաց զծովուդ չիմանալով ։ Իսկ նա աղաչէր՝ կամեցեալ գիտել զճշմարիտն ։ Ասէ ցնա հայրն Յովսէփ. այն փոքր ապակեանն զինւոյն զոր եթէ մեք արբաք՝ վասն սիրոյն Քրիստոսի. իսկ զայս ջուրս համապազ ըմպեմն եղբարքդ ։ Ուսոյց նմա և զընտրութիւն և 'ի ծածուկ առնել զվարս իւր և ոչ առաջի մարդկան, և եհատ 'ի նմանէ զամենայն իրս. և եղև միաբանակեաց առաւել քան զայլսն, և ճաշակէր զամենայն որ ինչ դնէին նմա, և ուսաւ 'ի ծածուկ գործել զվարս բարիս. և մեծապէս շահեալ ասէ ցծերն. Ճշմարտութեամբ են գործք ձեր ։ Այլ չոգաւ խնդութեամբ գոհանալով զնոյ ։

Այլ ոմն 'ի հարանցն առ հայրն Յովսէփ, և բախեալ զդուրսն՝ եբաց ծերն կարծելով եթէ աղաւաւորն իւր իցէ ։ Այլ իբրև ետես զնա, անկաւ 'ի վերայ երեսաց իւ-

աղօթիցն ։ Իսկ նոցա ձանձրացեալ ընդ յամելն՝ բախեցին զդուռն, և նոքա իբրև լուան զձայն դրանն՝ լռեցին յաղօթիցն, և ընկալան զնոսա ուրախութեամբ, զի 'ի սովորոյն խառնութէ առաջացեալք էին ։ Իսկ մի յաշակերտացն Եւլոգիոսի արկեալ ջուր տալ ըմպել նոցա, և էր նա աղի ծովու ջուր, և ոչ կարաց ըմպել ։ Եւ եկեալ 'ի միտս Եւլոգի աղաչեաց զծերն ուսանել նմա զքաղաքավարութիւն իւրեանց և ասէ. զի՞ է, հայր, զի նախ ոչ երգէիք յաղօթս, և այժմ երգէք՝ մինչ գնացաք մեք, և ջուրս այս էր յորժամ քաղցր և այժմ աղի ։ Ասէ ծերն. այդ եղբայր յիմար էր և յանգէտս խառնեաց 'ի ծովէ զջուրդ ։ Իսկ Եւլոգի աղաչէր զնա ուսանել նմա զուղիղն ։ Ասէ ծերն. փոքր այն գինի այն ուր որ գայթակղեաց զքեզ՝ այն սէր գալոյդ քո էր, նոյնպէս և ջուրն քաղցր և ամենայն մխիթարութիւն. այլ մեք հասարակաց ջուր զծովայինդ ըմպեմք, և աղօթս անդադար և միշտ ։ Յորժամ ուսոյց նմա զիմաստութիւն քննել զխորհուրդս, և եհատ 'ի նմանէ զհպարտութիւն մարդկային. և եղև նա յորժամ հեռու խորհրդածու ընտրեալ և հաւատար այլոց, և ուտէր զոր ինչ առաջի դնէին, և ճգնէր զամենայն 'ի ծածուկ ։ Եւ ասէր ցծերն. Ճշմարտապէս հաստատեալ է ամենայն ճգնութիւն ձեր ։

Digitized by Google

րոց ։ Նա աղաչէր զնա եւ ասէր . կանգնեաց, հայր, զի ողջունեցից զքեզ ։ Ասէ ցնա ծերն . ոչ կանգնիմ եթէ ոչ երթիցես ։ Նա բազում անգամ աղաչեաց զնա, եւ ոչ կանգնեցաւ, մինչեւ ել նա արտաքս ։

ԱՍԱՑ ոմն 'ի ծերոցն՝ եթէ մարդ որ ունիցի լաւութիւն եւ ոչ յառաքինութէ, այլ կամ 'ի փառս տալոյ ինքեան, իսկ որ ըստ Այ լնեցուցանէ զինքն՝ այն է առաքինութիւն, վասն զի յԱյ ունի զշնորհսն ։

ՊԱՏՄԵԱՑ երանելին հայրն Նեղեփիոս եպիսկոպոսն Ակեկոպօղսեայ առ հայրն Սիսոյ 'ի լեառն հօրն Անտոնի . յորժամ պատրաստեալ էր գնալ անդրէն, յառաջ քան զերանելին նոցա 'ի ճանապարհն՝ եւ նոցա ճաշակել ընդ առաւօտն, եւ էին պահք ։ Արդ իբրեւ եդին զսեղանն, ահա փարանացիք բախեցին զդուրսն ։ Նա ասէ ծերն ցաշակերտսն իւր . տուր նոցա փոքր մի աթերայ զի աշխատեալք են ։ Ասէ ցնա հայրն Նեղեփիոս . թող աւուր, հայր, զի մի ասիցեն եթէ Սիսոյ այգուն ճաշակէ ։ Նա հայեցաւ 'ի նա ծերն եւ ասէ . երթ դու տուր նոցա ։ Նա իբրեւ տեսին զաթերայն, ասացին ցնա՝ թէ օտարք ոք են աստ եւ ծերն ընդ նոսա ճաշակէ ։ Նա ասէ ցնոսա՝ այո ։ Նա սկսան տառապել եւ ասել . Թողութիւն արասցէ Ած ձեզ, զի ետուք ճաշակել ծերոյն յայս ժամու . եթէ ոչ գիտէք զի բազում ժամանակս ունի աշխատել զինքն ։ Արդ լուեալ զայս եպիսկոպոսին, անկեալ առաջի ծերոյն ասէ . Թողութիւն արա ինձ, հայր, զի մարդկօրէն խօսեցայ, իսկ դու զԱծայինսն խորհիս ։ Ասէ ցնա հայրն Սիսոյ՝ եթէ Ած փառաւորեսցէ զմարդ . փառք մարդկան ոչ ինչ են եւ ոչ երբէք կան հաստատուն ։

ԱՍԷԻՆ՝ վասն սկիւթացւոյն . եթէ հասանէր 'ի վերայ եւ զգայր ոք զգործ ընկերի իւրոյ, ոչ եւս իբրեւ զառաքինութիւն ունէր զգործն, այլ իբրեւ զմեղս ։ Պատմեալ ասէին՝ եթէ յորժամ ելանէրն յԵգիպտոս եւ կամէին զվարձս հնձոցն առնուլ եւ կամ զգինս ձեռագործին իւրեանց, իւրաքանչիւր ոք սահմանէր ըստ պիտոյից իւրեանց զդարմանս, եւ զայլն ամենայն այրեաց եւ որբոց տային ։

1 Աւելին եւ վասն հարցն սկիւթացւոց . եթէ յայտնէին ուրուք առաքինութիւնք, յայնմհետէ ոչ իբր 'ի զառաքինութիւն այլ իբրեւ զմեղս համարէին ։

ԱՍԷԻՆ[1] վասն հօրն Յովհաննու կարճահասակի եթէ նա զվաստակաւորականն բերէր ասելով եթէ իմ այրիքն և որբ-քըն ՚ի Սկիւթ են.

Էր ոմն ՚ի հարանց Սկիւթիոյ անուն, մեծ և առա-քինի ճգնաւոր, որ ՚ի բազում ճգնութիւնս որպէս զկոճղ ցամաքեալ էր։ Լուաւ թագաւոր ոմն զհամբաւ նորա և կոչեաց զնա, և ոչ կամեցաւ գնալ առ նա՝ զայս ասե-լով. եթէ ինչք և ստացուածք խնդրէ յինէն, ոչ ունիմ զի տացից նմա. եթէ սպանանել կամի, պատրաստ եմ ՚ի մեռանել վասն անուանն տեառն, կտրեսցէ զգլուխս իմ և տացէ նմա. և եթէ խրատ խնդրէ, ոչ է պարտ խրատ-տուին առ խրատաւորն ընթանալ, այլ ինքն եկեսցէ և տացէ զօրհնութիւնն։

ԱՍԱՑ[2] հայրն Պիմէն. ուս զսիրտ քո պահել զոր ինչ ուսուցանէ լեզու քո։ Այսոց զարմանալ՝ եթէ բարի է հնազանդութիւն, զի ուսուցանէ զմարդ փորձ և ընտիր։

1 Ասէին վասն հօրն Յովհաննու կարճահասակին՝ եթէ զաշխատա-նաց իւրոց զվարձս զոր առնոյր ՚ի հունձս՝ զամենայն բերէր ՚ի Սկիւթէ և ասէր՝ եթէ իմ որբք և աղքատք ՚ի Սկիւթէ կան. և այնպէս անդ ՚ի աղքատ եղբարց տայր։

2 Ասաց հայրն Պիմէն. ուսուսցես զսիրտ քո պահել զայն ինչ զոր ուսուցանէ բերան քո, և ուսո զբերան քո խօսել զայն ինչ զոր իցէ ՚ի սիրտ քո։

Digitized by Google

# ՄՆԱՑՈՐԴՔ

## յերկրորդ թարգմանութենէ

Զ ԵՂԲԱՅՐ ոմն գովեցին առաջի հօրն Անտոնիոսի. իսկ նա փորձեաց զնա զի թէ համբերել կարիցէ արհամարհանաց, և գտաւ զնա զի ոչ համբերեաց, և ասէ ցնա. Նման ես դու գեղջ՝ որոյ առաջի կողմն զարդարեալ իցէ, և մէջ նորա յափշտակեալ և գերեալ յաւազակաց:

ԱՌ հայրն Թէոդորէ գնաց եղբայր ոմն, և կացեալ անդ աւուրս երիս աղաչէր լսել 'ի նմանէ բան. իսկ նա ոչ բնաւ ինչ խօսեցաւ ընդ նմա և ոչ բան մի. յայնժամ ել նա անտի տրտմեալ: Ասէ ցծերն աշակերտ իւր. հայր, ընդէ՞ր ոչ ասացեր նմա բան ինչ, զի գնաց տրտմեալ: Ասէ ծերն. Թող տուր, եղբայր, զի՞նչ ասացից նմա, զի վաճառական էր նա, և կամէր 'ի վերայ օտար բանից հպարտանալ. զի ոչ առնելոյ վասն կամի զբանն ուսանել, այլ ձևանալոյ 'ի ցոյցս մարդկան բանիւք:

ԱՅԼ ոմն եղբայր գնաց առ նա և սկսաւ խօսել մեծամեծս և քննէր զգործս զոր ոչ բնաւ գործեալ էր նարա: Ասէ ցնա ծերն. դեռ ես բնաւ ոչ գտեալ է քո և ոչ զծախս նաւու ուղղութեան ըղձամեալ է քո 'ի նմա, և ոչ 'ի ծովու մտեալ է քո, և կամիս մտանել 'ի քաղաքն դժուարագնալի. այլ նախ գործեա և ապա խօսեսցես:

ԶՀՕՐԷՆ Մակարէ լուաւ իշխան ոմն և գնաց 'ի Սկիտէ տեսանել զնա, և պատմեցին ոմանք զայն ծերոյն. իսկ նա փախեաւ և ել 'ի դաշտ: Եւ դիպեցաւ նմա իշխանն և հեծեալք իւր, մինչ երթայր ծերն 'ի դաշտի, և ասեն ցնա. ասասցես մեզ, ծեր, ո՞ւր իցէ սենեակ հօրն Մակարէի: Ասէ ծերն. և զի՞ խնդրէք զնա, զի այր կատարեալ իցէ նա: Իբրև եկն իշխանն յեկեղեցին, ընդ

Digitized by Google

տառապ եղեն նմա եղբարքն ։ Ասէ ցնոսա իշխանն . լուայ ես զհօրէն Սողոմոնէ եւ եկի տեսանել զնա , եւ դիպաւ մեզ ծեր ումն որ գնայր յԵգիպտոս , եւ հարցաք զհօրէն Սողոմոնէ . իսկ նա ասէ ցմեզ՝ զի՞ խնդրէք զնա , զի յեմար եւ մոլի իցէ նա ։ Իբրեւ լուան զայն եղբարքն , տխրեցան յոյժ եւ ասեն . որպիսի՞ էր ծերն որ ասաց զայդ վասն որբոյ հօրն ։ Իսկ նոքա ասեն . ալեւոր էր եւ հինա զգեցեալ , եւ մեծահասակ եւ սեաւ ։ Իսկ նոքա ասեն . այդ նոյն ինքն էր հայրն Սողոմոն , զի ոչ կամեցաւ յայտնել զինքն ձեզ , վասն այն ասաց զայն ։ Ապա շահեցաւ յոյժ իշխանն եւ մեկնեալ գնաց 'ի տեղի իւր ։

ԼԵՍԹԵՐԻՆԷ հայրն գնայր ընդ անապատ եւ այլ եղբարք ոմանք ընդ նմա . եւ տեսեալ նոցա վիշապ մի՝ փախեան ։ Ապա իբրեւ կացին , ասէ եղբայր ումն ցծերն . եւ դու եւս երկեար 'ի նմանէ , հայր ։ Ասէ ցնա ծերն . ոչ երկեաչէի 'ի նմանէ , որդեակ . այլ եթէ ոչ փախուցեալ էր իմ 'ի նմանէ , ոչ կարէի զերծանել 'ի հոգւոյ ամբարհաւաճութենէ ։

ԻՇԽԱՆ ումն յԱղեքսանդրու կամեցաւ տեսանել զա-հայրն Պիմէն , եւ ոչ յանձն առնոյր ծերն առնել զայս ։ Իսկ իշխանն պատճառեաց չար ինչ գործել , եւ կալեալ զորդի քեռ նորա եդ 'ի բանտի եւ ասէ . եկեսցէ Պիմէն եւ աղաչեսցէ զիս , եւ ապա թողից զնա վասն նորա ։ Յայնժամ եկեալ մայր մանկանն՝ քոյրն Պիմենի առ Պիմէն , ասէ ցնա , մինչ կայր արտաքոյ դրան աղաչելով . ողորմեա որդւոյ իմոյ ։ Իսկ ծերն ոչ բնաւ նայեցաւ 'ի նա եւ ոչ խօսեցաւ ընդ նմա ։ Իսկ նա անարգէր զնա եւ ասէր . աղինձի աղէք , ողորմեա ինձ , զի անզղջանելիս իմ որդին քո 'ի բանտի կայ ։ Իսկ ծերն պատասխանեաց եւ ասէ . Պիմէն որդիս ոչ ունի ։ Ապա այսպէս գնաց քոյրն ։ Իսկ իբրեւ լուաւ զայս իշխանն՝ ասէ . ապա բանիւ պատուիրեսցէ ինձ զի թողից զնա ։ Իսկ ծերն պատասխանեաց առ իշխանն այսպէս . դատեսցես զդա ըստ արքունի օրինաց . եւ եթէ արժանի մահու ինչ գործեալ իցէ դորա , մեռցի եւ դա . ապա թէ ոչ , շնորհեսցես ինձ ։ Ապա շնորհեաց նմա իշխանն զորդի քեռ նորա , եւ ոչ կարաց տեսանել զնա հնարիւք ։

ԱՍԱՑ դարձեալ՝ եթէ որ ոք ստասցէ սէր մարդկան , նա հեռացի 'ի սիրոյն այս . եւ զի ոչ է բարւոք ամենե-

Digitized by Google

ցուն հաճոյ լինել, զի գրեալ է՝ վայ ձեզ յորժամ բա-րի ասասցեն զձէնջ ամենայն մարդիկ:

ԱՍԱՑ դարձեալ. զոր օրինակ գանձ ծածկեալ եթէ յայտնեսցի՝ յաւարի առցի, այսպէս է և առաքինութիւն, որ յայտնեսցի՝ կորնչի. և որպէս զմոմ հալեալ 'ի հուր, նոյնպէս և զհոգին կիզէ գովութիւն մարդկան և զնոյն 'ի նմանէ զեղծ:

ԱՍԱՑ հայրն Պամինէ՝ եթէ գնացի ես երբեմն առ հայրն Պիմէն և ճաշակեցաք 'ի միասին, և ապա ասէ ցմեզ. գնացէք հանգերուք փոքր մի: Եւ գնացին եղ-բարքն զի հանգիցեն. և ես մնացի անդ, զի առանձին ինչ խօսեսցայց ընդ նմա, և յարուցեալ գնացի 'ի սե-նեակ նորա. իսկ նա իբրև ետես զիս զի գնայի, եղև իբ-րև զնիրհեալ, և զի սովորութիւն էր ծերոյն զամենայն ինչ 'ի ծածուկ գործել:

Առ հայրն Սիմէոն եկն երբեմն իշխան մի տեսանել. իսկ նա իբրև լուաւ, առ զգօտի իւր ընդ մէջ և գնաց 'ի յօտել զարմաւենիս իւր: Իսկ նոքա եկեալ 'ի դրանն ձայնեցին՝ ծեր ծեր, ուր է միայնակեացն այն: Եւ նա ասէ՝ ոչ է աստ: Իսկ նոքա իբրև լուան՝ գնացին անտի:

ՆՍՏԵԱԼ երբեմն հայրն Տիթոյի քթուէր զգլուխն իւր, և ետես զնա այլ եղբայր այնպէս: Իսկ նա իբրև իմացաւ եթէ ետես, ամաչեաց յոյժ և ասէ. Թողութիւն արա ինձ, եղբայր, զի ոչ ես եղեալ եմ կրօնաւոր, զի այսպէս տեսեալ՝ եղէ թուլացեալ:

Էր մի եղբայր որ բնակէր յեզր գետոյն Պաղեստի-նոյ, ուր և բնակէր երանելին Սիլուանէ: Եւ այս եղ-բայր յիմարութիւն ցուցանէր այլոց. զի յորժամ հանդի-պէր ումեք, վաղվաղակի ծիծաղէր և հրճուէր. և 'ի սակս այսու պատճառի ամենեքեան զանց առնէին զնո-վաւ: Յաւուր միում եկին երեք ոմանք 'ի հարցն առ հայրն Սիլուանէ. և իբրև աղօթեցին՝ ասեն ցհայրն. տուր մեզ զաշակերտս քո զի տարցէ զմեզ 'ի սենեակս ամենայն եղ-բարցն զի տեսցուք զնոսա: Իսկ ծերն ասէ ցեղբայրն 'ի ընդ նոսա. 'ի սենեակս ամենայն եղբարց տարցես զնո-սա: Իսկ 'ի ծածուկ ասէ ցեղբայրն՝ եթէ զյիմարն զայն եղբայր մի ցուցանել, զի մի գայթագղեսցին առ նա: Իբ-րև շրջեցան նոքա ընդ սենեակս եղբարցն, ասէին հայրքն ցեղբայրն որ առաջնորդէր նոցա. առաջնորդեա մեզ և առ-

Digitized by Google

մինչոյն եղբարս ցուցանիցես մեզ։ Այլ ասէ նա՝ բարւոք է, հայր. և արար այնպէս, բայց միայն յիմարն եղբայրն ըստ հրամանի ծերոյն. և դարձան անդրէն առ հայրն Սիբալանէ։ Ասէ ծերն ցնոսա. տեսարո՞ւք զամենայն եղբարսն։ Պատասխանի ետուն և ասեն. այո, հայր, տեսաք և գոհանամք զքէն, բայց դժուարիմք զի զամենեսեան ոչ տեսաք։ Եհարց ծերն ցառաջագնաց եղբայրսն. միթէ զամենեսեան ո՞չ տեսէք։ Պատասխանի ետուն և ասէ. եղև ըստ բանի քո, հայր։ Այլ իբրև գնացին հարքն, դարձեալ զնոյն ասացին ցհայրն Սիբալանէ՝ եթէ ընդ տեսութիւն եղբարցն խնդամք, իսկ զոր ոչ տեսաք՝ տրտմիմք։ Իբրև գնացին նոքա, ստուգեաց հայրն յեղբօրէն՝ թէ զայն յիմարն միայն ոչ տեսին և տրտմէին, և իմացաւ թէ ժխտին նա զյիմարութիւն։ Այլ յարուցեալ գնաց 'ի դուռն յիմարին այն եղբօրն հայրն Սիբալանէ տեսանել թէ զինչ իցէ գործ նորա. գնացեալ ոչ բախեաց զդուռն, այլ եմուտ 'ի տունն. և ետես զեղբայրն զի նստէր 'ի գործ, և երկու սփրիդս ունէր դրեալ 'ի յաջակոյս և յահեկոյս՝ մի ընդ աջմէ իւրմէ և մի ընդ ահեկէ. և իբրև ետես զծերն, սկսաւ ծիծաղել ըստ սովորութեան իւրոյ։ Ասէ ծերն. թողցես զայդ արդեօք և ասա ինձ զնստիլ քո։ Իսկ նա դարձեալ ծիծաղէր։ Ասէ ցնա հայրն. գիտես և դու, զի ես բաց 'ի կիրակէէ ոչ եկանէի արտաքս 'ի խցէն. և ահա արդ եկեալ եմ 'ի մէջ շաբաթուն, զի ա͞ծ առաքեաց զիս առ քեզ։ Այլ իբրև լուաւ նա զանուանն ա͞յ, երկեաւ յոյժ և անկաւ առաջի նորա և ասէ. թող ինձ, հայր. քանզի նստիմ յառաւօտէ և դնեմ զխիճս զայս առաջի իմ, և եթէ զայ խորհուրդ բարի՝ ձգեմ խիճ մի յաջու կողմանն սփրիդին, իսկ եթէ չար զայցէ խորհուրդ՝ ձգեմ 'ի ձախու կողմանն. զայս առնեմ զօրն ողջոյն, և յերեկոյին թուեմ զխիճսն երկուց կողմանց. և եթէ գտանիցեն աւելի աջոյ կողմանն՝ ճաշակեմ հաց, իսկ եթէ ձախակողմեանն յաւելցի՝ յայնմ աւուր ոչ ուտեմ ինչ. և յերկրորդ աւուրն եթէ զայցէ խորհուրդ ինչ 'ի միտ, ասեմ ցանձն իմ՝ տես զինչ խորհիս, հաւատա ինձ զի և ոչ պասօր կերիցես։ Այլ իբրև լուաւ զայս ծերն, զարմացաւ և ասէ. Ճշմարիտ սուրբք էին հարքն եկեալք, որք յայտնեցին զառաքինութիւն սորա 'ի շահս բազմաց,

և զի մեծ ուրախութիւն առաւ կին այսօր 'ի գալ նոցա առ մեզ ։

ԱՍԱՑ հայրն Եսայիաս. մեծ և պատուականն իցէ յաղթել հպարտութեան և ուղղել յանձգնութեն. զի որք անկանին 'ի ձեռս չար ախտի ամբարտաւանութե, օտարանան 'ի հեզութէ, և խստանայ սիրտ նորա 'ի վերայ ազգաց, և անկանի 'ի մեղս ամենայն չարեաց՝ որ է ամբարտաւանութի ։ Սոյլ դու, ծառայ Տեառն, կացցես ծածկեալ 'ի միտս քո զգործս և զխոկս քո, որպէս զի մի մարդահաճութիւ կորուսանիցես զվաստակս քո. զի որ ոք վասն հաճոյութեան մարդկան առնիցէ ինչ, կորուսանէ զվաստակս իւր ըստ բանի տեառն. զի որ սիրէ զփառս 'ի մարդկանէ, անկանի նա յախտ նախանձու, և նախանձոտն ոչ կարէ խոնարհ լինել. անձն որ ոչ խոնարհի, բաժինն թշնամւոյն եղիցի՝ որք և ձգեն զնա 'ի խորս չարեաց և սատանանեն. և փախիցես դու 'ի մեծամտութէ, և արժանի լինիցիս հասանել փառացն այ 'ի կեանսն յաւիտենից ։

ԱՍԱՑ ծերն. մարդահաճութիւն լքէ զամենայն զօրութիւն կրօնաւորի և թողու ցամաքեալ զնա. և որ յայտնէ զբարի գործս իւր ումեք, նման իցէ նա այն որ սերմանիցէ զսերմանիս իւր 'ի կողմ եզերը, և եկեալ թռչունք երկնից կերան զնա. իսկ որ ծածկէ զառաքինութիւն, նմանեսցի այն որ սերմանեսցէ զսերմն իւր յերկիր բարի, և հնձէ բազմապատիկ ։ Արդ կամ փախիցես փախչելով 'ի մարդկանէ, և կամ կատակեսցիս և այպանեսցես զաշխարհ և զմարդիկ, և լինիցիս յիմար և մոլի յաղագս այ ։

ԷՐ ոմն առաջնորդ հասարակաց վանից, որ և ընդ իւր ունէր իբրև զերկերիւր եղբարս, և էր փառաւորեալ սա 'ի մարդկանէ յոյժ ։ Առ սա եկն հիւր Տր 'ի կերպս ծերոյ աղքատի, և աղաչէր զդռնապանն զի ազդ արասցէ հօրն թէ աղքատ ոմն ծեր եղբայրն ընկեր և ծանօթ քո՝ եկեալ առ դրանն է ։ Գնացեալ դռնապանն յոյժ աշխատութբ եմուտ առ հայրն և ասաց նմա զայն ։ Իսկ բարկացեալ հայրն ասէ ցնա. ոչ գիտես և տեսանես զի ընդ բազում խօսիմ ես և վհատեալ եմ, թող տուր զնա 'ի ժամս յայս ։ Իսկ նա իբրև լուաւ մեկնեցաւ և գնաց անտի ։ Աշխարհականաց տէրն և մեծայր առ

դրամնն մինչև ցհինգ ժամն՝ զի լիցէ երկոտասանցի ոք: Իսկ 'ի հինգերորդ ժամու աւուրն եկն ոմն մեծատուն անդ, և վասն որոյ վաղվաղակի բացեալ զդրունս ընդ առաջ նորա գնայր հայրն բարդուղ փութով և զգուշութեամբ: Իսկ անեալ զնա ընդ մեծատանն զօրով աղքատն, այն որ մեծն էր ողորմութեամբ և մեծութեամբ ոսկւոյն, առնէ աղաչանօք ցնա. խօսել ինչ կամիմ ընդ քեզ, հայր: Իսկ նա ընդ դառնախօսանոք ոչ ետ, այլ եմուտ ընդ մեծատանն 'ի ներքս զի Ճաշեսցեն, վասն զի սովոր էր 'ի սակս տարապանցն այնոցիկ և շփոթեալ էր: Իսկ իբրև Ճաշեցին, ել դարձեալ հայրն ընդ մեծատանն մինչև ցդուռն վանիցն և յուղարկեաց զնա: Իսկ իբրև դարձաւ անդրէն՝ ծառայ լեալ հողոց աշխարհի, դարձեալ մտաւոր մխիթարութիւն ինչ առնել աստուածեալ այն ծերոյն և անյիշաչար սրտւոյն. իսկ մինչ երեկոյ եղև, և ոչ ինչ օրհնութեան և կամ մաղթն ինչ արժանի ոչ արարին զօրհնեալն զայն աղքատ: Մերժեցաւ անօթի և գնաց, և պատուիրեաց առ հայրն այսպէս. և զի փոխա սիրեցեր մարդկանն, վասն աւանդին աշխատութեանց քոց և բարեխօսէ քաղաքավարութեանն զոր գործէիր դու, 'ի չարեաց կողմանց աշխարհի և 'ի ծառայ երկրի բերեմ մարդիկ՝ որ գովեսցեն զքեզ, զի զայդ ըղձաս և փութաս 'ի դա. իսկ յանցզքն խնոց բարեաց մի՛ Ճաշակեսցես և յաղքատութենէ իմ ոչ մնասցես: Նոյա ծանեաց զինչքն նոցա աղքատն այն ծեր ոսկր և փըլկէս Յն ՃԶ:

Թ

# ՎԱՍՆ ԴԱՏԵԼՈՑ

Եղբօր¹ ումեմն եկն փորձութիւն 'ի միաբանութեան հօրն Եղիութա, և որոշեալ անտի գնաց 'ի լեառնն առ աբբայն Անտոնիոս. և մնացեալ եղբօրն ամ մի առ նա, առաքեաց զնա 'ի միաբանութիւն ուստի եկն։ Եւ յորժամ տեսին զնա, դարձեալ հալածեցին։ Եւ նա կորացեալ գնաց առ աբբայն Անտոնիոս, ասէ. ոչ կամեցան ընդունել զիս, հայր։ Առաքեաց ծերն և ասէ. բազումք նաւարկեցին ընդ խորս ծովուն և կորուսին զբեռնն և աշխատութեամբ փրկեալ հասին 'ի յերկիր. դուք զփրկեալսն յերկիր կամիք ընկղմել։ Եւ նոցա լուեալ՝ եթէ աբբայն Անտոնիոս առաքեաց, առժամայն ընկալան զնա։

ԵՂԲԱՅՐ² ոմն եհարց զոմն 'ի ծերոց զի ընտրեսցէ նմա բան կրթութեան։ Ահա տեսանեմ, ասէ, զի առնէ իրս և պատմեմ զայն ումեք, և ասեմ ոչ դատապարտելով զնա, այլ միայն խօսիմք, ո՞չ է չարախօսութիւն և 'ի խորհուրդս։ Ասէ ծերն. եթէ ունիցի 'ի խորհուրդս ախտացեալս, չարախօսութիւն է. ապա եթէ ազատ իցէ յախտէն, ոչ է չարախօսութիւն, այլ զի մի աճեցուսցէ զչարն։ Այլ եղբայր պատասխանի ետ ծե-

¹ ՊԱՏԱՀԵՑԱՒ եղաւ մը փորձութիւն եղբօր ումեմն 'ի վանս հօրն Եղիայի, և արտաքսեցաւ անտի վասն այն միջոցին. և գնացեր 'ի լեառն առ հայրն Անտոն և պատմեց նմա և կեցաւ առ նմա ամ մի, և ապա առաքեաց 'ի վանսն ուստի ելեալն էր։ Իսկ նոքա իբրև տեսին, ոչ ընկալան զնա. և նա դարձեալ դարձաւ առ հայրն Անտոն և ասէ. ոչ կամեցան ունել զիս։ Իսկ նա առաքեաց զնա դարձեալ և պատուիրեաց նոցա այսպէս. ընկղմեալ նաւ 'ի ծովու և կորուսեալ բեռն՝ բազում աշխատութեամբ հասաք կարող եղանել յերկիր. իսկ դուք 'ի ցամաքի կամիք անդրէն կորուսանել զայս։ Իսկ նոքա իբրև լուան զբանս հօրն, սիրով ընկալան զնա։

² Եղբայր ոմն եհարց ծերոյն և ասէ վասն խորհրդոց. զի տեսանեմ զոմն որ գործէ ինչ չար և պատմեմ այլոց եւ՝ ոչ դատելով զնա, այլ պատմելով ասացաւ, արդ այս զառնել զչարախօսելն համարեսցի թէ ոչ։ Ասէ ծերն. թէ ունիցիս ինչ խէթ զնմանէ 'ի սրտի քո և ասես ինչ՝ այն դատել է, իսկ եթէ ազատ ես յատելութենէ նմանէ և ասես ինչ՝ այն ոչ դատել համարեսցի քեզ. այլ զի մի աճեսցէ չարն՝ լաւէն բարի է։ Եղբայրն ասէ, եթէ հարցի զմեզ ոմն և ասասցէ՝ եթէ կամիմ

Digitized by Google

բոյն և սուտ. եթէ եկից առ ոք 'ի հարցն և հարցից զնա՝ եթէ կամիմ լինել առ այսմ անուն, և գիտէ թէ ճիշդ է ինձ, զինչ ունի պատասխանի տալ ինձ. եթէ սուտ ինձ մի երթար, ոչ դատապարտէ զինքն խորհրդ-դովք իւրովք: Պատասխանի եա ծերն և սուտ. զայդ նայրբ խնդիրդ և զանունթիւդ սակաւք ունին. եթէ չարժանին ախտակ իցէ ինքեան, ճիշդ է, և բան ոչ ունի զօրութի: Նակ զինչ է, պարտ է ասել՝ եթէ եա ոչ գիտեմ, և զինքն ազատէ. և եթէ կամի ազատել յախտից, ոչ դատապարտէ զոք, այլ զինքն առնէ պատճառ և սուտ՝ եթէ եա ինձէն իսկ անպիտան եմ, բայց կարծեմ թէ ոչ է քեզ օգուտ այդ. և եթէ է նա խնատուն, ոչ երթայ, զի ոչ եւս առաց ծերն վասն չարութե, այլ զի մի անձնացի չարն:

Ուրէր սնն 'ի հարանց վասն երկուց եղբարց ասենց, և ճանեալ լինէին բանքն վասն եղբօր որ պահէր զօրութիւն: Ասաց և միւսն եւս թէ եւ լուայ. և երթեալ 'ի տուն նորա ոչ եգիտ հանգիստ ինքեան և ոչ որդութե տեսութիւն, մինչև երթեալ և ասացեալ եղբօրն եթէ ոչ ինչ լուայ, նմանապէս և միւսն եւս ասաց թէ և ոչ եւ հանգեայ: Այւ իբրև զղջացան 'ի խօսելոյ զբանսն, դադարեցին 'ի խորհրդոցն:

Ասէին՝ երկու եղբարք մեծք 'ի միաբանակեացն և արժանի եղեն տեսանողութե, և տեսանէր իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ զզօրութի մյ 'ի վերայ եղբօր իւրոյ:

բնակէին ընդ այն սնն եղբայր. և նա սուտ զնա՝ եթէ ոչ է բարւոք, մի կեալ, և գիտեմ զի այնպէս իցէ. և այս գտանիլ հաւանեցայ թէ ոչ: Ասէ զնա ծերն. այսպէս մանրաքննին տեսութիւն սակաւուց է. այլ թէ ազատ յատելութե ախտէն իցէ, ոչ է գտանել այդ, զի ոչ զերդ բարն չար ինչ կամի, այլ զբաւականն քեզ խնդրեսցէ որ հարցեալն զնա: Իսկ եթէ կատարեալ ոք իցէ՝ ոչ գտանիցէ զոք, այլ առասցէ՝ թայլ առաք, եղբայր, թուի ինձ թէ ոչ լաւագոյն է այդ քեզ. և խնատունն ոչ զնայ անդ կեալ. զի զոր լաւագոյն էր՝ առաց նմա. զի քննել զեղբայրն հրամայեալ է մեզ, այլ ոչ զմեղս գտանել. առաս թէ ոչ, ընդ մեղս անձնոյն սուրբք գտանեցին. զի թէ ոք ոչ նախ գտանիցէ և քննեսցէ զմեղս և տեսցէ զի չար իցէ, զիարդ խորշեսցի 'ի նմանէ և առտեացէ զնա: Եւ դարձեալ. թէ զառաքինութիւն ոչ գտանիցի և լաւ լինել ընտրեսցէ զնա, որպէս առասցէ զնա. քանզի ոչ զմեղաւորն պարտ իցէ գտանել և ատել, այլ զմեղս, որպէս և գրեալ է՝ թէ զմեղս ատեսցի և անարգեսցի և զչարն քո սիրեսցի:

: Իսկ եղբարքն երկու բնակեալ էին 'ի միաբանից վանս՝ մեծատանցք և ընտրեալք և արժանի լեալք շնորհացն այյ, և տեսանէին զայս 'ի վե-

Դիպէր եղև երբեմն մնալ 'ի նոցանէ երանելոյ առաքելոց միաբանութեանցն յաւուր ուրախութեան, և 'ի վաղիւն եղև պատարագաց բաց տօնախմբութեանն. Եւ հայեցեալ եղբօրն նորա երեկս զզօրութիւն հեռացեալ 'ի նմանէ՝ խռովեցաւ: Եւ եկեալ եկին 'ի խուցն, ասէ ցնա. զինչ գործեցեր, եղբայր, կամ զինչ խորհուրդս ունիս, վասն զի ոչ ունիս 'ի քեզ բաց տօնախմբութիւն զշնորհսն այդ: Եւ նա ասաց. ես ոչ խորհուրդս պղծեցի և ոչ խորհուրդս չարս զիմացեալ թէ արարի: Ասէ ցնա եղբայրն ծերն. միթէ բանս դատարկս եղ 'ի բերանոյ քո: Եւ յիշեաց եղբայրն և ասէ. այո՝ երեկ ասացի զանձինս զի ուտէին առաւօտուց միաբանութեանց և ասացի ցնոսա՝ եթէ յայսմ ժամանակ ուտէք յաւուր ուրախութեան. այս են մեղք իմ. աղաչեմ զքեզ, մխիթարեա զիս, մինչև զիջուցես զշնորհս, զի թողութիւն արասցէ ինձ: Եւ աղօթեաց երկոքեանն. և յետ երկուց շաբաթուցն եկին եղբայրն զշնորհսն այդ զոր եկեալ 'ի վերայ եղբօր նորա:

ԱՍԱՑ ՝ հայրն Յովսէփ ցհայրն Պիմէն. ասա ինձ եթէ զիարդ եղէց միանձն: Ասէ ցնա հայրն Պիմէն. եթէ կամիս գտանել հանգիստ և աստ և անդ, յամենայն իրս ասա՝ եթէ ես ով եմ, և մի դատապարտեր զոք:

ԼՈՒԱՒ[2] երէցն Պիղղոսի վասն ումանց եղբարց՝ եթէ 'ի

բայց դժխեյ ծերերոյ կացեալ 'ի ժամ աղօթիցն: Եղև երբեմն զի եկն մի 'ի նոցանէ առաքելոյ վանիցն յաւուր ուրախութեան, և եկեալ զինի որ ուտէր յառաւօտուն, և ասէ ցնա. միթէ ուտես առաւօտուց յաւուր ուրախութեան: Եւ զինի առաւօտին եղև աղօթք յեկեղեցւոջն բաց տօնախմբութեան; և հայեցեալ 'ի նա եղբայրն իւր եւ զշնորհսն իւր և զայլն բարձեալ 'ի նմանէ և տրտմեցաւ յոյժ: Եւ եկեալ գնացին 'ի սենեակ նորա, ասէ ցնա եղբայրն այն. զինչ գործեցեր դու, եղբայր, զի ոչ տեսանեմ 'ի վերայ քո զշնորհս այդ որպէս առաջինն կանխաւ: Իսկ նա ասէ. ես ոչ մարմնով և ոչ խորհրդով զիտեմ գործեալ իմ չար ինչ: Ասէ ցնա եղբայրն. և մի բանիւ իւիք դատեցեր զոք: Նա ասէ. յերեկ անեւ զոք զի ուտէր առաւօտ և դատեցի զնա, և այն են յանցանք իմ. աղաչաբանեց ընդ իս զի երկու շաբաթ զի աղաչեսցեն, Թէ թողցի ինձ: Եւ աղօթեցին այնուհետև և աշխատեցան յոյժ. և զկնի երկուց շաբաթուց եկեալ զշնորհսն այդ գտեալ եկեալ 'ի վերայ նորա:

1 Եհարց ցհայրն Պիմէն եղբայր մի և ասէ՝ Թէ զիարդ կարացից լինել կրօնաւոր ընտրեալ: Ասէ ցնա ծերն. եթէ կամիցես կատարեալ լինել և գտանել հանգիստ յոյժ աստ և 'ի հանդերձեալսն, առ ամենայն գործս զոր խնդրես կամ լսեսցես, այդպէս ասասցես՝ մի էցեն ես. և մի դատեր զոք, քանզի այս է կատարելութիւն ամենայն առաքինութեանն:

2 Լուաւ երբեմն հայրն Պիլղոսիոյ վասնիցն վասն եղբարց ոմանց՝ եթէ

քաղաքք երթան սաէղ և 'ի բաղանիս մեռանելն և անապա-
գագոյնս խորհին քան զմիայնակեցաց վարս ։ Այլ եկեալ
'ի ժողովն առ 'ի նոցանէ զմիայնակեցաց ձևն ։ Այլ իբ-
րև առաւօտ եղև, եհաս զնա սիրտ նորա և զղջացաւ. և
յարուցեալ առեալ խորհրդածք եկն 'ի խուցն և պատ-
մեաց զիւրսն համանգն, և նորա առաքեցին զնա առ հայրն
Միքայէլ ։ Այլ երթեալ առ ծերն ունելով զմեռելոցն ընդի-
տանն զմեռելոցն եղբայրցն, և պատմեաց զիւրսն հօրն Մի-
քայէլի և ասէ. եղբայրք որ եթէ տեսի մի հեղգագոյն էին
'ի կարգին իւրեանց՝ մերկացուցի զնոսա 'ի ձևոյն, և նոցին
խորհուրդք իմ եթէ ոչ արարի ազնիւ ։ Ասէ ցնա հայրն
Միքայէլն. ունիս ինչ զա 'ի հին մարդոյն՝ եթէ մերկա-
ցար զզաւակինորակն ։ Ասէ ցնա երէցն. ունիմ և այլ 'ի
հին մարդոյն ։ Յայնժամ ասաց հայրն Միքայէլն. ահա և
դու խաբեալ զեղբարսն ես. զի եթէ տակաւ ինչ ունիս 'ի
հին մարդոյն, տակայն հնազանդեալ ես մեղաց ։ Յայն-
ժամ երթեալ երէցն կոչեաց զեղբարսն, և անկեալ ա-
ռաջի նոցա և զգեցոյց նոցա դարձեալ զձևն միայնակեցի ։

ԱՍԱՑ՝ հայրն Եսայի. եթէ եկեսցէ 'ի միտս քո զա-
տել զեղբայր, դիր զմեղս քո առաջի քո. և զոր կար-
ծեսն 'ի բարի 'ի քեզ, տեսա՝ թէ և ոչ այն հաճոյ էր նմա ։

փոյթ ընդ փոյթ գնան 'ի քաղաքս և լուանին 'ի բաղանիս և հեղգանան
'ի ճգնութիւն, և ծուլութիւն և փափկութիւն կան ։ Իսկ գնացեալ նա յեկե-
ղեցին զատու անդ զեղբարսն զայնոսիկ, և մերկացոյց 'ի նոցանէ զզգեստ
կրօնաւորութեան ։ Իսկ իբրև արար զայս, խղճեցին միտք իւր և ապաշխա-
րեաց յոյժ, և յարուցեալ եկն առ հայրն Պիմէն չփոթեալ 'ի խոր-
հրդոց, և ունէր 'ի ձեռս զզգեստ եղբարցն զոր մերկեաց, և պատ-
մեաց ծերոյն զամենայն ։ Ասէ ցնա ծերն. ո՞չ ինչ ունիս դու բնաւ 'ի
հին մարդոյն, և մերկացեա՞լ է քո զնա խաղաղ ։ Ասէ ցնա քահանայն.
գտանեմ ես յիս կենդանի դեռ ևս զամենայն կարիս հին մարդոյն ։
Ասէ ցնա ծերն. արդ և դու մի 'ի նոցանէ ես յեղբարցդ. թէպէտ նա-
քա զհին մարդոյն տեսակս բերին, այլ դու ես մեղաց պարտական ես ։
Յայնժամ գնացեալ քահանայն անկաւ առ ոտս եղբարցն և զգեցոյց
նոցա զկրօնից հանդերձն, և եղեն միաբանք, և օրհնեալ ետ ար-
ձակեաց զնոսա ։

։ Ասաց հայրն Եսայիաս. եթէ անկանի 'ի միտս քո դատել զեղ-
բայրն 'ի վերայ ինչ յանցանաց իւրոց, նախ քննեա և խորհեսցիս զա-
մենայն յանցանս քո, և յայնժամ գտանես զքեզ մեղաւոր քան զնա.
և զոր դու բարի կարծես 'ի գործս քո, և ոչ զայն հաճելի առն. և
պատրաստես խորհելով ոչ կարասցես դատել զընկերն քո. քանզի առհա-
մարհել զանձն և զընկերն ոչ դատել անդ յապահով է, այլ և հաճո-
յին միայն և թեթևանայ 'ի մեղաց ։

ՄՈՒԱՑ[1] հայրն Եղիսաս՝ եթէ տեսի զերիցագոյն մի զի ունէր զինի զզեստ՝ զօղացեալ 'ի ձեռնադրութեան, և ես կամեցայ ծառայք առնել զզեւս՝ որ զայն եսուտն. առնել նմա, և ծածկեալ էր 'ի ներքոյ փիլոնին, և առեալ եղ բայր, կալ 'ի վերը զձեռանս։ Եւ նորա զօղացեալ վերացայց, և ահա ոչ ինչ կայր 'ի ձեռին նորա 'ի շնորհացն այ։ Եւ վասն այն զայս առեալ ձեռզ, զի մի ոչ զառեալ զերիցագոյն խաբ ինա։

ՀԱՅՐՆ[2] Պաահամ փնացեալ 'ի վանս սուրբը՝ դատաւ-պարտեաց զամեն անոր. և 'ի դատանայն 'ի խուղն՝ ոչ տայր թողլ մնանել նմա հրեշտակին տեսանն առնելով. այնպէս ասէ ինքը, մեր զառեցեց զեր զուն դառեցեր։ Եւ անկ-եալ 'ի վերայ երեսաց խորոց ասէ. մեղայ տեառն։ Եւ ասէ հրեշտակն. և ակր անցոյց զմեղս քո, այլ զգուշ-կաց յայսպեսմնէ։

ՄԻԵՒՆ[3] զմեծէն Մակարայ, զոր կոչէին երկրորդ Տեր փարաւոնի և Եգիպտոսի, թէ այնչափ ծածկեալ էր յանց-մամն մարդկան՝ որպէս թէ ընտա ոչ տեսանէր և ոչ լսէր։

ՄԻԵՐ[4] հայրն Մովսէս. եթէ մեռանիս յեղբօրէն,

1 Ասաց հայրն Եղիա՝ եթէ տեսի երէցայր մի որ ունէր զգուշ մի զինուոր ընդ Թէկոյ բարձ և զինայր զօղացեալ. իսկ ես կամեցայ ծառայ առնել զգեն, և առեալ. 'ի վեր տարեա զձեռան քո, երէցայր. Եւ նա լսեաց ինձ, և բաց բանի իմում իսկոյն 'ի վեր եհան զձեռան իւր և ընդ-թեկնոցն՝ ոչ ինչ ունէր առնելին, և զահացայ զայն. Եւ զայս պատուէ-րեմ ձեզ, թէ և ականատես եմ որ քննեցի յանցանաց եղբօրն, մի զայ-րացի, այլ զգուշացուցէ զնոսա մի զառնել զերէցայրն. այլ միայն զառնեցէ զինքն և քննեսցէ զմեղս իւր։

2 Գնաց երբեմն հայրն Աաահամ Թեբայեցի 'ի վանս սուրբն և եւտե-սանէ զերէցայր ոմն զի յանցեաւ 'ի մեղս և զառնեաց զնա. և իբրև եկ յանապատն, եկն հրեշտակ տեառն և եկաց ընդդէմ նորա 'ի դրանն առանն խցոյ և ասէ. ոչ թողից զքեզ մտանել աստ. իսկ նա աղաչէր և ասէր. ընդէր և կամ վասն իմոյ զործոյ։ Ասէ ցնա հրեշտակն տեառն. ես առաքեցայ զքեզ առ քեզ և հարցանեմ ցքեզ՝ թէ զի՞նչ հրամայես առ-նել ինձ՝ մեր կարգեցից զմեղաւորն զայն երէցայր զոր զառնեցեր դու. Յայնժամ զանէր հարկեալ ծնրադիր անկեալ 'ի վերայ երեսաց խորոց յերկ-կիր և ասէ. մեղայ, տէր, թող ինձ։ Ասէ ցնա հրեշտակն. արի զի եւ-եթող քեզ, այլ յայսմհետէ մի իշխեսցես զառնել զոք մինչև եւ զա-տեսցէ զամենայն։

3 Ասեին զհօրէն Մակարայ մեծի՝ եթէ եղև բան զերեցելոյն եւ 'ի վերայ երկրի և պարկես եւ փարաւոնի. և այնչափ Թաքուցանէր զպար-կառութիւն ամենայն մարդոյ և ծածկէր, մինչ Թէ ընտա ոչ տեսանէր. կամ լսէր ինչ։

4 Ասաց հայրն Մովսէս. Թէ և մեռանիցես յեղբօրէն, զուն մի ընտա զառնեցես զնա, զի կատարեսցես ամենայն զործոց բարեաց և ոչ զառ-

մի դատեր զնա. զի ձեռն Տեառն յորժամ եհար զԵ-գիպտոս, ոչ գոյր տուն յորում ոչ գոյր մեռեալ։ Այս-պէս է նշանակ իրիդ, զի ամենայն որ թաղեցաւ զիւր մե-ռեալն 'ի տան իւրում

ՄԵԿՆ. Մարկոս եղբօրորդին ոչ եղ 'ի անուանէ իւր-մէ զաւակ երեսուն, և քահանայն երթայր բառ ամենայն և առնէր պատարագ։ Այլ անձամբ առ նա գիւղահար մի 'ի բժշկութիւն, որ և նախ քան զմտանելն քահանային տուեալ. ոչ մի պատանքութեամբ քահանային, մի պատարագ մատուցանել։ Այլ ծերն ասէ. ամենայն որ զմեղս առնայցէ հա-նէ, և զնա 'ի նմանէ բերել. այլ գրեալ է՝ մի դատիք զի մի դատիցիք. և եթէ մեղաւոր է, ո՞վ քաւեսցէ զնա, զի գրեալ է՝ ողորմս արարէք միմեանց, զի բժշկեսջիք։ Այլ յորժամ եկն քահանայն, կամեցաւ տալ ամպրո-թակ արձակել զծերն. և ունկնդիր 'ի ժամ պատարագ-ին զի հրեշտակ Տեառն իջեալ յերկնից եդ զձեռն 'ի գլուխ քահանայիս, և փակեցաւ երեքն իբրև զհուր, և

տեղն զընկերին։ Դարձեալ ասէ. յորժամ ձեռն այ հարկանէր զեգիպ-տոսս, ոչ էր անդ տուն յորում ոչ գոյր մեռեալ։ Հարցին եղբարքն և ասեն. զինչ է զօրութիւն բանիդ այդորիկ։ Ասէ ծերն. այն է զի մի տեսցուք բնաւ զընկերին ինչ. և զի մեծ յանցանքութիւն է մարդոյ եթէ թողցէ 'ի տան զմեռեալ իւր, և զնոյն ողբայ զմեռեալ ընկերին. այս-պիսին է թէ զիւրն մեղս միայն հոգասցէ մարդ, և զայլոյ ամենեւին մի հոգասցէ. և զի ոչ է պարտ ասել բնաւ՝ թէ այն ամն չար է կամ այն ամն բարի, զի դատաստանք Տեառն բազում խորք են. մի խորհեսցիս չար ումեք և մի արհամարհեր զոք և յայլ ումեք արհամարհանս մի զուարճասցիս. այս ճանապարհս խոնարհութեան է ճշմարտապէս։

Ասէին և վասն հօրն Մարկոսի եղբօրորդւոյ՝ եթէ 'ի անուանէ իւր էր երեսուն ամ և բնաւ ոչ եղ 'ի նմանէ, և զնոյն քահանայն առ նա երթեալ 'ի տունն մատուցանել պատարագս։ Իսկ զմն որ ունէր զա-ւակին հանգստութիւն նորա, և պատճառեալ եղբօր նմա զի զեղծ նոյն որպիսութիւն զաւակ զընկերին։ Եւ առաջիկայ զմն գիւղահար առ ծերն զի բժշկեսցէ զնա։ Եւ իբրև զնոյն, նախ քան զամենայն ասէ ցծերն. հարկ պատանքութիւն է 'ի քահանայս յայս, մի թողուցուս զնա այսր գալ առ քեզ մատուցանել զպատարագս։ Իսկ ծերն ասէ զնա. որդեակ, զմեղս ամենեցեան արարողք ձգեն, և զնա 'ի նմանէ բերեա զնա. այլ և գրեալ է՝ մի դատիք և ոչ դատիցիք. թէպէտ և առաւելեւ մեղաւոր իցէ նա, ով կեցուսցէ զնա, զի գրեալ է՝ ողորմս արարէք 'ի վերայ մի-մեանց, զի բժշկեսջիք։ Եւ յետ բանիցս այսպիսիս արար աղօթս և հա-լածեաց զդեւն յաւնէն յայնմանէ և արձակեաց զնա։ Իբրև եկն քա-հանայն բառ սովորութեան, ընկալաւ զնա ծերն ուրախութեամբ։ Իսկ բա-րերարն Աստուած նայեցաւ յանմեղութիւն ծերոյն, և եցոյց նմա նշան այսպի-սի. զի յորժամ մտանէր քահանայն 'ի խորանն կալ առաջի սեղանոյն այ ընծայիցն, եկն հրեշտակ այ յերկնից և եդ զձեռն իւր 'ի վերայ գլխոյ քահանայիս, և եղև երեքն իբրև զսիւն լուսոյ։ Եւ մինչդեռ զար-

սակ ցծերն. եթէ թագաւոր ոք ոչ թողու ապստամբեալ ծառայք սպասաւորել ինքեան՝ զինուորք երկնաւոր արքային չթողացուցանէ պաշտօնատարն տեառն իւր, այլ զարժանիսն եւս առաւելազարդ ցուցանէ։ Այլ զդիւահարսն ազատեաց յայսոցն, արձակեաց խնդութբ, եւ փառաւորեաց զնա ՚ի Հնազանդս իւր։

ՅԻՍՈՒՍ՝ ամն ուսանէր երկիւ պաշտօնէիցն. եւ եկն առ նա Հիւր, եւ եդ տեառն Նորա ձեռս. եւ խօսել կերպաւն, զի նոքա թէ եւթներորդն չէր բաւական, եւ երեք երեք խօսն եւ երեք Նոցա։ Այլ խօսել յարեաւն ՚ի աշխարհս, մեղաւորեաց Հիւանդն եւ տեսէ. չէ պարտ շատ ուսանել կրօնաւորին։ Այլ խնդրեաց Հիւանդն Թողութեան եւ գնաց։ Այլ ծնողն փառաւոր կերպաւ զիւր սաՀմանն, եւ մնաց Նզովեալ, եւ միւսն այլ որն եւս առաւել, եւ յերկրպագութեան որն չկարէր ուսանել առ ջերն, եւ ընկեց զանձն տեառն ոտս եւ բազմ։ Այլ եկն առ նա Հրեշտակն տեառն եւ առաց. եղեւ այդ քեզ՝ զի զտուեցեր զերկնայինն. ոչ գիտես եթէ զոր ինչ եւ կարէ ոք ուսանել՝ ոչ յանձնեալն ասացէ, այլ ՚ի Հնազանդսն նոյ. եւ առողջ եւս ասացէր զայդ։

մեղեալ էր, ասէ, ՚ի մեղաց անմաւեանն, եկն առ խս ծայն որ ասէր ցնա. ընդէր զարմանաս, ծեր դու, ընդ այս գործ. զի եթէ մաՀկանացու արքայ ոչ Թողու զծառայս իւր չարչարեալ մաՀուամբ եւ զարդէքն զգեստս մտանել ի տեղ տեառն նորա, որչափ եւս առաւել անծագին զօրութեան սրբոցն եւ մարգարէից պատարագաւորս իւր որ ընծայեն նմա զանձնական խորհուրդս եւ կամս տեառն փառաց պաշտօնէութեան եւ երկնաւորի։ Զայս ասացեալ արտաքոյ եղեւ երանելին Մարկոս եպիսկոպոսի միայն այնմիկ զի ոչ պատուեաց զվարդապետն. այսպէս յայտնութեամբ եկեալ նմա ընդունելի գիտէ։

Եւ որ ամն ծեր եւ Հայրենիք յաւուրն աստուածային երկիւ. զնաց Հիւր Նմա երդմամբ ամն եւ Նորան ուսանել Հաւց. եդ եւ նմա երկիւ աստուածային. եւ խօսել Հայրենեաց զայն՝ ծանեաւ ծերն զի ոչ էր բաւական այն երկրորդն, եւ երեք տեառն նոքա այլ եւս երկիւ աստուածային։ Իսկ խօսել յարեաւն եւ յարեւածն, զառաւ եւ ծերն զերկրորդն եւ ասէ ցնա. ոչ է պարտ, երկրորդ, այդպէս չէ ուսանել մաՀուաւ։ Իսկ երկրորդին խնդրեալ Թողութիւն եւ գնաց անտի։ Իսկ յետ այնր խօսել միւսն ծերն Հայրենեաց ծերն վասն եւ բազմ ուսանել ընդ աստուածութեամբ, եւ զնա եւս նզովեալ կալոյ, այլ բանն պատուական զանձն Հաւատացոյց. այսպէս առաւել յերկրպագութեամբ եւ յերկրպագութիւն, եւ ոտս եւ ծերն առաքինեալ. յայտնեալ ծանեաւ զի փառն զաւակաց զերկրային Թողեալ եղեւ յաղագս աստուածութեան նոյ։ Իսկ անկեալ յերկիր բազմ եւ խնդրեաց Թողութիւն նոյ։ Իսկ եկեալ Հրեշտակն նոյ ասաց ցնա. փառն զի զտուեցեր զու զերկրայինն քո՝ եղեւ քեզ այդ. առողջ ուսո զերկնայինս, զի որ ոք ուսանի ըղձալ արժանի եւ կամ այլոց զարծեալ պատ- Թեաց՝ ոչ յանձնեալ իւր ուսանի զայն, այլ Հնազանդեալ նոյ պաշտօնէութեան սիրոյ։

ՆԻՒԵՐ' ամն արգել զքահանայն զայն՝ որ երթայր մերձ առ նա պատարագել, զի բամբասեցին զնա առ նմա. և լուեալ ձայն որ ասէր՝ առին մարդիկ զդատաստանն իմ։ Եւ տեսանէր ջրհոր ոսկեղէն և շղթայս ոսկեղէն, և գաղթի մի ջրհանս զի հանէր ոսկի ամանով ջուր և տայր ըմպողացն, ուստի ծերն ոչ կամէր ըմպել։ Եւ ասէին ցնա. զի՞նչ փոյթ է քեզ, ընդէ՞ր մնաս ծարաւ, զի ջուրն սուրբ է և անօթին ուր կայ և ամանն որով տայ։ Եւ ե-կեալ 'ի միտս իւր ծերն՝ կոչեաց զերեցն և խնդրեաց թողութիւն, և ետ առնել զպատարագն և հաղորդեցաւ 'ի նմանէ։

ԱՍԱՑ ծերն՝ թէ որ ընկալաւ զչարախօսութիւն, էառ հուր 'ի ծոցս իւր։

ԱՍԱՑ ծերն. եթէ տեսանիցես զոք ծիծաղեալ կամ կերեալ շատ՝ մի դատիր զնա, այլ ասա. երանի է նմա, զի բայց թէ մեղս ոչ ունի, և վասն այնորիկ խնդայ յանձն իւր։

ԱՍԱՑ հայրն Պիմէն՝ եթէ մարդ որ կարծէ եթէ զլռութիւն կրօնաւորին և սիրտ նորա զայլս դատապար-տէ, այնպիսին շատախօս է. և է դարձեալ այլ՝ որ խօ-

1 Միայնակեցի ումեմն ծերոյ սովորութիւն ունէր քահանայն եկեղեցւոյն իջանել առ նա և մատուցանել պատարագ և դառնալ անդ-րէն։ Եւ գնացեալ ոմն առ ծերն մատնեաց զքահանայն՝ թէ մեղա-ւոր իցէ։ Իբրև եկ քահանայն ըստ սովորութեան մատուցանել զպա-տարագն, իսկ ծերն գայթակղեալ առ քահանայն՝ ոչ եբաց նմա զդու-ռն և ոչ ետես զնա, և նա գնաց անտի տրտմեալ։ Եւ ահա լուաւ ձայն յերկնից ծերն որ ասէր ցնա. առին մարդիկ յինէն զդատաստա-նն իմ առին։ Իբրև լուաւ ծերն զայս, աւ հեղաւ զնա և 'ի զար-մացումն եղև, և ետես ջրհոր ոսկեղէն և դոյլն ոսկեղէն և չուանն ոս-կեղէն, և ջուրն ընտրեալ և կենդանի և յստակ 'ի նմա, և տեսանէր զի գողի մի հանէր և տայր ջուր որոց զալէտեան ունէին. կամեցաւ և ծերն ըմպել 'ի նմանէ զի ծարաւեալ էր, և ոչ էառ վասն զաղջոյ գարշելւոյ որ հանէր զջուրն։ Եւ դարձեալ ձայն եղև առ նա որ ասէր. ընդէ՞ր ոչ ըմպես 'ի սուրբ և 'ի կենդանի ջրոյդ յայդմանէ, և համ-զինչ պղծութիւն լինի ջրոյն 'ի յարկէն յայնմանէ որ հանէ զնա. և զի հանէ միայն և բաժանէ, այլ ոչ պղծանէ զջուրն։ Զայս այսպէս եսես և եկն 'ի միտս ծերն և խնդրեաց զերեկն, և կոչեաց զքահանայն և խնդ-րեաց թողութիւն 'ի նմանէ և աղաչեաց առնել որպէս և նախ առնէր։

2 Եթէ տեսանես զոք ծիծաղել կամ խօսել ընդ վայր, մի դատեր զնա, այլ ասասջիր՝ եթէ երանի իցէ նմա զի մեղս ոչ ունի. վասն այն-որիկ ուրախ է։

3 Ասաց հայրն Պիմէն՝ եթէ է մարդ որ կարծէ եթէ պահէ զլռու-թիւն և զխոհուն. արդ լռեալ կայ, այլ 'ի միտսն դատէ զամենեսին. այն-

սերցի յաստուածոյ մինչև յերկնս, և զլաւուԹին ունի, այսինքն զի առանց օգտի ոչ խօսի ։

ԲՆԱԿԻՐ ոմն առընԹեր ծերոյ մի, և 'ի ժամ հացին համապատ դնէր զմի ոտն 'ի սեղանն, և ծերն ոչ յանդիմանէր զնա ։ Այլ յետ բազում ժամանակաց չոգաւ ծերն այն առ այլ լաւագոյն այր և ասաց նմա զբանն ։ Այլ ասէ ցնա աւագն . առաքեա առ իս զեղբայրն ։ Այլ արար այնպէս ։ Այլ յորժամ գնաց առ նա և եկն ժամ հացի և եդաւ սեղանն, փուԹացաւ աւագ ծերն և եդ զերկոսին ոտսն 'ի սեղանն, և եկեալն առ նա եղբայրն դժուարացաւ և ոչ կարաց համբերել և ասաց . հայր, չէ պարտ զայդ առնել ։ Այլ աւագ ծերն եհան զոտսն 'ի սեղանէն և ասէ . քաւիցէ ասես, եղբայր, մեղք մեծ էր այս, մեղայ առաջի ա՛յ ։ Այլ դարձաւ եղբայրն առ ծերն իւր և այլ ոչ երբէք արար զդրուԹին զայն ։

ԵԲԵՐՆ եղբարքն աշակերտքն ցհայրն Մակար . զի՛նչ է մեծն և զի՛նչ է փոքրն ։ Այլ նա ասէ . զոր 'ի խորհուրդս իւր տեսանէ ոք փոքր՝ մեծ է այն, և զոր մեծ խոնարհեցէ՝ փոքր է ։ Այլ ասեն ցնա . մեկնեա մեզ ըզբանդ, հայր ։ Այլ ասէ ցնոսա . տրտմեցէք զմիտս ձեր և գտանէք զբանդ ։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց զծերն և ասէ . զի՛նչ է չարախօսուԹի ։ Այլ ծերն ասէ . եԹէ ասիցես՝ այս եղբայր ալիւր և փոյԹ է 'ի վարս և իմաստուն է, այլ սակաւ մի յայս ինչ իրս անհիմն է, ահա չարախօսեցեր զեղբօրէ քումմէ . իսկ եԹէ ասիցես՝ այս անուն խաբեբայ է և երդմնահար, այս դատապարտուԹիւն է և վատԹարագոյն քան զչարախօսուԹիւն ։

ԵՂԲԱՅՐ՝ ոմն անկաւ յազգս մանէ սատանայի 'ի պոռնկուԹիւն ինչ, և ոմն 'ի հարցն ասաց . ո՛հ զի՛նչ չարիս գործեաց ։ Իսկ յետ սակաւ ժամանակի ննջեաց եղբայրն որ մեղուցեալն էր, և հրեշտակ տեառն եած զնա առ ծերն և ասէ . ահա զոր դատեցար՝ ննջեաց, ասաց ա՛ծ՝

այլոքն ոչ լռէ, այլ խօսի միշտ ։ Եւ է այլ ոմն որ յառաւօտէ մինչև ցերեկոյ խօսի, և պահէ զլռուԹի . այսինքն է՝ այլ ինչ ոչ ասէ, բայց միայն զշահ հոգւոյ ։

1 Ղուկաս ոմն 'ի հարանցն վասն եղբօր ումեմն՝ եԹէ անկաւ 'ի չնուԹիւն, և ասէ . վայ չար արար ։ Իսկ զկնի սակաւ աւուրց վախճանեցաւ եղբայրն այն, և ահա հրեշտակ տեառն եկն առ ծերն և ունէր 'ի ձեռս -

Digitized by Google

ում հրամայես տանել զնա, յարքայութիւնն եթէ 'ի գե-հեանն, վասն զի անխղճաբար զիս արարեր և յառաջ քան զժամանակն դատեցար զնա: Այլ մնաց ծերոյն մինչև ցօր մահուան խելոյ արտասուօք աղաչխարել վասն բանիցն այնորիկ, մինչև թողութիւն արար նմա նոծ:

ՄՍԵՐ' արքայ Պօնգինոս' եթէ յորժամ կամի եղ-բայր առ եղբայր յեռնել, զեն չարախօսութիւն կամ յա-ռաջէ զնա 'ի տեղին կամ ընդ նմա զայ առ եղբայրն: Սրաց զարձեալ. ոչ ինչ է վատթարագոյն քան զչար սովորութիւն, քանզի բազում ժամանակի և աշխատու-թեան պէտք են այնպիսւոյն առ 'ի հատանելոյ զնա, քանզի առանց ժամանակի և աշխատութեան անհնարին է հատանել զսովորութիւնս. սակայն զաշխատութիւն բա-զում ունին, իսկ զժամանակս ոմանք առնին, ոմանք վաղ-վաղակի կործանեցան 'ի մահուանէ անտի, և նոծ միայն զիտէ զինչ առնելոց է ընդ նոսա յաւուրն դատաստանի:

ԱՅՀԱՐՑ' ամն ծեր. զինչ է որ ասէ' վասն դատարկ բանից: Այլ ասէ ծերն. որ ինչ և իցէ բան յաղագս մարմնաւոր իրաց' զատարկաբանութիւն է, բայց միայն խօ-սել վասն հոգւոյ փրկութեան ոչ է դատարկաբանութիւն. սակայն յամենայնէ լռել լաւագոյն է, քանզի մինչդեռ խօսիս զլաւն' զայ 'ի մէջ և վատթարն:

զինչ եղբարն այնորիկ և ասէ ցծերն. ահա եղբայրն զոր դատեցեր' մեռեալ, մեր ասես ինձ զի կարգեցից զնա, յարքայութիւնն [illegible] 'ի գեհեանն: Եւ յանկարծ [illegible] ծերն' ոչ ունէր պատասխանի և ոչ բան մի: Եւ յետ այսորիկ եկն յինքն ծերն և մինչև ցմահուան իւր յողբս և յարտասուս եկաց վասն նորա առ նոծ աղաչելով, մինչև ասէր ներելոց նմա: Արդ եթէ սոցա հարցն այնպէս բարկանայր ասէր, մինչև բա-զում ժամանակ և խնդրուածով առաքինութեան հանգիստ [illegible] ընդ [illegible] զանէր, իսկ մեզ զինչ պատահելոց իցէ' որ այնպէս ան-[illegible] դատեմք և բամբասեմք:

: Ասաց ծերն. յորժամ կամիցի զնալ եղբայրն առ այլ եղ-բայր, զեն զատողութիւն և չարախօսութիւն յառաջ քան զնա զնայ անդ: Ասաց ծերն. ոչ ինչ չար իցէ քան զչար սովորութիւնն, և զի յայժ [illegible] է և ժամս բազումս առ 'ի հատանել զնա, և զի առանց բազում աշխատանաց ոչ ոք կարէ 'ի բաց ընկենուլ. և զի զաշ-խատութիւն բազումք յանձն առնին, իսկ ընդ բազում ժամս լռել' սա-[illegible] զոյին զնա. զի ոմանք հատանել եղեն փոյթ 'ի մահուանէ, իսկ ոմանք 'ի ծուլութենէ:

: Հարցեալ եղև ծերն' եթէ զինչ է բանն որ ասէ, թէ ամենայն դատարկ բանի համարս տալոց էք: Ասէ ծերն. ամենայն բան որ վասն մարմնաւոր գործոյ ասի' դատարկ բան է. իսկ ամենայն բան որ ասի վասն օգտի ինչ անձին, ոչ է դատարկ բան. այլ լռութիւն քան զա-մենայն լաւ է, քանզի յասելն զբարին' զայ 'ի մէջ և չարն բան եւ:

Digitized by Google

ԼԻԳԵՐ՝ երկաթեա ժողով 'ի Սկիւթ Ալեքսանդրոսի և խո-ւեփն հաղքն ընդ հինաւուր, խոկ Շանազիսով լուռ կայր. և զինքն յարուցեալ եղ արտաքս և առեալ քուրձ եկից զնա ատաղով, և համբարձեալ 'ի վերայ ողին իւրոյ, և արկեալ 'ի փողը փոխոլոյն ատաղ՝ ածնէր և զնա ատաղձոյ կոշմանեկ: Իսկ հարցեալ 'ի ծերոց առողի՝ եթէ զինչ է օրինակդ այդ, և նորա պատասխանի տուեալ ասէ. այս քուրձ որ ունիս սաստիկ ատաղ՝ իմ յանցանքն են, զորս զի բառնում եմ մեղք իմ, և թողեալ զկան զինքն, զի մի աշխատեցայց զատն զորա և լացից և ողբացից, և ահա այս ատաղձս եղբօր իմոյ է, և սովոր կամիմ դատաւոր-զատապարտել զեղբայրս. բայց չէ արժան առնել արդարև, այլ մանաւանդ եթէ զիւրսն արժան է բերել զատաղձոյ, և զաւան եղբօրն հոգ տանել և աղաչել զնա զի թողութիւն արասցէ նմա: Իսկ լուեալ զայս հարանցն՝ ասացին. արդարև այդ է ճանապարհ փրկութեան.

ՀԱՐՑԱՒ[2] Յովհաննէս կարճահասակն՝ թէ զիարդ կարէ աշխատեցեալ մարդ բարձրանալ զայրս՝ թողեալ զանձն իւր: Իսկ նա ասէ՝ լուր զառակդ. այր մի կամեցաւ կլին առնուլ աղքատ, զի և ինքն աղքատ էր. և կին մի այլ ցանկացաւ նմա, որ և նա աղքատ էր, և զերկաթեան եառ և տարաւ 'ի տուն իւր, և երկաքեան մերկ եկին: Իսկ 'ի ժամ երեկոյին եղ մի կինն և ժողովեաց յաղթեացն և 'ի փողոցացն զանկեալ հնոտին և կցեալ զնոսա առ

---

1 Եղև երկաթեա ժողով մեծ 'ի Սկիւթ 'ի վերայ մեղուցելում եղբօր և խօսէին հարքն զայն, իսկ հայրն Պետրս լռեաց. և յարուցեալ գնաց և ելեալ առնելք մեծ ատաղձով եզարձ զնա 'ի թիկունս իւր, իսկ և 'ի զամբիւղ փոքր եարկ աւազ առաջ. և առեալ զայն 'ի ձեռս՝ ունէր առաջի իւր, և այնպէս եկն 'ի ժողովն. հարցին ցնա եղբարքն և ասեն. զինչ է այդ. հայր: Նա ասէ. քուրձս այս մեծ լին և ծանր՝ են անթիւ մեղք իմ, և թողի զնոսա յետոյ իմ ոչ ահատանելով զայդպէսն բազմամեղ մեղաց իմոց և ոչ ողբամ զնոսա, իսկ և փոքրս այս զամբիւղ՝ են մեղք եղբօր իմոյ զոր առաջի եդեալ ունիմ, և զատաւոր նորա պարտաւոր եմ լինել այսօր. այլ և պարտ է մեզ հայել նախ յետոյ 'ի քուրձ մեր և ոչ լինել կրկնակս այլում: Իսկ յարուցեալ հարքն ասացին. Ճշմարիտ այս է ճանապարհ կենաց:

2 Հարցեալ եղև Յոհաննէս կարճահասակին՝ թէ զիարդ կարէ մարդ աշխատեալ բարձրանալ զայրս՝ թողեալ զանձն իւր: Իսկ նա ասէ՝ լուր զառակս. այր մի աղքատ կամեցաւ առնուլ կին աղքատ, և կին մի այլ աղքատ ցանկացաւ նմա, և եառ զերկաթեան 'ի տուն իւր, և երկաքեան մերկ էին: Իսկ 'ի ժամ երեկոյին եղ մի կինն և ժողովեալ յաղթեացն և 'ի փողոցաց զանկեալ հնոտին՝ կցեալ զնոսա առաջի իւր ծածկոյթ

րար ծածկոյթ ատակամացն իւրոց ։ Այլ յորժամ ետես զնա միւս կինն, ասէ ցայրն. տեսանե՞ս զկոյս զայս՝ որ շրջի մերկ և ոչ ամաչէ ։ Այլ նա ասէ. արդ դու ամենեքին մերկութեանց ոչ ամաչես և զգաս բանիմաստս ։

ԱՍԱՑ՝ Հայրն Ովր ցաշակերտսն իւր Պաւղոս. մի երբեք բերեր բան օտար 'ի խուցս յայս ։

ԱԲԲԱՅՆ Յոհաննէս վիմականն ծերն ասէր մեզ վասն աբբայ Դանիէլի եգիպտացւոյն՝ եթէ գնաց 'ի Տերենութ, զի զձեռագործն իւր վաճառեսցէ ։ Մանուկ մի աղաչէր զնա և ասէր. վասն Այ, հայր, եկ 'ի տուն իմ և արա աղօթս 'ի վերայ կնոջ իմոյ, զի ամուլ է ։ Իսկ ծերն բռնադատեալ 'ի մանկանէն՝ գնաց 'ի տուն նորա. արարեալ աղօթս կնոջ նորա, և կամօքն Այ սաղմնաւորեաց կինն ։ Այլք ոմանք որք ոչ երկնչէին յԱյ, յանդգնէին անզգամաբար ասելով՝ եթէ մանուկն այն անպտուղ էր, և յաբբայ Դանիէլէ յղացաւ կինն ։ Ասաց ծերն ցայրն. յորժամ ծնանի կինն քո, ազդ արա ինձ ։ Այլ եկեալ առ նա ասէ. յԱյ և յաղաչանաց քոց ծնաւ կինն իմ, հայր ։ Յայնժամ եկն աբբայ Դանիէլ և ասէ ցմանուկն. արա ճաշ և կոչեա զազգականսն քո և զսիրելիս քո ։ Այլ յորժամ եկեալ ճաշէին, առ ծերն զմանկիկն առաջի ամենեցուն և ասէ ցնա. ո՞վ է հայր քո, և մանուկն զիայն եցոյց մատամբ ձեռին զհայրն իւր, որ միայն ունէր աւուրս քսան և երկու ։ Այլ փառաւոր արարին ամենեքեան զԱծ՝ որ պահէ զայնպիսիս որք զճշմարտութիւնն յամենայն սրտից իւրեանց խնդրեն* ։

ատակամաց իւրոց ։ Իսկ տեսեալ միւսն՝ ասէ ցայր իւր. տեսանե՞ս ըզմերկ կոյս այս՝ որ շրջի և ոչ ամաչէ ։ Ասէ այրն. դու ամենեքին մերկութիւնք ոչ ամաչես և զնա բանիմաստս՝ ։ Նոյնպիսի է զոր ասեսդ ։

։ Ասէր միշտ հայրն Ովր ցՊաւղոս աշակերտ իւր. մի երբէք ածեր ընդ քեզ բան ինչ օտարոտի 'ի սենեկի խցումս, այլ բարի. ակնեալ մեր 'ի վերայ սորա կատարեսցուք, և մի խառնակեսցուք չարեօք զբարիս մեր ։

* Օրինակ Գ հին թարգմանութեան այսպէս համառօտէ. Աբբայ Դանիէլ երթայր 'ի վաճառ. պատահի մի աղաչեաց տանել 'ի տուն իւր և առնել աղօթս 'ի վերայ կնոջ իւրոյ, և յղացաւ և ծնաւ. և բամբասէին թէ 'ի նմանէ յղացաւ, զի անզաւակ էր այրն ։ Իսկ լուեալ Դանիէլ չոգաւ 'ի տուն առնն մինչ քսան և երկու աւուրց էր մանուկն. և արար ժողով մեծ, և առեալ ըզմանուկն եհարց՝ թէ ո՞վ է հայր քո ։ Իսկ նա եցոյց մատամբն, և փառաւորեցին զՔս ած ամենեքեան ։

# ՄՆԱՑՈՐԴՔ

## յերկրորդ թարգմանութենէ

---

ՄԱՐԳԱՐԷԱՑԱՒ հայրն Անտոնիոս վասն հօրն Ամո-նայ և ասէ՝ թէ յառաջիկս դու յերկիւղն այ. յոյժ։ Եւ համբեալ զնա արտաքոյ սենեկի իւրոյ և եցոյց նմա վէմ մի մեծ զի կայր՝ և ասէ ցնա. անարգեա զվէմն զայս և ապտակեա և հարցես զդա։ Եւ նա արար այնպէս։ Ասէ ցնա հայրն Անտոն. ասա՞ց ինչ քեզ վէմդ այդ։ Եւ նա ասէ՝ ոչ։ Ասէ Անտոն. այսպէս և դու համբերեալ ես հնազանդել յայդ չափ։ Որ եղև իսկ. վասն զի այնպէս զե-րազանցեալ եղև հայրն Ամոնաս, մինչև 'ի բազում ան-մեղութեան բնաւ մոռացաւ զչարութիւն։ Եւ յորժամ եղև նա եպիսկոպոս, բերին առ նա կոյս մի որ էր յղի՝ և ասեն. տուր սմա կանոն, տէր։ Իսկ նա կնքեաց խաչ 'ի վերայ որովայնի նորա, և հրամայեաց տալ նմա եր-կուս կտաւս և ասէ. մի գուցէ 'ի ծնանել դորա 'ի ծննդա-պարհին մեռցի դա և կամ որդի դորա, և ոչ գտանիցեն պատ-անս դոցա։ Իսկ նոքա ասէին. զի՞նչ գործես, տէր, տուր կանոն զդա 'ի պատուհաս։ Իսկ նա ասէ. տեսանէք և դուք, եղբարք, զի և ինքն մերձ է 'ի մահ՝ և զի՞նչ արարից դմա։ Եւ արձակեաց զնա.

ՀԱՅՐՆ Ագաթոն եթէ տեսանէր գործ ինչ գայ-թակղելի, ասէր. Ագաթոն, դու մի առներ զայն։ Եւ այսպէս դադարեցուցանէր զխորհուրդ իւր 'ի դատելոյ զեղբայրն։

ԳՆԱՑ երբեմն հայրն Ամոնաս 'ի տեղի ուրեմն զի ճա-շակեսցէ ինչ. և էր անդ եղբայր մի՝ որոյ անուն գար-շելի հռչակէր. դիպեցաւ և կին, առ որ անկանէր եղ-բայրն անդ լեալ։ Եւ եկեալ հայրն Ամոնաս 'ի տուն բնակ-եալ եղբօրն. և խռովեալ գիտացին բնակիչք տեղւոյն այնորիկ թէ կինն կայ բանդատանէն՝ ահա եկեալ առ նմա

կայ 'ի տան անօդր եղբօրն այն, շփոթեցան յոյժ և գնացին հալածել զնա 'ի տեղւոջէ իւրմէ. և իբրև գիտացին թէ Ամոնաս անդ իցէ, աղաչեցին զնա գնալ ընդ նոսա: Իսկ եղբայրն գիտացեալ զամբոխն, ած զկինն 'ի կարաս մեծ և թաքոյց զնա: Եւ իբրև եկն ամբոխն, հայրն Ամոնաս գիտաց թէ ուր իցէ կինն, և խորհեցաւ ծածկել զայն. վասն այն եմուտ 'ի տուն և նստաւ 'ի վերայ կարասոյն, և հրամայեաց յուզել զտունն թէ գտցեն զկինն: Ասէ հայրն Ամոնաս. զինչ է այս զոր գործէք, զրպարտել զայր անմեղ: Յայնժամ աղօթս արարեալ 'ի վերայ նորա արձակեաց զամբոխն, և կալեալ զձեռանէ եղբօրն ասէ. զգոյշ լեր անձին քո: Եւ զայս միայն ասացեալ գնաց անտի:

ԱՍԱՑ հայրն Պամբոսի՝ եթէ հարցի ես զհայրն Անտոն և ասեմ. ասա ինձ բան որով կեցցեմ, հայր: Իսկ նա ասէ. մի ունիր անձներ չար ընտու, և մի դատեսցես զոք. զգոյշ ապրես և կեցցես:

ԵՂԲԱՅՐ մին յանցեաւ 'ի Սկիւտէ, և արարին ժողով վասն նորա. կոչեցին և զհայրն Մովսէս անդ 'ի ժողովն, և նա ոչ կամեցաւ գնալ: Պատգամաւոր պատուիրեաց քահանայն և ասէ. եկ, քեզ ակն ունին և ամենայն ժողովն: Իսկ նա բառ կապեաց նորա յարուցեալ եկն, և առեալ փոխարկ ծակ և լցեալ զայն աւազով եդ 'ի վերայ թիկանց իւրոց և այնպէս եկն 'ի ժողովն: Եւ եկին ամենայն ժողովն ընդ առաջ նորա, և իբրև տեսին՝ ասեն. զինչ իցէ այդ, հայր: Ասէ ծերն. այս են իմ մեղք որ տարեն յետոյ զկնի իմ, և ես ոչ տեսանեմ. և այսօր եկի դատել զայլոց մեղս: Իսկ նոքա իբրև լուան զայդ, ինչ ոչ ասացին եղբօրն, այլ թողութիւն շնորհեցին նմա. և ցրուեցաւ ժողովն ամենայն:

ԵՂԲԱՅՐ մին եհարց ցհայրն Պիմէն և ասէ. եթէ տեսանեմ յանցեալ ինչ զեղբայրն՝ բարւոք է թէ ծածկեցայց զայն: Ասէ ցնա ծերն. յորժամ մեք ծածկեմք զմեղս եղբօրն, յայնժամ և Աստուած ծածկէ զմերս մեղս: Ասէ եղբայրն. յորժամ տեսանեմ զեղբայր որ զազրէ լսեմ յանցեալ ինչ՝ ոչ հրաւիրեմ զնա և 'ի սենեակս իմ և ոչ ասպնջականեմ ընդ նմա, և իբրև տեսանեմ այլ եղբայր բարեխառնեան՝ խնդութիւն ընդունիմ և խնդրեմ զնա: Ասէ ցնա ծերն. եթէ ընդ բարեխառնեանն այն զեղ-

ինչ առնիցես 'ի հանձնելեացն, պարզապարտականս եւս զքեզ եւ ընդ յանձն ցեղեղքն կերպին աղաղակեաց զայն. զի զնոյն միջնորդութեան ակնաւոյ լուցէ եւ ոչ աղքատին։ Այլ վասն պղտորելոյ բանին ինչ նմանն առ-ընեն. եւ այն եղբայր՝ որ 'ի հասարակաց վասն նորա էր միաբանեցելոց, որ կոչէր Տիմոթէոս, եւ էր նա ընտրեալ եւ առաքել յոյժ. իսկ հայր վանիցն լուաւ զայլոց եղբարց հանդէպ ինչ մեղաց, եւ եհաւաս վասն նորա զՏիմոթէոս եթէ զինչ արարեալ է։ Իսկ նա առաջ՝ արտաքսել զնա 'ի վանիցն, եւ աղաղակեցին զեղբայրքն։ Իսկ յորժամ արտաքսեալ եղեւ՝ զի արտաքսեցին զեղբայրն ըստ բանին Տիմոթէոսի, յայնժամ վաղվաղակի եւ առաժամայն եկին փորձութիւն պատահմանցն եղբօրն 'ի վերայ Տիմոթէոսի այնուհետեւ՝ մինչեւ անկաւ. Իսկ Տիմոթէոս լալով աղաչէր զԱյ եւ ասէր՝ թող ինձ, ասէր, զի մեղայ։ Այլ եկն առ նա ձայն յերկնից որ ասէր. Տիմոթէէ, ոչ վասն այլ ինչ եկին զքեզ պատահարք պատահմանց այդ քեզ, այլ վասն արհամարհելոյ զի անկեալ արտաքսեր զեղբայրն զայն 'ի ժամանակի փորձութեան իւրոյ, եւ փոխանակ օգնելոյ առաւել վհատեցեր զնա եւ անձնին քո։

ՀԱՐՑԻՆ ոմանք ցհայրն Ալոնիս եւ ասեն ցնա. ո՞րպէս կարողաց բառնալ հայրն՝ Ստութիւնն զայնպիսի աշխարհե-ացն իւր։ Ասէ ցնոսա ծերն. եթէ ոչ եւ կերեալ էք անդ, զթիկունս իմ զգեցեալ էի ընդ անպարտ նորա։ Ասէ ցնա հայրն Աղաթոն. եւ զինչ պատասխանի տայցեմ Այ զա-ընդ այդ։ Ասէ Ալոնիս. ասէ՝ թէ զոր առնիցեր, ասէր, եթէ հան նախ զգերանդ յականէ քումմէ, եւ ապա հայեսցես հանել զշիւղ յականէ եղբօր քո։

ԵՂԲԱՅՐ ոմն գթեալ 'ի մեղս, որ էր 'ի ժողովս եղ-բարց. եւ էր մերձ առ նոսա միայնակեաց ոմն՝ որ զանձն քաւութեան ոչ բնաւ ելեալ էր 'ի սենեկէն իւրմէ։ Եւ առ սա հայր վանիցն եւ պաղատեցաւ նմա վասն անկելոյ եղ-բօրն, իսկ նա ասաց արտաքսել զնա։ Այլ յորժամ վտա-րեցաւ եղբայրն արտաքս, գնացեալ մտաւ յանձաւս ան-ապատին եւ նստեալ անդ լալով զդառնակսկիծ զառաչանս բա-ղաձանս։ Իսկ խորհրդածէ Այ եղբայրք ոմանք գնացին առ հայրն Ալոնիս. եւ մինչ անցանէին ընդ այն տեղի, լուան զձայն ողբոցն. եւ մտեալ յերկրպագութիւն անդրադարձ, գտին անդ զեղբայրն զայն 'ի պատահմունս մեծ, եւ աղաչեցին զնա գնալ ընդ իւրեանս մինչեւ ցհայրն Ալոնիս. իսկ նա ոչ

Digitized by Google

կամեցաւ , այլ ասէ․ ոչ , այլ մեռանիցիմ եւ աստ ։ Այս ե-կեալ եղբարքն առ Հայրն Պիմէն պաղատեցին նմա վասն նորա ։ Իսկ ծերքն աղաչեցին կոչել զնա առ ինքն ։ Այս իբ-րեւ եկին եղբարքն այն առ ծերքն , ետես զնա ծերքն ողբա-րեալ յոյժ․ յարեաւ եւ ընդ առաջ եղ ուրախութեամբ եւ հանգուցեալ սիրով եւ մխիթարեաց զնա յոյժ բանիւք եւ արգելանօք ։ Այս ապա առաքեաց զեղբայրն նոր առ մեծա-տունեացն այն եւ պատուիրեաց առ նա այսպէս․ ՚ի բա-զում ժամանակաց կամէի տեսանել զքեզ զի լուեալ լը-քեն , եւ ՚ի կրկին ծուլութենէ երկուցս ոչ տեսաք զմի-մեանս․ իսկ արդ կամօքն Այ պատճառաւ եկն ՚ի մէջ , աշխատեցաւ եւ եկ առ իս զի տեսցուք զմիմեանս ։ Իսկ նա զի բնաւ ոչ էր ելեալ , ոչ կամեցաւ գնալ , բայց խոր-հեցաւ ՚ի միտս եւ ասէ․ թէ ոչ յոյժ աղաչեալ էր Պիմէն , ոչ կոչէր զիս ։ Այս ելեալ գնաց առ նա , եւ ողջունեալ զմիմեանս նստան ։ Ասէ Հայրն Պիմէն ցմիայնակեացն․ արք երկու էին ՚ի գիւղ ուրեմն եւ ունէին իւրաքան-չիւրն մեռեալ առաջի իւր․ եւ մինն թողեալ զմեռեալ իւր , գնացեալ ողբայր զմեռեալ ընկերին իւրոյ ։ Իբրեւ լուաւ զայս միայնակեացն , եւ զխօսից զատուցեալն եւ յի-շեաց զոր ասաց առ եղբայրն եւ ասէ․ Պիմէն յերկինս է ՚ի վեր , իսկ ես եմ ՚ի վայր եւ ՚ի խորս անդնդոց ։ Այս ապաշաւեալ զղջացաւ յոյժ եւ գնացեալ ապաշխարեաց արտասուօք , եւ ուսաւ յայնմհետէ զատել հանճարով ։ Այս պատուիրեցին առ Հայր վանիցն եւ կացուցին զեղ-բայրն ՚ի սենեակ իւր ։

ՀԱՐՑԻՆ հարք ոմանք ցՀայրն Պիմէն եւ ասեն․ եթէ տեսանեմք զեղբայրն որ մեղանչէ՝ պարտ է զի յանդի-մանեսցուք զնա ։ Իսկ ծերն ասէ ցնոսա․ ես զայս ասա-րեմ , եթէ ճանապարհք իմ ընդ այն իցէ եւ տեսանեմ զեղբայրն ՚ի գործել զմեղս՝ զանց առնեմ զնովաւ եւ ոչ յանդիմանեմ զնա , քանզի այսպէս ուսայ ՚ի [illegible]՝ ոչ դատել զի մի դատեսցուք ։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ցՀայրն Պիմէն եւ ասէ ցնա․ զի՞նչ արարից , Հայր , զի կարծանիմ եւ նեղիմ ՚ի նշա-նակս խռովիմ ՚ի խելս ։ Ասէ ցնա ծերն․ մի զոք արհամար-հեսցես եւ մի զոք բամբասեսցես , եւ հանգիցես ՚ի նշա-նակ․ զի գրեալ է՝ թէ զանօրէնութիւն իմ պատմեցից եւ հոգացայց վասն մեղաց իմոց ։

Digitized by Google

ԳՆԱՑԵԱԼ երբեմն հայրն Պիմէն 'ի կողմանս եգիպ-տացւոց և բնակեաց անդ. գտաւ և այլ եղբայր որ բնա-կեալ մերձ 'ի սենեակ նորա, որում էր կին 'ի խցի իւրում, և ոչ յանդիմանեաց զնա ծերն. և դիպեցաւ կնոջն այ-նորիկ ծնանել 'ի գիշերի: Իբրև գիտաց զայն ծերն, ա-սէ ցաշակերտն իւր. առցես դու զինի դորակաւ և տա-րեալ տացես մերձաւորի մերոյ եղբօր, զի կարօտ նորա է այսօր: Եւ ոչ իմացան աշակերտքն ծերոյն զգործն զայն զոր արար ծերն: Իսկ իբրև ետես եղբայրն զքաղ-ցրութիւն ծերոյն, զի փոխանակ յանդիմանութեան սէր առաքեաց նմա գթալով, շահեալ անտի եղբայրն՝ զղջա-ցեալ յոյժ ապաշխարեաց ընդ գործն իւր: Եւ յետ սա-կաւ իրիք աւուրց ետ զոր ինչ ունէրն կնոջն և առաքեաց զնա 'ի գիւղ. և ինքն շինեաց սենեակ մերձ 'ի սենեակ ծերոյն, և աշակերտեալ նմա ուսանէր միշտ 'ի նմանէ. և ապաշխարեալ զմեղսն՝ եղև կատարեալ սուրբ, և փախ-ճանեցաւ եղբայրն այն անդ:

ԱՍԷՐ հայրն Պամբովի՝ եթէ երբեմն երթայի 'ի ճանապարհի, և մոլորեալ իմ յուղւոյն գտայ մերձ 'ի գիւղ ումեմն, և տեսի զոմանս որք խօսէին ընդ միմեա-նս. և կացի յաղօթս և աղաչէի զԱծ վասն մեղաց ի-նոց: Եւ եկաց առաջի իմ հրեշտակ տեառն ունելով 'ի ձեռին իւրում նիզակ հրեղէն և ասէ ցիս. Պամբովի, ամենեքեան որք զատեն կամ բամբասեն զեղբարս ի-րեանց, այսու սրով սատակեցին. իսկ դու զի ոչ դա-տեցեր զոր տեսեր, այլ այնպէս խոնարհեցար առաջի իմ, իբր թէ քո գործեալ էր զայն մեղս, վասն այնորիկ անուն քո գրեցաւ 'ի գիրս կենդանեաց յաւիտեան:

ԱՍԷ ծերն. մի դատեսցես զպոռնկացն՝ թէ և դու սուրբ իցես, ապա թէ ոչ՝ անօրէն իցես. զի որ ասաց՝ թէ մի շնայցես, նոյն ասաց՝ թէ մի դատեր զոք:

ԱՍԱՑ ոմն 'ի հարցն՝ եթէ ոչ իցէ 'ի ներքոյ երկնից այդ ընտրեալ իբրև զայդ քրիստոնէից, և ոչ ոք է պա-տուեալ յերկիրի որպէս զայդ կրօնաւորաց. այլ զայս միայն կէտս ունի, զի հաւատայ դիւաց և յիշաչար լինի եղբարց և սխալակալ է և բամբասող է և դատող է. և զմեղսն ոչ տեսանեմք զմեղս, և կամակար հրապարակեմք զեղբօրն մեղս: Այլ դու թէ տեսցես աչօք գործեալ զմեղս ու-մեք, մի դատեսցես և մի բամբասեսցես, այլ աղօթեսցես՝ եթէ ես քան զամենեսեան յանցաւոր իցեմ:

Digitized by Google

ԱՍԱՑ ոմն 'ի ծերոցն՝ եթէ ոչ ինչ է բարութիւն քան զայս պատուիրանս, թէ մի արհամարհեսցես զեղբայրն քո. զի գրեալ է՝ յանդիմանեսցես զեղբայրն քո, և ոչ առնուս մեղս վասն նորա։ Ո՛ թէ տեսանես զեղբայրն քո 'ի մեղս և ոչ խրատեսցես զնա սիրով 'ի դէպ ժամու, զարիւն նորա 'ի ձեռաց քոց խնդրեսցի. բայց եթէ յանդիմանեսցես սիրով և նա մեռանիցի 'ի նմին, դու անպարտ լինիս. զի բարւոք է յանդիմանելն սիրով և ոչ զանցել ատելութեամբ։

ՈՆԵՐ ոմն մեծ նստէր 'ի լերինն Ակորւոց 'ի սահմանս Ահարօնեան, և էր նորա աշակերտ ապաշ 'ի գաւառել զամենայն որ. զի թէ տեսանէր զեղբայր որ գթեալ 'ի մեղս, վարդապետէր զատանէր զնա. Այլ բարւոք առնէին խրատէր զնա ծերն, որպէս գիտէր և ասէր. զգոյշ լեր, որդեակ, զի մեղաս և կորուսանես զանձն քո այդպ ասելովդ, զի ոչ որ գիտէ զմտադրութիւն, բայց միայն Հոգին 'ի նմա. Այլ զի բարւոք բարւոք չարիս գործեսցեն առաջի մարդկան, և 'ի ծածուկ ապաշխարեսցեն առաջի Այ. և մարդիկ զմեղս միայն տեսանեն զնոցա, և զապաշխարութիւն ոչ տեսանեն. Այլ այսք չար գործեսցեն զամենայն աւուրս կենաց, և 'ի ժամ մահուան ապաշխարեսցեն և առնեն թողութիւն ամենայնի. Այլ այսք մեղան, և աղօթիւք և պաղատանօք սրբեաց արդարացան. Եւ վասն այսորիկ ոչ է պարտ դատել զոք, զի մի է դատաւոր ամենեցուն Ած. և մարդ որ դատէ զայլ ոք, հակառակ Այ գործէ. քանզի զիշխանութիւն զոր եւ հայր Ած որդւոյ, յափշտակէ զնա. այլ առաքեալն՝ ասէ ծառայ բեկեալ որ գործել ես զայն, այլ եղբայրն անպարտ է. Այլ զի 'ի մեզ ոչ դատել զոք, քանզի թէ դատես զոք՝ փախչի 'ի քէն հոգին Այ։

ԱՍԱՑ գործեալ ծերոյն. ընդդէմ զատանեն զանդրադարձան կամ զխաւար կամ զգող և կամ զայլս ոմն 'ի չարագործացն, քանզի ամենեցուն նորա խոստանան զդատաստանն անաչառ. և ընդդէմ դու զնոցայն քննես և դատես և կատես զչարիս նորա 'ի գլուխ քո։ Նաղաւ ամենայն եթէ խոնարհութեամբ քննեսցուք, զատանեսցուք զմեղս մեր չար քան զնոցայն. զի Հոգին ամենայն ակնածեսցէ. առաջ այս ճնակցէ. Այլ բարւոք ամենայն ամբարշտեսցէ զեղբայրն և պարտական լինիցի գեհենին հրոյ. և զի զայս վճիռ ասէն եհաս՝ պարզ աւաց թէ որ հայի 'ի կին և ցանկայ նմա,

Digitized by Google

[illegible]

զերցայն և մնաց յինէն, և ես փախեայ մերկացեալ, և երկեալ զարթեայ առաւաւտին։ Եւ առեալ ցեկեալ եղբայրն. չար եղև օրս այս 'ի վերայ իմ։ Իսկ նա ասէ ցիս. վասն էր, հայր։ Յայնժամ պատմեցի նմա զոր տեսի և առեալ՝ թէ զփիլոնն իմ մերկեալ յինէն՝ հովանեաւն աստուծոյ էր, որ վերացաւ յինէն վասն դատելոյ զեղբայրն, և պակասեցայ 'ի նմանէ։ Եւ ունիմ վկայ զտէրն փառաց, զի յայնմհետէ զեւթն ամ կացի ես մոլորեալ 'ի լերանն յայն, և ոչ ճաշակեցի հաց ամենևին և ոչ մտի ընդ յարկաւ և ոչ խօսեցայ ընդ ումեք մինչև տեսի նման առաջնոյ տեսլեանն զտէրն, և հրամայեաց տալ յիս զփիլոնն իմ։ Եւ զայս ասէր երանելի ծերն վասն իւր։ Իսկ մեք որ լուեալք զառակալի զայս զարդ յայնպիսի ծերոյն, այլ զինչ կարասցուք առնել, բայց միայն զայս՝ զի թէ արդարն հազիւ կեցցէ, մեղաւորն ուր գըտանիցի։ Արդ առաց ծերն. ոչ ինչ այնչափ բարկացուցանէ զԱծ և ոչ ինչ այնպէս հեռացուցանէ զմարդն յԱյ հովանւոյն, իբրև զդատել և չարախօսել և արհամարհել զընկերն։ Եւ այնչափ ծանրագոյն ցուցանէ մեղս տէրն զդատել եղբօրն քան զայլ ամենայն մեղս, մինչ զի ասէ. կեղծաւոր, հան նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա հայեսջիր հանել զշիւղ յականէ եղբօրն։ Արդ յառաջ չափով հաւասարեաց փրկիչն իբրև զգերան ընդ շիւղ, զմեղս եղբօրն շիւղ և զմեղս դատողին գերան անուանելով։ Արդ գիտասցուք, սիրելիք, ոչ ինչ է չար և դժուարին մեղք քան զդատել և բամբասել և արհամարհել զեղբայրն. որոյ վկայ լիցի փարիսեցին այն՝ որ վասն դատելոյ զմաքսաւորն ընդունայն կորեան ամենայն բարեգործութիւնք նորա։ Այսպէս և ձախակողմեան աւազակն դատելով զընկերն զրկեցաւ 'ի մեծից զդրախտին և ունայն կորեաց զժամն զայն փրկութեն. զի ոչ ինչ այնպէս կարող լիցի արհամարհել զԱծ և զպարգևս հոգւոյ, իբրև զդատել զընկերն։ Ընդէր ոչ զանձինս դատեմք, և ընդէր ոչ քննեմք զչարիս մեր զորս առաւել գիտեմք, թէպէտ և ոչ ամենեքեան զամենայն. զի և այլ բազում ունիմք մեղս և ոչ գիտեմք. այլ զորս գիտեմք, նաքին բաւական են դատապարտել զմեզ. ընդէր յափշտակեմք մեք զդատաստանն Այ։ Զինչ գործ ունիմք մեք առ ստեղծուածն Այ և կամ զինչ խնդիր ունիմք

յընկերէն, և զի՞նչ օգտեսցուք յայլոց մեղաց թէ դատեսցուք. ունիմք իւրաքանչիւր զմեղս մեր, և այն բաւական են 'ի հոգս մեզ, զայն դատեսցուք և զգեհեանն որ պատրաստեալ են յաղագս նոցին մեզ՝ մտածեսցուք. զի դատել զոք կամ արդարացուցանել՝ ոչ և ոչ մեր իշխանութի է, և 'ի ձեռս նորա իցէ կորուսանել կամ կեցուցանել զարարածս. զի եթէ արարիչ ամենայն արարածոց հաւատամք զն̃ա, ապա յայտ է զի որ ստեղծն զնոսա՝ նա դատէ: Մ'ի ձանձրասցուք զն̃ա իբրև զկնակս, եղբարք, իբր թէ այլ ոք իցէ արարիչ և այլ ոք դատաւոր. այլ կատարելապէս ծանիցուք, և զամենայն 'ի նա թողցուք: Ո՛չ եթէ զմեր գործս յոյժ պարտ իցէ յանձնել, ապա ո՞րչափ ևս առաւել զայլոց. քանզի ոչ միայն զործ իցէ հատուցանել իւրաքանչիւրում գործս իւր, որ գիտէ զամենեսեան և զհասակս նոցա և զէութի և զգործ և զժամանումն հոգւոց և մարմնոց. վասն այն զամենայն ինչ 'ի նա թողցուք զմեր և զայլոց, այնմ որ քննէ զսիրտս և զերիկամունս և զխորհուրդս և զմտածութիւս, և հատանէ անցանէ քան նորա մինչև ցբաժանումն հոգւոյ և շնչոյ, յօդից և ուղղոց. որում կրկնի ամենայն ծունր երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց: Թող մեք, ով եղբարք, զտկարութի մեր միայն 'ի միտ ունիցուք և ողբացուք զանձինս մեր, և զայս խորհեսցուք եթէ որպէս կացցուք առաջի ահաւոր ատենին Ք̃ի, և թէ զի՞նչ պատասխանի տացուք: Ստասցուք սէր միմեանց, ստացուք ողորմութի գթալով. որպէս զի սոքօք փրկեսցուք 'ի մեծի քննութե աւուրն: Եւ զերծցուք 'ի դատելոյ և 'ի բամբասելոյ զընկերն և յարհամարհելոյ. այլ ևս առաւել օգնեսցուք միմեանց և սիրեսցուք և զմիմեանց բեռն բարձցուք և որպէս զանդամս մեր խնայեսցուք, զի անդամք միմեանց եմք որպէս ասէ առաքեալ՝ գլուխ Ք̃ս է և ամենեքեան մարմին մի, իսկ իւրաքանչիւրն որ անդամ ինչ. եթէ վշտանայ ինչ մի անդամն, վշտանան ամենայն անդամքն ընդ նմա: Նմա Ք̃ս եկեալ քահանայապետ հանդերձելոց բարեացն, և զթութի̃ միացոյց 'ի մեզ և հաշտեցոյց զմեզ խաչիւն իւրով ընդ հօր իւր; և եղև ինքն գլուխ մեր ամենեցուն:

Digitized by Google

Ժ

# ՎԱՍՆ ԱՍՏՈՒԱԾԱՑԻՆ

## ԵՒ ՈՒՂԻՂ ԴԱՏԱՍՏԱՆԻ

ԱՍԱՑ[1] հայրն Անտոն՝ եթէ են մարդիկ որ չարչարեն զանձինս իւրեանց կրօնաւորութեամբ, և ոչ կարացեալ գտանել զխտրութիւն իւրեանց՝ հեռի եղեն 'ի ճանապարհէն Աստուծոյ։

ԵՂԲԱՅՐ[2] ումն եհարց ցհայրն Պիմէն՝ եթէ վնասէն հոգիք իմ առ վարդապետին իմում, նոյնպէս այլ առ նմա։ Եւ գիտէր ծերն եթէ վնասի. և սքանչացեալ ընդ նորա հարցումնն թէ զի՞րդ, ասէ, նոյնպէս և այլ, և ասէ ծերն. եթէ կամիս՝ նիստ։ Եւ երթեալ նստաւ. և դարձեալ եկեալ՝ եթէ վնասի իմ հոգիս, և ծերն ոչ տայր եթէ եղ 'ի նմանէ։ Իսկ վերջապէս եկեալ՝ ասէ. գիտասջիր զի ոչ ես նստիմ առ նմա։ Ասէ ցնա հայրն Պիմէն. ահա այդ ողջացար. երթ և մի նստիր առ նմա։ Ասէ ցնա ծերն, որ մարդ է որ թէ տեսանէ զվնաս հոգւոյ իւրոյ, և հարցանէ այլում ումեք. վասն ծածուկ խորհրդոց է հարցանել, և ծերոց է այս քննել. բայց վասն յայտնի մեղաց չէ ինչ պէտք հարցանել, այլ վաղվաղակի 'ի բաց հատանել։

[1] Ասաց հայրն Անտոնիոս. բազումք ճնշեցին զմարմինս իւրեանց 'ի ճգնութիւնս, և յետոյ հեռի գտան յԱյ, վասն զի ոչ գտին քննութեամբ զզգաստութիւն։

[2] Եղբայր ումն եհարց ցհայրն Պիմէն և ասէ ցնա. զի՞նչ արարից, հայր, զի առնէ հոգի իմ 'ի մերձաւորն կալոյ ծերոյ իմոյ, կամիմ առ նմա թէ ոչ կացից։ Գիտէր և ծերն զի վնասիւր, և զարմացաւ ընդ հարցանելն և ասէ ցնա. լեր անդ՝ թէ կամիք քո է։ Գնաց եղբայրն և եկաց անդ. և դարձեալ եկն առ նա և զնոյն բանն ասաց։ Ասէ ցնա ծերն. երթեա գաւ 'ի [illegible] յայնժամ է։ Եւ ել և գնաց, և եկն առ նա երրորդ անգամ և ասէ ցՊիմէն. հաւատա ինձ, հայր, զի այլ ոչ առնէ անդ անձն իմ։ Եւ ասէ ծերն. բարւոք է, որդեակ. գնացեալ ես, մի դարձցիս յետս, այլ նստիր անդ. և զի՞նչ պարտ էր զայն հարցանելոյ, քանզի [illegible] է որ տեսանէ [illegible] անձին և հարցանէ [illegible], այլ փախչել պարտ է առժամայն. քանզի ծածկեալ խորհուրդ հարցանէ ոք, և խնդրէ զզգուշանալ յանցանացն. իսկ վասն յայտնի մեղացն զի՞նչ պարտ է հարցանել ումեք, այլ առժամայն հատանել պարտ է զնոսա։

Digitized by Google

ԵՂԲԱՅՐ[1] ոմն եհարց ցհայրն Պիմէն և ասէ . 'ի ժամանակի նեղութեան իմոյ խնդրեցի յումանց սրբոց իրս ինչ 'ի պէտս իմ, և ետուն ինձ զայն ըստ սիրոյ . արդ եթէ ած և ինձ շնորհեսցէ , տաց զայն և ես ըստ սիրոյ այլ ումեք , եթէ դարձեալ տաց տուողին իմոյ 'ի ժամանակի նեղութեան իւրոյ ։ Ասէ ցնա հայրն Պիմէն . արդարութիւն առաջի այ այն է թէ անդրէն տայիր, վասն զի նորա է ։ Ասէ ցնա եղբայրն . եթէ տարայց առ նա և նա ոչ կամիցի առնուլ, այլ ասիցէ ցիս՝ եթէ երթ , որպէս և կամիս տուր աղքատաց ։ Ասէ ցնա ծերն . են նորա իրքն . եթէ քեզ տացէ յինքենէ և քո չիցէ խնդրեալ 'ի նմանէ, այն քո է . ապա եթէ քո իցեն խնդրեալ կամ 'ի միայնակեցէ կամ յաշխարհականէ, և ոչ կամիցի դարձեալ առնուլ 'ի քէն, աստանօր են ընտրութիւնք՝ զի գիտելով նորա տայցես զայն վասն նորա աղքատաց ։

ԱՍԱՑ[2] հայրն Պիմէն . մարդ որ ուսուցանէ և ինքն ոչ առնէ զոր ուսուցանէն, նման է աւազանի որ զամենեսեան արբուցանէ և լուանայ, և զինքն ոչ կարէ սրբել, այլ ամենայն աղծութիւն և աղտեղութիւն անդէն մնայ ։

ԵՀԱՐՑ[3] ոմն 'ի հարանց ցհայրն Յովհաննէս կարճահասակ՝ եթէ զինչ է միայնակեաց ։ Եւ նորա պատասխանի տուեալ և ասացեալ՝ թէ աշխատութիւն . վասն զի որպէս միայնն յամենայն գործ աշխատի, այսպէս և միայնակեացն ։

1 Եղբայր ոմն եհարց ցհայրն Պիմէն և ասէ ցնա . 'ի ժամու նեղութեան իմոյ խնդրեցի 'ի սրբոյ ումեմնէ ինչ, և ետ զպէտս իմ սիրով . և արդ եթէ ունիցիմ ես լիով տացեմ և ես զնա այլոց սէր , հայր , եթէ տացից 'ի նա դարձեալ որ ետ ինձ ։ Ասէ ցնա ծերն . իրաւունք այ այս իսկ են՝ զի տացես 'ի նա որ իւրն էր ։ Ասէ եղբայրն . և թէ տարայց 'ի նա և ոչ առնու, այլ ասասցէ ինձ՝ արտացես զինչ և կամեսցիս և տուր սէր , զինչ արարից ։ Ասէ ցնա ծերն . յամենայնի նորա է այն ինչ . զի զոր դու ոչ խնդրես և տայ ոք քեզ, այն քո է . իսկ եթէ խնդրես և տայ ոք քեզ, եթէ կամենայ զնա 'ի քէն դարձեալ և եթէ ոչ՝ այն ինչ նորա է . այլ պարտ է ումն և տացես զայն՝ նորա գիտութեամբ տացես զայն սէր , որ է ողորմութիւն ։

2 Ասաց հայրն Պիմէն . որ ուսուցանէ այլոց և ինքն ոչ առնէ զոր ուսուցանէ , նման է նա աւազանին ջրոյ որ զայլս արբուցանէ և լուանայ 'ի աղտոյ, և ինքն լի է աղտօք գարշելեօք ։

3 Եհարց ոմն 'ի հարանցն զՅովհաննէս կարճն և ասէ ցնա . զինչ իցէ կրօնաւորութիւն ։ իսկ նա ասէ . վիշտք և աշխատութիւն է, և որ վշտակի յամենայնի՝ նա ծեր իցէ ։

ԳԵՕՂՔ երկու ընդ իրեարս կռուէին յԵգիպտոսի. և երթեալ հայրն Պիմէն աղաչէր զմեծն և զհզօրագոյն գեօղն զի խաղաղութիւն արասցեն ընդ փոքրագոյն գեօղն, և ոչ կամէին լսել նմա։ Յանկ նորա թօթափեալ զփոշի ոտից 'ի վերայ նոցա, և ելեալ նոցա 'ի պատերազմ ընդ իրեարս՝ կոտորեցան և յաղթեալ եղեն մեծ գեղջն մարդիկն. վասն զի առնէ տէր իրաւունս զրկելոց։

ԱՍԷՐ՝ երբեմն հայրն Ամոն՝ եթէ չոգաք ես և Բիտիմ առ հայրն Աքիլաս և լուաք 'ի նմանէ զի կրթէր զբանս զայս՝ մի երկնչիր, Յակոբ, իջանել յԵգիպտոս։ Եւ բազում ժամս յամէր զնոյն բանս ասելով։ Եւ բախեալ մեր զդուրսն՝ եբաց մեզ, և հարցեալ զմեզ և ասացեալ թէ ուստի էք, և երկուցեալ մեր ասել թէ 'ի խրճիթացն եմք՝ ասացաք թէ 'ի լեռնէն Նիտրեայ եմք։ Եւ ասէ ցմեզ. զի՞նչ արարից զի հեռաւորք էք դուք։ Եւ մուծեալ զմեզ 'ի ներքս, տեսեալ մեր զի 'ի գիշերին յոյնմին գործեալ էր բազում փիաթուռնս, և հայցաք ցնա զի ասասցէ մեզ բան։ Եւ նա ասէ՝ եթէ ես յերեկորեայ մինչև ցայժմ յօսի քսան գիրկ, և ոչ է ինձ այս պիտոյ. այլ կասկածեմ մի գուցէ զայրասցի ած և յանդիմանեսցէ զիս և ասասցէ, զի կարող էիր գործել՝ ընդէր ոչ գործեցեր. յաղագս այդորիկ աշխատիմ և գործեմ ամենայն զօրութեամբ իմով։ Եւ օգտեալք 'ի նմանէ գնացին։

ՊԱՐԶԵԱԼ՝ այլ ծեր եկեալ մերձ 'ի գետն և զըտեալ եղէգն և նստեալ անդ եղեգամբն հատանէր ցողուն 'ի գետոյն և յօսէր սփրայ և ընկենոյր 'ի գետն։ Եւ

1 Ասէր հայրն Ամոնա՝ եթէ գնացաք երբեմն ես և հայրն Բիտիմի առ հայրն Աքիլա, և լուաք զի ուսանէր զբանն զայն՝ եթէ մի երկնչիր, Յակոբ, իջանել յԵգիպտոս։ Եւ իբրև բազում անգամ ասէր զայս, բախեցաք զդուռն, և նա եբաց մեզ և ասէ. ուստի՞ իցէք։ Եւ մեք ասեմք. 'ի լեռնէն Նիտրիոյ։ Եւ ասէ նա. զի՞նչ արարից ձեզ զի հեռաւոր էք։ Եւ տարաւ զմեզ 'ի ներքս։ Իբրև մտաք, գտաք զի աշխատեալ էր զգիշերն ողջոյն և հիւսեալ էր զարմաւենիսն, և խնդրեցաք 'ի նմանէ մեզ բան։ Եւ նա ասէ. ես յերեկոյէ մինչև ցայժմ հիւսեցի սփրայ գիրկս քսան, և ոչ ինչ պիտոյ է առ ինձ. այլ զի մի բարկասցի տէր և ասասցէ ցիս՝ եթէ կարող էիր գործել ընդէ՞ր ոչ աշխատեցար։ Եւ շահ եղև մեզ և եկաք անտի։

2 Ծեր մի անցանէր ընդ գետ. և իբրև եհաս, եգիտ շամբս եղեգան և նստեալ բնակեցաւ անդ, և հիւսէր սփրայ զանեբև եղեգան և ընկենոյր 'ի գետն։ Իբրև առաքին զայն արար աւուրս, եկին գետովքն և

Digitized by Google

այսպէս առնէր մինչև եկեալ մարդիկ և առեալ զնա, և տարեալ յարուցեալ զնաց · զի ոչ եթէ վասն պիտոյից ինչ, այլ վասն աշխատութեան և խաղաղութեան առնէր զայն ։

ՄԱԵՐ՝ հայրն Թէոդորոս · եթէ ունիցիս ընդ ումեք սէր, և հանդիպեսցի նմա 'ի փորձութիւն անկանել պոռնկութեան, եթէ կարես՝ ձեռն տուր նմա և ձգեա զնա 'ի վեր · ապա եթէ 'ի հերձուած ինչ անկանիցի և ոչ լսէ քեզ և զատեայ առժամայն, հատ և ընկեա զնա 'ի քէն, մի գուցէ յամելով քո ընդ նմա՝ յափշտակեսցէ զքեզ ընդ ինքեան 'ի խոնարհ յանդունդս ։

ՄԱԵՒՆ՝ վասն որումն ծերոյ 'ի Թեբայիդ հօրն Ան-տոնիոսի՝ եթէ բազում առաքինութիւս արար 'ի մանկ-կութեան իւրում, և 'ի ծերութեան իւրում հիւանդացեալ կուրացաւ · բազում մխիթարութիւ եղբարքն վասն հի-ւանդութեանն արկանէին 'ի բերան նորա ։ Իսկ հարցեալ ցհայրն Սարիով յաղագս այսր՝ եթէ զի՞նչ լինիցի նմա վասն մխիթարութեանն այնորիկ, ասէ ցնոսա հայրն Սա-րիով · եթէ սիրտ իւր կամի և խոնարհի ախորժելով, եթէ ճաշակեսցէ պտուղ մի, առնու զայն ամ յաշխա-տութէ նորա · ապա թէ ոչ խոնարհեսցի, այլ ակամայ ընդունի զայն, ամ պահէ զվաստակն նորա ամբողջ · վա-սըն զի ոչ է կամօք, այլ բռնաբար են · և նոքա զվարձ-սըն ընդունին որք տանին ։

տարեն զնա և տանեն ցնա · ընդ էր հիւանդ զայս մինչ ոչ պիտոյ է քեզ ։ Իսկ նա ասէ · 'ի յայն ասեր առնեմ զի աշխատեցայց, այլ ոչ թէ վասն պի-տոյից ինչ առնեմ ։ Եւ գնաց անտի ։

ա Ասաց հայրն Թէոդորէ փերմեայ · եթէ ունիս դու բարեկամու-թիւն ընդ ումեք և գլորեսցի նմա փորձութիւն պոռնկութեան և անկանի նա, և կարող ես դու՝ տուր ձեռն և յարո զնա · իսկ եթէ 'ի հերձուա-ծըս անկանի և ոչ կամի լսել քեզ, փոյթ հատցես զնա 'ի քէն, որ-պէս զի մի յամելով քո ընդ նմա՝ և դու ես անկցիս 'ի յայն խորխո-րատ կորստեան նորա ։

բ Ասէին զծերոյ ումեմնէ՝ եթէ բազում և անհանդուրժելի ճգնու-թիւնս կրեաց 'ի Թեբայիդա 'ի մանկութեան իւրում · իսկ 'ի ծերութեան հիւանդացեալ կուրացաւ և անկաւ 'ի մահիճս · և բազում մխիթա-րութիւնս բերէին նմա եղբարքն, և կերակրէին զնա ձեռագործք իւ-րեանց զփափուկս ինչ ։ Եւ հարցին ցհայրն Այիոն և ասեն · զի՞նչ լինին առաջին ճգնութիւնք նորա յաղագս այժմու մխիթարութեան և փափկու-թեանն այն ։ Ասէ ծերն · ասեմ ձեզ · եթէ ցանկութիւն և խոհականու-թեամբ զհետ ընթանայ միտք, թէ և մի արմաւ կերիցէ, պակասեցուս-ցէ զվարձս աշխատութեան իւրոյ ամէր · իսկ եթէ միտք ոչ ճգնեսցին և կիցեն ընդ փափուկս, այլ ես առաւել զժուարեսցի և խղճեսցէ զոր առնէ 'ի սակս ախորժութեան, պահէ անէր զվարձս աշխատութեան առա-ջնոյ, զի յակամայ բռնադատի · իսկ որ տանին նմա, զվարձս մեծա-մեծս առնուն յայս ։

Digitized by Google

ԿԱՄԷԻՆ՝ երբեմն 'ի Սկիւթ զհայրն Իսահակ երէց առնել. և լուեալ փախեաւ յԵգիպտոս, և երթեալ յանդոսն թաքեաւ 'ի մէջ խոտոյն: Իսկ ընթացան հարքն զհետ նորա և հասեալ իջին յանդն հանգչել փոքր մի անդ, վասն զի գիշեր էր, և զէշն արձակեցին զի արածեսցի: Իսկ երթեալ իշոյն եկաց 'ի տեղւոջն ուր էր թաքուցեալ հայրն Իսահակ. և այգուցն խնդրեալ զէշն՝ գտաք զծերն և զարմացաք: Որդ կամեցեալ զնա կապել՝ ոչ առնոյր յանձն առնուլ, թէ ոչ փախչիմ, վասն զի կամք այ են. և ուր փախչիմ, նոյնպէս գտանիմ, վասն զի այս ձեռնադրութիւն յայ է:

ՊԱՏՄԵԱՑ՝ հայրն Դանիէլ աշակերտ երանելւոյն Արսէնի և ասէ. Նստէի երբեմն առ հօրն Աղեքսանդրի և կալաւ զնա ցաւ, և պարզեաց զինքն պորտ 'ի վեր վասն ցաւոյն: Դէպ եղև հօրն Արսէնի գալ խօսել ընդ նմա, և ծերն ետես զնա զի կայր այնպէս պառկեալ: Իբրև խօսեցաւ՝ ասէ ցնա. ո՞ էր աշխարհականն զոր տեսի աստ: Ասէ ցնա հայրն Աղեքսանդրոս. ո՞ւր տեսեր զնա: Ասէ ցնա. մինչդեռ իջանէի 'ի լեռնէն՝ հայեցայ յայսկոյս և տեսի զայն զի կայր պառկեալ պորտ 'ի վեր: Իսկ անկաւ առաջի նորա և ասէ. ես էի, հայր, վասն զի ցաւ

1 Գնացին երբեմն եղբարք ոմանք առ հայրն Իսահակ որպէս զի արհնեսցեն զնա քահանայ. իսկ նա մինչ ծանեաւ զայն՝ փախեաւ յԵգիպտոս և գնաց յագարակ ուրեմն և թաքեաւ 'ի մէջ խոտոյ: Իսկ հարքն գնացին զկնի նորա գտանել զնա: Եւ իբրև հասին յագարակն յայն, կամեցան սակաւիկ մի հանգչել անդ. և թողին արածել զէշն իւրեանց, վասն զի էր գիշեր: Գնաց էշն և եկաց առ գլուխ թաքուցելոյ անդ ծերոյն և արածէր և կայր անդ: Իսկ առաւօտուն խնդրէին զէշն, և գտին զհայրն Իսահակ անդ և զարմացան. և կամեցան ունել և կապել զնա: Ասէ ցնոսա հայրն Իսահակ. այլ ոչ ևս փախուցայց 'ի ձէնջ յայսմհետէ, և ծանեայ զի կամք այ են այս. և ուր և փախուցայց՝ տայ զիս 'ի ձեռս ձեր: Եւ ասէ ցնոսա. եթէ կամիք զի հնազանդեցայց աղաչանաց ձերոց, մի բերէք ասա զմանկունս կեալ, վասն զի չորք եկեղեցիք քակեցան 'ի Սկիտէ 'ի մանկանց:

2 Պատմէր մեզ հայրն Դանիէլ աշակերտ հօրն Արսէնիոսի և ասէր՝ եթէ էի երբեմն ես մերձակայ հօրն Աղեքսանդրի և կալաւ զնա խիթս ինչ ցաւ, և 'ի խստութէ ցաւոյն անկեալ կայր բերան 'ի վայր: Եւ եկն յանկարծ հայրն Արսէնի կոչել զնա, և ետես զնա սփռեալ անկեալ, և ոչ ծանեաւ. և իբրև կոչեաց զնա, ասէ ցնա. ո՞վ էր գեղջուկն այն այր որ կայր անդ անկեալ յորսայս: Ասէ ցնա Աղեքսանդրէ. և ո՞ւր տեսեր զնա: Ասէ ցնա ծերն. մինչ գայի 'ի լեռնէ անտի, նայեցայ յայրին վայր և տեսի զայն անկեալ անդ աղէկ բերան 'ի վայր ձգտեալ կայր: Իսկ նա անկեալ առաջի նորա ասէ. թող ինձ, հայր, զի ես էի

կոյլու զնա ։ Ասէ ցնա ծերն. ապա ուրեմն դու էիր, ես կարծեցի թէ աշխարհական ոք իցէ և վասն այնորիկ հարցի ցքեզ ։

ԱՅԼ Ի՛ դարձեալ հայրն Դանիէլ՝ եթէ յորժամ էրն 'ի Սկիւթ հայրն Արսէն, էր անդ մենակեաց մի որ գողանայր զկարասի ծերոցն ։ Այլ հօրն Արսէնի առեալ զնա 'ի խուցն իւր՝ կամեցեալ շահել զնա և զծերսն հանգուցանել, և ասէ ցնա. զինչ և խնդրես՝ ես տամ քեզ, միայն մի գողանար ։ Այլ ետ նմա ոսկի և հանդերձ և լումայս և զամենայն պէտս նորա. և երթեալ դարձեալ գողանայր ։ Իսկ ծերքն իբրև տեսին թէ ոչ դադարէ 'ի գողանալոյ, հալածեցին զնա ։ Այլ զայս դարձեալ ասէին ծերքն. եթէ գտցի եղբայր որ ունիցի հիւանդութիւն տկարութեան, պարտ է տանել նմա. ապա եթէ գողանայցէ, հալածեսցի աստի, վասն զի զհոգիս իւր տուգանէ, և զամենեսեան որ եթէ 'ի տեղւոջն են՝ խռովեցուցանէ ։

ԱՅԼ ԻԱ՛ դարձեալ հայրն Դանիէլ՝ եթէ երբեմն այլ եղբարք երթեալ էին 'ի Թեբայիդ վասն կտաւոյ, և ասէին թէ այսու պատճառաւ տեսանեմք զհայրն Արսէն ։ Այլ մտեալ հայրն Աղեքսանդր պատմեաց նմա և ասէ՝ թէ եղբարք են եկեալ յԱղեքսանդրիէ և կամին տեսանել զքեզ ։ Ասէ ծերն. ուսիր 'ի նոցանէ թէ յինչ պատճառս են եկեալ ։ Այլ հարցեալ ցնոսա լուաւ 'ի նո-

որ կայր այնպէս տգեղ, քանզի ցաւ սաստիկ ունէր գլխու ։ Ասէ ցնա ծերն. եթէ դու էիր՝ ես ոչ բարւոք գիտէի, այլ գռեհիկ ոք կարծեցի, զի այն նման էր ։

։ Պատմեաց մեզ հայրն Դանիէլ՝ եթէ յորժամ էր հայրն Արսէնի 'ի Սկիւթ, էր անդ եղբայր մի կրօնաւոր և գողանայր զանօթս եղբարցն. և տարաւ զնա հայրն Արսէնի 'ի սենեակ իւր, զի կամէր զնա շահել և հանգուցանել զեղբարսն, և ասէ ցնա. յորժամ պիտոյ լինիցի քեզ ինչ, եկ առ իս և առ 'ի տանէ իմմէ, բայց գողացիր մի ։ Եւ ետ նմա ոսկիս և դրամս և հանդերձս և պիտոյս ։ Իսկ նա գնացեալ և անդրէն եւս գողանայր ։ Յայնժամ իբրև տեսին ծերքն զի ոչ դադարեաց 'ի գողանալոյ, արտաքսեցին զնա 'ի վանից անտի և ասացին. եթէ իցէ եղբայր որ ունիցի տկարութիւն ինչ, պարտ է բառնալ զնա և շահել. իսկ որ գողանայն, պարտ է արտաքսել զնա. զի թէ իւրն կորիցէ անձն, այլ և զայլսն մի գայթակղեցուցանէ ։

։ Ասաց հայրն Դանիէլ՝ եթէ եղբարք ոմանք կամեցան գնալ 'ի Թեբայիդա յաղագս վշոյ, և յուղւոյ կամեցան տեսանել զհայրն Արսէնիոս. և մտեալ Աղեքսանդրէ ասէ ցծերն՝ եթէ եղբարք եկեալ յԱղեքսանդրիոյ, կամին տեսանել զքեզ ։ Ասէ ցնա ծերն. քննեսցես նոցա զպատճառն թէ վասն էր եկեալ են ։ Իբրև լուաւ թէ վասն վշոյ 'ի

ցանէ զի ասէին՝ 'ի Թեբայիդ երթալ վասն կռուոյ։ Եւ ասէ ծերն. ոչ տեսանեն զերեսս Արսենի, զի ոչ եկին վասն իմ, այլ վասն իւրեանց գործոյն. հանգո զնոսա եւ արձակեա 'ի խաղաղութիւն, եւ ասա ցնոսա՝ թէ ծերն ոչ կամի տեսանել զձեզ։

ԱՍԷԻՆ՝ վասն հօրն Զենոնի աշակերտին Սիլուանոսի՝ եթէ 'ի սկզբանէն ոչ ինչ կամէր առնուլ յումեքէ, եւ որք բերէին՝ ելանէին դարձեալ տրտմեալք, զի ոչ ընդունէր. եւ դարձեալ այլք գային առ նա եւ կամէին առնուլ որպէս 'ի մեծ ծերոյ, եւ ոչ ունէր ուստեք տալ նոցա, դարձեալ եւ նոքա գնային տրտմեալք։ Ասէ ծերն. զինչ գործեցից, զի որք բերենն՝ տրտմին, եւ որք խնդրենն՝ դարձեալ եւ նոքա տրտմին. արդ մանաւանդ եթէ զայս արարից, որք բերենն ինձ՝ առից, եւ որք խնդրենն՝ տաց։ Եւ զայս արարեալ՝ հանգչէր եւ զամենեցուն կամս կատարէր։

ԵՀԱՐՑ՝ հայրն Աբրահամ աշակերտ Ագաթոնի ցհայրն Պիմէն եւ ասէ. զիա՞րդ դեւք հանապազ կռուին ընդ իս։ Ասէ ծերն. ընդ քեզ կռուին, բայց ընդ մեզ ոչ կռուին, որովհետեւ զկամս նոցա կատարեմք. վասն զի կամք մեր դեւք եղեն եւ նեղեն զմեզ, զի կատարեսցուք զնա։ Բայց կամիս ուսանել թէ ընդ ո՞ւմ պատերազմին դեւք. պատերազմեցան ընդ Մովսէսի եւ ընդ նմանիս նորա, իսկ ընդ մեզ կամք անձանց մերոց պատերազմին։

ԴԻԷՊ եղեւ զի միաբան 'ի Սկիւթ առ իւրեարս ծերք ժողովեցան, եւ հայրն Յովհաննէս կարճահասակ ընդ նո-

Թեբայիդա գնան, ասէ ցնա. ոչ տեսանեն նոքա զերեսս Արսենիոսի, զի ոչ վասն իմ եկեալ են, այլ վասն իւրեանց գործոյ. կերակրեա զնոսա և արձակեա, զի գնասցեն խաղաղութբ։ Եւ ասաց նոցա եթէ ոչ էր կարող ծերն տեսանել զձեզ։

։ Ասէին և վասն հօրն Զենոնի՝ եթէ ոչ ինչ առնոյր յումեքէ, և գայթակղէին որք բերէին նմա. և այլք գային և խնդրէին 'ի նմանէ իբրև 'ի ծերոյ մեծէ, և ոչ ունէր զի տայր ինչ՝ գայթակղէին և նոքա։ Ասէ ծերն. զինչ արարից, որք բերենն և որք խնդրենն՝ գայթակղին և տրտմին երկոքեանն. այլ այս լաւագոյն թուի ինձ, զինչ որ բերեն՝ կալայց, և որոց խնդրենն՝ տաց։ Եւ արար այնպէս։

։ Եհարց հայրն Աբրահամ ցհայրն Պիմէն և ասէ ցնա. ո՞րպէս պատերազմին ընդ մեզ դևք։ Ասէ ցնա Պիմէն. ոչ պատերազմին ընդ մեզ դևք. քանզի կամք մեր կատարին 'ի մեզ, և նոքա լինին 'ի մեզ դևք և նեղեն զմեզ. իսկ եթէ կամիս գիտել եթէ ընդ ում պատերազմին դևք, ծանիր զի ընդ Մովսէսի և ընդ նմանիս նորա։

Digitized by Google

սա էր։ Եւ յարուցեալ երիցու որումն մեծի տայր ըղկուժ ջրոյն զի արբցեն. և ոչ ոք կամեցաւ առնուլ 'ի նմանէ, բայց միայն Յովհաննէս կարճահասակն։ Եւ զարմացան ընդ նա և ասեն՝ թէ զիարդ դու կրտսերագոյն քան զամենեսեան իշխեցեր առնուլ և ըմպել յերիցուէն։ Ասէ ցնոսա հայրն Յովհաննէս. ես յորժամ յառնեմ տալ ումեք զկուժ ջրոյն, ուրախ լինիմ թէ ամենեքեան ըմպեն, զի առնուցում վարձս. արդ ես յաղագս այնորիկ առի, զի եղիցին նմա վարձք և մի տրտմեսցի վասն ոչ ումեք առնլոյ 'ի նմանէ։ Եւ զայս նորա ասացեալ՝ դարձեալ զարմացան ընդ ընտրողութի նորա, և ամենեքեան օգտեցան 'ի նմանէ։

ԷԻՆ[1] երկու եղբարք ըստ մարմնոյ, և կրտսերագոյնն էր յառաջագոյն զգեցեալ զձև միայնակեցութեն քան զերէցն։ Եւ եկեալ ոմն 'ի հարանցն առ նոսա՝ եդին զկուժ ջրոյն, և եկն կրտսերագոյնն զի լուասցէ զոտս ծերոյն։ Իսկ ծերոյն կալեալ զձեռանէ նորա՝ շարժեաց զնա 'ի տեղւոյն և ած զերիցագոյնն։ Եւ ասեն ցնա որ շուրջն կային զնովաւ եղբարքն. կրտսերագոյնն յառաջ է քան զդա 'ի ձևդ, հայր։ Ասէ ցնոսա ծերն. ես առնում զառաջնորդութիւն կրտսերոյն և արկանեմ 'ի հասակ երիցագունին։

ԻՋԻՆ[2] երբեմն մենակեացք յԵգիպտոսէ 'ի Սկիւթ. երթեալ առ ծերսն տեսին զնոսա զի ուտէին 'ի սովյն կրօնաւորութեն փութապէս՝ և գայթակղեցան։ Եւ իմացեալ երիցուն և կամեցեալ հաճել զմիտս նոցա, քարոզեաց յեկեղեցւոջն ժողովրդեանն և ասէ. պահեցէք

[1] Երկու եղբարք մարմնաւորք եղեալք յաշխարհէ կրօնաւորք եղեն. իսկ կրտսեր եղբայրն նախ էառ զկերպ և զկարգ կրօնաւորութեն, և յետ բազում ժամուց ապա էառ և երէցն եղբայր։ Եւ եկն երբեմն առ նոսա մի ոմն 'ի հարցն, և եդին առաջի նորա աւազան, և եկն 'ի ծունկս կրտսեր եղբայրն լուանալ զոտս ծերոյն։ Իսկ ծերն կալեալ զձեռանէ կրտսերոյն յետս կացոյց զնա, և զերէցն եղբայր յառաջ կացոյց։ Ասեն ցնա բնակիչք տեղւոյն. հայր, զի կրտսերն այն առաջ իցէ 'ի ձև կրօնաւորական։ Ասէ ծերն. ես առից զառաջութեն կրտսերոյն և տաց ցերէց եղբայրն։ Զայս վասն այն արար ծերն, որպէս զի մի հպարտասցի կրտսերն 'ի վերայ երէց եղբօրն և կորիցէ։

[2] Իջին երբեմն հայրք ոմանք յԵգիպտոսէ 'ի Սկիւթ տեսանել զհարսն. և իբրև տեսին զնոսա, 'ի յերկարաձգել պահոցն ուտելով փոյթ առնուին զկերակուրն, վասն այնորիկ գայթակղեցան 'ի նոսա։ Ծանեաւ զայս երէցն Սկիւթայ և կամեցաւ շինել զմիտս եգիպտացւոցն. վասն այնորիկ քարոզեաց պահս յեկեղեցին և ասէ ցժողովուրդն.

և տաւել ծգեցէք զվարս կրօնաւորութեան ձերոյ, եղբարք։ Իսկ եգիպտացի եղբարքն կամէին գնալ, և ոչ արձակեաց զնոսա։ Եւ իբրև զառաջին օրն պահեցին՝ ցնորեցան, զի ետ նոցա պահել զերկուս աւուրս։ Իսկ նաքա որք բնակեալ էին 'ի Սկիւթ՝ պահէին զշաբաթն. և եկեալ շաբաթուննստան եգիպտացիքն ճաշակել ընդ ծերումն։ Եւ փութացեալ եգիպտացիքն ուտել զհացն, կալաւ ոմն զձեռաց նոցա և ասէ. համբերութբ կերայք իբրև զմենակեացս։ Եւ նորա մղեալ զձեռանէ նորա ասէ. արձակեա զիս զի մեռանիմ, զամենայն շաբաթս ջերմ ոչ ճաշակելով։ Ասէ ցնա ծերն. եթէ դուք զերկուս երկուս աւուրս պահելով այդպէս թալացայք, զիա՞րդ յեղբարքս գայթակղեցայք որ հանապազ զայս կատարեն զկրօնաւորութիւն։ Եւ անկան առաջի նոցա և շինեցան 'ի կրօնաւորութի նոցա և չոգան խնդութբ։

ԵՀԱՐՑ՝ երբեմն հայրն Ագաթոն ցհայրն Ալոն և ասէ. կամիմ ունել զլեզու իմ, զի մի խօսեսցի սուտ։ Եւ ասէ ցնա հայրն Ալոն. եթէ ոչ խօսիս սուտ, բազում մեղս գործես։ Եւ նա ասէ. զիա՞րդ։ Եւ ասէ ծերն. ահա երկու արք՝ քո առաջի մահ գործեցին, և մին 'ի նոցանէ փախեաւ և անկաւ 'ի խուցն քո, և ահա իշխանն խնդրէ զնա և հարցանէ ցքեզ և ասէ՝ թէ քո առաջի

յերկարել ժրաջնք ընդ մեզ 'ի պահս և 'ի ճգնութեան։ Եւ կամեցան գնալ եգիպտացիքն. իսկ նա ոչ թողու զնոսա գնալ։ Եւ իբրև պահեցին զաւուրս երկու՝ կորացան և լուծան եգիպտացիքն այնոքիկ, և նոցա որ ընդ մեզ եր պահել երեցն Սկիտոյ. իսկ սկիտացիքն պահեցին զշաբաթն ողջոյն։ Եւ իբրև եկն շաբաթն և նստան եգիպտացիքն ընդ սկիտացւոցն ճաշակել, և սկսան շփոթելով իբրև զմոլի ուտել եգիպտացիքն։ Եւ կալաւ մի ոմն սկիտացի ծեր զձեռանէ միոյ եգիպտացւոյ և ասէ. պատրաստ և համբարտ կերիցես իբրև զկրօնաւոր։ Իսկ նա ձգեաց զձեռն ծերոյն և ասէ ցնա. 'ի բաց գնա և թոյլ տուր ինձ, զի ոչ ինչ եւացեալ կերեալ է իմ յեօթնեկին յայսմիկ, և ահաւասիկ մեռանիմ։ Ասէ ցնա ծերն. եթէ դուք որ օր ընդ մեզ պահեցիք՝ այսպէս վհատեալ եղէք, ապա զիա՞րդ գայթակղեցայք յեղբարցն դուք՝ որք այսպէս միշտ յերկարեն զպահս և զճգնութիւն։ Յայնժամ խնդրեալ թողութիւն, ուրախութբ լցեալք գնացին 'ի սենեակս իւրեանց՝ շինեալ և հաստատեալ 'ի կամս այ։

։ Եհարց երբեմն հայրն Ադաթոն ցհայրն Ալոնիոս և ասէ ցնա. ո՞րպէս կարացից ունել զլեզու իմ, զի մի խօսեցայց ինչ սուտ։ Ասէ հայրն Ալոնիէ. եթէ ոչ երբէք խօսեսցիս սուտ, 'ի բազում մեղս անկանիցիս։ Նա ասէ՝ թէ ո՞րպէս, հայր։ Պատասխանի ետ ծերն. ահա ոմն մարդասպան փախուցեալ՝ յուսով եկն և թագեաւ 'ի սենեակ քո զի կեցցէ, և իշխանն խնդիր է նմա զի սպանցէ զնա, և հարցանէ ցքեզ և

մահ գործեցաւ. եթէ ոչ կամիս խօսել սուտ, մատնես զմարդն 'ի մահ. այլ մանաւանդ թող զքեզ առանց կապանաց առաջի տեառն, վասն զի նա գիտէ զամենայն:

ԶԵԳԱՒ' հայրն Սերինոս գիւղկացի հանդերձ աշակերտաւն իւրով Սահակաւ առ հայրն Պիմէն և ասէ ցնա. հայր, զինչ արարից Սահակայ, զի ախորժելով լսէ յինէն զբանն: Ասէ ցնա հայրն Պիմէն. Թէ կամիս' առաւել գործ յոյց դմա, մի՛ գուցէ բան միայն հայեցեալ դատարկանայ. եթէ գործով ուսուցանես ըղդմա, այն մնայ ընդ նմա:

ՊԱՏՄԵԱՑ' ոմն 'ի հարանցն' եթէ էր ծեր ոմն վաստակաւոր 'ի խրճիթան և զգեցեալ էր պղտուեայ: Եւ երթեալ առ հայրն Ամմոա, և տեսեալ ծերոյն զի զգեցեալ էր զպղտուեայն' ասէ ցնա. այդ քեզ ոչ ինչ է օգուտ: Հարցեալ ցնա և ասէ. հայր, երեք խորհուրդք խռովեցուցանեն զիս, կամիմ գնալ հանապազ մոլորեալ յանապատի, և կամ գնալ յօտարութիւն ուր ոչ ոք ճանաչիցէ զիս, և կամ արգելուլ զիս 'ի խուց և ոչ զոք տեսանել, այլ ագանելով* ճաշակել: Ասէ ցնա Ամմոա. յայդցանէ յերեցունց և ոչ զմի կարես առնել, այլ երթ նիստ 'ի խցին քում և ճաշակեա սակաւ սակաւ հանա-

ասէ. առ քե՞զ եկեալ կայ, մարդասպանն այն: Արդ եթէ սուտ ոչ ասասցես, տացես զնա 'ի սպանումն բանիւ քո. այլ [illegible] յանձնեսցես զայդպիսիդ և զամենայն խորհուրդս քո:

Գնացեալ երբեմն հայրն Սերենիոս և Իսահակ աշակերտ իւր առ հայրն Պիմէն և ասէ ցնա. զի՞նչ արարից, հայր, այս Իսահակ, որպէս զի յօժարութեամբ լսիցէ բանից իմոց: Ասէ ծերն. եթէ կամիս շահել զդա, գործով ուսո զդա և մի՛ բանիւք լոկովք, զի տեսցէ զքեզ առնել զայն զոր ասես' ինքն ոչ ծուլասցի. և քանզի զօրութիւն այս ոչ բնակէ 'ի մարդ որ ծառայէ ախտից, և եթէ զհետ հանգստեան ընթանայ որ' նա փախչի 'ի նմանէ:

Պատմէր մեզ ոմն 'ի հարանց' եթէ էր ոմն ծեր սրտացաւ 'ի սենեակն և ունէր նա զգեցեալ փսիաթ, այսինքն հիւսեալ տերև արմաւոյ: Սա գնացեալ երբեմն առ հայրն Ամոնա, և իբրև ետես զնա ծերն զգեցեալ արմաւենեօք' ասէ ցնա. այս ոչ բնաւ ջեռուցանէ և կամ հանգուցանէ զքեզ: Իսկ նա եհարց զհայրն վասն խորհրդոց իւրոց և ասէ. խորհուրդք երեք նեղեն զիս, հայր, մի թէ շրջեցայց մոլորական յանապատի, երկրորդ զի գնացից յերկիր օտար ուր ոչ ոք ճանաչիցէ զիս, և երրորդն զի արգելից զանձն իմ և այլ ոչ ես ելից արտաքս 'ի խցէ իմմէ, և ոչ ես խօսեցայց ընդ ումեք, և կերայց օր ընդ մէջ: Ասէ ցնա հայրն Ամոնա. և ոչ մի ոք յերիցդ յայդցանէ բարի է քեզ, այլ ասեմ քեզ. նիստ 'ի սենեակ քո և կեր չափաւորապէս հա-

* [illegible] յօրինակին:

պաշտօք, և ընկալ 'ի խորհուրդս քո յամենայն ժամ ըղ-ձանս մաքսաւորին, և կարես առնել:

Այր[1] երբեմն միայնակեաց ոմն որոշեալ, յոյժ ընտրող, և կամէր լինել 'ի խորհրդեան և ոչ եգիտ առժամայն խուց առանձինն: Այլ էր անդ ծեր ոմն որ ունէր առա-շոգ խուց, և աղաչեաց զնա և ասէ. եկ նիստ առ իս մինչև գտցես խուց և երթիցես: Այլ գային առ նա ոմանք իբրև առ օտար. բերէին նմա որ թէ զինչ յաջողէր՝ զի օգտես-ցին, և նա առնէր օտարսիրութիւն ընդ նոսա: Այլ սկսաւ ծերն նախանձել ընդ նմա և չարախօսել զնմանէ և ասէ. ես քանի ինչ ժամանակս ունիմ աստ 'ի կրօնաւորութեան և ոչ ոք գայ առ իս. և այս խաբեբայս սակաւ աւուրս ունի, և այսքանի բազմութիւնս գայ առ սա: Այլ ասէ ցաշակերտն իւր. երթ ասա նմա՝ եթէ գնա 'ի տանէդ, զի պիտոյ է ինձ: Այլ երթեալ աշակերտն ասէ ցնա. Հայրն իմ յղեաց զիս և ասէ՝ թէ զիա՞րդ կես: Այլ նա ասէ. աղօթս արա 'ի վերայ իմ, զի ծանրացեալ եմ 'ի ստամոքսէս: Այլ եկեալ եղբօրն առ հայրն ասէ՝ թէ տե-սանեմ խուց և գնամ: Դարձեալ յետ երկուց աւուրց ասէ ցնա. երթ ասա նմա. եթէ ոչ գնաս, ես գամ և գաւազանաւս հանեմ զքեզ: Այլ դարձեալ երթեալ

---

նապաշտօր, և յիշեսցես միշտ 'ի մտի քո զբանս փարիսեցւոյն և մաք-սաւորին այն:

[1] Էր երբեմն միայնակեաց ոմն յոյժ հանճարեղ և իմաստուն, սուրբ և ճգնաւոր. սա կամէր բնակել 'ի սենեակ, և ոչ եգիտ առժամայն իւր տուն զի բնակեսցէ 'ի նմա և հանգարտեսցի: Իսկ էր անդ ծեր ոմն և ունէր այլ սենեակ առանձինն, և ասէ ցնա. եկեալ դու նըստ-ցիս 'ի սենեկի իմում մինչև գտանիցես այլ սենեակ: Եւ նա արար այնպէս, զի գնացեալ նստաւ 'ի սենեակն յայն: Եւ ահա յաղագս բարեհամբաւութեան և օտարութեան և հանճարեղ քննութեան իւրոյ գային բազումք 'ի խորհուրդս առ նա և բերէին զպիտոյս նորա, և նա դար-ձեալ մխիթարէր և հիւրընկալէր զնոսա: Եւ սկսաւ ծերն այն որ տէր էր տանն՝ ոխալ ընդ նմա, և չարախօսէր զնմանէ և ասէր. ես այսչափ ամս աստ եմ և ոչ ոք նայեցաւ յիս. իսկ գիւղս այս եկաց աստ սա-կաւ աւուրս և ամենեքեան գան առ նա: Եւ իբրև ոչ ժուժկալեաց, առաքեաց զաշակերտն իւր և ասէ. գնա 'ի տեղւոջէդ զի ինձ պիտոյ է տուն իմ: Եւ գնացեալ աշակերտն այն ասէ ցնա. ծեր իմ առաքեաց զիս առ քեզ և ասէ՝ եթէ որպէս կեաս յաւուրս յայսմիկ: Իսկ նա պատասխանեաց և ասէ. աղօթեա վասն իմ, հայր, զի ծանրացաւ ստա-մոքս իմ և ցաւագնիմ: Եւ եկեալ եղբայրն ասէ. այսպէս պատաս-խանեաց ծերն՝ եթէ խնդրեսցես այլ սենեակ և գնասցես աստի զկնի եր-կուց աւուրց: Եւ նա ասէ. գնա դարձեալ և ասա ցնա. եթէ ոչ գը-նասցես կամաւ, եկեալ գաւազանաւ արտաքսեցից զքեզ անկամայ:

առ ծերն և ասէ ցնա. լուաւ հայրն իմ եթէ հիւանդ ես և կարի յոյժ խռովեցաւ, և առաքեաց զիս զի տեսից զքեզ։ Նա ասէ ծերն. ասա ցնա՝ թէ վասն աղօթից քոց թեթև եղև ինձ։ Գնաց և ասէ ցհայրն իւր՝ թէ մինչև ցկիրակէ օր անսա ինձ և գնամ, թէ կամի Ա՟ծ։ Որդ իբրև եկն կիրակէն և ոչ գնաց, առեալ գաւազան զի հարցէ և հանցէ զնա։ Նա ասէ ցնա աշակերտն իւր. յառաջեմ ես և երթամ, մի գուցէ իցէ ոք անդ և գայթակղեցուցանես զնոսա։ Նա յառաջեալ ասէ նա ցծերն. ահա հայրն իմ գայ աղաչել զքեզ և տանել 'ի խուցն իւր։ Որդ իբրև լուաւ զսէր ծերոյն, ել ընդ առաջ նորա, անկաւ առաջի նորա 'ի հեռաստանէ ասելով. մի աշխատիր, տէր իմ և հայր, ես գամ առ սըրբութիւդ քո, և թողութիւ արա ինձ վասն Տ՟ռի։ Նա ետես Ա՟ծ զգործս մանկանն և արկ զեղջ 'ի սիրտ հօր նորա. և ընկեցեալ զգաւազանն յինքենէ ընթանայր յողջոյն նորա, և հասեալ առ նա ողջունեաց զնա և տարաւ 'ի տունն որպէս թէ ոչ ինչ իցէ լուեալ նորա։ Ասէ նա ցաշակերտն իւր. ո՞չ ինչ ասացեր ցդա զոր ինչ ասացի ցքեզ։ Նա նա ասէ՝ ոչ։ Նա յոյժ խնդացեալ ծերոյն և մուծեալ զնա հանգոյց, և գիտաց եթէ 'ի սատանայէ էր նախանձն, անկեալ առաջի աշակերտին իւրոյ և ասէ. դու իմ հայր յայսմհետէ, և ես քո աշակերտ, զի վասն գործոց քոց զկնի Ա՟յ զհոգիս երկոցունցս ապրեցուցեր։

Գնաց եղբայրն և ասէ ցնա. լուաւ ծերն իմ զտկարութիւ քո և տրտմեցաւ յոյժ, և առաքեաց զիս տեսանել և հարցանել զքեզ։ Եւ նա ասէ ցնա. երթ և ասա ծերոյն. աղօթիւք քո առողջ եւ գիւր եմ։ Եւ գնաց առ ծերն եղբայրն և ասէ ցնա. այսպէս ասէ ծերն. ներեա ինձ մինչև ցկիւրակէ և գնացից առտի։ Եւ իբրև եկն կիւրակէն և ոչ գնաց, յայնժամ առեալ ծերն զցուպ իւր և գնայր հանել և վարել զնա։ Ասէ ցնա աշակերտն այն. ես նախ երթայց, զի մի գուցէ ասար ոք իցէ անդ և գայթակղեսցի 'ի քեզ։ Եւ յառաջեալ եկն աշակերտն առ ծերն և ասէ. ծեր իմ գայ տեսանել զքեզ և տանել զքեզ 'ի սենեակ իւր։ Իսկ նա իբրև լուաւ զսէր ծերոյն, ել ընդ առաջ նորա և անկեալ առ ոտս նորա երկիր եպագ և ասէ. մի աշխատիր, հայր, ես եկից առաջի սրբութեան քո։ Եւ նայեցեալ տէր 'ի գործս աշակերտին՝ շնորհեաց նմա զյանցանս հօրն և զզջացոյց զսիրտ ծերոյն։ Յայնժամ ընկեց 'ի ձեռանէ զցուպն, և գնաց համբուրեաց զնա և տարաւ 'ի սենեակ իւր և սիրեաց զնա, և ապա ասէ ծերն ցաշակերտ իւր. ո՞չ ինչ ասացեր նմա յորոց ես ասացի քեզ ասել դմա։ Եւ նա ասէ. ոչ, հայր։ Ուրախ եղև ծերն, զի ոչ ինչ լուաւ. և ծանեաւ զայն որ նախանձ գիտաց էր գործն, և մխիթարեաց զնա և կերակրեաց։ Եւ անկեալ յառաջ աշակերտին իւրոյ ասէ. յայսմհետէ դու վարդապետ իմ և ես աշակերտ քո, զի խմաստութիւ քո կեցին անձինք մեր երկոցունց։

ՄՍԻՒՆ [1] վասն որումն հօր 'ի խորշիթան եթէ էր վաստակասէր մեծ. և մինչդեռ կատարէր զաղօթսն, դէպ եղև այլ ումեմն ծերոյ սրբոյ երթալ առ նա։ Եւ լուեալ զձայն նորա արտաքուստ զի կռուէր ընդ խորհուրդս իւր և ասէր. մինչև յե՞րբ վասն միոյ բանի զամենայն զայն կորուսանէք։ Եւ նորա եկեալ՝ կարծէր թէ; այլ ումեք խօսեսցի. և բախեալ զդուռն՝ եբաց նմա, և մտեալ 'ի ներքս ողջունեցին զմիմեանս։ Եւ հայեցեալ զի այլ ոք ոչ էր 'ի ներքս, ունելով համարձակութիւն առ ծերն՝ ասէ ցնա. ընդ ո՞ւմ կռուէիր, հայր։ Եւ նա ասէ. ընդ խորհուրդս իմ. չորեքտասան գիրս գիտեմ 'ի բերան, և բան ինչ լուայ արտաքոյ, կամեցայ կատարել զաղօթս իմ, և զամենայն զայն դադարեցուցի, և այն միայն եկեալ կայ առաջի իմ 'ի ժամ աղօթիցս, յաղագս այ-՝նորիկ կռուիմ։ Եւ լուեալ զարմացաւ ընդ մաքրութիւն և ընդ արթնութիւն ծերոյն, զի համարձակութեամբ ասէր զիւր պատերազմն։

ԵՀԱՐՑ [2] եղբայր ոմն ցհայրն Պիմէն և ասէ. հայր, ահա երկու արք՝ մինն աշխարհական և միւսն մենակեաց. մենակեացն խորհեցաւ երիկունն զի այգուցն 'ի բաց հանցէ զձև միայնակեցութեն, և աշխարհականն նոյնպէս խորհեցաւ երիկունն զի 'ի վաղիւն առցէ զձև միայնակեցութե, և երկոքեան վախճանեցան 'ի գիշերին յայն-

[1] Մաքին զծերոյ ումեմն որ բնակէր 'ի սեննակին՝ եթէ գնացեալ ոմն առ նա 'ի ծերոցն 'ի ժամ աղօթիցն և լսէր 'ի ներքուստ 'ի տանն զկը-փոթս ծերոյն, զի կռուէր ընդ խորհուրդս իւր և ասէր. մինչև յե՞րբ ապանանել կամիս զիս։ Եւ միշտ զայն բան ասէր, և կարծեաց ծերն որ 'ի գրանն էր՝ եթէ այլ ոմն է առ նա և կռուին ընդ միմեանս. և բախեաց զդուռն զի մտցէ և հրահանգեսցէ զնոսա։ Եւ իբրև եմուտ, եգիտ զծերն միայն 'ի տան. և վասն զի ունէր առ նա համարձակութիւն, ասէ ցնա. ընդ ո՞ք կռուէիր, հայր։ Ասէ ծերն. կռուէի ընդ իս և ընդ խորհուրդս իմ. զի գիրս չորեքտասանս գիտեմ 'ի թիւ, և մի բան միա լուայ այսօր արտաքոյ, և մինչ սկսայ յաղօթս՝ այն ամենայն բանք գրոցն կորեան, և այն միայն եկն 'ի խորհուրդս իմ 'ի ժամ աղօթիցս, և ես ընդ այն կռուէի։ Քանզի մարգարէքն գրեցին զգիրս, և եկեալ սուրբ հարքն կատարեցին զգրեալն 'ի նոսա գործովք և ուսան զնոսա. իսկ յետոյ եկն այս ազգ որ գրեալ զնոսա եդ 'ի պատուհանս անգործ, և ինքն զչար խորհի 'ի մտի 'ի տուէ և 'ի գիշերի։

[2] Եղբայր ոմն եհարց ցհայրն Պիմէն և ասէ ցնա. հայր, արք երկուք էին առ մեզ, մինն կրօնաւոր և միւսն աշխարհիկ. և կրօնաւորն խորհեցաւ ընդ երեկս մերկանալ 'ի յայգուցն զզգեստ կրօնաւորութեն, իսկ գաւհիկն այն խորհեցաւ զի զգեցցի յայգուց զզգեստ կրօնաւորութեն, և մեռան երկոքեանն 'ի յայնմ գիշերի. արդ որպէս համա-

Digitized by Google

մին. որք զինչ պատրաստեալ է նոցա։ Ասէ ցնա աբբա Պիմէն. մենակեացն վախճանեցաւ մենակեաց, և աշխարհականն աշխարհական, յորում թէ գտանի՝ նովին և չոգան։

ԶՈԳԱՆ՝ ոմանք առ հայրն Ագաթոն, լուեալ վասն նորա եթէ մեծ ընտրողութիւն ունի. և կամեցեալ փորձել զնա և տեսանել թէ բարկանայցէ՝ ասեն ցնա. դու ես Ագաթոն, լսեմք վասն քո եթէ պոռնիկ ես և ամբարտաւան։ Եւ նորա ասացեալ եթէ ես եմ, և դարձեալ ասեն ցնա. դու ես Ագաթոն շատախօս և քսու։ Եւ նորա ասացեալ թէ այո, և դարձեալ ասեն ցնա. դու ես Ագաթոն հերձուածող. և նա ասէ՝ ոչ եմ հերձուածող։ Եւ աղաչեցին զնա և ասացին. այդքան ասացաք և թշնամանեցաք զքեզ, և ասացեր՝ թէ այո. այդ մի բանի ընդէր ոչ համբերեցեր։ Ասէ ցնա հայրն Ագաթոն. զառաջինն որ հարցէք, յիս նայեցեալ և քննեալ՝ օգուտ հոգւոյ իմ. իսկ հերձուածողն բաժանումն է յԱյ, և ոչ կամիմ յԱյ բաժանել։ Եւ նոցա լուեալ զխտրողութիւն նորա՝ զարմացան և չոգան խնդութեամբ։

ԵՂԲԱՐՔ՝ ի միաբանակեցաց գնացեալ չոգան յանապատն, և եկեալ առ ոմն մենակեաց՝ ընկալաւ զնոսա խնդութեամբ. և որպէս սովորութիւն է անապատաւորաց, տեսեալ զնոսա եթէ աշխատեալ են՝ եդ առաջի նոցա

րին նոքա։ Ասէ ցնա ծերն. կրօնաւորն այն կրօնաւոր մեռաւ, և գեղջուկն այն գեղջուկ մեռաւ. և զի իւրաքանչիւրն որպէս գտաւ՝ այնպէս գնաց։

ı Գնացին ոմանք երբեմն առ հայրն Ագաթոն, որք լսէին զմեծ զգաստութիւն նորա և ձեռնարկէին փորձել զնա՝ թէ բարկանայ՞ թէ ոչ։ Եւ ասեն ցնա. դո՞ւ իցես Ագաթոն. քանզի լուաք զքէն, զի պոռնիկ և ամբարտաւան ես դու։ Իսկ նա ասաց. այդպէս իցեմ ես։ Նոքա դարձեալ կրկին թէ զայրացեալ ասեն. դու Ագաթոն բամբասող և մատնիչ բազմաց։ Եւ նա ասէ. ես եմ։ Իսկ նոքա դարձեալ ասեն. դու ես Ագաթոն հերձուածող։ Պատասխանի ետ ծերն. քաւ լիցի, հերձուածող ոչ եմ։ Յայնժամ անկեալ առ ոտս նորա աղաչէին պատմել նոցա և ասեն. այդքան չարիք ասացաք զքէն, և դու զամենայն յանձն առեր, և զմին զայն բան ոչ բարձեր։ Ասէ ցնոսա ծերն. զառաջին բանսն զամենայն յանձն առի, զի շահ անձին էր զայդպիսիս նոքօք. իսկ հերձուածողն զօղ՝ հեռանալ յԱյ է, վասն այնորիկ ոչ յանձնին առի լսել զայն։ Իսկ նոքա մինչ լուան զայս, զարմացան յոյժ ընդ ընտրեալ զգաստութեան նորա, և շինեալ գնացին։

ı Գնացին ոմանք եղբարք առ միայնակեաց ոմն մեծ յանապատ, և նա ընկալաւ զնոսա ուրախութեամբ. և զի էին նոքա աշխատեալք յուղւոյ, և եդ առաջի նոցա սեղան նախ քան զժամ ճաշուն. և զոր ինչ

սեղան առժամայն, և զոր ինչ ունէր 'ի խորհին՝ եդ առաջի նոցա և համադոյց զնոսա: Այլ յորժամ եղև երեկոյ, ասացին զերկոտասան սաղմոսն, նոյնպէս և 'ի գիշերին: Այլ մինչդեռ ծերն արթուն էր, լսէր 'ի նոցանէ զի ընդ իրեարս ասէին՝ թէ միայնակեացք յանապատի առաւել համբերեն քան զմեզ՝ որ եթէ միաբանակեացք եմք: Այլ պատրաստեալ էին վաղիւն երթալ առ դրացի նորա: Նա ցնոսա. ողջոյն ասացէք նմա յինէն և ասացէք նմա՝ թէ մի տար ջուր բանջարոյդ: Այլ նոքա լուեալ խնացաւ զխրատն և կալաւ զնոսա մինչև ցերեկոյ նօթի 'ի գործ: Այլ իբրև երեկոյ եղև, արարին մեծապէս աղօթելով[1], և ասէ ցնոսա. արձակեսցուք վասն ձեր զի աշխատեալ էք: Այլ ասէ դարձեալ. ոչ ունիմք սովորութիւն աւուր աւուր ճաշակել, այլ վասն ձեր ճաշակեսցուք փոքր մի: Այլ եդեալ առաջի նոցա սեղան և հաց և աղ և ասէ ցնոսա. պարտ է այսօր վասն ձեր տօն առնել: Այլ արկ սակաւ մի քացախ յաղն: Այլ յարուցեալ արկին պաշտօն մինչև յառաւօտն, և ասէ ցնոսա. ոչ կարեմ վասն ձեր զամենայն կարգ պաշտամանն կատարել զի հանգիցէք սակաւ մի, վասն զի օտարք էք: Այլ ընդ առաւօտն կամեցան նոքա փախչել, և նա աղաչէր զնոսա և ասէր՝ թէ մնացէք առ այլ սակաւ աւուրս ևս. բայց սակայն ըստ

ունէրն՝ այնու բարւոք հիւրընկալեաց զնոսա: Իբրև եղև երեկոյ, ասացեալ երկոտասան սաղմոս և հանգեան, նոյնպէս և 'ի մէջ գիշերոյն: Եւ իբրև եղեն առանձինն եղբարքն, լուաւ ծերն այն զի ասէին ընդ միմեանս՝ եթէ միայնակեացք յանապատս լաւ հանգիստ ունին և պարարտ ուտեն քան զմեզ որ 'ի հասարակաց վանս եմք: Իսկ առաւօտին մինչ գնալ կամէին նոքա առ այլ ոմն միայնակեաց որ բնակէր մերձ 'ի վայրս նորա, ասէ ցնոսա ծերն. գնացէք դուք առ նա և ողջոյն տուք նմա ընդ իմ և ասասջիք նմա՝ մի ոռոգեսցես այսօր զբանջար քո: Եւ գնացին և ասացին այսպէս: Իսկ ծերն իբրև լուաւ ըզբանն, ծանեաւ զխորհուրդ բանին, և կալաւ զնոսա 'ի գործ մշակութեան անօթիս մինչև յերեկոյ. և երեկոյն արար աղօթս յերկարեալս, և ապա ասէ. լուծից զպահս վասն ձեր եկեղցւոյ. զի մեք ճաշակեմք զերկս աւուրքս մի անգամ, այլ լուծից զայս պահս վասն ձեր: Եւ եդ առաջի նոցա հաց չոր և աղ և ասէ. պարտ է այսօր փափկանալ վասն ձեր: Եդեր և քացախ, էարկ յաղն յայն: Եւ իբրև յարեան 'ի սեղանոյն, յերկարեաց ծերն զաղօթս մինչև յառաւօտն, և ապա ասէ. ոչ կարացի 'ի սակս ձեր կատարել զկանոն իմ. այլ հանգերուք դուք սակաւ մի, զի եկեալ էք 'ի հեռաստանէ: Եւ իբրև եղև առաւօտն, խորհէին փախչել 'ի ծանունկ եղբարքն: Իսկ ծերն աղաչէր զնոսա և ա-

1 Յօրինակն Թողուլ:

սովորութեան անապատիս ոչ արձակեմ զձեզ եթէ ան-կանիցիք առաջի իմ հազար անգամ, բայց եթէ նստիք այսր աւուրս երիս ըստ պատուիրանին։ Իսկ նոցա տե-սեալ թէ ոչ արձակէ, յարուցեալ փախեան գաղտ։

ԵՂԲԱՅՐ՝ ոմն եհարց զաւանս 'ի հարանցն և ասէ. եթէ զխափեցայ ինձ և ծանրացայց 'ի քնոյ և անցցէ զլինել ժամ պաշտամանն, և ոչ կամի անձն իմ կատարել զը-պաշտօնն յամօթոյն։ Ասէ ծերն. եթէ դէպ լիցի քեզ ննջել մինչև յառաւօտն, յարուցեալ փակեա զդուրս քո և զպատուհանն և կատարեա զժամ պաշտամանն քո, վասն զի գրեալ է՝ եթէ քո է տիւ և քո է գիշեր. և յամենայն ժամ փառաւորի Ած։

ԵՂԲԱՅՐ՝ ոմն եհարց 'ի հարանցն զոմն և ասէ. ա-հա երթամ 'ի տեղիս ուրեք ընդ ամենայն եղբարս և զնեն առաջի իմ կերակուր, և է զի եղբարքն կամ վասն ժուժ-կալութեան կամ վասն յագ լինելոյ ոչ կամին ճաշակել, և է զի ես քաղցեալ զխափեցիմ՝ զինչ պարտ է ինձ առ-նել։ Ասէ ցնա ծերն. եթէ դու քաղցեալ ես, հայեաց յայնոսիկ որ ընդ քեզ նստին թէ քանի են, նայեաց և որ զինչ առաջի դնիցեն. և զոր ինչ կարծես եթէ հա-սանէ քեզ բաժին՝ զայն կերիջիր, և ոչ են քեզ նա-խատինք, այլ զպէտսն քո վճարեցեր. ապա եթէ յաղ-թեսցիս 'ի քաղցոյն և յոլով ճաշակեսցես, այն որկո-րամոլութիւն է։

ասէր. կացէք առ իս ամ մի. և թէ զայս ոչ կամիք, կացէք ըստ կար-գաւ անապատականաց շաբաթ մի վասն սիրոյն Այ։ Իսկ նոցա իբրև տե-սին թէ ոչ թողու զնոսա գնալ, փախեան գաղտ և գնացին անտի։

Եղբայր ոմն եհարց ցծերն և ասէ ցնա՝ եթէ ծանրանայ քունն 'ի վերայ իմ և անցանէ ժամ աղօթիցն, յետոյ այլ ոչ կամի անձն իմ աղօթս առնել՝ իբր թէ ոչ է ժամ աղօթից, քանզի անցաւ։ Ասէ ցնա ծերն. թէպէտ և զխափեցաւ քեզ ննջել մինչև ցլոյս աւուրն, մի զան-գիտեր, այլ արի և փակեա զդուրս և զպատուհանս քո և կատարեա զկարգ աղօթից քոց, քանզի գրեալ է՝ քո է տիւ և քո է գիշեր. և յամենայն ժամու փառաւորեսցի Ած։

Եղբայր ոմն եհարց ցծերն իւր և ասէ. եթէ գնամ ես 'ի վանս ուրեմն առ եղբայր ոմն, և դնեն առաջի մեր կերակուրս, և եղբարքն այնոքիկ կամ յաղագս պահոց և կամ թէ ճաշակեալ իցեն և յագեալ և ոչ կամիցին ուտել. իսկ ես սովեալ իցեմ զինչ պարտ իցէ ինձ առ-նել յայնժամ։ Ասէ ցնա ծերն. եթէ նեղեալ իցես, զննեսցես զեղ-բարսն և զկերակուրն որ եդեալ է, և զոր ճանաչես թէ բաժին քո իցէ՝ յայնմանէ զայն կերիցես, և յանցանք ոչ իցէ քո և գայթակղու-թիւն ոչ արարեր. իսկ եթէ յաղթեսցիս և աւելի կերիցես, այն գայ-թակղութիւն է։

Digitized by Google

ԱՍԷՐ[1] երբեմն հայրն Դանիէլ՝ եթէ յառաջ քան զգալն Արսէնի առ հարսն իմ, նոքա առ հօրն Ագաթոնի լինէին. եւ սիրէր հայրն Ագաթոն զԱղեքսանդրոս, զի ճգնաւոր էր եւ պարկեշտ։ Դէպ եղեւ ամենայն աշակերտացն նորա կտաւ լուանալ 'ի գետն, եւ հայրն Աղեքսանդրոս պարկեշտութեամբ լուանայր. իսկ այլ եղբարքն ասէին ցծերն՝ եթէ եղբայրն Աղեքսանդրոս ոչ ինչ գործէ։ Եւ կամեցեալ զմիտս նոցա հաճել, ասաց նմա. աղնիւ լուա, եղբայր Աղեքսանդր, վասն զի կտաւ է։ Եւ նորա լուեալ տրտմեցաւ։ Եւ յետ այսորիկ մխիթարեաց զնա ծերն եւ ասէ. միթէ՞ չգիտէի թէ աղնիւ գործես, այլ զայս ասացի դքեզ առաջի նոցա, զի հաճեցից զնոցա միտս՝ քո հնազանդութեամբդ, եղբայր։

ԵՀԱՐՑ ոմն 'ի հարանցն զհայրն Սիսոյ եւ ասէ՝ եթէ քոյր իմ աղքատ է. եթէ տարայց ընդ նմա սէր, ո՞չ է իբրեւ այլոց աղքատի։ Ասէ ցնա ծերն՝ ոչ։ Ասէ ցնա եղբայրն. ընդէ՞ր, հայր։ Ասէ ծերն. վասն զի արիւնն ձգէ զքեզ։

ԱՍԷ ծերն՝ եթէ պարտ է միայնակեցին ոչ լռող լինել եւ ոչ չարախօս եւ ոչ գայթակղել։

ԶՈԳԱՆ երբեմն երկու եղբարք առ հայրն Պիմէն մինչդեռ նստէր անդ եւ հայրն Անուբ. հարցին զնա եւ ասեն. հայր, ունիմք ընդ ումեմն միաբանութիւն, եւ ոչ օգտիմք 'ի նմանէ եւ ոչ վնասիմք։ Եւ լուեալ ծերոյն լուռ եկաց, վասն զի ոչ խօսէր յորժամ նստէր Անուբ, զի մեծագոյն էր քան զնա։ Ասէ ցնա հայրն Անուբ. մեծ աշխատութիւն է. զի՞նչ պէտք են մարդոյ մերձաւորութիւն ունել ընդ ումեք յորժամ ոչ ինչ օգտեսցի։

ԱՍԱՑ[2] այլ ոմն ծեր՝ եթէ որպէս կարգ կրօնաւորաց պատուականագոյն է քան զաշխարհականաց, այնպէս

[1] Ասաց հայրն Դանիէլ՝ եթէ առաջ քան զգալը հօրն Արսէնիոսի առ հայրն մեր, ես էի ընդ հօրն Ագաթոնի. և քանզի սիրէր հայրն Ագաթոն զԱղեքսանդր հայրը, վասն այսորիկ զի էր հեզ և ճգնաւոր յոյժ։ Եւ յաւուր միոջ էին 'ի միասին ամենայն աշակերտք նորա 'ի գետն և լուային զվուշն. իսկ հայրն Աղեքսանդրէ լուանայր հանդարտութեամբ։ Ասէին ցծերն այլ եղբարքն. տեսանե՞ս, հայր, զի Աղեքսանդրէ լուանայ հեզզաբար։ Եւ կամեցաւ ծերն շինել զնոսա և ասէ. եղբայր Աղեքսանդրէ, բարւոք լուա զզօղունդ, զի վուշ է։ Եւ լուեալ զայս Աղեքսանդրէ տրտմեցաւ։ Իսկ ծերն կամեցաւ և զնա շինել և ասէ ցնա. գիտեմ ես զի բարւոք առնես դու. այլ զայս կամաւ ասացի ընդ քեզ, որպէս զի 'ի վերայ հնազանդութեան քո շինեսցին սիրտք այլոց եղբարց։

[2] Ասաց ծերն. զոր օրինակ գտաք կրօնաւորաց պատուական քան զաշ-

և օտար միայնակեցին արժան է լինել որպէս հայելի քան որ 'ի տեղւոջն բնակեալն են միայնակեացք ընդ ձեւով ։

Երթեալ՝ երբեմն օտար ոմն առ հայրն Սիղուանոս 'ի լեառն Սինեա, և ետես զնոսա զի գործէին, և ասաց ցծերն. մի՛ գործէք զկորստական կերակուրս զայս, վասն զի Մարիամ զբարի մասն ընկալաւ ։ Ասէ ծերն ցաշակերտն իւր Զաքարիա. տուր եղբօրդ գիրս և տար զդա 'ի տուն յորում ոչ ինչ կայցէ ։ Արդ յորժամ եղև իններորդ ժամ, հայէր ընդ ճանապարհն՝ ակն ունելով թէ յղեսցեն զնմանէ զի եկեալ ճաշակեսցէ ։ Ապա յարուցեալ եկն առ ծերն և ասէ ցնա. ո՞չ ճաշակեցին այսօր եղբարքդ, հայր ։ Եւ ասէ ցնա ծերն՝ այո, դու այր հոգևոր ես և ոչ ինչ ունիս պէտս կերակրոյ այսմ. իսկ մեք մարմնաւոր եմք, յաղագս այնորիկ կամիմք ճաշակել, վասն նորին և գործեմք. դու զբարի մասն ընտրեցեր և կարդաս զամենայն օրն, և կամիս մարմնաւո՞ր կերակուր ճաշակել ։ Եւ իբրև լուաւ, անկաւ առաջի նորա և ասէ. թողութիւն արա ինձ ։ Ասէ ցնա ծերն. ապաքէն պէտս ունի Մարիամ Մարթայի, վասն զի Մարթայիւ Մարիամ գովեցաւ ։

Եհարց՝ հայրն Եսայի ցհայրն Պիմէն վասն աղտեղի խորհրդոց ։ Ասէ ցնա հայրն Պիմէն. զոր օրինակ

խարհականս իցեն, այսպէս պարտ է զի օտար լիցի նոցա յամենայն կրօնից և ոչ միով իւիք նմանեսցի նոցա. զի հայելի և օրինակ լիցի բնակչաց տեղւոյն յամենայն գործս ։

¹ Գնացեալ եղբայր ոմն 'ի լեառն Սինեա առ հայրն Սիլուանէ, և ետես զեղբարսն զի աշխատէին 'ի գործ և ասէ ցնոսա. մի՛ գործէք զկորստական կերակուրն, զի Մարիամ մասն բարի ընտրեաց ։ Իբրև լուաւ զայս ծերն, ասէ ցԶաքարէ աշակերտ իւր 'ի ծածուկ. տար զեղբայրս զայս 'ի տուն քո՝ ուր ոչ գոյ ինչ, և տուր սմա գիրս՝ զի ընթերցցի, և մի՛ ոք տացէ զնա ։ Եւ նա արար այնպէս ։ Իբրև ինն ժամ եղև, նայէր եղբայրն 'ի դուռն միթէ գայցէ ոք և կոչեսցէ զնա զի կերիցէ. և իբրև ոչ եկն ոք 'ի կոչել զնա՝ քաղցեաւ և յարուցեալ եկն առ ծերն և ասէ. ո՞չ ճաշեցին ինչ եղբարքն այսօր, հայր ։ Ասէ ծերն. այո կերան ։ Եւ նա ասէ. և ընդէ՞ր ոչ կոչեցին և զիս ։ Ասէ ցնա ծերն. վասն այնորիկ զի դու մարդ հոգևոր ես և կորստական կերակրոյ պէտս ոչ ունիս. իսկ մեք կարիք կերակրոյ ունիմք, և սակս այնորիկ աշխատիմք. իսկ դու մասն բարի ընտրեցեր զի զօրս ողջոյն ընթերցցես, և մարմնոյ կերակրոյ պէտս ոչ ունիս ։ Իբրև լուաւ զայս եղբայրն, անկաւ առ ոտս ծերոյն և ասէ. թող ինձ, հայր ։ Իսկ ծերն ասէ, պիտոյ էր ընդ Մարեմայ և Մարթա ևս, զի 'ի Մարթայէ գովեցաւ Մարիամ ։

² Եհարց հայրն Եսայիաս ցհայրն Պիմէն յաղագս աղտեղի խորհրդոց ։ Եւ ասէ ցնա Պիմէն. իբրև զամանապանակ լի հանդերձիւք են խոր-

զարկղ լի հանդերձիւ թողու 'ի բազում ժամանակս և 'ի շատ ժամանակացն խանգարի, այսպէս և խորհուրդք եթէ ոչ կատարեսցուք մարմնապէս, զկնի բազում ժամանակաց խանգարի ։

ԵՀԱՐՑ՝ հայրն Յովսէփ ցհայրն Պիմէն վասն խորհրդոց չարաց և դատարկաց զորս ծնանի 'ի մարդ ։ Եւ ասէ ցնա ծերն. եթէ ոք առցէ օձս և կարիճս և ընկենուցու յաման ինչ և խնուցու՝ 'ի բազում ժամանակաց մեռանին ամենեքեան, այսպէս և չար խորհուրդք որ եթէ 'ի դիւաց բուսանին՝ համբերութեամբ ապականին ։

ԱՍԱՑ՝ ծերն. եթէ ոք բնակեսցէ 'ի տեղւոջ և պտուղ ոչ բերիցէ ըստ տեղւոյն, տեղին զնա հալածէ, վասն զի ոչ արար արժանի տեղւոյն զպտուղն ։

ԱՍԱՑ՝ ծեր. եթէ արասցէ ոք ինչ իրս զհետ երթալ կամաց իւրոց և ոչ իցէ ըստ այ, այլ անգիտութեամբ, պարտ է նմա յետ այսորիկ 'ի ճանապարհն այ գալ ։ Իսկ որ առնէ զիւր կամսն և ոչ ըստ այ և ոչ յայլմէ կամի լսել, այլ որպէս թէ ինքն գիտիցէ, այնպիսին աշխատութեամբ գայ 'ի ճանապարհն այ ։

ԱՍԷԻՆ եթէ հարքն ըստ խորհրդոց և ըստ մարդոյն խօսէին ։

ԵԿՆ՝ եղբայր ոմն առ հայրն Պիմէն և ասէ ցնա. հայր, սերմանեցից զանդաստանն իմ և արարից 'ի նմանէ սէր ։

հուրդք. եթէ թողուն զնա և ոչ հանեալ սփռեն, իւրեանք փտին և կորնչին կերեալ 'ի ցեցոյ. նոյնպէս և չար խորհուրդք. եթէ գործով ոչ կատարեսցին և կամ խորհեսցին միշտ, յայնժամ մաշեալ հնացին և անյայտ լինին ։

1 Զայս եհարց հայրն Յովսէփ ցհայրն Պիմէն ։ Իսկ նա ասէ. զոր օրինակ եթէ արգելցէ ոք զօձս և զկարիճս 'ի յաման ինչ և կալցէ ըղգուան, և յամել աւուրց սովին և սատակին ամենեքեան, նոյնպէս և չար խորհուրդք դիւական արգելեալք համբերութեամբ սատակին և անյայտ լինին ։

2 Ասաց ծերն. եթէ որ բնակեսցի 'ի տեղի ուրեմն և ոչ տանիցէ նա զգործ և զառաքինութիւն տեղւոյն այնորիկ, ինքն տեղին այն վարէ զնա 'ի նմանէ իբր զոչ արժանի տեղւոյն ։

3 Ասաց ծերն. եթէ ոք առնիցէ գործ ինչ կամօք իւրովք, և ոչ իցէ այն ածային, այլ անգիտութեամբ արարեալ, և յետոյ գայցէ այնպիսին 'ի ճանապարհս այ. իսկ որ պահէ միշտ զկամս իւր և ոչ զայ, և յայլմանէ ոչ կամիցի ուսանել զի ուղղեսցի, և զանձն իւր բաւական համարեսցի խրատիչ իւր, այնպիսին դժուարաւ գնայ 'ի շաւիղս այ ։

4 Եղբայր ոմն եկն առ հայրն Պիմէն և ասէ ցնա. սերմանեսցից, հայր, զարտորայն իմ և տացից 'ի նմանէ սէր բազմաց ։ Ասէ ցնա ծերն. բա-

Ասէ ցնա ծերն. բարի գործ գործես: Եւ չոգաւ յօժարութեամբ, յաւել 'ի սէրն: Եւ լուաւ հայրն Անուբ և ասէ ցՊիմէն. ո՞չ երկնչիս դու յայդ այնպէս խօսելով ընդ եղբօրն: Եւ լուռ եկաց ծերն: Եւ յետ երկուց աւուրց առաքեաց հայրն Պիմէն վասն եղբօրն, և ասէ ցնա լու 'ի լու հօրն Անուբայ. զի՞նչ ասացեր ցիս յեռանդ, զի միտք իմ այլուր էին: Եւ ասէ եղբայրն. ասացի եթէ սերմանեցից զանդաստանն իմ և արարից 'ի նմանէ սէր: Ասէ ցնա հայրն Պիմէն. ես այսպէս կարծեցի եթէ վասըն եղբօրն քո աշխարհականի խօսեցար ընդ իս. ապա եթէ դու ես որ առնես զայդ, չէ այդ գործ միայնակեցի: Եւ նորա լուեալ տրտմեցաւ և ասէ. այլ գործ իմ ոչ կայ, և ոչ գիտեմ բայց յայսմանէ, և ոչ կարեմ բայց եթէ սերմանեցից զանդաստանն իմ: Եւ այսպէս գնացեալ անկաւ առաջի նորա հայրն Անուբ և ասէ. թողութիւն արա ինձ: Ասէ ցնա հայրն Պիմէն. և ես 'ի սկզբանէ գիտէի եթէ ոչ է այդ գործ միայնակեցի, այլ ըստ խորհրդոց նորա խօսեցայ, և տուաւ նմա յօժարութիւն և յառաջեաց 'ի սէրն. իսկ այժմ չոգաւ տրտմեալ և զնոյն գործէ:

ԱՍԱՑ՝ հայրն Պիմէն. եթէ յանցանիցէ մարդ և ուրասցի և ասիցէ՝ թէ ոչ յանցեայ, մի ես յանդիմանեսցես զնա. ապա եթէ ոչ՝ հատանես զյօժարութի նորա. եթէ ասիցես ցնա՝ մի տրտմիր, եղբայր, այլ պահեա

բարւոք է, արասցես զայդ: Եւ գնացեալ նա աշխատէր յօժարութեամբ և տայր բազմաց անուն: Լուաւ զայս հայրն Անուբ և ասէ ցՊիմէն. մի՞ երկնչիս դու յայդ, զի զայս ասացեր առնել եղբօրն: Իսկ ծերն լռեաց. և զկնի երկուց աւուրց կոչեաց զեղբայրն զայն և ասէ ցնա առաջի հօրն Անուբի. զբանն զոր ասացեր ինձ յեռանդ ոչ կարացի իմանալ, զի այլ ուրեմն էին միտք իմ. արդ ասա ինձ զինչ ասացերն: Ասէ ցնա եղբայրն. զանդաստան իմ ասացի սերմանել և տալ սէր: Ասէ ցնա հայրն Պիմէն. ես կարծէի եթէ զաշխարհական եղբօրէ քումմէ ասէիր, ապա թէ դու կամիս առնել զայդ՝ մի արասցես, զի այդ ոչ գործ կրօնաւորի է: Իբրև լուաւ զայս եղբայրն՝ տրտմեցաւ և ասէ. և զինչ արարից, զի այլ ինչ ձեռագործ ոչ գիտեմ որով կեցից: Իբրև գնաց եղբայրն տրտմեալ, եդ ծունր հայրն Անուբ առաջի հօրն Պիմենի և ասէ. թող ինձ, զի մեղայ: Ասէ Պիմէն. և ես գիտէի յառաջագոյն զի ոչ էր այն գործ կրօնաւորի, այլ ես ըստ կամաց և կարի նորա ասացի, զի յաւելցի 'ի սէր. և արդ գնաց տրտմեալ և զնոյն առնէ:

: Ասաց հայրն Պիմէն. եթէ մեղիցէ մարդ և ուրասցի զմեղս և ասէ՝ թէ ոչ գործեցի, դու մի յանդիմաներ զնա, ապա թէ ոչ՝ հատանէր ըն-

Digitized by Google

զանձն քո զի մի մեղիցես, զարթուցանես զոգի նորա յապաշխարութիւն ։

ԱՆՑԱՆԷՐ՝ երբեմն հայրն Մակար ընդ Եգիպտոս հանդերձ այլովք եղբարբք, եւ լուաւ մանկան զի ասէր ցմայր իւր . մեծատունն ոմն սիրէ զիս, եւ ես ատեմ զնա . եւ աղքատ ոմն ատէ զիս, եւ ես սիրեմ զնա ։ Եւ լուեալ հօրն Մակարայ զարմացաւ ։ Եւ ասեն ցնա եղբարքն . զինչ է բանդ այդ, հայր ։ Ասէ ցնոսա ծերն . արդարեւ տէրն մեր մեծատուն է եւ սիրէ զմեզ, եւ մեք ոչ կամիմք լսել նմա . իսկ բանսարկու թշնամին աղքատ է եւ ատէ զմեզ, եւ մեք սիրեմք զպղծութիւն նորա ։

ՉՈԳԱՆ ոմանք առ հայրն Փիղիկա, ունէին եւ աշխարհականս ընդ իւրեանս, եւ աղաչեցին զծերն զի ասասցէ նոցա բան . իսկ ծերն լուռ կայր ։ Եւ 'ի բազում ժամս աղաչեալ զնա, ասէ ցնոսա . բա՞ն կամիք լսել ։ Ասեն ցնա՝ այո, հայր ։ Եւ ասէ ծերն . արդ ոչ եւս է բան . յայնժամ յորժամ եթէ հարցանէին եղբարքն ցծերսն՝ առնէին զոր ինչ ասէին, եւ ած առաջնորդէր նոցա որ եթէ զինչ խօսէին . իսկ այժմ զի հարցանեն եւ ոչ առնեն զոր լսենն, 'ի բաց առ ած զշնորհս 'ի ծերոցն, եւ ոչ գիտեն զինչ խօսին, վասն զի ոչ ոք է որ գործէ ։ Եւ լուեալ զայս եղբարցն յոգւոց հանին եւ ասեն . աղօթս արա 'ի վերայ մեր, հայր ։ Եւ օգտեալ 'ի նմանէ գնացին ։

ԵՒ երբեմն հայրն Սիսոյ 'ի լեռնէ հօրն Անտոնի յարտաքին լեռան Ովբայեղոս եւ բնակեցաւ անդ աւուրս սակաւս . էին անդ մեղիտիանոսք բնակեալ ։ Իսկ հայրն Այիու եւ հայրն Սերինոս եւ նոքա անդ էին բնակեալ յեղէգանն Արսենիոսու ։ Եւ իբրեւ լուանն եթէ եկ հայրըն Սիսոյ յարտաքին կողմ լերինն, ցանկացան տեսանել զնա եւ ասէին . զինչ գործեսցուք, զի են 'ի լերինն

յոյս նորա . իսկ թէ ասասցես՝ մի մեղանչեսցես, եղբայր, զգուշ լեր յայսմ հետէ, այսու յարուցանես զնա յապաշխարութիւն ։

ւ Գնացեալ երբեմն հայրն Մակար 'ի կողմանսն Եգիպտոսի ընդ եղբարս ոմանս, եւ լուաւ զձայն մանկան ինչ որ կոչէր զմայր իւր եւ ասէր . մայր, մեծատունն ոմն սիրէ զիս եւ ես ատեմ զնա, եւ աղքատ ոմն ատէ զիս եւ ես սիրեմ զնա ։ Իբրեւ լուաւ զայս հայրն Մակար, զարմացաւ յոյժ ։ Եւ ասեն ցնա . ընդէ՞ր զարմանաս ընդ այս, հայր ։ Ասէ ցնոսա ծերն . ստոյգ է բանք մանկանդ, եւ մեք մանուկ եմք մտօք . իսկ մեծատունն զոր ասէ մանուկն՝ է ճշմարիտ Տէրն մեր, զի սիրէ զմեզ եւ ոչ պահեմք զբանս նորա եւ ատեմք զնա . եւ աղքատ է թշնամին մեր դեւն եւ ատէ զմեզ, եւ մեք սիրեմք զպղծութիւն նորա ։

Digitized by Google

մեղիտիանոսք. գիտեմք զի ծերն ոչ մնասի 'ի նոցանէ, բայց մեք մի գուցէ կամիցիմք տեսանել զծերն և ան-կանիցիմք 'ի փորձութիւն հերձուածողացն։ Այլ ոչ չոգան տեսանել զծերն։

ԱՍԱՑ՝ ծեր. հոգի եթէ ունիցի բան, և գործ ոչ ու-նիցի, նման է ծառոյ՝ որ ունիցի տերև և պտուղ ոչ ու-նիցի. զոր օրինակ ծառ եթէ լի իցէ պտղով՝ պատուական է և տերև նորա, այնպէս յարմարի բան հոգւոյ՝ որ ու-նիցի բան և գործ։

ԱԿՆ երբեմն ծեր մեծ առ հայրն Անտոն և նստէր յիշավայրոյն, և տեսեալ զնա հօրն Անտոնի ասաց. բարեխօսք մեծ են, թէ այցելուցանէ՝ ոչ գիտեմ։ Պի-պեցան իրքն և կատարեցան բանք հօրն Անտոնի։

ԱՂԲԱՐՔ՝ ոմանք գնացին առ աբբայ Անտոնիոս պատ-մել վասն տեսլեան զոր տեսին, և ուսանել 'ի նմանէ ճշմարիտ իցէ թէ 'ի դիւաց. ունէին ընդ ինքեանս յա-ւանակ, որ և մեռաւ 'ի ճանապարհին։ Իսկ յորժամ եկին առ ծերն, յառաջեաց և ասէ ցնոսա. ո՞րպէս մե-ռաւ յաւանակն փոքրիկ 'ի ճանապարհին։ Ասեն ցնա. ուստի՞ գիտես, աբբայ։ Այլ ասէ ցնոսա. դևք ցուցին ինձ։ Ասեն ցնա. վասն այսորիկ եկաք հարցանել զքեզ. զի տեսանեմք տեսիլս և բազում անգամ ճշմարիտ լի-նի, մինչ խաբեալ իցեմք։ Այլ ելից նոցա զայս ծերն 'ի յաւանակէն զոր պատմեաց՝ եթէ 'ի դիւաց իցէ։

ԷՐ՝ ումն յանապատին որսորդ վայրենի կենդանեաց. եսես զաբբայ Անտոնիոս զի ուրախանայր ընդ եղբարս,

1 Ասաց ծերն՝ եթէ անձն որ բանք միայն ունիցի և գործ ոչ, նման իցէ նա ծառոյ որ ունիցի նա տերև և պտուղ ոչ բերիցէ. զի յորժամ պտղալից իցէ ծառն, տերևն յայնժամ գեղեցիկ իցէ. այսպէս և գործ ընդ բանի վայելուչ իցէ։

2 Գնացեալ երբեմն եղբարք ոմանք առ հայրն Անտոն հարցանել վասն ցնորից տեսլեանց, զի ուսցին 'ի նմանէ՝ եթէ հաւատարիմք են նոքա, եթէ 'ի դիւաց լինին։ Եւ իբրև եկին առ նա, յառաջեաց քան զնոսա ծերն և ասէ ցնոսա. մինչէս մեռաւ յաւանակ իշոյ ձերոյ 'ի ճանապարհին։ Իսկ նոքա ասեն. և դու ուստի՞ ծանեար, հայր։ Ասէ ցնոսա. դևք ցուցին ինձ։ Իսկ նոքա ասեն. և մեք զայդ եկաք հարցա-նել, զի բազում անգամ մինչ տեսանեմք յանուրջս, երբեմն լինի ճշմարտութիւն և երբեմն ոչ. և երկուցեալ մեր մի գուցէ գթիցեմք։ Եւ հաւատացոյց զնոսա ծերն առակաւ յաւանակին զոր ասաց՝ եթէ 'ի դիւաց է ամենայն ցնորք զկշռերայինք։

3 Էր ումն յանապատին այր որսորդ, և տեսեալ երբեմն զհայրն Ան-տոնիոս զի խնդայր ընդ եղբարսն, և գայթակղեցաւ 'ի նա վասն այնո-

Digitized by Google

և գայթակղեցաւ ։ Իսկ ծերն կամեցեալ լնուլ զնորա պակասութիւն վասն պիտոյից եղբարցն՝ զիր, ասէ, նետ յաղեղն քո և լարեա ։ Նա արար այնպէս ։ Ասէ ․ դարձեալ լարեա ։ Նա այլ ձգեաց ։ Նա ասէ ․ դարձեալ լարեա ։ Ասէ ցնա որսորդն ․ եթէ առաւել քան զչափն լարեմ և քարշեմ, բեկանի աղեղն ։ Ասէ ծերն ․ նոյնպէս և 'ի գործս Այ եթէ առաւել քան զչափն լարեմք զեղբարսն, վաղվաղակի հեղձնուն ․ պիտոյ է երբեմն երբեմն տալ նոցա թոյլ ։ Զայս լուեալ որսորդին և ծանուցեալ՝ օգտեալ բազում գնաց, և եղբարքն մխիթարեցան գնացեալ 'ի տեղիս իւրեանց ։

Ասաց՝ աբբայ Ղոնգինոս ցաբբայ Ղուկիոս ․ երբեմն երեք մտածութիւն ունէի ․ կամէի օտարանալ ։ Ասէ ծերն ․ եթէ ոչ ըմբռնես զլեզուդ, ոչ ես օտար յամենայն տեղիս ուր և իցես, և այժմ ըմբռնեա զլեզու քո՝ և օտար իցես ։ Ասէ դարձեալ ․ կամիմ պահել ։ Նա ասէ ծերն ․ ասաց Եսայի մարգարէ ․ եթէ կորացուցանես իբրև զանուր զպարանոց քո, և ոչ զայն կոչեցից պահս ընդունելի, այլ լուծ զխնձիրան անիրաւութեան և ըմբռնեա զչար մտածութիւն ։ Ասաց և զերրորդն ․ կամիմ փախչել 'ի մարդկանէ ։ Նա ասէ ծերն ․ եթէ յառաջագոյն ոչ ուղղիս ընդ մարդկան, և ոչ առանձինն կարես ուղղել ։

րին ։ Իսկ ծերն իմացեալ զայն կամեցաւ հաստատել զմիտս նորա, եթէ պարտ է 'ի ժամու ինչ զիջանել ընդ եղբարսն ։ Ասէ ցնա ․ դիցես զնետ քո յաղեղն քո և քարշեսցես զնա ։ Նա արար այնպէս ։ Նա ասէ ծերն ․ դարձեալ քարշեսցես ։ Նա արար ։ Նա ասէ ․ երրորդ անգամ քարշեսցես առաւել քան զչափն ։ Ասէ այրն ․ եթէ աւելի քան զչափն քարշեցից, խորտակի աղեղն ։ Ասէ ցնա ծերն ․ այսպէս իցէ, եղբայր, և գործն Այ ․ թէ առաւել քան զչափն նեղեսցուք զեղբարսն, փոյթ լուծանին ․ այլ պարտ է երբեմն զիջանել ընդ նոսա ։ Զայս լուեալ որսորդին շահեցաւ յոյժ և գնաց 'ի տուն իւր, և եղբարքն լցան ուրախութեամբ և գոհացան զԱյ ։

։ Եհարց հայրն Ղոնգինոս ցհայրն Լուկիոս վասն երից խորհրդոց և ասէ ցնա ․ կամիմ օտարանալ ։ Ասէ ցնա ծերն ․ եթէ ոչ սանձեսցես զլեզու և զգուշասցես մտաց, ոչ կարես օտար լինել ուր և գնասցես ․ իսկ եթէ սանձես զլեզու, ուր և իցես՝ օտար ես ։ Դարձեալ ասէ ․ կամիմ պահել ։ Ասէ ծերն ․ Եսայի մարգարէն ասէ ․ եթէ շիջեսցես ըզպարանոց քո իբրև զանիւ, և ոչ այնպէս կոչեսցի պահս ընդունելի, եթէ ոչ պահեսցես զխորհուրդ քո ․ այլ եթէ պահեսցես զմիտս քո 'ի չար խորհրդոց, աստուածային պահք է քեզ ։ Ասաց ցնա զերրորդն ․ կամիմ, ասէ, փախչել 'ի մարդկանէ ։ Պատասխանի ետ ծերն ․ եթէ ոչ նախ ուղղեսցես զառաքինութիւն ընդ մարդկան, և ոչ միայն կարես ուղղել զնոսա ։

Digitized by Google

ՀԱՐՑԱՔՆՆԵՑԱՒ¹ աբբայն Միոս յումեմնէ զինուորէ. ընդունի՞ այժմ ապաշխարութիւն ած: Հայեցաւ 'ի նա և ասէ. ասա ցիս, որդեակ. եթէ պատառի քղամիդ քո, ընկենուս զնա 'ի բաց: Ասէ՝ ոչ, այլ կարեմ զնա և կնքեմ: Ասէ ցնա ծերն. եթէ դու զզգեստդ քո խնայես, ած զձեռագործս իւր ո՞չ խնայէ:

ԵԿՆ² եղբայր ումն առ աբբայ Պիմէն և ասէ. Հայր, բազում մտածութիւնք չարչարիմ և ընկղմիմ 'ի նոցանէ: Եւ ած զնա ծերն առաջի օդոյն և ասէ. մեկնեա զգոգդ և ըմբռնեա զհողմս: Եւ նա ասէ. ոչ եմ կարող առնել զայս: Ասէ ծերն. եթէ զայդ անկարանաս, և ոչ զմտածութիւնն արգելուլ կարես որ գայ, այլ քո կարողութիւնն եկեալ 'ի վերայ նոցա:

ՀԱՐՑԱՒ³ աբբայ Յովսէփ ցաբբայ Պիմէն և ասէ. որպէս պարտ է պահել: Ասէ ցնա հայրն Պիմէն. ես կամիմ կերակրիլ սակաւ սակաւ յամենայն աւուր, զի մի երբէք յագեցայց: Ասէ ցնա աբբայն Յովսէփ. և յորժամ մանուկն էիր ո՞չ պահէիր երկիցս երկիցս, աբբայ: Ասէ ծերն. երեք և չորք և շաբաթ. զայս ամենայն փորձեցին հարքն իբրև զկարողս, և գտին եթէ բարւոք է

¹ Հարցեալ եղև երբեմն հայրն Միոս 'ի զինուորէ ումեմնէ՝ եթէ ստուգապէս գոյ ապաշխարութիւն և ընդունի՞ ած զդարձեալն: Իսկ ծերն 'ի ձեռն բազում առակաց և օրինակաց հաւաստեցոյց զնա եթէ ճշմարտապէս գոյ ապաշխարութիւն: Եւ զայս ևս ասէ ցնա. ասա ինձ, որդեակ. եթէ պատառեսցի քղամիդ քո, 'ի բաց ձգե՞ս դու զնա: Եւ նա ասէ. ոչ ձգեմ, այլ կարեցից և զգեցայց: Իսկ ծերն ասէ. արդ եթէ խնայես դու 'ի հանդերձ քո, ո՞չ ևս առաւել խնայեսցէ տէր 'ի ստեղծուածս իւր՝ որ վասն ամենայն մեղաւորաց յորդի իւր սիրելի ոչ խնայեաց. և արդ նովաւ պարգևեսցէ մեզ ապաշխարութիւն և թողութիւն մեղաց:

² Եղբայր ումն եկն առ հայրն Պիմէն և ասէ ցնա. բազում չար խորհուրդք ունիմ և նեղեն զիս, հայր: Իսկ ծերն եհան զնա արտաքոյ և ասէ ցնա. բաց զծոց քո և ժողովեա և կալ զհողմանս զայսոսիկ: Իսկ նա ասէ. ոչ կարող եմ առնել զայդ: Ասէ ծերն. որպէս զհողմանս կալնուլ ոչ կարես, նոյնպէս և ոչ զխորհուրդս արգելուլ կարող ես զի մի եկեսցեն 'ի միտ. այլ անտես առնել պարտ է զնոսա:

³ Եհարց հայրն Յովսէփ ցհայրն Պիմէն և ասէ ցնա. որպէս պարտ է պահել, հայր: Ասէ հայրն Պիմէն. ես զայս ասեմ պահս՝ զի հանապազօր կերիցէ սակաւ և մի յագեսցի: Ասէ հայրն Յովսէփ. դու մինչ մանուկ էիր ընդէ՞ր պահէիր երկաւուրս: Ասէ հայրն Պիմէն. թո՛յլ տուր, եղբայր, և չորեքօրեայ պահեցի, և մի 'ի շաբաթուն կերակուր ճաշակեցի. զայս ամենայն փորձեցին հարքն և գտին զի ճշմարտապէս

Digitized by Google

ամենայն աւուր կերակրել առ սակաւիկ սակաւիկ, և ետուն մեզ զճանապարհն արքայութե զի փրկեցի իցէ։

ԵՂԵՒ երբեմն արքեպիսկոպոս քաղաքին սրբոյ Ք̃ի Ա̃յ մերոյ Երուսաղէմի Ամովս անուն։ Եւ էր այս Ամովս ըստ ներգործութեն սատանայի ատեցող կրօնաւորաց. որ և ինքն զսուրբ սքեմն զգեցեալ էր, որում գտաւ անարժան։ Ըստ ներողութեն Ա̃յ անկաւ ոմն 'ի կրօնաւորացն 'ի փորձանս. և նա 'ի վերայ ամենայնի հանեալ 'ի կրօնաւորէն զհրեշտակական զգեստուցն զձև՝ ագոյց խազի, և հանեալ զնա այսու կերպարանօքս 'ի փողոցս քաղաքին։ Եւ յայնմ գիշերի երևեցաւ նմա սուրբն Յովհաննէս մկրտիչ և յանդիմանեաց զնա ասելով. այսպէս արարեր, անարգեցեր զզգեստն իմ. արդ իրաւունս ունիմ ընդ քեզ յաւուրն դատաստանի 'ի զարհուրելի ատենանն Ք̃ի։ Եւ նա զարթուցեալ զդողմնի հարաւ. եկն և կանգնեաց տաճար արտաքոյ քաղաքին յանուն սրբոյն Յովհաննու մկրտչին յանդիման սրբոյն Ստեփանոսի, որ է ընդդէմ արևելից։ Եւ յորժամ կատարեաց զտաճարն և պաճուճեաց զնա ամենայնիւ, աղաչէր հանդիպել թողութեան մեղացն՝ որով անարգեաց զսուրբ սքեմն՝ բազում հառաչանօք և պահօք և հսկմամբ։ Եւ երևեցաւ նմա երկրորդ անգամ սուրբն Յովհաննէս մկրտիչ և ասէ. Ճշմարտութե̃ ասեմ քեզ. եթէ հինգ տաճար այլ առնես աւանել քան զսա զոր արարեր ինձ, ոչ թողցի մեղքն քո զոր գործեցեր առ իս, այլ դատաստան առից ընդ քեզ 'ի զարհուրելի յօրն յայն։ Եւ առժամայն 'ի բաց եկաց 'ի նմանէ։ Եկն Ամովս 'ի մարդկային կենցաղոյս կատարումն. և որք գործոյս գիտողք էին յայնժամ՝ ա̃ծազդեաց հարցն պատմեցին, և ընթերցին զանուն նորա 'ի սուրբ պատարագէն 'ի Ք̃ի ա̃յ մերոյ քաղաքին։

ԵՂԲԱՅՐ՝ ոմն եհարց ցաբբայ Պիմէն և ասէ. ասա ինձ վասն փորձանաց մտածութեց։ Եւ ասէ ցնա ծերն. յայս գործս, որդեակ, պարտ է առն ունել զհաւրն 'ի

պահելն որ ըստ օրէ կերակրելն լաւագոյն է, և տանի զմեզ ընդ հեշտ և արքունի շաւիղսն։

։ Եղբայր ոմն գնացեալ առ հայրն Պիմէն և ասէ. զինչ արարից զչար խորհուրդս իմ, հայր, որ նեղեն զիս։ Ասէ ցնա ծերն. արասցես դու իբրև զայր մի որ նստիցէ 'ի մէջ հրոյ և ջրոյ. և յորժամ գայցէ ձա-

Digitized by Google

ձախակողմն և անօթանն զջուրն. եթէ բորբոքի հուրն, տացէ յամանոյն զջուրն և արկեսցէ 'ի նմա, և վաղվաղակի շիջանի. Նոյնպէս և մեք ընկեսցուք զմեղ առաջի Քրիստոսի *:

ԵՂԲԱՅՐ[1] ոմն եհարց ցաբբայ Սիսոյ և ասէ. զինչ արարից, հայր, զի անկայ: Եւ ասէ ցնա ծերն. արի դարձեալ: Եւ ասէ եղբայրն. մինչև յերբ: Ասէ ծերն. մինչև ընջեսցիս կամ 'ի բարին կամ 'ի կործանումն, յորում գտանի մարդ՝ 'ի նոյնն և գնայ:

ԵՀԱՐՑ[2] աբբայ Յոհաննէս ցաբբայ Սիսոյ և ասէ. մինչև ցքանի՞ ամս կարօտի մարդ կտրել զչարչարանս: Ասէ ցնա ծերն. զայս կամիս ուսանել: Ասէ աբբայ Յոհաննէս. այո: Ասէ ծերն. յորժամ եկեսցէ քեզ չարչարանք, հատ զնա 'ի քէն, զի մի երբէք յամեսցէ 'ի քեզ և 'ի կորուստ առաքեսցէ զքեզ: Ասէ դարձեալ. վայ մարդոյ՝ որոյ անունն իւր աւելի է քան զգործն:

ԱՍԷ ծերն. զգոյշ լեր զի եկեսցէ խղճումն մտաց առ քեզ դատաստան առնել, և զարշել 'ի չար մտածութենէ, և 'ի նահատակութենէն պսակ յօրինել:

ԱՍԷ[3] ծեր ոմն. առաւել զամբարտաւանութիւն մանկանց, զի գործեն և վարձս ոչ առնուն, նայելն 'ի մարդ-

խակողմեան հուրն 'ի կիզել զնա, առեալ յաջոյ կողմանէն զջուրն արկանէ և շիջուցանէ զնա. և հուրն այն է հուր ցանկութեան առաջից, զոր սերմանէ 'ի սրտի թշնամին, և ջուր է ողորմութեան այ շիջուցանող նր:

* Համառօտեալ յօրինակի Պատմ. դար- քեալ 'ի Հին Եւրոպականէ. Հարցաւ ծերն. մինչև սորա զայց 'ի մեղաց: Ասէ. զիր զքեզ 'ի մէջ ջրոյ և հրոյ, և առ յաջակողմանէն զջուրն՝ որ է զղջումն և ողորմութիւնն այ, և արկ 'ի վերայ հրոյդ՝ որ է ցանկութիւն:

1 Եղբայր ոմն եհարց ցհայրն Սիսոյի և ասէ. զինչ արարից, հայր, զի անկայ 'ի մեղս: Ասէ ցնա ծերն. դարձեալ արի: Ասէ եղբայրն. յարեայ և դարձեալ անկայ: Ասէ ծերն. և դարձեալ արի, և եթէ բիւր անգամ անկանիս, բիւր անգամ դարձեալ յարիցես մինչև 'ի մահ. քանզի յորոյ վերայ գտցի մարդ յելսն՝ յայն կարգեսցի: Ասէ եղբայրն. և զինչ արարից զախտս իմ: Ասէ ծերն. իւրաքանչիւր ոք 'ի մէնջ փորձի յիւրում ցանկութեան սրտի:

2 Եհարց հայրն Յովսէփ ցհայրն Սիսոյի և ասէ. 'ի քանի՞ ժամանակս պարտ է մարդոյ զի հատցէ զախտս: Ասէ ցնա ծերն. զմի, ժամն կամիս ուսանել: Ասէ Յովսէփ. այո, հայր: Ասէ ծերն. յորում ժամու և եկեսցէ 'ի վերայ քո ախտք ինչ, վաղվաղակի հատ ընկեա զնա 'ի քէն:

3 Ասաց ծեր ոմն. ծերքն առէին զմանկունս ամբարտաւանս և անամօթս, որք աշխատին առաքինութեան և վարձս ոչ առնուն. վասն զի

կայլին փառս ։ Այլ աւաղ ցնա այլ ծեր զիմաստոյն քան զնա ․ ես գեղեցիկ զայս ընդունիմ՝ բերել մանկան զան-փառութիւն եւ ոչ զհեղգութիւն ․ քանզի աչա 'ի սնափառութենէն բռնադատի ամենայնիւ ժուժկալել եւ հսկել եւ մերկանալ, եւ զսէրն շինէ եւ զկիրսն բառնայ յաղագս գովութեան ։ Յորժամ քաղաքավարի այսպէս, եկեալ շնորհն ծնյ աւաղէ ցնա ․ ընդէր ոչ գործես վասն իմ զոր վասն մարդկան ։ Յայնժամ առաջ հաւատարմագէս զգուշանայ եւ որոշի 'ի մարդկայնոյն փառաց եւ մնայ առ ինձ ։ Այլ որք լուանն ասեն ․ այսպէս է եւ նոյն ինքն *։

Ո՛վ՝ ամն հայր մխիթարանակեցաց՝ գեղեցիկ վարուք եւ յամենայն ձգնութիւս կատարեալ, մանաւանդ 'ի նուաստութեան, սիրով եւ դաղարման, էր եւ ողորմած եւ անյիշաչար, եւ 'ի սէր ձգէր զամենայն ոք ։ Սա ինքն խնդրէր յինն յամենայն ժամ եւ ասէր ․ տեսանեմ զիս մեղաւոր, սակայն 'ի գթութիւն քո յուսամ եւ ապաւինիմ, եւ կեցից ըստ ողորմութեան քում ․ վասն որոյ աղաչեմ զողորմած քաղցրաբարութիւն քո, տէր, մի 'ի բացէ առներ զիս 'ի ճանապարհաց քոց այժմ եւ առ յապա յաւիտեանս,

մարդահաճոյք են ։ Աւաղ ցնա այլ ամն իմաստուն ծեր ․ ես յոյժ հաճեալ եմ ընդ նմա, քանզի լաւագոյն է մանկանն սնափառ լինել, քան թէ ծոյլ եւ հեղգ ․ քանզի յորժամ սիրեսցէ զսնափառութիւն, յայնժամ ակամայ հարկ է զի լինի սիրող պահոց եւ լինի հսկող եւ մերկ եւ սիրելի այլոց եւ ողորմած եւ համբերող վշտաց եւ նեղութեանց վասն գովութեան մարդկան ․ եւ իբրեւ սովորեսցի զայսպիսի ձգնութիւնս եւ յամեսցի 'ի նմա, յետոյ գայ առ նա շնորհքն ծնյ եւ աւաղէ ցնա ․ ընդէր վասն իմ ոչ կրես զայսքան վիշտս, այլ վասն մարդկան ․ եւ զգեցեալ հնազանդի նմա մշակն առաքինութեանց, եւ արհամարհէ զփառս եւ զգովութիւն մարդկան, եւ մնայ ողորմութեան ծնյ ։ Իսկ իբրեւ լուան զայսոսիկ ծերքն՝ ասեն ․ ճշմարիտ այդ այդպէս իցէ, եւ զի հեղգն մերկութեան պատճառս ոչ ունի, որպէս աչա ունի սնափառն ։

* Երկու օրինակ հին թարգմանութեան այսպէս համառօտէ ․ Աւաղ ծեր ․ լաւ է մանկան ժիր լինել եւ սնափառ, քան ծոյլ եւ խոնարհ ․ քանզի սա վարեալ պահոց եւ աղօթից ․ զայս երբեք յինքն եւ աւաղէ՝ ընդէր ոչ առնեմ զայս վասն ծնյ զոր առնեմ վասն մարդկան ։

։ Ծեր ամն էր սուրբ եւ հաճոյ ծնյ, որ էր հայր հասարակաց վանից, սա ամենայն գործովք բարեաց զարդարեալ էր եւ լի ամենայն առաքինութեամբ եւ գթով, եւ ես առաւել խոնարհութեամբ եւ սիրով եւ ողորմած առ ամենեսեան ։ Սա աղաչէր զծն եւ ասէր միշտ ․ տէր, գիտեմ զի մեղաւոր եմ, այլ ունիմ յոյս յողորմութեան քո զի կեցուսցես զիս ․ եւ արդ աղաչեմ զքաղցրութիւն բարերարութեանս քո, զի մի բաժանեսցես զիս յընկերաց եւ յեղբարց իմոց, ոչ 'ի սոյս կեանս եւ ոչ 'ի հանդերձելումն, այլ

Digitized by Google

այլ ընդ իս և զայլս արժանաւորես արքայութեն քում ըստ բաղձում գթութեն քում։ Համապազ ինքն ձգնէր զազօթս զայս առնելով, և մարդասէրն Ա̄ծ կատարէր զհայցուածս նորա ըստ այսմ օրինակի։ Յաւուր միում գնայլին կատարել զյիշատակս սրբոցն յայլ վանս, և ընդ այլ վանորէիցն կոչէին և զայս հայրս, և նա հրաժարէր։ Զայն եղև 'ի տեսլեանն առ նա. գնա, այլ յառաջագոյն յղեա զաշակերտս քո, և յետոյ գնա դու միայն։ Իսկ մեծատաւնն որ վասն մեր աղքատացաւ՝ Ք̄ս ճշմարիտ Ա̄ծն մեր՝ և յամենայնի եղև իբրև զամենայն զի զամենեսեան կեցուսցէ, զգեցաւ զզեստ տառապելոց կերպարանաց հիւանդի, և 'ի մէջ ճանապարհին նըստեալ կայր։ Եկին աշակերտքն նորա ըստ հրամանի հօրըն, տեսանէին զնա զի հարկանէր զկուրծսն. հարցանէին զպատճառն, և նա ասէ. հիւանդ եմ, և ճանապարհակիցք իմ եթողին զիս մինչև աստ, և չունիմ զոք որ բառնայ զիս։ Եւ աշակերտքն հօրն ասացին ցնա. զի՞նչ ունիմք առնել քեզ, զի մեք հետիոտս գնամք։ Եւ թողին զնա և գնացին։ Յետ փոքու եկն և հայրն, գըտեալ զամոլեալն զի հեծէր, ուսեալ և զպատճառն՝ ասէ. չեկի՞ն նախ քան զիս կրօնաւորք և գտին զքեզ։ Եւ նա ասէ. այո, այլ լուան զպատճառն և գնացին աս-

միշտ 'ի միասին արժանի արասցես զմեզ յարքայութեն քո անբաւ ողորմութ̄ քով։ Զայսպիսի աղօթէր անդադար ծերն։ Իսկ Ա̄ծ որ և միշտ է յերկխւղածս իւր, հաւատացոյց զնա աղաչէս. քանզի եղև որ զի կատարեսցին զտօն սրբոց 'ի վանս ինչ՝ որ ոչ էր հեռի յոյժ 'ի նոցանէ. և հրաւիրեցին անդ 'ի տօնն զծերն և զաշակերտսն իւր, այլ նա ոչ կամեցաւ գնալ։ Իսկ 'ի գիշերին յայտնեալ ասէ ցնա տէր 'ի տեսլեանն. գնա 'ի տօնն, այլ յառաջ գնասցեն աշակերտքն քո՝ և դու յետոյ գնասցես միայն։ Արդ այն որ վասն մեր աղքատացաւ Ք̄ս և զամենայն վասն մեր յանձն էառ զի փրկեսցէ զմեզ, աղքատի և հիւանդի կերպարանաւ անկեալ դնիւր 'ի մէջ ճանապարհին վշտացեալ։ Իբրև եկին անդ աշակերտք ծերոյն և գտին զնա անդ ցաւագնեալ, և ասեն ցնա. զի՞ է քեզ և կամ զի՞նչ ցաւագնիս։ Իսկ տէրն ասէ ցնոսա. տկար և հիւանդ եմ, և նստեալ 'ի գրաստի գնայի 'ի քաղաքն, և ընկեց զիս գրաստն և ինքն փախեաւ, և ես աստ մնացի կիսամեռ։ Իսկ նոքա ասեն. և արդ զի՞նչ արասցուք քեզ, ծեր, զի և մեք հետևակք եմք։ Եւ թողին զնա և գնացին։ Եւ զկնի փոքու ինչ եկն անդ և ծերն հայր նոցա, և եգիտ զնա անդ անկեալ վշտացեալ. և իբրև ուսաւ զպատճառն, եհարց ցհիւանդն և ասէ. եղբարք ոմանք ո՞չ անցին ընդ այս առ քեզ յառաջ և ո՞չ տեսին զքեզ այսպէս։ Ասէ տկարն. այո անցին, և իբրև լուան զբանս իմ ասեն ցիս. և մեք եւս անգրաստք եմք

Digitized by Google

լով. մեք հետեւոտս շրջիմք, զինչ արասցուք քեզ: Ասէ ցնա աբբայն. կարո՞ղ ես փոքր փոքր ոտնաքայլել եւ գնասցուք: Եւ նա ասէ. ոչ կարեմ: Եւ ասէ ցնա ծերն. առ՛ եկ բառնամ զքեզ, եւ օգնէ ած, եւ գնասցուք: Եւ նա ասէ. որպէս կարես դու զիս այսչափ ամբառնալ, այլ գնա աղօթս արա 'ի վերայ իմ: Ասէ ծերն. մի լիցի եթէ ես թողից աստ զքեզ այսպէս տկարացեալ. այլ եկ 'ի վերայ վզիդ եւ ամբառնամ զքեզ 'ի վերայ իմ, եւ յընթացս մեր օգնէ Տր: Եւ վերացուցեալ զնա շալակեաց: Իսկ նա այսպէս երեւեցաւ եթէ մարմնոյ ծանրութիւն ունի, յետ այնորիկ թեթեւ, եւ որչափ յառաջէին՝ թեթեւագոյն եւս լինէր: Ընթանայր ծերն եւ հիանայր ոչ գիտելով եթէ զայն որ զամենայն կրէ, 'ի վերայ ուսոց իւրոց ամբառնայր: Եւ անդէն յանկարծակի անյայտ եղեւ զոր բարձեալ կրէր, եւ ասէ ցաբբայն. վասն աղաչելոյն զիս 'ի վերայ աշակերտացն քոց ընդ քեզ արժանանալ արքայութեանն երկնից՝ տես այլ է չափ քո եւ այլ նոցա. արասցես զաւ նոցին 'ի վարս քո եւ 'ի վաստակ, եւ կատարին խնդրուածքն. քանզի ուղիղ դատաւոր եմ, իւրաքանչիւր տացից ըստ գործոց նոցա:

Ի ԹԵՍԱՂՈՆԻԿԷ էր արքեպիսկոպոս՝ անուն նորա Թէաղելէոս, որ ոչ երկնչէր յայ եւ ոչ 'ի պատրաստեալ փոխարինէն: Ոտնեաց զճշմարիտ համբաւ քրիստոնէութեան եւ զքահանայական աստիճանն թշուառացեալն.

զինչ արասցուք քեզ: Ասէ ցնա ծերն. կարող ես գնալ առ սակաւ սակաւ, զի գնասցուք ես եւ դու: Եւ հիւանդն ասէ. բնաւ եւ շարժել ոչ զօրեմ: Իսկ ծերն ասէ. եկ զի բարձից զքեզ յուս իմ եւ գնասցուք: Իսկ նա ասէ. ոչ ես կարող դու տանել զայդ՝ ծեր գոլով յայդչափ հեռի ուղի. այլ գնասցես դու եւ աղօթեա վասն իմ: Ասէ ծերն. քաւ լիցի, ոչ գնացից եւ ոչ թողից զքեզ: Եւ առեալ եդ զնա 'ի վերայ վզին եւ մտեալ 'ի ներքոյ շալակեաց զնա: Եւ իբրեւ եբարձ՝ նախ զգայր իբր թէ ունի ծանրութիւն մարդոյ, եւ որչափ գնայր՝ թեթեւանայր նա. իսկ յետոյ բնաւ թեթեւացաւ, մինչեւ զարմանալ ծերոյն: Եւ յանկարծակի վերացաւ հիւանդաց բժիշկն Քս, եւ իբրեւ լոյս ելանէր յերկինս եւ բարբառ ձայնիւ ասէր ցծերն. ահա մինչ աղաչես զիս վասն աշակերտաց քոց զի ընդ քեզ եղիցին յարքայութեան երկնից. այլ զի տեսցես զի այլ է չափ քո եւ այլ իցէ չափ նոցին. եւ թէ կամիս զնոսա լինել ընդ քեզ, ուսո զնոսա նմանել քեզ եւ գործոց քոց. զայս թէ ոչ դատաւոր արդար եմ ես, հատուցանեմ իւրաքանչիւր ըստ գործոց: Ահա տեսէք, որդեակ, զի աղօթք արդարոյն այն սրբոյ ծերոյն ոչ կարացին արժանաւորել զնոսա աւելի քան զչափն իւրեանց, յորժամ նոքա ոչ եին նման աղօթից ծերոյն:

Digitized by Google

զսուրբ և զմիաբանական եղբայրութիւն ուրացաւ և կաց երկիր պագանէր ։ Որ ժողովեալ եպիսկոպոսացն, կակածեալ որոշեցին զնա յաստիճանէն ։ Իսկ նա պատրանօք դարձեալ կեղծաւորէր ժառանգել, և ըստ Սողոմոնի որ ասէ՝ Թէ ոսկւոյ ըմ ոք լսէ, հրաման առ 'ի պատրիարգէն գալ 'ի քաղաք իւր պատրանօք արդարացեալն. այլ ա՟ծ ոչ անտես արար զսուրբ եկեղեցի իւր ։ Ի մի յաւուրց մինչդեռ պատրաստէր ճանապարհորդել 'ի քաղաք իւր՝ բռնադատեալ 'ի բնութէ որպէս 'ի բնական կարիս՝ գնաց արտաքս, և 'ի յամել 'ի նոյն իբրև յերկուս պահս՝ եկին ոմանք յիւրոցն գիտել զպատճառն, գտին զթշուառացեալն գլխակոր անկեալ 'ի խողովակն՝ զոտսն 'ի վեր ունելով. կանգնեցին և գտին ընդ մարմնոյն մեռեալ զյաւիտենական մահն ։

Ի ՓՌՈՒՆԻԿԷ 'ի Լիբանիոս քաղաքն այր ոմն քարոզ քաղաքին՝ անուն նորա Պաւլոս՝ յամենայն Թէատրոնս զսրբուհի և զմեծա կոյսն զտիրամայրն զա՟ծածինն հրապարակաւ նախատէր ։ Երևեցաւ նմա ա՟ծածինն և ասէր. զի՞նչ արարի քեզ որ յայդպիսի ժողովս նախատես զիս ։ Իսկ նա յարեաւ՝ ոչ ինչ անձին իւրում ուղղութի ստացեալ, այլ ևս առաւել հայհոյէր ։ Նոյնպէս երիցս երևեալ նմա ասէր և զգաստացուցանէր ։ Իսկ զի ոչ ուղղեցաւ, այլ առաւելապէս հայհոյէր, յաւուր միում 'ի միջօրեայ ժամու երևեալ նմա ոչ ինչ ասաց, բայց միով 'ի մատանցն տեառնագրեաց զերկուս ձեռսն և զոտսն, և մնաց իբրև զկոճղ անկեալ ։ Յետ այսորիկ թշուառացեալն խօսուն եղև և ասաց ամենեցուն որ ընդ իւրն էին՝ թէ որպէս ընտրեաց փոխանակ պատուելոյ զհայհոյելն, և այժմ եգիտ զմարդասիրութի ։

Ի ԳՆԱԼՆ ' Անտոնի 'ի լեառն՝ Նիտրա առ Ամոն՝ ասէ ցնա. բազմանան եղբարք շնորհօքն ա՟յ, հրամայեա զչափ միջոցաց սենեկացն ։ Իսկ կերան հաց զինն ժամուն, և

1 Գնացեալ երբեմն հայրն Անտոն 'ի լեառն Նիտրիոյ առ հայրն Ամմոնաս, և ողջունեալ զմիմեանս խօսեցան ընդ իրեարս բազում ժամս ։ Իսկ ապա ասէ հայրն Ամմոնաս ցհայրն Անտոնիոս. որովհետև շնորհօքն ա՟յ և աղօթիւք ձեր բազմացան եղբարքս, և կամին ոմանք շինել սենեակս 'ի բացի վա՟ հանգստութեանն, որչափ հրամայես 'ի միջի ունել երկայնութեան ճանապարհի սենեկացն 'ի միմեանց ։ Ասէ ցնա հայրն Անտոն. կերիցուք հաց զինն ժամու, և ելցուք շրջեսցուք ընդ անապատ

Digitized by Google

յարեան գնացին մինչև 'ի մուտս արևուն, և կանգնեցին խաչ և ասեն. այսչափ լիցի, զի որ կամիցի երթալ առ եղբարսն, կերիցէ հաց 'ի յինն ժամն, և ապա գնասցէ: Այս էր երկոտասան վտաւանդ:

ՀԱՅՐՆ Ղովտ հարցեալ եղև 'ի Պետրոսէ' թէ կամիմ առ միաբանակեացս երթալ, որպէս կացից: Այս ասէ. որպէս և յառաջնումն աւուրն որ մտես, մինչև ցկատարածն այնպէս կացցես, պանդուխտ և խոնարհ և լուռ, և մի ևս առնուցես համարձակութիւն:

ՀԱՐՑԵԱԼ եղև հայրն Աղաթոն' եթէ որ մեծ է, աշխատել զմարմինն' թէ պահել զմիտս անշփոթս: Այս նա ասէ. մարդ նման է ծառոյ, և վաստակ մարմնոյ տերև նորա, և պահել զմիտս պտուղ է, և ամենայն դարմանն տնկոյն վասն պտղոյն է. իսկ ամենայն ծառ որ ոչ

այս և ընտրեսցուք զանեղիս տանցն: Եւ իբրև կերան, ելին և շրջեցան յանապատ մինչև ցմտանել արևուն: Եւ ասէ հայրն Անտոն. արասցուք աղօթս և կանգնեսցուք աստ խաչս, զի աստ շինեսցեն որք կամիցին շինել. զի յորժամ կամիցին գնալ առ միմեանս, իւրաքանչիւրն առցէ առանձին 'ի սեննակ իւր կերակուր զինն ժամու, և ապա գնասցեն առ միմեանս, զի դիւրաւ շրջեսցին և անշփոթ մնասցեն: Իսկ 'ի մէջ ուղին զոր ընտրեաց, ունէր հեռի 'ի միմեանց իբրև երկոտասան վտաւանս:

: Ասաց հայրն Պետրէ ցհայրն Ղովտ' եթէ էի երբեմն 'ի սեննակ հօրն Աղաթոնի, և եկն առ նա եղբայր մի և ասէ ցնա. հայր, կամիմ ես զի բնակեցայց ընդ եղբարս, այլ ասա ինձ թէ որպէս կացից ընդ նոսա: Ասէ ցնա ծերն. որպէս յառաջին օրն որ մտանես առ նոսա, այնպէս պահեսցես զքեզ օտար և խոնարհ զամենայն աւուրս կենաց քոց, և մի լիցի քեզ համարձակութիւն: Ասէ ցնա հայրն Մակարի. և զինչ լինիցի համարձակութիւն: Ասէ Աղաթոն. նման է համարձակութիւն կիզողական խորշակի. որ յորժամ գայցէ' ամենեքեան փախիցեն 'ի նմանէ, որ և զպտուղս խանձրէ զծառոց և զամենայն երկրի: Ասէ ցնա հայրն Մակարի. այդպիսի չար ինչ է համարձակութիւն: Պատասխանի ետ հայրն Աղաթոն և ասէ. ոչ ինչ է յամենայն ախտս չար քան զլրբութիւն, քանզի ծնող է ամենայն չարեաց. և վայել է մշակի բարեաց զի մի համարձակեալ լինիցի, թէպէտ և միայն իցէ 'ի խցի և բազում ամս ունիցի 'ի նմա:

: Հարցեալ եղև երբեմն հայրն Աղաթոն յեղբարցն' եթէ ո՞ր մեծագոյն իցէ, աշխատե՞լ զմարմինն, թէ պահել զմիտս անշփոթ: Պատասխանի ետ ծերն. մարդ նման իցէ ծառոյ, և աշխատութիւն մարմնոյ տերևք են նորա, իսկ պահելն զմիտս մաքուր' պտուղ է նորա, և գրեալ իցէ' եթէ ամենայն ծառ որ ոչ առնէ պտուղ' հատանի և 'ի հուր արկանի. և արդ յայտ է զի ամենայն ջան և մշակութիւն ծառոյ յաղագս պտղոյն իցէ որ է պահումն մտաց. այլ և հովանի տերևոյն պիտոյ է 'ի պահել զպտուղն և զարդ 'ի զարդարումն, որք են աշխատութիւնք մարմնոյ: Եւ զի էր ինքն հայրն Աղաթոն իմաստուն բանիւք և գործովք, ոչ միայն իւր բաւական լեալ, այլ և այլոց որոց դիմէին առ նա.

տունկէ պտուղ, հատանի. այլ պիտոյ են ոստքն 'ի սնունդ և 'ի պահպանութիւն պտղոյն ։

Ի ՑԱՍԵԼՆ¹ Մաքաթոմի երբեմն 'ի ժողովն Սկիւթայ՝ եթէ ոչ ուղիղ է դատդ, ասեն ցնա. և դու ո՞վ ես ։ Մինչ ցնաս. որդի մարդոյ եմ, որպէս և գրեալ է. եթէ արդարեւ զարդարութիւն խօսէիք, և ոչ ուղիղ դատէիք, որդիք մարդկան ։

ՀԱՑՐՆ² Աբրահամ ոչ ուտէր, և գեղեցիկս գրէր, և յոլովք բերէին առ նմա մագաղաթ գրել. և առեալ գրեաց զայս՝ եթէ խոտորեա 'ի չարէ և արա զբարի ։ Ասեն ցնա, գրեա զբոլոր սաղմոսն ։ Նա ասէ. յորժամ գործով կատարես զայդ, և զայլն ես գրեցից ։

ՀԱՑՐՆ³ Նոյնպէս հարցեալ եղև՝ թէ ընդէ՞ր տասն են օրէնք և ինն երանութիւնք, ասաց. վասն զի տասն են հարուածք եգիպտացւոց և ինն են դասք հրեշտակաց. և երիցս են երեքն՝ խորհուրդ է սրբոյ երրորդութեան ։

ՀԱՐՑԱՒ⁴ Զենոն՝ թէ զի՞նչ է Յոբայ ասելն՝ թէ երկինք չեն սուրբ առաջի նորա ։ Նա ասէ. քանզի ինքն միայն է սուրբ անզուգելի ընդ ամենայն արարածս ։

և էր նա բարի. յարգարեալ յաղօթս և 'ի գործս և 'ի կերակուրս և 'ի հանդերձս և յամենայնի ։

1 Եղև երբեմն ժողով 'ի Սկիւտէ վասն գործոյ ինչ. և խօսէին հարցուցեալ զբանն, և հայրն Ագաթոն լռէր և ասէ. ոչ բարւոք հարցուցիք զայդ ։ Իսկ նոքա ասեն. և դու ո՞վ իցես որ խօսիս ինչ բնաւ ։ Նա ասէ ծերն. ես որդի մարդոյ իցեմ. զի գրեալ է թէ արդարև զարդարութիւն խօսէիք և ուղիղս դատէիք, որդիք մարդկան ։

2 Ասէր հայրն Աբրահամ զծերոյ ումեմնէ՝ եթէ հաց ոչ ուտէր, և գեղեցկագիր էր. և բերին եղբարքն մագաղաթս և աղաչէին զնա գրել նոցա գիրս ։ Իսկ ծերն յաստուածային առաւելութեանն հակէր զայդ և զերկն, և առեալ գրեաց 'ի նոսա՝ եթէ խոտորեա 'ի չարէ և արա զբարի, խնդրեա զխաղաղութիւն և երթ զհետ նորա ։ Նա զայս գրեալ ետ 'ի նոսա ։ Ասեն ցնա եղբարքն. զամենայն գրեսցես զսաղմոսն ։ Իսկ նա ասէ. գնացէք, եղբարք, և յորժամ գործով կատարէք զայդ՝ յայնժամ այլ ես գրեցից ։

3 Հարցին ցհայրն Եպիփան՝ եթէ ընդէ՞ր են տասն պատուիրանք օրինացն, իսկ ինունք են երանութիւնք աւետարանին ։ Իսկ նա ասէ. տասն հարուածոցն Եգիպտոսի օրինակ են տասն պատուիրանաց օրինացն. իսկ ինն երանութիւնքն են օրինակ ինունց դասուց հրեշտակացն ։ Իսկ երեք ընդ երիւք մինչ գնի, օրինակ իցէ սուրբ երրորդութեան, որ է գլուխ երանութեանցն ։

4 Եկին երբեմն առ հայրն Զենոն եղբարք ոմանք, հարցին զնա և ասեն. զի՞նչ է բանն այն զոր ասէ Յոբ՝ եթէ և ոչ երկինք սուրբ են առաջի նորա ։ Պատասխանի ետ ծերն և ասէ. թողեալ զայդ, եղբարք, զհոգս մեղաց ձերոց, և զերկնայինս հոգայք. իսկ զօրութիւն բանիս այսորիկ այս իցէ, զի միայն նա կատարեալ սուրբ է, և ոչ ինչ կարէ հաւասարել յարարածոցս սրբութեան նորա ։

Digitized by Google

ՀԱՐՑԱՒ[1] հայրն Յովսէփ յերկուց եղբարց յայլ և այլ ժամանակի բան մի. եթէ գայցէ յիս խորհուրդ՝ թողի՞ց զիս թէ ոչ։ Եւ նա միոյն ասաց՝ եթէ թող մնանել 'ի քեզ և ապա պատերազմեաց ընդ նմա, և միւսոյն՝ եթէ ընաւ մի տացես թոյլ։ Եւ յորժամ յայտնեցան հակառակ պատասխանիքն, և ասեն ցնա. ծեր, ընդէ՞ր այլ և այլ խօսեցար։ Եւ նա ասէ. կատարելոյն պարտ է թոյլ տալ և պատերազմել, զի առցեն պսակ. իսկ անկատարիցն ոչ է պարտ, զի մի՛ գերեսցին։

ՀԱՐՑԱՒ[2] ծերն՝ եթէ ո՞րպէս ոմանք դիւրաւ գործեն զգործն այ և ոմանք ոչ կարեն։ Եւ նա ասէ. որք հարկաւոր համարին զգործն այ և զաշխարհականն աւելորդ՝ դիւրաւ գործեն, և որք զերկրաւորս համարին հարկաւոր՝ դժուարաւ գործեն զայն։

[1] Եհարց հայրն Պիմէն ցհայրն Յովսէփ և ասէ ցնա. յորժամ գայցէ 'ի միտս իմ խորհուրդ աղտեղի, զի՞նչ արարից. ընդդէմ կացի՞ց նմա 'ի գալն, թէ թողից մնանել։ Ասէ ցնա ծերն. թոյլ տուր նմա մնանել, և ապա պատերազմեաց ընդ նա։ Եւ իբրև դարձաւ նա 'ի Սկիւտէ և նստաւ նա 'ի սենեակ իւր, եկն ոմն ծեր Թեբայեցի և ասէր ցեղբարսն՝ եթէ հարցի ցհայրն Յովսէփ և ասացի, եթէ եկեսցէ առ իս յախտակիր ինչ խորհուրդ, թողի՞ց զնա մնանել առ իս, և նա ասէ՝ ընաւ մի մերձենար 'ի նա և մի թողուր մնանել 'ի քեզ՝ այլ վաղվաղակի հատ զնա 'ի քէն։ Եւ իբրև լուաւ զայս հայրն Պիմէն եթէ այսպէս ասաց հայրն Յովսէփ ընդ Թեբայեցին ընդ այն, յարեաւ վաղվաղակի և գնաց առ հայրն Յովսէփ 'ի Պանեփուս և ասէ ցնա. հայր, ես պատմեցի քեզ զխորհուրդս իմ, և դու այլ ազգ ինձ ասացեր և այլ ազգ Թեբայեցի եղբօրն։ Ասէ ցնա ծերն. դու գիտես զի ես սիրեմ զքեզ։ Եւ նա ասէ. այո այսպէս իցէ։ Եւ ծերն ասէ. դու ասացեր ցիս, եթէ որպէս անձին քո՝ այսպէս ասասցես և ինձ։ Պատասխանի ետ. այդպէս իցէ ճշմարիտ։ Ասէ ծերն. արդ ես ասացի քեզ իբրև անձին իմոյ. զի եթէ թողուս մնանել 'ի քեզ զայն խորհուրդ և պատերազմեսցիս 'ի նմանէ և դու պատերազմիս ընդ նմա, առաւել զօրաւոր և յաղթող գտցիս, այլ այս կատարելոցն և փորձելոցն իցէ. իսկ անփորձիցն և տկարաց ընաւ ոչ արժան է մերձենալ 'ի յախտաւոր խորհուրդս, այլ առժամայն փախչել 'ի նոցանէ և հատանել զնոսա յիւրմէ։

[2] Եհարց հայրն Յոհաննէս Նիկիէնին մինչ մանուկն էր՝ ընդ ոմն 'ի հարանցն և ասէ. որպէս կարող էք դուք դիւրաւ և անաշխատ գործել զգործս այ. իսկ մեք և ոչ աշխատութեամբ կարող եմք գործել զնոսա։ Ասէ ցնա ծերն. վասն այսորիկ կարող եմք գործել զնոսա, զի մեք հարկաւոր մեզ գործ զգործն այ ունիմք, իսկ զմարմնոյ գործն անպէտ և վեր 'ի վերոյ ակամայ առնեմք. իսկ դուք զգլուխ և կարեւոր ունիք զգործս մարմնոյ, և զգործն այ 'ի հարկէ և վեր 'ի վերոյ. սակս այնորիկ աշխատիք յոյժ և առնել ոչ կարէք. վասն այնորիկ ասաց տէրն. Թերահաւատք, խնդրեցէք նախ զարքայութիւնն և այս ամենայն յաւելցի ձեզ։

Digitized by Google

ՀԱՅՐՆ Յովսէփ ասէր՝ եթէ տեսանէք յորում են ո-ղորմութիւն. ուսանիք առնել վասն տանց շինութեան և որ-դւոց ողջութեան, և ուսանիք վասն արքայութեան երկնից, զորս ոչ է պարտ 'ի վատ իրաց առնել և կամ 'ի վաշ-խից՝ որք ոչ առնուն վարձս։ Այլ ապա ասաց. եթէ ճըշ-մարիտ ասացի, պատառեսցի վէմս այս։ Այլ պատառե-ցաւ յեօթն մասն։

ՀԱՅՐՆ[1] Պիմէն հարցեալ յումեմնէ՝ եթէ ունիմ ժառանգութիւն զինչ արարից, և նա ասէ. թէ տաս ե-կեղեցւոյ՝ դարձեալ դու ուտես զնա, և թէ յազգն թո-ղուս՝ չառնուս վարձս. լաւ է թէ վաճառես և տաս աղ-քատաց։

ԱՍԱՑ ծերն. եթէ զայս առ քեզ հայհոյէ դևն, դու ասա՝ եթէ ես զայդ ոչ կամիմ, 'ի գլուխ քո լիցի, և 'ի քէն առցէ տէր զվրէժս. և մի հատուցաներ աւելի ցաւս։

ԱՍԱՑ[2] ծերն՝ թէ վայրապար է բարկանալ, եթէ չհեռացուսցէ զքեզ յայդ եղբայրն, թէ և հանէ զակն քո։

ՀԱՐՑԱՒ ծերն՝ եթէ զինչ է ատել զչարն։ Ասէ. այն է որ ատէ զմեղս խօսելն զեղբօրէն և արդարացու-ցանէ զնա։

ՀԱՐՑԱՒ[3] ծերն՝ թէ ո՞ է որ ասէ՝ բաժին է իմ տէր։ Այլ ասէ. հոգին սուրբ է, յորժամ որ լինի՝ նա կարէ ասել։

ՕՏԱՐ[4] ոմն ասաց ցծեր. կամիմ, հայր, գնալ յերկիր իմ։ Ասէ ծերն. գիտեա, եղբայր, զի 'ի գնալն յօտա-

[1] Եղբայր ոմն եհարց ցհայրն Պիմէն և ասէ ցնա. մնաց ինձ ժառան-գութիւն, և արդ զինչ արարից զայն։ Ասէ ցնա ծերն. գնա արդ և ե-կեսցես զկնի երից աւուրց և ասացից քեզ։ Իբրև եկն 'ի ժամն կար-գեալ, ասէ ցնա ծերն. և զինչ ասացից քեզ, եղբայր, ոչ գիտեմ. եթէ տացես զնա եկեղեցւոյ՝ դու դարձեալ կերիցես զնա, և եթէ տացես ազգի քո՝ ոչ ինչ շահիս 'ի նմանէ հոգւոյ և ոչ վարձս առցես. իսկ եթէ տացես աղքատաց զխնամս նորա, ազատիս 'ի հոգւոց և ունիցիս գանձս յերկինս. գնա և որպէս կամիս տնօրինեա զնա։

[2] Ասէ եղբայր ոմն. զինչ իցէ, հայր, բարկանալ եղբօրն տարա-պարտուց։ Ասէ ցնա ծերն. վասն ամենայն անիրաւութեան որ զրկեսցէ քեզ յեղբօրէն և դու բարկանաս, տարապարտ բարկացար. թէպէտ և խլեսցէ զակն քո զաջ և կամ հատցէ զոտս քո և զձեռս քո, և վասն այսորիկ բարկացիս՝ 'ի տարապարտ բարկացար. իսկ եթէ յայդ հեռա-ցուսցէ զքեզ, բարկացիր։

[3] Եղբայր ոմն եհարց ցծերն և ասէ. ով ասէ, հայր, զբանս զայս՝ թէ բաժին իմ ես դու տէր։ Ասէ ցնա ծերն. հոգին սուրբ ասէ. զի որ սուրբ է սրտիւ, այդ բան նորա է։

[4] Եղբայր ոմն եհարց ցծերն և ասէ. գնալ կամիմ անդրէն յերկիր իմ. զի օտար էի։ Ասէ ցնա ծերն. զայս գիտեա, որդեակ, զի 'ի գնալն



Digitized by Google

րութիւն՝ զնծ ունիս առաջնորդ, և 'ի գտանալն 'ի քոյն՝ զնորին հակառակն:

ՀԱՐՑԱՒ՝ ծերն՝ թէ որպէս կարեմ ունել զերկիւղն Այ: Ասէ. խոնարհութբ և անընչութեամբ:

ՍՈՒՐԲՆ՝ Կիւրեղ աղեքսանդրացի հարցեալ եղև վասն միայնակեցաց և բազմակեաց եղբարց՝ եթէ որ է լաւ: Նա ասէ. 'ի մէջ Մովսէսի և Եղիայի ոչ է ընտրութիւն, զի երկոքին հաճոյացան Այ:

ԿՐՕՆԱՒՈՐ՝ ոմն վաստակէր 'ի տօնի Մինային, և 'ի յասելն թէ ընդէ՞ր առնես՝ ասէ. սուրբ վկայն մեռաւ այսօր վասն Քի, մեզ պարտ է ըստ կարի վաստակել:

ՀԱՐՑԱՒ՝ ծերն՝ եթէ որ է ապաշխարելն: Ասէ. ոչ այլ 'ի նոյն մեղս չանկանել, այլ զանկեալն զոր մեղաւ՝ ապաշխարել:

ԵՂԲԱՅՐ՝ ոմն անկեալ 'ի մեղս ապաշխարէր. և եղև զի անկաւ յառիցն վերայ վէմ և հեղաւ արիւն բազում և մեռաւ: Նա եկին դևք յառնուլ զհոգին, և ասեն հրեշտակք. տեսէք զարիւնս զայս՝ որ վասն Քի: Նա ասաց թողին զնա:

քո ասա յերկրէ քումմէ՝ զոհէր ունէիր առաջնորդ քեզ, իսկ արդ 'ի գտանելդ քո անդ՝ զնորին հակառակն:

1 Եղբայր ոմն եհարց ցծերն և ասէ. որպէս եկեսցէ երկիւղն Այ 'ի մարդն: Եւ ծերն ասէ. եթէ ունիցի մարդ խոնարհութիւն և անընչութիւն և ոչ դատեսցէ զոք, յայնժամ գայ երկիւղն Այ յանձն այն:

2 Հայր ոմն հասարակաց վանից եհարց ցսուրբն Կիւրեղ եպիսկոպոսն Աղեքսանդրու և ասէ ցնա. մի՞ որք վերագոյն իցէ քաղաքավարութիւն, մերս, որ ժողովք եղբարց եմք 'ի միասին՝ որ բազումք օրինակ և օգնականք միմեանց լինիմք առ 'ի փրկութիւն, եթէ նոցա որք յանապատի միայնացեալք են և զիւրեանց միայն ուղղեն: Պատասխանի ետ պապն և ասէ ցնա. 'ի մէջ Մովսէսի և Եղիայի քննութիւն ոչ գոյ, զի երկոքեանն հաճոյ եղեն Այ:

3 Աշխատէր կրօնաւոր ոմն 'ի գործ 'ի տօնի սուրբ սրբոյն Մինայի: Եւ տեսեալ զնա այլ ոմն եղբայր ասէ ցնա. միթէ այսօր գործել մարթ է: Իսկ նա ասէ. եթէ այսօր վկայն Քի այսքան չարչարանս կրեաց, մի՞չ ևս պարտ է ինձ այսօր առաւել աշխատանս կրել և վշտանալ:

4 Ասաց եղբայրն. զի՞նչ է, հայր, ապաշխարութիւն մեղացն: Ասէ ցնա ծերն. այլ ոչ ևս առնել զայն մեղս, այն է ապաշխարութիւն. վասն այնորիկ կոչեցան ամբիծ արդարքն, զի թողեալ զմեղս գործեցին զարդարութիւն:

5 Ապաշխարէր եղբայր ոմն զկանոնս իւր միայնակեցութե. և դիպաւ նմա յանկարծակի անկանել 'ի վերայ վիմի և խոցեցան ոտք նորա, յորմէ այնչափ հեղաւ արիւն մինչև վհատեալ մեռաւ: Եւ եկին դևք առնել զհոգի նորա, և ասեն ցնոսա հրեշտակքն. նայեցարուք 'ի վէմս այս և տեսէք զարիւն իւր զոր եհեղ 'ի սակս Այ: Զայս իբրև ասացին հրեշտակքն, փախեան դևքն, և ազատեցաւ հոգի եղբօրն:

Digitized by Google

ՀԱՐՑԱՆ[1] ծերոյն՝ եթէ լաւ է երթալ առ եղբարս: Ասէ. ոչ, այլ ստանալ զսէրն նոյ և զնեղութիւն այն է բարի:

ՀԱՐՑԱՆ[2] ծերոյն՝ թէ ընդ յոլով խորհուրդս որպէս կռուեսցուք: Նա ասէ. քննել պարտ է թէ որ է մեծն՝ և ընդ նմա միայն կռուել. և երբ յաղթէ նմա, կորնչին փոքունքն:

ԱՍԱՑ[3] ոմն 'ի ծերոցն. եթէ գտցէ միայնակեաց տեղի որ ունիցի անդորրութիւն, իսկ զպէտս մարմնոյն աշխատութեամբ, և վասն մարմնոյն պիտոյից ոչ երթիցէ անդր, այնպիսին ոչ համարի եթէ ած է առաջի աչաց նորա*:

ՀԱՐՑԱՆ[4] մանուկ փոքր՝ թէ որ լաւ է, խօսե՞լ թէ լռել: Ասէ. երկոքեան չափով, և 'ի չարեն բնաւ լռել, և զբարին սակաւ:

ԵՐԵՔ[5] եղբարք գնացին 'ի Սկիւթէ, և ասէ մին. ես գիտեմ զհին և զնոր գիրս: Նա ասէ ծերն. դու զօդս լցեալ ես բանիւ: Նա միւսն ասէ. ես գրեալ ունիմ զգաղոյն: Ասէ ծերն. պատուհան քո լի է թղթով: Նա միւսն ասէ. անփոյթ արարի ես զանձնէ: Նա ասէ ծերն.

[1] Եղբայր մը եհարց ծերին և ասէ. բարի՞ առաջնութիւն է գնալն առ ընկերն: Ասէ ծերն. այդպիսի առաջնութիւն անպէտ իցէ, այլ ստացիր սէր և անձուկ առ ած:

[2] Ասէ եղբայր մը ծերին. զի՞նչ արարից, հայր, զի բազում խորհուրդք պատերազմին ընդ իս, և ես ոչ գիտեմ թէ որպէս կացից ընդդէմ նոցա: Ասէ ցնա ծերն. դու մի՛ պատերազմիր ընդ նոսա, այլ ընդ միոյ միայն մարտիցես, զի ամենայն խորհուրդք կրօնաւորի զմի ինչ ունին գլուխ իւրեանց, զայն գլխաւորն պարտ է քննել և կռուել ընդ նմա. յորժամ այն անկցի որ է մեծն, և յայնժամ ամենայն խորհուրդքն ընդ նմա անկեալ կորնչին:

[3] Ասաց ծերն. եթէ գիտէ կրօնաւորն զտեղի ուր դիւրաւ կարասցէ առաքինութիւն և ոչ գնայ անդ վասն պակասութեան պիտոյից մարմնոյն, այնպիսին ոչ հաւատայ թէ կարող է ած կերակրել զնա:

* Այլ օրինակ գործէ 'ի հին Թարգմանութէ. Ասաց ծերն. եթէ գիտէ ոք տեղի որ լաւ է հոգւոյ և ոչ գնայ անդ վասն պիտոյից, այնպիսին ոչ գիտէ և ոչ հաւատայ՝ թէ կարող է ած կերակրել զնա:

[4] Եղբայր մը եհարց զմանուկ փոքր և ասէ ցնա. բարւոք իցէ լռե՞լ եթէ խօսել: Պատասխանի ետ մանուկն և ասէ. եթէ անօգուտ են բանքն՝ թողցես զնոսա, իսկ եթէ օգտակարք են՝ խօսեա փոքր մի. այլ թէպէտ և բարւոք իցեն բանքն՝ մի՛ յամեր 'ի նոսա, քանզի լռելն լաւագոյն է քան զբարի բանս:

[5] Գնացեալ երբեմն եղբարք երեք 'ի Սկիւտէ, և երթեալ առ ծեր ոմն՝ ասէ մինն. ես, հայր, զհին և զնոր կտակարանաց գիր ուսեալ եմ 'ի թիւ: Ասէ ցնա ծերն. դու զօդս լցեալ ես բանիւք: Եւ երկրորդն ասէ. և ես, հայր, զհին և զնոր կտակարանաց գիրս գրեալ ունիմ ինձ: Ասէ ցնա ծերն. և դու ես, եղբայր, լցեր զպատուհանս քո թղթ-

Digitized by Google

հեռացար յօտարասիրութենէ, քանզի պարտ է ունել հաւատ ուղիղ և գործս բարիս ։

ՍՂԲԱՑԻ՝ ոմն 'ի սովի տանէր մօր իւրոյ հաց, և եղև ձայն առ նա որ ասէր. կամ դու հոգա զմայր քո, կամ ես ։ Եւ նա անկեալ յերկիր ասէ. տէր, դու հոգասցես զիս և զմայր իմ ։

ԱՍԱՑ ծերն. թէ ախտական զարիւնն հեղցէ վասն Քնի, ոչ է ընդունելի ։

ԾԵՐ² ոմն հարցաւ 'ի կուսանէ, եթէ պահեմ զվեց օրն 'ի շաբաթու, և ուսեալ եմ զհին և զնոր գիրս ։ Եւ ասէ ցնա. կարեմ՞ս զանարգութի՞ն իբրև զպատիւ ընդունել, և զրկանս իբր զշահս, զօտարն սիրել իբրև զպարենէս ։ Եւ ասէ. ոչ, հայր ։ Եւ ասէ ծերն. ապա այդ է կատարելութիւնն ։

թիւք ։ Եւ երրորդն ասէ. և ես, հայր, այնչափ անփոյթ արարի զանձն իմ, մինչև ոչ լուանայի զոտս իմ և ոչ յամանս, վասն որոյ անձն իմ իբրև զփուշ և զշոռ եղև բուսեալ՝ անհանգիստ պահելով զիս ։ Ասէ և ցնա ծերն. և դու, եղբայր, զօտարասիրութիւն վարեցեր 'ի քէն, զի օտար համարելով զմարմինդ՝ անձնային մերժեցեր զնա. զի պարտ է աւանելագոյն ունել հաւատս ուղիղ և գործս բարիս ։

։ Պատմէր մեզ ոմն 'ի ծերոցն՝ եթէ էր առ մեզ եղբայր մի Ճգնաւոր յոյժ, և էր նորա մայր աղքատ. և եղև սով մեծ 'ի կողմանս յայնոսիկ. և առեալ եղբայրն այն հաց՝ և յուղի ել տանել մօր իւրոյ, և ահա եկն առ նա ձայն յերկնից որ ասէր. կամ դու հոգասցես զմայր քո, և կամ ես հոգացից. զի թէ դու հոգաս, ես ոչ հոգացից ։ Եւ ծանեաւ զձայնն յոյժ լեալ, և անկեալ յերկիր ասէր արտասուօք. տէր, դու հոգասցես զիս և զնա ։ Եւ յարուցեալ դարձաւ 'ի սենեակ իւր. և յետ երից աւուրց եկն առ նա մայր իւր և երեք նկանս հացս, և ասէ՝ թէ ոմն ծեր՝ եբեր և ետ ինձ զայդոս որ յայսմ ամի ինձ և քեզ բաւական է ։ Եւ նա գոհանայր զԱյ և առաւել յաւելոյր 'ի զգաստութի իւր ։

։ Ասաց ծերն՝ եթէ նստէի երբեմն մերձ առ ծերոյ ումեմն, և եկն առ նա կոյս ոմն և ասէ ցնա. հայր, պահեալ է իմ երկերիւր շաբաթս զվեց աւուրս, և ուսեալ եմ 'ի բերան զհին և զնոր գիրս, և արդ զինչ պակաս է ինձ գործել ։ Ասէ ցնա ծերն. համարեցա՞ր երբէք զարհամարհանս իբրև զպատիւ, և կարա՞ղ ես ընտրել դու զզրկելն լաւ քան զշահելն ։ Պատասխանի ետ կոյսն. ոչ, հայր ։ Ասէ ծերն. կարեմ՞ս սիրել դու զօտարս քան զընտանիս քո, և կամ զաղքատութիւն քան զհարստութիւն ։ Ասէ. ոչ կարեմ զայդ առնել ։ Ասէ ծերն. ոչ ես պահեալ դու զվեց աւուրս և ոչ զհին կամ զնոր ուսեալ է քո զգիրս, այլ միայն զանձն քո խաբեցեր. գնա աշխատեաց դու, զի դեռ ես ոչ աշխատեալ ես. քանզի որ ոք կամի ընկեցէ 'ի վերայ զանձն իւր, հաւատամ զի նա է որ ընդ վկայսն թուեսցի, և փոխանակ արեան ընդունի ած զարտասուս նորա, որ կամաւ 'ի նախատինս գոլով և յարհամարհանս արտասուեսցեն զԱծ հաճոյ արտասուօն զայն 'ի հեղացեալ և 'ի հանդարտեցեալ սրտէ. գնա զայս արա և ապա կարես կեցուցանել զանձն քո ։ Եւ իբրև լուաւ կոյսն զայս, չնորհեալ եղև և ուրախութեամբ գնաց ։

Digitized by Google

ՀԱՐՑԵԱԼ՝ եղբ. ծերն 'ի մանկանէ՝ եթէ ասեն զիս խորհուրդք իմ, փուճ եղեր աբեղայ, գնա յաշխարհ։ Եւ նա ասէ. որդեակ, եթէ ոչ հասցուք յերկիրն աւետեաց, լաւ է մեզ եթէ անկցին ոսկերք մեր աստէն յանապատիս 'ի ճանապարհի տեառն այ մերոյ։

ԿՐՕՆԱՒՈՐ՝ մի փոքրիկ և մանուկ ճգնեցաւ զամս քսան՝ ուտելով 'ի շաբաթու բուռն մի ոսպն թրջեալ, և հպարտացեալ 'ի սրտի՝ կարծէր զինքն մեծ ոմն, և բաւական գործել նշանս. և խնայեաց տէր 'ի նա, և արկ 'ի սիրտ նորա զբանն Պաւղոսի որ ասէ՝ թէ ոչ եմ

¹ Եղբայր ոմն անկաւ 'ի հոգս և 'ի նեղութիւն, և գնաց առ ծեր ոմն և ասէ ցնա. զի՞նչ արարից, հայր, զի խորհուրդք իմ նեղեն զիս և ասեն ցիս՝ եթէ տարաժամ եղեր կրօնաւոր և ոչ կարես բաւական լինել զաւ մնալ 'ի մենհ և կեալ սովաւ։ Ասէ ցնա ծերն. թէպէտ և ոչ եւս կարասցուք մտանել յերկիրն աւետեաց, այլ լաւագոյն է մեզ զի ոսկերք մեր անկցին յանապատի 'ի ճանապարհս այ, քան դառնալ մեզ յԵգիպտոս 'ի ծառայութիւն փարաւոնի. գնա, որդեակ, լաւագոյն է 'ի ճանապարհս առաքինութեան մեռանել, թէպէտ և ոչ հասանիցէ 'ի կատար նորին, քան դառնալ 'ի խաւար աշխարհի և ծառայել գործոց ախտի նորա։ Իբրև լուաւ եղբայրն, շինեալ հաստատեցաւ և ուրախութեամբ գնաց։

² Էր ոմն կրօնաւոր 'ի Թեբայիդայ մանուկ հասակաւ, և զի կենցաղավարէր առ անչափ ճգնութք և պահեցելի քաղաքավարութք, պահօք և աղօթութք և անդադար աղօթիւք, անքնութք և ամենայն չարաչարութք ճնշէր զանձն։ Եւ կերակուր նորա էր այսպէս. ոսպն թրջեալ, և զայն միով ձեռամբ առեալ ուտէր յաւուր կիրակէին, և զայլ վեց աւուրսն ոչ ճաշակէր բնաւ ինչ. քանզի զայս մի բուռն թրջեալ ոսպն նախ յամենայն աւուր կերակրէր, և այլս զինի երից աւուրց. իսկ յետոյ 'ի կիրակէէ միայն. և եկաց նա յայսպիսի ճգնութեան ամս քսան։ Այլ սատանայ որ գտողն է ամենայն չարեաց, խեթեցեալ ընդ սուրբ վարս նորա, զի որով ինքն անկեալն էր ամբարտաւանութեամբ՝ կամեցաւ ձգել և զնա, և եդ 'ի սիրտ նորա խորհուրդ ամբարտաւանութեան և ասէր. եթէ յայսպիսի ճգնութիւնս և յաղթութիւնս եւս զաւ զայսչափ ժամանակս, որպիսի այլ ոչ ոք էր 'ի մերում երկրի 'ի մարդկանէ, և ընդէր ոչ առնես զաւ նշանս և սքանչելիս և բժշկութիւնս, որպէս զի զաւ յածապարանես ընծայեցիս 'ի ճգնութիւնս, և որք տեսցեն շինեսցին և փառաւորեսցեն զած։ Զայս եւ սերմանեաց զնա 'ի խորհուրդ նորա և սկսաւ աղօթել և խնդրել յայ նշանս և սքանչելիս առնել, և ասաց. որպէս հրամայեցեր, տէր իմ, թէ խնդրեցէք և տացի ձեզ, հայցեցէք և գտջիք, արդ խնդրեմ 'ի քէն՝ տուր ինձ շնորհս բժշկութեան և նշանաց։ Իսկ աղորմածն այ որ կամի զամենայն մարդ զի կեցցեն, իբրև ետես զմոլորութիւն նորա, ոչ մոռացաւ զբարի գործ նորա և զաշխատութիւն ճգնութեանցն, և ոչ եթող թշնամւոյն ստիպել զնա, և ոչ թողեաց անկանել զնա 'ի խոր վիհս ամբարտաւանութեան. այլ բաց բանից եղբայրն որ ասէ՝ թէպէտ և գայթագղեսցի արդարն՝ նա մի կործանեսցի, զի տէր ձեռնտու է նորա։ Արդ քանզի մինչ էր յայսպիսի խորհուրդս՝ առաքեաց այ 'ի սիրտ նորա զբան Պաւղոսի որ ասէ՝ թէ

բաւական անձամբ։ Այլ չոգաւ առ ծեր ոմն անուանի. և ետես ծերն երկուս եթովպացիս սեաւս զի նստէին յերկուս ուսս նորա և ձգձգէին զգլուխ նորա առ միմեանս։ Այլ իբրև ողջունեցին և նստան, աղաչեաց ըզծերն ասել ինչ նմա։ Այլ նա ասէ. ոչ ասեմ ինչ քեզ բնաւ, զի ոչ առնես։ Այլ երդուաւ նմա առնել զոր ինչ լսէ։ Այլ ծերն ետ նմա դահեկանս և ասէ. գնա՛ ի քաղաք, և գնեա տասն լիտր հաց և նոյնչափ գինի և նոյնչափ միս, և գնա կեր զաւուրս տասն, և ապա եկ առ իս։ Այլ գնաց տրտմեալ. և՛ ի յուտելն և յըմպելն ինոյր ար-

ոչ եմ բաւական անձամբ խմել խորհել ինչ։ Եւ ասէր. Թէ մեծն Պաւ-ղոս ոչ էր բաւական խորհել ինչ անձամբ իբրեւ, որչափ ևս առաւել ես կարող եմ վարդապետել յայլոց. յորդորեցաւ գնացից առ միայնա-կեացն այն, և զոր ինչ ասասցէ՝ արարից զայն։ Եւ եկ գտանէ զանձին և երդուաւ յնծ և ասէ. զոր ինչ և ասասցէ ինձ ծերն, իբրև յԱյ ա-ռաքեալ խրատն այնպէս արարից զայն։ Եւ էր ծերն այն առ որ խոր-հէրն գնալ՝ մեծատուն յոյժ և ծայրին աղքատութեան ստանալի լեալ և կարող օգտեցուցանել զորս ընթանային առ նա։ Վասն այսորիկ մինչ գնաց առ ծերն և մերձ եղև առ նա, ետես ծերն նստեալ ՚ի վերայ եր-կուց ուսոց նորա երկուս սեաւս հնդիկս, որք եդեալ էին շըղ-թայս ՚ի պարանոց նորա, և իւրաքանչիւրն քարշէր յինքն զգլուխ նո-րա։ Զայս տեսեալ ծերոյն ծանեաւ զպատճառն, վասն զի հոգևոր էր. հառաչեաց և արտասուէր առանձինն։ Եւ իբրև եմուտ եղբայրն ՚ի ներքս, ողջունեաց զնա ծերն և նստան լռելեայն ժամս ինչ, քանզի այն էր սովորութիւն ծերոյն։ Եւ զկնի այսորիկ ասէ եղբայրն ցծերն. հայր, շահեցուցեր զիս և ասա ինձ ճանապարհ փրկութեան։ Պատասխա-նի ետ ծերն և ասէ. ոչ կարեմ, որդեակ, առնել զայդ, զի և ինձ պի-տոյ է օգնական և մխիթարու։ Իսկ նա ասէ. մի՛ հրաժարեսցես, աղա-չեմ հայր, շահ առնել ինձ. քանզի յուսացեալ եմ ՚ի քեզ, և երդ-մամբ զաչքիս եդի անձին լսել բանից քոց և առնել զնոսա։ Ասէ ցնա ծերն. գիտեմ զի ոչ լսես ինձ, վասն այսորիկ հրաժարեմ ՚ի խօսելոյ ընդ քեզ։ Եւ նա անհնազանդ երդուաւ զարմանալ և ասէ՝ Թէ զինչ և ասասցես ինձ, լուայց քեզ իբրև հրեշտակի Այ։ Ցայնժամ ասէ ծերն. առաքեա ընդ քեզ զանօթս զգուշանց զայս, և գնա ՚ի քաղաքն և գնեսցես հացս տասն և միս լիտրս տասն և տասն չափ գինի, և կեր այդպէս զայն։ Եւ իբրև լուաւ զայս, սկսաւ տխրել և արտասուել զճանապարհն այն, այլ վասն երդմանն հնազանդեցաւ և գնաց։ Եւ մինչ գնայր ՚ի ճանա-պարհին, ամէնաժէր ՚ի բազում խորհրդոց և ասէր ՚ի միտս՝ Թէ զինչ կամեցաւ զայս ծերն առնել ինձ, և զիարդ զենեցից զայս ամենայն և զայլթակղեցուցից զանդառդն իս, յորժամ զարմանալ բերելն զնոսա։ Եւ այլ բազում եւ եկեալ զճանապարհն զայն՝ եհաս ՚ի քաղաքն, և ՚ի ձեռն այլում գնեաց զհացն և ՚ի ձեռն այլում զգինին, և պատճառէր այլ և այլ պատճառս. և Թէպէտ տխրէր յոյժ վասն մտաց, սակայն զանեալ այր մի երիվարաւ յնյ՝ ետ նորա լռելեայն զինչ զինն. և բազում պատասխանեացն առաջի զայն ամենայն եկն առ ծերանինն։ Եւ եգիտ ծերն զի ոչ էր մի հնդիկն յուսս նորա։ Ասէ ցնա ծերն. մի՛ մտատանջ լինիր, որդեակ, զոր ուսուցանէր այդ ճանապարհել ամենայնի զոր և ասացից քեզ.

տառապանօք զսեղանն, և մաշեցան յամօթոյ ամենայն մար-մինք նորա. և գնաց առ ծերն: Իսկ տեսանէր ծերն հրեշ-տակ լուսոյ յաջմէ և յահեկէ նորա, և համբուրեաց զնա և ասէ. որդեակ, ած 'ի հերքս և 'ի խոնարհս բնա-կէ. երթ կեր հաց յամէն երեկոյի. կեր և 'ի պարապոյ

արդ առ զայս ամենայն և գնա 'ի սենեակ քո. և մինչ ասանես զկարգ-թեթև աղօթից քոց, 'ի ժամու ճաշոյն կերիցես մի հաց և ըմպր մի մի, և արբ մար մի գինի. զայս այսպէս արասցես աւուրս սասն, և եկ առ իս և պատմեսցես քեզ զոր ած տացէ ինձ խօսել քեզ: Իբրև լուաւ զայս ճգ-նաւորն այն, սոսկացաւ յոյժ. այլ վասն երդմանն ընդդիմանալ ոչ զօրեաց: Իսկ առեալ զայն ամենայն գնաց ողբալով և տրտմութեամբ յոյժ, և նստեալ 'ի տան իւր լայր և ասէր. վայ եղկելւոյս, յորմէ պահոց զրկեալ յոր տկարութեան անկայ, և զինչ արարից ոչ գիտեմ. կե-րայց եթէ ոչ կերայց. եթէ ոչ կերայց, բարկասցի ինձ տէր վասն երդ-մանն իմ յանուն նորա. զի ուխտեցի թէ զոր ինչ և ասէ ցիս ծերն՝ ա-րարից զայն իբրև յայ տացեալ. և եթէ կերայց, զինչ լինիցի աշխա-տութեան իմ. և արդ տէր տէր, նայեաց 'ի տառապանս իմ և ողորմեա բանադատելոյս և թող զմեղս իմ, զի բանադրեալ գործել զհակառակն ճգնութեան իմոյ: Այսպիսի ողբովք գնաց 'ի տուն իւր և արար զամ ըստ հրամանի ծերոյն, և առաւել աղօթէր. և յորժամ հանգերձեալ էր ու-տել, թանայր. տառապանօք զսեղանն իւր և ասէր. տէր, յիրաւի թողեր զիս: Իբրև ետես տէր զխոնարհութիւն և զհնազանդութիւն նորա, ետ մխիթա-րութիւն սրտի նորա. և ծանեաւ զխորհուրդս գործոյն, զի ծանեաւ թէ ընդէր գիտեցաւ այն նմա. վասն այնորիկ տառապանօք գոհանայր զնմ, և խոստովանէր զբանն մարգարէական՝ եթէ ամենայն արդարութիւն իբրև զխորձոտեալ տեսանելին համարեալ է. և եթէ տէր ոչ շինէ զտ-աճարն և պահէ զքաղաքն, ընդունայն աշխատին պահապանք նորա: Իսկ իբրև լցան աւուրքն այն, զոր կատարեաց զամենայն հրամայեալսն ծե-րոյն տառապանօք և հեզութեամբ, այնպէս դարձաւ առ ծերն, առաւել թարշամեալ և խոնարհեալ մարմնով քան զայն՝ որ 'ի շաբաթուն մի ան-գամ ճաշակէր զհացն: Իբրև ետես զնա ծերն այնպէս խոնարհեալ և տեսութիւն փախստական եղեալ գնացեալ էին, և փոխանակ նոցա հրեշ-տակք լուսոյ երեքին յաջմէ և յահեկէ նորա պայծառ երեւոյք, ընդ-առաջ գնաց նմա և ուրախութեամբ ընկալաւ, և արարեալ աղօթս նստան լռելեայն: Իսկ ապա ասէ ցնա ծերն. որդեակ, մարդասէրն ած նայե-ցաւ 'ի քեզ և ոչ ետ թոյլ թշնամւոյն տիրել քեզ. զի ամբարտաւանութիւն է նորա խորել զառաքինիսն և ձգել յամբարտաւանութիւն, և խորհե-ցուցանէ առնել զգործս առաւել քան զկար և կոչէ 'ի չափ բարձրա-գոյն, որպէս զի այսպիսիք գիւրաւ ձգեսցէ զնոսա: Քանզի ոչ ինչ իցէ 'ի մեղաց և յախտից այսպէս տանջելի ած իբրև զամբարտաւանու-թիւն, և ոչ ինչ իցէ պատուական առաքինութեան առաջի ած իբրև զխո-նարհութիւն և զհեզութիւն. և զայսոսիկ փորձեալ քննեսցես յառակէ փարիսեցւոյն և մաքսաւորին: Վասն զի զկնաւորքն բարձանց 'ի ճգ-նութեանց յոյժ երկնչելիք են, քանզի գիւրաւ կործանելիք են, իբրև թէ ած 'ի հարանցն ասէ. որ առաւել քան զչափն է, 'ի դիւէ է: Արդ-ալ որդեակ, ընկալ զխրատ իմ և պահեա զնոսա, զի անսասանելի մը-նասցես 'ի գրժողաց. մի խոտորեսցիս յաջ և կամ յահեակ, այլ զմի-ջին ճանապարհ կալջիր. քանզի զճանապարհաւ աղքատի գնասցես,

Digitized by Google

կերակրոց կարօտութ՟, և անցո զժամն թէ կարես ։ Այլ յուղարկեաց զնա ասելով. տէր ուղղեսցէ զքեզ և հանցէ որպէս զլոյս զարդարութիւնս քո, և զիրաւունս քո որպէս զօր հասարակ ։ Այլ գնաց խնդութ՟ ասելով. խրատեսցեն զիս երկիւղածք քո և ոյք ճանաչեն զվկայութիւնս քո ։

ԱՍԱՑ՝ ծերն. որպէս փառք է թագաւորի երթալ 'ի կրօնաւորութ՟ի, նոյնպէս ամօթ է կրօնաւորի երթալ յաբեղայութ՟է և լինել թագաւոր ամենայն երկրի ։

ՀԱՐՑԱՒ ծեր՝ թէ որպէս պարտ է լինել միայնակեցին ։ Այլ պատասխանի ետ՝ թէ որպէս զիս միայն ընդ միայն ։

յառնուլ զկերակուր, և չափաւոր կերիցես յամենայն երեկոյի. և եթէ հարկ լիցի, առանց երկմտութե՟ և խղճելոյ փոխեսցես զժամն, կամ թէ վասն տկարութե՟ և կամ վասն այլոյ իրիք պատճառի, և մի խնայեր փոխել զսահմանեալ ժամն. և թէ դիպեսցի քեզ յաւուրն երկու անգամ առնուլ կերակուր՝ մի տրտմեսցիս, զի ոչ եմք ընդ օրինօք բռնադատութեան, այլ ընդ շնորհօքն Յսի Քսի եմք ։ Եւ կ. մինչ կերիցես, մի յագեսցիս, այլ բառնեսցես զքեզ որչափ և կարող իցես 'ի կարգ պահոց. և առաւել 'ի պարարտ կերակուրսն արասցես զայս, և զլոռւթիւն 'ի նոցանէ ընտրեսցես. և առաւել քան զամենայն զսէրս քո պահեա, և առաւել քան զամենայն առաքինութի՟ զխոնարհութի՟ ստացիր. քանզի պատարագ այս է ըստ մարգարէին հոգի խոնարհ, և զսիրտ բեկեալ Ած ոչ արհամարհէ. և դարձեալ ասէ՝ թէ խոնարհեցայ և կեցոյց զիս. և Եսայիաս ասէ 'ի տեառնէ՝ եթէ ես յո՞ բնակեցայց, եթէ ոչ 'ի հեզս և 'ի խոնարհս և որք դողան 'ի բանից իմոց ։ Արդ դու զամենայն յոյս քո աւանդեա 'ի տէր և ընկեա 'ի նա զհոգս քո. զի եթէ նա ոչ նայեսցի 'ի քեզ, ընդունայն է վաստակ քո ։ Դնասցես, որդեակ, խաղաղութ՟ զճանապարհս քո, և նա ուղղեսցէ զգնացս քո և հանցէ որպէս զլոյս զարդարութիւնս քո և զիրաւունս քո որպէս զօր հասարակ ։ Այսպէս շահեալ ծերոյն զեղբայրն զայն հաստատեաց զնա, և բարւոք հիւրընկալեալ կերակրեաց զնա, և արձակեաց գնալ 'ի տեղին իւր ։ Եւ ելեալ եղբայրն անտի գնայր ասելով. խրատեսցեն զիս երկիւղածք քո, տէր, և որք ճանաչեն զվկայութիւնս քո. և խրատեսցէ զիս արդարն ողորմութ՟. և զի խրատելով խրատեաց զիս տէր, և 'ի մահ ոչ մատնեաց ։ Եւ ցանձն իւր ասէր. դարձ, անձն իմ, 'ի հանգիստ քո, զի տէր օգնեաց քեզ ։ Այսպէս գոհանալով գնայ եկն 'ի տեղին իւր և կայր բարւոք ըստ կարգելոյ ծերոյն՝ զամենայն աւուրս կենաց իւրոց, և եհաս 'ի չափ հասակի կատարմանն Քսի ։

Ասաց ծերն. լուարուք ինձ, որդեակք. զոր օրինակ պարծանք մեծ են թագաւորի եթէ թողու զթագաւորութիւնն և լինիցի կրօնաւոր, վասն զի անանց թագաւորութիւնն լաւ քան զանցանելին է, որպէս և ամօթ մեծ իցէ եթէ թողեալ զկրօնաւորութիւնն՝ եղիցի թագաւոր ամենայն երկրի. զի թէպէտ և ցանկութիւն արտաքս չարժեն 'ի բնութիւնս, այլ ժուժկալութիւն և ճգնութիւն յերկարեալ զեղուցանէ զնա ։

Digitized by Google

ՀԱՐՑԱՆ[1] ծեր՝ թէ ընդէ՞ր յորժամ յանապատ գնամ, երկնչիմ։ Եւ պատասխանի ետ՝ թէ այժմէն կեաս *։

ԿՐՕՆԱՒՈՐՆ որ մերկանայ 'ի բաղանիսն, մերկացաւ 'ի շնորհացն այ։

ԵՂԲԱՅՐ[2] ոմն երթեալ և առեալ զձև միայնակեցութե և առժամանցն արգել զինքն թէ որոշեալ իցեմ յաշխարհէ։ Եւ լուեալ զայս ծերացն՝ եկեալ հանին զնա և ետուն շրջել նմա ընդ խուցս եղբարցն և անկանել առաջի և ասել՝ թողութի արարէք ինձ, զի ոչ էի միայնակեաց, այլ տխմար։

ՀԱՐՑԱՆ[3] ծեր. զի՞նչ պարտ է առնել և կեալ։ Իսկ ծերոյն առ 'ի գործոյն չուանամանութե ամենևին 'ի վեր չհայեցեալ չպարապելով 'ի գործոյն, և պատասխանի ետ՝ ահա տեսանես։

ԱՍԵՆ[4] ծերքն. թէ տեսանես զմանուկ որ ըստ կամաց իւրոց յերկինս ելանէ՝, կալ զնա և ընկեա 'ի վայր, զի օգուտ է նմա։

ՊԱՏՄԵՑԻՆ[5] վասն հօրն Նատիրայի աշակերտի հօրն Սիղուանոսի՝ եթէ յորժամ նստէր 'ի խցի իւրում 'ի լերինն Սինեայ, չափաւորութե վարէր զինքն ըստ պիտոյից մարմնոյ. և յորժամ եղև եպիսկոպոս 'ի Փառան, պնդեաց զինքն խիստ կրօնաւորութե։ Ասէ ցնա աշա-

1 Եհարց ոմն եղբայր զծերն և ասէ. ընդէ՞ր երկնչիմ, հայր, մինչ գնամ յանապատ։ Ասէ ցնա ծերն. վասն այնորիկ երկնչիս, զի դեռ ես կենդանի ես։

* Դարձեալ այլ օրինակ 'ի հին թարգմանութեան. Հարցաւ ծերն՝ եթէ վասն էր երկնչիմ մինչ գնամ յանապատ։ Ասէ. զի դեռ չես մեռեալ։

2 Եղբայր ոմն ել յաշխարհէ. և իբրև զգեցաւ զձև կրօնաւորութե, առժամայն արգել զինքն 'ի սենեկի ուրեմն և ասէր՝ թէ ես հանդարտեալ եմ ահա այժմ։ Իսկ ծերոցն լուեալ զայս՝ գնացեալ հանին զնա և ետուն նմա կանոնս, զի գնասցէ որ ըստ օրէ 'ի սենեակս եղբարցն և 'ի ծունր իջեալ ասիցէ՝ թողութիւն շնորհեցէք ինձ, ոչ եմ հանդարտեալ, այլ դեռ ես եկեալ եմ։ Եւ արար այսպէս զհրամանս հարցն։
3 Ծեր ոմն եհարց և ասէ. զի՞նչ պարտին առնել որք կամիցին կեալ։ Իսկ ծերն հիւսէր զարմաւ և ոչ նայեցաւ 'ի վեր, այլ ասէ. գնացեալ աշխատեաց այսպէս որպէս և տեսանես։
4 Ասաց ծերն. եթէ տեսանես մանուկ կրօնաւոր կամաւ իւրով ելանելով յերկինս, կալեալ զոտից նր հարցես զգետնի, այնպէս իցէ նմա։
5 Ասէին վասն հօրն Նատիրայի՝ եթէ յորժամ բնակէր 'ի Սինա, չափաւորապէս ճգնէր 'ի խցի իւրում. իսկ յորժամ եղև եպիսկոպոս 'ի Փառան, յանհամբերելի ճգնութիւնս ետ զանձն իւր։ Ասէ ցնա աշա-

Digitized by Google

կերոտն իւր. հայր, մինչդեռ էաք յանապատին, ոչ ձրգ-նէիր այդպէս։ Ըսէ ցնա ծերն. անդ անապատ էր և աղ-քատութիւն և լռութիւն, և կամէի համբուրացանել զմար-մինս, զի մի հիւանդացայց և խնդրեցից զոր ոչ ունիմ. իսկ այժմ աշխարհ է և պատճառք։

ՀԱՐՑԱՒ ծեր. էր աղագաւ ոչ կատեցեր 'ի վաստա-կելոց։ Նա ասէ. վասն զի հանապազ մեռանելոց անձն ունիմ։

ԵՂԲԱՅՐ ոմն եկն առ հայրն Պիմէն և ասէ ցնա՝ ե-թէ մեծ փորձութիւն դիպեցաւ ինձ։ Ըսէ ցնա հայրն Պիմէն. հեռացիր 'ի տեղւոյն յայնմանէ որչափ կարես՝ երթալ ճանապարհ երից աւուրց, և զտարի մի պահեա մինչև ցերեկոյ։ Ըսէ ցնա. եթէ մեռանիմ և ոչ ժա-մանեմ զտարին կատարել, զի՞նչ լինիցի ինձ։ Ըսէ ցնա հայրն Պիմէն. հաւատամ 'ի Տէր, եթէ այժմ եղեւ յինէն՝ ունելով յօժարութիւն զայս առնելոյ և մեռցիս, ընդունելի է ապաշխարութիւն քո առաջի Այ։

ԵՂԲԱՅՐ՝ ոմն եհարց ցհայրն Պիմէն և ասէ. մեղս մեծ գործեցի և կամիմ ապաշխարել զերիս ամս։ Ըսէ ցնա հայրն Պիմէն. կարի սաստիկ է։ Նա ասաց ընդ ի-բեարս խօսելով՝ եղեն իբրև աւուրք քառասուն, և ծերն նոյնպէս ասէր՝ եթէ բազում են։ Ըսէ եղբայրն. իսկ քանի ժամանակաց պէտք են։ Ըսէ հայրն Պիմէն. ես ասեմ, եթէ ապաշխարեսցէ մարդ բոլորով սրտիւ իւրով ճշմարտութեամբ և ոչ ևս յաւելուցու առնել զմեղսն, հա-ւատամ յԱծ՝ եթէ հաւասար երից աւուրց ընդունի Ած զապաշխարութիւն նորա *։

կերա իւր. մինչ յանապատին էիր, ընդէ՞ր ոչ ճգնէիր այսչափ։ Ասէ ցնա ծերն. անդ զի միայն էի՝ խնայէի 'ի մարմին իմ, զի մի վհատեցայց. և օգնական ոչ ունէի. այլ աստ զի թէ վհատիմ, ունիմ զբազումս որ սպասեսցեն ինձ. վասն այսորիկ ոչ ևս խնայեմ 'ի մարմին իմ։

։ Եղբայր ոմն եհարց ցհայրն Պիմէն և ասէ ցնա. մեղս մեծ գործե-ցի, հայր, և կամիմ ապաշխարել զնա զերիս ամս։ Ասէ ցնա ծերն. շատ է այդ։ Ասէ եղբայրն. և զի՞նչ՝ միթէ մի ամ բաւական է։ Ասէ ծերն. և այդ ևս շատ է։ Իսկ որք անդ էին՝ ասեն. ապաշխարի զքա-ռասուն օրս այն մեղք։ Իսկ ծերն ասէ. հաւատամ զի թէ ապաշխա-րեսցէ մարդ բոլորով սրտիւ, և այլ ոչ ևս յաւելուցու առնել զայն մեղս, յաւուրս երիս ընդունի Ած զապաշխարութիւն և թողու զմեղս նր։

* Օրինակ մի տպեալ հին Թարգմա-նութեան համառօտէ այսպէս. Ասաց հայրն Պիմէն. եթէ ոք 'ի մեղացն 'ի բաց կայ և սրտի մտօք ապաշխա-րէ զերիս աւուրս, հաւատամ թէ թողու Ած։

Digitized by Google

ՀԱՐՑԱՒ ծեր. զի՞նչ է գործ միայնակեցի։ Եւ նա ասէ. գիտութիւն ողջախոհութեան։

ԵՂԲԱՅՐ՝ ոմն երթեալ առ հայրն Մակար եգիպտացի և ասէ ցնա. հայր, ասա ինձ բան որով ապրեցայց։ Ասէ ցնա. երթ ՚ի գերեզմանսն և թշնամանեա զմեռեալսն։ Եւ նա երթեալ թշնամանեաց և քարինս ձգեաց և եկեալ պատմեաց ծերոյն։ Եւ ասէ ծերն. ո՞չ ինչ խօսեցան ընդ քեզ։ Եւ ասէ. ոչ ինչ։ Ասէ դարձեալ ծերն. երթ ՚ի վաղիւ փառաւորեա զնոսա։ Եւ երթեալ եղբօրն փառաւորեաց զնոսա և ասէ. առաքեալք և մարգարէք և սուրբք։ Եւ եկեալ առ ծերն ասէ. փառաւորեցի։ Ասէ ծերն. ո՞չ ինչ ետուն պատասխանի։ Եւ ասէ՝ ոչ։ Ասէ ցնա ծերն. տեսե՞ր որքան պատիւ արարեր նոցա և ոչ լուան քեզ, և որքան թշնամանեցեր զնոսա և ոչ ետուն քեզ պատասխանի. այսպէս և դու եթէ կամիցիս ապրե՛լ լեր մեռեալ, և մի՛ զանարգանս ՚ի մարդկանէ և մի՛ զփառս համարիր ինչ որպէս զմեռեալ, և կարես ապրել։

ՀԱՐՑԱՒ՝ ծեր՝ թէ ընդէ՞ր սակաւ սակաւ ձանձրանամ։ Եւ նա ասէ. վասն զի չև ևս տեսեր զմզգամն։

ԱՍԱՑ՝ երբեմն հայրն Անտոն՝ եթէ եկեսցէ ժամանակ զի մոլեգնեսցին մարդիկ. և եթէ տեսանիցեն զոք

1 Գնացեալ երբեմն եղբայր մի առ մեծն Մակար եգիպտացի և ասէ ցնա. հայր, ասա ինձ բան, զի կեցցեմ նովաւ։ Ասէ ցնա ծերն. գնա դու ՚ի գերեզմանսն և անարգեա զմեռեալսն և գծանեա զնոսա։ Եւ գնացեալ եղբայրն անարգէր և քարկոծէր զնոսա, և եկեալ պատմեաց ծերոյն։ Ասէ ցնա ծերն. և ո՛չ ինչ ասացին քեզ նոքա։ Պատասխանի ետ՝ թէ ոչ։ Ասէ ցնա ծերն. գնասցես դարձեալ վաղիւն և փառաւորեա և գովեա զնոսա։ Եւ գնացեալ եղբայրն գովէր զնոսա և ասէր. առաքեալք և սուրբք և արդարք։ Եւ եկեալ պատմեաց ծերոյն և զայն։ Ասէ ցնա ծերն. և ո՞չ ինչ պատասխանի ետուն քեզ։ Պատասխանի ետ եղբայրն և ասէ. ոչ ինչ բնաւ։ Ասէ ցնա ծերն. տեսանե՞ս թէ որպէս անարգեցեր զնոսա և ոչ ետուն պատասխանի քեզ, և դարձեալ փառաւորեցեր զնոսա և նոքա ոչ ինչ ասացին քեզ. այսպէս և դու եթէ կամիցիս կեալ, լեր ամենեւին մեռեալ, և զանարգանս մի ինչ համարեսցես ոչ զփառաւորելն և ոչ զանարգելն, և կեցցես։

2 Եհարց եղբայրն. ընդէ՞ր ձանձրանամ սակաւ, հայր։ Ասէ ցնա ծերն. վասն զի ոչ գիտես դու զառաջիկայ մխիթն։

3 Ասաց հայրն Անտոն. ոչ թողուցու ինձ զգաստանալ զայս կերպ առաջինոցն դայր. վասն զի գիտակ եթէ տեսանեն և ոչ կարասցեն ժուժկալել։ Այլ եկեսցէ ժամանակ զինչ այսպիսի, յորժամ

ոչ մոլեգնեալ, յարիցեն 'ի վերայ նորա ասելով՝ թէ մոլեգնիս, վասն ոչ լինելոյ նման նոցա ։

ՀԱՐՑԱՒ ծեր. ուստի՞ լինի ինձ պէտք առ 'ի պտանիկութեանն փորձելով ։ Եւ նա ասէ. 'ի յոլով ուտելոյ և 'ի շատ քնելոյ ։

ՊԱՏՄԵՑԻՆ՝ ոմանք 'ի հարանցն վասն սրբոյ ուրումն մեծի, զի թէ գայր ոք հարցանել զնա բանս՝ ասէր բաղում ախորժելով. ես ահա առնում զկերպարանս քո և նստիմ յաթոռ դատաւորութեան, զինչ կամիս եթէ արարից քեզ. եթէ ասես՝ եթէ ողորմեաց, ասէ քեզ ա̃ծ. թէ կամիս զի ողորմեսցայց քեզ, ողորմեաց և դու եղբօրն քո, և ես քեզ ողորմեսցայց. եթէ կամիս զի թողութիւն գտցես, թող և դու մերձաւորին քում ։ Արդ միթէ պատճառք ինչ իցէ ա̃ծ. մի լիցի. այլ մեք եմք պատճառք, զի եթէ կամիմք ապրել՝ ապրիմք ։

ՀԱՐՑԱՒ ծեր՝ թէ զինչ առնէ զմիայնակեացն միայնակեաց ։ Եւ նա ասէ. ամենայն բարեաց գործոց առգաստիք և ամենայն չարեաց որոշումն ։

ԵՐԹԵԱԼ՝ երբեմն հայրն Իսահակ առ հայրն Պիմէն և տեսեալ զնա զի լուացեալ էր զոտս իւր, և ունելով համարձակութիւն ասէ ցնա. զիա՞րդ կամեցան ոմանք վարել զանձինս իւրեանց խստութբ ։ Ասէ ցնա հայրն Պիմէն. մեք ոչ ուսաք մարմնասպանք, այլ ախտասպանք ։

մոլին մարդիկ. և եթէ տեսանեն զոք՝ որ ոչ մոլի, ասեն՝ թէ դու մոլիս. վասն զի ոչ եղև նման նոցա ։

1 Եղբայրն ասէ. յուսմէ՞ շարժին յիս պոռնկական խորհուրդք ։ Իսկ ծերն ասէ. յանչափապաս ուտելոյ և 'ի քնոյ ։

2 Ասէին զհօրէ ումեմնէ մեծէ՝ եթէ յորժամ գայր ոք առ նա հարցանել ինչ բան, ասէր ցնա ծերն. ահա ես դատաւոր նստիմ 'ի մէջի. զինչ կամիս զի արարից քեզ. եթէ ասես՝ ողորմեաց ինձ, ասէ ցքեզ ա̃ծ՝ ողորմեաց և դու եղբօր քո. եթէ ասես՝ թող ինձ, ասէ ցքեզ ա̃ծ՝ թողցես և դու ընկերին քո. միթէ անիրաւութիւն ինչ իցէ այս առ ա̃ծ. քաւ լիցի. տեսանես՝ զի 'ի մեզ է կեանքն մեր եթէ կամիցուք ։

3 Եղբայր մի եհարց ծերին. զինչ առնել պարտ է կրօնաւորի ։ Ծերն ասէ. մշակել զա̃մ գործս բարիս և մերժել յամենայն չարութենէ ։

4 Գնացեալ երբեմն հայրն Իսահակ առ հայրն Պիմէն և տեսեալ զի արկեալ էր սակաւ մի ջուր յոտս իւր, և զի ունէր առ նա սէր յոյժ և համարձակութիւն, ասէ ցնա. զիա՞րդ ոմանք 'ի հարցն հոյհոյեցին զամենայն մխիթարութիւն մարմնոյ, և յոյժ ճգնութբ խստակեցին զմարմինս իւրեանց ։ Ասէ ցնա հայրն Պիմէն. մեք ոչ ուսաք յումեքէ սպանանել զմարմին, այլ ուսաք սպանանել զախտս մարմնոյ ։

Digitized by Google

ՀԱՐՑԱՒ ծեր. ընդէ՞ր յորժամ նստիմ 'ի խցին, միտք իմ զվայրօք յածին: Եւ նա ասէ. վասն զի արտաքուստ զգայութիւնք մեր և լսելիք չարչարին, տեսանելիք, հոտոտելիք, ճաշակելիք, խաղալիք. այսք ամենայն եթէ ունիցին յինքեանս սուրբ արգասաւորութիւն, ապա և ներքինն յառողջութեան և 'ի ցածութեան պահեն:

ԵՀԱՐՑ¹ հայրն Աբրահամ ցհայրն Թէոդորոս՝ որպէս լաւ է, հայր, փառօք յարգեցից զանձն իմ, եթէ անարգեցից: Ասէ ցնա հայրն. կամիմ ընդ փառսն քան թէ ընդ անարգութիւն: Ասէ հայրն Աբրահամ. զիա՞րդ: Ասէ ծերն. եթէ արարից գործս բարիս և փառաւորեցայց, կարեմ դատել զխորհուրդս իմ թէ չեմ արժանի փառացդ այդոցիկ. իսկ անարգութիւն 'ի ժամու իւրում լինի, և զիա՞րդ կարէ՞մ մխիթարել զիրաս՝ մարդկան զայթակղեալ յիս. արդ լաւագոյն է զբարիս գործել և փառաւորիլ քան զժամն և անարգիլ: Ասէ հայրն Աբրահամ. ազնիւ ասացեր, այդ այդպէս է:

ՀԱՐՑԱՒ ծեր. ուստի՞ սատանայ զխոնարհութիւն հագի: Եւ նա ասէ. յորժամ վասն իւրոց չարեացն միայն հոգասցէ*:

ԱՍԱՑ² հայրն Եղիաս՝ եթէ զինչ համարձակեն մեղք ուր ապաշխարութիւն է, և զինչ օգուտ է 'ի սիրոյ ուր անհնազանդութիւն է:

ՔԱՀԱՆԱՅ մի աղեքսանդրացի գնաց յանապատն առ եպիսկոպոսապետն կրօնաւորին, որ նստէր 'ի լռութեան,

¹ Եհարց երբեմն հայրն Աբրահամ ցհայրն Եւթերիոս և ասէ. զի՞նչ իցէ բարի, հայր, փառօք որպատուել անձին, եթէ արհամարհութեամբ: Իսկ նա ասէ. և այժմ զփառս կամիմ ինչ լինել քան զանարգութիւն. զի թէ արարից ինչ գործ բարի և փառաւորեցայց նովաւ, կարող եմ դատել զիս և խոնարհեցուցանել զխորհուրդս և ասել՝ եթէ ոչ եմ արժանի գովութեան և պատուոյ. իսկ արհամարհութիւն ծնանին իցէ խնճէշ և չար գործոց. և թէ առնեմ զայն, զիա՞րդ կարացից մխիթարել զանձն իմ և յարուցանել զմիտս յորժամ գայթակղեցին յիս ամենայն մարդիկ. լաւագոյն իցէ առնել զբարի և փառաւորիլ, քան զչար գործել և նախատինս լինել: Ասէ հայրն Աբրահամ. բարւոք ասացեր, հայր, ճշմարիտ այդ այդպէս է:

* Այլ օրինակ գտանի 'ի հին Բարգ-մանութեան. Հարցաւ ծերն. և զիա՞րդ սատանայ հողի զխոնարհութիւն. Ա-սէ ծերն. եթէ միայն զանձին իւ-րոյ հոգասցէ զչարիս:

² Ասաց հայրն Եղիա. ոչ ինչ զօրութիւն ունի մեղք ուր իցէ ապաշխարութիւն, և ոչ շահ 'ի սիրոյ իցէ ուր գտցէ անհնազանդութիւն:

Digitized by Google

եւ ասէ ցնա. Հայր, կամիմ կրօնաւորիլ, ասա եւ ունիմ կին եւ որդիս: Եւ նա ասէ. փոխանակ որբութեն կամիս մեղանչե՞լ, որդեակ: Եւ ասէ քահանայն. զայդ ուսուցանես եւ զանձն քո ոչ ուսուցանես. դու թողեր այրի զհարսն քո զեկեղեցին սուրբ եւ զհոգւոյ որդիսն որբ, եւ ասես ցիս զայդպիսի բանդ. եւ լցաւ առ քեզ բանն տեառն, ունելով զգերան յաչսդ՝ հանել ջանաս զշիւղն յիս:

ԱՍԱՑ[1] ծեր. ես հաւատամ եթէ ոչ է անիրաւ ած 'ի բանտէ հանել եւ 'ի բանտ արկանել:

ԱՍԱՑ ծեր՝ եթէ ոչ երբէք կրկնեցի որչափ կարացի հաստանել:

ԱՍԱՑ[2] ծեր՝ եթէ որքան կարեն սոքա աշխատել ողջնաւ 'ի նախահաւատակն հանգստեան: Ոչ այս ասէր վասն լինելոյ նոցա ազատ 'ի հոգւոց աշխարհիս այսորիկ:

Եթէ կամիս զհարթիւն վարել, այս է. ոչ շաբաթ հանել 'ի գլուխ, եւ ոչ երկուս, այլ ամենայնի աւուր յիններորդ ժամուն չափով ընմպել եւ կշռով ուտել եւ չափով խօսել, աղօթել, սաղմոսել, ընթեռնուլ եւ պահոց պնդութեամբ հատանել եւ յաշխարհի նստել եւ կանայս ունել, ողորմած լինել 'ի վերայ որբոց եւ այրեաց: Այս երիս առաքինութիւնս մեծ են քան զամենայն. ողորմութիւն եւ աղօթք եւ պահք. ողորմութիւնն մեծ է քան զաղօթսն, եւ աղօթքն մեծ են քան զպահսն. աղօթքն զմեղաւորսն մաքրէ, եւ պահքն զուղեղդն ցամաքեցուցանէ, եւ ողորմութիւնն զոսկերսն նուաղեցուցանէ:

ԱՍԱՑ[3] հայրն Պիմէն. կամապաշտութիւն պղնձի պարիսպ է ընդ մարդ եւ ընդ ած. եւ յորժամ 'ի բաց կայ մարդ 'ի կամաց իւրոց վասն այ, նոյնժամայն հայի յած, զի քակեցաւ պարիսպն:

[1] Ասաց հայրն Անուբ. հաւատամ զի ոչ անիրաւէ ած, զի թէ հանցէ 'ի միոյ բանտէ եւ արգելցէ 'ի միւսն բանտ, վասն այսորիկ յամենայնի նեղել զանձն իւր ճանապարհ այ:

[2] Ասաց ծերն. թէպէտ եւ աշխատեալ եղեն սուրբքն յերկրի, այլ առին եւ աստ հանգիստ ինչ, այսինքն է զի ազատեցան 'ի հոգւոց աշխարհիս այսորիկ.

[3] Ասաց հայրն Պիմէն. կամք մարդոյն պարիսպ պղնձի է ընդ մէջ իւր եւ այ, եւ քար գայթակղութեան. իսկ եթէ թողցէ մարդ զկամս իւր, կարող իցէ ասել՝ եթէ աստուծով իմով անցից ընդ պարիսպս. իսկ եթէ կացցէ 'ի կամս իւր, 'ի վերայ մեծամեծս անկանի նա:

Digitized by Google

Իմաստուն ծերք՝ եթէ ամենայն առաքինութեան վե-րագոյն է գիտութիւն ընտրութեան ։

Իմաստ ծեր՝ եթէ որ անարգանաց և նախատանաց և վնասուց համբերէ, այնպիսին կարէ ապրել ։

Իմաստուն ծերքն. գրաւական մի երբէք տար խորհրդոց ։

Իմաստուն ծերքն. կնգուղ նշանակ է անմեղութեան ։

Մեր հայրն Յոբ՝ թէ մարդ որ անկանի նման տարա-կոյս 'ի գրոց և ոչ երթայ աւսանի առ գիտունսն, նման է պատառեալ ոսկոյ 'ի հեղեղաց բախմանէ, զի այնպէս ներքի և պատառի 'ի հերձուածս 'ի ծուռ տեսլենէն ։

Իմաստուն ծերք՝ եթէ հայելի է միայնակեցին յար-գելանին խաղաղանալ ։

Յորժամ գնաց Աւագր յԱնգիպատոս և ետես զմարս հարցն որ կային անդ, զարմացաւ և ասաց ընդ ծեր մի՝ եթէ յազգն Յունաց ընդէր ոչ կայ այսպիսի ճգնութիւն և ընտրութիւն։ Եւ ասէ ծերն. վասն հպարտութեան, քանզի առեալ այն երարձ 'ի նոցանէ զկատարեալ և եդ նոցա բանականութիւն ։

Իմաստուն ծերք՝ եթէ պսակ է միայնակեցին խոնար-հութիւն ։

Մին եղբայր եհարց ծեր մի տեսող՝ թէ զի՞նչ է բանն որ վասն Մովսէսի ասէ՝ եթէ հայեցաւ յայսկոյս յայն-կոյս և ոչ զոք ետես, ապա սպան զեգիպտացին։ Եւ ա-սէ տեսողն. հայեցաւ Մովսէս 'ի խորս մտաց եթէ իցէ՞ հաճոյ թէ ոչ. 'ի ձախն հայեցաւ թէ սատանայ իցէ՞ անդ և գրգռէ, և ոչ ետես զնա. հայեցաւ յաջ թէ իցէ՞ ար-գելիչ 'ի հրեշտակաց, և ոչ ետես. ապա գիտացեալ եթէ առանց մեղաց է գործն՝ սպան զնա ։

Իմաստուն[1] ծերք՝ եթէ հոգի մարդոյն որպէս աղբիւր է. եթէ պեղեսցես՝ յստակի, և եթէ լցցես՝ կորնչի ։

Եհարց ոմն յեղբարցն ծեր մի և ասէ. զի՞ է այս զի ոչ օգնէ խորհուրդս գործոց իմոց։ Եւ ասէ ծերն. զի ոչ ունիս կատարեալ գործ, զի թէ ունէիր՝ օգնէր դմա ։

Հայրն Արսենիոս ասաց՝ եթէ քառասուն օր 'ի մէջ ոտնկայս յառն կացեալ ոչ ննջեցի ։

[1] Ասաց ծերն՝ եթէ հոգի նման է աղբեր. եթէ ոք բրէ զնա և մաք-րէ մէջն՝ որքի և յորդի. իսկ եթէ 'ի վերայ լցցէ աղբ աղտեղի՝ չամաքի և կորնչի և անյայտանայ ։

Digitized by Google

ԱՍԱՑԻՆ ծերքն. քանի ամ պատերազմեալ ընդ միում խորհրդեան, զի զնմ իբրեւ զմի մարդ տեսցուք:

ԱՍԱՑԻՆ ծերք. մի աներիցես ինչ մինչեւ յառաջագոյն քննեսցես 'ի սրտի քում, եթէ վասն ած լինիցին զոր կամեցիր առնել:

ԵՐԵՔ եղբարք ելին 'ի հունձս եւ առին արտ մի երեքեան եւ գնացին 'ի հնձել. եւ յառաջնում աւուրն հիւանդացաւ մին 'ի նոցանէ եւ չոգաւ 'ի խրճիթն իւր եւ այլ ոչ եւս ետես զնոսա: Եւ ասեն երկու եղբարքն. տէր ած եղբօրն մերում, օգնեա մեզ աղօթիւք նորա փոխանակ անձին նորա: Եւ փութով կատարեցին զհունձն: Եւ եղբայրն յարեաւ 'ի հիւանդութենէն, եւ ահա անցեալ էր ժամանակ հնձոցն: Եւ երկու եղբարքն բերին զմասն նորա եւ ասեն ցնա. առ զվարձս քո: Եւ նա ասէ. ես ոչ ունիմ վարձ, զի ոչ աշխատեցայ: Եւ ասեն նոքա. աղօթքն քո ընդ մեզ էր: Եւ յետ բազում հակառակութեն գնացին 'ի դատաստան առ ծեր մի, եւ զարմացաւ ծերն եւ ետ հարկանել ժամ եւ ասէ. եկայք լուարուք ճշմարիտ դատաստան: Եւ յորժամ եկին, աղաչէր հիւանդացեալ եղբայրն եւ ասէր. ես յառաջնում աւուրն հիւանդացայ եւ ոչ կամիմ ունել զվաստակ այլոց: Եւ ասեն ընկերքն. թէ դորա աղօթքն չէր լեալ ընդ մեզ, մեք ոչ կարէաք հնձել զարտն զայն մեծ թէ եւ զայլս կալեալ էաք 'ի վարձու: Եւ իրաւունս համարեցան առնուլ եղբօրն բաժին ընդ եղբարսն, զի աղօթքն նորա ընդ նոսա էր, եւ փառաւորեցին զած ընդ կատարեալ եւ ընդ անմոխանք սէր եղբարցն՝ կատարեալ եւ սքանչելի զարմանալի արանցն այնդարհաւատից:

ՀԱՅՐՆ[1] Իսիդորոս ասաց՝ եթէ ես յորժամ մանկագոյն էի յարգելանին իմում, չափ ժամու պաշտամանն չունէի, այլ տիւ եւ գիշեր ինձ ժամ աղօթից էր: Ասէր նոյն ծեր՝ եթէ 'ի կող ոչ եդէ զքնաւստուն իմ:

ՀԻՆԳ[2] այրք 'ի յեղբարց անապատին արուեստաւորք գործոց գնացեալ առ ծեր մի կատարեալ հարցանել վասն հոգեւոր իրաց եւ շահել 'ի նմանէ. եւ յորժամ գնա

[1] Ասաց հայրն Իսիդորէ. ես մինչ մանուկ էի եւ նստէի 'ի սենեկի իմում, ոչ ունէի եւս կարգեալ ժամ աղօթից, այլ զտիւ եւ զգիշեր անդադար աղօթէի:

[2] Եղբարք հինգ գնացին երբեմն առ ծեր մին, եւ եհարց ծերն ցմի

ցին, ընկալաւ զնոսա ծերն զուարթութեամբ. որոյ ողջու-
նելով զնոսա 'ի խաղաղութիւն. և յորժամ խնդրեցին 'ի
նմանէ խրատս շահաւորս, նա սկսաւ հարցանել զմի մի
'ի նոցանէ զարուեստէ նոցա: Ասաց մին 'ի նոցանէ. ես
սիրայ հիւսեմ, հայր: Իսկ ծերն ասէ. ա̃ծ հիւսեսցէ
քեզ պսակ, որդեակ: Իսկ երկրորդն ասէ. հասիր գոր-
ծեմ ես, հայր: Ասէ ցնա ծերն. ա̃ծ տացէ քեզ զօրու-
թիւն, որդեակ: Իսկ երրորդն ասէ. ես մազս կազմեմ,
հայր: Ասէ ցնա ծերն. ա̃ծ պահպանեսցէ զքեզ, որդեակ:
Իսկ չորրորդն ասէ. ես գիրս գրեմ, հայր: Ասէ ցնա ծերն.
դու գիտես, որդեակ: Իսկ հինգերորդն ասէ. ես վուշս
գործեմ, հայր, 'ի հանդերձս: Իսկ ծերն ասէ. ես չեմ
անդ, որդեակ: Իսկ զարմացան եղբարքն և խնդրեցին ա-
ղաչանօք մեկնութիւն ասնել պատասխանեացն իւրոց:
Իսկ ասէ ծերն. սիրայն արթուն և ժիր պահէ զգործողն
և այնպիսեացն է պսակն, և հասիրն գործ է որ ուժոյ
պէտս ունի և խնդրեցի նմա զօրութիւն, և մազագործն
պէտս ունի պահպանութեանն ա̃յ, զի 'ի գետս և 'ի քա-
ղաքս շրջի ծախելով զարուեստն, և գրագիրն որպէս 'ի
մեծ հայի յինքն և յայլսն որպէս 'ի փոքր, և վշտագործն
երթևեկութիւն ունի առ աղս և կանայս. և այլ արուեստք
'ի տեսանելն յայտնի երևին թէ գործ կրօնաւորաց է, և
նորայն գործ աշխարհականի. և գրողն նիւթ հպարտու-

'ի նոցանէկն և ասէ. դու ըինչ աշխատիս 'ի սան քումէ: Իսկ նա ասէ.
սիրայս հիւսեմ: Ասէ ցնա ծերն. ա̃ծ հիւսեսցէ քեզ պսակս, որդեակ:
Եւ ցերկրորդն ասէ. և դու ըինչ աշխատիս 'ի սան քումէ: Եւ նա ասէ.
արմաւենիս գործեմ փսիաթ: Ասէ ցնա ծերն. ա̃ծ զօրացուցանէ զքեզ,
որդեակ: Եւ ցերրորդն ասէ. և դու ըինչ աշխատիս, որդեակ: Եւ նա ասէ.
ես մազս գործեմ: Ասէ ծերն. ա̃ծ պահեսցէ զքեզ: Եւ ընդ չորրորդն
ասէ. և դու ըինչ աշխատիս: Եւ նա ասէ. ես գրիչ եմ, հայր: Ասէ
ցնա ծերն. դու ըինչ գիտես թէ ըինչ գրեսցես: Իսկ ընդ հինգե-
րորդն ասէ. և դու ըինչ աշխատիս, եղբայր: Եւ նա ասէ. ես կտաւս
անկեմ, հայր: Ասէ ցնա ծերն. ես առ այդ բան և գործ ինչ ոչ ու-
նիմ: Յայնժամ եղբարքն այնքեցին աղաչանօք ասեն յայտնել նոցա թէ
ըինչ է որ նմանն միմեանց ոչ ասաց բան նոցա: Ասէ ցնոսա ծերն. այս
ինչ է, քանզի որ հիւսէ զսիրայն՝ աշխատէ յոյժ, եթէ զգաստ է ա-
ռաջի ա̃յ՝ պսակ իւր հիւսեսցէ. իսկ որ արմաւ գործէ՝ աշխատի ա-
ռաւել յոյժ, զօրութիւն նմա պիտոյ իցէ. և որ զմազս գործէ՝ նա 'ի
գիւղս շրջի, նմա զգուշանալ պիտոյ է. իսկ գրչին խոնարհութիւն պէտք
են, զի մի հպարտասցի 'ի գործս իւր, ոչ յարգեսցէ զնա. իսկ առ կտա-
ւագործն բան ոչ գոյ իմ, զի 'ի վաճառականաց իցէ նա. քանզի թէ
տեսցեն զոք որ բարձեալ է սիրայ և կամ արմաւ կամ գիրս և կամ
մազս, ասեն՝ ահա կրօնաւոր է, զի խոտ է նորա գործն նիւթ հպրտ.

թեան զայն ունի, զի մնացական է գործն, և այլն խո-նարհին զի անցաւոր է և դիւրանցս գործեն ։

ՀԱՐԱՒՑԵԱԼ ումն միայնակեաց մերժեր յերիցուէն արտաքոյ եկեղեցւոյն . իսկ հայրն Բեսարիոն յարու-ցեալ ընդ նմին արտաքս ելանէր* ։

ԱՍԱՑԻՆ ծերքն՝ եթէ ոչ այլ ինչ խնդրէ ած 'ի նո-րամուտ միայնակեցէ, բայց հնազանդութիւն 'ի ձեռն մարմնոյն աշխատութեան ։

ԼՈՒԱՒ՝ հայրն Աբրահամ թէ ումն 'ի ծերոցն ա-սաց՝ թէ յիսուն ամ վաստակեցի զցայգ և զցերեկ և ապա կարացի սպանանել զախտս յանձնէ իմմէ ։ Եւ եկն առ նա և ասէ . դու ասացեր զբանս զայս ։ Եւ ասէ՝ այո ։ Եւ ասէ ցնա . թէ գնաս 'ի խուցն քո և տեսանես անդ կին մի, կարես իմանալ թէ չէ կին ։ Եւ նա ասէ՝ ոչ, բայց կարեմ կռուել ընդ խորհուրդս իմ զի մի մե-ղայց ։ Եւ ասէ ցնա . թէ գաս ընդ անապատ և տեսա-նես ընդ քարինսն եդեալ ոսկի, կարես իմանալ թէ այս չէ ոսկի ։ Եւ ասէ՝ ոչ, այլ կարեմ կռուել ընդ խոր-հուրդս իմ զի մի կերպայց 'ի նմանէ ։ Եւ ասէ ցնա . թէ գան երկու եղբարք առ քեզ, որ մինն հայհոյէ զքեզ

իսկ եթէ զոք տեսցես զի վաճառեսցէ կուսս, ասեն՝ ահա վաճառա-կանք գան . զի այս գործ աշխարհականաց է ։ Իբրև լուան զայս, շա-հեցաւ յոյժ և ուրախացեալ գնացին՝ երկրպագելով տրպոյ ծերոյն ։

* Այլ օրինակ դարձեալ 'ի հին թարգ-մանութէ . Եղբայր ոմն անկաւ 'ի մեղս և քահանայն եհան զնա յեկեղե-ցւոյն . և ել ընդ նմա հայրն Բե-սարիոն ասելով, և ես մեղաւոր եմ իբրև զսա ։

։ Ասէին զծերոյ ումեմնէ՝ եթէ եկաց զամս յիսուն 'ի յաղթելունի, և 'ի շաբաթուն մի անգամ ճաշակէր հաց և ջուր . և ասէր թէ մե-ռուցի ես զախտ իմ զպոռնկութե զարծաթսիրութե և զանփառու-թիւն և զայլ ամենայն չարիս ։ Լուեալ զայս հայրն Աբրահամ զի ա-սէր նա զայս, եկն առ նա և ասէ ցնա . դու ասացեր զբանս զայս՝ թէ մեռուցի ես զախտս ։ Եւ նա ասաց . այո ես ասեմ ։ Ասէ ցնա հայրն Աբրահամ . ահա ես իբրև մտի 'ի սենեակ քո և գտի կին ումն որ նստէր 'ի մահիճս քո, արդ կարող իցես դու ոչ համարել զնա կին 'ի միտս քո ։ Ասէ ցնա ծերն . ոչ, այլ պատերազմիմ ընդ խորհուրդս իմ ոչ մերձենալ 'ի նա ։ Ասէ ցնա հայրն Աբրահամ . ահա ոչ ես սպանեալ, այլ կենդանի է ախտդ և այս ախտ 'ի քեզ, այլ միայն կապեալ կայ ։ Դարձեալ մինչ շրջէիր, տեսեր վէմ մի և կղմինդր և 'ի մէջ նոցա եդեալ ոսկի . արդ կարեն միտք քո հաւասար քարին և հողոյն համարել զոս-կին զայն ։ Պատասխանի ետ ծերն և ասէ . ոչ, այլ պատերազմիմ ընդ խորհուրդս իմ, զի ոչ առից զնա ։ Ասէ ցնա Աբրահամ . ահա և այս ախտ կենդանի է, այլ կապեալ կայ ։ Ասէ դարձեալ հայրն . ահա լսես

Digitized by Google

միշտ և միւսն բարեբանէ հանապազ, կարեօս միով կամաւ ընծայել 'ի նոսա: Այլ ասէ՝ ոչ, այլ կռուիմ ընդ միտս իմ տեսանել զհայհոյիչն իբրև զգովողն: Այլ ասէ ցնա Աբրահամ: հայր, ահա յայտ արարեր թէ ոչ սպաներ զախտսն, այլ կենդանի է 'ի քեզ և յամենեսեան, և տան պատերազմ իբրև կենդանիք. և արդ մի պարծիր:

ՄԱՏԻՆ ծերք՝ եթէ ամենայն երկրորդ 'ի վերայ քո յարուցելոց խորհրդոց, երրորդ ասա՝ մեր ես եթէ 'ի թշնամեացն. և ամենայն իրօք խոստովանեսցէ:

ՀԱՅՐՆ Մակարիոս ասաց 'ի մեռանելն իւրում, եթէ հանգոյն սերովբէից և քերովբէից պարտ է լինել միայնակեցաց՝ ամենևին ակն:

ՈՒԵՐ մի էր 'ի Տերենութ և էր նորա եղբայր. մեռաւ եղբայրն և եթող տղայ մի ամաց երից, և երթեալ ծերն էած յանապատն, և սնոյց ընդովք և բանջարովք: Այլ իբրև եղև ութևտասնամեայ՝ ել 'ի մարմնոյն. և ծերն տեսանէր 'ի տեսլեանն 'ի խաւարին և յաղջամղջջին տեղւոջ զմանուկն: Այլ լայր դառնապէս և դատ դնէր ընդ այ՝ եթէ զինչ է այն տեղին. զմարդ չէ տեսեալ մանուկն և հաց չէ ճաշակեալ և սրբութ̃ի կեցեալ է վասն քո, քո արդար դատաստանդ՝ չէ այն նորա տեղի. յայտնեա ինձ, ապա թէ ոչ՝ դառն տանջանօք վտանգի իմ ծերութիւս: Ասէ հրեշտակն 'ի տեսլեանն. ծեր, լի էր մանուկն ամենայն բարեձևութ̃ի, բայց հպարտ էր, վասն այնորիկ կայ 'ի խաւարի: Ասէ ծերն. և բարեձևութիւնն չկարած բժշկել զհպարտութիւն: Ասէ հրեշտակն. վասն զի չեթող՝ ընդ իւր տարաւ. զամենայն մեղս զոր ոչ թողու մարդ 'ի կենդանութ̃ե իւրում, այլ ընդ իւր թաղէ 'ի գերեզմանի, անբժշկելի լինի նմա խաւարն և հուրն անշէջ. և դու ոչ բարիոք գործեցեր, զի 'ի մարմնի ոչ խրատեցեր և բժշկեցեր: Այլ ծերն լալով անցոյց զամենայն աւուրս կենաց իւրոց մինչև ցմահ:

ԵՀԱՐՑ՝ եղբայր ումն զծերն. զինչ է մշակագործու-

գու զերբարց երկուց զի մինն սիրէ զքեզ և միւսն ատէ և բամբասէ, և եթէ գոցին առ քեզ երկոքեանն՝ կարող իցես հաւասար ընդունել զնոսա: Ասէ. ոչ, այլ պատերազմիմ ընդ խորհուրդս բարի առնել և ատելւոյն իբրև սիրելւոյն իմոյ: Ասէ ցնա Աբրահամ. ահա կենդանի են ամենայն ախտք, այլ կապեալ կան 'ի սրբոց շնորհօքն այ:

1 Եղբայր ումն եհարց զծերն և ասէ. ո՞րք են, հայր, մշակութիւնք

թիւն հոգւոց զի պտղաբերիցէ ։ Եւ ասէ ծերն . մշակագործութիւն հոգւոյ է լռութիւն և ժուժկալութիւն և վրշտագնութիւն և ցաւակցութիւն և յաճախումն աղօթից և ոչ հայել ՝ի յանցանս այլոց , այլ յիւրն միայն . եթէ զայսպիսի ստանայ , ոչ յամէ մինչև պտղաբերեսցէ հոգին ։

ԱՍԷ՝ դարձեալ ծերն՝ եթէ մանուկ որ ընկենու զբան իւր ՝ի մէջ երիցանց , նման է որ ընկենու հուր ՝ի ծոց եղբօր իւրոյ ։

ԱՍԵՆ ծերքն . խրատեցէք զմանկունս , եղբարք , զի մի նոքա զմեզ խրատեսցեն ։

ԱԿՆ երբեմն ծեր ոմն մեծ տեսանել զբնակեալսն ՝ի խուղսն . և էր անդ մանուկ մի , որ դիւրաւ առնոյր ՝ի բերան զգիրս սուրբս ։ Եւ հարցեալ վասն նորա հարանցն ցնա՝ թէ զիա՞րդ այսպէս դիւրաւ ընդունի զգիրս սուրբս յմիքեան , և են այլք որ եթէ աշխատին՝ և սակաւ ինչ կարեն առնուլ ՝ի բերան ։ Պատասխանի տուեալ ծերոյն ասէ . Ջուրք ՝ի ներքոյ երկնից ՝ի միում վայրի են . բայց են ապա մասունք յաշխարհիս խոնարհագոյնք , յորում եթէ խնդրեսցէ ոք ջուր՝ վաղվաղակի գտցէ . և դարձեալ են տեղիք յաշխարհիս բարձրագոյնք , յորում եթէ խնդրեսցէ ոք ջուր՝ աշխատութեամբ կարասցէ ոք գտանել ։ Այսպէս և յանձինս . վասն զի են անձինք որ սակաւ ինչ ունին կցորդութիւն ընդ չարութեան , և յորժամ կամին խնդրել զգիտութիւն՝ վաղվաղակի գտանեն . և դարձեալ են անձինք կցորդակիցք չարեաց , նոքա աշխատութեամբ առնուն զգիտութիւն ։

ԱՍԱՑ՝ սուրբն Մակար՝ եթէ չար որ ոչ կատարի , չէ չար . և բարի որ ոչ կատարի , ոչ է բարի . և մարդ՝ որ ոչ կայ ՝ի նա խորհուրդ չար և բարի , նման է երկրին

հոգւոյ ։ Ասէ ցնա ծերն . մշակութիւն անձին է հանդարտութիւն մարմնոյն իւրոյ և աղօթք յարաժամեայ և ոչ տեսանել զմեղս ուրուք , այլ զիւրն միայն . և եթէ յայսպիսի յամեսցի մարդ , փոյթ բերցէ պտղաւոր անձին ։

[1] Ասաց ծերն . մանուկ որ արկանէ զբան իւր ՝ի մէջ այնոցիկ որք քան զինքն աւագ իցեն , նման է այն որ արկանէ զհուր ՝ի ծոց իւր և ընկերի իւրոյ . վասն այսորիկ խրատեցէք , եղբարք , զմանկունս , զի մի նոքա խրատեսցեն և լցցեն զձեզ ։

[2] Ասաց ծերն . ամենայն չար զոր ոչ կատարեսցէ մարդ գործովք , ոչ է չար . նոյնպէս և ամենայն արդարութիւն զոր ոչ կատարէ ոք զնա գործովք , ոչ նա է արդարութիւն ։ Քանզի մարդ որ ոչ ունիցի խորհուրդ չար և բարի , նման իցէ նա երկրին Սոդոմայ և Գոմորայ , որ

Digitized by Google

տողանկացուց. զի Երկիր բարի ցորեան և աւելորդ բան ջարս ծնանի ։

ՍՈՒՆ 'ի Սկիտոյ եկն 'ի Թեբայիս և նստաւ անդ, և արար իւր բաղում աւուրց հաց, որպէս և էր սովորութիւն Սկիտոյ ։ Եւ եկին առ նա Թեբայեցիքն և ասեն. որպէս պահէք դուք զբան տեառն որ ասէ՝ թէ զվաղիւն մի հոգայք ։ Եւ նա ասէ ցնոսա. և դուք որպէս առնէք ։ Եւ նոքա ասեն. մեք զօրըստօրէն գնեմք ձեռագործօք մերովք 'ի փողոցէն ։ Եւ ասէ ցնոսա սկիւթացին. իմ փողոց և խանութ խուցն իմ է, ես զիմ օրըստօրէն անտի գնեմ վաստակօք իմովք ։ Եւ նոքա զովեցին զնա և ասեն. Ճշմարիտ լաւ է ընտրողութիւն քան զկատարեալ օրինապահութիւն ։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց զհայրն Սիսոյն և ասաց. տանջիմ, հայր, վասն սուրբ երրորդութեան իմանալ ինչ օրինակ և ոչ կարեմ ։ Եւ նա ասէ. իմա նշանակ հօր՝ զարեգակն, և ճառագայթին՝ զորդին, և ջերմանն՝ զհոգին. և որպէս ոչ հասանես 'ի բարձրութիւն արեգականն և ոչ շօշափել զճառագայթն և ոչ քննել զջերմութիւն զայն, ես առաւել և ոչ վասն երրորդութեան կարես հասու լինել, զի օրինակս ծառայ է և գործ մի փոքր նմա ։ Եւ լուեալ եղբօրն ետ փառս այ և հանգեաւ ։

ԶՐՈՒՑ՝ երբեմն Պաւղոս աշակերտ հօրն Սմրայ գնել արմաւենի, և այլոց յառաջագոյն էր տուեալ ըզգինսն. իսկ հայրն Սմր ոչ երբէք յառաջէր և տայր արբան իմիք, այլ 'ի ժամանակին առաքէր զգինսն և գնէր ։ Արդ երթեալ Պաւղոս և յայլ տեղիս վասն արմաւենեաց, և ասէ ցնա պարտիզպանն. այր մի ետ ինձ արբան, և այլ ոչ ևս եկն. արդ առ զայն դու ։ Եւ առեալ եկն առ ծերն և պատմեաց նմա նոյնպէս ։ Եւ իբրև լուաւ ծերն, բարկացաւ զձեռս իւր ընդ իրեարս և ասէ. Սմր

աղի իցէ և ոչ ինչ բուսանի 'ի նմա. իսկ բարի երկիրն կարող է բերել ցորեան և ընդ նմին զօտար բոյսս ևս և տատասկ ևս ։

։ Գնաց երբեմն Պաւղոս աշակերտ հօրն Սմրի զի գնեսցէ արմաւոյ ոստս, և գտաւ զի այլոց պայմանեալ էր արմաւ և տուեալ էր գինս. և քանզի հայրն Սմր ոչ գրաւէր ինչ, այլ առաժամայն գնէր. և գնաց այլուր աշակերտ նորա վասն արմաւոյ ։ Ասէ ցնա պարտիզպանն. վաղ ուրեմն եկն ոմն և եդ գրաւ արմաւոյս, և այլ ոչ եկն առնուլ զայս. արդ կալ զայս քեզ ։ Եւ առեալ զայն Պաւղոս եբեր առ ծերն և պատմեաց նմա ։ Իբրև լուաւ ծերն զայն, ծափահարեաց ձեռօք և ասէ. Սմր գրաւ-

Digitized by Google

ոչ գործէ այսմ: Եւ ոչ ետ մտանել 'ի ներքս մինչև տարաւ զարմաւենին 'ի տեղի իւր:

ՀԱՅՐՆ' Մակար երբէք ոչ ժպտեցաւ ամենևին. և 'ի միում աւուր ժողովեցան բազում դևք և կապեցին 'ի Ճնճղկի միում թև մի երկայն դերձանս և քարշէին ուժգին աղաղակելով' քարշեցէք, մանկտի, քարշեցէք. և ամենևին զփետուրն զայն 'ի տեղւոջէն ոչ կարացին շարժել: Եւ տեսեալ զնա անապատաւոր ծերոն' ժպտեցաւ: Եւ սկսան դևքն ծափս հարկանել և ասել. վաշ, Մակար ժպտեցաւ: Ասէ Մակար. եղկելիք և թշուառականք, ոչ ժպտեցայ, այլ ծիծաղեցայ ընդ անկարութիւն վատութե ձերոյ, որ այնչափ դևք ոչ էք կարող շարժել զՃնճղկի կրծոց թև մի: Եւ փչեաց 'ի թևն և 'ի դևսն' և անյայտ եղեն:

ԱՍԱՑ ծեր ոմն որ էր 'ի Սկիւթ յանապատին Եգիպտոսի. գայ, ասէ, խորհուրդ պոռնկութե և խռովէ զիս և անպարապ զիս առնէ, և զգործն ոչ զօրէ առնել, և օգտել ինչ ոչ օգտի, բայց միայն խափանէ զիս յառաքինութինս. իսկ քաջ այր կանգնեալ զինքն յառնէ կայ յաղօթս: Առ այն խորհուրդս ասաց այլ ծեր. եթէ խորհուրդս ոչ ունիս, գործս ունիս. որ ունի գործս, խորհուրդս ոչ ունի և ոչ երբէք նեղի 'ի նոցանէ. մի սովորութիւն ինչ ունիցիս ընդ կանայս խօսել: Ասէ եղբայրն*. ոչ, հին և նոր նկարիչք 'ի խորհուրդս իմ: Իսկ ծերն առ նա ասէ. 'ի մեռելոց մի երկնչիր, բայց 'ի կենդանեաց փախիր: Առ այն խորհուրդս այլ ծեր ասաց.

ռաւ ոչ աշխատի: Եւ ոչ եթող զարմաւենին բերել 'ի ներքս, այլ առաքեաց անդրէն 'ի տեղի իւր:

: Աւելին զհօրէն Մակարայէ՝ եթէ ոչ ոք ուրեք լսեալ զերկաս նորա ժպտեալ. և 'ի միում աւուր ժողովեալ դևք կամեցան ծիծաղեցուցանել զնա, և կապեալ 'ի կառան մի մեծ թև մի հաւու և սկսան մեծաձայնիւ աղաղակել և քարշել զայն և ասել՝ հա քարշեցէք, հա քարշեցէք: Հայեցեալ 'ի նոսա հայրն Մակար՝ ժպտեցաւ: Իսկ դևքն թողեալ զայն՝ կապեցին պարս, ծափէին և երգելով ասէին. ահ ահ, Մակար ժպտեցաւ: Ասէ Մակար. ոչ ծիծաղեցայ, այլ այսպէս արարի զանկարութիւն ձեր, որք այդքան բազմութին զմի թև հաւու ոչ բարձիք:

* Զինուորեալն Խմաստից օրինակաց հնոյ Թարգմանութեան յայսմ վայրի ըստ- ցուցանէ ընդ ... օրինակին Եւր- բերէ Թարգմանութեան որ յառաջինսամ հարակ մատենիս յէջ 643. որում հա- մայնոյն գծանէ և լուսին Թարգմանն:

եթէ ոչ ունիցիք խորհուրդք, գազանք եմք. եթէ ոչ ունիցիք խորհուրդք, համարձակութիւն ոչ ունիցիք. եթէ ոչ ունիցիք խորհուրդս, յոյս ոչ ունիցիք: Վասն որոյ որպէս թշնամին զխելքն պահանջէ, մեք զմերն պահեսցուք. կացցուք յաղօթս և փախիցի. պարապեա 'ի խոկումն մտյ և յաղթես. ժուժկալութիւն յաղթութիւն է, մարտիր և յաղթես: Ը. Նա' այլ ծեր ասաց. Ննջելով կամիս աղրել, երթ աշխատեա, երթ ձգնեա, երթ խնդրեա և գտանես, արթուն կաց և բախեա և բացցի քեզ. կաց և ժուժկալեա, և մտ պատերազմեսցի յաղագս քո ընդ թշնամեայն: Ը. Նա այլ ծեր ասէ. Թօթափեա 'ի քէն զժամանահատութիւն. արի աղօթեա աւելով որդի մտ, օգնեա ինձ: Այս և այլ ես խորհուրդս առնիջիր. քանզի ոչ եթէ առ ընդդունակ եմք խորհրդոցն, այլ ընդդէմ ձգնողք: Ը. Նա այլ ծեր ասաց. զայդ մտ 'ի յուլութէ կրեմք մեք վիշտս. եթէ հաւատայաք եթէ մտ բնակէ 'ի մեզ, ապա ոչ զայլոց խորհուրդս արկանէաք 'ի մեզ. քանզի տէրն մեր Յս 'ի մեզ բնակէ, և մերձ առ մեզ կալով տեսանէ զմեր զկեանս. վասն որոյ և մեր զգենլով զնա և տեսանելով զնա' յուլանալ եթէ չպարտիմք, այլ սրբել զմեզ որպէս և նա սուրբ է: Վասն այսորիկ եկն որդին մտյ, զի դու սպրեսցես. եղև մարդ, վասն զի մտ էր. եղև գրակարդաց, առնել զգիրն կարդաց առնելով. հոգի տեառն 'ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս, աւետարանել աղքատաց առաքեաց զիս: Առաքեալք եղեալ՝ արարեալ խառազան չուանեայ զամենեսեան եհան 'ի տաճարէն: Աշակերտ եղեալ՝ սփածեալ զլենջանն և լուաց զոտս աշակերտացն: Ազրեց՝ նստեալ 'ի մէջ քահանայիցն ուսուցանէր զժողովուրդն: Մտեկաղ՝ առնել զհացն օրհնեաց և բեկեալ ետ աշակերտացն: Չարչարեցաւ վասն քո, խաչեցաւ վասն քո, մեռաւ վասն քո, և դու յաղագս նորա և ոչ թշնամանս

1 Նաև ծեր ասէ. զի՞նչ կ'ընէս, ով մարդ, մինչ եթէ ննջելով կամիս կեալ. երթեալ աշխատեա, երթեալ խնդրեա մինչև գտցես, զարթիր և բախեսցես զդուռն և բացցի քեզ. զի և ոչ երկրաւոր ինչ գործ առնելոյ առանց աշխատութեան, ոչ մշակել և ոչ զինուորել. այսպէս և զհոգևոր գործն իմասցիս: Զժամահատութիւն մեղացն որ գան ի խորհուրդ քո, ի բաց դարձո ի քէն, և յարուցեալ աղօթեսցես և ասասցես. որդի Այ, օգնական իմ լեր ի վերայ. անմիտ չար խորհրդոց:

կրես յերգաւորէն։ Դատապարտեցուցաք զգործս, դատապարտեցուցաք և զմտածութիւնս զանպատեհս և զանվայելուչս։ Մ՛ի երաներ 'ի գաւթէ և 'ի բակէ աշխարհաց, զի մի գայթակղեալ լինիցիս դու երանելովն քո։ Նիստ 'ի տան քում, աբեղայ, և կերակրեա զանձն քո ածաշունչ բանիւք, և գտանես քեզ վարդապետ զբարեպաշտ խորհուրդս այ։ Որ զանձն իւր ետ այ, ոչ ունի կամս առ անձն իւր, այլ ինքն կամացն այ անսայ և ընդունի զնա և ոչ աշխատի. իսկ եթէ զքո զկամսդ կատարես, աշխատիս՝ ոչ գործ առնելով ընդ քեզ այ։ Որ ընդ այ կեայ, ած ընդ նմա կեայ. բնակեցայց 'ի նոսա և շրջեցայց և եղէց նոցա ած և նոքա եղիցին իմ ժողովուրդ։ Ասէ ինձ ած. սիրեա զիս, աբեղայ։ Այո՛ սիրեմ զքեզ։ Սիրեա զիս, զոր կամիմն արա, զոր ոչն կամիմ մի առներ։ Կեանք աբեղայի այս են՝ գործ, ունկնդրութիւն, խոկումն այ, մի դատել զայլ, մի շարախօսել զումեքէ և մի հպարտանալ. գրեալ է՝ ոյք սիրէք զտէր, ատեցէք զչարութիւն։ Մեծութիւն և ազգ և իմաստութիւն առանց յօրինելոյ ուրուք զինքն՝ ոչ ինչ է օգուտ։

ՀԱՐՑԱՒ ծեր՝ թէ որպէս պահեսցուք զանձինս մեր։ Նա ասէ. յաղօթս և 'ի պահս, 'ի գործ, յաշխատութիւնս և 'ի տքնութիւնս, յողորմածութիւնս, և յայս ամենայնի վերայ և յորոշողութեան խորհրդոց։ Ասեմ քեզ. բազումք բազում նեղեցին զանձինս իւրեանց առանց որոշողութեան խորհրդոց և գնացին ունայն՝ ոչ ինչ ունելով ամենեւին յանձինս*։ Սերանք մեր հաստեալ են 'ի պահոց. զգրեանն 'ի բերան առաք, զԱղօթութիւն կատարեցաք. այլ զոր խնդրէրն ած՝ զսէրն և զխոնարհութիւն, ոչ ունիմք 'ի մեզ։ Որպէս՝ անհնար է տեսանել ումեք զերեսս իւր 'ի ջուր պղտոր, այնպէս և անձն եթէ ոչ սրբեսցի 'ի խոր-

Այսպէս տեսցես և սպասցես դու աղօթս. զի ոչ եթէ խօսել ... եմք մեք, այլ պատերազմողք միայն։

* Այս օրինակ ... 'ի հին բարգմանութեան. ... եթէ ... կարացից գտանել զած, ... եթէ ... եթէ ... խոնարհութեամբ։ ... ամենայնիւ գտցես հանդերձ ընտրողութեամբ. ասեմ քեզ՝ բազումք նեղեցին զանձինս իւրեանց առանց ընտրողութեան և չոգան ունայն։

։ Որպէս անհնարին է 'ի ջուր պղտորեալ տեսանել ումեք զերեսս ...

հերձուածողաց պղծագակաց և չարաց, տեսութիւն աղօթս ոչ կարէ մատուցանել։

ԵՂԲԱՅՐ ոմն նեղէր զծեր ասելով՝ զինչ արարից առ յոյժ բազմանալ իմ խորհրդոցս։ Իսկ ծերն ասէ նմա. դու որպէս Ջրհոր անձրևաց ես, որ երբեմն յանձրևացն լնու, երբեմն հանելով պակասի. ընդէ՞ր ոչ առնուս նման ես աղբեր որ ոչ երբէք պակասի։ Խոժկալութիւն յաղթութիւն է, և յաղթութիւն համբերութիւն, իսկ համբերութիւն կեանք են և կեանքն արքայութիւն, իսկ արքայութիւնն ամ։

ԱԲԵՂԱՅԻՆ՝ բնակելոյ յանապատին յոյս ազդեցաւ յազգականաց իւրոց ըստ մարմնոյ։ Քանզի ասէր. հայր քո հօրապէս նեղի և համբերձեալ է վախճանել, եկ զի ժառանգեսցես զնա։ Իսկ եղբայրն ասէ ցնա. ես յառաջ քան զնա մեռայ աշխարհի, մեռեալ զմեռեալ ոչ երբէք ժառանգէ։

ՀԱՐՑԱՒ ծեր յեղբօրէ. աբբայ, ասա ինձ թէ որպէս ապրեցայց։ Իսկ ծերոյն համբարձեալ զձեռս իւր ասէ. այսպէս պարտի աբեղայն լինել՝ մեռկ ՚ի հիւթոյ աշխարհիս. ՚ի մրցանակս նկլոտի ըմբիշն, և ՚ի խորհուրդս չարս խաչացուցանէ յերկինս զձեռս իւր աբեղայն կարգաւ առ ամ։ Մերկ կայ ըմբիշն ՚ի մարտին կռուելով, մերկ և անհիւթ և օծեալ լինի լոկ ձիթով և ուսեալ ՚ի կարգադրէն իւրմէ թէ որպէս պարտ է կռուել. գայ թշնամին և ընդդէմ նորա ցանէ աւազ, զի այնպէս կալցի զնա դիւրաւ։ Տես և զդոյն ՚ի քեզ, աբեղայ. վերակացու է մեզ խնքն ամ, որ տայ մեզ յաղթութիւն, որ և յաղթէ իսկ ընդ մեր. և քանզի կռուողքն մեք եմք, իսկ մարտն սատանայ է, իսկ աւազն իրք աշխարհիս են։ Տեսանե՞ս զարուեստ թշնամեաց, կաց անհիւթ և յաղթես։ Քանզի միտքն յորժամ հիւթական չնչոյն ծանրացին, ոչ ևս կարեն յինքն ընդունել զանհիւթն և զսուրբ բանն ամ։ Ոմանք զքեզ, աբեղայ, և ստացիր ըղխնաարհութիւն և ոչ երբէք անկանիս։

բանս իւր, նոյնպէս և անձն եթէ ոչ մաքրեսցի ՚ի չար խորհրդոց, ոչ կարէ տեսանել զամ յաղօթս իւր։

։ Աբեղայ ոմն բնակէր ՚ի լեռինն յաղթ ինչ, և յղեցին առ նա ընտանիքն իւր և ասեն. հայր քո հիւանդ է և մերձ է ՚ի մահ, եկ դու ժառանգեա զստացուածս նորա։ Իսկ նա պատասխանի ետ և ասէ. և նախ քան զնա ես վաղուց հետէ մեռեալ եմ յաշխարհէ, և մեռեալն զկենդանեաց ժառանգել ոչ կարէ։

Digitized by Google

ԵՂԲԱՅՐ՝ ումն եհարց ցծեր յաղագս կենաց։ Իսկ սա՝ նմա. խոտ կեր և խոտ զգեցիր, բայց զօրէն սրտացիր երկաթի։ Պարտի աղքատին երկիւղն և այգուն առնել բանս ընդ անձին խղճեան առնլով՝ եթէ զինչ ինչ կամէր նա և ես ոչ արարի, և զինչ էր զոր ոչ կամէր նա և ես զայն արարի. և այնպէս վիճելով խիղճն ընդ խղճեան զամենայն աւուրս կենաց իւրոց*։ Այսպէս պարտի լինել աղքատին, փութալ զամենայն օր կալ առաջի այ առանց մեղաց, և այնպէս աղօթել առ տէր որպէս մերձաւորն առ մերձակայն. և արդարև իսկ ճշմարիտ մերձակաց է։ Մի՛ այլ օրէնս դնելով խղճեան, մի դատել զոք ամենեւին. քանզի ոչ եմք ընդ օրինօք, այլ ընդ շնորհօք։ Որ ոչ ընդունի զամենայն եղբարսն զոյգ, այլ աչառանօք ունի զմի մի, այսպիսին ոչ կարէ կատարեալ լինել։ Յառաջ քան զամենայն առաքինութիւն է խոնարհութիւն, և նախ քան զամենայն ախտս է փառասիրութիւն. գլուխ առաքինութեանցն սէր է, իսկ գլուխ ախտիցն արդարացուցանել զինքն է։

: Եղբայր ումն եհարց ցհայրն Եղիսեայ վասն կենաց իւրոց։ Ասէ ցնա ծերն. խոտ կերիցես և խոտ զգեցցես և խոտ արկցես զքեզ, և սիրտ միայն ունիցիս երկաթի, որպէս զի զամենայն արհամարհեսցես։ Ասաց հայրն Նիսթերիոն՝ եթէ պարտ է կրօնաւորի յամենայն երեկոյի և առաւօտի քննել զանձն իւր և ասել՝ թէ զինչ գործեցի զոր հաճոյ Աստուած, և կամ զինչ զոր ոչ հաճի. 'ի սոյն և 'ի գիշերի զայսոսիկ միշտ պարտ է խորհել և հոգալ. և զի այսպէս կայր երանելին Արսէնի և ամենայն սուրբ հարքն։ Եւ փութա ամենայն օր կալ առաջի այ առանց մեղաց. և այսպէս աղօթեսցես առ այ իբրև թէ մերձ քո կայ, և զի մերձ է առ մեզ, և աչք նորա տեսանեն զամենայն յամենայնի։ Եւ մի օրէնս դներ անձին քո և մի դատեսցես զոք, քանզի օտար է 'ի կրօնաւորէ դատել կամ բամբասել և սուտ երդնուլ և կամ խրատ, և կամ ատել և կամ անիծանել կամ անարգել, և կամ ծաղր. խնդրել առաւել քան զբաժանն իւր գողեսցի և կամ պատուեսցի սա, առաւել տուժեսցի։

* Այս օրինակ գործն 'ի հին Յոհաննէ. Ասաց ծերն՝ եթէ պարտ է յամենայն աւուր պատրաստել միայնակեցին զանձն կալ առաջի այ, և յերեկոյին և յառաւօտուն քննել զանձն թէ զինչ եղև և զինչ կայ մնացն, զի այս էր առաջին համբաւն մահուն։

# ՄՆԱՑՈՐԴՔ

## յերկրորդ թարգմանութեան

ԱՍԷ ոմն եղբայր ցհայրն Նիստոն․ աղօթեա վասն իմ, հայր։ Ասէ ցնա ծերն․ ոչ ես ողորմիմ քեզ և ոչ ած, եթէ ոչ դու փութասցիս և խնդրեսցես յայ սիրով։

ՆԹԵԱԼ երբեմն հայրն Նիստոնիոսի 'ի ձեռս իւր նամակ գրեալ 'ի Կոստանդիանոս արքայէ՝ եթէ եկ առ իս 'ի Կոստանդնուպօլիս, զի օրհնեսցայց 'ի քէն։ Նա խորհէր 'ի միտ եթէ զինչ արասցէ․ և ապա եհարց զՊաւղոս աշակերտ իւր՝ եթէ պարտ իցէ գնալ։ Ասէ ցնա Պաւղոս պարզամիտն․ եթէ գնասցես՝ Նիստոն կոչեսցիս, իսկ եթէ ոչ գնասցես՝ հայր Նիստոն կոչիս։

ԵՀԱՐՑ հայրն Մարկոս ցհայրն Արսէնիոս և ասէ ցնա․ ընդէ՞ր իցէ զի են ոմանք մարդիկ բարիք, և 'ի ժամ մահու բազում վշտիւք ելանեն հոգիք նոցա 'ի մարմնոց իւրեանց։ Պատասխանի ետ ծերն և ասէ․ վասն այնորիկ զի որպէս աղ աղացեալ լինին աստ, և անդ գնասցեն կատարեալ սուրբք։

ԱՍԱՑ դարձեալ նա․ բարկացող եթէ մեռեալ ևս յարուցանէ, ոչ է ընդունելի այ։ Նա եթէ ոք յոյժ բարեկամ իցէ, և առ ծուլութի ձգել ջանայ զիս, հանիր զնա յինէն։

ԵՂԲԱՐՔ երեք գնացին երբեմն առ հայրն Աքիլա, և մինն 'ի նոցանէ ունէր անուն ոչ բարի։ Ասէ ցհայրն Աքիլա մի յեղբարցն յայնցանէ․ հայր, արասցես ինձ ուռկան։ Իսկ ծերն ասէ․ ոչ արարից։ Նա դարձեալ երկրորդն ասէ․ հայր, արասցես մեզ ուռկան, զի կալցուք զայն 'ի յիշատակ սիրոյ քո 'ի վանս մեր․ Ասէ ծերն․ ոչ եմ պարապ առնել։ Յայնժամ և չարանուն

Digitized by Google

այն եղբայր ասէ. Հայր, արա սէր և արասցես մեզ ուռկան, զի կալցուք զայն օրհնութիւն 'ի ձեռանէ քումմէ: Իսկ ծերն ասէ ցնա. ես արարից քեզ ուռկան ընտիր: Յայնժամ իբրև եղեն 'ի ծածուկ, հարցին ցնա երկու այն եղբարքն և ասեն. ասասցես մեզ, հայր Աքիլա, ընդէ՞ր արարեր զայս. մեք աղաչեցաք զքեզ առնել մեզ ուռկան՝ և դու ոչ կամեցար առնել, և յորժամ վասանուն այս եղբայր խնդրեաց 'ի քէն՝ դու ուրախութեամբ ասացեր առնել նմա: Ասէ ցնոսա ծերն. ասացի ձեզ թէ ոչ առնեմ և դուք ոչ տրտմեցայք, զի անարատք էիք. իսկ սմա թէ ասացեալ էի թէ ոչ առնեմ, խորհէր 'ի միտի թէ զմեղս իմ լուեալ իցէ ծերն, վասն այնորիկ ոչ կամեցաւ առնել և տրտմէր, և հատանէի նովաւ զկապանս երկայնմտութեան. այլ արդ սովաւ յարուցի զհոգի սորա, որպէս զի մի յառաւել տրտմութենէն ընկղմեսցի 'ի խորս անյուսութեան:

• ԱՍԷԻՆ վասն հօրն Ամմոնայ՝ եթէ արարին երբեմն յխուռն չափ ալիւր 'ի պէտս իւրեանց աշակերտքն նորա. և մինչդեռ ոչ ճաշակեալ 'ի նմանէ՝ այլ 'ի դրան էր, ետես հայրն գործ ինչ որ ոչ շահ էր, և ասէ ցաշակերտս իւր. արիք գնասցուք: Իսկ նոքա տրտմեցան յոյժ: Եւ իբրև ետես զնոսա տրտմեալս, ասէ. դուք տրտմեալ էք վասն ալերս այսորիկ, արդարև ասեմ ձեզ՝ զի տեսի ես զոմանս զի փախեան և թողին տունս ոսկեձեղունս և պատուհանս լի զգեստուք և գանձարանս լի ընչիւք, որք և ոչ զդրունս փակել կարացին, այլ փախեալ գնացին, թէպէտ 'ի բաց մնացին տունք նոցա:

ԵՂԲԱՅՐ ոմն եթող հօրն Պեղասիոյ զսենեակ իւր և զգիւղ ինչ սենեկի իւրոյ. իսկ ծերն որ սենեկին տէր էր՝ էր 'ի Ակիւպօլսոյ Պաղեստինոյ, և մեռեալ սա՝ զսենեակ իւր և զգիւղն աւանդեաց հօրն Պեղասիոյ: Իսկ էր յայնժամ այր ոմն որ կոչէր Սակատոս՝ իշխան մեծ 'ի Ակիւպօլիս. իսկ միակ ծերոյն որ էր 'ի գիւղին՝ իբրև լուաւ զվախճան ծերոյն, պատմեաց Սակատոսի իշխանին զմահ ծերոյն և զսենեակ և զգիւղ նորա: Իսկ Սակատոսն այն բռնաւոր կամեցաւ առնուլ զսենեակ և ըզգիւղն զայն 'ի հօրէն Պեղասիոսէ, և ընդդիմանայր նմա հայրն Պեղասիոս և ասէր. ոչ տայցեմ զտունն և զգիւղ կրօնաւորի աշխարհականի ումեք յաւիտեան: Իսկ Սա-

կատոմն դարձեալ յափշտակեաց և զՋորխ հօրն Պեղաւիոյ մինչ գայլն 'ի գիւղէ անտի, և էառ զհատկտաւ՝ որ էին քեռեկնք նոցա, և զՋորխն դարձոյց յետս ։ Իսկ հայրն Պեղասի զպտղով զանց արարեալ, զգիւղն ոչ եթող 'ի նա ։ Այլ դժուարեալ ընդ այն Սակատոմն՝ վասն այնորիկ և վասն այլ ինչ գործոյ յուղի՝ անկեալ գնայր 'ի Կոստանդնուպօլիս, և գնայր ընդ ցամաք ։ Իբրև եհաս յԱնտիոքիա՝ լուաւ զսրբոյն Սիմէոնէ, որ էր 'ի լեառն այր սքանչելի և փայլէր իբրև զարեգակն, և ել 'ի տեսանել զնա և օրհնիլ 'ի նմանէ ։ Իբրև եհաս անդ, եմուտ 'ի վանս. իսկ հայրն Սիմէոն եհարց ցնա 'ի սիւնէ անտի՝ ուստի ես դու, այր. և ուստի գաս և կամ յո՞ երթաս ։ Պատասխանի ետ սրբոյն Սակատոմն և ասէ. 'ի Պաղեստինոյ գամ, սուրբ հայր, և գնամ 'ի Կոստանդնուպօլիս ։ Ասէ ցնա հայրն. և վասն ի՞նչ պատճառանաց, եղբայր ։ Պատասխանի ետ Սակատոմն. վասն բազում ինչ պատճառանաց, և յուսամ 'ի սուրբ աղօթս ձեր՝ դարձեալ այսր երկիր պագանել ձեզ ։ Ասէ ցնա հայրըն Սիմէոն. անյայս, ընդէ՞ր ոչ զճշմարիտն ասես ինձ. դու 'ի մեռանել զմարդն ձոյ գնաս, այլ ոչ յաջողեսցի քեզ. և այլ ոչ ևս տեսցես զտունն քո ։ Այլ արդ եթէ լսես ինձ, դարձեալ աստի գնա առ այրն ձոյ և անկեալ առաջի նորա խնդրեսցես զթողութի՛, եթէ ժամանեսցես անդ կենդանի ։ Այլ իսկոյն առժամայն կալաւ զնա ջերմութի՛ մահու. իսկ որք ընդ նմա էին, առին զնա և եդեալ 'ի նաւ գնացին յետս ըստ բանի սրբոյն, իբր զի տացէ զգիւղն 'ի հայրն Պեղասի և խնդրեսցէ 'ի նմանէ թողութի՛. Այլ իբրև հասին 'ի Միւրիա քաղաք, մեռաւ Սակատոմն, և ոչ ետես զտունն իւր ըստ բանի սրբոյն ։

ԱՍԷԻՆ վասն հօրն Դանիէլի՝ եթէ յորժամ եկին բարբարոսքն 'ի Սկիտէ, փախեան ամենայն եղբարքն ։ Իսկ ծերն ասէ. եթէ ոչ հոգասցէ զիս տէր, ընդէ՞ր նըստիմ աստ ։ Այլ էանց ընդ մէջ բարբարոսացն, և ոչ տեսին զնա, և ասէ ընդ միտս. ահա հոգաց տէր և ոչ մեռայ. այլ մարդկային ինչ արասցես և դու և փախիցես, որպէս և փախչին այլ եղբարքն մեր ։

ԱՍԱՑ հայրն Դանիէլ՝ եթէ որչափ զիրանայ մարմին՝ այնչափ նուաղի հոգին, և որչափ վատի մարմին՝ այնչափ զիրանայ հոգին ։

ՀԱՐՑԻՆ ցհայրն Նոլիփան՝ եթէ բաւակա՞ն իցէ մի արդար աղաչել զԱ՟ծ վասն միոյ յանցաւորի։ Եւ նա աս. այո, որպէս և Աբրահամ Սոդոմայ եղև, և զի ինքն տէրն ասէ. եթէ գտցի մի ոք որ առնէ զդատաստան և զողորմութի՟ և զիրաւունս, վասն նորա թողից ամենայն ժողովրդեանս ։

Ասէին զհօրէն Օենոմէ՝ եթէ փոքր ինչ ուսեալ էր ՚ի գրոց, և էր ցամաք մարմնով, այլ արագ մտօք, յօժարւ և ջերմ ՚ի սէրն Այ՟. ունէր նա և առ մարդիկ սէր և գութ, վասն որոյ յամենայն կողմանց գային առ նա միանձունք և գաւեհիկք, և քննէին զխորհուրդս և խոստովան լինէին, և շինեալք գնային։ Եւ ոմն ՚ի հարանցն բնակէր մերձակայ առ հօրն Օենոմի, և մեք խօսեցաք ընդ նմա, և նա ասաց առ մեզ բանս բազումս առ ՚ի շահս հոգւոյ։ Եւ մեք հարցաք նմա վասն խորհրդոց և ասեմք ցնա. եթէ ոք ունիցի ինչ խորհուրդ չար մեղացըն, և տեսանիցէ զինքն յաղթեալ ՚ի նմանէ, և կարդասցէ նա բազում անգամ զբանս գրոց հարցն և լուիցէ թէ զինչ ասացին վասն սրբութե՟, և կամեսցի թէ ուղղեսցի յայն մեղաց և ոչ կարասցէ, զինչ արասցէ. բարւո՞ք է թէ պատմեսցէ զայս ումեմն ՚ի հարցն, կամ թէ ինքն յիւրմէն փութասցի յայնոսիկ յորս ընթերցեալ իցէ ՚ի գրոց վասն այնու խորհրդոց և գործոց. արդ բաւակա՞ն իցեն իւր՝ բանք գրոցն և խիղձ մտաց իւրոց։ Եւ ծերն ասաց մեզ. ստուգապէս խոստովանել պարտ է, այլ այնպիսի ումեմն՝ որ կարող է օգնել նմա. զի ոչ ումեք արժան է վստահանալ յանձն իւր, և ոչ կարող է օգնել անձին իւրոյ, և ևս առաւել յորժամ տիրէ և ծառայեցուցանէ զնա ախտ ինչ։ Վասնզի ՚ի մանկութե՟ իմում դիպեցաւ ինձ այսպիսի ինչ վնաս հոգւոյ, և յաղթէի ՚ի նմանէ. և լուայ ես վասն հօրն Օենոմի թէ զբազումս բժշկեաց. կամեցայ և ես զի գնացից և պատմեցից նմա, և խափանէր զիս դևն և ասէր ցիս. վասն զի գիտես դու թէ զոր ընթերցարն, զինչ պարտ է առնել արասցես և մի գնար, զի մի գայթակղեսցի ծերն ՚ի քեզ։ Եւ զի յորժամ կամէի գնալ առ ծերն՝ դադարէր պատերազմն, և յորժամ դնէի ՚ի մտի ոչ գնալ՝ դարձեալ շփոթէր։ Բազում անգամ գնացի առ ծերն՝ իբրև թէ պատմեցից, և ոչ տայր թոյլ թշնամին. այլ պատկառէի յոյժ և ասէի

Digitized by Google

'ի մտի՝ և զի գիտեմ ես բժշկել զիս զինչ չափ է ատենն ումեք. և զի գիտեմ ես զքանս հարցն, այլ հեղգ եմ։ Զայս արար ընդ իս սատանայ իմ բազում անգամ, զի մի՛ պատմեցից զմեղս իմ և բժշկեցայց։ Գիտէր զայս և ծերն՝ եթէ ունիմ ես ծածկեալ խորհուրդ և ոչ կարեմ յայտնել նմա, և ոչ յանդիմանէր զիս, քանզի կամէր յինէն խոստովանել զայն. այլ ուսուցանէր զիս յաղագս բարի քաղաքավարութեան միշտ և արձակէր։ Իսկ յետոյ արտասուօք ասեմ ցանձն իմ. բժշկել ոչ կամիս, այլք 'ի հեռաստ գան առ ծերն և բժշկին. դու ո՞չ ամաչես, զի առ քեզ ունիս զբժիշկն և ոչ բժշկիս։ Այլ յարուցեալ գնացի առ ծերն և ասեմ, թէ միայն իցէ՝ զամենայն պատմեցից նմա. և իբրև գնացի, ոչ ոք էր անդ։ Այլ իբրև ետես զիս ծերն, ուսոյց զիս բազում ողջարութեան և կամէր արձակել զիս. և եկն ընդ իս մինչև 'ի դուռն, և ես դարձեալ ամաչէի խոստովանել և դատէի 'ի խորհրդոց՝ թէ ասացից և թէ ոչ ասացից։ Այլ ծերն նայեցեալ յիս բախեաց զսիրտ իմ և ասէ ցիս. զի՞ վշտանաս, ասա ինձ զոր ունիսդ 'ի մտի, զի և ես մարդ եմ ընդ կարեօք անկեալ։ Իսկ իմ անկեալ առ ոտսն նորա ասեմ. ողորմեաց ինձ, տէր իմ։ Այլ նա ասէ. զի՞ է քեզ, որդեակ։ Այլ ես ասեմ. դու գիտես զնեղութիս իմ։ Այլ նա ասէ. 'ի քէն պարտ իցէ ասել թէ զինչ իցէ։ Իսկ ես պատկառանօք և ահիւ պատմեցի նմա ըզմեղս իմ։ Այլ նա ասէ. և ընդէ՞ր ամաչէիր մինչև ցայժմ. ասա ինձ, ո՞չ և ես մարդ եմ և պարտական մեղաց բազմաց, և թէ կամիս՝ զի պատմեցից քեզ զամենայն մեղս իմ. արդ և զքոյն գիտէի ես կանխաւ. և արդ ասեմ, ո՞չ երբեք այլ ունիս 'ի խորհրդոց յայս, որ և զայլս առ իս և ոչ խոստովանէիր։ Զայնժամ ես աղաչեցի զնա և ասացի. ողորմեաց ինձ։ Իսկ նա ասէ ցիս. գնա և մի՛ ծուլասցիս յաղօթս քո, և մի՛ դատեսցես զոք։ Իսկ ես գնացի 'ի խուց իմ և ոչ ծուլացայ յաղօթս իմ, և շնորհօքն այ և աղօթիւք ծերոյն այլ ոչ ես նեղեցայ յախտէն յայնմանէ։ Իսկ զկնի ամի միոյ եկն խորհուրդ 'ի միտս իմ և ասէր. ած արար ողորմութիւն առ իս բազում զթութեամբ իւրով, և ոչ 'ի ծերոյն չափ եղև ինձ։ Այլ գնացի առ նա և կամէի ես փորձել զնա. և առեալ իմ զնա մեկուսի, և կրկնեցի ծունր և ասեմ. աղօթեա

առ ինքն վասն իմ, զի բարձցէ յինէն զայն խորհուրդ որ երբեմն պատմեցի քեզ։ Իսկ նա թողեալ զիս անկեալ, բնեաց սակաւիկ մի և ասէ ցիս. արի դու և ասացիր ըղ-Հանձնար։ Նորին լուայ զայն, կամէի թէ երկիր կլցէ զիս, և յարուցեալ ոչ զօրէի նայել 'ի յամօթոյն յերեսս ծերոյն, և գնացի 'ի խուց իմ։ Իսկ դարձեալ ասէ ծերն և զայս վասն օգտի մերոյ՝ պատմելով մեզ այսպիսի ինչ, եթէ եղբարք երկու էին յիւրաքանչիւր անձնեան առանձինն, և երթային երբեմն առ միմեանս. և յաւուր միոջ ասէ միւսն ցմիւսն. կարօտիմ գնալ ես առ Հայրն Զենոն և պատմել նմա զխորհուրդս իմ։ Իսկ յարուցեալ գնացին երկոքեանն 'ի միասին առ Հայրն Զենոն և ասացին նմա իւրաքանչիւրն զիւր խորհուրդ. Իսկ միւսն արտասուօք անկեալ առաջի նորա աղաչէր զնա։ Իսկ նա ասէ. գնա դու և մի դատեր զոք և մի ծուլանցիս յաղօթս։ Իսկ գնացեալ եղբայրն այն բժշկեցաւ 'ի խորհրդոց իւրոց։ Իսկ երկրորդ եղբայրն յորժամ խոստովանեցաւ, ասէ. աղօթեա վասն իմ, Հայր. և ոչ խնդրեաց ջերմ արտասուօք և ցաւագնեալ սրտիւ իբրև զառաջինն. Իսկ զկնի ժամուց ինչ տեսին զմիմեանս եղբարքն այնոքիկ, և եհարց միւսն զմիւսն և ասէ. յորժամ գնացաք առ ծերն խոստովանել՝ պատմեցե՞ր դու նմա զխորհուրդս քո։ Ասէ ցնա. այո պատմեցի զամենայն։ Իսկ եհարց դարձեալ. և շահ եղե՞ քեզ։ Ասէ. այո, աղօթիւք ծերոյն բժշկեցայ զիս տէր 'ի նմանէ։ Իսկ նա ասէ. ես թէպէտ և խոստովանեցայ, այլ ոչ օգտեցայ։ Ասէ ցնա բժշկեալն եղբայր. և ո՞րպէս խնդրեցեր զթողութիւն։ Իսկ նա ասէ. բանիւք և ոչ արտասուօք։ Ասէ ցնա միւսն. ես 'ի խոստովանելն իմ թացի զոտս նորա արտասուօք, և ցաւագնեալ սրտիւ խնդրեցի աղօթել վասն իմ, և աղօթիւք նորա բժշկեալ եղէ։ Զայս ասէր մեզ ծերն, զի ուսուսցէ զմեզ, որպէս զի որ ոք ասասցէ Հօրն զխորհուրդ իւր, ջերմեռանդ արտասուօք և ցաւագնեալ սրտիւ ասասցէ, և խնդրեսցէ զաղօթս իւր յօգնականութիւն. իսկ որ յանդուգն և ծոյլ խոստովանեսցի, փոխանակ շահելոյ՝ այլ ևս աւելի տանջեսցի։

ԱՍԱՑ Հայրն Իսայիաս. անմեղութիւն և ոչ ինչ Համարել զանձն՝ սրբէ զմիտս 'ի չար խորհրդոց. և որ չունի խոնարհութիւն և խաղաղութիւն ընդ եղբարց, ոչ պակասի

Digitized by Google

'ի նմանէ ցաւք և տրտմութիւք սրտի. և որ ոք ասասցէ բերանով զայլ՝ և ունիցի 'ի սրտի զայլ, նորա ընդունայն են ամենայն ճգնութիւք. մի՛ մերձ կացցես այնպիսւոյն, զի մի՛ ծուլասցիս 'ի մահարար թունից նորա շահեալ ինչ: Արդ պատիւ և հանգիստ պատերազմին ընդ մարդ մինչև ցմահ, այլ ոչ է պարտ զիջանել ընդ նոսա:

ԳՆԱՑԵԱԼ ոմն 'ի ծերոցն առ հայրն Թէոդորէ և ասաց ցնա. ահա այս ոմն եղբայր դարձեալ գնաց անդրէն յաշխարհ: Իսկ ծերն ասէ ցնա. մի՛ զարմանար զայդ, այլ առաւել զարմասցիս եթէ լսես դու՝ եթէ կարացեալ իցէ ոք զերծանել 'ի բերանոյ չար վիշապին այնորիկ չնացող ցանկութեանց:

ԱՅՍ ինքն հայրն Թէոդորէ գնաց երբեմն առ հայրն Յոհաննէս որ էր ներքինի յորովայնէ մօր իւրոյ. և մինչ խօսէին ընդ միմեանս՝ ասէ. յորժամ էի ես 'ի Սկիտէ՝ հոգալ զհոգի էր գործ իմ, իսկ զձեռագործ իբրև զաւելորդ համարէի. իսկ այժմ գործ հոգւոյ լեալ է իբրև զաւելորդ, իսկ ձեռագործ է իբրև զկարևոր ինչ. և զի ոչ ինչ է առաքինութիւն ինչ մեծ՝ քան զարհամարհել զինքն:

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ցհայրն Յովսէփ և ասէ. զի՞նչ արարից, հայր, զի ոչ եմ կարող ճգնել հսկել և աշխատել զմարմին, և ոչ դարձեալ գործել կարող եմ զի տացից զնա սէր: Ասէ ցնա ծերն. եթէ յերկոցունցդ յայդցանէ և ոչ զմին կարող ես առնել, ապա պահեա զմիտս քո 'ի դատելոյ ընկերին և մի՛ քններ զումեք և ոչ բնաւ զմի գործ, և այնու կեցցես կամօքն Այ:

ԵՂԲԱՅՐ ոմն այլ՝ ասէր զայս ինչ, եթէ գնացի ես 'ի կողմանս երկրին Իրակլիոյ, և գնացի առ հայրն Յովսէփ. և ունէր նա տնկեալ թզենիս ընտրեալս և բարիս 'ի վանս իւր, և էր ժամանակ թզոյն, և առաւօտուն ասէ ցիս ծերն. գնացեալ դու 'ի թզենիսն կերիցես թուզ: Եւ զի օրն էր ուրբաթ, իսկ ես պատճառանօք պահոցն ոչ գնացի, և անկայ առաջի նորա և ասացի. հայր, վասն սիրոյ տեառն յայտնեա ինձ թէ զի՞նչ խորհրդով ասացեր ինձ գնալ առաւօտուն ուտել. իսկ ես 'ի սակս պահոց ոչ գնացի, և երկնչիմ 'ի պատուիրանաց քոց լուծմանէ, և խորհիմ 'ի միտ թէ յինչ պէտս ասաց ինձ ծերն առնել զայն, և կամ զի՞նչ պարտ էր առնել 'ի վերայ օրինաց ծերոյն: Իսկ ծերն ասէ ցիս. հարքն մեր ոչ ասէին փոյթ եղբարցն



Digitized by Google

զարդարն, այլ զԹիւրն. իսկ եթէ տեսանէին զնոսա ստէպ տանել զԹիւրն զայն գործ, ապա յայնմհետէ այլ ոչ ևս տեսէին նոցա զԹիւրն, այլ զամենայն ճշմարիտն. քանզի գիտէին այնու փորձելոցն եթէ յամենայնի հնազանդ են նոցա։ Ասեմ ցծերն. հայր, կամիմ ելանել ՚ի միաբան եղբարցն և նստել միայն։ Ասէ ցիս ծերն. ուր և տեսանես զի հանգիցէ անձն քո անդ՝ և ոչ վնասի, կեցցես ՚ի նմա։ Ասեմ. և ՚ի ժողովս եղբարցն շինիմ, և առանձինն ևս. այլ դու զո՞ր կամիս զի արարից։ Ասէ ծերն. եթէ ՚ի ժողովս եղբարցն և ՚ի միայն ևս շինեսցիս՝ կշռեսցես դու զերկոսին զայն խորհուրդ, և յոր կողմ քաղցրեսցէ միտք քո և տեսցես զայն շահ՝ արասցես։

ԳՆԱՑԱՔ երբեմն ես և Սոփրոնիոս և միւսք առ հայրն Յովսէփ, և նա ընկալաւ զմեզ ուրախութեամբ և սրտի մտօք խօսեցաւ ընդ մեզ. և զի էր զարդարեալ ամենայն առաքինութ̃ք, և զի գիտէր նա և զարտաքին ուսմունս։ Իսկ մինչդեռ նստէաք և խօսէաք ընդ միմեանս զշահս հոգւոյ, և ահա եկն այր մի քրիստոսասէր և աշխարհիկ յԱյլայոյ, և եբեր ծերոյն երիս դահեկանս և ասէ. առ զայս, ով հայր պատուական, և աղօթեա վասըն նաւի իմոյ, զի ահա լցի զնա և գնամ յԱփթոլայիս։ Իսկ ծերն և ոչ ընաւ նայեցաւ ՚ի նա։ Ասէ Սոփրոնիոս ցծերն. հայր, առեալ զայդ տացես եղբարցն ում և պիտոյ իցէ։ Ասէ ցնա ծերն. կրկին ամօթ լինիցի եթէ առից զայդ, որդեակ. մի զի ոչ պիտոյ է ինձ, և երկրորդ զի իմով ձեռամբ խլեցից զայլոյ փուշս. բարւոք էր ինձ թէ կարող էի ես հնձել զփուշս անձին իմոյ. զի գրեալ է, թէ սերմանեսցես, զքոյն սերմանեսցես, զի օտարին դառնագոյն քան զորամն իցէ։ Իսկ ես առաւել, որդեակ, զի ոչ զհոգւոյ ինչ խնդրէ, այլ զնաւս։ Ասէ Սոփրոնիոս ցծերն. և զոր ինչ ես տանիցէ մարդ վասն ա̃յ, միթէ ոչ ողորմութ̃ի համարեսցի այն։ Ասէ ցնա ծերն. բազում տեսակք են ողորմութ̃եց. քանզի ոմն առնէ ողորմութ̃ի, զի օրհնեսցի տուն նորա. և այլ ոմն առնէ ողորմութ̃ի վասն պահպանութ̃ե նաւու իւրոյ, և ա̃ծ պահէ զնաւ նորա. այլ ոմն առնէ ողորմութ̃ի վասն խաղաղութ̃ե լինելոյ որդւոց նորա, և ա̃ծ շնորհեսցէ զայն նմա. և այլ ոմն առնէ ողորմութ̃ի զի մեծասցի, և ա̃ծ մեծացուցանէ զնա. և զի ա̃ծ ոչ մոռանայ զոք, այլ ա-

մենայնի տայ զխնդրուածս ըստ կամաց հայցողաց յոր-
ժամ ոչ ելանեսցի յայնմանէ հոգի նորա: Արդ որքա
ամենեքեան առ ձեռն առին զվարձս ողորմութեան իւ-
րեանց, և ոչ ինչ եասուն ինձ վասն համարձակելոյն, և ոչ
ինչ խնդրեսցեն անդ 'ի նմանէ, և ոչ առնուցուն ինչ
վասն այնորիկ. զի ողորմութիւն զոր ետ՝ ոչ վասն հոգւոյ
և համարձակելոյն էր, այլ վասն մարմնոյ և կենցաղոյս:
Այլ արդ քննեսցես խնամութեամբ. արար ոմն ողորմութիւն,
զի որհնեսցէ տէր զտուն իւր, և որհնեաց և ելից բա-
րութեամբ. կամ վասն նաւու արարեալ, և նաւն եկն խա-
ղաղութեամբ. և կամ վասն որդեացն արար, և եառ առող-
ջութեամբ կեանս. և կամ վասն փառաց արար ողորմութիւն,
և ինձ փառաւորեաց զնա. արդ այլ զինչ պարտի նմա
ինձ: Այլ եթէ կամիս դու զի կեցցես, արասցես ողոր-
մութիւն վասն փրկութեան հոգւոյ քո, և ինձ կեցուցէ
զանձն քո. զի գրեալ է՝ եթէ տացէ քեզ տէր ըստ սրտի
քում: Այլ քանզի են բազում հարուստ արք և կարծեն
առնել ողորմութիւն, և տաւել եւս բարկացուցանեն
զինձ, զի զյափշտակեալն և զվաշխեալս տան ողորմու-
թիւս: Այլ դարձեալ զի յինչ օրէնսն գրեալ է՝ որպէս զի
զաւազակնան պտղոցն և զլաւագոյնսն ընծայեսցեն ինձ ո-
ղորմութիւս, զընտիրսն ցորենոյ և գինւոյ և ձիթոյ և ա-
մենայն սերմանց և պտղոյ. այսպէս և 'ի մարդոց զան-
դրանիկսն, և այսպէս և 'ի հօտից ոչխարաց և յանաս-
նոց զանբիծսն և զլաւսն, որ ոչ իցէ հատեալ ականջիւ
և կամ ջախջախեալ եղջերիւ և կամ ոտն բեկեալ, այլ
զամենևին զկատարեալսն պարտ իցէ ընծայել ինձ: Իսկ
մեծատունք ոչ այսպէս առնեն, այլ զտարին հակառակն.
քանզի զլաւագոյնն իւրեանք ուտեն, իսկ զյոռիքն և
զվատթարքն տան աղքատաց. զընտրեալ և զծաղկա-
հոտ գինին իւրեանք ըմպեն, իսկ զքացախուտն աղքա-
տաց բաշխեն. այսպէս և զհանդերձս զհինսն և զպա-
տառատունս նոցին տան, իսկ իւրեանք զարդարին բազ-
մագոյն զգեստիւք. իսկ զմիրգ հատեալ և նեխեալ աղ-
քատաց բաշխեն, և զընտիրսն իւրեանք ուտեն. և այս-
պէս ամենայն ընծայսն Կայենի ինձ անընդունելի լինի:
Նոյնպէս և զորդիսն զվայելուչս և զդստերս գեղեցիկս
առ 'ի հարսանիս պատրաստեն և հաշուին զծախսն, և
հոգւոյն տան հարուստ և գեղեցիկ փեսայից, և զհար-

սուտնոն նոյնպէս քերել. իսկ եթէ պատահիցի լեալ մեղկանի և կամ անդամահատ ինչ կամ ցամաքեալ և տգեղ և գարշելի՝ զայն ա̃յ ստանեն մասն. և թէ արու իցէ 'ի վանս, իսկ եթէ էգ 'ի կուսանաց վանս առաքեալ լինի։ Այլ պարտ էր նոցա 'ի միտ առնուլ զայս, զի եթէ մահկանացու մարդկան կամեցի ոք հնարհել ինչ և պատուել զնա, 'ի պատուականացն զոր ինչ ունին ընծայեն նմա. իսկ և ա̃յ ստեղծագործին ամենեցուն ընդէ՞ր ոչ առնես զայս՛ զի զլաւագոյնն ընծայեսցես յամենայնէ զոյն՝ որ նա ետ մեզ։ Յայտ է թէ զխնամաւոր պաշտօնն մեր զաղօթս այսու օրինակաւ խնդրեացէ 'ի մէնջ տէր. և ոչ եթէ նա գովութե կարօտ է 'ի մէնջ, այլ զի զմեզ ուսուսցէ գոհանալ վասն մերոյ փրկութեան և բոլորով սրտիւ սիրել զնա. և զի զոր ինչ և խոստացուք ա̃յ, ոչ ստեսցուք յայն, այլ երկիւղիւ և ստիպով մատուցուք։ Այլ զոր օրինակ յընծայման Աբէլի գոլոշի և ծուխ գոլով ընկալեալ եղև յա̃յ 'ի հոտ անուշից վասն բարեմտութե նորին և անբծութե սրտին, այսպէս և չար մարդոյ ընծայման որ չարամիտն է՝ թէպէտ և 'ի պատուականագունիցն իցէ՝ գարշելի համարեսցի ա̃յ։ Այլ լուր զինչ ասէ մարգարէն ցՀրեայսն. խունկք ձեր գարշելի են ինձ։ Տեսանէք, զի ա̃ծ առ միտս ընծայողին նայի. և զի ուղղ. մտօք մատուցողին զծուխն 'ի հոտ անուշից պատրաստեաց, իսկ առս վատթարութի և պղծութի մտաց Հրէիցն զխունկս անուշահոտ խնկոցն գարշելի գոլ արար ա̃յ։ Այլ զի պարտ է ամենայն մարդոյ որ սիրէ զկեանս իւր, որպէս զի զողորմութի և զճգնութի իւր ոչ միայն փութով տրասցէ, այլ և զոր ինչ ընծայեսցէ ա̃յ՝ զառաւելն և զպատուականն ընծայեսցէ, զի մի աղօթք և ողորմութիւն մեր անօթիւ 'ի գոգս մեր դարձցին, և զի մի պատարագ մեր պիղծ և արատաւոր լիցի և գարշելի համարեսցի իբրև զԿայենին։ Իսկ մեք յետ քանիցս այսոցիկ հարցաք դարձեալ ցնա՝ եթէ վնասեսցի անձն եթէ չոգայ զհետ խորհրդոց։ Այլ նա ասէ ցմեզ. եթէ 'ի չար և 'ի խենէշ խորհրդոց ոչ վնասի անձն, ապա և ոչ 'ի սուրբ և ա̃ծասէր խորհրդոց օգտեսցի ինչ. զի զոր օրինակ բարի խորհուրդ շահ է, այնպէս և չարն վնաս լինի. քանզի եթէ բիւր անգամ ունիցիմք մեք արտաքուստ խաղաղութի, եթէ ներքինն մեր շփոթեսցի 'ի

Digitized by Google

պիղծ խորհրդոց, և ոչ մի ինչ չար լինիցի յարտաքին կողման խաղաղութեան և հանդարտութեան. որպէս և ոչ չար ինչ իցէ քաղաքին յամուր պարսպաց, յորժամ 'ի բնակչացն մատնեսցի թշնամւոյն: Զի եթէ պահեսցուք զսիրտս մեր ոչ գնալ զհետ չար խորհրդոց, մեծամեծ պարգևս խոստացաւ մեզ տէրն մեր՝ որ գերազանցէ քան զմիտս մեր, զփափկութիւն Եդեմ զարքայութեան երկնից և զանպատմելի բարիսն զոր առնելոց են ընտրեալքն յաջմէ բարձրելոյն և զբնակութիւն ընդ երանելի դասս հրեշտակաց և զազատելն 'ի դառն տանջանացն և 'ի սոսկալի հրոյն: Այսոցիկ հանգստեան և փափկութեանց և այլոց բարեաց բազմաց, զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց, ոչ վախճան իցէ և ոչ փոփոխումն կամ պակասութիւն, այլ ամենայնն կատարեալ իցէ և հաստատուն և զօրացեալ յանքաւ յաւիտեանս յայնոսիկ: Ապա նայեցեալ ետես զմեզ երկմիտ լեալ առ իւրն վարդապետութիւն: Յայնժամ յարուցեալ առաջի մեր ամենեցուն՝ համբարձ յերկինս զաչս և ըզձեռս իւր և ասէ 'ի լուր ամենեցուն. Տէր Աստուած և բան և որդի Աստուծոյ կենդանւոյ, որ արարեր զերկինս և զերկիր ըզծով և զամենայն որ 'ի նոսա, փրկիչ և ազատիչ հոգւոց մերոց, եթէ ընդունայն և սուտ են բանք իմ զոր ասացի ես եղբարցս այսոցիկ, անշիջանելի կացցէ վէմս այս որ կայ առաջի մեր. իսկ եթէ արդարք իցեն և հաւատարիմք և ճշմարիտք, հերձեսցի վէմս այս: Ապա առժամայն ըստ բանի սրբոյ ծերոյն պատառեցաւ վէմն ընդ հինգ հատորս. և է անդ դեռ ևս մին հատորն սիւն մարմարեղէն 'ի չափ մարդոյ միոյ: Իսկ մեք սոսկացեալ հիացաք ընդ սքանչելիսն այն նշան, և գոհացեալ զԱստուած շահեցաք յոյժ: Ապա մինչ յուղարկէրն զմեզ ծերն՝ ասէ ցմեզ. յառաջիկայ շաբաթդ դարձեալ եկեք առ իս աստ: Ապա 'ի միւսում շաբաթն եկաք առ նա 'ի յերրորդ ժամու աւուրն, և գտաք վախճանեալ զսուրբ ծերունին զհայրն Յովսէփ, և թաղեցաք զնա պատուով և փառաւորեցաք զԱստուած, որ արար զմեզ արժանի տեսանել զայսպիսի հայր և խօսել ընդ նմա և յետոյ թաղել զնա և պատուաւորել:

ԱՍԱՑ հայրն Յակոբ. մեծ իմն է օտարն լինել, քան

թէ ընդունել զօտարս. և զի բանք միայն՝ պատարկ են, այլ գործ պիտոյ իցէ ընդ բանին:

ԱՍԱՑ հայրն Եախիգորէ. որ ըստ օրինին Ճգնիք, մի հպարտանայք 'ի վերայ Ճգնութեանց ձերոց, զի մի կորուսանիցէք զնոսին. եթէ 'ի վերայ պահոց հպարտասցիս, լաւ քան զայն պահքն է ուտել միս. և եթէ ընդ աղօթք հպարտասցիս, անպիտան առնես զնա. այսպէս և յամենայն Ճգնութիւս է: Պարձեալ պարտ է զի սիրեսցէ իբրև զծնողս զվարդապետ իւր և պատուեսցէ իբրև ըզհայր և երկիցէ 'ի նմանէ իբրև յիշխանէ, զի մի 'ի սակս սիրոյն լուծանել զերկիւղն և մի 'ի սակս երկիւղին պակասեցուցանել զսէր, և արասցէ զամենայն զոր ինչ ըզդացուցէ նմա՝ կամաւ և խնդութեամբ և մի 'ի հարկէ և երկբայութեամբ:

ԵՀԱՐՑ ոմն 'ի հարանցն ցհայրն Յոհաննէս պարսիկն և ասէ ցնա. այսչափ աշխատութիւն կրեմք մեք վասն արքայութեանն այ, և արդ հասցո՞ւք նմա թէ ոչ հասցուք: Ասէ ցնա ծերն. ես հաւատամ զի բնակեցայց 'ի յԵրուսաղէմ յերկինս, որ գրեալ է յերկինս և շինեալ անդ. զի հաւատարիմ է որ խոստացաւն զնա մեզ: Եւ կամ ընդէ՞ր ոչ հաւատամ լինել 'ի նա. զի օտարասէր եղէ որպէս զԱբրահամ և հեզ եղէ որպէս զՄովսէս և սուրբ եղէ իբրև զԱհարոն և համբերող եղէ որպէս զՅոբ, խոնարհ եղէ որպէս զԴաւիթ և անապատական եղէ իբրև զԵղիա և զՅոհաննէս, ողբացող եղէ իբրև զԵրեմիաս, վարդապետ եղէ իբրև ըզՊաւղոս և հաւատարիմ եղէ իբրև զՊետրոս, իմաստուն եղէ իբրև զՍողոմոն և խոստովանող եղէ որպէս զաւազակն. և եթէ այսոցիկ ամենեցուն նմանող եղէ առաքինութ., հաւատամ 'ի բազում ողորմութիւն այ, զի և փառաց նոցա հաղորդ եղէց. իսկ եթէ զհակառակս նոցին գործեցից, ո՞րպէս մնացից արքայութենն երկնից:

ԵՂԲԱՐՔ ոմանք երկուք մոլորեցան 'ի Սկիւթէ, և արգել զնոսա յայնմանէ հայրն Մակար քաղաքացի. և գնացին ոմանք և պատմեցին զայս հօրն Մակարայ մեծի եգիպտացւոյ: Իսկ նա իբրև լուաւ՝ ասէ. ոչ են եղբարքն այնորիկ արգելեալք, այլ Մակար իցէ արգելեալ՝ այն որ արգել զնոսա. զի սիրէր զնա մեծն Մակար: Իբրև լուաւ զայս հայրն Մակար քաղաքացի՝ եթէ արգել

զնա ծերն մեծ, փախեաւ և գնաց 'ի դաշտս շամբա-կացն։ Այլ եւ մեծն Մակարիոս խնդրել զնա, և գտաւ զնա 'ի շամբն յայն ուտեալ և հարեալ 'ի մժեխացն թու-նից, և ասէ ցնա. դու արգելեր զեղբարսն որք կամէին դառնալ յաշխարհ, իսկ ես զքեզ արգելի, այլ դու իբ-րև զպատուասէր և զխոհեմ հարսն 'ի ներքին անա-պատն փախեար յառաջագոյն. արդ ես կոչեցի զեղբար-սըն զայնոսիկ և ծանեայ, զի ոչ այնպիսի ինչ արարեալ է նոցա. ատեցես և դու, եղբայր, զի մի ծաղր լիցիս դի-ւաց, զի ոչ քննեցեր զնոսա. այլ առցես դու յանձն զա-պաշխարութիւն մեղաց քոց։ Այլ նա ասէ ցնա. տուր ինձ, հայր դու, ապաշխարութիւն։ Այլ նա ետեսեալ զզգարձ նո-րա, ետ նմա պահս շաբաթ մի։

ԱՍԷ հայրն Մակարի. եթէ յիշեսցուք 'ի մտի զտրտ-մութիւն մարդկան, վարեմք 'ի մէնջ զզօրութիւն յիշմանցն նոյ. իսկ եթէ յիշեսցուք միշտ զչարիսն եկեալ 'ի դի-ւացն 'ի վերայ մեր, մնասցուք մեք անխոցոտելի 'ի նե-տից նոցին։

ԳՆԱՑ երբեմն հայրն Մակար առ հայրն Պախում և ասէ ցնա. եղբարքն անհարգ գնան, կամիս, հայր, զի խրատեցից զնոսա։ Ասէ ցՄակարիոս. խրատեսցես զթու-թեանն և արդարութիւն զոր ես ընդ ձեռամբ քո. իսկ զայլսն որ արտաքոյ քո են, մի դատեսցիս, զի գրեալ է՝ եթէ զներքինսն ամենեցուն Աստուած դատեսցէ։

ԱՍԱՑ հայրն Մատոյէ՝ եթէ ոչ գիտեն դեւքն նախ-քան զյանցանել մարդոյն եթէ որով ախտիւք յաղթի անձն, այլ սերմանեն միայն և ոչ գիտեն եթէ հնձեսցեն։ Այլ զի յաճախս սերմանեն զխորհուրդ պոռնկութեան, յո-ճախս զատելութիւն, յաճախս զամբաստանս և յայլս զայլ ախտս. իսկ յորոյ յայս ինչ տեսանեն պատրաստեալ զանձն զայն, և սկսանին յաւելուլ մինչև կործանեսցեն զնա։

ՀԱՐՑԻՆ ոմանք 'ի հարցն ընդ հայրն Մեգեթի և ասեն. եթէ մնասցէ կերակուր եփեալ՝ կամիս զի վա-ղիւն զայն դիցուք առաջի եղբարցն։ Ասէ ծերն. եթէ խահրեալ և աւերեալ է՝ բարւոք է հեղուլ արտաքս, զի մի ճաշակեալ հիւանդասցին. իսկ եթէ բարւոք է և զառողջութիւն հեղցի, ոչ է բարի։

ԳՆԱՑԵԱԼ եղբայր ոմն յօտարութիւն 'ի կողմանց հօրն Պիմենի, և յօտարութեան խորում հանդիպեցաւ միայ-

նակեցի ումեմն որ էր մեծանուն և հռչակեալ յոյժ, որ ունէր սէր, և բազումք գային առ նա։ Պատմեաց նմա եղբայրն վասն հօրն Պիմենի. իսկ նա իբրև լուաւ զառաքինութիւն նորա, կարօտէր տեսանել զնա։ Իբրև դարձաւ եղբայրն այն յԵգիպտոս, զկնի ժամուց ինչ ել և միայնակեացն այն յԵգիպտոս, և խնդրեալ եգիտ զեղբայրն զայն՝ իբրև լուաւ զբնակութիւն նորա յեզր գետոյն։ Նա յորժամ ետես եղբայրն զմիայնակեացն զայն, զարմացաւ յոյժ և յօժարութեամբ ընդ առաջ ընթացաւ և սիրով հիւրընկալաւ զնա։ Ասէ ցնա միայնակեացն. արա սէր, եղբայր, և տարցես զիս առ հայրն Պիմէն։ Իսկ եղբայրն առաջնորդեալ տարաւ զնա առ հայրն Պիմէն. և պատմեաց նմա եղբայրն զմիայնակեցին զամենայն ինչ՝ եթէ այր մեծանուն իցէ և յոյժ պատուեալ յամենեցունց. և ես պատմեցի, ասէ, զքէն նմա, և ահա սիրով 'ի տես քո եկեալ է աստ։ Իսկ հայրն Պիմէն ընկալաւ զնա ուրախութեամբ։ Եւ իբրև ողջունեցին զմիմեանս և նստան, և սկսաւ եկեալ ծերն խօսել վասն փրկութեան անձին բանս. իսկ հայրն Պիմէն յետս դարձուցեալ զերեսն ոչ ինչ առնէր նմա պատասխանի։ Իբրև ետես միայնակեացն զի ոչ ինչ խօսէր ընդ նմա Պիմէն, տրտմեցաւ և ել արտաքս և ասէ ցեղբայրն որ եբերն զնա անդր, եթէ 'ի զուր աշխատեցայ զամենայն ճանապարհս զայս. քանզի եկի առ ծերս զի թէ շահեցայց ինչ, և նա ոչ կամեցաւ բնաւ խօսել ընդ իս։ Եմուտ եղբայրն առ հայրն Պիմէն և ասէ ցնա. Հայր, վասըն քո եկն այս մեծանուն հայրս՝ որ այսչափ փառք և պատիւ ունի 'ի վերայ երկրի յաշխարհ իւր, և դու ընդէր ոչ խօսիս ընդ նմա։ Ասէ ցնա Պիմէն. սա 'ի վեր յերկինս է և զերկնաւորս ասէ, իսկ ես երկրաւոր գոլով զիա՞րդ զերկնաւորս ասացից. զի եթէ ասացեալ էր դորա ինձ ինչ վասն ախտից անձին, պատասխանեալ էի ինչ. իսկ վասն երկնաւորաց ասել ինչ ոչ կարեմ։ Ել արտաքս եղբայրն այն և ասէ ցմիայնակեացն այն. ոչ է սովորութիւն ծերոյն վաղվաղակի խօսել 'ի գրոց. այլ թէ ոք հարցանիցէ ցնա վասն ախտից անձին ինչ, յայնժամ պատասխանի առնէ։ Զղջացաւ ընդ այս միայնակեացն այն, և եմուտ դարձեալ առ ծերն և ասէ ցնա. զի՞նչ արարից, հայր, զի բռնադատիմ ես յախտից անձին։ Հայե-

ցաւ 'ի նա ծերն և ասէ ցնա հեղաբար․ արդ բարւոք ե-կիր, և արդ բացեր զձեռան քո և լցեր զկիրտ քո հա-գևոր բարեօք։ Այլ խօսեցաւ ընդ նմա բանս բազումս յոյժ և շահեցոյց առաւել քան զոր կարծէրն։ Այլ ասէր․ ստուգապէս այս է ճանապարհ փրկութեան։ Այլ գոհա-նայր զԱյ, զի արժանի եղև տեսոյ և խօսակցութեան նո-րա․ և այսպէս լի ուրախութեամբ դարձաւ 'ի տեղի իւր։

ԱՍԱՑ հայրն Պիմէն՝ եթէ եղբարք երեք բնակեն 'ի միասին, և մինն հանդարտ բարուք, իսկ միւսն հի-ւանդ է և գոհութեամբ համբերէ ցաւոցն, և երրորդն սպա-սաւորէ հեզ սրտիւ․ արդ երեցունց նոցա հաւասարիմ են առաքինութիւնք։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ցհայրն Պիմէն և ասէ ցնա․ ե-թէ տեսից ինչ գործ, պա՞րտ է զի պատմեցից զնա։ Ա-սէ ցնա ծերն․ գրեալ է՝ թէ որ առնէ պատասխանի նախ քան զհարցանելն, ատելի է և՛ անմիտ․ եթէ հարցանէ ոք զքեզ՝ պարտ է զի ասասցես, ապա թէ ոչ՝ լռեսցես։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ցհայրն Պիմէն և ասէ ցնա․ կա-րօ՞ղ է մարդ վստահանալ 'ի մի ինչ առաքինութիւն։ Այլ ծերն ասէ ցնա․ ասաց հայրն Յոհաննէս կարճահասա-կըն՝ եթէ լաւագոյն է ժողովել փոքր փոքր յամենայն առաքինութեանց քան թէ զմի ունել միայն․ քանզի ա-սէր հայրն Ամոնաս՝ եթէ իցէ մարդ որ հարկանէ զփայ-տահատ բազում անգամ և ոչ կարէ հատանել զծառ, և է այլ որ ունիցի զփորձ գործոյն և սակաւ հարկանե-լով հատանէ զայն․ իսկ փայտահատ ասէր զիմաստուն և զմտաւոր դատաւորս։

ԱՍԱՑ դարձեալ՝ եթէ լռութիւն և աներկիւղութիւն և յանդգնութիւն՝ սոքա մայր են ամենայն մեղաց։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ցհայրն Պիմէն և ասէ ցնա․ հայր, եթէ ըմբռնեսցի ոք 'ի յանցանս ինչ և դարձցի ստուգապէս, թողցէ՞ նմա զայն Ած։ Ասէ ցնա ծերն․ եթէ մարդկան պատուիրեաց Ած առնել զայս, ո՞չ ևս առաւել ինքն արասցէ զայս․ և զի վասն այսորիկ պա-տուիրեաց Պետրոսի թողուլ եօթանասնեկին եօթն ան-գամ, զի մեք ունիցիմք զյոյս փրկութեան։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ցհայրն Պիմէն և ասէ ցնա․ կարօ՞ղ է մարդ եթէ կալցէ զամենայն խորհուրդս իւր, զի մի տացէ 'ի նոցանէ թշնամւոյն և ոչ մի։ Ասէ ցնա ծերն․ իցէ՞ ոմն որ առնուցու հազարս և տացէ մին։

Digitized by Google

ԱՍԱՑ հայրն Պիմէն. որ ոք իցէ հարուստ, ոչ է կրօնաւոր. և որ կամիցի հաստատուցանել չար փոփոխմանց չարի, նա ոչ է կրօնաւոր. և որ իցէ բարկացող, նա ոչ է կրօնաւոր։

ԱՍԷ ոմն ցծերն. եթէ տեսից զոմն յեղբարցն զի նիրհէ յաղօթս, պարտ է զի խթելով զարթուցից զնա։ Ասէ ծերն. ես թէ տեսանէի զեղբայրն նիրհեալ 'ի հրակուռն, զնէի զգլուխ նորա 'ի բարձս իմ և հանգուցանէի զնա։

ԱՍԷԻՆ զհօրէ ումեմնէ՝ եթէ պատերազմեալ եղև 'ի հայհոյութէ և ամաչէր պատմել ումեք. և ուր և լսէր զմեծ ումեմնէ ծերոյ, գնայր առ նա զի թէ պատմեսցէ. և իբրև գնայր, ամաչէր և ոչ խոստովանէր։ Բազում անգամ գնաց առ նա հայրն Պիմէն և տեսանէր ծերն զի ունէր եղբայրն խորհուրդ ինչ, և գժուարէր զի եղբայրն ոչ խոստովանէր. այլ ոչ ինչ ասէր նմա։ Ի միում աւուր մինչ յուղարկէր զնա ծերն, ասէ ցնա. ահա այսչափ ժամանակ գաս աստ և կամիս խոստովանել զխորհուրդ քո զոր ունիս և ոչ կարես, այլ միշտ գնաս տրտմեալ, և ունիս բարձեալ զնոյն 'ի գլուխ քո. ասա ինձ, որդեակ, զի՞նչ է որ զխայթն քեզ։ Նա ասէ. հայհոյել տայ ինձ զա̃ծ թշնամին, հայր, և ամաչեմ յայտնել։ Եւ իբրև ասաց զայն, թեթևացաւ եղբայրն։ Ասէ ցնա ծերն. մի՛ տրտմիր և երկնչիր, եղբայր դու. այլ յորժամ գայն 'ի քեզ խորհուրդքն այն, ասասցես դու՝ հայհոյութիւն քո 'ի գլուխ քո դարձցի, դև չար, զայս հայհոյութիւն ոչ կամի անձն իմ. և զոր ես ոչ կամիմ, և ոչ է այն իմ գործ, այլ քո՝ որ գործել տաս մտաց իմոց։ Եւ այսպէս բժշկեցաւ եղբայրն 'ի յայտնմանէ շնորհօքն Քրիստոսի։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ցհայրն Պիմէն և ասէ. ընդէ՞ր գթեն զիս դևքն լինել ինձ զայն՝ որ վերագոյն քան զիս են, և արհամարհեմ զյետինսն քան զիս։ Ասէ ցնա ծերն. վասն այդորիկ ասէ առաքեալն՝ եթէ 'ի տանն մեծամեծաց ոչ միայն են անօթք ոսկեղէնք և արծաթեղէնք, այլ և փայտեղէնք և խեցեղէնք. զի որ ոք սրբեսցէ զանձն իւր 'ի վատթար գործոց, լինի նա անօթ սուրբ և պատուական ա̃յ պատրաստ յամենայն գործս բարիս։ Ասէ եղբայրն. կարօ՞ղ իցէ մարդ զի մեռեալ լիցի

յաշխարհէն, հայր: Ասէ ծերն. եթէ ընկենուս 'ի մէջ՝ մեռեալ է այն, և եթէ ընկենուս 'ի գործս բարիս՝ կենդանի իցէ նա. և զի ուսուցանել զեղբայրն արդարոյ վայելէ, ապա եթէ ոչ՝ զինչ շահեցի զայլոց շինել և զիւրըն աւերել. և զինչ շահեցի մարդ եթէ կամեցի ուսանել արուեստս և ոչ ուսանի. զի ամենայն որ աւելի քան զչափն է՝ 'ի դիւաց է, զի քաղց և ծարաւ և աղքատութիւն ոչ տան խորհել մնաց մերոց զխաւարեալ խորհուրդս:

ԵՂԲԱՅՐ ոմն գնացեալ առ հայրն Մակարն խօսել ընդ նմա, նստէին անդ և այլ հարք, և գայլէր եղբայրն այն զայլ ոմն եղբայր և ասաց. այր չարաչարեաց է նա: Ասէ ցնա ծերն. և զինչ իցէ առնելութիւն չարին: Ասաց եղբայրն և ոչ կարաց ինչ պատասխանի տանել, և յարեաւ անկաւ առաջի ծերոյն և խնդրէր 'ի նմանէ զի ուսուսցէ զնա եթէ զինչ է առնել զչարն: Ասէ ցնա ծերն. առնել զչարն՝ զի որ առնեսցէ զմեղս իւր, և զընկերին արդարացուսցէ: Եղբայրն ասէ. և զինչ ինչ բարի իցէ, հայր, խօսե՞լ զլաւն եթէ լռել: Ասէ ծերն. վասն աստուծոյ խօսել ինչ բարի է, և վասն աստուծոյ լռելն բիւր անգամ բարի է: Եղբայրն ասէ. և ո՞րպէս կարասցէ որ զերծանել 'ի չարախօսութենէ ընկերին: Ասէ ծերն. մեք և եղբարք մեր երկու պատկեր եմք. և յորժամ մարդ զիւրն պատկեր տեսցէ և զարշեսցի 'ի նմանէ, յայնժամ պատկեր ընկերին պատուական երևեսցի. իսկ յորժամ զիւր պատկերին գարշութիւն մոռասցի, յայնժամ սկսանի քննել զպատկեր ընկերին: Եղբայրն ասէ. և զինչ արարից վասն ձանձրութեան, հայր: Ասէ ցնա ծերն. ձանձրութիւն մերձ կայ յամենայն բարի գործս զգաստանեալ, և ոչ ինչ իցէ այնս չար քան զնա, և մերժէ զնա սէր և երկիւղն այս: Եղբայրն ասէ. կամիմ մտանել 'ի հասարակաց վանս և բնակել անդ, հայր: Ասէ ցնա ծերն. եթէ ոչ պատրաստիս յամենայն գործոց և կատարեալ առանց հոգոց եղիցիս, ոչ կարող իցես կեալ 'ի ժողովս եղբարցն, և զի ոչ ունիցիս անդ իշխանութիւն անձին քո և ոչ մի:

ՄԻՒՍ եղբարքն նորա ցհայրն Մակարն. արի գնասցուք 'ի տեղւոջէս յայսմանէ, քանզի շփոթեն զմեզ մերձակայ վանքերս որ են շուրջ զմեօք. և ահա լսելեն ևս մանկանց լալ սաստ և ոչ տան թողլ հանգստանալ մեզ, և ըզլին

Digitized by Google

անձինք մեր ։ Ասէ հայրն Պիմէն. ՚ի ձայնէ հրեշտակաց փախչել կամիք, և կամիք հեռանալ ՚ի՞ այգորիկ ատոր ։

ԵՂԲԱՅՐ ոմն ասէ ցնա. մարմին իմ տկարացաւ, հայր, և ախտք զօրացան յիս ։ Ասէ ցնա ծերն. երբև զփուշ և զտատասկ են ախտք, որդեակ. արդ և դու ձգեսցես ընդ հուր ամենայն սիրոյն ՚ի նոսա, և բորբոքմամբ բացակիզեսցես զնոսա ։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ցհայրն Պիմէն և ասէ. հայր, շփոթիմ ես աստ և կամիմ թողուլ զտեղի իմ և գնալ ։ Ասէ ցնա ծերն. վասն էր՞նչ պատճառանաց ։ Ասէ եղբայրն. զի լսեմ բանս զեղծօրէ ումեք, որ ոչ օգուտ են ինձ ։ Ասէ ցնա ծերն. ոչ են ճշմարիտ զոր լուարն ։ Ասէ եղբայրն. այո, հայր, և զի որ ասացն ինձ՝ այր հաւատարիմ է ։ Ասէ ցնա ծերն. ոչ է նա հաւատարիմ. զի թէ հաւատարիմ էր, ոչ էր պատմեալ զայն քեզ. քանզի Ղովտ լսէր զձայն Սոդոմայ և ոչ հաւատայ մինչև ետես աչօք իւրովք, և մեք որպէս հաւատասցուք, եղբայր, զոր ոչ տեսեալ իցէ մեր ։ Ասէ եղբայրն. և ես իսկ տեսի աչօք իմովք ։ Իբրև լուաւ զայս ծերն. սկսաւ նայել յերկիր, և առեալ անտի շիւղ և ասէ՝ տեսանես զայս շիւղ. և եցոյց նմա և զգերան տանն և ասէ՝ տեսանես զայս գերան, եղբայր ։ Եւ նա ասէ. այո ։ Ասէ ծերն. դիր զայդ ՚ի մտի քո, եղբայր, եթէ մեղք քո այս գերան իցէ, և մեղք եղբօրն այնորիկ այս շիւղ է, և հանեալ զգերանդ յականէ քումմէ ըստ բանի տեառն ։ Իբրև լուաւ զբանս զայս հայրն Տիթոյէ, սքանչացաւ և ասէ. որպիսի բանիւք կարացից երանել զքեզ, հայր Պիմէն, որ ես քար պատուական և մարգարիտ անգին. քանզի բանք քո լի ուրախութեամբ են շնորհօքն այ ։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ցհայրն Մովսէս և ասէ. որպէս կարող իցէ կրօնաւոր լինել իբրև զմեռեալ յաշխարհի ։ Ասէ ծերն. եթէ ոչ համարեսցի ոք զանձն իւր՝ եթէ երիս ամս ունի ՚ի գերեզմանի, ոչ կարէ մեռեալ լինել ։

ԳՆԱՑԻՆ եղբարք երկու առ հայրն Պամբոյէ և ասեն ցնա. ուսո մեզ բան ։ Եւ սկսաւ ասել մինն. ես պահեմ զերկաւուրս և ուտեմ հացս երկուս, արդ կարասցե՞մ կեալ սովաւ թէ գթիմ ։ Իսկ միւսն ասէ. ես դանկս երկուս առնում յաւուր մի ՚ի ձեռագործէ և ծախեմ ՚ի պէտս իմ երկուս փողս և զայլն տամ սէր, և արդ ես

կեցցե՞մ սովլաւ թէ ոչ։ Իսկ ծերն ոչ ինչ ետ պատասխանի նոցա. և զկնի չորից աւուրց կամէին գնալ և տրտմեալ էին ընդ ոչ պատասխանել նոցա ծերոյն։ Իսկ սպասաւորք եկեղեցւոյն ասէին. մի՛ տրտմիք, եղբարք, զի ոչ ունեք ստէպ ասէ ծերն, մինչև առնու հրաման յայ, և ապա խօսեսցի։ Յայնժամ մտեալ եղբարքն ասեն առ ծերն. աղօթեա վասն ելից մերոց, հայր։ Եւ նա ասէ. զգնալ խորհեալ էք։ Եւ նոքա ասեն. այո, հայր։ Իսկ նա իւր արարեալ զգործն նոցա, սկսաւ գրել 'ի վերայ գետնոյն և ասէր. Պամբոյ երկուս աւուրս պահէ և երկուս հացս ուտէ, ոչ է սովլաւ կրօնաւոր. Պամբոյ ոչ է Պամբոյ, քանզի վաստակէ երկուս դանկս և տայ սէր, և ոչ է կրօնաւոր սովլաւ։ Եւ նայեցեալ 'ի վեր՝ ասէ ցնոսա. բարի են գործքդ այդ ձեր. այլ եթէ կամիք կեալ, պահեցէք զմիտս ձեր 'ի դատմանէ ընկերին։ Յայնժամ նոքա շինեալ գնացին 'ի տեղի իւրեանց։

ԱՍԱՑ հայրն Պաղլադիոս՝ եթէ պարտ է որք կամին ըստ այ ձգնել, կամ ուսանել հաւատով զոր ինքն ոչ գիտէ, և կամ ուսուցանել յայտնի զոր ինքն գիտէ. իսկ եթէ զմին յայսցանէ ոչ կամիցի, կեղծաւոր և թիւր է նա և թիւնաւոր. քանզի սկիզբն ապստամբութեան է յագեցումն վարդապետութե և անչափութեան բան, յորմէ երկնչի միշտ ածասէր անձն։

ԱՍԵՆ ծերք ոմանք՝ եթէ Պայեսիոս կրօնէր եղբայրն հօրն Պիմենի եգիտ աման ինչ լի դահեկանօք, և ասէ ցՊամբոյ ցերէց եղբայրն իւր. գիտե՞ս, եղբայր, զի բանքըն Պիմենի եղբօր մերոյ խիստ և անբերելիք են, եկ գնասցուք և շինեսցուք մեզ վանս յայնկոյս գետոյն և նստցուք անդ հանգստութեամբ։ Ասէ ցնա հայրն Պամբոյ. և ո՞ւր շինեսցուք զայն։ Իսկ նա եցոյց նմա զանօթ դահեկանին։ Իբրև ետես հայրն Անուբ՝ տրտմեցաւ յոյժ, քանզի համարէր զայն վնաս անձին լեալ, և ասէ ցնա. բարւոք է, գնասցուք շինեսցուք սենեակ յայնկոյս գետոյն։ Եւ առեալ զանօթ ոսկւոյն հայրն Անուբ եդ 'ի կնկուղ իւր. և մինչդեռ անցանէին ընդ գետն, իբրև հասին 'ի մէջ գետոյն, արար զանձն իւր հայրն Անուբ որպէս զխելագարեալ. և շարժեալ զգլուխն թիւրեաց յետս, և անկաւ կնկուղն և անօթն 'ի գետն և կորեաւ։ Եւ իբրև ելին 'ի ցամաք, սկսաւ հոգալ և տրտմել յա-

չարչարանօք 'ի սակս դաշնեկանացն։ Ասէ ցնա Պետրոս. մի՛ տրտմիր, հայր, զի այսպէս եղև և կորեաւ ոսկին, եկ դարձցուք առ եղբարսն մեր։ Եւ եկեալ կացին լաւութեամբ։

ԱՍԱՑ հայրն Մովսէս Եթեւպացին աշակերտաց իւր. ասա ինձ զոր ինչ ուսանիցես յիս, և ես պատմեմ քեզ զոր ինչ ուսանիցեմ 'ի քէն։ Ասէ աշակերտն ցհայրն. դու, հայր, բարի ես մտօք, այլ սակաւ մի խստասիրտ ես։ Ասէ ծերն աշակերտին. և դու ես բարի ես մտօք, այլ սակաւ մի ծոյլ և հեզգ ես մտօք։

ԱՍԷՐ ոմն 'ի ծերոցն՝ եթէ աղաչեցի զհայրն Մովսէս զի ասասցէ ինձ բան, և նա ասէ ցիս. յամենայնէ յորմէ կարող իցես մարդ փախչել 'ի մեղաց և ոչ փախիցես, յանցաւոր է այնպիսին։

ԱՍԱՑ ծերն՝ եթէ յանցեաւ եղբայր ոմն երբեմն և անկաւ 'ի մեծ մեղս, և յետոյ զղջացեալ եկն յապաշխարութիւն և գնաց առ ծեր ոմն և ոչ ասաց նմա զոր գործեացն, այլ միայն եհարց և ասէ. եթէ որք զայսպիսի ինչ գործեսցէ, որպէս մարթի ապաշխարել, կամ թէ ունիցի՞ յոյս փրկութեան։ Իսկ ծերն վասն զի անփորձ էր քննութեան, ասէ ցնա. զի՞նչ ասես, ով եղբայր, ընդէ՞ր կորուսանես զանձն քո։ Զայս իբրև լուաւ եղբայրն՝ ասէ. եթէ կորուսի զանձն իմ, ապա դարձայց յաշխարհ։ Եւ մինչ դիմեաց գնալ, եկն 'ի խորհուրդս իւր և ասէ. գնացից և պատմեցից զմեղս իմ և զայս խորհուրդս եւ հօրն Սիլուանեայ։ Եւ էր հայրն Սիլուանէս մեծ և խահեմ 'ի քննութիւն։ Եւ իբրև գնաց եղբայրն, և ոչ նմա խոստովանեցաւ զգործն, այլ այնու օրինակաւ պատմեաց որպէս և առաջին ծերոյն պատմեաց։ Իսկ հայրն բացեալ զբերանն իւր ուսուցանէր զնա 'ի գրոց՝ եթէ ոչ գոյ մեղս նոցա որ ապաշխարեն։ Իբրև լուաւ զայս եղբայրըն, զօրացաւ և պատմեաց նմա զգործս իւր ստուգութեամբ։ Իբրև լուաւ զբանն զայն երանելին հայրն, ոչ անարգեաց, այլ իբրև հմուտ բժիշկ պատեաց զվէրս հոգւոյն, և եցոյց 'ի գրոց՝ եթէ որք ապաշխարեն, դիւրաւ առնուն զթողութիւն մեղաց։ Իբրև գնաց ծերն այն առաջին և անհանձնար առ հայրն Սիլուանէս, պատմեաց նմա զայս և ասէ. ահա կործանումն որ յուսահատեալ կամէր գնալ յաշխարհ՝ որպէս գառն փայլէ 'ի մէջ եղբարցն։ Եւ արդ զայս յայն սակս ասացի, զի ծանիցուք եթէ մեծ

Digitized by Google

չարեաց պատճառք լինի խոստովանել զմեղս ոգէտ և անհանճար մարդկան ։

ԱՍԱՑ ծերն. որպէս Յովսէփ արեմաթացին առեալ զմարմինն տեառն Յիսուսի պատեաց և խնկեաց և եդ ՚ի գերեզմանի, այսպէս և մեզ պարտ է փութալ զի մի մեղիցուք, զի մի զբնակեալն ՚ի մեզ զշնորհն Այ արտաքսեսցուք ՚ի մէնջ. քանզի Իսրայէլի մանանայ տուաւ կերակուր յանապատին, իսկ նորոյ Իսրայէլի մանանայ տուաւ մարմին տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

ԵՂԲԱՅՐ մին ասէ ցծերն. ես և ոչ մի ինչ պատերազմ տեսանեմ ՚ի սրտի իմում, հայր ։ Ասէ ցնա ծերն. միտք քո չորս դրունս բացեալ ունին, և որ ոք կամի մտանէ, և որ կամի ելանէ, և ոչ կարես դու իմանալ. այլ թէ դիցես դու դուռն տան քո և փակեսցես՝ զնա և ոչ թողուս մտանել ՚ի նա խորհուրդս չարս, յայնժամ տեսանես զնա կալ արտաքոյ և պատերազմել ընդ քեզ ։

ԱՍԱՑ հայրն Նուբ. համարձակութիւն և ծաղր նման է հրոյ որ անկանի յեղէգնուտս. իսկ որ յխնամարանայն վասն տեառն, Ած խնամատուցանէ զնա ։

ԱՍԱՑ դարձեալ. պարտ է ունել զայս ծերոց՝ զի երկիցէ յօրինացն Այ, և զի ատեսցէ զմեղս և սիրեսցէ զառաքինութիւնս, և աղօթեսցէ առ Ած միշտ, և ունել միտս սուրբ և բան մաքրեալ և գործ բարի. և զի որով ոք դատի զեղբայրն, և նա ՚ի նոյն անկցի ՚ի մեղս ։

ԵՂԲԱՅՐ մին ասէ ցծերն իւր. շնորհեա ինձ զաղօթս քո, զի փութամ գնալ ՚ի քաղաքն ։ Ասէ ծերն. մի փութար գնալ ՚ի քաղաքն, այլ փութա փախչել ՚ի քաղաքէն և կեցցես ։

ԵՂԲԱՅՐ մին եհարց ցծերն և ասէ. միթէ պղծեցի մարդ յորժամ մտածեսցէ զչար խորհուրդս ։ Նա եղե խնդիր ՚ի մէջ հարցն վասն բանիս այսորիկ. ոմանք ասէին թէ պղծի մարդ, և ոմանք ասէին թէ ոչ պղծի. ապա թէ պղծեսցի՝ ոչ ոք կարէ կեալ, այլ այս բաւական իցէ՝ զի մի գործեսցուք մարմնով զխորհեալն ։ Երդ զբանս զայս հարցին ընդ ծեր մին մեծ, և ասէ ցնոսա ծերն. բաւ չափոյ իւրաքանչիւրոյ խնդրեսցի գործդ այդ. զի զոր օրինակ եթէ ոք տեսցէ անօթ ինչ ոսկեղէն թագաւորի և ցանկասցի անօթոյն և ոչ ունիցի զնա, ոչ նորա իցէ բաց ՚ի յիշողութեն, այսպէս և ամենայն խոր-

հուրդք են, զի ոչ եթէ 'ի մտանել 'ի մեզ զազիր խորհրրդոցն իցէ չար և դատէ զմեզ, այլ չարաչար ներգործել զխորհեալն կորուսանէ զհոգի. ապա եթէ բարուք ներգործէ յայնց խորհրդոց, առնու զպսակն փառաց անձին այնպիսւոյն:

ԱՍԱՑ ծերն. որ ոք կամեսցի միայն յանապատի կեալ, պարտ է զի ինքն վարդապետ և ուսուցիչ այլոց իցէ, և ոչ կարօտ յայլոց ուսանել, զի մի՛ յառաւել տուգանս անկանիցի և կորիցէ:

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց զծերն և ասէ ցնա. ահա ես գնամ առ ծերսն և խնդրեմ 'ի նոցանէ, և նոքա խօսին ընդ իս զօգուտս հոգւոյ. և ոչ ինչ մնայ 'ի միտս իմ 'ի խրատուց նոցա, այլ գնայ 'ի մտաց իմոց. արդ զինչ աւբարից, գնացից ներեցից զնոսա՝ թէ ոչ գնացից մինչ ոչ պահեմ զբանս նոցա, այլ լի եմ ես ամենայն պղծութեամբ: Եւ էին անդ կուժս երկուս դատարկս: Ասէ ցնա ծերն. առ զմի 'ի կժոցդ յայդցանէ և լուասցես զնա և օծ զնա ձիթով և դիցես զնա առ միւսն դատարկ. և արար զայն այնպէս: Եւ ասէ ծերն. բեր աստ զերկոքեան կուժսն. և եբեր: Եւ ասէ ծերն. արդ երկոքեան սոքա դատարկք են, այլ ո՞ 'ի դոցանէ սուրբ և գեղեցիկ է: Եւ նա ասէ. լուացեալն և օծեալն: Ասէ ծերն. այս օրինակ է անձին մարդոյ. թէպէտ և ոչ զմի ոք պահեսցէ յորոց լուաւն 'ի սրբոցն, այլ յամենայն ախտէ սրբի և մաքրի քան զայն՝ որ բնաւ ոչ ինչ հարցանէ: Զի անօթ ուր արկանի ձէթ՝ ձիթոյ աման իցէ, թէպէտ և դատարկ իցէ. և յորում գինի արկանիցի՝ աման գինւոյ իցէ, և ջրոյն ջրոյ. արդ թէպէտ և նիւթքն թափին, այլ հոտն ոչ ելանէ. այսպէս և 'ի խրատուց սրբոցն անհնար է եթէ ոչ մնասցէ առ լսողսն յանուշահոտութի՛ առաքինութեանց:

ԵՂԲԱՅՐ ոմն նստէր յանապատի հանգարտեալ, և սկսան դևք խաբել և գթել զնա այսպէս, զի երևէին նմա 'ի կերպս հրեշտակի լուսոյ և զարթուցանէին յաղօթս և ցուցանէին նմա լոյս ինչ և պայծառութի՛: Եւ յարուցեալ եղբայրն գնաց առ ծեր ոմն և պատմեաց նմա և ասէ. հրեշտակք գան առ իս, հայր, և պայծառութի՛ և փառօք բազմօք երևին և զարթուցանեն զիս յաղօթս: Ասէ ծերն. մի՛ լսեր նոցա, զի դևք են. այլ

Digitized by Google

մինչ դեռ զարթուցանել զքեզ, ասա ցնոսա՝ ոչ լսեմ ձեզ, այլ ես մինչ կամիմ՝ յառնեմ։ Այլ եղբայրն առաւել զարմանալեր ծերոյն գնաց 'ի տեղի իւր։ Այլ եկեալ 'ի գի-շերի գեղջն նոյնպէս զարթուցին զնա։ Նա ասէ. ոչ լսեմ ձեզ, գնացէք, դուք էք դուք. և ես յառնեմ ին-ձէն յորժամ և կամիմ։ Ասէին ցնա դեղջն. այն չար և սատանայ ծերոյն մոլորեցոյց զքեզ, որ եկն առ նա եղբայրն, ամն և խնդրեաց 'ի նմանէ զրամն 'ի փոխ, և նա ունէր, և ասաց նմա թէ ոչ ունիմ, և ոչ ետ նմա, և զոր առ-ակ ծանեաւ զստութիւն նորա։ Այլ եկեալ եղբայրն առ ծերոյն պատմեաց նմա զայս ամենայն։ Ասէ ծերն. ունէի փողս՝ ուղիղ է, և զի խնդրեաց եղբայրն այն և ոչ ետու նմա. այլ վասն այնորիկ ոչ ետու, զի գիտէի կամէր նա-մաւ 'ի վնասել զանձն իւր. և ես ընտրեցի անցանել զմի պատուիրանաւ և ոչ զամենայն. խակ դու, եղբայր, մեկ-նեաց 'ի խաբէութենէ դիւացն, քանզի հրեշտակք տեսանեն բարեկամք ազգի մարդկան են, և ոչ եթէ անպատճառք և նախանձոտք։ Այլ հաստատեալ եղբայրն գնաց 'ի սե-նեակ իւր, և աղաղակեաց ծանեաւ զխաբէութիւն նոցա։

ՆՈՅՆ ծերն. է ոմն մարդ որ ուտէ յոլով և դեռ ևս քաղցեալ է, է և այլ ոմն որ ուտէ սակաւ և յագի. այլ որ ուտէ զշատն և քաղցեալ կայ, աւելի վարձս առանայ 'ի սմանէ քան զայն որ ուտէ սակաւ և յագենայ նովաւ։

ՆՈՅՆ ամն 'ի Հարանցն՝ թէ դիր 'ի սիրտ քո զյի-շատակն իմ և պարապեաց նմա. քանզի զայս ասացաւ թէ՝ յիշեա մզն. և զոր զի ունիս զյիշատակ իմ 'ի մտի քո, ոչ գտա-նէ տեղի մտանել 'ի քեզ և զնայ. նոյնպէս և որ առաջէ տեղի թշնամեացն 'ի սիրտ իւր, և զայ առաջ առաջ հո-գին սուրբ, և մինչ ոչ գտանէ տեղի անդ՝ փախչի 'ի նմա-նէ և հեռանայ, զի ոչ գտյր տեղի նորա 'ի բազմութենէ չարեացն։

ՆՈՅՆ ամն 'ի Հարանցն. եթէ ընակեցի մշակ որ 'ի տեղի՝ ուր այլ ոչ իցէ մշակ, ոչ ուղղեն գործք նորա, բայց միայն թէ զայս կանխայցէ՝ զի մի դարձցի յետս. այսպէս է և ծեր, եթէ ոչ կեցցէ առ այլ ծերոյ՝ ոչ օգտեսցի։

ԱՂԲԱՅՐ ամն եհարց ցծերն և ասէ. ընդէր, հայր, կարծեմ թէ սանձեմ զաղօթս իմ։ Պատասխանի ետ ծերն և ասէ. յայժամ յայտնի սէրն իմ, յորժամ մտա-մտութիւն որ կատարէ զպատճառն իմ։

ԽՂԹԱՑՐ անուն Եհարց ցծերսն և ասէ. զինչ է չարա-
խօսութիւն և կամ զինչ է դատել զընկերն։ Ասէ ցնա
ծերն. չարախօսութիւն անուանի բամբասանաց բանն զոր
ասեն, իսկ դատել զընկերն այն է՝ որ ընկերին վասն ա-
սիցէ մերժ ինչ ասնել. որով ամենայն բանն զոր ընդդէմ
եղբօրն ոչ ասիցի, և յետոյ նորա ասիցի, թէպէտ և բա-
րի բան իցէ՝ սակայն չարախօսութիւն է. իսկ որ ասէ թէ
պոռնիկ է կամ գող և կամ արբեցող և կամ արծա-
թասէր, այսպիսիքս է դատելն։

Այր եղբայր ասէ՝ ընդ որ պատերազմէին խորհուրդք
իւր, եթէ գնա առ ծեր ասէ 'ի տեսանել զնա. և ասէր
ցխորհուրդն համարձակ՝ եթէ վաղիւն գնացից։ Այլ
եկաց նա այսպէս զերիս ամս, և կռուէր ընդ խորհրդոյ
իւրոյ։ Յետոյ ասէ ցխորհուրդս իւր. ահա իբրև գնացաք
առ ծերն, և նա ասէ ցմեզ՝ թէ բարւոք եկիք, ողջ էք,
եղբարք. և մեք ասեմք՝ բարւոք եկիք, հայր սուրբ, ա-
ղօթիւք ձերովք, և այսքանի անձն կարօտէաք սնոյց ձե-
րոց։ Այս ասաց յարեաւ եղբայրն և էառ ջուր, որպէս
թէ 'ի ծերոյն կողմանէ, և սկսաւ լուանալ զոտս իւր և
ասէր. բարւոք եկիր, եղբայր, թող ինձ զի աշխատեցար
վասն իմ, և ծնծ առացէ քեզ վարձս բազ վաստակոց քոց.
Այս յարուցեալ արար կերակուր և արար մխիթարու-
թիւն, և եկեր և էարբ և ասէ. ահա այս է՝ գնացեր և
մխիթարեցար ամենայնիւ, և զինչ է այլ։ Այս վարդա-
պետէր զնոսա 'ի նմանէ պատերազմն այն և հանգեաւ, և
ոչ գնաց ուրեք 'ի սենեկէ իւրմէ բառ խորհրդոցն իւրոց
խնամարան դատաստանեան զոր արար։

ԽՈՒՍԱՓ ծերն. ոչ եթէ շահ և օգուտ է ինձ զի նստիմ
սոսս մինայն, այլ վասն մշտոց և նեղութեանց կեամ. այլ
զօրաւոր նոքա են որ ընդ եղբարսն կեան. քանզի յորում
տեղւոջ ծեր կացցէ, և անդ եթէ ոչ գործեսցէ ձեռնակե-
րտութիւ, թէպէտ և այլուր գնասցէ, և անդ ևս ոչ կա-
րիցէ ասնել ինչ։

ԽՂԹԱՑՐ անուն Եհարց ցծերսն և ասէ. զինչ իցեն և այն
եղբարքն որք շրջին յամենայնի և խնդրեն աղօթս յեղ-
բարցն, իսկ նոքա ինքեանք ծոյլք են և ոչ առնեն զգործս։
Պատասխանի ետ ծերն և ասէ՝ եթէ կարօտ են աղօթք
աղաղակոյն յօգնականութի. այլ պարտ է նմա որ խնդրէ
զաղօթս յայլմէ, որպէս զի և ինքն փոյթ ջանիցի 'ի զգա-

Digitized by Google

ծնող զաւակնոյն գործս բարիս, և որդեկցի յաւակնոյն ան-պատուհաս խորհրդոց. իսկ եթէ հեզգ և անզգաստ լինի-ցի, զինչ շահ լինիցի նմա յայլոց աղօթից. և զի գրեալ է՝ եթէ մինն շինեսցէ և միւսն քակեսցէ զինչ լինիցի, բայց միայն աշխատութիւն սուտ:

ՍԻՍՈՅ և վասն ծերոյ ումեմնէ ասէ՝ եթէ կալեալ եղև նա 'ի ժամանակի հալածանացն, և բարուք զխոս-տովանութիւն Քրիստոսի խոստովանեալ մերկացեալ չարչարեցին. և այնչափ տանջեցաւ երկու, մինչև 'ի ջեռեալ պղնձի մա-հիճ արկեալ կիզեցին զնա: Այլ առաժամայն թագաւո-րեաց մեծին Կոստանդիանոս, և արձակեալ եղեն քրիս-տոնեայքն 'ի բանտից, և ողջացեալ ծերոյն զարմանս 'ի մենաստան իւր: Այլ իբրև եսես 'ի հեռաստանէ զանունն իւր, յողդոց եհան և ասէ. աւաղ վասն իմ, զի դարձեալ եկի 'ի բազում աշխատութիւնս: Այլ զայս ասէր վասն ձեռանց և պատուհասիցն զնա:

ՀԻՒՑՐՆ Պամփիւղեայ եպիսկոպոսն մերձ էին Թեսաղոնիկեցւոց՝ սա ծանօթագոյն էր և ծերունի յոյժ, մինչ զի բազում զաշակերտս ունէր. և զսա կալեալ կռապաշտից 'ի ժա-մանակի հալածանացն, և բազում գործօնովք տանջե-ցին, և յետոյ բրեցին զձախու աչս նորա և արձակեցին: Այլ սակաւ ժամանակի սիրէր զնա յոյժ մեծ Թագաւորն Կոս-տանդիանոս, և մեծապէս պատուէր զնա 'ի պալատան, և շատ շատ համբուրէր 'ի փառաւորս իւր, և համբուրէր սի-րով զոր վասն Քրիստոսի բրեալ աչքն նորա: Իսկ 'ի ժողովն Նիկիոյ երեքհարիւր ութսունեսուն հայրքն էր և սա սուրբն Պամփիւղոս եպիսկոպոս, որ յաւելու ճշմարիտ և հաստա-տեցաւ ընդ հարցն սրբոց, և հաստատեաց յոյժ զհաւատս ե-կեղեցւոյ: Ասաց ծերս այս. եթէ ոք գողեսցէ զծեր ոք զի մ' յանկարծակի, ձգեսցէ զնա 'ի բերան սատանայի:

ԾԵՐԻՐ ոմն բնակէր 'ի Սկիւթէ, որոյ էր որդի 'ի գիւղ ...ութեան. և կորուսեալ զորդի նորա իշխանն եդ 'ի բանտի. իսկ մայր մանկանն աղաղակէր 'ի հայր նորա՝ զի երթ յիշ-խանն զի հանցէ 'ի բանտէ զմանուկն: Իսկ ծերն չե-կեալ առ նա. եթէ զնա թողու, զայլ ոք դիցէ 'ի բան-տի վասն այլ պատճառի: Այլ նա ասէ. դիցէ զայլ ոք: Ասէ ծերն. և զինչ շահ է թէ ծնողք միայն խնդասցեն և միւսոյն արտասուեսցեն: Այլ ծերս այս աշխատէր 'ի ձե-ռագործս իւր յոյժ, և զգինս տայր աղքատաց: Այլ ե-

զեաղ երբեմն սով 'ի յերկիրն այն, և աղաչեաց առ ծերն մայր մանկանն զորդի իւր զի տացէ նմա փոքր ինչ կերակուր: Եւ երբև լուաւ զայս ծերն, ասէ ցորդին իւր. և ե՞ն, որդեակ, այլք մերձաւորք առ ձեզ: Ետ մանուկն. այո, հայր, են բազումք և չքաւորք են իբրև զմեզ, և առաւել քան զմեզ բազումք: Իսկ նա փակեաց զդուռն ընդդէմ նորա և ասէ արտասուօք. գնա, որդեակ, որ կերակրէ զայն ամենայն, և զձեզ կարող է կերակրել: Եւ ինչ ոչ ետ նմա: Իսկ եղբայր այն եհարց ցնա և ասէ. և արդ ո՞չ գալարեցան աղիք քո, զի այնպէս դատարկ դարձուցեր զորդին քո: Ասէ ծերն. եթէ որք ոչ նեղեացէ յամենայնի զանձն, ոչ առցէ վարձս յԱյ. և վասն զի գալարեցուցի զաղիս իմ կամաւ, առից համարձակութիւն առ տէր իմ վասն նորա:

ԵՂԲԱՅՐ մի եհարց զծերն և ասէ ցնա. ընդէ՞ր, հայր, այս ազգ որ այժմուս է՝ ոչ կարէ կրել զճգնութիւն առաջնոյն հարցն: Պատասխանի ետ ծերն. վասն այնորիկ, որդեակ, զի ոչ սիրեն զԱծ և ոչ փախչին 'ի մարդկանէ և ոչ ատեն զնիւթ աշխարհի. զի կրօնաւոր որ փախչի 'ի մարդկանէ և ատէ զնիւթ աշխարհի երկրաւորիս, ինքն ինքեամբ գայ 'ի նա ճգնութիւն և զեղջ. Որ զոր օրինակ եթէ ոք կամիցի շիջուցանել զհուր յարդարանէ իւրմէ, եթէ ոչ փութասցի և հատցէ զնիւթս որ յառաջոյ կողմանէ կայցէ, ոչ կարէ շիջուցանել զհուրն, նոյնպէս է և ծեր, եթէ ոչ գնասցէ 'ի տեղի մշտապէս, ուր հաց եւս դժուարաւ գտանիցի, ոչ կարէ ստանալ զճգնութիւն. և զի անձն որ ոչ տեսանէ, ոչ ցանկայ ատէպ: Դարձեալ ասեմ և զայս և զգուշացուցանեմ. քանզի որ գողանան և ստեն և կամ այլ ինչ մեղս գործեն, վաղվաղակի զղջանան և արտասուօք ապաշխարեն. իսկ որ ոք ոխս պահեսցէ 'ի սրտին զեղբօրէն, թէ ըմպէ թէ ուտէ և թէ ննջէ, ամենայն աշխատի և կամ թէ զինչ և առնէ՝ իբրև զԹոյնս մահաբեր 'ի մէջ ունի զնա և ուտէ ախտ ոխակալութեան զսիրտ նորա, և ոչ հեռանայ այն մեղք 'ի մտաց նորա, վասն որոյ և աղօթք նորա յանէծս համարեսցի. և զի այսպէս անընդունելի են աղօթք և ճգնութիւնք ոխակալին, մինչ զի եթէ զարիւն իւր հեղցէ վասն Քի, ոչ ինչ օգտեսցի 'ի նմանէ:

ԱՍԱՑ ծերն. եթէ ակար իցես դու մարտնչել, առաք

զպէտս (նորա որ գայ առ քեզ) և ծառայեսցես զնա, զի մի անմտութեամբ հրամանդացուցես 'ի նեղելն զնա. և խնդրեսցէ կերակուր զոր ոչ ունիցիս, և ծանրասցի քեզ:

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց զծերն և ասէ. որ ոք լռակեաց իցէ, հայր. զինչ առ ծերն, թէ նստել 'ի սենեկի: Ասէ ծերն. զնոյն առ ծերոյն կանոն աւանդեցին էր, և նստել 'ի սենեկի բարւոք 'ի նոցանէ օրինադրեցաւ:

ՀԱՐՑԻՆ զծերն և ասեն՝ եթէ բարւոք է անկանել 'ի մէջ կարգերոց եղբարցն: Ասէ ծերն. փախիր յայդպիսեացդ, զի զգեստ է՝ խցցես զունկն քո ոչ լսել զզառարեան. կափուցես և զաչս քո, զի մի տեսցես անիրաւութիւն ինչ:

ԱՍԱՑ ծերն. հեռ և նախանձ զառակացութիւն բերեն 'ի մարդ, իսկ սրտմտութիւն զկուրութիւն դնէ 'ի նա, և կուրութիւն ընկենու զնա 'ի խորս ամենայն չարեաց:

ԱՍԵՆ զծերն. զինչ են կեանք կրօնաւորի: Պատասխանի ետ ծերն. բերան ճշմարիտ և սիրտ սուրբ և մարմին անբիծ:

ԱՍԱՑ ծերն. հարքն մեր չարչարութեամբ և խիստ վարուք մտին 'ի կեանս յաւիտենից, իսկ մեք կամիմք ծուլութեամբ և հեշտութեամբ մտանել:

ԱՍԱՑ ծերն՝ եթէ այս է բան աստուածոյ որ ասէ, եթէ եղի զձեռն իմ 'ի ծովս, և 'ի վերայ գետոց զաջ իմ. ձեռն է 'ի ծովս մարգարէիցն, աջ է բանն Այ, և գետ առաքեալքն են:

ԵՀԱՐՑ եղբայրն և ասէ. զինչ ուսուցանէ բանն որ ասէ՝ թէ չէք փրկութիւն նորա առ Ած իւր: Ասէ ծերն. զչար խորհրդոց ասէ զայդ, որք հեռացուցանեն զհոգի Այ յորժամ 'ի վիշտս ինչ անկանի մարդ:

ԱՍԱՑ ծերն. փախչել պարտ է յայնցանէ, որք զածեն զանզգօնութիւն, թէպէտ բարեկամք կամ ընտանիք իցեն, և թէպէտ 'ի պատիւ քահանայական և կամ թագաւորական իցեն. քանզի փախչելն 'ի չարագործաց սիրելի Այ առնէ զմեզ, և համարձակութիւն տայ մեզ առաջի նորա:

ԱՍԱՑ ծերն. լաւագոյն իցէ բնակել ընդ արանց երկիւղածաց Այ, քան ընդ բիւրս որք ոչ երկնչին 'ի տեառնէ. քանզի 'ի յետին աւուրսն 'ի հասարակաց վանս 'ի հարկաց և ոչ մի գտցին որք երկիցեն յԱյ, այլ խոտո-

րեալքն ամենեցունց, եւ միաբանեալքն զանազանս եւ զյաղթու-
թիւնս եւ զպարգեւս թիւս եւ զառաքինութիւնս. յաղագս յայ-
տնակի եղիցին ամենեցունց իշխանութեան եւ ամեքեայց մե-
ծութք եւ ոչ էր. զի յայնժամ առաւել են բազմութիւն կոչեցեալք
եւ սակաւք ընտրեալք:

ԱՍԱՑ զարմնեալ. ոչ իցէ պարապ մերձենալ յանօրէնս, ոչ յեկեղեցի եւ ոչ 'ի վանականս եւ ոչ 'ի ճանապարհի եւ ոչ 'ի մէջ խորհրդոց եւ ոչ 'ի յաստեղանսն եւ ոչ ընդ ուրեք պարապ է մերձենալ յախորժակս, այլ ընդ 'ի բաց հեռանալ 'ի նոցանէ. եւ անօրէնն է ամենայն որ որ անցանէ զպա-տուիրանաւն էդ:

ԱՍԱՑ ծերն. ոչ ինչ է աղքատ քան զմիտսն զայն որ խնամատարութեան զէդ առնանց էր. զի որ ուսուցանէ զայլ որ, պարտական է զի նախ ինքն գործեսցէ զոր ուսու-ցանէ. քանզի գրեալ է՝ եթէ մշակին նախ պարտ է 'ի պտղոյն ճաշակել:

ՀԱՐՑԱՆԷ ոմն եղբայր ցծերն եւ ասէ ցնա. ո՞րպէս իցէ, հայր, զի ոմանք տեսանեն տեսիլս եւ յայտնութիւնս հրեշ-տակաց: Եւ ծերն ասէ ցնա. երանելի այնպիսին է, որ-դեակ, որք տեսանեն միշտ զմեղս իւրեանց, եւ զի այն-պիսին միշտ արթուն եւ զգաստ է: Ասէ եղբայրն. եւ տեսի զհայր մի որ եհան զդեւ յայլմէ հօրէ յառաջինն առաւօտ: Եւ ծերն ասէ. ինձ ոչ է պարտ հանել զդեւս յումեքէ եւ կամ բժշկել զհիւանդս. այլ զայս միայն աղաչեմ զնա զի մի մնասցէ յիս դեւն, այլ սրբեսցէ զիս 'ի պղծոյ եւ 'ի զազրելի խորհրդոց, եւ ապա մեծ լինիցիմ. քանզի եթէ որ սրբեսցէ զանձն 'ի զազրելի եւ յանսուրբ խորհրդոց, եւ անպատրաստ կատարեսցէ զպաղատօ ... , նա ընդ նշանագործ հայրանցն համարեսցի յարքայութեան երկնից:

ԱՍԱՑ ծերն. առ բերքն որք ունին զՏէր բնակեալ յիւ-րեանս, զայս կեանս ժառանգեսցեն եւ զհանդերձեալսն եւս, վասն զի այս իսկ կեանքս եւ հանդերձեալքն ամենայն Տէրն է. եւ որ ոք ունիցի յինքեան զՏէր, ունի եւ զնորայն զամենայն. խոկ որք ունիցին զախտս յիւրեանս, թէպէտ եւ զամե-նայն երկիր ունիցի՝ ընդ ոչ ինչ ոչ ունիցի, բայց միայն զա-մենայն ախտս կենցաղոյս՝ որք տանին նմա եւ ծառայե-ցուցանեն զնա:

ԱՍԱՑ ծերն. ոչ երբեք կարէ մարդ բարի լինել որ-

Digitized by Google

չարի եւ ընկեցաւ 'ի բանտս, եթէ ոչ ած ընտանեցաւ 'ի նմա. եւ զի այլ ոչ որ է բարի եւ բարերար, բայց միայն ած:

ՊԻԱՐԶԵԱԼ ասէ. որում անկրաւութիւն ինչ զիւրեա ցի յաւելցէ, եւ նա կամաւ համբերեսցէ եւ վասն մխա ստղիս խաչոյ աղօթեսցէ, այնպիսին նմանող Յիսուսի իցէ. իսկ որ ոչ մխտեսցէ եւ ոչ մխտեսցի, նա նմանող Աստուծոյ իցէ. իսկ որ մխտէ զայլոց եւ վաշխեսցէ եւ զցանկերն զրկեսցէ, նա նման դիւաց իցէ:

ԱՍԱՑ ծերն՝ թէ զմիտս մարդկան զարմացուցանեն յաւէտ ընթերցուածք գրոց եւ սթափութիւն եւ աղօթք. իսկ զխիղճ ցանկութիւն չկշռացուցանեն պահք եւ աշխատութիւն եւ հեռացուցանեն 'ի անձնութենէ. իսկ զպարկեշտութիւն համդարտէ երբ սովորութեան եւ երկայնմտութիւն եւ ողորմութիւն. իսկ այսոցիկ ամենեցուն ժամանակ է նմանս խաղ եւ չարի եւս նապեն. վասն զի ամ ժամանակ եւ անչափ եղեւ կարձ եւ տարածեալ իցէ, եւ մխտեալ սաստել քան զչափ:

ՀԱՐՑԻՆ ցածն 'ի հարանցն եղբարք անձինք եւ ասեն ցնա. ընդէր ոչ զիտէ անձն 'ի խոստովանս յայս զոր խոստացաք ած սիրոյ խաղաղ: Ասէ ծերն. զի ոչ զիտեն զեւ եւս զբարեգործութիւն երկնաւոր բարեացն, վասն այնորիկ թուլացին 'ի տեղեղ խորհուրդս հաղիք մարդկան:

ԱՍԱՑ ծերն. եթէ զնացցես 'ի տեղի ինչ բնակել անդ, մի նայեսցես ընդ նոսա որք անդ 'ի համբերութ եւ 'ի փառս իցեն, այլ նայեաց յաղքատս եւ յանպատիւս՝ որք եւ հաց անզամ ոչ ունին ատժամանի. ապա թէ նմանեսցես, եւ համբերեսցես դու անդ:

ԱՍԱՑ ծերն. սուտութիւն զործ չէ մարդոյն իցէ, իսկ Ճշմարտութիւն նորին Աստուծոյ. զի արմատ զործոց բարեաց Ճշմարտութիւն է, իսկ սուտութիւն մահ հոգւոյ:

ԱՍԱՑ ծերն ցեղբայր մի, որ զիտէր փորձ կրօնաւորաց եւ զեղջկաց, եթէ լոյս զայլս լուսաւորէ, այլ զանձն իւր կիզէ:

ԱՍԱՑ ծերն. մի բնակեսցես 'ի տեղւոջ ուր ունիցիս որ նախանձեն ընդ քեզ. ապա թէ ոչ՝ ոչ ուղղեսցին անդ կեանք քո:

ԱՍԱՑ ծերն. անհնարին է եթէ ոչ կեցցէ մարդ որ կայցէ հաստատուն 'ի հաւատս ուղիղս եւ 'ի զործս բարութեան ընդ հօրն Քրիստոսի սիրոյ:

ՀԱՐՑԻՆ անձինք 'ի հարցն ցաւոքեն Աթանասիոս Ա-

ղեքսանդրու եպիսկոպոսն՝ եթէ որպէս հաւասար է որ-դի Հօր։ Եւ պատասխանի ետ և ասէ․ որպէս հաւա-սար են լոյս երկուց ակնաց աչաց 'ի տեսանել։

ՀԱՐՑԻՆ Գրիգոր ածաբան հարցին ամենք՝ եթէ որպէս հաւասարին որդի և հոգին սուրբ ընդ Հօր։ Պա-տասխանի ետ և ասէ․ իբրև զարեգակն և զճառագայթս և զլոյս, մի ածութիւն և մի պայծառութիւն և մի լոյս։

ՀԱՐՑ հայրն Եսայիաս՝ թէ յորժամ կամեսցի ած ողորմել անձին, և նմին ոչ կամեսցի՝ այլ խոտորեսցի յայն ամենել զկամս իւր, յայնժամ թոյլ տայ տէր գալ 'ի վերայ նորա փորձութիւն ակամայ, որպէս զի խնդրես-ցէ զած։ Դարձեալ ասէ․ նորեկ կրօնաւոր որ չըլքեսցի վանուց 'ի վանս՝ նման է նա արջառոյ որ 'ի բազոց կա-տաղեալ աստ և անդ ընթանայցէ։ Դարձեալ ասէ․ ե-թէ ոք կամեսցի փոխանակ չարի չար հատուցանել, այն-պիսին կարողութիւն ունի և ամենայնկերպով միայն զայթակ-ղել զեղբարս։

ՀԱՐՑԻՆ զնոյն հայրն. և ասեն՝ եթէ զինչ է ար-ծաթսիրութիւն։ Պատասխանի ետ և ասէ․ յորժամ ոչ հաւատայցէ ոք՝ եթէ հոգասցէ վասն իւր տէր և յու-սահատեսցի յուխտէն այ, յայնժամ խնդրեսցէ ժողո-վել արծաթ։

ՀԱՐՑԻՆ զնա և ասեն․ զինչ է չարախօսութիւն։ Եւ պատասխանի ետ և ասէ․ անգիտանալ փառացն այ, և նախանձ ունել ընդ ընկերին։ Դարձեալ հարցին․ զինչ է բարկացողութիւն։ Եւ նա ասէ․ հակառակութիւն և ստութիւն և անգիտութիւն իցէ։

ԱՍԷ հայրն Եղիա․ յերիս իրս ունելին զմիտս մարդկան, կամ 'ի մեղս, կամ առ տէր Յս, կամ առ մարդիկ․ զի բազումք 'ի մարդկանէ աստ խնդրեն զհանգիստ, և ոչ անդ 'ի յայ։

ՀԱՐՑԻՆ զծերն և ասեն, որպէս լինելոց է յարու-թիւն։ Եւ նա ասէ․ ցՔս հարցէք զայդ որ յարեաւն․ զի որպէս նմին յարեաւ, այնպէս յարուցանէ նա և զա-մենայն ադամային ազգս։

ԺՈՂՈՎԵԱԼ երբեմն եղբարք առ հայրն Յովսէփ՝ հարցանէին 'ի նմանէ զբանն կենաց․ իսկ նա խոնարհութեամբ պատասխանէր նոցա։ Յետոյ ասէ․ և ես այսօր թագա-ւոր եմ յերկրի, զի թագաւորեցի 'ի վերայ ախտից, զի

ոչ երբեք կամեցայ խօսել զայնպիսի ինչ կամ լսել յումեքէ :

ԱՍԱՑ հայրն Պունկինոս. յայնժամ ծանիցէ ուրուք եթէ ընկալաւ զհոգին սուրբ, յորժամ վեհագոյն լինիցի ամենայն ախտից և միայն զնա սիրիցէ և խորհեսցի զնոյն միայն :

ԱՍԱՑ հայրն Պիմենոս. եթէ կամիս լռել և կալ հանդարտ հետևեսցի ոք, կորիցէ ի յաւիտենիցն կորուստ. զի երկրպագեալ այսորիկ բազում են, կամք և հանդիսա, և առաւել քան զայլ ախտս փաւրեն ի կորուստ. և զի բազումք եղեն զօրաւոր, և սակաւք ընտրեալ ուղղեցին զայս : Ասաց դարձեալ. յերկրորդ ազգէ ցայսր ոչ կարացին գալ ի կատարելութիւն եղբարքն ի Սկիւթէ : Պատմեաց ասէ. եթէ ոչ էր բերեալ Մովսէս զոչխարս իւր ի լեառն Սինա, ոչ էր կարող լեալ տեսանել զտեսիլ այն ի մորենւոջն. զի որդիք Մեծայ նմանք են. և որ արդարացուցանէ զանձն, տապալանէ զնա :

ԱՍԱՑ հայրն Սիսոյի. յորժամ այլ ոք հոգացէ ընդէմ քո, այլ ոչ ոք իցէ որ հրամանս տայ քեզ :

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ծերն և ասէ. զինչ արարից, զի տրտմիմ ես ի ձեռագործի, սիրեմ զարմանս և գործել ոչ կարեմ զնա : Ասէ ցնա ծերն. գրեալ է՝ ոչ խոտորել եղբօրն հանգիստ ի ձեռագործէ, այլ անդադար աշխատել պարտ է ի գործ կրօնաւորի :

ԱՍԱՑ դարձեալ. պատիւ բազում անգամ, և ոչ երկնչել՝ ընկենու ի մեղս :

ԱՍԱՑ ծերն. եթէ կամեսցիս լսել օրինացն այ կեալ, ունիս օգնական և փրկիչ քեզ զօրինադիրն այ. իսկ եթէ ոչ հնազանդիս օրինացն այ, ունիս ընթացակից քեզ ի կորուստն զչար դևն :

ԱՍԱՑ ծերն. ոչ հոգալ ինչ և լռել և խորհել զօրէնսն այ՝ ծնանին զանբծութիւն. զի որպէս մեղու ուր և իցէ զմեղր գործէ, նոյնպէս և կրօնաւոր ուր և գնասցէ՝ պարտ է զի զգործսն այ գործեսցէ :

ԱՍԱՑ ծերն. սատանայ ոլորող տուանց իցէ, և որչափ դու թողցես՝ նա այնչափ ոլորել կարէ : Զայս ասէր վասն խորհրդոց սրտին :

ԱՍԱՑ դարձեալ. ծոյլ և դատարկ և անգործ՝ ոչ կամի այ եթէ լինիցի ոք :

Digitized by Google

Ասաց ծերն. տուր զչարչարանս և զանցեալ զօրհնեան յինքն։

Ասաց դարձեալ. գոհութիւն բարեխօսէ առաջի Այ վասն տկարութեան։

Ասաց դարձեալ. զոր օրինակ արծաթ թէպէտ սևանայ՝ դարձեալ սղխատակայանայ, այսպէս և հաստատեալ թէպէտ սևանայ մեղօք՝ դարձեալ սրբի ապաշխարութեամբ, և սոյլաւ նմանի հաւատ արծաթոյ։

Եղբայր ոմն եհարց զհայրն Պիմենէս և ասէ. եղբայրք ամենք բնակեն ընդ իս, կամիս զի հրամանատար եղէց նոցա։ Ասէ ցնա ծերն. ոչ, այլ գործ արա զառաջին գործոյ, և նոքա թէ կամեսցին զկերակուր անձին՝ սրահեսցեն զայն յօդուտ իւրեանց։ Ասէ ցծերն եղբայրն. և նոքա ես կամին, հայր, զի հրամայեցից նոցա։ Ասէ ցնա ծերն. մի, այլ օրինակ լեր նոցա և մի օրինադիր։

Եղբայր իւր եհարց զհայրն Պիմենէս և ասէ ցնա. զտի ես տեղի որ ունի զգամենայն հանգիստ եղբարց, կամիս զի բնակեցայց անդ։ Ասէ ծերն. ուր ոչ վնասեսցես զոր եղբօր քո, անդ բնակեսցիս։ Ասէ դարձեալ ասէ եղբայրն. եթէ ունիցի եղբայրն իմ փոքր ինչ դրամս, կամիս զի հարցից ինչ զնա։ Ասէ ցնա ծերն. հարցցես զնա մի անգամ։ Ասէ եղբայրն դարձեալ. զինչ առաւելից զի խորհրդոց իմոց յաղթել ոչ կարեմ։ Ասէ ցնա ծերն. թոյլ տուր խորհրդոց քոց, միայն մի տարամել զեղեգայր քո։

Եղբայր ոմն եհարց զծերն և ասէ. են առ մեզ երկու եղբարք, միոյն պահէ յաճախ, զվեց աւուրս ճաշակէ և աշխատի յոյժ, իսկ միւսն սպասաւորէ հիւանդաց. արդ որոյ 'ի նոցանէ գործ առաւել ընդունելի Այ իցէ։ Ասէ ծերն. եթէ կախեսցէ զանձն իւր ընդ ռնգանց 'ի վեր՝ այն որ պահէն, ոչ կարող իցէ հաւասարել այնմիկ որ սպասաւորէն հիւանդաց։

## ԺԱ

# ՎԱՍՆ ԱՐԹՈՒՆ ԵՒ ԶԳԱՍՏ ԼԻՆԵԼՈՑ

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

մնալն եթէ զգաստս միայնակեցի գործս, որով կորու-սանես զվաստակս քո եւ զպիտանութիւն :

Ասաց [1] ծերն՝ եթէ կրօնաւոր որ ոչ դնէ 'ի սրտի թէ ինքն է եւ ա̃ծ միայն 'ի վերայ երկրի, ոչ կարէ կալ :

Ասաց [2] ծերն. աւազակն մի բանիւ արդարացաւ եւ Յուդաս 'ի միում գիշերի կորեաւ, եւ արդ մի ոք յու-սահատեսցի եւ մի ոք վստահասցի յանձն :

Ունէր [3] Սիլուանէ յելանելն 'ի խրճթէն ծածկէր զերեսս, եւ 'ի հարցանելն ասէր՝ զի մի տեսից ծառս եւ թողցէ միտքս զներքին մշակութիւնն իւր :

Պատմեաց [4] ոմն 'ի ծերոց՝ եթէ գնայաք երբեմն 'ի Սկիւթէ ես եւ ծերն իմ : Իբրեւ երթայր յամբ եւ կայր յա-ղօթս շատ եւ ասէր ցիս. լսեմ յերկինս փառաբանութի̃ ա̃յ եւ հրեշտակաց, եւ ոչ կարեմ գնալ :

Այր [5] ոմն սուրբ վախճանելոց էր, եւ 'ի նմին ժամու

ըստ այլ բարւոյ զգաստս քո, յայնժամ կորուսանես զաւ զամենայն գործս եւ զքիրս եւ զհանճարս քո :

1 Սոյն հայրն Աղոնիոս. եթէ ոչ ունիցի 'ի մտի ծեր՝ եթէ ա̃ծ եւ ես միայն եմք յաշխարհի, ոչ կարասցէ կեալ. զի թէ համարիցի միտք յա-ռաւօտէ մինչ յերեկոյ, գտցէ 'ի չափ ընթացելոցն ա̃յ :

2 Սոյն հայրն Քասանթիոս. աւազակն 'ի խաչին միով բանիւ ար-դարացաւ, եւ Յուդաս 'ի թիւ առաքելոցն էր եւ 'ի միում գիշերի կորոյս զամենայն աշխատութի իւր, եւ զի յերկնայինն բարձրութենէ անկաւ 'ի գժոխս. վասն այսորիկ յաջողելոցն մի ոք պարծեսցի եւ յուսահատեսցի մեղ-քըն, եւ մի մեղուցեալ ոք յուսահատեսցի :

3 Ունէր երբեմն հայրն Սիլուանէ 'ի լերանն Սինեա, եւ աշակերտ նո-րա Զաքարիա գնաց ուրեմն 'ի գործ ինչ եւ պատուիրեաց ծերոյն եւ ասէ. Թողցես զջուրս եւ ոռոգեսցես զպարտէզս : Իսկ ծերն ել 'ի խցէն եւ ծածկեաց զերեսս իւր կնգղովն իւրով, զի մի տեսանիցէ ինչ, բայց միայն զշաւիղս ոտիցն : Իսկ 'ի նմին ժամու եկն առ նա եղբայր ոմն եւ ետես ծածկեալ զերեսս նորա. եւ իբրեւ մտին 'ի սենեակն, ասէ ցնա. ասասցես ինձ, հայր, ընդէ՞ր ծածկեցեր զերեսս քո եւ այսպէս ոռո-գեցեր զպարտէզն քո : Ասէ ցնա ծերն. որպէս զի մի տեսցեն, որդեակ, աչք իմ զծառս եւ զպտղաբերութիւն զնոցա իմ քննել զնա, եւ թողցէ 'ի բաց զներքին մշակութեան անձին եւ զօգտակարութի միտաց :

4 Պատմէր մեզ եղբայր ոմն 'ի Սկիթէ՝ եթէ գնայաք երբեմն երկո-քեանս 'ի միասին ես եւ ծեր իմ, իսկ ծերն գայր առնէր եւ ապա գնա-յարէր եւ գայր : Իբր ես ասեմ ցնա. հայր, գնասցուք մեք : Իբր նա ասէ. ոչ լսեմ քեզ : Իբր ես ասեմ. ընդէ՞ր, հայր : Իբր նա ասէ ցնա. որդեակ իմ, լսեմ ես զի երգեն հրեշտակք յերկինս ընդ ժամս ժամս, վասն այն ոչ շարժիմ ես յայնմ ժամու. քանզի եւ մեծ պարտ է, որ-դեակ, հսկել եւ աղօթել յամենայն ժամու 'ի տուէ եւ 'ի գիշերի՝ թէ 'ի տան եմք, թէ 'ի ճանապարհի. քանզի ասէր հայրն Անտոնիոս՝ եթէ ուշ ինչ ոչ պարտ է հոգւոյ կրօնաւորի մնալ՝ քան զպահս հոգւոյ :

5 Այս ծերոյ ասացին այսպէս մերձ կայցեալ զին 'ի ժամ ելանելոյ հո-

յորում առանձնեալ էր փշոցն, եկաց սատանայ առա-ջի և ասէ. դու ճողոպրեցար յինէն։ Եւ ասէ ծերն. դեռ ոչ գիտեմ։ Մինչև ցայս վայր զուարթութիւն էին սուրբ հարցն առ 'ի չպարծենալ ինքն։

ՀԱՅՐՆ Պիմէն մինչ երթայր յաղօթս, նախ ժամ մի քննէր զանձն և ապա գնայր, և ասէր. եթէ լիցէ եր-կինք նոր և երկիր նոր, ոչ կարէ մարդ առանց հոգոց լինել։

ԱՄՈՆ[3] եդ 'ի մտի իւրում երեք բանս երթալ ուսա-նել յՍիսոյէ. և յորժամ մերձ եղև առ Սիսոյն, զա-մենայն բանսն մոռացաւ և դարձաւ 'ի խուցն իւր և եդ զբանալին 'ի սօղնակն, յիշեաց զբանն՝ եթող զբանալին 'ի սօղնակն և դարձաւ գնալ կրկին առ Սիսոյն, և եր-կեան ընդ մէջ ճանապարհին։ Իսկ իմացեալ Սիսոյի զոր արարն՝ ասէ. ով Ամոն, անուն քո լիցի զամենայն Եգիպտոս։

ԱՍԷԻՆ[4] երբեմն վասն հօրն Յովհաննու կարճահասա-կին՝ թէ յորժամ գայր 'ի հնձոց և կամ երթայր առ ծերսն, յաղօթս և 'ի խօկումն աստուածային պարապէր մին-չև յանդիպելն խորհուրդք նորա յառաջին կարգն։

ԱՍԱՑ[5] ծեր մի՝ եթէ պարտ է մարդոյ պահպանող լինել գործոց իւրոց, զի մի ինչ կորուսցէ 'ի նոցանէ. ա-պա եթէ գործեսցէ որ շատ և ոչ պահեսցէ զգործս իւր, ոչ կայ մնայ հաստատուն։ Եւ պատմեաց այսպիսի ինչ իրս՝ եթէ եղբօր ուրումն մնաց ժառանգութիւն, և կա-

գոյն 'ի մարմինոյն՝ ասէ ցնա. ճողոպրեցար դու 'ի ձեռաց իմոց։ Ասէ ցնա ծերն. ես ես ոչ գիտեմ, նա գիտէ։ Այդ դու տես զզգուշութիւն հարցն թէ որպէս զգաստ էին մինչև 'ի մահ։

3 Գնացեալ երբեմն հայրն Պիմէն մինչ մանուկ էր՝ առ ծեր մի հարցանել ցնա զերիս խորհուրդս։ Եւ իբրև եհաս առ ծերն, մոռա-ցաւ զմին 'ի նոցանէ և դարձաւ 'ի սենեակ իւր. և իբրև ձգեաց զձեռն 'ի բանալ զդուռն խցին, յիշեաց զբանն զայն զոր մոռացաւ. և թո-ղեալ զբանալին անդր՝ դարձաւ առ ծերն։ Ասէ ցնա ծերն. արագ ա-րարեր զգալ քո, եղբայր։ Եւ նա պատմեաց նմա եթէ մինչ ձգեցի զձեռս բանալ զդուռն՝ յիշեցի զբանն զոր խնդրէի, և ոչ ես բացի զդ-ուռն, վասն այսորիկ աճեպ եկի։ Ասէ ծերն. հրեշտակ լիցես դու, Պիմէն, և պատմեսցի անուն քո յամենայն երկիր։

4 Ասէին վասն հօրն Յովհաննու՝ եթէ յորժամ գայր 'ի հնձոցն, նախ քան զգալն 'ի սենեակ իւր Թարմիթա, աղօթից և հեծմանց պարապէր մին-չև գտցէ մտաց իւր յառաջին հանդարտութիւն և 'ի լաւութիւն։

5 Ասաց ծերն. պարտ է մարդոյ պահել զգործ իւր, զի մի կորուս-ցէ զնա. զի թէ աշխատի որ շատ և ոչ պահէ զայն, զինչ են շահեա-ցի. այլ լաւ է աշխատել սակաւ և պահել զայն, քան գործել շատ և կորուսանել։ Ցուցանէ և առակ ինչ առ այս և ասէ՝ եթէ եղբօր ուրումն

մերձեալ առնել սէր վասն վախճանելոյն՝ դէպ եղև եղբօր ումեմն գալ այլուստ, և յառոյց զնա 'ի գիշերին՝ ածելով զայս՝ թէ արի օգնեա մեզ։ Իսկ եղբայրն աղաչէր և ասէր՝ թէ աշխատեալ եմ և ոչ կարեմ։ Ապա ասէ ցնա. թէ ոչ գաս, արի և գնա 'ի բաց։ Եւ յարուցեալ այրն առար գնաց։ Եւ 'ի միւսումն եւս գիշերի առանէր 'ի տեսլեան զի ցորեան ետ հացարարին, և ոչ ետ նմա և ոչ մի հաց։ Եւ յարուցեալ չոգաւ առ ծեր մի մեծ և պատմեաց նմա զամենայն։ Ասէ ցնա ծերն. բարի գործ գործեցեր, այլ ոչ եթող Հակառակորդն առնուլ վարձս։ Որ պարտ է մարդոյ արթուն լինել գործոյ իւրոյ։

ՄԱՅՑ ծերն. եթէ ոք կորուսանէ ոսկի և արծաթ, գտանէ փոխանակ նոցա այլ. իսկ որ կորուսցէ զժամանակ իւր, ոչ գտցէ զնա։

ԱՍԷԻՆ[1] վասն հօրն Մակարի՝ եթէ յորժամ գայր յեկեղեցին, ոչ տայր աշակերտացն իւրոց մերձ լինել երթալ, այլ 'ի բացէ. եթէ գայր մերձ առ նա հարցանել վասն խորհրդոց, իբրև ասէր նմա՝ առ ժամայն հալածէր յինքենէ ասելով, մի գուցէ մինչ զեւ զօգտակարն խօսեցիմք՝ օտար ինչ ձայնք անկանիցին, վասն այնորիկ չտամ՝ թոյլ քեզ առ իս յամել։

ԱՍԵՆ[2] երբեմն հայրն Մակար անցանել ընդ գետն, և

մնաց ժամանդութեն 'ի հօրէ իւրմէ, և նա կամեցաւ վախճանել զայն և առնուլ սէր վասն վախճանելոյն իւրոյ։ Իսկ եկն եղբայր մի առ նա առաջ և զարթուց, և 'ի գիշերին ասէ ցնա եղբայրն. արի օգնեա ինձ։ Իսկ նա ասէ. թողութիւն արա, զի վաստակեալ եմ և ոչ կարեմ։ Յայնժամ ասէ եղբայրն. եթէ ոչ օգնես ինձ, արի և գնա այստի։ Իսկ յարուցեալ գնաց օտարն եղբայր։ Իսկ 'ի գիշերին յայնմիկ տեսեւ տեսանէր նա՝ իբր թէ ետ նա զցորեան իւր 'ի հացագործին, և նա եւս և ոչ ետ նմա և ոչ հաց մի։ Իբրև զարթեաւ գնաց և պատմեաց զայս ծերոյ մեծի։ Ասէ ծերն. բարի ինչ գործեցեր՝ և ոչ թողլ ետ քեզ Թշնամին առնուլ զվարձս քո. քանզի պարտ է զգուշանալ գործոյն, զի մի կորուսցէ զվարձն։ Ապա եկն 'ի միտս իւր եղբայրն և աղաչեալ ասէր՝ ես գիտացի արդ զի կորուսի զվարձս իմ, զի զեղբայրն վշտացուցի մեծաւ՝ արտաքսելով զնա 'ի տանէ, և զղջաց յոյժ։

1 Ասէին վասն հօրն Մակարի՝ եթէ մինչ գնայր յեկեղեցին և կամ այլուր, ոչ թողոյր զաշակերտս իւր գնալ մերձ իւրն, այլ 'ի հեռաւոր գալ. և եթէ գնայր նա հարցանել բան ինչ, վաղվաղակի մեկնէր զնա և ասէր. մի գուցէ մինչ խօսեսցուք զօգուտ և ընդ յանկարծ 'ի բանսն, անկցի 'ի մէջ և այլ ինչ օտար բան, վասն այսորիկ ոչ տամ քեզ թոյլ գնալ մերձ իմ։

2 Գնաց երբեմն հայրն Աբրահամ զի անցցէ յայնկոյս գետոյն, և ոչ

Digitized by Google

սեւսեւալ զմանկունսն զի զնա կալցեն, և նստաւ 'ի մէ-ջտեղն. և ահա այր մանկոյն եկն և անցուցանէր զմար-դիկն: Այլ ասեն զնա. եկ և դու ընդ մեզ անդ, հայր: Այլ նա ասէ. ես բայց եթէ յաղօթատեղական մանկոյնդ ե-լանեմ, յայդ ոչ ելանեմ: Առնէր ընդ խնդութեան խորհրդ արմանեւոց և նստեալ յաթոռ սիրոյ և դարձեալ քա-կէր զնա մինչև եղև կայծեալ արքունական մանկոյնն, և աղօթ անոյ: Այլ անկեալ առաջի նորա եղբարցն հարցա-նէին զնա՝ թէ յաղագս էր արար զայն: Ասէ ցնոսա ծերն. դի մի համարեալ խորհրդածքս փութացուք, այլ այս օրինակ է զի կարգաւորութի զնացուք զձեռնադրութեան նոյ:

Ասէր հայրն Պամբոյ՝ եթէ կոչեաց զնա հայրն Ան-տոն և ասէ ցնա. համբոյ զհայր քո, զի յորժամ երթայցէ առ անէր՝ աղաչեացէ զնա փրկանս քո, և բարի քեզ լինիցի.

Այր՝ մի ծեր 'ի Սկիւթ որ աշխատէր 'ի մարմինս իւր յոյժ, բայց ոչ էր համառօտական խորհրդածք. և երթեալ առ հայրն Յովհաննէս կարճահասակ եհարց վասն մո-ռացմանն: Այլ խօսեալ ընդ նմա ծերոյն զբանսն՝ դարձաւ և եկն 'ի խուցն իւր, և մոռացաւ զդարձեալ զոր ասաց նմա ծերն: Այլ միւսանգամ անցուցեն, և խօսեցաւ ծերն ընդ նմա զբանն. և դարձեալ 'ի ծերոյն եկն 'ի խուց իւր՝ մոռացաւ, և այսպէս տարաբեալ բազում անգամ մոռացմանց զաւացեալն: Այլ յետ այնորիկ դիպեալ նմա ասաց. գիտեմ, հայր, զի դարձեալ մոռացայ զոր ասա-

եղիա անդր նոր հանճարեղութեանն, և մեծայր նստաւ. և ահա այր նոր ան-ցանէր 'ի յայնկոյս. կոչեցին և զծերն մտանել 'ի նաւն, և նա ոչ կա-մեցաւ, այլ ասէ. եթէ ոչ գայցէ հանճարեղութեամբ այն նաւ, ոչ անցից յայնկոյս: Եւ զի ասէր ընդ ինքն աղօթեմն, և նստեալ հեծեալք զայն և դարձեալ քակէր, մինչև եկն նաւն այն և եանց յայնկոյս: Եւ յայն-ժամ ասեն ցծերն եղբարքն. ընդէ՞ր արարեր զայդ, հայր: Իսկ ծերն ասէ. վասն երկուց պատճառաց, մի զի հասից զկամս իմ զի մի եր-թեք արարից զնա, և երկրորդ զի հանդարտութիւն արարից զկամս իմ. և անկեղծն ոչ զխօսից զձեռնադրութեան նորա:

։ Եւէր մի էր 'ի Սկիւթ Աբրահամ մարմնով, իսկ միտք ոչ զգաստ յոյժ. առ զնայ առ հայրն Յովհաննէս հարցանել վասն մոռացութեան. Եւ իբրև լուաւ 'ի նմանէ բանն, դարձաւ 'ի սենեակն իւր և մոռացաւ զբանն զոր ասաց նմա հայրն Յովհաննէս. և դարձեալ գնաց հարցա-նել զնոյն բանն. և իբրև եկն, դարձեալ մոռացաւ. զայս արարեալ բազում անգամ գայր և հարցանէր, և իբրև գայր 'ի սենեակն իւր՝ մոռանայր զասացեալն 'ի ծերոյն: Եւ զկնի այնորիկ դիպեցաւ ծերն հօրն ասացեալ և ասէ ցնա. ներեսջիր, հայր, զի մոռացայ դարձեալ զբանն զայն; և այլ ոչ եւ յանձնեցայց հարցանել, զի մի ծանրացուցից զքեզ: Ասէ

Digitized by Google

ցերն, և վասն ձանձրացուցանելոյ զքեզ համարձակեցան ոչ եկին: Ասէ ցնա հայրն Յովհաննէս. երթ լից ջրով: Եւ նորա երթեալ լուցեալ. և ասէ՝ բեր այսր և այլ ջրագունս և լից զնոսա: Եւ նորա լուցեալ զամենեսեան, ասէ հայրն Յովհաննէս ցծերն. մի թէ փոխեցաւն ինչ ջրայն զի լուցեր 'ի նմանէ զայլ ջրագունսդ: Եւ նա ասէ՝ ոչ ինչ, տէր: Ասէ ցնա ծերն. այսպէս և Յովհաննէս՝ եթէ ամենայն Սկիւթ եկեսցեն առ իս, ոչ խափանեսցեն զիս 'ի շնորհէն Քի. արդ դու յորժամ եթէ կամիս՝ եկ առ իս և մի ինչ վհատիր: Եւ համբերութբ երկոցունցն մերժեաց ած զմոռացումն 'ի նմանէ: Վասն զի այս իսկ է գործ բնակելոցն 'ի Սկիւթ՝ տալ յօժարութի այնոցիկ որք պատերազմին ընդ թշնամւոյն, և բռնաբարեալ զինքեանս՝ շահելին զկրերաց բարիս:

ԱՍԷՐ[1] հայրն Մովսէս ցաշակերտ իւր. 'ի սկզբանէ զիա՞րդ տեսանէիր զիս: Եւ ասէ ցնա. որպէս և զքեզ, հայր: Եւ 'ի կատարածիս, ասէ ցնա, զիա՞րդ տեսանես զիս: Եւ նա ասէ՝ թէ որպէս և զսատանայ. և եթէ բան բարի խօսեսցիս ընդ իս, որպէս զսուր ընդունիմ:

ԵԿՆ[2] եղբայր ոմն 'ի խուցն Յովհաննու կարճահասակի ընդ երեկս, և փութայր անդրէն երթալ. և խօսեալ նոցա վասն առաքինութե 'ի բազում ժամս, եղեառաւօտ և ոչ գիտացին, և ել յուղարկել զնա. և զա-

ցնա հայրն Յովհաննէս. առեալ ջրաւ վառեա զնա: Եւ արար այնպէս: Եւ ասէ ցնա. արդ բեր դու բազում ջրաւն և վառեա 'ի նմանէ: Եւ արար այնպէս: Ասէ հայրն ցծերն. պակասեաց ինչ 'ի լուսոյ ջրագին այնորիկ, զի վառեցան ամենեքեան 'ի դմանէ: Եւ նա ասէ՝ ոչ, հայր: Ասէ ցնա հայրն Յովհաննէս. այսպէս եթէ ամենայն Սկիւթ գան առ իս, ոչ խափանեն 'ի շնորհացն Քի. և արդ յորժամ կամիցիս, առանց զայթակղութե եկ առ իս: Եւ այսպէս 'ի ոսկս երկոցունց համբերութեն եբարձ ած զմոռացութիւն 'ի ծերոյն յայնմանէ: Զի այս էր գործ սկիտացւոցն, քանզի յօժարամիտք էին և ճգնաւորք, և քաջութեամբ օգնէին հեղգացելոցն և յաւելուին զնոսա 'ի գործս բարիս:

[1] Եհարց հայրն Աբրահամ ցհայրն Եսայիա և ասէ. 'ի զաղն քո առ իս 'ի սկիզբն կրօնաւորութե քո զիարդ տեսանէիր դու զիս: Իսկ նա ասէ. իբրև զլե տեսանէի, հայր, զի որչափ քաղցր ինչ և բարի բանս ասէիր ինձ՝ իբրև զսուր հարկանէիր 'ի սիրտ իմ. իսկ այժմ իբրև լսեմ բանս որպէս հրեշտակի բարբառ և յիս պատրաստ լսելով քաղցրութեան սիրտ իմ և ուրախանայ հոգի իմ և ցնծայ:

[2] Եղբայր ոմն զնացեալ 'ի սենեակ հօրն Յովհաննու ընդ երեկս, և սոփորէր զնոսա. և սկսան խօսել զառաքինութեց, և եղև առաւօտ և ոչ

ձեռաւ կայցէ խօսելով մինչև ցվերջ ժամու. և մնծեալ զնա ճաշակեցին, և ապա արձակեաց։

ԱՍԱՑ[1] ծեր ոմն՝ եթէ բանսարկուն է թշնամի և դու տաճար. արդ թշնամին ոչ դադարէ յընկենլոյ 'ի տաճարդ քո զինչ և գտցէ՝ զամենայն պղծութիւնս հեղլով. և քեզ պարտ է ոչ հեզգալ, այլ անդրէն արտաքս ընկենուլ. ապա եթէ հեզգայցես, լինի զտաճարդ քո պղծութեամբ և ոչ ևս հանդարտես մտանել անդ. այլ զառաջինն որ եթէ նայն ընկենու, դու ևս սակաւ սակաւ արտաքս ընկեա, և լինի տաճարդ քո՚ք շնորհօքն Քնի։

ԱՍԷՐ հայրն Յոհաննէս կարճահասակ ցաշակերտսն իւր. պատուեսցուք պատուեսցուք զմիմեանս, և ամենեքեան պատուեսցեն զմեզ. ապա եթէ արհամարհեսցուք զմիմեանս, այսինքն զաստուծով, ամենեքեան արհամարհեսցեն զմեզ, և 'ի կորուստ մատնիմք։

ԱՂԱՉԵԱՑ[2] հայրն Պիմէն բազում խոնարհութեամբ զհայրն Մակար և ասէ. ասա ինձ բան։ Նա ծերն ասէ ցնա. զիրսդ զոր խնդրեսդ, անցեալ է այժմ 'ի միայնակեցաց։

ԱՍԱՑ ոմն 'ի հարանցն. եթէ բնակեսցէ գործօնն 'ի տեղւոջ ուր իցեն այլ գործօնեայք, ոչ կարէ յառաջել, և զօրութի ճգնաւորին ոչ իջանել 'ի վայր ոչ զօրէ. և դատարկն եթէ լինիցի դարձեալ 'ի տեղի գործողաց, եթէ արթուն իցէ՝ յառաջէ, ապա թէ ոչ՝ գթէ 'ի խոնարհ։

ՊԻԵԳ[3] եղև երբեմն զի քուրմն հեթանոսաց եկն 'ի Սկիւթ, երթեալ երիկունն 'ի տուն ննջեաց անդ։ Նա տեսեալ զվարս առաքինութե̃ եղբօրն զարմացաւ և ասէ ցնա. այդքան աշխատեալք և ո՞չ ինչ կարէք տեսա-

խմացան. և ետ ընդ նմա յուղարկել զնա, և կացին դարձեալ 'ի խօսել մինչև ցմէջ ուռւրբ, և ապա մտեալ 'ի սենեակն և ուտեն զնոյն։

1 Ասաց ծերն ցեղբայրն՝ թէ դեւն թշնամի է և դու տուն իցես, և դեւն ոչ դադարէ ժողովել 'ի տուն քո զամենայն պղծութիւնս. արդ նա ժողովէ, այլ դու ցրուեսցես. և թէ սովորեսցիս դու ևս սակաւ սակաւ ցրուել և ձգել արտաքս, դու յաղթես նմա։

2 Զհայրն Մակարի աղաչէր արտասուօք հայրն Պիմէն և ասէր ցնա. ասա ինձ բան՝ թէ զիա՞րդ կեցից։ Ասէ ցնա ծերն. այդ բան զոր խնդրես դու, բարձաւ այժմ 'ի կրօնաւորաց։

3 Ասաց հայրն Ոլիմպիոս՝ եթէ եկն երբեմն քուրմն կաց 'ի Սկիւթ 'ի սենեակն իմ և ննջեաց 'ի գիշերի։ Երբ ետես զճգնութիւն ծերոյն, ասէ ցնա. եթէ այսպէս ճգնիք միշտ, տեսիլս տեսանէ՞ք ինչ յԱյ ձերմէ։ Եւ ես ասեմ ցնա. ոչ ինչ տեսանեմք։ Ասէ ցնա քուրմն. ապա



Digitized by Google

նել յայն ձերմէ։ Ասէ ցնա եղբայրն՝ ոչ։ Ասէ ցնա քուրմըն. մեք յորժամ պաշտօն մատուցանեմք ա՟ծոցն մերոց, ոչ ինչ թագուցանեն 'ի մէնջ, այլ յայտնեն մեզ զխորհուրդս իւրեանց. և դուք այդքան աշխատութեամբ աշխատիք, և այդքան հսկէք և կրօնաւորիք լռութեամբ, և ասես թէ ոչ ինչ տեսանեմք։ Արդ եթէ ոչ տեսանէք, խորհուրդս չարս ունիք 'ի սիրտս ձեր՝ որ որոշէն զձեզ յայն ձերմէ, և յաղագս այնորիկ ոչ յայտնէ ձեզ զխորհուրդս իւր։ Այս երթեալ եղբօրն պատմեաց ծերոցն զբանս քրմին. և զարմացան և ասացին՝ եթէ այդպէս է, վասն զի պիղծ խորհուրդք որոշեն զմարդ յայն։

ԱՍԷ՛ աբբայ Անտոնիոս. որ կռէ զերկաթ՝ նախ մտածէ թէ զինչ կամիցի գործել, մանգաղ, փայտատ, սուր, տապար. նոյնպէս և մեք միայնակեացքս պարտ է մտածել յոր արիութիւն ընթանամք, զի մի՛ ընդունայն աշխատեսցուք։

ԱՍԷՐ հայրն Թէոդորոս փերմացի վասն հօրն Աքեղեայ՝ եթէ էր իբրև զառիւծ 'ի Սկիւթ, ունելով երկիւղ 'ի ժամանակի իւրում։

ԱՅԼ ոմն ծեր ասէ. զայս ամենայն առանց մտացութեան գործեսցուք, զի ակնկալք աստուածով որ բնակէ 'ի մեզ. զի տէր Ա՟ծ բնակեալ է 'ի մեզ և ոչ մարդ, և զկեանս մեր նա ուղղեալ նաւապետէ զոր զգեցեալ եմք. Իսկ եթէ անփոյթ առնեմք, ոչ ինչ օգտիմք։ Զանխիւնա ծանիցուք, քանզի ինքն անխափանելի է. կանգնեսցուք 'ի վերայ վիմի և ոտն հարցուք թշնամւոյն։ Մի՛ հեղգայք, այլ զօրութեամբ սաղմոսեսցուք և ասասցուք. որ

մինչ պաշտաւորեմք ա՟յ մերոյ, զամենայն յայտնէ մեզ զխորհուրդս իւր. և դուք զայս ամենայն կրէք՝ զպահս և զաղօթս և զխոնարհութիւն և զաղքատութիւն և զլռութիւն և զայլ ամենայն միշտ, և ասէք՝ թէ ինչ ոչ տեսանեմք զծածկեալս. և ստուգապէս վասն այնորիկ ոչ տեսանէք, զի խորհուրդք չարք և խենէշք և պիղծք են 'ի սիրտս ձեր՝ որք հեռացուցանեն զձեզ յա՟յ, վասն այսորիկ ոչ յայտնէ ձեզ զխորհուրդս իւր։ Եւ գնացեալ պատմեցին ծերոցն զբանս քրմին կռոցն, և նոքա սքանչացան և ասեն. Ճշմարիտ այդպէս է, զի պիղծ խորհուրդք մերժեն զմեզ յաստուծոյ։

։ Ասաց հայրն Անտոն. դարբին մինչ կամել սկսանիցի զգործս երկաթոյն, նախ խորհի 'ի միտ թէ զինչ արասցէ, մանգաղ կամ կացին կամ բրիչ և կամ այլ ինչ. այսպէս պարտ է և մեզ քննել թէ առ որս առաքինութիւնս եկեալք և կամ զորս ուղղեցաք և կամ որ պակաս իցէ, զի մի ընդունայն աշխատեսցուք։

Digitized by Google

յուսոյ 'ի տէր, որպէս լեառն Սիոն մի սասանեսցի յաւիտեան բնակեալն յԵրուսաղէմ։

ԱՍԱՑ ծերն ցմանուկն. որդեակ, մի ծիծաղիր, զի մի հալածեսցես զերկիւղն այ 'ի քէն։

ԱՍԷ աբբայ Ալոնիոս. եթէ պահեսցէ մարդ զմիտս իւր 'ի բարի և 'ի նոսա զածայինն բանս, 'ի բաց կացցէ 'ի նմանէ թշնամին. ապա եթէ գտանէ 'ի նոսա տեղի ըմբռնել զնա, և հեռանայ առ սակաւ սակաւ յայ։ Որ օրինակ ճրագն որ անօթ է լուսոյ և երևեցուցանէ զնա. իսկ ապա թէ հեղգայ առնուլ իւղ՝ շիջցի և զօրանայ խաւարն 'ի վերայ նորա՝ ոչ կարացեալ առ մեզ ծագել. քանզի պէտս ունէր կերակրոյ նախ քան զանցանելն և զշիջանել լուսոյն։ Արդ եթէ տեսանէ թշնամին եթէ չունի և ոչ մի լոյս և ոչ ջերմութիւն հրոյ, յափշտակէ զճրագն և ընկեցեալ մանրէ. իսկ եթէ միայն է առկայծեալ, ոչ շիջանի պղինձն, այլ դարձեալ տանուտէրն անօրինէ լուսոյն մինչև բորբոքի։ Այսպէս և անձինք հեղգացելոցն եթէ ոչ փութան յառնել, առ սակաւ սակաւ սպականէ 'ի նոցանէ սուրբ հոգին, և մինչև 'ի վախճան շիջանի 'ի նոցանէ ջերմութիւն, և ապա թշնամին յիւր հաւանութի զրաւէ զհոգին, և զմարմինն ցնդէ զգայարանօքն յախտս և մանրէ։ Իսկ եթէ իցէ նա մտադիւր առ այ, և ըստգտեալ յանկարծակի հաւաքանայ 'ի հեղգութենէն աստուածային գթութեամբն 'ի վաղվաղակի, որ ընու 'ի սիրտ իւր լոյս գիտութեան և լուացէ զոր յառաջին գործեաց, և այնուհետև պահեսցէ զինքն բազում զգուշութեամբ մինչև յայցելութիւն իւր և 'ի մտանել յաւիտենականն լոյսն՝ որում այսպէս արժանի լինին։

ԱՍԱՑ աբբայ Եւագրիոս. յիշատակեա յամենայնի զելս քո և մի մոռանար զյաւիտենական դատաստանն, և ոչ լինի զբաղումն 'ի վերայ անձին քո։

ԱՍԷԻՆ[1] ծերքն եթէ երիս զօրութիւս ունի սատանայ որք առաջի երթիցեն ամենայն մեղաց, նախ մոռացումն, երկրորդ հեղգութիւն, երրորդ ցանկութիւն. եթէ եկեսցէ ցանկութիւն, ծնանի զմոռացումն և զհեղգութիւն, և 'ի

[1] Ասացին ծերքն՝ եթէ երեք են զօրութիւնք դիւաց որ առաջի ընթանան ամենայն մեղաց, մոռացութիւն, ծուլութիւն, ցանկութիւն. զի եկեալ մոռացումն՝ ծնանի նա զծուլութիւն, և 'ի ծուլութենէն 'ի ներքս մտանէ և ցանկութիւն, և 'ի ցանկութենէ կործանի մարդ։ Զի թէ արթուն

ցանկութեանց անկանի մարդ. ապա եթէ արթուն իցէ միտքն, ոչ գայ 'ի մոռացումն. եթէ սթափ իցեն միտքն 'ի մոռացմանէ, ոչ գայ 'ի հեղգութիւն. և եթէ ոչ առնէ զցանկութիւն, ոչ գայթակղի շնորհօքն Քնի ։

ԱՍԱՑ՝ Հայրն Թէոփիլոս. վասն զի չպարապեն միտք մեր 'ի տեսութիւն այ, գերիմք 'ի մարմնական ախտս ։

ՕՐԵՐ՝ ոմն ձգնեալ յոլով ամս, պահեալ լինէր 'ի շնորհացն այ և ոչ կրէր պատերազմ 'ի դիւաց, վասն որոյ և այլոց չհաւատայր և ասէր. զինչ կարէ առնել բնաւ ։ Այլ թոյլ տալով տեառն՝ յերևան եղ նմա դևն և ասէ. ընդէ՞ր հայհոյես զիս, և զինչ մեղայ քեզ. ահա քառասուն ամ այլ ժամանակ ունիս, դառանեմ ժամ զի նեղեցից զքեզ ։ Այլ նորա առաջեալ ասաց 'ի միտ. ընդ քառասուն ամ զխոնջ կարացից կալել և կրել զայս ամենայն ձգնութիւնս ։ Այլ խորհեցաւ գնալ 'ի քաղաք ժամանակս ինչ, և դարձեալ դառնալ. իսկ հրեշտակն

են միտք, ոչ գայ 'ի վերայ մոռացումն. իսկ ուր ոչ գոյ մոռացումն, անդ ոչ է և ծուլութիւն. և ուր ծուլութիւն ոչ իցէ, անդ և ոչ ցանկութիւն է. և ուր ոչ գոյ ցանկութիւն անդ և ոչ անկումն մարդոյ, այլ կեալ և մնալ շնորհօքն Քնի ։

։ Սուրբ Հայրն Թէոփիլոս. վասն այսորիկ զի պարապեցուցանեմք ըզմիտս մեր 'ի տեսութենէն այ, ծառայ առնեմք զինքեանս միտս և զմարմինս մարմնական ախտից ։

։ Միայնակեաց ոմն էր 'ի կողմանս Եգիպտոսի, որ ձգնէր անդ ամս բազումս. առաւ շնորհեաց նմ զի ոչ երբէք պատերազմէր սատանայ ընդ նմա. և ամենեքեան որք գային առ նա վասն օգտի անձին, լսէին զի անարգէր զդևս և նախատէր և ասէր՝ եթէ ոչ ինչ ունիս զօրութիւն, դև դու, առ ձգնաւորսն այ ։ Այլա եթէ գտանէ զմանս նման իւր ազգն և ծառայս լեալ մեղաց՝ զնոսա խաբէ ։ Իսկ ոչ ծանեաւ զայն ծերն՝ եթէ ինքն շնորհօքն այ կայ անխռով, այլ խրոխտ զօրութեամբ կարծէր պյաղթողն լինել նմա ։ Յաւուր միոջ երևեցաւ նմա թոյլ տալովն այ դևն դէմ յանդիման և ասէ ցնա. ծեր, զինչ արարի ես քեզ որ դու միշտ անարգես զիս, մինչ նեղեցի և զմառտեցի ինչ քեզ ։ Իսկ նա դարձեալ թքանէր 'ի նա և զնոյն բան ասէր՝ երթ յետս իմ, սատանայ, զի ոչ ունիս դու զօրութիւն 'ի վերայ ծառայիցն Քնի ։ Իսկ դևն պատասխանի ասէ ցնա. հա՛ հա՛, գիտեմ զքեզ զի քառասուն ամ այլ ես կեալոց ես 'ի կեանս յայս, և յայս ամենայն ամս դառանեմ 'ի քեզ ժամանակ մարտնչելոյ և խորտակել զքեզ ։ Եւ իբրև զայս ասաց, անյայտ եղև դևն ։ Զայս իբրև լուաւ ծերն՝ սկսաւ խորհել 'ի միտս և ասէ. այսքան ժամանակս ունիմ յանապատիս չարչարեալ և վհատեալ ես եմ, և դեռ ես կամիմ այդ կեալ քառասուն ամ. արդ եղեց առնի և գնացից 'ի գեղ ուրեմն և հանգեայց ընդ եղբարսն և ընկերսն իմ զամս ինչ, և ապա եկեալ սկսայց զձգնութիւն զայս ։ Եւ իբրև մտածէրն զայս՝ եղ վարդապետի 'ի սենեկին և կազմեաց զճանապարհ գնալ 'ի գեղն և առնել զոր խորհեցաւն ։ Եւ իբրև սկսաւ գնալ և ոչ

Digitized by Google

որ պահէր զնա՝ ասէ ցնա. Ծեր, դարձիր 'ի խուցն քո, մի հաւատար սատանայի։ Նա եկեալ 'ի միտս՝ դարձաւ, և զկնի չորից աւուրց հանգեաւ 'ի տէր։

ՈՄՆ[1] յեղբարցն անցանէր ընդ խորշիթ մի ծերոյ և լսէր զի ծերն այն ասէր երբեմն՝ զնա ապականեալ, զնա ալիրղծ, զնա գարշ. և երբեմն ասէր՝ եկ սիրելի, եկ բարեգործ, եկ բարեկամ։ Նա մտեալ եղբօրն ասաց. զո՞ կոչէիր կամ հալածէիր, հայր։ Նա նա ասէ. զխորհուրդս բարիս կոչէի, և զչարն հալածէի որ գայր ապականել զիս։

ԱՍԱՑ[2] ծեր. զլաւութիւն կրօնաւորաց, մի ինչ հոգալով, այլ հայեաց 'ի կրթութիւն քո յերկիւղն այ. ննջելով և յառնելով փառաւորեա զած, և յարձակմանէ առ՛ բարշտաց ոչ երկիցես։

կարգի հեռացեալ էր. տեսա հրեշտակ սատանայ որ պահէրն զնա միշտ՝ երեւեցաւ նմա և ասէ ցնա. մեր ուղղեալ ես զնա, ծեր գոռ։ Եւ նա ասէ. ելանեմ 'ի քաղաքն։ Ասէ ցնա հրեշտակն. դարձիր 'ի սենեակ քո և մի հաւատար բանից սատանայի, այլ հնազանդեա զքեզ խորհրդա-ծեալ 'ի նմանէ։ Իսկ ծերն եկեալ 'ի միտսն՝ դարձաւ 'ի սենեակ իւր, և եկաց աւուրս երիս, և 'ի չորրորդումն փոխեցաւ առ տէր։

1 Ծեր ոմն նստէր 'ի սենեկի իւրում, և եկն առ նա հայր ոմն 'ի դիչերի և լուաւ 'ի ներքուստ կողմանէ կախս զի կոգէր և ասէր. հեռ բարի է, այլ մինչև զհանգիցն ասոն, և դու եկիր այժմ բարեկամ բարի։ Յայնժամ մտեալ 'ի ներքս եղբայրն ասէ ցնա. ընդ ում կոչէիր, հայր։ Ասէ ցնա ծերն. զչար խորհուրդս վարեմ 'ի բաց և զբարիս կոչեմ։

2 Ասաց ծերն. ստացիր զլաւութիւն և մի հոգասցես ինչ, և խորհեա զերկիւղն այ. և եթէ կայցես և եթէ ննջեսցես, ոչ երկիցես երբէք։

# ՄՆԱՑՈՐԴՔ

## յերկրորդ թարգմանութենէ

---

ԵՂԲԱՅՐ ոմն աղաչէր զՀայրն Արսէնիոս լսել բան 'ի նմանէ: Ասէ ցնա ծերն. սովորեցիր յամենայն զօրութենէ քումմէ և ձգնեաց, որպէս զի ամենայն գործ ներքին մարդոյն ածային եղիցի, զի ներքինն յաղթեսցէ արտաքին ախտից. զի թէ խոնարհեսցուք յայ՝ յայտնեսցէ մեզ, և թէ կալցուք զնա՝ բնակեսցի առ մեզ:

ԱՍԱՑ Հայրն Ագաթոն՝ թէ պարտ է կրօնաւորի զի մի թողցէ զմիտս իւր դատել զընկերն 'ի վերայ իրիք ինչ. քանզի առանց պահպանութեան պատուիրանացն այ ոչ ուղղեսցի մարդ յառաքինութիւնս, այլ պարտ է մարդոյ զի յամ ժամ միշտ ածցէ 'ի մտի զպատուիրանս այ:

ՊՆԱՑԵԱԼ Հայրն Ամոա եկաց 'ի վայրի ամիս երկուս, և ապա եկն առ Հայրն Պիմէն և ասէ ցնա. եթէ գնացից 'ի սենեակ ընկերին և կամ նա գայցէ առ իս վասն պիտոյից ինչ, խորշիմք խօսել ընդ միմեանս, մի գուցէ օտար բան ինչ անկցի 'ի մէջ: Ասէ ծերն. բարւոք առնէք, զի պարտ է 'ի մանկութեան պահել զբերան: Ասէ Ամոա. ծերքն զինչ առնէին: Ասէ Պիմէն. ծերքն ելին 'ի մեծամեծ առաքինութիւնս, և ոչ ունէին օտար ինչ յանձինս թէ խօսեսցին: Ասէ Ամոա. և եթէ հարկ լիցի խօսել ընդ ընկերին, 'ի գրոց խօսել պարտ է, թէ 'ի հարցն բանից: Ասէ ծերն. լռելն լաւագոյն է, իսկ եթէ լռել ոչ կարասցես՝ ապա 'ի բանից ծերոցն և մի 'ի գրոց, զի բանք գրոց ծանունք են և վիշտս բերեն:

ԱՐԹԱՑԻՆ երբեմն Հայրն Դանիէլ և Հայրն Ամոէ 'ի միասին. ասէ Հայրն Ամոէ ցՀայրն Դանիէլ՝ թէ երբ նստցուք մեք 'ի սենեկի, Հայր: Ասէ ցնա Հայրն Դա-

Digitized by Google

նիւել. ո՞վ տացէ 'ի մէնջ այժմ զտէր, և զի 'ի սենեկի ած իցէ. զի աչք տեառն տեսանեն զամենայն յամենայնի յամենայն ուրեք։

ԱՍԱՑ հայրն Եսայիաս՝ լծէ կարձնութիւն և ատել զընկերն 'ի մտի՝ ոչ թողուն տեսանել զլոյս այ, այլ խնդրեսցուք յայ զի տացէ մեզ ողբս, զի լացցուք զմեղս մեր, և զի փութասցուք փախչել 'ի մարդկանէ, և ոչ համարձակեսցուք առ արս գռեհիկս, և մի խօսեսցուք զբանս ունայնս, որպէս զի մի՛ մթասցին միտք մեր 'ի ծանօթութենէն այ. քանզի անհնար է որոց ասեն կամ լսեն ըղբանս կենցաղականս՝ եթէ ունիցի 'ի սրտի իւրում համարձակութիւն առաջի այ։ Իսկ որ ասէ եթէ ոչ վնասիմ ես 'ի լրոյ և 'ի տեսութենէ երկրաւոր բանից և յիրէ, նման իցէ նա կուրի՝ որ թէ և մերձեսցի 'ի ճրագ վառեալ՝ ոչ կարէ տեսանել զլոյս նորա. և այս յայտ ես յարեգակնէ է, որ 'ի ծագելն իւր լուսաւորէ զամենայն երկիր, և 'ի փոքու ամպոյ ծածկի լոյս և ջերմութիւն նորա։ Դարձեալ ասէ. փութացիր փախչել յերից յայսց ախտից որ խորտակեն զհոգի, որք են այսոքիկ, արծաթսիրութիւն, պատուասիրութիւն և որկրամոլութիւն, որք եթէ յաղթեսցեն անձին՝ ուղղել ոչ եւս թողացուցանեն։

ԱՍԱՑ հայրն Պետրոս՝ եթէ հարցի երբեմն զծերոյ իմոյ և ասացի. ո՞վ իցէ ծառայ այ։ Իսկ նա ասէ. մինչ իցէ մարդ ծառայ միոյ ախտի, ոչ է նա ծառայ այ, այլ ծառայ ախտին այնորիկ է յորմէ ըմբռնեալն իցէ. և որքան յախտին յայնմիկ կացցէ նա՝ ուսուցանել ոչ կարէ, զի ամօթ է նմա ուսանել կամ ուսուցանել նախ քան զազատիլն 'ի յախտէն, և կամ թէ աղօթել վասն այլոց. քանզի ո՞րպէս խնդրեսցէ նա ազատութիւն այլոց՝ մինչ ինքն ծառայ իցէ։ Արդ ոչ իցէ նա ծառայ և ոչ սիրելի այ՝ թէ խնդրեսցէ ինչ վասն այլոց յայ. այլ յառաժամ զայն խնդրեսցէ, որպէս զի ազատեսցի յախտէ իւրմէ. քանզի որքան ժամանակս յախտին կացցէ, խըռցեալ է բերան նորա և ոչ կարէ խնդրել ինչ յայ, քանզի որքան 'ի հնազանդութիւն ախտին կացցէ մարդ՝ լալ և ողբալ պարտ է զանձն, զի ոչ ունի յանձին զմաքրութիւն զոր խնդրէ ած յամենայն մարդոյ։ Դարձեալ ասէ. ամենայն որ խնդրեսցէ զտէր ցաւագնեալ սրտիւ՝ լսէ նմա ած, և զոր ինչ խնդրեսցէ 'ի նմանէ իմաստու-

Digitized by Google

թեամբ՝ շնորհեսցէ նմա. այլ պարտ է նմա ոչ կապիլ և ոչ ընդ մի ինչ երկրաւոր, այլ միշտ հոգասցէ զանձն իւր՝ թէ որպ՟ կացցէ առաջի աթոռոյն այ՟ անդատապարտ։

ՆՄԱՅՆ հայրն Թէոդորէ սկիտացի. խորհուրդ իմ նեղէ և չփոթէ զիս. և թէպէտ և գործով կատարել զայն ոչ կարէ, սակայն 'ի կատարեալ առաքինութէ՟ խափանէ զիս։ Իսկ որ իմաստունն իցէ, զարթնու և զղջայ և յառնէ յաղօթս և մերժէ 'ի մտացն զնա։

ՆՄԱՅՆ ծերն. եղբայր ոմն 'ի բազմութէ՟ փորձութեց կամեցաւ գնալ 'ի տեղւոջէ իւրմէ. և իբրև հագաւ ըղհողաթափ իւր, ետես զայլ եղբայր որ հագաւ զսանդալ իւր յորմէ փորձէրն զնա, և ասէ ցնա. ո՞չ վասն իմ գնաս դու 'ի տեղւոջէս յայսմանէ, և ահա ես յառաջեմ քան զքեզ 'ի տեղին ուր գնասցես դու անդ։ Նահա ուր ոչ գոյ արթնութի մտաց, անձամբ զանձն տայ 'ի փորձանս և հետևի նմին։

ՊԱՏՄԵՆ երբեմն եղբարք ոմանք փորձել զհայրն Յովհաննէս կարճիկն, զի ոչ հանէր բան կենցաղական 'ի բերանոյ իւրոյ, և ասեն ցնա. գոհանամք զայ՟, հայր, զի անձրևեաց յոյժ յայս ամ, և արբեալ արմաւենիքն արարին տերևս թաւս, և գտանեն եղբարքն դիւրաւ զձեռագործս իւրեանց։ Ասէ ցնոսա ծերն. այսպէս իցէ և հոգի մարդոյ. յորժամ գայ 'ի նա շնորհք հոգւոյն սրբոյ, նորոգէ զնա և զօրացուցանէ, և հանեն նոքա զոստս առաքինութեց զսէր և զերկիւղն այ՟։

ՆՄԵԻՆ զմանէ՝ եթէ հիւսեաց երբեմն զսիրայ երկուց սփրիդոց, և կարեաց մին մի սփրիդ և ոչ ծանեաւ մինչև եհաս յորմն տանն, քանզի միտքն իւր կապեալ էր 'ի տեսութիս այ՟։

ՆՄԱՅՆ հայրն Յովհաննէս կարճիկն՝ եթէ նման եմ ես մարդոյ որ կայցէ 'ի ներքոյ մեծ ծառոյ, և տեսանիցէ զգազանս և զսողունս բազումս զի գան 'ի վերայ նորա, և նա փախուցեալ 'ի նոցանէ ելանէ 'ի ծառն և փրկի 'ի նոցանէ. այսպէս և ես նստեալ կամ 'ի սենեկի իմում, և տեսանեմ զչար խորհուրդս եկեալ 'ի վերայ իմ, և ես դիմեմ առ ած՟ 'ի ձեռն աղօթից և զերծանիմ 'ի նոցանէ։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ցհայրն Յովհաննէս և ասէ ցնա. զի՞նչ արարից, հայր, բազում անգամ գան եղբարքն

տանել զիս 'ի գործ, և տկար եմ և 'ի պատուիրանէն երկնչիմ։ Պատասխանի ետ ծերն և ասէ ցնա. Քաղեբ ասէր ցՅեսու՛ Նաւեայ. քառասուն ամի էի ես մինչ առաքեաց զիս Մովսէս աստ ընդ քեզ. և արդ եմ ես ութսուն և հինգ ամաց. և որպէս յայնժամ կարող էի, այնպէս և այժմ կարեմ մտանել 'ի պատերազմ. այսպէս և դու, եղբայր, եթէ կարող ես գործել՝ ուր և կոչիս գնասցես, և եթէ ոչ կարող իցես գործել՝ նիստ 'ի սենեակ քո և ողբա զմեղս քո. և եթէ տեսցեն ըզքեզ յողբս՝ ոչ բռնադատեսցեն զքեզ 'ի գործ ինչ։

ԱՍԷԻՆ զՀօրէն Յոհաննու՝ եթէ գնաց յեկեղեցին 'ի Սկիտէ, և լուաւ զհակառակութիւն և զգժտութիւն եղբարցն և դարձաւ 'ի սենեակ իւր, և անց շուրջ զսենեկաւն երիցս անգամ և ապա եմուտ 'ի նմա։ Իսկ իբրև տեսին եղբարքն՝ ոչ իմացան թէ զինչ արար, և հարցին ցնա զայն։ Եւ նա ասէ. ականջք իմ լի էին գժտութեամբն զոր լուայ, և անցի շուրջ զսենեկաւն, զի արտաքոյ թափեցից զնա և սրբեցից զլսելիս իմ, և այնպէս հանդարտեալ մտօք մտից 'ի սենեակ իմ։

ՊԻՆԱՏ եբրեմն եղբայր ոմն, զի առեալ տարցէ 'ի ծախել զփրիգս հօրն Յոհաննու։ Ել ծերն և ասէ ցնա. զինչ պիտոյ է քեզ, հայր։ Եւ նա ասէ. տուր զփրիգս քո, հայր։ Մտաւ 'ի ներքս ծերն որպէս թէ բերցէ, և մոռացաւ և նստաւ 'ի կարել զխիրայն։ Դարձեալ բախեաց եղբայրն, և ել առ նա եհարց, և նա զնոյնն ասաց. և եմուտ դարձեալ 'ի ներքս զի բերցէ զխիրայն, և դարձեալ մոռացաւ և նստաւ կարել։ Իսկ եղբայրն երրորդ անգամ բախեաց, և հայրն ել առ նա և ասէ. զինչ խնդրես։ Եւ նա ասէ. զփրիգս քո, հայր։ Յայնժամ զնա տարաւ 'ի ներքս և ասէ. եթէ զփրիգս խնդրես, առցես զնոսա և գնասցես։

ՊԱՐԶԵԱԼ ուղտապան ոմն եւս գնացեալ առ հայրն Յոհաննէս բառնալ զձեռագործս նորա և տանել այլուր. և իբրև եմուտ առնուլ, մոռացաւ զայն, զի միտք նորա էին առ Ած վերացեալ. իսկ ուղտապանն այն ներէր, և բախեաց զդուռն զի յամեաց։ Ասէ հայրն. զինչ կամիս, եղբայր։ Իսկ նա ասէ. զձեռագործն քո, հայր։ Եւ իբրև յանձին կալաւ տալ, դարձեալ մոռացաւ. իսկ եղբայրն երրորդ անգամ բախեաց զդուռն, և ել հայրն

առ նա և զնոյն բան լուաւ 'ի նմանէ. և իբրև եմուտ բերել հայրն Յովհաննէս, ասէր՝ սխրայ ուղտ, սխրայ ուղտ, զի մի մոռասցի մինչև բերցէ:

ԱՍԷՐ հայրն Իսիդորէ. գնացի երբեմն 'ի քաղաքն վաճառել զձեռագործ իմ, և տեսի զի հարաւ յիս յանկարծակի սրտմտութիւն. իսկ ես թողի զանօթսն զայնոսիկ, և փախեայ 'ի տեղւոջէն յայնմանէ և ազատեցայ 'ի նմանէ:

ԱՍԷԻՆ վասն հօրն Ագաթոնի՝ եթէ էր նորա աշակերտ որ կոչէր Իսահակ, և ուսաւ նա զամենայն գործս բարիս: Սա ստացաւ լռութիւն և հանդարտութիւն զարմանալի. և իբրև գնայր յեկեղեցին, ոչ զոք թողոյր որ խօսէր ընդ ինքն, այլ ասէր. ամենայն ինչ բարի է յիւրում ժամանակի: Եւ 'ի կատարել աղօթիցն՝ իբրև 'ի հրոյ փախուցեալ գնայր 'ի սենեակ իւր: Բազում անգամ տային եղբարցն զկնի աղօթիցն տաքսիմատս և բաժակաւ գինի, և նա ոչ առնոյր. և ոչ եթէ յօրհնութենէն յայն բաժանէր յեղբարցն նա, այլ զլռութիւն պահէր և զհանդարտութիւն աղօթիցն: Արդ հիւանդացաւ նա երբեմն այնչափ՝ մինչև անկաւ 'ի մահիճս, և լուեալ զայս եղբարցն եկին տեսանել զնա. և իբրև նստան եղբարքն և հարցին զնա զցաւոցն և ասեն ցնա. հայր Իսահակ, ընդէ՞ր փախչիս յեղբարցն յորժամ կատարի աղօթքն: Իսկ նա ասէ. ոչ փախչիմ ես յեղբարցն, քաւ լիցի, այլ փախչիմ 'ի խարդախութենէ դիւացն. և եթէ ոք ունիցի լոյս վառեալ 'ի ձեռին և յամեսցի յօդս՝ շիջանի ճրագն, այնպէս և մեք եմք. լուսաւորիմք միտք 'ի ժամ սուրբ խորհրդոյ պատարագին. իսկ եթէ յամեմք արտաքոյ սենեկին մերոյ, խաւարին միտք մեր: Այսպէս էին կեանք հօրն Իսահակայ:

ՊԱՏՄԷՐ մեզ հայրն Կասիանէ վասն ծերոյ ումեմն որ բնակէր յանապատ՝ եթէ խնդրեաց յայ շնորհել նմա զի մի երբէք նիրհեսցի յաղօթս, և էառ զխնդրելին. բայց եթէ աշխարհի բան ինչ գայր 'ի ներքս, վաղվաղակի ննջէր և ոչ թողոյր մտանել 'ի լսելիս իւր բան դատարկ: Ասէր այս ծեր՝ եթէ դևք պատրաստեն ձգել յաղօթից միջի ստախօսութիւն, և այն ամենայն հոգևոր վարդապետութեան թշնամի և հալածիչ է: Ասաց և օրինակ առ այս պատմիսի՝ եթէ խօսէի ես երբեմն վասն

շահու անձին առ եղբարսն, որք այնչափ խորին քնով ընկղմեալ եղեն, մինչ ոչ կարացին ամբառնալ զաչս իւրեանց. իսկ ես կամեցայ յանդիմանել զխաբէութիւն Թշնամւոյն, և բան դատարկ 'ի մէջ բերի՝ յորոց վերայ զուարճացեալ զարթեան ամենեքեան։ Իսկ ես հառաչեալ ասեմ, եթէ մինչև ցայժմ զերկնաւորսն խօսէի ձեզ՝ և աչք ամենեցուն ձեր ծանրացեալ էին, և յորժամ բան ունայն եկն 'ի միջի՝ զարթեայք ամենեքեան. վասն որոյ աղաչեմ, եղբարք, ծաներուք զխաբէութիւն դիւաց, և պահեցէք զանձինս 'ի նիրհութենէ հեղգութեանց յորժամ լսիցէք և կամ ասասցիք բան ինչ 'ի փրկութիւն հոգւոց։

ԱՍԱՑ հայրն Մովսէս. ոչ կարող իցէ մարդ մտանել 'ի զինուորութիւն Տ̃ռն, եթէ ոչ եղիցի ամենևին հուր, և արհամարհեսցէ զպատիւ և զհանգիստ, և հատասցէ զկամս մարմնոյ, և պահեսցէ զամենայն պատուիրանս նոյ։ Դարձեալ ասէ. ստասցուք զզուշութի, զարդարութիւն, զհեզութի և զա̃ծպաշտութիւն և զլոյս բարի և խաղաղութի ունել առ ամենայն մարդ, զորպէս զի զերծցուք 'ի մօրէ ամենայն չարեաց, որ է հանդարձակութի և յանդուգն լրբութի և անամօթութի։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ցհայրն Պիմէն և ասէ ցնա. զի՞նչ արարից զհոգի իմ, հայր, զի ոչ երկնչի յա̃յ։ Ասէ ցնա ծերն. գնա միաբանեաց ընդ մարդոյ երկիւղածի յա̃յ, և մինչ կայցես ընդ նմա՝ ուսուցէ քեզ զերկիւղն ա̃յ վարուք իւրովք։

ԵՐԲԵՄՆ նստէր հայրն Իսահակ առ հօրն Պիմէնի, և լուաւ զձայն հաւու և ասէ ցնա. է՞ այս ինչ աստ, հայր։ Իսկ նա ասէ ցնա. Իսահակ Իսահակ, զի՞նչ բռնադատես զիս ասել քեզ, զի դու և նմանիք քո լսէք զայդպիսիդ. իսկ որ զգաստ և արթուն իցէ՝ և ոչ մի ինչ լուիցէ 'ի ձայնից կենդանեաց։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ցհայրն Պիմէն և ասէ ցնա. ասա ինձ բան, հայր։ Ասէ ցնա ծերն. հուր մինչ բորբոքեսցի 'ի ներքոյ կաթսայի, ոչ կարեն մերձենալ 'ի նա ճանճք և կամ մժղուկք և կամ այլ ինչ սողուն. իսկ յորժամ զովասցի՝ յայնժամ ժողովեալ լցցեն զնա ճանճք և այլք։ Նոյնպէս և կրօնաւորն իցէ. զի մինչդեռ ունիցի զջերմութի ա̃ծային գործոցն 'ի սրտի, ոչ կարէ թըշ-

Digitized by Google

նամբն ընկենուլ զնա. իսկ յորժամ պատկառի այն յանձ-նէ, ասպատ զանազանս տիրեն, և կորիցէ մարդ. վասն այսորիկ այլ ինչ ոչ պիտոյ իցէ ծերոյ, բայց միայն սիրտ սուրբ և արդար ունել և սէր առ տէր ած ։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ցհայրն Սիմէոն և ասէ. եթէ ելանեմ 'ի սենեկէ իմմէ և տեսանեմ զեղբայր ոմն զի շփոթի և ես շփոթիմ ընդ նմա, և թէ տեսից զի ծի-ծաղեսցի՝ ծիծաղիմ և ես ընդ նմա, և իբրև մտանեմ 'ի սենեակ իմ, ոչ ունիմ զնոյն հանգիստ միտս զոր նախին ունէի ։ Ասէ ցնա ծերն. և որպէս լինիցի այդ, որպէս զի ելեալ արտաքս շփոթիս ընդ շփոթողսն և ծիծաղիս ընդ ծիծաղողսն, և դարձեալ մտցես 'ի խցի՝ և զխորհ դրդո-ցես զնոյն հանգիստ և լինիցիս որպէս կանխաւն ։ Ասէ եղբայրն. և զինչ ես պարտ իցէ առնել, հայր ։ Ասէ ծերն. և 'ի ներքուստ զգուշասցիր, և արտաքուստ առա-ւել ես զգուշասցիս. զի երկեքին տեղիս քան զամենայն պիտանիք իցեն՝ երկիւղին այ, և աղօթք պահօք անխա-փեալ, և բարի առնել ընկերին. զի մարդ ոչ կարող է տեսանել արտաքուստ, այլ յորժամ 'ի ներքուստ յառա-ջնեն պատերազմունք. իսկ որք խմաստութեամբ պատերազ-մին, արտաքսեն զնոսա, զի ոչ տեսանել մեր զյառա-ջադէմ գործն՝ ոչ թողուն զմեզ ուղղել զօգուտն մեր ։

ԱՍԱՑ հայրն Պամբոյ. դարձուսցես յետս զաչս քո, զի մի տեսցես զունայնութիւն, զի աղտոտութիւն սատակիչ իցէ անձին ։

ԱՍԱՑ դարձեալ. եթէ որք հրաժարեցան յամենայն հակառակութենէ և 'ի շփոթմանց մարդկայնոց, դայ և բնակի 'ի նոսա հոգին սուրբ ։

ԱՍԱՑ դարձեալ. սկիզբն և կատարումն բարեաց է երկիւղն այ, որ գրեալ է. սկիզբն իմաստութեան երկիւղ տեառն ։ Եւ Աբրահամ մինչ մատուցանէր զպատարագն, և լուաւ ձայն յայ որ ասէր. արդ գիտեմ զի երկնչիս դու 'ի տեառնէ ։

ԱՍԱՑ դարձեալ հայրն Պամբոյ, ողորմութեամբն այ յոր-մէհետէ եղէ կրօնաւոր, ոչ զղջացայ ես 'ի վերայ ինչ բանի զոր խօսեցաւ բերանն իմ։

ԵՀԱՐՑ ոմն ցհայրն Պետրէ ցվարդապետ հօրն Մա-տայ և ասէ. յորժամ 'ի սենեկի նստիմ, խաղաղութիւն է անձին իմ. իսկ յորժամ մտանէ առ իս եղբայր որ և

Digitized by Google

բերէ 'ի ներքս բանս օտարս, յայնժամ չփախթի՞ անձն իմ: Ասէ ցնա հայրն Պետրոս՝ եթէ ասէր ցիս հայրն Պօղոս, եթէ բանսարկք քո բանայ զդուռն իմ: Ասէ եղբայրն. և զինչ լիցեն միտք բանիդ այդպիսիկ, հայր: Ասէ ցնա ծերն. եթէ ոք գայ առ քեզ և դու առնես նմա, որպէս լիցես և կամ ուստի գայցես և որպէս լիցեն եղբարքն, միթէ պատկառեսցի ոք 'ի նոցանէ. այսպէս բանաս զդուռն եղբօրն, և լսես զոր ոչ կամիս: Ասէ եղբայրն. այդպէս լիցէ, հայր, և զինչ պարտ լիցէ առնել յորժամ գայցէ եղբայրն: Ասէ ցնա ծերն՝ թէ ողջք բարոյիւք վարդապետ են. և ուր ոչ լիցեն ողջք, անդ պահել զմիտս անհնար լիցէ: Ասէ եղբայրն. մինչդեռ 'ի սենեկին նստիմ, ընդ իս լիցեն ողջք. իսկ մինչ ելանեմ 'ի խցէն և կամ գայ առ իս ոք, այլ ոչ գտանեմ զնա: Ասէ ցնա ծերն. ոչ հնազանդեալ է նա քեզ, այլ է երբեմն զի կացցէ ընդ քեզ և երբեմն զի գնասցէ 'ի քէն. քանզի գրեալ է յօրէնս՝ թէ առցես ծառայ հրեայ, վեց ամ ծառայեսցէ քեզ, և յեօթներորդում ամին ազատեսցես զնա. իսկ եթէ ոչ թողցէ նա զկին և զորդիսն զոր ստացաւ 'ի տան քում և ոչ կամեսցի գնալ, հանցես զնա 'ի վերայ դրան քո և ծակեսցես զձախու ունկն նորա, և եղիցի նա ծառայ քո յաւիտեան: Ասէ եղբայրն. և զինչ են միտք բանիդ, հայր: Պատասխանի ետ ծերն. եթէ աշխատի ոք ըստ կարի իւրում 'ի վերայ գործոյ ինչ, կարող է պահել զնա և ունել երբ և կամեսցի. քանզի ոչ որդեգրեալն որդի կացցէ ընդ մարդոյ ծառայել նմա, այլ որ ճշմարիտ որդին իցէ՝ ոչ թողու զհայր իւր. այսպէս և ողջքն լիցեն: Այս երանելիս ասէր զայս այսպէս:

ՆՍՏԷՐ երբեմն հայրն Սիսոյի 'ի սենեկի իւրում, և բախեաց աշակերտն իւր զդուռն. իսկ ծերն ձայն արձակեաց 'ի խցէ անտի և ասէ ցնա. փախիր, Աբրահամ, փախիր, զի ոչ կամիմ արդեօք տեսանել զքեզ:

ԵՂԲԱՅՐ ոմն աղաչէր զհայրն Սիսոյի և ասէր. ասասցես ինձ բան: Ասէ ցնա ծերն. նստցիս արթուն 'ի սենեկի քո, և մի յանձնեսցես արտաքուստ զանձն քո և հանգիցես: Ասէ եղբայրն. հայր, կամիմ պահել զխորհուրդս իմ և ոչ կարեմ: Ասէ ծերն. որպէս կարասցուք պահել զմիտս և զխորհուրդս մեր, վասն զի թողեալ եմք 'ի բաց զգայարանս և զունկնս մեր:

Digitized by Google

ՀԱՐՑԻՆ ոմանք ցհայրն Սերովբէ և ասեն ցնա. զո՞ր ճգնութիւն արարեր, հայր, զի առեր զայդպիսի գիտութիւն յայդ: Եւ նա ասէ ցնոսա. ոչ երբէք թողի մտանել 'ի միտս իմ խորհուրդ՝ ընդ որ ոչ հաճի ա̅ծ:

ԵՀԱՐՑ հայրն Մովսէս ցհայրն Սիլուանէ և ասէ ցնա. կարո՞ղ իցէ մարդ յամենայն աւուր սկիզբն առնել: Ասէ ցնա ծերն. եթէ ճգնաւոր իցէ, կարող է առնել:

ԱՍԱՑ հայրն Արսենիոս. զոր օրինակ զինուորք թագաւորի ոչ կարեն այլուր հայել մինչ կան առաջի նորա, այսպէս և մարդ որ կացցէ առաջի ա̅յ, եթէ միշտ զնա տեսցէ 'ի մտի՝ ոչ կարէ թշնամին ձգել զնա: Արդ զարթիցուք, եղբարք, և զգուշասցուք, զի 'ի զգայարանաց մերոց իբրև 'ի պատուհանից ելանեն գողք և կողոպտեն զմեզ, թէպէտ և մեք ոչ կամիցիմք:

ԴԱՐՁԵԱԼ ասէ. պարտ է մեզ միշտ ընդդիմամարտել թշնամեաց մերոց, և քանզի արտաքուստ և 'ի ներքուստ կռուին ընդ մեզ. և զոր օրինակ նաւ երբեմն յալեաց արտաքուստ խորտակեալ կործանի, և երբեմն 'ի ներքուստ 'ի բեռանցն ծանրացեալ խորտակի և ընկղմի, այսպէս պատահի և մեզ. երբեմն յարտաքին մեղացն կործանիմք, և երբեմն 'ի ներքին խորհրդոցն աւարիմք: Այլ և պարտ է և յարտաքնոցն մեղաց որ 'ի մարդկանէ են՝ զգուշանալ, և զներքին կողմանց ախտս արտաքսել և մաքրել: Եւ ասէ ցնա. ամենեքեան գիտեմք, որդեակ, եթէ որպէս պարտ է կեալ, այլ 'ի ծուլութենէ յաղթեալ պակասեմք 'ի կենաց:

ԱՍԱՑ երանելին Սինկղիտիկէ. սիրելիք, ոչ կարեմք աստ անհոգս լինել, որպէս գիրք ասեն՝ եթէ որ կարծեսցէ կեալ՝ զգուշասցի զի մի անկցի. քանզի անյայտս լողամք ընդ ծով կենցաղոյս, որպէս և գիրք զերկիր ծով կոչեն. իսկ կողմանք ծովու այլ և այլք են, զի ոմն քարայծուն կողմ է և ոմն գազանաբնակ, իսկ ոմն խաղաղական: Արդ մեք որ միայնացեալ եմք, 'ի հանդարտն լեալ կամք 'ի կողմանս ծովու, իսկ աշխարհականք 'ի գիշերի զնան շփոթմանց աշխարհի: Այլ սոքա բազումք 'ի գիշերին յայտնիկ և յանկս երրորդարձս արթուն լինին և փրկեն զնաւս իւրեանց յընկղմութենէ. իսկ մեք ներհեմք ծուլութեամբ 'ի հանդարտս յայս կեանս, 'ի լոյս աւուր ընկղմեմք զնաւս անձանց մերոց, եթէ թողումք զթեւս և զուղղիչ առաջնորդութեան փառաց:

Digitized by Google

Ասաց ծերն. յորժամ զնեմ ես զմախաղ իմ, ոչ մտեմ առնուլ զնա, այլ մտեմ յառաջել մահուն. և զի որ 'ի մտի կալցէ զմահ, նա յաղթէ ձանձրութեան։

Ծեր ոմն գնացեալ առ այլ ծեր, և իբրև խօսէին ցմիմեանս՝ ասէ մինն, եթէ ես մեռեալ եմ յաշխարհէ։ Ասէ ցնա միւսն ծեր. մի հաւատար զայդ մինչև ելանի-ցես 'ի մարմնոյդ, և ապա ասել զայդ թէ մեռեալ իցեմ։

Ասաց ծերն. զինուորք մինչ ելանեն 'ի մարտս, ոչ հոգան զայլոց եթէ ով խոցեսցի, այլ ամենայն ով զանձն իւր հոգայ. այսպէս և կրօնաւորի առնել պարտ է։ Որ ի զոր օրինակ ոչ խոցի զինուոր որ մերձ արքայի իցէ, նոյն-պէս և դև ոչ կարէ վնասել անձին որ մերձ առ Աստուած կաց-ցէ. քանզի ասէ՝ մերձեցարուք առ իս և մերձեցայց առ ձեզ։ Այլ զի դիւրաւ ցրուիմք մտօք, դիւրաւ և ձգէ զմեզ թշնամին յամենայն մեղս։

Ասաց ծերն. յորժամ յառնես առաւօտուն, ասա ցանձն քո. մարմին, աշխատեաց զի կերակրեսցիս, և անձն, հսկէ զի կեցցես։

Ասէին վասն ծերոյ ումեմն, եթէ յորժամ ասէին խորհուրդքն իւր՝ եթէ թող տուր այսօր, և վաղիւն ա-պաշխարեսցես, նա ասէր. ոչ այդպէս, այլ այսօր ա-պաշխարեցից, և զվաղիւն Աստուած գիտէ։

Ասաց ծերն. զոր օրինակ ծածկեն զաչս եզանց և ա-պա լծեն զնոսա 'ի պատնէշս, այսպէս և դևք խաւարե-ցուցանեն նախ զաչս մտաց մարդոյն, և ապա ընկենուն զնա 'ի մեղս։

Աղբարք եօթն նստէին 'ի լեառն հօրն Անտոնի, և 'ի ժամանակի արմաւոյն պահէին զպտուղն նորա մի մի 'ի նոցանէ։ Իսկ մի ոմն 'ի նոցանէ մինչ հասանէր պահ նորա, ձայնէր և ասէր. փախերուք և ելէք 'ի սրտէ իմ-մէ, չար խորհուրդք, և 'ի պտղոյ ծառոցդ գնացէք, թռչ-չունք երկնից, և մի վնասէք։ Արդ այս եղբայր արթուն զօրով հոգւով՝ յառաջագոյն զմիտսն պահէր 'ի խորհրդ-դոց, զի հարկաւոր զայն համարէր, և ապա զծառոցն որպէս աւելորդ ինչ։

Ասէին զծերոյ ումեմն 'ի Սկիտէ՝ եթէ մեռանել մերձեալ էր, և շուրջ պատեալ եղբարցն զմահճօք նո-րա և զգեստուցին նմա զքեմ, և սկսան լալ. իսկ ծերն եբաց զաչս իւր և ծիծաղեցաւ և դարձեալ ծիծաղեցաւ

Digitized by Google

և զի երրորդ անգամ ծիծաղեցաւ։ Ասեն ցնա եղբարքն. առա մեզ, հայր, զի՞ է զի մեք լամք և ողբամք, և դու ծիծաղիս երիցս։ Ասէ ցնոսա ծերն. Նախ զայն ժպտեցայ, զի դուք երկնչիք 'ի մահուանէ. երկրորդ զայս ծիծաղեցայ, թէ ընդէ՞ր դուք ոչ պատրաստէք 'ի մահ. իսկ երրորդ զայս ծիծաղեցայ, զի գնամ 'ի վշտաց 'ի հանգիստ։ Եւ զայս ասացեալ՝ ննջեաց առժամայն։

ԱՍԱՑ ոմն 'ի հարանցն՝ եթէ էր ոմն կրօնաւոր ուսեալ և ջգնաւոր յոյժ, և դիպեցաւ նմա փոքր ինչ ծուլութիւն, իսկ նա սկսաւ 'ի հեղգալն նախատել զանձն և ասել. մինչև յե՞րբ, եղկելի անձն իմ, հեղգաս առ կեանս քո և ոչ 'ի միտ առնուս դու զահ դատաստանին այ. ա գիտէ մեռանիս 'ի ծուլութիւն քո և մատնիս 'ի տանջանս յաւիտենից։ Օ այս ասելով առանձինն՝ արիանայր 'ի գործս այ։ Յաւուր միում մինչ կատարէր նա զկարգ աղօթից իւրոց, եկին դևք շփոթել զնա։ Իսկ նա ասէ ցնոսա. մինչև յե՞րբ նեղէք զիս, ով չարք, բաւական են ձեզ անցեալ աւուրցն հեղգութիւնս իմ։ Ասէին ցնա դևքն. յորժամ հեղգայիր դու առ մեզ, և մեք նոյնպէս առ քեզ հեղգայաք. և արդ դու յարեար կռուել ընդ մեզ, նոյնպէս և մեք յարեաք պատերազմել ընդ քեզ։ Օ այս իբրև լուաւ եղբայրն, առաւել ժրացաւ 'ի ջգնութիւնս։

ԱՍԱՑ ծերն՝ եթէ էր ոմն եղբայր 'ի Սկիտէ, և էր նա ստէպ 'ի սպասաւորութիւն իւր, 'ի կերակուր, 'ի մարմնաւոր հանգիստն. իսկ 'ի յայլ ամենայն ինչ ծոյլ էր յոյժ։ Յաւուր միում երևեալ դևն ծերոյ ումեմն և ասէ. այս անուն եղբայր կալեալ խեղդէ զիս, և ոչ թողու գնալ զիս յիւրմէ, և յամենայն օր կայ առաջի այ և ասէ եթէ փրկեա զիս 'ի չարէ. և ողորմեալ նմա ած՝ նեղեն զիս զօրութիւնք նորա երթալ 'ի նմանէ, և նա ոչ թողու զիս երթալ յինքենէ՝ մարմնոյն սպաս տանելով։

ԵՐԿՈՒ ոմանք իմաստասէրք գնացին առ ծեր ոմն և հարցին ցնա, որպէս զի պատմեսցէ նոցա բանս կենաց։ Իսկ ծերն լռեաց։ Եւ նոքա դարձեալ բանադատէին զծերն և ասէին. ո՞չ ինչ խօսիս ընդ մեզ, հայր։ Ասէ ցնոսա ծերն. զի դուք բանասէրք էք՝ գիտեմ ես, և ոչ ճշմարիտ իմաստասէրք էք՝ վկայեմ. մինչև յե՞րբ ուսանիք զասել, և ոչ գիտէք թէ պարտ է առնել զասացեալն. գնացէք ուսարուք զլռութիւն և զխոկումն մահուն

և զհանդարտութի և զզգաստութի ։ Սրբև լուան խնա-
մակերքն՝ ասացին. Ճշմարտիւ այս իցէ իմաստութիւն
մարմնին՝ որք զատուցեալքն գործով կատարեսցեն, որպէս
զի գործեսցէ մեռելութի ախտից 'ի ձեռն խոկման մա-
հու, և պահեսցէ զնոյն զանձն օգնականութիւ լռութե
և 'ի ձեռն հանդարտական զգաստութե ։ Այս խոնարհե-
ցուցեալ զպարանոցս իւրեանց երկրպագեցին և գնացին
շահեալք յամենայնի ։

ԱՍԱՑ ծերն. կրօնաւոր որ զկնի ելանելոյն յաշխար-
հէ ընկենու զանձն 'ի շփոթ և 'ի հոգս եղկելի կենցա-
ղոյս և 'ի տուր և 'ի յառ առս, նման իցէ նա մուրացիկ
աղքատի՝ որ շրջի և պականեալ բնաւ ոչ ունի զպէտս
կենաց իւրոց, և 'ի բազում հոգոց անընչութե՝ թէ որ-
պէս կեցցէ՝ յիմարեսցի և անկեալ թմրեսցի և նիրհեսս-
ցէ, և տեսանէ զինքն 'ի յանուրջս հարուստ և զգե-
ցեալս զգեստս բազմագինս, և 'ի խնդութե շարժեալ
զարթեաւ, և եւես զինքն 'ի յետին աղքատութիւն և 'ի
յաշխատանս լեալ ։ Այնպէս դիպեսցի և կրօնաւորի ե-
թէ ոչ զգուշասցի, այլ ընդունայն և ունայն ծախեսցէ
զաւուրս իւր 'ի շփոթս և 'ի հոգս, և գերեսցի 'ի խոր-
հրդոցն և այսպէս լիցի դիւաց՝ որք պատերազմին ընդ
նա. և զի հաւատացուցանեն կարծել թէ վասն Այ է 'ի
շարժումս և 'ի հոգս և 'ի շփոթ նոցա ։ Այլ յաւուրն
ժամուն յայնմիկ յորում բաժանի հոգին 'ի մարմնոյն,
տեսանէ զինքն եղկելի և աղքատ և պականեալ յամե-
նայն առաքինութեց. և յայնժամ ծանիցէ եթէ որքան
բարեաց պատճառք է խոնարհութի և հանդարտութի
և միանձնաբար զգուշութի անձին, և թէ որքան տառ-
ջանաց պատճառ են շփոթք և հոգք և պատրանք մե-
ծութեան կենցաղոյս ։

ԱՍԱՑ ծերն. մտածեսցես միշտ զմահ, զի գործես-
ցես զշահ նորա, քանզի ոչ ինչ 'ի կարծելեաց մարդկան
ծածկին յԱյ, և եղիցին միտք քո արթուն և մաքուր
յամենայն չարեաց ։

ԱՍԱՑ ծերն. զգուշասցուք, եղբարք, և արթուն լի-
ցուք 'ի ժամ պատերազմին մերոյ, և թողցուք զանցա-
նելիս և հոգասցուք զմնացեալսն, և մի թողցուք զմիտս մեր
խորհել զչար խորհուրդս, զի մի ինչ չարութի և անօ-
րէնութի թողցուք բնակել յանձինս մեր ։



Digitized by Google

ԱՍԱՑԻՆ ծերքն. 'ի միտ առցուք միշտ զբարիսն, որպէս զի գործեսցուք զնա. և ձգնեսցուք, ով եղբարք, և հալեսցուք վասն հանդերձեալ բարեացն, և պատրաստեսցուք զանձինս յաղագս ելիցն մեր աստի, և մի ունայն ծախեսցուք զսակաւ աւուրս կենաց մերոց, այլ միշտ աղաչեսցուք զառատատուր ողորմութիւնն ա̃յ։

ԾԵՐՔՆ ասացին. յառաջին սկսանել և նոր գալն 'ի կրօնաւորութիւն մարդոյ՝ ոչ թողլ տայ տեղի դիւաց զօրաւոր պատերազմել ընդ նմա, զի մի երկուցեալ 'ի նոցանէ օտարթուելով իւրին դարձցի յաշխարհ։ Ապա մինչ յամէ 'ի նա և ուսանի և ուղղի, յայնժամ դիմեն 'ի վերայ նորա պատերազմունք դիւաց և շարժմունք ցանկութեանց մարմնոյ և այլք ախտից. և յորժամ վհատին 'ի նոցանէ սկսանիլ՝ դիպեսցին նմա խոնարհութիւն և ողբք և արտօսր, և զինքն միայն դատել և իւր մեղադրել. և 'ի փորձութեանցս յայսցանէ ինքն ուսանի և այլոց ուսուցանէ զհամբերութիւն, զփորձ և զզգաստութիւն, և յայնմանէ դիմէ առ ա̃ծ փրկիչ իւր բազում արտասուօք։ Ապա բազմաց դժուարին թուեցաւ այս բան, և չփորձեալ միտօք և մթացեալ սրտիւ սրով սպանին զանձինս, և ոմանք գահավէժ եղեալ կորեան յանչափ տրտմութենէն, և այսպէս 'ի հայհոյութեան դիւէն վրիպեալ արարին զայս։ Այլք ջեռեալք 'ի պատերազմաց մարմնոց, հատին զանդամս իւրեանց. այլք դարձեալ յիմարեալ եղեն առաւել յախտից պոռնկութեան, և լլկեալ 'ի դիւաց կանանց առեալ բերեալ կացուցին առ ինքեանս. Արդ մեք մի կարճամիտ լիցուք և մի յուսահատեսցուք, այլ պնդեսցուք զմեզ արիաբար ընդդէմ կալ փորձութեանց 'ի գալ ամենայն պատերազմաց թշնամւոյն. և 'ի հասանել 'ի վերայ մեր նեղութեանց, գոհասցուք զա̃յ և 'ի նա յանձնեսցուք զամենայն հոգս մեր։

ԺԹ

# ՎԱՍՆ ԱՂՕԹԻՑ

ԵԿԻՆ[1] երկու եղբարք առ հայրն Անտոն. և հարցին ցնա յըղձատական գրոց, և Ամոն կայր առ նա. և լսէր Ամոն զի ասէր Անտոն. տէր, առաքեա յիս զՄովսէս մեկնել զբանս զայս։ Եւ առաքեցաւ առ նա՝ միայն Ամոնի և Անտոնի տեսանելով, և ուսոյց զնա և պատմեաց ըզմիտս բանին։

ԱՍԱՑ[2] հայրն Թէոդորոս. եթէ տէր համարի զհեղգութիւն մեր 'ի ժամ աղօթից և զգերութիւն մտաց մերոց 'ի ժամ պաշտամանն, ոչ կարասցուք ապրել։

ԱՅՆ երբեմն ծեր ոմն Թեբայեցի 'ի լեառն Սինա. և մինչդեռ գնայր անտի, դիպեցաւ նմա եղբայր ոմն 'ի ճանապարհին, ասէ ցծերն. նեղիմք, հայր, վասն երաշտութեան։ Ասէ ցնա ծերն. և ընդէ՞ր ոչ կայք յաղօթս և աղաչէք զտէր։ Ասէ ցնա եղբայրն. եթէ աղօթս առնեմք և ուխտադրութիւս, և ոչ գայ անձրև։ Ասէ ծերն. ոչ կայք յաղօթս ջերմ սրտիւ, և կամիս ճանաչել զի այդպէս է։ Յայնժամ կացեալ յաղօթս և համբարձեալ զձեռս իւր՝ առժամայն եկն անձրև։ Եւ տեսեալ եղբօրն զարհուրեցաւ և անկեալ երկիր եպագ նմա։ Իսկ ծերն փախուցեալ գնաց անտի. և պատմեաց եղբայրն ամենեցուն զեղելսն, և որք լուանն փառաւորեցին զաստուած։

1 ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ցհայրն Անտոն և ասէ. զի՞նչ է բանն զեացելոցն գրոց։ Իսկ ծերն ասէ. սակաւիկ մի յետոյ ասացից քեզ։ Եւ գնաց յանապատ. իսկ հայրն Ամոնա 'ի ծածուկ զկնի նորա գնաց, քանզի գիտէր նա զառաքինութիւն նորա։ Եւ իբրև հեռացաւ ծերն, սկըսաւ աղօթել և ասէ. տէր իմ, առաքեա առ իս զՄովսէս, զի ուսուսցէ ինձ զբանն զայն։ Եւ եկն առ նա ձայն յերկնից և ասէ ցնա զզօրութիւն բանին. և ծերն իմացեալ զբանն՝ գնաց պատմել։ Եւ ասէր հայրն Ամոնա՝ եթէ ես զբանն լուայ որ ասէր ցնա, այլ զզօրութիւն բանին ոչ իմացայ։

2 Ասաց հայրն Թէոդորէ Ենատացի. եթէ քննեսցէ տէր զօր 'ի յաղօթսն զհեղգութիւն մեր և զգերութիւն մտաց մերոց 'ի սաղմոսն՝ ոչ կարեմք կեալ, զի ամենաթալից եմք։

Digitized by Google

ԱՍԱՑ[1] ծերն՝ եթէ քան յաղօթս կալ՝ ոչ ինչ է դժուար. զի ամենայն առաքինութիւն իւր հանգիստ ունի, իսկ ընդ աղօթս պատերազմի նա մինչև ցյետին շունչն։

ԱՍԱՑ[2] հայրն Յակոբ՝ եթէ տեսի ես մանուկ մի զի կայր իւրումն աղօթէր և ասէր. Տէր, փրկեա զիս 'ի գազանաց։ Եւ տեսի ապա զի կայր անդ ընձ մի որդւովք, որ և դիէր մանուկն ընդ նոսա զուկն։ Եւ այլ ևս աղօթելով ասէր. փրկեա զիս, Տէր, 'ի հրոյ։ Եւ ապա վառեալ հուր եմուտ 'ի նա և ոչ այրեցաւ բնաւ։

ԾԵՐՆ[3] Ղուկիոս 'ի յասելն ոմանց եղբարց՝ եթէ միշտ աղօթեմք մեք, ասէ. և յորժամ ուտէք կամ ննջէք, ո՞վ աղօթէ վասն ձեր։ Եւ ոչ ետուն պատասխանի։ Եւ ասէ ցնոսա. ես սկսանիմ զգործն և զկանոնն կատարեմ անյապաղ, և առնում աւուր վեշտասան դր-

[1] Եղբայր մի եհարց ցհայրն Աղաթոն և ասէ. մի՞ առաքինութիւն աւելի աշխատութիւն ունի։ Եւ նա ասէ. ոչ ինչ իցէ այսպիսի աշխատանք՝ իբրև զաղօթս առ Տէր. զի յամենայն առաքինութիւնս յորում յամենայ մարդ՝ գտանէ 'ի նա զհանգիստ, իսկ աղօթից մինչև ցյետին շունչն աշխատութիւն պէտք է. յաղագս այսորիկ զի որքան սկսանի մարդ աղօթել առ Տէր, նախանձայն սկսանին դևք խափանել զնա, քանզի գիտեն զի նովաւ շնորհին մեզ ամենայն բարիք և նովաւ տկարանան նոքա. վասն այսորիկ զգուշանալ պարտ է մեզ աղօթից մինչև իսպառ։

[2] Պատմեաց մեզ հայրն Յակոբ՝ եթէ մինչ մանուկ էի և բնակէի յանապատ, և էր անդ մանուկ մի և բնակէր առանձին, այլ մերձ էր յայրն իմ անկեղ նորա։ Եւ տեսի երբեմն զնա զի աղօթէր և խնդրէր յԱյ և ասէր. հանդարտեցո ինձ զգազանս։ Եւ զկնի աղօթիցն այսպէս արար, զի ընձ մի կայր անդ հաւաք նմա, և դիեցուցանէր զկորիւնս իւր. և գնաց մանուկն և արկ զգլուխ իւր 'ի ներքոյ ընձոյն և դիէր 'ի ստեանց նորա ընդ մանկունս նորա։ Եւ յայլում ժամու դարձեալ տեսի զայն մանուկ զի աղօթէր առ Տէր և ասէր. Տէր, տուր ինձ զօրութիւն անվնաս բնակել ընդ հրոյ։ Եւ բորբոքեաց հնոց մեծ և կայր 'ի մէջ հրոյն, և աղօթէր առ Տէր և կրկնէր ծունր, և ամենևին հուրն ոչ մերձենայր 'ի նա. և ես տեսեալ փառս ետու Այ՝ այնմ որ առնէ զկամս երկիւղածաց իւրոց։

[3] Առ հայրն Լուկիոս, որ բնակէր յԵնատոն, գնացին երբեմն ծերք ոմանք որք աղօթաւորք կոչէին, և եհարց ցնոսա ծերն և ասէ. զինչ իցէ ձեռագործ ձեր, եղբարք։ Իսկ նոքա ասեն. ոչ առնեմք ձեռագործ մեք, այլ որպէս առաքեալն ասէ՝ անդադար աղօթեմք։ Ասէ ցնոսա ծերն. և մի՞ ինչ ուտէք երբէք և ոչ ննջէք։ Եւ նոքա ասեն. այո, ուտեմք և ննջեմք ևս։ Ասէ ծերն. և յորժամ ուտէք և ննջէք ով ոք աղօթեսցէ ընդ ձեր։ Եւ ոչ գիտէին թէ զինչ տացեն առ այս։ Ասէ ցնոսա ծերն. ոչ առնէք որպէս ասէքդ, այլ ես ասեմ զինքեան՝ թէ որպէս եղիցի անդադար աղօթել։ Ահա ես նստիմ 'ի ձեռագործ իմ, և մինչ հիւսեմ զարմաւ՝ ասեմ, ողորմեա ինձ, Տէր, ըստ մեծի ողորմութեան քում, և կատարեմ զաւարտն սաղմոսին. արդ՝ է այս աղօթել՝ ե-

Digitized by Google

րամ և զկէսն տամ ողորմութիւն, և նոքա աղօթեն վասն իմ. եթէ ես ննջեմ կամ ուտիցեմ, և լնու բան՝ թէ անդադար աղօթեցէք:

ՄԱՐ երբեմն աբբայ Մակարիոս չորեքտասնեայ աւուրս երթալով առ եղբայրն մին զօրհանապազ, որպէս զի խօսեսցի ընդ նմա, և ոչ եգիտ պարապեալ զնա յաղօթից անտի և ոչ մի անգամ. և զարմացեալ աբբայ Մակարիոս՝ ասէր. ահաւասիկ երկրաւոր հրեշտակ:

ՅՈՒԼԻԱՆՈՍ՝ յորժամ կամէր երթալ 'ի Պարսս, առաքեաց դեւ մի յերկիրն արեւմտից բերել նմա զրոյց 'ի կողմանցն Պարսից. և դարձաւ դեւն զկնի հնգետասան աւուր, և եհարց Յուլիանոս զպատճառ յամելոյն: Եւ ասէ դեւն. յամեցի և ոչ ինչ վճարեցի, զի յերկիրն յայն կայր միայնակեաց մի և աղօթիւք արգելոյր յինէն խնամել ինչ. և հնգետասան օր ջանացայ ցնորեցուցանել յաղօթից, զի կարացից կատարել զգործս իմ և ոչ կարացի: Եւ ասէ Յուլիանոս. 'ի դառնալն իմում 'ի Պարսից յաղթութեամբ առից զվրէժ զայդ 'ի նմանէ: Եւ լուաւ զայս իշխան մի Եւստիքէս անուն, և չոգաւ առ միայնակեացն այն և եղև անուանի կրօնաւոր: Եւ սպանաւ Յուլիանոս 'ի Պարսս, և ամենայն չար խորհուրդն նորա խափանեցաւ ընդ նմա:

թէ ոչ իցէ: Դարձեալ ասէ ծերն. և առնում ես 'ի ձեռագործէ իմմէ յաւուրն դրամս վեշտասան, իսկ զկէսն դրամն ծախեմ 'ի պէտս իմ և զայլն տամ 'ի սէր աղքատաց. և որք առնուն զփողն, նոքա իսկ աղօթեն վասն իմ թէ ուտիցեմ թէ ննջիցեմ. և կատարի այն որ գրեալ է՝ թէ անդադար աղօթեցէք շնորհօքն Քնի: Եւ նոքա շահեցան 'ի բանիցս յայսցանէ գնացին ցնծութեամբ:

Ի ժամանակս Յուլիանոսի ամբարշտին մինչ գնայր նա 'ի պատերազմ, առաքեաց նա դեւ յարեւմուտս բերել նմա փութով համբաւ ինչ անտի. և իբրև եհաս դեւն 'ի տեղի ուրեմն յորում բնակեալ էր անդ կրօնաւոր մի սուրբ Պօղիկոս, կապեալ եղև և եկաց անդ անշարժ զաւուրս տասն, և ոչ կարաց անցանել՝ զի կապեալ էր զնա աղօթք ծերոյն, և ոչ տայր շարժել գնալ: Եւ իբրև ոչ դադարեաց ծերն յաղօթից 'ի տուէ և 'ի գիշերի, դարձաւ դեւն ունայն և դատարկ, և եկեալ պատմեաց Յուլիանոսի: Իսկ իբրև լուաւ Յուլիանոս, բարկացաւ և ասէ. եթէ դարձայց յետս, խնդրեցից զվրէժս 'ի ծերոյն: Եւ յետ երից աւուրց սպանաւ Յուլիանոս 'ի Պարսս: Բայց մի ոմն յիշխանացն նորա որ լուաւ և գիտէր զայն, առժամայն բաշխեաց զինչս իւր աղքատաց, և եկեալ առ հայրն Պօղիկոս՝ եղև կրօնաւոր 'ի նմանէ և աշակերտեցաւ նմա, և պատմեաց մեզ զայս, և եղև խիստ ճգնաւոր յոյժ, և եկաց անդ ամս բազումս և ննջեաց 'ի տէր: Զի աղօթք սուրբ հօրն Պօղիկոսի զօդք կապեալ դիւացն, որ ոչ կարէին անցանել. և զարհուրելի իշխանն՝ կրօնաւոր և դասակից և հաղորդ մեզ արար:

ԱՐԴԱՐՈՑՆ Անտոնի առաջի ոմն կացեալ յիմաստակացն ասէր. զիա՛րդ ժուժկալես, ով հայր, 'ի գրոց մխիթարութենէ զրկեալ։ Իմ գիրք, ասէ Անտոն, ով իմաստակ, բնութիւն եղելոցս է, և առընթեր է յորժամ կամիմ զբանսն ընթեռնուլ զա̃յն։

ԱՍԱՑ ոմն ծեր՝ եթէ 'ի գալստեան եղբարց մի լուծաներ զսիրտ քո, այլ առաւել յայնժամ կացցես յաղօթս և զայն 'ի ծածուկ, զի յայնժամ է երկիւղ գաղտնից թշնամւոյն յաղագս չարախօսութեան։

ՊԱՏՄԵԱՑ 'աբբայ Դանիէլ սկիւթացին՝ եթէ եղբայր ոմն էր յԵգիպտոս, և յաւուր միում երթեալ Ճանապարհ և հասեալ յերեկոյն 'ի տարաժամ եմուտ 'ի գերեզման վասն ցրտոյ և ագաւ անդ։ Եւ իբրև անցանէին դևքն, ասէ մինն ցմիւսն. տեսանես որպիսի խիզախութիւն ունի միայնակեացս այս որ եթէ 'ի գերեզմանիս ննջէ, եկ աշխատ արասցուք զսա։ Եւ ասէ միւսն. ընդէ՞ր կամիմք աշխատ առնել զսա, միանգամայն մեր է և մեզ իսկ ծառայէ առնելով զկամս մեր. ուտէ և ըմպէ և չարախօսէ և պղերգանայ յաղօթից. այլ քան 'ի սա խափանիմք՝ գնա խռովեցուսցուք զայնոսիկ որ խռովեցուցանեն զմեզ և աղօթիւք մարտնչին ընդ մեզ 'ի տուէ և 'ի գիշերի։

¹ Պատմեաց մեզ ծեր ոմն վասն եղբօր ուրեմն որ բնակէր յԵգիպտոս՝ եթէ գնաց երբեմն 'ի Ճանապարհի եղբայրն այն. և իբրև երեկոյ եղև, եմուտ նա 'ի գերեզմանս ննջել անդ յաղագս ցրտոյն որ էր։ Եւ անցանէին դևք ընդ այն 'ի գիշերի։ Եւ ասէ մի դևն ցմիւսն. տեսանես զորչափ համարձակութիւն իցէ կրօնաւորին այնմիկ եթէ որպէս ննջէ 'ի գերեզմանի. եկ երկեցուսցուք զնա։ Պատասխանի ետ միւս դևն և ասէ ցնա. մի երկեցուսցուք զդա, զի մեր է դա և լնու զկամս մեր. ուտէ և ըմպէ և չարախօսէ զամենեցունց և ծոյլ է յաղօթսն. և ընդէ՞ր ասուա յամեմք առ սա որ մեր իցէ, եկ գնասցուք և նեղեսցուք զորս նեղեն զմեզ, և մինչ պատերազմին ընդ մեզ աղօթիւք և պահօք և հլումամբ և ամենայն ճգնութեամբ։ Իսկ իբրև լուաւ զայս եղբայրն այն, զարհուրեալ եկն 'ի միտս իւր, և զգաստացեալ յայնմ օրէ եղև այր ընտիր ճգնազգեաց։

# ՄՆԱՑՈՐԴՔ

## յերկրորդ թարգմանութենէ

ԵՐԱՆԵԼԻՈՅՆ Եպիփանու կիպրացւոյ եպիսկոպո-սի պատուիրեաց հայր վանից իւրոց զոր ունէր նա 'ի Պաղեստինէ, և ասէր՝ եթէ աղօթիւք ձեր ոչ հեղգա-ցան եղբարքն 'ի կանոնս իւրեանց, այլ առիպով աղօթեն զերրորդ ժամն և զվեցերորդ և զիններորդ ժամու ա-ղօթս։ Իսկ նա մեղադրեաց և գրեաց առ նա այսպէս. յայտ է զի զայլ ևս ժամսն աւուրն հեղգութեամբ անգործ կայք յաղօթից. զի կրօնաւորի պարտ է միշտ և անդա-դար աղօթել սրտիւ և մտօք 'ի կալ և 'ի նստել, 'ի գոր-ծել և 'ի յուտել, 'ի ննջել և 'ի յառնել և 'ի գնալ։ Այս զի Դաւիթ մարգարէ յամենայն ժամու աղօթէր. յերեկոյ, ասէ, 'ի վաղորդեան և 'ի հասարակ աւուր և 'ի մէջ գիշերի և եօթն անգամ յաւուրն, և բնաւ զօրն ողջոյն, ասէ, օրհնեցից զտէր յամենայն ժամ։

ԱՍԱՑ ծերն. եթէ գայ առ քեզ խորհուրդ պատե-րազմող մտաց քոց, զգոյշ լեր զի մի այլ փոխանակ այ-լոյ խնդրեսցես յաղօթս, այլ ընդդէմ թշնամւոյն սրեա զսուր աղօթից քոց՝ դիմամարտել ընդ նմա։

ԳՆԱՑԵԱԼ երբեմն հայրն Մովսէս ըմպել ջուր, և եգիտ զհայրն Զաքարիա զի աղօթէր 'ի վերայ ջրհո-րոյն. և ետես յայտնապէս զհոգին այ, զի հանգուցեալ էր 'ի վերայ գլխոյ նորա. և ուրախութեամբ լցեալ եղև հայրն Մովսէս, որ զայնպիսի շնորհս ետես 'ի վերայ հօրն Զաքարիայ։

ԱՍԱՑ հայրն Եսայիաս՝ եթէ գնաց երբեմն հայրն Ի-սիդորէ պիլուսացւոց երէցն ընդ եղբարսն իւր յեկեղե-ցին. և իբրև ուտէին և խօսէին ընդ միմեանս, սաս-

Digitized by Google

տեաց նոցա և ասէ. լուռ լերուք, եղբարք, զի գիտեմ ես զեղբայր իմ, որ ունէ և ընկալէ ընդ մեզ, և աղօթքն իւր ելանէ յատենն իբրև զխունկ հրոյ առաջի այ։

Առ հայրն Յովսէփ գնաց երբեմն հայրն Ղովտ և ասէ. ըստ կարի իմում առնեմ զսակաւ աղօթս իմ և պահս և զհանդարտութիւն, և արգելեալ եմ ըստ կարի զչար խորհուրդս իմ, և այլ զինչ պարտ է ինձ առնել։ Իսկ ծերն յարեաւ և համբարձեալ զձեռս իւր յերկինս, և եղեն տասնեքին մատունք նորա իբրև զտասն ջամբարս վառեալս, և ասէ ցնա. եթէ կամիս կեալ, լեր դու բոլորովին իբրև զջամբարս վառեալս։

ԵՂԲԱՅՐ ոմն ոչ մեկնէր 'ի ձեռագործէ իւրմէ, և աղօթքն իւր ելանէին անդադար առաջի այ. և տեսեալ զայս ծերոցն՝ երկեան յոյժ և փառս ետուն այ ընդունողին զաղօթս սորա։

ՀԱՐՑԻՆ Մակարիոս հարցին ումանք եթէ որպէս պարտ է մեզ աղօթել։ Ասէ ցնոսա ծերն. ոչ է պէտք շատ խօսել, այլ պարտ է համբառնալ զձեռս յերկինս և ասել. տէր, որպէս կամիս և որպէս գիտես ողորմեաց ինձ։ Իսկ եթէ 'ի պատերազմին, ասասցես՝ օգնեա ինձ. և նա գիտէ զկարիսն քո, և առնէ ողորմութիւն 'ի վերայ քո։

ԱՍԱՑ հայրն Նեղոս. որքան չար հատուցանես չարարարին քո, նոքա ամենեքեան գայթակղութիւն քեզ լինիցին յաղօթս քո. զի հեզութիւն և անբարկութիւն և խոնարհութիւն իցեն աղօթք, և զի դեղ հզօր իցեն աղօթք ցրուել զամենայն վիշտս և զտրտմութիւնս։

ԱՍԱՑ դարձեալ. ամենայն առաքինութիւն զոր ինչ արասցէ մարդ, զպտուղն նորա 'ի ժամ աղօթիցն գտցէ. և եթէ կամիս աղօթել որպէս պարտ իցէ, մի տրտմեցուցաներ զեղբայրն քո, և մի կամիցիս լինել քեզ որպէս և բղձասցես դու. այլ որպէս կամեսցի ած վասն քո, զայն սիրեսցես. և եղիցիս դու հանգուցեալ յաղօթս և 'ի խնդրուածս քո։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց զհայրն Պիմէն և ասէ ցնա. բարւոք իցէ, հայր, աղօթել միշտ։ Ասէ ցնա ծերն. հայրն Անտոն ասէր՝ եթէ բանս այս ելանէ 'ի բերանոյ տեառն, եթէ աղօթեցէք ժողովուրդ իմ ասէ տէր։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ցհայրն Սիսոյի և ասէ. որպէս եղէց ես հաճոյ այ։ Ասէ ցնա ծերն. եթէ ստուգապէս

կամիս լինել հաճոյ ա՛յ, հրաժարեսցես յերկրէ և մեկնեցիր յամենայնէ և թողցես զագարակս քո և հետեւեցիս արարչին քո, և աղօթիւք և արտասուօք բեւեռես ընդ ա՛ծ զանձն քո, և գտցես հանգիստ աստ և 'ի հանդերձեալն օր։

ԱՍԷԻՆ վասն հօրն Տիթոյի՝ եթէ արագ արագ առնոյր զձեռս իւր 'ի վայր. մինչ համբառնայր յաղօթս, յափշտակէր միտք իւր յերկինս և կայր անմռունչ. վասն այնորիկ առնոյր ստէպ 'ի վայր զձեռս իւր, զի մի գուցէ եղբայր ոք տեսցէ զյափշտակութիւն մտաց նորա յերկինս յաղօթսն։

ԵՂԲԱՅՐ ոմն երթայր առ հայրն Տիթոյի ստէպ ստէպ տեսանել զնա. և զամիսս չորս գնացեալ ոչ եգիտ պարապորդ յաղօթիցն և ոչ մի անգամ, զի խօսեսցի ընդ նմա։ Եւ յաւուր միոջ գնաց առ նա և կայր արտաքոյ դրանն և մնայր թէ դադարեսցէ, և լսէր զձայն ողբոյ նորա զի ասէր. տէր, ոչ մտանեն աղօթք մեղաւորիս յունկն քո, զի ողորմեսցիս ինձ։ Եւ զայս ասէր միշտ և ողբայր անդադար։

ՄԻԱՅՆԱԿԵԱՑ ոմն ծեր ետես զդեւն որ հրաման տայր այլոյ դիւի զարթուցանել զկրօնաւոր ննջեալ։ Պատասխանի ետ դեւն և ասէ. ոչ կարեմ առնել զայդ, քանզի զարթուցի զնա յայլում ժամու, և նա յարեաւ աղօթեաց և հալածեաց զիս անտի։

ՃԳ

# ՎԱՍՆ ՕՏԱՐԱՍԷՐ ԵՒ ՈՂՈՐՄԱԾ ԼԻՆԵԼՈՅ

ՆՍՏԷՐ՝ ոմն ծեր ընդ եղջերու ՚ի խցի կենակցութեամբ ՚ի միասին, և էր ծերն յոյժ ողորմած։ Եւ եղև սով, և սկսան բազումք քաղցենալ և գային ՚ի դուրս նորա զի արասցէ սէր. իսկ նա ամենեցուն տայր զհացիկն։ Եւ եղջերուն տեսեալ եթէ շատ տայ արտաքս, ասէ ցծերն. տուր զբաժինն իմ ՚ի հացէդ։ Եւ նա ասէ. առ որպէս և կամիս։ Եւ բաժանեցին զհացիկն, և առ եղջերուն զմասն իւր առաւշոզ. իսկ ծերն յիւրմէ մասնէ անտի տանէր զողորմութիւնն։ Եւ լնէին բազումք և գային առ ծերն. իսկ նա ամենեցուն տայր զհացիկն։ Եւ տեսեալ Ած զյօժարութիւն ծերոյն, օրհնեաց զհացիկն նորա։ Դէպ եղև եղջերուն ուտել զիւր բաժինն, և ասէ ծերն. ահա այս ես հացկունքս կան իմ, առ դարձեալ զիս սենեկակից ընդ քեզ։ Եւ նորա ասացեալ՝ բարի է, և խառնեցին երկրորդ անգամ զհացիկն։ Լեալ դարձեալ ընդարձակութեան, գային դարձեալ առ ծերն, խնդրէին ՚ի նմանէ, և նա տայր նոցա։ Դէպ եղև զի սպառեցաւ հացն. և մտեալ եղջերուն ետես զի սպառեալ էր հացն, և եկն աղքատ, և ասէ ծերն. մուտ և տուր նմա։ Ասէ

ԾԵՐ ոմն բնակէր ընդ եղջերու ուրեմն, և ծերն էր ողորմած յոյժ։ Եւ եղև սով սաստիկ յերկիրն յայն, և ամենեքեան գային առ նա խնդրել սէր. իսկ ծերն տայր ամենեցուն որք և գային խնդրել։ Իբրև ետես եղջերուն զոր տանէր ծերն, երկեաւ ՚ի հատանելոյ պիտոյիցն և ասէ ցծերն. տուր ցիս, հայր, զբաժին իմ հաց, և դու զբաժին քո արասցես որպէս և կամիս։ Եւ ետ ծերն ցեղջերուն զմասն իւր զկէս հացին. և յիւր մասնէն տանէր առատ զողորմութիւն, զի բազումք գային առ նա։ Եւ ետես Ած զբարեմտութիւն ծերոյն և օրհնեաց զհաց նորա. և որչափ նա տայր զհացն, առաւել ևս բազմանայր։ Իսկ եղջերուն եկեր ողջոյն զհաց իւր. և իբրև այլ ոչ գոյր իւրն, ասէ ցծերն. եկ ՚ի միասին կերիցուք իբրև զառաջինն։ Եւ նա ասէ. արասցուք այնպէս։ Եւ եղեն հացակիցք դարձեալ։ Իսկ իբրև էանց ժամ սովոյն և եղև առատութիւն, սովորեալքն ոչ դադարէին առ նա գալոյ, այլ գային և խնդրէին յաճախ, և ծերն տայր անխնայաբար։ Ցաւուր միում եմուտ եղջերուն և ետես, զի սպառեալ էր հացն և ոչ ևս գոյր բնաւ. և եկն ոմն աղքատ խնդրել, ասէ ծերն ցեղջերուն. տուր սմա հաց։ Եւ եղ-

Digitized by Google

եղբայրն . ոչ գոյ, վասն զի պակասեաց հացն : Այլ ասէ ցնա ծերն . մուտ և արմնեա : Այլ մտեալ եգիտ զհացադիւրն լցեալ հացիւ մինչև 'ի վեր, և առեալ երկիւղիւ մեծաւ ետ աղքատին . և ծանուցեալ զառաքինութիւն և զհաւատս ծերոյն փառաւորեաց զԱծ :

ԶՈԳԱՆ՝ երբեմն եղբարք երկու առ Սիմոն ծեր, և սովորութիւն էր ծերոյն ոչ ճաշակել զամենայն օր : Այլ իբրև ետես զեղբարսն, խնդաց և ասէ՝ թէ որ պահէ, վարձս առնու, և որ ճաշակէ վասն սիրոյ՝ երկուս պատուիրանս կատարէ, զի զիւր կամսն ոչ արար, և զպատուիրանն կատարեաց և զեղբարսն հանգոյց :

Այր՝ մի 'ի սրբոց Եգիպտոսի բնակեալ յանապատ տեղիս, և էր երէց . բնակէր հեռագոյն 'ի նմանէ այլ մի մանիքեցի, և նա յասացելոցն առ ինքեանց երիցանցն էր . և կամեցեալ առ մի երթալ առ իւր պաշտօնակիցս, և եղև երեկոյ առ նա ուր էր սուրբ ուղղափառն : Այլ երկուցեալ էր և զարհուրէր մտանել առ նա զի ննջեսցէ . գիտէր եթէ ճանաչէ զնա զի մանիքեցի էր, գուցէ ոչ ընդունիցի զնա . ապա հարկաւորեալ բախեաց ըղ-

բայրն ասէ . ոչ գոյ բնաւ հաց և ոչ մի : Ասէ ծերն . մուտ 'ի տունն և խնդրեա, գուցէ գտանես ինչ : Եւ իբրև եմուտ 'ի տունն, գտաւ լցեալ զտունն ցորենով և զանոթ ալերոյն ալերով : Եւ իբրև ետես եղբայրն զայն, սոսկացաւ յահէն . և հաստատեցաւ եղբայրն 'ի տուրս տալոյ և յողորմածութեան շնորհիւ ծերոյն սրբոյ . քանզի ծանեաւ զառաքինութիւն և զսէր ծերոյն, և յորդորեցաւ ինքն 'ի բարիս . և յայնմհետէ տայր ըղձմտութեամբ աղքատաց և ոչ նեղանայր :

Եղբարք ոմանք գնացին առ ծեր մի, և ծերն ոչ ճաշակէր հանապազօր . և իբրև ետես զեղբարսն, ուրախ եղև և ասէ . Թէպէտ և պահքն ունի շնորհս, այլ որ առնէ սէր՝ զերկուս պատուիրանս կատարէ, մի զի հատուցէ զկամս իւր, և երկրորդ զի արասցէ զկամս այլոյ, զի սիրէ զեղբարսն : Եւ արար ընդունելութիւն մեծ, և ուրախ եղև 'ի սիրելն զնոսա, և նոքա շինեալ գնացին 'ի նմանէ : Այսպէս մեծ է և բարի յոյժ եղբայրսիրութեան ընդունելութիւն 'ի ժամուն իւր քան զպահս զոր կամէաք 'ի փոքր ժամն այն ընդ եղբարսն :

Էր մի 'ի սրբոցն բնակեալ Եգիպտոսի յանապատի, և էր մի հեռի 'ի նմանէ մանիքեցի երէց . և մանիքեցին այն գնաց երբեմն տեսանել զոմանս որք էին իւրոյին հերձուածոյ : Եւ իբրև գործաւ՝ և գընայր 'ի ճանապարհ իւր, եհաս նմա գիշեր մերձ 'ի տեղւոջ այն ուղղափառ ծերոյն, և վհատեցաւ և հոգայր և տայր 'ի միտ իւրում . զինչ արարից : Եւ երկնչէր գնալ և կալ առ ծերն, կարծէր ոչ ընդունել ծերոյն զինքն, վասն զի մանիքեցի էր . այլ նեղեալ յահէ անտի գնաց 'ի դուռն ծերոյն և բախեաց զնա, և ելեալ արտաքս ծերն և ծանեաւ զնա և ընկալաւ խնդութեամբ և տարաւ 'ի ներքս, և եդ սեղան և կերակրեաց զնա և հանգոյց բարեկեալ սրտիւ : Իսկ մանիքեցին 'ի միտս եկեալ զար-

դուրան։ Եւ բացեալ ծերոյն և ծանուցեալ զնա ընկալաւ զնա ուրախութեամբ, և հարկաւորեցոյց զնա յաղօթս կալ, և հանգուցեալ ննջեցոյց։ Իսկ մանկիքեցլին աւանձինն լեալ 'ի գիշերին ասաց՝ թէ զկարգ և ոչ մի ինչ կարծիս եմ ինձ, արդարեւ սա ծառայ այ է։ Եւ եկեալ անկաւ յոտս նորա և ասէ. Ես ուղղափառ եմ յայսմհետէ։ Եւ այսպէս ասացեալ անդր բնակեցաւ առ նմա։

ՉՈԳԱՆ՝ երբեմն ումանք 'ի հարանցն առ ծերն Յովսէփ 'ի Պանեփոսն, զի հարցցեն զնա վասն ընդ առաջ երթալոյ եղբարց օտարաց եթէ զայցեն առ նոսա, եթէ պարտ իցէ խոնարհել առ նոսա թէ ոչ։ Եւ յառաջագոյն քան զհարցանելն զնա, ասէ ծերն ցաշակերտն իւր. միտ դիր զոր թէ պատրաստեալ եմ առնել այսօր, և համարեա։ Եւ եդեալ երկու աթոռուկս, մի յաջմէ իւրմէ և մի յահեկէ, և ասէ ցնոսա՝ նստարուք։ Եւ մտեալ 'ի խուցն իւր զգեցաւ հանդերձ աղքատի և ել առ նոսա և անց ընդ մէջ նոցա լուռ կալով. և դարձեալ մտեալ մերկացաւ զհանդերձն մուրականի և զգեցաւ հանդերձ միայնակեցաց ազնիւ, և ելեալ անց ընդ մէջ նոցա. և մտեալ դարձեալ մերկացաւ և զգեցաւ զիւր հանդերձն և նստաւ 'ի միջի նոցա, և նոքա զարմացեալ էին վասն գործոց ծերոյն։ Եւ ասէ ցնոսա. ուշ եդիք այսմ զոր ես արարի։ Եւ նոքա ասեն՝ այո։ Ասէ ցնոսա՝ զինչ արարի։ Նոքա ասեն. զառաջինն զգե-

մանայր զառաքինութիւն ծերոյն և զաղօթք նորա զոր առնէր զգիշերն ողջոյն, և թէ որպէս ոչ խաբեաց, այլ ընկալաւ զնա այնպէս. և ծանեաւ թէ ծառայ այ է նա։ Եւ իբրև այգ եղև, անկաւ յոտս ծերոյն և ասէ. ուղղես մկրտեցայց 'ի քէն։ Եւ ընդունելութիւն ծերոյն և սիրով հիւրընկալութիւն գործոյս զմանկիկեցին 'ի հերձուածոյն, և եղև ուղղափառ և զգեցաւ զձև կրօնաւորութեան և եկաց առ ոտս ծերոյն զամ աւուրս կենաց իւրոց։ Այսպիսի շնորհս ունի սիրով հիւրընկալութիւն։

։ Գնացեալ ումանք 'ի հարանցն առ հայրն Յովսէփ 'ի Պանեփուս, որպէս զի հարցանիցեն զնա՝ թէ որպէս պարտ իցէ ընդունել զհիւր եկեալ եղբարսն զօտարս, և թէ պարտ իցէ ուրախանալ ընդ նոսա 'ի գալ նոցա և միխիթարել զնոսա։ Իսկ ծերն յառաջ քան զհարցանելն նոցա զայսոսիկ, ասէ ցաշակերտն իւր. տեսցես զոր ինչ ես այսօր առնելոց եմ, և մի բնաւ առասցես ինչ։ Եւ եառ ծերն երկուս բազմականս և եդ զմին յաջմէ և զմիւսն 'ի ձախմէ իւրմէ, և եթող ճանապարհ 'ի միջի և զեկեալ հարսն նստոյց յաթոռսն յայնոսիկ. և ինքն մտեալ 'ի սենեակն զգեցաւ պատառատուն հանդերձ աղքատի և ել առ նոսա, և շրջեալ անդ սակաւ մի՝ դարձեալ եմուտ 'ի սենեակն և զգեցաւ զիւր հանդերձն և ել առ նոսա և նստաւ 'ի միջի նոցա։ Իսկ նոքա տեսին զոր արարն, այլ ոչ ծանեան զգործն թէ զինչ է զոր եցոյց ծերն։

Digitized by Google

ցար հանդերձ մտաւորականի և զերկրորդն միայնակեցի ։ Ասէ ցնոսա. միթէ փոխեցա՞յ ես յազգանելոյն այլ և այլ ։ Ասեն ցնա՝ ոչ ։ Ասէ ցնոսա ծերն. եթէ ես 'ի յառաջագոյն հանդերձն ոչ փոխեցայ, որպէս առաջինն ոչ վնասեաց ինձ և ոչ երկրորդն փոխեաց զիս, այսպէս պաժան է լինել 'ի պատահման սրբոցն ըստ աւետարանին ձայնի՝ տուք զկայսերն կայսեր և զԱյն այ ։ Յորժամ գալուստ եղբարց առ ձեզ լինի, համարձակութբ ընկալարուք զնոսա. իսկ յորժամ առանձինն իցէք, պէտք են սգոյ և տրտմութբ հոգ տանել ։ Այլ նոցա լուեալ զպատասխանն, զի որ եթէ 'ի միտս նոցա էր՝ ասաց յառաջագոյն քան զհարցանելն. և փառաւորեցին զած և չոգան խնդութբ. և իւրև յայն ընկալան զբանն, և զոր ինչ ասաց ցնոսա՝ պահեցին առ ինքեանս ։

Այր ' մի միայնակեաց, որ ունէր եղբայր աշխարհական՝ աղքատ. և զինչ և գործէր միայնակեացն՝ տայր աշխարհականին, և եւս առաւել աղքատանայր աշխարհականն. և երթեալ միայնակեացն պատմեաց ծերոյ ումեմն զիրսն ։ Ասէ ցնա ծերն. եթէ կամիս լսել՝ մի եւս տար նմա, այլ ասա նմա. եղբայր, մինչ կայրն տայի քեզ, և արդ դու որ ինչ յաջողէ քեզ՝ բեր ինձ 'ի գործոյն քումմէ. և զինչ և բերէ քեզ՝ առ 'ի նմանէ, և

Ասէ ծերն ցնոսա. տեսանէ՞ք զոր արարի ես ։ Եւ նոքա ասեն. այո տեսանք ։ Եւ ասէ ցնոսա ծերն. միթէ փոխեցա՞յ ես 'ի փոխել հանդերձին ։ Եւ նոքա ասեն. ոչ ։ Ասէ ծերն. արդ եթէ ես նոյն եմ 'ի յերկուցն զգեստուցն փոփոխելոյ, և ոչ ոք 'ի նոցանէ վնասեաց և կամ փոփոխեաց զիս, այսպէս և դուք պարտական էք տանել յընդունելութիւն օտար եղբարցն, որպէս և տէրն ասէ՝ եթէ տուք զկայսերն կայսեր և զԱյն այ ։ Յորժամ գան եղբարքն, ուրախութբ ընկալարուք զնոսա. իսկ յորժամ միայն լինիցիք, սուգ եղիցին ընկեր ձեր, զի կացցէ միշտ 'ի մեզ երկիւղն այ ։ Իսկ նոցա լուեալ զայս զարմացան թէ որպէս զորս 'ի միտ ունէին հարցանել՝ մեկնեաց նոցա առանց պատմելոյ. և գնացին խնդալով և գոհանային զայ ։

։ Էր մի կրօնաւոր՝ որոյ էր հայր գաւեհիկ աղքատ, և զոր ինչ աշխատէր որդին՝ տայր հօրն իւր. և նա որչափ առնոյր 'ի նմանէ, եւս առաւել աղքատանայր ։ Զայն տեսեալ կրօնաւոր որդի նորա զի ոչ կարէր օգնել հօրն իւր, տխրէր տրտմութբ ։ Յայնժամ գնացեալ եղբայրն պատմեաց զայս ծերոյ մեծի ։ Ասէ ծերն. միթէ ինչ մի առնենա յորդւոյդ քոց ։ Ասէ եղբայրն. այո, հայր, որովհետ հօրն իմ և տամ զոր և գտանեմ ։ Ասէ ծերն. եթէ կամիս լսել ինձ, մի այլ եւս տալ ինչ նմա, այլ ասասցես նմա՝ զոր ինչ ունէիր ետու քեզ, և ոչ մնաց այլ ինչ զի տացից. արդ յաջողեսցէ զոր ինչ տացէ քեզ այ, բերցես և ինձ ։ Եւ զոր ինչ բերէ քեզ, առեալ տացես աղքատ կրօնաւո-

Digitized by Google

ուր և գիտես եթէ է օտարական կամ ծեր աղքատ՝ տուր նմա, և աղաչեա զնոսա զի աղօթս արասցեն վասն նորա։ Եւ երթեալ եղբօրն արար այնպէս։ Եւ իբրև եկն եղբայրն աշխարհական, խօսեցաւ ընդ նմա զոր օրինակ ասաց ընդ նմա ծերն, և չոգաւ 'ի տուն իւր ուրախութեամբ։ Եւ յառաջին աւուրն եբեր նմա փոքր մի բանջար յաշխատութենէ իւրմէ, և առեալ եղբայրն ետ զայն ծերոցն և աղաչեալ զնոսա զի աղօթս արասցեն 'ի վերայ նորա, և օրհնեալ 'ի նոցանէ գնաց։ Այնպէս դարձեալ եբեր խաւարտ և հաց. և առեալ եղբօրն արար նոյնպէս։ Եւ եկեալ զերրորդ անգամն եբեր ծախս շատս, և եբեր ձուկն և գինի. և տեսեալ եղբօր նորա զարմացաւ, և կոչեալ զաղքատսն հանգոյց զնոսա։ Եւ ասէ ցնա եղբայրն. միթէ պէտք ինչ իցեն սակաւ մի հացի, եղբայր։ Եւ նա ասէ. ոչ, տէր, զի յորժամ առնուի ինչ 'ի քէն՝ որպէս զհուր մտանէր 'ի տուն իմ և ծախէր զամենայն ինչ. և յորոյհետէ ոչ առի 'ի քէն, Ա՛ծ ողորմեցաւ ինձ և օրհնեաց զիս։ Ապա երթեալ եղբօրն պատմեաց ծերոյն զամենայն ինչ որ թէ դիպեցաւ նմա։ Եւ ասէ ցնա ծերն. ո՞չ գիտես եթէ գործ միայնակեցի հուր է, և ուր մտանէ այրէ. մանաւանդ եթէ այս օգ-

րաց, որ աղօթեսցեն նոքա վասն նորա։ Գնաց եղբայրն և ունէր 'ի մտի զպատուէր մեծի ծերոյն։ Իսկ յորժամ եկն առ նա հայրն իւր խնդրել ինչ, յայնժամ ասաց նմա որդին նորա այնպէս, որպէս պատուիրեաց ծերն։ Եւ իբրև լուաւ զոր ասացն որդին՝ գնաց ուրախեալ։ Իբրև յուսահատեալ եղև 'ի սրոց որդւոյն, գնաց վաստակեաց յառաջնում աւուրն և էառ 'ի վարձս իւր բանջարս և տարեալ զայն առ որդի իւր ծերն. և նա առեալ բաժանեաց այլոց, և նոքա օրհնեցին զնա։ Եւ յետ աւուրց ինչ եկն դարձեալ առ նա հայրն նորա և եբեր նմա բանջարս և հացս երիս։ Եւ առեալ զայն եղբայրն՝ արար նոյնպէս, և ետ եղբարցն զայն ձեռօք հօրն, և օրհնեալ 'ի նոցանէ գնաց 'ի տուն իւր։ Եւ դարձեալ երրորդ անգամ եկն առ նա և եբեր պէտս բազումս գինի և ձուկն և ձէթ և այլ բազում ինչ։ Եւ տեսեալ զայն եղբայրն զարմացաւ, և կոչեցեալ զեղբարսն սիրեաց զնոսա և կերակրեաց 'ի վաստակէն հօրն իւրոյ, զի օրհնեսցի հայրն իւր 'ի նոցանէ։ Յայնժամ ասէ եղբայրն ցհայր իւր. միթէ կարօտիս ինչ իմիք, զի տացից քեզ ինչ։ Ասէ ցնա հայրն. ոչ, որդեակ, զի մինչ տայիր դու ինչս ինձ և առնէի, նա իբրև զհուր մտանէր 'ի տուն իմ և կիզէր զամենայն զոր ինչ գտանէր, վասն այն ոչ կարէի ինչ վաստակել և աղքատացայ. իսկ յորմէհետէ ոչ առի 'ի քէն, օրհնեաց տէր զտուն իմ։ Զայս լուեալ եղբայրն այն 'ի հօրէն իւրմէ՝ գոհացաւ զԱծ։ Եւ գնացեալ եղբայրն պատմեաց ծերոյն զայս։ Ասէ ծերն. ո՞չ գիտես զի ամենայն գործ կրօնաւորի հուր է, և ուր մտանէ կիզէ զամե-

աւելար է նմա՝ յաշխատութենէ իւրմէ ողորմածութիւնս առնել, և լինի նմա աղօթք սրբոցն յօգնականութիւն և այսպէս օրհնի ։

ԵՂԲԱՅՐ՝ ոմն եկեալ զհայրն Նիստերոյ որ ունէր երկուս կողոբս, եհարց ցնա և ասէ. եթէ գայ աղքատն և խնդրէ 'ի քէն՝ զո՞ր տաս նմա ։ Եւ նա ասէ. զլաւագոյնն տամ ։ Եւ ասէ եղբայրն. և եթէ եկեսցէ այլ աղքատ և խնդրեսցէ՝ զի՞նչ տաս նմա ։ Եւ ասէ. զկէսն եւս տամ զմիւսոյն ։ Ասէ եղբայրն. և եթէ եկեսցէ այլ և խնդրեսցէ 'ի քէն դարձեալ ։ Ասէ ծերն. հատանեմ և զկէսն եւս տամ նմա, և ածեմ զկէսն ընդ մէջ իմ ։ Եւ ասէ եղբայրն. եթէ եկեսցէ այլ աղքատ և խնդրեսցէ 'ի քէն ։ Եւ ասէ ծերն. տամ նմա զմնացորդն և ես ոչ խնդրեմ առնուլ 'ի մարդոյ, այլ երթամ նստիմ 'ի տեղւոջ իմում մինչև Տծ առաքէ և զգեցուցանէ զիս ։

ՄԱԳԻՍՏՐՈՍ՝ ոմն առաքեցաւ 'ի Թագաւորէն 'ի Ճանապարհ. և գտեալ յընթացսն անկեալ զոմն մեռեալ, և էր մերկ, գթացեալ 'ի նա, և ասէ ցայնոսիկ որ ընդ իւրն էին. առէք զերիվարս իմ և յառաջեցէք փոքր մի ։ Եւ իջեալ զգեցոյց մեռելոյն զներքին զգեստն իւր և ծածկեալ գնաց ։ Յետ աւուրց ինչ առաքեցաւ նոյն ինքն յայլ Թագաւոր հրեշտակ. և 'ի հասանել 'ի քաղաքն 'ի մի աւուրց՝ անկաւ յերիվարէն, բեկան ոտք նորա և

նոյն. այլ առաւել ևս այն է օգուտ՝ որ աշխատեալ ոք տացէ յաշխատութենէ իւրմէ ծերոց, զի օրհնեսցեն զնա ։ Այսպէս մեծ իցէ տալն և օրհնիլն 'ի ծերոցն ։

։ Զհայրն Նիսթերիանէ եկեալ եղբայր ոմն զի զգեցեալ էր երկուս պարեգօտս և ասէ ցնա. եթէ եկեսցէ աղքատ և խնդրեսցէ 'ի քէն զպարեգօտ քո, հայր, դու զո՞ր 'ի դոցանէ տաս նմա ։ Ասէ ծերն. զլաւսն ։ Ասէ եղբայրն. և եթէ այլ ոք խնդրեսցէ զի՞նչ տայցես նմա ։ Ասէ ծերն. զկէս երկրորդին տամ նմա ։ Եւ եղբայրն ասէ. իսկ եթէ այլ ոք խնդրեսցէ զի՞նչ տայցես ։ Եւ ծերն ասէ. տամ զմիւս այլ կէսն, և ես նստիմ մերկ 'ի տեղւոջ ուրեմն, մինչև Տծ զգեցուսցէ զիս. իսկ 'ի մարդոյ ոչ խնդրեմ ։

։ Ասէր ոմն 'ի հարանցն՝ եթէ էր ոմն մագիստրոս՝ որ էր առաքեալ 'ի Թագաւորէն ուրեմն 'ի պատասխանատուութիւն և 'ի գործ ինչ արքունի ։ Եւ իբրև գնայր 'ի Ճանապարհի, եգիտ մարմին մեռելոյ աղքատի որ անկեալ կայր մերկ. և իբրև ետես այնպէս անկեալ՝ ողորմեցաւ նմա գթացեալ 'ի վերայ նորա, և իջեալ 'ի կառացն եհան զիւրն զմի պատմուճանն իւր և ընկէց 'ի վերայ նորա և ծածկեաց զնա և գնաց ։ Եւ դարձեալ յայլում ժամու առաքեալ եղև նոյն մագիստրոսն յառաքելութիւն ինչ ուրեք յարքայէ. և իբրև եկն 'ի քաղաքն, յայնժամ յանդգամանէ չարին անկեալ յերիվարէն խորտակեցաւ ոտք նորա ։

Digitized by Google

դնէր 'ի մահճին։ Պնդեցաւ թագաւորին զառաւա-հումն հռոմայեցւոց բժշկաց փոյթ տանել նմա, և ոչ ինչ կարացին օգնել նմա։ Յետ հինգ աւուր սկսաւ ա-ռաջն. եկեալ բժշկացն տեսեալ խոկային առ միմեանս հատանել զոտս նորա, զի մի ընդ նմին ապականեսցի ամենայն մարմինն և մեռցի. իսկ ցնա ասեն՝ վաղիւն գամք և մխիթարեմք զքեզ։ Եւ հրամանն ետ մանկանն գնալ զկնի բժշկացն և լսել թէ զինչ խոկան վասն իւր։ Ասեն ցնա. ոտք տեսան քո սևացեալ է. եթէ ոչ հատանի, կորնչի մարմինդ. այլ եկեսցուք առաւօտուն և զոր կամի արասցուք։ Երթայր մանուկն լալով առ տէրն իւր և աշխարէր, վայ ինձ, ասելով, տէր իմ, զի վաղիւն խորհին բժիշկքն զհատանել ոտն քո կարել։ Եւ նա լուեալ, անձուձկալութեամբ տառապել ցաւոցն զգիշերն ամենայն տքնեալ, և հանեալ զամենեսեան արք 'ի տանէն՝ փակեաց զդրունսն, և սակաւ մի ննջեաց՝ ետես այր մի զի մտանէր ընդ դրունսն՝ գաւազան ունելով 'ի ձեռին իւրում, որոյ գլուխն խաչ լուսափայլէր, և ասէ ցնա. այր դու, ընդէ՞ր լաս։ Եւ նա ասէ. ո՞չ լացից և տրտմեցայց, զի եկեալ տեղս, և զայս խորհին վասն իմ բժիշկքն կտրել զոտս։ Ասէ ցնա որ երևեցաւն. ցոյց ինձ զոտս քո։ Եւ հիւանդն 'ի բաց առեալ զբանդագնն[1]՝ եցոյց նմա։ Իսկ երևեցեալն խաչ կնքեաց և ասէ. արի այժմ և շրջեա։ Ասէ հիւանդն. ոչ զօրեմ, նեցուկ լեր ինձ։ Իսկ նա բռնեալ եհան, և սա կաղայր։ Ասէ ցնա երևեցեալն. և

Եւ դարձուցին զնա 'ի տուն իւր ծառայքն նորա, և բժիշկս կոչեցին 'ի վերայ բժշկել զնա։ Իսկ զկնի հինգ աւուրց սևացան ոտք նորա. և իբրև տեսին բժիշկքն զսևանալ ոտիցն, սկսան անկանել ընդ միմեանս և ասէին՝ եթէ պարտ է հատանել զոտս նորա. ապա թէ ոչ՝ փտէ և նեխէ զամենայն անդամս նորա և մեռանի։ Եւ ասեն ցնա. գնամք այժմ 'ի տուն մեր. և յեգուց եկեալ բժշկեսցուք զքեզ։ Իսկ հիւանդն ասէ ցծառայն իւր. երթ զհետ բժշկին և տես թէ զինչ խորհին։ Եւ գնաց ծառայն լսել բանս նորա ընդ բժիշկսն։ Իսկ նոքա ասեն ցնա. ոտք տեսան քո սևացեալ է, եթէ ոչ հատցի՝ մեռանի։ Եւ մտեալ մանուկն պատմեաց ասէ տեառն իւրոյ զբանս բժշկացն։ Արդ իբրև լուաւ նա զայս, 'ի տրտմութենէն ննջել ոչ զօրեաց. և էր կանթեղն վառեալ պայծառ լոյս։ Իսկ 'ի մէջ գիշերի ետես հիւանդն զմիոյ ոմն որ եմուտ ընդ պատուհանն և եկն եկաց առ նա և ասէ ցնա. ընդէ՞ր տրտմեալ ես և լաս։ Եւ նա ասէ. լաւ զի զայս ինչ ասացին բժիշկքն։ Եւ նա ասէ. ցոյց ինձ զոտս քո. և նա եցոյց նմա։ Իսկ երևեցեալն ած ինչ 'ի նա և ասէ ցնա. արի և գնա։ Իսկ նա յարեաւ և ոչ կարէր գնալ։

1 Յօրինակին զատընդգոնն կամ զատընդգինն։

Digitized by Google

արդ կաղամս։ Եւ ասէ հիւանդն. տակաւին կաղամ։ Ասէ ցնա. արի և շրջեա ողջանդամ։ Եւ առժամայն յարուցեալ շրջէր ողջ։ Եւ ասէ երեւեալն. ահա այժմ եղեր ողջ, մի մոռանար զողորմութիւնս որպէս և լուար՝ երանի ողորմածաց զի նոքա ողորմութիւն գտցեն. զի դատաստան իմ առատ է որոց արարին ինձ ողորմութիւն։ Եւ յե-ղանակելն ասէ ցնա՝ կեցցես։ Ասէ որ ողջացաւն՝ գնամ։ Եւ ասէ. զի՞նչ կամիս որով ողջացարն։ Ասէ մագիստրոսն. աստուծով որ առաքեացն զքեզ՝ ասա ո՞վ ես դու։ Եւ ասէ. ով մարդ, ընդէ՞ր երդմնեցուցանես զիս. նայեա յիս, ո՞չ ճանաչես զայս նորքին զգեստս։ Ասէ. այո, տէր իմ։ Եւ ասէ որ երեւեցաւն. ես եմ զոր տեսեր մե-ռեալ անկեալ 'ի ճանապարհին և ընկեցեր զայս նոր-քին զգեստս 'ի վերայ իմ. վասն այսորիկ առաքեաց զիս Տէր ողջացուցանել զքեզ. գոհացիր զԱյ յամենայնի, և ընկեա 'ի քէն զագահութիւն մարդկան, զի ոչ թողու Տէր զայնոսիկ որ խնդրեն զնա։ Եւ գնացեալ ել ընդ դուռն ընդ որ եմուտ։ Եւ ողջացեալն զարթուցեալ 'ի քնոյն պատմեաց ամենեցուն զոր ետեսն, և շրջէր ողջ։ Եւ մեք տեսեալ փառաւորեցաք զԱծ, և գրեցաք յօգուտ այնոցիկ որոց պատմի*։

Եւ երեւեալն ասէ. գնա. ես կաղամ։ Եւ դարձեալ օծեաց զոտս նորա։ Յայնժամ յարեաւ և գնայր բոլորովին ողջացեալ։ Այլ երեւեալն այն բարեկամին նորա ասաց նմա բանս բազումս վասն ողորմութեան, և թէ՝ ասէ տէրն, երանի ողորմածաց զի նոքա ողորմութիւն գտցեն, և անո-ղորմ դատաստան լինելոց է այնմ որ ոչ առնէ ողորմութիւն։ Եւ ասէ ցնա. խաղաղութիւն ընդ քեզ։ Իսկ մագիստրոսն ասէ. գիտեմ կամիս դու միթէ ոչ առաքեցաւ ես վասն քո. այլ ասա ինձ վասն տեառն՝ ո՞վ ես դու։ Եւ նա ասէ. ճանաչե՞ս դու զպատմուճանս զայս։ Իսկ իշ-խանն ասէ. այո, տէր, իմ է։ Եւ նա ասէ. ես եմ մեռեալն այն զոր տեսեալ քո մերկ անկեալ 'ի ճանապարհի՝ ծածկեցեր ասեա զիս. և արդ առաքեաց զիս տէր բժշկել զքեզ. և դու միշտ գոհացիր զԱյ, և զողորմածութիւն մի մոռանար։ Զայս ասացեալ, դարձեալ ել նա ընդ պատուհանն և գնաց՝ ընդ որ և մտեալ էր։ Եւ իշխանն ողջացաւ բնաւ և գոհանայր զԱյ և ուրախ էր, վասն զի ողորմածութիւն զոր արարեր և առնէր զնա՝ արդեանց ցուցաւ նմա և հատուցաւ 'ի նմա։

* Օրինակ մի հին թարգմանութեան համառօտեալ է այսպէս. Մագիստրոսն անձն գնայր հրամանաւ թագաւորին 'ի գործ, և յուղւոյն ետես զմի աղքատ մեռեալ մերկ և ընկեց 'ի վերայ նորա զվերարկուն հանդերձին իւր։ Եւ յետ ժամանա-կաց անկաւ յերկիւղքին և բժշկա-ւոն նորա, և թագաւորն հրամայ-եաց բժշկաց այդ առնել նմա. և յետ ետին աւուր մեռցաւ. իսր-հեցան բժիշկն և ասեն ցնա. վա-



Digitized by Google

ՊԱՏՄԵՑԻՆ* մեզ վասն որդւոյ արքային Ապողինա-րու հայրապետին Աղեքսանդրու՝ զի յամենայնի ողոր-մած էր և անյիշաչար։ Նա այս ասացաւ մեզ հաւատար-մապէս՝ եթէ կայր յԱղեքսանդրիա մանուկ մի որդի ե-ղեալ իշխանի քաղաքին, որ արժանաւոր փարթամու-թեամբ վախճանեալ թագուցն ինչս և ոսկի եթող նմին։ Նուազեցաւ և ծախեցաւ ինչքն 'ի հարկաւոր պէտս, և զամենայնն կորուսեալ 'ի վերջին եհաս աղքատութեն, ոչ վասն անառակութե կամ շռայլութե, այլ 'ի նաւա-կութե 'ի նաւակոծութե զվաճառսն կորոյս, ընդ ան-ցեալն 'ի սաստկութին՝ ելանելոյն յերկինս և իջանելոյն մինչև յանդունդս, և անձինք նոցա յանձինս իւրեանց մաշե-ցան։ Զայս պատահմանես մանուկս այս 'ի մեծութենէ եգև փոքր, և զբեռն ընչիցն 'ի նաւարկութեանն կորու-սեալ, և ես նուաստացաւ։ Ըստ սովորին լուեալ երա-նելոյն Ապողինարոս և տեսեալ զնա յայն տառապանս, և այն զի գիտէր զծնողսն նորին՝ վշտանայր, և փոքր մի ողորմութիւն նմին առնել ամաչէր։ Քանզի տեսանէր զնա յատեան իւր աղքատ, և ձմեռ ոգի երանելոյն 'ի վերայ առնն՝ որ զգենոյր հանդերձ պատառատուն, և պատկեր կորացեալ վերջին աղքատութեան. շարժեցաւ յոյն, և խորհեր ըքանչելապէս, որում և վայել էր իւ-րում երանութե։ Կոչեաց զնամիկոս որդւոյ և մեծի ե-կեղեցւոյն առանձինն և ասէ ցնա. տէր նոմիկոս, կա-րող ես պահել ինձ խորհուրդ։ Ասէ նոմիկոսն. յուսամ յաղօթսն քոյ, տէր իմ, զի ինչ որ հրամայէ սրբութիւն քո

զիւն զամենայն մխիթարեսցէ զքեզ։ Եւ առաքեաց զկնի պատանւոյն մի ի զե-տել զոր խորհէին։ Եւ ասէն. տէրն քո շնորհ թէ չխորհեսցէ զխորհրդա-կեալ ասն, և վաղիւ զամենայն հար-ցանեսցէ զոր կամի։ Դարձաւ լա-լով և ասաց նմա։ Եւ մազխաղրան ելոյց առաջի տեսան և փոքր մի նմջեաց։ Եւ տեսանէ զամ փա-ռաւոր մնեալ առ նա և հարցա-նէր զորպէսն. և նա ասաց զբանս բժշկացն ըղձալոյն։ Եւ ասէ ցնա երանելւոյն. ցոյց զանեղին։ Եւ նա ե-ցոյց։ Եւ խաչանկերեալ ասէ՝ որի և շրջեա. և ինչն գնայր։ Սոէ իշ-խանն. առատածով որ զքեզ առա-քեաց՝ ով ես դու։ Եւ նա զար-ձաւ և եցոյց նմա զնեդրքն հան-դերձն և ասէ. Ճանաչեմ զայս։ Եւ ասէ՝ այո։ Եւ ասէ. ես եմ զի ա-ռաքեաց ած բժշկել զքեզ. մի մո-ռանար զողորմութիւն։ Եւ իմա-ցեալ փառաւորեցին զԱծ զերհ-նեալն յաւիտեանս։

* Աստղեւ լուսինոսեան Մոսխոսի. Իսկ Ձեռն ասէ. Պատմեաց մեզ սուրբն որդւոյ վասն Ապողինարու. Իսկ Երկրորդ Ծոփրոնեան Պատմեաց մեզ սուրբն Սոփրոն։

առ իս խորհուրդ, մի՛ գիտասցէ մարդ ոք։ Ասէ հայրա-
պետն. պիտոյ է զի արասցես գիր ոսկւոյ լաւեր յիւրից
առ եկեղեցին 'ի դիմաց այս անուն մանկանս հօր, որ վախ-
ճանեալ է. և դիր 'ի նմա վկայք, կնքեա և մատո այսր։
Իսկ Նոմիկոսն առժամայն փութապէս արարեալ զհրա-
մանն՝ մատոյց զթուղթն տուեալ ցհայրապետն։ Իսկ քան-
զի էր այրն յառաջ ժամանակաց մեռեալ և թուղթն
նոր, ասէ հայրապետն. գնա, պատուական Նոմիկոս,
ձգեա զդա 'ի ցորեան կամ 'ի գարի և յետ սակաւ ա-
ւուրց բեր այսր։ Իսկ գնացեալ՝ եկն 'ի հրամայեալ օրն
առ հայրապետն՝ ունելով զգիրն։ Իսկ ասէ հայրապետն.
գնա արդ և ասա ցմանուկն. զինչ տացես ինձ, և տաց
քեզ զգիր օգտի։ Այլ տես, պատուական Նոմիկոս, մի՛
առցես 'ի նմանէ պակաս քան զերիս դահեկանս, և տուր
նմա զգիրն։ Իսկ ասէ Նոմիկոսն. հրամանն տուր, տէր, զի
մի՛ և զայդ առից։ Արդ կոչեալ Նոմիկոսն զմանուկն ասէ.
զինչ տացես ինձ, և ես շնորհեցից քեզ ինչ որ զաղ-
քատութիւնդ քո լցուցանէ։ Իսկ նա ուխտ եդ՝ զոր ինչ
կամի՝ տալ։ Յայտնեաց նմա Նոմիկոսն և ասէ. յառաջ
քան զհինգ օր յուզէի յարկղն զիմ նամակս, և գտի ըզ-
գիրս զայս, և յիշեմ այժմ զերանելի հայրն քո որ ու-
նէր աւանդ առ իս, և աղաչեաց զիս յօր մահուանն իւրոյ
և ետ զգիրս զայս մնալ առ իս մինչև ցայս ժամ. արդ
եկն 'ի միտս իմ տալ զայս ցքեզ։ Ասէ մանուկն. և զինչ
կամիս թէ տաց քեզ։ Ասէ Նոմիկոսն. երեք դահեկան։
Իսկ ասէ մանուկն. տեսանես զի պատկառեալ է դէմք
իմ, և անծանօթ 'ի պարտականաց։ Ասէ ցնա Նոմիկոսն.
այո, այլ հրաժարեա ունել զդա սակաւ օրիւք։ Ասէ
դարձեալ մանուկն. գիտէ տէր՝ զի ոչ ինչ ունիմ, այլ
թէ առից զոր այդր գրեալ է, և այլ ևս զոր ինչ կամիս՝
տաց քեզ։ Յայնժամ ետ ցնա զգիր յիսուն լտերն։ Իսկ
մանուկն հանդերձ կտակաւն եկեալ առաջի հայրապե-
տին ծունր եած և ետ ցնա զգիրն։ Իսկ հայրապետն յըն-
թեռնուլն սկսաւ առնել ցնա կրկին ասելով. մինչև ցայժմ
ուր էիր. հօր քում վախճանի աւելի է քան զտասան
ամ. գնա, իշխան դու, ոչ առնեմ քեզ պատասխանի։ Իսկ
նա ասէ. տէր իմ, ոչ ունէի ես զգիրդ, այլ Նոմիկոսդ
ետ զդա ցիս և ասաց՝ թէ 'ի յոյզ նամակաց գտի. արդ
ներեա ծառայի քո։ Գնա, ասէ հայրապետն, թող

Digitized by Google

տուր և ես յայտնեցից զկամս իմ յետ միոյ շաբաթու։ Գնաց մանուկն և կացեալ զսահմանեալ աւուրսն՝ եկն վերստին։ Իբրև ետես զնա հայրապետն, պատճառս կցկցեր՝ որպէս թէ ոչ ինչ կամի տալ նմա. ընդդէմ յապաղեցեր, ասէ, և ոչ բերեր զգիրս։ Ասէ մանուկն. տէր իմ, գիտէ Ա՟ծ, զի ոչ ունիմ զօրըստօրէն յագեցուցանել զիմսն. զինչ Ա՟ծ ծագէ ողորմութիւն առ քեզ՝ առաքեա ինձ։ Յայնժամ ասէ ցնա սրբազանն Ապողինարոս. ընդունիմ զաղաչանս քո և հատուցանեմ ահա 'ի ձեռս քո զգլուխ իւրոյ լիապէս. բայց, եղբայր, աղաչեմ զքեզ, մի խնդրեր տոկոսիս 'ի սուրբ եկեղեցւոյս, զի 'ի քէն եղև յապաղումնն։ Ունէր եած մանուկն և ասէ. զինչ և խորհի տէրդ և հրամայէ՝ լիցի, զոր ինչ 'ի գլխոյն կամիցի սրբութիւնդ քո՝ թողցի։ Ասէ հայրապետն. ոչ, բաւական է մեզ որ թողուս զվաշխդ։ Յայնժամ մատուցին առաջի և տուաւ ցնա յիսուն լիտր ոսկի, և արձակեաց զնա հայրապետն օրհնութեամբ վասն արոյ եթող նմա զտոկոսիսն։ Այս գաղտնի գործք Ա՟ծայնոյն Ապողինարոսի և գթութեան 'ի վերայ մանկանն՝ յարուցեալ զնա յաղքատութենէն. յետ որոյ 'ի չափ փարթամութեան ծնողաց իւրոց հասեալ, և բարւոք քաղաքավարութեամբ կացեալ վայելչապէս զտեառնէ գոհանայր։

ՅՈՐԺԱՄ էաք մեք յԱլեքսանդրիա, Եւանդիոս ոմն այր բարեպաշտ և քրիստոսասէր եկն 'ի Պենտապօլեայ՝ որ էր մերձ 'ի Կիւրենէ, և էր բնակեալ անդ ժամանակս բաւականս, և ածին զնա քաղաքացիքն յօրհնութիւն հայրապետին Ալեքսանդրու, ձեռնադրելին եպիսկոպոս։ Նա եղև 'ի խօսելն ընդ մեզ, պատմեաց մեզ և ասէ՝ եթէ յաւուրս Թէոփիլոսի հայրապետին Ալեքսանդրու եղև 'ի Կիւրենէն եպիսկոպոս Սինեսիոս իմաստասէրն, որ եկն 'ի Կիւրենէ և եգիտ անդ իմաստասէր զոմն Եւագրիոս անուն՝ որ եղև նմին սիրելի մտաւոր, թէպէտ և հեթանոսացի էր վարուք։ Բայց եպիսկոպոսն Սինեսիոս եդ ընդ կռապաշտիցն մախանս՝ ոչ թէ միայն խորհել զայս, այլ և փութայր և ջանս բազումս ունէր վասն Եւագրիոսի ածել 'ի քրիստոնէութիւն. սակայն նա ոչ տայր տեղի վարդապետութեան վասն հին սովորութեանն ընդելութեան. այլ եպիսկոպոսն ունելով բազում սէր առ նա ոչ խոնջէր և ոչ թուլանայր և ոչ ձանձրանայր յա-

մենայն աւուր աղաչել և վարդապետել, և մտադիւրու-
թեամբ ջանայր զի արասցէ նմա ՚ի Քս հաւատալ: Եւ
նա յաւուր միում յորժամ բազմեցան խօսքն և պա-
տասխանիքն ՚ի մէջ իւրեանց, ասէ ցեպիսկոպոսն. այս-
պէս, տէր իմ եպիսկոպոս, յետ մահու և յայսմ կամիս ա-
ծել զիս զոր ասէք դուք քրիստոնեայքդ՝ եթէ վախճան
այսմ աշխարհի լինիցի, և յետ վախճանին ամենեքեան
որ են մարդիկ ՚ի սկզբանէ՝ այս մարմնովս յառնեն և զմար-
մինս զայս անապականս զգենուն և անապականս ՚ի յաւիտենա-
կան կեանսն կենցաղավարին. Նոյնպէս և որք մարմնով
գործեցին զմեղս՝ կորնչին, և որ ողորմի աղքատին՝ փոխ
տայ Այ, և որ կորուսանէ աստ ՚ի տնանկեալս ինչ՝ յեր-
կինս գանձէ և հարիւրապատիկ զայն ՚ի միւսանգամ գա-
լըստեանն ՚ի Քէ առցէ. անհաւատալի է ինձ այդ խոր-
հուրդ և խռովեցուցիչ և շաղփաղփութեն բանք: Իսկ
եպիսկոպոսն երևեցոյց նմա զամենայն յոյս քրիստոնէից
եթէ ճշմարիտ է: Եւ յետ բազում ժամանակի երևե-
ցոյց զնա մկրտել ամենայն տամբ և հաւատալ ՚ի Քս.
Լինէր նոցա ուրախութի մեծ: Եւ յետ մկրտելոյն եած
առաջի եպիսկոպոսին ոսկի երիս կենդինարս և ասէ. ըն-
կալ զդա և տուր աղքատաց և արա ինձ ձեռնագիր որ
տացէ ինձ զայդ Քս ՚ի հանդերձեալն: Եւ եպիսկոպոսն
ընկալեալ զգանձն և ետ աղքատաց, և ետ նմա ձեռնա-
գիր: Եւ մնացեալ յետ մկրտութեն աւուրս ինչ, տկա-
րացեալ ՚ի հիւանդութի և եկն ՚ի վախճանել, և ասէ
ցորդիս իւր. յորժամ ամփոփէք զիս, զայս թուղթս դիք
՚ի ձեռին իմում և այնպէս ամփոփեցէք զիս: Եւ ՚ի մե-
ռանելն ամփոփեցին և տուին ՚ի նա զձեռնագիրն: Եւ
յետ երից աւուրց վախճանին երևեցաւ եպիսկոպոսին
և ասէ. եկ ՚ի գերեզմանն ուր իցեմ և առ զձեռնագիր
քո, զի վճարեցայ լիապէս զոր ետու ՚ի ձեռս քո, և ոչ
ինչ բան ունիմ առ քեզ այլ, և յաղագս հաւատարմու-
թեան քո վերնագրեցի ՚ի նմին ձեռամբ իմով: Եւ ոչ
գիտէր եպիսկոպոսն եթէ թաղեալ էր ընդ նմա ձեռ-
նագիրն իւր: Եւ առաւօտուն առաքեաց առ որդիսն իւր
և ասէ ցնոսա. միթէ զումեք ձեռնագիր եդիք ընդ հօրն
ձեր: Նոքին ցնա. այո, տէր, թուղթ ինչ յորժամ վախ-
ճանէր ետ ցմեզ և ասէ. յորժամ վախճանիմ ես՝ դիք
զթուղթս զայս ՚ի ձեռս իմ առանց գիտելոյ ուրուք ամե-

Digitized by Google

նաւին ։ Յայնժամ եպիսկոպոսն առ զնոսա և ընդ նոսին զկղերիկոսն և քարտուղարս որք չինէին զգերեզման իմաստասիրին . և յորժամ բացին զնա, գտին զգիր եպիսկոպոսին 'ի ձեռս մեռելոյն, զոր առեալ բացին և գտին վերագրեալ ձեռամբ իմաստասիրին այսպէս . Ես Եւագրիոս իմաստասէրս՝ քեզ սրբազանեալ եպիսկոպոսի Սինեսիոսի ողջոյն լինել. առի զպարտսն իմ և վճարեցայ, և ոչ մի բան ունիմ առ քեզ վասն ոսկւոյն զոր ետու զօրութեամբ ճշմարտին Քրիստոսի մերոյ որ անբաւ-սքանչելին է ։ Եւ զայս իբրև տեսին ամենեքեան, մեծապէս զարմացան 'ի վերայ եղելոց սքանչելեացն և արտասուօք զԱծ փառաւորեցին ։ Եւ կայ մինչև ցայսօր թուղթն այն 'ի գանձարան սրբոյ եկեղեցւոյն Կիւրենէ, և ընդ այլ սպասս եկեղեցւոյն աւանդեն զնոյն 'ի նոսա որք յաջորդեն զպաշտօն եկեղեցւոյն 'ի փառս Քրիստոսի* ։

ՊԱՏՄԷՐ՝ հայրն Դանիէլ՝ եթէ այր ոմն քարահատ

*Օրինակ մի Եւլոգեայ Թարգմանութիւն այսպէս համառօտի. Ի Կիւրենին եպիսկոպոս մի Սինեսիոս անուն՝ ջանայր քրիստոնեայ առնել զիմաստասէր ոմն Եւագրիոս անուն, և ոչ կարէր 'ի ժամանակս բազումս. և նա ոչ ձանձրանայր, մինչ օգնականութեամբ Քրիստոսի կատարեաց և արար ։ Եւ յետ երից ամաց մեռանէր. և ետ յեպիսկոպոսն ոսկի բազում տալ աղքատաց. և պահանջեաց 'ի նմանէ գիր, որ 'ի Քրիստոսէ հարիւրապատիկ առցէ զայն. և ետ նմա ։ Եւ նա ետ զգիրն յորդւոյն իւր և ասէ. 'ի յամփոփելն զիս դիր զգիրդ առ իս ։ Եւ եդին ։ Զկնի թաղմանն երեւեցաւ 'ի տեսլեանն գիշերի եպիսկոպոսին և ասէ. Եկ 'ի գերեզմանն իմ և առ զգիր քո, զի ես ընկալայ զիմն 'ի Քրիստոսէ մերոյ ։ Եւ եպիսկոպոսն ոչ գիտէր թէ զգիրն 'ի գերեզմանն եդին, մինչև եհարց զորդիսն. և չոգաւ 'ի գերեզմանն քարտուղարօք, և եբաց և եգիտ մեռելն 'ի ձեռամբն իւր գիր ձեռին Եւագրիոսի այսպէս. Ես Եւագրիոս իմաստասէր առի 'ի Քրիստոսէ Այ մերոյ զհարիւրապատիկն ընչից իմոց. երանելի՛դ Սինեսիոս, չունիմ առ քեզ բան ինչ ։ Եւ տեսեալ՝ արտասուօք օրհնեցին զԱծ. և կայ գիրն յեկեղեցւոյն Կիւրենեայ ։

¹ Գնացեալ երբեմն հայրն Դանիէլ քահանայն Սկիտոյ 'ի Թեբայիդա, և ունէր ընդ իւր զմի ոմն յաշակերտաց իւրոց. և իբրև գնացին նաւօք ընդ գետ, և հասին 'ի գեղ ուրեմն, և ելեալ անդր ծերն ասէ ցաշակերտն իւր. այսօր մեզ աստ լինել պարտ է ։ Ասէ աշակերտն. ոչ, այլ գնասցուք այսօր 'ի Սկիտէ ։ Իսկ ծերն ասէր. ոչ, այլ աստ կացցուք այսօր ։ Եւ նստէին 'ի մէջ փողոցին օտարս ։ Ասէ աշակերտն ցծերն. ոչ է արժան մեզ կալ աստ իբրև զմուրացիկս, այլ գնասցուք յեկեղեցի գեղջս և անդ կացցուք ։ Ասէ ծերն. ոչ գնասցուք, այլ նստցուք աստ մինչև ցերեկոյ ։ Իսկ աշակերտն շփոթէր և կագէր և ասէր ցծերն. մինչև ցե՞րբ շրջիմք անօգուտս վասն քո, և ես չարաչարս մեռայց 'ի փողոցի ։ Իբրև ասէին նոքա զայս, եկն անդ այր մի ծեր գաւեհիկ երկայնահասակ և հերքն սպիտակ իբրև զձիւն ։ Իբրև ետես զհայրն Դանիէլ,

Digitized by Google

վաճառակէր աւուրն զամնկ մի ոսկի, և ինքն ոչ ուտէր մինչև ցերեկոյ. և ապա գնէր կերակուր նուազ և ուտէր ընդ հիւրս և ընդ աղքատս, և զփշրանս մնացեալս ընկենոյր շանց. և ոչ ինչ պահէր 'ի վաղիւն, բայց միայն

սկսաւ համբուրել արտասուօք զոտս նորա, և համբուրեալ սիրով ըղձմեռնանն' տարաւ զնոսա 'ի տուն իւր. և ունելով ինքն լոյս 'ի ձեռին գնայր առաջի նոցա ընդ փողոցն, և զկնի նորա երթային հայրն Դանիէլ և աշակերտն իւր և այլ բազում աղքատք որք գիտէին զնա: Եւ տարաւ զնոսա 'ի տուն, լուաց զոտս ծերոյն. և այլ ոչ բնաւ զոք ունէր ազգական կամ ընտանի և կամ սպասաւոր 'ի տան իւրում և ոչ այլ ոք, բայց միայն զնծ: Եւ եդ առաջի նոցա սեղան և կերակրեաց զամենեսեան: Եւ յետ ընթրեացն այնոցիկ ժողովեալ զմնացորդ կոտորանն եւ արտաքոյ և ընկէց շանց, և ոչ եթող վասն վաղուին և ոչ մի փշրանս. զի այս էր սովորութիւն նորա ոչ թողուլ ինչ 'ի տան վասն վաղուին: Եւ եկեալ ծերն և նա, նստեալ առանձին' ոչ նիրհեցին բնաւ զգիշերն ողջոյն. այլ խօսէր ցնա ծերն զշահս հոգւոյ, և նա լսէր զհրամանս նորա ջերմ արտասուօք: Իսկ առաւօտուն ողջունեալ զմիմեանս և մեկնեալ գնացին: Եւ իբրև երթային հայրն Դանիէլ և աշակերտն իւր 'ի ճանապարհին Սկիտոյ, աղաչէր զծերն աշակերտն իւր և ասէր. արասցես սէր, հայր, և պատմեսցես ինձ թէ ո՞ և կամ ուստի՞ իցէ այրս այս և կամ ուստի՞ ճանաչէ զքեզ սա: Եւ ոչ կամեցաւ ծերն պատմել նմա: Դարձեալ անկանէր առաջի նորա և ասէր աշակերտն այն. Նա և այլ բազում ինչ պատմեալ է քո ինձ, հայր, զայլոց մարդոյ ընդէ՞ր ոչ պատմես: Քանզի պատմեալ էր նմա ծերն զբազմաց առաքինութիւնս: Իսկ ծերն ոչ կամեցաւ ասել և ոչ պատմեաց նմա, մինչև տրտմեցաւ եղբայրն յոյժ, և այլ ոչ խօսէր ցծերն մինչև ցՍկիտէ: Եւ կացեալ մինչև ցերեկոյն սովեալ ծերն, և եղբայրն ոչ տարաւ նմա զսովորական կերակուրն իւր 'ի ժամ երեկոյին. քանզի յերկոտասան ժամ աւուրն առնոյր ծերն զկերակուր զամենայն աւուրս իւր: Եւ իբրև եգիտ ծերն զի ոչ եկն եղբայրն յերեկոյին առ ինքն բերել կերակուր վասն տխրութեանն, յարեաւ ծերն և եկն 'ի սենեակ եղբօրն և ասէ ցնա. ընդէ՞ր սպանանէր սովով զհայր քո, ով որդեակ: Եւ նա ասէ. ոչ ես դու հայր իմ և ոչ սիրես զիս. զի եթէ սիրէիր զիս, պատմէիր ինձ զառնէն զայնմանէ: Ասէ ցնա ծերն. ընդէ՞ր այդպէս խստասիրտ և անաւիտա ես դու: Եւ յարեաւ գնալ 'ի սենեակ իւր. իսկ եղբայրն զդժնեցեալ կալաւ զոտից ծերոյն, աղաչէր զնա ոչ գնալ խռովեալ: Արդ վասն զի ոչ կամէր ծերն տրտմեցուցանել զնա, քանզի յոյժ սիրէր զնա, ասէ ցնա. թէ արասցես ինձ սակաւ ինչ խորշեալս զի կերայց, և պատմեցից քեզ զծերոյն զայնմանէ: Իսկ նա ուրախացեալ արար զպատրաստեալն, և զկնի ընթրեացն սկսաւ ծերն պատմել նմա զնմանէ: Անուն այնորիկ, ասէ, կոչի անուն Եւլոգի, և է նա արուեստաւոր գործող քարի և քարահատ. և վաստակէր նա յաւուր միոյ իւրայն արուեստիւ դրամս գանկոյ միոյ, վասն զի յոյժ հմուտ է յարուեստն յայն. և ինքն մինչև ցմութն ոչ ինչ ճաշակէ բնաւ, և երեկոյին գայ 'ի գեղն, և զորս և գտանէ աղքատս և օտարս և անանկս 'ի փողոցաց կոչէ 'ի տուն իւր և կերակրէ զնոսա, և ինքն եւս ընդ նոսին կերակրի. և զոր մնայ ինչ 'ի սեղանոյն մանրեալս և փշրանս' հանեալ արտաքոյ արկանէ շանց, և ոչ բնաւ թողու ինչ յայգ 'ի վաստակոյն. և մինչ յայսմ արուեստ և 'ի գործս նա բարեգործութեան ամ, և այս նմա ՔԵ Ի

զքարհատան իւր։ Այլ եղև զի ընկալաւ զնա ընդ հիւրս. և իբրև իմացայ զկեանս նորա, խնդրեցի յնմէ զերրոր շաբաթս՝ տալ նմա ինչս, զի բաշխում արասցէ զաղքատս։ Այլ ասէ ցիս տէր 'ի տեսլեան, զի կայր 'ի վերայ վիմի 'ի կերպս Թագաւորի և ասէ. բաւական է նմա զոր ունի։ Այլ ժտէի ես տալ նմա ստացուածս, և ասէ ցիս տէր. առնուս զնա յերաշխի, զի կացցէ 'ի պատուիրանս իմ։ Այլ ասեմ. այո։ Այլ ասէ ընդ զօրան որ մօտն կային. լուարուք դուք։ Այլ եղև զի 'ի հանելն քար՝ գտաւ կարաս մի լի ոսկւով, և ոչ իշխեաց 'ի տեղւոջն յերևան

վաստակոյ իւրոյ ասաւրն գտանէ մի ոսկւոյ համաստաղ որպէս ասացի։ Իսկ ես մինչ մանուկ էի յաստուածագոյն քան զայս քաղաքում ամսու՝ երթայի ծախել զձեռագործ իմ. և եկեալ իմ յերեկոյին 'ի գեղն յայն ագանել անդր, և տարաւ զիս և այլ ևս օտարս ըստ սովորութեան իւրում 'ի տուն իւր, և հիւրընկալեալ զմեզ աշակերտեցաւ ինձ։ Եւ ես բազում անգամ եկանէի անդ, և ծանեայ զառաքինութիւն նորա, և սկսայ պաղատանօք աղաչել զնա վասն նորա և ասել՝ տուր ինձ, տէր, աւելի ինչ ստացուածս, զի առաւել տացէ 'ի պէտս կարօտելոց։ Եւ պահեցի այսպիսի աղօթս երիս շաբաթս, մինչև վհատեցայ սովեալ և անկայ յանկողնի։ Եւ տեսի զայր քահանայ վայելուչ զգեցեալ պատմուճան սպիտակ՝ որ եկն եկաց առ իս և ասէ. Դանիէլ, զինչ վշտացեալ ես։ Եւ ես ասեմ. ուխտեցի Քի ոչ բնաւ ճաշակել ինչ մինչև լուիցէ և տացէ ստացուածս Եւլոգի քարագործի, զի բազումս բարեգործեսցէ նովաւ։ Եւ նա ասէ ցիս. ոչ է բարի այդ, այլ կացցէ որպէս և է, և այն լաւ ևս է։ Եւ ես ասեմ. տէր, առաւել տացես դու նմա, զի նա տացէ այլոց, և առաւել փառաւորեսցի նովաւ անուն քո։ Ասէ ցիս. ես ասեմ քեզ՝ լաւագոյն է զի կեցցէ որպէս և էն. իսկ արդ եթէ կամեցիս զի աւելի ինչ տացեմ նմա, դու երաշխաւոր կաց անձին նորա, որպէս զի կեցցէ 'ի հաստատութեան անձն նորա, և ես տամ նմա առաւել։ Եւ ես ասեմ նմա. 'ի ձեռանէ իմմէ խնդրեսցես զհոգի նորա։ Եւ տեսի զի էաք մեք 'ի յարութիւն տեառն յեկեղեցւոջն, և մանուկն այն նստէր 'ի վերայ վիմի գերեզմանին, և Եւլոգի կայր ընդ աջմէ նորա և բիւր հրեշտակք կային շուրջ զնովաւ։ Եւ ասէ տէր ցնոսա վասն իմ. սա՞ իցէ երաշխաւորն Եւլոգի։ Եւ նոքա պատասխանի ետուն՝ այո, տէր, սա է երաշխաւորն նորա։ Իսկ տէրն ասէ. ստուգիւ տուժեցից 'ի քէն զերաշխաւորութիւն դորա։ Եւ ես դարձեալ ասեմ. այո, տէր, եղիցին 'ի վերայ իմ երաշխաւորութիւն դորա, և տուր սմա ինչս։ Եւ տեսի զի արկանէին զանձ բազում 'ի ծոց Եւլոգիոսի, և որչափ արկանէին՝ առաւել ևս տանէին ծոց նորա։ Այս տեսիլ էր, որդեակ. և իբրև զարթեայ, ծանեայ զի լուաւեր աղաչանաց իմոց, և փառս մատուցի Այ։ Իսկ Եւլոգի ել 'ի գործ իւր, և 'ի փորելն զքարն գտաւ 'ի ներքոյ քարանցն կարաս մեծ լի ոսկւով, և ապշեցաւ իբրև ետես զայն Եւլոգի և ասէ. զանձս այս երբայեցւոցն եղեալ է, և արդ զինչ արարից. եթէ տարայց զսա 'ի տուն իմ, լսէ զայս դատաւորն և չարչարէ զիս. այլ առեալ զսա գնացից յերկիր օտար ուր ոչ գիտեն զիս, և անդ պահեցից որպէս պարտ է։ Եւ առեալ ջորիս 'ի վարձու իբր թէ քարս բերիցէ, և բարձեալ զոս-

հանել, այլ վարձեալ դրաստս գնաց 'ի Կոստանդնուպօլիս առ Յուստինիանոս Թագաւորն, և ստացաւ պատրանս, և առ զԵպարքոսութիւն քաղաքին: Իսկ տեսեալ դարձեալ իմ զնա, հայեցաւ յիս խեթիւ. և իմ գիտացեալ զվասնեղն՝ չոգայ 'ի գեօղն, տեղեկացեալ գնացի 'ի Կոստանդնուպօլիս, և զչորս ամիս ոչ կարացի տեսանել զնա կալով առ դրանն, մինչև հարին վիրաւորե-

կին էջ 'ի ծովեզրն, և կալեալ զնաւս 'ի վարձու գնաց 'ի Կոստանդնուպօլիս՝ Թողեալ զբարութեան մշակութիւն իւր: Եւ Թագաւորէր յայնժամ Յուստինիանոս ծերն 'ի Կոստանդնուպօլիս: Եւ նա Եւլոժի զանձ բազում Թագաւորին և իշխանաց նորա, զի արասցեն զնա եպարքոս մեծի պալատին: Յայնժամ զնեաց յարկս մեծամեծս որ կոչի եպիսկոպոսաց մինչև ցայսօր. և եղև այս այսպէս: Արդ զկնի երկուց ամաց տեսի տեսիլս դարձեալ զմանուկն զայն զտեսն 'ի նոյն 'ի տեղի յաւրութեան նստեալ և ամբոխ ընդ նմա, և Եւլոժի ոչ էր 'ի տեղի իւր յայնմ. և տեսի զի քարշեցին զնա սեաւք զԵւլոժի 'ի վերայ երեսաց իւրոց և հանին զնա արտաքս: Եւ իբրև զարթեայ 'ի քնոյ, ասեմ. վայ ինձ եղկելւոյս, զի կորուսի զանձն իմ: Եւ առեալ զգուշս 'ի ձեռին եկի 'ի գիւղն յայն խնդրել զնա, և կացի անդ մինչև ցերեկն և մնացի Եւլոժէ, և ոչ երևեցաւ: Իբրև երեկոյ եղև, ասեմ ես ցկին մի. ո՞չ գոյ օտարանոց 'ի գիւղս յայս: Եւ նա ասէ. ոչ գոյ: Եւ կինն այն խնդրեաց գնալ զկնի իւր վասն հիւրընկալութեան, և ես լուայ նմա: Եւ առբաւ զիս 'ի տունն իւր և եդ ինձ սեղան և հաց և նստեալ հիւրընկալէր զիս, խրատէր զիս և ասէր ցիս. տէր իմ և հայր, ո՞չ գիտես զի մանուկ ես և կրօնաւոր՝ ոչ է պարտ քեզ գնալ 'ի գիւղ, զի կրօնաւորի հանգստանալ պարտ է: Զայս և այլ այսպիսիս բազում ինչ ասաց ցիս: Եւ ես ասեմ. վաճառել զձեռագործ իմ գնամ: Եւ նա ասէ ցիս. Թէպէտ և բազում ինչ պատճառս ասես, ես ոչ հաւանիմ, այլ մի բնաւ ապանիր դու 'ի գիւղ 'ի գիշերի: Իսկ ես հարցի ցնա. ասա ինձ վասն տեառն, մայր իմ, թէ զի՞նչ եղև քարագործն Եւլոժի ստարակերն այն: Ասէ ցիս. և զի էր նա բարեգործ և արդար և ստարանէր յոյժ, և ընկալաւ նա զբարի գործս նորա. և որպէս լուեալ՝ ահա է նա եպարքոս մեծ 'ի պալատս արքայի: Զայս իբրև լուայ ասեմ. ես եղկելիս սպանի զնա: Յայնժամ խորհեցայ և հարկեցայ գնալ առ նա: Եւ նստեալ 'ի նաւ գնացի 'ի Բիւզանդիոն խնդրել զնա. և հարցի զտունն Եւլոժի եպարքոսի եպիսկոպոսացն, և ցուցին ատաժամայն, և նստայ առ դրան նորա և մնացի զի եկեսցէ և տեսից զնա: Եւ ահա եկն բազում հեծելովք և զինուք, և աղաղակեցի մեծաձայն. ողորմեաց ինձ, եպարքոս, զի ունիմ ծածուկ ինչ ասել քեզ: Եւ բնաւ ոչ նայեցաւ յիս, այլ հարին զիս որք առաջին երթային: Եւ այսպէս ձայնէի 'ի յելս և 'ի մուտս նորա չորս թ... չորս, և զինուորքն նորա հարկանէին զիս, և ոչ կարացի խօսել ընդ նմա բնաւ: Իսկ իմ ձանձրացեալ յոյժ՝ անկայ առաջի պատկերի աստուածածնին և ասեմ արտասուօք. տէր իմ Յիսուս Քրիստոս, կամ ազատեա զիս յերաշխաւորութենէ սորա, և թէ ոչ՝ դարձայց ես յերկիր և յաշխարհ իմ: Իսկ մինչ խորհէի զայն, ննջեցի սակաւ մի և տեսի յերազի զի անցանէր գունդ մեծ, և որք առաջի երթային ասէին՝ եթէ օգոստափառուհին անցանէ. և էին առաջի նորա հազարք հազարաց և բիւրք բիւրուց: Եւ ես գոչէի

ցին զիս ծառայք նորա և Թողին կիսամահ. և ես յողջ անկեալ աղաչեցի զսուրբ Ածածինն Թափել զիս յերաշխաւորութ՟է անտի, և տեսի զի բուռն հարեալ ունէր զոտից տեառն և աղաչէր վասն իմ։ Իսկ ասէ ցիս տէր. արձակեցի զքեզ, արի գնա 'ի տեղի քո, և ես ածեմ զայրն 'ի չափ իւր։ Իսկ եղև մեռանել Թագաւորին Յուստինիանոսի, և կալեալ զքարահատն զԵւլոժի և զայլ երիս ընկերս նորա և առին զբոլոր ինչս նոցա, և կամե-

առ նա. տիրուհի, օգնեա ինձ։ Իսկ նա ասէ ցիս. զի՞ է քեզ, ո՞ նեղէ զքեզ։ Իսկ ես ասեմ. Եւլոժի եպարքոսին երաշխաւոր եմ, արդ հրամայեա արձակել զիս յերաշխաւորութենէ նորա։ Եւ զարթեալ և ասեմ. Թէպէտ և մեռանել հասանէ ինձ, ոչ մեկնեցայց 'ի դրանէ Եւլոժի մինչև խօսեցայց ընդ նմա։ Եւ դարձեալ գնացի 'ի դուռն նորա և պոչէի դարձեալ. և կալաւ զիս վէստարիս նորա և այնչափ գանեաց բրօք մինչև Թափեցաւ ամենայն մարմին իմ, և ախարացայ յոյժ։ Ապա խորհեցայ գնալ 'ի Սկիւտէ. և իջեալ 'ի ծովեզր գտի նաւ որ գնայր յԱղեքսանդրիա, և մտի անդ և նստեալ 'ի նաւին վհատեալ ննջեցի անդ։ Եւ դարձեալ տեսի զի կայի 'ի յարութիւն տեառն. և նոյն մանուկն տէր նստէր 'ի վերայ վիմին, և ահագինս հայեցաւ յիս, և ես յահէն այնպէս սասանեցայ և դողացի իբրև զտերև ցամաքեալ 'ի հողմոյ, և ոչ կարէի նայել 'ի նա բնաւ, զի զարհուրեալ սասանէր սիրտ իմ։ Եւ ասէ ցիս. ո՞չ գնաս ընդ զերաշխաւորութիւն քո։ Յայնժամ հրամայեաց երկուց ոմանց կախել զիս զփայտէ և կապել զձեռս յետս. և արարին զհրամանս արքայ մանկանն, և հարկանէին զիս և քերէին և ասէին. ընդէ՞ր առաւել քան զկար քո երաշխաւոր եղեր ումեք, և կամ ընդէ՞ր կացեր դու հակառակ հաճոյիցն Այ։ Եւ ես ոչ կարէի խօսել ընդ նոսա, զի արժանի պատժոց համարէի զիս, և իրաւամբք զհրամանս արքային։ Եւ ահա եղև ինչ ձայն՝ որ ասէր. օգնական տիրուհի անցանէ։ Եւ իբրև տեսի զնա, ուժ առի և ասեմ յեւմ ձայնիւ. տիրուհի, օգնեա ինձ։ Յայնժամ ասէ ցիս քաղցր բարբառով. ես աղաչեցից վասն քո։ Եւ տեսի զի գնացեալ տիրուհին համբուրէր զոտս մանկանն տեառն, և աղաչեաց վասն իմ։ Յայնժամ ասէ ցիս մանուկն այն Թագաւոր. մի՞ երբէք իշխեսցես այլ առնել զայդ գործ։ Եւ ես ասեմ. ոչ, մի եղիցի, տէր, այլ առնել զայդպիսիդ։ Եւ ասեմ. ես լաւագոյն եմ լինելոյ վասն խնդրեցի նմա, և արդ ներեա և Թող ինձ, տէր իմ և Այ իմ։ Եւ հրամայեաց արձակել զիս։ Եւ իբրև արձակեցին, ասէ ցիս. գնա 'ի սենեակ քո, և ես որպէս բերից զԵւլոժի 'ի կարգ իւր՝ տեսցես դու և զարմասցիս։ Եւ իբրև զարթեայ, բերկրեցայ յոյժ ընդ զերծանելն իմ յերաշխաւորութէ. և անցեալ ընդ ծով խաղաղութբ, եկի 'ի սենեակ իմ։ Իսկ զկնի երից ամաց լուայ զմահ Յուստինիանոսի Թագաւորին. և զկնի աւուրց ինչ խորհեցան իշխանքն չարիս ինչ զնորից պատրկաց նորա, զԻպատիոսէ դքսէ և զԻպոկրատէ և զԴոմպիէ և զԵւլոժիոսէ։ Եւ զերեցունցն զայնոցիկ առժամայն հատին զգլուխս նոցա և առին յաւար զինչս նոցա. իսկ Եւլոժի փախեաւ միայն և մերկ 'ի քաղաքէն։ Եւ իբրև ոչ գտին զԵւլոժին, քանզի փախուցեալ էր, յայնժամ հրաման ետ նոր Թագաւորն Յուստինիանոս որ նստեալ էր 'ի տեղի ծեր Յուստինիանոսին, Թէ ուր և գտցեն զԵւլոժի՝ սպանցեն և զնա։ Յայնժամ պրծեալ 'ի ձեռաց նոցա Եւլոժի

Digitized by Google

ցան սպանանել զԵւլոգի: Եւ Նորա զգեցեալ հանդերձ մուրացկի եկն 'ի գեօղն իւր եւ մուրաց մուրճս եւ սկսաւ 'ի գործն իւր եւ զհիւրասիրութիւն: Եւ իմ լուեալ չոգայ առ Նա, եւ լացաք զմեծ ժամս. եւ Ես պատմեցի Նմա զամենայն իրացն պատահմունս: Եւ ասէ ցիս. խնդրեա եւ արդ, հայր, ստացուածս ինչ սակաւս եւ մարթացից վայելել: Եւ ասեմ ցնա. մի լիցի ինձ զայդ զմտաւ ածել եւ

փախչելով եկն 'ի տեղի իւր, եւ ունէր զգեստ պատառատուն աղքատի: Եւ ժողովեցան գիւղն այն 'ի տեսիլ Եւլոգի եւ ասեն ցնա. մեք լուաք զքէն թէ եպարքոս լեալ ես: Եւ ասէ Նա. Ես չէի այն զոր լուայք դուք. Ես եթէ պատրիկ լեալ էի, ոչ ես տեսանէի զձեզ. զի որք 'ի պատիւս են՝ Նոքա 'ի պալատս արքայի են, եւ զոր լուեալ էք դուք՝ այն այլ ոմն Եւլոգի էր յայսմ երկրէ. լուեալ եմ եւ ես զնմանէ. իսկ ես 'ի սուրբս եւ յօտարս շրջէի յաղօթս: Եւ յետ աւուրց ինչ եկեալ 'ի միտս Եւլոգի ասէ. ասացեա, եղկելի Եւլոգի, զմուրճ քո, եւ գործեա զգործ քո եւ աշխատեաց, զի աստ պալատ ոչ գոյ. մի գուցէ կորիցէ ընդ ընչիցդ եւ գլուխ քո: Եւ առեալ զմուրճն գնաց 'ի վէմն այն, եւ կարծէր այլ եւս գտանել գանձ. եւ աշխատեալ մինչեւ ցերեկն փորէր, եւ իբրեւ ոչ գտաւ՝ սրտամտեալ Նստաւ, եւ յիշէր զմեծութիւն իւր եւ զամենայն բարեկրութիւն զոր ունէր 'ի պալատան: Եւ դարձեալ ասէր. այս Եգիպտոս է եւ ոչ Կոստանդնուպօլիս: Եւ գործէր եւ ընդունէր զօտարս ըստ սովորութեան իւր, եւ շնորհօքն Քրիստոսի եկն յառաջին կարգն: Իսկ զկնի աւուրց ինչ եկի ես 'ի գիւղն յայն վաճառել զձեռագործ իմ. եւ իբրեւ ընդ երեկս եղեւ, եկն Եւլոգի եւ տարաւ զիս ըստ առաջին սովորութեան իւրոյ 'ի տուն իւր: Եւ իբրեւ տեսի զնա ծանկեալ փոշւով եւ աղտիւ 'ի քարանձաւ աշխատութեանց, Նայեցեալ 'ի Նա հառաչեցի եւ լացի եւ ասեմ. որպէս զի մեծ են գործք քո, տէր, զամենայն ինչ իմաստութեամբ արարեր, եւ ով է Ած մեծ որպէս զԱծ մեր. դու ես Ած որ առնես սքանչելիս միայն, որ յարուցանես զաղքատն յերկրէ եւ զտառապեալն յաղբեաց, եւ ես աղքատս յանդգնեցայ մեծ ինչ, եւ փոքր մի եւ կորեաւ անձն իմ 'ի դժոխս: Եւ լուաց զոտս մեր եւ կերակրեաց զմեզ: Իսկ զկնի ընթրեացն ասեմ ցնա. որպէս իցես, ծեր Եւլոգի: Եւ Նա ասէ. աղօթեա վասն իմ, հայր, զի աղքատ եմ յոյժ: Եւ ես ասեմ. լաւ էր քեզ թէ եւ զոր ունէիր՝ եւ զայն եւս ոչ ունէիր: Եւ Նա ասէ ցիս. ընդէր, տէր իմ հայր, միթէ գայթակղեցուցի զքեզ: Իսկ ես յայնժամ սկսեալ պատմեցի Նմա զայս ամենայն զորս եւ էանց ընդ իս, եւ ողբացաք յոյժ երկոքեանս լալիւն մեծ ծածուկ 'ի մարդկանէ: Յայնժամ ասէ ցիս Եւլոգին. տէր իմ հայր, դարձեալ խնդրեսցես 'ի Քրիստոսէ, զի տացէ ինձ եւ ոչ արարից այնպէս: Իսկ ես ասեմ ցնա. այլ մի ակնունիցիս 'ի Քրիստոսէ հաւատալ քեզ ինչս յամ աւուրս կենաց քոց. բայց միայն զմի գանկ վարձ աւուրն քո: Եւ ողջունեալ զմիմեանս լալով, ես յաւուր անկեալ եկի 'ի սենեակս իմ եւ գոհանայի զտեառնէ՝ որ եբեր զնա յառաջին կարգ իւր. եւ տայր Նմա տէր զօրութիւն գործել զայլքան ժամանակս, եւ ոչ պակասէին պէտք իւր: Ահա, որդեակ, պատմեցի քեզ թէ ուստի ճանաչեմ զնա. եւ թէ որպիսի էին քաղաքավարութիւնք Նորա. այլ դու մի ես յաւելցես պատմել ումեք: Զայս պատմէր հայրն Դանիէլ պատմեաց աշակերտին իւր մինչեւ դարձաւ 'ի Թեբայիդայ. եւ մեք լուեալ զայս գրեցաք 'ի փառս Այ: Իսկ

Digitized by Google

իշխել առատն ինչ առնել, որոյ մեծ են գործք նորա և խնամատարութիւն նորա ոչ գոյ բաւ:

ՊԱՏՄԵԱՑ՝ մի ոմն յանապատականաց վասն առն մի մեծատան՝ եթէ հիւանդացաւ ծանր, և երկուցեալ 'ի մահուանէ բաշխեաց յընչից իւրոց երեսուն լիտր դահեկանս աղքատաց. և յորժամ ողջացաւ, ապաշաւէր զգանձն իւր: Այլ ասէ ցսիրելի մի. ողջացայ՝ որ ցրուեցի զգանձն իմ յաղքատս: Այլ ասէ սիրելին. մանաւանդ խնդա և գոհացիր զԱյ, որ ընկալաւ զողորմութիւն քո և ողջացոյց զքեզ: Այլ նա ասէ. դեռ մահն իմ ոչ էր հասեալ, և ընդ վայր կորուսի զերեսուն լիտր դահեկանսն: Ասէ ցնա սիրելին. եկ երթիցուք յեկեղեցին 'ի միասին, և ասա առաջի Այ, թէ ոչ եմ ես այն որ զողորմութիւն արարի, այլ սա. և ցոյց զիս ձեռամբ առաջի Այ, և առ դու յինէն զերեսուն լիտր դահեկանսն: Այլ նա խնդութեամբ յանձին կալաւ. և առեալ սիրելին զերեսուն լիտր դահեկանսն՝ գնացին 'ի միասին յեկեղեցին: Այլ անմիտ մեծատունն կալեալ զձեռանէ սիրելւոյն՝ համբարձ զաչս իւր յերկինս առ Ած և ասէ. չեմ ես որ զողորմութիւնն արարի, այլ սա սիրելիս իմ. և ասաց զդանունն: Այլ յորժամ էառ զգանձն և ելին յեկեղեցւոյն, անկաւ մեծատունն և մեռաւ: Այլ ասեն ոմք անդ համ-

արդ. զարմանալ պարտ է ընդ խորին խնամատարութիւնն Այ, զի ամենայն դժուարինք դիւրինք են նմա, և թէ որպէս յանկարծակի բարձրացուցեալ զեւրոժի մարդասիրութբ՝ և 'ի միում պահու խոնարհեցոյց ողորմութբ: Արդ. աղօթեսցուք և մեք խոնարհիլ առա, որպէս զի գտցուք ողորմութիւն յահեղ աւուրն Քի Այ մերոյ.

1 Պատմէր զայս ոմն 'ի հարանցն՝ եթէ էր ոմն յԱղեքսանդրիա այր մեծատուն յոյժ. սա հիւանդացեալ երկեաւ 'ի մահուանէ, և հանեալ ոսկի լտերս երեսուն ետ աղքատաց և ողջացաւ: Եւ իբրև ետես զինքն 'ի մէջ խոր առողջութեն, սկսաւ ապաշաւել զբարի գործն զոր արար: Եւ էր նորա բարեկամ ոք այր հաւատարիմ և սիրելի, նմա պատմեաց զխորհուրդս իւր՝ եթէ դժուարիմ ընդ գործն այն զոր գործեցի: Նա ասէ ցնա՝ եթէ ընդ այդ տաղտկել ուրախանալ պարտ է քեզ, զի Քս ընծայեցեր զայն ամենայն: Իսկ նա ոչ լսէր և ոչ անդորր 'ի միտ: Ասէ ցնա բարեկամն այն. ահա ունիմ ես պատրաստ երեսուն լիտր ոսկի, եկեսցես ընդ իս 'ի տաճար սրբոյն Մինայի, և ասա անդ առաջի սրբոյն՝ ոչ եմ ես որ արարի զողորմութեն զայն, այլ սա իցէ. և կալ յինէն զոսկին քո: Եւ կամակից եղեալ յօժարութբ գնաց նա առաջի սրբոյն Մինայի, և ասաց այնպէս, և էառ զոսկին իւր: Եւ իբրև ելանէր յեկեղեցւոյն, անկաւ առ դրանն և մեռաւ: Եւ տեսեալ զայս ամենեցուն՝ ահաբեկ եղեն և զարհուրեցան: Ցայնժամ ընտանիքն նորա որ մեռաւն՝ ասեն ցայն որ էր տէր ոսկւոյն. առ 'ի քեզ զգանձ քո:



Digitized by Google

դիպեցան. առ զքո զանձդ, զի զաղքատութիւն շահեցար և զքո զդահեկանսդ: Եւ նա ասէ. քաւ լիցի ինձ զայդ առնել. ես զայն ո՛չ եառու, այլ յիս ոչ առից: Եւ հրամայեաց ՚ի տեղւոջն յայնմիկ, և բաշխեցին աղքատաց զամենայն. և յայժ գովեցին ամենայն հարքն և օրհնեցին զնա որ զաղքատութիւնն գնեաց:

ԱՂԲԱՅՐ՝ ոմն գնաց առ միայնակեաց մեծ. և իբրև ելանէր անտի, ասէ ցմիայնակեացն եղբայրն. Թողութիւն արա ինձ, հայր, զի խափանեցի զքեզ ՚ի կանոնէ քումմէ: Պատասխանի ետ ծերն և ասէ. իմ կանոնն այն իցէ, զի թէ հանգուցից զքեզ և բարի մտօք արձակեցից:

ՄԻԱՅՆԱԿԵԱՑ ոմն բնակէր մերձ ՚ի հասարակաց վանս, բազմազան առաքինութեամբ քաղաքավարէր: Եւ եղև երբեմն զի եկին օտար եղբարք ՚ի վանս յայն, և ժողովեցան առ նոսա ամենայն եղբարքն սիրել զնոսա. բռնադատեցին զծերն ուտել ընդ նոսա նախ քան զժամն: Եւ զկնի այսորիկ ասեն եղբարքն ցնա. արդ ո՞չ տրտմե-

Իսկ նա ասէ ցնոսա. քաւ լիցի, մի արասցէ զայդ տէր. զի ես ընծայեցի զայդ Աստուծոյ, և այդ գործ իւր է. և եթէ կամիք զբարին զի մի խղճիւ տանջիցիք, տուք և դուք ողորմութիւն աղքատաց զայդ: Իսկ նոքա իբրև տեսին զհաստատութիւն մտաց նորա, որ յամենայն սրտէ ուրախացեալ էր վասն տալոյն զոսկին իւր ՚ի գին ողորմութեան նորա որ մեռաւ, և զանկալի ամենեցուն եցոյց զաւուրքն որ վասն աղքատաց և կարօտելոց. յայնժամ և նոքա յորդորեալ ՚ի բարին և լաւագոյն նախանձ առաքինեալ՝ ետուն և նոքա ողորմութիւն աղքատաց ըստ բանի խրատու նորա: Արդ այս այսպէս եղելոյ ՚ի մէջ բարի արանց խնդիր եղեալ հարցանէին զմիմեանս վասն յետոյ երեւման լեալ ոսկւոյն՝ զոր բաշխեցին աղքատաց վասն հոգւոյ մեռելոյն այն զոր ծախեալ էր վաճառելով զբարի գործս իւր՝ թէ ընկալա՞ւ ինչ որ վասն նորա ողորմութիւնն՝ եթէ ոչ: Յայնժամ ժամանակի երեւեալ հրեշտակ տեառն մտաւ ՚ի հոգեւոր արանց և ասէ ցնա. և այն եւս որ յետոյ բաշխեցաւ աղքատաց, նմա համարեալ եղև վարձատրութիւնն՝ որ զառաջինն վաճառեալ գնեաց վասն սիրոյ ողորմութեանն, և երկրորդին եւս պատճառ և սկիզբն եղև բաշխմանն. քանզի սուր գուցէ՝ ասաց. և նոցա եւս բարի առնէ տէր ընտանեաց վաճառողին զբարութիւն, քանզի հետևեցան կամակցութեամբ բանից խրատու տան աղքատասիրին այն և բաշխեցին սիրով:

Եղբայր ոմն գնաց առ միայնակեաց մեծ. և իբրև ելանէր անտի, ասէր ցմիայնակեացն եղբայրն. Թողութիւն արա ինձ, հայր, զի խափանեցի զքեզ ՚ի կանոնէ քումմէ: Պատասխանի ետ ծերն և ասէ. իմ կանոնս այն իցէ զի թէ հանգուցից զքեզ և բարի մտօք արձակեցից: Իսկ լուեալ եղբայրն ասէ. ո՛ որչափ մեծ իցէ և արդեօք սիրել զեղբայրն և ընդունել զեկեալ հիւրն: Զի մեծ ծերունիս այս այսպէս մեծարեաց եցոյց զեղբայրսիրութեան արգասիս. և գնաց շինեալ և խրատեալ:

Digitized by Google

ցար, հայր։ Իսկ նա ասէ. իմ տրտմութիւն՝ եթէ երբեք արարից զկամս իմ*։

ԱՍԱՑ[1] ծեր ոմն. 'ի գալ հիւրին կամաւոր պահքն լուծցին. զի պահքն մերովի է, իսկ սէրն պատուիրանին. և պահքն միշտ ընդ մեզ է, և նոքա չեն յար ընդ մեզ. և չէ պարտ մանկանց առագաստի սուգ առնել, զի հիւրովն Քս ընդ մեզ է, վասն որոյ պարտիմք սիրել զնա։

ԱՍԷԻՆ[2] վասն ումեմն ծերոյ յԱսորիս՝ եթէ բնակեալ էր 'ի ճանապարհի անապատին և այս էր գործ նորա. յորժամ գայր ոք յանապատէն միայնակեաց, առնէր նոքա հանգիստ։ Եկն առ նա միայնակեաց մի, և արար նմա հանգիստ ըստ սովորութեան, և ոչ կամէր ճաշակել ասելով՝ ես պահեմ։ Եւ տրտմեալ ծերոյն ասէ. այս է իմ գործ համապազ. բայց աղաչեմ զքեզ, եկ յաղօթս կացցուք, և որ խոնարհեցուցանէ ընդ ինքեան զծառս՝ զայնր

* Այլ օրինակ գտանի 'ի հին Թարգմանութեան. Ծեր ոմն յառաջ քան զժամ ճաշոյն հիւրս ընծայեաց՝ ուտելով և ինքն։ Եւ ասեն ցնա. հայր, ոչ տրտմեցար։ Եւ նա ասէ. իմ տրտմութիւն այն է՝ թէ զկամս իմ արարից և ոչ զնոյն։

1 Ասաց մեզ հայրն Կասիանէ՝ եթէ եկաք 'ի Պաղեստինոյ և գնացաք յԵգիպտոս առ հայրս ոմանս, և նոքա բարւոք հիւրընկալան զմեզ. իսկ մեք հարցաք նոցա՝ եթէ ընդէ՞ր 'ի գալ օտար եղբարցն ոչ պահէք զկարգ պահոց ձերոց որպէս 'ի Պաղեստին պահեն։ Իսկ ծերն պատասխանի ետ մեզ այսպէս. պահք հանապազ ընդ մեզ են, այլ ձեր ընդ մեզ կալն հանապազ անկար իցէ. և գործեալ պահք թէպէտ և բարի է և կարևոր, այլ մեր է և ընդ կամաւ մերով կատարի. իսկ սէրն պատուիրանն Այ իցէ, և բանութեամբ [illegible] 'ի մէնջ զործս այս. և յորժամ զձեզ ընդունիցիմք, յայնժամ ընդ ձեզ զՔս ընդունիմք, վասն այսորիկ պարտական եմք բազում սիրով հանգուցանել զձեզ. իսկ յորժամ յուղարկեմք զձեզ, կարող եմք կալնուլ զկարգս պահոց. զի ոչ են կարող մանկունք առագաստի պահել յորժամ փեսայն ընդ նոսա իցէ. իսկ յորժամ վերացի փեսայն, յայնժամ պահեսցեն։

2 Ասէին զծերոյ ումեմնէ՝ որ բնակէր յԱսորիս 'ի վերայ ճանապարհի անապատին, և այս էր գործ նորա. զի յորում ժամու գայր առ նա ոք կրօնաւոր յանապատէն, բարի մտօք կերակրէր զնա։ Եւ եղև երբեմն զի եկն առ նա միայնակեաց մի, և նա պատրաստեաց նմա կերակուրս ինչ. բայց եկեալ եղբայրն ոչ կամեցաւ ճաշակել բնաւ, այլ ասէր. ես 'ի պահս սովորեալ եմ։ Իսկ ծերն տրտմեալ ասէր. մի արհամարհեր զաղքատութիւն իմ և մի զանց առներ զծառայս քումեմն, աղաչեմ։ Եւ հիւր եղբայրն ոչ կամէր բնաւ լուծել զմիտս 'ի պատճառս պահոց, յորում ունէր սովորութիւն։ Իսկ ապա ծերն որ ոչ բնաւ լուաւ աղաչանաց իւր, ասէ ցնա. եկ աղօթեսցուք, եղբայր, և թէ լիցի յաղօթելն քո՝ ծառն 'ի քեզ խոնարհեսցի՝ պահեսցուք, իսկ եթէ ընդ իս խոնարհեսցի ծառն՝ կերիցուք սէր. քանզի էր անդ ծառ

Digitized by Google

զհետ երթիցուք: Իսկ եդեալ ծունր միայնակեցին՝ ոչ ինչ եղև. իսկ օտարականին եդեալ ծունր՝ խոնարհեցաւ և ծառն ընդ նմա, և կատարեցան կամք իւրեանց, և 'ի վերայ եղելոցն գոհացան զնա*:

ՄԱԿԻՒՆ զրուցանէր հայրապետէն զՅովհաննէ թէ այնպիսի եղև ողորմած, որ ասէին թէ առաւել քան զբնութի մարդոյ: Իսկ յորժամ լսէր թէ ողորմած ոք է, կոչէր առ ինքն և հարցանէր ասելով. վասն այ՝ զիարդ եղեր ողորմած, 'ի բնութենէ՞ թէ 'ի ճարակէ մտաց: Քանզի՝ ասէր երանելին՝ թէ ոչ են այնքան վարձք որ բնութեամբն է ողորմած կամ լուռ կամ հեզ կամ զգաստ կամ սակաւապէտ, զի այս պարգև այ է որպէս և ամենայն, այլ որք նեղեն զկամս և զխորս իւրեանց և բռնաւորութբ զառաքինութիւն գործեն, և վասն այսորիկ ասէ տէրն՝ բռունք յափշտակեն զարքայութիւն երկնից: Իսկ իբրև հարցանէր, ոմանք պատկառելով ծածկէին և ոմանք ասէին: Աստի ումեմն ասացեալ՝ եթէ զիարդ եղեր ողորմած, և նա ասէ. հաւատա. տէր, ոչ ինչ տամ ումեք և ոչ առնեմ բարի ինչ, սակայն զոչինչն զոր տամ զոր ած և աղօթք ձեր պարգևեն, այսպէս սովորեցի. և յառաջին յոյժ անգութ և անվշտակից, և յետոյ անկեալ յեւութենէն՝ նեղեցայ յոյժ, և սկսան խորհուրդք

ամծ: Եւ հաւանեցաւ առնել զայն: Եւ խոնարհեալ զծունր իւր միայնակեացն այն անապատական, և ոչ եղև ինչ նշան. իսկ մինչ խոնարհեցոյց զծունկսն օտարականն այն, և ծառն և ս ընդ նմա խոնարհեալ եդի մինչև ցգետին, մինչ հիացեալ զարմանայր եղբայրն վասն առաքինութեն ծերոյն. որում և ած մեղայեաց խոնարհեցուցանելով զծառն. վասն այսորիկ հաւատաց միայնակեացն ծերոյն օտարականի, և հաւանեալ նմա կատարեցին զակերն, 'ի գնաց ողջունեալ զնա և չքնեալ 'ի նմանէ:

* Համառօտք օրինակ մի հին Թարգմանութեան. Ծեր ումն բնակեալ էր յԱսորիս 'ի վերայ ճանապարհի և ամենայն եկելոցն առնէր ընդունելութի: Եկն առ նա անապատական ումն որ ոչ ուտէր ընդ նմա վասն պահոց կամաւորաց: Եւ նա ասէ. կրկնեսցուք ծունր. թէ ընդ ում խոնարհի ծառս այս 'ի ծունր, այն է բարի: Եւ խոնարհեցաւ ընդ հիւրասիրին, և նա հաւատաց նմա:

1 Աւօրինակ է պարզեալ 'ի հին Թարգմանութեան. Այսոց երանելին Յոհաննէս հայրապետն Աղեքսանդրու՝ թէ որ բնութբ է ողորմած կամ հեզ կամ խոնարհ կամ սակաւապէտ, ոչ է գովելի. զի այս այ է տուրք. զի որ նեղէ զբնութիւնն և զկամսն, այն ընդ գովեստիւ է, զի տէրն ասաց՝ թէ բռունք յափշտակեսցեն զարքայութի երկնից: Արդ հարցանէր զբազումս՝ թէ զիարդ եղեր ողորմած. քանզի ինքն առաւել քան զբնութի մարդոյ վերագոյն յոյժ առաքինութեամբ:

իմ առնել ցիս՝ արդարեւ եթէ էիր ողորմած, ոչ թողոյր զքեզ ա̃ծ։ Եւ խորհեալ յանձին՝ տայր աւուրն հինգ փող աղքատաց. եւ իբրեւ գայր տալ, 'ի նոյն սատանայ արգելոյր զնա առնելով. Է՛ տառապեալ, արդարեւ այս հինգ փողս բաւական էին տանն գին բանջարոյ կամ բաղանեաց։ Եւ ապա որպէս յորկոր՝ զաւակացն հատանէի, ոչ ինչ տայի ումեք։ Իբրեւ տեսի թէ յաղթիմ յախտէ անտի, ասեմ ցորդեակն իմ զի գողանայցէ հինգ փող դրամ յինէն եւ տացէ ողորմութիւն, քանզի սեղանաւորք էաք։ Իսկ նորա եւս քարի արարեալ՝ սկսաւ գողանալ տասն տասն, գոյ ժամ եւ դրամակէս։ Եւ իբրեւ տեսի եթէ օրհնեցաք, սկսաւ գողանալ երեք մասն դահեկանի եւ տալ։ Իսկ իմ զարմացեալ ընդ օրհնութեանցն ա̃յ՝ ասեմ ցնա. արդարեւ, որդեակ, կարի օգուտ եղեն այն հինգ փողն, բայց այսուհետեւ թող զի տասն տասն տացես։ Ասէ ցիս մանուկն ժպտելով. երթ յաղօթս կաց 'ի վերայ գողութեանց իմոց, եթէ ոչ՝ այսօր ոչ ունէաք հաց ուտելոյ. ապա եթէ իցէ գող արդար, առաջինն ես եմ, քանզի դրամակէս եւ տրմէս գողանայի եւ տայի կարօտելոց։ Եւ 'ի նորա հաւատոցն սովորեցայ եւ ես տալ յիմ անձնէ։ Իսկ հայրապետին զարմացեալ ասէր. աւաղ, եղբայր, բազում գիրս հարանց ընթերցեալ եմ, այդպիսի ինչ չեմ գտեալ։ Եւ օրհնեալ զնա արձակեաց։

ՄԻԱՅՆԱԿԵԱՑ ոմն անտիոքացի գնաց 'ի սուրբ քաղաքն Երուսաղէմ աղօթել. եւ իբրեւ եհաս անդ, պակասեաց պէտք մարմնոյ նորա, եւ նստեալ տրտմէր եթէ զի՞նչ արարից. եւ 'ի յուզմանէ սրտին նիրհեաց։ Եւ տեսանէ զՅ̃Ս որ ասէր ցնա. երթ առ կանոնաւորն սրբոյ յարութեան եւ ասա ցնա՝ թէ Յ̃Ս առաքեաց զիս առ քեզ, տուր ինձ դահեկան մի եւ առնեմ քեզ ձեռնագիր. զի յորժամ գայցէ տէր Յ̃Ս, հատուսցէ քեզ զայն։ Եւ զարթուցեալ միայնակեացն աղօթեաց, եւ հաւատացեալ բանին, եւ եկեալ ասէ ցկանոնաւորն որպէս եւ ասացն Յ̃Ս։ Եւ նա ասէ. երբ գայ Յ̃Ս հատուցանել զդահեկանն։ Եւ միայնակեացն ասէ. որպէս լուայ ասացի, դու որպէս կամիս արա։ Յայնժամ ասէ կանոնաւորն. արա զձեռնագիր։ Եւ նստաւ միայնակեացն գրեաց այսպէս. Ես Յովհաննէս

1 Լաւքնն յորկորոյ. Երկրորդ Բաժանմունեանն զորկոր։

յՄոնտիքեայ եկեղեցւոյն առի 'ի քէն Ստեփաննոսէ քահանայէ եկեղեցպանէ որոց յարութենդ դահեկան մի պէտք եղելոյ ինձ. գրեցի զձեռնագիրս զայս, զի յորժամ գայցէ տէր Քս՝ հատուսցէ քեզ զայս։ Եւ խոր առեալ զդահեկանն գնաց։ Եւ 'ի գիշերին յայնմիկ տեսանէր կոնտամանն զՔս յանուրջս, որ ասէր ցնա. կա զդահեկանըն եւ տուր զձեռնագիր միայնակեցին։ Եւ նա դժուարանայր ընդ խորսն ասելով. նա ասաց ինձ՝ թէ Քս զայս հատուսցանէ ինձ զայն։ Պարձեալ ասէր. ես եմ Քս, կա զդահեկանս եւ տուր զձեռնագիրն, մինթէ աւելի ինչ կամիցիս առնուլ, աւասիկ քեզ։ Եւ զարթուցեալ դողմամբ փութանայէս արձակեաց խնդիր միայնակեցին եւ ասէ. ուր եւ գտանիցէք զնա՝ ածէք այսր։ Եւ գտեալ ասեն ցնա. եկ կոչէ զքեզ կոնտամանն։ Եւ նա ասէ ընդ միտս իւր. ուրեմն զղջացաւ եւ առնուլ կամի զդահեկանն։ Եւ երթեալ պատկառելով, իբրեւ ետես զնա կոնտամանն ասէ. դու աբբայ, առ իս ճաշեա այսօր։ Եւ նա վասն դահեկանին կարի կասկածէր. եւ 'ի ճաշելն ասէ կոնտամանն. տէր աբբայ, առ այլ դահեկան յինէն եւ տուր ինձ այլ ձեռնագիր։ Եւ նա ասէ. թողութի՛ արա ինձ, զի այլ ոչ պիտոյ, բաւական է այս ինձ։ Եւ նորա ասացեալ զերազ գիշերոյն պատմէր զնա եւ ասէր. առ տասն լիտր ոսկի եւ արա քեզէն ձեռնագիր։ Ասէ միայնակեացն. ոչ առնեմ այլ ձեռնագիր յիմոց ձեռացս, զի ոչ ասաց ինձ տէրն իմ առնուլ ինչ աւելի. բայց եթէ հաւատաս Քս, բաշխեա աղքատաց եւ որ տանեն քեզ ձեռնագիր։ Եւ զարմացեալ ընդ մտաւոր խոստովանութեան ամենեքեան՝ տային փառս արդար դատաւորութեանն նր։

# ՄՆԱՑՈՐԴՔ

## յերկրորդ թարգմանութենէ

Ասաց հայրն Ապողոն վասն ընդունելութեան զեղ-
բարցն՝ թէ պարտ է զեկեալ եղբարսն ընդունել և եր-
կիր պագանել, որպէս և գրեալ է՝ եթէ տեսեր զեղբայր
քո, տեսեր զԱծ քո. և զԱբրահամ եւս ունիմք վկայ
այսոցիկ, որ ընդունէր և երկիր պագանէր եկելոցն. և
Ղովտ զնոյն առնէր, և վկայի յորժամ ընկալաւ ըզ-
հրեշտակսն։

Ասաց երանելին Եպիփանէ՝ եթէ դիւրաւ վաճառէ
Ած զարքայութի որոց կամին գնել փոքու ինչ հացիւ
և կամ բաժակաւ ցրտոյ ջրոյ և միով փողիւ, և ոչ իբ-
րև զմարդ ՚ի ծածուկ հատուցանէ զփոխն. այլ զառնուլն
՚ի ծածուկ առնու զփոքր փողն, իսկ զհատուցումն առա-
ջի հրեշտակաց և հրեշտակապետաց և հոգւոց արդարոց
տայ զփոխարէնն անսպառութեամբ բարեացն։ Արդ ով պատ-
մեսցէ զզօրութիւնս տեառն և լսելի արասցէ զգովու-
թիւնս նորա։

Ասէին վասն հօրն Թէոդորէ Փերմեցւոյ աշակերտ-
քըն իւր՝ եթէ յորժամ աւերեցաւ Սկիտէ, եկն նա
՚ի Փերմէ բնակել անդ. և էր նա ծերացեալ և տկարա-
ցեալ, և բերէին նմա կերակուրս բազումս. և զոր բե-
րէր առաջինն՝ տայր երկրորդին զայն առաջի բերածն.
և այսպէս զբերեալն զամենայն զայլոց՝ այլում տայր, իսկ
որ դիպէր նմա ՚ի ժամ կերակրելոյն՝ զայն ճաշակէր ա-
ռանց խտրութեան ընդ երեկս։

Տուեալ եղև երբեմն պատուէր յերիցանցն ՚ի Սկի-
տէ պահել զշաբաթն ողջոյն. և եկին եղբարք ոմանք
յԵգիպտոսէ առ հայրն Մովսէս, և արար նոցա փոքր

Digitized by Google

ինչ խաշեալ։ Արդ և տեսին մերձաւորքն նորա ըղձութս, պատմեցին երիցանցն և ասեն՝ եթէ հայրն Մովսէս եղոյծ զհրամանս ձեր. և արար իւր խաշեալ։ Իսկ նոքա ասեն. յորժամ գայ յեկեղեցին, մեք ասասցուք նմա։ Արդ եկն շաբաթ և տեսին երիցունքն զմեծ քաղաքավարութիւն ծերոյն, քանզի լուեալ իմացան զհիւրընկալութեան պատճառն, ասեն առաջի ամենայն ժողովրդեան եղբարցն. հայրն Մովսէս եղոյծ զօրէնս մարդկան, և կատարեաց զօրէնս այ։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ցհայրն Պիմէն և ասէ ցնա. եթէ տացեմ եղբարցն հաց սակաւ մի և կամ այլ ինչ, դևք աղտոտեն զմիտս իմ և ասեն ցիս՝ եթէ յաչս մարդկան արարեր զայն։ Ասէ ցնա ծերն. թէպէտ և վասն մարդահաճութեան արասցուք, մի ևս դադարեսցուք 'ի տալոյ եղբարցն զպէտսն. [illegible] ասէ զառակս զայս։ Երկու էին մշակք 'ի միում քաղաքի. միոյն սերմանեաց և հնձեաց սակաւ և անսուրբ, իսկ միւսն հեղգացեալ բնաւ ոչ սերմանեաց և ոչ հնձեաց, և եկն սով մեծ 'ի վերայ նոցա. արդ ո՞ր ոք 'ի նոցանէ գտանէ կերակուր։ Ասէ եղբայրն. որ գործեաց սակաւն։ Ասէ ծերն. այսպէս և մեք սերմանեսցուք սակաւ, թէպէտ և ոչ իցէ սուրբ, զի մի սով սատակեսցէ զմեզ։

ԵՂԲԱՅՐ ոմն գնացեալ առ հայրն Պիմէն յերկրորդումն շաբաթու պահոցն, և ասաց նմա զխորհուրդ իւր. և դիւրեցաւ նա հանգստեան կերակրոց, և ասէ ցծերն. փոքր միւս ևս արգելէի 'ի գալոյ աստ։ Ասէ ցնա ծերն. ընդէ՞ր, եղբայր։ Ասէ եղբայրն. ոչ կարծէի բանալ ձեզ զդուռն 'ի սակս պահոցն։ Ասէ ցնա ծերն. մեք ոչ ուսաք փակել զդուռն փայտի, այլ ևս առաւել զդուռն լեզուի։

ԵՀԱՐՑ հայրն Օնեղորէ փերմեցի ցհայրն Պամբոյ և ասէ ցնա. զի՞նչ արարից, հայր, ասա ինձ։ Ասէ ցնա ծերն. Օնեղորէ, գնա և արա ողորմութիւն առ ամենեսեան, զի ողորմութիւն ունի համարձակութիւն առաջի այ յամենայնի. և թէպէտ և 'ի ցոյց մարդկան լինիցի ողորմութիւն, բարի է և լաւ, քանզի յետոյ գտցէ նոր 'ի հաճութիւն այ։ Ասեն զի 'ի նմանէ օգտեցեալ աղքատաց, հանգստեան որք նովաւ հանգչին՝ լինել 'ի նմանէ կարեկցութեամբն խորհրդոց, քաղցրացուցանէ զմիտս ողորմութեամբ 'ի վերայ նորա, և 'ի հաճոյս այ փոխէ զգործս նորա։

Digitized by Google

ԱՍԵՆ զհօրէն Արապիոնէ՝ եթէ դիպաւ նմա յԱղեքսանդրիա մերկ ոմն՝ որ էր սաստկապէս սառեալ, և խորհեցաւ և ասէ. զիա՞րդ ես որ ճգնաւոր կարծիմ զգեցեալ եմ, և աղքատս այս՝ ևս առաւել թէ ՚ի Քս այսպէս մերկ և ցրտին շրջի, և ես մարդասպան կոչիմ թէ մեռցի սա։ Եւ առժամայն մերկացեալ զհանդերձս իւր ետ ցաղքատն, և ինքն նստաւ մերկ և եդ զաւետարանն իւր ՚ի ներքոյ անթի իւրոյ։ Եւ տեսեալ զնա ոմն ՚ի ծանօթից իւրոց ասէ ցնա. հայր Արապիոն, ո՞վ մերկացոյց զքեզ։ Եւ նա ցուցեալ նմա զաւետարանն ասէ. սա մերկացոյց զիս։ Եւ յարուցեալ անտի ետես զայլ ոմն զոր կալեալ քարշէին և ձգէին և խնդրէին զպարտս, և նա ոչ ունէր զի հատուսցէ զպարտսն. յայնժամ գթացեալ ետ նմա զաւետարանն, զի հատուսցէ զպարտսն. և ինքն գնաց ՚ի սենեակ իւր մերկ։ Իբրև ետես զնա աշակերտ իւր այնպէս, ասէ ցնա. ո՞ւր իցէ, հայր, պարեգօտ քո։ Ասէ ծերն. առաքեցի յառաջագոյն ուր առաւել պիտոյ եղիցի։ Ասէ եղբայրն. ո՞ւր իցէ և փոքրիկ աւետարանն այն։ Ասէ ծերն. թող տուր, որդեակ, զայն զոր միշտ ասէր ցիս եթէ վաճառեցէք զինչս ձեր և տուք ողորմութիւն աղքատաց, նոյն զինքն ես վաճառեցի և ետու նոցա, իբրև զի առաւել համարձակութիւն գտից յաւուրն դատաստանի։

ՊԱՏՄԷՐ ոմն ՚ի ծերոցն՝ եթէ էր ոմն կրօնաւոր հրաժարեալ յերկրէ, և թողեալ էր նա ՚ի գիւղ զկինն իւր և զդուստր միամօր՝ որ էր ՚ի կարգ երախայից, այլ քրիստոնեայ ևս. և մեռաւ դուստրն այն յերախայութեան կարգի։ Եւ բաժանեաց հայր աշխարհին յերիս մասունս զամենայն ինչս իւր, և բաժանեաց աղքատաց վասն հոգւոյ նորա զմի մասն ընչիցն, և ապա զմի մասն ետ կնոջն. և ապա զմասն իւր զամենայն ետ աղքատաց վասն դստեր իւրոյ։ Եւ եկն առ նա ձայն յերկնից որ ասէր. մի տրտմիր վասն դստերն քո, զի ընկալաւ Ած զողորմութիւն քո և ընդ մկրտեալսն դասեաց զնա։ Իսկ նա ոչ հաւատաց ձայնին։ Դարձեալ ասէ ցնա ձայնն. ահա տես զի ոչ է նա ՚ի տապան երախայից։ Յայնժամ փորձելով զձայնն գնաց ՚ի գերեզմանն դստերն և եբաց զտապանն և ոչ եգիտ զնա անդ, զի փոխադրեաց զնա Ած վասն ողորմութեան հօրն նորա։ Եւ հաւատաց ծերն և

գոհանայր զՔրիստոսի և ասէր. տեսէք որչափ զօրաւոր է ողորմածութիւնն և հաճոյ և սիրելի Աստուծոյ, և երանելի առնէ զմարդն զայն որ ունի զնա։

ՊԱՐԶԵԱԼ յայլում ժամու այլ ոմն իշխան զօրձաւ յԱղեքսանդրիոյ 'ի Կոստանդնուպօլիս, և դիպաւ ումեմն առն որ կոյր էր 'ի կողմանս Տիւրոսի և ոչ ունէր առաջնորդ. որ և իբրև լուաւ զձայն ոտից երիվարացն, անկաւ յերկիր և խնդրէր ողորմութիւն։ Իսկ մագիստրոսն ոչ մոռացաւ զնա, այլ ետ ցնա դահեկան մի և գնաց։ Եւ ասաց նմա կոյրն. հաւատամ յԱստուած զի ողորմութիւնս այս փրկեսցէ զքեզ 'ի մեծ փորձութենէ։ Եւ առեալ իշխանն զաղօթս կուրին, գնաց ուրախութեամբ և եմուտ 'ի քաղաքն Տիւրոս։ Եւ էր անդ այլ ոմն իշխան՝ որ գնայր և նա 'ի Կոստանդնուպօլիս, և տեսեալ զնա ուղեկից իւր ուրախ եղև, և մտեալ 'ի նաւ երկոքին գնային 'ի միասին։ Իսկ 'ի գիշերին յայնմիկ՝ յորում էր հողմ սաստիկ և խռովէր զծովն և զնաւն, մագիստրոսն նեղեալ եղև 'ի կարեաց ինչ մարմնոյ, և գնաց 'ի կողմն նաւին թափել զյաւելուածս որովայնի. յայնժամ հարեալ հողմն զնա՝ ընկէց 'ի ծովն, և նաւավարքն լուան զձայն անկանելոյն. այլ զի մութն եւս էր, և զի ստիպով եւս գնայր նաւն, և ոչ իմացան ճարտար և ոչ ինչ կարացին օգնել նմա, և թողին զնա և գնացին։ Եւ ունէր զիշխանն ալիքն 'ի վերայ ծովուն և ալէկոծէր զնա, այլ ոչ եկուլ և ոչ եսպան մինչև ցառաւօտն. և նաւորդքն կարծէին թէ առժամայն մեռաւ, այլ նա ողորմութեամբն Աստուծոյ կայր կենդանի մինչև ցմիւս օրն։ Եւ եկեալ ընդ այն յերկրորդում աւուրն այլ նաւ, և տեսին զնա կենդանի նստեալ 'ի վերայ ալեացն, և առին զնա 'ի նաւն ընդ իւրեանս, և մտաւ յաւուրն այն նաւն 'ի քաղաքն՝ ուր առաջին նաւն մտեալ էր, յորում էին և զինուորքն իշխանին։ Իսկ նաւավարք երկոցունց նաւուցն ելեալ 'ի քաղաքն տեսին զմիմեանս 'ի գնել զպէտս 'ի կրպակի, և յիշեալ մի նաւավարն զիշխանն յոգւոց եհան և ասէ. զինչ եղև կամ որպէս պատահեցաւ ողբալին այն 'ի պահուն այնմիկ զի անկաւ 'ի ծով։ Իբրև լուաւ որ յերկրորդ նաւին էր՝ զբանն զայն, ասէ. մեք գտաք զնա կենդանի և ողջ անձամբ և առաք 'ի նաւն, և արդ աստ է ընդ մեզ 'ի նաւի մերում։ Եւ բանս այս ծանուցաւ ամենեցուն,

Digitized by Google

և ուրախութիւն մեծ եղև ամենեցուն. և եկեալ հանին զնա և տարան 'ի նաւս իւրեանց: Եւ պատմէր նոցա իշխանն և ասէր՝ եթէ կոյրն այն որում ետու զշահեկանն՝ նա ունէր զիս և բարձեալ բերէր 'ի վերայ ջուրցն. զոր լուեալ ամենեցուն փառաւորէին զԱծ: Արդ յայտնանի ուսանիմք եթէ ողորմութիւն արարեալ 'ի բոլոր սրտէ՝ ոչ կորիցէ, այլ 'ի ժամանակի նեղութեան հատուցանէ Ած զփոխարէնս որք առնեն զնա, որպէս և վկայեն ամենայն գիրք բանից այ:

ԱՍԱՑ հայրն Պիմէն՝ եթէ որ առնէ զողորմութիւն, պարտ է զի այնպէս խնդութեամբ տացէ՝ իբր թէ ինքն իցէ որ առնու, և զի այսպիսի ողորմութեամբ մերձեցուցանէ առ Ած զորս առնեն:

ԱՍԱՑ ծերն. են մարդիկ որ առնեն բազում բարիս, և 'ի սակաւուն ինչ ուրախացուցանէ զԹշնամին և ըզվարձս ամենայն բարեացն կորուսանէ զոր արարին: Պատմէ զի նստէր երբեմն առ ( )քսիրինքոս՝ քահանայիւ որ առնէր ողորմութիւն. և եկն առ նա այր մի աղքատ և խընդրեաց 'ի նմանէ ցորեան: Ասէ ցնա. բեր զանօթ քո և տաց քեզ: Եւ իբրև եբեր, սկսաւ տեսանել ձեռամբն զկտաւն, իբր թէ մեծ իցէ անօթն, և ամաչեցոյց զաղքատն զայն: Իսկ ես ասացի ցնա. ծախեցեր նմա զցորեանն: Եւ նա ասէ. ոչ, այլ ողորմութեամբ ետու: Եւ ես ասեմ. իսկ դու թէ կամիս ողորմութիւն առնել, մի ամաչեցուցաներ զաղքատն, և եւս առաւել զՏր: Ամենայն ասեմ. մի դժուարութեամբ ոք տացէ զողորմութիւն, ապա թէ ոչ՝ կորուսանէ զվարձս իւր և չօգտի ինչ:

ԵՐՕՆԱՒԲՐ անն էր 'ի Թեբայիդա և առեալ էր չզուհրս յայ, որպէս զի որքան առնէր ողորմութիւնս՝ ոչ պակասէին ինչք նորա, այլ բաւական լինէր ամենեցուն որք գային առ նա. քանզի ինքն զմախաղ իւր ոսկւով և արծաթով և դրամիք, և ելեալ 'ի գիւղս բաշխէր աղքատաց: Իսկ 'ի միում աւուր եղև գործ ինչ սքանչելի. զի գնաց երբեմն ծերն ըստ սովորութեան տալ ինչ աղքատաց ոսկի և արծաթ, և եկն առ նա կին մի աղքատ և պատառատուն հանդերձիւ առնուլ ողորմութիւն. իբրև ետես զնա ծերն այնպէս մերկ և գձուձ զգեստիւ, ողոր-

1 Այլ գիրք յամենայն օրինակս. իսկ լատինն յՈքսիրինքոս ընդ քահանայի ուանին:

մեցաւ նմա յոյժ և կամեցաւ մեծ ինչ տալ նմա. և իբրև եարկ զձեռն 'ի մախաղն հանել, կասեցաւ ձեռն իւր և ոչ կարաց առնուլ շատ, այլ սակաւ ետ նմա ակամայ: Այլ ահա գայր այլ ոմն կին որ ունէր հանդերձս բարեձևս, և նա արկ զձեռն և կամէր սակաւ տալ նմա, և ակամայ բացեալ ձեռն իւրոյն եկաց բազում և ետ նմա ակամայ: Օտարացեալ զայս ծերոյն, եհարց զպատճառին որք էին անդ վասն երկոցունց այնոցիկ կանանց, և ծանուցին նմա, և յիրաւի դատեաց ած զայն. քանզի որ զգեցեալն էր զգեստ բարի՝ զայն յայլոց եւս խնդրեալ էր և զգեցեալ յամօթոյն, քանզի որդի մեծատանց լեալ էր և աղքատացեալ էր: Այլ որ զպատառոտուն զգեցեալ էր հանդերձ, 'ի յայլոց եւս խնդրեալ էր և ըզգեցեալ վասն խնդրելոյն, այլ ունէր ինքն ստացուածս 'ի պէտս իւր: Վասն այսորիկ ած որ յամենայնի է և զամենայն տեսանէ, յայտնեաց զգործս երկոցունց 'ի փառս իւր 'ի ձեռն աղքատասիրին այն մեծ ծերոյն սրբոյ և ողորմածին:

ՀԱՅՐՆ Սիսոյի ասէր. որ ունիցի զանձն օտար միշտ, կատարէ զամենայն գրեալսն: Ասեն ցնա. և որպէս է օտարութի, Հայր: Այլ նա ասէ. որ լռեսցէ բնաւ և ոչ ինչ հոգասցէ զաշխարհիս, այս է օտարութի կատարեալ:

ԱՍԷՐ Հայրն Աստովնէս՝ եթէ գնացաք առ այլ ոմն ծեր, և հիւրընկալեաց զմեզ. և իբրև յագեցաք կերակրով, դարձեալ բանադատէր ուտել մեզ: Իսկ ես զյագեցումն պատմէի, և ծերն ասէր ցիս. ես այսօր վեց անգամ զսեղան եդի ուտեմ ընդ եղբարսն, և դեռ եւս սովեալ եմ. և դու միով կերակրով այնպէս յագեցար մինչ ոչ եւս կարող ուտել:

ԱՅՐ ոմն էր 'ի Հրէաստանի իսրայելացի և մեծատուն յոյժ, և էին ամենայն ինչք նորա ժողովեալ վաշխիւ և ստութք և անիրաւութք և սուտ վկայութք: Սա եկն 'ի միտս և յիշեաց զդատաստանն ած, և գնացեալ առ վարդապետ ոմն ասէ ցնա. աղաչեմ զքեզ, վարդապետ, միտք իմ գերեալ է 'ի հոգոց աշխարհի, և թէ հնար ինչ իցէ՝ բժշկեա զիս, զի մի կորեայց: Իսկ նա ետ ցնա զգիր Սողոմոնի և ասէ. ընթերցիր զսա, և զոր ասէ սա՝ արասցես և կեցցես: Այլ իբրև եբաց զգիրն, եգիտ զայն տեղին որ գրեալն էր՝ եթէ որ ողորմի աղքատաց, փոխ

տայ ինձ ։ Եւ խփեալ զգիրսն եա ցգպիրն և ասէ․ ո՞վ որ գտցէ հաւատարիմ քան զԱ̃ծ, որ և ընդ գլուխսն և ըղ-շահմն հատուցանէ ազգականացն․ ես տաց ողորմութիւն աղքատացն զինչս իմ, զի առից բազմապատիկ ՚ի հաւատարիմ տեառնէ ։ Եւ գնացեալ վաճառեաց զամենայն զոր ունէր և ետ զայն աղքատաց, և ոչ ինչ եթող առ ինքն, բայց միայն դահեկանս չորս վասն պատանեաց մահուն աւուրն ։ Եւ աղքատացաւ այրն յոյժ, և ոչ ոք ողորմէր նմա․ և իբրև էանց ժամն բազում, վշտացեալ նեղեցաւ յաղքատութենէ անտի այրն, և վհատեալ ասէ ՚ի միտ․ գնացից յԵրուսաղէմ առ տէր Ա̃ծ իմ, և դատեցայց ընդ նմա վասն աղքատութեան իմոյ, զի խաբեաց զիս, և ես ցրուեցի զինչս իմ ։ Եւ իբրև ելանէր նա յԵրուսաղէմ, ետես զի արք երկու կռուէին ընդ միմեանս՝ որք գտեալ էին ակն մի պատուական որ կորուսեալն էր ՚ի պատմուճանէն Ահարոնի․ և նոքա ոչ գիտէին թէ զինչ էր քարն, այլ գտեալ էին և կագէին խլել ՚ի միմեանց ։ Եւ իբրև ետես զնոսա կագեալ՝ ասէ ցնոսա․ զի՞ է ձեզ, ընդէ՞ր մարտնչիք ընդ միմեանս ։ Եւ նոքա ասեն․ գտեալ եմք զքարս զայս և ոչ գիտեմք թէ զինչ է, և բաժանել ոչ է հնար, և միոյն ունել ոչ տամք թոյլ, և կռուեալ եմք ։ Եւ նա ասէ ցնոսա․ տուք զդա ինձ, և առէք դուք չորս դահեկանս և բաժանեցէք ձեզ անխռով ։ Իսկ նոքա խնդութեամբ ետուն նմա զքարն, և առին զոսկին և բաժանեցին յիւրեանս և գնացին անտի ։ Իսկ նա առեալ զակն ել յԵրուսաղէմ և եցոյց զնա ոսկեգործին ։ Իսկ ոսկերիչն իբրև ետես՝ ասէ․ ո՞ւր արդեօք գտեալ իցէ քո զակնս զայս․ ահա երեք ամ իցէ այսօր յորմէհետէ մեծ շփոթ իցէ և տրտմութիւն մեծ վասն սորա ՚ի տաճարին ՚ի մէջ քահանայիցն, զի կորեաւ սա ՚ի պատմուճանէն Ահարոնի ։ Այլ արդ արի և տար զդա առ քահանայապետն և հարստանաս դու յոյժ այսու պատճառաւ ։ Եւ գնաց այրն ՚ի տաճարն ։ Իսկ հրեշտակ տեառն երևեցաւ քահանայապետին և ասէ ցնա․ ահա գայ առ քեզ այր մի որ ունի զակն զայն որ կորուսեալն էր ՚ի պատմուճանէն Ահարոնի․ առեալ զայն և տուր նմա ոսկի և արծաթ և ինչս որչափ և վայել է․ և յորժամ տացես, արձակեսցես զնա և ասասցես ցնա․ մի երկմտիր ՚ի սրտի քո և մի անհաւատիր Այ, եթէ որ ողորմի աղքատի՝ փոխ

տայ այ։ Եւ գնաց առ քահանայապետն այրն այն, և ետ զակն 'ի նա և ասէ. յամանց զանհնիկ արանց առի զսա որք գտեալ էին ուրեք։ Ասէ ցնա քահանայապետն. այդ քեզ յայ տուաւ վասն վճարելոյ զպարտսն. արդ առ և տաց քեզ։ Եւ ետ նմա ինչս բազումս որչափ և կամեցաւ, և էառ 'ի նմանէ զակն, և յետոյ ապաշխեաց զնա և ասէ. մի երկմտեսցիս 'ի պատի և մի անհաւատացիս այդ, զի ահա ետ քեզ ած եօթնպատիկ զհատուցումն քո տուաւ, և 'ի յաւիտեան որ գալոցն է՝ զկեանսն յաւիտենից եւս տացես շնորհօքն այ մերոյ։ Եւ ասէ այրն տարապատուքը. ո՜ երանելիքդ նոքա են որք տան փոխ այ Ողորմածի և հաստատողին՝ ողորմելով աղքատաց առանց երկմտութեան և առանց կարծեաց։

ԱՂՔԱՏԻՆ գայրն 'ի Տիբերիոնութն և խնդրէին ողորմութիւն յեղբարցն. Եկն խաբեբայ մի և անկաւ առաջի ծերոյն և ժտէր մեծաւ տառապանօք. և ծերն ոչ ունէր ինչ, բայց միայն երկու մազեղէն, և ետ ցնա զմաւաղայնն և գնաց։ Իսկ դէպ եղև ծերոյն երթալ 'ի քաղաքն, և տեսանէ զխաբեբայն՝ որ ժողովեալ էր ընկերս նմանս իւր, և եկն 'ի գինեվաճառն և ասէ ցնա. խաբեցի զանմիտ միայնակեաց մի և առի զմազեղէնս, առ 'ի քեզ և տուր գինի, զի ուրախ լիցուք։ Եւ իբրև լուաւ զայս ծերն, տրտմեցաւ յոյժ, և գայր յանապատն և կայր տրտում զբաղում աւուրս, և այսպէս ասէր. Թէպէտ զմորթիս զրկեցի, այլ և զհոգիս առաւել եւս կորուսի և չեղէ արժանի կարօտելոց տալ, այլ այն խաբեբայքն՝ որ չարաչար վաճառելոցն զիս մեղակիցս[1] իւր արար։ Ապա յանուրջս տեսանէր այր մի լուսաւոր յոյժ պայծառութբ, որ զգեցեալ էր զմազեղէնսն, և ասէ ցնա. զի՞ ես տրտմեալ, ճանաչես զմազեղէնս զայս։ Ասէ ծերն. այո տէր, իմ իցէ։ Ասէ ցնա տէրն. դու ետուր զմազեղէնս ինձ, և ահա ես եմ զգեցեալ. քանզի յորժամ ետուր զսա յանուն իմ, ես ընկալայ զսա. արդ եթէ կամիս՝ առ զմազեղէնս, իսկ եթէ կամիս՝ առ զանմերկանալի զփառսն։ Եւ զարթուցեալ ծերն ետ փառս այ և ուրախ եղև յոյժ, և պատմեաց միայնակեցացն. և յայնմ հետէ չառնէին ընտրութիւն աղքատաց։

1 Օրհնոյ ի մեղանչականցս։

Digitized by Google

ԱՐԺԱՆԵԼԻՆ Յովհան Աղեքսանդրու հայրապետին ողորմածն էր 'ի Կիպրոս կղզւոյն որդի լեալ Եպիփանու Կիպրոսի եպիսկոպոսապետութեան՝ ոչ առաջնոյն, այլ այլոյ ուրումն: Սա յորժամ եհաս 'ի չափ հասակի, ամուսնացոյց զնա հայրն իւր, և եղեն նորա զաւակք. և անցեալ եղև խաղաղարար, բարի, հեզ և քաղցր, ողորմած, որ և ողորմած անուանեցաւ. և եղև մեռանել ամուսնոյ, Սա լուեալ բարեպաշտ թագաւորն Հերակլէս զհամբաւն վարս նորա, և հրամայեաց ձեռնադրել զՅովհաննէս պատրիարգ Աղեքսանդրու. և նախ քան զնստելն իւր յաթոռն՝ առաքեաց 'ի առ կեանսն զողորմածութիւնն իւրն զհարուստ զաղքատերաւ, և 'ի ձեռնեն իւրում տար ծիթենւոյ պտղալից, և ասէ զՅովհաննէս. Ես զաւառ եմ թագաւորին, և համարձակութիւն ունիմ առ հայրն իմ, և առանց իմ ոչ ոք կարէ մտանել և ելանել զնա. այլ եթէ զիս քեզ բարեկամ առնես, ես զքեզ օրինել առնեմ հօրն իմոյ թագաւորին. և յորժամ կամիս մտցես զքեզ առ նա, և ես առաքեցից զնա յարաժամ. Սա զարթուցեալ գիտաց եթէ ողորմածութիւն է զոր եաեսն: Նորև նստաւ յաթոռ, յայնժամ հրամայեաց առ ժամանակն ժողովել զաղքատս քաղաքին, և գտին եօթն հազարամեակք, և գրեաց զնոսա 'ի կոնդակի և կերակրէր և ըմպեցուցանէր զնոսա. և եթէ մեռանէր ոք 'ի նոցանէ, գրէր փոխանակ նորա այլ աղքատ, և զեթն եօթն հազարսն ոչ նուազեցուցանէր որչափ եկաց յաշխարհի: Սա զայլ անչափ ողորմածութիւն և զուարթութիւնս զոր անէր. սուրբն Յովհաննէս ողորմածն, գրեալ է այլ և 'ի կատարեալ պատմութեան վարուց նորա: Սա այսպէս ասէր առ ած Յովհաննէս՝ եթէ դու տուր և ես բաշխեմ, և ոչ վերջին զտայց պարգևաց քոց 'ի բաշխելն. վասն զի նոցա առաւել տայ, տէր և առաւապաէս զնոսա 'ի խումբ ամենայն բարութիւն, որք առաւապէս և անխնայ տան ըմպաւրս պարգևաց. վասն զի նիւթն տէր առաւատաւորգև է և զառատատուողն սիրէ ողորմութիւնն:

Ասաց ծեր. եթէ կամիս ծանօթ լինել այ, լեր անծանօթ 'ի մարդկանէ:

ԺԳ

# ՎԱՍՆ ՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ

ԵՐԹԵԱԼ՝ երբեմն չորք ոկխւթացիք առ երանելի հայրն Պամբօ, և զգեցեալ էին մաշկեղէն. և պատմեաց իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ զառաքինութիւն ընկերի իւրում մինչև էր նա անդ: Մին 'ի նոցանէ պահէր քաջապէս, իսկ երկրորդն անստացուած էր, և երրորդն սէր ունէր յոյժ. ասէին ցնա և վասն չորրորդին՝ եթէ քսան և երկուս ամս ունի զի 'ի հնազանդութեան կացեալ է ծերոցն: Ասէ ցնոսա հայրն Պամբօ. ասեմ ձեզ՝ զի առաքինութիւն սորա մեծ է քան զամենեցուն. զի իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ զորմէ առաքինութիւն և կամեցաւ՝ բռնան եհար, իսկ սա զիւր կամսն 'ի բաց որոշեաց և զայլոց զկամս կատարեաց. արք այսպիսիք խոստովանողք են եթէ պահեսցեն մինչև ցվախճան:

ԵԿՆ.² եղբայր ոմն աշխարհական առ հայրն Սիսոյ Թեբայեցի, կամեցեալ լինել միայնակեաց: Իսկ հարցեալ ցնա ծերոյն եթէ կայ ինչ նորա յաշխարհի, և ասէ ցնա. է իմ միամօր որդեակ: Պատասխանի տուեալ ծերոյն և ասացեալ՝ երթ ընկեա զնա 'ի գետ և ապա կարես լինել միայնակեաց: Իսկ նորա իբրև գնաց այնմ զի

¹ ԳՆԱՑԻՆ երբեմն ծերք չորք 'ի Սկիտէ, որ զգեցեալ էին մաշկեակս, առ հայրն Պամբոյ, և պատմեցին ծերոյն իւրաքանչիւրն զառաքինութիւն ընկերի իւրոյ. զի մինն պահէր յաճախ, և միւսն անինչ էր, և երրորդն ստացեալ էր սէր մեծ, և չորրորդն կայր 'ի հնազանդութեան ծերոյ զամս քսան և երկուս: Պատասխանի ետ հայրն Պամբոյ և ասէ. առաքինութիւն հնազանդիս այս մեծագոյն իցէ քան զերիցդ ձեր. զի դուք զձեր առաքինութիւնդ ստացայք կամօք ձերովք, իսկ սա զիւր հատեալ զկամսն՝ այլոց հնազանդեցաւ, և այսպիսիք մարտիրոսք են եթէ մինչ 'ի վախճան պահեսցեն զհնազանդութիւն: Իսկ նոքա շինեալք գնացին՝ յանձինն կալեալ զհնազանդութիւնն, և կարգեցին զնա առաւել քան զայլ ինչ առաքինութիւն:

² Եկն ոմն եղբայր Թեբայեցի առ հայրն Սիսոյի և կամէր կրօնաւոր լինել: Եհարց ցնա ծերն և ասէ. ունիս զոք ընտանի յաշխարհի: Իսկ նա ասէ. ունիմ որդի մի, հայր: Ասէ ցնա ծերն. արդ գնացեալ ձգեսցես զնա 'ի գետն, և ապա եթէ կրօնաւոր լինել: Իսկ լուեալ այրն հօրն Սիսոյի և հնազանդեցեալ բանին ծերոյն, և գնաց ձգել զորդի իւր 'ի

Digitized by Google

ընկեցէք զմանուկն 'ի գետն, առաքեաց ծերն զեղբայր մին զի արգելցէ զնա: Եւ իբրև բուռն եհար՝ կամեցեալ ընկենուլ զնա 'ի գետն, ասէ ցնա եղբայրն. հանդարտեա և մի ընկենուր զմանուկդ: Եւ նա ասէ. հայրն հրամայեաց ընկենուլ զդա: Ասէ ցնա եղբայրն. ծերն հրամայեաց զի մի ընկեսցես զդա 'ի գետ: Եւ թողեալ զմանուկն անդէն եկին առ ծերն. և եղև միայնակեաց ընտիր վասն հնազանդութեան իւրոյ:

ԱՅԼ երբեմն ասաց հայրն Արսէն ցհայրն Աղեքսանդրոս. յորժամ սպառես զտերև արմաւենւոյդ, եկ ճաշակեա ընդ իս. և եթէ եկեսցեն օտարք, կեր ընդ նոսա: Իսկ հայրն Աղեքսանդրոս յամր գործէր և պարկեշտ: Արդ իբրև ժամ եղև նորա և այլ կայր գործելոյն, և կամեցեալ կատարել զբանն, փութայր սպառել զարմաւենին: Իսկ ծերն՝ իբրև յամեաց՝ ճաշակեաց, կարծելով եթէ օտարս զոք ունիցի առ ինքեան: Եւ իբրև սպառեաց, երեկունն չոգաւ առ նա: Ասէ ցնա ծերն. օտարս զոք ունէիր առ քեզ: Եւ նա ասէ՝ ոչ: Ասէ ծերն. և զիա՞րդ ոչ եկիր այսր: Ասէ ցնա. վասն զի ասացեր՝ թէ յորժամ սպառես զարմաւենիդ՝ եկեսջիր, և պահեալ զբանս քո՝ այժմ սպառեցի: Եւ զարմացաւ ծերն ընդ հաստատութիւն նորա և ասէ ցնա. վաղագոյն սպառեա զգործն քո, զի և զպաշտօնն քո կատարեսցես և կերակուր ճաշակեսցես. ապա թէ ոչ՝ վաղագոյն ունի մարմին քո տկարանալ:

ՍԻՂՈՒԻԱՆԷ՝ սիրէր զՄարկոս քան զամենայն աշակերտս իւր, և եղև տրտունջ. և յաւուր միում ձայ-

գեա. իսկ ծերն առաքեաց զեղբայր մին զինի խափանել զայն: Եւ իբրև եհաս 'ի գետն և 'ի վեր եառ զմանուկն զի ձգեսցէ, ասէ ցնա եղբայրն. զազդարկեա զինչ գործես: Իսկ նա ասէ. ծերն հրամայեաց ձգել զաս ասա: Եւ եղբայրն ասէ. զարմեալ ասաց ծերն՝ ոչ ընկենուլ: Եւ նա զարմեալ հնազանդեցաւ հրամանաց ծերոյն և ոչ ընկէց. և թողեալ զորդին իւր, եկն ինքն առ ծերն և եղև կրօնաւոր ընտրեալ:

: Ասէին վասն հօրն Սիլուանեայ՝ եթէ էր նորա աշակերտ մին որ կոչէրն Մարկոս, որ և ունէր հնազանդութիւն յոյժ. և էր նա արուեստիւ գրիչ, և սիրէր զնա ծերն վասն հնազանդութեան նորա առաւել քան զամենայն աշակերտսն իւր՝ որք էին մետասանք, և զչարէին նոքա վասն առաւել սիրելոյն զնա ծերոյն. լուան զայս և ծերքն, և նեղաեա խորհրդին ընդ այս: Յաւուր միում եկին առ նա ծերքն և ասէին ցնա թէ ընդէ՞ր առաւել սիրես զաւ զՄարկոս: Իսկ ծերն առեալ զնոսա

Digitized by Google

նոցա զհրամանս, և եկն նախ Մարկոս. և զի գրիչ էր, եմուտ Սիղուանէ 'ի տունն տեսանել զգործն. և ահա եղեալ զգրիչն՝ զկէս չինուածոյ գրոյն ունէր, և 'ի ձայնելն ձգեալ էր և ելեալ արտաքս։ Իսկ ապա եկն մայր նորա երևելի սպասուք, և աղաչեաց զծերն ցուցանել նմա զորդին իւր. և նորա ասացեալ թէ ել արտաքս և տեսցէ զքեզ մայր քո, և նա ել առ մայր իւր՝ ունելով զաչսն խփեալ և ասէ՝ կեցցես, և դարձաւ անդրէն։ Իսկ ոչ ծանեաւ մայրն, և աղաչէր զծերն։ Իսկ յասելն ծերոյն՝ թէ ընդէ՞ր չելեր առ մայրն քո, ասաց. ելի, հայր, և աղաչեմ թէ քաւական իցէ այն։ Իսկ ծերն Սիղուանէ հաւանեցոյց զմայրն գնալ 'ի բաց։ Իսկ ապա ասացին ամենեքեան՝ թէ արժանի է Մարկոս սիրոյ. զի զոր սիրէ տէր, արժանի է և մեզ սիրել։

Այր' ոմն աշխարհական երկիւղած 'ի կեանս իւրում, և երթեալ երբեմն առ հայրն Պիմէն, դէպ եղև զի եկն

ընդ ինքն եւ 'ի սենեկէ իւրմէ և սկսաւ բախել զդրունս ամենեցուն աշակերտաց իւրոց և ասել՝ եկեսցես դու այս անուն ոմն, զի առաքեցից 'ի սպասաւորութիւն ինչ զքեզ։ Եւ ոչ ոք ել 'ի նոցանէ վաղվաղակի։ Եւ ապա գնացեալ 'ի սենեակ Մարկոսի, բախեաց զդուռն և ասէ. Մարկէ։ Եւ 'ի ձայնել ծերոյն՝ առժամայն վաղեաց արտաքս, և առաքեաց ծերն զնա 'ի գործ ինչ։ Եւ ասէ ծերն ցեղբարսն ցայնժամիկ որք ընդ իւրն էին. արդ ո՞ւր են այլ եղբարքն զի ոչ ելին 'ի ձայն իմ։ Եւ մտեալ 'ի տունն նորա եգիտ զի գրեալն ոն՝ սկսեալ էր գծել, և մինչ լսաւ զձայնն՝ ոչ կատարեալ էր զոն, այլ անկատար թողեալ էր. և զգրիչն արկեալ էր և վաղեալ արտաքս։ Ցայնժամ ասեն ծերքն ցհայրն Սիղուանէ. արդարև սիրես դու զդա, սիրեմք և մեք. զի և Ած սիրեացէ զդա, որպէս և սիրելի իսկ է այդ։ Եկն երբեմն մայրն Մարկոսի տեսանել զնա, և ունէր ընդ ինքն բազում սպասս և զարդս երկրաւորս. և ել ծերն և եկն զնա և խօսեցաւ ընդ միմեանս։ Ասէ կինն ցծերն. հայր, հրամայեա որդւոյ իմոյ ելանել առ իս զի տեսից զնա։ Եւ մտեալ 'ի սենեակն ծերն ասէ ցնա. ելցես արտաքս որպէս զի տեսցէ զքեզ մայր քո։ Եւ էր զգեցեալ Մարկոս հանդերձս հինս և սևացեալս 'ի ծխոյ հացատանցն. և ել արտաքս վասն հնազանդութեան ծերոյն, և կափուցեալ զաչս իւր և ասէ՝ կեցցես. և մայրն ոչ ծանեաւ զնա։ Եւ կրկին աղաչեաց մայրն նորա առ ծերն և ասէ ցնա. ցոյց ինձ, հայր, զորդին իմ։ Ասէ ծերն ցՄարկոս. ո՞չ ասացի քեզ՝ թէ ել արտաքս, զի տեսցէ զքեզ մայր քո։ Եւ ասէ ցնա Մարկոս. ելի ես ըստ բանի քո, հայր, աղաչեմ զքեզ՝ այլ մի ևս առաքեր զիս, զի մի անլսող եղէց քեզ։ Ցայնժամ ել արտաքս ծերն և ասէ. այն է որդին քո որ ել և ասաց քեզ՝ կեցցես։ Եւ մխիթարեաց զնա բազում խրատուք և արձակեաց գնալ խաղաղութեամբ 'ի տեղի իւր։

։ Էր ոմն այր աշխարհական երկիւղած յոյժ և զգուշացեալ յամենայնի որչափ կարողն էր. սա գնաց երբեմն առ հայրն Պիմէն, դիպեցաւ եղեն անդ և այլ եղբարք որք եկեալ էին առ ծերն լսել բան ինչ ար-

Digitized by Google

անդ եղբարք առ ծերոյն և կամէին 'ի նմանէ ուսանել բան։ Ասէ հայրն Պիմէն ցհաւատացեալ աշխարհականն. խօսեա ընդ եղբարսդ։ Եւ նա աղաչէր և ասէր. Թողու'թիւն արա, հայր, զի ես ուսանել եկի։ Եւ բռնաբարեաց զնա ծերն, և ապա նա հարկաւորեալ ասէր. Ես աշխարհական եմ բանջարավաճառ, լուծանեմ զտակս և առնեմ երկուս. գնեմ սակաւուց և վաճառեմ շատոյ և առնեմ վաճառաշահութիւն. բայց զի ոչ գիտեմ 'ի գրոց ասել, առակ ասեմ։ Այր ոմն ասաց ցսիրելի իւր. վասն զի կարօտեալ եմ տեսանել զթագաւորն, եկ ընդ իս։ Եւ ասէ. գամ ընդ քեզ մինչև ցկէս ճանապարհին։ Եւ դարձեալ ասէ այլում սիրելւոյ իւրոյ՝ եկ տար զիս առ թագաւորն։ Ասէ ցնա՝ եթէ գամ ընդ քեզ մինչև 'ի պալատան թագաւորին, բայց 'ի ներքս ոչ կամիմ մուծանել զքեզ։ Ասէ դարձեալ ցերրորդն. եկ ընդ իս առ թագաւորն։ Եւ նա ասաց. Ես գամ և մուծանեմ զքեզ 'ի պալատանն, և կամ խօսիմ վասն քո և մուծանեմ առ թագաւորն։ Եւ հարցեալ ցնա եղբարցն ուսանել կամեցեալ զխորհրդութիւն առակին, և նա ասէ ցնոսա. առաջինն է կրօնաւորութիւն՝ որ տանի մինչև 'ի կէս ճանապարհին, իսկ երկրորդն սրբութիւն՝ որ հասանէ մինչև յերկինս, և երրորդն է ողորմածութիւն՝ որ մու-

ակ 'ի նմանէ։ Այն ծերն ցաշխարհականին այն այր. ասասցես դու եղբայրցս օգտակարս բանս կենաց։ Պատասխանեաց նա այրն. Ներեա ինձ, հայր, զի ես ուսանել և ոչ ուսուցանել եկեալ եմ. Իսկ յետ յոյժ ստիպելոյ զնա ծերոյն ասել, նա վասն հնազանդութեան իւրոյ ոչ կարաց ընդդիմանալ ծերոյն, և ասէ ցնոսա. Ես այր գաւառացի եմ և բանջարս գնեմ և ծախեմ և արծաթիմ զգնեալ խուրձ բանջարոյն, և երկուս կապեմ. Մածառեմ գնեմ և փոքրունս ծախեմ. զաստուածային գրեանս, այլ 'ի գրոց ասացուածս ինչ ոչ գիտեմ, այլ միայն օրինակ զայս ինչ ասացից ձեզ, և ասէ։ Այր ոմն ունէր երիս բարեկամս, և ասէ ցառաջինն սիրելի իւր. կարօտիմ տեսանել զարքայ, արդ եկեալ դու ընդ իս տարցես զիս։ Նա ասէ բարեկամն. եկից ընդ քեզ մինչև ցկէս ճանապարհին։ Իսկ ցերկրորդ բարեկամն ասէ. եկ և դու տարցես զիս 'ի յարքունիսն։ Նա նա ասէ. ես տարայց զքեզ մինչև 'ի պալատան։ Ասէ և ընդ երրորդն. եկ դու ընդ իս մինչև ցթագաւորն։ Նա նա ասէ. ես եկից ընդ քեզ և տարայց զքեզ 'ի պալատ արքայի և խօսեցայց վասն քո և մուծից ընքեզ առաջի նորա, զի սիրելի եմ ես մեծի արքային։ Իսկ նոքա հարցին ցնա թէ զինչ իցէ զօրութիւն առակիդ։ Իսկ նա ասէ. առաջին բարեկամն է ճգնութիւն որ հանէ 'ի ճանապարհի, և երկրորդ բարեկամն է սրբութիւն որ հանէ յերկինս, իսկ երրորդն իցէ հնազանդութիւնն՝ որ առնելով համարձակութիւն կացուցանէ առաջի Այ։ Իբրև լուան եղբարք-

Digitized by Google

ծանեաւ առաքինի Թագաւորին ոչ համարձակութեամբ։ Այլ չի-
նեալք 'ի նմանէ եղբարքն գնացին* ։

ԼՈՒՍԱՑ՝ Հայրն Աղաթոն. չորս գունդս տեսի յերկինս, առաջինն զգաստ հնազանդողից՝ որք կային ընդ մարտիրոսս ոսկի զգեցեալ, երկրորդքն օտարքն, և երրորդն որք սիրեն զօտարսն, և չորրորդն որ յանապատ փախչէին։ Այլ ասաց հրեշտակն տեսանել զնա. տես զի յայլ առաքինութիւնսն խմբեալք են ընտրոց լիցին զոր ինչ պիտոյ են,

քան սոքա. Նշմարտաց (?) հնազանդութեան սիրելի իցէ Այ և մարգարեան։ Եւ չինեալք գնացին 'ի սենեակս իւրեանց։

* Հանմոսոփեալ (?) յօրինակի միում դարձեալ հետ նորոգմանութեան (?). Աշխարհական որ երկիւղած 'ի տեսանէ (?) եմեռեալ առ հայրն Պիմէն, և եղև առաջ զի եկին կրօնաւորք, և ասէ Պիմէն. որդեակ աշխարհիկ, ասա առաջ քան։ Եւ ասէ ցնա այրն. յոգնանալ եկեալ եմ ես, հայր, զի բանջարածախ եմ, գնեմ մեծածախ տրցակս և կապեմ փոքրիկս և վաճառեմ. բայց ասեմ սուտս։ Ո... մի ունէր երիս սիրելիս, և ասաց առնէին զնա առ ... Ն... րաւ եհան 'ի ճանապարհ, և մինչ 'ի պալատն, և միւսն առաքեալ կապրեաց զնա ընդ սիրելիս արքայի։ Եւ է առաջինն ճգնութիւն, երկրորդն որբութիւն՝ որ հանէ յերկինս, և երրորդն հնազանդութիւն՝ որ առ Այ մեծ համարձակութեամբ։ Եւ լուեալ զայս հիացան յոյժ, և եղեւ փառս Այ։

¹ Այսոց (?) հայրն Յովսէփ. եթէ որ 'ի հնազանդութիւն կացցէ հօգեւոր հօր, վերագոյն շնորհս ունի քան զայն որ հանդարտի յանապատի. քանզի տեսի ես չորս գունդս ծերոց յերկինս, և մի գունդն էր նոցին որք տկարք էին և գոհանային զԱյ, իսկ երկրորդ գունդն օտարասէրք էր, և երրորդ գունդ նոցին էր որ փախչէին յանապատ հանդարտեալքն, իսկ չորրորդ գունդն նոցին էր որք էին 'ի հնազանդութեան հօգևոր հարցն. և զգեցեալ ունէին հնազանդողիցն գունդքն մանեակ ոսկի և գաւազան մարգարտակապս և պսակ 'ի գլուխ և զարդեալ կային ընդ հրեշտակս։ Իսկ ես իբրև տեսի, ասեմ ցհրեշտակն տեսանն. զի՞ է զի այս պակասա գունդս այսչափ գերազանց է փառօք։ Իսկ նա ասէ ցիս. վասն զի այդոքիկ զի որք գոհանան զԱյ և որք հեռացան յանապատ և որք սիրեն զօտարս՝ իւրեանց կամօքն ընտրեցին զայն և զիւրեանց կամսն կատարեցին. իսկ որք 'ի հնազանդութեան են՝ վասն սիրոյն Այ թողեալ զկամս իւրեանց, և զկամս Այ և հօգևոր հօրն իւրեանց կատարեցին, վասն այսորիկ 'ի վերագոյն փառսն են քան զգաստ այլոցն։ Բարի է հնազանդութիւն, որդեակք, որ առնէ սիրոյն Այ եղեալ լինի. և զայս լուեալ ծանեարք, որդեակ, զմեծութիւն և զփառս այսու առաքինութեան որ է հնազանդութիւնն, և մի իցէ որպէս զնա զարդարեալ փառօք։ Վասնզի դու, ով հնազանդութիւն, կեանք ես հաւատացելոց. և դարձեալ, ով հնազանդութիւն, դու ես փառք ամենայն առաքինութեանց. ով հնազանդութիւն, դու ես դուռն արքայութեան երկնից. ով հնազանդութիւն, որ անուանեալ ես ամենայն սրբոց յորմէ գիտցին կամին պարզութեան և մեծ քաղցրութեան, և հաւան 'ի կատարելութեան

իսկ հնազանդողքն զայլոցն առնեն ընտրութիւն. և մեծ է այն քան զամենայնն :

ԵԿԵԱԼ՝ երբեմն հայրն Աբրահամ առ հայրն Ար-սէն, և մինչ նստէին՝ եկն այլ ոմն եղբայր առ ծերն և եհարց ցնա և ասէ. զի՞նչ գործեցից զի ապրեցայց : Եւ ասէ ցնա. երթ զտարիս զայս ձմեռակեա երիկունն աղ և հաց, և եկ դարձեալ և խօսեցայց ընդ քեզ : Եւ նա երթեալ արար այնպէս : Եւ լուեալ հօրն Աբրահամու զարմացաւ : Եւ 'ի կատարել տարւոյն եկն դարձեալ եղ-բայրն առ ծերն, և պատահեաց դարձեալ հայրն Աբրա-համ անդ, և ասէ դարձեալ ծերն ցեղբայրն. երթ արդ զայս տարիս երկուս երկուս աւուրս պահեա : Եւ իբրև չոգաւ եղբայրն, ասէ հայրն Աբրահամ ցհայրն Արսէն. ընդէ՞ր ամենայն եղբարցդ թեթև լուծ դնես, և այսմ եղբօրս բեռինս ծանունս : Ասէ ցնա ծերն. եղբարքն այնպէս խնդրեն, նոյնպէս և երթան. իսկ սա վասն Այ գայ և լսիցէ բան, վասն զի գործօնեայ է, և զոր ինչ ասեմ զնա՝ փութով կատարէ :

ԱՍԷՐ՝ ոմն 'ի ծերոցն. եթէ ունիցիս յոք վստահու-թիւն հաւատոց և տաս զքեզ 'ի հնազանդութիւն նմա, ոչ են քեզ պէտք հայել 'ի պատուիրանս Այ. հօրն քում թող զամ կամս քո, և ըստ դատաստանս ինչ յԱյ ոչ գտանես :

հասակին Քի և բնակակիցք եղեն հրեշտակաց Այ որք ստացան զքեզ : Այսպիսի ինչ է հնազանդութիւնն, որդեակ :

: Գնացեալ երբեմն հայրն Աբրահամ առ հայրն Արսէնի, և իբրև նստէին եկն եղբայր մի և ասէ ցհայրն. ասա ինձ որպէս կեցից ես : Ա-սէ ցնա ծերն. գնասցես և զայս ամ կերիցես հանապազօր ընդ երեկս սակաւ հաց և աղ և եկ այսր, և ես խօսեցայց ընդ քեզ բանս : Եւ գնաց եղ-բայրն և արար զոր ասաց նմա ծերն : Եւ 'ի լնուլ ամին եկն դարձեալ առ հայրն Արսէն, և գտաւ անդ դարձեալ հայրն Աբրահամ. և ասաց հայրն Արսէն ցեղբայրն. գնա դարձեալ և պահեա զայս ամ և զեր-կու աւուրս կերիցես : Եւ նա գնաց հնազանդութեամբ. Եւ իբրև գնաց, ասէ Աբրահամ ցհայրն Արսէն. ընդէ՞ր ամենայն եղբարցն թեթև լծով խօսէիր, իսկ այսմ եղբօր բեռն ծանր բարձեր : Ասէ ցնա ծերն. եղ-բարքն որպէս գան և խնդրեն, այնպէս գնան. իսկ սա վասն Այ գայ այսր, և ես ասեմ նմա զբանս Այ, և զի սա մշակ բարի է՝ կատարէ զա-մենայն ժրութեամբ :

: Ասաց ծերն. եթէ ոք ունիցի հաւատ կատարեալ առ ումեմն, և տացէ զանձն իւր 'ի հնազանդութիւն նմա, յայնժամ այլ ոչ իցէ պատ-շաճ նմա խնդրել զպատուիրանս Այ, այլ զայն հոգասցէ հօրն իւրոյ թողցէ, և ինքն զնորայն կատարեսցէ զպատուիրանսն. զի ոչ այլ ինչ խնդրեսցէ 'ի նմանէ Տէր, բայց միայն զհնազանդութիւն :

Digitized by Google

ՍԻՂՈՒԱՆՈՍ[1] ոմն եկեալ 'ի Սկիւթ և ասէ ցհայրն Մա- կար՝ թէ յորժամ առաքէ զիս հայրն իմ 'ի սպասա- ւորութիւն, երկնչիմ 'ի պոռնկութէ: Ասէ ծերն. յոր- ժամ եկեսցէ 'ի վերայ քո փորձութիւն, ասա՝ թէ ա̃ծ հօր իմոյ, փրկեա զիս: Արդ յաւուր միում մինչդեռ առնէր քաղաքապարութիւն նա 'ի գիւղ մի, փակեաց կուսան ոմն զդուռն և արգել զնա: Եւ աղաղակեալ 'ի ձայն մեծ ասէ. ա̃ծ հօր իմոյ, փրկեա զիս: Եւ առժամայն գտաւ 'ի ճանապարհին Սկիւթայ:

ՄԻՒՍ[2] վասն երկուց եղբարց միախորհրդոց 'ի միա- բանակեացսն՝ եթէ մինն 'ի նոցանէ էր կրօնաւոր և ան- [illegible], իսկ միւսն հնազանդ և խոնարհ. և զիրեարս քննէին ասելով՝ որ իցէ առաւել մեծ գործ: Եւ եկին 'ի գետեզրն, և էին անդ բազում կոկորդիլոսք. և ե- մուտ 'ի մէջ նոցա հնազանդն, և երկիր պագին նմա կո-

[1] Առ հայրն Մակար գնաց եղբայր ոմն 'ի Սկիւթեայ և ասէ ցնա. Տէր իմ առաքէ զիս միշտ 'ի սպասաւորութի 'ի գիւղս և երկնչիմ 'ի պոռնկու- թենէ: Ասէ ցնա ծերն. յորժամ [illegible] զփորձութիւն զալ 'ի քեզ՝ աղաղակեա՝ ա̃ծ զօրութեանց, աղօթիւք հօրն իմոյ ապրեցո զիս: Եւ գնաց եղբայրն խրատեալ ծերոյն: Եւ յաւուր միում առաքեաց ծերն զեղբայրն 'ի գիւղս խնդրել ալիւր: և գնացեալ առ այն այր որ միշտ առնէր էր առ նոցա, և ոչ եգիտ զնա 'ի տան. իսկ դուստր առն այ- նորիկ իբրև ետես զեղբայրն՝ փակեաց 'ի վերայ զդուռն և սկսաւ [illegible] ընդ նմա. իսկ նա աղաղակեաց և ասէ. ա̃ծ հօր իմոյ, ապրեցո զիս: Եւ առժամայն գտաւ 'ի ճանապարհն Սկիւթեայ: Այսպէս զօրաւոր է հնազանդութիւն հարց:

[2] Եղբարք երկու միաբանութեամբ գնացին 'ի վանս ուրեմն բնակել անդ. մինն նոցա էր ճգնաւոր յոյժ, իսկ երկրորդն ունէր հնազանդութիւն մեծ, և զոր ինչ ասէր հայրն՝ կատարէր փութով. և եթէ ասէր ցնա, [illegible] ընդ առաւօտն՝ ուտէր, և եթէ մի ինչ ասիցես, ուտէր, [illegible]՝ ոչ ևս ուտէր. վասն այսորիկ փառաւորէր նա յամենե- ցունց: Իսկ եղբայր նորա նախանձեալ ընդ նա խոցոտէր վասն սպա- սաւոյ նորա և ասէր 'ի մտի. ես փորձեցից եթէ որպէս իցէ հնազան- դութիւն սորա: Եւ գնացեալ առ հայրն ասէ. առաքեա ընդ իս զեղ- բայրն իմ, հայր, զի գնամ ուրեմն: Եւ հայրն յանձնարարեաց զնա ընդ նմա: Եւ առեալ զնա ճգնաւոր եղբայրն՝ սկսաւ փորձել զնա: Եւ գնացին 'ի գետն ուր [illegible] էր մարդակեր գազանաց, որ կոչէին [illegible]. և ասէ ցնա. անցցես, եղբայր, ընդ գետս այս: Իսկ նա առժամայն մը- տեալ 'ի գետն անցանէր, և եկեալ [illegible] լզէին զմարմին նորա և ոչ ինչ վնասեցին նմա: Եւ իբրև ետես ճգնաւոր եղբայրն, ասէ ցնա. եկ դարձեալ յայսկոյս: Եւ նա եկն. և զարմացաւ յոյժ առ հեզ եղբայրն: Եւ [illegible] գնացին նոքա 'ի ճանապարհին գտին մեռեալ մի մերկ ձգեալ 'ի վերայ ճանապարհին, և ասէ ճգնաւորն այն ցեղբայրն. [illegible] [illegible] հանդերձեսցես ինչ: Ասէ հնազանդ եղբայրն. ոչ, այլ աղօ- թիւք [illegible] յարութիւն առցէ: Եւ [illegible] աղօթս, յարեաւ մեռեալն



Digitized by Google

կարդեղոյք։ Այլ ասէ ցերանաւորն. եկ և դու այսր։ Այլ նա ասէ. Թողութիւն տուր ինձ, եղբայր, վասն զի ոչ եմ հաստատեալ 'ի չափ հաւատոց քոց։ Այլ եկեալ 'ի միաբանակեացսն, ձայն եղև առ հայր նոցա որ ասէր. որ զհնազանդութիւն ունի, զանցանէ զերկրաւորօքն։

ԱՍԱՑ հայրն Յովսէփ Թեբայեցի՝ եթէ երեք կարգ են պատուականագոյնք առաջի Այ. յորժամ իցէ մարդն 'ի հիւանդութեան և դարձեալ գոհիցէ նովաւ ապաշխարութիւն և գոհանալով ընդունիցի, այս է առաջին կարգն. և երկրորդն՝ յորժամ որ զամենայն գործս իւր սրբութեամբ գործիցէ առաջի Այ՝ ոչ ինչ ունելով մարդկային. երրորդ կարգն՝ եթէ որ 'ի հնազանդութեան իցէ և լռիցէ իւրում հօրն և թողուցու զիւր կամսն, այսպիսին ունի պսակ աւելի. բայց ես ընդ հնազանդութիւն հաճեցայ։

ՅԱՂԵՔՍԱՆԴՐՈՒ՝ մերձ 'ի տաճար սրբոյն Մարկոսու ՃԾ անձինք այր քրիստոնեայք միաբանէին և եղանէին 'ի սաղմոսերգութիւն. և տեսեալ զամենայն ծեր միայնակեաց որ նստէր արտաքոյ դրանն և վաճառէր զամբիւղս, և ասէին ցմիմեանս. յորմէհետէ տեսաք զծերս զայս, ոչ լուաք եթէ միաբանեցաւ ընդ ումեք որ ինչ և իցէ բանիւք. եկայք փորձեսցուք զդա։ Այլ մերձեալք ասեն ցնա. աւա, ծեր դու, վաճառե՞ս զայդ։ Այլ նա ասէ. այո։ Այլ նոքա ասեն. քանի՞։ Ասէ ցնոսա. տասն տասն

այն և զծերայր։ Իսկ Զգծաւորն 'ի մեծի պարծէր և ասէր. աղօթից իմ յարուցին զմեռեալն զայն։ Այլ զայս ամենայն յայտնեաց ԱԾ հօր վանիցն թէ որպէս փորձեցաւ այն հնազանդ եղբայրն, և թէ որպէս փրկեցաւ 'ի խեթից անտի, և թէ որպէս աղօթիւք նորա յարեաւ մեռեալն։ Իսկ իբրև եկին 'ի վանսն ասէ հայրն ցԶգծաւոր եղբայրն. ընդէ՞ր փորձեցեր զեղբայրն քո, որդեակ, որ հնազանդութեամբ իւրով փրկեցաւ նա 'ի գազանաց անտի, և աղօթիւք նորա յարեաւ մեռեալն։ Եւ Զգծաւորն իբրև լուաւ զայս 'ի հօրէն, յանկարծ եղեւ հիացեալ, վասն զի և ինքն միաբանեալ նմա յայտնեաց հօրն վասնորոյ զհաճոյացեալն հնազանդութիւն նորա։ Եւ լուեալ ամենեցուն զայս ետուն փառս Այ, և մեծ քան զամենայն Զգնութիւն համարէին զհնազանդութիւն։

¹ ՅԱղեքսանդրիա 'ի տաճար սրբոյն Մարկոսի ՃԾ անձինք այր քրիստոնեայք միաբանէին և եղանէին 'ի սաղմոսերգութիւն. և տեսին զամենայն ծեր միայնակեաց, որ նստէր արտաքոյ դրանն և վաճառէր զամբիւղս՝ և էր հնազանդ յոյժ, որ և 'ի վաճառելն ևս ոչ զինչ զրուցանէր ընդ ումեք. այլ զոր ինչ ասէին զգինն՝ հնազանդէր և առնէր։ Իսկ երկոքեանն տեսեալ այնպիսի աւուրքն. եկայք փորձեսցուք զդա թէ է հնազանդ՝ որպէս լուաք՝ թէ ոչ։ Եւ մերձեցեալք ասեն ցնա. աւա, ծեր դու, վաճառե՞ս զայդ։ Եւ նա ասէ. այո վաճառեմ։ Եւ նոքա ասեն. քանի՞։ Ասէ

փողոյ։ Նոքին ցնա. կարի շատ են,՝ այլ առ հինգ հինգ փող։ Նա է ցնոսա. որպէս կամիք արարէք։ Դարձեալ ասեն ցնա. կարի շատ են, բայց եթէ կամիս փողոյ փողոյ առնումք։ Նա է ցնոսա. որպէս կամիք արարէք։ Եւ տուեալ զփողեանն առին զամենայն զամբիկսն։ Իսկ ծերոյն առեալ զդրամագանն երթայր 'ի խուց իւր, և նոքա ծանուցեալ զատապարտութիւն ծերոյն հետևեալ զկնի նորա ասեն ցնա. աբբայ, զինչ արարեր։ Նա է ծերն. զինչ արարի։ Նոքին ցնա. ասացեր տասն տասն փողոյ զզամբիկսն, և ասացաք քեզ եթէ ծանր են, բայց առ հինգ հինգ փող, և ասացեր՝ արարէք որպէս և կամիք. և դարձեալ ասացաք ցքեզ՝ եթէ կամիս փողոյ փողոյ առնուցումք, և կամակից եղեր։ Եւ արկանեն նմա ծանր առնելով. վասն էր՝ ասա մեզ զինչ է որ արարերդ։ Եւ նա ասէ. այսպէս ունիմ սովորութիւն առնել զգինսն, և որ ինչ տան ինձ՝ առնում։ Եւ աղաչեցին զի երթիցեն 'ի խուց նորա ընդ նմա. և իբրև գտին կուժ մի ջրոյ և պաւսատակ և ափսէ, և ասեն ցնա. հրամայեսցես զի արասցուք սակաւ ջերմիկ, զի ճաշակեսցուք ընդ քեզ և օրհնեսցուք. և ասէ՝ արարէք, և նոքա արարին. և էր խուց նորա մերձ 'ի տեարապաղողոյնն։ Իսկ յորժամ արարին, ասէ ցնոսա ծերն. երթայք յեկեղեցին որ կոչի Թէոդոսիու, և գտանէք անդ ծեր մի որ վաճառէ զամբիկս, ասացէք ցնա.

ցնոսա. տասն տասն փողոյ։ Ասեն ցնա. կարի շատ են, բայց հինգ հինգ փողոյ։ Ասէ ցնոսա. որպէս կամիք արարէք։ Դարձեալ ասեն ցնա. կարի շատ են, բայց եթէ կամիս՝ փողոյ փողոյ առնումք։ Ասէ ցնոսա. որպէս կամիք արարէք։ Եւ տուեալ զփողսն առին զամենայն զամբիւղսն։ Իսկ ծերն առեալ զդրամագլուխն երթայր 'ի խուց իւր։ Իսկ նոքա ծանուցեալ զատապարտութիւն ծերոյն՝ հետևեցան զկնի նորա և ասեն ցնա. աբբայ, զինչ արարեր։ Ասէ ծերն. զինչ արարի։ Ասեն ցնա. ասացեր մեզ տասն տասն փողոյ զամբիւղսն, և ասացաք քեզ թէ ծանր են, բայց առ հինգ հինգ փող, և ասացեր՝ որպէս կամիք արարէք. և դարձեալ ասացաք ցքեզ՝ եթէ կամիս փողոյ փողոյ առնումք, և կամակից եղեր։ Եւ արկին նմա ծանր առնելով. վասն էր՝ ասա մեզ զինչ է զոր արարերդ։ Յայնժամ ասէ՝ եթէ այսպէս ունիմ սովորութիւն առնել զգինսն, և զոր ինչ տան առնում։ Եւ աղաչեցին զի երթիցեն 'ի խուց նորա ընդ նմա. և նա ասէ՝ եկայք երթիցուք։ Եւ իբրև գնացին և մտին 'ի խուցն, գտին կուժ մի ջրոյ և պաւսատակ և ափսէ. և ասեն ցնա. հրամայեսցես զի արասցուք սակաւ ջերմիկ զի ճաշակեսցուք ընդ քեզ և օրհնեսցուք։ Եւ ասէ՝ արարէք։ Եւ նոքա արարին. և էր խուց նորա մերձ 'ի տեարապաղողոյն։ Իսկ յորժամ արարին, ասէ ցնոսա ծերն. որդեակք իմ, երթայք յեկեղեցին որ կոչի Թէոդոսիու, և գտանիցէք անդ ծեր մի որ վաճառէ զամբիկս, ասասցէք նմա՝ ասէ ծերունիկն քո,

Digitized by Google

ասէ ծերակիցն քո՝ եկ զի կերիցես զջերմիկս ընդ եղբարս։ Եւ նոքա երթեալ գտին զծերն որպէս ասաց նոցա և ասեն ցնա. ասաց ծերակիցն քո՝ եկ զի կերիցես զջերմիկս ընդ եղբարցս։ Եւ նա ասէ ցնոսա. զխնդիրդ ասաց աբբայն։ Եւ նոքա ասեն. ասաց՝ եկ զի ուտես զջերմիկս ընդ եղբարցս։ Եւ նա ասէ ցնոսա. և ոչ ասաց՝ որ զի ուտեսցէք, ապա ուրեմն վախճանեցաւ։ Իսկ նոցա առեալ զծերն և զջամբիռղսն, խառնեալ ընդ բանին և եկեալ գտին զծերն վախճանեալ, և պատեալ զնա և լացեալ յոյժ թաղեցին, և աղաչեցին զմիւս ծերն ասելով. Նիստ ՚ի խուցի քում և մեք եղբարքս զպէտս քո որ ըստ օրէ, որ զի աղօթես ՚ի վերայ մեր։ Եւ նա ասէ. եկայք յեօթներորդ աւուրն. և եթէ գտանէք զիս կենդանի, արարէք զոր ասացէքդ, քանզի բան ունիմ ընդ երանելի ծերոյն և նա ընդ իս. որպէս զի որ յառաջեսցէ ՚ի մէնջ, աղաչեսցէ զԱ̃ծ, և զընկերն ժողովեսցէ առ ինքն յեօթներորդ աւուրն։ Եւ արարեալ այսպէս քրիստոսասէր արանցն այնոցիկ՝ եկին յեօթներորդ աւուրն, գտին զնա վախճանեալ. և թաղեալ զնա մերձ առ ծերոյն առաջնոյ, գնացին գոհանալով զԱ̃յ որ յայտնեաց զայնքան առաքինութիւն ծածկեալ։

ՊԱՏՄԵԱՑ ՚ ոմն ՚ի ծերոցն՝ թէ սքողատարկս ոմն

եկ զի ուտես զջերմիկս ընդ եղբարցս։ Եւ նոքա ըստ բանի ծերոյն գնացեալ գտին զծերն, որպէս ասաց, և ասեն ցնա. ասէ ծերակիցն քո՝ եկ զի ուտես զջերմիկս ընդ եղբարցս։ Իսկ նա ասէ ցնոսա. զխնդիր ասաց աբբայն։ Եւ նոքա ասեն. ասաց՝ եկ զի ուտես զջերմիկս ընդ եղբարցս։ Եւ ասէ ցնոսա. ո՞չ ասաց՝ որ զի ուտեսցէք։ Նա ասեն՝ ոչ։ Ասէ. ապա ուրեմն վախճանեցաւ ծերն։ Իսկ նոցա խառնեալ ընդ բանին՝ առեալ զծերն և զամփիեղն և եկեալ գտին զծերն երանելի վախճանեալ. և լացեալ ՚ի վերայ նորա յոյժ, և պատեալ թաղեցին. և աղաչեցին զմիւս ծերն ասելով. Նիստ ՚ի խուցի քում և մեք եղբարքս զպէտս քո որ ըստ օրէ, որպէս զի աղօթեսցես ՚ի վերայ մեր։ Եւ նա ասէ. եկայք յեօթներորդ աւուրն, և եթէ գտանիցէք զիս կենդանի՝ արարէք որպէս ասացէքդ. քանզի բան ունիմ ընդ երանելի ծերոյն և նա ընդ իս, որպէս զի որ յառաջեսցէ ՚ի մէնջ՝ աղաչեսցէ զՏէր Ա̃ծ զի ժողովեսցէ և զընկերն առ ինքն յեօթներորդ աւուրն։ Եւ գնացին օրհնեալք ՚ի նմանէ քրիստոսասէր արքն այնոքիկ և կացեալք զաւուրսն զայն եկին դարձեալ յեօթներորդում աւուր ըստ նշանակելոյ երանելի ծերակցին և գտին վախճանեալ և զնա. և լացին յոյժ յորդառատ արտասուօք, և թաղեցին զնա մերձ առ ծերոյն առաջնոյ։ Եւ գնացին գոհանալով զԱ̃յ, որ յայտնեաց զայնքան առաքինութիւն հնազանդիցն այնոցիկ՝ որք էին ծածկեալք ՚ի մարդկանէ։

ՙ Պատմէր մեզ ոմն ՚ի հարանցն՝ եթէ այր ոմն խմատոստակր և բաժա-

սպասաւորեալ Հրաժարէր աշխարհականն ամենայն, և ա-
ղաչէր զի միայնակեաց լիցի: Իսկ ծերն ասէ. եթէ վա-
ճառես զինչս քո և տուր աղքատաց ըստ տեառն հրա-
մանի, և եկ առ իս: Եւ երթեալ աշխարհականն այն-
պէս արար: Դարձեալ եկն, ասէ ծերն. աւանդեմ քեզ պա-
տուիրան չխօսել ինձ: Իսկ նա յանձին կալաւ և այլ ոչ
ևս խօսեցաւ: Եւ սկսան ամենեքեան զմեծարանս պատուել
զնա: Ասէ ցնա աբբայն իւր. ոչ ինչ օգտիս աստ, եկ ա-
ռաքեմ զքեզ 'ի վանս միաբանակեցաց յԵգիպտոս: Եւ
ոչ ասաց ցնա կամ խօսել կամ չխօսել: Եւ նորա կա-
տարեալ զպատուիրանն և եկաց անխօս: Եւ կամեցաւ
փորձել զնա աբբայն որ ընկալաւն եթէ խօսի արդեօք.
առաքեաց զնա յայնկոյս գետոյն յաւուր գարնանայնոյն
ժամանուն, որպէս զի հարկաւորեսցի խօսել՝ եթէ ոչ կա-
րասցի անցանել. և առաքեաց զկնի նորա եղբայր մի լռե-
լեայն տեսանել թէ զինչ առնիցէ: Եւ իբրև եկն 'ի
գետն և ոչ կարէր անցանել, խոնարհեցոյց զծունկս իւր
յաղօթս, և իսկոյն եկեալ կոկորդիլոսն անցոյց զնա
յայնկոյս գետոյն: Եւ եկեալ եղբօրն պատմեաց հարցն

այր և վարժեալ յոյժ արտաքին բանից հաւատարմականաց, այլ և եր-
կիւղած 'յԱյ, եկն սա առ միայնակեաց ոմն և աղաչէր զնա առնել կրօ-
նաւոր զինքն: Ասէ ցնա ծերն. եթէ կամիս զի ընկալայց զքեզ, երթ
վաճառեա զինչս քո և տուր աղքատաց ըստ բանի տեառն, և եկ այսր:
Եւ նա երթեալ արար զամենայն ըստ բանի ծերոյն և եկն անդր: Ասէ
ցնա ծերն. կամիս պահել, զի և այլ պատուիրան եդից քեզ: Ասէ
այրն. կամիմ յամենայնի առնել, հայր: Ասէ ծերն. առասցես լռութիւն,
զի բնաւ ոչ խօսեսցիս ընդ մարդոյ ումեք: Իսկ աշխարհիկն այն այր ա-
րար և զայն, և եկաց նա այնպէս զամս հինգ լռելեայ, որ և բնաւ ինչ
ոչ խօսեցաւ. և սկսան գովել և փառաւորել զնա ամենեքեան: Ասէ ցնա
ծերն. աստ այլ ոչ բարւոք իցէ կեալ քեզ, այլ եկ առաքեցից զքեզ
յԵգիպտոս 'ի հասարակաց վանս: Եւ նա հնազանդէր ամենայնի զոր
և հրամայէր ծերն. և առաքեաց ծերն զնա անդ, այլ ոչ ասաց նմա ծերն
թէ լռեսցես կամ խօսեսցես, բայց նա ունէր զառաջինն իւր կանոնն լռելեա-
լման որոյ և ոչ ընդ ումեք ինչ խօսեցաւ: Իսկ առաջնորդ վանիցն այ-
նորիկ կամեցաւ փորձել զնա, թէ անսայր իցէ թէ ոչ. և առաքեաց
զնա առ այլ ոմն ծեր յայնկոյս գետոյն՝ յորժամ յորդեալ էր մեծ
գետն գետն, և ոչ ոք կարէր անցանել. և միայն՝ եթէ նեղեսցէ զնա՝
միթէ ասիցէ թէ ոչ կարեմ անցանել: Եւ իբրև գնաց նա, ծերն ա-
ռաքեաց զեղբայր ոմն զկնի նորա տեսանել թէ զինչ արասցէ: Եւ իբ-
րև եկն 'ի գետն և ոչ կարէր անցանել, եդ ծունր եկաց յաղօ-
թս. և ահա խոյթ մի որ է խեցգետ ծովու՝ եբարձ զնա և տարաւ յայն-
կոյս գետոյն: Եւ իբրև եցոյց զգործն առ որ առաքեալն էր, եկն դարձեալ
'ի գետ անդր, և խեցգետ գազանն եկն դարձեալ և եբարձ զնա և եդ
յայնկոյս: Իսկ եղբայրն այն որ առաքեցաւ զկնի նորա տեսանել զնա

զիրան, և հիացան ամենեքեան ։ Դէպ եղև նմա յետ սա-
կաւ աւուրց մեռանել, և արձակեաց աբբայն յարգելականն
և ասէ. եղբայր, թէպէտ և անխօս առաքեցեր զեղբայ-
րըս զայս առ մեզ, սակայն հրեշտակ էր ։ Իսկ աբբայ-
լուսոյն առաքեաց և ասէ. ոչ եթէ անխօս էր, այլ զի
զպատուիրանն ելից, թէ ոչ՝ ատենադպիր էր Յովհաննու
Ճարտարախօս ։ Զոր լուեալ զարմացան և փառս ե-
տուն Աստուծոյ ։

ԱՍԷԻՆ վասն հօրն Սիլուանոսի՝ թէ երբեմն գնայր
'ի Սկիւթ ընդ ծերոց, և կամեցեալ նորա զհնազանդու-
թիւն աշակերտին իւրոյ Մարկոսի ցուցանել, յաղագս
այսր և սիրէր զնա, տեսանէ խոճկոր յանապատին, և
ասէ ցնա. տեսանե՞ս զփոքրիկ վիթիկն զայն, որդեակ ։
Եւ նա ասէ. այո, հայր, և զեղջիւրսն՝ որպէս գեղեցիկ
են ։ Եւ զարմացան ծերքն ընդ պատասխանի նորա և շի-
նեցան 'ի հնազանդութիւն նորա ։ Դէպ եղև՝ երբեմն
գնալ նոցա 'ի Սկիւթայ, և երթեալ 'ի լեառնն Սինայ
և բնակեալ անդ՝ յղէր մայրն Մարկոսի երդմնեցուցանէր և ար-
տասուօք զի երթիցէ տեսցէ զնա, և ծերն արձակէր
զնա ։ Եւ մինչդեռ կամէր գնալ, եկեալ ողջոյն թողլ
ծերոյն. առժամայն սկսաւ լալ և ոչ կամեցաւ գնալ ։
Եւ յորժամ կամեցաւ ծերն յԱսորիս երթալ, ասէ Մար-
կոս. ես ոչ կամիմ գնալ աստի, և դարձեալ ոչ կամիմ

թէ զինչ արարեալ. զարմանալ վարդապետին և եկեալ պատմեաց զայս հօրն վանից և եղբարցն ամենեցուն. և նոքա զարմացեալ էին 'ի վերայ սքանչելեացն ։ Եւ եկն նա 'ի վանսն կատարեալ զգործ հրամանաց հօրն ։ Եւ զկնի աւուրց ինչ վախճանեցաւ եղբայրն այն և գնաց առ տէր՝ առ որ կարօտն էր. և թաղեցին զնա սաղմոսիւք և օրհնութեամբ ։ Եւ պատ-րաստեցեալ հայրն վանից առ միայնակեացն այն, որ առաքեաց զնա անդ, և ասէ. Թէպէտ անխօս և անլեզու ոմն առաքեցեր առ մեզ, այլ հրեշտակ մի էր նա ։ Իսկ միայնակեացն գրեաց պատասխանի և ասէ. ոչ անխօս էր, այլ հաւատով և լռութեամբ յոյժ էր նա, քանզի պահէր զեւր պատուիրանին զոր ետու նմա. և նա լուեալ կայր այնպէս հնազանդ-եալ յանձնայնի ։ Եւ նոքա լուեալ օրհնեցին զԱծ զասացեալ այնպիսի հնազանդութեան մարդկան ։

¹ Եւ երբեմն հայրն Սիլուանոս 'ի Սկիւթոյ և գնաց 'ի լեառն Սինէ եկեալ անդ. և պատուիրեաց վարդապետին Մարկոսի երդմնեալ մայրն Մարկոսի՝ որպէս զի առաքեսցէ զորդին իւր, զի եկեալ տեսցէ զնա ։ Եւ իբրև եկն յինքն զմինօրէ իւր ընդ ջանի ծերոյն և կամէր գնալ, և եմուտ 'ի խուցն համբուրել զծերն և գնալ, և վաղվաղակի կալաւ զնա լալ. և ոչ ել անտի և ոչ գնաց 'ի տես մօր իւրոյ ։

² Ասէին վասն հօրն Սիլուանոսի՝ եթէ երբեմն կամեցաւ գնալ յԱսորիս. իսկ Մարկոս աշակերտ նորա ասէ ցնա. ես ոչ կամիմ գնալ

Թողուլ զգեղն, այլ անսաս ասաց և կալ զերկու աւուրս։ Այս յետ երրորդ աւուրն ննջեաց խաղաղութեամբ։

ՄԻՒՍ՝ վասն Յովհաննու աշակերտին Պաւղոսի՝ թէ ունէր մեծ հնազանդութիւն. և էին 'ի տեղւոջն գերեզմանք, ուր բնակեալ էին նոքա։ Այս էր 'ի տեղւոջն յայն քարեայն, և ետես անդ ծերն բորենի և ասէ ցՅովհաննէս. երթ 'ի գերեզմանսն և բեր անտի բորենի։ Այս ասէ. հայր, կապեալ 'ի բարձունս։ Այս ծերն խաղաղութեամբ ասէ. եթէ եկեսցէ 'ի վերայ քո, կապեա զնա և ած այսր. Այնթեալ երեկորին ընդ երեկոյն, եկն 'ի վերայ նորա բորենին. իսկ երեկորն կամեցեալ ունել զնա, փախեաւ 'ի նմանէ։ Իսկ նորա զհետ մտեալ ասէ ցնա. հայր իմ ասաց զի կապեսցես զքեզ։ Այս կալեալ կապեաց զնա։ Իսկ ծերն նստէր առ զուարն և մնայր, և նորա եկեալ՝ ունելով կապեալ զբորենին, և տեսեալ ծերոյն զարմացաւ։ Ասէ. հայր, ապաքէն հրամայեցեր ածել զնա։ Այս ծերոյն կամեցեալ խոնարհեցուցանել զնա, զանն եհար զնա և ասէ. անմիտ զու և անմիտ շուն ածեր։

ԱՅՆՊԷՍ՝ ասէ անհետեալ փոքր մեկենի չոր և ասէ ցաշակերտն իւր. հանապազ զարմացեալ զջուր ջրեա։ Այս էր ջուրն հեռաւոր, որ յաւուրն անցանէր մի կարէր զնալ։ Այս աշակերտն առաւօտ ամենայն զայս թողութեան զանն երկու

ասաց, և՛ զաւ մի զինուորեա, այլ մնաս ասաց առ իս զերկու աւուրս։ Եւ լուեալ նորա մնաց առ նա։ Եւ զհետ երից աւուրց ննջեաց խաղաղութեամբ։

ᵃ Ասեն և վասն Յովհաննու աշակերտին Պաւղոսի՝ եթէ ունէր նա հնազանդութիւն մեծ. և էր մերձ առ նոսա որջ մի, յորում բնակէր բորենի մեծ։ Իսկ ծերն տեսանէր 'ի տեղւոջն յայն բանջար մատղաշ՝ և ասէ ցաշակերտն իւր. գնացեալ բերցես զբանջարն զայն։ Եւ նա ասէ. և զի՞նչ արարից թէ գայ 'ի բորենին։ Ասէ ցնա ծերն ծաղրելով. եթէ գայ 'ի վերայ քո, կապեալ կացո զնա և բեր առ իս ընդ քեզ։ Եւ գնաց երեկոյին այն յերեկոյին, և բորենին եկեալ զնա բռնել՝ գնաց 'ի վերայ նորա։ Իսկ նա ըստ բանի ծերոյն կապեալ զնա կացուցանէր և բերէր առ ծերն։ Իսկ ծերն հոգացեալ մնայր նմա. և ահա գայր երեկոյին և ունէր ընդ ինքեան կապեալ և զբորենին։ Եւ իբրև ետես ծերն, զարմացեալ և կամեցաւ խոնարհեցուցանել զնա, եհար զնա և ասէ. յիմար, մեր բերեալ զհատուկ շուն։ Եւ լուծեալ ծերոյն զբորենին՝ եթող գնալ 'ի տեղի իւր։ Զաւն 'ի հնազանդել եղբօր ծերոյն, հնազանդեցաւ և բորենին նորա։

ᵇ Պատմեցին մեզ վասն հօրն Յովհաննու կարճահասակի՝ եթէ գնաց նա երբեմն առ ծեր մի Թեբայեցի 'ի Սկիտէ, և մնացեալ յանապատի 'ի հնազանդութեան ծերոյ։ Իսկ ծերն այն առեալ փայտ չորացեալ անկեաց յերկիր և ասէ ցնա. յամենայն օր ուռոգեսցես զսա ջրով, մինչև պտղաբերեսցէ։ Եւ էր ջուրն հեռի յոյժ 'ի տեղւոջէն յայնմանէ, այնչափ մինչ զի յերեկոյին

յամենայն աւուր բերէր անտի ջուր, և այսպէս արձակեցաւ տանելին զաղարութիւն և եբեր պտուղ: Այս զարմացեալ ծերքն և փառաւորեցին զԱծ, և առեալ 'ի պտղոյն տանէր բաշխէր բազմաց և ասէր. առէք կերայք զպտուղ լսողութեանս թէ որպէս քաղցր է:

Ի ՍԱՀՄԱՆՍ Երուսաղէմի 'ի ձոր մի մեծ և խոր, յարում էր վանս ճգնաւոր կրօնաւորաց, և յեզր ծայրին բարձր քարայր մի. և ոմն մի 'ի կրօնաւորաց վանացն երիտասարդ ցանկացաւ երթալ և բնակել անդ միայն, և աղաչէր զհայր վանացն զի թողցէ անդ, և հայրն արգելոյր և չտայր թոյլ, և ասէ ցնա. որդեակ, ոչ կարես միայն բնակել անդ, զի դեռ ոչ ես ուղղեալ զկարս ճգնութեան և ոչ հնազանդեցուցեալ զչար խորհուրդս մտաց քոց և ոչ 'ի չափ այլոց կրօնաւորացս հասեալ ես, և խնդրես 'ի գործ մտանել՝ որ առ քեզ քան զչափն աւելի է. միթէ անգիտանի՞ ես զխարդախութիւն և զչար հնարս սատանայի եթէ որպէս մարտնչի ընդ ծառայսն այ: Լաւ է քեզ, որդեակ, սպասաւորելով եղբարցդ և յաղօթից նոցա շահել և ընդ նոսա զկարգաւոր ժամանցն զաղօթսն կատարել և զԱծ փառաւորել, քան զմիայնն 'ի քարայրն բնակել և մրցել ընդ չար խորհուրդսն զոր արկանէ չարն 'ի միտս մարդկան. Որ ասաց՝ եթէ ուր իցեն երկու և երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես 'ի միջի նոցա. բայց վայ միոյն, զի եթէ անկցի 'ի նեղաւորութիւն և ձանձրանայ 'ի միտս իւր, ոչ ոք իցէ որ մխիթարէ և կանգնէ զնա: Այլ այն բազում խրատ տայր կրօնաւորին և ոչ կարաց խափանել 'ի գործոյն զոր կամեցաւ, և թոյլ ետ նմա առնել զկամս իւր: Այս նա գնաց ընդ այլ կրօնաւորս եղեալ սանդուխս և ելեալ բնակեցաւ անդ, և զսանդուխսն առին: Այս հրամայեաց միումն յեղբարցն հայր վանացն տանել նմա հաց և ջուր ըստ չափոյն, և

ջնջայր և ատամասոսուն պայր: Եւ արար այնպէս ամենայն աւուր անխափան, և զկնի երկից ամաց կանաչացեալ ծառն արար պտուղս: Իսկ ծերն նորա առեալ զպտուղն՝ ուրախացեալ գնաց յայլ իւր վանս յայտնի ցուցանել հնազանդութեան հաւատոր որդեկին իւրոյ երանելւոյն Յոհաննու կարճահասակին: Եւ առեալ ծերոյն զպտուղն զայն եդեալ յեկեղեցւոջն և ասէ ցհարսն. առէք կերէք, զի սա է տուն պտուղ հնազանդութեան: Եւ իբրև լուան հարքն և տեսին զպտուղն ճաշակեցին զոր և կերան՝ ետուն փառս այ և գովեցին զհնազանդութիւնն՝ որ նման հրեշտակի զԱծ սպասել ... :

նա խաղացուցանէր զգառնուկըն և հանէր 'ի վեր ։ Այլ յետ սակաւ ժամանակաց որ 'ի սկզբանէ թշնամին էր մարդկան բանսարկուն՝ նեղէր զնա չար խորհրդովք և ընկենոյր 'ի միտս նորա հպարտութի, և ինքնին հաճէր ընդ բարի ճգնութիւն ։ Այլ 'ի միում աւուր այլակերպեցաւ սատանայ որպէս լուսեղէն հրեշտակ և երևեցաւ նմա և ասէ ․ վասն քո սուրբ ճգնութեանդ և անհանգիստ աղօթիցդ և հրեշտակակրօն վարուցդ առաքեաց զիս տէր ա՟ծ զի բնակեցայց ընդ քեզ և սպասաւորեցից սրբութեանդ քո ։ Ո՞վ է միայնակեացն ․ զի՞նչ բարի գործս արարի որ հրեշտակ սպասաւորէ ինձ ։ Ո՞վ է բանսարկուն ․ զամենայն զոր ինչ առնես՝ մեծ է և ընդունելի առաջի ա՟յ, որ թողեր զերկիր և զամենայն վայելչութիւս և զփափկութիւս երկրի և առեր զխաչ քո, և պահօք և աղօթիւք գնացեր զհետ Ք՟ի, և դարձեալ թողեր զվանսն և եղեալ բնակեցար միայն ընդ հրեշտակս յայսմ քարածերպ վիմաց, և զիա՞րդ ոչ ծառայեն քեզ ։ Նա յայտնի պատրողական բանիւք ընկէց զառաքինեալ միայնակեացն 'ի սնափառութի ․ և յա՟մ ժամ երևէր նմա որպէս հրեշտակ և խաւսէր որպէս մարդ ։ Այլ 'ի միում աւուր գողք մտին 'ի տան մեծատան առն միում և բազում խնչս առին, և թագուցին յանկարծ տեղիս ։ Այլ այրն 'ի բազում տրտմութեան ընթանայր առ միայնակեացն 'ի պատմել նմա զեղեալ գործն ․ և մինչդեռ երթայր, յառաջեաց դևն 'ի քարայրն և ասէ ցմիայնակեացն ․ այր մի գայ առ քեզ, որոյ անուն է Մարուզան, որոյ գողք մտին 'ի տունն 'ի գիշերի և գողացան բազում խնչս և թագուցին յայս նիչ տեղւոջ ։ Այլ յորժամ գնաց այրն, աղաղակեաց 'ի ներքուստ 'ի վեր և ասէ ․ օրհնեա, հայր սուրբ ։ Այլ նա խոնարհեցաւ 'ի պատուհանէն և ասէ ․ մի՛ տրտմիր, Մարուզան, զի գողքն որ գողացան զխնչսն քո՝ թագուցին յայսնիչ տեղւոջ, երթ խնդրեա փութապէս և գտցես ։ Այլ այրն զարմացաւ ընդ կոչումն անուանն իւրոյ և ընդ գիտութի գողացն ․ արագապէս երթեալ 'ի տեղին և եգիտ զամենայն զխնչս իւր, և համբաւեաց ընդ ամենայն երկիրն ընդ այն՝ եթէ միայնակեացն որ 'ի քարածերպ վէմին է՝ սուրբ մարգարէ է ․ և պատմէր եթէ որպէս յառաջագոյն ասաց զանունն և զգողացն և զտեղւոյն ։ Այլ ամենայն սահմանք դաւանէին այնորիկ սուրբ և կանայք

ընթանային առ նա և որպէս 'ի մարգարէէ լսէին բանս 'ի նմանէ, և մեծապէս փառաւորեցաւ անուն նորա։ Այլ յամենայն ժամ ասէին դևքն նմա զոր ինչ լինելոցն էր, և նա դարձեալ ասէր այնոցիկ որ գային առ նա։ Իսկ հայր վանացն և կրօնաւորքն յոյժ սքանչանային և փառաւոր առնէին զԱծ, որ 'ի սակաւ ժամանակս այսպիսի շնորհս ետ միայնակեցին։ Այլ երկու աւուրբ յառաջ քան զտօն համբարձմանն տեառն երևեցաւ նմա սատանայ որպէս հրեշտակ և ասէ. գիտասջիր, հայր սուրբ, որ վասն քո արժանաւոր աղօթիցդ գալոց եմ առ քեզ և այլ հրեշտակք զի բարձցեմ զքեզ մարմնով և հանիցեմ յերկինս, և տեսցես զփառս երկնայինս զոր պատրաստեալ է քեզ Ած զանպատմելի գեղեցկութիւն։ Այլ զայս ասացեալ վերացաւ որպէս թէ յերկինս։ Իսկ ողորմած և մարդասէրն Ած որ ոչ կամեցաւ զկորուստ այնպիսի ճգնութե նորա, ընկէց խորհուրդ 'ի սիրտն զի կոչեսցէ զհայր վանացն առ ինքն և պատմեսցէ նմա զամենայն։ Այլ յորժամ տարաւ սպասաւոր աբեղայն զհացն և ըզջուրն, խոնարհեցաւ 'ի պատուհանէն և ասէ. կոչեա առ իս զհայրն, բեր և զամանդուխան զկնի իւր։ Այլ յորժամ գնացին, ել հայրն 'ի վեր առ միայնակեացն և ողջունեալ զմիմեանս՝ ասէ հայրն. ընդէ՞ր կոչեցեր զիս 'ի վեր։ Ասէ միայնակեացն. զի՞նչ փոխարէնս հատուցից քեզ, հայր պատուական, զոր ընդ իմ անարժանութիւն արարեր։ Ասէ հայրն. և զի՞նչ բարի արարի քեզ, որդեակ։ Այլ նա ասէ. բազում և մեծամեծ բարութիւն արարեր ինձ մեղաւորիս. քանզի քև զգեցայ զհրեշտակակրօն կարգ կրօնաւորութե, քև բնակեցայ 'ի բարձր քարայրի և քև արժանաւորեցայ տեսանել զհրեշտակս և յարաժամ խօսել ընդ նոսա, և ձեր աղօթիւք ընկալայ շնորհս նախագիտութե և մարգարէութեան։ Այլ զայն լուեալ հայրն զարհուրեցաւ զարմացաւ և ասէ. վայ ինձ, որդեակ, ով գերի և թշուառական, դու արժանաւորեցար հրեշտակ տեսանել և մարգարէանալ. վայ քեզ, եղկելի և վատաշնորհ. ոչ ասէի քեզ՝ մի ելաներ 'ի քարայրս յայս, զի մի մոլորեսցին միտք քո 'ի չար դիւաց, վայ քեզ որ խաբեցար 'ի սատանայէ։ Ասէ միայնակեացն. մի՞ զայդպիսի բանս ասեր ընդ իս, հայր, զի ես քո աղօթիւք հրեշտակ տեսանեմ, և խնամեցոյց

են բազում հրեշտակք յառաջ համբարձմանն տեառն և հանեն զիս յերկինս մարմնով և տեսից ես զՔս և աղաչեցից զնա՝ որ և զքեզ առն հանցէ և վայելեսցես ընդ իս յանապատ ուրախութիւն։ Եւ հայրն բախեաց զերեսս իւր և ասէ. այսահարեցար, որդեակ, և ցնորեցան խելք քո, բայց ոչ իշխեց ասել մինչ տեսից զոր ինչ լինելոց է. ես զպիղծ հրեշտակ ոչ տեսանեմ, այլ յորժամ եկեսցեն առ քեզ՝ ասա ինձ։ Եւ խոնարհեցուցեալ զգլուխն իւր 'ի վայր՝ հրամայեաց սպասաւորին առնուլ զսանդուխսն 'ի տեղւոջէն, և եկաց առ միայնակեցին 'ի քարայրն զերկու օրն, և մեծաւ ճգնութբ պաղատանօք աղաչէր զԱծ վասն փրկութեան խաբեալ աբեղային։ Եւ յետ երկու աւուրն եկին դևքն 'ի կերպս հրեշտակաց. և ասէ՝ եկին, հայր, հրեշտակքն։ Եւ նա գիրկս արկեալ միայնակեցին և սկսեաց զձեռս իւր ընդ պարանոցն և աղաղակեաց մեծաձայն. տէր Յիս Քս և բանն այ, օգնեա մոլորեալ ծառայիս քո և մի տար 'ի ձեռս բանսարկուին։ Եւ դևքն քարշէին զտառապեալ աբեղայն և կամէին յափշտակել 'ի գրկացն, և նա այ անուամբն սաստեաց նոցա. և նոքա կորզեցին զկապերտն յուսոյն և վերացուցին մինչև յօդս 'ի բարձունս և անյայտ արարին. և յետ երկուց ժամուց տեսանէին ըզկապերտն որ զայր 'ի վերուստ և անկաւ և պատառեցաւ 'ի բազում մասունս։ Եւ ասէ հայրն ընդ խաբեալ կրօնաւորն. տեսանե՞ս ով տառապեալ, թէ որպէս արարին դևքն ընդ քո կապերտն, և զայն ընդ քեզ կամէին առնել, և որպէս զՍիմոն կախարդն կամէին ընկենուլ զքեզ 'ի բարձանց յերկիր և չարաչար պահանջել 'ի քէն զհոգիդ։ Յայնժամ կոչեաց հայրն զկրօնաւորսն և հանդերձեցին զսանդուխսն և իջոյց զմիայնակեացն և տարաւ 'ի վանսն և կացոյց զնա 'ի սպասաւորութիւն հացին և խոհակերոցին, զի ծառայեսցէ եղբարցն 'ի տեղանն, թերևս ընկճեսցի հպարտացեալ միտքն իւր։ Եւ պատուիրէր ամենայն եղբարցն չտալ ամենևին զմիտս իւրեանց 'ի պատրանս բանսարկու խաբողին ոչ զգայս և ոչ զերազս, զի ամենևին ոչ դադարեն 'ի պատերազմելոյ ընդ այնոսիկ որ կամին կեցուցանել զհոգիս իւրեանց։

# ՄՆԱՑՈՐԴՔ

## յերկրորդ թարգմանութեան

ԱՅՍ Է հայրն Սիմոն՝ եթէ հնազանդութիւն և պահք հնազանդելն զգաղձանս։

ՆՄԱՑ հայրն Սրոփնիէ՝ եթէ հնազանդութիւն և խոնարհութիւն ընծայք հնազանդելն զգեւմն։

ՆՄԱՑ ծեր ումն՝ եթէ զինչ երբեմն մեծն Սամփսոն եղիսեպոս ՚ի վանս միաբանաց, և զկնի սովորական վարդապետութեանցն ասէ ցաշակերտս վանից. ունիմ աստ զեղբայր ոք որ կեայ կամեցցի։ Եւ նա ասէ. առմեներ քեան կամին կեալ, ասէր սուրբ։ Իսկ նա դարձեալ ասէ. ունիմ զոք որ ատացեալ կայ մշտնջենաւոր հնազանդութիւն։ Եւ նա եթէ եղբայր մի և կացցէ զնա ՚ի սրբատ սրբոյն ՚ի ժամու ընթերցուածոյ։ Իսկ զկնի մաշտեկանին առեալ ջուր եղբայրն արկ ՚ի ձեռն սրբոյն Սամփսոնի, և լուաց զձեռս, և ապա ասէ ցնա Սամփսոն. արդ բեր զի և ես արկից ջուր ՚ի ձեռս քո և լուացից։ Եւ նա ՚ի հնազանդութենէն ոչ առնելն ասել ոչ զօրեաց, այլ կալեալ զձեռն լուացաւ։ Եւ սիրեաց սուրբն զնա յայժ. վասն կատարեալ հնազանդութեանն նորա, և ձեռնադրեաց զնա քահանայ և սպաս ընդ իւր։ Նոյնպէս սիրելի է հնազանդութիւնն մարդկան և այլ։

ՆՄԱՑ հայրն Աշայիա՝ եթէ զոր օրինակ զոյն արքունական ծիրանեաց ոչ թափեցի, և դարձեալ և ստուգ ձատոց փափուկք զնկրաւ զարձցի ուր և ձգեսցէ ոք, այսպէս է և որք նոր զայցեն ՚ի կրօնաւորութիւն, եթէ հնազանդեսցին հայրն՝ զնկրաւ ածցեն ՚ի ձեռնադրութիւն կենաց։

ՆՄԱՑ և վասն հօրն Միսիթայ՝ եթէ էր նա խոնարհ յոյժ. և զի յամեալ էր նա յաշակերտութեան մե-

ձի ծերոց եղբայրասիրաց, առեալ էր նա եւ զՀայրն Աբե-ողի եւ զՀայրն Պիմէն, եւ բնակէր նա 'ի լեառն Սինա։ Այս զնոյն երբեմն ասեն 'ի սորայ Հարցն առ նա եւ ասէ ցնա. ծոյլ ես կեաս, Հայր, յանհնարինս յայս։ Պատասխանի նա եւ ասէ. պահեմ զերկուս աւուրս, Հայր, եւ ուտեմ որ ընդ մէջ մի Հաց։ Ասէ ցնա ծերն. բաւ լինի, որդեակ, եւ կերիցես յամենայն աւուր զկէս Հացին որ-նորին։ Այս նա արար նոյնպէս ըստ Հրամանի ծերոյն, փոխանն Հնազանդութեան զմոլորութիւնն զայն պահօք քակեաց։

ԱՍԱՑ Հայրն Պիմէն՝ եթէ կատարեալ Հնազանդութիւն օրինակ Հնազանդութեանն եղ է. (իբր զի այն որ զգեստն է՝ թէ սիրեսցես զու զնոյն, նա եւ նոյն սիրեսցէ զքեզ։

ԱՍԱՑ Հայրն Մովսէս ցեղբայր մին. եկ ստասցուք զՀնազանդութիւն, զի 'ի նմանէ ծնանի խոնարհութիւն եւ համբերութիւն եւ երկայնմտութիւն եւ եղբայրսիրութիւն եւ սէր եւս, եւ սոքա են վահանք Հոգւոց մերոց։ Պատմեալ ասէ. եկ, ով եղբայր, 'ի Հնազանդութիւն ճշմարտութեան, յորում կայ խոնարհութիւն եւ զգօնութիւն, ուրախութիւն եւ համբերութիւն եւ եղբայրսիրութիւն, ողջախոհութիւն, զղջութիւն եւ սէր. քանզի որ ոք ունիցի բարուքս եւ Հաստատուն Հնազանդութիւն, նա կատարէ զամենայն պատուիրանս նոյ։ Պատմեալ ասէ. կրօնաւոր որ պահէ եւ աղօթէ յաճախ, եւ ընդ ծերոց խորհրդոց Հնազանդութիւն ոչ ունի, նա եւ ոչ մի ինչ առաքինութիւն ունի, եւ բնաւ ոչ գիտէ թէ զինչ է կրօնաւորութիւն կամ առաքինութիւն։

ԱՍԱՑԻՆ ոմն զՀայրն Սարապիոն եւ ասէ. տուր ինձ, Հայր, պատուիրան զի պահեցից զնա։ Ասէ ցնա ծերն. տամ քեզ պատուիրան, որդեակ, որպէս եւ խնդրեցեր. մի թողցես զկնին ողորմութեան 'ի մտանելն քո, եւ մի բացցես զդուռ քո տեսանելոյ զնա, եւ մի ընթերցուր զճանկեալ թուղթս նորա, եւ մի նկարեր մտօք զդէմս նորա. վասն զի թէ պէս այս գործ 'ի կատարելոց մեղաց ոչ է, այլ պատճառ մեծի աշխատութեան եւ կորստեան է 'ի մէնի քո. վասն այսորիկ 'ի բաց մերժեալ զնոցին 'ի միտաց քոց այդ։ Այլ 'ի գործն նոյ կատարեալ Համանելոյ մարդկանն անհնար է, որդեակ. բայց զհարկաւորն զայն, եւ զզօրաւորն Հնազանդութեան Հարցն Հրամանաց կալցես յանձին քո Հաստատութեամբ եւ կեցցես։ Այս զնոյն եղբայրքն շահեցան եւ օգտեցան։

ՍԻՆԿՂԵՏԻԿԷ ասէ. որ 'ի միաբանութեան կենցաղոյս եղբարցն

կեցցէ, առանց պարտ է նորա հնազանդութիւն, զի հնազանդութիւն բերէ յինքն զամենայն առաքինութիւնս. և պարտ է առաջնորդին զի խոնարհութեամբ առաջնորդեսցէ անձինն, մի խնդրել զանձինն և մի ծառայել իւրն անձին, այլ հնազանդել հօր հոգևորի: Որգ որք հնազանդեալ եմք յաշխարհէ և յամենայն հոգոց նորա՝ մի դարձցուք անդրէն 'ի նա, և մի ասասցուք՝ անդ փառաւոր էաք և աստ անարգ եմ, անդ մեծատուն և աստ աղքատ. այս ոչ եւս յիշելի է մեզ, այլ հնազանդել հարցն մերոց և կրօնից նոցին և հրամանացն.

ՕՆԵՐՈՅ ումեմն էր աշակերտ, և կամէր զնա զի կացցէ առ նմա մինչև հասցէ 'ի կատարեալ հնազանդութիւն, և ասէ ցնա. առ զգիրս մեր զայս և ընկեա զդա 'ի թոնիր վառեալ: Եւ գնացեալ եղբայրն արար ըստ հրամանի երանելւոյն 'ի ծերոյն առանց յերկմտութեան: Եւ եկեալ ընկեց անդ զգիրքս առ երանութեան, առաժամայն շիջաւ հուրն և ոչ վնասեաց գրոյն: Որդ զայս արար ծերն, զի մեք ծանիցուք թէ որքան բարի իցէ հնազանդութիւնն, և քանզի նա է սանդուխք արքայութեան երկնից:

Այր ումն կրօնաւոր բնակեալ 'ի միաբանութեան վանս, և ունէր ընդ ինքեան զորդի իւր: Եւ հայր վանացն կամեցաւ փորձել զնա և ասէ ցնա. մի բնաւ խօսեսցիս ընդ որդւոյ քում և մի առաւ խօսել նմա ընդ քեզ, այլ համարեա զնա որպէս զօտար ոք: Եւ նա խոստացաւ առնել զայս. և եկաց նա բազում ամս և ոչ խօսեցաւ ընդ նմա: Յետոյ յետ աւուրց ինչ մերձեցաւ օր վախճանի որդւոյ իւրոյ և մերձ էր 'ի մահ, ասէ ծերն ցհայրն նորա. գնա և խօսեա ընդ որդւոյն քո: Ասէ նա ասէ. թէ կամիս՝ պահեսցուք զպատուիրանս քո խաղաղ: Ասէ ծերն, արասցես այդպէս: Եւ մեռեալ որդին, և հայրն ոչ խօսեցաւ ընդ նմա. և զարմացան ամենեքեան, զի յօժարութեամբ կատարեաց զայն 'ի փառս Այ:

ԵՂԲԱՅՐ ումն բնակէր 'ի Սկիւտէ և կամէր գնալ 'ի Հռովմ, և գնացեալ առ ծեր ումն ասէ. ասա ինձ բան, հայր, զի գնամ 'ի Հռովմ. Ասէ ցնա ծերն. և եթէ ասացից քեզ բան ինչ, արասցե՞ս զայն: Պատասխանի ետ եղբայրն և ասէ. այո լսեմ քեզ, հայր: Ասէ ցնա ծերն, գնացեալ 'ի հանդէպ հրաժարեա, և եկ զի պատմեսցես քեզ զինչ արասցես: Եւ գնացեալ եղբայրն հրաժա-

բեաց 'ի հնձոց և եկն առ ծերն ։ Ասէ ցնա ծերն. գնա-ցեալ նստա 'ի սենեկի քո և պահեսցես յերեկայէ մինչև ցերեկոյն, և հաց և աղ միայն ճաշեսցես, և եկեսցես և այլ ինչ ասասցից քեզ ։ Եւ գնացեալ եղբայրն արար զայն և եկեալ պատմեաց ծերոյն ։ Իսկ ծերն իբրև ետես զնա զի մնայ առաքինութեն հնազանդութեն է, ուսոյց նմա զկարգ նստելոյ 'ի սենեկի ։ Եւ գնաց եղբայրն 'ի տունն իւր, և անկեալ յերկիր ողբայր ջերմ արտասուօք զե-րեա առաւուրս և պահաս զղջութ̃ ։ Օկնի այգուրիկ սկսան խորհուրդք իւր շփոթել զմիտսն և ասել՝ եթէ ահա ե-ղեր մեծ ամն և սաստիկ ։ Եւ նա դնէր առաջի զբազ-մութե մեղաց իւրոց և խոստովանէր յոյժ այնու ։ Պար-ձեալ սատանին խորհուրդք նորա. մեծ ապէս մեղաւոր ես դու, և ոչ գոյ քեզ յոյս փրկութե ։ Իսկ նա դարձեալ ասէր. Թէպէտ և յոյժ մեղաւոր եմ ես, այլ արարից զպատկառ աղօթս և զկարգ իմ, և յաստուած յողորմութիւն ն̃յ անթիւ զի թերևս ողորմեսցի ինձ ։ Իսկ իբրև յեր-կուց կողմանցն յաղթեցաւ թշնամին, յայնժամ երևե-ցաւ նմա դևն դէմ յանդիմանս և ասէ ցնա. ձանձրա-ցոյց ընդ քեզ, այր դու ։ Ասէ ցնա եղբայրն. ընդէ՞ր և կամ ի՞նչ պատճառի վասն ։ Ասէ ցնա դևն. եթէ բարձ-րացուցանեմ զքեզ՝ դու փախուցեալ իջանես 'ի խոնար-հութիւն, և եթէ խոնարհեցուցանեմ՝ դու փութաս և ելանես 'ի բարձրութի ։ Ասէ ցնա եղբայրն. ահա է զօրութի իմ և ես յաստուած 'ի նմա ։ Եւ դևն հալածեալ՝ եղև աներևոյթ ։ Իսկ եղբայրն կեցեալ զգաստացեալ շնոր-հօքն ն̃յ և խրատովք ծերոյն՝ եղև ընտրեալ կրօնա-ւոր 'ի ձեռն հնազանդութե հարցն և փառաւորէր զա̃ծ ։

ԱՅԼ ամն եղև կրօնաւոր և գնացեալ բնակեցաւ 'ի վանս, և եթող երիս որդիս 'ի քաղաքի. և իբրև եկաց 'ի վանսն զերիս ամս, սկսան խորհուրդք իւր նեղել և տրտմել զնա վասն մանկանցն ։ Իբրև ետես զնա հայրն վանիցն տրտմալից տխրեալ, և ոչ պատմէր զպատճառս տրտմու-թեն, եհարց ցնա և ասէ. զի՞ տրտմեալ ես ։ Յայն-ժամ եղբայրն պատմեաց նմա և ասէ. երիս որդիս ես ունիմ 'ի քաղաքին, և կամիմ զի և զնոսա բերից աստ ։ Եւ հրամայեաց հայրն գնալ և բերել զնոսա 'ի վանսն ։ Եւ իբրև գնաց 'ի քաղաքն, եգիտ վախճանեալ զերկուս որդիսն, այլ զմին առեալ գայր և զնոսա ընդ իւրեաց ա-

ուեալ էին 'ի վանսն, և հրամանաւ հօրն եւս զմանուկն 'ի տուն հացագործաց վանիցն։ Իսկ հայրն վանիցն էին 'ի տուն հացագործին, և իբրև ետես զմանուկն համբուրեաց զնա և ասէ ցհայր նորա. դու սիրես զսա յոյժ։ Իսկ նա ասէ. այո, հայր, սիրեմ զսա։ Ասէ հայրն. գիտեմ զի սիրես դու զսա, այլ առեալ զսա ձգեսցես 'ի ջեռուցեալ այն փուռն։ Ով ողորմութեց քոց Քս, և զի հնազանդեալ սրբոյ հօրն հրամանաց երանելին այն այր հայր մանկանն՝ առեալ առժամայն զմանուկն ձգեաց 'ի բորբոքեալ յայն հուրն, և եղև սքանչելիք մեծ. զի իբրև զհնոց երից մանկանցն եղև և աստ, քանզի 'ի ցօղ փոխեցաւ բոց փռանն և ոչ կիզեաց զմանուկն և ոչ մազ մի ճմռեաց նմա. և եղև սա իբրև զպատարագն Աբէլի և Աբրահամու նախահօրն, նոյնպէս ամբողջ պահեցաւ մանուկս այս շնորհօքն Քի այ։ Եւ որք լուանն զոհանային զայ. քանզի հանեալ զմանուկն 'ի փռանէն կարմրացեալ գեղեցկութբ և 'ի քրտանցն՝ ետ ցհայր նորա և ասէ. այսպէս սքանչելի իցէ պտուղ հնազանդութե։ Եւ հիացեալ փառս տային այ։

ԱՍԱՑ ծերն՝ եթէ գրեալ է 'ի տեառնէ եթէ յառաջագոյն վիշտք և նեղութիւնք ունիցին, զի սկիզբն ամենայն գործոյ աշխատութբ եղիցի լինել. և ամենայն ոք որ փախչի 'ի վշտացն սկսմանէ գործոց, զրկի նա 'ի գիտութենէն այ. քանզի սկիզբն ուսմանց գրոց ածայնոց աշխատութբ լինի և ո 'ի մանկութէ։ Այսպէս և կրօնաւոր աշխատութբ ստանայ զհնազանդութիւն, և այսպիսեօք լինիցի նա որդի այ և ժառանգակից Քի։ Վասնզի և զայս խնդրէ Քս 'ի կրօնաւորէ և յամենայն քրիստոնէէ, որպէս զի հետևեսցուք սուրբ գրոց. և զոր ուսացուք 'ի նոսա բանիւք՝ զայն գործովք արասցուք, և զի հնազանդեսցուք առաջնորդաց մերոց և հարց հոգևորաց։

ԵՂԲԱՅՐ մի տրտմեցաւ յումեքէ և յարուցեալ գնաց 'ի սկետեսկը առ ծեր մի և ասէ ցնա. հայր, տրտում է անձն իմ։ Ասէ ցնա ծերն. ընդէ՞ր, եղբայր։ Պատասխանի ետ եղբայրն և ասէ. զի տրտմեցոյց զիս մի յոյժ և զրգռէ զիս դէմ հատուցանել նմա առաւելապատկութի։ Ասէ ցնա ծերն. եթէ լուր ինձ և հնազանդեսջիր. զոր ասեմ՝ փրկեսցէ զքեզ այ յախտէդ յայդմանէ։ Իսկ նա ոչ խոստացաւ նմա առնել զոր ասէ։ Ասէ ցնա ծերն. գնա

'ի սենեակ քո և աղօթեա՛ 'ի բոլոր սրտէ և օրհնեա զնա յաղօթս քո: Գնաց եղբայրն և արար այնպէս, որպէս և ասաց ծերն, շաբաթ մի. և ընջեաց այ զտրտմութիւնն զայն 'ի սրտէ նորա վասն հնազանդութեան իւրոյ:

ԵՂԲԱՅՐ մին հնազանդեալ էր ընդ ձեռամբ ծերոյ ումեմն մեծի, և եհարց զնա եղբայրն և ասէ. Հայր, գրեալ է թէ բազում վշտիւք պարտ է մեզ մտանել յարքայութիւն այ. իսկ ես ոչ ինչ վշտանամ վասն արքայութեանն երկնից, և երկնչիմ թէ կորուսից զանձն իմ: Ասէ ցնա ծերն. մի տրտմեսցիս, որդեակ, զի ամենայն որ որ տայ զանձն իւր 'ի հնազանդութիւն հոգևոր հօր իւրոյ, այնպիսին ոչ ևս հոգասցէ ինչ. քանզի հասանել ունի նա հանգստեան յաւիտենից, և նմա բացեալ է դուռն առագաստին, որդեակ. քանզի հնազանդելոցն երկբայութիւն ոչ գոյ մտանել յայն հանգիստն:

ԾԵՐ մին ունէր աշակերտ սուրբ, որ ունէր հնազանդութիւն յոյժ. և որչափ ընդդէմ և խստորնակս ասէր ծերն, զամենայն արագապէս և հաւատով և սիրով և ուրախութեամբ կատարէր. և յորժամ պիտոյ լինէր՝ տայր նմա ծերն չուխայ, և յորժամ կարէր և կազմէր բարւոք և աւարտէր զնա՝ հարցանէր ցնա ծերն և ասէր. կարեցե՞ր զայդ, որդեակ: Եւ նա ասէր. այո՛ կարեցի, հայր: Ասէր ցնա ծերն. երթեալ տացես զայդ այս ումն եղբօր: Եւ տանէր նա այնպէս ուրախութեամբ, և ծերն այլ ևս տայր նմա. և զայս առնէր նա բազում անգամ: Եւ զամենայն աւուրս կենաց իւրոց ոչ տրտմեցաւ նա և ոչ ձանձրացաւ և ոչ անհնազանդեցաւ ծերոյն, և զոր ինչ ասէր նմա ծերն՝ լսէր նա որպէս 'ի բերանոյ այ երանելին այն եղբայր:

ՅՈՀԱՆՆԷՍ սաբայիտն արժանաւոր ձայն ինչ պատմեաց մեզ՝ թէ 'ի վանսն իմ յԱսիոյ, քանզի անտի էր եկեալ արդարն, ասէ՝ ածեալ էր անդ ծեր մի 'ի բացուստ կողմանէ անտի, և էր յոյժ պղերգ և անյագ, և յառաջին զայս ոչ դատեմ զնա, ասէ, այլ զի երևեցայց ես [illegible]: Արդ այսպիսիս ոչ գիտեմ թէ որպէս սատացաւ աշակերտ մանուկ ազայ՝ անուն նորա Ակակիոս, պարզ 'ի մանկութենէ կամաւն իւր և իմաստուն խորհրդով, որ նոյնպիսի և այսմ ծերոյ համբերէր հնազանդեալ նմա, զի բազում իրաց հանապազ անհնազանդից էր նա: Զէ

ոչ միայն անարգանօք և անպատուութ̃՝ այլ և գան հարկանելով յամենայն օր տանջէր զնա . և նա համբերէր այնպիսի անարգ ծերոյն և անողորմ բարուց նորա , զի և ոչ բանիւ միով տրտունջ հանեալ էր 'ի բերանոյ իւրմէ . և տեսանէի ես յամենայն աւուր որպէս գնածոյ ծառայ զնա 'ի չարչարանս : Յաւուր միում հանդիպեալ նմա ասացի . զի՞նչ իցէ , եղբայր Ակակիէ , որպիսի ես այսօր : Եւ նա որպէս 'ի տեառնէ իւր երբեմն զաչսն ինձ ցուցանէր կապուտակեալ , և զպարանոցն և զգլուխն գան հարեալ և վիրաւորեալ եցոյց ինձ : Եւ ես ծանեայ զի վաստակաւոր է մանուկն՝ ասացի ցնա . բարւոք բարւոք , համբերեա և օգտեսցիս յոյժ : Եւ կատարեալ անդ առ անողորմ ծերին ամս ինն , և ոչ ել 'ի նմանէ և ոչ անհնազանդ եղև նմա և ոչ մի՝ յայնպիսի տանջանաց միջէ գալով : Եւ զկնի ինն ամաց փոխեցաւ առ տէր , և թաղեցին զնա 'ի գերեզմանս հարցն : Եւ յետ հինգ աւուր գնաց ծերն որ վերակացուն էր Ակակիոսի՝ առ վերակացու մեծն և ասէ ցնա . Հայր , եղբայրն մեր Ակակիոս մեռաւ : Ասէ ծերն . հաւատա ինձ , եղբայր , ոչ հաւատամ եթէ Ակակիոս եղբայրն մեռաւ : Ասէ ցնա . եկ և տես , հայր , զի ոչ ստեմ : Եւ ելեալ ծերն վաղվաղակի գնաց 'ի գերեզմանն և ասէ . ա՞յս է գերեզմանն Ակակիոսի զոր համարիս մեռեալ : Ասէ . այո , հայր , այս իցէ : Իսկ ծերն մեծ և վերակացուն ձայնեաց որպէս կենդանւոյ առ ճըշմարիտ ննջեցեալն և ասէ . եղբայր Ակակիէ , մեռա՞ր . Իսկ նա որ բարեմիտն էր և լուռ , և յետ մահուան իւրոյ երևեցոյց զհնազանդութիւն իւր և ասէ առ մեծն . զիա՞րդ , հայր , 'ի մարդկանէ որք զգործ հնազանդութ̃ն ունին՝ մեռանել կարեն : Յայնժամ ասէ մեծն ցծերն այն . ով դու , տես զի ոչ է մեռեալ որդի հնազանդութեանն , և զիա՞րդ համարեցար մեռեալ զկենդանի նահատակն զճշմարիտ հնազանդոյն զերանելի մանուկն Ակակիոս : Յայնժամ ծերն որ էր յառաջագոյն վերակացու Ակակիոսի՝ զահի հարեալ անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց արտասուօք , լայր դառնապէս և ասէր ցհայրն . Ես ինքն սպանի զնա : Եւ արար օթևանս մերձ գերեզմանի նորա , և անդ այնուհետև խոնարհութ̃ բ և զգաստութ̃ զամենայն աւուրս իւր լայր ողբով մեծաւ և կոծէր :

ՊԻԱՐՁԵԱՆ . պատմեաց նոյն ծերն՝ թէ հարցի վասն

շինութեան անձին ցմին յեղբարցն որում անունն էր Մն-քակեանէ, որ հնգետասան ամս ունէր 'ի վանս միաբանակեցաց․ որ մանաւանդ յամենեցունց անիրաւէր և հալածեալ լինէր 'ի սպասաւորացն յոտն կալն և 'ի նստելն 'ի սեղանն, քանզի էր մարմնով փոքրահասակ յոյժ և անժուժկալ լեզուաւ։ Իսկ ես ասեմ ցնա․ նայեա 'ի քեզ, եղբայր Մնքակեանէ, ընդէ՞ր 'ի սեղանոյդ ամենայն աւուր հալածիս, և անընթրիս բազում անգամ ննջես։ Իսկ նա ասէ․ հաւատա ինձ, հայր, եթէ օրհնիմ կրօնաւորդ՝ ոչ իշխեն զիս այսպէս տանջել, և ես այսուհետև գիտեմ զմեծութիւն զայն, վասն այն համբերեմ, վասն զի առանց փորձելոյ ոսկին ոչ կատարի։ Այլ կայր մնայր այսպէս Մնքակեանոս 'ի հալածանս և 'ի կատականս։ Այլ 'ի նոյն ամս փոխեցաւ 'ի տէր, և 'ի ժամ փոխմանն ասաց ցհարսն․ գոհանամ զձէնջ և զա̃յ, զի վասն փորձելոյ զիս 'ի ձէնջ և հալածելոյ կատականօք ըստ փըրկութեան իմոյ՝ անփորձ մնայի ես 'ի դիւացն ահա հնգետասան ամ։ Ո այս այսպէս խոստովան եղև որոց կային անդ սուրբ հարքն, և ասացին․ Ճշմարտիւ անփորձ լինին 'ի դիւաց որք ուրացեալք են զկամս անձանց և հնազանդեալք այլոց կամաց և որք անարգ 'ի փառաց աշխարհիս։

Digitized by Google

## ԺԵ

# ՎԱՍՆ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ

ԱԲԲԱՅ[1] Անտոնիոս նայեցաւ 'ի խորս դատաստանին այ, խնդրեաց և ասէ. Տէր, որպէս ոմանք սակաւակեացք լինին և ոմանք ծերանան, և ընդէ՞ր ոմանք տառապեալք և ոմանք փարթամք, արդարքն տառապին և անիրաւքն հանգչին: Ձայն եղև առ նա և ասէ. Անտոնիէ, անձին քում զգուշացիր դու. զի խորս այ ոչ է կարելի քեզ ուսանել:

Ասէ[2] աբբայ Անտոնիոս ցաբբայ Պիմէն՝ եթէ այս է մեծ գործ մարդոյ յորժամ զմեղանս իւր առնու 'ի վերայ իւր առաջի այ, և փորձ գտցի 'ի փորձանս մինչև ցվերջին շունչն: Ասաց դարձեալ աբբայ Անտոնիոս. տեսի զամենայն որոգայթս սատանայի մեկնեալ 'ի վերայ ամենայն երկրի, և հառաչելով ասացի՝ ո՞վ է կարող անցանել ընդ սոսա. և լուայ ձայն որ ասէր՝ խոնարհութիւն:

Ասէ[3] հայրն Պիմէն. եհարց հայրն Մովսէս զեղբայրն Զաքարիա, յորժամ կամէր վախճանել, և ասէ. զի՞նչ տեսանես: Ասէ ցնա. ոչ ինչ լաւագոյն քան զլռութիւն: Նա ասէ. այո որդեակ, լուռ կաց: Նա յոր-

[1] ՀԱՅԵՑԱՒ երբեմն հայրն Անտոնիոս 'ի դատաստանս այ և ասէ. Տէր, որպիսի՞ իցէ զի ոմանք փոքր ինչ աւուրբք կան և մեռանին, և այլք բազում աւուրբք են կան և ծերանան. և կամ ընդէ՞ր անիրաւք ոմանք մեծատունք իցեն, և արդարք աղքատք: Եւ ահա եկն առ նա ձայն յերկնից որ ասէր. Անտոնիէ, զգոյշ լեր անձին քում, զի այդպիսիք դատաստանք այ են, և նորա են քննելիք և ոչ քո, և քեզ ոչ է պիտո խուզել զդոսա:

[2] Ասաց հայրն Անտոն ցհայրն Պիմէն՝ եթէ այս իցէ մեծ առաքինութիւն մարդոյն զի միշտ Թուեսցէ զյանցանս իւր և դիցէ զնոսա առաջի այ, և մնասցէ փորձութեանց մինչև յօրն յետին որպէս անձին շնչոյ իւրոյ, և զի ոչ ոք յանփորձից կարասցէ մտանել յարքայութիւն այ: Քանզի ես տեսի զամենայն ցանցս և զորոգայթս Թշնամւոյն սփռեալ 'ի վերայ երկրի, և հառաչելով ասացի՝ ո՞վ կարիցէ զերծանել 'ի սոցանէ. և լուայ ձայն յերկնից որ ասէր՝ եթէ խոնարհութիւնն զանցանէ և զերծանի յայդոցիկ յամենայնէ:

[3] Ասաց հայրն Պիմէն՝ եթէ հայրն Զաքարիա մինչ հանգերձեալ էր փոխադրիլ մահուամբ, ասէ ցնա հայրն Մովսէս. զի՞նչ տեսանես դու, Զաքարիա: Իսկ նա ասէ. ոչ ինչ լաւ քան զլռելն, հայր: Եւ նա ասէ.

ժամ վճարեալ, մինչդեռ նստեալ կայր առաջին Իսի-դորոս, հայեցեալ ընդ երկինս ասէ. զուարճացիր զուարճացիր, որդեակ իմ Զաքարիա, զի բացան քեզ դրունք արքայութեանն երկնից:

ԱՍԷԻՆ՝ վասն աբբայ Թէոդորի՝ եթէ եղև սարկաւագ 'ի Սկիւթ և ոչ կամէր պաշտել զաստիճանն, վասն որոյ 'ի բազում տեղիս փախեաւ: Եւ յետ այսորիկ ածեն զնա ծերքն. մի թողուր զսարկաւագութիւն քո: Եւ նա ասէ. կալարուք զիս հրաժարեալ մինչև աղաչեցից զԱծ եթէ ընկալցի զիս կալ 'ի տեղւոջ պատարագի: Եւ աղաչելով նորա զԱծ՝ ասէ. եթէ կամիս դու կալ լինէ 'ի տեղւոջս իմում և յաստիճանի՝ ցոյց լինէ: Եւ ցուցանեն սիւն հրոյ յերկրէ մինչև յերկինս, ձայն եղև առ նա և ասէ. եթէ կարող ես լինել իբրև զսիւնս զայս, գնա և պաշտեա զաստիճան սարկաւագութեան: Եւ նա լուեալ զայս՝ դատեաց 'ի միտս իւր ոչ ընդունել զկարգն. և եկեալ յեկեղեցին եդ ծունր եղբարցն, և ասեն ցնա եղբարքն. եթէ ոչ կամիս պաշտել, ապա և 'ի խորհրդոյն զգուշացիր: Իսկ նա ոչ կամեցաւ և ասէ. եթէ ոչ տայք թոյլ, որոշիմ 'ի տեղւոյս յայսմանէ: Եւ այսպէս զնա թողին:

այս, որդեակ, լաւ է: Եւ 'ի մեկնել հոգւոյն 'ի մարմնոյն նստէր և հայրն Իսիդորէ անդ, և նայեցեալ ընդ երկինս ասէ. ուրախ լեր, որդեակ Զաքարիա, զի ահա բացան քեզ դրունք արքայութեան երկնից, խոնարհութեան և լռութեան ունող դու: Եւ սովորութիւնք և օրհնութեանք եղեն 'ի գերեզմանի արտասուօք հանդերձ:

: Ասէին վասն հօրն Թէոդորէի՝ եթէ եղև նա սարկաւագ 'ի Սկիւթ և ոչ յանձն էառ կատարել զպաշտաւորութիւն իւր, այլ փախեաւ և գնաց 'ի բազում տեղիս, և դարձեալ բերէին զնա անդ և ասէին. միթէ թողուս զպաշտաւորութիւն քո: Ասէ ցնոսա ծերն. թոյլ տուք ինձ, և ես հարցից զՏէր եթէ կամք նորա իցէ՞ կալ ինձ յաստիճանն յայն: Եւ աղաչէր զՏէր և ասէր. Տէր, եթէ կամք քո իցեն առնել ինձ զայն գործ, յայտնեա ինձ: Եւ երևեցաւ նմա սիւն հրոյ բոցացեալ յերկրէ մինչ յերկինս, և ձայն եկն առ նա և ասէ. եթէ կարող ես լինել իբրև զայս սիւն հրոյ, արա զսարկաւագութիւն քո: Զայս իբրև լուաւ, գոհեաց զանձն ոչ ես առնել զսարկաւագութիւն: Եւ իբրև գնաց նա յեկեղեցին, աղաչէին եղբարքն զնա և ասէին. եթէ ոչ առնես զպաշտաւորութիւնս, ապա բաժակն զոնէ կալցես 'ի ձեռին քում 'ի ժամ հաղորդութեան: Այլ նա ոչ էառ յանձն, և ասէր գնալ անտի եթէ ոչ թոյլ տայցեն նմա. և ապա թոյլ տուեալ ոչ ևս նեղէին զնա: Ահա այս իցէ խոնարհութիւն. որ ոք զանձն իւր անարժան համարեալ՝ ոչ լինի նմա փոյթ արհամարհանք:

ԿԱՑԻՆ[1] երբեմն դևք 'ի սենեակն աբբայ Արսենիա և նեղէին զնա. և եկեալ սպասաւորացն 'ի դուրս սենեկին լուան 'ի նմանէ զի ասէր գոչելով առ Ա̃ծ. մի թողցես զիս, զի ոչ երբէք արարի առաջի քո բարի, այլ վասն քաղցրութեան քո արարից սկիզբն։

ԵՐԹԵԱԼ՝ էր երբեմն հայրն Մակար առ հայրն Անտոն և խօսեալ ընդ նմա դարձաւ անդրէն 'ի Սկիւթ, և եկին հարքն ընդ առաջ նորա։ Եւ մինչդեռ խօսէին, ասէ ցնոսա ծերն. Հարցի ցհայրն Անտոն և ասեմ՝ եթէ պատարագողք ոչ կան 'ի տեղւոջն։ Եւ սկսան հարքն խօսել վասն այլ իրաց, և ոչ հարցին և ուսան վասն նորին իրաց զպատասխանիս հօրն Անտոնի, և ոչ ծերն ինչ ասաց ցնոսա։ Զայս ասաց ոմն 'ի հարանցն՝ եթէ իմացան եթէ մոռացեալ լինին եղբարցն հարցումն վասն իրացն, որ եթէ օգուտ է ինքեանց, հարկաւորին ինքեանց ասել զսկիզբն բանին. ապա թէ ոչ հարկաւորեսցին յեղբարցն, ոչ ևս կատարեն զբանն, զի մի գտցին զայն ինչ խօսելով զոր ոչ ոք հարցանիցէ, և երևեսցին դատարկախօսք։

ԵՐԿՈՒ՝ եղբարք էին ըստ մարմնոյ, և կամեցաւ սատանայ որոշել զնոսա 'ի միմեանց։ Արդ յաւուր միում լուցեալ ճրագ կրտսերոյն և եդեալ 'ի վերայ աշտանակին, և ազդեալ սատանայի ընկեաց զաշտանակն և անցոյց զճրագն. և բարկացեալ եղբօր նորա՝ եհար զնա։

[1] Եկեալ երբեմն դևք առ հայրն Արսենի և նեղէին զնա, և գնացին սպասաւորքն և կային արտաքոյ սենեկի նորա և լսէին 'ի ներքուստ զի գոչէր և աղաղակէր և ասէր առ Ա̃ծ. Ա̃ծ իմ, մի թողուր զիս, ոչ ինչ գործեցի բարի առաջի քո, այլ տուր ինձ օգնութիւն զի սկսայց գործել զբարի։ Զի վասն առաւել խոնարհութեան սրտին այնպէս հաւատայր, և գիտէր հաւաստեաւ թէ ոչ ունի ինչ գործ բարի։

[2] Գնացեալ երբեմն հայրն Մակարի առ հայրն Անտոնիոս 'ի տեսութիւն, և իբրև բազումս խօսեցան՝ դարձաւ անդրէն 'ի Սկիտէ, և եկին եղբարքն ընդդէմ նորա։ Եւ իբրև խօսէին ընդ միմեանս, ասէ ցնոսա ծերն. ասացի ես ցհայրն Անտոն՝ եթէ ընդէ՞ր ոչ ունիս դու նշխարս 'ի տեղս քո։ Եւ սկսան հարքն խօսել այլ ինչ, և ոչ հարցին զլրութիւն բանին. և իբրև ոչ հարցին, և ոչ ևս ծերն ասաց նոցա. քանզի եթէ տեսանէին հարքն զոք մոլորեալ 'ի հարցանելոյ զբանս, ոչ ինչ ասէին նոցա։

[3] Եղբարք երկու ըստ մարմնոյ բնակէին 'ի միասին, և կամեցաւ դևն մեկնել զնոսա 'ի միմեանց։ Յաւուր միոջ լուցեալ զճրագ կրտսեր եղբայրն, իսկ դևն շուրջ ետ ճրագին և խորտակեաց զճրագակալն. և առաջին եղբայրն գանեաց զնա բարկութեամբ։ Իսկ նա անկեալ 'ի ծունկս

Digitized by Google

Այլ նորա անկեալ առաջի նորա ասելով՝ հանգերես, եղբայր, և դարձեալ լուցանեմ։ Այլ ահա զօրութիւն տեառն եկն և տանջեաց զդեւն մինչև ցառաւօտն, և երթեալ գիւղին պատմեաց իշխանին զեղելոյն։ Այլ լուեալ քուրմն հեթանոսաց զեղեալսն զոր պատմէր, չոգաւ եղև միայնակեաց, և բուռն հարեալ 'ի սկզբանն զխոնարհութիւն ասելով՝ խոնարհութիւն քակէ զամենայն զօրութիւն թշնամւոյն. զոր օրինակ ինքն իսկ լուաւ 'ի նոցանէ թէ յորժամ խառնեցուցանեմք զմիայնակեացս և դառնայ մի ոք 'ի նոցանէ և անկանի առաջի եղբօրն, խափանէ զամենայն զօրութիւնս մեր։

ԱՍԱՑ աբբայ Մակարիոս մեծն. որքան անձն սիրէ զփառս մարդկան, հեռի է այնպիսին 'ի փառաց անտի այ, զի խոնարհութիւն ոչ ունի. ապա եթէ ոչ՝ ոչ խնդրէր զգովեստ, որ եղծանելոց է. իսկ ուր խոնարհութիւն ոչ է, չիք անդ և ոչ ինչ։

ԱՅՐ ծեր ոմն բանջարակեր 'ի Յորդանան, և մտեալ 'ի տօթոյն յայր մի, և կայր 'ի ներքս առիւծ և սկսաւ մռնչել։ Այլ ասէ ցնա ծերն. զի՞ նեղիս, գոյ տեղի ինձ և քեզ. ապա թէ ոչ՝ արի և գնա։ Իսկ առիւծն ոչ կարացեալ տանել՝ ել և գնաց։

ԱՍԵՆ վասն հօրն Մակարայ Եգիպտացւոյ՝ եթէ ելանէր երբեմն 'ի Սկիւթայ 'ի լեառն Նիտրեայ. և իբրև մերձեցաւ 'ի տեղին՝ ասէ ցաշակերտն. յառաջեա առ-

ասէ. ներկայացիր ինձ և վառեցէք դարձեալ։ Իսկ ահա եկաւ զօրութիւնն 'ի Տեառնէ և տանջեաց զդեւն, և գնացեալ գեղն պատմեաց իշխանին բոլոր զոր արարին, յորժամ էր 'ի մեհեանն կացին։ Իսկ զոր ինչ պատմէր զնա ընկերաց իւրոց, լսէր զայն քահանայապետն կուռց, և դարձեալ փութով ելեալ գնաց առ միայնակեացն և եղև կրօնաւոր և եառ յանձն խոնարհութիւն մեծ և ասէր՝ թէ խոնարհութիւն լուծանէ զամենայն զօրութիւնս թշնամւոյն, որպէս լուայ ես 'ի քրմաց զիւրեն որ ասէր՝ թէ զմնակ չյաղթեցաք մեք, և ասէին զմեզ, և գնացեալ կրկին ծունր խոնարհութեամբ և խնդրեն թողութիւն 'ի միմեանց և խափանեն զամենայն զօրութիւնս մեր։

[1] Ծեր ոմն բնակէր յեզր Յորդանանու, և 'ի խառնութէ տօթոյն եմուտ 'ի յայր ինչ, և եգիտ անդ ննջեալ առիւծ մեծ յայրն. որ իբրև եւտես զծերն առիւծն այն, սկսաւ գոչել և կռնչել զատամունս իւր։ Ասէ ցնա ծերն. ընդէ՞ր սրտմտեալ ես, զի կայ աստ տեղի ինձ և քեզ. իսկ եթէ դու ոչ կամիս, արի և գնա։ Իսկ անհամբեր յարեաւ առիւծն և գնաց անտի։

[2] Ասէին վասն հօրն Մակարայ Եգիպտացւոյ՝ եթէ ելանէր երբեմն 'ի Սկիւթայ 'ի լեառն Նիտրիոյ. և իբրև մերձեցաւ 'ի տեղին ուր գնալոց էր, ասէ ցնա աշակերտն իւր. յառաջագոյն գնացիր դու փոքր մի։

Digitized by Google

կաւիկ մի ։ Եւ եղև յառաջել նորա պատահէր ումեմն քրմի հեթանոսաց զի ունէր զփքեանս մեծի տօթոյն և ընթանայր. և աղաղակեալ առ նա եղբայրն ասէ. այ դև, ուր երթաս ։ Եւ նորա դարձեալ յետս՝ հարկանէր զնա չարաչար և թողոյր կիսամահ, և դարձեալ առեալ ըզփայտն ընթանայր. և երթեալ սակաւիկ մի յառաջ պատահէր նմա հայրն Մակար զի ընթանայր, և ասէ. կեցջիր, վաստակաւորդ ։ Եւ սքանչացեալ ընդ առ նա և ասէ. զի՞նչ բարի տեսեր յիս և ողջունեցեր զիս ։ Ասէ ցնա ծերն. վասն զի տեսի զքեզ աշխատեալ, և ոչ գիտես զի ընդունայն աշխատիս ։ Ասէ ցնա. և ես յողջունին քում զղջացայ և իմացայ եթէ մեծին այ ես դու, և այլ ոմն չար միայնակեաց դիպեցաւ և թշնամանեաց զիս և ես հարի զնա մինչև ՚ի մահ ։ Եւ գիտաց ծերն. թէ աշակերտն իւր է ։ Եւ կալեալ զոտս նորա ասէր. ոչ թողից զքեզ, բայց եթէ արասցես զիս միայնակեաց ։ Եւ եկեալ ՚ի տեղին ուր կայր եղբայրն, ՚ի վեր ամբարձեալ զնա բերին յեկեղեցի լերինն, և տեսին զքուրմն ընդ նոսա, արարին և զնա միայնակեաց ։

ԿԵՐՊԱՐԱՆՕՔ՝ հրեշտակի չոգաւ սատանայ առ ոմն ՚ի ծերոցն և ասէ ցնա. ես եմ Գաբրիէլ առաքեալ ՚ի

Ասէ ծերն. գնացեալ ։ Եւ ՚ի գնալն իւրում աշակերտն դիպաւ ումեմն քրմի կռոցն, և ձայնեաց զկնի նորա և ասէ. ով դև դու հեթանոս, ուր ընթանաս ։ Եւ նա դարձաւ և եհար զնա ուժգին հարկանելով, և թողացեալ զնա ենթող կիսամահ և գնաց ։ Եւ իբրև անց սակաւ մի, դիպաւ նմա հայրն Մակարի և ասէ. կեցցես կեցցես, աշխատեալդ դու ։ Իսկ նա զարմացաւ և ասէ ցնա. զի՞նչ բարի տեսանես յիս, զի հարցանես զիս ։ Ասէ ցնա ծերն. տեսի զքեզ վաստակեալ, և ոչ գիտես զի ունայն աշխատիս ։ Եւ նա ասէ. և ես զղջացայ ՚ի հարցանելն քո զիս, և ծանեայ զի մարդ այ ես դու. իսկ այլ ոմն չար կրօնաւոր դիպաւ ինձ և անարգեաց զիս, և ես հարուածս եդի ՚ի վերայ նորա մահաչափս ։ Եւ ծանեաւ ծերն զի աշակերտն իւր էր այն զոր ասէր նա ։ Եւ անկեալ առաջի ծերոյն քուրմն կռոցն կալաւ զոտից նորա և ասէ. ոչ թողից զքեզ, եթէ ոչ արասցես զիս կրօնաւոր ։ Եւ եկեալ ՚ի տեղին ուր էր աշակերտն, բարձին և բերին զնա յեկեղեցի լերինն ։ Եւ իբրև տեսին ընդ ծերոյն և զքուրմն՝ սքանչացան, և իբրև լուան զպատմութիւն քրմին ՚ի հաւատս գալստեանն նորա՝ զամենեցին զխանդաղատութիւնն, որ գիտէ հաճոյ լինել այ և մարդկան. և միաբանեալ զնա արարին կրօնաւոր ։ Եւ բազումք ՚ի հեթանոսաց գային վասն նորա և քրիստոնեայ լինէին ։ Եւ օրհնէին ամենեքեան զԱծ, քանզի բան բարի զչարս ՚ի բարիս փոխարկէ, և բան չար զբարիս ՚ի չարս արկանէ ։

։ Եղբօր ումեմն երևեցաւ դևն, եղեալ իբրև զհրեշտակ լուսոյ, և ասէ ցնա. ես եմ Գաբրիէլ հրեշտակ այ և առաքեցայ առ քեզ ։ Իսկ

Digitized by Google

տեսանէ տա քեզ ։ Եւ ծերն ասէ ․ միթէ տա այլ որ առաքեալ իցես , զի ես մերձաւոր եմ ։ Եւ 'ի խոնարհ բանից ծերոյն չիք եղև չարն 'ի միջոյ ։

ԵՐԲԵՄՆ՝ սատանայ կամեցաւ փորձել զՄակար , և կերպարանեալ զինքն 'ի նմանութիւն առն՝ ասէ ցՄակարիոս ․ ես եմ Քրիստոս , եկի տեսանել զվաստակաւորդ մեծ ։ Եւ Մակարն ծանուցեալ զդաւն և ասէ ․ ես զՔրիստոս յայսմ աշխարհի ոչ կամիմ տեսանել ։ Եւ զարմացեալ դևն փախեաւ ասելով ․ որքան խոնարհութիւն ես որդւոց մարդկան որդին Մարիամու ։

ԵՂԲԱՅՐ մի տարակուսեցաւ 'ի բանս գրոց և խնդրեաց յԱյ գիտութիւն շաբաթ պահօք և աղօթիւք և ոչ յայտնեցաւ նմա , և ապա խորհեցաւ գնալ առ վարդապետն բանից ուսանել 'ի նմանէ ։ Եւ յորժամ ելաւ ընդ դուռն , երևեցաւ նմա հրեշտակ տեառն և ասէ ցնա ․ ահա եօթն շաբաթ խնդրեցեր և ոչ առեր ․ արդ վասն զի խոնարհութեամբ սկսար գնալ առ եղբայրն , այդ եկած զմեծ 'ի գութ , և առաքեաց զիս մեկնել քեզ զբանն ։ Եւ յայտնեաց նմա ։

ԱՅԼ եղբայր մի եկն առ ծեր մի և մեծապատիւ ան-

եղբայրն ասէ ․ տես միթէ տա այլ որ առաքեցար , զի ես ոչ եմ արժանի տեսութեան հրեշտակի այդ ։ Եւ դևն 'ի նմին ժամու հալածեալ 'ի խոնարհութենէ նորա աներեւոյթ եղև ։ Եւ ծերքն ասէին ․ եթէ և ճշմարիտ հրեշտակ իցէ երևեալն , մի ընդունիցիս , այլ խոնարհեցո զանձն քո և ասասցես ․ ես ոչ եմ արժանի տեսանել զհրեշտակ այդ , զի 'ի մեղս ընկղմիմ ես մեղաւ ։

1 Աւելին զծերոյ ուսմունք՝ եթէ նստէր 'ի սենեկի իւր և ճգնէր , և եկեալ դևն յանդիման և նախատէր զնա ։ Եւ իբրև լուաւ դևն զազատկատակս իւր , որ յանձն առնոյր զամենայն նախատինս խոնարհութեամբ իւր ծերն , յայնժամ փոխեցաւ յայլ կերպարանս ամենայն և ասէ ցծերն ․ ես եմ Քս ։ Եւ իբրև եսես ծերն , կափուցց զաչս իւր ։ Եւ ասէ ցնա դևն ․ ընդէ՞ր խցեր զաչս քո ոչ ես տեսանել զիս , ես եմ Քս ։ Ասէ ծերն ․ ես զՔս աստ տեսանել ոչ կամիմ ։ Եւ նոյն ժամ աներեւոյթ եղև դևն յաղթահարեալ 'ի խոնարհութենէ ծերոյն ։

2 Աւելին զծերոց ուսմունք եթէ պահեաց՝ մի անդամ ճաշակել յեօթնեկին , և խնդրէր մի բան իմն 'ի գրոց , և ոչ յայտնեցաւ նմա Այ ։ Յետոյ ասէ 'ի միտ՝ եթէ այսքան աշխատեցայ և ոչ գտի զնա , արդ գնացից առ եղբայրն և հարցից զնա 'ի նմանէ ։ Եւ իբրև փակեալ զդուռն սենեկին սկսաւ գնալ , յայնժամ եկն առ նա հրեշտակ յԱյ և ասէ ցնա ․ եօթնամսեան շաբաթու պահք և հսկմունք քո ոչ մերձեցան առ Այ այսքան , որքան մերձեցաւ միոյ ժամու խոնարհութիւն քո , որ խոնարհեցար և ելեր գնալ առ եղբայրն , և ահա ես եկի պատմել քեզ զբանն զայն ։ Եւ իբրև ուսաւ զբանն , մեկնեցաւ 'ի նմանէ ։

Digitized by Google

զամ չարախօս եղև նա զխորհրդոց նորոց ծերոյն. և երբեմն խօսէր ընդ եղբայրն ծերոյն՝ փախչէր զնէն, և երբեմն գայր 'ի խուցն իւր՝ դարձեալ գայր զնէն. և համբերեաց եղբայրն, և դադարեաց պատերազմն :

ԱՍՂԵՍ և այլ ոմն 'ի միայնակեցաց պատմէին այր, որոյ անուն էր Ամմոնիոս. որ էր այնպէս անզգամ գործով, եթէ զի 'ի Հռոմ ընդ Աթանասի եղեալ՝ ոչ ինչ ընտրեաց ուսանել 'ի գործոց քաղաքին, բայց միայն զՊաւղոսի և զՊետրոսի մատուռան : Այս Ամմոնիոս յեպիսկոպոսութիւն քարշեալ, և փախուցեալ՝ զաջոյ ունկն իւր եհատ, որպէս զի արգելք ծանականօք մարմնոյն 'ի ձեռնադրութենէն ձողոպրեսցի : Իսկ ժամանակաւ ինչ յետոյ Եւագրիոս 'ի Թէոփիլոսէ յեպիսկոպոսէն Աղեքսանդրու յեպիսկոպոսութիւն ընտրեալ փախեաւ ոչ ինչ ծայրատելով 'ի մարմնոյն. և հանդիպեալ Ամմոնի՝ աջոյն ասեալ ասէր՝ որպէս զի չարաչար իցէ գործեալ կտրել զականջն, և պատասխան որ իցէ Տն զայս արարեալ : Իսկ Ամմոնիոս առ նա. այլ դու, ասէ, ով Եւագրիէ, ոչ կարծես տալ դատաստանս զլեզուդ 'ի բաց հատանելով՝ յաղագս ինքնահաճութեան զտուեալ շնորհան ոչ 'ի գործ արկեալ, այլ թաքուցեալ զնա :

ՄԱՑ աբբայ Մովսէս. որ ոք ունի խոնարհութիւն, խոնարհեցուցանէ զդևս. իսկ որ ոչ ունի, ինքն խոնարհի 'ի դիւաց :

ԱՍՂԲԱՑԻ[1] ոմն եկն առ ծեր մի, եհարց զնա և ասէ. զիա՞րդ կեաս, հայր : Եւ ասէ ծերն. չարաւ կամ, որդեակ : Եհարց դարձեալ. զիա՞րդ, աբբայ : Ասէ ծերն. ահա տասն և եօթն ամք են զի կամ առաջի Այ և զօրհանապազ զիս անիծանեմ և ասեմ, անիծեալ որք խոտորեցան 'ի պատուիրանաց քոց : Եւ զայս լուեալ եղբօրն ել արտասուս, և բազում օգտեալ 'ի խոնարհութենէ ծերոյն գնաց :

ԱՍՀԱՐՑ[2] դարձեալ ոմն եղբայր զծեր և ասէ. զինչ

1 Եղբայր ոմն գնաց առ ծերն և ասէ. զիարդ կեաս, հայր : Ասէ ծերն չար, չարեաց, որդեակ. զի ահա ունիմ երկոտասան ամ յորմէհետէ կամ առաջի Այ և անիծանեմ զանձն իմ և ասեմ, անիծեալ որք խոտորեցան 'ի պատուիրանաց քոց. և ես խոտորեալ եմ, որդեակ : Եւ լուեալ եղբայրն զայս և շահեցաւ յոյժ :

2 Եղբայր ոմն եհարց զծերն և ասէ. զինչ իցէ զերազանութիւն կրօնա-

է յառաւելադիմութի անձին մարդոյ ։ Նա ասէ ծերն . խոնարհութի, և այլ յառաւելադիմութի ոչ է քան զայս . զի որ իջանէ 'ի խոնարհութի, 'ի վեր ելանէ նա 'ի բարձրութի ։

ՀԱՐՑԻՆ՝ ցաբբայ Ղոնգինոս թէ ո՞ր առաքինութի մեծ է քան զամենայն, հայր ։ Նա ասէ ծերն . կարծեմ թէ որպէս ամբարտաւանութի վատթար է քան զամենայն, որպէս զի և 'ի նոյն իսկ յերկնից ընկենուլ զոմանս, բայց եթէ խոնարհութիւն կարող է 'ի նոյն իսկ յանդնդոց վերացուցանել զմարդ յերկինս թէ որպէս զի և իցէ մեղաւոր . քանզի վասն այսորիկ և տէրն նախ քան զամենայն երանէ զաղքատս հոգւով ։ Դարձեալ՝ թէ որպէս մեռեալ ոչ ուտէ, նոյնպէս և խոնարհն ոչ դատապարտէ զմարդ, թէ և տեսանիցէ զնա կուռց երկրպագեալ ։

ԱՍԱՑ՝ ծեր ոմն . խոնարհութի բազում անգամ և առանց աշխատութե զբազումս ապրեցոյց, և վկայէ այսմիկ մաքսաւորն և պոռնիկն և անառակ որդին . քանզի ինչ փոքունս ասացին և ապրեցան ։ Իսկ աշխատութիւն մարդոյ եթէ ոչ ունի խոնարհութի, այն իսկ կորուսանէ զնա . քանզի բազումք մեծամեծ վաստակօք յորոց առնեն՝ յամբարտաւանութիւն գան որպէս փարիսեցին, և կորնչին ։ Դարձեալ . խօսել 'ի հաւատս և ընթեռնուլ վասն հաւատոց՝ ցամաքեցուցանէ զզղջումն մարդոյ և եղծանէ զնա . իսկ վարք հարանցն և բանք սոցա լուսաւորեն զանձն ։

սորք ։ Նաէ ծերն . յաւելումն մարդոյ 'ի բարիս խոնարհութիւն իցէ . զի որչափ իջանիցէ ոք 'ի խոնարհութի, այնչափ յաւելու և ելանէ 'ի բարձրութիւն ։

1 Եղբայր ոմն եհարց ցհայրն Ղունկինոս և ասէ . ո՞ր առաքինութի մեծ իցէ ։ Ասէ ծերն . ես այսպէս կարծեմ, զի որպէս ամբարտաւանութի չար է քան զամենայն մեղս՝ մինչ զի յերկնից 'ի գժոխս ընկէց զբազումս, նոյնպէս խոնարհութին մեծ և կարող իցէ 'ի խորոց անդնդոց յերկինս հանել զմարդն, ըստ բանին տեառն որ ասէ՝ երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութին երկնից . և դարձեալ՝ եթէ ես յո՞ հանգեայց, եթէ ոչ 'ի հեզս և 'ի խոնարհս և որք դողան 'ի բանից իմոց ։ Զի խոնարհն ոչ դատէ և ոչ բամբասէ զոք՝ թէպէտ և տեսանէ զոհեալ ես կուռց ։

2 Ասաց ծերն . խոնարհութի առանց այլ աշխատութե կեցոյց բազում անգամ զբազումս, և վկայեն մաքսաւորն և անառակ որդին, որ սակաւ բան ասացին և կեցին . և աշխատութիւք ամենայն եթէ ոչ իցեն խոնարհութբ., կորուսանեն զմարդ . զի բազումք վաստակեցեալ 'ի վաստակ և 'ի ջան մեծ, և այնու յամբարտաւանութի եկեալ կորեան ։

ԱՍԵՆ՝ երբեմն եղբայր ոմն 'ի Սկիւթ Թեբայեցի և եմուտ եկաց 'ի միաբանակեցաց վանս, և գրեթէ էին ամենեքեան որ էին 'ի վանսն՝ այրք սուրբք, որ կոչէին տաբեննիսացիք։ Իսկ իբրև եկաց սակաւ աւուրս՝ ասէ ցհարախսապետն. աբբայ, տուր ինձ աղօթս և արձակեա զիս, քանզի ոչ կարեմ բնակել աստ։ Ասէ ցնա հայրն. ընդէ՞ր, որդեակ։ Ասէ ցնա եղբայրն. աբբայ, աստ վաստակ ոչ է և ոչ վարձք, քանզի ամենայն հարքն ճգնաւորք են. իսկ ես այր մեղաւոր եմ, երթամ ուր և դատապարտիմ արհամարհիլ և կատակիլ, քանզի այսպիսիք են որ ապաշխարեցուցանեն զմարդ մեղաւոր։ Իսկ վանահայրն զարմացեալ և գիտացեալ եթէ միակ է, արձակեաց զնա ասելով. երթ, որդեակ, և քաջալերեա և զօրասցի սիրտ քո և համբերեա տեառն։

ԵՊԻՍԿՈՊՈՍՔ՝ երկու պատերազմէին ընդ միմեանս, ոմն աղքատ էր և միւսն հարուստ. և ասէ աղքատն ցեկեղեցականս իւր. յաղթեսցուք մեք մեծին և հարստին շնորհօքն Քի։ Այլ ասեն. ո՞ կարէ յաղթել նմա։ Այլ առեալ ընդ ինքեան զեկեղեցականս իւր գնաց առ նա

1 Գնացեալ եղբայր ոմն ճգնաւոր 'ի Սկիւթայ 'ի Թեբայիդ, և մտեալ 'ի հասարակաց վանս եկաց. իսկ հարք վանիցն այնորիկ էին միանգամայն սուրբք, որ և կոչէր տաբեննիսացւոց։ Իսկ իբրև եկաց եղբայրն անդ աւուրս ինչ սակաւ, ասէ ցհայրն վանիցն. տուր աղօթս, հայր, 'ի վերայ իմ և արձակեա զիս, զի ոչ կարեմ կեալ աստ։ Ասէ ցնա հայրն. ընդէ՞ր, որդեակ։ Ասէ եղբայրն. զի աստ աշխատութիւն ոչ գոյ և ոչ վարձս, զի ամենեքեան ճգնաւորք են. իսկ ես այր մեղաւոր եմ և գնամ անդ ուր արհամարհութիւնք և անարգանք գտցեն զիս, քանզի այսպէս սրբեն 'ի մեղաց զմարդ։ Իբրև լուաւ զայս հայրն՝ զարմացաւ և ասէ. գնասցես, որդեակ, գնասցես խաղաղութեամբ և քաջալերեսցի, զօրասցի սիրտ քո և համբեր տեառն։

2 Ասաց ծերն՝ եթէ խոնարհութիւն յաղթէ ամենայն զօրութեանց. քանզի պատմէր մեզ զայս ոմն 'ի հարանցն, եթէ էին եպիսկոպոսք երկու մերձ առ միմեանս և ունէին կարճմտութիւն և հեռ առ միմեանս։ Իսկ էր մինն 'ի նոցանէ հարուստ և հզօր, և միւսն աղքատ և խոնարհ. և խորհէր մեծատունն այն և հզօրն չար ինչ առնել աղքատին այնորիկ։ Եւ զի լուաւ աղքատ եպիսկոպոսն զխորհուրդ մեծատուն եպիսկոպոսին, և ասէ ցպաշտօնեայս եկեղեցւոյ իւրոյ. մի երկնչիք, զի մեք յաղթեմք շնորհօքն Քի. զի գիտէր զինչ առնելոց էր։ Ասեն ցնա պաշտօնեայքն. տէր, ո՞ կարէ յաղթել նմա։ Եւ նա ասէ. կացէք ընդ իս և տեսջիք զփառս Այ։ Յաւուր միոջ ունէր տօն մեծ, և ժողով անթիւ ունէր առ ինքն 'ի տօնի վկայից այնորիկ հարուստ այն եպիսկոպոսն։ Իսկ աղքատն այն եպիսկոպոս էառ զքահանայսն իւր և եկ ընդառաջ նորա և ասէ. զոր ինչ արարից ես, արարէք և դուք և յաղթեսցուք նմա։ Եւ իբրև գայր նա 'ի տօն իւր և ամենայն քաղաքն ընդ նմա

յաւուր յորում ունէր նա մեծ ժողով առ ինքն, և անկեալ առ ոտս նորա, նոյնպէս և իւրքն։ Իսկ նորա տեսեալ ընկեց և զինքն 'ի գետնին և ասէ. յայսմհետէ դու հայր և տէր, և ես ծառայ քո։ Եւ եղև մեծ սէր 'ի մէջ նոցա։

ՀԱՅՐՆ Ալոնիս յոյժ գովեցաւ յեղբարցն, զի հեզութեամբ սպասաւորեաց յաւուրս ժողովոյն, և ոչ ետ պատասխանի գովողացն զնա։ Եւ յորժամ նստէր 'ի տունն, աշակերտն ասէ ցնա. ընդէ՞ր ոչ ետուր պատասխանի գովողացն զքեզ։ Եւ նա ասէ. թէ տուեալ էի պատասխանի, յայտ առնէի թէ ախտացայ ես 'ի բանս նոցա։

ԱՍԱՑ հայրն Իսահակ երէց խրճթացն՝ թէ մինչդեռ էի ես 'ի մանկութեան, նստէի ես առ հայրն Կրոնի, և ոչ երբէք ասաց ինձ թէ արի գործեա։ Եւ էր նա ծեր և դողդոջայր 'ի ծերութենէն, և իւրովի յառնէր և տայր ինձ զհացիկն և ամենայն ումեք նմանապէս։ Եւ ընդ հօրն Թէոդորայ փերմինացւոյ նստայ, և նորա ոչ երբէք ասացեալ էր ինձ վասն գործոյ իրիք, այլ և զսեղանն իսկ իւրովի դնէր և ասէր ցիս. եղբայրիկ, ճաշակեա։ Եւ ես ասացի ցնա. հայր, եկի առ քեզ զի օգտեցայց ինչ, և զիա՞րդ ոչ ասես ցիս ինչ զի արարից։ Իսկ

ընդ նմա գայր, եկն և աղքատ եպիսկոպոսն այն քահանայիւքն իւր։ Եւ անկեալ առ ոտս նորա և ասէ. թողութիւն արասջիր մեզ, տէր, զի ծառայ քո եմք։ Իսկ նա զարմացաւ ընդ գործն այն զոր արար նա, և զղջացաւ, զի նա մանրեաց զսիրտ նորա։ Եւ իջեալ յերիվարէ իւրմէ կալաւ զաջոյ աղքատին և ասէ. դու ես տէր իմ և հայր իմ։ Եւ յայնմ հետէ եղև 'ի մէջ նոցա սէր մեծ։ Եւ ասէր խոնարհն այն ցքահանայս իւր. ո՞չ ասէի ձեզ եթէ մեք յաղթեմք նմա շնորհօքն Քրիստոսի։ Այսպէս յաղթէ խոնարհութիւնն ամենայն զօրութեանց։

1 Նստեալ էին ծերքն յուռել, և կայր յոտին 'ի սպասու հայրն Ալոնի. և իբրև տեսին զնա այնպէս՝ գովեցին զնա, իսկ նա ոչ ինչ ետ պատասխանի։ Ասէ ոմն ցնա առանձին. ընդէ՞ր ոչ ետուր ինչ պատասխանի ծերոցն մինչ գովէին զքեզ։ Ասէ ցնա հայրն Ալոնիէ. եթէ պատասխանի տուեալ էի ինչ, գտանէի ես հաճոյ լեալ ես գովութեան. և զի երկեր զոր սիրեաց սա՝ խոնարհութիւնն է։

2 Ասաց հայրն Իսահակ եթէ մինչ մանուկ էի ես, բնակէի առ հօրն Կրոնոսի, և ոչ երբէք ասաց ինձ՝ թէ արասցես դու զայս ինչ գործ. և այն զի էր նա ծերացեալ և տկար և դողայր 'ի ծերութենէն, և ոչ հրամայէր մեզ ինչ սպասաւորութիւն առնել առաջի իւր, այլ և զջուրն ևս ինքն տայր ինձ և որոց ընդ իս էին։ Եւ յետ որոյ հօրն Կրոնոսի գնացեալ նստէի ընդ հօրն Թէոդորէ փերեմացւոյ. և ոչ նա ասէր ինչ առնել ինձ, այլ ինքն դնէր և զսեղանն և սպասաւորէր մեզ լռութեամբ։ Իսկ ես ասեմ ցնա. հայր, եկի ես առ քեզ թէ շահեցայց ինչ 'ի քէն,

Digitized by Google

ծերն լուռ եւեթ կայր։ Եւ իմ երթեալ և պատմեալ զայս ծերոց, և ծերացն եկեալ ասեն ցնա. Հայր, եթէ եղբայրդ առ քո սրբութիւնդ զի օգտեսցի, արդ ընդէ՞ր ոչ ասես դմա զի գործեսցէ գործ ինչ։ Ասէ ցնոսա ծերն. միթէ գլխաւո՞ր ինչ եմ ես միաբանակեցաց զի հրամայեցից դմա, ես ի՞նչ դմա ասեմ. այլ եթէ կամի զոր ինչ թէ տեսանիցէ զիս թէ գործեմ՝ գործեսցէ դա։ Եւ ապա յայնմհետէ յառաջէր և կատարէր զոր ինչ պատրաստեալ էր ծերոյն գործել։ Բայց նա զոր ինչ եթէ առնէր, զամենայն ինչ լռութեամբ կատարէր. և այսուիկ ուսոյց զկատարեալ լռութիւնն։

ՄԻՆՉԴԵՌ՝ նստէր երբեմն Զաքարիա ՚ի Սկիւթ, եկին ՚ի նա տեսութիւն յոյժ, և յարուցեալ նորա եկն առ հայրն իւր Կարիոն և պատմեաց նմա։ Իսկ ծերն անհմուտ էր տեսութեանց, բայց ՚ի գործս առաքինութեան ջրդնեցուցեալ էր զինքն. յարուցեալ գան հարկանէ զնա՝ թէ ՚ի սատանայէ է քեզ այդ։ Եւ մինչդեռ այն խորհուրդք զնա ստիպէին, յարուցեալ ՚ի գիշերի չոգաւ առ հայրն Պիմէն և պատմեաց նմա զիրսն, և թէ զխորդ հանապազ բոցակէզ լինի փոր նորա։ Եւ գիտացեալ ծերոյն թէ յոյժ է, ասէ ցնա. երթ առ այս անուն ծեր և զինչ ասասցէ քեզ՝ արասջիր։ Եւ երթեալ և յառաջագոյն քան զհարցանել նորա յառաջեաց ծերն և ասաց զամենայն ցնա՝ եթէ տեսանողութիւնդ այդ յոյժ է, աղէ երթ հնազանդեա հօրն քում։

և դու ոչ ինչ ասես ինձ զի արարից։ Եւ նա ինչ ոչ խօսեցաւ բնաւ։ Իսկ ես գնացեալ ասացի զայս ծերոցն, և եկին առ նա ծերքն և ասեն ցնա. հայր, եկն առ քեզ եղբայրս այս թէ շահեսցի ՚ի քէն, և դու ընդէ՞ր ինչ ոչ ասես առնել սմա։ Իսկ ծերն ասէ ցնոսա. միթէ հա՞յր իցեմ ես միաբանից վանից զի հրամայիցեմ, ես դմա ինչ ոչ հրամայեմ և ոչ ինչ ասեմ. ապա եթէ կամի առնել ինչ, զոր ինչ տեսանէ յիս՝ զայն արասցէ և դա։ Եւ յայնմհետէ զոր կամէր նա առնել, ես յառաջագոյն առնէի լռելեայն, զի նա լռելեայն առնէր։ Եւ սորա առաքինութիւնն ուսոյց զմեզ լռելեայն առնել զամենայն։

։ Նստէր երբեմն հայրն Զաքարիա ՚ի Սկիտէ, և ետես տեսիլ ինչ և յարեաւ պատմեաց զայն հօրն իւրոյ Կարիոնի։ Իսկ ծերն հոգևոր էր յոյժ, այլ անփորձ էր յայնպիսեաց, և յարուցեալ գանեաց զնա և ասէ. դիւական է այդ։ Եւ յարուցեալ գնաց Զաքարիա առ հայրն Պիմէն և պատմեաց նմա զայն ամենայն։ Իբրև ետես ծերն թէ յոյժ եղև տեսիլն նմա, ասէ ցնա. գնա դու առ այս անուն ծեր և պատմեա նմա, և զոր ինչ ասասցէ քեզ՝ արասցես զայն։ Եւ իբրև գնաց նա, նախ քան զպատմելն՝ ասէ ծերն. տեսիլն քո, որդեակ, յոյժ էր, այլ դու գնա հնազանդեա հոգևոր հօր քո։

Digitized by Google

ԼԸՐԹԵԱԼ[1] ոմանց առ հայրն Սիսոյ լսել 'ի նմանէ բանս ինչ, և ոչ ինչ խօսեցաւ ընդ նոսա, այլ յամենայն ժամ ասէր՝ Թողութիւն արարէք ինձ։ Եւ տեսեալ նոցա ըզփիւրաւոնսն զոր գործէին, ասեն ցաշակերտսն նորա ցԱբրահամ. զի՞նչ առնէք զփիւրաւոնսդ զայդ։ Եւ նա ասէ. այսր անդր ծախեմք։ Իսկ ծերոյն լուեալ ասէ. և Սիսոյ աստի և անտի ուտէ։ Եւ նոցա լուեալ և յոյժ օգտեալ՝ չոգան խնդութեամբ, տեսեալ զխոնարհութիւն նորա։

ԼԸՐԹԵԱԼՔ[2] երբեմն եղբարք եօթն առ հայրն Սիսոյ և հարցեալ զնա բանս օգտակարս։ Իսկ ծերոյն պատասխանի տուեալ ասէ ցնոսա՝ եթէ յորժամ եկի ես նստայ 'ի տեղւոջս յայսմիկ, չոգայ յառաջագոյն առ հայրն Ովբ և Մորէ, և հարցի ցնոսա զբանս զայս։ Եւ պատասխանի տուեալ նոցա ասեն ցիս. հաւատամս 'ի մեզ։ Եւ ես ասացի՝ այո։ Ասեն ցիս. իսկ երթ և որպէս տեսանես զմեզ եթէ զոր ինչ առնեմք՝ արա և դու։ Եւ հարցեալ զնա եղբարցն եթէ զի՞նչ էին նոցա գործքն, պատասխանի տուեալ ծերոյն և ասէ. մինն 'ի նոցանէ խոնարհ էր, իսկ միւսն հնազանդութիւն մեծ ունէր։ Պատասխանի տուեալ եղբարցն և ասեն. ահա նոքա ցուցին քեզ զիւրեանց գործսն, և դու 'ի քոյոց գործոցդ ասա մեզ։ Պատասխանի տուեալ ծերոյն և ասէ ցնոսա. քաւ լիցի խորհրդոյս այսպէս ասել՝ եթէ քան զամենայն ինչ գլխաւորագոյն այս է՝ զի յամենայն ինչ մարդ զինքն մի ինչ համարեսցի։ Եւ օգտեալ 'ի նմանէ գնացին։

1 Գնացին ոմանք առ հայրն Սիսոյի լսել բան ինչ 'ի նմանէ, և նա ոչ ինչ խօսեցաւ ընդ նոսա, այլ միայն զայս՝ թէ թողութիւն արարէք, հայրք։ Իսկ նոքա իբրև տեսին զփրփրայս նոցա, հարցանէին ցԱբրահամ աշակերտ նորա և ասեն. զի՞նչ առնէք զփրփրայս զայդոսիկ։ Եւ նա ասէ. աստ տամք և անդ միշտ։ Եւ իբրև լուաւ զայս հայրն Սիսոյի ասէ. և Սիսոյի աստ և անդր ուտէ միշտ։ Եւ նոքա իբրև լուան զայս 'ի ծերոյն, շահեցան յոյժ և գնացին ուրախութեամբ 'ի տունս իւրեանց՝ շինեալք 'ի խոնարհութենէ նորա։

2 Պատմէր մեզ հայրն Պետր՝ եթէ գնացին երբեմն եօթն միայնակեացք առ հայրն Սիսոյի մինչ էր 'ի Կղիզմայ, և խնդրէին 'ի նմանէ բան։ Եւ նա ասէ. թողութիւն շնորհեցէք ինձ, զի ես այր տգէտ և տկար իցեմ. այլ գնացէք առ հայրն Ովբ և առ հայրն Աթերիս։ Եւ էր Ովբ 'ի տկարութեան զամս երկարատեան։ Եւ իբրև գնացին առ նա՝ ասեն. ասա մեզ բան, հայր։ Եւ նա ասէ ցնոսա. զի՞նչ ասացից ձեզ, որդեակք, գնացէք և արարէք զոր տեսանէքդ, զի հաճոյ նա է որ նեղէ յամենայնի զանձն իւր։

Այլ օրինակ յերկրորդ թարգմանութենէն. Եղբայր ոմն ասէ ցհայրն Սիսոյի. հայր, ասա ինձ բան։ Ասէ ցնա ծերն. ընդէ՞ր նեղես զիս ասել բան ասա. և թէ կամիս առնել, զոր ինչ տեսանես՝ արա և դու։

ԱՍԷԻՆ՝ վասն հօրն Պիմենի՝ եթէ ոչ երբէք կամէր տալ զբանս իւր և առնուլ գեր 'ի վերայ քան թէ զայլոց ծերոցն, այլ մանաւանդ թէ յամենայնի գովէր զնոսա։

ԱՍԷՐ ոմն յեղբարցն ումեմն ծերոյ մեծի. թէ զառանելի ծեր լսա կամաց իմոց, տխրեցուցանել մեռանելի ընդ նմա։ Եւ ասէ ցնա ծերն ծիծաղելով. ազնիւ ասես, տէր իմ։ Եւ ապա նորա եւս առաւել զօրացեալ 'ի խոնարհութիւն իւր՝ կարծէր թէ ճշմարիտ ասիցէ, վասն զի ոչ իմացաւ զխոնարհութիւն ծերոյն։ Եւ իբրև ետես զնա ծերն՝ եթէ կարծիցէ զինքեանն թէ ազնիւ ինչ ասիցէ՝ ասէ ցնա. եթէ զառանես ծեր լսա կամաց քոց, կամիս բնակել ընդ նմա։ Եւ նա ասէ՝ այո։ Ասէ ծերն. ոչ զի երթիցես դու զհետ կամաց ծերոյն, այլ զի նա երթիցէ զհետ քոց կամացդ. այսպէս հանգչիցին միտք քո։ Եւ յարուցեալ եղբօրն անկաւ առաջի ծերոյն և ասէ. թողութիւն արա ինձ, զի մեծապէս պանծայի կարծելով թէ ազնիւ ինչ ասացի՝ ոչ ինչ ամենևին ասելով։

ՀԱՅՐՆ Արսենիոս ոչ զարդարէր 'ի լաւս զգեստ քաղաքացւոց, և եկաց առն իմաստուն և հեզոյ. և երբ փոխանէր՝ զօղայր, և ասաց. տարէք զիս յանապատ, զի ատեցին զիս զօղանքն։

ԱՍԷՐ հայրն Դանիէլ՝ եթէ յորժամ փախչանէր և բանակէին Արսէն, պատուիրեաց մեզ և ասէ. մի ինչ հոգ տանիք առնելոյ սէր 'ի վերայ իմ, բայց միայն զպատարագն. ես եթէ արարի ինչ ինձ սէր, զայն ունիմ գտանել։

ԱՍԷ՝ դարձեալ հայրն Դանիէլ՝ թէ ոչ երբէք կամեցաւ հայրն Արսէն խօսել և խնդրել բան ինչ 'ի գրոց, որ և կարողութիւն էր իւր՝ եթէ կամէր. այլ և ոչ թուղթ գրէր ումեք վաղվաղակի։

ԱՍԷԻՆ՝ դարձեալ վասն նորին հօրն Արսէնի՝ եթէ որպէս յաշխարհի ունէր հանդերձս ամենապատուականս քան

1 Ասէին վասն հօրն Պիմենի՝ եթէ ոչ երբէք կամէր տալ զբան իւր 'ի վերայ բանի այլոյ ծերոյ, այլ և առաւել գովէր զբանն և զգործս այլոց միշտ։

2 Պատմեաց մեզ հայրն Դանիէլ՝ եթէ ոչ երբէք քննէր հայրն Արսէնի զբանս գրոց, և կարողութիւն յոյժ ունէր թէ կամէր, քանզի ուսեալ և վարժեալ յոյժ էր, այլ վասն խոնարհութեան արտին ոչ կամէր քննել. և թուղթ և ս ոչ գրէր առ այլ ոք վասն անչափ խոնարհութեանն։

3 Հայրն Արսէնի մինչ 'ի պալատին էր՝ ոչ ոք զգենոյր լաւագոյն քան զնա, այսպէս մինչ կրօնաւորն եղև՝ ոչ ոք 'ի Սկիտէ զգենոյր ան-

զհաղորդումն, այսպէս և 'ի Սկիւթ փութայր անապատացն քան զամենեսեան զգենուլ. և յորժամ գայր յեկեղեցին զհետ բազում ժամուց, ընդ սեամբն նստէր, զի մի ոք տեսցէ զերեսս նորա և մի նա զայլոց:

ԱՍԱՑ դարձեալ հայրն Դանիէլ վասն նորուն հօրն Արսենի՝ եթէ էին ոմանք կերպարանք նորա որպէս զՅակոբայն. էր ինքն ամենևին սպիտակ իբրև զձիւն, և ոսկերք նորա ցամաքեալ՝ ունելով զմարմին միայն 'ի վերայ, և մօրուք նորա մինչև 'ի կուրծսն ամենևին սպիտակ, և արտևանունք նորա անկեալ 'ի սաստիկ լալոյ նորա: Բարձր էր ինքն հասակաւ, այլ կորացեալ էր 'ի ծերութենէն. և վախճանեցաւ ամաց իննսուն և հնգից: Ել 'ի պալատէն Թէոդոսի մեծի քառասնամեայ, երէց պալատանն, հայր Արկադեայ և Ոնորեա թագաւորացն. և եղեալ յանապատին 'ի Սկիւթ զքառասուն ամ, և տասն ամ 'ի վերին Տրոյանայ Բաբելոնի ընդդէմ Փեմեայ, և երիս ամս 'ի Կանովպոս 'ի ներքին կողմանն, և այլ ևս երկուս ամս դարձեալ եկն 'ի Տրոհի մեհեանն և անդ ննջեաց: Եւ եթող ինձ զպատուիրանն իւր զմաշկեղէն և զմազեղէկանս սպիտակ և հողաթափս արմաւենիս, և ես անարժանս ագանէի զայն զի օրհնեցայց:

ԱՍԵՆ՝ վասն որումն ծերոյ 'ի Սկիւթ՝ եթէ ծառայ էր լեալ և գայր ամի ամի յԱղեքսանդր և բերէր զվարձս տերանցն իւրոց: Իսկ նոքա ընդ առաջ երթային նորա

արդարադոյն քան զնա մինչ գայր յեկեղեցին 'ի խոնարհութենէ սրտին: Եւ իբրև գայր յեկեղեցին՝ զսիւնիւն կայր, զի մի ոք տեսցէ զերեսս նորա և ոչ ինքն զայլ ոք տեսցէ: Եւ էր տեսանել նորա իբրև զհրեշտակի մի. սպիտակ էր իբրև զՅակոբ նախահայրն, և բարեկարգ մարմնով և առողջ և ցամաք տեսիլն, և մօրուսն Թու և երկայն մինչև 'ի ծունկսն, և յոնքն և թերթքն փետրեալ յարտասուացն, և երկայն էր հասակաւ՝ այլ կորացեալ 'ի ծերութենէն. և եղեն ամենայն աւուրք կենաց նորա ամք իննսուն և հինգ: Արդ 'ի պալատին եկաց ամս քառասուն, և 'ի Սկիւթ եկաց ամս քառասուն, և 'ի վերին Բաբելոն 'ի Տրոյանոս եկաց ամս տասն, և 'ի Կանոպոս եկաց ամս երիս յԱղեքսանդրիա. և դարձեալ 'ի Տրոյի 'ի Տրոյանոս եկաց ամս երկուս և անդ ննջեաց, և կատարեաց բարւոք և խաղաղութեամբ և երկիւղիւն այ լցեալ էր: Եւ էր ինքն այր բարերար և մի հաւատով և հոգւովն սրբով. Իսկ ինձ աշակերտիս իւրում եթող զմաշկեակս իւր և զմազեղէնն և զափրայակեղն ամենայնիւ. և ես անարժանս զգեցայ զնոսա, որպէս զի օրհնեցայց 'ի նմանէ:

( Դարձեալ ասէ հայրն Դիլաս վասն ծերոյ միոյ որ բնակէր 'ի Սկիւթի, թէ ծառայ էր ուսեալ և եկն 'ի կրօնաւորութիւն, և եղև հանճարեղ և խոնարհ յոյժ, և յամենայն ամի մի անգամ երթայր յԱղեք-

և երկիր պագանէին նմա։ Իսկ ծերոյն արկեալ ջուր 'ի կոնքն և մատուցանէր նոցա զի լուասցեն։ Իսկ նոքա ասէին՝ թէ մի՛ առնես զայդ, հայր, և մի՛ լինիր մեզ բեռինք։ Իսկ ծերն ասէր. խոստովանիմ զի ծառայ եմ ձեր, տեարք, և գոհանամ զձէնջ զի թողէք զիս ծառայել ձե՛զ աստ. այլ ես տամ ձեզ ջուր լուանալոյ, և զվարձկանութիւն իմ պարտիմ ձեզ։ Իսկ նոքա հակառակէին և ոչ առնուին յանձն։ Ասէ ցնոսա. եթէ ոչ կամիք ընդունել, նստիմ աստ և ծառայեմ ձեզ։ Եւ երկուցեալք 'ի նմանէ՝ թողուին նմա զոր ինչ եթէ խորհրեսցէ առնել, և յուղարկէին զնոսա պատուով և բազում պիտոյիւք, զի տարասցէ վասն նոցա սէր. և վասն այսորիկ եղև անուանի մենակեաց 'ի Սկիւթ։

ԱՍԱՑ 'հայրն Սահակ Թեբայեցի՝ թէ ոչ երբէք մտուցի 'ի խուղն իմ խորհուրդս վասն եղբօր՝ որոյ զիս նեղեալ է, և ես դարձեալ փութացայ զի մի՛ ունիցի եղբայրն 'ի խղճին վասն իմ խորհուրդս ինչ։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց զծերն 'ի հարանցն և ասէ. ընդէ՞ր խոնարհիմ ես և անկանիմ առաջի նորա եթէ ընդ իս է ոք թշնամութիւն, և տեսանեմ զի ոչ ունի յատակ խորհուրդս ընդ իս։ Ասէ ցնա ծերն. ասա ինձ զճշմարիտն, ո՞չ ունիս 'ի սրտի քում արդարութիւն յորժամ խոնարհեցուցանես զքեզ նմա, և թէ նա յանցեաւ ինձ, այլ վասն պատուիրանին խոնարհիմ ես նմա։ Ասէ ցնա եղ-

սանդղիւս առ ոտսն իւր և տեսանէր և ողջունէր զնոսա գթով, և արկանէր ջուր 'ի կոնք և կայր լուանալ զոտս սոցա իւրոյ։ Իսկ նոքա աղաչէին զնա և ասէին. մի, հայր, մի առներ զայդ և մի ծանրացուսցես զբեռն մեր։ Իսկ նա ասէր. խոստովանիմ զի ծառայ ձեր եմ, և այս բաւական է ինձ որ աղաչեցիք զիս ծառայել ձեզ։ Եւ արդ եթէ ոչ ընդունիք զայս սակաւ սպասաւորութիւնս յինէն, գնամ ես 'ի ծառայութիւն ձեր, և այլ ոչ ևս գնամ 'ի Սկիւթէ։ Իսկ նոքա իբրև բազում անգամ ասէին և նա ոչ լսէր, յայնժամ թողին լուանալ զոտս իւրեանց. և նա փութով և սիրով և բազում պիտոյիւք առաքէին 'ի Սկիւթէ, և կայր ճգնութեամբ սիրեալ յամենեցունց վասն խոնարհութեան։

1 Ասաց հայրն Իսահակ. ոչ երբէք ածի ընդ իս 'ի սենեակս խցում չար խորհուրդ զեղբօրէ որ տրտմեցոյց զիս. և զայն ևս փութայի, զի մի և եղբայրն ևս տարցէ 'ի սենեակ իւր չար խորհուրդ վասն իմ տրտմելոյ յինէն։

2 Եղբայր ոմն եհարց զծերն և ասէ. ընդէր ես կրկնեմ զծունկս այնմ որ ունի ընդ իս խէթ և ոչ սրբէ առ իս զսիրտ իւր։ Ասէ ցնա ծերն. ճշմարիտն ասա ինձ, ո՞չ համարիս արդար զու զքեզ մինչ խնդրես դու թողութիւն 'ի նմանէ, իբր թէ նա անիրաւ իցէ։ Ասէ ցնա եղ-

եղբայրն. այս այսպէս է: Ասէ ցնա ծերն. յաղագս այնո-
րիկ ոչ կատարեցին կամք քո յայ՝ զի ոչ յստակ միտօք խո-
նարհիր, այլ որպէս թէ ոչ յանցուցեալ իցես նմա, այլ
այնպէս ածես զմտաւ՝ եթէ նա յանցեաւ: Բայց այս-
պէս եթէ նա յանցանիցէ քեզ, դիր 'ի մտի քում եթէ
ես յանցեայ նմա, և զեղբայրն քո արդարացո. և յայն-
ժամ ած կատարէ զկամս քո, զի յստակեսցին խոր-
հուրդք նորա ընդ քեզ: Եւ պատմեաց ծերն օրինակ
այսպիսի ինչ. էին անինք աշխարհականք երկուքանձք, և
խորհեցան միաբան գնացին և եղեն միայնակեացք. և նա-
խանձու ած բերեալ լինէին, և բառ աւետարանական
բանին ոչ գիտելով ներքինացուցին զինքեանս՝ կարծե-
լով թէ վասն արքայութեան երկնից է: Եւ լուեալ եպիս-
կոպոսապետին Աղեքսանդրու՝ 'ի բաց մերժեաց զնոսա:
Իսկ նոցա կարծեցեալ եթէ ազնիւ ինչ գործեցին, զայրա-
ցան ընդ նմա և ասեն. մեք ներքինացուցաք զմեզ վասն
արքայութեանն երկնից, և սա մերժեաց զմեզ, եկայք
երթիցուք և ասասցուք վասն դորա ցեպիսկոպոսապետն
Երուսաղէմի. և երթեալ պատմեցին նմա զամենայն:
Ասէ ցնոսա եպիսկոպոսապետն Երուսաղէմի. և ես մեր-
ժեմ զձեզ: Խռովեալ դարձան ընդ նմա և չոգան յԱն-
տիոք առ միւս ևս եպիսկոպոսապետն և պատմեցին զա-
մենայն որ ինչ եղև. և նա դարձեալ արտաքսեաց զնոսա:
Ասեն ցիրեարս. եկայք երթիցուք 'ի Հռոմ առ հայրա-

պետն. այս այսպէս իցէ ասէր իմ: Ասէ ցնա ծերն. վասն այնորիկ ոչ
հաստատէ զնա ած լսել քեզ և սրբել զմիտս իւր վասն քո, զի դու
ոչ գիտես առ նա իբրև զյանցաւոր, այլ ունիս զքեզ արդար, և յան-
ցեալ իբրև զնա կարծես: Եւ ասաց առ նա ծերն օրինակ այսպիսի ինչ.
եթէ էին արք գաւեհիկք երկուքանձք յայլ, և եղեն կրօնաւորք, և ա-
ռաւել ջերմացեալ 'ի սէրն այ. և նախանձու ածպաշտութե ըստ բանի
աւետարանին՝ անգիտութե գնացեալ՝ զհրամանն աւետարանական ոչ ի-
մացեալ, այլ վասն արքայութեն երկնից զանձինս իւրեանց արարին
ներքինիս: Եւ լուաւ վասն նոցա եպիսկոպոսն Աղեքսանդրու և ընկեց
զնոսա 'ի հաղորդութէ սուրբ խորհրդոյն: Իսկ նոքա տրտմեցան վասն
այնորիկ և ասեն. ներքինիք արարաք զանձինս մեր վասն արքայութեն
այ, և նոքա արգելին զմեզ 'ի հաղորդութէ. և արդ գնասցուք պա-
տմեսցուք զայս Երուսաղէմի պատրիարգին: Եւ գնացեալ պատմեցին
զայս նմա եա: Ասէ ցնոսա Երուսաղէմի պատրիարգն. և ես արտաքսեմ
զձեզ 'ի հաղորդութէ: Իսկ նոքա տրտմեցան յոյժ և վասն նորա և ա-
սեն. գնասցուք առ Անտիոքայ պատրիարգն և պատմեսցուք նմա: Եւ
երթեալ պատմեցին և նմա զոր ինչ եղև: Եւ նա ասէ. և ես ևս արգելեմ
զձեզ 'ի սուրբ խորհրդոյն: Յայնժամ ասեն ցմիմեանս. գնասցուք առ
պապն Հռոմայ, և նա զատ արասցէ մեզ վասն այսորիկ: Եւ եկեալ

Digitized by Google

պետս, և նա խնդրէ զկեանս մեր յամենեցունց 'ի տեղա-
նէ։ Արդ երթեալ առցա առ մեծ եպիսկոպոսապետն
Հռոմայ՝ առաջին ցնա զոր ինչ եթէ արարին ընդ նոսա
եպիսկոպոսապետքն. և եկայք առ քեզ, զի դու ես գլուխ
ամենեցուն։ Ասէ ցնոսա եպիսկոպոսապետն. և ես մեր-
ժեմ զձեզ և որոշեալ էք։ Յայնժամ 'ի վաղանս մի-
աբեալ ասեն ցերեարս. սոքա ընկեր ընկերաց շողոմս առ-
նեն վասն ժողովելոյ 'ի սինհոդոսն, այլ եկայք երթի-
ցուք առ սուրբն մեր առ եպիսկոպոսն Նարկիսոն 'ի Երուս-
աղէմ, զի մարգարէ է և ոչ ստեղծ աչքն մարգար։ Իսկ իբրև
մերձ եղեն 'ի քաղաքն, յայտնեցաւ նմա վասն նոցա և
առաքեաց 'ի պատահումն նոցա, հալածեաց զնոսա և
ասէ. և յիմ քաղաք մի մտանէք։ Յայնժամ խոսել
սկսան ընդ իրերաս և ասել. արդարեւ մեք յանցեաք և
զի արդարացուցանելք զմեզ. զի եթէ նոքա անիրաւու-
թեամբ մերժեցին զմեզ, մինթէ և մարգարէս այս. աստա
ած յայտնեաց նմա վասն մեր։ Իսկ բարդաւին զինքեանս
յայժ վասն յանցանմանն զոր արարին։ Յայնժամ զխոստ-
ցեալ սրտագինոյն մեր եթէ բարդաւին զինքեանս ձշմար-
տութեան, կատարեաց զկամս հօրն Նարկիսոսի եպիսկո-
պոսի։ Իսկ ինքն իսկ առաքեաց և ած զնոսա մխիթարել
զնոսա, ժողովեաց 'ի մի տեղի և գրեաց առ եպիսկոպո-
սապետն Մենդանեցիոս և ասէ. ընկալ զորոշեալսդ քո,

զնացին առ պապն Հռոմայ, պատմեցին զայս ամենայն և նմա և ասեն.
զայս արարին ընդ մեզ. և մեք վասն այսորիկ եկաք առ քեզ, զի դու
արարեալ ես մեզ, զի դու ես աչք և գլուխ նոցա ամենայնի։ Իսկ նա ասէ.
և ես մերժեցի զձեզ, և արգելեալ իսկ էք 'ի հաղորդութէ խորհրդոյն։
Իսկ նոքա արտաքոյ ասեն ցմիմեանս. սոքա ամենեքեան շնորհս առ-
նեն միմեանց, զի 'ի ժողովս ստասնեն զմիմեանս մեզ. և արդ գնաս-
ցուք առ սուրբն Նարկիսոն կեսարացին, զի այր սուրբ և մարգարէ էր.
և ակն ոչ առնու ումեք։ Իսկ իբրև գնացին նոքա և մերձ եղեն 'ի քա-
ղաք նորա, յայտնեցաւ նմա վասն նոցա, և առաքեաց ընդդէմ նոցա
և ասէ. և մի 'ի քաղաքս իմ մտանէք դուք, զի և ես եմ արգելի 'ի խոր-
հրդոյն հաղորդութէ զձեզ։ Յայնժամ եկեալ 'ի միտս ասեն. սաստ-
գաւորս մեզ մեք, և զի թէ այլքն միմեանց շնորհս առնեին և վասն այ-
նորիկ արգելին 'ի հաղորդութէ զմեզ, միթէ և մարգարէս այս զինեաց՝
որոյ և արդ ած յայտնեաց վասն մեր։ Իսկ մեղադրեցին անձանց խո-
րեանց յոյժ 'ի վերայ գործոյն զոր արարին։ Իսկ իբրև եսես սրտա-
գեան ած՝ թէ ճշմարտութբ ապաշխարեցին և ցաւագնեցան յոյժ,
հաւատացեալ սէր լաւագոյն Նարկիսոն եպիսկոպոսն, և կոչեաց զնոսա
առ ինքն և ընկալաւ զնոսա 'ի հաղորդութիւն, և գրեաց առ Մենդ-
անդրոս եպիսկոպոսն և ասէ. ընկալ և դու զորդիս քո. որք թէպէտ
և մեղան, այլ ճշմարտութբ ապաշխարեցին։ Իսկ ասեն ծերքն. այս է

վասն զի առաջաշխարհեցին Ճշմարտութեամբ : Արդ այս են կամք մարդոյ և ընդ այս հաճի ած :

ՄԻԸ [1] հայրն Դանիէլ՝ եթէ երբեմն եկին 'ի հա-րանցն յԱղեքսանդր տեսանել զհայրն Արսէն : Այլ էր ամն 'ի նոցանէ հօրեղբայր երանելւոյն Տիմոթէոսի ե-պիսկոպոսին Աղեքսանդրու, և ունէր զամն յեղբօրոր-դեկացն իւրոց : Այլ էր ծերն յայնժամ հիւանդացեալ և ոչ կամեցաւ տեսանել զնոսա, զի մի և այլք եկեսցեն և աշխատեսցեն զնա . և էր յայնժամ 'ի վիմին 'ի Տրոյի, և դարձան խռովեալք : Դէպ եղև զի եկին բարբարոսք 'ի տեղին յայն, և նորա գնացեալ եկն 'ի ներքին կողմ Եգիպտոսի և անդ լինէր : Այլ լուեալ դարձեալ նոցին ծերոցն՝ եկին տեսանել զնա, և խնդութեամբ ընկալաւ զնո-սա : Ասէ ցնա եղբայրն ամն որ էր ընդ նոսա . գիտես, հայր, զի եկաք տեսանել զքեզ 'ի Տրոյին և ոչ ընկա-լար զմեզ : Ասէ ցնա ծերն . դուք ճաշակեցէք հաց և արբէք ջուր . բայց ես, որդեակ, ոչ հաց և ոչ ջուր ճա-շակեցի, բայց սակայն և ոչ նստայ տանջելով զիս մինչև փորձեցի եթէ հասեալ էք 'ի տեղին ձեր, զի վասն իմ աշխատեցայք դուք . Թողութիւն արարէք ինձ, եղբարք : Այլ մխիթարեալ գնացին :

ՄԻԹ [2] վասն հօրն Պետրոսի և հօրն Եպիփանեայ

բժշկարան մարդոյ, և զի զայս կամի ած զի առցէ մարդ յանձն զյան-ցանս իւր առաջի այ :

[1] Ասաց հայրն Դանիէլ՝ եթէ եկին երբեմն յԱղեքսանդրիա հարք տեսանել զհայրն Արսէնիոս . և էր մինն 'ի նոցանէ հօրեղբայր Տիմո-թէի պատրիարգի որոյ կոչէր Նուպա, ունէր ընդ ինքն և այլ եղբօրոր-դի ամն : Իսկ հայրն Արսէնի էր յայն ժամու տկարացեալ յոյժ, և ոչ ընկալաւ զնոսա, զի մի և այլք գայցեն և նեղեսցեն զնա . և էր յայն-ժամ 'ի վէմն Նկարիոյ, և գնացին տրտմեալք 'ի նմանէ : Իսկ զկնի այ-սորիկ եղև գալուստ բարբարոսացն անդ, և գնաց նքեթեալ անտի Ար-սէնի 'ի ներքին կողմանս և՛ բնակեցաւ անդ . և լուեալ նոքա դարձեալ զբնակիլն նորա անդ և գնացին տեսանել զնա . իսկ նա խնդութեամբ ըն-կալաւ զնոսա : Ասէ ցնա ամն յեղբարցն որ էր ընդ նոսա . գիտես, ով հայր, զի յորժամ եկաք առ քեզ՝ մինչ էիր դու 'ի Տրովադա, և ոչ ընկալար զմեզ, և տրտմեալք գնացաք : Ասէ ցնա ծերն . բարի է . դուք հաց և ջուր ճաշակեցիք յայնժամ, այլ ես և ոչ զայն առի, զի ոչ կա-րէի 'ի տրտմութենէն վասն ձեր, և տանջէի զանձն իմ 'ի հոգոց հոգա-լոյ զձեզ՝ թէ էջէ թէ խաղաղութբ երթիցեն, մինչև կարծէի թէ հա-սալք դուք 'ի տեղի ձեր . և արդ ներեցէք ինձ, և զի վասն իմ աշխա-տեալ եկիք և ոչ մխիթարեցայք : Եւ Ճշմարիտ խոնարհական բանիւ-ազնուագոյն զխօսս նոցա, և նոքա գնացին ուրախութբ շահեալք 'ի տե-ղի իւրեանց :

[2] Բնակէին 'ի միասին հայրն Պետրէ և հայրն Եպիփանիոս յՌայիթ-

եթէ միախորհուրդք էին 'ի հայրին . մինչդեռ ճաշա-կելին նոքա յեկեղեցին, բռնաբարեցին զնոսա զի եկեսցեն 'ի սեղան սրբոցն, և մեծ աշխատութ̃բ երթեալ հօրն Պետրոսի միայն։ Այլ իբրև յարեան, ասէ ցնա հայրն Եպիփանոս . զիա՞րդ իշխեցեր երթալ 'ի սեղան ծերոցն։ Ասէ ցնա հայրն Պետրոս. եթէ նստեալ էր իմ առ ձեզ, որպէս զծեր պատուէիք զիս եղբարքն, և տային ինձ օրհնել յառաջ, և մեծագոյն երևէի 'ի միջի ձերում. արդ երթեալ առ հարսն՝ կրսերագոյն եմ քան զա-մենեսեան և խոնարհ խորհրդովք իմովք։

ԴԱՐՁԵԱԼ՝ պատմեցաւ վասն այլոյ եպիսկոպոսի Ոք-սիրինքացւոյ հօրն Ափուայ՝ թէ յորժամ էր մենակեաց, բազում կրօնաւորութ̃բք վարէր. և յորժամ եղև եպիս-կոպոս, կամեցաւ նովին խստակրօնութ̃բն վարիլ, և ոչ հանդարտեաց, և ընկեց զինքն առաջի տեառն և ասէ. միթէ վասն եպիսկոպոսութեա՞նս մերժեցաւ շնորհն յի-նէն։ Այլ յայտնեցաւ նմա թէ ոչ, այլ յայնժամ անա-պատ էր և մարդ ոչ գոյր և Ա̃ծ օգնական լինէր քեզ, իսկ այժմ աշխարհ է և մարդիկ օգնական լինին քեզ։

Այր՝ ոմն մենակեաց եգիպտացի 'ի Կոստանդնուպօ-լիս առ երանելւոյն Թէոդոսիւ փոքու, և բնակեալ էր

թու. և ուտէին երբեմն եղբարքն սէր յեկեղեցին, և նեղեցին զնոսա գնալ 'ի սեղանն ընդ նոսա, և 'ի բազում նեղութենէն լքեալ գնաց հայրն Պետրէ ընդ նոսա միայն։ Եւ իբրև յարեան անտի, ասէ ցնա հայրն Եպիփանոս. որպէս իշխեցեր գնալ նստել ընդ ծերոցն։ Իսկ նա պատասխանի ետ և ասէ. եթէ նստէի ընդ քեզ՝ իբրև ընդ աւագ եղբօր եղբարքն հրաւիրէին զիս յառաջագոյն օրհնել, և համարեալ էի ես որպէս զմեծ քան զքեզ. իսկ գնացի առ ծերսն, և փոքր քան զամենեսեան և խոնարհ էի մտօք։ Ասէ Պետրէ. ոչ է մեզ պարտ հր-ապարտանալ յորժամ ոք ինչ առնէ ընդ մեզ, այլ գոհանալ պարտիմք զի արժանի եղիցուք համարիլ ինչ առաջի նորա, և 'ի վերայ այսր ա-մենայնի զառաքինութիւս զամենայն ստանալ պարտիմք և առնել։

։ Պատմէին վասն Ոքսիրինքոսի եպիսկոպոսի որ կոչէր Անփի, եթէ յորժամ էր նա միայնակեաց յանապատին, յոյժ ճգնութիւն և վիշտս կրէր. իսկ յորժամ եղև եպիսկոպոս, կամէր նա զնոյն ճգնութիւն կրել և ոչ կարաց. և անկեալ առաջի Ա̃յ ողբայր և ասէր. տէր, միթէ վասն եպիսկոպոսութեա՞նս այս բարձեր զշնորհս քո յինէն։ Եւ երևեցաւ նմա տէր և ասէ. ոչ վասն եպիսկոպոսութեան, այլ յայնժամ յանա-պատն ոչ ունէիր զոք քեզ օգնական դու, և տէր օգնէր քեզ. իսկ այժմ յերկրի ես, մարդիկ օգնեսցեն. վասն զի խոնարհաց և անօգնա-կանից է տէր օգնական և պահապան։

։ Միայնակեաց ոմն բնակեալ էր յագարակ Կոստանդնուպօլսի յաւուրս Թէոդոսի նորոյ Թագաւորի։ Եւ եղև ընդ անցանելն ընդ այն

'ի փոքր խցիկան յանապատի։ Իսկ Թագաւորն գայր անդ միայն, և բազմութիւն 'ի հեռաստ ակն ունէին նմա։ Իսկ նա առեալ զԹագն 'ի գլխոյ իւրմէ և Թագուցեալ բախեաց զդուռն միայնակեցին. և բացեալ նորա զդուռն՝ ծանեաւ թէ Թագաւորն է և լուռ եկաց, ընկալեալ զնա որպէս զմի 'ի զինուորաց. և յաղօթս կացեալ նստան։ Ապա սկսաւ հարցանել եթէ զիա՞րդ կան հարքն եգիպտացիք։ Ասէ նա առ է. ամենեքեան աղօթս առնեն վասն քոյդ փրկութեան։ Ապա հայեցեալ 'ի խուցն՝ ոչ եգիտ անդ նիւթս, բայց միայն փոքրիկ մի փոքր՝ յորում կայր հաց։ Ո՞ւր է միայնակեացն. Ճաշակեա սակաւիկ մի առ իս։ Ապա ասէ. որպէս քեզ կամք են։ Ապա Թրմեաց հաց և արձակ ձէթ և աղ և կերան, և ետ նմա ջուր և արբ։ Ապա ասէ ցնա. գիտե՞ս ով եմ ես։ Ասէ նա. Ած գիտէ ով ես դու։ Պատասխանի առեալ ասաց. ես եմ Թէոդոս Թագաւոր։ Ապա առժամայն երկիր եպագ նմա։ Ա՛րասց. երանի է ձեզ ճգնաւորաց և անհոգաց յաշխարհէս. 'ի թագաւորութեան ծնեալ եմ և ոչ երբեք յագեցայ հացիւ և ջրով որպէս այսօր, և կարի հաճոյ եղև ինձ. և սկսաւ պատուել զնա։ Իսկ նորա յարուցեալ զարձեալ փախեաւ յԵգիպտոս։

ՆՄԱՆ ' ծերքն՝ եթէ երբեմն առաւ մեղ 'ի Սկիւթ միջն սակաւ թուզ. և վասն զի ոչ ինչ էր, ոչ առաքեցաք հօրն Արսենի, զի մի նմա անարգանք լինիցի այն։ Իսկ ծերոյն լուեալ ոչ եկն 'ի ժողովն առնելով. որոշեցիք զիս

Ճանապարհ Թագաւորն, եթող զհետեւողսն և գնաց միայն առ ծերն և բախեաց զդուռն. և ոչ ծանեաւ զնա, այլ իբրև զմի 'ի զինուորացն ընկալաւ զնա. և մտեալ 'ի ներքս արարեալ աղօթս նստան։ Եւ սկսաւ արքայ հարցանել զնա թէ որպէս կան կրօնաւորք յԵգիպտոս։ Ասէ ցնա ծերն. ամենեքեան աղօթեն վասն կենաց Թագաւորին։ Ասէ Թագաւորն. կերիցուք սակաւ ինչ։ Եւ ծերն եբեր առաջի նորա թըրջեալս և ձէթ և աղ սակաւ, և ճաշակեցին արքայն, և ետ ջուր և ըմպեցաւ։ Եւ ասէ ցնա արքայ. ճանաչե՞ս զիս թէ ով իցեմ ես։ Պատասխանի ետ ծերն և ասէ ցնա. Ած ճանաչէ զքեզ։ Ասէ ցնա արքայ. ես եմ Թէոդոս Թագաւոր։ Եւ ծերն երկիր եպագ նմա։ Ասէ արքայ. երանի է ձեզ, ծերք, որք պարապեալ էք 'ի հոգոց կենցաղոյս. իսկ ես 'ի ծիրանիս ծնեալ եմ և սնեալ, և այսպէս համ հացի և ջրոյ ոչ ճաշակեցի երբէք, զի յոյժ ախորժելի էր։ Եւ գնաց արքայ և սկսաւ յայնմհետէ պատուել զնա. իսկ ծերն վասն պատուելոյն Թագաւորին ոչ կամեցաւ կեալ անդ, այլ փախեաւ և գնաց դարձեալ յԵգիպտոս և ասէ. ոչ եմ արժանի առաւելս պատուոյ թէպէտ։
։ Ասեն ծերքն՝ եթէ հասան երբեմն 'ի Սկիւթ եղբարցն սակաւ ինչ թուզ. և զի ոչ ինչ էր վասն սակաւն և անարգեան զայդ՝ ոչ էառեցին.

Digitized by Google

և ոչ ետուր ինձ յօրհնութենէն զոր առաքեաց ա̄ծ եղբարցդ, յորմէ չէի ընդունելոյ արժանի։ Եւ լուեալ ամենեցուն օգտեցան 'ի խոնարհութենէ ծերոյն. և երթեալ երկեցուն տարան նմա 'ի թզոյն և ած փառս 'ի ժողովն մեծաւ խնդութեամբ։

ՆՍՏԷՐ¹ երբեմն հայրն Յովհաննէս 'ի Սկիւթ, և եղբարքն շուրջ զնովաւ հարցանելով իւրաքանչիւր զխորհուրդս իւր, և պատասխանի տայր նոցա իւրաքանչիւր ումեք։ Ասէ ցնա ոմն 'ի ծերոցն. Յովհաննէս, որպէս ըղպոռնիկ ես զարդարելով զքեզ ինքն և բազմացուցանելով զհոմանիս քո։ Ասէ ցնա հայրն Յովհաննէս. Ճշմարիտ ասացեր, հայր, և ոչ է այլ ազգ ինչ, և զայդ ա̄ծ յայտնեաց քեզ։ Եւ յետ այսորիկ ոմն մի 'ի ծանօթից նորա ասաց. ո՞չ արդեօք խռովեցիր 'ի ներքոյ, հայր։ Եւ ասէ ցնա հայրն Յովհաննէս. ոչ խռովիմ, այլ որպէս արտաքոյս եմ, նոյնպէս և ներքոյս։

ԵԿՆ² ոմն 'ի հարանցն առ հայրն Սիսոյ 'ի լեառն հօրն Անտոնի. և մինչդեռ խօսէին ընդ միմեանս, եհարց ցհայրն Սիսոյ և ասէ. ո՞չ ժամանեցեր արդեօք 'ի չափ երանելւոյն Անտոնի, հայր։ Ասէ ցնա ծերն. ես ուստի՞ ժամանեմ 'ի նորա չափն. զի եթէ ունէի զմի ինչ 'ի խորհրդոցն հօրն Անտոնի, լինէի ամենեւին որպէս և զհուր. բայց ակայն գիտեմ զմարդ զոմն զի աշխատութբ համբերանէ այլ ոք տանել խորհրդոց նորա։ Դարձեալ եհարց ցնա և ասէ. այսպէս համարէր արդեօք սատանայ [illegible]։ Ասէ ցնա հայրն Սիսոյ. արդ առաւել հալածէ, վասն զի ժամանակ նորա մերձեցեալ է և խռովի։

յուղարկել հօրն Արսենիոսի, և զի երկեան 'ի պատուելոյ նորա։ Իսկ երկրէն լուաւ զայս ծերն, ոչ գնաց յեկեղեցին [illegible]ութեամբ։

¹ Հայրն Յովհաննէս նստէր երբեմն 'ի Սկիւտ, և շուրջ պատեալ եղբարքն զնովաւ հարցանէին ցնա վասն խորհրդոց։ Ասէ ցնա ոմն 'ի ծերոցն. Յովհաննէս, իբրև զկին պոռնիկ յարդարեալ ես դու, և այժմ առ քեզ շուրջ կացուցեր զատաւորս։ Իսկ հայրն Յովհաննէս համբուրեաց զնա և ասէ. Ճշմարիտ ասես, հայր։ Իսկ մի ոմն յաշակերտացն իւրոց ասէ ցնա. արդ ո՞չ չփոթեցար 'ի ներքս 'ի խորհուրդս, հայր։ Ասէ ցնա ծերն. ոչ չփոթեցայ, որդեակ, քանզի որպէս եմ արտաքոյ, այնպէս եմ և 'ի ներքոյ 'ի սրտի։

² Գնացեալ երբեմն եղբայր ոմն առ հայրն Սիսոյի 'ի լեառն հօրն Անտոնի, և իբրև խօսէին նոքա, ասէ եղբայրն այն ցհայրն Սիսոյի. դեռ ևս դու ոչ եկիր 'ի չափ հօրն Անտոնի, հայր։ Ասէ ցնա ծերն. թէ ունէի ես մի ինչ 'ի խորհրդոցն Անտոնիոսի, լինէի ես բոլորովին հուր. այլ գիտեմ ես մարդ որ աշխատութեամբ կարող էր համբերել խորհրդոցն։

Digitized by Google

ՊՕԷՆ՝ եղև երբեմն հօրն Թէոդորոսի փերմեցւոյ լի-նել տրտմին. և մինչդեռ ճաշակէին եղբարքն, վասն եր-կիւղածութեան լռութեամբ առնուին զբաժակն և ոչ ասէին թէ Թողութիւն արա։ Ասէ ցնա հայրն Թէոդորոս. կո-րուսին միայնակեացք զազնուութիւն իւրեանց վասն ոչ ասե-լոյ եթէ Թողութիւն արա։

ԱՅԼ ոմն ծեր ասաց՝ եթէ ազնիւ է ասել առ իւրաքան՝ Թողութիւն արա, և այսպէս առնուլ. վասն զի այս է ձև միայնակեցի։

ԱՍԷՐ՝ հայրն Սարմատաս. կամիմ զմարդ որ մեղու-ցեալ իցէ և գիտասցէ եթէ մեղաւ և ապաշխարեսցէ ա-ւելագոյն քան զմարդ որ ոչ իցէ մեղուցեալ, և ունիցի զինքն այնպէս որպէս թէ արդարութիւն իցէ արարեալ։

ԱՍԱՑ՝ հայրն Փոքրաս. եթէ Ած կամի ընդ իմ ընդ կեանս, գիտէ որպէս մատակարարէ ինձ. և եթէ ոչ կա-մի, վասն էր ինձ կեանքս։ Ոչ ի ոչ յամենեցունց ընդու-նէր ինչ, և կայր ինքն 'ի կողի և ասէր. եթէ տայր ինչ ոք ինձ և ոչ վասն Այ, ոչ ինչ ունիմ ես տալ նմա, և յԱյ առնու վարձս, զի ոչ վասն Այ ետ զայն, և զրկի որ տայն. զի վասն այնորիկ որ եթէ ընդ աստուծոյ իցեն և 'ի նմանէ միայն ունիցին ակնկալութիւն այնպէս եր-կիւղածութեամբ կատարեսցեն. մի Թշնամանս ինչ համա-րեսջիք, թէ և բիւր անգամ անարգանք ոք իցեն. և ըն-դունել մարմնոյ մի խնդրէք, այլ որ զախտս մարմնոյ լու-ծանեն. և զի եթէ զառաւօտուն խնդրես, երեկոյին փառք, աղքատութեան փառս 'ի մարդկանէ ոչ խնդրէ, և ոչ կա-մի զպատիւ զմարդոյն չարի որ առաջնորդէ 'ի մարդահա-ճութիւն, և Թշնամիք են կամակորացն զփառս աշխարհի զառաւօտեան զօպանութեան։ Արդ այսպիսիս բազում ան-տից ծառայէ. վասն զի սիրող է երկայնամտութեան, և ոչ է

1 Նստէր երբեմն 'ի սեր ընդ եղբարսն հայրն Թէոդորոս. և մինչդեռ ուտէին զգուշութեամբ և առնուին բաժակ լռութեամբ և ոչ խնդրէին Թո-ղութիւն յաղմկելն, ասէ հայրն Թէոդորոս. կորուսին կրօնաւորք զազնուութիւն իւրեանց, զի ոչ ևս խնդրեն Թողութիւն յաղմկելն զգինի, զի ոչ կամին խոնարհիլ զինքեանս [illegible] գոհութեամբ։

2 Ասաց հայրն Սարմատաս. լաւ իցէ մարդ մեղուցեալ՝ որ գիտէ զի մեղաւ՝ և ապաշխարէ, քան զմարդ որ ոչ է մեղուցեալ. և համարեսցի զանձն ոչ մեղուցեալ և ոչ ոգայ։

3 Ասաց հայրն Փոքրաս. եթէ կամեսցի Ած զկեանս իմ, ինքն գիտէ Թէ որպէս յարդարէ զնա. և Թէ ոչ կամի, զինչ արարից ես զկեանսն

սիրոյ բարկանալն և սրտմտելն. զի մեծափառութեան մարդկան խոնարհել ոչ կամի, և յառաջ քան զինքն պատուել զայլ՝ ոչ կարէ յափշտակելով զնախապատուութիւն, մի՛ գուցէ անարգ երևեսցի:

ԱՅԵՒԻՆ' ամանք. եթէ ոք գայր առ հայրն Պիմէն, առաքէր զնոսա ծերն առ հայրն Անուբ, զի նա երիցագոյն է յաւուրց: Ասէր և հայրն Անուբ. առ եղբայրն Պիմէն երթայք, զի նա ունի զշնորհդ զայդ: Այս եթէ նստէր հայրն Անուբ առ նմա, ոչ խօսէր առաջի նորա:

ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ոմն ունէր դուստր անմուսնաւ իւրով հանդերձ. դէպ եղև դստերն յայսոյ պղծոյ տարակուսիլ, և ծնողք նորա աղաչէին զհանգստեալ միայնակեացս աղօթս առնել 'ի վերայ նորա, և ոչ բժշկեցաւ: Յետոյ ասէ ցնա ոմն միայնակեաց սիրելի նոցա. եթէ կամիք որ ողջանայցէ դուստրդ ձեր՝ երթայք յայս ինչ անապատ, քանզի անդ սուրբք են, և հաւատամ եթէ յաղօթից նոցա բժշկի: Ապա նոցա լուեալ 'ի նմանէ գնացին յանապատն. և դէպ եղև ումեմն տղայոյ միայնակեցի ելանել 'ի վանացն, և իբրև տեսին զնա յոյժ խնդացին ասելով. ահաւասիկ առաքեաց Տէր մի 'ի նոցանէն, որպէս զի մի երթիցուք յայնչափ ինչ անապատ: Այլ իբրև մերձեցան, ընկեցին զինքեանս 'ի խոնարհ մանկկամբն հանդերձ աղաչելով զնա և ասելով. դուստրս մեր այս տարակուսի 'ի դիւէ, այլ վասն Տեառն աղօթս արա 'ի վերայ: Այլ նա ասէ. մարդ մեղաւոր եմ: Այլ նոքա աղաչէին ասելով. մի՛ ասեր այդպէս՝ վասն Տեառն, այլ միայնակեաց լեր մեզ և աղօթեա 'ի վերայ դորա. քանզի կարծէին եթէ վասն խոնարհութեան ասէր զայն. և զարձեալ նոյնպէս ասէր նոցա: Իբրև նեղէին զնա և աղաչէին ջերմեռանդ սրտիւն, եհան յանթէ իւրմէ փոքրիկ գիրս և ասէ ցնոսա երդմամբ՝ եթէ զայս գողացայ և ելի անտի: Իսկ յորժամ ասաց զբանս զայս, 'ի բաց եկաց դևն 'ի մանկանէ անտի՝ չհանդուրժեալ խոնարհութեան

եմ: Եւ ինքն յումեքէ ոչ ինչ առնոյր, և 'ի հիւանդութիւն անկեալ դնիւր նա յանկողնի և ուրախ էր 'ի համբերութիւն:

: Եթէ գայր ոք առ հայրն Պիմէն հարցանել ինչ, առաքէր զնա նախ առ հայրն Անուբ հարցանել ընդ նմա: Իսկ հայրն Անուբ ասէր ցնոսա. գնացէք առ եղբայրն իմ Պիմէն, զի շնորհք վարդապետութեան նմա տուեալ են: Եւ գործեալ թէ 'ի միասին գիտէին քննել հայրն Անուբ և հայրն Պիմէն, պատուէր զԱնուբ իբրև զաւագ եղբայր իւր:

Digitized by Google

երիտասարդացն, այլ և նոցա հաւատոյն՝ զի ոչ նուաղեաց գայթակղեալ 'ի բանս միայնակեացն, այլ որպէս մեծի և սրբոյ երկրպագէին և աղաչէին. և առեալ զզգեստն իւրեանց բժշկեալ գնացին փառաւորելով զԱծ։

Այլ՝ երբեմն մենակեաց 'ի Հռովմայ, որ մեծ 'ի պալատանն էր, և բնակեաց 'ի Սկիւթ մերձ յեկեղեցին. ունէր ընդ իւրեան և ծառայ մի ալեւոր սպասաւոր իւրեան։ Այլ տեսեալ երիցուն զտկարութիւն նորա և գիտացեալ թէ յորպիսի հանգստենէ էր, զոր ինչ թէ Ած տաւքեր՝ տայր տանել նմա։ Այլ լեալ այնպէս քսան և հինգ ամ 'ի Սկիւթ, և եղև տեսանող անուանի։ Լուեալ ումն ծեր 'ի կրօնաւորացն եգիպտացւոց վասն նորա եկն տեսանել զնա, ակն ունելով թէ աւելի ինչ վարս մարմնոյ տեսանիցէ 'ի նմա. և մտեալ և ողջոյն տուեալ նմա, աղօթս արարեալ և նստան։ Այլ տեսանէր զի ունէր հանդերձս փափուկս և քաղաքացիս և մաշկ 'ի վերայ նորա և մտուրս, և զառտն մաքուր ունէր և հողաթափս. և զայս տեսեալ գայթակղեցաւ, զի ոչ էր 'ի տեղւոջն այնպիսի կարգ, այլ խստակրօնութիւն։ Այլ վասն զի տեսանող էր ծերն, իմացաւ եթէ գայթակղեցաւ հայրն. և ասէ ցսպասաւորն ծերն. տուր մեզ տօն այսօր վասն հօրս։ Այլ գէթ եղև զի էր անդ փոքր մի բանջար, և եփեաց, և 'ի ժամուն յարուցեալ ճաշակեցին. ունէին ընդ իւրեանս և սակաւ մի գինի, և արբին վասն հիւանդութեան իւրեանց։ Այլ իբրև երեկոյ եղև, ասացին զեր-

։ Եկն երբեմն ծեր ոմն հռովմայեցի և բնակեցաւ 'ի Սկիւտէ մերձ եկեղեցւոյն, որ և ունէր ընդ իւր ծառայ մի 'ի սպասաւորել իւրն։ Իբրև ետես զնա հայրն Սկիտոյ և զտկարութիւն նորա, և ծանեաւ եթէ յորմէ մեծութենէ յորչափ աղքատութիւն հասեալ իցէ, վասն այն զոր ինչ գայցէ յեկեղեցին ուտել՝ յամենայնէ տայր նմա։ Եւ եկաց նա այսպիսի քաղաքավարութեամբ երանելի ծերն այն 'ի Սկիտէ ամս քսան և հինգ. և եղև նա հոգեւոր և մեծանուն յայտ։ Իսկ ծեր ոմն մեծ եգիպտացի լուաւ զհամբաւ և եկն 'ի տեսանել զնա, և կարծէր վիշտս և ճգնութիւնս մեծամեծս տեսանել 'ի նմա։ Եւ իբրև մտեալ 'ի տուն ողջունեցին զմիմեանս, և արարեալ աղօթս նստան. և իբրև ետես եգիպտացին զնա 'ի զգեստս փափուկս և մորթիկ մի փոքր 'ի ներքոյ նորա 'ի տախտակի, այսպէս և բարձ ընդ սնարիւք նորա, և զի էին ոտք նորա լուացեալ, և ունէր սանդալս 'ի յոտս, այսպէս տեսանելով զնա գայթակղեցաւ 'ի նա եգիպտացին. վասն զի յԵգիպտոս ոչ գոյր այնպիսի կարգ։ Իսկ ծերն վասն զի մարգարէաշնորհ էր, ծանեաւ զի գայթակղեցաւ 'ի նա, և ասէ ցսպասաւորն իւր. պատրաստեա մեզ տօն այսօր 'ի գալուստ ծերոյս։ Եւ արար բանջար խարշեալ. գտաւ և գինի անդ. և իբրև ժամ

երկոտասան սաղմոսս և ննջեցին. նոյնպէս և 'ի գիշերին: Ցայտուցեալ այգուն եգիպտացին ասէ ցնա. աղօթս արա 'ի վերայ իմ: Եւ գնացեալ ոչ ինչ օգտեալ 'ի նմանէ: Իբրև չոգաւ վայր մի, կամեցեալ ծերոյն օգտեցուցանել զնա, առաքեաց դարձեալ կոչեաց զնա. և եմուտ միւսանգամ, և խնդութեամբ ընկալաւ զնա: Եւ հարցեալ ցնա ծերոյն և ասէ. յորմէ՞ գաւառէ ես: Եւ ասէ. ես եգիպտացի եմ: Եւ յորմէ՞ քաղաքէ յԵգիպտոսէ: Եւ ասէ. ես ոչ եմ քաղաքացի, այլ գեղջուկ: Եւ ասէ ցնա ծերն. զի՞նչ էր գործք քո 'ի գիւղն քո: Եւ նա ասէ. պահապան էի: Եւ ասէ ցնա. ո՞ւր ննջէիր: Եւ ասէ. 'ի բացի: Եւ ասէ. իսկ զիա՞րդ ննջէիր: Եւ նա ասէ. 'ի գետնի: Եւ զի՞նչ ուտէիր ճաշ յանդին և կամ որպիսի գինի: Եւ նա ասէ. չոր հացիկ ուտէի, և էր զի ղիղեալ էր ձուկն աղի, և ջուր 'ի գետոյն ըմպէի: Եւ ծերն ասէ. մեծ է աշխատութիւն քո. էի՞ն 'ի գիւղն քո բաղանիք: Եւ նա ասէ. ոչ էին, այլ 'ի գետն լուանայի: Արդ իբրև հարցեալ ծերն զայս ամենայն և ծանեաւ զնորա թիւնս նորա, կամեցեալ օգտեցուցանել զնա՝ ասաց նմա զառաջինն զկարգսն իւր մինչդեռ յաշխարհի էր, և ասէ. զիս տառապեալս զոր տեսանես, յաշխարհէն 'ի մեծ քաղաքէն Հռոմայ եմ, անուանի լուեալ 'ի պալատան թա

եղև, նստան և ճաշեցին. և իբրև երեկոյ եղև, ասաց երկոտասան սաղմոսս և ննջեցին. այնպէս և 'ի գիշերի արարին: Իսկ առաւօտուն ասէ եգիպտացին ցծերն. աղօթեա վասն իմ, հայր: Եւ ել անտի ոչ շինեալ մտօք: Եւ իբրև գնաց փոքր մի, կամեցաւ ծերն շահել զնա, և առաքեաց կոչեաց զնա: Իբրև դարձաւ և եկն, ընկալաւ զնա ուրախութեամբ, և սկսաւ հարցանել զնա և ասէ. յորմէ՞ երկրէ ես դու և կամ յորմէ՞ քաղաքէ: Իսկ նա ասէ. եգիպտացի եմ, և ոչ քաղաքացի, այլ 'ի գիւղէ: Եւ նա ասէ. և զի՞նչ էր գործ քո 'ի գիւղն քո: Պատասխանի ետ և ասէ. ես հովիւ խաշանց էի 'ի գիւղի: Ասէ ծերն. և ո՞ւր ննջէիր 'ի գիշերի և կամ զի՞նչ անկողին քո: Եւ նա ասէ. 'ի դաշտի ուր ոչ գոյր անկողին և ոչ այլ ինչ մխիթարութիւն, այլ կողմանէի 'ի վերայ գետնոյ: Դարձեալ ասէ. և զի՞նչ ուտէիր կերակուր 'ի դաշտի և կամ զորպիսի՞ գինիս ըմպէիր: Իսկ նա ասէ. և ընկեցի՞ այդպիսի հանդիսա 'ի դաշտի անշէնս, հայր: Ասէ ցնա ծերն. և զիա՞րդ էիր կենդանի: Ասէ եգիպտացին. հաց ցամաք և ջուր միայն էր կերակուր իմ, և այն ևս սակաւ: Ասէ ծերն. ունէի՞ր բաղանիք 'ի լուացումն քեզ: Եւ նա ասէ. ոչ բնաւ, այլ 'ի գետ լուանայի երբեմն: Ասէ ծերն. յոյժ չարաչարութեամբ լեալ ես դու 'ի կեանս քո: Եւ իբրև եհարց-զամենայն, և կամեցաւ օգտեցուցանել զնա, ասէ ցնա. ես աղքատս այս, որ տեսանես, հայր, 'ի մեծ քաղաքէն Հռոմայ եմ. և մեծաշուք պատուով նախագահ էի 'ի պալատս արքային: Իբրև լուաւ զայլոց բանին, զղջա-

գուրգուրեն ։ Այլ իբրև լուեալ եղիսաբեթացւոյն զսկիզբն բանիցն՝ զզմայլումն և կամէր լսել հաստատութիւն զաստուածեղէն 'ի նմանէ ։ Դարձեալ ասէ . Թողի զ[illegible] և եկի բնակեցայ 'ի յանապատս յայսմ ։ Այլ զիս զոր տեսանես, տունս գեղեցիկս ունէի և կարասի սաստիկ, և արհամարհեալ զայնու՝ եկի բնակել 'ի փոքր խցկանս յայսմ ։ Ունէի ոսկի գահոյս, յորում էին անկողինք բազմապատիկք . և Թողեալ զայն ամենայն՝ ետ ինձ Աստուած զքաղաղիր և զմաշկեակս ։ Այլ հանդերձք իմ պատուականք և մեծագինք էին, և փոխանակ այնր զանարգս զհանդերձս զայս ունիմ . և յընթրիսն իմ սաստիկ ծախք ծախէին, և փոխանակ այնր զսակաւ բանջարիկս և զփոքր սպասկեակս ետ ինձ Աստուած ։ Այն սպասաւորք բազումք իմ, ծառայք և աղախնայք, և ահա ընդ նոսա ամենեցուն արկ Աստուած 'ի սիրտ ծերոյս այսմիկ և սպասաւորէ ինձ ։ Այլ փոխանակ բաղանեացն յոր լուացեալ լինէի հանապազօր հանդերձ անուշ իւղովք, արկանեմ փոքր մի ջուր զոտիւք իմովք, և զանարգ զհողաթափս զայս զգենում վասն տկարութեան իմոյ . և փոխանակ փողոցն և քնարիցն, ասեմ զփոքր սաղմոսկունս զայս . և փոխանակ նուէրոցն զոր ունէի և բազմութեան, հանդարտութ̃բ կատարեմ զկեանս իմ ։ Արդ աղաչեմ զքեզ Աստուածպաշտուհի, հայր իմ, մի գայթակղիր յիմ տկարութենէս ։ Այլ զայս լուեալ եղիսաբեթացւոյն և զգաստացեալ անձին, աղաղա-

[illegible]

հեծեաց և ասէ · վայ ինձ, զի 'ի բազում նեղութենէ աշխարհիս եկի 'ի հանգիստ մեծ, և զոր ոչ ինչ ունէի յայնժամ՝ այժմ ունիմ· բայց դու, հայր, եկիր 'ի բազում հանգստենէ 'ի նեղութիւն, և 'ի բազում փառաց և 'ի մեծութենէ 'ի խոնարհութիւն և յաղքատութիւն։ Այս շինեալ 'ի նմանէ մեծապէս՝ գնաց 'ի տեղի իւր, և եղև նմա սիրելի, և գայր առ նա վասն օգտի իւրոյ*։

եղբարացն, եկն 'ի միտս իւր և ասէ · վայ ինձ եղկելւոյս, քանզի ես 'ի բազում վշտաց զոր ունէի յաշխարհի եկի 'ի հանգիստ, և արդ ունիմ զոր բնաւ ոչ ունէի յայնժամ · իսկ դու 'ի մեծ հանգստութեանց եկեալ ես 'ի վիշտս և 'ի նեղութիւնս, և 'ի հարստութենէ յաղքատութիւն։ Եւ շահեցաւ յոյժ և գնաց, և յայնմհետէ եղև բարեկամ նմա, և զի միշտ գայր տեսանել զնա և օգտել 'ի նմանէ։

*Նոյն պատմութիւն է գրեալ 'ի հին Թարգմանութեան համառօտելով և յանուանէ անփոփոխելով հօրն Արսենի· Ասէին վասն հօրն Արսենի՝ եթէ հիւանդացեալ նորա 'ի Սկիւթ, չոգաւ երէցն և ած զնա յեկեղեցին և եդ զնա 'ի վերայ քաղաքրի և սնարս 'ի ներքոյ նորա։ Եւ ահա մին 'ի ծերոցն եկն տեսանել զնա · և տեսեալ զնա 'ի վերայ քաղաքրի և սնարս 'ի ներքոյ նորա՝ գայթակղեցաւ և ասէ · այս է հայրն Արսենիոս և յայսմ հանգչի։ Եւ առեալ զնա երիցուն 'ի մի կողմն ասէ ցնա · զի՞նչ էր գործ քո 'ի գիւղն քո։ Եւ նա ասէ · հովիւ էի։ Եւ նա ասէ · և զի՞արդ վարէիր զկեանս քո։ Եւ նա ասէ · աշխատութեամբ մեծաւ և նեղութեամբ։ Եւ իբրև ասաց նմա զամենայն նեղութիւնս իւր որ եթէ յաշխարհի, ասէ ցնա · և աստ զիարդ վարիս։ Եւ նա ասէ · ամենևին հանգչիմ 'ի խուցն իմում և աղէտք իմ առաւելուն ինձ։ Ասէ ցնա երէցն · տեսանես զայս Արսենիոս · մինչ էր յաշխարհին, հայր թագաւորաց անուանէր, և հազար ծառայք կամարարութք և մանեակաւորք և կերպասազգեստք կային առաջի սորա և բազմապատիկ անկողինք 'ի ներքոյ սորա։ Իսկ դու հովիւ էիր, և զոր ոչ ունէիր հանգիստ յաշխարհի՝ այժմ աստ ունիս, և նա զփափկութիւնն զոր ունէր յաշխարհի՝ այժմ աստ ոչ ունի · արդ տեսանես զի դու հանգչիս և դա տառապի։ Եւ զղջացեալ ծերոյն անկաւ առաջի նորա և ասէ · Թողութիւն արա ինձ, հայր, զի յանցեայ արդարև · այս ճշմարիտ Ճանապարհ է, զի սա եկն 'ի խոնարհութիւն, իսկ ես 'ի հանգիստ։ Եւ օգտեալ ծերոյն գնաց 'ի խուցն իւր։

Եւ ըստ նորոգ Թարգմանութեան · Ասէին եթէ հիւանդացաւ երբեմն 'ի Սկիւթէ հայրն Արսենիոս, և գնացեալ քահանայն եբեր յեկեղեցին զնա, և ընկէց 'ի ներքոյ նորա մորթ, և եդ բարձ ընդ գլխովն։ Եւ եկն ծեր մին եղբարացն տեսանել զնա · և իբրև ետես զնա կողմնեալ 'ի վերայ մորթոյն և բարձ ընդ գլխովն, գայթակղեցաւ 'ի նա և ասէ · այս է հայրն Արսենի՝ որ 'ի գահոյս ննջէ։ Իբրև լուաւ զայս քահանայն, հանեալ զնա առանձինն ասէ ցնա · զի՞նչ էր, հայր, գործ քո մինչ էիր 'ի գիւղն։ Իսկ նա ասէ · հովիւ ոչխարաց էի ես։ Ասէ ցնա քահանայն · և ո՞րպէս էին կեանք քո։ Պատասխանի ետ և ասէ · բազում վշտօք և հոգովք։ Ասէ քահանայն · և արդ այժմ ո՞րպէս կեաս 'ի սենեկի քո։ Ասէ ցնա · բազում հանգստեամբք և փառօք։ Յայնժամ ասէ քահա-

ԵԳԻՊՏԱՑԻ՝ ծեր մի գնաց առ հայրն Զենոն ասո-րի և ասաց նմա զանձնէ բանս նախատանաց։ Եւ ասէ Զենոն. եգիպտացիքն զբարի գործս իւրեանց թաքու-ցանեն և զանարգանս իւրեանց յայտնեն, և Յոյնք և Ասորիք զբարի գործս յայտնեն և զնախատանացն թա-քուցանեն *։

ԱՍԱՑ՝ ոմն 'ի հարանցն՝ եթէ էին երկու եղբարք 'ի խորշիթն և տրտմեցան ընդ իրեարս. և երթեալ միոյն 'ի խուցն նոր, ոչ կարաց նստել 'ի խաղաղութեան. և եր-թեալ անկաւ առաջի նորա, և ոչ եբաց նմա. և եր-թեալ եղբայրն ասաց ցհայրն Ապողոն։ Եւ ասէ ցնա

նայն. ատեանն են զայս հայր Արսենիոս. հայր թագաւորաց էր յաշ-խարհի, և ծառայս հազար ոսկեզօտիս և ոսկեհուռս կային 'ի սպա-սաւորս, և գահոյս և անկողինս մեծագինս ունէր, և այսոր բազում և անթիւ ունէր յերկրի, և զմեծութիւնս աշխարհաց և զզեստս նոցա լծալ ունէր. իսկ դու հովիւ գոլով, և զոր ոչ ունէիր հանգիստ յերկ-րի՝ ունիս այժմ. իսկ սա աստ թէ յորպիսի փափկութեանց և յորպիսի փառաց և մեծութեանց և 'ի հանգստութենէ թէ յորպիսի վիշտս և նեղու-թիւնս անկեալ գնի, և դու յորպիսի հանգիստ եկեալ իցես, և սա յորպիսի վիշտս և 'ի ծղնութիւն։ Զայս իբրև լուաւ ծերն եգիպտացի, զղջացաւ յոյժ և անկաւ յոտս քահանային և ասէ. Թող ինձ, հայր, զի մեղայ. զի սա 'ի վիշտ և 'ի խոնարհութիւն եկեալ է, և ես 'ի հան-գիստ. և այն իցէ ժամանակ կենաց որք թողեալ զփառս և զհան-գիստ՝ 'ի խոնարհութիւն և 'ի վիշտս գայցեն։

¹ Եկն երբեմն եղբայր ոմն եգիպտացի առ հայրն Զենոն յԱսորիս, և մեղադրէր խորհուրդս անձին և մատնէր զխորհուրդս առաջի ծերոյն։ Իսկ ծերն զարմացաւ և ասէ. եգիպտացիք զառաքինութիւնս զոր ունին յանձինս՝ թաքուցանեն, և զմեղս զոր ոչ են գործեալ՝ ասեն ունել և մատնեն զինքեանս. իսկ Հոռոմք և Ասորիք և Հայք զառաքինութիւնս զոր ոչ ունին՝ խորհրդածեն և պարծին ունել, և զմեղս զոր ունին և ըղձ-ակատարութեան ծածկեն և թաքուցանեն։ Եւ այսպէս զուարճացեալ 'ի բա-րուց խոնարհութենէ եղբօրն և 'ի գովելի խոստովանութենէ նորա, որ զոր ոչ ունէր մեղս՝ և զայն խոստովանէր ունել յանձին վասն խոնարհութեան իւրոյ։

* Այսօրինակ [illegible] 'ի հին [illegible]. Երթեալ եղբայրն ե-գիպտացի յԱսորիս առ հայրն Զե-նոն և սկսաւ չարախօսել զանձն խոր-հրդոց իւրոց առաջի ծերոյն։ Եւ նորա լուեալ զարմացաւ և ասէ. եգիպտացիք հանապազ թաքու-ցանեն զառաքինութիւնս իւրեանց զոր ունին, և զյանցուածոց իւ-րեանց չարախօսեն զոր ոչ ունին, և զառաքինութիւնն թաքուցանեն։

² Եղբայր ոմն տրտմեալ յեղբօրէն՝ գնաց խնդրել թողութիւն, իսկ նա ոչ եբաց նմա զդուռն. և գնաց եղբայրն այն առ ծերն և պատ-մեաց նմա զայն։ Պատասխանի ետ ծերն և ասէ ցնա. մի գուցէ դու արդար կարծիցես գոլ զքեզ 'ի մտի, և ասես զեղբայրդ քո պատճառ յանցանացն, վասն այնորիկ ոչ եբաց քեզ զդուռն։ Այլ այսպէս ա-

ծերն • որ ինչ եթէ ունիս արդարութիւն առ նմա՝ մի՛ երեւեցուցաներ, այլ երթ անկիր առաջի եղբօրն ։ Իսկ երթեալ դարձեալ եւ բախեալ զդուրսն, եւ յառաջ քան զբանալն եղբօրն զդուրսն անկաւ առաջի նորա եւ ասէ • թողութիւն արա ինձ ։ Իսկ այնպէս եկեալ պատմեաց ծերոյն ։

ԱՍԷԻՆ՝ վասն հօրն Ամոնայ՝ եթէ ոմանք եկին առ նա զիրերաց դատախազ, եւ ծերն լուռ կայր • եւ կին ոմն ասէ ցմերձաւորն իւր • ծերս այս անմիտ է ։ Իսկ լուեալ զայս ծերոյն, կոչեաց զկինն եւ ասէ ցնա • քանի՜ աշխատութիւն աշխատեցայ յանապատիս զի ստացայ զանմտութիւնս զայս, եւ վասն քո՞ ունիմ զայս կորուսանել ։

ԱՍԱՑ՝ հայրն Կիւրիոն՝ եթէ բազում աշխատութիւն ըստ մարմնոյ աշխատեցայ առաւել քան զորդին իմ Զաքարիա, եւ ոչ ժամանեցի 'ի չափ նորա վասն խոնարհութեան եւ հնազանդութեան նորա ։

ԾԻՆ՝ ոմանք դիւահար առ ոմն ծեր մեծ 'ի Թեբայիդ եւ աղաչէին զնա զի հանցէ զդեւն, իսկ ծերն ոչ կամէր • եւ աղաչեալ զնա բազում անգամ, իսկ ծերոյն գթացեալ յանձն առ եւ ասէ ցդեւն • ել յարարածոյդ-ոյ ։ Իսկ դեւն ասէ • ես ելանեմ, բայց հարցանեմ զքեզ բան ինչ՝ զի՞նչ է գրեալ յաւետարանին, ո՞յք են այծիքն եւ ո՞յք ոչխարքն ։ Իսկ ծերն ասէ • այծն ես եմ, իսկ

բաղցես զոր ասեմ • Թէպէտ եւ նա մեղանչեաց քեզ, այնպէս հաւանեցո զքեզ՝ իբր թէ դու մեղուցեր նմա, եւ արդարացո զեղբայրն, եւ այնպէս գնասցես առ նա, եւ նա միամտեսցէ զնա 'ի սէր քո ։ Եւ առաւ եղբայրն որպէս ասաց ծերն, եւ այնպէս գնաց եւ բախեաց զդուռն ։ Եւ իբրեւ իմացաւ եղբայրն, ել առ նա եւ նախ քան զնա խնդրեաց թողութիւն 'ի նմանէ • եւ սիրովն այ եղեւ խաղաղութիւն մեծ 'ի մէջ նոցա ։

։ Ասէին վասն հօրն Ամոնայ՝ եթէ եկին ոմանք տանել իրաւունս ընդմիմեանս առաջի նորա • իսկ նա պատճառեաց զյիմարն լինել ։ Ասէ ցնա ոմն 'ի նոցանէ • դու յիմար ոմն իցես, ծեր ։ Ասէ ցնա ծերն • բազում կրեցի աշխատութիւն յանապատս յայս մինչեւ ստացայ զյիմարութիւնս զայս, եւ արդ այսօր կորուսից զսա, ահա յիմար եմ ։

։ Ասաց հայրն Կարիոն՝ եթէ բազում ջանութիւն աշխատեցայ ես յանապատին քան զեղբայրն իմ Զաքարիա, եւ ոչ կարացի հասանել 'ի չափ նորա վասն խոնարհութեան եւ [illegible] լռութեան զոր ունէր նա ։

։ Գնացին 'ի Թեբայիդա ոմանք մարդիկ առ ծեր ոմն եւ ունէին ընդիւրեանս դիւահար, որպէս զի բժշկեսցէ ծերն • եւ զինի բազում աղաչանաց հնազանդեցաւ կամաց նոցա եւ ասէ ցդեւն • ել 'ի ստեղծուածոյ այ, չար այս ։ Ասէ դեւն ցծերն • ահա ելանեմ, այլ դու ասասցես ինձ ո՞վ են ուլքն այծեակք եւ այծիքն, եւ ո՞վ գառինքն եւ ոչխարքն ։ Ասէ ցնա ծերն • ուլքն եւ այծիքն զիտեմ ես զի ես եմ, իսկ զգառինսն եւ զո-

Digitized by Google

ողջախոհն ած գիտէ թէ զիք իցեն ։ Եւ լուեալ զիւքն գոչեաց 'ի ձայն մեծ և ասէ . ահա վասն խոնարհութեան քո ելանեմ ։ Եւ առժամայն ել 'ի մարդոյն ։

ՊՕՆԱՑԻՆ երկու եղբարք ըստ մարմնոյ առ եղբայրն յանապատն , և ուղղեալ զառաքինութիւն՝ գովէին յեղբարցն ։ Պէտք եղև միոյն 'ի նոցանէ հիւանդանալ 'ի բազում ամս . իսկ միւսն սպասաւորէր նմա ։ Եւ եկին ոմանք 'ի հարանց տեսանել զնա , և սկսան գովել զսպասաւորն և ասել՝ եթէ միաբանութիւնդ ձեր և կրօնաւորութիւն և սրբութիւն վարուց զամենայն եղբարցս օգտեցոյց ։ Եւ նա ասաց խոնարհութեամբ՝ եթէ ես մինչև ցայժմ սկիզբն ոչ արարի միայնակեցաց վարուց , իսկ եղբայրս իմ է որ եթէ ուղղեաց զվարս միայնակեցաց . բայց զի ծանիցէք՝ եկայք զհետ իմ ։ Եւ մուծեալ զնոսա 'ի խուցն ուր կայր եղբայրն նորա , ասէ ցնա . հայր , ո՞ր է փայտատան որ ետու ցքեզ երէկ ։ Եւ նորա սկսեալ խնդրել զայն 'ի ներքոյ քաղաքըն իւրոյ ասելով՝ եթէ աստ արդեօք եդի , տես՝ եղբայր , ասէ , և յուզեա ընդ իս ։ Եւ յամենին կալաւ պահանջել զոր ոչ էր առեալ ։ Եւ օգտեալ հարքըն գնացին ։

ԱՍԱՑ երանելի աբբային Եւագրիոս ցաբբայն Արսէնիոս . ընդէ՞ր մեք յայս խրատու և յիմաստութեան ոչ ունիմք զոր սոքա վայրենի եգիպտացիքս վարս և իմաստութիւն ստացան ։ Ասէ աբբայն Արսէնիոս . մեք յաշխարհէ խրատեալք ոչ ունիմք զոր սոքա վայրենի եգիպտացիքս իւրեանց չարչարանօքն ստացան ։

ՀԱՐՑԱՔՆՆԵԱՑ աբբայ Արսէնիոս զծեր ոմն եգիպտացի վասն մտածութեան , և այլ ոմն ետես զնա և ասէ . Արսէնիէ , որպէս այնչափ խրատս հռոմայեցի և հելլենացի ստացեալ՝ ցայս վայրենիս վասն քոյին մտածութեանդ հարցանես ։ Եւ նա ասէ . զհռոմայեցի և զհելլենացի ստացայ զխրատ , բայց զայբ և բեն վայրենւոյս այսորիկ ոչ երբէք ուսայ ։

ԱՍԱՑ[1] հայրն Եպիփան . քանանացին աղաղակէր ,

զեզն ած միայն գիտէ ։ Ցայնժամ ամաչեալ դևն 'ի խոնարհութենէ ծերոյն և յաղթահարեալ 'ի պատասխանւոյն նորա՝ ել վաղվաղակի 'ի մարդոյն այնորիկ ։

[1] Ասաց հայրն Եպիփանէ . քանանացին աղաղակէր և լսելի եղև , արեանաւորն լռեաց և բժշկեցաւ , փարիսեցին պարծէնայր և դատա-



Digitized by Google

ստեղատեսն լալեաց, մեղքասցուցն չհայեր 'ի վեր. զի՛ կա-մեր՝ ապրա և կեցցես:

ԵՂԵՒ՝ երբեմն խնդիր վասն Մելքիսեդեկի, և անդ-ձեր Կոպրէ՝ որ եհար զերեսս իւր և ասաց. վայ քեզ, վայ քեզ, Կոպրէ, զի զոր հրամայեաց քեզ՝ զայն ոչ խնդրես, և զոր ոչ հրամայեաց՝ խնդրես: Եւ լուեալ ծերքն զմա-ցին և փախեան 'ի սենեակս իւրեանց:

ՀԱՐՑԱՒ ծերն՝ եթէ լա՞ւ իցէ ծաւալ. Ասաց. Ըստ-տա՝ Կաւեալ յորժամ ծաւալ եղ, ապա եաւես զնձ:

ԱՍԱՑ և Ամթերիս օտարքը էին աշխարհաւ 'ի միմեանց և կային առ իրեարս. և այնչափ հնազանդ էին միմեանց, զի յաւուր միում կամէր Ամթերիս ծուէնն կարել ընդ մէջ, և 'ի ձայնելն Ոփրայ՝ եթող զգանակին ընդ ծուէնն և եկն առ նա, ոչ կարելոց և ոչ առ զգանակն: Եւ յե-տոյ ասաց զնէս ձեռն խաչշառեալ և զելեան կարի ան-ձնիւ. և յուսանելն առաց ամբերելցն՝ լաւ է, հայր: Եւ ընդ-կերն ասէ. այո, հայր, և յոյժ լաւ է: Եւ եթէ զաւեխա զուգեալն ստանելն՝ ասաց. կարի զաղիր և աւեր է, հայր:

պարտակցաւ, և մեղքաւորն ոչ բանիւք զերկրանն և արգասաւորացաւ. այսպ յայլոցանէ զեր կամիս՝ արասցես և դու:

1 Փողովեցան երբեմն հարքն Սկիւթոյ և արարին խնդիր վասն Մել-քիսեդեկի թէ ով էր, և ոչ էր անդ հայրն Կոպրէ. և յետոյ կոչեցին զնա ևս, և հարցին զնա վասն խորհրդոյն այնորիկ: Իսկ նա իբրև լուաւ, եհար զերեսս իւր երիցս անգամ և ասէ. վայ քեզ, Կոպրէ. վայ քեզ, Կոպրէ. վայ քեզ, Կոպրէ. զի զոր ինչ պատուիրեաց քեզ տէր Աստ՝ 'ի բաց ընկեցեր, և զոր ոչ խնդրէ 'ի քէն տէր՝ զայն խնդրես և քննես: Իսկ իբրև լուան զայս եղբարքն, փախեան 'ի սենեակս իւրեանց, և խոնարհ բանիւ շահեցաւ զամենայնախնդիրսն զայն:

2 Հայրն Ոփը և հայրն Ամթերիս ոչ էին 'ի միում աշխարհէ, այլ կային միրամ և խաղաղութեամբ մինչև 'ի մահ. զի հայրն Ամթերիս ունէր հնազանդութիւն և խոնարհութիւն յոյժ, նոյնպէս և հայրն Ոփը: Եւ եթէ կայցէ առ նոսա աւուրս ինչ և դիտէր զկարս նոցա, և տեսանէ զարմանս մեծ զոր արար հայրն Ամթերիս: Զի եկին ոմն առ նա և եբեր նմա ծուէնս փոքրիկ, և կամէր պատրաստել զնա. և առ դանակ և եդ 'ի վերայ զի հատցէ զնա, և ձայնեաց նմա հայրն Ոփը. նա առժամայն թողեալ ըզ-դանակն 'ի մէջ ձկանն և ոչ եհատ զնա բնաւ. և նա զարմացեալ ընդ հնազանդութիւն նորա, զի ոչ ժուժեաց ընդ ձայնելն մինչև հատցէ զնա կատարեալ, այլ կիսահատ ևս թողեալ: Եւ ես ասեմ ցհայրն Ամթերի. ուստի ստացար զայսչափ հնազանդութիւն: Եւ նա ասէ ինձ. ոչ է այս իմ, այլ ծերոյն իցէ: Եւ խորովեալ զձկնն ձկանն, զոր կէսն խոնարհեալ առեալ կաւով և եդ առաջի ծերոյն, և հաշակեաց ծերն և ինչ ոչ ասաց: Եւ ասէ. բարի՞ է այդ: Եւ ծերն ասէ. այո բարի է յոյժ: Եւ ապա եբեր զայլ ևս կէսն յոյժ բարւոք կոխեալ և ասէ. աւերեալ և խանձեալ է իմ՛ զայս, հայր: Եւ նա ասէ. այո խանձեալ էր սակաւ

Այլ նա ասէ. [illegible], հայր, չէ բարւոք : Այլ [illegible] է [illegible] :

ՀԱՐՑԱՆ՝ ծերոյն՝ եթէ լաւ է [illegible] : Ասէ. այո՝ լաւ է. [illegible], և [illegible] ՚ի դուրս, և դարձեալ [illegible] : Այլ ասէ. [illegible], և եթէ [illegible] :

ԱՂԲԱՅՐ՝ [illegible] և [illegible] : Այլ [illegible], և [illegible] ՚ի [illegible] : Այլ [illegible] :

ՊԱՏՄԵԱՑ՝ հայրն [illegible]՝ եթէ էր [illegible], և ՚ի [illegible]

[illegible] : Իսկ [illegible] հայրն [illegible] : Իւր [illegible] ՚ի [illegible] : Իսկ հայրն [illegible] :

ա Եհարց [illegible] և ասէ. [illegible] : Ասէ [illegible] ՚ի [illegible], և [illegible] ՚ի [illegible], և [illegible] ՚ի [illegible] : Իսկ [illegible] : Իւր [illegible] ՚ի [illegible], և [illegible] : Իսկ [illegible] ՚ի [illegible] : Իւր [illegible] ՚ի [illegible] :

բ [illegible] եթէ [illegible], և [illegible] : Իսկ [illegible], և [illegible] ՚ի [illegible], և [illegible] :

գ [illegible] հայրն [illegible] ՚ի [illegible], [illegible] : Իսկ [illegible], և [illegible] : Եւ եթէ [illegible] ՚ի [illegible] :

Digitized by Google

զնա և ոչ կարացին բժշկել ։ Պէտք եղև աշակերտի ուրումն ծերոյ անցանել ընդ այն, և դիւահարին ած ապտակ նմա ։ Իսկ նա զպատուիրանն Քի կատարեալ՝ մատոյց և զմիւսն ։ և դևն ոչ կարացեալ համբերել պատուիրանին կատարելոյ՝ աղաղակեալ ՚ի ձայն մեծ և ել ՚ի նմանէ ։ Իբրև յորժամ եկին ծերքն, պատմեցաւ նոցա զամենայն պատճառս իրացն, և փառաւորեցին զԱծ ։

Էր՛ ոմն եղբայր առ միաբանակեացս և զամենայն բեռինս եղբարցն զանձամբ առնոյր և մինչև ՚ի պոռնկութի անգամ ասէր՝ թէ ես արարի, և չարախօսէր զինքենէ ։ Իսկ այլ եղբարքն քանզի ոչ գիտէին զգործս նորա, սկսան տրտնջել զնմանէ և ասել՝ որքան չարիս առնէ սա աստ, և վասն այսր և գործէ սա ոչ ։ Իսկ հայրն գիտէր զգործս նորա և ասէ ցնոսա ։ Եղբարք, կամիմ զմի պըրտուեղէն դորա խոնարհութբ, քան զամենեցուն ձեր ամբարտաւանութբ, բայց կամիք եթէ կատարեսցէ Աձ զկամս ձեր ։ Ած եբեր զգործս նոցա ամենեցուն, եբեր և զպըրտուեղէն եղբօրն ։ և լուցեալ հուր ընկեց զայն ՚ի հուրն և լուցեալ այրեցան նոցա ամենեցուն, բայց պըր-

աղօթեացն վասն գտանէր խնամ ։ Եւ եկեալ ՚ի կրպակին խնդրելոյն և գտին զաշակերտ ծերոյն զի վաճառէր զգործիկսն, և առեալ զնա ընդ ինքեանս տարան ՚ի տուն բժշկանին ։ Եւ իբրև եմուտ ՚ի տունն եղբայրն առնուլ զգիրս վաճառայն, եւ դիւահարն այն և եհար զաջոյ ծնօտ եղբօրն . իսկ նա մատոյց նմա և զմիւսն ըստ պատուիրանին Տեառն, և առժամայն տանջեալ եղև դևն և բարբառեցաւ և ասէ . քանզի Քս հալածեաց զիս այսօր, ով բռնադատութեան ։ Եւ առժամայն ել անտի և ողջացաւ աղջիկն ՚ի նմին ժամու ։ Եւ իբրև տեսին ծնողքն աղջկանն փառաւորեցին զԱծ ։ Եւ եղբայրն գնաց առ ծերն և պատմեաց, և լուեալ ծերքն ամենայն եկին առ նա . և իբրև ծանեան զոր եղևն՝ փառաւորեցին զԱծ և ասէին . ամբարտաւանութեանն դևն փախեաւ ՚ի խոնարհութենէն, որպէս և եղև ։

։ Եղբայր ոմն էր ՚ի հասարակաց վանս և զամենայն ծանրութիւնս եղբարցն ժողովէր յինքն . քանզի զոր ինչ անտանէր գործեալ անզգաշանս ՚ի վանսն յայն, իւր համարէր զայն գործ, և այնպէս խոստովանեալ ամբաստանէր զինքն զայնպիսիս, մինչև զպոռնկութիւն լուեալ զումեմն յանձն առնոյր զայն, և մատնէր զանձն և ասէր՝ իմ է արարեալ զայն ։ Իսկ ոմանք յեղբարցն ոչ գիտելով զգործս նորա, սկսան տրտնջել և ասել . ասա թէ քանի՞ չարիս գործեալ է, և ոչ աշխատի իբրև զմեզ ։ Իսկ հայր վանիցն գիտէր զգործս նորա և ասէր ցեղբարսն . Հաճեալ եմ ես ընդ մի փսիաթ նորա խոնարհութբ, քան ընդ բազումն ձեր ամբարտաւանութբ, և եթէ կամիք գալ՝ հաստատեցուցանեմ և զձեզ աստուածով ։ Եւ եբեր երկու փսիաթս եղբարցն՝ որ էին հաճոյ յաչս ամենեցուն առաքինութեամբ նոցա, և մի փսիաթ եղբօրն այն . և լուցեալ հուր մեծ և ընկեց զնոսա ՚ի հուրն, և կիզեցան ամենեքեան

տուեալքն եղբօրն ոչ այրեցաւ ։ Զարհուրեցեալ անկեալ առա-ջի նորա, և յայնմհետէ ունէին զնա իբրև զհայր ։

ԱՍԱՑ՝ Յովհաննէս կարճահասակն ցեղբայր իւր ե-րէց. կամէի անհոգ լինել իբրև զհրեշտակ որք ոչ ինչ գործեն, այլ անդադար զԱծ պաշտեն ։ Եւ մերկացեալ զհանդերձս իւր ել գնաց յանապատ, և լեալ անդ շա-բաթ մի դարձաւ անդրէն առ եղբայրն 'ի խուցն իւր. և բախեաց զդուրսն, ոչ եբաց նմա ասելով՝ ո՞վ ես դու ։ Եւ ասէ. ես եմ Յովհաննէս ։ Եւ նա ասէ. Յովհաննէս հրեշ-տակ եղև, և ոչ է ընդ մարդկան ։ Եւ նա աղաչեաց զի բացցէ նմա, և ոչ եբաց նմա, այլ եթող զնա 'ի տառա-պանս մինչև յառաւօտն, և այգուն ասէ ցնա. ահա մարդ ես և պէտք են քեզ գործոց զի կերակրեսցես ։ Եւ անկեալ առաջի ասէ. թողութիւն արա ինձ ։

ՊԱՏՄԵՑԻՆ՝ եղբարք հայրն Մակար յանապատէն 'ի խուց իւր և ունէր աւրմաւենի. և ահա երևէր նմա բան-տարկուն ունելով մանգաղ և կամէր հարկանել զնա և ոչ կարաց, և ասէ. մեծ բռնութիւն է ինձ 'ի քէն, Մակար, զի ոչ կարեմ հակառակել ընդ քեզ. ահա զոր գործես դու, գործեմ և ես. պահես դու, և ես ամենևին ոչ

բաց 'ի մէջ խարէ՝ որ էր եղբօրն ։ Եւ իբրև տեսին զայս եղբարքն, եր-կեան յոյժ, և անկեալ առաջի նորա խնդրէին թողութիւն, և յայնմ-հետէ իբրև զհայր ունէին զնա ։

։ Ասաց երբեմն Յովհաննէս կարճահասակն ցերէց եղբայր իւր. կամիմ լի-նել անհոգ իբրև զհրեշտակս՝ որ ոչ հոգան ինչ և ոչ աշխատին, այլ անդադար կան յերգս Այ ։ Եւ մերկացեալ զձորձս իւր գնաց յանա-պատ և եկաց անդ շաբաթ մի, և դարձեալ դարձաւ առ եղբայրն և եկն առ նա 'ի մէջ գիշերի. և իբրև բախեաց զդուռն, լուաւ 'ի ներ-քուստ եղբայրն և ասէ նախ քան զբանալն զդուռն. ո՞ ես դու ։ Իսկ նա ասէ. ես եմ Յովհաննէս եղբայր քո ։ Յայնժամ պատասխանեալ եա և ասէ ցՅովհաննէս. Յովհաննէս հրեշտակ եղև, և ոչ ընդ մարդկան կայ ։ Իսկ նա աղաչէր և ասէր՝ ես եմ ։ Եւ ոչ եբաց նմա մինչև ցառաւօտն, և եթող զնա վտանգիլ անդ ։ Եւ յետոյ եբաց նմա զդուռն և ասէ. արդ ահա ծանիր զքեզ զի մարդ ես, և արդ աշխատես զի կերակրես-ցիս ։ Իսկ նա յերկիր անկեալ ասէ. թողութիւն արա ինձ, եղբայր, զի գտաւ բանիւ զմացեալ ոչ կարացի կեալ, մինչև զզգաստ խոնար-հութեան զգեցեալ գնացից և խոնարհութեամբ յաղթող գտայց կա-տարելոց ամենայնի ։

։ Գտայր երբեմն 'ի գործոյ հայրն Մակար 'ի սենեակ իւր և գտեր աւրմաւենի. և գիշերեալ նմա գև 'ի Յանդիմանութեան՝ ունելով 'ի ձեռին մանգաղ, կամէր հարկանել զՄակար մանգաղովն և ոչ կարաց, և ա-սէ. յոյժ բռնանաս ինձ, Մակար, և ոչ կարեմ յաղթել քեզ. ահա զոր ինչ գործես դու, գործեմ և ես. դու պահես, և ես այլ պահեմ՝ բնաւ. դու արթնուս, ես բնաւ ոչ ննջեմ. մին կա միայն է քո արդ յաղ-

ճաշակեմ. հակեա դու, եւ քեաւ ոչ նմանեմ. մի միայն ի-րօք որով յաղթես դու ինձ: Ասէ հայրն Մակար. զի՞նչ են իրքն այն: Եւ նա ասէ. խոնարհութիւն քո, զի վասն խո-նարհութեան քո չկարեմ հակառակել ընդ քեզ: Եւ համբար-ձեալ զձեռս իւր յաղօթս, եւ աներեւոյթ լինէր 'ի նմանէ:

ԱԳԱԹՈՆ՝ ոմն հրաժարեալ յաշխարհէ հարբ իւ-րով բազում մարդկանց, եւ ոչ կացեալ երկայնաժամ 'ի մի վանս. իսկ յետ ժամանակի իմիք լուաւ եղբայրն վասն հօրն իւ-րոյ եթէ զգլխաւոր զոմն բժշկեաց, եւ երթեալ եղբօրն պատմեաց ամենայն ծերոյ մեծի որպէս պատմեալ վասն անձին իւրոյ ասելով. արդ, աւհասարակ հայր իմ զար-մացաւ եւ զդեւն հալածեաց յեղբօրէն, իսկ ես 'ի ծու-լութեան եմ եւ ոչ մի ինչ յառաջադիմութիւն գոյ յիս: Ասէ ցնա ծերն. արդարեւ, որդեակ, ոչ է այս յառա-ջումն դեւս հանել կամ հիւանդս բժշկել. քանզի զայ-սոսիկ ոչ եթէ մարդն առնէ, այլ զօրութիւն Այ եւ հա-ւատք մատուցելոցն. սակայն բազմաց զայս ոչ իմացեալ, յանձնապաստանութեան 'ի բժշկութենց անտի եկեալ կո-րեան: Իսկ ես ասեմ. եթէ գայցէ մարդ 'ի ճշմարիտ խո-նարհութիւն, այլ յառաջադիմութիւն մեծ ոչ գոյ քան զնա, որ ոչ երբէք անկանի. քանզի որ միանգամ խոնարհե-ցուցանէ զինքն 'ի վայր, ո՞ւր այլ ուրեք անկանել որ 'ի գետնին իջուց զինքն. իսկ նշան այնպիսւոյն այս է՝ թէ խնդայ ընդ արհամարհանս եւ ընդ անարգանս:

ՏՂԱՅ ոմն առեալ 'ի վանս 'ի նախանձուց իւրոց, եւ յետ ժամանակաց եկին տեսանել զնա. իսկ ծերն ասէ

թեւ դու ինձ: Ասէ հայրն Մակարի. և զի՞նչ է այն: Ասէ դևն. այդ քինչն խոնարհութիւն քո:

: Եղբայր մի երկու կրօնաւոր ընդ միաբանութեան հօր իւրոյ և բնակե-ցաւ երկարօրէն 'ի մի վանս. և զինի ժամանակ մի լսաւ եղբայրն զհօրէ իւրմէ եթէ բժշկեաց նա զգլխաւոր ոմն: Իսկ գնաց եղբայրն առ ծեր մի մեծ և պատմեաց նմա և ասէ արտամութեամբ. Հայր սուրբ, յաւե-լաւ հայր իմ և եհան զև յեղբօրէն, իսկ ես 'ի ծուլութեան մնացի. ոչ յառաջեցի 'ի գործս: Ասէ ցնա ծերն. թող սուր, որդեակ, ոչ է յա-ռաջումն հանել զդևս և բժշկել զհիւանդս. զի զայս ոչ եթէ մարդ առնէ, այլ զօրութիւն Այ և հաւատ եկեղեցին. և ես տեսանել ոմանք զա-զանս ոչ ծանուցեան զուարթ խոնարհութիւն, և յանձնապաստանութեան անկան յաղագանէ և կորնչին: Այլ ես ասեմ քեզ, որդեակ, թէ գտցէ մարդ 'ի խոնարհութիւն և ստանայ զնա իւր սերտ նկարագրական հեղութեան. մեծ յա-ռաջադիմութիւն քան զայս ոչ գոյ, որ ոչ ես անկանի. զի որ խոնարհէ զանձն միշտ յերկիր, նա ուր և կամի որով իւրք անկցի. և նշան կա-տարեալ խոնարհութեան այս է, զի 'ի միշտ անարգանաց խնդացէ:

միում յեղանակին ձայնել զփոքրիկն ։ Իբրև մերձեցաւ առ աղաւնին՝ ասէ ցնա, ո՜վ կոչեաց զքեզ. ապտակեալ զնա ասէ՝ երթ 'ի խուցն քո ։ Եւ տրտմեցան ծնողք նորա ։ Եւ յետ սակաւ միոյ ասեն ցնա. Հրամայեա որ զի գայ փոքրիկն և ուսուսանեսցէ զնա ։ Եւ կոչեաց աղաւնն եղբայր մի և ասէ ցնա. կոչեա զփոքրիկն ։ Իբրև մերձեցաւ առ ծերն, ապտակեաց զնա և ասէ. ո՜վ կոչեաց զքեզ, երթ 'ի խուցն քո ։ Դարձեալ տրտմեցան ծնողք նորա և ասեն. աւաղ թէ ոչ էր եկեալ մեր այսր ։ Եւ յետ սակաւ միոյ շարժեալ 'ի քնութէ անտի, ասեն ցաղաւնն. Հրամայեա որ գայ փոքրիկն ։ Նա էր եղբայր մի. կոչեա զնա ։ Եւ յորժամ մերձեցաւ առ ծերն, ապտակեաց զնա և ասէ. ո՜վ կոչեաց զքեզ, երթ 'ի խուցն քո ։ Եւ իբրև զնոսա սակաւ մի, կոչեաց զնա աղաւնն և կալեալ զձեռանէ նորա ետ ցծնողսն իւր և ասէ ցնոսա. աւհաւասիկ որդին ձեր եղև միայնակեաց ։ Յայնժամ ծնողքն օգտեալք յոյժ գոհացան զԱյ 'ի յաւաղմունս աղայոյն միայնութեան արարածն ։ Եւ այսօր մեք աղօթեսցուք հաստատել յայնմանի խոնարհութեան օգնութեամբն Այ ։

ՃԶԵ՝ ծերն. յամենայնի փառաւորեա մի մեղաւորս մարդոյ, այլ քեզ ասա՝ եթէ այս ամենայն վասն մեղաց իմոց եկն 'ի վերայ իմ ։

• Այլոց ծերն. յամենայն փորձութիւն որ դիպեսցի քեզ, մի մեղադրեսցես այլում, այլ մեղադրեա անձին քում և ասա՝ թէ վասն մեղաց իմոց եկն ։

## ՄՆԱՑՈՐԴՔ

## յերկրորդ թարգմանութենէ

ԳՆԱՑԻՆ ոմանք 'ի հարցն առ հայրն Անտոնիոս, և էր և հայրն Յովսէփ ընդ նոսա. և կամեցաւ հայրն Անտոն փորձել զնոսա, և առեալ 'ի մէջ զբանս գրոց սկսաւ հարցանել ընդ նոսա, այլ յառաջ 'ի փոքրագունիցն նոցա սկսաւ հարցանել և ասէ՝ թէ զինչ է զօրութիւն բանիս այսորիկ. և իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ ասէր ըստ իւրում զօրութեան: Իսկ ծերն ասէ ցմի մի 'ի նոցանէ. դեռ ևս ոչ գիտէք զնա: Յետոյ եկն հարցանելով 'ի ծերագոյնս նոցա. եհարց ցհայրն Յովսէփ և ասէ. դու ո՞րպէս կարծես զբանս զայս: Եւ նա ասէ. ոչ ևս գիտեմ և ոչ իմանալ կարող եմ զայդ: Ասէ հայրն Անտոն. ճշմարիտ հայրն Յովսէփ եգիտ զնա՝ որ ասացն թէ ոչ գիտեմ:

ԵՐԵՔ ոմանք 'ի հարցն ունէին սովորութիւն միանգամ յամին ելանել առ հայրն Անտոնիոս. և երկուքն 'ի նոցանէ մինչ ելանէին, հարցանէին զնա վասն խորհրդոց իւրեանց և վասն փրկութեան անձին. իսկ միւսն լռէր միշտ և ոչ ինչ հարցանէր: Յետ բազում ժամանակաց ասէ ցնա հայրն Անտոն. ահա այսքանի ամ է զի գաս աստ և ոչ ինչ հարցանես ցիս: Նա պատասխանի ետ և ասէ. բաւական է ինձ տեսանելդ զքեզ միայն յօգուտ ինձ: Այսպիսի է խոնարհութիւն:

ԱՍԷՐ հայրն Դանիէլ՝ եթէ մինչ հանդերձեալ էր փոխադրիլ յաստեացս հայրն Արսէնի, պատուիրեաց մեզ և ասէ. մի հոգայք վասն իմ առնել ինչ սէր, զի ես թէ արարի ինչ բարի յերկրի, զայն գտանելոց եմ: Եւ իբրև մերձ էր ննջել զքուն արդարոց, շփոթեցան աշակերտքն նորա, և նա ասէ. լռեցէք, զի ոչ ևս մերձեալ է

Digitized by Google

ժամն, այլ մինչ գայցէ՝ ես առաքեցից ձեզ. բայց դատաստանան արհամարհեցայց 'ի ձէնջ առաջի աթոռոյն Տեառն, եթէ տայցէք ումեք զփառսն իմ։ Այլ նոքա ասեն. և զինչ արասցուք։ Ասէ Տէրն. կալեալ տարան յատ իմ քարշեալ ընկեցէք յանդնդապատ։ Որք այս երանելի և սուրբս էին յայսպիսի բարուք խոնարհութեան չափ հասեալ էր՝ որ այսպէս պատուիրէր զսուրբս մարմնոյն։ Այլ այսպէս պատմէր միշտ ծերոյն՝ թէ յորմէհետէ եկի աստ, 'ի վերայ բանի զգուշացի բաղդամ անզգամ, այլ 'ի վերայ լռութեան ոչ երբէք։ Իսկ իբրև մերձեցաւ մահն սորայն, սկսաւ լալ և ողբալ։ Ասեն եղբարքն. Ճշմարիտ և դու ևս երկնչիս 'ի մահուանէ, հայր։ Այլ նա ասէ. Ճշմարտութիւն ասեմ, եղբարք, և տէր գիտէ, զի այս երկիւղ որ այժմն է 'ի սրտի իմում, միշտ ընդ իս էր յորմէհետէ որ եկի 'ի կրօնաւորութիւն։ Զայս ասացեալ ննջեաց քնովն արդարոց երանելին Արսենիոս։ Իսկ իբրև լուաւ հայրն Պիմէն եթէ ննջեաց հայրն Արսենի, ողբաց և ասէ. երանի է քեզ, հայր Արսենի, զի ողբացեր զանձն քո յաշխարհիս յայսմիկ. զի որ աստ ոչ ողբասցէ զանձն, 'ի հանդերձեալն ողբասցէ. զի կամ աստ կամաւ, և կամ անդ ակամայ վասն տանջանացն պարտաւորք ողբալ։

ՊԱՏՄԷՐ հայրն Դանիէլ և ասէր՝ եթէ կոչեաց երբեմն հայրն Արսենիոս զհայրն Աղեքսանդրոս և զԶոյլ և ասէ ցնոսա. գիտեմ զի պատերազմին ընդ իս դևք, այլ ոչ գիտեմ եթէ յափշտակիմ 'ի նիրհմանն. արդ աշխատեցարուք ընդ իս յաւուր գիշերի և պահեցէք զիս, զի մի ննջեցից 'ի հանգստեան յայս։ Այլ նոսա յերեկոյէ մինչև ընդ աձմէ նստան և մնացին ընդ ահեկէ լռելեայն, և ասէին՝ թէ մեք ննջեցաք և զարթեաք, և զնա ոչ խնացաք թէ ննջեաց բնաւ. իսկ առաւօտուն ոչ գիտեմք թէ կամաւ արար զայս և թէ բնութ. ննջեաց, Ած գիտէ. քանզի կարճոյց զաչսն և շնչեաց երիցս անգամ, և բացեալ զաչսն յարեաւ վաղվաղակի և ասէ անգոհ ձայնիւ. ես ննջեցի, այո ես ննջեցի։ Այսպիսի այր էր երանելին Արսենիոս։

ՀԱՅՐՆ Ագաթոն մինչ փոխադրիւր մահուամբ հանդերձեալ էր, եկաց նա զաւուրս երիս 'ի բաց ունելով զաչս իւր և բնաւ ոչ շարժէր զնոսա։ Իսկ եղբարքն խթեցին զնա և ասացին. ո՞ւր իցես արդեօք, հայր Ագաթոն.

Digitized by Google

Իսկ նա ասաց նոցա. տանջիլ զաստուածպաշտութիւն այ կամիմ ես, որդեակք։ Ասեն ցնա. նա զի՞ եւ երկնչիս, հայր, 'ի ժամէն յայտնանել։ Իսկ նա ասէ նոցա. ես բնաւ կարող ի-մանել ձգնեցայց պահել զպատուիրանս այ, այլ տանջանացն յանձնեայցնի մարդ եմ, եւ ոչ գիտեմ թէ գործք իմ հա-ճոյ եղեն այ թէ ոչ։ Ասեն ցնա եղբարքն. եւ ո՞չ յատա-նաս դու 'ի գործս քո թէ հաճոյ են այ։ Ասէ ցնոսա ծերն. ոչ իշխեմ վստահանալ մինչեւ կացից առաջի այ, քանզի այլ օրէնք դատաստանաց այ եւ այլ օրէնք մարդկայնոց իցեն։ Իսկ իբրեւ կամէին այլ ազգ ինչ խօսել, ասէ. ա-ղաչեմ մի ինչ խօսիք ընդ իս 'ի ժամու յայսմ, զի ոչ կա-րեմ բանել։ Իսկ առժամայն կատարեցաւ ուրախութեամբ՝ խա-ռնեալ ընդ հրեշտակսն որք եկեալ էին առնուլ զհոգի նորա յերկինս։

ԱՍԵՆ ցհայրն Սիլուանոս. զի՞նչ իցէ նեղ դուռն եւ ան-ձուկ ճանապարհն որ գրեալ է։ Եւ պատասխանի ետ եւ ասէ. դուռն նեղ է բռնադատելն զանձն եւ զկամս իւր հատանել, եւ թողուլ զկամս իւր եւ հետեւել կամացն այ, զի կարասցեն ասել՝ ահա մեք թողաք զա-մենայն եւ եկաք զհետ քո։

ԱՍԱՑ հայրն Պիմէն՝ եթէ գնաց եղբայր մի առ հայ-րն Սիլուանոս եւ ասէ ցնա. հայր, աղօթեա ինձ բանս։ Իսկ եկաց առ նմա աւուրս եօթն, եւ ծերն ոչ խօսեցաւ ընդ նմա ինչ։ Իսկ իբրեւ յուղարկէր զնա, ասէ ցնա. գնա-ցես եւ զգոյշ լիջիր անձին քում, քանզի յաւուրս յայ-սոսիկ մեղքն իմ եղեն պարիսպք խաւարայինք ընդդի-մացեալ ինձ եւ այ իմոյ։ Զայս զեղեղօրէն ասէր՝ իւր հա-մարելով զմեղսն նորա, զի խոնարհք էին հայրքն սրբոյն։

ՀԱՅՐՆ Յովհաննէս պատմէր մեզ՝ եթէ հայրն Ա-նուբ եւ հայրն Պիմէն եւ այլ եղբարքն նոցա մօր մի-ծնունդք էին եւ 'ի միայնութիւն եղեն կրօնաւորք 'ի Սկիւթէ։ Իսկ յորժամ եկեալ Մազիկեցին աւերեցին զՍկիւթէ, գնա-ցին նոքա 'ի տեղին յայն որ կոչի Տերենութ, եւ կա-ցին անդ աւուրս ինչ մինչեւ խորհրդեսցեն թէ ուր բնակես-ցեն, եւ մնացին կայծն 'ի տաճար կռոց։ Ասէ հայրն Ա-նուբ ցհայրն Պիմէն. արասցուք սէր, ես եւ դու եւ այլ եղբարքս մեր իւրաքանչիւր առանձին կացցուք եւ հանդիպեսցուք զեօթնեակս զայս, եւ մի տեսցուք զմիմեանս մինչեւ տէր ցուցցէ՝ թէ ուր պարտ իցէ կեալ մեզ։ Ասէ հայրն

Պիմենի. այսպիսի արտասուօք որպէս մեռանելոց. Այլ կայցէ ընկեալ առանձինն խոստովանիցիւքն. Այլ էր 'ի սանձարքին յայսն արձանն կայր մեծ կանոնաւն. և յաճախէր ընդ առաւօտն հայրն Նոյոր և հնազանդէր բարւ. և քարոզեալ զերեսս կրօնից քարանձքն յառաւօտէ մինչև յերեկոյն, իսկ յերեկոյին ասէր ցիւրսն. Թողութիւն արասցես ինձ, զի տրտմեցուցի զքեզ: Այլ զայս եօթնեակս այն, և նա զայն առնէր հնազանդ: Իսկ յաւուր շաբաթու ժողովեցան 'ի միաբանն գաղձեալ: Ասէ հայրն Պիմեն ցհայրն Սնոյ. տեսանէ՞ք զքեզ զայս եօթն աւուրս զի հարկանէիր քարանձքն զերեսս այս կրօնց զօրն ողջոյն, իսկ յերեկոյին անկեալ յերկիր խնդրէիր թողութիւն 'ի սմանէ, և զիա՞րդ հաւատացեալ մնայր, և նա ասաց կրօնաւոր որ կրկնեսցէ ծունր կրկին և խնդրեսցէ 'ի նմանէ թողութիւն: Ասէ ցնա ծերն. զայս՝ օրինակ ձեզ արարի, եղբարք, զի մինչ տեսանէիք զիս կոծեալ զերեսս նորա՝ միթէ խոստացա՞ւ ինչ կամ բարկացաւ: Ասէ Պիմեն՝ ոչ: Այլ մինչ կրկնեալ ծունկս խնդրէի թողութիւն միթէ շփոթեցա՞ւ ինչ և կամ ասաց ոչ ներել ինձ: Ասէ Պիմէն՝ ոչ: Ասէ ծերն. այսպէս և մեք եղբարք եօթն եմք, և եթէ կամիք կեալ 'ի միաբանն՝ եղբարք իբրև զկուսորդս զայս քարոզեցէն, որ ոչ 'ի միոջ ամբարշտութեանց և ոչ 'ի միրայ փառաց ևս շփոթեցաւ կամ շարժեցաւ սա 'ի բարկութիւն ինչ. իսկ եթէ ոչ կամիք այսպէս առնել, ահա չորս դրունքս են սանձարքիս, և խոստովանիցիք որ 'ի մէնջ եկեալ գնասցէ ուր և կամեսցի: Իսկ նոքա իբրև լուան զայս, անկեալ առ ոտս նորա ասեն. որպէս կամիս, այնպէս արասցուք և լուիցուք զինչ և ասասցես մեզ: Այս ասէր հայրն Պիմեն՝ եթէ բնակեցաք 'ի միասին խոնարհութեամբ միաբանութեան զամենայն աւուրս կենաց մերոց, և առանեցաք զամենայն զոր ինչ ասէր ծերն, և կարգեցաք զմեզ 'ի մէնջ 'ի կանոնաւոր մեզ, և զոր ինչ դնէր առաջի. մեր՝ այն էր կերակուր մեր, և ոչ որ իշխէր 'ի մէնջ խնդրել այլ ևս ինչ կամ խօսել կամ ոչ ճաշակել զառաջին եղեալսն, և կացաք 'ի միասին զաւուրս մեր խաղաղութեամբ հանդարտեամբ և սրբութեամբ:

Ասէր հայրն Իսայի. ոչ կարեմք խնդրել մեզ 'ի կենազործոց խոնարհութիւն, եթէ ոչ նախ ձգեսցուք 'ի բաց զատամանէլն հօրոց զծանր բեռն ամբարտաւանութեան.

Digitized by Google

որ եթէ ճգնեցուցանէ յայս, զայսուք պիտանացուութիւն։ Մի ասասցուք թէ այս ինչ ոչ պիտանասցէ մեզ, որ ամենայն ինչ որ օգտեցուցանէ զմեզ՝ նա նորին հաւատացելոց պիտանաս-ցէ, որպէս և տէրն ասէ՝ թէ որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցը-րուէ։ Եւ քանզի որպէս կնիք որ զոր ինչ դրոշմեալ ու-նի՝ զայն նկարեցուցանէ ուր և կնքեսցէ, այսպէս և գործք դրոշմեալ նկարին 'ի հոգիս։ Արդ եղիցին տեսանելիք քո և համբերանք և գնացք և նստել և կերակուրք և կերա-լ և անկողին և օդ և ամենայն պատրաստութիւն և տուն և ամենայն անօթք նորին նուաստ և արհամարհեալ։ Այսպէս և աղօթք քո և սաղմոսերգութիւն և կերակուր ընդ ընկերին՝ ամենայն նուաստ և հեզ եղիցին։ Մի խօսե-ցիս մեծամեծս և մի հակառակեսցես և մի զառաջ ձայ-նիր, և մի յանդգնեալ ժամու տասցես և կամ գործեսցես ինչ, և մի երգեղով աղօթեր և մի հպարտութեամբ պա-տասխաներ. այլ յամենայնի 'ի բանս և 'ի գործս տացես զմեծամն և տասցես զխոնարհութիւն։ Եւ քննիչ լեր առ բարե-կամսն և հեզ առ հնազանդեալսն քեզ և անկեղծաւոր առ յանդիմանեալսն և մարդասէր առ խոնարհսն, և մխի-թարիչ լեր վշտացելոց և տրտմեալ հիւանդաց, և մի ար-համարհեր զոք 'ի մարդկանէ, և քաղցր լեր 'ի խօսել, ու-րախ և դաշն 'ի պատասխանել, և բարեխօս յամե-նայնի և հեշտընդունել ընդ ամենեսեան։

ԱՍԱՑ հայրն Մովսէս ցհայրն Զաքարիաս. ասա ինձ բան ինչ, որդեակ։ Եւ նա անկաւ առ ոտս նորա և ա-սէ. և դու ընդ իս հարցանես, հայր։ Ասէ ցնա ծերն. հաւատա ինձ, որդեակ, զի տեսանեմ զհոգին հոգւոյն որպէս հանգուցեալ 'ի քեզ, վասն այնորիկ հարցանեմ։ Իսկ Զաքարիաս եհան յիւր հրամայեալ նմա՝ պտուղ-զկնգուղ իւր 'ի գլխոյ իւրմէ ընկեց 'ի գետին, և կոխեաց առ ոտս զնա և ասէր. եթէ ոչ այսպէս ոչ կոխեալ խոր-տակեսցէ զանձն իւր 'ի ձեռն մեծի խոնարհութեան և ցածութեան, ոչ եւս կարող լինի նա կրօնաւոր լինել։

ԱՍԱՑ հայրն Եսայիաս. սէր երկրաւոր մեծութեան և փառաց ծնանի զատութիւն, իսկ խոնարհութիւն ծնանի զերկիւղն այ 'ի սրտի. և զոր մի կամեսցիս տեսանել մե-ծամեծաց լինել և իշխանաց աշխարհի, զի մի զրկեսցիս 'ի փառացն այ։ Ասաց դարձեալ. յորժամ կայցես յա-ղօթս, եթէ խոնարհութեամբ արասցես և զանձն քո անար-

ժամն համբերեսցես, ընդունելի ես նմա. իսկ եթէ արհամարհանօք իցէ միտս քո եւ յիշեսցես զայլ որ ծոյլ եւ զանարգեսցես զնա, ընդունայն է աղօթք քո։ Պարծեալ ասէ. ընդէ՞ր երանելի իցէ խոնարհն. վասն զի ոչ ունի ընդէմ բամբասել զոք կամ ընդդիմանալ զեկեղեցին իւրոյ, եւ ոչ աչս ունի զի տեսցէ զպարկաւորութիւն ընկերին. ունկն ոչ ունի զի լուիցէ զանօգուտսն. նա եւ ոչ բերան ունի չարախօսել զոք կամ զեղծայր իւր, եւ ոչ քննել զայլոց գայթակղութիւնս, այլ միայն զմեղս իւր. եւ խաղաղարար իցէ առ ամենեսեան ըստ բանին տեառն. եւ ոչ վասն այլոց ումեք առնէ զայս, այլ վասն տեառն. բայց այս իցէ իբաւացին, զի թէ պահեսցէ որ զսէր առաքելք եւ զամենայն առաքինութիւնս կատարեսցէ, այն ամենայն առանց խոնարհութեան ոչ ինչ են եւ վայրապար յայժ։ Պարծեալ ասէ. որ որ առանց զխոնարհութիւն, տեսանէ նա զմեղս իւր. եւ որ չողոյ զհետ խոնարհութեան եւ ողբոց, առաքաւելն արքա ՚ի պատէ նորա զամենայն չար խորհուրդս, եւ մնացանեն զանձն նորա ամենայն առաքինութիւնք. եւ որք ունիցին ողբս եւ խոնարհութիւն, ոչ եւս յաղթեսցեն զնոսա սատանայական մարտնչականք. այլ արհամարհանօք զոր արհամարհիցի նա ՚ի մարդկանէ, զնէն նորա լիցին եւ պահեն զնոսա ՚ի սրտմտութէ եւ ՚ի չարի չար հատուցանելոյ, եւ ուսուսցէ համբերել ամենայն չարեաց. եւ յայսց ամենայնէ ոչ ինչ մերձենայ ՚ի խոնարհն։ Բայց զարձեալ անձկանել առաջի այ զխոսութիւն եւ հնազանդել պատուէի բանացն խոնարհութեան, բերէ ՚ի մարդ զսէրն այ եւ զանառակութիւն. իսկ խոնարհութիւն է համարել զանձն մեղաւոր քան զամենայն մարդ, եւ արհամարհել զինքն իբրեւ թէ ոչ երբէք բարի գործեալ իցէ։ Այլ գործք խոնարհութեան այս ինչ է, լռութիւն միշտ, եւ ոչ պատահել ընդ ումեք եւ ոչ ումեք հակառակիլ, եւ հնազանդել բարեաց, եւ ՚ի խոնարհ նայել աչօքն միշտ, եւ առաջի աչաց ունել միշտ զմահ, եւ անստուտ զօր ՚ի բանս, եւ ոչ ընդդիմակարծանել ուսուցողս եւ ոչ հաստատել զիւր բանն, եւ ունել համբերութիւն միշտ եւ ատել զհանգիստ եւ համբերել անարգանաց, եւ արթուն եւ զգաստ լինել, եւ հատանել զկամս իւր եւ ոչ բարկանալ ումեք, ոչ ունել նախանձ կամ հեռ, եւ պարապել զօրհանապազ յօգուտս. այս է չափ խոնարհութեան. եւ զի սա ամենայն զխոնարհութիւն,

Digitized by Google

Նա յանձն իւր ժողովէ զյանցանս եղբօրն. և ասէ՝ ես մեղայ. Իսկ որ ատեայ զեղբայրն, զանձն խնայողն և արդար ասէ, և յանցն առնէ զեղբայրն. Իսկ որ զանձն արդարացուցանէ, նա այլում ոչ ներէ։ Պատմեցաւ ասէ. մի խօսեսցի լեզու քո, այլ գործք քո, և եղիցին բանք քո խոնարհ քան զգործս քո. և մի լինիլ խորհեսցիս արտաքոյ մտաց, և մի վարդապետեսցես արտաքոյ խոնարհութեան, որպէս զի կարասցէ ընդունել երկիր զսերմն քո։ Նոյն դարձեալ. ոչ լինէ խօսելն իմաստութիւն, այլ իմաստութիւն լինէ ճանաչելն զժամանակ խօսելոյն թէ երբ լինէ ժամ խօսելոյ. և զլռելն իմաստութիւն լինէ և իմաստութիւն խօսեսցիս, և զգոյշ լեր նախ քան զխօսելն քո, և առաք պատուհաս պատասխանւոյն, և 'ի գիտութիւն տուեալ լեր զա զի զերծցիս 'ի բազում վնասուց. բանալի լինի իւր բարեաց մեծութիւն՝ որ ցուցանէ զանձն իմաստուն, վասն այսորիկ մի պարծեսցիս 'ի վերայ գիտութեան քո. զի ոչ որ գիտէ որպէս է և ոչ լինա. և կատարումն ամենայնի պատուիրանաց է, իսկ խոնարհեսցես քո 'ի նորոգ ընկերին ընդ ամ մխաւորէ զգեղ։

ՍԻՍԱՑ պատմեաց հայրն Սերոյեա վասն խոնարհութեան. յիշեսցուք, եղբարք, զայն որ ոչ ունէր ուր դնել զգլուխ իւր. և 'ի մեր աւուրս, եղբայր, և մի պարծիցամնեսցիս. ասէ թէ ով էր և կամ զինչ եղև վասն քո. թագաւոր էր և եղև ծառայ և պանդխտեաց վասն քո։ Մի անարգանեսցի մարդասիրութեան քո, ասէր. ընդէր ոչ զայսպէս խոնարհեցար յաղագս մերոյ ցեղական ծառայիցս, մինչ զի արդարեւ ամենայնի ոչ ունէր ուր զգլուխն դնիցէ. իսկ մեք ամբարտաւանեալք և ամենայն նուաստ և անարգ խոնարհութեան արժանիք՝ մեծութեան և պատուոյ ցանկամք առաւօտս. Որդի ընդէր չյայտնեցաւ ես, ով եղկելի մարդ, և զինչ ժողովես, և ընդէր կուրացեալ ես անհասկանալութեամբ, և կամ ընդէր հեռացեալ ես պատուիրանաց կենդանեաց, և ընդէր ոչ տեսանես զհանդերձեալ բարիսն. Որդ զայս ամ քննեսցես, և զպատուիրանս ընտրեսցես։

ՍՈՂԲԱՑՐ անձն առաւ ցհայրն Թէոդորոս՝ եթէ կամիմ կատարել զպատուիրանս աստուծոյ. Եւ նա ասէ՝ եթէ հայրն Թէոփիլոս երբեմն ասաց եթէ կամիմ զնել ըմբռնարարել իմ ձեռաւ զօրհնեալ աստուածոյ։ Ի՞ւ սարեալ զոտիւք իւր 'ի փուռն՝ արար հացս, և խնդրեալ ա

քանզի և եղիցի անդ և նա նոցա զհաճոյն իւր։ Այժմ և այլք խնդրեցին, և զի ոչ մնայց հայց՝ նա նոցա զշրջազգեստն իւր. իսկ և այլք ևս խնդրեցին, և նոցա նա զայն որ զգեցեալն էր, և ինքն մերկ եմուտ 'ի անձաւանն, և եբած զմիջնակն զԹիկանցն իւր, և մեղադրէր անձին և ասէր՝ Թէ ոչ կարացի կատարել զպատուիրանս Տն։ Իսկ եԹէ և դու այժմիկ կարասցես առնել, դեռ ևս պարտիս ասել՝ ոչ կարացի կատարել զպատուիրանս Տն. զի կատարել պատուիրանացն խոնարհուԹիւն է, յորում հանգչի Ած 'ի հեզս և 'ի խոնարհս. և որ կատարէ զխոնարհուԹիւն, կատարէ նա և զամենայն պատուիրանս. և որ ոչ ունի զխոնարհուԹիւն, ոչ ունի նա և զայլ ամենայն պատուիրանն. վասն զի ոչ են ընդունելի առանց խոնարհուԹեան ամենայն առաքինուԹիւնք առաջի ընդունողին Այ։ Իսկ եղբայրն այն խոնարհեցաւ երկիր եպագ, և շահեցաւ զնոյն ուղղուԹեամբ։

ՊԱՏՄԵՑ եղբայրն Թէոփիլոս եպիսկոպոսն 'ի լեառն՝ Նիտրիոյ, և եկն հայր լերինն առ նա 'ի տեսանել զնա։ Ասէ եպիսկոպոսն ցծերն. զինչ գտեր գործ մեծ 'ի կրօնս յայս, հայր։ Ասէ ծերն. զայն զի դիցէ մարդ զմեղս 'ի միտ, և նախատէ և պարսաւէ զինքն։ Ասէ Թէոփիլէ. Ճշմարիտ ճանապարհ փրկուԹեան այդ է։

ՍՈՅՆ ինքն Թէոփիլէ եպիսկոպոս գնաց եղբարբն 'ի Սկիտէ, և ժողովեցան առ նա հայրն և եղբայրքն, և ասեն եղբայրքն ընդ հայրն Պամբոյ. ասասցես, հայր, բան ինչ եպիսկոպոսին, զի շահեսցի 'ի քէն։ Ասէ ծերն. եԹէ ոչ շահեսցի նա 'ի լռուԹենէ իմմէ, և ոչ 'ի բանից շահեսցի։ Յայնժամ ասեն. այս լռուԹիւնն իցէ գործ խոնարհուԹեան և շահեցուցանող և սիրելի ամենեցուն։

ԱՍԷՐ մայրն Թէոդորա՝ եԹէ ոչ ճգնուԹիւն և ոչ տքնուԹիւն և ոչ այլ ինչ աշխատանք առաքինուԹեան կեցուցանել կարիցէ զմարդ բայց զխոնարհուԹիւն. Վասն զի էր ուրեմն միայնակեաց մի, որ հալածէր զդևս 'ի մարդկանէ, և հարցանէր ցնոսա Թէ որով առաքինուԹեամբ ելանէք դուք, միԹէ պահօք ելանէք։ Ասեն դևքն. մեք բնաւ ոչ ինչ ճաշակեմք։ Իսկ ծերն ասէ. հսկմամբ։ Ասէ դևն. մեք բնաւ ոչ ննջեմք։ Ասէ ծերն ասէ. միայնակեցուԹեամբ։ Դևն ասէ. մեք միշտ յանապատսն շրջիմք։ Ծերն ասէ. և արդ որով իւիք ելանէք դուք։

Digitized by Google

Այլ զԱն ասէ. ոչ ինչ հալածէ և ոչ յաղթէ մեզ ինչ այլ այնպէս իբրև զխոնարհութիւն. զի նովին հալա-ծիմք մեք, և նոյն ինքն խոնարհութիւն է որ կորուսանէ զմեզ խաղաղ: Որք տեսանեն թէ ժրպէս յաղթող է դի-ւաց և կորուսանէ զնոսա խոնարհութիւն:

ԱՍԱՑ հայրն Յոհաննէս կարճահասակն՝ եթէ խո-նարհութիւն է դուռն երկնից, և հարքն մեր բազում աշխատանօք և նախատանօք մտին ուրախութեամբ՚ի քա-ղաքն այն կենդանութեան. զի խոնարհութիւն և երկիւղն այն վերագոյն են քան զամենայն առաքինութիւնս: Պատ-մեցաւ ասէ. ով վաճառեաց զՅովսէփ: Այլ պատասխա-նի ետ եղբայրն և ասէ. եղբարքն նորա վաճառեցին: Նա-սէ ծերն. ոչ, այլ խոնարհութիւն նորա վաճառեաց զնա. զի կարող էր ասել ցնոսա՝ եթէ եղբայր ձեր եմ, այլ լռեաց և խոնարհութեամբ վաճառեցաւ, և վասն խոնար-հութեան նորա արար զնա տէր իշխան՚ի վերայ երկրին ե-գիպտացւոց: Պատմեցաւ ասէ. մի թողցուք զբեռն թե-թեւ՝ որ է մեղադրել անձին, և մի բարձցուք զծանրն՝ այսինքն է արդարացուցանել զանձն: Ասաց հայրն Յով-հաննէս Ջերմեռանդն էր հոգւով, և զնոյն ոմն առ նա և եանես զի հիւանդէր զնորայ և գովեաց զծերատղադրոյ նորա, իսկ նա լռեաց. և եղբայրն այն դարձեալ գովեաց, և նա դարձեալ լռեաց: Իսկ յերրորդումն իբրև գովեաց, ա-սէ նա ցեկեալ եղբայրն. ով եղբայր դու, ուստի պատա-հեցար՝ մինչ եկիր դու զքեզ հանել յինէն: Յայտնապէս խոնարհութեան էր երանելւոյն, զի զգովութեանն թըշ-նամութիւն համարէր ինքեան:

ԱՍԱՑ ոմն վասն նորա. ով իցէ Յոհաննէս որ խոնար-հութեամբ իւրով կախեաց զամենայն Սկիւտէ՚ի յոյժ փո-քու ճկոյթն իւր:

ԱՍԱՑ հայրն Յոհաննէս կարճիկն այս՝ եթէ ծեր ոմն հոգևոր արգելեալ զինքն՚ի խցի, և էր ինքն մեծանուն յայտ և փառաւորեալ՚ի մարդկանէ: Իսկ հարքն պատմե-ցին նմա և ասեն. ահա ոմն՚ի սրբոց փոխանորդելն մերձ է, երկեւղիւր՚ի տեսանել զնա նախ քան զմահ նորա: Այլ նա խորհէր՚ի միտս և ասէր. եթէ ելանեմ ես՚ի տուէ, զան առ իս ամենեքեան և փառաւորեն զիս և ոչ եւս այս հանգեայց ասա, այլ գնացից՚ի գիշերի գաղտ և ծա-ծուկ յամենեցունց: Այլ իբրև ել՚ի գիշերի՚ի անձնեկէ

խուսէր զի ծանծկեսցի յամենեցունց, յայնժամ ահա ա-ռաքեցաւ յայ հրեշտակս երկնից՝ ունելով զամբարս 'ի ձեռին, և վառեալ տանէին առաջի նորա, և ահա ամե-նայն քաղաքն ընթացաւ առաջի նորա։ Իսկ որչափ նա ջա-նայր փախչել 'ի փառաց, այնչափ այլ առաւել եւս փա-ռաւորէր նա յայ. 'ի մարդկանէ փառաց փախչելով եհաս փառացն այ ըստ բանի տեառն որ ասէ՝ եթէ որ խոնար-հեցուցանէ զանձն, բարձրասցի։

ԱՍԱՑ հայրն Յովհաննէս Թեբայեցին՝ եթէ պարտ է կրօնաւորին նախ քան զամենայն առաքինութիւն զխոնար-հութիւն ստանալ, և զի նա է առաջին պատուիրան փրկչ-ին որ ասէ՝ երանելի աղքատաց հոգւով, զի նոցա է ար-քայութիւնն երկնից։

ԱՍԱՑ հայրն Պիմենէս վասն հօրն Իսիդորի՝ եթէ հիւ-սէր զարմաւ զգիշերն ողջոյն։ Իսկ ասեն ցնա եղբարքն. հանգիր, հայր, մի զի դատիր յոյժ զի ծերացեալ ես։ Իսկ նա ասէր. թէ հրկէզ արասցեն զիս 'ի գործէ և հանեն ըղ-մոխիրս ոսկերացս, և ոչ յայնժամ շնորհս ունիցի, թող թէ աշխատիլ ինչ։ Ասէր վասն նորա դարձեալ՝ եթէ յորժամ բերէին խորհուրդք նորա եթէ մեծ ոմն ես դու, նա ասէր ցնոսա. միթէ իցեմ ես իբրև զհայրն Ան-տոն կամ իբրև զհայրն Պամբոյ և կամ իբրև զայլ հար-սն. և խոնարհէր սովաւ։ Իսկ իբրև հակառակեալ ա-սէին խորհուրդքն՝ եթէ զինի այսր ամենայն վշտաց 'ի տանջանս գնալոց ես, ասէր ցնոսա պատասխանի. թէ-պէտ 'ի տանջանս գնալոց եմ, սակայն դուք 'ի ներքոյ իմ գտանելոց էք սատակեալս։ Ասէր նա դարձեալ՝ եթէ որովհետև այսչափ մեծ իցէ բարձրութիւն խոնարհութեան, և այսչափ դժուարին է անկանել 'ի հպարտութիւն, ապա աղաչեմ զձեզ, եղբարք, զի զմինն կալցուք և 'ի միւսոյն փախիցուք։

ԽՆԴՐԱՑԻ ոմն եհարց զհայրն Կրօնոս և ասէ. որով օրինակաւ ստանայ մարդ զերկիւղն այ։ Ասէ ծերն. որ-պէս կարծեմ ես եթէ այսուիկ ստանայ մարդ զերկիւղն այ, զի փախիցէ յամենայն ըղձալեաց և հանգստենից մարմնոյ և տացէ զինքն յաշխատութիւն որչափ կարողութիւն է, և յիշեսցէ զօր արտաքսման հոգւոյ իւրոյ 'ի մարմնոյ, նա և զօր ահեղ դատաստանին այ և զհատուցումն։

ՊԱՏՄԷՐ մեզ հայրն Կարիոն՝ եթէ մինչ նստէի ես



Digitized by Google

'ի լեառն Սինայի, էր անդ եղբայր մի ընտրեալ և ճգնաւոր յոյժ, այլ և գեղեցիկ տեսլեամբ և կատարեալ հաւատով. և յորժամ գայր յեկեղեցին յաղօթս, զգեցեալ ունէր նա պատառատուն հանդերձ և փոքր ինչ պարեգօտ։ Ցաւուր միոջ տեսի ես զնա յեկեղեցին այնպէս և ասեմ ցնա. Եղբայր, տրուպէս և այլ եղբարքն զգեցեալ գան յեկեղեցին՝ զգեցիր և դու և նմանեաս նոցա։ Իսկ նա ասէ ցիս. Թողութիւն արա ինձ, հայր, ոչ ինչ ունիմ այլ վեր զգեցայց։ Այլ ես տարեալ 'ի սենեակն ետու նմա հանդերձ զամենայն որ ինչ պարտ էր, և յայնմհետէ զգենոյր և նա նման եղբարցն և երևէր իբրև զհրեշտակ Այ։ Այլ եղև երբեմն պէտք ինչ եղբարցն զի առաքեսցեն եղբայրս տասն առ Թագաւորն վասն պիտոյ ինչ, և թուեցին և զերիցայրն ընդ գնացողսն յարքունիս։ Իսկ նա իբրև լուաւ, անկեալ առաջի հարցն, աղաչէր և ասէր. վասն սիրոյն Այ՝ մի առաքէք զիս անդր, զի ես ծառայ էի իշխանի ումեմն 'ի պաղատին, և փախեալ եկեալ եմ աստ. և թէ տեսանեն զիս, հանեն յինէն զզգեստս դայս և ծառայեցուցանեն զիս։ Այլ հարքն հաւանեալ բանի նորա արձակեցին զնա։ Իսկ յետոյ ծանեաք զճշմարիտն յայտնեցանէ որք ճանաչէին զնա եթէ էր նա եպարքոս 'ի պրետորին արքայից մինչ էրն յարքունիս, և զի մի ծանիցեն զնա և գտցէ փառս 'ի մարդկանէ՝ և վասն այսորիկ պատճառէր նա ըծառայն լինելոյ։ Այլ զի այսպէս առաքելին ուրբքն յամենայն ժամ փախչէին 'ի փառաց մարդկային և հաւանէին փառացն Այ։

ԱՅՐ ոմն էր 'ի Սկիթէ, որոյ անուն էր Կարիոն, որ թողեալ էր 'ի գիւղ երկուս որդիս և զկինն, և աշխարհէս ելեալ 'ի կրօնաւորութիւն։ Այլ զկնի ժամանակաց ինչ եղև սով յԵգիպտոս, և մշտացաւ յոյժ կինն այն, և յարուցեալ գնաց 'ի Սկիթէ և տարաւ ընդ իւրն զմանկունսն իւր. իսկ էր մինն արու որ կոչէր Զաքարիա, իսկ միւսն դուստր էր. և եկեալ նստաւ 'ի հեռաստանէ 'ի շամբս մերրեաց, ուր և սովորութիւն էր կնոջ մերձոյ նստել և զբերթելով եղբարցն տեսանել։ Իսկ կինն նայէր տեսանել զերիցայր ոմն և կամ զորդի. և էր տեղին այն մերձ 'ի քաղաք, և էր անդ եկեղեցի և աղբիւր ջրոյ և շամբ ինչ, և տեսանէ անդ զսիւխեանս Կարիոն և կինն իւր։ Ասէ կինն ցհայրն Կարիոն. դու միայնձնացար, և արդ սով

տառապեալ է յԱղեքսանդրիա, և որում անուանից զորդիկն քո։ Ասէ Կարիոն. առաքեա զզաւակդ առ իս։ Եւ իբրև առաքեաց փութով, մանուկն եկաց առ հօրն իւրոյ. իսկ դուստրն դարձաւ առ մայր իւր, և եղեն յԱղեքսանդրիա 'ի տունն իւրեանց. իսկ ծերն սնուցանէր զմանուկն 'ի սենեակ իւր, և գիտէին ամենեքեան զի որդի էր նորա։ Եւ իբրև սնաւ մանուկն և մեծացաւ, եղև տրտունջ 'ի մէջ եղբարցն վասն նորա։ Իբրև լուաւ հայրն Կարիոն զայս՝ ասէ ցորդին իւր. Զաքարիա, արի գնասցուք աստի, զի տրտունջ է զմէնջ վասն քո։ Ասէ Զաքարիա ցծերն հայր իւր. աստ գիտեն զի որդի քո եմ, և զի մեզ եւ աստ և տրտունջն, եթէ այլուր փախիցուք ուր ոչ գիտեն զայս՝ ոչ կարեն ասել զիս որդի քո, գուցէ և անդ տրտունջն առնուել։ Ասէ ծերն. արի գնասցուք 'ի Թեբայիդա։ Եւ գնացին անդ։ Եւ զկնի սակաւ աւուրց եղև և անդ տրտունջ վասն մանկանն։ Ասէ հայրն ցԶաքարիա. գնասցուք դարձեալ 'ի Սկիւթէ։ Եւ իբրև եկին անդ, եղև դարձեալ տրտունջ վասն նորա։ Յայնժամ գնաց մանուկն Զաքարիա 'ի գետն մի ուր էր բորակ, և մերկացեալ նստաւ 'ի ծով բորակին՝ թաղեալ զինքն մինչև ցանոթսն իւր, և ապականէր զգեղեցիկ զայն յերեսս իւր և 'ի գլուխն, և համբերեաց այնչափ մինչև կեղեւեալ մաշեցաւ մարմին և մազերն նորա, և կորոյս զգեղեցկութիւն մարմնոյն և եղև որպէս զՀնդիկ սեաւ, և ապա ել անտի և զգեցաւ զհանդերձ իւր և եկն առ հայրն, և նա հազիւ ծանեաւ զորդին իւր։ Իսկ իբրև եկն կիրակէ և գնաց նա յեկեղեցին հաղորդիլ 'ի սուրբ խորհրդոյն, յայտնեցաւ այն Իսիդորէ քահանային Սկիտոյ զոր արար մանուկն, և ետես զնա քահանայն և զարմացաւ և ասէ. Զաքարիա մանուկն յանցեալ կիրակէին իբրև զմարդ եկն 'ի հաղորդութիւն, և այսօր անուանի իբրև զհրեշտակ եկն. զի յայտնեալ գեղեցկութեան զրկեալ զմարմինն եւս զինքն յանարգութիւն սեաւ թէ վասն խոնարհութեան սորին։

Պատմէր մեզ հայրն Մատոյ վասն իւր՝ եթէ մինչ մանուկ էի և նստէի 'ի խուցն յԱղեքսանդրիա, կամեցան զիս տանել 'ի քաղաքն և օրհնեցին քահանայ. և ես զի ոչ կամէի յանձն առնուլ զայն, փախեալ գնացի յայլ տեղի։ Եւ այլ ոմն ծանուցին զանէհին ...

զձեռագործ իւր և սպասաւորէր նմա։ Եւ դիպեցաւ փորձութի կուսի ումեմն ՚ի գիւղն յայն, զի անկաւ ոմն ընդ նմա, և յղացաւ առաժամայն։ Եւ իբրև հարցին ծնողք նորա Թէ ով արար զայդ ընդ քեզ, և նա ասէ. միայնակեացն այն որ նստի ՚ի խցին։ Եւ եկեալ ՚ի գեղջէն արանց անզգր զնա, և կապեցին ՚ի պարանոցի իւրում աղբամ մի կճիճս և ունկանս կճոյ և հրապարակեցին զնա այնպէս շրջեցուցանելով ՚ի փողոցս, և հարկանէին զնա ուժգին և ասէին. այս չար արգելականն ծեր արծեաց զկոյս մեր, հարցուք զսա հարցուք. և ձաղեցին այնպէս մերձ ՚ի մահ զմարմին իւր։ Եկին ծերք գեղջն. մինչև յե՞րբ դանէք զդա, Թո՛յլ տուք զի մի մեռցի։ Եւ սպասաւորն իւր կայր յետոյ ամաչեցեալ, քանզի անարգէին զնա յոյժ։ Իսկ ծնողքն աղջկանն ասեն. ոչ Թողցուք զդա մինչև տացէ երաշխաւոր սնուցանել զկին իւր։ Եւ եկաց երաշխաւոր նմա սպասաւորն իւր, և գնացի ՚ի խուց իմ և տայի օր ըստ օրէ զծախս կնոջ իմոյ։ Եւ ասեմ ցանձն իմ. Մակարի, արդ աշխատեաց զի գտեր դու քեզ կին, և տառապել ես զի սնուցանել ունիս դու զնա։ Եւ գործէի ես զցայգ և զցերեկ և առաքէի նմա։ Իսկ իբրև եհաս ժամանակ ծննդեանն, յերկունս եկաց չարչարեալ զաւուրս բազումս և ոչ կարէր ծնանել։ Հարցին զնա ծնողքն իւր և ասեն. զի՞նչ իցէ այն զի ոչ կարես ծնանել։ Իսկ նա ասէ. վասն այնորիկ դիպեցաւ ինձ այս, զի սուտ վկայեցի զծերոյն միայնակեցէ արդարոյն այն, և ոչ Ճանաչեմ զնա. և վայ է ինձ զի զանպարտն պատապարտեցի. այլ այս ոմն երիտասարդ արար զայն։ Իսկ իբրև լուաւ զայն սպասաւորն իմ, գայր առ իս ուրախ և խնդութեամբ և ասէ ցիս. ոչ կարաց ծնանել կոյսն այն մինչև խոստովանեցաւ զուղիղն և ասաց՝ ոչ Ճանաչեմ զմիայնակեացն և ոչ նա զիս, այլ սուտ վկայեցի և զրպարտեցի զնա. և զի ահա գիւղն ողջ գան աստ, և բազում փառօք և պատուով կամին խնդրել Թողութիւն ՚ի քէն։ Իսկ ես իբրև լուայ զայս, զի մի հոգացեն մարդիկ ամաչեցեալ յինէն, փախեայ անտի և եկի աստ ՚ի Սկիտէ. և այս է առաջին պատճառն իմ գալոյ և բնակելոյ ՚ի Սկիտէ։

ԱՍԱՑ հայրն Պետրոս՝ եԹէ հնազանդ և քաղցր և հեզ էր առ ամենեսեան հայրն Մակարի, և այնչափ մին-

չէ ասացին եղբարքն թէ ընդէ՞ր ես այդպիսի դիւրալուր։ Իսկ նա ասէ. զերկոտասան ամ աղաչեցի զտէր, և ետ ինձ զշնորհս զայս, և դուք կամիք մերկացուցանե՞լ զիս 'ի սմանէ։

Ասէին վասն հօրն Աղաթոնի, եթէ մտանէր ոք առ նա եղբայր իբրև առ մեծ և առաքինի ծերոյ առաջի, 'ի հարցանելն նորա ինչ խրատ, ոչ ինչ տայր պատասխանի. իսկ եթէ ասէր ոք յեղբարցն ցնա իբր թէ արհամարհանօք՝ եթէ, ծեր, յորժամ յուղտն մտանէիր և զաղանայիր զաորակն և ծախէիր՝ ո՞չ հարկանէին զքեզ ուղտապանքն այնոքիկ, այսոցիկ առնէր պատասխանի խնդութեամբ զինչ և հարցանէին։

Եւ երբեմն 'ի վերայ կացեալ դևն սրով հօրն Աղաթոնի իբր թէ հատցէ զաստ նորա՝ և ոչ կարաց, այլ յաղթեցաւ 'ի խոնարհութենէ նորա։ Եւ ասէր դևն. վասն այն յաղթէք մեզ, զի մեք թէպէտ զամենայն առաքինութիւն ունիմք, այլ զխոնարհութիւն ոչ։

Ասէր հայրն Աղաթոն՝ եթէ մինչ մանուկ էի, ձանձրացայ 'ի նստելն 'ի սենեկի, և յարուցեալ ելի յանապատ և եղի 'ի միտ թէ զոր ինչ տեսից անդ՝ հարցից 'ի նմանէ զբան շահու անձին. և դիպեցայ մանկան ումեմն որ արածէր զարջառս, և ասեմ ցնա. զի՞նչ արարից, մանուկ, զի քաղցեալ եմ։ Եւ նա ասէ ցիս. կերիցես։ Եւ ես դարձեալ ասեմ. կերայ և դեռ ես քաղցեալ եմ։ Եւ նա ասէ ցիս. և դարձեալ ես կերիցես։ Եւ ես ասեմ. բազում անգամ ճաշակեցի և դարձեալ քաղցնում եմ։ Իսկ նա ասէ ցիս. միթէ էշ իցես դու որ միանգամայն զուտել խնդրես։ Եւ այս շահ եղև ինձ բազում և օգտեցայ։

Ասէին վասն հօրն Մովսէսի՝ եթէ յորժամ եղև սարկաւագ, ասէ ցնա եպիսկոպոսն. ահա եղեր դու ամենևիմբ սպիտակ, հայր Մովսէս։ Եւ նա ասէ. արտաքքո՞յ եթէ ներքոյ։ Եւ զի կամէր եպիսկոպոսն փորձել զնա, ասէ ցպաշտօնեայս եկեղեցւոյն. յորժամ գայցէ Մովսէս յեկեղեցին, արտաքսեցէք զնա, և տեսէք թէ զինչ ասասցէ։ Եւ իբրև եկն և եմուտ ծերն 'ի խորանն, բարկացան նմա և վարեալ զնա ասէին. գնասցես արտաքս, հնդիկ և սեաւ դու։ Իսկ նա ելանէր և ասէր ցանձն իւր. թէ լաւ և բարւոք եւ արարին քեզ, մոխրամորթ և սեաւ զևանանան դու, զի մարդ ոչ ես և ընդէ՞ր

զնոսա զու 'ի մէջ մարդկան։ Այլ իբրև ծանեան փորձիւ զճշմարիտ խոնարհութիւն նորա զի մարդ Այ էր, պատուեալ զնա պատկառէին 'ի նմանէ։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց զհայրն Մովսէս և ասէ. յամենայն աշխատութեանց մարդոյ ո՞ր ոք տանել օգնեսցէ նմա։ Ասէ ցնա ծերն. Այն է որ օգնէ մարդոյն, որպէս և գրեալ է՝ թէ Այն մեր ապաւէն և զօրութիւն 'ի վերայ նեղութեանց որ գտին զմեզ յոյժ։ Պատասխանի ետ եղբայրն և ասէ. իսկ պահք և արթնութիւնք և ճգնութիւնք զոր առնէ մարդ՝ զի՞նչ լինիցի։ Ասէ ցնա ծերն. այս զօրութիւնք են որ խոնարհեն զհոգին. և զի գրեալ է՝ տես զխոնարհութիւն իմ և զվաստակ իմ, և թող ինձ զամենայն զմեղս իմ։ Այլ եթէ արասցէ զայսոսիկ մարդ, գթասցի տէր 'ի վերայ նորա։ Եղբայրն ասէ. ահա այր ոմն հարկանէր զծառայ իւր 'ի վերայ յանցանաց զոր առնէր, և զի՞նչ պարտ է տալ և առնել ծառային։ Ասէ ծերն. թէ իմաստուն իցէ ծառայն, ասէ՝ մեղայ ողորմեա ինձ։ Այլ ասէ եղբայրն. և ո՞չ ինչ պատասխանի դնել պարտ իցէ նմա։ Ասէ ծերն. ոչ, քանզի յորժամ յանձն առցէ զյանցանս իւր և ասասցէ՝ մեղայ, վաղվաղակի թողցէ տէր նորա զմեղսն զոր արարեալ էր։

ԱՍԱՑ հայրն Մատոյէ. որչափ մերձեսցի մարդ յԱծ, այնչափ մեղաւոր համարեսցի զանձն իւր. զի Եսայի մարգարէ յորժամ ետես զԱծ, յայնժամ անարժան կոչեաց զանձն իւր։ Արդ և ես իսկ մինչ մանուկ էի, կարծէի թէ գործեմ ինչ բարի. իսկ արդ մինչ ծերացեալ եմ, տեսանեմ զի և ոչ մի ինչ բարի իցէ յանձն իմ։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց զհայրն Մատոյէ և ասէ. միթէ սկիտացիք առաւել առնեն քան զգրեալսն յօրէնս, զի սիրեն զթշնամիսն առաւել քան զանձինս իւրեանց։ Ասէ ցնա ծերն. ես, որդեակ, զես եւս և ոչ զսիրելին իմ սիրեմ առաւել քան զանձն իմ։ Իսկ եղբայրն շահեալ 'ի բանէ ծերոյն, ծանեաւ զխոնարհեցուցանել զանձն և ծածկել զառաքինութիւնն։

ԱՍԱՑ հայրն Յակոբ՝ եթէ գնացի երբեմն առ հայրն Մատոյէ, և իբրև ելի 'ի դուռն, ասեմ ցնա՝ եթէ գնամ 'ի սկետեակս։ Այլ ծերն ասէ ցիս. հարցանիցես յինէն զհայրն Յովհաննէս։ Այլ իբրև գնացի անդ, ասեմ ցնա. հարցանէ զքեզ հայրն Մատոյէ։ Ասէ ցիս ծերն. ահա

Digitized by Google

հայրն Մովսէս այսպ առաջարկեաց խորհրդեցելոյն՝ յորում նենգութիւն ոչ գոյ: Այլ զկնի ումն միոյ եկեալ գործելով առ հայրն Մովսէս և պատմեալ նմա զբանսն հօրն Պիմենա: Ասէ ցնա ծերն. ոչ եմ արժանի բանիցն Պիմենայ. այլ զայս գիտասցես՝ զի որ գովէ զընկերսն և ոչ զանձն, նա 'ի մեծ չափ հասեալ իցէ. քանզի այս է կատարելութիւն խոնարհութեան՝ պատուել զընկերսն և ոչ զինքն:

ԳՆԱՑ երբեմն հայրն Մովսէս յԱսկիթեայ 'ի կողմանս Մեղրադոյ և ունէր ընդ իւրն զաշակերտսն իւր, և կալեալ զնա եպիսկոպոսն օրհնեաց քահանայ: Այլ իբրև ուտէին 'ի միասին, ասէ ցնա եպիսկոպոսն. Թողցես դու ինձ, հայր. գիտեմ զի ոչ կամէիր դու զայդ, այլ զայս արարի վասն այնր, զի և մեք օրհնեսցուք 'ի քէն: Ասաց ծերն հեզութեամբ. այո այո, այլ զգանս իմ կամեցիր փոքր մի, այլ զայս գժուարիմ յեղբօրէս որ է ընդ իս, զի ոչ կարեմ միայն կատարել զաղօթս: Ասէ եպիսկոպոսն. եթէ արժանի իցէ դա, օրհնեցից և զդա: Պատասխանի ետ ծերն և ասէ. թէ արժանի իցէ և թէ ոչ՝ զայն ոչ գիտեմ, այլ զայս գիտեմ՝ զի լաւագոյն է քան զիս: Հայնժամ օրհնեաց և զնա քահանայ, և ոչ մերձեցան 'ի սուրբ սեղանն մատուցանել պատարագ, և զնացեալ ամենայն այնպէս վասն առաւել խոնարհութեան իւրեանց: Այլ ասէր ծերն. հաւատամ յԱստուած զի ոչ մեղադրիցէ զիս ատեանն. զի ոչ է իմ մեղք վասն ձեռնադրութեան, վասն զի ոչ մատուցանեմ պատարագ. զի քահանայութիւն զարդ անմեղաց իցէ:

ՀԱՐՑԱՆԷՐ ոմն ասէր ցհայրն Մովսէս. հայր, ասա ինձ բան: Ասէ ցնա ծերն. աղաչեմ զքեզ, զի ունիցես սորա բաւ խոնարհութիւն և սուգ, և ունիցես միշտ զմեղս քո, և մի դատել զայլ եղբարս, այլ եղիցիս ամենեցուն կերակուր: Մի ունիցիս քնանալ ընդ մանկան, և կամ ընկեր լինել նմա, և մի լիցիս ծանօթ կնոջ խօսակից կնոջ, և մի ես սիրելի զընկերս հերձուածողի. և հատցես 'ի քէն զհամարձակութիւն ամենեցուն, և կապեալ կացցես զլեզու և զփորոտ և զորովայնս քո և զգուշասցիս 'ի գինւոյ. Այլ թէ որ ասիցէ ինչ չար քեզ, մի կռուեսցիս ընդ նմա. այլ թէ բարի ինչ ասիցէ, ասասցես՝ այո. իսկ եթէ չար ինչ ասիցէ, ասասցես՝ դու գիտես զինչ ասես. և մի զգժտեր և մի ատեսցես զինչ ասաց. այս է խոնարհութիւնն:

Digitized by Google

Եղեգայրն ասէ. և զի՞նչ արարից, հայր, զի լեզու իմ յաղթէ ինձ. և յորժամ մտանեմ առ մարդիկ, ոչ կարեմ ունել զնա, այլ զատեմ և բամբասեմ և ես ընդ նոսա զամենեսեան վասն անձնային գործոց, և արդ զի՞նչ արարից։ Ասէ ցնա ծերն. եթէ ոչ ես կարող ըմբռնել զլեզու քո, գնացեալ կացցես միայնութեան, զի այդ տկարութիւն մեծ է. իսկ որք ընդ եղբարսն կեան, զլեզու ըմբռնել պարտ է. քանզի և ես ոչ վասն առաքինութեան նստիմ միայն, այլ վասն տկարութեան իմոյ. զի զօրաւորքն բնակեցին 'ի մէջ եղբարցն։

ԱՍԱՑ հայրն Աղոս. երանի կրօնաւորի որ տանէ զինքըն կռիւան անձնայնի։

ԱՍԱՑ հայրն Պամանթիոս՝ եթէ լաւագոյն իցէ քան զիս շուն, նախ զի սիրաւէր է յոյժ, և երկրորդ զի 'ի դատաստան ոչ գայցէ։

ԱՍԱՑ հայրն Արսիսիոս. զոր օրինակ աղիւս որ ոչ ունիցի հիմն զպարուպքն և զհաստատութիւն յարկն զետոյն շինելոյ, և ոչ օր մի կացցէ, իսկ թրծեալն հաստատուն կացցէ և 'ի ջուր լաւ քան զքար և 'ի հուր ես, այսպէս և մարդ որ ունի կամք և ախտք մարմնոյ և ոչ կիզէ զնա և թրծէ, և ոչ ընդունանէ զնա երկիւղին աստուծոյ իբրև զՅովսէփ, նա փութապէս քակտի և կործանի. և թէ կացցէ իշխանն մարդկան, առաւել ես փորձի վասն յաւել ես ըննել փորձութեանցն։ Իսկ որք հաստատուն 'ի հաւատսն իցեն, անշարժելի մնան, որպէս ըստ զերանելւոյն Յովսէփ, զոր և թէ քննէ որ՝ ասասցէ թէ ոչ էր նա երկրաւոր մարդ. նոյնպէս և Յովսէփ եթէ քանի անգամ փորձեցաւ, և այս յայնմ երկրի որ և ոչ նշանակութիւն էր, այլ մեծ էր ընդ նմա և յամենայնէ փրկէր զնա, արդ է նա ընդ հարսն իւր յարքայութեան երկնից։ Այնպէս և մեք թէ զխոստացուք զչար մեր և ձգնեսցուք ըստ կարի մերում, այնպէս կարասցուք զերծանել 'ի դատաստանացն այ։

ԻՇԽԱՆ զաւառին այնորիկ կալեալ զայր անուն 'ի գեղջէ հօրն Պիմենի և եդ 'ի բանտի։ Եւ եկեալ արք տեղւոյն աղաչէին զհայրն Պիմեն և ասէին. եկ առ իշխանն և հանցես զնա։ Իսկ ծերն ասէ ցնոսա. թողէք ինձ զերիս աւուրս, զի եկից առ ձեզ։ Եւ եկաց յաղօթս Պիմէն և ասէ. տէր, մի ես շնորհեսցես ինձ զխնդիրն զայն,

Digitized by Google

ապա թէ ոչ՝ ոչ թողու տեսցեն զինձ մարդիկ նստեալ աստ ։ Եւ զկնի այսորիկ գնաց ծերն առ իշխանն և աղաչէր զնա վասն այնորիկ, զի թողցէ զայրն զայն ։ Ասէ ցնա իշխանն. վասն առաջակի մերոյ աղաչես զիս, հայր. վասն նորա ոչ լուայց քեզ ։ Իսկ ծերն տրտմեալ եղև, զի ոչ եհաս նա խնդրոյն իւրոյ ։

ԱՍԱՑ հայրն Պիմէն՝ եթէ եղբայր ոմն եհարց ցհայրն Ալոնի և ասէ. զի՞նչ է արհամարհել զանձն և ցո՞րչափ ։ Ասէ ծերն. այն է արհամարհել զինքն՝ որ ոք համարեսցի զինքն վատթար քան զանասունս, զի նա 'ի դատաստան ոչ մտանէ ։

ԱՍԱՑ հայրն Յովսէփ՝ եթէ նստէաք երբեմն առ հօրըն Պիմէնի, և Պիմէն ասէ. հայր Ագաթոն ։ Իսկ մեք ասեմք. մանուկ է դեռ ևս Ագաթոն, ընդէ՞ր հայր կոչես զնա ։ Իսկ հայրն Պիմէն ասաց. պատիւ երեսացն և լռութիւն լեզուին և հեզութիւն սրտի իւրոյ կոչեաց զնա հայր ։

ԱՍԱՑ հայրն Պիմէն. վասն այսորիկ անկանիմք մեք 'ի բազում փորձութիւնս, զի ոչ պահեմք զկարգ և զանուանս մեր, որպէս և գրեալ է վասն սոցա, և ոչ նախանձիմք կնոջն քանանացւոյ որ ընդունեցաւ զանունն շնի, եթէ որպէս ընկալաւ զնա փրկիչն և ետ զխնդրուածս և զհանգիստ նորա՝ Դարձեալ ասէ. մի՛ համարիր զանձնդ իմաստուն, այլ միաբանեաց ընդ ծերոց որ բարւոք քաղաքավարի ։

ՀԱՐՑ եղբայրն և ասէ. զի՞նչ իցէ բարձրութիւն ։ Ասէ ծերն. արդարացուցանել զանձն. քանզի և հայրն Պափնուտի մեծ էր, այլ գնայր առ թեթև գործս ։

ԱՍԱՑ հայրն Պիմէն՝ եթէ պատկառեսցէ մարդ զինքն և յամենայնի համբերեսցէ, և թէ խնայեսցի մարդ զբանս տառապեցելոյն որ ասէ՝ ամենայն ինչ սուրբ է սրբոյն, և նուաստ համարեսցի զանձն քան զամենայն արարածս ։ Ասէ եղբայրն. և զիա՞րդ համարեցայց զանձնս վատ քան զմարդասպանս ։ Ասէ ցնա ծերն. եթէ իմաստութեամբ քննեսցես, այսպէս դատեսցես և ասասցես. նա զմարդոյ մի անգամ սպան զմարմինն միայն, իսկ ես 'ի սուտ և 'ի գիշերի սպանանեմ զընկերս կամօք և զանձն իմ մեղօք ։ Եւ գնաց եղբայրն այն առ հայրն Անուբ և խոստովանեաց զբանս զայս ։ Ասէ ցնա հայրն Անուբ. եթէ քննեսցէ ոք զբանս զայդ և տեսցէ զպակասութի եղբօր իւրոյ, զարդարութի իւր կլանել տացէ մեղաց նորա ։ Ա-

սէ եղբարցն. և ո՞ր իցէ արգասաւորութիւն նորա: Ասէ ծերն. անանցելոցուցանել զանձն իւր:

ԵՂԲԱՅՐ մի եհարց զհայրն Պիմէն և ասէ. եթէ անկանիմ 'ի մեղս զազիրս, խեղդեն զիս նեղութեամբ խոր-հուրդք իմ և ասեն թէ ընդէ՞ր անկար: Ասէ ցնա ծերն. յորում ժամու անկանի մարդ 'ի մեղս և զղջասցի, 'ի նմին ժամու թողցի մեղքն նորա շնորհօքն այ:

ԵՂԲԱՅՐ մի նստէր 'ի խցի փոքր մի հեռի 'ի գեղջէ խուցն է և ասէր ցեղբարսն. այսքանի ամք են զի եմ աստ, և ընաւ ոչ ելի ես 'ի գիւղն, և դուք յամենայն աւուր ելանէք անդ: Իբրև պատմեցին զայս եղբարքն հօրն Պի-մէնի, և ծերն ասէ ցնոսա. բաւական էր գնալ 'ի գիւղն և ոչ պարծիլ 'ի խորհուրդս՝ զայս եթէ ես ոչ ելի անդ, և զատել զայլ ոք՝ թէ դուք ելէք 'ի գիւղն. զի ուր գու-ցէ խոնարհութիւն, ոչ կարէ պարծիլ. և զի ոչ կարէ ա-ռանց նորա կեալ ընաւ կենդանութիւն հոգւոյն:

ԵՂԲԱՅՐ մի եհարց զհայրն Պիմէն և ասէ. որպէս պարտ իցէ ինձ կեալ 'ի տեղւջ յոր բնակեցայց: Ասէ ցնա ծերն. կացցես զմիտս քո իբրև զօտարի համարել զքեզ ուր և կեցցես, և մի խնդրեսցես յառաջել զբանս քո քան զայլս, և հանգիցես. և զի գնել պարապ է զայս 'ի տեղ և ոչ ինչ համարել զանձն և թողուլ զկամս իւր. և թէ կամի ոք, ապա են մշակութիւնք հոգւոյ.

ԱՍԱՑ հայրն Պիմէն, եթէ հայրն Անտոնիոս ասէր՝ եթէ այս է մեծութիւն մարդոյ, զի դիցէ զյանցանս իւր առաջի այ միշտ, և զի ակն կալցի փորձութեանց մինչև 'ի վերջին շունչն. զի հաստատանօք մտանեն յաշխարհս ամե-նեքեան, և երկուք հաստատանօք ելանեն աստի: Իբր ա-սէր՝ թէ առանց միոյ առաքինութեան այլ ամենայն առա-քինութիւնք անօգուտ են, այսինքն է առանց մեղադրել անձին միշտ, յորմէ ծնանի կեցուցիչ խոնարհութիւն:

ԱՍԱՑ հայրն Պիմէն. եթէ եկեսցէ առ քեզ եղբայր մի և տեսանէ զքեզ ոչ շինեալ 'ի գալ նորա, խնդրեա դու 'ի քեզ թէ զինչ խորհէիր 'ի միտ նախ քան զգալ-ն նորա, և յայնժամ ծանիցես զպատճառս երկմտութեան նորա. և թէ արասցես զայս խոնարհութեամբ և արդար մտօք, եղիցիս դու անմեղ յընկերէն, և լիցին բաւական զիւրն պակասութիւն: Ոչ եթէ զգուշութեամբ արասցէ ծեր զնստել իւր 'ի սենեկի, ոչ ես մեղուցեալ, զի ամ ընդ

նմա իցէ, և յայսպիսի նստելոյն առանձին մարդ զեր-կիւղն աստուծոյ:

ԱՍԱՑ հայրն Պիմէն. վասն այսորիկ նեղեմք և աշխատիմք այսչափ՝ զի ոչ ընդունիմք զեղբայրն մեր որպէս գրեալ է և հրամայեալ մեզ յԱյ. կամ ո՞չ տեսանեմք զկինն քանանացւոյ՝ թէ որպէս հետևեալ աղաչէր զՏէր վասն դստերն իւրոյ:

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց զհայրն Մակարիոս և ասէ ցնա. հայր, զի՞նչ արարից: Ասէ ցնա ծերն. լուր, խոնարհեա և մի զանձն ինչ համարիր. և թէ լուիցես ինձ և նուաստացուսցես զքեզ, հանգիցես ուր և կեցցես:

ԱՍԱՑ հայրն Եւագրիոս. թէպէտ և ոք առանձին զառաքինութիւն ունիցի, ոչ տացէ նմա շնորհս Այ. այլ յորժամ գնասցէ առ ընկերն և պատմեսցէ զամենայն զիւր և զատի 'ի նմանէ, յայնժամ տայ նմա Այ զշնորհս իւր: Այս զի դարձեալ ասէ. մի կատարեր զկամս քո, զի պարտական ես դու խոնարհել եղբօր քո: Դարձեալ ասէ. զոր տեսեր մարդ և ոչ պահեաց, որպէս կարող իցէ ուսուցանել զայն ընկերի իւրոյ: Դարձեալ ես ասէ. որ կամիցի կեալ ընդ եղբարս, պարտ է նմա լինել իբրև զարձան քարեղէն, որ թէպէտ և փառաւորեսցի կամ թէ անարգեսցի՝ ոչ հպարտասցի և ոչ բարկասցի, այլ զամենայն կրեսցէ անշփոթաբար:

ԱՍԷՐ հայրն Պափնուտի՝ եթէ որչափ ժամանակս կենդանի էր ծերն, յամենայն երկուս ամսեան գնայի առ նա, և էր նա հեռագոյն յինէն մղոնս երկոտասան. և գնայի և պատմէի նմա զամենայն խորհուրդս իմ. և զայս միայն ասէր ինձ ծերն՝ թէ ուր գնասցես կեալ, մի ինչ համարիր զանձն քո և գտցես հանգիստ:

ԵՂԲԱՅՐ ոմն ասաց ցհայրն Սիսոյէ. տեսանեմ, հայր, զի յիշատակ աստուծոյ կայ միշտ 'ի մտի իմում: Ասէ ցնա ծերն. ոչ ինչ մեծ է այդ եթէ խորհուրդք քո առ աստուած են և յիշես զնա, այլ այս է մեծագոյն մեծ՝ եթէ համարիս դու զքեզ վատ քան զամենայն արարածս. զի այսպէս համարել զինքն և աշխատութիւն մարմնոյ՝ աքա առաջնորդեն առ խոնարհութիւն:

ԵՐԵՔ ծերք ոմանք գնացեալ առ հայրն Սիսոյէ, զի լուեալ զնմանէ, և առաջինն ասէ. հայր, որպէս կարիցեմ զերծանել ես 'ի գետոյն հրեղէնէ. Իսկ երկրորդն ա-

ոչ. և ես մինչև փոխեցայց ՚ի կրճմանելոյ ատամանցն և յանկըւելն աղաղանցն: Իսկ երրորդն ասէ. և զիս հալէ յիշատակ արտասուքն խաւարին: Պատասխանի ետ ծերն և ասէ. ես և ոչ զմի յիշեմ ՚ի դոցանէ, այլ աղօթեմ և բարեխօս է ած, և յուսամ զի առնիցէ ողորմութիւն ՚ի վերայ իմ: Եւ նորա իբրև լուան զբանն ծերոյն, գնացին տրտմեալք. այլ ծերն ոչ կամեցաւ տխուր գնալ նոցա, վասն այսորիկ յետոյ դարձոյց զնոսա և ասէ ցնոսա. երանի է ձեզ, եղբարք, զարմացայ ես ընդ բարձր առաքինութիւն ձեր, զի առաջինն ՚ի ձէնջ ասաց ինձ հոգալ զգեհեան հրեղէն, և երկրորդն վասն տարտարոսին, և երրորդն վասն արտասուքին խաւարին. զի եթէ յիշատակ ացին տիրեալ է մտաց ձերոց, և մերձ գործել ձեզ անհնար իցէ երբէք: Եւ զի՞նչ արարից զխստասրտութիւնս և զանհամբերողս ես, որ ոչ երբէք յիշեմ թէ ուրեմն տանջանք այսպիսիք վասն մարդկան է. և յայսմանէ մեղանչեմ յամենայն ժամ: Եւ նորա երկիր պագին նմա և ասեն. որպէս լուաք, նոյնպէս և տեսաք: Իսկ ՚ի խոնարհութենէ ծերոյն շինեցան եղբարքն և գնացին ուրախութ.:

ԵՂԲԱՅՐ ոմն ասէր ցհայրն Սիսոյէ. հայր, ասա ինձ բան: Ասէ ցնա ծերն. զի՞նչ ասացից քեզ, որդեակ, զի ես զնոր կտակարանս ընթեռնում, և ՚ի հինն անկանիմ միշտ:

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ցհայրն Սիսոյի և ասէ. հայր, զի՞նչ արարից: Ասէ ցնա ծերն. զործդ այդ զոր դու խնդրես, է այդ լռութիւն կատարեալ և խոնարհութիւն հաստատուն. զի գրեալ է՝ երանի որ քննեն զվկայութիւնս և ամենևին զնա. զայս արա և կեցցես:

ԱՍԱՑ հայրն Սիսոյի ցեղբայր ոմն. եղբայր, որպէս կեաս դու: Իսկ նա ասէ. զաւուրս իմ անցուցանեմ, հայր: Ասէ ցնա ծերն. հէ՛, թէ ես էի՝ անցուցանէի զաւուրս, և ոչ աւուրքն զիս անցուցանէին:

ԱՍԵՑԻՆ վասն հօրն Սիսոյի՝ եթէ նստէր երբեմն և զոչեաց մեծաձայն և ասէ. ով թշուառութեանս: Ասէ աշակերտ իւր. զի՞նչ վշտանաս, հայր: Ասէ ցնա ծերն. մի մարդ խնդրեմ խօսել ընդ նմա և ոչ գտանեմ:

ԱՍԵՑԻՆ վասն հօրն Սիսոյի՝ եթէ հիւանդացաւ երբեմն, և նստէին մերձ ՚ի նա ծերքն, և նա խօսէր յայլ ումեմն: Իսկ ասեն ցնա ծերքն. զի՞նչ տեսանես, հայր, և խօսիս ընդ նոսա: Իսկ նա ասէ. տեսանեմ զմանա

եկեալ առ իս առնուլ զիս, և աղաչեմ զքեզ զի թող-ցես զիս փոքր մի ապաշխարել։ Ասէ այն ցնա. եթէ թո-ղուն զքեզ, զինչ կարես ապաշխարել զի ծեր ես։ Ասէ ծերն. թէ և այլ ինչ ոչ կարեմ առնել, այլ հառաչե-ցից և ողբացից զանձն իմ, և այն բաւական է ինձ։

ԵՂԲԱՅՐ ումն եհարց ցհայրն Սիսոյի և ասէ. ո՞ր իցէ ճանապարհ, հայր, որ տանի 'ի խոնարհութիւն։ Ասէ ծերն. այս ինքն է ճգնութիւն և պահք խիստ և աղօթք անդադարկանելի, և վատթար քան զամենեսեան համա-րել զինքն և յետնեալ յամենայն բարեաց։

ԱՍԱՑ մայրն Սինկղիտիկէ. զոր օրինակ նաւ ոչ լինի առանց բևեռի, այսպէս ոչ կեցցէ անձն առանց խոնար-հութեան։

ԱՍԱՑ հայրն Արսենիոս. առաքի զօրութիւն յամե-նայն կեանս իմ, հունձս, հիւսել և կարել. և յայսմ ա-մենայնի եթէ ոչ էր կերակրեալ հզօր աջ բարձրելոյն այ, և ոչ կարէի յագենալ հացիւ։

ԵՂԲԱՅՐ ումն եհարց ցհայրն Տիթոյի և ասէ. զինչ արարից, հայր։ Ասէ ցնա ծերն. արա զոր ինչ տեսանես յիս։ Եղբայրն ասէ. և զինչ տեսի 'ի քեզ։ Ասէ ցնա ծերն. արա զայն զի խորհուրդ իմ խոնարհ է քան զա-մենայն մարդոյ, զի խոնարհութիւն բարձրացուցանէ. և զի որ ոք ունի խոնարհութիւն՝ հնազանդեցուցանէ ըզ-դևան, բայց որ ոչն ունիցի խոնարհութիւն՝ այպանի 'ի դի-ւաց. և մի լինիցիս բանիւ միայն խոնարհ, այլ և գոր-ծովք. զի անհնար է բարձրանալ 'ի գործս ճգնայինս ա-ռանց խոնարհութեան։

ԱՍԱՑ ծեր ումն մեծ միայնակեաց ցդևն. ընդէ՞ր այս-չափ պատերազմիս ընդ իս, դև դու։ Իսկ դևն ասէ. և ես առաւել դու հզօրապէս պատերազմիս ընդ իս, որ զիջեալ խոնարհիս յոյժ ամենայնի և նեղես զիս։

ԱՍԱՑ ծերն՝ եթէ պսակ իցէ կրօնաւորի խոնարհու-թիւն. զի որպէս լերինք ոչ անկանին երբեք, այնպէս և ոչ խոնարհն անկանի, զի ոչ երբէք բարկանայ խո-նարհն և ոչ բարկացուցանէ զոք։

ՕՐԻԱՑՆԱԿԵՑԻ ումեմն աստուածակեաց զերկեռ ղկա-հար ումն, և նա մատոյց նմա և զմիւսն. իսկ դևն երկեաւ 'ի խոնարհութենէ նորա և փախեաւ առժամայն և ել 'ի մարդոյն։

Digitized by Google

Ասաց ծերն. եթէ մտանէ քեզ խորհուրդ անձնահաւանութեան, քննեսցես զմիտս քո, և տես եթէ պահեա՞լ իցէ քո զամենայն պատուիրանս, և տես եթէ սիրեցե՞ր զթշնամիս քո, և տես եթէ համարիս դու զքեզ ծառայ անպիտան. և եթէ զայս ամենայն արարեալ իցես, մի և յայնժամ հպարտասցիս. ապա եթէ ոչ արարեալ իցես, ընդէ՞ր բարձրամտես ունայն. և զի ամբարտաւանութիւն ախտս դիւաց իցէ և չար քան զամենայն մեղս է։

Ասաց ծերն. որ աւելի քան զարժանն իւր պատիւ կամ պատուեսցի, նա մեծապէս տուժեսցի. իսկ որ 'ի մարդկանէ ոչ պատիւ և պատուի, նա յետոյ փառաւորի։

Եղբայր ոմն եհարց ցծերն և ասէ. ընդէ՞ր այսպէս պատերազմիմք 'ի դիւաց, հայր։ Ասէ ցնա ծերն. վասն զի զզէն մեր 'ի բաց ձգեցաք 'ի մէնջ, որ է արհամարհութիւն և խոնարհութիւն և անընչութիւն և համբերութիւն։ Ասէ եղբայրն. և ո՞ր է խոնարհութիւնն։ Ծերն ասէ. այն իսկ է եթէ մեղիցէ քեզ եղբայր քո, և թողցես դու նմա նախ քան զզղջանալն 'ի քէն։ Ասէ եղբայրն. և այլ զի՞նչ է խոնարհութիւն։ Ասէ ծերն. բարի առնելն ընկերին և չար տարաբերելն։ Ասէ եղբայրն. և եթէ ոչ հասցէ մարդ 'ի չափս յայս, զի՞նչ արասցէ։ Ասէ ծերն. փախիցէ 'ի չարէ և լռեսցէ։

Ծեր ոմն միայնակեաց շրջէր մերձաւորակաւ յանապատի և կարծէր 'ի միտս թէ կատարեալ իցէ զամենայն առաքինութիւնս, և խնդրէր յայ աղօթիւք և ասէ. ցոյց ինձ, տէր, թէ զի՞նչ պակաս իցէ զի արարից։ Իսկ ած կամեցաւ խոնարհել զմիտս նորա, ասէ ցնա. գնա առ արքիմանդրիտն այն, և զոր ինչ ասիցէ քեզ՝ զայն արասցես։ Իսկ ասէ տէր ցարքիմանդրիտն. միայնակեաց ոմն որ գայ առ քեզ, տացես նմա արածել զխոզս։ Եւ իբրև եկն ծերն, մտեալ առ արքիմանդրիտն և ողջունեալ զմիմեանս նստան։ Ասէ ծերն ցարքիմանդրիտն. տուր ինձ բան, հայր, զի արարից և կեցից։ Ասէ ցնա ծերն. և զոր ինչ ասացից քեզ, առնե՞ս զայն։ Եւ նա խոստացաւ առնել։ Ասէ ցնա. առ զխարազանդ զայդ և [illegible], և գնացեալ արածեա զխոզս։ Իսկ ծերն հնազանդեալ հրամանաց նորա գնացեալ արածէր զխոզսն։ Իսկ որք ճանաչէին զնա՝ եկին տեսանել զնա, և իբրև տեսին՝ ասեն ցմիմեանս. ո՜, միայնակեացն այն մեծ յի-

մերժեալ է և արտաքսէ զնոսա, զի դև եմուտ 'ի նոսա։ Այս երբև եսես ետես սէր զխոնարհութիւն նոցա, զի խոնարհութեամբ համբերէին նախատանաց մարդկան, եւ նոքա զչարչարանս սատանայի և անարգ և անպիտան համարել զինքեանս և խոնարհ քան զամենայն մարդիկ, և աղաչեալ յանապատ դարձեալ։

Ասաց ծերն. եթէ ասասցես վասն ընկերին 'ի միտս քո՝ թէ ես արթուն և հսկող և ճգնող քան զնա իցեմ, այլ խոնարհեաց զու ճշմարտապէս Քրիստոսի հոգւով աղքատութեան և սիրով և հեզութեամբ, զի մի անկցիս յախտ պարծանութեան և կորուսանես զվաստակս քո. զի գրեալ է՝ թէ որ պարծիցի կայ, զգոյշ լիցի զի մի անկանիցի, այլ ազիւ անարժան յանձնեսցէ զինքն։

Եղբայր ոմն ասէ ցծերն. Հայր, ասասցես ինձ բանս կենաց։ Ասէ ծերն. Թէպէտ և ասացից, ոչ որ լուիցէ, զի աղաղակ լինի երկիր մեր։

Ասաց ծերն. յորժամ ոչ ունիցիմք պատերազմ, յայնժամ առաւել պարտ է մեզ խոնարհել. զի ետես նա զտկարութիւն մեր և եթող զմեզ առանց պատերազմի. Իսկ եթէ պարծիցիմք, առնէ 'ի մէնջ զօգնութիւն իւր և կործանիմք։

Ասէր ոմն ծեր առաջին զեզ. ընծայեա զու աւետիս Պետրոսի, ծեր։ Ասէ ծերն. ամբարձեալ զու և Պետրոս ծեր. զի ես հաւատամ Աստուծոյ բանին որ ասէ, եթէ առաջինք ձեռն ահա- ւասիկ է Պետրոս առաջ կամ ամոզ մի հաւատայցէք։ Այս յայտնապէս համարձեալ զնա անգէշ եղև։

Ասաց ծերն. եթէ խոնարհութիւն և երկիւղն Աստուծոյ ասես զու բանս խուզ երթայ և զարդ գնես, քանզի քո և ճշմարտիք ոչ հաստատէ զեղ զեղգայրն և առնէ զասա- ցեալն զարդ։ Իսկ որ պատառականութիւն և գուգունութիւն խոնարհել ճանաչ և այնպէս առնէ եղբօրն զզարդ, նոյն որ ամենայն զծածկեալս պատճառ ոչ ասաց թէ այլ եղբօրն հնա- զանդել նոսա և առնել զզարդն. քանզի յայտնի են զարդք որ բազում են եղեալ. և պարծեալ և այն յայտնի են որ պար- տաւորականութիւն են. քանզի որ լուաւ նոյն իցէ՝ խոնարհու- թեանն և աղաչանաց լինի, իսկ որ պատառականութեան է՝ բարկութիւն և չփոթիւ լինի, զի 'ի չարէն է։

Ասաց ծերն. կամիմ զի յաղթեսցեմ խոնարհութիւն, և ոչ յաղթել այլոց ամբարտաւանութեանն։

Ասաց ծերն. մի արհամարհեր զայլատեսոր քո որ կայ

ցէ առաջի քո, զի ոչ գիտես եթէ հոգի իմ 'ի վերայ քո հանգուցեալ է, թէ 'ի վերայ նորա ։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ցծերն և ասէ. եթէ բնակիմ ընդ եղբօր և տեսանեմ զնա յանցեալ իմիք 'ի գործս ինչ անպատշաճս, պարտ է թէ յանդիմանեսցից զնա ։ Ասէ ցնա ծերն. եթէ իցէ առաջ քան զքեզ և կամ հաւասարակից քո, լռեա զի ունիցիս հանգիստ, և այսու առաւելցես զքեզ վաստակաւ և լիցիս անհոգ ։ Ասէ եղբայրն. և զինչ առնել, հայր, զի շփոթեն զիս եղբարքն ։ Ասէ ծերն. եթէ ոչ համբերեսցես, ասա մի անգամ խոնարհութեամբ. և եթէ ոչ լուիցեն, լքեա և թողցես զաշխատութիւն քո 'ի ձեռս այ. այլ զգոյշ լեր զի մի զիտասցես թէ վասն այ լռեցեր. և զի բարուք է լռելն, քանզի խոնարհութիւն է այն ։

Ասաց ծերն. եթէ ստասցիս լռութիւն, մի համարիր զքեզ գործող առաքինութեան, այլ ասասցես՝ անարժան եմ և անպատշաճախօս, վասն այսր լռեմ ։

Ասաց ծերն. եթէ ոչ ծածկեն զաչս եզին որ աղացէ երկանս զի մի կերիցէ զալեւր իւր, այսպէս և մեծ խորհրդով առնումք զծածկոյթ 'ի վերայ աչաց մերոց, զի մի տեսցուք զոր արասցուք բարիս, և կորուսանիցեմք զվարձս մեր. և վասն այնորիկ թոյլ տալովն այ անկանիմք 'ի զազիր խորհուրդս, զի զնոսա միայն տեսանելով զատեսցուք զանձինս մեր ոչ ունել բարիս. և այնորիկ զազիր խորհուրդքն եղիցին ծածկոյթ մեր փոքու բարեգործութեանցն, զի մի տեսցուք զգործս բարիս, այլ տեսանելով զզազիրն զայն խորհուրդ՝ արհամարհեսցուք զանձինս. զի յորժամ մարդ նախատէ զանձն, ոչ կորուսցէ զվարձս իւր ։

ՀԱՐՑԻՆ ցծերն և ասեն. զինչ է խոնարհութիւն ։ Եւ նա ասէ. խոնարհութիւն մեծ գործ ածային իցէ, և ճանապարհ խոնարհութեան է աշխատութիւն մարմնոյ և ունել զանձն անարգ և յանցաւոր քան զամենեսեան ։ Եղբայրն ասէ. և որ է անարգ ունել զանձն ։ Ասէ ծերն. այն է որ ոչ նայեսցի յայլոց մեղս, այլ յանձին, և միշտ աղաչեսցէ զտէր ած ։

ԵՂԲԱՅՐ ոմն ասէ ցծերն. ասա ինձ բան, հայր, որով կեցից ։ Եւ ծերն ասէ. եթէ անարգեսցիս և համբերեսցես, այս մեծ իցէ քան զամենայն առաքինութիւն.

քմնեղի որ զարհամարհանս և զանարգանս և զտուժմունս կրօտի և սիրով յանձն առցէ, նա կարող իցէ կեալ։

ԱՍԱՑ ծերն. մի ունիցիս ծանօթութիւն առ իշխանս, և մի յաճախեր երթալ առ նա, զի մի անկեսցի 'ի քեզ համարձակութիւն և ըղձանս առաջնորդութեան։

ԵՂԲԱՅՐ ոմն հարեալ խոցեցաւ յեղբօրէն, և կալեալ ձեռօքն զխոցն իւր զի մի հոսեսցի արիւնն, և գնաց խնդրել թողութիւն 'ի խոցողէն իւրմէ։

ԱՍԱՑ ծերն. մի դիցես 'ի մտի երբէք դատել զեղբայրն և մի քննար վասն և ոչ մի ինչ գործոյ։

ԱՍԱՑ ծերն. եթէ ճգնէաք 'ի խոնարհութիւն, ոչ պիտոյանայր մեզ այլ ճգնութիւն, զի ամենայն չարիք յամբարհաւանութենէ գան 'ի վերայ մեր. զի եթէ մեծին Պաւղոսի տուաւ 'ի խայթել զնա հրեշտակ սատանի զի մի բարձրասցի, որչափ ևս առաւել փքացելոցս մեզ տացի սատան կոփել զմեզ մինչև խոնարհեսցուք։

ԾԵՐՈՅ ումեմն վասն մեծի խոնարհութեանն զոր ունէր՝ ետ ած շնորհս հոգեկան տեսութեան. և որ ոք գնայր առ նա, տեսանէր զմիտս նորա ծերն. իսկ նա դժուարեալ ընդ այն՝ աղաչեաց զած բառնալ 'ի նմանէ զայն, և իբրև ոչ եհաս խնդրոյն՝ գնաց առ ծեր ոմն մեծ և աղաչէր զնա և ասէր. վաստակեա ընդ իս աղօթս, զի առցէ յինէն տեսութիւն այս։ Եւ նոքա իւրաքանչիւրքն առանձին 'ի սենեկի իւր և աղաչէին զած վասն այնորիկ։ Եւ եկն յերկնից ձայն առ ծերն որ ասէր. ահա բարձի 'ի քէն զայն, այլ ունիցիս զնա յորժամ և կամեսցիս և պիտոյ լինիցի։

ԾԵՐ ոմն էր անմեղ, քաղցր և բարեբար, որ ոչ էր երբէք խորհեալ չար զումեքէ, որոյ դիպաւ այսպիսի ինչ։ Եղբայր ոմն գողացաւ զանօթս պղնձի, և տարեալ առ ծերն այն եդ 'ի պահեստի. և ծերն ոչ գիտէր թէ ուստի և կամ ում իցէ։ Իսկ զկնի աւուրց ինչ ծանեան զանօթսն, և կալեալ զծերն խնդրէին 'ի նմանէ զինչ և գողացեալն էր։ Իսկ նա ասէր. թողութիւն արարէք ինձ զի գթեցայ։ Եւ զկնի աւուրց ինչ եկն եղբայրն որ գողացեալն էր, և նա ևս մեղադրէր ծերոյն և ասէր. դու գողացեալ ես զանօթս զայսոսիկ։ Իսկ ծերն անկաւ առ ոտս նորա և ասէ. թողցես ինձ զի յանցեայ։ Եւ այսպէս զոր ինչ և գթէին եղբարքն և ուրանային, նա յանձն



Digitized by Google

տանայր զյանցանս և ասէր՝ Թող ինձ զի յանցեայ ։ Իսկ այսպիսի խոնարհէր երանելին այն, մինչ զի ոչ զայթակղեցաւ նա ընդ զեղխայր որք եղբարք ։

ՄԻԱՅՆԱԿԵԱՑ ոմն եղև եպիսկոպոս, և 'ի բազում հրահանգ և դժնդակ լինելոյ ոչ ունէր բարեկամայր, այլ եւ կայսրանութեան կրէր զանձնեցուն յանցանս. այլ և կանանսն նորա ոչ բարուք յարգէր զգործս եկեղեցւոյն ։ Իսկ եկեալ ոմանք անկանն առաջի նորա և ասեն ցնա. ընդէ՞ր ոչ տաստես իշխանութեամբ՝ որ խանգարեաց զանձնայն գործս եկեղեցւոյն ։ Իսկ եպիսկոպոսն յապաղէր տառել. և նոքա ժողովեալ զարմնեալ եւս բարկացուցանէին զնա 'ի վերայ կանանցն ։ Իսկ ծանեաւ եպիսկոպոսն զի կամէին հարկեցուցանել զնա ստիպով, գնաց թաքեաւ 'ի նոցանէ. իսկ նոքա խնդրեալ հազիւ կարացին գտանել զնա, և ասեն ցնա. ընդէ՞ր թաքեար 'ի մէնջ ։ Իսկ նա ասէ ցնոսա. զի զոր ունէիցի՝ զխափանումն ամ աղօթից խնդրեալ յոյժ բազում աշխատութեամբ, զայս կամիք հանել յինէն յերկուս աւուրս ։

ԱՍԱՑ ծերն. ոչ որ փորձառացուցանէ ինքն զանձն իւր՝ այն խոնարհութիւն իցէ, այլ որ ապաշխարութեամբ կրեսցէ զնախատինս և զանարգանս և զվիշտս որ գայցեն 'ի վերայ նորա ։

ԵՂԲԱՅՐ ոմն բնակէր 'ի սկետեսկս և 'ի բազում խոնարհութեան զայս աղօթս միշտ մատուցանէր առ ած. ասէր, առաքեա զփորձակն 'ի վերայ իմ, զի թէ ողջ իցեմ, ոչ հնազանդիմ քեզ ։

ԳՆԱՑ ոմն օտար մեծատուն յԱսորւոց և բաժանեաց եղբարցն ոսկի մէն մի դահեկան. իսկ էր ոմն մերձ 'ի սկետեսկս արդեւրական ծեր, և ետ նմա դահեկան մի ։ Իսկ յայնժամ զիշերի եկեալ ծերն առ ինչ ընկեալ փշալի, և ետ ոմն 'ի վերայ նորա և ասէր. արի, ծեր, արի և առ զդահեկանս զայս 'ի փշոց, որոյ առեր զանէրն ։ Իսկ ինքն ընդունեաց զդահեկանն 'ի ստացոյն իւր և ասէ. աղօթեա 'ի քեզ, եղբայր, զամենայն քո, զի ոչ կարացեալ եմ խոսել զխրատ ապրեցի ծերոց խրատք, այլ թէ կարող եմ խօսել զխրատ իմ ։

ԱՍԱՑ ծերն. եթէ նստցիս յանապատի հանգչելով, մի համարեսցես զքեզ սուրբ և ճգնող, այլ եւ առաւել համարեա զքեզ իբրև զխոզեալ որ աղաղակէ 'ի շանց՝ որք ունեն և խածանեն զժողովուրդ ծով ։

ԱՍԱՑ ծերն. եթէ փառաւորեսցի մարդ և անարգեսց-

ցի և անզգամանեացն ևս, որպէս է այսպիսի Հաւատականն յոժարութիւն յանձն առնուլ, և կարծել զինքն անարգ քան զամենայն զոր բարի է ։ Վասնզի շատ ոչ գիտէ զարդարիչ իւր, և ոչ 'ի դատաստան ևս յանձնելոյ իցէ . զի լաւագոյն է ինաւ ոչ յանձնել, քան 'ի դատաստան յանձնել և տանջել յաւիտեան ։

ՍՈՂԲԱՅՑ ասէ հեզձկը 'ի չար և 'ի զազիր խորհրդոց և գժտութեր 'ի բազում խոնարհութենէն և ասէր 'ի միտս եղեւ ևս յայտայիսի մասնաւորութիւն կարող ոչ ունիմ յայս փրկութիւն ։ Եւ զնոյնէ եղեալ առ ծեր ումն աղաչէր զնա, զի աղօթեսցէ վասն նորա, որպէս զի թեթեւասցին չար խորհուրդք 'ի միտաց նորա ։ Ասէ ցնա ծերն . ոչ է բարի այդ քեզ, որդեակ ։ Եւ նա ներեաց զծերն առնել զայն ։ Եւ ներեալ յաղաչանաց նորա ծերն աղօթեաց առ Աստուած, և եբարձ ամ զպատերազմն զայն յեղբօրէն ։ Եւ յանկարծակի անկաւ եղբայրն 'ի խորհուրդ հպարտութեան և ամբարտաւանութեան, և գնաց զայրացեալ առ ծերն և ասէ ցնա . խնդրեսցես դու յինէ, զի եկեսցեն յիս պատերազմունքն առաջին խորհուրդք որով ունէի զխոնարհութիւն ։

ՍՈՂԲԱՅՑ ասէ զնոյն առ Հայր ասէ 'ի վանսն Պաղակեաց մերձ Աղեքսանդրու և ասէ ցնա . Հայր, որպէս կենամ ։ Ասէ ցնա ծերն . չարեօք, որդեակ ։ Ասէ ցնա եղբայրն . ընդէ՞ր, Հայր ։ Ասէ ցնա ծերն . ունիմ արդ երեսուն ամ զի կամ առաջի Աստուծոյ և յաղօթս անփոփանելեալ զանձն իմ, և ասեմ երբեմն ցանէր՝ մի աղաղակեր ամենեցուն որ գործեն զանօրէնութիւն, և ես անօրէնեցի . և ասեմ, անիծեալ այք խոտորեցան 'ի պատուիրանաց քոց, և ես խոտորիմ . և ամենայն բնաւ ես ասեմ այդ և ասեմ, կորուսանես զամենեսեան որք խօսին սուտ . և մերժ զերս յաչս և ունիմ 'ի միտ զվրէպոցս, և ասեմ զնոյն, թող մեզ զմեղս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց . և զամենայն խորհուրդս իմ ունիմ յարկուրանօթութիւն, և ասեմ, թէ մոռացայ ուտել զհաց իմ . և ննջեմ մինչև ցառաւօտն, և ասեմ, 'ի մէջ գիշերի յառնեի խոստովանել ընդ առ աստ . և զլկութիւն ինաւ ոչ ունիմ, և ասեմ, մեղարակեցայ ես 'ի հեծութեան իմում, և եղեւ ինձ արտասուք իմ կերակուր 'ի տուէ և 'ի գիշերի . և 'ի միտ ունիմ խորհել զայդ, և ասեմ զնոյն, խորհուրդ սրտի իմոյ առաջի քո է յամենայն ժամ . և զի սրսն ա-

Digitized by Google

մեռանելոյն ոչ ունիմ, և ասեմ, ծունկք իմ տկարացան 'ի պահոց. և անձնեանն լի եմ անհաւատարմութեամբ, և երկեալ յանօթ ինձ՝ եթէ տես զխոնարհութիւն իմ և զվաստակ իմ և թող ինձ զամենայն զմեղս իմ. անպատրաստ եմ յոյժ, և ասեմ, պատրաստ է սիրտ իմ ած։ Այլ զի համառօտիւ ասացից, ամենայն աղօթք իմ և պաղատանք իմ յանօթ և 'ի պատուհասէս ինձ են։ Ասէ ցնա եղբայրն. կարծեմ, հայր, թէ զայս ամենայն վասն իւր ասէ Դաւիթ մարգարէն։ Յայնժամ հառաչեաց ծերն և ասէ ցնա. զինչ ասես, եղբայր, լուեա. եթէ ոչ պահիցեմք զոր ինչ ասեմք առաջի այ, յանօթ և 'ի կորուստ մատնելոց եմք։ Այլ այսպէս շահեալ և օգտեալ 'ի նմանէ զնոյն գոհանալով զտեառնէ։

ԱՍԷՐ ոմն 'ի ծերոցն՝ եթէ ժողովեցան երբեմն 'ի Սկիւտէ հարքն 'ի միասին վասն շահու անձին. և յարեաւ ոմն 'ի ծերոցն՝ և էր 'ի վերայ թիկանց իւրոց մաղեղենոյ մասն ինչ որ կայր 'ի վերայ աթոռոյ իւրոյ. և կալեալ զայն երկոքումբք ձեռօքն եկաց 'ի մէջ ամենեցունց յարեւելից կողմանէ, և նայէին 'ի նա ամենեքեան, և սկսաւ աղօթել և ասէ. ած, ողորմեա ինձ։ Այլ եւս պատասխանի ինքն անձինն և ասէ. եթէ կամիս զի ողորմեցայց քեզ, թող զայդ զոր ունիս 'ի թիկունս քո, և ողորմեցայց քեզ։ Այլ դարձեալ ասաց զայսպիսի եօթն անգամ, և ապա եդ 'ի ներքոյ զձուձն և նստաւ 'ի վերայ նորա։ Ասեն ցնա հարքն. պատմեա մեզ զինչ էր զոր արարեր։ Այլ նա ասէ ցնոսա. ձուձն զոր ունէի 'ի թիկունս իմ, այն են կամք իմ. և աղաչէի զտէր, զի ողորմեսցի ինձ տէր նովաւ, և ասաց ցիս՝ թողցես զոր կալեալդ ես զկամս քո, և ողորմեցայց քեզ։ Այլ արդ մեք, եղբարք, եթէ կամիմք զի ած ողորմեսցի մեզ, թողցուք 'ի բաց զկամս մեր և գտցուք ողորմութիւն։ Ասեն ցնա. և որ իցէ թողուլ զկամս։ Այլ նա ասէ. ստանալ զխոնարհութիւն, քան զոր ոչ իցէ այլ առաքինութիւն մեծ. քանզի որչափ իջանէ ոք 'ի խոնարհութիւն, առաւել ելանէ 'ի բարձրութիւն։ Զայս լուեալ ամենեքեան ուրախացան յոյժ և հաստատեցան 'ի վերայ խոնարհութեան, օրհնելով զնա առաւել քան 'ի վերայ այլ առաքինութեան, Ք. գնացին յիւրաքանչիւր տեղիս։

ԱՍԱՑ ոմն 'ի հարանցն վասն խոնարհութեան զառակս

զայս՝ եթէ առաջին մայրք եղեգանց, եթէ զխորդ դուք տկարք և վտիտք եղեալ ոչ փշրիք և խլիք 'ի շարժել հողմոց 'ի ձմերայնի. իսկ մեք այսչափ զօրաւորք և մեծամեծք եմք և խորտակեալ խլեմք արմատով 'ի բախմանէ հողմոց: Պատասխանի ետուն եղեգունք և ասեն. մեք 'ի բախել հողմոյ ձմերայնոյ խոնարհիմք և ծռիմք աստի և անտի ընդ նոսա դողալով և շրջելով, և այսպէս ոչ խորտակիմք. իսկ դուք զի ընդդէմ կայք 'ի բախել հողմոց, վասն այնորիկ գան ամենայն չարիք 'ի վերայ ձեր: Այս առակ ծերոց. պարտ է թոյլ տալ յորժամ առաջի բան ինչ արհամարհանաց, և ոչ տալ տեղի բարկութէ և ոչ կալ ընդդէմ և ոչ անկանել 'ի տգեղ խորհուրդս և 'ի գործս չարս, այլ 'ի բարին հաստատուն կալ շնորհօքն Քնի:

ԾԶ

# ՎԱՍՆ ԱՆՑԻՇԱՉԱՐՈՒԹԵԱՆ

Պատմեաց՝ ոմն թէ երբեմն փիլիսոփայք ոմանք կամէին փորձել զմիայնակեացն։ Եւ մինչդեռ անցանէր ոմն միայնակեաց՝ զգեցեալ ձև աղխիւ, ասեն ցնա. այսր եկ, միայնակեաց։ Եւ նորա բարկացեալ և թշնամանեալ զնոսա անց։ Անց դարձեալ այլ ոմն ծեր մեծ լիբէացի և զգեցեալ էր հանդերձս հինս, և ասեն ցնա. դու միայնակեաց չարածեր, եկ այսր։ Եւ նորա փութապէս երթեալ, ածեն նմա ապտակ մի. և նորա դարձուցեալ զմիւս ևս ծնօտն, և վաղվաղակի յարուցեալ երկրպագին նմա ասելով. ահա ճշմարիտ միայնակեաց սա է։ Նստուցին զնա 'ի մէջ իւրեանց և ասեն ցնա. զինչ աւելի քան զմեզ առնէք դուք. եթէ պահէք դուք, և մեք պահեմք. եթէ հսկէք, և մեք հսկեմք. և այլ զինչ և առնէք դուք, առնեմք և մեք. արդ զինչ աւելի ունիք քան զմեզ։ Ասէ ծերն. մեք զմիտս պահեմք։ Ասեն ցնա փիլիսոփայքն. մեք զայդ ոչ կարեմք առնել։

Պատմեաց՝ ոմն 'ի հարանցն եգիպտացւոց՝ եթէ երբեմն խորհեցայ յաստուածութիւն երթալ, և ելեալ 'ի նաւ՝ դէպ եղև զի եկաք յԱթէնս. և կամեցեալ մտանել 'ի քաղաքն՝ տեսանեմ զոմն ծեր մենակեաց զի ունէր ա-

[1] ՓԻԼԻՍՈՓՈՍՔ ոմանք ձեռնարկեցին փորձել զկրօնաւորսն. և ահա գայր ոմն ծեր զգեցեալ հանդերձս լաւս, և ասեն ցնա. ծեր, եկ այսր։ Իսկ նա անարգեաց զնոսա և գնաց։ Եւ դարձեալ այլ ոմն անցանէր լիբիկեցի և ասեն ցնա. կրօնաւոր դու, եկ այսր։ Եւ նա ընթացաւ առ նոսա։ Իսկ նոքա ապտակեցին զերեսս նորա, և նա մատոյց նոցա և զմիւսն։ Յայնժամ նոքա երկրպագին նմա և ասեն. սա է ճշմարիտ կրօնաւոր։ Եւ հարցին ցնա և ասեն. զինչ աւելի առնէք դուք կրօնաւորքդ քան զմեզ. զի թէ դուք պահէք, և մեք պահեմք. դուք հսկէք, և մեք հսկեմք. և զոր առնէք դուք, առնեմք և մեք. և արդ զինչ աւելի է ձեր որ կայք յանապատի։ Ասէ ցնոսա ծերն. մեք յուսամք 'ի շնորհսն այ և պահեմք զմիտս մեր։ Եւ նոքա ասեն. մեք զմիտս պահել ոչ կարեմք։ Եւ շահեցան 'ի նմանէ յոյժ։

[2] Ասէր ոմն ոմն 'ի հարանցն եգիպտացւոց՝ եթէ 'ի մտի եդի երբեմն գնալ յաստուածութիւն, և մտեալ 'ի նաւ հասի յԱթէնս. և իբրև մտի 'ի քաղաքն, տեսի զոմն ծեր կրօնաւոր բարւոք զգեստիւք՝ որ ունէր 'ի

Digitized by Google

զարդարուն և փոքր մանկանց բազմութեանցն փակեալք, և ըն-
թանային այլք զհետ նորա։ Այլ իբրև եմուտ 'ի քա-
ղաքն, զինեցան նմա բազմութիւն մարդկանն և ձգեցին
զնա 'ի թեատրոնն, և ես հարցանէի զանն թէ ով է սա։
Այլ նա ասէ. սա 'ի հեթանոսաց էր մեծարոյն քան զա-
մենայն փիլիսոփայս, և եղև քրիստոնեայ և առաւել իւր
զանձն և եղև մենակեաց, և զկնի հնգետասանն ամի եկն
'ի քաղաքս, և յաղագս այնորիկ ընթանամք զի լուիցուք
եթէ զինչ խօսի։ Այլ չոգայ և ես ընդ նոսա, զի լուայց
եթէ զինչ խօսի։ Այլ իբրև եկին իշխանքն, ասացեալքն
զնա՝ ասա մեզ զինչ ուսանիս ասել։ Այլ բերէ առաջակի ա-
ռաջի նոցա և բանայ, և գտանէր 'ի տեղւոյ, և ամենեքեան
ասացին ասել՝ ասա մեզ զինչ է այդ։ Այլ ասաց այսպէս.
ոչ զոյ ազգ 'ի նոցունց եկինաց իբրև քրիստոնէից և ոչ
իբրև զնոցա մենակեցաց, այլ յայս միայն ասէին նոցա
միայն՝ զի ածէ զնոսա բանաւորական յոխութիւն իրերաց,
և զասէին՝ թէ ասաց զնա և ես ասացի զնա, և զանարդ-
թութիւն իւրեանց առաջի ածեալ իւրեանց բերեն և ոչ
տեսանեն։ Օ այս լուեալ քաղաքացիքն, գովեցին զնա և այս-
պէս զնոցայն։

ԱՅՍՈՒԱՑ՝ զի պատմէիր ամն վասն հօրն Յովսեփու, ասա-
կերտ նորա էր Իսահակ, երկոքեան սոքա վայելուչք
էին։ Այլ տեսաւ զառաջինն չքնաղ իւր վասն ծերն 'ի
Հերակլի, և տապնապեալ անդ՝ չոգաւ յայլ տեղի և չի-

ձեռքն փոքրիկ յուսայ բարեկենդանի, և ընթանային նա և այլք ընդ նմա քա-
ղաքն։ Եւ իբրև եմուտ 'ի քաղաքն, ընդ առաջ եղև նմա բազմութիւն
մեծ, և տարան զնա 'ի թեատրոնն. և ես հարցի ումանց՝ թէ ով է սա։
Եւ նոքա ասեն. հեթանոսացն է զգեստաւոր փիլիսոփայից, և եղև քրիս-
տոնեայ և չքնաղ իւր վասն և եղև կրօնաւոր անդ, և է այսօր ամի
հնգետասանն որ ոչ եկեալ է 'ի քաղաքս յայս, և վասն այսորիկ ըն-
թանան առ նա ամենայն ժողովն։ Եւ գնացի ես ընդ նոսա։ Իբրև նս-
տին զնա իշխանքն քաղաքին, ասացին զնա և ասեն. ասա մեզ զոր ինչ
խօսիս ասել։ Եւ նա ասէ. ոչ իք ազգ մեծ 'ի նոցունց եկինաց իբրև զազգ
քրիստոնէից, և ոչ կրօնք մեծ իբրև զնոցա կրօնաւորաց. և մի է որ
ածեալ զնոսա, այս քարոզեալն զփրկութեան և նմանեալն, և զայն ճշմարիտ
'ի նոցունց ամենին և ոչ զփոխեն։ Իբրև լուան զայս ամենայն ժողովուրդն,
գովեցին զնա մեծաւ ձայնիւ, և գնացին։ Եւ զարմանալի ազատ բանս և
անդ լուայ ես յհիւանդանոցէ կրօնաւորին այն՝ թէ նմանութիւն զնոսա
է և ամենայն կարգաց կրօնաւորաց։

։ Եղբայր վասն հօրն Սլուորի փառաւորեալ հօրն Իսահակայ, որ և
երկոքեան եղեն եպիսկոպոսք, եթէ նախ չքնաղ վասն ծերոյն յՀերակլեա-
ւոյն, և մեկնեցաւ անտի գնաց յայլ տեղի և չքնաղ և անդ վասն, և էր

նեաց դարձեալ։ Եւ ըստ աղքատութեան բանաւորութեան զատաւ անդ ոմն թշնամի նորա և նեղէր զնա. և յարուցեալ ծերն գնաց յինքեան գեօղն, և շինեաց ինքեան վանս և արգել զինքն։ Եւ յետ բազում ժամանակաց ժողովեցան ծերք տեղւոյն ուստի փոխեցեալն էր, առեալ և զեղբայրն որ ունէր ընդ նմա ատելութիւն, չոգան առ նա զի աղաչեսցեն զնա և ածցեն 'ի վանս իւր։ Նոքա յորժամ մերձեցան ուր էր հայրն, թողին առ նմա զմախաղսն իւրեանց, և զեղբայրն որ եթէ ահա ունէր ընդ նմա ատելութիւն՝ թողին առանձինն։ Եւ իբրև բախեցին, արկանէ ծերն զասնդուղսն, և հայեցեալ ետես և ծանեաւ զնոսա և ասէ ցնոսա. ո՞ւր են մախաղքն ձեր։ Եւ ասեն. առ այս անուն եղբօր են։ Եւ իբրև լուաւ ծերն զանուն եղբօրն, 'ի խնդութենէն առեալ փայտատ՝ աւերեաց զդուրսն և ել առ եղբայրն յընթացս, և անկեալ առաջի նորա յառաջագոյն ողջունեաց զնա, և ածեալ զնոսա 'ի խուցն՝ զերիս աւուրս արար նոցա ուրախութիւն, և ինքն ընդ նոսա ուրախացեալ, որ չէր երբէք իւր սովորութիւն առնել, և յարուցեալ գնաց ընդ նոսա։ Յետ այսորիկ եպիսկոպոս եղև. և էր ինքն նշանագործ։ Եւ զաշակերտն նորա երանելին Կիւրղոս արար եպիսկոպոս զհայրն Իսահակ։

ՆՈՅՆ՝ վասն որումն իշխանի յԵգիպտոս՝ եթէ ա-

անդ եղբայր մի և նախանձով չարին եդ ընդ նմա թշնամութիւն և տրտմեցուցանէր զնա։ Իսկ յարեաւ ծերն մեկնեցաւ անտի և գնաց 'ի գեղ իւր, և շինեաց անդ վանս և արգել անդ զինքն. Իսկ զկնի ժամուց ինչ եկին առ նա ծերք վանիցն այն յորմէ ելեալն էր, և ունէին ընդ իւրեանս զեղբայրն որ տրտմեցուցանէր զնա, և աղաչէին զծերն առնուլ անդրէն 'ի վանս նորա. Իսկ իբրև եկին մերձ 'ի տեղին ուր բնակեալ էր ծերն, եկին առ հայրն Ովք և դրեալ մերձ 'ի նա [illegible] իւրեանց և զատելոյն եղբայր՝ և թողեալ զդուռն ծերոյն մնացին։ Իսկ իբրև նայեցաւ ծերն և ետես, ծանեաւ զնոսա և ասէ ցնոսա. ո՞ւր իցեն պարկք ձեր։ Իսկ նոքա ասեն. ահա է փկեղն և եղբայրն այն։ Իբրև լուաւ ծերն զանուան տրտմեցուցող եղբօրն իւրոյ, յարեաւ և 'ի խնդութենէն առեալ զփայտատ քանդեաց զդուռն անձուկին որ արգելեալն էր, և ել և եկն առ եղբայրն և անկաւ յառաջ եղբօրն և գրկեալ համբուրեաց զնա և տարաւ 'ի անձուկն, և զաւուրս երիս ուրախութեան [illegible] հանգոյց զնա. և այն զի սովորութիւն այսպիսի ոչ ունէր, այլ վասն զի անյիշաչար էր, հանգոյց զնա սիրով, և յարուցեալ գնաց ընդ նոսա։ Իսկ զկնի այսորիկ եղև եպիսկոպոս, և էր սքանչելագործ սուրբն այն։ Իսկ զԻսահակ արար եպիսկոպոս մեծն և սուրբն Կիւրեղ Աղեքսանդրացին։

¹ Երանելին Կիւրղ աշխատէր 'ի հանձն առնուլ. և 'ի խնդրել զհայրն

խառնէր զերդաստանն եւ ոչ տայր զվարձս հնձողացն իւրեանց, եւ ամենեքեան փախուցէին 'ի նմանէն: Մեռեալ որդւոյն ծերոյ մեծի թէ այսպէս է, անուանեալ զաշխատանս իւր չարատառ նա եւ ասէ. կամիմ զի հնձեսցուք քեզ: Եւ նոքա խոնարհեցան տուաց՝ այո: Եւ առաքեաց զնոսա յանդաստանն զի հնձեսցեն. եւ կերակուր ոչ տայր նոցա, այլ զկերակուրն իւրեանց այլուստ առնուին փոխ: Եւ իբրեւ սպառեցին զհունձսն, ասէ ցնա ծերն. տուր մեզ զվարձս: Եւ սկսաւ տառապեցուցանել զնոսա. եւ նոքա երթեալ եւ ոչ ինչ առեալ 'ի նմանէ: Եւ զայրացեալ մեռաւ եւս ամենեկին առ նա, եւ խնդրեցեալ ասէ. ահա զայրացեալ եկն անմիտ ծերն: Եւ նոյնպէս տայր նմա, մինչեւ 'ի հինգ ամն հնձէր եւ վարձս ոչ առնոյր: Եւ յետ այնորիկ եկն բարկութիւն այ 'ի վերայ տանն նորա եւ տառապէին ամենեքեան. Եւ զգացեալ անձին իւրում, տարաւ զամենայն զվարձսն զհինգ ամին եւ ինչս 'ի Սկիւթ ծերոյն, եւ աղաչեաց զնա զի աղօթս արասցէ 'ի վերայ՝ նորա. եւ բժշկեցաւ ամենայն տունն նորա:

ՊՈՂԻԵԱՆ՝ մտին 'ի խուցն հօրն Մովսէսի, եւ աղազանկեաց Մովսէս եւ եղին եղբարքն կերակուրս զնոսա եւ առաքեցին յԱզգեստանն առ իշխանն եւ եղ զնոսա 'ի բանտ-

իւր՝ զանց արար զնովաւ այրն եւ ոչ ետ, եւ զնոյց ծերն զատարկ 'ի տունն իւր: Եւ յերկրորդում ամին զնոյց գործեալ անդ եւ հնձեաց ըմբիւք, իսկ այրն գործեալ ոչ ետ զվարձս նորա. եւ զնոյց զատարկ ծերն: Եւ յերրորդում ամին զնոյց անդ ըստ սովորութեան, եւ եւ տառապել յօժարութեամբ եւ ըմբիւք գործեաց զհունձս, եւ զնոյց գործեալ անվարձ 'ի տունն իւր: Իսկ զայրն զտունն երկրագործին այն հարուածեաց տէր: Եւ ապա յարեաւ այրն հարեալ 'ի խղճէ մտացն եւ յանդիմանեալ՝ շըրջէր 'ի վանորայս եւ յայրս, եւ խնդրէր զծերն իբրեւ զի տացէ զվարձս նորա, եւ հաւլիւ գտեալ զնա՝ անկաւ առ ոտս նորա եւ ասէ. ինձ հասցէ տէր յիշուսցի, որպ առ քո զվարձս քո՝ զի մի գործեալ հարուածիցիմ: Այլ ծերն ոչ ինչ էառ 'ի նմանէ, այլ ասաց առնել զայն յեկեղեցին եւ տալ 'ի քահանայն:

: Էր ոմն միայնակեաց մեծ 'ի լերանն Աթիլիմոսի, եւ զնացին աւազակք 'ի վերայ նորա. իսկ ծերն գոչեաց 'ի ձայն մեծ, եւ լուեալ միաբանութեան ծերոյն զնացեալ կալան զաւազակսն զայնոսիկ եւ յուղարկեցին առ իշխանն, եւ նա եդ զնոսա 'ի բանտի: Յետոյ զղջացեալ եղբարքն ասեն. վասն մեր անկան նոքա 'ի միջոն յայն: Եւ արտաքին վասն այն, եւ յարուցեալ գնացին առ հայրն Պիմէն եւ պատմեցին նմա: Իսկ հայրն Պիմէն գրեաց առ ծերն եւ ասէ. զիտեա զի քո ձայնիւդ եւ աղաչանօք եկեալ եղբարցն ըմբռնեցին եւ իշխանի զեկուցին: Այսպիսի բան գրեաց. ծանիր զու զառաջին մատնութիւն թէ ուստի եղեւ, եւ ապա տեսցես զերկրորդն. զի թէ ոչ մատնեալ էիր զու նախ 'ի ներ-

ռին։ Այս առաջեաց առ նա հայրն Պիմէն և ասաց. հայր Մովսէս, յիշեա զաստիճանս մտանիցեն. Այս գնաց աղա-չեաց զիշխանն, և արձակեաց զգաղտնին։

ԱՍԱՑ՝ աբբայ Զենոն. որ ոք կամի զի արագ լսէ ած աղօթից նորա, յորժամ յառնէ և զձեռն իւր տարածէ առ ած, նախ քան զամենայն և նախ քան անձին իւրոյ՝ վասն թշնամեաց իւր սրտիւ աղօթեսցէ, և վասն այ-սորիկ ամ զոր ինչ և խնդրեսցէ յայնմ՝ տացէ նմա ած։

ԾԵՐ՝ ոմն 'ի Սկիւթ եհաս աւազակաց որ գողա-նային զխցուց նորա, և ասէ ցնոսա. փութացարուք յա-ռաջ քան զգալ եղբարցն և արգելուլ զձեզ կատարել զպատուիրանն Քի որ ասէ՝ որ առնու զինչս քո, մի խնդրեր։

ԵԿՆ՝ եղբայր ոմն լրեկեցի առ աբբայ Մի-ղաւխանոս 'ի լեառն Սանէափայ և ասէ ցնա. աբբայ, թըշ-նամին ոտնիմ բազում չարիս արարեալ է ինձ. քանզի յոր-ժամ էի 'ի գեօղ անդր, զագարակ իմ յափշտակեաց և բազում անգամ դաւաճան եղև, և այժմ կախարդս յեր-արկեալ ընդ իս զմտանել ինձ, և կամիմ մատնել զնա իշխանին։ Ասէ ցնա ծերն. որպէս զիւր թողք քեզ, որ-դեակ, արա։ Ասէ ցնա եղբայրն. այո, աբբայ, արդարև եթէ խրատի, կարեւոր օգտի անձն նորա։ Ասէ ցնա ծար-

քուաս, և ոչ այս երկրորդ մատնութեան լինէր 'ի քէն։ Եւ խերև լուեալ ծերն զբանս Թղթոյն Պիմէնի՝ ասպասէ եղև յայժ, զի էր հաշտեցեալ ընդ յամենայն երկիրս յայն։ Եւ զի ոչ եղանէր յայրեն խաղաղ, և խերև ընթերցաւ՝ եղ վաղվաղակի առնուլ և գնաց 'ի քաղաքն առ իշխանն և խնդրեաց 'ի նմանէ և եհան 'ի բանտէն զաւազակսն և ազատեաց զնո-սա հրապարակաւ։

1 Ասաց հայրն Զենոն. եթէ կամեսցի ոք զի արագ լուիցէ ած աղօ-թից նորա, յորժամ համբարձցէ զձեռս յաղօթս առ ած, նախ քան զամենայն աղօթեսցէ վասն թշնամեաց բոլորով սրտիւ. եթէ զայս ա-րասցէ, տացէ յայ զոր և խնդրեսցէ յաղօթսն։

2 Ծեր ոմն 'ի Սկիւթէ գտաւ զաւազակսն զի կողոպտէին զառն իւր, և ասէ ցնոսա. տագնապեցէք փութով և գնացէք, զի մի գայցեն եղբարք և խափանեն զձեզ, և արգելցեն զիս 'ի պատուիրանէն Քի որ ասէ՝ թէ զոր ինչ հանէ ոք 'ի քէն, մի պահանջեր։ Ցորմէ զարմացեալ ա-ւազակքն ծանեան զի գոյ ճշմարտութե անյիշաչարութե 'ի կրօնաւորսն։

3 Եղբայր ոմն լրեկեցի գնաց առ հայրն Միղաւանէ և ասէ ցնա. հայր, այր ոմն թշնամի իմ է և բազում չարիս գործեալ է ինձ. խլեաց յինէն զագարակ իմ մինչ էի 'ի գեղ, և մոգս և գեղեցս առաքեաց սպա-նանել զիս. և արդ կամիմ զի տարեալ տացից զնա առ իշխանն։ Ասէ ցնա ծերն. զոր ինչ կամիս արասցես, որդեակ։ Ասէ ցնա եղբայրն. թոյլ տուր, հայր, եթէ խրատեսցի՝ շահ լիցի անձին իմոյ և նորա։ Ա-

Digitized by Google

ձեալ ծերն. որպէս դիւր թուի քեզ, որդեակ, արա: Ասէ եղբայրն ցծերն. արդ, հայր, արա աղօթս և երթամ առ իշխանն: Յարուցեալ ծերն և սկսան՝ հայր մեր որ յերկինս: Եւ իբրև եկին առ ոտն՝ թող մեզ, ասաց Աստուծոյ, ասէ. և մի թողուր մեզ զպարտիս մեր, որպէս և ոչ մեք թողումք մերոց պարտապանացն: Ասէ եղբայրն ցծերն. մի ասեր այդպէս, հայր: Ասէ ծերն. և զիարդ, որդեակ. արդարեւ եթէ առ իշխանն կամիս երթալ որպէս զի զվրէժ քո առցէ, Աստուծոյ այլ աղօթս քեզ այսօր ոչ առնէ: Եւ ծունր անկեալ եղբօրն, եթող թշնամւոյն իւրոյ*:

Լուին՝ երկու միայնակեացք 'ի միում տեղւոջ բնակեին. և երթեալ առ նոսա ծերոյ միոյ մեծի և կամեցաւ փորձել զնոսա, առ գաւազանն և սկսաւ ջարդել զբանջարս միոյն: Եւ տեսեալ զնա եղբօրն թաքեաւ. և իբրև մնաց մի և եթ արմատ, ասէ եղբայրն. հայր, եթէ կամիս՝ թող զդա զի եփեսցուք և ճաշակեսցուք 'ի միասին: Եւ անկեալ ծերոյն առ ոտս եղբօրն ասէ. Հոգին Այ հանգուցեալ է 'ի վերայ քո, եղբայր:

ասէ ցնա ծերն. արասցես զոր կամիս: Ասէ եղբայրն ցծերն. արա աղօթս և արձակեա զիս առ իշխանն: Եւ յարեաւ աղօթել: Եւ իբրև ասէին՝ Հայր մեր յերկինս, ասէ ծերն. մի թողուր մեզ զպարտիս մեր, որպէս և մեք ոչ թողումք մերոց պարտապանաց: Ասէ եղբայրն ցծերն. մի, հայր, մի այդպէս: Եւ ծերն ասէ ցեղբայրն. և մեզ այդպէս, որդեակ. այլ հաւատա ինձ, եթէ գնաս առ իշխանն դատել զդա՝ Աստուծոյ այնպէս աղօթէ միշտ վասն քո: Եւ անկեալ եղբայրն այն առ ոտս ծերոյն ետ թողութիւն արտամողին իւրոյ:

* Դարձեալ [illegible] ի հին [illegible]. Եղբայր ասէ [illegible] ցծերն. [illegible] [illegible] հատուցանել: Եւ յորժամ աղօթէին, ասէ ծերն [illegible] Հայր մեր որ յերկինսն՝ մի թողուր մեզ զպարտիս մեր, որպէս և մեք ոչ թողումք: Եւ [illegible]:

Միայնակեացք երկու նստէին ուրեմն առանձին հեռի 'ի միմեանց. և գնացեալ առ նոսա ծեր մի մեծ և կամէր փորձել զմի 'ի նոցանէ, և առեալ զգաւազանն սկսաւ փշրել զբանջարս նորա: Իսկ եղբայրն իբրև տեսեալ զայն՝ թաքեաւ, և իբրև մնաց մի 'ի բանջարոյն, եկն և ասէ. եթէ կամիս, հայր, թողցես զմինդ զայդ, զի 'ի վերայ դորա արարացուք սեղ: Իբրև լուաւ զայս ծերն, զարմացաւ ընդ հեզութեան և անյիշաչարութեան նորա:

# ՄՆԱՑՈՐԴՔ

## յերկրորդ թարգմանութենէ

ԱՍԱՑ Հայրն Անտոնիոս. յորժամ ոք ծածկեսցէ զյանցանս ընկերին և զմեղս, և Ա՛ծ ծածկեսցէ զմեղսն իւր։

ԳՐԵՑԻՆ երբեմն 'ի վերայ Հօրն Թէոդորէի 'ի գիշերի աւազակք երեք, և երկուքն կալան զծերն և մինն Հանէր զամենայն նորա և զգիրսն, և Համէին յեկեղ զՀանդերձն և զպարեգօտն. Եւ ծերն ասէ ցնոսա. Թողէք զպարեգօտդ զայդ զի ծածկեցից զիս։ Եւ նոքա ոչ կամեցան առնել։ Յայնժամ ծերն շարժեալ զձեռն առ և ձգեաց զնոսա յերկիր։ Եւ նոքա տեսեալ զայն, երկեան յոյժ և ոչ կարէին յառնել։ Եւ ասէ ցնոսա ծերն. մի երկնչիք, այլ արարէք զայդ ամենայն չորս մասն, և զերիս մասն տարէք, և զմին թողէք ինձ։ Եւ զայս վասն այն արար, զի իւր մասն պարեգօտն մնասցէ, որով ծածկեալ գայր յեկեղեցին։

ՆՍՏԷՐ երբեմն Հայրն Յոհաննէս կարճահասակն յեկեղեցին, և գային եղբարքն և Հարցանէին վասն խորհրդոց իւրեանց. իսկ մին տեսեալ զնա այնպէս պատուական լեալ, յաղթեալ եղև 'ի նախանձուն և ասէ ցնա. սափոր քո, Յոհաննէս, լի իցէ դեղիւ։ Ասէ ցնա. այո, Հայր, այդպէս իցէ. այդ զի զարտաքինս միայն տեսանես, իսկ եթէ և զներքինսն տեսանել կարող էիր՝ զինչ Հանդերձեալ էիր ասել։

ԱՍԷԻՆ վասն Հօրն Պունկինոսի՝ եթէ մատնեացին առ նա զաշակերտս իւր, որպէս զի վարեսցէ զնոսա. քանզի եկին առ նա աշակերտք Հօրն Թէոդորէի և ասեն ցնա. Հայր, լուաք մեք զաշակերտէն քո գործ ինչ ոչ բարի. և թէ կամիս, Հանեմք զնա 'ի քէն և բերեմք այլ եղ-

Digitized by Google

բայց բարի։ Ասէ ցնա ծերն. ես ոչ արտաքսեմ զնա՝, զի համբուրեցաւ է զիս յայժ։ Այլ իբրև լուաւ զպատասխանն եղբօրն ծերն՝ ասաց. վայ ինձ զի գամք աստ որպէս թէ լինիցիմք հրեշտակք, և լինիմք անբանք խոնեշք և անասունք։ Յայնժամ ամաչեցաւ զգաստացան եղբարքն և ծանեան զի անյիշաչար պատրաստ է լինել։

Էր երբեմն հայրն Մակար յԵգիպտոս, և իբրև եկն 'ի սենեակ իւր՝ գտաւ անդ այր մի որ գերէր զսենեակն նորա և համեստ դնէր 'ի գրաստ իւր զինչս նորա։ Իսկ ծերն իբրև ետես զայն, սկսաւ օգնել նմա արկանել զաւար ոք բերեալ և բառնալով զգրաստն. և իբրև բարձան, համբերութեամբ յուղարկէր զնա և ասէր. ոչ ինչ բերաք յաշխարհ և ոչ հանելոց եմք ընդ մեզ աստի. տէր ետ և տէր էառ, գնասցես խաղաղութեամբ։

ՈՒՆԷՐ ընդ ումեք սիրելութիւն արտաքոյ սենեկի իւրոյ Պայեսիոս եղբայրն հօրն Պիմենի. իսկ հայրն Պիմէն ոչ գիտէր և ոչ կամէր զայս։ Այլ յարեաւ և գնաց առ հայրն Ամմոն և ասէ ցնա՝ եթէ եղբայրն իմ Պայեսիոս ունի սիրելութիւն ընդ միումն և ոչ հանգչիմ։ Ասէ ցնա հայրն Ամմոն. Պիմէն, միթէ դեռ կաս կենդանի ես, գնա նիստ 'ի սենեակ քո և դիր 'ի միտս՝ եթէ երիս ամս ունիմ 'ի գերեզմանի։

ԱՍԱՑ հայրն Պիմէն. ամենայն վշտաց որք գայցեն 'ի վերայ քո՝ յաղթեսցես զնոսա խոնարհութեամբ և լռութեամբ, զի չար չարեօք ոչ լուծցի. այլ եթէ ոք արասցէ քեզ չար, դու արա առ նա բարի և բարեաւն յաղթեա չարին։

ԷԻՆ եղբարք ըստ մարմնոյ հայրն Պօղոս և հայրն Տիմոթէոս, և բնակէին 'ի Սկիտէ 'ի վանսին, և եղև բազում անգամ հակառակաբանութիւն 'ի մէջ նոցա։ Ասէ հայրն Պօղոս ցեղբայր իւր. մինչև յե՞րբ կացցուք յխռովութեամբ 'ի կագումն։ Ասէ ցնա հայրն Տիմոթէոս. արա դու որ յորժամ շարժիմ ես 'ի վերայ քո՝ բարձցես զիս, և յորժամ դու շարժիս՝ ես բարձից զքեզ։ Այլ այպէս արարեալ հանգեան զմնացորդս աւուրց իւրեանց։

ԵՐԱՆԵԼԻՆ Սպիրիդոն այնչափ հեզ և խոնարհ էր, մինչ զի հովիւ հօտից եղեալ՝ արժանի եղև եպիսկոպոսել 'ի քաղաքին որ կոչի Տրիմիթոն, և 'ի բազում խոնարհութիւնսն ոչ հրաժարեաց 'ի հովուութէ խաշանցն։ Իսկ

Digitized by Google

'ի գիշերի միում ելեալ զօրք առ նա զօրանալ ոչխար 'ի հօտից նորա, այլ Ած սպանեաց զհովիւն և զհօտ նորա. զի մինչ մտանէր զօրք 'ի բակ հօտիցն, կապեաց զնոսա աներևոյթ զօրութիւն Այ։ Այլ իբրև այդ եղև, մտեալ 'ի բակ հովիւն թուել զհօտն, և եգիտ զնոսա կապեալ ձեռս 'ի յետս, և ծանեաւ զպատճառս փառս որոյ եկեալ էին. և կոչեալ յաղօթս առ Ած եղբարց զգործն, և բազմաց օրհնաբանեաց զնոսա և խրատեաց զի աշխատութեամբ կերիցեն և մի գողասցեն։ Այլ խոյ մի գէր և փափուկ ընտրեալ 'ի հօտից՝ կապեալ ետ նոցա ուրախուք և ասէ. զի մի ընդունայն լիցի տքնութիւնք ձեր, առէք զայս և գնացէք խաղաղութեամբ։

ԱՂՔԱՏՐ ոմն առաք փոխատուող բանաւորաց և բանաւոր զգուշան ծերոյն և զօղանայր զգլխաւն նորա։ Իսկ ծերն գրեաց թուղթ այսպէս. տէր իմ և եղբայր, որ ոք և իցես, արա սէր և տարցես զկէս զդրամոցն դու և զկէսն թողցես 'ի ծախս իմ։ Այլ բաժանեաց զփողն յերկուս մասունս, և եդ 'ի վերայ զթուղթն։ Իսկ գողացօղն եկեալ բազ սովորութեան իւրում և տեսեալ զթուղթն ընթերցաւ, և հերձեալ զնա ընկէց և տարաւ զամենայն դրամսն։ Այլ զկնի երկուց ամաց մեռանէր եղբայրն այն և ոչ ելանէր հոգին 'ի մարմնոյն զաւուրս բազումս։ Այլ իբրև եկն առ նա փոքր մի զիւրութիւն և ուշաբերեաց, խնդրեալ ծանեաւ զչարչարանս, և կոչեաց զծերն և ասէ. թող ինձ, զի ես էի որ գողանայի զկերակուրս քո։ Այլ նա արտասուեալ աղօթս խնդրեաց թողութիւն նմա. և իբրև դադարեաց, իսկոյն աւանդեաց զհոգին եղբայրն։

ԱՅԲԼ ոմն տուեալ եղև 'ի մարդասպանութիւն, զի մատնեաց զնա ազգականն իւր. և իբրև բերէին զնա 'ի տեղի սպանութեան, ետես զազգակիցն իւր որ մատնեաց զնա, և հանեալ զմատանին ոսկի 'ի ձեռանէ իւրմէ ետ նմա և ասէ ցնա մերձեալ. Ընկեր. գոհանամ զքեզ և զքէն առ Ած, զի այսպիսի բարեաց պատճառ եղեր ինձ։ Այլ այսպէս զանյիշաչարութիւն տեսեալ իւրոյ տեսեալ՝ ազատեցաւ արդարացուցեալ։

ԱՅՍԷՐՆ փաստ ծերոյ ումեմն՝ եթէ որչափ ոք անարգէր և արհամարհէր զնա, նա այլ առաւել զնոյն առ նա և սէր. այսպիսի են պատճառք առաքինութեանց, խոկ եղբանորք մեր խարկեն զմեզ և չխոթեն զհոգիս մեր, քանզի գրեալ է՝ որք երանեն՝ խաբեն զձեզ։

ԵՂԲԱՐՔ ոմանք գնացեալ առ ծերն որ բնակեալ էր յանապատի, և գտեալ արտաքոյ խցի նորա՝ մանկտիս արածականս որք արածէին և ասէին բանս աղտեղս. բայց եղբարքն տեսեալ զծերն, և պատմեալ զխորհուրդս իւրեանց և բժշկեցան 'ի ծերոյն. Յետ այսորիկ ասէ եղբայրն ցծերն. որպէս կարես համբերել, Հայր, զմանկանցս աղտեղի բարս և զերգս լսել, կամ ընդէ՞ր ոչ պատուիրես նոցա ոչ լկտել: Ասէ ծերն. 'ի վաղուց ունիմ 'ի մտի ասել զայդ, այլ նեղեմ զանձն իմ և ասեմ, եթէ փոքու այսմիկ ոչ համբերեցից, ապա եթէ մեծ ինչ փորձութիւն գայցէ 'ի վերայ քո՝ որպէս համբերել կարես. և այսպէս եղև ինձ սովորութիւն համբերել:

ԱՍԷՐ ոմն 'ի ծերոցն՝ եթէ տեսի զմանկունս ունելով որ առաջնորդէին ծերոց 'ի կենանս: Նստէր եղբայր ոմն ծեր առանձինն, և գործէր սակառս փոխանակ մի և վաճառէր, և զգինն նորա ընծայէր զհնոյն: Յետոյ եկն եղբայր մի մենաւոր և բնակեցաւ առ նմա, և գործէր և նա սակառս փոխանակ մի, և տանէր զերկասեան 'ի գիւղ ծերն և վաճառէր և առնոյր զգինն նոցա և գնէր զհաց և ընծայէր և զայլ արքեալ, և եղբօրն տայր յերեկոյին հաց չորացեալ. զայս առնէր ծերն զերիս ամս, և եղբայրն համբերէր և ոչ ինչ ասէր. Օրինակ երեք ամսին ասէ եղբայրն 'ի մտի. Մերկ եմ բնաւ և հաց ևս ոչ ունիմ, գնացից այլուր: Ապա դարձեալ ասէր. ուր գնացից, կացից աստ, զի վասն այդ կամ և աշխատիմ: Ապա երևեցաւ նմա հրեշտակն և ասէ. մի գնար աստի, զի յեգուց գամ առ քեզ: Իսկ եղբայրն խրեալ խնդրեաց ծանեաւ զկորուսանն իւր, աղաչէր զծերն և ասէր. մի գնասցես այսօր 'ի գեղ և մի թողուր զիս, զի ահա գան առնուլ զիս: Ասէ ծերն. ոչ գան այսօր, զի յամեցին: Ասէ եղբայրն. այո, եկին ահա. և նշխեայ աւանդեաց զհոգին: Ապա տեսեալ ծերն սկսաւ ողբալ և ասէր. վայ ինձ, որդեակ, զի ես զաւուրս ամենայն հեղգութեամբ ծախեցի, իսկ դու 'ի սակաւ ժամս զհոգի քո կեցուցեր համբերութեամբ քով: Ապա սկսաւ ծերն յայնմհետէ բարւոք կենցաղիլ, և եղև ճգնաւոր ընտրեալ:

ԾԵՐ ոմն ունէր մանուկ բնակակից, և յանդիմանեաց զնա երբեմն վասն անպատշաճ գործոյ. իսկ մանուկն դժկամակեաց, և սրտմտեալ պնդեաց զդուռն տանն ուր կայր կերակուր ծերոյն, և գնաց այլուր և յա-

մնաց աւուրս երկոտասան՝ թաղեալ զծերն ամփոփեալ և աղօթեալ: Իսկ էր մերձաւոր ծերոյն եղբայր մի բարի. իբրև գիտաց զյանձնել մանկանն, արար նմա կերակուր ինչ և եա ընդ պատուհանն: Եւ այնպէս խոնարհ և անյիշաչար էր ծերն՝ որ ոչ երբեք տրտմեցուց զմանկանն, ոչ 'ի մտի և ոչ առ այլս: Եւ յորժամ ասէին թէ ո՞վ է նա, ասէր ծերն՝ յորժամ պատարագեսցի եկեսցէ:

ԵՂԲԱՐՔ ոմանք գնացին 'ի Ճանապարհի և մոլորեցան, և դիպեալ ոմանց հարցին զուղին. իսկ նոքա աւազակք էին՝ խաբեցին զնոսա և ցուցին գնալ ընդ անկոխ և անշէն տեղիս. և մինն աւազակաց զկնի գնայր կողոպտել զնոսա: Իբրև եկին 'ի ձոր ինչ անդ կողոպտել զնոսա, իսկոյն ել 'ի հեղեղատէ ձորոյն խիստ գազան և դիմեաց 'ի վերայ աւազակացն այնուհետև ուտել զնոսա: Իսկ ծերքն ոչ եառուն թողլ, այլ ձայն արձակեալ զերծուցին զնոսա, և հատուցին բարի ընդ չարոյ: Եւ զարմացեալ ընդ անյիշաչարութիւն նոցա աւազակացն՝ գոհանային զԱծ, զի ապրեցան 'ի նոցանէ:

ԱՍԱՑ ծերն. եթէ ոք անարգէ զքեզ, օրհնեա զնա. եթէ ընդունի՝ բարի է երկոցունցդ, և եթէ ոչ ընդունի՝ զքո առցես յԱյ օրհնութիւն և նա զանէծս:

ԱՍԱՑ ծերն. էր ոմն պատրիարգ Աղեքսանդրոս անուանի յոյժ և թողող յանցաւորաց, քաղցր և բարերար և մարդասէր. սորա էր դպիր մի մանուկ հաւատով, որ գողացաւ 'ի նմանէ ոսկի, և երկուցեալ 'ի յայտնելոյն փախուցաւ և գնաց 'ի Թեբայիդա, և դիպեցան նմա 'ի գնալն բազմաւորք աւազակք լեռնին, և առեալ զոր ինչ ունէր զամենայն, և զինքն կալեալ գերի 'ի ներքին անապատն: Եւ ծանեաւ զայս երանելի պատրիարգն, և խնդրեաց զգերին և գնեաց զնա յիսուն դահեկան: Եւ իբրև եկն նա առ նա, այնչափ ողորմութիւ և մարդասիրութիւ եցոյց նմա, մինչև ասէին բազումք՝ եթէ ոչ ինչ իցէ շահ քան զմեղանչել պատրիարգիս այսորիկ: Այնչափ անմեղ և անյիշաչար էր նա շնորհօքն Այ:

## ԺԷ

# ՎԱՍՆ ՍԻՐԵԼՈՅ ԶԱՍՏՈՒԱԾ

## ԵՒ ԶԸՆԿԵՐՆ

ԱՍԱՑ սուրբ հայրն մեր Պափնուտի. մեծ քան զամենայն աւրէն է. ոչ կայ իբրև զանձն դնել 'ի վերայ սիրելւոյ իւրոյ։ Եթէ ոք լուիցէ բան տրտմական 'ի մերձաւորէ իւրմէ և կարող է ընդդէմ պատասխանել և մաքառանօք սատանայ՝ և ոչ շարժի 'ի չարն, այնպիսին դնէ զանձն 'ի վերայ սիրելւոյն։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց զհայրն Պիմէն՝ թէ արժան է ինձ լինել առ միաբանակեացսն։ Ասէ ծերն՝ թէ որ նստի առ միաբանակեացսն, պարտի զամենեսեան իբրև զմի տեսանել, և պահել զբերան և զաչս իւր, և այսպէս հանգչի անհոգութեամբ։

ՊԱՏՄԵՑԻՆ ումանք՝ եթէ երբեմն հայրն Պիմէն և եղբարք նորա գործէին հեսկս առագաստեայ և ոչ կամէին վաճառել, և նեղէին՝ վասն զի ոչ գտանէին կատա գնելոյ. և ոմն սիրելի նոցա պատմեաց վաճառականի ումեմն հաստատեցելոյ զիրսն։ Իսկ հայրն Պիմէն ոչ կամէր առնուլ ինչ յումեքէ վասն անխռովելոյ։ Իսկ վաճառականին կամեցեալ կատարել զգործ ծերոցն, պատճառեաց և ասէ՝ թէ պիտոյ են ինձ հեսկք առագաստէից։ Եւ առեալ ուղտս առ զհեսկեանսն որպէս թէ պիտոյ է ինքեան։ Եւ եկեալ եղբօրն առ հայրն Պիմէն և լուեալ թէ զինչ արար վաճառականն՝ գովեաց զնա և ասէ. արդարև, հայր, ոչ ինչ պէտս ունելով առ 'ի մէնջ զհեսկն առագաստին։ Հօրն Պիմէնի լուեալ եթէ ոչ ինչ պէտս ունելով առ հեսկսն, ասէ ցեղբայրն իւր. ա-

• ԵՂԲԱՅՐ ոմն եհարց զհայրն Պիմէն և ասէ. մինչև պարտ իցէ կեալ ծերոց 'ի մէջ եղբարցն, հայր։ Ասաց ցնա ծերն. որ բնակեալ է 'ի մէջ եղբարց 'ի հասարակաց վանս, պարտ է զի զամենեսեան մի և հաւասար տեսցէ և սիրեսցէ, և զի զգուշացուսցէ զբերանն, և զաչն իւր կալցէ. և յորժամ արասցէ զայս, գտանէ հանգիստ անձին։

րի առ ուղտս 'ի վարձու և բեր զհեսկեանն այսրէն. ապա թէ ոչ բերես, Աբիմէն ասա ոչ նստի ընդ ձեզ, վասն զի ոչ զըկեմ զմարդ՝ որում ոչ ինչ են պէտք, զի մնասեսցի վասն իմ, և առցէ զօգուտն: Եւ երթեալ եղբայրն նորա և մեծաւ աշխատութբ բերեալ զնա, կասկածեալ թէ գուցէ ծերն գնասցէ 'ի նոցանէ: Եւ յորժամ ետես զայն, խնդաց՝ որպէս թէ զմեծ ինչ գանձարան գտեալ:

ԷԻՆ երկու եղբարք դրացիք իրերաց, և մին 'ի նոցանէ թաքուցանէր եթէ լումայս և եթէ հաց, և արկանէր յաման դրացւոյն իւրոյ. և նա ոչ գիտէր, այլ զարմանայր թէ ուստի բազմանայր նորայն այնքան: Արդ յաւուր միոջ յանկարծակի գտեալ զնա զի այսպէս առնէր, և ելեալ կռուէր ընդ նմա և ասէր՝ եթէ վասն մարմնաւորին քոյոյ գողացար զիմ զհոգևորն: Եւ պահանջեաց 'ի նմանէ բանս, զի մի այլ ևս զայն արասցէ. և այսպէս զայս սմա թողութիւն արարեալ:

ԱՍԷԻՆ՝ վասն հօրն Պափնուտի՝ եթէ ոչ ըմպէր գինի երբէք. և երբեմն ճանապարհ երթայր, դիպեալ եղև զի եկեալ 'ի վերայ աւազակաց՝ ետես զնոսա զի ըմպէին գինի, և ճանաչէր զնա աւազակապետն և գիտէր զի ոչ ըմպէր գինի: Եւ տեսեալ զնա 'ի մեծի աշխատութե, և լցեալ զբաժակն գինւով և զսուսերն 'ի ձեռին իւրում և ասէ ցծերն. եթէ ոչ ըմպես, սպանանեմ զքեզ: Եւ գիտացեալ ծերոյն թէ զպատուիրանն այ կամի կատարել, կամեցեալ շահել զնա՝ առեալ արբ զգինին: Եւ անկեալ առաջի նորա աւազակապետն և ասէ. թողութի արա, Հայր, զի նեղեցի զքեզ: Եւ ասէ ծերն. հաւատամ յԱծ, զի վասն բաժակիս այսր առնէ ընդ քեզ ողորմութի 'ի յաւիտենիս յայսմիկ և 'ի հանդեր-

: Ասէին վասն հօրն Պափնուտի՝ եթէ ոչ ըմպէր գինի. և իբրև գնայր նա երբեմն, դիպեցաւ 'ի ճանապարհին ժողովոյ աւազակաց որք ըմպէին գինի: Իսկ աւազակապետն ճանաչէր զնա, և գիտէր զի գինի ոչ ըմպէր, և ետես զնա վաստակեալ յոյժ, վասն այն առեալ գինի բաժակաւ 'ի ձախու ձեռին և զսուր յաջոյ ձեռին մատոյց նմա և ասէ. եթէ ոչ ըմպես զայս բաժակ գինւոյ, սպանից զքեզ: Իբ ծանեաւ ծերն զի սիրով արար զայն, և կամեցաւ շահել զնա, և առեալ ըմպեաց զայն: Իսկ աւազակն անկաւ առաջի նորա և ասէ. թող ինձ, հայր, զի տրտմեցուցի զքեզ: Ասէ ցնա ծերն. հաւատամ յԱծ որ վասն ըմպելոյս այսորիկ առնէ ողորմութի ընդ քեզ աստ և 'ի հանդ.

Digitized by Google

ձեռամբն։ Ասէ ցնա աւազակապետն. հաւատամ յԱծ զի և ոչ ես յայսմհետէ չար ինչ ումեք արարից։ Եւ շահեցաւ ծերն զամենայն աւազակակիցսն աւազակապետաւն հանդերձ, զի ոչ կատարեաց զկամս իւր, այլ շահեցաւ զնոսա վասն այ։

ՊԱՏՄԵՑԻՆ[1] ոմանք վասն հօրն Ագաթոնի եթէ փութայր զամենայն պատուիրանսն կատարել. եթէ անցանէր ընդ գետն, նա ինքն փութայր և ունէր զղեկ մակուկին. և յորժամ երթայր առ նա եղբարք, զաղօթիցն սեղանն պատրաստէր, վասն զի լի էր սիրովն այ։

Էր ոմն 'ի մեծ հարանցն 'ի Սկիւթ, որ ոչ հաց ճաշակէր և ոչ գինի ըմպէր. և ժողովեալ զծերսն եկն յեկեղեցին Իսիդորոսի. և իբրև ոչ եգիտ անդ զերէցն, յուսացեալ 'ի համարձակութիւն զոր ունէր ընդ նմա, և գիտացեալ թէ յորպիսի կրօնաւորութե և յաշխատութեան են ծերքն, մտեալ 'ի ներքս եբեր զպէտսն և փոքր մի գինի, և նախ ինքն սկսաւ ուտել և ըմպել։ Եւ ըսքանչանային թէ զկարգ վասն այ մերժեաց զիւր զկամսն, զի զծերսն հանգուսցէ։

ԱՍԱՑ[2] ոմն 'ի հարանցն. եթէ խնդրեսցէ ոք 'ի քէն իրս և չտայցես նմա կամօք, այլ 'ի բռնութե տանիցի, հաճեսցին և խորհուրդք քո վասն այնր զոր եթէ ետուրն, որպէս և գրեալ է՝ եթէ ոք տանիցի զքեզ մղոն մի, երթ ընդ նմա և երկուս. այսինքն է եթէ ոք խնդրեսցէ 'ի քէն իրս ինչ, տուր նմա սրտի մտօք։

ԵԿՆ[3] ոմն ծեր առ հայրն Պօղոս 'ի փոքր ամառաւան Մա-

զերմեռանդն կեանս։ Եւ ընդ առնել ծերոյն՝ ծագեաց լոյս 'ի սիրտ աւազակապետին աղօթիւք նորա, և ասէ աւազակն. հաւատամ յԱծ զի յայսմհետէ ոչ արարից ումեք չար։ Արդ այսպէս շահեցաւ զգունդս աւազակացն վասն ընդունելոյն այնորիկ. զի Ած շնորհեաց զնոսա նմա վասն առաքինութեան նորա։

[1] Ասէին վասն հօրն Աղաթոնի՝ եթէ փութայր կատարել զամենայն պատուիրանս. և թէ լինէր երբեք անցանել ընդ գետ, նախ ինքն ունէր զթիակ նաւուն, և զժամ աղօթիցն ինքն դնէր եղբարցն զսեղանն. և այս է սէր այ։

[2] Ասաց ծերն. եթէ ոք ինչ խնդրէ 'ի քէն և դու բռնադատեալ տացես, այս մի իցէ. իսկ թէ խնդութե և յօժարութե տացես, այս երկու իցէ. որպէս գրեալ է՝ թէ ոք վարէ զքեզ մղոն մի, գնա ընդ նմա և երկուս. այսինքն եթէ խնդրէ ոք 'ի քէն, յօժարութեամբ տացես և ցնծացեալ հոգւով։

[3] Եկն ծեր ոմն առ հայրն Պօղոս 'ի փոքր արմաւենեաւ Արսենոյի-

Digitized by Google

սեննոտու յեղեգնուտն և աղաչեաց զնա վասն խցի, և նա ետ նմա։ Եւ էր ծերն հիւանդոտ, և հանգուցանէր զնա հայրն Պօղոս. և գային ոմանք տեսանել զՊօղոս, և յուղարկէր զնոսա զի տեսցեն զհիւանդն։ Եւ նա խօսէր նոցա 'ի գրոց Որոգինի, և նեղէր հայրն Պօղոս և ասէր. մի՛ գուցէ կարծիցեն հարքն թէ մեք այնպէս իցեմք։ Եւ հանեալ զնա 'ի խցոյն երկնչէր վասն պատուիրանին. և յարուցեալ հայրն Պօղոս եկն առ հայրն Արսէն և պատմեաց նմա վասն ծերոյն։ Ասէ ցնա հայրն Արսէն. մի՛ հալածեր զնա, այլ ասա ցնա՝ ահա զԱյ շնորհսն, կեր և արբ և հանգիր որպէս և կամիս, բայց միայն զբանդ զայդ մի՛ խօսիր։ Եւ եթէ կամի՝ ուղղէ զինքն. ապա թէ ոչ՝ աղաչեա զնա զի գնասցէ 'ի տեղւոյն, և ոչ լինիս ինչ դու պատճառք։ Եւ երթեալ հայրն Պօղոս արար այնպէս։ Իսկ ծերոյն լուեալ զայս՝ ոչ կամէր զինքն ուղղել, այլ աղաչէր զնա և ասէր. վասն տեառն՝ արձակեսցէք զիս աստի, և ոչ ես կարեմ համբերել յանապատի։ Եւ այսպէս յարուցեալ գնաց՝ յուղարկեալ սիրով։

ԱՍԱՑ ծեր մի. եթէ տեսցես զոմն զի անկեալ է 'ի ջուր և կարես նմա օգնական լինել, ձգեա առ նա զգաւազանն քո և ած զնա արտաքս. ապ՛ թէ ոչ կարես ձգել զնա, թող 'ի նա զգաւազանն քո. ապա թէ տացես նմա զձեռն քո և ոչ կարասցես հանել զնա, ձգէ զքեզ 'ի խոնարհ և երկոքեան մեռանիք։ Զայս ասէր առ այնոսիկ որք եթէ արկանեն զինքեանս քան զչափն իւրեանց աւելի և զայթակղին, այլ ըստ համեմատութեան չափոյն

տոյ և խնդրեաց 'ի նմանէ սենեակ անդ, և ետ նմա զի հիւանդ էր ծերն, և հանգուցոյց զնա յոյժ հայրն Պօղոս. և եթէ ոք գայր տեսանել զհայրն Պօղոս, տանէր զնա տեսանել զհիւանդ ծերն։ Եւ իբրև անց 'ի վերայ ժամս ինչ, սկսաւ ասել հիւանդն այն ծեր զբանս Որոգինէսի։ Եւ լուեալ զայս հայրն Պօղոս՝ տրտմեցաւ և ասէ. մի՛ գուցէ որք գայցեն և լուիցեն, կարծեսցեն զմեզ զամենայն այսպէս։ Եւ արտաքսել զնա 'ի տեղւոյն երկնչէր 'ի պատուիրանէն։ Եւ յարեաւ գնաց հայրն Պօղոս առ հայրն Արսէնի և պատմեաց զայս նմա։ Ասէ ցնա հայրն Արսէնի. մի՛ վարեսցես զնա, այլ ասասցես, ահա բարիք Այ առատ են, կեր արբ և հանգիր, բայց զբանն Որոգինէսի մի՛ ասասցես. և եթէ լուիցէ քեզ և ուղղեսցի՝ բարի է, իսկ եթէ ոչ կամեսցի ուղղել զինքն՝ խնդրեսցէ 'ի քէն գնալ, և դու անմեղ լիցիս։ Եւ եկեալ հայրն Պօղոս արար որպէս պատուիրեաց հայրն Արսէնի։ Իբրև լուաւ զայն հիւանդն այն՝ ոչ ուղղեցաւ, այլ ասէր. վասն սիրոյն Այ արձակեա զիս գնալ աստի, զի ոչ կարող եմ կեալ յանապատս յայս։ Եւ գնաց անտի։

Digitized by Google

իւրոյ իւրաքանչիւր ոք օգնական լինի եղբօրն. վասն զի Աստուած ոչ պահանջէ 'ի մարդոյ պատուիրան առաւել քան զզօրութիւն իւր :

ԵԿՆ¹ երբեմն հայրն Իղարիոն յԱսորւոց 'ի լեառնն առ հայրն Անտոն, և ասէ ցնա հայրն Անտոն. բարի եկիր, Աստուածազգեստ, որ լինիս առաւօտու ծագես : Եւ ասէ ցնա հայրն Իղարիոն. խաղաղութիւն ընդ քեզ, սիւնդ լուսոյ, որ զաշխարհս լուսաւորես :

ՍՈՒՐԲ ծեր՝ եթէ մարդ որ խնդրիցէ յումեքէ իրս և առժամայն բանին միտքն իբրև տայ նմա առաւելագոյն քան զխնդիրն, այս շնորհք յայն են վասն գործոյ խնդրաղին : Իսկ դարձեալ այլ ոք որ խնդրէ և ունի զշնորհս, և կամիք ոչ տայ նմա և համարի նմա վարձք, վասն զի բանաքարեալ են :

ԱՍԱՑ² հայրն Անտոն՝ եթէ 'ի մերձաւորէ քումմէ է կեանք և մահ. եթէ շահեսցուք զեղբայրն մեր՝ զԱստուած շահիցուք, և եթէ գայթակղեցուսցուք զեղբայրն մեր՝ յԱստուած մեղանչեմք :

ԵՂԲԱՅՐ³ ումն սպասաւորէր ումեմն 'ի հարանցն. հիւանդացաւ, դէպ եղև զի անդամալուծեցաւ ծերն, և եկանէր Թարախ 'ի մարմնոյ և գայր հոտ. և ասէին խորհուրդք եղբօրն՝ թէ փախիր, վասն զի ոչ կարես տանել հոտոյդ այդմ : Իսկ եղբօրն առեալ սափոր արկ զլուացուկսն հիւանդին 'ի նա, և յորժամ ծարաւէր՝ անտի ըմպէր. և սկսան խորհուրդք նորա ասել ցնա՝ թէ մի փախչիր և մի ըմպեր 'ի չարահոտութենէդ յայդմանէ : Իսկ եղբայրն աշխատէր և ժուժկալէր ըմպելով զլուա-

¹ Գնացեալ երբեմն հայրն Իղարիոն 'ի Պաղեստինոյ 'ի լեառն առ հայրն Անտոնի. և իբրև ետես զնա հայրն Անտոն, ասէ. բարով գաս, արուսեակ առաւօտի ծագեալ : Եւ հայրն Իղարիոն ասէ ցնա. խաղաղութիւն ընդ քեզ, սիւն հրոյ, որ լուսաւորես զաշխարհս :

² Ասաց հայրն Անտոն. յեղբօրէն իցէ մահ և կեանք. զի թէ շահեսցուք զեղբայրն, զԱստուած շահեսցուք և կեցցուք :

³ Եղբայր ումն սպասաւորէր ծերոյ հիւանդի ումեմն, որոյ նեխեցան ներքին կողմն Թոքոց նորա, և թուք նորա էր ժահահոտ յոյժ սաստիկ : Եւ խորհեցաւ 'ի միտ եղբայրն և ասէր. փախիցեմ և գնացից աստի, զի ոչ կարեմ տանել սմա վասն գժնեհոտութեան սորա : Եւ առեալ եղբայրն աման մի խեցեղէն և հաւաքեաց անդր զթուք նորա. և իբրև ասէր խորհուրդն՝ թէ գնասցես աստի, նա ասէր ցմիտսն. ըմպեսցես դու զայս ժահահոտ թուք որ 'ի յամանիս յայս, և գնասցես խաղաղութեամբ. ապա թէ ոչ կարես ըմպել, և ոչ գնալ ես կարես :

ցուկան և սպառնալով ծերոյն։ Իսկ տեսեալ նց ըզ-համբերութիւն եղբօրն՝ զարմացեալ զղջացուցին ՚ի յառաջ ջուր, և զծերն բժշկեաց ՚ի ցաւոցն։

ԱՍԱՑ՝ հայրն Թէոդորոս՝ թէ մինչդեռ էի մանուկ և կայի յանապատին, չոգայ առ հացարարսն զի արարից ինձ հաց. և գտի անդ եղբայր մի առնել ինքեան հաց, և ոչ ոք ունէր ինքեան ձեռնտու։ Իսկ ես զիմն թողի և ետու ձեռն եղբօրն. և իբրև պարապեցի, եկն այլ եղբայր, և ետու նմա ձեռն դարձեալ և արարի ընդ-հացն. և դարձեալ երրորդ եկն, նոյնպէս արարի և նմա, և իւրաքանչիւր ումեք առնէի որ թէ գայրն. և արարի վաթսուն փուռն, և յետոյ զիմ երկուս փուռնսն արարի և գնացի։

ԱՍԵՆ՝ երբեմն աբբայ Ագաթոն ՚ի քաղաքն վաճառել անօթս, և եգիտ զոմն տառապեալ անդամալոյծ։ Իսկ ասէ. ուր երթաս։ Ասէ ցնա աբբայն. ՚ի քաղաքն, զի վաճառեցից զանօթքս։ Ասէ ցնա. արա սէր և տար զիս զկնի։ Իսկ բարձեալ զնա եբեր ՚ի քաղաքն։ Իսկ դարձեալ ասէ. ուր վաճառես զանօթքդ, անդր դիցես զիս։ Իսկ արար այնպէս։ Իսկ յորժամ վաճառեաց զանօթսն, ասէ ցնա անդամալոյծն. ՚ի քանիս վաճառեցեր զդա։ Ասէ ցնա՝ այսչափ։ Ասէ ցնա. գնեա ինձ պլակունտա, այսինքն նաստակ։ Իսկ նա գնեաց։ Իսկ դարձեալ վաճառեալ միւս այլ անօթ, և նա ասէ. այս որչափ։ Իսկ ասէ՝ այս-

Ապա ասէր. մի ըմպէր զայս և մի գնար ասոր։ Եւ այսպէս համբերէր եղբայրն և սպառնալիքեր ծերոյն։ Եւ նայեցեալ սա ՚ի համբերութեան եղբօրն՝ բժշկեաց զհիւանդն զայն ծեր։

1 Ասաց հայրն Թէոդորէ Եննատացի՝ եթէ մինչ մանուկ էի և բնակէի յանապատ, գնացի երբեմն ՚ի հացատունն և տարայ ընդ իս երկու չափ ալիւր գործել հաց. և էր այլ եղբայր անդ որ կամէր գործել հաց՝ և ոչ ոք ունէր օգնական, և ես թողեալ զիմն անգործ՝ օգնեցի նմա. և ապա եկն այլ եղբայր, և ետու և նմա ձեռն օգնութեան. և եկն երրորդն՝ և այնպէս արարի և նմա, նոյնպէս չորրորդին և հինգերորդին. իսկ յետոյ ապա գործեցի և զիմ հացս և գնացի։

2 Գնաց երբեմն հայրն Ագաթոն ՚ի քաղաքն վաճառել զձեռագործ իւր. և գտեալ ուրուք ոմն անկեալ ՚ի մէջ ճանապարհին, ասէ ցնա աղքատն. ուր գնաս դու, ծեր։ Ասէ ծերն. ՚ի քաղաքն գնամ ծախել զձեռագործն իմ։ Ասէ հիւանդն. արա սէր և տարցես զիս ընդ քեզ։ Եւ բարձեալ զնա ծերն եհան ՚ի քաղաքն։ Եւ ասէ ցծերն. ուր և ծախելոց ես զձեռագործ քո, անդ դիցես զիս։ Եւ ծերն արար այնպէս։ Եւ իբրև վաճառեաց զմի սփրիդն, եհարց հիւանդն. քանիս գնով վաճառեցեր։ Եւ ծերն ասէ՝ այսքան։ Եւ նա ասէ. գնեա ինձ ՚ի նմանէ

քան ։ Եւ դարձեալ ասէ․ գնեա ինձ և զայս ինչ ։ Եւ նա գնէր ։ Եւ յորժամ վաճառեաց զամենայն անօթսն և կամէր ելանել 'ի քաղաքէն, ասէ ցնա գթուցեալն՝ գնա՞ս ։ Ասէ աբբայն՝ այո ։ Եւ նա ասէ․ արա սէր և առ զիս և տար մինչև ցանտառ ուր գտեր զիս ։ Եւ եբարձ զնա մինչև 'ի տեղին իւր ։ Եւ ասէ ցնա․ օրհնեալ ես դու, Աղաթոն, 'ի տեառնէ երկնի և երկրի ։ Ամբարձ զաչս իւր և այլ ոչ ետես զնա, զի գթուցեալն հրեշտակ տեառն էր և եկն փորձել զնա* ։

Ասէին՝ վասն ումեմն եղբօր՝ եթէ սփիւռիտս առնէր և գնէր զանգեղս նորա ։ Ուսաւ 'ի դրացւոյ իւրմէ զի ա-սէր․ զի՞նչ արարից զի վաճառն մերձ է և չունիմ ան-

ալլակինդի ։ Եւ դարձեալ վաճառեաց զփուռն սփրիդ, և եհարց դար-ձեալ զգին նորա և ասէ․ արդ գնեա ինձ սանդալս ։ Եւ զգին վաճա-ռելոյ զամենայն անօթսն կամեցաւ ծերն երթալ ։ Ասէ հիւանդն․ կա-միս գնալ ։ Ասէ ծերն՝ այո ։ Եւ նա ասէ․ արասցես սէր և տարցես զիս 'ի տեղին ուր էի զառաջինն ։ Եւ բարձեալ զնա ծերն եբեր զնա անդ ։ Եւ ապա ասէ․ օրհնեալ ես դու, Աղաթոն, 'ի տեառնէ երկնի և երկրի ։ Եւ ամբարձեալ զաչս իւր ծերն ոչ զոք ետես, զի հրեշտակ տեառն էր և փորձէր զնա, և անյայտ եղեւ ։

* Այս օրինակ ողորմութեան գրեալ 'ի հին թարգմանութեան․ Պատմեցաւ ե-րանելւոյն Աղաթոն հօրն Մակարայ այսպէս՝ թէ երթայր 'ի քաղաքն վաճառել զձեռագործն. և գտեալ 'ի ճանապարհին ուրուք մի ընկե-ցիկ, ասէ․ ո՞ւր երթաս, Աղաթոն հայր ։ Ասէ Աղաթոն․ 'ի քաղաքն վաճառել զձեռագործս ։ Ասէ ու-րուկն․ արա սէր և բարձ զիս անդր ։ Եւ բարձեալ զնա տարաւ 'ի քա-ղաքն ։ Ասէ ուրուկն․ ուրանօր ձե-ռագործդ վաճառես, զիս անդր դիր ։ Եւ արար այնպէս ։ Իբրև վա-ճառէր զձեռագործն, ասէր ու-րուկն․ քանի՞ վաճառեցեր զայդ ։ Եւ նա ասէ՝ այսչափ ։ Եւ ասէ ու-րուկն․ գնեա ինձ պաղախուար ։ Եւ գնեաց և ետ ։ Եւ յորժամ զայլն վաճառէր՝ ասէր ուրուկն․ քանի՞ վաճառեցեր զայդ ։ Եւ նա ասէ՝ այսչափ ։ Ասէր․ գնեա ինձ զայս ինչ ։ Եւ նա գնէր ։ Իսկ յետ վաճառելոյն կամեցաւ գնալ 'ի խուց իւր, քանզի փոքր և կէս մնաց առ իւր ։ Ասէ ուրուկն․ երթա՞ս ։ Եւ ասէ Աղաթոն․ այո երթամ ։ Ասէ ուրուկն․ բարձ զիս և ուրա-նօր գտեր, 'ի նոյն տեղին տար ։ Եւ բարձեալ զնա 'ի վերայ ուսոյ իւ-րոյ տարաւ 'ի տեղին ուր գտաւ զնա ։ Յայնժամ ասէ ուրուկն․ տուր ինձ զնափորտ քո ։ Եւ մերկա-ցեալ ետ ցնա ։ Եւ ասէ ցնա Աղա-թոն․ այժմ եթէ հրամայես, տէր իմ, երթամ ։ Ասէ ուրուկն․ Աղա-թոն, օրհնեալ ես դու 'ի տեառնէ յերկինս և յերկրի ։ Իսկ Աղաթոն հայեցեալ այսր անդր ոչ զոք ե-տես, զի հրեշտակ տեառն իջեալ էր փորձել զնա ։

։ Ասէին զեղբօրէ ումեմնէ՝ եթէ գործեաց սփրիդս և եդ նոցա ան-կանոն ։ Եւ լուաւ յեղբօրէն իւրմէ զի տագնապեալ էր և ասէր․ զի՞նչ արա-րից զի գործեալ է իմ սփրիդս և ունկունս ոչ ունիմ զի եդից նոցա ։

Digitized by Google

զերդ սփիւռիդիցն իմոց։ Եւ գնաց եհան յիւրոց սփիւ-ռիդիցն զանգեղսն և մատոյց եղբօրն իւրոյ և ասէ. զայս աւելորդս ունիմ, դիր 'ի սփիւռիդսդ քո։ Ուրախեալ ըզ-գործս եղբօրն իւրոյ կատարեալ զիւրն եթող։

ԿՐՕՆԱՒՈՐ՝ մի եփեաց հաց, և կամեցաւ կոչել 'ի հաց զծեր մի որ հեռի էր 'ի նմանէ տասն մղոն։ Եւ ապա ասաց. ոչ արարից զնա աշխատ։ Եւ առեալ տարաւ նմա, և եհար զոտն զքարի; և հոսեաց արիւն բազում։ Եւ ասէ ցնա հրեշտակն նորա. մի՛ տրտմիր, զի ամենայն քայլափոխի քո վարձս առցես, և տանիմ ես զարիւնս զայս առաջի այ ընծայ մեծ։ Եւ իբրև չոգաւ առ ծերն, պատմեաց նմա. և յայտնեցաւ բանն, և նախանձեցաւ այլ ոմն զնոյն առնել և տանել հաց ծերոյն։ Եւ եղև զի դիպեցան միմեանց, և ասէ առաջինն. ընդէ՞ր աւեր ըզ-գանձս իմ։ Եւ նա ասէ. և քանի՞ նեղ է ճանապարհն և դուռն՝ ընդ որ դու միայն մտանես։ Եւ երևեալ նո-ցա հրեշտակ տն ասաց. կացդ ձեր հոտ անուշից է տն։

ԱՂԲԱՅՐ ոմն անկաւ 'ի մեղս և պատմեաց ումեմն ծերոց և ասէ. մեղայ. և ոչ կարեմ ապաշխարել, դառ-նամ դարձեալ յաշխարհ։ Եւ ծերն աղաչէր և ասէր.

Եւ նա գնացեալ քակեաց զունկուլս սփրիդացն և բերեալ ետ նմա և ասէ. առ զայս և կատարեա զսփրիդս քո, զի աւելի ունէի զայս։ Եւ այսպէս ուղղեալ զեղբօրն գործ՝ զիւրն խափանեաց երանելին։

.1 Էր ոմն կրօնաւոր, որոյ էր ընկեր ծեր հեռի 'ի նմանէ տասն մղ-ոն։ Արար սա հացս ջերմ և ասէ խորհուրդն. կոչէ զծերն և տամ նմա հաց մի։ Եւ դարձեալ ասէ. մի աշխատեցուցից զնա տասն մղոն, ես տարայց նմա։ Եւ առեալ զհացն գնայր առ ծերն։ Եւ իբրև գնայր յուղին, բախեաց 'ի քարի զոտս իւր և 'ի բաց եհան քարն զմատն ո-տից նորա, և ել 'ի խոցոյն արիւն յոյժ, և սկսաւ ցաւագնել եղբայրն։ Եւ եկեալ հրեշտակ տեառն եկաց 'ի վերայ նորա և ասէ. ընդէ՞ր տրտ-մեալ ես և լաս։ Ասէ ծերն. զոտս իմ հարի և ցաւագնիմ։ Ասէ ցնա հրեշտակն. մի՛ տրտմիր զայդ, զի որքան քայլս փոխեցեր վասն սիրոյ՝ թուեալ են ամենայն և պահի վարձս քեզ առաջի տեառն. և ահա ես տանում զայս արիւն քո և մատուցանեմ ընծայս առաջի այ։ Յայն-ժամ եղբայրն զօրացեալ յարեաւ և գոհանայր զայ. և տարաւ զհացն առ եղբայրն, և պատմեաց նմա զայս ամենայն։ Եւ ահա նախանձեալ ոմն ընդ նա, և տանէր և նա հաց ծերոյն այնորիկ։ Եւ իբրև նա գնայր անտի երբեմն, և սա գնայր, դիպեցան միմեանց 'ի ճանապարհին։ Եւ սկսաւ այն՝ որ նախ սկսաւ տանել և առնել զբարին՝ ասել ցնա. ես գանձ ունէի ծածկեալ, և դու խնդրեցեր բանալ զնա յինէն։ Իսկ նա ասէ. մեր գրեալ իցէ և մրցան նեղ՝ իցէ դուռն այն, զի դու միայն մտցես և զայլ ոք ոչ թողցես մտանել։ Եւ իբրև զայս ասէին ընդ մի-մեանս, երևեցաւ նոցա հրեշտակ տեառն և ասէ ցնոսա. բանակռուել և հակառակել ձեր հոտ անոյշ երևի առաջի այ։

դու միայն մնա 'ի ձեւիդ, և ես ապաշխարեմ ընդ քո։ Եւ յինքն ընկալաւ զմեղսն եղբօրն և ապաշխարեաց վա-սըն նորա. և զկնի սակաւ աւուր թողութիւն արար Ած եղբօրն վասն սիրոյ և աշխատութեան ծերոյն։

ԵՐԲԵՄՆ՝[1] հայրն Պամբով երթայր ճանապարհս ընդ եղբարս 'ի կողմ Եգիպտոսի. և տեսեալ աշխարհա-կանս զի նստէին՝ ասէ ցնոսա. արիք ողջոյն տուք միայ-նակեցացս զի օրհնեսջիք, վասն զի համարձակ ընդ Այ խօսին, և բերանք նոցա սուրբ են։

ԱՍԷԻՆ՝[2] վասն ուրումն ծերոյ՝ եթէ հիւանդացաւ և կամէր ճաշակել սակաւ մի հաց դալար։ Եւ լուեալ ոմն յեղբարցն ճգնաւորաց, յարուցեալ առ զմախաղ իւր և եդ անդ հաց չոր և գնաց յԵգիպտոս, և փոխեալ ըզ-հացն եբեր ծերոյն. և տեսեալ զայն ջերմ և զարմա-ցաւ։ Իսկ ծերն ոչ կամէր ճաշակել ասելով՝ արիւն եղ-բօրն է։ Եւ աղաչեցին զնա ծերքն՝ վասն Այ կեր 'ի հա-ցէդ, զի մի ընդունայն լիցի պատարագ եղբօրն։ Եւ այն-պէս աղաչեցեալ 'ի նոցանէն՝ ճաշակեաց։

ԾԵՐ՝[3] ոմն աղաչէր զերիտասարդ մի բնակել ընդ նմա, և ասէր ցնա երիտասարդն. յետ շաբաթու միոյ գամ։ Եւ գնաց և յամեաց։ Եւ եկն առ ծերն և փորձեաց զնա

[1] Երթայր երբեմն հայրն Պամբոյ ընդ եղբարս 'ի սահմանս Եգիպտոսի, և ետես այրս գեղջուկս նստեալս և ասէ ցնոսա. արիք ողջու-նեցէք զծերսն և օրհնեցարուք 'ի նոցանէ, զի խօսին ընդ Ած, և սուրբ են բերանք նոցա։ Զայս արար վասն սիրելոյ զնոսա, զի օրհնեսցին. քանզի գեղջուկ էին և ոչ խոնարհէին զլուխս իւրեանց, ուսոյց զօգուտն և զշահն նոցա։

[2] Ասէին վասն ծերոյ ուրումն՝ եթէ հիւանդացաւ 'ի Սկիտէ և խնդրէր հաց ջերմ։ Լուաւ զայս ոմն եղբայր, և առեալ զմախաղ իւր եդ 'ի նմա հացս չորացեալս և գնաց յԵգիպտոս և փոխեաց զայն 'ի հացս ջերմ և եբեր ծերոյն։ Իբրև տեսին զայն եղբարքն զի ջերմ էր և զար-մացան յոյժ։ Իսկ ծերն իբրև գիտաց, ոչ կամէր ճաշակել և ասէր. միթէ կերայց զարիւն եղբօր իմոյ։ Իսկ այլք ասէին. կեր, հայր, զի մի զուր կորիցէ աշխատութիւն եղբօրն։ Յայնժամ ճաշակեաց ծերն մինչ աղաչեցին եղբարքն զնա, և օրհնեաց զնա 'ի բոլոր սրտէ իւրմէ։

[3] Եղբարք երկուք էին 'ի սենեակս, մինն ծեր էր և միւսն մանուկ. և աղաչէր ծերագոյնն այն զմանուկն, զի կեցցեն 'ի միասին։ Եւ նա ասէր. ես մեղաւոր եմ և ոչ կարեմ կեալ ընդ քեզ, հայր։ Եւ էր ծերն այն այր սուրբ, և ասէր զկրօնաւոր որ ունէր զխորհուրդ պառա-նդկութն. քանզի ոչ է պարտ կրօնաւորի այլ ջան մեծ դնել՝ մինչև սրբել զմիտսն 'ի չարէ անտի և հասանել զբարի, ասէ ցնա մանուկն եղբայր. Թողցես զիս շաբաթ մի և ապա տեսցուք զայդ։ Եւ իբրև լցաւ շաբաթն, գնաց ծերն առ նա։ Իսկ մանուկն կամեցաւ փորձել

Digitized by Google

ասելով՝ անկայ 'ի պոռնկութիւն, հայր։ Եւ ասէ ծերն․ գոյ յոյս ապաշխարողաց, որդեակ․ տեսանեմ ես զկէս մեղացն քոց յիս և ապաշխարեսցուք 'ի միասին։ Եւ ասաց երիտասարդն․ արդ գիտեմ եթէ կարեմք բնակել 'ի միասին։ Եւ կացին 'ի միում խրճթի, և մինչև ցայսօր կոչի խուցն այն 'ի Սկիւթ՝ խուց երկուց եղբարց։

ՈՄՆ[1] 'ի հարանցն խնդրեաց յոյժ տեսանել զամենայն կրօնաւորսն զվախճանեալսն․ և տուաւ նմա տեսանել զամենեսեան 'ի տեղի փառաւոր, և Անտոն ոչ էր ընդ նոսա։ Եւ ասէր․ ուր է Անտոն։ Եւ ասէին ցնա․ առաջի տեառն Այ է տեղի նորա։

ԱՍԷՐ[2] ոմն 'ի ծերոցն՝ թէ յառաջին ժամանակսն յորժամ գային նոր եղբարք յանապատս, դեւք սաստիկ պատերազմէին ընդ նոսա․ և գային կատարեալքն 'ի ծերոցն մխիթարել զնոսա․ և գտանէին զոմանս կապեցեալս 'ի հարուածէ դիւացն և զոմանս կողմնատեալս և զոմանս կարկամեալս 'ի միջացն, և առեալ բերէին զնոսա յեկեղեցին և բժշկէին առժամայն զնոսա։

ԵՐԹԵԱԼ[3] երբեմն եղբարք 'ի լեառն Պատղկասի նստել անդ; և ուսան գործել զկողովնակս հեկս առագաստին և գործէին վարձկանութիւն․ և վասն զի ոչ էին արուեստաւորք, ոչ ոք տայր նոցա գործել։ Երթայր երբեմն առ նոսա ոմն 'ի ծերոցն և ասէ ցնոսա․ ընդէր ոչ

զնա և ասէ․ 'ի փորձութիւն մեծ անկայ ես 'ի չարութս այս, հայր, զի գնացի 'ի գեղ վասն պիտոյից ինչ և անկայ ընդ կնոջ 'ի պոռնկութիւն․ արդ գոյ ինձ յոյս ապաշխարութեան։ Ասէ ծերն․ այո գոյ քեզ ապաշխարութիւն, և ես բարձից զկէս մեղաց քոց։ Ասէ եղբայրն․ արդ կարող եմք կեալ 'ի միասին շնորհօքն Քի։ Եւ բնակեցան 'ի միասին։

1 Ասէին եթէ ծեր ոմն աղաչեաց զԱծ, զի տեսցէ զառաքեալ հարսն, և ետես զնոսա առանց հօրն Անտոնի։ Եւ ասէ ցայն որ եցոյց նմա․ ուր իցէ հայրն Անտոն։ Իսկ նա ասէ ցնա․ հայրն Անտոնիոս անդ է, ուր Աստուած իցէ։

2 Ասաց ծերն․ սովորութիւն էր հարցն մերոց զի երթային 'ի սենեակս նորեկ եղբարցն և տեսանէին թէ որպէս կային իւրաքանչիւրքն 'ի խցի իւրում․ և թէ ումեք 'ի նոցանէ մարտնչէր մարտ 'ի դիւաց և կամ 'ի խորհրդոց իմիք, բերէին զնա յեկեղեցին և դնէին լուացարան և առնէին աղօթս 'ի վերայ տառապելոյն, և լուանային զձեռս ամենայն եղբարքն 'ի լուացարանին և արկանէին զջուր լուացարանին 'ի վերայ նորա, և առժամայն բժշկէր և սրբէր յորմէ տառապեալն էր։

3 Գնացեալ երբեմն եղբարք և նստեալ էին 'ի լեառն Դուալոկայի, և գիտէին գործել թուղթ, և ոչ գնայր արուեստ նոցա, զի ոչ էին անդ գրիչք։ Եւ գնաց առ նոսա ծեր ոմն և ետես զնոսա պարապեալս և ասէ․ ընդէր ոչ աշխատիք։ Եւ նոքա ասեն․ զի գործ մեր ոչ է պիտա-

գործէք։ Իսկ եղբարքն վասն զի երկիւղածք էին, պատասխանի ետուն և ասեն. վասն զի զաւր գործեմք, վասն այնորիկ ոչ տան մեզ ձեռագործ։ Իսկ ծերն գիտէր զոմն գործօղն այ և ասէ ցնոսա. երթայք առ այս անուն ծեր և նա տայ ձեզ գործ. և նոքա երթեալ խընդութեա՝ ետ նոցա գործ։ Իսկ եղբարքն ասացին՝ եթէ ոչ գործեմք ագնիւ։ Եւ ասէ ծերն՝ եթէ հաւատամ յած զի վասն ձերոյ և այլ ես հանեմ։ Եւ սիրով առցեալ յօժարութեցուցանէր առ նոսա գործել։ Հա արդարեւ բռունք յափշտակեն զարքայութիւնն երկնից։

ԵԲԵՐ՝ ոմն ծերոյն կարասի և ասէ. առ զայդ 'ի պէտս քո, զի ծերացար։ Եւ էր ծերն տկարացեալ։ Իսկ ծերն ասաց. դու յետ եօթանասուն ամի եկիր առնուլ զդարմանիչն իմ յինէն. վաթսուն ամ է տկարութեն իմոյ և ոչ ինչ կարօտ եղէ՝ այ պատրաստելով և դարմանելով զքս։ Եւ ոչ առ յանձն զկարասին։

նի, հայր։ Եւ նա ասէ. գնացէք առ այս ոմն ծառայ այ, և նա տացէ ձեզ գործ։ Երբև գնացին նոքա, ծերն խնդութեամբ ետ գործ նոցա, և նոքա ասեն. վատթար է գործ մեր։ Եւ ծերն ասէ. հաւատամ յած զի և այլք կերակրին 'ի գործոյ ձերմէ։ Եւ ուրախութեամբ և յօժարամիտ արար զնոսա 'ի գործ, թէպէտ և նոքա ոչ կամէին գործել։

ι Ծերոյ ումեմն եբեր ոմն ինչս և ասէ. առեալ զայս, հայր, ծախեսցես 'ի պէտս քո, զի յոյժ ծեր և տկար ես դու։ Եւ զի էր ծերն տկար և ախտական յոյժ։ Ասէ ցնա ծերն. վասն այնորիկ եկիր դու առ իս, զի զայն որ կերակրեաց զիս զամս վաթսուն՝ զնա առցես յինէն. զի ահա յայսքան ժամանակս և ոչ միում ումեք յանձնեաց զիս Ած, այլ նա կերակրեաց զիս առատ ողորմութեամբ իւրով։ Եւ զայս ասացեալ՝ ոչ ինչ էառ 'ի նմանէ։ Այսպիսի էին կենցաղք սրբոյն և անուանեցուած կրօնաւորացն։

# ՄՆԱՑՈՐԴՔ

## յերկրորդ թարգմանութեան

ԱՍԱՑ հայրն Անտոնիոս. ես ոչ երկնչիմ յԱյ, այլ սիրեմ զնա, զի սէր արտաքս վարէ զերկիւղ։

ԱՍԱՑ հայրն Ագաթոն. ոչ երբէք ննջեցի ունելով ոխ զումեքէ, և ոչ թողի զոք ննջել թէ ունէր խէթ զինէն։ Այն ինքն ասէ. ոչ երբէք ետու ես սէր. զի ոչ եթէ տալ սէր և առնուլ՝ այն սէր թուէր ինձ կամ շահ եղբօրն զայն համարեալ կարծեի, այլ կեանք եղբօրն է ինձ պտուղ ընտիր։

ԱՍԷՐ հայրն Յովսէփ՝ եթէ ասէին եղբարքն եթէ մեք ոչ գիտեմք զգործ սիրոյն. քանզի եմուտ եղբայր մին առ հայրն Ագաթոն և ետես զձեւիչն և գովեաց զնա, և ոչ եթող զնա ծերն ելանել մինչև տարաւ ընդ ինքն զձեւիչն։

ԱՍԷՐ հայրն Ագաթոն. եթէ կարողութիւն էր և գտանէի գուղի անկեալ, տայի նմա զմարմին իմ և առնուի ես զնորայն յօժարութեամբ. և այս է չափ սիրոյն։

ԱՍԷԻՆ վասն նորին՝ եթէ գնաց երբեմն 'ի քաղաք վաճառել զձեռագործ իւր, և գտաւ 'ի փողոցի անդ անկեալ հիւանդ մին օտար՝ որ ոչ զոք ունէր տեսուչ. և կալեալ ծերն 'ի վարձու տուն՝ եդ զնա անդ, և սպասաւորէր նմա իւրովին ծախիւք ամիսս չորս, մինչև ողջացաւ տկարն, և ապա գնաց ծերն 'ի սենեակ իւր։

ՀԱՅՐՆ Ամմոն Նիտրեցի գնացեալ առ հայրն Անտոն, և իբրև եհաս անդ՝ ասէ ցնա. ես առաւել աշխատութիւն ունիմ յանձին, և որպէս անուն քո մեծացաւ առ մարդիկ։ Ասէ Անտոնիոս. վասն այսորիկ եղև, զի ես զԱծ առաւել սիրեմ քան դու։

Digitized by Google

ԾԵՐ ոմն էր 'ի սկետեակս, որ կոչէր Ագաթոն. և եթէ ոք գայր տանել զնա 'ի գործ, ուրախութեամբ երթայր ընդ նմա, և այսպէս ասէր. այսօր ընդ ա̃յ հանդերձեալ եմ մշակել վասն անձին իմոյ, զի այս է սէր նորա։

ԱՍԱՑ հայրն Եսայիաս. սէր պարապեալ է ընդ տեառն անպակասելի գոհութեամբ, և զգոհութիւն մեր ընդունի ա̃ծ. և այս է նշան հանգստեան և անախտութեան։

ԵՂԱՆԷՐ երբեմն 'ի Սկիտոյ հայրն Յովհաննէս կարճիկն և այլք ընդ նմա. և 'ի գիշերի մոլորեալ 'ի ճանապարհին առաջնորդ նոցա, ասեն եղբարքն ցհայրն Յովհաննէս. զինչ արասցուք զի մոլորեալ է առաջնորդն մեր։ Ասէ ծերն. թէ յանդիմանեսցուք զնա՝ ամաչէ և տրտմի, այլ ահա եմ զիս տկար իբրև թէ ոչ կարեմ գնալ, և կամք աստ մինչև ցառաւօտն։ Եւ արարին այնպէս և կացին մինչև ցառաւօտն և ոչ գայթակղեցին զեղբայրն։

ԱՍԱՑ հայրն Յովհաննէս կարճահասակն. զոր օրինակ ոչ կարելի է շինել տուն 'ի վերուստ 'ի վայր՝ այլ 'ի հիմանէ սկսեալ, այսպէս և տուն հոգւոյ հիմն շինութեան սէր ընկերին իցէ՝ զի նախ զնա շահեսցես, վասն զի 'ի սէր եղբօրն կախեալ կան ա̃մ պատուիրանք Քի։

ԱՍԷՐ հայրն Պետրէ վասն հօրն Մակարայ՝ եթէ գնաց երբեմն առ միայնակեաց ոմն և գտանէ զնա զի հիւանդ էր։ Եւ իբրև ոչ եգիտ կերակուր ինչ 'ի տան նորա, եհարց ցնա և ասէ. զինչ ճաշակես և կամ զինչ բերից քեզ։ Իսկ նա խնդրեաց նաստիփս։ Եւ գնաց ծերն յԱղեքսանդրիա բերել զայն նմա, և ոչ ումեք իմացոյց զայն։

ԾԵՐ ոմն էր յԵգիպտոս, որ պատիւ և անուն մեծ ունէր անդ, մինչև գնաց անդր հայրն Պիմէն 'ի Սկիտայ. և թողեալ մարդիկ երկրին այնորիկ զծերն զայն, եկին առ հայրն Պիմէն։ Իսկ հայրն Պիմէն դժուարեալ յոյժ ընդ այս, ասէ ցեղբայր իւր. զինչ արասցուք ծերոյն այն մեծի, զի ցաւս դիպեցին մեզ մարդիկ, զի թողեալ զծերն դիմեցին 'ի մեզ. և արդ իւ կարասցուք բժշկել զմիտս ծերոյն։ Եւ ասէ ցնա. պատրաստեցէք մեզ սակաւ ինչ կերակուր և առէք գինի ամանով և գնասցուք առ նա և ճաշակեսցուք ընդ նմա, գուցէ այսու տեսակաւ բժշկեսցուք զմիտս նորա։ Առին զկերակուրն և զքսեստ գինւոյն ընդ իւրեանս և գնացին առ

ծերոն։ Եւ իբրեւ բախեցին զդուռն, ել աշակերտ նորա եւ ասէ. ուստի էք։ Ասեն ցնա. ասասցես ծերոյն՝ եթէ Պիմէն իցէ, եւ եկեալ է զի օրհնեսցի 'ի քէն։ Եւ գնաց ասաց զայն ծերոյն, եւ նա պատուիրեաց եւ ասէ. գնա-ցէք զի անպարապ եմ ես։ Իսկ նոքա կացեալ 'ի տօթին՝ ասեն. ոչ գնասցուք աստի թէ ոչ տեսցուք զծերն։ Իբ-րեւ ետես զխոնարհութիւն եւ զհամբերութիւն նոցա ծերն, գթացաւ եւ եբաց նոցա զդուռն, եւ մտեալ 'ի ներքս ա-ճաշեցին սէր 'ի միասին։ Եւ իբրեւ ուտէին նոքա, ասէ ծերն. ճշմարիտ ոչ որպէս լուեալ զձէնդ զայն միայն, այլ առաւել տեսի զգործս եւ զսէր եւ զխոնարհութիւն ձեր։ Եւ եղեն սիրելիք միմեանց։

ԱՍԱՑ հայրն Պիմէն՝ եթէ գնայր եղբայր ոք առ հայրն Յովհաննէս կարճն, եւ գործով ցուցանէր նմա սէր ա-ռաքելոյն որ ասէ՝ եթէ սէր երկայնամիտ է եւ քաղցր. զի աւելի սէր ոչ ոք ունի քան զայս, եթէ դնէ զանձն իւր վասն բարեկամաց իւրոց։ Եւ դարձեալ այն՝ որ լսէ բան ինչ չար զիւրմէ, եւ ինքն փոխանակ ոչ ասէ չար։ Եւ դարձեալ այն՝ եթէ զրկեսցի ինչ, եւ փոխանակ ոչ զրկէ։

ԱՍԷԻՆ վասն հօրն Պիմէնի՝ եթէ բնակէր երբեմն 'ի Սկիտէ ընդ երկուս աշակերտս իւր եւ երկուց եղբարց, եւ փոքր այն մանուկ նեղէր զնոսա։ Ասէ հայրն Պիմէն ցմիւս եղբայր իւր. զինչ արասցուք մանկանս այսորիկ զի լուծէ զմեզ, արի գնասցուք աստի։ Եւ ելին գնալ եւ թողին զնա անդ. Իսկ նա իբրեւ ետես զի յամեցին, ել եւ ետես զնոսա 'ի հեռաստանէ զի գնային. սկսաւ ձայնել եւ ընթանալ զկնի նոցա։ Ասէ Պիմէն ցեղբայր իւր. մնասցուք մանկանն։ Եւ իբրեւ եկն առ նոսա, ա-սէ. ուր գնայք դուք եւ թողէք զիս միայն։ Ասէ ծերն. զի տրտմեցուցանես զմեզ, թողաք զքեզ եւ գնամք։ Եւ նա ասէ. գնամք 'ի միասին ուր եւ կամիք։ Իբրեւ ետես ծերն զանմեղութիւն նորա, ասէ ցեղբայր իւր. եկ դարձ-ցուք 'ի սենեակ մեր, զի ոչ կամաւ առնէ սա, այլ դեւն տայ առնել զի տրտմեցուսցէ զմեզ։ Եւ դարձան 'ի տուն իւրեանց։

ԳՆԱՑԻՆ երբեմն սարակինոսք 'ի սենեակ հօրն Սի-սոյի եւ կողոպտեցին զնա եւ զեղբայր նորա. իսկ ծերքն երկոքեան եղբարքն գնացին յանապատ թէ գտցեն կե-րակուր ինչ։ Եւ մինչդեռ գնային, գտանէ ծերն աղտուր

ըղձում և մանրեաց զնա և եգիտ 'ի նմա երկու հատ գա-րւոյ, զմինն եկեր և զմիւսն ունէր 'ի ձեռին իւրում: Եկն եղբայր իւր և ետես զնա զի ծամէր և ասէ. այս է սէր քո, եղբայր, զի գտեր ինչ և ճաշակեցեր միայն, և զիս ոչ կոչեցեր: Ասէ ծերն. ոչ արարի զայն չար, ահա զբա-ժինն քո ունիմ 'ի ձեռին իմում, զի երկու հատ միայն գտի: Ասէ եղբայրն. և զինչ պիտոյ էր յայտնանէ բա-ժինն, այլ քանզի ճշմարտիւ սիրոյն ծնունդ է այդ:

ԱՍԵՒՆ վասն հօրն Միլովանեի՝ եթէ նստաւ 'ի սե-նեկի աւուրս բազում և ոչ ունէր կերակուրս, բայց միայն սիսեռն սակաւ, և գործէր մաղս: Եւ ահա եկն առ նա ոմն Ագիպատէ և ունէր ընդ ինքեան յաւանակ բարձեալ հաց և բախեաց զդուռն, և արձակեալ զբեռն եւտ ցծերն. և առեալ զհացն օրհնէր և փառաւորէր զԱծ, և զյաւանակին մաղիւքն իւր բարձեալ առաքեաց զնա:

ՊԱՏՄԵԱՑ մեզ զայս ոմն, եթէ էր ոմն մագիստրոս մանուկ հասակաւ և գեղեցիկ տեսլեամբ, որ ընթանայր 'ի գործ թագաւորի: Նա ունէր 'ի քաղաքի ուրեմն բա-րեկամ հաւատարիմ և միամիտ և հարուստ, քանզի յերևելի արանց էր: Եւ յորժամ գայր անդր, բազում հանգուցանէր զնա 'ի տան իւրում, և սպասէին ինքն և կինն իւր: Եւ եղև յազդմանէ չարին զի տռփացաւ 'ի մագիստրոսն կինն նորա, և ոչ գիտէր այր նորա. և պատ-կառէր կինն, վասն որոյ և ոչ ինչ երևեցոյց յայտնանէ, բայց 'ի սիրտ նորա բորբոքէր հուր տռփութեան: Եւ իբրև գնաց մանուկն զճանապարհ իւր, կինն 'ի սաստկութէ ցանկութեան հիւանդացեալ հաշէր, և անկաւ յանկողին թմրեալ: Իսկ այր նորա կոչեալ զճարտարս բժշկաց ցու-ցանէր. և նոքա իբրև տեսին՝ ասեն. սա 'ի մարմնի ցաւս ոչ ունի, այլ թէ ինչ հիւանդութիւն 'ի ծածուկ ունի յանձին՝ ոչ գիտեմք: Եւ մերձ նստեալ այր նորա, բա-զում հեկեկանօք աղաչէր զնա ասել թէ զինչ վշտա-նայ: Իսկ նա երկնչէր և ամաչէր ասել, բայց յետոյ խոս-տովանեցաւ և ասէ. գիտես, տէր իմ, զի դու վասն ան-բծութեան սրտի քո ժողովես միշտ աստ զերիտասարդս գե-ղեցիկս, և ես կին եմ տկար բնութեամբ և մանուկ հասա-կաւ և մտանիմ 'ի կերպարանս նոցա: Եւ ահա վասն իշխանին այն մանկան խորհուրդք չար 'ի սիրտ իմ. որով կիզեալ հիւանդացայ և կամ 'ի մահիճս թմրեալ: Իսկ-

Digitized by Google

րև լուաւ զայս այրն՝ լաւեաց։ Իսկ զկնի աւուրց ինչ եկն դարձեալ անդր մագիստրոսն այն, և գնաց մարդն ընդդէմ նորա։ Եւ իբրև ետես՝ ասէ. դու գիտես, տէր իմ իշխան, թէ որպէս սիրէի զքեզ, և էաք հացակից քո ես և կին իմ. և ահա անկաւ խորհուրդ չար 'ի սիրտ կնոջ իմոյ տռփութեան քո, և ահա անկեալ դնի։ Իսկ նա իբրև լուաւ, տրտմեցաւ յոյժ վասն այնորիկ, որպէս և էր նա անպարտ 'ի խորհրդոցն, և ասէ ցնա. մի՛ տրտմիր, Տր բազումողորմ է։ Եւ գնաց մանուկն և զերծեաց զմազ և զմօրուս և զյօնս իւր, և հերձոտեալ վիրաւորեաց զդէմս և զամենայն զլուխ իւր, և եղև իբրև զզողի ծերացեալ գեղեցիկ մանուկն այն. և զգեցեալ քուրձ ժահահոտ և աղտեղեալ՝ գնաց 'ի տուն ուր դնէր կինն, և այրն իւր նստէր մերձ 'ի նա. և բացեալ զգլուխ իւր ցուցանէր զխոցոտեալ և զաղտեղեալ զդէմս իւր և ասէր. ահա, մայր, այսպէս արար զիս Տր։ Իսկ իբրև ետես կինն զանբաւ գեղեցկութիւն մանկանն այնպէս տգեղեալ և աղտեղեալ և սևացեալ, զարմացաւ յոյժ։ Եւ տեսեալ Տր զգործ և զխոնարհութիւն մանկանն, էառ 'ի սրտէ կնոջն զպատերազմն, և ողջացաւ առժամայն։ Եւ ասէ իշխանն առանձին ցայր նորա. ահա շնորհօքն Այ ողջացաւ կին քո, և յայսմհետէ ոչ տեսցէ զերեսս իմ։ Ահա այս է գնել զանձն վասն սիրելւոյն, և առնել բարի փոխանակ բարւոյ։

ԵՂԲԱՐՔ երկու ըմբռնեցան յաղագս հաւատոց և կացին 'ի վկայութի վասն Քի և տանջեցան միանգամ և արկան 'ի բանտ. բայց ունէին նոքա առ միմեանս տրտմութի։ Եւ իբրև արգելան 'ի բանտի, մինն 'ի նոցանէ եդ ծունր միւսոյն և ասէ. յայգուց զխաղելոց է մեզ վախճան, թողցուք մեք զթշնամութիւն և զնախանձ մեր։ Իսկ նա ոչ կամեցաւ առնել զայս։ Եւ յերկրորդ աւուր ածեալ եղեն 'ի դատել և տանջեցան սաստիկ. իսկ որ ոչն եթող զոխս և ոչ հաշտեցաւ ընդ եղբաւրն, յառաջին տանջանսն յաղթեցաւ և անկաւ 'ի հաւատոցն։ Ասէ ցնա իշխանն. և ընդէր երեկ ոչ լուար ինձ և այսչափ հարուածեցար։ Իսկ նա ասէ. վասն այսորիկ զի ոխս պահեցի եղբաւրն և ոչ հաշտեցայ ընդ նմա, պակասեցայ ես յօգնականութենէն Այ և անկայ 'ի հաւատոյ։ Եւ միւսն այն եղբայրք որ խոնարհեցաւ 'ի հաշ-

տուէի, արժանի եղև վկայական արեան և մահուան վասն Քրիստոսի։ Նա որ ոչ սիրէ զեղբայր իւր և նենգութեամբ կայ, մերժէ զնա Ած յօգնականութենէն իւր։

Էր ոմն Սեկրիստանէ ՚ի քաղաքի ուրեմն, և ոմն մի քաղաքացի եղ առ նա ՚ի պահս հինգ հարիւր դահեկան ծրարեալ և ասէ. պահեսցես զայս և սակաւ սակաւ տացես ինձ որչափ պիտոյասցի։ Իսկ ոչ ոք էր անդ յորժամ ետ զայն ՚ի պահս, այլ մի ոմն յիշխանաց քաղաքին ՚ի հեռուստ ետես զնոսա և լսէր զոր ասէրն մինչ տայր ըզդահեկանն, և նոքա զնա ոչ տեսանէին։ Իբրև անցին ՚ի վերայ սակաւ աւուրս, պիտոյ եղև ինչ տեառն ոսկւոյն, և ասէ ցՍեկրիստանէն տուր ինձ յոսկւոյ իմոյ քսան դահեկանս, զի պիտոյ է ինձ։ Իսկ նա վստահացեալ էր զի ոչ ոք տեսեալ էր և ոչ ունէր վկայ, ուրացաւ և ասէ. յորո՞յ ոսկւոյ ասես, զի ոչ գիտեմ և ոչ լըւայ երբէք ՚ի քէն և ոչ ինչ ետուր ցիս երբէք։ Եւ ոչ ինչ կարաց այրն այն առնել նմա։ Այլ իբրև ել անտի տրտմեալ, դիպաւ նմա իշխանն այն և ասէ ցնա. զի՞ տրտմեալ ես այդպէս։ Եւ ասաց այրն զպատճառ տրտմելոյն նմա։ Ասէ ցնա իշխանն. ստուգապէս ետո՞ւր նմա զդահեկանսն։ Եւ նա ասէ. ճշմարիտ ետու։ Իսկ իշխանն ասէ. ասասցես նմա՝ եկեալ երդուիցես և հաւատացուցես զիս ՚ի սուրբն Անդրէաս, և բաւական է ինձ։ Որ էր տեղին այն մերձ ՚ի տաճար Անդրէի առաքելոյն։ Գնաց այրն և ասաց զայն. և նա մտեալ ՚ի տաճարն զի երդուիցէ, ասէ իշխանն ցծառայն իւր. զոր ինչ արարից ես, մի երկիցես և մի ասասցես ինչ։ Եւ մտեալ իշխանն մերկ ՚ի տաճարն, սկսաւ մռնչել իբրև զդիւահար և ձայնէր սաստկապէս և մռնչէր. և կալեալ զայրն մինչ երդնուլ կամէր, և գոչէր առաջի բազմութեանն և ասէր. սուրբն Անդրէաս առաքեալ ասէ՝ տեսէք զչար այրս զայս, որ ունի զպահս հինգ հարիւր դահեկանն և եկեալ է սուտ երդնուլ աստ ՚ի վերայ իմ։ Եւ կալեալ զնա խեղդէր և ասէր. սուրբն Անդրէաս ասէ՝ տուր ՚ի սա զգանձ իւր։ Իսկ Սեկրիստանէն այն սոսկացեալ երկեաւ յոյժ, զի էր այրն զօրաւոր։ Եւ խոստովանեալ ասէ. ես ունիմ ըզդահեկանն և տամ այժմ, թոյլ տուր։ Եւ թոյլ ետ։ Յայնժամ բերեալ ետ ցտէր իւր զայն։ Եւ ասէ դիւահարն ցտէր ոսկւոյն. զիր վեց դահեկան ՚ի վերայ սեղանոյն՝

սուրբն Եղիեաս ասէ: Այլ նա եդ ուրախութիւն, և առ-նուալ զինչս իւր փնաց: Իսկ իշխանն զգեցեալ զհան-դերձս իւր շրջէր 'ի քաղաքին պայծառապէս. և եկեալ 'ի տեղին ուր էր Մ`եկրիստոնէն այն, և սկսաւ Մ`եկրիս-տոնէն նայել 'ի նա. Իսկ իշխանն ասէ ցնա, զի՞ նայիս ընդ իս, եղբայր. Հաւատա ինձ, եթէ շնորհօքն այ դիւա-հար ոչ եմ. այլ մինչ ես նա 'ի քեղ զանկին, ես տեսի աչօք իմովք. և մինչ ուրախայիր դու և երգմնուլ կամէիր, հնարեցայ զայն՝ զի մի ասիցես ցիս թէ դու միայն ոչ հա-ւատարիմ ես, և արարի զի մի կորիցէ հոգի քո և մի կորիցէ անիրաւութիւն ինչք նորա: Հա ա եցոյց գոր-ծովք թէ զինչ է դնել զանձն վասն ընկերին, զի վասն շահու այլոց մոռացաւ զպատուականութիւն իւր 'ի փառս այ:

ԱՐՕՆԱԽՈՐ ոմն ճգնաւոր յոյժ և ծանաւէր ունէր բա-րեկամ միայնակեաց յանապատ, և վախճանեցաւ միայ-նակեացն այն. և մտեալ բարեկամն իւր 'ի սենեակ նո-րա և գտաւ յիւրումն դահեկանս, և սկսաւ տրտմել և լալ, և երկնչէր մի գուցէ պակասեսցի միայնակեացն տա-ռապանքն աստուծոյ յաղթութեամբն այ: Այլ իբրև աղաչեաց յոյժ վասն այսորիկ զայէր, ետես հրեշտակ տեսանէր որ ասէր ցնա. ընդէ՞ր ցաւագնիս և հոգաս վասն միայնա-կեցին այսորիկ. զի որ կամի զմարդասիրութիւն, յամ-յանձնեսցէ զնա. զի թէ ամենայն աշխարհ աւելի էին, ուր երևէր մարդասիրութիւն այ: Ուստի հաւատաց եղ-բայրն թէ արար ողորմութիւն ընդ միայնակեացն այն, և գոհանայր զայ:

ԾԵՐ ոմն առաքեաց զաշակերտ իւր յԱղեքսանդրիա գն-ել նմա ուղտ զի տարցեն զսիրելուն նոցա յԱղեքսանդրիա: Այլ իբրև եղբայրն եբեր զուղտն 'ի Սկիւռէ, ետես զնա այլ եղբայր և ասէ. թէ գիտացեալ էր իմ զգնալ քո, եկեալ էի և ես ընդ քեզ, զի և ինձ պիտոյ էր ուղտ: Գնաց եղբայրն և պատմեաց զայս ծերոյն: Ասէ ծերն. գնացեալ տացես 'ի նա զուղտն և ասասցես ցնա. գործ մեր ոչ է պատրաստ, տար վաճառեա զգործ քո, և մինչ դարձցես՝ ընդ քեզ բեր զուղտն զի տարցուք և մեք զմեր ձեռագործ: Այլ տարեալ եղբայրն ետ ցնա զուղտն, և բարձեալ զփորիդոն իւր տարաւ յԱղեքսանդրիա. և զկնի վաճառելոյն եբեր զկնի իւր զուղտն և ետ ցծերն և ա-ռէ. Թողութիւն արա ինձ, զի բազում սէրն քո երբարձ

Digitized by Google

յանձին զպտուղ իմ, զի զանհամ անպտղութիւնն իմ եբարձ և զպտուղ համով հաստատեաց ։

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց ծերոյն և ասէ . ընդէ՞ր, հայր, բազումք արդեօք աշխատին 'ի կրօնաւորութեան, և ոչ առնուն շնորհս իբրև առաջինն հարքն ։ Ասէ ծերն . յայնժամ սէր էր 'ի նոսա և սիրով շահէին զընկերսն և առնէին 'ի վեր . իսկ արդ ցրտացեալ սէր 'ի վայր հարկանեն զընկերսն, և վասն այնորիկ շնորհս ոչ առնուն ։

ԱՍԱՑ ծերն . ոչ երբէք խնդրեաց սիրտ իմ զպարծ շահու իմոյ՝ յորում վնասէր եղբայրն, զի շահ եղբօրն պտուղ հոգւոյ իմոյ համարեալ է ինձ ։

ԱԳՆՈՒԻԹՈՍ ոմն ծեր եգիտ զայր ոմն զիւահար, որ էր կարկամեալ և ոչ կարէր խօսել . և վստահացեալ 'ի սէրն Այ̄ և խնդրեաց աղօթիւք 'ի Տեառնէ, որպէս զի զացցէ 'ի նա դեւն, և ազատեսցի դիւահարն այն ։ Եւ լուաւ Տր̄ աղօթից նորա, և եկն 'ի նա դեւն և ծանրացաւ 'ի դիւէն ծերն . յայնժամ յաւել 'ի պահս և յաղօթս և 'ի կրօնաւորութիւն յոյժ ։ Եւ վասն սիրոյն զոր ունէր առ Տր̄ և առ ընկերսն, 'ի սակաւ աւուրս հալածեաց զդեւն 'ի նմանէ ։

ԵՐԿՈՒ ծերք բնակէին 'ի միասին բազում ամս, և ոչ երբէք կռուեալ էին ընդ միմեանս ։ Ի միում աւուր ասէ միւսն ցմիւսն . արասցուք և մեք կռիւ ընդ միմեանս որպէս զմարդիկ ։ Իսկ նա ասէ . ոչ գիտեմ թէ որպէս լինիցի կռիւ ։ Իսկ նա ասէ . ահա ես դնեմ աղիւս 'ի մէջի, և ես ասեմ՝ եթէ իմ է սա, և դու ասասցես՝ ոչ, այլ իմ իցէ, և յայսմանէ սկսանի շփոթ և կռիւ ։ Եւ առեալ զաղիւսն կացոյց եդ 'ի մէջի, և ասէ միւսն՝ այս իմ է, իսկ երկրորդն ասէ՝ ոչ, այլ իմ է . և նա ասէ բարկութեա՞մբ՝ ոչ, այլ իմ է . իսկ երկրորդն ասէ հեզութեա՞մբ, եթէ քո իցէ, առ և գնա առաջի ։ Եւ ոչ կարացին կռուել ընդ միմեանս, և այնպէս մեկնեցան և ոչ շփոթեցան, զի յընկերսիրութեան սերտեալք էին, և խաղաղասէր սովորեալք՝ ողորմածքն եւս ոչ կարացին կռուոյն տեսել առ 'ի ճանաչել զնորա զխարդախն և զղջացան ։

ՈՄՆ 'ի հարանցն գնաց 'ի քաղաքն վաճառել զձեռագործ իւր, և եգիտ աղքատ մի մերկ, և մերկացեալ ըզհանդերձսն իւր զգեցոյց նմա . իսկ աղքատն այն առեալ վաճառեաց զայն ։ Իբրև գիտաց ծերն զվաճառել հանդերձին իւրոյ, տրտմեցաւ և զղջացաւ ընդ առնելն . Իսկ

'ի գիշերի 'ի տեսլեանն երևեցաւ նմա Տէր և զգեցեալ էր զպատմուճան նորա, և ասէ ցծերն. մի՛ տրտմիր, ահա ես զգեցեալ եմ զհանդերձ քո զոր ետուր ինձ: Եւ մխիթարեալ ծերոյն փառաւոր առնէր զա̃ծ:

ԱՍԱՑ ծերն. ոչ է պարտ մեզ բաժանել յանձնէ զընկերն, այլ խնդալ ընդ խնդութիւն և տրտմել ընդ տրտմութիւն նորա և սպասել որպէս անձին իւրոյ. իսկ եթէ տկարասցի, առնել պարտ է ըստ գրեցելոյն՝ եթէ մի մարմին եմք 'ի Տէր, և թէ հաւատացելոցն ամենեցուն էր սիրտ և միտք և խնդիր մի և հասարակաց:

ԵՂԲԱՐՔ երկու բնակէին 'ի միասին, մինն արգելական և միւսն առնէր սպասաւորութիւն երկոցունցն: Եղև երբեմն զի տարաւ եղբայրն վաճառել զձեռագործ երկոցունցն, և եբեր զգինն յոյժ սակաւ. և արար զայս բազում անգամ, մինչև խորհեցաւ հանգարտեալն եղբայր և ասէ. կամ ծախէ զայն չարաչար և կամ խաբէ ոք զնա 'ի վաճառելն, գնացեալ տեսից զայս: Եւ յարեաւ հետևեցաւ զկնի նորա 'ի ծածուկ. և գնացեալ եղբայրն վաճառեաց զգործն և դարձաւ եմուտ 'ի տեղի ուր ոչ էր պարտ: Եւ իբրև երևեցան միմեանց, արգելականն այն ձևացոյց զինքն թէ և ես արարի այդպէս: Եւ իբրև եկին 'ի քաղաքէն 'ի միասին, անկաւ առ ոտս անկելոյն այն որ ոչ անկեալն էր և խնդրէր թողութիւն. զայս արար բազում անգամ, և զյանցանս եղբօրն յանձն կրէր: Եւ իբրև հանդերձեալ էր ելանել յաշխարհէ նա որ արգելականն էր՝ ասէ ցանկեալն եղբայր. անպարտ էի ես 'ի մեղացն այնորիկ վասն որոյ ըզթողութիւն խնդրէի 'ի քէն. այլ վասն այսորիկ առնէի, զի թերևս դու ապաշխարեսցես. արդ աղօթեա վասն իմ, և որչափ կար է քո՝ փախիր 'ի մեղաց, զի և դու փրկեա ելանելոց ես: Իսկ եղբայրն յաւել 'ի ճգնութիւն և եղև հաճոյ Այ̃:

ՊԱՐԶԵԱԼ էին երկու եղբարք կրօնաւորք, և մինն մերկացեալ զզգեստ կրօնաւորի և եղև զաւեհիկ, և միւսոյն աղաչեաց ոչ առնել զայն վասն նորա: Եւ համբերութեամբ միոյ եղբօրն գթացաւ Տէր և 'ի միւսն, և դարձան 'ի սենեակս իւրեանց և էին 'ի մեծի ճգնութեան:

ԵՂԲԱՅՐ ոմն եհարց զծերն և ասէ. ընդէր, հայր, յորժամ կատարեմ զաղօթս իմ, է երբեմն զի անկիմ

և է երբեմն զի ոչ ունիմ յօժարութիւն և զեղջ 'ի մտի։ Ասէ ծերն. և ուստի՞ երևի թէ ունիցի մարդ զսէրն ա̃յ, քանզի սէրն ա̃յ բերէ զեղջ։

ԵՂԲԱՅՐ ոմն գնաց յԵգիպտոս գնել վուշ, և դիպեցաւ գնել յայրւոյ կնոջէ. և իբրև տայր յեղբայրն զվուշն այրին այն, յոգւոց եհան և ասէ ցնա. առաքեաց ա̃ծ զքեզ, եղբայր, կերակրել զեղբարս քո զորբսն իմ։ Իբրև լուաւ զայս եղբայրն, ուրախ եղև և կրկին ետ զգինն վշոյն, և գոհանայր զա̃յ վասն յայտնելոյ նմա զորբսն՝ որոց արժանացաւ տալ զպէտսն կարօտելոց եղբարց։

ՍԻՄՈՆ ոմն գնայր զճանապարհ իւր, և եգիտ կրօնաւոր ոմն զի նստէր 'ի սենեկի. և սկսաւ մխմտան կալ յաղօթս վասն ծերոյն և ասէր. ա̃ծ, ողորմեաց աղքատիս և խոնարհիս այսորիկ. զի ոչ ճանաչէր զնա թէ ով իցէ։ Եւ իբրև դարձաւ անդրէն ընդ այն, արար դարձեալ այնպէս, և ողջունեաց առաժամայն ծերն։ Իսկ ծերն ասէր զայս առ եկեալսն առ նա՝ եթէ ոք գան առ ծերսն և աղօթեն վասն նոցա և ասեն, թէ տէր պահեսցէ ըզձեզ վասն մեր մեղաւորացս, նոքա վարձս մեծամեծս առցեն։

Ասաց ծերն. մի պահանջեր սէր ընդ սիրոյ ընկերին, զի շփոթեսցի մարդ եթէ ոք ոչ տացէ զփոխարէն. այլ դու ցոյց զսէր յընկերն և հանգիցես, և այսպէս ձգեսցես զընկերն 'ի սէր քո։

ՊԱՐԶԵԱԼ ասէ. տկարանալ սիրոյ յեղբօրէն յայտցանէ լինի, մի զի ընդունիցի վասն նոցա զկերակարծելն խորհուրդս, և երկրորդ զի թէ հաւատասցէ զկամս սրտի իւրոյ և հաւանեսցի կամաց իւրոց, ապա ոչ կարէ հաւատացուցանել զխորհուրդ իւր մտաց նորա։ Արդ եթէ կամիս զի ամենայնի օգնական ունիցիս զՏ̃ր, մի փառահանար 'ի կարծիս մտաց քոց, այլ փութա 'ի բալոր անձնէ քումմէ, որպէս զի խոնարհեսցիս եղբօր քո և հատցես 'ի քէն զկամս քո, այսպէս կեցցես զօրութ̃ն Տ̃ռն։

ՊԱՐԶԵԱԼ ասէ. որ ըստ ա̃յ իցէ սէր, յոյժ վերագոյն է որ առ միմեանս քան զբնութեամբն սէր որ առ մարմնաւոր ազգայինս է. քանզի և մինչ ա̃ծ սէր կոչեցեալ է։

Digitized by Google

# ՎԱՍՆ ՀՈԳԵՏԵՍ

## ●. ԵՒ ՆՇԱՆԱԶԳԵԱՑ ՀԱՐՑՆ

ԵՂԲԱՐՑ[1] ոմանց գիպեցաւ նեղութիւն 'ի տեղւոջ իւրեանց. և կամեցեալ թողուլ զտեղին չոգան առ Հայրն Ամոն, և ահա ծերն նաւէր: Տեսեալ զնոսա յեզր գետոյն զի երթային զճանապարհն, ասէ ցնաւորդսն. Հանէք զիս 'ի ցամաքն: Եւ կոչեցեալ զնոսա զերկոսեան ասէ ցնոսա. ես եմ Ամոն՝ առ որ դուքն կամիք երթալ: Եւ մխիթարեալ զսիրտս նոցա՝ դարձեալ ետ դառնալ 'ի տեղին իւրեանց. վասն զի ոչ ունէին ինչ վնաս հոգւոյ, այլ նեղութի մարդկեղէնս:

ԱՍԷՐ[2] երբեմն Հայրն Դանիէլ՝ թէ պատմեաց մեզ Հայրն Արսէն՝ եթէ էր ոմն 'ի ծերոցն որ նստէր 'ի տան իւրում և լուաւ ձայն որ ասէր. եկ արտաքս, և ցուցից քեզ զգործս մարդկան: Եւ ելեալ նորա, առեալ տարաւ զնա 'ի տեղի ուրեմն և եցոյց նմա մարդ մի զի կայր յոտն և հանէր ջուր 'ի ջրհորոյն և արկանէր յորդ ծակ, և իջանէր ջուրքն դարձեալ 'ի ջրհորն: Եւ յառաջ մատուցեալ սակաւիկ մի՝ եցոյց նմա եթովպացի զոմն զի հատա

[1] ԵՂԲԱՐՑ ոմանց պատահեալ սրտմտութի ինչ 'ի տեղի իւրեանց, և կամեցան թողուլ զտեղին զայն, և թողին և գնացին առ Հայրն Ամոնաս: Իսկ ծերն յանդի գետայն էր. և տեսեալ զնոսա զի գնային յայնկոյս գետոյն, և ասէ ցնաւավարսն. հանէք զիս յայնկոյս: Եւ եկ առ եղբարսն և ասէ ցնոսա. ես եմ Ամոնաս զոր խնդրէք տեսանել: Եւ ուսոյց զնոսա և մխիթարեաց և հաւատացոյց դառնալ 'ի տեղիս իւրեանց. զի ոչ էր գործն այն վնաս հոգւոյ, այլ տրտմութիւն ինչ մարմնոյ:

[2] Ասաց Հայրն Դանիէլ՝ եթէ պատմէր մեզ Հայրն Արսէնիոս իբրև զայլմէ, այլ ինքն էր որ տեսեալ զայս, եթէ նստէր երբեմն ծերն 'ի սենեկի իւրում, և եկն առ նա ձայն որ ասէր. եկ զկնի իմ և ցուցից քեզ զգործս մարդկան: Եւ յարուցեալ եկն, և տարաւ զնա 'ի տեղի ինչ և եցոյց նմա այր մի սև հնդիկ՝ որ գնէր զփայտ բեռն, և յորժամ բառնալ ոչ կարէր՝ աւելոյր այլ 'ի վերայ նորա. զայս արար նա բազում անգամ: Եւ անցեալ անտի եցոյց նմա այլ ոմն այր զի նստէր առ ափն ջրհորոյ ինչ և հանէր գուլիւ զջուր և արկանէր յաւազան ծակ՝ որ

Digitized by Google

նէր փայտ և առնէր բերան մեծ, և փորձեալ համբառ-նալ զբերանն և ոչ հանդուրժեաց շարժել. և երթեալ գործեալ հատանէր այլ փայտս և յաւելոյր ՚ի բերանն. բազում անգամ այսպէս արարեալ՝ մեծացոյց զբերանն: Իսկ երթեալ առաքեալ մի յասուից՝ մերձեցոյց ՚ի դուռն քաղաքի միոջ, և ահա երկուք անկեալք գային հեծեալք ՚ի ձիս, և ունէին փայտ խոտորնակս և կամէին մտանել ՚ի քաղաքն և ոչ կարէին, վասն զի զփայտն խոտորնակի ունէին, և ոչ խոտորեցան ուղիղ առ իրեարս: Իսկ իբրև զհետ նոցա շոգաւ, ետես զի միայնքն երկոքեան արտաքս ՚ի քաղաքէն: Որդ. սոքա են զոր թէ տեսանես որք ու-նին զլուծ ամբարտաւանութեան, և ոչ խոնարհեցան զի ուղղեսցեն զմիմեանս և զհետ երթիցեն խոնարհ ճա-նապարհին Քրիստոսի, յաղագս այնորիկ արգելան արտաքոյ արքայութեան նորա: Իսկ որ զփայտն կոտորէր այլն՝ ՚ի մեղս բազումս էր անկեալ, և փոխանակ ապաշխարելոյ՝ այլ ևս գործէր և դնէր մեղս ՚ի մեղաց վերայ: Իսկ որ ըղ-ձուրն հանէր՝ բարի գործս գործէր, սա է մարդն որ առ-նէ զողորմածութիւն. իսկ յայլում յամենայնի զանիրա-ւութիւն գործէր, և վասն չար գործոցն խափանէ և զբա-րիս բարին: Որդ. պարտ է մարդոյ արթուն լինել ՚ի գործս իւր, զի մի ընդունայն վաստակեսցի:

ԻՒՆԱԼ՝ երբեմն առն ՚ի ծերոցն Սկիւթեայ շոգաւ ՚ի Տերենութ և ուր վանքն նոցա էին, վասն աշխատութեան կրօնաւորութեան նոցա բերէին նմա սակաւ մի գինի: Որդ

զարձեալ մտանէր ՚ի նա ջուրն: Իսկ զարձեալ եցոյց նմա այլ ամն, զի էր տաճար մեծ և որք երկու նստեալ ՚ի ձիս որք ունէին զբերան մեծ բարձեալ իբրև զլուծս, և կացեալ առ դրան տաճարին ոչ կարէին մտանել, զի զբերանն արգելոյր զնոսա. և ոչ խոնարհէին միմեանց թէ միննն առաջին մտցէ. և այսպէս միայնքն արտաքոյ տաճարին: Իսկ ասաց առէ ցնա ծերն. սա նոքա են որք բարձեալ ունին զլուծ արդարու-թեանն ամբարտաւանութեամբ, և ոչ խոնարհեալ ուղղեցին զանձինս գնալ զհետ խոնարհութեան Քրիստոսի, վասն այսորիկ միայնքն արտաքոյ ար-քայութեան են. իսկ որ բառնայր զփայտն՝ նա է այր մեղաւոր՝ որ ունի մեղս բազումս, և փոխանակ ապաշխարելոյ զայն՝ յաւելու այլ ՚ի նա զդժնդակութիւն. իսկ որ հանէր զջուր՝ այն է այր՝ որ գործէ գործս բա-րիս, և վասն զի խառնէ զայն ընդ չար գործս, վասն այնորիկ կորնչի և բարին այն: Այլ պարտ է զի միշտ զգաստ և արթուն լինիցի մարդ յա-մենայն գործս իւր, զի մի ընդունայն աշխատեսցի:

Եւ երբեմն հայրն Փամբոն ՚ի Սկիւթեայ ՚ի Տերենութ, և յաղագս աշխատանն լինելոյ յուղւոյ՝ մատուցին նմա սակաւ մի գինի: Իսկ լուեալ ա-մենայն զդատաստան նոցա, և բերին առ նա զհիւանդ մի զի բժշկեսցէ

Digitized by Google

լուեալ անձանց վասն նորա՝ ածին առ նա զդիւահար՛, և սկսաւ դևն թշնամանել զծերն և ասել. առ ապականեցո՞ղդ այդ ածէք զիս : Իսկ ծերն ոչ կամէր հանել զնա, բայց վասն թշնամանացն ասէ ցնա. հաւատամ 'ի Ք՜ս, եթէ յառաջագոյն քան զիմ ընկել զգաւազանս զայս ելանիցես 'ի դմանէ : Իսկ եղև իբրև ծերն սկսաւ ընկել զգլխնոցն, աղաղակեաց դևն և ասէ. այրես այրես զիս : Իսկ մինչ չև արկեալ էր զգլխնոցն՝ ել դևն 'ի նմանէ շնորհօքն Ք՜սի :

ՄԻԱՄՈՆ այն կայր զամենայն աւուրս կենաց իւրոց երկայն ընդ մօր իւրում, և այս վարք էին կուսին. զամենայն աւուրս ապաշխարեալ պահէր և մնայր կուսա. սա արժանի եղև շնորհս ընդունել յԱյ : Իսկ էին գեօղք երկու մօտ 'ի Եգիպտոս գետ և կամէին ճակատել ընդ միմեանս վասն ջրաբաշխին, և բազումք մեռանէին վասն այսր ջրաբաշխի, զի հզօր էր մի գեօղն քան զմիւսն. կամեցան երկու գիւղքն 'ի ճակատ ելանել, սոքա աստի և նոքա անտի կոտորել զմիմեանս : Իսկ յայտնեցաւ երանելի կուսին հրեշտակ Այ և ասէ ցնա. տուր կոչել զծերս գեղջդ և ասա ցնոսա. ելէք ընդ առաջ նոցա և տուք պատերազմ, զի մի ամենեքեան կոտորեսջիք : Այս իբրև լուան ծերքն գեղջն, երկեան երկիւղ մեծ և անկան յոտս կուսին և աղաչէին զնա և ասէին. մեք ոչ իշխեմք նոցա պատահել, քանզի գիտեմք զնոցա կատաղութիւն. փրկեա զմեզ 'ի մահուանէս, և անուն բարի տանես ամենայն երկրիս Եգիպտացւոց : Իսկ սուրբ կոյսն ոչ հաւանեցաւ ելանել ընդ առաջ նոցա, այլ ել 'ի տանիս տան իւրոյ և կայր յաղօթս առ Ած և ասէր. տէր ամենակալ, լուր ձայնի աղախնոյս քո, և մտցեն աղաչանք իմ առաջի քո. քո զօրութիւնդ դարձո զնոսա 'ի տեղւոջէն՝ ուստի գան դեռ : Իսկ մինչ սուրբ կոյսն կայր յաղօթս, անդէն զտեղի առին իբրև մղոնօք երիւք 'ի բացեայ 'ի գեղջէն, որպէս և խնդրեաց սուրբ կոյսն յԱյ :

զնա : Եւ սկսաւ դևն անարգել զծերն և ասէր. առ ապականեցո՞ղս այս բերէք զիս և զինեսէք : Եւ ծերն ոչ կամէր հալածել զնա վասն խոնարհութեանն, այլ վասն նախատանացն ասէ ցնա. հաւատամ 'ի Ք՜ս, զի մինչ չև ընկեալ է իմ զգաւազանս զայս զինեալ դու ելցես այտի : Եւ սկսաւ ծերն ընկել զգաւազանն : Իսկ դևն ճչեաց ասէ. ծանրացար ինձ, ծեր, ծանրացար ինձ և նեղես զիս : Եւ ել վաղվաղակի 'ի մարդոյն յառաջ քան զկատարել բաժակին : Եւ եղև ողջ այրն այն շնորհօքն Ք՜սի և գնաց 'ի տուն իւր գոհանալով զԱյ :

Այլ յայտնեցաւ և ասէ՝ եթէ աղօթք կուսին խափանեցին զձեզ։ Այլ հաւատացին յԱծ, և եկին մկրտեցան 'ի ձեռն սուրբ կուսին։

ԵՍԷՐ՝ ասեն 'ի Հարանցն՝ եթէ նստէին երբեմն ծերք, և մինչդեռ խօսէին օգտակար ինչ՝ ունէին ընդ ինքեանս զամն տեսանող, և տեսանէր զհրեշտակս զի շարժէին 'ի վերայ նոցա. և իբրև օտար ձայնք ինչ անկանէին, հեռանային հրեշտակքն, և դեւքն գային իբրև զխոզս ընդ տիղմ թաւալեալք և անկանէին 'ի մէջ նոցա. և իբրև խօսէին վասն օգտի ինչ, դարձեալ գային հրեշտակքն և գովէին զնոսա*։

ԵՍԷԻՆ՝ վասն որումն ծերոյ՝ թէ որպէս տիւ էր, նոյնպէս գիշեր 'ի խցի նորա, և գործէր և կարդայր որպէս 'ի տուընջեան։

Ասպն՝ ասեն ծեր 'ի խուցն Յովհաննու կարճահասակին և եսես զնա զի ննջէր, և հրեշտակ կայր առ նմա. և զայս տեսեալ նորա գնաց։ Այլ իբրև զարթեաւ 'ի քնոյն, ասէ ցաշակերտն իւր. եկն ոք այսր մինչ ես 'ի քուն էի։ Այլ ասէ աշակերտն. այո անուն ծեր եկն։ Այլ գիտաց

1 Ասէր ասեն 'ի Հարանցն՝ եթէ նստէին երբեմն ծերքն 'ի միասին և խօսէին ընդ միմեանս վասն շահու անձին, և եռ տեսանէր զի իջին դասք հրեշտակաց յերկնից և ունէին 'ի ձեռս ... ողորմութեանց և կացին առ ծերովքն. և մինչ խօսէին զհոգևոր բանս՝ հովէին և սփոփէին զնոսա հրեշտակքն. իսկ յորժամ զերկրաւոր ինչ խօսէին՝ մեկնէին 'ի նոցանէ հրեշտակքն, և գային խոզք և ընդ տիղմ և ընդ աղբ թաւալէին 'ի մէջ նոցա և փարէին զնոքօք և լի էին ժահահոտութբ. և իբրև դարձեալ խօսէին օգտակար՝ փախչէին դևք, և գային հրեշտակք և հովէին զնա։

* Այլ օրինակ տպագրելոյն 'ի հին Բարգմանութիւն. Պատմէր հայրն Մակար՝ եթէ բազում օրինաց հին աւուրց յամին մի անգամ գային առ միմեանս անապատաւորքն և ասէին հանդէս և քննութիւն վասն զգուշութեան անձանց։ Էր երբեմն ժողովն առվորականն և կայր անդ տեսող ծեր մի, որ տեսոյ 'ի խօսել զբանս հոգևորս. տեսանէր զի հրեշտակք թռչէին 'ի վերայ գլխոց մերոց, և յանդարտաշարժ բանսն գնան հրեշտակքն և գան խոզք աղմակիցք և շրջին 'ի գլխոց մերոց, և 'ի գալն 'ի բանս հոգևորս՝ դարձեալ գնան խոզքն և գան հրեշտակքն։

2 Ասէին զծերոյ. ումեմն՝ եթէ միշտ 'ի սենեկի իւրում լոյս էր. և որպէս 'ի տուէ ընթեռնոյր գիրս և գործէր, նոյնպէս և 'ի գիշերի տանէր աստանօր Հրաշք, քանզի 'ի գիշերի երևեալ լինէր լոյսն միշտ։

3 Եղբայր ասեն գնաց առ հայրն Յովհաննէս և եգիտ զնա զի ննջէր, և հրեշտակ տեսանէ կայր մերձ և հովէր զերեսս նորա. և իբրև եսես զայն ծերն, մեկնեցաւ անտի. իսկ նա իբրև զարթեաւ 'ի քնոյն, ասէ ցաշակերտն իւր. եկն աստ ոք մինչ ննջէի ես։ Ասէ ցնա. այո եկն այս

Digitized by Google

հայրն Յովհաննէս եթէ ըստ խորոյ չափոյ էր ծերն և ե-
տես զհրեշտակն* ։

ԱՅԼ՝ ծեր ոմն սկիւթացի լինէր 'ի լերինն Պ[illegible], և ածին առ նա զոմն 'ի Պաղեստինէ դիւահար և աղաչեցին զնա. և մատոյց նմա քրձով կտաւի լի ոսկւով։ Իսկ ծերն ոչ կամէր ընդունել. և տեսեալ զնա զի տրտմեցաւ, թափեաց և ետ ցնա զոսկին, և զքուրձն կտաւի անդէն կալաւ առ ինքեան և ասէ ցնա. զոսկիդ տուր աղքատաց։ Այլ արար ծերն զքուրձն կողքս և 'ի բազում ժամանակս ագաւ զնա, զի հարցէ զմարմին նորա, զի էր խոշոր։

ՉՈԳԱՒ՝ երբեմն եղբայր ոմն 'ի խուցն Արսենի 'ի Սկիւթ, և հայեցեալ ընդ պատուհանն ետես զծերն բովանդակ որպէս զհուր. էր արժանի եղբայրն տեսանելոյ։ Այլ յորժամ բախեաց զդուռն, ել ծերն և ետես զեղբայրն զարհուրեալ և ասէ ցնա. միթէ բազում ժամք են քո զի կաս աստ և կամ տեսեր ինչ։ Իսկ եղբայրն ասէ՝ ոչ։ Այլ խօսեցաւ ընդ նմա՝ արձակ զնա, և ինքն եմուտ 'ի գործ իւր։

ԱՍԷԻՆ՝ ծերքն ցհայրն Եղիա յԵգիպտացւոց վանաց՝ հօրն Ագաթոնի՝ եթէ մեծ այր է։ Ասէ ցնոսա ծերն. ըստ ազ-

ոմն ծեր։ Իսկ ծանեաւ Յովհաննէս զի 'ի չափ խոր էր ծերն և ետես ըզհրեշտակն։

* Համառօտութիւն երկոցունց օրինակաց դուրձեալ 'ի հին թարգմանութենէ. Ծեր ոմն Յովհաննէս մինչ նստէր 'ի սո- թի. հրեշտակ տեսանէ հով հայրեր (կամ հովահայրեր) նմա։

1 Ծեր ոմն սկիւթացի բնակէր 'ի լերանն Պաղեստինոյ, և բերին առ նա դիւահար ոմն 'ի պաղեստինէ աղքատնի, և բժշկեաց զնա ծերն։ Իսկ բերեր առ նա բժշկեալն քուրձ լի ոսկւով, իսկ ծերն ոչ կամեցաւ առնուլ 'ի նմանէ. և տրտմեցաւ այրն յոյժ։ Իբրև ետես զնա ծերն տրտմեալ, առեալ զքուրձն դատարկ՝ զոսկին ետ 'ի նա և ասէ. առ բերեալ տուցես զայդ աղքատաց, զի մեզ ոչ է պիտոյ։ Իսկ այնուհետև երկրպագեալ այրն գնաց։ Իսկ ծերն գնեաց խորդ մաղեղէն քուրձ և զգեցաւ զայն, և էր նովաւ ժամանակս ինչ։ Զի զայն ընդունել արժան է և ընդունելի. այլ ... 'ի չարէն է և խառնեալ։

2 Եղբայր ոմն գնացեալ 'ի սենեակ հօրն Արսենիոսի 'ի Սկիտէ, և նայեցեալ ընդ դուռն և ետես զծերն իբրև զբոցեղէն վառեալ. և զի արժանի էր եղբայրն տեսանելոյ այնմանիկ։ Իսկ իբրև բախեաց զդուռն, ել առ նա ծերն և ետես զնա զարհուրեալ և ասէ ցնա. 'ի վաղուց հետէ կաս աստ, միթէ տեսեր ինչ։ Իսկ նա ասէ՝ ոչ։ Իսկ արձակեաց զնա։

3 Ասէին ծերքն ցհայրն Եղիա եգիպտացի՝ եթէ հայրն Ագաթոն բարի ծեր է։ Ասէ ցնոսա ծերն. յազգս յայս բարի է։ Ասեն ցնա երբ-

Digitized by Google

դիս այսմիկ մեծ եղբայր է. իսկ լուր առաջնոյն անուանեալ է իմ մարդ 'ի Սկիւթ՝ որ կարէր արգելուլ զարեգական յերկնիս որպէս Յեսու որդի Նաւեայ։ Եւ զայս լուեալ զարմացան և փառաւորեցին զԱծ ։

ՊԱՏՄԵԱՑ[1] ոմն 'ի հարանցն վասն հօրն Պաւղոսի 'ի ներքին կողմանս Եգիպտոսի որ բնակեալ էր 'ի Թեբայիդ՝ եթէ ունէր ձեռօք իւրովք զերդիւղաւոր օձս և զկարիճս և ընդ մէջ կտրէր զնոսա։ Եւ անկեալ եղբարքն առաջի նորա ասէին. ասա մեզ, զի՞նչ գործ կատարեցեր զի առեր այդպիսի շնորհս։ Եւ նա ասէ. թողութիւն արարէք ինձ, հարք, զի եթէ ստասցի ոք զսրբութիւն, ամենայն ինչ հնազանդեալ լինի նմա, որպէս Ադամայ յորժամ էր 'ի դրախտին՝ յառաջ քան զանցանելն զպատուիրանաւն այ։

ԱՍԷԻՆ[2] ոմանք վասն հօրն Ամոնի՝ թէ զարքայօձիկն սպան. վասն զի երթեալ 'ի ջրհոր անապատին հանել ջուր, և տեսեալ զարքայօձիկն՝ ընկէց զինքն յերկիր և ասէ. տէր, կամ ես մեռանիմ կամ սա։ Եւ վաղվաղակի արքայօձիկն 'ի զօրութենէն Քի հերձաւ։

ԱՍԷԻՆ[3] ոմանք վասն հօրն Անտոնի՝ թէ եղև նա առա-լցեալ հոգւով սրբով. այլ ոչ խօսէր վասն մարդկան. վասն զի զիւրաքն յաշխարհի և զհանդերձեալ լինելն երևեցուցանէր մարդկան։

ՊԱՏՄԵԱՑ[4] հայրն Դանիէլ վասն որումն ծերոյ մե-

բարքն. և յառաջինսն զի՞նչ էջէ. հայր։ Պատասխանի ետ ծերն և ասէ. ստասցի ձեզ թէ բարի է յաղջայ յայս. այլ յառաջին ազգն տեսի ես այր 'ի Սկիւթ՝ որ կարող եղև արգիլել զարեգակն իբրև զՅեսու Նաւեայ։

1 Պատմեցին հարք ոմանք վասն Պաւղոսի Թեբայիդացւոյ՝ եթէ կալնոյր ձեռամբ զիժս և զքարբս և զօձս և զամենայն սողունս Թունաւորս, և ընդ քարի հարեալ հերձոյր զնոսա։ Ցաւուր միոջ աղաչեցին զնա եղբարքն և ասեն ցնա. պատմեա մեզ, հայր, թէ զո՞ր ինչ առաքինութիւն ուղղեցեր զի զայդ առնես։ Ասէ ցնոսա ծերն. թողութիւն արարէք, եղբարք, զի թէ ոք ստանայ զսրբութիւն և անբծութիւն, հնազանդին նմա ամենայն գազանք և սողունք, որպէս Ադամայ էին 'ի դրախտին նախ։

2 Ասէին վասն հօրն Ամոնայի՝ եթէ գնայր յանապատին ընուլ ջուր 'ի ջրհորոյ անտի, և եսես անդ վասիլիսկոյ՝ որ է արքայ օձ, և անկեալ 'ի վերայ երեսաց յերկիր ասէ. տէր, կամ սա կեցցէ կամ ես։ Եւ վաղվաղակի հերձեալ ընդ մէջ մեռաւ վասիլիսկոյն զօրութեամբ Քի այ։

3 Ասէին վասն հօրն Անտոնիոսի՝ եթէ եղև նա հոգեւոր, այլ ոչ կամէր յայտնել մարդկան. զի զոր ինչ լինէր յաշխարհի և զոր ինչ լինելոց էր՝ յայտնէր։

4 Հայրն Դանիէլ ասէր՝ եթէ ծեր ոմն մեծ նստէր 'ի ներքին կողմն

Digitized by Google

ծի որ բնակեալ էր 'ի ներքին կողմանն Եգիպտոսի, զի պարզամտութեամբ ասէր՝ եթէ Մելքիսեդեկ ինքն է որդին ա̃յ ։ Եւ պատմեցաւ այս Կիւրղի հայրապետին Աղեքսանդրի, և առաքեաց զնմանէն. և գիտացեալ վասն ծերոյն եթէ նշանագործ է, և զինչ և խնդրէ յա̃յ՝ յայտնէ նմա, այլ անմեղութեամբ ասէ զբանն, իմաստութեամբ իւրով կալաւ զնա և ասէ. Հայր, աղաչեմ զքեզ, վասն զի խորհուրդք իմ ասեն՝ թէ Մելքիսեդեկ ինքն է որդին ա̃յ, և դարձեալ այլ խորհուրդք իմ ասեն՝ թէ ոչ, այլ մարդ է քահանայապետ ա̃յ. արդ վասն զի երկմիտ եմ, յաղագս այսորիկ առաքեցի առ քեզ զի աղաչեսցես զա̃ծ և յայտնեսցէ քեզ թէ ով է ։ Իսկ ծերոյն զայս լուեալ առաց համարձակապէս, վստահացեալ եթէ զինչ և խընդրէ՝ տայ նմա ա̃ծ, ասէ. Թոյլ տուր ինձ աւուրս երիս և ես հարցանեմ զա̃ծ յաղագս այդր և պատմեմ քեզ թէ ով է ։ Եւ երթեալ պաղատեցաւ առաջի ա̃յ ։ Եւ գիտէր երանելին Կիւրղոս եթէ մեծ է ծերն այն, և պարտ է ա̃յ յայտնել նմա ։ Եւ եկեալ ծերոյն յետ երից աւուրց ասէ ցնա. մարդ է Մելքիսեդեկ ։ Ասէ ցնա եպիսկոպոսապետն. ուստի՞ գիտես ։ Եւ նա ասէ. ա̃ծ յայտնեաց ինձ զամենայն հայրապետսն այսպէս. զիւրաքանչիւր ոք անցուցեալ առաջի իմ յԱդամայ մինչև 'ի Մելքիսեդեկ, և ասէ ցիս հրեշտակն. այս է Մելքիսեդեկ ։ Եւ եկեալ իւրովի քարոզէր ծերն՝ եթէ մարդ է Մելքիսեդեկ ։ Եւ խնդաց մեծապէս երանելին Կիւրղոս ։

Եգիպտոսի, որ և ասէր անմտութեամբ՝ եթէ Մելքիսեդեկ որդի ա̃յ էր ։ Եւ լուեալ զայս մեծն Կիւրեղ աղեքսանդրացի վասն նորա, և զի գիտէր զի նշանագործ էր այրն, և զամենայն յայտնէ նմա ա̃ծ, և գիտէր թէ անմտութեամբ ասէր, պատուիրեաց առ նա և ասէ. հայր, աղաչեմ զքեզ, երկու խորհուրդք մտին առ իս վասն Մելքիսեդեկի, մինն ասէ՝ թէ որդի ա̃յ է Մելքիսեդեկ, և միւսն ասէ՝ ոչ, այլ մարդ է քահանայ ա̃յ. այլ աղաչեմ զքեզ խնդրեսցես յա̃յ, զի յայտնեսցէ զճշմարիտն ։ Իսկ ծերն վստահացեալ 'ի գործս իւր ասէ. համբերեա զերիս աւուրս, և ես հարցից զտէր և ասացից քեզ զճշմարիտն ։ Եւ գնացեալ ծերն աղաչէր զտէր զերիս աւուրս վասն այսորիկ, և զկնի երից աւուրց եկն և ասէ ցԿիւրեղ եպիսկոպոսն ծերն. մարդ է Մելքիսեդեկ ։ Ասէ ցնա եպիսկոպոսն. ուստի՞ ծանեար, հայր ։ Ասէ ցնա ծերն. ա̃ծ եցոյց ինձ այսօր զամենայն նախահարքն այսպէս. զի յԱդամայ մինչև ցՄելքիսեդեկ զիւրաքանչիւրն կացոյց առաջի իմ, և ասէ ցիս հրեշտակ տեառն՝ եթէ այս է Մելքիսեդեկ քահանայն ա̃յ ։ Եւ յայնմհետէ այնպէս քարոզէր ծերն՝ եթէ մարդ է Մելքիսեդեկ և ոչ որդի ա̃յ, զի որդի ա̃յ միայն է Յս̃ Քս̃ որդին ա̃յ ։ Ընդ որ ցնծացեալ Կիւրեղ գոհանայր զա̃յ ։

Digitized by Google

ԱՍԷՐ՝ Հայրն Դուլաս աշակերտ հօրն Բեսարիոնի՝ եթէ երբեմն երթայաք մեք առ ծովեզերբն, և ծարաւեցի և ասացի ցհայրն Բեսարիոն. Հայր, ծարաւի եմ յոյժ։ Եւ արարեալ աղօթս ծերոյն՝ ասէ ցիս. առ ջուր 'ի ծովէդ և արբ։ Եւ երթեալ արբի, և էր ջուրն քաղցր. և լցի զկուժն ջրով, կարծելով թէ մի գուցէ դարձեալ ծարաւեցայց։ Եւ տեսեալ ծերոյն ասէ ցիս. ընդէ՞ր լցեր զկուժդ։ Եւ ասեմ ցնա. Թողութիւն արա ինձ, հայր, մի գուցէ դարձեալ ծարաւեսցիցս։ Եւ ասէ ցիս ծերն. Ա̃ծ թողութ̃ի արասցէ քեզ աստ և ամենայն ուրեք. ոչ է երբեմն քաղցր Ա̃ծ և երբեմն դառն*։ Դէպ լինել նմա երկաց յաղօթս, և կամեցեալ անցանել ընդ՝ Նեղոս գետ՝ 'ի վերայ ջրոյն գնայր։ Եւ իմ զարմացեալ անկայ առաջի նորա և ասեմ. զխո՞րդ զգայիր ոտից քոց յորժամ գնայիր 'ի վերայ ջրոյն։ Եւ ասէ ծերն. մինչև 'ի պաճղունս կարծէի թէ ջուր է, և զայլն հաստատութ̃ի երկրի։ Դարձեալ մինչդեռ երթայաք մեք առ ա̃ն ծեր, մերձ էր արևն 'ի հաշտել, և աղօթս արարեալ ծերոյն՝ ասաց. աղաչեմ զքեզ, տէր, կացցէ արեգակն 'ի տեղւոջն մինչև ժամանեցից առ ծառայն քո։ Եւ եղև այնպէս։ Դարձեալ երբեմն չոգայ 'ի խուց նորա, զի խօ-

։ Ասաց հայրն Դուլաս, որ էր աշակերտ հօրն Բեսարիոնի, եթէ գնայաք երբեմն ընդ եզր ծովուն, և ես ծարաւեցայ յոյժ և ասեմ ցհայրն. ծարաւի եմ, հայր, յոյժ։ Եւ արարեալ աղօթս ծերն՝ ասէ ցիս. արբցես ջուր 'ի ծովուն։ Եւ արբի 'ի նմանէ քաղցր ջուր, զի քաղցրացոյց աղօթիւք զջուր ծովուն. և սկսայ լնուլ զամանս իմ ջրով, գուցէ ծարաւիցիմ դարձեալ։ Եւ ասէ ցիս. մի առներ զայդ, զի Ա̃ծ որ աստ է՝ նա և յամենայնի է, կարող է և անդ տալ ջուր։ Դարձեալ հարկ եղև մեզ գնալ, և եկաք յեզր Տիգրոսի գետոյն, և նա էանց ոտիւքն իւրովք 'ի ցամաքի 'ի վերայ գետոյն։ Իսկ ես անցաք յայնկոյս, ես հարցի ցնա. հայր, զի՞նչ խմանայիր ոտք քո զջուր մինչ գնայիր 'ի վերայ նորա։ Եւ ծերն ասէ. մինչև ցկոճ կարծէի թէ ջուր է, իսկ 'ի ներքոյ ոտից երկիր հաստատուն, և գնայի ամուր 'ի վերայ նորա։ Դարձեալ յայլում ժամու գնայաք առ ծեր ոմն, և 'ի գնալն մեր արեգակն եհն 'ի մուտս։ Եւ ասէ ծերն. աղաչեմ զքեզ, տէր, կացո զարեգակն զի մի մտցէ մինչև գնացից առ ծառայ քո։ Եւ եկաց արեգակն ժամս ինչ։ Դարձեալ գնացի ես երբեմն 'ի սենեակ ծերոյն և գտի զնա զի կայր

* Օրինակ մի հին թարգմանութեան համառօտ ղասողին հատուած գործոյ հետ այսպէս. Դուղաս աշակերտն Բեսարիոնի՝ եթէ երթայաք յեզր ծովուն, և իմ ծարաւեալ ասեմ ցհայրն իմ. ծարաւի եմ։ Եւ խաղաղեցուցեալ զծովն ասէ՝ խմեա։ Եւ էր քաղցր ամենեին, մինչև կամեցայ առնուլ 'ի գգուոջ։ Եւ ասէ ցիս. ընդէ՞ր է քեզ այդ. միթէ երբ այդ ծարաւիս, անդր չիցէ՞ մեզ։

Digitized by Google

սեցայց ընդ նմա, և տեսի զի կայր յաղօթս և ձեռք իւր համբարձեալ յերկինս, և եկաց այնպէս չորեքտասան տիւ և չորեքտասան գիշեր։ Եւ յետ այնորիկ եկեալ ասէ ցիս. եկ զհետ իմ։ Եւ ելեալ գնացաք, և ծարաւեցի 'ի ճանապարհին և ասացի ցնա. հայր, ծարաւի եմ։ Եւ առեալ ծերոյն զմախաղն իւր չոգաւ յինէն յանդիոյս իբրև քարընկեց մի, և արարեալ աղօթս և եբեր խոճ զայն լի ջրով և արբի։ Եւ դարձեալ գնացաք մինչև եկաք լուսով առ հայրն Յովհաննէս, և ողջունեալ ընդ նմա՝ արարին աղօթս և նստան խօսել ընդ միմեանս վասն տեսլեանն զոր ետես։ Եւ ասէ հայրն Բեսարիոն՝ եթէ ելին հրամանք 'ի տեառնէ, զի աւերեսցին ամենայն ուրեք մեհեանք. և եղև այնպէս։

ԱՌԱՔԵԱՑ՝ ոմն 'ի հարանցն զաշակերտն իւր զի հանեսցէ ջուր, և էր ջուրն հեռի 'ի խցէ նոցա. և նորա մոռացեալ առնուլ զչուանն, և եկեալ 'ի ջրհորն՝ գիտացեալ եթէ ոչ եբեր զչուանն, և արարեալ աղօթս աղաղակեաց և ասէ. Ջրհոր, ասաց հայրն իմ՝ լից զամանս ջրով։ Եւ առժամայն ել ջրհորն 'ի վեր, և լցեալ զամա-

յաղօթս և զձեռն համբարձեալ ունէր յերկինս, և եկաց այսպէս աւուրս չորեքտասան։ Եւ զկնի այսորիկ ասէ ցիս՝ եկ զկնի իմ։ Եւ ելեալ գնացաք յանապատ, և ես ծարաւեցայ 'ի գնալն և ասեմ ցծերն. հայր, ծարաւի եմ։ Եւ էառ ծերն յինէն զմախաղն և մեկնեցաւ յինէն իբրև քարընկեց մի, և արարեալ աղօթս եբեր զնա լի ջրով առ իս։ Իսկ 'ի գնալն մեր տեսաք 'ի վայրի այր ինչ. և իբրև մօտաք անդ, նստէր անդ եղբայր մի և հիւսէր զարմաւն, և բնաւ ոչ հայեցաւ 'ի մեզ և ոչ խօսեցաւ և կամ ետ հարց զմեզ։ Եւ ասէ ծերն ցիս. գնասցուք աստի, զի ոչ կամի նա խօսել ընդ մեզ։ Եւ ելեալ անտի շրջեցաք ընդ անապատն այն, մինչև եկաք առ հայրն Յովհաննէս, և ողջունեալ զնա նստաք։ Եւ սկսաւ խօսել հայրն Բեսարիոն վասն տեսլեանն զոր ետես, և ասէր՝ եթէ ել հրաման 'ի տեառնէ, որպէս զի քակեսցին ամենայն մեհեանք կռոցն. որ եղև իսկ։ Իսկ յորժամ դարձաք անտի և եկաք յայրն մերձ ուր էր եղբայրն. և իբրև մտաք 'ի ներքս տեսանել զնա, գտաք զի փոխագրեալ էր նա։ Եւ ասէ ցիս ծերն. եկ թաղեսցուք զնա, զի վասն սորա առաքեաց զմեզ Աստուած։ Եւ իբրև պատեաք զնա, գտաւ զի կին մարդ էր, և զարմացեալ ծերոյն ասէ ցիս. տեսանես զի կանայք ես որպիսոյն 'ի պատերազմունս Թշնամւոյն, և մեք 'ի քաղաքս և 'ի փողոցս շրջիմք։ Եւ դարձաք 'ի սենեակս մեր գոհանալով զԱյ։

։ Առաքեաց ծեր մի զաշակերտ իւր բերել ջուր, և էր ջրհորն հեռի յոյժ 'ի սենեկէ նորա. և մոռացաւ աշակերտն առնուլ ընդ իւր չուան դուլոյն, և ջրհորն խոր էր։ Իբրև գնաց անդ, յիշեաց թէ ոչ ունի ըղդոյլն. և արարեալ աղօթս ասէ ցջրհորն. ջրհոր ջրհոր, հայրն իմ հրամայէ քեզ՝ եթէ լից զամանս իմ ջրով։ Եւ առժամայն եկն ջուրն 'ի

փողին ջրով նեղքայրն՝ դարձեալ անդրէն 'ի տեղին իւր չոգաւ ջուրն :

ԵՂԲԱՅՐ՝ ոմն շարժեալ 'ի բարկութիւն վասն եղբօր ուրումն՝ մատուցեալ յաղօթս խնդրէր յԱյ ներել եղբօրն, և փորձանք գայր առաւել ևս, և առժամայն ետես ծուխ ելեալ 'ի բերանոյ իւրմէ . յորժամ եղև այս, դադարեաց բարկութիւնն :

ԱՍԷՐ ոմն 'ի Թեբայեցւոց ծերոցն՝ եթէ ես որդի էի տաճարապետի կռոցն, և յորժամ փոքր էի՝ նստէի 'ի տաճարին և տեսանէի զհայրն իմ բազում անգամ պատարագս և զոհս կատարել կռոցն : Երբեմն ծածուկ եկի զկնի նորա և տեսի զսատանայ նստեալ և զամենայն զօրս իւր առաջի նորա . և ահա իշխան մի մատեաւ՝ երկիր եպագ նմա, և ասէ սատանայ . ուստի գաս : Եւ նա ասէ . յայս անուն աշխարհի յարուցի մարտս և ամբոխս և հեղմունս արեանց արարի և այժմ եկի պատմել քեզ : Եւ ասէ . 'ի քանի ժամս արարեր զայս : Ասէ . յաւուրս երեսուն : Հրամանն ետ զնա հարկանել զնա և ասէ . յայսչափ ժամանակս այդ է վաստակ քո : Եւ ահա միւս այլ եկն երկրպագեաց : Ասէ . և դու ուստի գաս : Եւ ասէ դևն . 'ի ծովէ էի, յարուցի մրրիկս և շարժմունս և ընկղմեցի զնաւսն և բազում մարդիկս սպանեալ եկի պատմել քեզ : Ասէ ցնա . յորչափ ժամանակս արարեր զայդ : Եւ դևն ասէ . են աւուրք քսան : Հրամայեաց և զնա գան հարկանել և ասէ . ընդէ՞ր յայսչափ աւուրս զայս միայն արարեր : Եւ ահա երրորդն եկն և երկրպագեաց նմա, և ասէ ցնա նոյնպէս . և դու ուստի գաս : Եւ ասէ դևն . յայս անուն քաղաք հարսանիք եղեն, և յարուցի պատերազմունս և՝ բազում արեանց հեղմունս արարի 'ի ձեռն փեսային և հարսինն և եկի պատմել քեզ : Եւ նա ասէ . 'ի քանի աւուրս արարեր զայս : Ա-

մէր . և իբրև եկն զառաջնոյն՝ առժամայն էջ ջուրն 'ի տեղի իւր . և եղբայրն գոհանայր զԱյ :

1 Եղբայր ոմն շարժեալ եղև 'ի բարկութիւն վասն այլ եղբօր, և առժամայն սկսաւ աղօթել զի երկայնամիտ լիցի և մի բարկասցի . և յաղօթելն ետես դևն սրտմտութեան, որ որպէս ծուխ ել 'ի բերանոյ նորա և ցնդեցաւ յօդս :

2 Եւ բազում արեանց հեղութիւնս (?) արարի 'ի ձեռն փեսային . . . : Իսկ միւսն յաւուր եկաց այլ ոմն և երկրպագեաց : Ասէ ցնա սատանայ . և դու ուստի գաս : Եւ նա ասէ . ես յանապատին էի, և արդ քա-

ռէ՝ ՚ի տասն։ Եւ հրամայեաց ուժգին հարկանել զնա։ Յետ սոցա եկն միւս այլ, երկրպագեաց նմա։ Եւ ասէ ցնա. ուստի՞ գաս։ Եւ ասէ. յանապատէ էի այս քառասուն ամ է, մարտնչէի ընդ կրօնաւորի ումեմն, և յայսմ գիշերի ընկեցի զնա ՚ի պոռնկութիւն։ Զայս լուեալ, յարուցեալ համբուրեաց զնա, և առեալ զպսակն զոր ունէր եդ ՚ի գլուխ նորին, և նստուցեալ ընդ իւր յաթոռն ասէ. որովհետև զայս գործս կարացեր առնել, արժանի ես պսակի։ Զայս տեսի և ասացի՝ այսպէս մեծ են պատիւք կրօնաւորաց. և հաճութեամբն Այ որ կամեցաւ զփրկութիւն իմ, եկի և եղէ միայնակեաց։

ՊԱՏՄԵԱՑ մեզ ոմն ՚ի հարցն վասն երանելւոյն Եփրեմի պատրիարգին Անտիոքու մեծի՝ եթէ ունէր ամենևին նախանձ վասն ուղղափառ հաւատոյ։ Լուաւ յաւուր միում վասն ումեմն սիւնականի ՚ի կողմանս Յերապօլսի եթէ ունի զաղանդն Սևերիանի և հաղորդակից է նմա։ Եւ գնացեալ առ նա կամեցաւ հաւանեցուցանել, և վարդապետութեամբ աղաչէր զսիւնակեացն առաջի կալ առաքելական աթոռոյն և երկրպագութեամբ հաղորդել ՚ի կաթողիկէ եկեղեցի։ Եւ ասէ սիւնականն. ես ընդ ձեզ ոչ հաղորդիմ։ Ասէ ցնա սուրբն Եփրեմ. որպէս կամիս հաւանեցուցանել զքեզ՝ եթէ շնորհիւ տեառըն մերոյ Յսի Քսի ազատ է եկեղեցի յամենայն աղտեղութենէ հերձուածոց։ Եւ ասէ սիւնականն. վառեացուք հուր, ով տէր իմ պատրիարգ, և մտցուք ՚ի նա ՚ի միասին, և որ անփորձ ելանէ՝ այն է ուղղափառ և նմա պարտ է հետևել։ Զայս ասէր երկեցուցանելով զպատրիարգն։ Իսկ սուրբն Եփրեմ ասէ ցսիւնականն. պարտ

ռասուն ամ է զի պատերազմէի ընդ ծերոյ ումեմն և յաղթէր ինձ. իսկ ՚ի գիշերիս յայսմիկ ձգեցի զնա և անկաւ ՚ի պոռնկութիւն, և եկի պատմել քեզ։ Իբրև լուաւ զայս իշխանն խաւարային, յարեաւ և համբուրեաց զնա, և առեալ զպսակն ՚ի գլխոյ իւրմէ եդ ՚ի գլուխ նորա և նըստոյց զնա յաթոռ իւր և ասէ ցնա. և որպէս կարացեր գործել զայդպիսի գործ։ Եւ ասէր ծերն. զայս ամենայն մինչ տեսի ես՝ ասեմ ՚ի միտ, որովհետև մեծ և պատուական իմն է գաս կրօնաւորաց. և կամեցի ոչ եղէ քրիստոնեայ և եկի յանապատս յայս և միայնացայ, որ և կամեցաւ զիս տէր իմ և Աստուած իմ Յս։ Արդ այսպէս նախանձ ընդ կրօնաւորս ունի գեհ նենգութեան և անօրէնն սատանայէ առաւել քան ամենայն աշխարհի պատերազմել. վասն այնորիկ պարտիմք զգուշանալ և արթնանալ ընդդէմ նորին զօրութեամբ Քի մեր, յորմէ տկարացեալ փախստական լինի յամենայն ներգործութենէ իւրմէ։

է քեզ, ով որդեակ, իբրև 'ի հօրէ քումմէ լսել խրատ և ոչ առաւել ինչ պահանջել 'ի մէնջ, զի զոր խնդրես՝ այդ վերագոյն է քան զկարողութիւնս մեր. այլ ունիմ յոյս յորդին այ՝ վասն փրկութեան ոգւոյ քո առնել և զայդ: Յայնժամ ասէ երանելին ցորս մերձն կային. օրհնեալ է տէր, ածէք այսր փայտ: Իբրև բերին բազում փայտ, հրամանս ետ պատրիարգն վառել առաջի սեանն, և ասէ ցխունակսն. աւասիկ՝ էջ, և ըստ դաշանցն քոյ մնասցուք 'ի միասին: Իսկ նա զարմացեալ յաղագս հաստատուն յուսոյն որ առ ած՝ պատրիարգին, ոչ կամեցաւ իջանել: Ասէ ցնա պատրիարգն. ո՞չ նախ 'ի քէն եղ այս սահմանս. արդ ընդէ՞ր ոչ կամիս առնել: Ապա հանեալ զեմիփորոնն զոր զգեցեալ ունէր, և եկեալ մերձ առ հուրն յաղօթս եկաց և ասէ. ած հայր տեառն մերոյ Յի Քի միածնի քո, որ մարմնացաւ յանարատ կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան, ցոյց այժմ սքանչելիս ազատութեանս զփառաց քոց 'ի մեղուցեալ և յանարժան ծառայս քո: Եւ ընկէց զեմիփորոնն 'ի մէջ հրոյն, իսկ հրոյն կացեալ այնպէս բորբոքեալ զերիս ժամս. իսկ 'ի շիջանել հրոյն հանին զեմիփորոնն ամբողջ 'ի հրոյն որպէս և էրն և ոչ բնաւ վնասեալ: Յայնժամ տեսեալ ախունականին զահեղ սքանչելիսն զարմացաւ, և նզովեաց զՄահմետ և զամենայն հերձուած նորա, և գրուեալ 'ի սուրբ եկեղեցի՝ հաղորդեցաւ 'ի ձեռաց երանելւոյն. Աշխարհն՝ գոհութեամբ փառաւորեալ զած:

ՊԱՏՄԵԱՑ՝ ոմն 'ի սուրբ հարցն՝ եթէ երիս գործս ունէին միայնակեացք. միոյն պտուղ որ 'ի տէր ապաշխարութիւնն է, և միւսոյն երկիւղն, և միւսոյն սրբութիւն անձան. և եբեր այսպիսի օրինակ: Այր, ասէ, ոմն ծեր մեծ և երևելի և եկեալ ճաշակէր ընդ եղբարսն. և անդէն ամբարձեալ 'ի տեսիլս ծերոյն ետես զամենս զի ճաշակէին մեղր, զայլս հաց և զամենս ապաւասա: Հիացեալ

¹ Ասէր ոմն 'ի հարանցն՝ եթէ երեք գործք են զոր հարկ է պահել ամենայն կրօնաւորի. առաջինն ահիւ և դողութեամբ հաղորդել միշտ 'ի սուրբ խորհրդոյ մարմնոյ և արեան Քի. երկրորդ գնալ 'ի սեղան միշտ ընդ եղբարցն. երրորդ զոտս լուանալ եղբարցն եկելոց ամենեցուն: Եւ որս ասաց ինչ յաւել և ասէ՝ թէ էր ոմն ծեր 'ի մեծատուն 'ի ծերոց, որ և հոգևոր տեսութեանց արժանացեալ էր. եւս զի գնաց երբեմն և նստաւ 'ի սեղան ընդ եղբարսն. և իբրև ուտէին նոքա, տեսանէր ծերն հոգւով զոմս եւն նստեալ 'ի սեղանն, զի ասէին ճաշակէին մեղր



Digitized by Google

առ նմին՝ աղաչէր զԱծ յայտնել զխորհուրդն թէ զիարդ կերակուրս որ եդեալ կայ առաջի 'ի վերայ սեղանոյս, 'ի ճաշակելս այլափոխի: Ապա ձայն 'ի վերուստ առ նա և ասէ. որք ճաշակեն զմեղր՝ սոքա հոգևոր ուրախութ̃ առլցեալ յանձինս իւրեանց անպակաս աղօթելով. և որք հաց ուտեն՝ միայն գոհանան զտեառնէ զտրիցն. իսկ որք զապականն՝ տրտնջողքն և դատողքն՝ եթէ այս բարի է և այն չար. զոր ոչ է պարտ մտածել, այլ փառաւորել զԱծ և օրհնութի մատուցանել տուողքն ըստ գրեցելումն, եթէ ուտիցէք եթէ ըմպիցէք 'ի փառս այ արասջիք:

ԵՐԿՈՒՔ՝ ումանք որոշեալք յաշխարհէ բնակէին վերագոյն Արասայ 'ի լեառն որ կոչի Փոնեաբոն առ գետոյն մերձ 'ի վանսն որ կոչի սրբոյն Թէոդորի: Մեռաւ ծերն, և աշակերտն արտաքեալ աղօթս թաղեաց զնա: Եւ յետ սակաւ ժամանակի եկեալ յաշխարհէ եղբայր զոմն որ գործէր զերկիր և ասէ ցնա. արա սէր, եղբայր, և առ ընդ քեզ բրիչ և հեծանոց և եկ ընդ իս: Եւ յորժամ եկին 'ի լեառն, եցոյց անապատաւորն վասա-

և ոմանք հաց և ոմանք աղբ: Իբրև ետես զայս, զարմացաւ և աղաչեաց զԱծ առանձին յայտնել զայն նմա թէ որպէս զմի, ունելին կերակուր եդեալ առաջի ամենեքեան, իսկ յուտելն այնպէս բաժանէին: Եւ եկն առ նա ձայն 'ի վերուստ որ ասէր. որք զմեղր ուտեն նոքա են՝ որք սիրով և երկիւղիւ և լրջմտութեամբ նստին 'ի սեղանն և աղօթեն միշտ, և նկատեն զայս թէ նոքա իբրև զխունկ անուշ առաջի այ. իսկ որք հաց ուտեն նոքա են՝ որք գոհանան զառատ պարգևացն այ. իսկ որք զաղբ ուտեն նոքա են՝ որք տրտնջեն յուտելն և ասեն. այս ինչ բարի է կերակուր՝ որ պիտոյ էր այժմ և ոչ է, և այս ինչ խենէշ է և ոչ է կերակուր մարդոյ զոր եդեալ է առաջի մեր: Վասն այսորիկ զգուշացարուք և մի տրտնջեսցուք վասն կերակրոց և մի վասն ամենայնի ինչ. և զի ոչ է պարտ մտածել զայսպիսիս վասն պարգևութեան կերակրոյ, այլ գոհանալ զԱյ. և ոչ միայն գոհանալ. այլ և անարժան եա համարել զինքն մարդկան կերակրոյ՝ որ է առատ հաց հարկաւորն. այլ և զառաքելոյն առնել որ ասէ, եթէ ուտէք և եթէ ըմպէք, զինչ և առնէք, 'ի փառս այ արարէք:

: Երկուք ումանք որոշեալք յաշխարհէ բնակէին վերոյ Արասայ 'ի լեառն որ կոչի Փոնեաբոն առ գետովն մերձ 'ի վանսն որ կոչի սրբոյն Թէոդորոսի՝ ծերն առուր ընդ աշակերտին իւրոյ սրբոյ: Եւ եղև մեռանել ծերոյն և գնալ առ որ անձկացեալն էր. և աշակերտն արտաքեալ աղօթս հանդերձ արտասուօք թաղեաց զնա: Իսկ յետ սակաւ ժամանակի ծանեաւ աշակերտն զպիտոյսն իւր 'ի ձեռն հրեշտակի այ առ հանդերձեալ փառսն. վասն այսորիկ եկեալ մերձ 'ի շէնս եղբայր անդ զոմն որ գործէր զերկիր և ասէ ցնա. արա սէր, եղբայր, և առ բրիչ և հեծանոց և եկ ընդ իս: Եւ արար այրն զհրամայեալսն 'ի նմանէ: Եւ յորժամ եկին 'ի լեառն, եցոյց անապատաւոր եղբայրն զվասա-

Digitized by Google

կատարեալ զգերեզմանն ծերոյն և ասէ. բերէք յայսմ տեղւոջ, եղբարք։ Եւ մինչ բերէր, խնդրէր միաբանել յաղօթել. և յետ կատարելոյ աղօթիցն ասէ ցաշխատաւորսն. աղօթս արար վասն իմ, եղբարք։ Եւ համբուրեալ զնա՝ առժամայն եդ զանձն իւր 'ի վերայ ծերոյն և աւանդեաց զհոգին 'ի ձեռս տեառն։ Եւ աշխարհականն տեսեալ զայս փառաւորեաց զԱծ, և զգերեզմանն ծածկեալ գնաց 'ի տուն իւր։ Եւ իբրև եկն քարընկէց մի 'ի գերեզմանէն, ասէ առ ինքն. վասն արարի, զի ոչ առի օրհնութիւն 'ի սրբոցն։ Դարձաւ և ոչ կարաց կալ 'ի վերայ գերեզմանացն։

ԱՒԵԼԻՆ՝ անանց վասն արդարոյ Մարկեղէ 'ի Թեսաղոնիկեայ՝ եթէ յորժամ կամէր երթալ յաւուր կիւրակէի 'ի ժողովս, պատրաստէր զինքն և բան ինչ ասէր 'ի գրոց և խօսէր յայն մինչև երթայր յեկեղեցին, և շրթունքն նորա ոչ շարժէին, զի մի ոք լուիցէ 'ի նմանէ։ Իսկ յորժամ կանգնէր 'ի ժողովս, կուրծքն իւր թանայր յարտասուացն. և ասէր՝ եթէ յորժամ զժողովս կատարեմք, տեսանեմ զամենայն եկեղեցիս իբրև զհուր. և յորժամ արձակէր եկեղեցին, դարձեալ գնայր հուրն։

կատար սրբոյ ծերոյն զգերեզմանն և ասէ. բերէք յայսմ տեղւոջ, եղբարք։ Եւ մինչ բերէր նա, խնդրէր միաբանել յաղօթել. և յետ կատարելոյ աղօթիցն ասէ ցաշխատաւորսն. աղօթս արար վասն իմ, եղբարք։ Եւ համբուրեալ զնա՝ առժամայն եդ զանձն իւր 'ի վերայ ծերոյն և աւանդեաց զհոգին իւր տեառն։ Իսկ աշխարհականն տեսեալ զայս, յաչս եղեալ փառաւոր առնէր զԱծ զի այնպէս ծառայս ունի 'ի ծածուկ անխլաբար. և արտասուօք զգերեզմանն ծածկեաց և գնայր 'ի տուն իւր։ Իբրև եկն 'ի ճանապարհն, քարընկէց մի միայն հեռացեալ 'ի գերեզմանէն, զղջացեալ զանձն էառ և ասէր առ ինքն. զինչ արարեր, ով մարդ, զի այնպիսի սրբոյն արժանացար սպասաւորել՝ և ոչ առեր օրհնութիւն ինչ 'ի նմանէ, այլ դարձայց և 'ի սուրբ գերեզմանէ նորա առից օրհնութիւն և այնպէս գնացից։ Եւ դարձաւ անդրէն վաղվաղակի, և յաղեալ(?) ոչ կարաց կալ 'ի վերայ գերեզմանացն. և շրջէր խնդրելով այսր(?) անդր և ոչ կարաց գտանել. և հիացեալ լայր և ասէր. ով սուրբդ Այ, ընդէր ծածկեցայց յինէն 'ի մեղաւորէս։ Եւ այնպէս լալագին գնաց 'ի տուն իւր և պատմէր ամենեցուն։

։ Աւելին վասն Հօրն Մարկեղէ Թեսաղոնիկեցւոյ՝ եթէ մինչ գնայր յեկեղեցին յաւուր կիւրակէի յաղօթս, յառաջագոյն բանս ինչ 'ի սուրբ գրոց ասէնայր 'ի բերան իւր և ասէր զայն բան մինչև գնայր յեկեղեցին, և յաւել բանիւն զշրթունս իւր ոչ շարժէր թէ լուիցէ ոք։ Եւ մինչ կայր յաղօթս անմռունչս, թանայր արտասուօք զկուրծս իւր. և ասէր եղբարցն՝ եթէ յորժամ սկսանի եկեղեցին յաղօթս, տեսանեմ զամենայն եկեղեցին լցեալ իբրև զհուր բորբոքեալ. և իբրև կատարի աղօթքն՝ անյայտ լինի հուրն այն։

Digitized by Google

ՄՕՒՐ փրկչին Յովհաննէս որ աքսորեցաւ 'ի Մարկիա-նոսէ՝ եթէ երբեմն գնայցաք 'ի Սիւրիա առ աբբայն Պի-մէն և կամէաք հարցանել վասն խստութե̃ն սրտից։ Եւ ծերն ոչ գիտէր հելլենացի և ոչ թարգմանն գտաք։ Եւ յորժամ եսես զմեզ ծերն տրտմեալս, սկսաւ բարբա-ռել հելլենացի խօսիւք այսպէս. բնութի̃ ջրոյ կակուղ է, բայց 'ի կաթել կաթլոցն՝ զքարինս խստագոյնս և ըղ-վէմս ծակեն. այսպէս և սիրտք մեր խստացեալ յախտից, սակայն 'ի կաթել ա̃ծայինն բանից խիստ ընդ խիստ 'ի նո-սա՝ ընդարձակին, և լուեալ զբանս սուրբս՝ բանին եր-կնչել յա̃յ. և այսր աղագաւ որպէս փափագէ եղջերու յաղբիւրս ջուրց, փափագեն անձինք մեր առ ա̃ծ. զի որպէս եղջերուք յանապատի հարեալ 'ի սողնոց յար-ձակին ջերմացեալք 'ի վերայ աղբերաց՝ ըմպեն և զովա-նան, նոյնպէս և մեք միայնակեացքս, որք յանապատի նստեալ եմք՝ խոցոտիմք յորդւոց չար դիւացն, և փա-փագեմք յաւուրս շաբաթուն գալ յաւուր կիրակէի յե-կեղեցին որպէս 'ի վերայ աղբերաց, ուր և ըմպեալ 'ի մարմնոյ և յարենէ տեառն մերոյ Յ̃սի Ք̃սի սրբիմք 'ի դառնութ̃է՝ չարին և զմայլեալ զովանամք։

ԿԱՑԻՐ ոմն միայնակեաց յանապատին՝ մեծ ընդ ա̃յ, ազգաւ կապադովկեցի, անուն նորա Իէմն. վասն որոյ բազում երանելիս պատմեցին մեզ, և 'ի բազմապատիկ փորձանաց պատմութ̃է առնս այսորիկ մեծամեծս օգտե-ցաք, և ես 'ի խոնարհութ̃էն 'ի լաւութենէն յանասա-ցուածութ̃էն և 'ի սիրոյն զոր ունէր յա̃մ։ Ասէր մեզ հանապազ ծերս այս ժուժկալ. համառօտեցէք զինձ, որ-դեակք, թագաւորեմ։ Եւ մեք ասեմք ցնա. համառօտ և մեզ, աբբայ Իէմն, 'ի կապադովկեցւոց ոչ ոք թագա-ւորեաց, անարատ կալ զմտածութի̃ քո։ Եւ նա՝ յա-ձախելով ասէր այսպէս՝ եթէ, որդեակք, թագաւորեմ։ Յորժամ եկին ազգն Մազքթաց և զամենայն ազգն զայն յափշտակեցին՝ եկին յԱսեան և բազում կրօնա-

1 . . . 'ի դառնութ̃է չարին և զմայլեալ զովանամք։ Այսպէս զար-մացոյց զմեզ սուրբ հայրն Պիմէն. լեզու զոր ոչ գիտէր և ուսեալ ըն-նաւ չէր. խօսեցաւ պարզ առանց կակազութ̃է. և մեք օրհնեցաք 'ի նմա-նէ ուրախացեալ գնացաք։

2 Իսկ նա յանձնախելով ասէր. այսպէս է, որդեակք, թագաւորե-լոց եմ ես։ Եւ մեք զերկբայութ թագաւորութեանս խնդրեցաք, իսկ նա հոգւոյն տեսութբ խնդացեալ կանխաւ ասէր մեզ թագաւորելոց

Digitized by Google

ւորս սպանին և զաւազակս գերեցին. զմնացեալս առին 'ի փա-րախէ որդւոյն Յոհաննու՝ որ էր ընթերցող մեծի եկե-ղեցւոյն Կոստանդնուպօլսի. առին և զաբբայն Եւս-տաթէոս զհռովմայեցին և զաբբայն Թէոդորոս, և էին երեքեան սկսարկեալք: Իսկ մինչդեռ տանէին, ասէ աբ-բայն Յովհաննէս ցգերեվարսն. ածէք զիս 'ի քաղաքն, և ես արարից զի տացէ ձեզ եպիսկոպոսն քսան և չորս դահեկանս: Տարաւ զնա մի 'ի բարբարոսացն և եբեր մերձ 'ի քաղաքն: Իսկ գնաց աբբայն Յոհաննէս, եգիտ զե-պիսկոպոսն. գտաւ անդ և աբբայն Ղեւոնդիոս՝ որ եկեալ էր 'ի քաղաքն, և այլք ոմանք 'ի հարցն՝ որք չէին ըմ-բռնեալք: Իսկ աղաչէր աբբայն Յոհաննէս զեպիսկո-պոսն՝ տալ դահեկանս և առնուլ զնոսա: Իսկ եպիսկո-պոսին՝ ոչ գտաւ, բայց միայն ութ դահեկանս. և 'ի տալ զայն ցբարբարոսն, ոչ կամեցաւ առնուլ, այլ ասէ. կամ տուք զամենեսեան քսան և չորս դահեկանսն և կամ տուք զերիտասարդն: Իսկ ձանձրացեալք որք էին 'ի քա-ղաքն՝ առին զաբբայն Յովհաննէս, ետուն ցբարբարոսն, որ լայր և աղաչէր 'ի գնալն. և տարան զնոսա բարբա-րոսքն 'ի տաղաւարն իւրեանց: Իսկ յետ երից աւուրց էառ աբբայն Ղեւոնդ զութ դահեկանսն, և գնաց 'ի տաղաւար բարբարոսացն, աղաչէր և ասէր. առէք զայս դահեկանքս և արձակեցէք զհիւանդատար, զի ոչ ինչ կարեն գործել ձեզ, և ես որ առողջս եմ, ծառայեմ ձեզ: Իսկ առին բարբարոսքն և արձակեցին՝ զերիս հարսն որ ըմբռնեալ էին: Իսկ մինչդեռ գնային աբբայն Ղեւոնդ

եմ զայն դրսում ամենայն սրատեղքն բղձան: Իսկ յարձամ եկին աղքն Մաղկաց... ։ դահեկանս ոսկւոյ: Քանզի զայն պահանջէին բարբա-րոսքն, որպէս զի ոչ գանեալ նոցա զայնքան ոսկին՝ սպանցեն զնոսա որպէս թէ պաշտօն մատուցանել դոյ. և լու հասարէին զպատանանելն զնոսա, քան առնուլ ինչ 'ի նոցանէ. և զի բանսցեալք էին յոյժ ժա-մանակի բարբարոսքն և ոչ ուսեալք երկիւղ: Արդ առեալ զնա մի 'ի բարբարոսացն... ։ Իսկ մի ձանձրոյթ առնէք ինձ՝ զի մեռան ինձ ընկեր-քն իմ: Իսկ զի տարածեալ քաղաքքն էին և հեռաւորոյն, և երկնչէին եւ 'ի բարբարոսաց, և ոչ թոյլ տայր բարբարոսն գտանել 'ի քաղաքն և գտանել զքսան և չորս դահեկանն և տալ, այլ զի շտապ տարանողք զա-լով նորա առեալ զաբբայն Յոհաննէս գնաց: Իսկ լայր և աղաչէր աբ-բայն Յոհաննէս 'ի գնալն, ոչ վասն իւր ինչ, այլ վասն աբբայ Եւստա-թէոսի և Թէոդորոսի: Իսկ եպիսկոպոսն և որք ընդ նմայն էին կոչեալ բարձեալ լալով գործեալ անդրէն 'ի քաղաքն: Իսկ աբբայն Ղեւոնդիէս էառ զութ դահեկանն զայն և հեռաւորեալ եղեալ ընթացաւ զհետ բար-բարոսին... ։ արձակեցին զերիս հարսն որք ըմբռնեալք էին: Իսկ

ընդ ումեմն 'ի նոցանէ 'ի սպասաւորութեն, գլխատեաց զնա. և կատարեցաւ 'ի նմանէ գրեալն՝ եթէ մեծ քան զամենայն սէր է զանձն դնել 'ի վերայ բարեկամի իւրոյ: Այլ մեք գիտացաք եթէ թագաւորել ունէր, որ և նոյն ինքն թագաւորեաց՝ որ եդ զանձն 'ի վերայ բարեկամին:

ՊԱՏՄԵԱՑ մեզ աբբայն Աւսեբիոս քահանայն Հռոմի-թա՝ եթէ անցեալ երբեմն դևն ընդ սենեակ ծերոյ 'ի զգեստ կրօնաւորի՝ բախէր զդուրսն. երաց ծերն և ասէ՝ աղօթես: Այլ դևն ասէ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից: Դարձեալ ասէ ծերն՝ աղօթես: Այլ նա զնոյն բան կրկնեաց: Յայնժամ ասէ ծերն. այսպէս աղօթես, փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից: Այլ առժամայն դևն իբրև 'ի հրոյ փախուցեալ աներևոյթ եղև:

ԳՆԱՑԱՔ առ աբբայ Զօսիմոս կիլիկեցին 'ի Սինայ, և էր ինքն ծերն թողեալ զեպիսկոպոսութիւնն, եկեալ բնակէր 'ի սինէականն մեծ վարուք և գեղեցիկ գործովք: Պատմեաց մեզ և ասէ՝ թէ յորժամ էի մանուկ՝ եկի 'ի լեառնն Սինայ և գնացի յայր մի, և անդ ծեր՝ սքեմնի կարգք զգեցեալ: Այլ յորժամ ետես զիս յառաջ քան զողջունելն ասէ. վասն էր եկիր այսր, Զօսիմէ. ոչ կարես աստ նստել: Այլ ծանիր և ասեմ. արա սէր, աբբայ, և ասա՝ ուստի ճանաչես զիս: Այլ նա ասէ. յառաջ երկու աւուրբք երևեցաւ ինձ այր և ասէ՝ եթէ ահա գայ մերձ առ քեզ կրօնաւոր մի՝ անուն Զօսիմէ, մի թողուր զնա նստել աստ, կամիմ 'ի նա զեկեղեցին Բաբելոնի որ յԵգիպտոս՝ հաւատալ: Այլ գնացեալ յինէն իբրև քարընկեց մի և արար աղօթս իբրև երկու պահս լռութեան: Այլ յետ առ իս և համբուրեաց

հարքն երեքեան ասէին ցաբբայն Լեւոն. ոչ գնասցուք և մեք, զի դու վասն մեր մեռանելոց ես: Ասէ ցնոսա աբբայն Լեւոն. գնացէք, եղբարք, զի սոքա ոչ եթէ մեռուցանել կարեն զիս, այլ թագաւորեցուցանել: Իսկ հարքն ոչ խնայեցան զառաջեալսն, այլ համարեցան թէ փախստականաց լինելով աղաչանելոց է 'ի նոցանէ. և այնպէս գնացին ազատեալք 'ի ձեռն աբբայ Ղևոնդիոսի. և աղօթէին վասն նորա, զի և նա ազատեսցի 'ի ձեռաց անօրինաց այնոցիկ: Իսկ մնացեալ գնայր աբբայն Լևոնդ ընդ ումեմն 'ի նոցանէ 'ի սպասաւորութիւն, անդ գլխատեաց զնա բարբարոսն: Այսպէս նահատակեցաւ աբբայն Լևոնդ, և կատարեցաւ նախատեսութեն նորա որ ետ զանձն իւր վասն եղբարցն և թագաւորեաց ըստ բանին՝ որ մեծ է քան զամենայն սէր և քան զամենայն մեծութիւն զանձն դնել 'ի վերայ բարեկամի իւրոյ:

Digitized by Google

զճանապարհ իմ և ասէ. կեցցես, որդեակ, բարեաւ եկիր. Ած եբեր զքեզ այսր, զի զմարմին իմ ամփոփեսցես։ Եւ առեալ. քանի՞ ամս ունիս աստ, աբբայ։ Եւ նա ասէ. քառասուն և եօթն այժմ կատարեցի 'ի դմա, որդեակ։ Եւ երևեցաւ պատկեր նորա իբրև զհուր, և ասէ ցնա. խաղաղութի ընդ քեզ, որդեակ, և աղօթեա վասն իմ։ Եւ զայս ասացեալ եդ զանձն իւր և հանգեաւ ծառայն Այ. և ես թաղեցի և ամփոփեցի զնա, և յետ երկուց աւուրց դարձայ 'ի տեղւոյն՝ փառաւորելով զԱծ։

ՊԱՏՄԵՑԱՒ՝ 'ի վանս նորոգինեաց 'ի սուրբն Յորդանան ես և եղբայրն Սոփրոնիոս։ Եւ պատմեաց մեզ աբբայն Աթենոդայոս քահանայ նորին վանիցն՝ եթէ է յաշխարհն իմ վանք մի կուսանաց, յորում են անձինք քառասունք։ Ի նոյն վանսն խորհուրդ առին հինգ կուսանք փախչել 'ի գիշերի 'ի վանիցն և անկանել իւրեանց արս։ Եւ մինչդեռ ամենեքեան նստեալ կային՝ անդէն այսահարեցան և ոչ ելին 'ի վանիցն, այլ գոհանային զԱյ խոստովանեալ զմեղս իւրեանց և ասէին. գոհանամք զքեզ Այ՝ որ եբեր զմեծ խրատս զայս 'ի վերայ մեր, զի մի անձինք մեր կորիցեն։

ՊԱՏՄԵՑԱՒ 'ի Թերապիդոս և խօսէաք 'ի Ալեկոպոլիս քաղաքին ընդ սոփեստին Փիլամմոնի վասն օգտակար հնարհին։ Եւ պատմեաց մեզ և ասէ. կայր աւազակ մի յԱլդեսեյ քաղաքին՝ անուն նորա Պատրիթ. զլաղուցանէր մեր կալցող, զգաղուցանէր եզանն և ամենեքին բազում չարիս գործեաց, որպէս ասել թէ այլ ոք չէր արարեալ։ Յերբեմն ժամու 'ի լերինն յորժամ էր յաւազակեալն՝ ունէր առաւել քան զերեսուն արս. եկն առ ինքն զղջումն սրտի 'ի վերայ այնորիկ զոր գործեացն, և թողեալ զարս ընդ իւր՝ գնաց 'ի վանս, և 'ի բախելն զդրունն՝ ել դռնապանին և ասէ ցնա. զի՞նչ խնդրես աստ, աւազակապետ. Ասէ ցնա. միայնանալ կամիմ լինել։ Եւ եկն դռնա-

։ Վանք մի էր 'ի Սերեկիա կանանց, յորում բնակեալ էին քառասուն կուսանք Ճգնաւորք. իսկ 'ի նոցանէ հինգ կուսանք խորհեցան ելանել գաղտ 'ի վանացն 'ի գիշերի և գնալ, զի առնացեն այր։ Իսկ 'ի միում գիշերի յորում ամենեքեան 'ի քուն էին, առեալ զհանդերձս իւրեանց կամեցան գաղտ ելանել, և հնդեքեան դիւահարեցան։ Իբրև այն եղև, ոչ ելին 'ի վանացն, այլ գոհանալով զԱյ խոստովանէին ասելով. գոհանամք զԱյ՝ որ խրատելով խրատեաց զմեզ, բայց 'ի մահ ոչ մատնեաց։

Digitized by Google

ղանմն պատմեաց աբբայուն վասն նորա ։ Գնաց աբբայն և տեսանէր զնա զի ահա ծերացեալ էր և ասէ ցնա. ոչ կարես աստ լինել, զի բազում վաստակս ունին եղբարքըս, և հեկումն սոցա մեծ է, և քո անընտել գոլով կանոնաց վանաց՝ ընտելանիլ ոչ կարես ։ Եւ նա ասէ. այո, արա ինձ զայդ՝ ընդունել զիս, և ես զգուշանամ ամենայնի ։ Եւ աբբայն ասէ. ոչ առնես ։ Յայնժամ ասէ. գիտեա զի ես եմ Դաւիթ աւազակապետն, և վասն այսորիկ եկի այսր՝ զի լացից 'ի վերայ մեղաց իմոց. եթէ ոչ կամիցիս ընդունել զիս, երդմնեցո զիս և ես կատարեմ. ապա թէ ոչ՝ երդնում յայն որ յերկինսն է, զի երթայց յառաջին գործն իմ և բերեմ զորս էին ընդ իս, և զամենեսեան զձեզ սպանանեմ և կործանեմ զվանս ձեր ։ Եւ զայս լուեալ աբբայն՝ ընկալաւ զնա 'ի ներքս և խուզեաց և ետ նմին զսուրբ սքեմն ։ Եւ նա սկսեալ 'ի ջանս և 'ի վարս, 'ի խոնարհութի և յանձնկնդրութի, և հանգուցանէր զամենեսեան, և քան զբազումս յառաջեաց ։ Բնակելով նորա երբեմն 'ի սենեակն՝ եկաց առաջի նորա հրեշտակ տեառն և ասէ ցնա. Դաւիթ Դաւիթ, եթող ած զամենայն անօրէնութիս քո, և կարող ես այսուհետև նշանս գործել ։ Եւ ասէ ցհրեշտակն. ոչ կարեմ հաւատալ քեզ, զի մեղք իմ ծանրագոյն էին զորս ստացեալ էի քան զաւազ ծովու, և արդ թողութիւն արար ինձ ած յայս սակաւ ժամանակս ։ Եւ ասէ հրեշտակն. քահանային Զաքարիաս ոչ հաւատաց ինձ վասն որդւոյ իւրոյ, և ոչ խնայեցի 'ի նա, այլ 'ի խրատ իւր կապեցի զլեզու նորա. նոյնպէս և դու մի անհաւատ լինիցիս զբանից իմոց, ապա թէ ոչ՝ ոչ անխնայեմ 'ի քեզ. վասն որոյ ոչ խօսեցիս ամենևին ։ Եւ աբբայն Դաւիթ ծունր ածեալ նմա ասէ. յորժամ յաշխարհ էի՝ զանպատշաճն առնէի, և արեանց հեղմունս առնելով խօսէի. իսկ այժմ 'ի ծառայելս այս օրհնութիւն նմա մատուցանեմ՝ եթէ զլեզու իմ արգելու 'ի խօսելոյ ։ Եւ ասէ հրեշտակն. կացցես յօրինաւոր խօսս, և 'ի դատարկին ամենևին 'ի բաց թէ ։ Եւ եղև այնպէս ։ Բազում նշանս արար նովաւ ած. և սաղմոսէր զսաղմոսերգութիւնն, և այլ ումեք բանի մեծի և կամ փոքու ոչ կարէր պատասխանել ։ Եւ նա պատմեաց մեզ զայս և ասէր՝ թէ բազում անգամ տեսի զնա և փառաւորեցի զած ։

Digitized by Google

ՊԱՏՄԵԱՑ մեզ աբբայն Պաւղոս հայր վանիցն աբբայ Թէոդորոսի՝ թէ ասաց ինձ ծեր ժուժկալ, եթէ երբեմն նստէի 'ի սենեակն իմ և ոչինչ առնէի չարչարանաց՝ գործելով զձեռագործն. և ահա եկն 'ի պատահմնն իմ մանուկ մի, որ ունէր վերարկու սարակինոսի ըստամանձնեալ, և կացեալ առաջի իմ սկսաւ խաղալ և ոտնս ասել, և ասէ ցիս. ծեր, վայելչապէս խաղամ: Իսկ ես ոչ ինչ ետու պատասխանի: Իսկ դարձեալ ասէ. հաճիս 'ի խաղս: Իսկ յոչ խօսելն իմ, ասէ. զինչ կարծես, չար ծեր, եթէ մեծ ինչ գործես. աւասիկ քեզ, եթէ 'ի վաթսուն և հինգ և վաթսուն և եօթն խաբեցայ: Յայնժամ յարեայ և եղի ծունր Ա̃յ, և առժամայն անյայտ եղև:

ԱՍԷՐ աբբայ Աղեքսանդրոս յեղէգնուտէն՝ եթէ եկի երբեմն ես առ աբբայն Պաւղոս եղջաղայցին. նստեալ մեր 'ի սենեակ նորա՝ եկն ահա մի բախեաց զդուրսն, և յարեաւ ծերն և եբաց նմա և մտոյց հաց թրմեալ առաջի նորա, որով կերակրէր: Իսկ մնածէի եթէ օտար է. և խնդրհեցայ 'ի պատահմնէն և ահա աղուէս էր, և ասեմ ցծերն. ընդէր, կրօնաւոր, ետուր դմա ուտել: Պատմեաց ինձ զպատճառն և ասէ. խոստացի զնա մի զիւանել մարդոյ և մի անասնոյ, այլ գալ առ իս 'ի կերակրել. և ահա երեք ամիք են որ գայ առ իս երկիցս յաւուրն և ընդունի զկերակուրն: Իսկ յետ սակաւ աւուրց դարձեալ գնացի առ նա զնել 'ի նմանէ անօթս և առաջի. բարի ծեր, որպէս կայ աղուէսն: Իսկ ասէ. չարաւ, յանցեալ օրն եկն առ իս կերակրել, և տեսի զգերանն որ լի էր արեամբ, և ասացի ցնա. ահա ոչ լուար ինձ և կերար մարմինն, զնա ասէի, ահա այլ ոչ տաց քեզ կերակուր: Իսկ նա ոչ կամէր գնալ: Յայնժամ առի չուանն, երեքկնեցի և հարի զնա երիցս, և այնպէս գնաց:

ԱԲԲԱՅ Դանիէլ սկիւթացին 'ի մանկութեան իւրում բնակէր 'ի Սկիւթ: Յարձակեցան բարբարոսքն և գերեցին զնա. և 'ի գնալն նորա ընդ նոսա, մի քրիստոնասէր նաւավարս փրկեաց զնա յայնմ բարբարոսացն: Իսկ դարձեալ յետ երկուց ամաց եկին և առին զնա. մնաց ընդ նոսա ամիս վեց, և փախեաւ, և յետոյ երիցս արձակեցան բարբարոսքն և տարան զնա: Մի բարբարոս 'ի գերողացն նստեալ կայր առ ջրովն, և առ ծերն քար և եհար զպարանոցին և սկսաւ վախճանել 'ի նորին քա-

Digitized by Google

րեն։ Այսպիսեաց ծերն և եղև փախստական. եկն յԱ-ղեքսանդրիա, անկաւ առաջի եպիսկոպոսին Տիմոթէի. և արքեպիսկոպոսն խնդրեաց զգործն՝ ասէ ցծերն. որ ա-զատեաց զքեզ 'ի ձեռաց նոցա, նա ինքն ազատէ զքեզ 'ի մեղացս յայսցանէ. զի ակամայն ոչ արարեր մարդոյ, այլ գազանի։ Առեալ ծերն գնաց 'ի Հռոմ և զգուշութեամբ պատ-մեաց զամենայն պատահումն Հռովմէից. Եւ զայս բանն ասաց և նա զոր լուաւ 'ի պապէն Աղեքսանդրու։ Եւ գնաց և 'ի Կոստանդնուպօլիս և յԵրուսաղէմ և յԱնտիոք, աղ-ղեալ ամենեցունց, և զնոյն պատասխանի լուեալ յա-մենեցունց յարքեպիսկոպոսացն։ Դարձեալ գնաց յԱ-ղեքսանդրիա և ասէ առ ինքն. Պանփիլէ մարդասպան ապանցի։ Եւ գնացեալ յապարանս դատաւորին ետ զան-ձըն իւր 'ի դահիճսն, ասացեալ ցնոսա. ընդ ամն մախա-ցայ և տիրեալ 'ի չարէն՝ Հարկեղէս քարին և սպանի. աղաչեմ զի մատնեցայց իշխանին և մեռայց փոխանակ սպանութեան զոր գործեցի, որպէս զի թարձցի իմ համ-դերձեալ դատապարտութիւն։ Լուեալ 'ի նմանէ դահ-ճին եդ զնա 'ի բանդ զերեսուն օր, և ապա տարեաց իշխանին. և իշխանն բերեալ զնա առաջի, ուսաւ զամե-նայնն որպէս գործեաց ճշմարտութեամբ։ Եւ զարմա-ցեալ ընդ դատաստան ծերոյն՝ արձակեաց զնա և ասէ. գնա և աղօթեա վասն իմ, աբբայ, եթէ եօթն այլ ես սպանեալ 'ի նոցանէ։ Եւ ծերն ասէ ցնա. յաւուր 'ի մարդասպանութիւն իմ, ոչ երբէք պատասխանի պահան-ջեալ յինէն բարերարութեամբ նորին վասն այսր սպանու-թեանն. այսուհետև տամ զձեռն իմ 'ի Տէր զամ ա-ւուրս կենաց իմոց, գալով զիս 'ի ձեռն ումեմն անդա-մալուծի փոխանակ սպանութեանն զոր գործեցի։ Եւ առ ծերն զոմն անդամալոյծ և ծառայեաց զնա, մինչև կա-տարեաց զաւուրս կենաց իւրոց. և ամենեքեան որ 'ի Սկիւթ էին, լուեալ եթէ ծերն ունի զգթութեան. և ոչ ոք կարէր անտանել զդառնիեր անդամալուծին, բայց միայն ծերն։ Ի միում յաւուրց լուաւ անեղծութիւն նոյ շար-ժեաց ծերին զդանդաղելն գալ առաքինութիւն և վասն պաշ-տամանն իւրեք տալ պատասխանի։ Եհաս և զգուշն զգու-թիւն, և ժամ անցեալ մեռաւ զհարկանելն զանդամալուծին. բարձեալ զանդամալոյծն, եհան 'ի Ջերմուկ թի արևուն և շրջէր զնովաւ, քանզի էր լուծեալ 'ի բազում ամացն։

Digitized by Google

Այնին աշակերտն յետ փոքու միոյ, և կացեալ յետոյ՝ տեսանէր զգործն. անդէն մատուցեալ ծերոյն խիւս՝ կերակրէր զանդամալոյծ եղբայրն, քանզի ոչ ունէր ձեռս և ոչ կարէր ըմպել զկերակուրն իւր, զի սաստիկ էր նեղեալ, և ծերն զբերան նորա մաքրէր ձեռամբն և դնէր 'ի բերանն իւր : Տեսեալ աշակերտին զքաջանչելի գործն՝ յոյժ զարմացմամբ փառաւորէր զԱծ, որ շնորհէր այնպիսի ժուժկալութիւն ծերոյն՝ որով տայր ծառայութիւն անդամալուծին :

Էր ոմն ծեր բնակեալ 'ի վանս աբբայ Աւստորգիու, անուն նորա Յովհաննէս : Սա կամեցաւ արքեպիսկոպոսն Երուսաղէմի Եղիա հայր կարգել վանիցն, և նա ոչ հաւանեցաւ ասէ. ես 'ի Սինեա լեառն ընթանամ, շնորհեա ինձ աղօթս : Իսկ եպիսկոպոսն բռնադատեալ և ոչ կարացեալ արգելուլ զծերն, գնաց : Հրամայեաց նմա վերին հայրապետութեան արժանի լինել, և այսպէս ողջունեալ զնա ճանապարհորդէր 'ի Սինեա լեառն : Առ և զաշակերտն իւր, և անցեալ ընդ Յորդանան գետ՝ սկսաւ դողալ ծերն 'ի ջերմութէ. և զի ոչ կարէր գնալ, գտաք անդ այր մի փոքրիկ և անդր հանգեաք, քանզի ոչ կարէր շարժել 'ի տեղւոյն. դադարեաք անդ երիս աւուրս : Իսկ տեսանէր ծերն յանուրջս՝ որ ասէր ցնա. Ասա, ծեր, ուր կամիս գնալ : Իսկ ասէ. 'ի լեառն Սինա : Ոչ, աղաչեմ զքեզ, մի երթիցես : Իսկ յորժամ ոչ կարաց հաւանեցուցանել, գնաց 'ի նմանէ, և ջերմն ևս սաստկացաւ 'ի վերայ ծերոյն : Իսկ դարձեալ 'ի միւս այլ գիշերն նոյն ինքն այնու զգեստու կացեալ առ նմա ասէ. Է՞ր կամիս աշխատել, բարի ծեր, լուր ինձ և մի ամենևին գնասցես : Ասէ ցնա ծերն. իսկ դու ո՞վ ես. Ասէ ցնա որ երևեցաւն. ես եմ Յովհաննէս մկրտիչն. և արդ ասեմ քեզ, մի ամենևին գնաս աստի, զի այրդ այդ փոքր առաւել է քան զլեառն Սինեա, զի աստ բազում անգամ եկեալ մեր Տէրն Յիսուս տեսանել զիս. տուր ինձ բան, զի այդր բնակեսցես և տաց քեզ կեանս : Իսկ ծերն վաղվաղակի ընկալաւ, և ետ նմա բան մնալ 'ի յայրին. և առժամայն ողջացեալ եկաց 'ի նմա զամենայն կեանս իւր : Իսկ արար զայրն եկեղեցի, և ժողովեաց անդ եղբարս. այն է տեղին՝ որ կոչի Սափսափաս :

Եւ ոմն ծեր կայր յայսմ տեղւոջ 'ի Սափսափաս յայր,

և այնպիսի վարս ստացաւ՝ մինչև ամբոխք գային առ նա, և ընդունէր զնոսա և ՚ի գործ իւր հոգայր նոցա կերակուր։

ՊԻՆԱՑԱՔ՝ ՚ի փարախս սրբոյ հօրն մերոյ Մակարի առաքայ Աթանասիոս, և պատմեաց մեզ ծերն և ասէ՝ եթէ յորժամ էի ես ՚ի միաբանակեացսն ՚ի Պենթուկէլա, էր անդ Կրոնն անուն ՚ի Ալիկկիոյ ծնեալ, քահանայ կատարելատիպ՝ այսինքն մկրտութեան. զի որպէս մեծի այնպիսի ծերոյն հրամայեցին կատարել զմկրտութիւն։ Նա օծանէր և մկրտէր զամենեսեան որք գային ՚ի հաւատ. և յօծանել կանանցն զայթակղէր, ուստի խորհեցաւ զորոշիլն ՚ի վանիցն։ Եւ երևեալ նմա սուրբն Յովհաննէս մկրտիչ ասէ. համբերեա, և ես թեթևացուցանեմ ՚ի քէն զմարտդ։ Եւ պատահեաց աղջկան մի օտարոտիկ գեղեցիկ գեղով գալ ՚ի մկրտութիւն. և յայնպիսի գեղոյն խորշեալ քահանայն՝ ոչ կամեցեալ զնա օծանել մերկ սուրբ իւղովն, և յապաղէր երկուս աւուրս։ Լուաւ արքեպիսկոպոսն Պետրոս, և զայրացեալ ընդ գործն՝ կամեցաւ դնել սարկաւագուհի մի ընդ նմա։ Նաև քահանայն հրաժարէր և ասէր. ոչ կարեմ այլ յայսմ տեղւոջ հանդուրժել։ Եւ մինչդեռ գնայր ընդ լեառնն, պատահեաց նմա սուրբ Յովհաննէս մկրտիչն և հեզ ձայնիւ ասէր. դարձիր դարձիր անդրէն ՚ի վանս քո, և ես բարձից զմարտն ՚ի քէն։ Յայնժամ աբբայն Կրոնն ասէ ցնա զարմացմամբ. հաւատա ինձ զի ոչ կամիմ դառնալ, բազում անգամ ուխտեցեր և ոչ արարեր։ Ըմբռնեալ զնա սուրբն Յովհաննէս նստոյց զնա ընդ իւր, և կնքեալ ներքոյ համբերձին ՚ի կուրծսն զնշան խաչին՝ ասէ. հաւատա ինձ, քահանայ, անխորժելի վարձս առնել քեզ ՚ի

1 Քահանայն Կիլիկեցի ծերն, Կրոնն կոչեցեալ, կայր ՚ի վանք միաբանակեացաց, և հրամայեցին զեկեալսն ՚ի հաւատս մկրտել և օծանել. որ և յօծանելն զկանայս տկարանայր սակաւ մի և խորհէր փախչել։ Եւ երևեալ սուրբ Կարապետն՝ ասէ. մի գնար, և ես բառնամ զփորձութիւնն քո։ Եւ եկաց ժամանակս։ Եւ բերին աղջիկ զգեղ պարսիկ մկրտել. և ՚ի տեսանելն զգեղեցկութիւն նորա երկեաւ ՚ի տկարանալոյ, և երկու օր յամր թողեալ ոչ մկրտէր. ապա ՚ի յասելն թէ ընդէր յամես, նա փախեաւ ՚ի լեառն։ Եւ երևեցաւ սուրբ մկրտիչն և ասէ հեզ ձայնիւ. ընդէ՞ր գնաս, մի երկնչիր, և ես բառնամ զպատերազմդ։ Իսկ նա զգուշացմամբ ասէ. այլ ոչ լսեմ քեզ, զի ասես և ոչ առնես։ Յայնժամ նստոյց զծերն Կրոնն քահանայն սուրբ Կարապետն առ իւր, կալեալ զհանդերձէ նորա հեզիկ, և առեալ զձեռն խաչանիշեաց զսիրտն և ասէ. դարձիր և ոչ վտանգիս. ես կամիմ զի վարձս առցես յաղագս

մարտէչն. և զի ոչ կամիս՝ ահա բարձի 'ի քէն զմարտն, և վարձս ոչ ունիս 'ի գործոյս յայսմանէ: Իսկ դարձեալ 'ի միաբանութիւն յերրորդ աւուրն օծ և մկրտեաց զպառաւիկ կինն, և ոչ ամենևին զգաց թէ կին է. օծանէր և մկրտէր, և այլ ոչ շարժէր ցանկութի 'ի նմա. և այսպէս կատարեցաւ խաղաղութեամբ:

ՊԱՏՄԷՐ մեզ աբբայն Լեոնդիոս 'ի միաբանակեցաց սրբոյ Հօրն մերոյ Թէոդոսիոսի և ասէր՝ թէ յորժամ հրաժարեցի ես և նստայ յայս փարախ, և ելեալ 'ի կիրակէ մի գնացի յեկեղեցին առնուլ զսուրբ խորհուրդսն, և տեսի հրեշտակ զի կայր ընդ աջմէ զենարանին՝ երկիւղ մեծ անկաւ 'ի վերայ իմ, և հրաժարեալ գնացի 'ի սենեակն իմ: Յայնժամ եկն առ իս ձայն որ ասէր՝ թէ 'ի ժամէս յայսմանէ սրբեցաւ ընծայարանս այս: Իսկ ես հաւատացի նմա:

ԵՐԷՑՆ Պօղիքրոնիոս՝ այս Նոր փարախիս քահանայն պատմեաց մեզ և ասէր՝ եթէ նստէի ես երբեմն 'ի փարախն Պերգիու որ 'ի Յորդանան. և տեսի անդ երէցայր ոմն, որ յանդգնէր և ոչ կատարէր զկարգս սրբոյ կիրակէին: Յետ աւուրց հայէի զնոյն զուարթ յամենայն փոյթ և փախուցեալ 'ի դադարել, առ որ ասացի. այժմ բարի ես, երէցայր, հոգալով զանձն քո: Իսկ նա ասէ. տէր հայր, այժմ ունիմ մեռանել: Իսկ յետ երից աւուրց հանգեաւ:

ԴԱՐՁԵԱԼ նոյն ինքն աբբայ Պօղիքրոնիոս պատմեաց մեզ և ասէ՝ եթէ 'ի նոյն ինքն 'ի փարախն Պերգիու երէցայր ոմն մեռեալ, ասէ ցիս տանուտէրն. արա սէր և եկ, զի զանօթս երէցու տարցուք 'ի խոհանոցն: Իսկ յորժամ զանօթս երէցուն տանէաք 'ի խոհանոցն, տեսի զնա զի լայր, և ասեմ. դու, տէր աբբայ, ընդէ՞ր այդպէս լաս: Ասէ. զի այսօր զանօթս երէցուն ինձ բարձեալ ունիմ, և յետ երկուց աւուրց այլք զիմն: Որ և յետ երկուց աւուրց հանգեաւ:

այնր՝ վասն այնորիկ յամէի. արդ յայսմհետէ անպատերազմ գոլով քո՝ ոչ ունիս զայնորիկ վարձս: Իսկ դարձեալ քահանայն կանոն 'ի վերա և մկրտեաց զաղջիկն, և ոչ ծանեաւ բնաւ թէ կին իցէ. նոյնպէս և զայլս. և հանգեաւ խաղաղութեամբ: Քանզի պատերազմ կատարելոցն պսակ իցէ, իսկ անկատարից վասնզի. բայց որք հանձնէրեն սրբութեամբ և ներքին, ապա զպսակ վայելլեցեալ:

Digitized by Google

ՊԱՏՄԵԱՑ մեզ դարձեալ աբբայն Պօղիքրոնիոս քահանայն՝ եթէ այլ ոմն ծեր նստէր յայսմ փարախի աբբայ Պետրոսի, որ բազում անգամ գնայր դադարէր 'ի փապարս Յորդանանու. և ուր գտանէր դադարս առիւծուց, անդ նստէր: Ի միում աւուրց եգիտ երկու առիւծակորիւնս թիկանոցովն և եդ զնոսա յեկեղեցին և ասէ. եթէ պահէաք զպատուիրանս տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, սոքա ոչ ունէին երկեղուցանել զմեզ. բայց վասն մեղացն ծառայք եղաք: Եւ օգտեալք յեղբարքն, գնաց 'ի յարկս իւր:

ՊԱՐՁԵԱԼ ասաց Պօղիքրոնիոս՝ թէ լուայ յաբբայ Կոստանդեայ, որ էր հայր վանից սուրբ Ածածնին Նորոյ, թէ ոմն 'ի հարցն հանգեաւ 'ի Սկիւթոպօլսոյ ընդ եղբարսն որ յԱյլիէզիլ. առաք զնա և տարաք 'ի Պերգլիս թաղել: Եւ յորժամ ելաք 'ի դուրս և գնացաք 'ի Սկիւթոպօլսոյ մինչև 'ի Պերգլիս, ոչ հեռացաւ առիւծ մի՝ որ կայր 'ի վերայ մեռելոյն և երևէր 'ի ճանապարհորդելն մինչև 'ի տեղին, ուր եդաք զնա յերկիր:

Եւ ոմն ծեր նստէր 'ի փարախս Պերգլիու, և էին յայնմ փարախի հարք մեծ վարուք այսպիսի, որք կամէին առնել զնա հայր: Եւ ծերն աղաչէր և ասէր. թողութիւն արարէք, եղբարք, կամիմ զի լացից զմեղս իմ, չեմ բաւական հոգս առնել անձանց. այս գործս մեծ հարցն է և Ածազգեստիցն, իբրև զաբբայն Անտոնիոս և զՊակոմիոս և իբրև զԹէոդորոս սրբասնեալ և զԹէոդոս և զՍաբայ, որք էին վանորէից հարք: Եւ նոքա ոչ դադարէին աղաչել զնա զամ աւուրս: Եւ յորժամ ետես եթէ ամենևին բռնադատեն զնա, ասէ ցնոսա. թողլ տուք ինձ մինչև յերիս աւուրս՝ զի աղօթս արարից, և զինչ կամք Ած՝ զայն առնիմ առնել: Եւ էր օրն ուրբաթ, և յաւուր կիրակէին հանգեաւ 'ի Քս:

Եւ ոմն անապատաւոր յայտին Յորդանանու՝ անուն Բառնաբաս. սա ինքն յաւուր միում եկն ըմպել 'ի Յորդանանու, և եհար զնա եղէգն յոտն իւր և մնաց վէրն յոտն, և ոչ տանէր հոգս առ բժիշկսն, և ասէր առ ամենեսեան որ առ նա գային՝ եթէ քանիցս անգամ մարդ արտաքոյ չարչարի, այնքան 'ի ներքոյ զուարճանայ: Եւ եկեալ աբբայ Բառնաբաս 'ի Պերգլիս յայրէն իւրմէ՝ արար անդ ամ մի: Իսկ այլ ոմն անապատաւոր բնակէր

յայրն նորա, որ և տեսանէր հրեշտակ մի 'ի վերայ ըն-ծայարան սեղանոյն՝ զոր կանգնեալ էր ծերն և սրբեալ օրհնութեամբ։ Եւ ասէ անապատաւորն ցհրեշտակն. զինչ գործես աստ։ Եւ ասէ. հրեշտակ տեառն եմ. և յոր-ժամ սրբեցաւ այս՝ ինձ հաւատացաւ։

ՄԻԱՅՆ Պետրոս քահանայն սրբոյ հօրն մերոյ Սա-բայի պատմէր մեզ վասն աբբայիս որոյ և ասէր՝ եթէ յորժամ էր հայր փարախին որդոյն Մակարայ և Պե-րատինեա, եղև անդ եղբօր միոյ վախճանել, և ոչ լուաւ ծերն՝ մինչև թաղեցաւ սպասաւոր եկեղեցւոյն ժամահա-րաւն, որով ամենեքեան ժողովէին առ 'ի տանել զմե-ռեալն։ Եկն ծերն և եսես զդի եղբօրն եղեալ յեկե-ղեցւոջն. արտամեցաւ՝ զի ոչ, ասէ, ողջունեցի զնա նախ քան զելանելն 'ի կենցաղոյս. մատեաւ առ մահճին մե-ռելոյն և ասէ. արի, եղբայր, և տուր ինձ ողջոյն։ Եւ նա առժամայն յարեաւ և ողջունեաց զծերն։ Եւ ասէ ցնա ծերն. ննջեա այդ և համբեր՝ մինչև գայ Ք͞ս որ-դին ա͞յ և յարուցանէ զքեզ։

ՄԻԱՅՆ Դանիէլ ընդ աշակերտում իւր եկն յԱղեք-սանդրիա, և տեսանէ այր մի կոյր՝ որ նստեալ կայր մերկ 'ի փողոցն և ասէր. տուք ինձ և ողորմեցարուք։ Եւ ա-սէ ծերն ցաշակերտն իւր. տեսանե՞ք զսա որ անաչս է, 'ի մեծ չափ է, կամիմ ցուցանել ձեզ զվարս դորա։ Եւ գնացեալ ծերն առ նա ասէ. արա սէր առ իս, չունիմ ինչ գնել արմաւենի որով կերակրեցայց։ Եւ նա ասէ ցնա. զի՞նչ ասես, աբբայ, տեսանես զիս մերկ և խնդ-րեմ, և ասես ցիս՝ տուր ինձ որով գնել արմաւենի և կերակրիմ. բայց կացցես սակաւ մի։ Եւ ակնարկեաց աբբայն աշակերտին իւր, և եկին 'ի սուրբն Մարկոս արտաքոյ քաղաքին, անդ ունէր և զկարկս իւր կոյրն,

¹ Եւ երբեմն հայրն Դանիէլ և աշակերտ իւր յԱղեքսանդրիա. և տեսեն ծերն այր մի կայր և մերկ՝ որ անկեալ կայր 'ի փողոցի և ձայնէր և ասէր. տուք ողորմութիւն ինձ. Ասէ ծերն ցաշակերտ իւր. տեսանես զկոյրն զայն. ասեմ քեզ, որդեակ, զի մեծ չափ ունի սա. և թէ կամիս տեսանել՝ ես ցուցից քեզ, կաց դու աստ և մնա ինձ։ Եւ գնաց ծերն և ասէ ցնա. արա սէր առ իս, եղբայր, զի ինչ ոչ ունիմ որով գնեցից արմաւոյ տերև, զի գործեցից և կերակրեցայց նովաւ։ Ասէ ցնա կոյրն. և զինչ տեսանես առ իս, հայր, ահա զի կոյր և մերկ տեսանելով զիս դու ես խնդրես յինէն. այլ համբերեա սակաւ մի։ Յորժամ գնա-ցին ընդ նմա ծերն և աշակերտն իւր արտաքոյ քաղաքին յեկեղեցին Մարկոսի աւետարանչին զինի կուրին, զի անդ էր սննեալ նորա։ Ասէ

Digitized by Google

և ասէ ցծերն. դադարեա ինձ աստ, աբբայ: Եւ գնացեալ ՚ի սենեակն իւր՝ եբեր ծերայն զամբիւղ մի, ՚ի նմա էր չամիչ և թուզ և նուռն, և յայն զամբեղէն երեք ոսկի*, և ՚ի բերանոյ իւրմէ հանեալ արծաթ՝ ետ ցհայրն և ասէ ցնա. աղօթս արա ՚ի վերայ իմ: Եւ եկն ծերն առ աշակերտան իւր, լայր և ասէր. քանի փառաւոր ծառայս իւր ունի ՏԾ. կենդանի է տէր, ոչ դարձուցանեմ յօրհնութէ զորս ինչ: Եւ գնացին: Ի նոյն աւուրս հիւանդացաւ կնոջ մեծի եկեղեցւոյն. ցաւէր յոյժ կուշտքն, և անկեալ դնէր ՚ի սուրբ ոտսն Մակարի: Աղաչեցաւ նմա սուրբն Մակար առաքելայն և ասէ. բերէք ըզկոյրն և դիցէ զձեռս իւր և առողջասցի: Ընթերցեալ զորգլխան իւր և եբեր զնա բանութբ, և եդեալ զձեռն՝ առժամայն առողջացաւ: Յայտ եղև այս ամենայն քաղաքին. և լուեալ հայրապետն՝ յարեաւ խնդրել զկոյրն, և եգիտ զնա փոխեալ առ տէր: Դարձաւ ՚ի Սկիւթ, և յարուցեալ ծերն աշակերտաւն իւրով և բաղումք ՚ի հարանց գային զկնի առնուլ զօրհնութիւն ծերոյն. և ամենայն

կոչէր ցծերն. կաց աստ և ճաշեա ինձ: Եւ մտեալ ՚ի սենեակն եբեր առ ծերն զամբիւղ իւր և ետ ցծերն, յորում կային չամիչ և նուռն ինչ և թուզ և երիս դահեկա ոսկի, և եհան ՚ի բերանոյ իւրոյ այլ ևս երիս դահեկա ոսկւոյ և ետ զայն ևս ցծերն և ասէ. աղօթեա ինձ, հայր: Եւ եկն ծերն առ աշակերտսն իւր և ողբայր և ասէր. տեսանէ՞ք, որդեակք, թէ քանիք են ՚ի ծածուկ ծառայք ԱՅ. կենդանի է տէր զի ոչ ինչ դարձուցից ՚ի նա յասկւոյս յայսմանէ, զի տէր է: Իսկ զկնի աւուրց կանանոյն աղայտարգէն հիւանդացաւ ՚ի ցաւս ստամոքս ՚ի լերդէն իւրմէ, և երևեցաւ նմա Մակար աւետարանիչն և ասէ ցնա. կոչեսցես զու զայս անուն կոյր, և նա դիցէ զձեռն իւր ՚ի ցաւադնեալ լեարդքդ և բժշկեսցիս նովաւ: Եւ նա առաքեաց զծառայս իւր և բերին զնա աղաչանօք և բանութբ. և իբրև աղօթեաց և եդ զձեռն իւր ՚ի վերայ ցաւադնեալ տեղւոյն, ողջացաւ առժամայն. և վաղվաղակի եւ կոյրն՝ որ էր մարդ ԱՅ՝ և գնաց ՚ի սենեակ իւր: Եւ եւ զբոյցս այս ընդ ամենայն քաղաքն: Եւ լուեալ զայս պապն՝ եւ գնաց ՚ի տեսանել զնա. և իբրև եկն, եգիտ զկոյրն զի փոխեցանեալ էր: Եւ լուան զփոխման նորա ամենայն քաղաքն և Սկիւտէ ևս, և եւ ծերն և բաղումք ՚ի հարանց ընդ նմա և եկին ՚ի թաղումն նորա և օրհնեցան յերանելւոյն յայն-

* Հին թարգմանիչն [illegible] սակաւոյ երեսուն եր եղջիւր. [illegible] որդիս թարի, [illegible] χρυσίον ընթերցեալ, κέρας [illegible] թարգմանութիւն երկիցս երեսուն [illegible] դահկանի, ՚ի փոխն որ ամենայնիս համանայն էր ընդ [illegible] եղջիւր սակ, այլ ՚ի մասնանն որդիս փոխանի առ ՚ի [illegible] ոսկի: Մարթ է խորհել [illegible] թարգմանութեանն κεράτιον [illegible], որ [illegible] իւր [illegible], յորմէ [illegible] ընթեռնլի:

քաղաքացիքն անդր ժողովեցան գոհութեամբ բազմաւ, և թա-ղեցին զնա մերձ առ տաճարն Մարկոսի՝ որ էր վասն Ամբի յիշման։ Եւ էր վարք նորա այսպէս. որք խնդրէին 'ի նմանէ ոսկի, գնէր 'ի յանցաւորաց և այլ ումեքէ և տայր հիւանդաց։ Յետ երեսուն և ութ ամաց կատարեաց զկեանս իւր։

ԱԲԻԻՆ վասն տառապ Կղեմէնտոսի հօրն Պենթուկլայ՝ ե-թէ երբեմն գնայր 'ի Սամարիա. պատահեցին նմա ե-բրայեցիք և կամէին զնա սպանանել, մերկացուցանէք ըզ-գեստս իւրեանց՝ յարձակեալք 'ի վերայ ծերոյն. և յորժամ ձգեցին հարկանել զնա, մնաց ձեռք նոցա ժամ մի անշարժ։ Եւ առաքեալ ծերոյն աղօթս՝ արձակեաց զնոսա, և 'ի գնալն գոհանային զնմ։

ՃՈՒՐ ոմն նստէր 'ի վանս տառապ Պետրոսի մերձ 'ի տուրբ Յորդանան՝ անուն նորա Եղիազար. սա պատ-մէր մեզ և ասէր՝ թէ յորժամ նստէի 'ի Հռայիթ, եր-բեմն առաքեցաք երիս եղբարս 'ի պաշտօն 'ի Թեբայիդ. և 'ի շրջելն ընդ անապատն մոլորեցաք 'ի ճանապարհէն ընդ անմշակս, և ջրոյ կարօտեալք ոչ գտանէաք զօր մի. սկսաք պապաքել՝ մինչ զի 'ի ծարաւոյն և 'ի խորշակէն խեղ-դեալք ոչ կարէաք քայլել։ Գտաք յանապատին ծառ մի մուռինկինա, դադարեցաք իւրաքանչիւր ոք 'ի մէնջ ընդ նովաւ 'ի ստուերին և կարծէաք մեռանել. և յոր-ժամ ննջեցաք, եղև առ մեզ հրաշք. և տեսի ջրհոր մի լի ջրով զի զեղոյր, և կային երկուք ամանք առ ափն ջըր-հորին փայտեղէն բաժակաւ։ Եւ ես սկսայ աղաչել զմի 'ի նոցանէ և ասեմ. արա սէր, տէր, և տուր ինձ սակաւիկ մի։ Եւ սկսայ աղաչել զմիւս այլն, և ասեմ. արա սէր, տէր իմ, և տուր ինձ սակաւիկ մի ջուր, զի նուաղեալ եմ։ Եւ նա ոչ կամէր ինձ շնորհել։ Ապա ցնա միւս այլն. տուր իւր սակաւ մի։ Եւ նա ասէ. մի տացուք նմա, զի յոյժ հեղգ է, բայց վասն ստարութեան տացուք նմա։ Եւ

մանէ. եւ և ամենայն քաղաքն օրհնէին 'ի նմանէ։ Եւ հանդերձ զնշխա-րին նորա, մեծաւ փառաւորութեամբ և աղօթիւք եդին 'ի գերեզմանի Մար-կոսի առաքելոյն։ Իսկ կեանք նորա էր այսպէս. զոր ինչ և ունէր՝ նմա տէր յաւուրն, առնէր զաւուրն պէտս իւր և մնացորդաւն գնէր խըն-ձոր, նուռն և շամիչ, և բաշխէր զայն հիւանդաց 'ի հիւանդանոցն։ Եւ զերեսուն և ութ ամ կեցեալ էր նա յայս գործ, և զի վասն կար-ծեաց մարմնոյ, և ինքն ժուժկալական առաքինութեամբ էր զարդա-րեալ և ճգնութեամբ։

այսպէս շնորհեաց ինձ, և ետու այնոցիկ որ ընդ իմն էին։ Եւ առժամայն մեք զօրացաք և գնացաք զերիս աւուրս, և այլ ոչ ևս տրտմաք մինչև հասաք յաշխարհ։

ՊԱՏՄԵՑԻՆ՝ 'ի վանից սրբոյ հօրն Մ՝ Թէոդորոսի միաբանակեցացն՝ եթէ յառաջ քան զաւուրս զայս եղև սա ոմն ծեր, անուն նորա Անթոս. սա յամենայն աւուրս իւր 'ի պահս լինէր 'ի Կուտելա։ Յերբեմն ժամու յորում էր յանապատն, ահա տաճիկք գային 'ի կողմանն յայնմանիկ, և տեսեալ զծերն ոմն 'ի նոցանէ՝ մերկացոյց զսուրն իւր կամեցեալ սպանանել զնա։ Եւ ծերն 'ի տեսանելն զպատրաստեալն 'ի գալ, նայեցաւ յերկինս և ասէ. տէր Յս. Քս, եղիցին կամք քո։ Եւ առժամայն երկիրն պատառեալ եկուլ զտաճիկն, և ծերն փրկեցաւ և եկն 'ի վանս իւր փառաւորելով զած։

ՊԱՏՄԵՑԻՆ մեզ վասն այլոյ ումեմն ծերոյ յայսմ վանից հայրքն և ասեն՝ եթէ էր 'ի սմա միայնակեաց մի՝ անուն Պաւղոս, հեղլանեցի ազգաւ, նախ քան զաւակաս աւուրս հանգուցեալ։ Երբեմն գնաց ընդ բեռնակիրսն, և յօտարանացն եգիտ մանուկ մի փոքր, և յաղթմանէ սատանայի կոխեալ կիսէշն զմանուկն և տեսան զնա։ Տրամեալ հայրն Պաւղոս 'ի վերայ այսորիկ, և որոշեալ յանապատն 'ի տեղի մի որ կոչէր Յարաւնան, զի անդ էր լուեալ անապատաւորն, աշխարէր վասն մանկանն յա-

։ Պատմեցին 'ի վանից սրբոյ հօրն մեր Թէոդորոսի միաբանակեցացն՝ եթէ յառաջ քան զաւուրս զայս եղև սա ոմն՝ անուամբ Նորա Անթուս. սա զամենայն աւուրս իւր 'ի պահս լինէր 'ի Կուտելա։ Արդ յերբեմն ժամու յորում էր ծերն յանապատն և կայր յաղօթս, ահա տաճիկք գային 'ի կողմանն յայնմանիկ, և տեսին զծերն 'ի տարածման. և ոմն 'ի նոցանէ չարագոյնն դիմեաց 'ի վերայ ծերոյն սրբոյ՝ մերկացուցեալ զսուրն սրընթացիւք գայր սպանանել զծերն։ Իսկ ծերն իբրև ետես զպատրաստեալն սրամերկ արշաւանօք՝ հայեցաւ յերկինս և ասէ. տէր Յիսուս Քրիստոս. եթէ հրամայեսցես այսպէս կատարիլ ինձ, եղիցին կամք քո։ Եւ առժամայն երկիր պատառեալ եկուլ զտաճիկն։ Իսկ ընկերակցացն նորա տեսեալ՝ զի անյայտ եղև զինուորն՝ դիմեցին 'ի վերայ տեսանել զերդն, և տեսին զնա ընկղմեալ 'ի խորս երկրի, և գետեւս գնայր 'ի խորատակ անդ. և 'ի գողմանն եղեալ զարհուրեցան յոյժ՝ զիմացեալ թէ վասն ծերոյն սրբոյ պատուհասեցաւ։ Եւ ձայնէին սրբոյ ծերոյն. աղօթեա վասն մեր և մի պատուհասեր և զմեզ։ Եւ այնպէս մեծաւ երկիւղիւ գնացին, և ծերն փրկեցաւ 'ի սրոյ սպառնալեացն և եկն 'ի վանս իւր և պատմեաց, և ամենեքեան փառաւոր առնէին զած՝ այն որ պահէ զսիրելիսն իւր յամենայն մեքենայից չարեաց և յանհաւատից թշնամեաց։

Digitized by Google

մենաստանի և ասէր՝ եթէ ես արարի զպարապմունսն մանկանցն,
և խորհուրդ զապականող ունէին զդատապարտութիւն ՚ի դատաստանին.
Այս էր մերձ աւուրծ, և Պաւղոս համեստագոյն եղբայր ՚ի
բնակութիւն անապատին. ապաւինեալ զպարապմունսն զնա
՚ի վերայ իւր, զի յաղթեսցէ և կերիցէ զնա: Յորժամ ե-
տես եթէ ոչ լինի, ասէ առ ինքն. նմանեցից յանցս ա-
ռաջնոցն, և յորժամ գնայ ՚ի գետն ըմպել ջուր՝ գազան
կերիցէ զիս: Յորժամ անկաւ, յետ սակաւ ժամու ե-
կեալ առիւծն ամենայն լաւութեամբ ըստ նմանութեան մար-
դոյ վազեաց ՚ի վերայ ծերոյն և ոչ մերձեցաւ ՚ի նա ա-
մենեւին: Յայնժամ ծերն իմացաւ եթէ ած ընդունեաց
թողութիւն մեղաց իւրոց. և եկն դարձեալ ՚ի վանս իւր,
պատմեաց զամենայն յօդուտ և ՚ի հաստատութիւն:

ՅԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ գնացեալք ընդ աւուրս Թէոդորոսի,
որ ՚ի Փարոսն ՚ի սուրբն Սոփի: Այս պատմեաց մեզ ծերն
և ասէ. Հրաման առի ՚ի սուրբ Հօրէն մերմէ Թէոդորէ
յանապատաւորէն ՚ի սուրբ քաղաքն Աղեքսանդրի այս մե-
րոյ գնալ, և զոր ինչ ծեր մի՝ անուն նորա Աղեքսան-
դրոս, համբերեցի աղքատ: Ընդ ինձ ծունր և ասեմ. ա-
րա սէր, հայր, և առա զկենդանութեան գործս քո: Այս մեծ
մաքրութեան էառ ծերն, պատմեաց ինձ և ասէ. լուր,
որդեակ, ես յորժամ առի բազում ջերմութեան կրօնա-
ւորութեան զաւուրս արգելանական լինելի ՚ի կանանց, և ՚ի
գիշերի եղեալ յայր որդւոյն Թէոդորոսի. գային անդ և
այլ հարք և կատարեալք զգիշերայինն աղօթս. և որք
գային յայսմ այրի, ըստ համարոյ ընկեսն այս հարիւր
ծունր: Անձէր այրն ատանիճան ութ և տասն, յիշատակէին
անդր մնացին եղբարքն, մինչև առդեր փայտն որհնա-
թեան ժամահարին, և առաս զգայլք ՚ի հասարակացն:
Այս էր այս գործ մեր բազում ժուժկալութեամբ և մաս-
նաւորութեամբ իջանել յաղօթս յայրն: Յաւուր միում ե-
դև ինձ զարմանալ տեսիլ, իբր թէ ամենայն յաստակք
այրին կանթեղք էր լցեալ, և մի մի ՚ի նոցանէ վառեալ,
այլ և էին որք ոչ վառեալ: Այս տեսի երկուս այրս քաղ-
ցրս զգեցեալս և պատմուճանս, որք պատրաստէին ըն-
կանթեղսն: Յայնժամ ասեմ ցնոսա. ընդէ՞ր եղբ. ըն-
կանթեղս ասա, քանզի ոչ է բաւական այրս ասած ըստ
զանձն աղօթել: Այս նոքա ասեն. կանթեղքս այսորիկ
հարցն են: Դարձեալ ես ասեմ. և ընդէ՞ր ոմանք վա-

Digitized by Google

ւէլին և ոմանք ոչ։ Այլ նորա ասէին. եթէ կամեսցիս և
այլքն՝ վառեսցին։ Յայնժամ ասէ. վասն սիրոյ՝ ասա-
ցէք, կանթեղն իմ վառեա՞լ է թէ ոչ։ Այլ նորա ասէին.
աղօթեա և մեք վառեմք զնոյն։ Ասէ. և դեռ ես ա-
ղօթեմ, մինչև ցայժմ զինչ գործեցի։ Այլ 'ի վերայ այսմ
բանից եկեալ առ իս ոչ զոք տեսի։ Յայնժամ ասացի
ցանձն իմ. Քրիստափոր, եթէ կամիս կեալ, աշխատանս
առաւել պիտոյ է։ Այլ 'ի վաղիւն տրաշեցայ 'ի վանիցն՝
գնացեալ 'ի լեառն Սինեայ, ոչ ինչ բարձեալ՝ բայց մի-
այն զոր զգեցեալն էի։ Այլ յետ ամենայն անօղ ամս յի-
սուն 'ի Հոկմունս, եկն առ իս ձայն և ասէ. Քրիստա-
փոր, գնա 'ի միաբանութիւն քում որով բարութէ ըմն
ունիս, զի անդ կատարեսցիս ընդ Հարսն քո։ Այլ աՀա
եկի այսր։ Այլ յորժամ ասաց զիս զամենայնն, յետ սա-
կաւ միոյ Հանգեաւ առ տէր։

ՈՒԵՐ ոմն նստեալ 'ի փարախ եղեգնացին՝ որ է 'ի
սուրբ գետն Յորդանանու, անուն նորա Կիւրակոս, և
էր մեծ ծեր այն։ Եւ նա եղբայր ոմն եկն յաշխարհէն
Տարսոյ՝ անուն նորա Թէոփանոս, կամէր Հարցանել
զծերն վասն մտածութե պոռնկութե. և սկսաւ ծերն
մուծանել զնա յիմաստութիւն պարկեշտ բանիւք։ Այլ
եղբայրն օգտեալ 'ի նմանէ մեծապէս, ասէր ցնա այս-
պէս. տէր աբբայ, ես յաշխարհն իմ Հաղորդէի ընդ
նեստորականսն, և վասն այսր պատճառաց եկի բնակել
ընդ քեզ։ Այլ յորժամ լուաւ ծերն վասն նեստորակա-
նացն, տրտմեցաւ վասն կորստեան եղբօրն։ Իմաստնա-
ցուցանէր զնա և աղաչէր, զի 'ի բաց կացցէ յայսպիսի
չարափառ Հերձուածոյս և եկեսցէ 'ի կաթողիկէ և յա-
ռաքելական եկեղեցի։ Ասէ ցնա և զայս՝ թէ ոչ կայ այլ
փրկութի, բայց միայն ուղիղ խոստովանութե և Հաւատալ
ճշմարտութբ՝ թէ ա̃ծածին է սուրբ կոյսն Մարիամ։
Այլ եղբայրն ասէ ցծերն. թէ այսպէս, տէր աբբայ, որք
'ի Հերձուածն էին, ասէին եթէ ընդ մեզ ոչ Հաղորդիս,
ոչ կեցցես. ես թէ զինչ առնէի ողորմելիս, ոչ գիտէի.
աղաչեսցուք զտէր, զի գործ մի կատարեսցէ ինձ՝ թէ որ
է ճշմարիտ Հաւատն։ Այլ ծերն ուրախութբ ընկալաւ զ-
բանս եղբօրն և ասէ ցնա. նիստ 'ի յայր քո, և յուսամք
առ ա̃ծ յայտնել մեզ զճշմարտութիւն։ Այլ աղաչեաց ծերս
զեղբայրն՝ զի եկեսցէ 'ի յայրն իւր։ Այլ և գնաց յերք

մեռած ծովուն, ապաշխէր վասն եղեռին զման : Եւ յաւուր երկշաբաթու յիններորդ ժամու տեսանէ եղբայրն զանձն կանգնեալ երկինս ղալի կերպարանօք՝ որ ասէր ցնա . եկ և տես զնշանապատութիւն : Առ զինքն և եբեր 'ի տեղի մի խաւար, և ցուցեալ հուր և 'ի նմա զՍոդոմ և զԳոմոր-քէս և զԵգիպտացիս և զայլս ամենայն : Ասէ ցնա որ երևե-ցաւն . այս տեղի պատրաստեալ է հերետիկոսաց և որոց հետևին բանից նոցա : Եթէ հաճիս ընդ տեղիդ ընդ այդ, մնա 'ի հաւատդ յայդ . և եթէ ոչ կամիս առնուլ զփորձ զորս, զնա 'ի սուրբ կաթողիկէ և առաքելական եկեղեցի, զորմէ ծերն վարդապետէ . զի թէ զամենայն վարս ստանայ մարդ և ոչ ուղիղ դաւանէ, յայսմ տե-ղւոջ կացցէ : Եւ 'ի վերայ բանիցս այսոցիկ եկն առ ինքն եղբայրն . և յորժամ եկն ծերն, պատմեաց նմա զամե-նայնն զոր ետես, և եկն հաղորդիլ 'ի սուրբ կաթողիկէ եկեղեցի, և մնաց ընդ ծերոյն յեղեգնոցն առն չորս, և ննջեաց խաղաղութեամբ :

ԵՐԵՍՈՒՆ մղոնաւ 'ի քաղաքէն կիլիկեցւոց երկու սիւնակեացք էին հեռի 'ի միմեանց վեց ասպարիսաւ . և 'ի նոցանէ միոյն հաղորդէր 'ի սուրբ կաթողիկէ առաքե-լական եկեղեցի, և միւս այլն՝ որ աւելի ամս ունէր 'ի սիւնն, որ էր մերձ 'ի շէնն՝ որ կոչի Կասիդորա, Սևե-րիանոսի հերձուածողին էր : Եւ յաճախէր հերետիկոսն դատապարտել զուղղափառն՝ կամելով զամենեսեան 'ի հերձուածն իւր քարշել, և զբազումս 'ի բանս իւր ձգէր, դատապարտէր և զուղղափառ սիւնակեացն : Եւ նա յղ. առցեալ առաքեաց նմա մասն 'ի հաղորդութենէ իւր-մէ . իսկ նա շնորհակալութեամբ ընկալաւ, և առժա-մայն առաքեաց նմա նոյնպէս յիւրմէ հաղորդութենէն : Իսկ նա ընկալեալ զսևերիանոսացն մասնն՝ եդ ամանով ջուր յեռեալ առաջի իւր, և ընկեցեալ անդ զմասնն՝ առ-ժամայն լուծաւ 'ի ջերմութենէն . առեալ և զուղղափառ եկեղեցւոյ հաղորդն՝ ընկէց անդ, և որ եռայրն՝ ցրտա-ցաւ, և սուրբ հացն մնաց անարատ և անթաց . և ամե-նեքեան որք տեսին, փառս մատուցին Քի այ մերոյ :

ԵՊԻՍԿՈՊՈՍ՝ ասէ 'ի հաղորդելն զժողովուրդն տեսա-

1 Պատմէր մեզ ծերն զեպիսկոպոսէ ումեմն, զի և յայսմանէ առնուցուք յոյս բարի և աշխատասիրք 'ի փրկութիւն անձանց մերոց : Արդ ասացին ե-պիսկոպոսին վասն երկուց կանանց պատուականաց՝ եթէ զոզէր աղը-

նէր զանձն առ. երեսօք յետ հաղորդելոյն և զանձն հրով այրեցեալ և զմէկս արփենաշուշտ աչօք, և զկանոնս երկու յորոց վերայ կային բանաստանք՝ տեսանէր վառ- ման ամբառնալ զգեցեալ, և զայս վառեալ լուսով. և զար- մացեալ հարցանէր ցհրեշտակ տեսանն որ կայր առ նմա:

ծութիւն կենդանին, և զի հաստատեցեալք են և պատուականք. այլ ա- նեղիս գործեն: Իսկ եպիսկոպոսն կատարեաց վասն այլ բազմաց 'ի քաղաքի խորհուրդ առնել զայս գործ. և սկսաւ ջերմագէս աղաչել զԱծ՝ ամենի խնամող զաստուածն բան, որոյ արժանի եղև: Քանզի զնին կատար- ման առաւօտի խորհրդոյն զամենեսեան որք գային 'ի հաղորդութիւն՝ տեսանէր զհոգի նոցա պատկերաւ մարմնոյն թէ ո ոք էցէ յաղթեալ 'ի մեղաց և ո ոք արդար. զի որք մեղաւորքն էին, զոմանց տեսանէր զերեսս սև լեալ յոյժ յետ հաղորդութեան, զոմանց երեսս կիզեալ իբ- րև 'ի հրոյ, զոմանց աչս արփենաշուշտս և կարմիրս. իսկ զայլս տեսա- նէր պայծառ երեսօք և սպիտակ հանդերձիւ. ոմանք իբրև առնուին զմարմին Քի՝ կիզէին առժամայն, և ոմանք իբրև զլոյս փայլատակէին պայծառաւ՝ մինչ մտեր 'ի բերան նոցա մարմին Քի: Եւ էին որք լի- նէին զայս կրօնաւորք բազումք և դաւեհիկք: Եկին և այն երկու կա- նայք հաղորդիլ, և եւես զնոսա պայծառ երեսօք և սպիտակ հանդեր- ձիւ լեալ, և մինչ հաղորդեցանն՝ բնաւ փայլատակեալ եղեն. Նոյն- պէս և այլ կանայք բազումք՝ ոմանց սև լեալ դէմք, ոմանց կիզեալ, ոմանց աչք արփենաշուշտ, ոմանք լուսաւորք և զգեստք պայծառք լի- նէին: Ընդ որ զարմացեալ եպիսկոպոսն և սկսաւ աղաչել զԱծ յայտ- նել նմա թէ զինչ իցեն տեսիլքն այնոքիկ, որ այլ և այլք լինէին զկնի հաղորդութեան: Եւ ահա եկեալ առ նա հրեշտակ տեսանն և հրամայէր հարցանել զգործ իւրաքանչիւրոցն: Իսկ եպիսկոպոսն նախ զերկուց մանկանց կանանցն հարցեալ եղև եթէ առնիցն էր մեղքն զոր առաջա- դնոցանէ: Ասէ ցնա հրեշտակն. ամենայն զոր լուար զնոցանէ՝ առոյգ էր յառաջինն: Ասէ եպիսկոպոսն ցհրեշտակն. և ընդէր 'ի հաղորդելն երևէին երեսք նոցա պայծառ, և էր հանդերձք սպիտակ և փայլէին յոյժ: Ասէ ցնա հրեշտակն. վասն այնորիկ զի 'ի միտս եկեալ ծանեան զչար գործս իւրեանց և մեկնեալ յամենայն պղծութեանց՝ ջերմ ար- տասուօք և բազում հառաչանօք, բեկեալ սրտիւք և ողորմութբ աղքատ- խարեցին և խոստովանեալ սրբեցան և հաշտեցան ընդ Այ, և ուխտե- ցին նմա ոչ ևս մեղանչել թէ առաւելին յանցանացն առցեն թողութի. վասն այսորիկ գտին ողորմութի յԱյ և կան յայնմհետէ բազում եր- կիւղիւ և պարկեշտութբ և սրբութբ: Զարմացաւ 'ի վերայ այսորիկ եպիսկոպոսն և ասէ ցհրեշտակն. ոչ զփոփոխել նոցա զարմանամ 'ի մեղացն, այլ զքանչանամ ընդ անճառ ողորմութի և մարդասիրութեն Այ. զի ոչ միայն ոչ տանջեաց զնոսա, այլ և այսքան պարգևաց ար- ժանիս արար զնոսա: Ասէ ցնա հրեշտակն. յիրաւի զարմանաս զայդ, զի մարդ ես դու, այլ Տէրն մեր բնութբ բարերար և մարդասէր է. և որք դադարին 'ի մեղաց և ապաշխարութբ անկանին առ նա, ոչ թէ միայն ոչ տանջէ, այլ և բազում ողորմութեան և պատուոյ արժանի առնէ. զի այնպէս սիրեաց Ած զաշխարհ՝ մինչև զորդին իւր միածին ետ վասն նորա 'ի մահ: Արդ որ վասն թշնամեացն զմահ կրեաց, ո՞չ առաւել ողորմեսցի նոցա որք ընտանեցան նմա, և որք ապաշխարեցին զմեղս՝ փրկէ զնոսա 'ի պատժոց և արժանացուցէ զնոսա վիճակի ար-

Այս առնէ յնա. մեռեալքն և այլակերպեալքն և արիւնառուշտքն՝ զանազանս մեղաց վիրաւորեալքն են, որք ոչ յառնել կարա-ցուցանելոյ զմեղս. և կանայքն բամբասանաւք անմեղա-ցանս աղաչաւորութեամբ և մերկանալոյն բնաւին 'ի սրտա-լանաց մաքուր խոստովանութեամբ և վարուք:

ՀԱՐՑ՝ Հայրն Մակար. եթէ պահեսցուք զպատուի-րանս Հարցն մերոց, բարեբարոյք ասեմ ոչ գան, յերաշ-խաւոր առնեմ. իսկ եթէ ոչ, աւերելոց է. որպէս եղեն:

ՊԱՏՄՆ՝ Պարզմիտ տեսանէր մեռեալ մի զի տանէին 'ի թաղել, և երկու հրեշտակք ընդ նմա. և խնդրեաց

գարոցն. զի ոչ ինչ 'ի մարդկային մեղաց կարող է յաղթել մարդասի-րութեանն այ, թէ ապաշխարութիւ ոք ջանասցէ ջնջել զնոսա գործեալ մեղսն. զի զիարդ առէր զաւրութիւն աջոյն ձեռամբ և զբանութիւն գիւաց և զփրկութիւն ստացեալ ձեռաց. և մինչ անկանի ոք 'ի մեղս՝ զթոյն նա է մեռոյ ապաշխարութեան նորա: Իսկ մինչ դատեսան և անկանին առ նա՝ որպէս զաւկարաց թողու և լուծանէ զպատուհաս տանջանաց և շնորհէ բա-րութ արքայ: Նաև եպիսկոպոսն չհրեշտակին. ուսո ինձ աղաչեմ և զլինելոյն զայնոցիկ զբաժանմանն՝ թէ 'ի վերայ որոյ մեղանաց երկոք իւրաքանչիւրն, զի ծանեայց զնոսա և յամենայն հոգւոյ աղաւթեցայց: Եւ հրեշտակն ասէ. որք պայծառ երեսք և զուարթերեսքն են՝ նոքա են որ սուրբ և անբիծ և արդարութիւ կեան, և են հեզ և խոնարհ և ողոր-մածք. իսկ որք սեւքն զինուք տեսանին՝ նոքա են որ յեւթն աղգս պղ-ծութեանց 'ի մի 'ի նոցանէ անկեալ կան, շնութեանց կամ պառնկութեանց և այլոցն. իսկ արիւնռուշտք և կարմիրք՝ նոքա են որք յանիրաւութիւն և յագահութիւն, 'ի մաչխս և 'ի կաշառս են և յարիւնհեղութիւն. իսկ կե-ղեւալքն գեղեցիկ նոքա են, որք ասեն 'ի մտի՝ ոչ գոյ այ և անխոստովա-նելիք են: Եւ ասէ հրեշտակն ցեպիսկոպոսն. աղաւթեսցես դու նոցա, զի կարող ես թէ կամեսցիս. զի վասն այսորիկ արժանացար հասանել խնդրոյս քո, և տեսեր աչաք քո և ուսար զկերպս յանցուցելոցն, որ-պէս զի դու խրատեսցես և օրէնսդրութիւ 'ի լուսաւորեալս փոխեսցես զնոսա, որպէս զի ապաշխարութիւ ընծայս մատուսցես զնոսա այնմիկ որ մե-ռաւ վասն նոցա Յս Քս. և որչափ ուժիս ունէր և փոյթ և զաւրութիւն և խելք առ Քս, կատարեալ գործ և ջանս զայն արասցես նմա՝ որ զյան-ցաւորս առ ինքն դարձուցանել փութասցես: Եւ հաւատացեալ զնոսա՝ յորոյ մեղաց և յաղթեալքն են՝ մի յուսահատել և մի հեռանալ առ փրկ-կութիւն անձին, այլ ապաշխարել, և ընդէր այս շահ ձեզ երկոցունց. նոքա թէ ապաշխարեսցեն, առցեն զթողութիւն մեղաց և հասցեն կե-նացն յաւիտենից. իսկ քեզ վարձս մեծամեծս զանձեսցին յաւուր տեառն, և նման երեւեսցիս տեառն քո՝ որ եկն յերկնից յերկիր և ընդ մարդկան շրջեցաւ վասն դարձուցանելոյ զմոլորեալս: Զայսոսիկ խօսե-ցաւ հրեշտակն, աներեւոյթ եղեւ. իսկ եպիսկոպոսն արար զամենայն բա-նսին հրեշտակին:

¹ Ասէր հայրն Մակար ցանկեաց... եթէ պահեսցուք զպատուի-րանս Հարցն մերոց, երաշխաւոր եմ ձեր առ այ, զի բարբարոսք ոչ գան աստ. իսկ եթէ ոչ պահեսցուք, աւերելոց է տեղիս այս:

² Ասէին վասն հօրն Պաղոմոնի՝ եթէ զիարդ նստէր երբեմն 'ի մե-նաստանի մեռեալ մի զոր բերէին, և տեսանէր երկու հրեշտակս զի

'ի տեսանել զհրեշտակսն առ ինքն, և ետես։ Այլ ասէ. զինչ երեւայք զհետ մեռելոյն։ Այլ նորա ասեն. Ես հրեշտակ ողորմութեան եմ և սա չարկեշտութեան, և զի պատուեաց այրս այս ողորմութ և չարկեշտութ և ոչ եկոյծ ընտու, մեք պատուեալք զսա, զանազանեն ասելով զե- րեզմանի, և զհոգին հանեալք առ ինձ լի ուրախութեան և անթերի կարգ 'ի պատուական դիւաց։

ՄԱՑ՝ հայրն Պաւղոս պարզամիտն՝ եթէ աշակերտն իւր անկաւ 'ի մեղս և 'ի նմին մեռաւ, և աղաչեցի զտէր ցուցանել ինձ զնա. և ահա տեսի զնա յանկոյս խաւա- րի և անշարժ որպէս զքար, և յիշեցի զբանն տեառն որ ասաց՝ թէ կապեցէք զդորա ձեռս և զոտս։ Այլ զար- թեայ և ետու զծերութիւն իմ պահոց և արտասուաց և կալայ միջնորդ զսուրբ ծնածինն։ Այլ երեւեալ ինձ կուսին սրբոյ՝ ասաց. մի տրտմիր, ես աղաչեցից զնա ա-

զայդին զինի դագաղաց նորա. և 'ի մէջ եկեալ ծերն՝ աղաչէր վասն հրեշտակացն զինչ յայտնել զնոսա նմա։ Իբր եկին առ ծերն հրեշտակքն Ասէ ցնոսա ծերն. զինչ դուք հրեշտակք դոլով հետեւեալ էք ան- շունչ մեռելոյ դիոյդ։ Պատասխանի ետուն նմա հրեշտակքն. մինն 'ի մէնջ հրեշտակ չարկեշտութեան է և միւսն ողորմութեան, և զի այրս այս ոչ պահպանեալ եղև մինչև 'ի մահ պահել պատուով զնոսա, վասն այսո- րիկ և մեք հետեւեցաք մարմնոյ նորա, և պատուով տանիմք զմարմինն 'ի հող և զհոգին հանեալք տանիմք այլ։

։ Պատմէր մեզ հայր Պաւղոս պարզամիտն՝ եթէ էր աշակերտ իմ, և անկաւ 'ի բազմապատիկ մեղս՝ ոչ գիտելով իմ, և եղև մեռանել նմա։ Իբր ես աղաչէի զտէր ցուցանել զնա ինձ՝ եթէ որպէս և կամ ուր իցէ հո- գի նորա։ Իբր կացի աւուրս բազմաւս յաղօթս յայս։ Իբր տարա 'ի զար- մացման եղեալ իմ, տեսի զաշակերտն իմ բարձեալ յերկնից անանց մեռեալ, և էր քար լեալ անզգայ յոտից մինչև ցգլուխն և ոչ կա- րէր շարժել ընդ կամ խօսել. զոր և տեսեալ արտասուեցայ յոյժ, և ողբացի եղէ, և յիշեցի զբանս տեառն զաւետարանին ցայտն՝ որ ոչ էր զգեցեալ զգեստ հարսանեաց, եթէ կապեցէք զդորա ձեռս և զոտս և հանէք 'ի խաւարն արտաքին։ Քանզի կապեալն զանգործ լինելն զուշակէր. և սա այսպէս էր կապեալ և քարացեալ անմեղայն զգայ- արանեք, զոր ոչ աշխատեցայց գործել զկամս տեառն 'ի կեանս յայս։ Իբր իբրև զարթեայ 'ի տեսլենէն, սկսայ տխրել և հոգալ և տա- նել ողորմութեան և մատուցանել պատարագ վասն նորա, և աղա- չէի զկոյս ծնածինն հայցել 'ի տեառնէ թերեւս ողորմեսցի նմա. և սկսայ ճնշել և խեղդել զիս պահօք և աղօթիւք, աղքատութ և գեա- նախշտութ, և այս 'ի խորին ծերութեան իմ վասն նորա։ Իսկ զկնի ա- ւուրց երեւեցաւ ինձ կոյս ծնածինն և ասէ. ընդէ՞ր այդպէս տխրեալ ես, ծեր դու։ Իբր ես ասեմ. վասն եղբօր իմոյ, տիրուհի, զոր տեսի մեռացեալ 'ի մեղս։ Իբր ասէ ցիս. ոչ դու խնդրեցեր տեսանել զնա և տեսեր։ Իբր ես ասեմ. այո, տիրուհի, ես խնդրեցի, այլ զինչ շա- հեցայ. զի չարաչար կեալ տեսի զնա, և վասն այնորիկ կոծիմ և ող-

Digitized by Google

ռածին քո։ Այլ եկն առ իս ըր խնդութիւն, և շնորհակալ-լեալ նմա՝ եթէ փառք քո, Հայր, ազատեաց զիս սուրբ Ածածնին։ Այլ ասէ ցիս սուրբ տիրուհին. աՀա տեսեր, ուրախ լեր, և յիշեա զնա միշտ պատարագաւ և աղօթիւք և ողորմութիւն, զի յոյժ օգտակարք են անձնոյն ննջեցելոց։

ՄԻԱՑ ծերն՝ եթէ յորժամ ասէ սարկաւագն՝ ողջոյն տուք միմեանց, տեսանեմ զՀոգին սուրբ ՚ի շրթունս եղբարցն։

ՀԱՅՐՆ՝ Յովհաննէս կոչեցեալ տեառն՝ յափշտակեալ Հոգւով յԱստուածաշէմ, ուր ժողով մեծ էր յարութեան, և ասէին զանէր ողորմեայն. և Տէր կայր ՚ի գերեզմանն և զարթուցեալ զերեան ՚ի նոցանէ. և կոյան սուրբ աս-

բամ։ Եւ նա ասէ. գնա դու և փառն խոնարհութեան քո ցուցից զնա քեզ, զի մի տրտմեսցիս։ Եւ յետ այն յանուրջս տեսի զեղբայրն զայն զի գայր առ իս ուրախութեամբ, և զի ինքն գնայր և խօսէր, և ասէ ցիս. պաղատանօք քո, Հայր, և աղօթք օգնեցին ինձ, և գթացաւ յիս կոյսն սուրբ, զի յոյժ սիրէ զքեզ. և աղաչեաց զանէրն Քս, և նա արձակեաց զիս ՚ի կապանաց խոնց, զի կապանօք մեղաց խոնց կապեալ կայի ՚ի խաւարին արտաքին։ Զայս իբրև լուայ, ուրախ եղէ յոյժ։ Եւ զարձեալ յայտնեցաւ ինձ կոյսն և ասէ ցիս. արդ հաւատացեր, ծեր։ Եւ ես ասեմ. այո, սրբուհի տիրուհի, և ցնծացաւ հոգի իմ յոյժ, զի տեսի զնա ՚յանդորրութեան։ Եւ նա ասէ. գնա և յայտնեա յիշեցես միշտ զեղբայրն զայն յաղօթս քո, և ողորմութիւն տանել և պատարագ մատուցանել առաջի մի պատարագի, զի սոքա յոյժ օգտակար են անձնոյն փոխեցելոց անձանց։

։ Ի վանաց սրբոյն Սարգսի հեռաւորին իբրև միլոն հնգետասան բնակէր ծեր մի, և աշակերտ իւր էր այր պարկեշտ և մեծ՝ որ կոչէր Յովհաննէս՝ և նմանէր միայնակեաց։ Իսկ աշակերտն ծերոյն անասնոց հանապազորդ զգօնութ և զգիշերն զոր ածէին պտուղս ՚ի քաղաքին Երուսաղեմի և վաճառ քրիստոնէիցն. ակնատ հարցանել ցհայր իւր վասն գործոց որ գալոց էր, և ասէր ցնա. և արդ ես գիտեմ, հայր, զի ոչ ինչ ծածկէ ՚ի քէն ակր ՚ի գործոցն որ գալոցն են ՚ի վերայ մեր. աղաչեմ, ասա ինձ թէ առաջին պտուղք ղբաղաղաց զայս Երուսաղեմ։ Ասէ ցնա ծերն. ուստի գիտեմ, որդեակ, զհանդերձեալն, զի այր մեղաւոր եմ ես։ Իսկ եղբայրն ոչ դադարէր յաղաչելոյ ասել զայն նմա։ Յայնժամ արտասուեաց ծերն և ասէ. դու, որդեակ, կարօտիս և կամիս խնդրել զգործոց գործ, աՀա ես պատմեցից քեզ զոր տեսի յայսնեաց ինձ։ Յառաջ քան զինն աւուրս պարապեցայ ես վասն այսօրինակ հոգւոյ, և տեսի զիս յափշտակեալ և կայի ՚ի սուրբ տեղին Գողգոթայ, և ամենայն ժողովն և պատուական եկեղեցւոյն զաշէին կիրակէին. և նայեցեալ տեսի զանէրն մեր ՅՍ ՔՍ ՚ի վերայ խաչին բևեռեալ, և կոյս Ածածինն կայր առաջի նորա և աղաչէր զնա վասն ժողովրդեան աշխարհի։ Իսկ փրկիչն դարձեալ զերեսս իւր յնա և ասէ. ոչ լսեմ աղաչանաց ժողովրդեան այսորիկ և ոչ աղաչանաց քոց, զի պղծեցին զտեղան և զտաճար և զգերեզմանն իմ։ Եւ գնացից արտա-

Digitized by Google

տառամածելոյն աղաչէր զնա, և խօսէր՝ թէ բնաւ ոչ տրտըմ-
միմ դոքա, զի պղծեցին զանձն իմ։ Այլ չոգաւ 'ի խաչ-
գիւտն, և այն ևս զի էր աղքատ. և ասէին՝ թէ անձնա-
ժանն սպասաւորք սեղանոյն աղօթելն զայն, և ոչ սրբէին
եթէ ոչ հրով։

ԱՍԱՑ՝ Հայրն Սքերիոն՝ եթէ տառապին կրօնաւորքն
գործելոյն տառապել քան զկար մարդոյ, և մեք բռու կարի.
և յետոյ դան այլք՝ որ զկէս մեր գործեն, և սոյն այլք
գան՝ որ բնաւ ոչ լինիս առնեն. որ թէ լինի որ անդ. տառա-
պեսցի, յառաջէ քան զմեզ և քան զհարսն մեր։

ՀՕՐՆ՝ Ակրիգորի եղբայր նաւաստեա մի ամսի։ Այլ ասէ
ցնա. արինիրոն յերկիւղածն և գնա ընդ Ճանապարհն Սկեա-
բաւի, և գտանես մանուկ մի լուրթ զգեցեալ. հարց զնա
և տուր ցնա զոսկիդ։ Այլ չոգաւ և եգիտ, և ահա նա

տուեալ աւետեաց 'ի տաճար կատարածղիմունս, և անդ զգեցեր ժողո-
վուրդն աղբողք կիւրեղեխոսն։ Եւ մտեալ 'ի տաճարն, և եւ գնացի 'ի
աւեգին ուր գտեալ էր զնուշն կենդանիք, և անատնեփ և ահա անիւմ
ազգաց ժահահանա ժողովէր և ծովախոյր 'ի տաճարն. և եկին անդ ծեր
քահանայք երկուք գեղեցկադարդք, և եւ ասեմ ցնսա. ոչ երկնչիք
դուք յայդ, անասնեք զի և ոչ աղօթել կարէք 'ի չարահատութէ աղա-
մոյս այսորիկ որ մտէ աստ։ Իսկ նոքա ասեն. այս անօրէնութիւնք և
մեղք են քահանայիցն որ կան աստ, և այս տիպմ՝ են աղօթք նոցա։
Եւ ես ասեմ. և ոչ կարէք սրբել զայս, զի աղօթեսցուք աստ։ Եւ նա-
քա ասեն ցիս. հաւատա, հայր, ոչ կարեմք սրբեսցի տեղս այս, բայց
միայն հրով։ Զայսոսիկ պատմեաց ծերն առաքելոյ և ապա ասէ. և
վասն իմ եւ հրամանն, որդեակ, զի արդ հատցի դպրոցն իմ. և աղաչեսցի
յայժ զանէր, և ոչ լուաւ ինձ զայս. և գնաց զայս անէր, զի ոչ հնազի ես
արփան 'ի վերայ երկրի։ Եւ մինչդեռ խօսէր զայս ծերն, առաժամայն
հատին 'ի վերայ բազմազարդք, և աշակերտն փախուցեալ թագեաւ. իսկ
զծերն կալեալ հատին դպրոցն նորա, և սպանեալ զծերն բազմութեան
զնացելն։ Եւ եկեալ աշակերտն աղաց զծերն, և թաղեալ եդ 'ի գե-
րեզմանս հարցն։

ԱՍԱՑ հայրն Սքերիոն՝ եթէ առաջին հարքն որ նախ քան զմեզ
էին, 'ի վեր քան զկար մարդոյ գործեցին զառաքինութիւնս. իսկ որք
այժմ եմք՝ գործեմք բռու կարի մարդոյ զհիգութիւն. իսկ որք որ զկնի
մեր գալոց են՝ զկէս մերոյ ճգանց ոչ կարեն կատարել. իսկ որք զկնի
նոցա գալոցեն՝ բնաւ ոչ ունիցին գործս բարիս գործել, այլ լինիցին որդ-
նոյն չարեաց. իսկ յայնժամ թէ գտցի որ ուրեք ճգնող և առաքինի,
նա յառաջէ քան զմեզ և քան զառաջինն հարսն մեր։

ԱՍԱՑԻՆ վասն հօրն Ղուկիանոսի՝ եթէ նաւաստէ ամն եղբայր նմա
ոսկի 'ի վարձէ նաւին իւրոյ. իսկ նա ոչ էառ, այլ ասէ ցնա. այս ոչ
պիտոյ է ինձ աստ, այլ արտաքս անէր և եւ յերկիւղ քո և փութով ըն-
թացեալ և գնա ընդ ճանապարհն որդւոյն Գեւորգայ, և գտցես անդ մա-
նուկ զգեցեալ պատմուճան լուրթս և հարցանիցես զզարդս նորա, և
տուր 'ի նա զոսկին քո և ունիցիս վարձս բազում։ Եւ եւ նաւաստեան
յերկիւղոր իւր և ընթացեալ փութանակի եգիտ անդ զմանուկն 'ի տե-

չուան առեալ երթայր կանխաւ ի վանս սպասաւորաց հօրն, եւ ետ ցնա զոսկին, եւ դարձաւ ՚ի քաղաքն:

ՀԱՐՑՆ. Մակար ասէր վասն աւերածին Սկիւթիայ՝ եթէ յորժամ տեսանէք խուցս շինեալ մերձ ՚ի շամբն՝ մերձ է աւեր նորա, եւ երբ տեսանիցէք անդ մանկունս՝ փախերուք անտի:

ԼՈՒԾՆ. Մակար տեսանէր զսատանայ յողով դրդուեալ բարձեալ՝ երթայր ՚ի ներքնագոյն անապատն, եւ ասէ. յո՞ գնաս: Նա ասէ. զինի տանիմ եղբարցն, բայց չեն բարեք թէ եւ գնամ: Նա ՚ի դարձն անդ դարձեալ. խնդրէ ով: Նա նմա ասէ. այո, Թէոպեմպտոս միայն լուաւ: Նա չոգաւ անդ Մակար, եւ եգիտ ընդ առաջ նորա տատանակ աղմուկենեաց, եւ իւրաքանչիւր ոք աղաչէր առ ինքն տանել:

զին յոր տեսոյ ծերն, եւ ասէ ցնա. ո՞ւր գնաս, որդեակ, եւ զի՞նչ է քեզ, զի հայրն Ղուկիանոս առաքեաց զնա քննել զքեզ: Ասէ մանուկն. ես ինքն բաղձանս կարծեմ, եւ արդ նեղեալ ՚ի պատուականաց գնամ խեղդել զիս եւ զերծանել ՚ի չարեաց նոցա, զի ոչ ունիմ ձեռն համբերութեան [illegible] խեղդամամբ ընդ իս: Իսկ հանեալ [illegible] խեղդամանն ՚ի ծոցոյ իւրոյ: Իսկ [illegible] հանեալ ետ ցնա զոսկին եւ դարձոյց ՚ի քաղաքն զմանուկն, եւ ինքն գնացեալ առ հայրն Ղուկիանոս պատմեաց զայն: Իսկ նա ասէ. համբերեա ինձ, եղբայր, թէ ոչ ժամանեալ էիր, ոչ էր անպարտ ես յարիւնէ նորա:

Այսպէս երբեմն հայրն Մակար վասն աւերածոյն Սկիւթեայ՝ եթէ յորժամ տեսանէք անտառս շինեալ մերձ ՚ի շամբն՝ մերձ է աւեր նորա, եւ երբ տեսանէք ՚ի նմա ծառս՝ ՚ի մերձոյ դրանց է. իսկ երբ տեսանէք անդ մանկունս՝ առէք զմաշկեակս ձեր եւ փախերուք, զի հասեալ է կատարած նորա:

Հայրն Մակարիոս բնակէր երբեմն միայն ՚ի վերին անապատն, եւ էին ՚ի ներքոյ անապատին բազում եղբարք. եւ նայեցեալ ծերն ընդ ճանապարհն եւ տեսանէ զսատանայ կերպարանօք մարդոյ՝ որ գնայր ընդ այն ճանապարհ, եւ երեւէր իբր թէ արկեալ էր զգեստ կտաւեայս, եւ յամենայն ծակս նորա կախեալ էր զգուշս ինչ լի եւ զարշանօք: Ասէ ցնա ծերն. ո՞ւր գնաս, մեծ զօր: Եւ նա ասէ. գնամ յիշեցուցանել ինչ եղբարցն: Իսկ ծերն ասէ. եւ զի՞նչ են զգուշքդ այդ: Եւ նա ասէ. զինի տանիմ եղբարցն բաղձանաց. եւ եթէ ոք ոչ հաճեսցի ընդ միոյն, տամ նմա զմիւսն այլ, եւ առաւել զմիոյն առաքեցից եւ այլոցն: Զայս ասացեալ գնաց: Իսկ ծերն կայր եւ նայէր ՚ի ճանապարհին մինչեւ եկեսցէ ընդ այն: Եւ իբրեւ եհաս ընդ ճանապարհն, ասէ ցնա. ի՞նչ արարեր: Ասէ զնա. եւ ոչ իւրեք եկեալ իմ: Ասէ ծերն. ընդէ՞ր: Եւ նա ասէ. ամենեքեան վայրենացեալք են, եւ ոչ մի ոք յանձն առնու զինչ իմ: Ասէ ցնա ծերն. եւ ո՞չ ունիս բարեկամ այդր: Եւ նա ասէ. այո ունիմ զմի ոք եղբայր, եւ նա միշտ լսէ ինձ: Ասէ ծերն. եւ զի՞նչ է անուն նորա: Իսկ զնա ասէ. Թէոպեմպտոս է անուն նորա: Եւ զայս ասացեալ գնաց անտի: Եւ յարուցեալ հայրն Մակար գնաց ՚ի ներքին անապատն, եւ ժողովեցան առ նա եղբարքն՝ արմաւենեօք ե[լ]եալ ընդ առաջ նորա, եւ իւրաքանչիւր ոք կամէր ընդունել զնա. իսկ

Մալ նա չոգաւ 'ի խուց ասացեալ եղբօրն, և խնդրաւ զի ծոյլ էր, և ասէ ցնա. պահեա մինչև ցերեկոյ և ապա կարդա աւետարանն և ածաշունչ գիրս, և կեր սակաւ և ննջեա չափով և հանապազ աղօթեա։ Եւ եղև նա յայնմ հետէ այր ընտիր, մինչև դարձեալ ետես զսատանայ, և հարցեալ, և նա ասաց. ապստամբեաց յինէն այրն ։

ԱՅՑԵՍ՝ նոյն Մակար յաւուր դևս պատահեալ զաբեղայի մի 'ի կերպս կանանց, զի ծոյլ էր. և գնաց առ նա, չարախօսեաց զանձն՝ թէ յոյլ եմ, և 'ի ծերութեան ասա խաղալիկ եմ դիւաց ։ Եւ նա ասաց. Ած է ճարն ։ Եւ նա խնդրէր թէ ով իցէ 'ի նոցանէ որ կոչի Թէոպեմտոս ։ Եւ գտեալ զնա, եմուտ եկաց 'ի սենեակ նորա. իսկ եղբայրն ընկալաւ զծերն ուրախութեամբ ։ Եւ իբրև առանձնացան երկոքեան, ասէ ցնա ծերն. խորհուրդք չար պատերազմին ընդ քեզ ։ Եւ նա ամաչէր պատմել զայն ։ Ասէ ցնա ծերն. ես ահա այսչափ ժամանակ աճեմ 'ի ճգնութիւնս և պատուեալ եմ 'ի բազմաց, և զիս զայրացուցանէ ծերացեալս և ըմբռնէ զատակն յոյժ խորհուրդք պոռնկութեան ։ Պատասխանի ետ Թէոպեմտոս և ասէ. հաւատա ինձ, հայր, զի և զիս նեղեն այսպիսի խորհուրդք ։ Իսկ ծերն պատճառէր և զայլ բազում խորհուրդս և ասէր՝ թէ և աքա նեղեն զիս, մինչև եբեր զնա 'ի խոստովանութիւն, և ասէ ցնա ծերն. պահեսցես մինչև ցերեկոյն միշտ և աղօթեսցես միշտ և ճգնեսցիս, և ընթերցցես զաւետարանն և զայլ ածաշունչ գիրսն. և յորժամ գան 'ի միտս չար խորհուրդք, 'ի վեր նայեաց առ Ած, և մի 'ի խոնարհ նայիր միտքդ, և օգնեսցէ քեզ Տէր ։ Եւ իբրև կարգեալ յորդորեաց զանձնային կարգ և կանոն եղբօրն ծերն, գնաց անտի յանապատ իւր ։ Եւ իբրև նայէր և դիտէր, դարձեալ եւս զնոյն դև և ասէ. ո՞ւր գնաս դու ։ Եւ նա ասէ. գնամ յիշեցուցանել եղբարցն. և գնաց ։ Եւ իբրև դարձաւ դևն, ասէ ցնա ծերն. ո՞րպէս են եղբարքն ։ Եւ նա ասէ. չարեաց լի են ։ Ասէ ցնա ծերն. ընդէ՞ր ։ Եւ նա ասէ. դժուարեալ կատաղի են ամենեքեան և բնաւ ոչ լսեն ինձ. և մին այն էր բարեկամ և հնազանդ իմ, և այն միրժեցաւ յինէն և ոչ հնազանդի ինձ, այլ մտի չար քան զամենեսեան. և ուխտեցի ոչ կոխել զճանապարհն զայն, բայց միայն յաւժին մի անգամ ։ Զայս ասացեալ հեռացաւ. իսկ հայրն Մակարիէ դարձաւ 'ի սենեակ իւր, և գոհանայր զԱյ ։

1 Ասէր հայրն Մակար՝ եթէ գնայի երբեմն յեկեղեցին կատարել զաղօթս, և տեսի չուրջ զսենեկով եղբօր ուրեմն բազմութիւն դիւաց, ոմանք 'ի կերպս կանանց լեալ զուգէին խօսէին ընդ միմեանս, ոմանք իբրև զմանկունս լկտիս լեալս աղտեղիս և գարշս ասէին բանս, այլք խաղային և պարէին, և այլք զայլ և զայլ-ազգութիւնս առնէին և զազրութիւն ։ Իսկ ծերն հառաչեաց և ասէ. վայ ինձ, զի եղբայրս այս հեղգութեամբ կեայ, և վասն այնորիկ չար հոգիք անհարգաբար պատեալ ունին զտուն նորա ։ Եւ իբրև դարձաւ յաղօթիցն, եկն 'ի տուն նորա և ասէ ցնա. 'ի միշտ մեծամեծս և 'ի փորձութիւնս եմ, եղբայր, և հեղգութիւն կենցաղիս. և յայս ունիմ առ քեզ, զի թէ աղօթեսցես զավասն իմ առ Տէր՝ թեթևացուսցէ Տէր զմեղս իմ ։ Իսկ եղբայրն առ ոտս նորա անկեալ ասէր. Թողութիւն արասցես ինձ, հայր, ոչ եմ ար-

Digitized by Google

ասէ Մակար. ոչ թողից զքեզ, մինչև տանիս զիս յերաշխի՝ որ տանես վասն իմ աղօթք յամենայն գիշեր։ Այլ յանձն եառ, և 'ի յառնելն 'ի գիշերի՝ ասէր. թըշուառ ոգի, մի աղօթք մեզ պիտի. և առնէր երկու մինչ 'ի կիւրակէն, որ եկն Մակար և տեսանէր զգլուխ տըրտմեալս, և մտեալ գոհանայր զաբեղայէն վասն աղօթիցն, որպէս թէ բարի եղև նմա։ Այլ աղաչէր, զի երկու աղօթս արասցէ. և առնէր երկու իւր և երկու նմա։ Այլ եկն երկրորդ անգամ 'ի գոհութիւն, և տեսանէր զգլուխ զխռխվայրեալ. և խնդրեաց երեք աղօթել, և առնէր վեց. և եկեալ Մակար տեսանէր զգլուխ հեռացեալ և կրճտէին զատամունս Մակարայ. և պատմեաց աբեղային, և այնուհետև եղև ժիր։

ԱՅԼԵՒ՝ երբեմն սուրբ հօրն Մակարայ ընդ անապատն գնալ, և ետես զբելիար 'ի կերպարանս ծերոյ սեաւ զգե-

ժամի տանել զայդ։ Իսկ ծերն ասէ. ոչ գնացից աստի և ոչ թողից զքեզ մինչև խոստասցիս ինձ տանել յամենայն գիշերի աղօթս վասն իմ։ Եւ լուեալ աղաչանաց ծերոյն եղբայրն՝ խոստացաւ տանել զայս։ Իսկ ծերն յայն սակս արար, զի տեսցէ նմա սկսանել 'ի գիշերին աղօթս։ Եւ իբրև յարեաւ 'ի գիշերի եղբայրն և արարեալ վասն ծերոյ աղօթս՝ զղջացաւ և ասէ. անձն իմ եղկելի, ծերոյն աղօթես և վասն քո ընդէ՞ր ոչ աղօթես։ Եւ արար մի աղօթս վասն իւր յերկարաձգեալս։ Եւ արար այսպէս շաբաթ մի. և կատարէր մի աղօթս վասն ծերոյն, և մի վասն անձին իւրոյ։ Եւ յաւուր կիրակէի գայր հայրն Մակար յեկեղեցին, և ետես զգլուխ զայնոսիկ հեռի 'ի տանէ եղբօրն զի՞ նստին տըխուրս և անբանս. և ծանեաւ ծերն եթէ վասն աղօթից եղբօրն տըրտմեցան դևք, և ինքն ուրախ եղև յոյժ։ Եւ իբրև կատարեցին զաղօթսն, գնաց դարձեալ 'ի սենեակ եղբօրն և ասէ ցնա. աղօթիւք քո շահ եղև ինձ, եղբայր, արդ արա սէր և յաւել մի աղօթս այլ ևս վասն իմ։ Եւ սկսաւ եղբայրն տանել երկուս աղօթս վասն ծերոյն և ասէր. ով եղկելի անձն, արա և վասն քո երկուս աղօթս։ Եւ արար այսպէս, զմիւսն այլ շաբաթն 'ի բուն կատարէր աղօթս չորս։ Եւ դարձեալ գնայր ծերն յեկեղեցին, և ետես զգլուխ առաւել տրտմեալս և հեռացեալս։ Եւ դարձեալ եմուտ 'ի տուն եղբօրն ծերն, շնորհս խոստովանէր և ասէր. ողորմութիւն մեծ արար ընդ իս ասէր աղօթիւք քո, այլ լից զսէր քո և յաւել մի ևս այլ աղօթս վասն իմ։ Եւ յաւել եղբայրն միւս ևս աղօթս վասն իւր և միւս վասն ծերոյն, և կատարէր վեց աղօթս 'ի գիշերի զերրորդն շաբաթ։ Եւ զկնի երրորդ շաբաթուն իբրև գայր ծերն 'ի սենեակ եղբօրն, բարկացեալ դևք ծերոյն սկսան անարգել զնա, զի տըրտմեցան ընդ կեալ եղբօրն։ Իսկ ծերն մտեալ 'ի սենեակն պատմեաց զայս եղբօրն և խրատեաց զնա յոյժ և պատուիրեաց զգոյշ լինել յաղօթս։ Եւ եղև եղբայրն շնորհօքն Այ և աղօթիւք ծերոյն փոյթ և ջերմնաւոր յոյժ։ Եւ դևքն յորժամ տեսին 'ի նա զշնորհսն Այ և զզարդ նորա, փախեան 'ի նմանէ ամաչեցեալք։

։ Իբրև գայր զինուորն Քնի Մակարի ընդ անկոխ և անհետ անապատն, ահա ետես ծեր մի այր՝ որ ընդդէմ եր նմա, և էր վաստա-

ցեալ, և ունէր յամենայն անդամսն իւր բժժանս դեղոց բարձեալ. և աղօթեալ Մակարայ առ տէր, և զօրութեամբ անուանն ԱՅ հարցեալ՝ թէ զինչ ես բարձեալ և որպէս խաբես զմարդիկ, և նա բռնադատեալ 'ի հրեշտակէն ասաց զիրսն՝ թէ այս դեղք են նիւթ խաբէութեան իմոյ։ Զի կայ յամէն անդամն նիւթ և հեշտութիւն ցանկութեանց, որովք օծանեմ զմարդիկ. զօրինապահսն՝ յամանոյս որ 'ի գլուխս է, և արկանեմ 'ի ցաւս. և զժիր աղօթողսն՝ յամանոյս որ կայ 'ի յաչքս, և առնեմ քուն, և 'ի դեղոյս որ կայ 'ի յունկս՝ առնեմ անլսողութիւն, և որ կայ յանգունս՝ առնեմ 'ի անմնէ հոտս անոյշս 'ի պոռնկաց, և որ կայ 'ի բերանս՝ աստի առնեմ

կեալ և վհատեալ յոյժ, զի անթիւ բարձեալ ունէր 'ի մարմնի և յանդամն իւր ամանս ինչ 'ի լիս և դրօշմեալս, և կայր կախեալ 'ի վերայ իւրաքանչիւր ամանոյ թևս ինչ. և զգեցեալ էր ծերն այն այր փոխանակ հանդերձի նիւթ ինչ մթագին։ Իսկ ծերն հարցեալ զգաւազան իւր յերկիր եկաց յաղօթս յերկարս և նայէր 'ի նա և գիտէր զանուանս նորա։ Իսկ նա դողաց և սոսկաց իբր թէ երկեաւ 'ի նմանէ։ Ասէ նա ցհայրն Մակար. զինչ առնես դու մոլորեալ յանապատս յայս։ Ասէ հայրն Մակարի. զԱծ խնդրեմ, և փախչիմ 'ի մոլորութենէ. այլ դու մղես, ծերունի, ասասցես ինձ, զի ասար տեսանեմ զգէմս քո 'ի բնութենէ մարդկան, ասա ինձ ո՞ իցես դու և զինչ են անօթքդ այդոքիկ զոր բարձեալ տանիս դու։ Իսկ նա թէպէտ և ոչ կամէր, այլ ուղիղ ասաց՝ թէ ես եմ սատանայ և կոչի անուն ինձ առագայէլ, և անօթքս այսոքիկ գիւթութիւնք իմ են՝ որովք բազմագէմ և բազմօրինակ ձգեմ առ իս զմարդիկ, և իւրաքանչիւր մարդոյ ըստ իւրում կամաց խառնեմ զգեղս խաբէութեան, և թևովք այսոքիւք ցանկութեամբ խորտակեցից զորս հնազանդեն ինձ, և յանկութենն նոցա ցնծացէ անձն իմ։ Իբրև լուաւ զայս հայրն Մակար, առաւել զօրացաւ և ասէ ցնա. երդմնեցուցանեմ զքեզ 'ի տէր Քս, որ ետ զքեզ կոխան հրեշտակաց իւրոց 'ի սկզբանէ, զի յայտնեսցես ինձ զիւրաքանչիւրն 'ի դեղոց քոց ընդմիս. զի վասն այսորիկ երևեցար, որպէս զի յայտնի լինիցի մեզ բազում հնարս խաբէութեան և նենգաւոր նետից քոց հրապուրութիւն, և ոչ երբէք հնազանդեսցուք չար կամաց քոց։ Պատասխանի ետ բէլիար և ասէ ցհայրն Մակար. ես պատմեմ քեզ, այլ ոչ կամաւ իմով զօրութեան խաբէութեանց իմոց, և դու ուսցիս զբազմաձևս. և զգործ իւրաքանչիւր ամանոց և զգիւթութեանց նոցա։ Արդ եթէ գտանիցեմ զոք որ միշտ խորհեսցի յօրէնս ԱՅ, խափանեմ զնա այսպէս. զի դնեմ 'ի գլուխ նորա ցաւս և երկունս յամանոց որ 'ի գլուխս իմ է՝ հեղլով զայն 'ի գլուխ նորա. Իսկ որ արթունն իցէ և կամիցի աղօթել և փառաբանել զԱծ, առնում 'ի դեղոյ ամանոյ որ կայ 'ի յաչս իմ, և օծանեմ զայն թևով 'ի յաչս նորա, և անկեալ նիրհէ և ննջէ. Իսկ յայս անօթոյ որ կախեալ կայ յունկն իմ, կայ 'ի նմա դեղ անհնազանդութեան, և օծեալ առնեմ զմարդ զի մի լուիցէ զբանս ճշմարտութեան որք խնդրեն կեալ. Իսկ զդեղսն որ ելանէ ընդ ռնգունսն իմ, նովաւ շարժեմ զցանկութիւն 'ի պոռնկութեան գնելով զնա 'ի հոտս խնկոց. Իսկ զդեղովքս ամանոյ բե-

Digitized by Google

որկրամոլութիւն շատախօսութիւն ստութիւն խաբէութիւն և որ ինչ մերձանոյ են ծնաւք, և 'ի դեղոյ պարանոցիս առնեմ հպարտութիւն սնափառութիւն, և 'ի լանջացս առամ դեղ մտանելոյ զյաւիտենական կեանս. իսկ որ կայ յորովայնիս՝ առոր առնեմ անառակս և գազանս, և 'ի սրտոյս՝ փարչելի պղծութիւնս և զխառնակութիւնս. իսկ 'ի յոտիցս դեղոյ 'ի գողութիւն գրգռեմ, և յաւտոյս և 'ի բազկացս և 'ի թիկանցս և 'ի միջացս 'ի կռիւ և յխա-կալութիւն և յընչասիրութիւն յորդորեմ։ բայց դու երբէք ոչ հանդուցեր զիս։ Այլ ասէ սուրբն Մակար. սատանա-

նայոյս փաղաքշելով թուլեմ զպահեցողս առ ի՛ղձս կերակրոյ և յղփութեանց, և սովաւ գնեմ 'ի նոսա զչարախօսութիւն և զզազրալի բանս պղծագործութեանց. և յամենեսեան ստրկանեմ զսերմն գործոց իմոց՝ յորժամ ժողովեն ինձ զպտուղ մշակութեան իմոյ որք հնազանդին ինձ։ Դարձեալ հպարտութեան և ամբարտաւանութեան ծնանեմ 'ի մարդ ընդդէմ պարանոցի իմոյ, և առոր առամ առաջնորդսն իմ զչարսն կենդանեաց, զմարմն և զհպարտութիւնն՝ զոր բարիս կարծեն հետևողաց իմոյ. իսկ որ 'ի լանջս իմ է սանձք իմոյ մտածութեանց խորհրդոց՝ առամ բռնել զինքն յարդարութեան անօրէնութեանց և խաւարեցուցանեմ զմիտս բարեպաշտաց՝ որք յիշել կամին զյաւիտենական կեանս, և առամ մոռանալ զնոսա. իսկ ամանք այս որովայնի իմոյ լի են անմնութեամբ որով անդադականն անմնութեամբ իւրեւ զանառակս առնեմ հեշտամոլս և գազանաբարոյ գործել առամ զչար, և խաւարաւ և մթով լնում զկեանս նոցա. իսկ 'ի սրտոյս իմ ամանոյ որ գեղն է՝ նովաւ շարժեմ 'ի պղծութիւնս և 'ի խառնակութիւն ընդ միմեանս գազանաբար. իսկ 'ի ձեռաց իմ ամանաց ելանեն հնարք և նախանձք և սպանութիւնք, որք են իմ հաճելիք և ընձալի գործ. իսկ որ 'ի յուսս և 'ի թիկունս իմ են գեղջք խաւարադեանց իմոց փարձութեանցն, յորժամ կաշուխք զօրաւորք ընդ նոսա որք պատերազմին ընդ իս, և խաւարաւ գնեմ նոցա 'ի ծածուկ 'ի թիկանց իմոց, և ձգեմ զնոսա անդ. որք յուսան 'ի զօրութիւն իւրեանց. իսկ միջք և անդամանք իմ զոր տեսանես լցեալ միջոյն յոտս, ամենեկեան ցանցք են և որոգայթք և լարք խաբէութեան իմոյ՝ որով խաբեմ զըղձաղուածս յուղւոյ ճանապարհէն, և խափանեմ գնալ 'ի շաւիղս բարիս, և 'ի չար ճանապարհս իմ և 'ի թիւրս շեղեցուցանեմ. զի ես նախանձ կամ 'ի միջ ճանապարհի կենաց և մահու, և զթեցուցանեմ 'ի ճանապարհէ կենաց զորս կամին գնալ, և ձգեմ 'ի շաւիղս մահու։ իսկ յարատարայս իմ և յանդս սերմանեմ փուշս և տատասկս՝ որոց մշակք ուրանան ընդդանան ճշմարտութեան։ իսկ դու ոչ երբէք կամեցար լսել ինձ և ոչ մի անգամ, զի ունէի մխիթարել յոյն, և սովաւ պարտեցուցանես զիս. զի ունիս դու զէն հզօր և անյաղթելի՝ յորժամ երկրպագեալ կամիմ զնոսա առ բարեկամս իմ և ծառայս, զի քո է անէր քաղցր և բարերար առ աղքատս և պահէ զքեզ և զանձկերս քո 'ի բարեաց իմոց։ Իբրև լուաւ զայս ամենայն հայրն Մակարէ, հիացեալ զինքն սքանչանալով խաչիւն և ասէ. օրհնեալ է Տէր՝ որ ետ զմեզ կանխան ծառայից իւրոց, որ և զիս պահեաց մինչև ցկատարած ամենայն 'ի մեղաւորութեանց քոց, որպէս զի յաղթեցից զքեզ զանազան չարեաց, փախցոյ յարանձնեանս, բնակեալ յաղթեալ 'ի փորձեն Այս ... , և մի մերձեսցես 'ի փորձանս յաղթօ-

ցէ 'ի քեզ Տ̃րն ա̃ծն իմ օրհնեալն յաւիտեանս։ Նա չէր եղեալ բարձաւ, և նա եւս փառս ա̃յ։

ԾԵՐ՝ մի երթայր և երկու հրեշտակք ընդ նմա. և 'ի դիպելն գիշոյ ինչ՝ կալաւ զքիթն ծերն և հրեշտակքն։ Նա 'ի հարցանելն ծերոյն՝ թէ և ձե̃զ հաս գայ, ասեն՝ ոչ, այլ վասն քո սրտի արարաք. այլ մեզ հաս 'ի մեղաւորէ գայ 'ի հոգւոյ՝ որ հոտեալ է նմա։

ԲՆՑԻՐ՝ միայնաւոր մի միայն աղօթէր մինչև ցերեկոյ, և գտանէր պատրաստ հաց ջերմ և ուտէր։ Նա զկնի եկն եղբայր, և ետ նմա գործ աղաչանօք. և եկն և ոչ եգիտ զհացն, և ննջեաց տրտմեալ։ Նա ասէ ցնա տէր. յորժամ ինձ մենակ աշխատէիր՝ ես հոգայի զքեզ, և երբ այլում գործեցեր՝ անտի կեր։

ՀԱՐՑԱՒ՝ 'ի հարանցն կուսան ծերունի մի՝ թէ ո՞ր-

սէկ որք գնան ընդ նեղ և ընդ դժուարին ճանապարհս կենաց, և մեկ-նեա յանապատականաց։ Զայս խրատ տայ ասացեալ, եթէ նա խրատ ըն-ծայի հնազանդ, և ցրուեալ յորս ունկնդիր եղև։ Իսկ ասացեալն եւ ծառայ ե-կաց յաղօթս և ասէ. փառք քեզ, Ք̃ս, ընդ հօր և սուրբ հոգւոյն, որ ես պարգևեալն ամենեցուն և փրկութիւն յուսացելոց 'ի քեզ։

։ Սակայն վասն ծերոյ ումեմն՝ եթէ գնայր նա ընդ յանապատս և երկու հրեշտակք գնային ընդ նմա, մինն ընդ աջմէ և միւսն ընդ ահեկէ նորա. և 'ի գնալն գիտեցաւ գէշ ինչ ննջեցեալ 'ի ճանապարհին, և ծածկեաց ծերն զհոտոտելիս իւր 'ի ժահահոտութենէն, և արարին այն-պէս և հրեշտակքն։ Եւ իբրև հեռացան, ասէ ցնոսա ծերն. և ձեզ եւս գիտելի այս չար հոտս։ Իսկ նոքա ասեն. ոչ, այլ վասն հաճոյից քոյ արարաք զայս ծածկել զանձինս մեր, զի ոչ ինչ չարահոտութիւն կենդանեաց կարէ մերձենալ 'ի մեզ, բայց միայն ժահահոտութիւն հո-գւոց մարդկան որք կան 'ի մեղս՝ զիջանին մեզ և աղաղակացուցանեն ըն-դդէմ մեր։

։ Ծեր ոմն էր որ բնաւ ոչ ինչ գործէր, այլ միշտ աղօթէր զտիւ և զգիշեր. և յերեկոյին իբրև մտանէր 'ի սենեակն, գտանէր հաց ջերմ և անուշահամ, զոյն ճաշակէր և գոհանայր զԱ̃յ. զայս արարք ամս բա-զումս։ Եւ այլ եղբայր գնաց առ նա և ասէ ցնա. ոչ է բարւոք զա-տարկ կեալ, այլ գործեա ձեռօք։ Եւ ետ նմա արդեամբ և ուսոյց զնա հիւսել և կարել. և իբրև գործեաց և յերեկոյին եմուտ 'ի սենեակն, ոչ եգիտ զհացն զոյն ամէն, և ննջեաց տրտմեալ և դղթեալ։ Եւ երեւե-ցաւ նմա ոմն 'ի գիշերի և ասէ ցնա. յորժամ վասն իմ պարապեալ էիր՝ ես կերակրէի զքեզ, և արդ զի գործել սկսար՝ գործք քո կե-րակրեսցեն զքեզ։ Վասն այսորիկ այլ ոչ եւս գործէր ծերն, այլ զամ-ձնեալ սկսաւ պարապել յաղօթս 'ի տուէ և 'ի գիշերի և ասէր. կատա-րեալ գործ իցէ յաղօթսն աշխատել։

։ Պատմէր մեզ զայս ծեր ոմն մեծ՝ եթէ էր ոմն կայր ծերացեալ յայծ հաւատով. որ ունէր էր յերկնայինս տղ և փոյթ լինել յամենայն առաքինութիւնս և սուրբ յամենայնի, որ կոչէր Սիմոն։ Իսկ ես հարցի տարա պատկես զի պատմեսցէ ինձ զքրիստոսի հեռանալոյս իւր յաշխարհէ։ Իսկ նա հառաչեաց և ասէ ցնա. ես, ով որդեակ և պատուական հայր,

Digitized by Google

պէս նշէր յաշխարհէ ։ Այլ առաջ. ունէր հայր հեզ և բարի և հիւանդոտ և մշակ, որ 'ի ժամ մահուանն այնքան վաստակաւոր էր ողն՝ որ զկնի չորս աւուր հազիւ ետուն հողոյ. և մայր ունէր լի ամենայն չարեօք, և մեռաւ 'ի բարի աւուր՝ անցաւ կացեալ զաւուրս իւր ։ Այլ կոյսն կայր 'ի տագնապի՝ թէ զոր ընտրեսցէ ճանապարհ,

գուստր էի հօր հեզոյ և խոնարհի և ուղղոյ՝ որ էր քաղցր առ ամենեսեան, այլ հիւանդ մարմնով, մինչ զի զամենայն աւուրս իւր մաշեցաւ ցաւօք 'ի մահիճս իւր, և այսպէս հանդարտութեամբ կայր 'ի ցաւս իւր, մինչ զի հազիւ խօսէր ինչ հարցողացն զնա. այր գեղջական էր, այլ մեծատուն էր յոյժ. գործէր զերկիր, և զպտուղ նորա ծախէր 'ի պէտս մեր և կարօտելոց. այնպէս հեզ էր, մինչ զի համր կարծէր 'ի բազմաց ։ Իսկ մայրն իմ ամենեւին օտար և ընդդէմ էր գործոց հօր իմոյ, զի զարդարէր զինքն և պճնէր առաւել քան զպատշաճն, և այնպէս լեզուանի և չարաբան և յանդուգն էր՝ իբր թէ ամենայն անդամք իւր լեզու էր. և էր 'ի նմա շփոթմունս և կռիւս և աղմուկս բազումս զտիւ և զգիշեր. իսկ զգինարբումն և զարբեցութիւն և զշռայլութիւնս ընդ առանց՝ ունէր անյագ և անթիւս, և այնպէս ծախէր զամենայն գոյս տան իւրոյ պոռնկապէս. զի որչափ և բազում գտանէր մուտք գոյից որ գայր 'ի ձեռն նորա՝ ոչ էր բաւական նմա և ոչ օր մի, զի նմա հաւատացեալ էր հոգս տան մերոյ 'ի հօրէ իմմէ ։ Իսկ զմարմին իւր այնպէս եդ 'ի գործել պղծութիւն, մինչ զի առկաք զերծան 'ի գեղջն յայնմանէ 'ի լուրից պոռնկութեան նորա և անառակութեանն և գարշութեանն ։ Եւ ոչ երբեք դիպաւ նմա հիւանդութիւն մարմնոյ և ոչ ինչ ցաւագնեաց նմա, այլ 'ի ծննդենէ մինչև ցմահ կատարեալ առողջութեամբ եկաց 'ի չարիս ։ Եւ եղև մեռանել բազմամօք հիւանդութեամբ հաշելոյ հօր իմոյ, և առժամայն խառնակեցան օդք, շարժեցան հողմունք և որոտմունք և հատանէին կայծակունք սաստիկք, և անձրևք և հեղեղք. և ոչ եղև հանդարտել օդոյ՝ մինչև մնաց առանց թաղման մեռեալ հայր իմ զերիս աւուրս ։ Վասն որոյ արք գեղջն շարժէին զգլուխս իւրեանց, սքանչանային և ասէին. ով չար այր սա, որ կայր 'ի միջի մերում, սա թշնամի այ էր, զի զկեանս իւր յանկողին և 'ի ցաւս ծախեաց, և արդ հող զնա ոչ ընդունի մեռեալ ։ Այլ թէպէտ և դըժուարին էր թաղել զնա 'ի խառնութէ օդոյն, այլ զի մի նեխեալ լուծցի և անմուտ արասցէ զտունն՝ վասն այսորիկ բազում աշխատութեամբ հանեալ թաղեցաք զնա որքան կար էր ։ Արդ իբրև էառ մայրն իմ ազատութիւն յառնէն, առաւել լիրբ և անպատկառ ձգեաց զմարմին իւր յանառակութիւն պոռնկութեան, մինչ զի յայտնի պոռնկանոց արար ըզտուն իւր. և այնչափ յաւել յանառակն պոռնկութիւն և 'ի յղփութիւն և 'ի յարբեցութիւն, մինչև ոչ ինչ մնաց մեզ 'ի հայրենեաց և 'ի ստացուածոց մերոց ։ Իսկ յորժամ եհաս ժամ մահու նորա, ասելի է թէ բնաւ ահիւ իշխեաց մահն տիրել նմա. և մինչ մեռաւ, այնպիսի եղև փոյթ ամենայն մարդկան պատուել և պահել և օգնել զնա, մինչ զի թուէր թէ և օդք սպասէին թաղման նորա ։ Իսկ զկնի մահուան ծնողաց իմոց եղէ ես 'ի հասակ մանկութեան՝ մինչ զի զգայի զշարժումըն բնութեան մարմնոյ ։ Եւ 'ի միում գիշերի մինչ ննջէի 'ի մահիճս իմ, սկսայ խորհել 'ի միտ և ասել՝ եթէ զորն ընտրեցից զկենցաղս. ըզհօր իմոյ զհեզութիւն և զանմեղութիւն և զբարութիւն ընտրեցից. այլ նա և

զհօրն Թէ զմօրն։ Նոյն ատեանն զմեծ ամն, որ ասէ ցնոսա․ եկ տանիմ զքեզ ատեանն զծնողսն։ Նոյն տարաւ առ հայրն՝ որ կայր 'ի դրախտի, և առ մայրն՝ որ կայր 'ի դժո–

ող մի ինչ բարի կրեալ յերկրի, այլ զամենայն ժամանակս կենաց իւրոց ծախեալ 'ի ցանկս և 'ի մեղս, և այնպէս գծուցաւ եղ յերկրէ՝ մինչ զի և հողն ոչ ընկալաւ զնա․ զի Թէ հաճոյ էր Աստուծոյ այն քաղաքավարութիւն նորա, ընդէր անկաւ յայլազան չարիս։ Այլ կենցաղ և գործ մօր իմոյ առաւել բարի էր, և զմնացեալսն առաւ 'ի աղծութիւն և 'ի հեշտանալս անխորհէին․ քանզի ոչ ինչ եԹող նա յամենայն գործելի գործոց զոր ոչ կատարեաց, զի պատուհասութիւն և արդարութեանց կատարեաց զամենայն կեանս իւր և առողջութիւն և խնդութիւն։ Եւ արդ այսպէս լուսաւորն և կեաց, և նա զոր առնէր աշխարհ իմոյս՝ ընդէր հատանէին՛։ Եւ արդ այսպէս խառնաբերեցան միտքս իմ զնայ ընդ ճանապարհն մօր իմոյ։ Այլ բարեպաշտ և մարդասէրն Աստուած ոչ եԹող կորնչել զնա․ զի մինչ զայս խորհուրդ ընտրէր, ննջեաց․ և ահա զի եկեալ մերձ իմ այր մի մեծ հասակաւ և ահաւոր ահագնական և ասէ ցնա բարկացեալ զիմաստ և ահաւորական ձայնիւ․ զինչ են խորհուրդք այդոցիկ զոր մտածես դու։ Իսկ նա ասացեալ 'ի ահաւոր տեսլեան և ոչ կարացի խօսել և ոչ նայել 'ի նա։ Եւ նա ասէ․ պատմեա ինձ զինչ խորհիս։ Եւ իմ զարհուրեալ յահէն՝ ասացի․ ոչ գիտեմ։ Եւ նա ասէր ինձ զամենայն զիմս, և ասէ ցիս․ մի զայրացեալ խորհեսցիս դու։ Արդ զայս առաց, եւ իմ զամենայն պատմմունս նորա։ Իսկ նա ասէ ցիս․ արդ եկ ընդ իս և ցուցից քեզ զհայրդ քո և զմայրդ, և ապա Թէ որպէս և կամ մեր են, և ապա որոյ կեանքն հաճոյ Թուեսցի քեզ՝ զայն ընտրեսցես։ Եւ կալեալ զձեռանէն իմմէ առաջնորդեաց զիս 'ի դաշտ մի մեծ, որ լի էր բազմազանաւ ծաղկովք, և ծառովք լի ծառովք և պտղովք զանազանօք՝ զոր ոչ կարող էր ոք ըմբռնել պատմել, և ածեալ զիս ընդ աղբերաց ջուրց և ... [illegible], և ընդէր անդ անուշահոտութեանց․ և այլ կարող էր պատմել զփափկութիւնս որ էին անդ։ Եւ իբրև շրջէաք անդ, ընդ դէմ եղ մեզ հայրն իմ պայծառ զգեստուք զարդարեալ, և համբուրեաց և հարցանէր զիս։ Իսկ ես փարեցայ զնովաւ և աղաչէի մնալ առ նմա անդ։ Եւ նա ասէ ցիս․ արդ ոչ է հնար մնալ քեզ աստ, որդեակ, այլ Թէ կամիս գործոց իմոց զհետ գնալ, գաս գուցէս 'ի ժամանակի իւրում։ Եւ կալեալ զձեռանէն իմմէ ընդ դարձն իմ և ասէ ցիս․ եկ և տես արդ զմայրն քո։ Եւ հանեալ զիս տարաւ 'ի տեղի ինչ դժուարին և չար, և եցոյց զիս 'ի տունն մթին՝ վայ ասելով, որ լի էր ողբովք և կոծիւք․ և եցոյց ինձ անդ հնոց հրոյ բորբոքեալ և ձիւթ եռացեալ և ահաւորս գազանս սողունս, և էր աղաղակ և գոչումն և կծկումն և կրճտել ատամանց։ Եւ նայեցեալ անդ անդ զմայրն իմ 'ի հնոց հրոյն թաղեալ մինչև ցպարանոցն, և կրճտէր զատամունս իւր 'ի մէջ հրոյն, և անշէջ որդունքն ծծէին զնա։ Եւ իբրև ետես զիս, աղաղակ հանեալ և ասէ․ վայ զիս, որդեակ, 'ի չար գործոց իմոց․ վայ զիս յանդգնութեանց իմոց, զի զամենայն բանս զգլուխ ընդդիմանայսս կարծէի, և ոչ հաւատայի դժոխոց պատուհասին, և աղծութեան և արդարութեան ծառայեցի․ և արդ յաւիտենական տանջանաց վայելուց պատուհասիմ, և ահա սոսկալի արհաւիրք տանջանացս անտանելի տեղին սպասեն, և հասին ինձ ամենայն չարիք իմ․ Ահա ժամ զղջմանց և ապաշխարութեան․ արդ յիշեսցես, որդեակ, զծնունդն զոր սնուցի յինէն, և տուր ինձ զփոխարէնն բարեգործութեան․ և ողորմեա ինձ, որդեակ, խորտակեալս 'ի հնոցի հրոյս․ և

հեծոց. և նորա զարթուցեալ՝ եւս [illegible] պատերազմութեան կատարութեան։

Զ[illegible]՝ [illegible] թագաւորին [illegible] և յան-[illegible], յարուցեալ կայր հայրն [illegible]՝ որ [illegible]. մի եր-կնչիցէք, սպասեսջիք և աղօթեսջիք, և ես երթամ առ թա-գաւորն և յետ երկրպագութեան [illegible] 'ի [illegible] աղօթէր. և [illegible]. [illegible] յետ [illegible] [illegible], և [illegible] թագաւորին և [illegible] [illegible], և էր [illegible] յաջողեալ [illegible]։

զԹա [illegible], որդեակ. [illegible]. [illegible] քո [illegible]-ցելոյ, և տուր զձեռն քո յօգնել ինձ։ Իսկ ես [illegible], և ոչ իշխէի առնել ձեռն յանձն [illegible]։ Եւ նա զարձեալ ասէր [illegible]. որդեակ, ողորմեա ինձ. որդեակ, մի [illegible] քո. յիշեսցես [illegible] իմ զոր [illegible] 'ի ծնունդ քո, և մի թողուր զիս [illegible] 'ի հեթանոսս յայս։ Իսկ ես [illegible] 'ի ձայնէ և արտասուաց նորա, և [illegible] լեալ ձգեցի զձեռն իմ հանել զնա. և իբրև [illegible], [illegible] զձեռս իմ, և [illegible] և [illegible] 'ի գա-[illegible]։ Եւ [illegible] 'ի [illegible] և [illegible] [illegible]՝ զինչ [illegible]. զի զարթուցեալ էի։ Եւ [illegible] զի կե-[illegible] էր ձեռս իմ. և հարցին ցիս՝ զինչ է այս, և ես [illegible]։ Եւ [illegible] [illegible] և [illegible]. [illegible] է որ [illegible] ինձ [illegible] [illegible]։ Զայս [illegible], [illegible] հաստատեցեալ էր 'ի [illegible]. և [illegible] [illegible] և [illegible]. [illegible], զի [illegible]։

1 [illegible] 'ի [illegible] և [illegible] 'ի [illegible]։ Եւ [illegible], և [illegible] 'ի [illegible] առ թագաւորն։ Այն [illegible]. ոչ [illegible] է [illegible] և [illegible], այլ [illegible] 'ի [illegible], և ես [illegible]։ Եւ [illegible] 'ի [illegible], և [illegible] 'ի [illegible]։ Իսկ [illegible], [illegible], զի [illegible] 'ի [illegible], և [illegible]։ Իսկ [illegible] 'ի [illegible], և [illegible]։ Իսկ [illegible]՝ [illegible] և [illegible]. [illegible]։ Այն [illegible]. [illegible] ինձ, [illegible], զի [illegible] առ թագաւորն և [illegible], և [illegible] և [illegible], և [illegible]։ Եւ [illegible], և այլ ոչ [illegible] ընդ նմա։

Digitized by Google

ՄԱՒՐՔՆ* Պափնուտի ցանկացաւ շրջել ընդ անապատըս և տեսանել զծառայս տեառն։ Եւ գնացեալ զչորս տիւ և զգիշեր՝ լքաւ 'ի վաստակոցն և 'ի քաղցոյ։ Եւ երեւեցաւ նմա այր մի փառաւոր և զօրացոյց զնա օծանելով զշրթունսն. Եւ շոգաւ այլ եւս աւուրս և գիշերս չորս, և գտեալ քարայր մի փակեալ զդրանիք և մտեալ ետես ծեր մի նստեալ, և իբրև չէառ զողջոյն՝ մերձեցաւ ձեռամբն, և եղև իբրև զփոշի, և ետ զնա հողոյ ապաստանաց։ Եւ շոգաւ անդ յոլով աւուրս, և տեսեալ ոտնահետս նստաւ առ երեկս, և տեսանէր ջոկս գոմեշաց և ծեր մի 'ի մէջ նոցա, ծածկեալ հերօք. և աղօթեալ տեսին զիրեարս։ Եւ պատմեաց նմա եթէ Տիմոթէոս է անուն իմ. և էի 'ի միաբանակեացս, գործէի կտաւս, և յաղագս մանկանէ չարին գնացի առանձին 'ի Ճանապարհս, շինեցի հիւղանոց և գործէի զարուեստն և տանէի յոլով ողորմութիւն ընդունելով հիւրս, և վասն արուեստին անկայ 'ի մեղս կնոջ վեց ամիս։ Եւ հարեալ զիս խղճի մտացս՝ եկի յանապատս. և 'ի յոլով տաժանապոյն չկարէի կանգնել, և ընդ գետին թաւալմամբ կատարէի զաղօթսն։ Եւ կալաւ զիս ցաւ լերդի, և եկն ոմն փառաւոր և ասէ. զի՞ է քեզ։ Եւ ասեմ. այս տէր, ցաւ է լերդիս։ Եւ բուռն հարեալ պատառեաց զկողս և հանեալ եցոյց զլերդս իմ, և սրբեալ զցաւն՝ եդ 'ի տեղւոջն և ասէ. ահա ողջացար, այլ մի մեղանչեր։ Եւ եղև անարատ, և համբերձն հնացեալ անկաւ. և եմ աստ ամս երեսուն։ Եւ ոչ ետ նմա կալ զայն գիշերն, ասելով՝ թէ չկարես տեսել պատերազմաց դիւաց։ Եւ գնացի զհնգետասան օր և գտի զմեծն Ոնոփրիոս, որոյ հեր գլխոյն ծածկէր զամենայն մարմինն, և բանջարով ծածկեալ էր զմէջն. որ և պատմեաց զինքենէ՝ որ 'ի մանկութենէ եղև ընդ հարիւր եղբարս միաբանից որբագունից. և զի գովէին զառանձնականութիւն՝ որ Եղիայի և Յովհաննու նմանն գործէ, զի զնոյն միայն ունին յայս յամենայն վիշտս որ համբերին, և ոչ զոք 'ի մարդկանէ։ Իսա 'ի գիշերի միում ելեալ գայի, և առաջի իմ երևեցաւ լոյս. և երկեայ և կամէի դառնալ։ Եւ եկն առ իս հրեշտակ տեառն և ասէ. մի երկնչիր, եկի 'ի տեսանել

* Համառօտեալ է վարուց Տիմոթէոսի և Ոնոփրիոսի. գրոց ընդարձակին տես յէջ 165. հատ. Ա։

պղտուշանեալ քեզ։ Այլ գնացայք ընդ անապատս եւ թնմ մի լին եւ հասաք ՚ի յայր մի փակեալ․ եւ բախեալ՝ եւ ծեր մի փառաւորեալ երեւօք եւ ասէ․ բարի եկիր, եղբայր Ոնոփրիոս։ Այլ ողջագուրեալ զիս ասացից առ իւր զաւուրս, եւ ապա ասաց զիս Հեռացայնս եւ եբեր յայրս յայս․ եւ եղեւ ընդ իս աւուրս երեսուն, եւ ուսոյց ինձ զամենայն սրբութիւն պատուիրանի զիւրոց եւ զխորամանն համբերութիւն, եւ գնաց յինէն․ եւ ՚ի աւուրս նոր մի անապանէր զիս՝ մինչեւ փոխեցաւ առ Տէր, զոր եղի ըղւաւրը նշխարս նորա մնա առ իս․ եւ եմ՝ աստ ամս վաթսուն եւ հինգ։ Այլ առաքելեալն որ կայ առ իս, քերէ երկոտասան բազում ՚ի աւուրսն, եւ ընծի ինձ բաւական բաղուկ մի յամիսն։ Այլ հրեշտակն տեառն մխիթարէ զիս եւ զամենեսեան որք են յանապատի աստ ՚ի մօրմին եւ յարբեւ սրբոյն մեղ։ Այլ յորժամ կարօտի որք ՚ի եւեսիլ մարդոյ, մերձացուցանէ յերկինս եւ ցուցանէ զարդարան եւ զորոց հոգիոն, եւ մատանալք զամենայն վաստակ եւ զաշխատութիւն։ Այլ ասեցայ զքանս՝ ըստասաւորեցան երեսք նորա իբրեւ զարեգակն, եւ ասէ ցՊափնուտիոս․ որդեակ, ես այսօր կատարեմ զընթացս իմ․ եւ թէ որք յանուն իմ պատարագ մատուսցէ տեառն, կամ զՀայր մեր որ յերկինս ասասցէ, կամ եղբարս կերակրեսցէ կամ խունկս ծխեսցէ տեառն, ես յիշեմ զնա յաղօթս, եւ համարեսցի զնա ընդ յաջմէն ժամու ՚ի ահեղիսանէն։ Այլ օրհնեաց զՊափնուտիոս եւ ասէ․ մի գայցէ ՚ի քեզ թշնամին աբաւոր ինչ աստանի աշխարհ առանձին Տեառն յանդիմանել ըղքեզ, այլ ասացես պատարագամանի ամենայն վարուց քոց։ Այլ ասացեալ զայս հանգեաւ։ Այլ Պափնուտեայ պատեալ զաւուրը նշխարս նորա եւ հողոյ․ եւ ինքն խնդրէր յերկ մնալ ՚ի անդունդն, եւ ամենայն փառք զաղաղքն, եւ առաքեալին ամեն։ Այլ նորա զխոսացեալ թէ ոչ է հաճոյ տեառն բնակելն նորա անդ, եւ յարուցեալ գնացր․ եւ հրեշտակն տեառն երեւեալ մխիթարէր զնա եւ առաջնորդէր։ Այլ յետ չորս աւուր դիպեցաւ չորս ծերունեաց՝ որք եւ ասացին․ բարի եկիր, եղբայր եւ գործակից Պափնուտիոս, որ ամփոփեցեր զաւուրքն Ոնոփրիոսի․ զի առէր եւ ցոյց մեզ զգալուստ քո այսօր; զի վաթսուն ամ է որ ոչ ըղք տեսաք ՚ի մարդկանէ բաց ՚ի քէն։ Այլ յաղօթս կացեալ նստան․ եւ տեսեալ առաջի իւրեանց նկանակ հինգ

այլակերպ և փափուկ՝ որպէս թէ նոր իցէ եկեալ 'ի թշնա-
րէ, և կերպեալ զուարթագին և սակայն․ վասն Թանայն ամ է որ
առաքեաց չորս նեղանս մեզ յոյժ մեզ մեծ, և այսօր հինգ ա-
ռաքելոց ողորմութեան մեծ ։ Այլ զգեստուն հանդերձիւն, զոր նե-
րանկի էր վաղին, և տուաքին նմա․ զնա, եղբայր, յԱղեքսան-
դրոս և պատմեա զանհասն մեծին և զնշանն, զի լուիցեն
յօդսդ իւրեանց ։ Այլ հարցեալ զանուանս նոցա՝ ոչ
պատմեցին, ասելով թէ մեծ զիտէ զանուանս մեր․ այլ
աղօթեսն, զի տեսցուք զմիմեանս 'ի դրախտին այդ ։ Այլ ե-
լեալ զնոյն Աղեքսանդրի սուրբ մեզ Խաչանաւորք, և զեր-
պեցեալ զխորհուրդ մի ըստ մեզ ասելով՝ թերեւս նոյն
թութ զերդ յուսացուցանող թուղ մնացեալ և այլ անա-
շահաւոր զերգեցիկք՝ որ և թուեցաւ նմա թէ զգայա-
կան է այդ, զի բուրեր 'ի նմանէ հոտ անուշահոտութե, և ապ-
րիւր մի ամենայնիւք սքանչացանէր զնա ։ Այլ յայսմանէ ե-
կին առնել մանկունքս զերեկեցինք՝ որպէս թէ հրեշտակք
իցեն, և ողջոյն տուեալ յանուանէ կոչեաց զԱղեքսանդրա,
և թէ ուստի գայր՝ պատմեցին․ և եղև առ նոսա զա-
ւուրս եօթն՝ վայելելով 'ի մօտոց նոցա ։ Այլ 'ի հարցա-
նելն պատմեցին առաջին՝ եթէ որպէս եկին նախապապաց
քաղաքին Աղեքսանդրեայ, որք եղեալ զմեզ յաստուծոյ ա-
ռաջին և առաւ 'ի Փիւզին այսր մերոյ․ ուստի ամենեկեանք
զատեալ կենդանիք ոչ լինէ զոլ, և յաճախեալ սակաւ հա-
ցիւ և ջրով՝ որ բաւական լինէր աւուրց եօթանց, փա-
խեաք զաղտ յանապատս, խնդրելով շրջելով թէ այսր ու-
րուցէ մեզ տեղ․ և աղօթք իմ ։ Մինչդեռ երթեալ մեզ
այսր մի փառաւոր և կայեալ զմեռանել մերձէ երեր 'ի
տեղին յայս՝ ուր կայր ոտքը ծեր մի, յանձն արարեալ
ստուգանէր զմեզ․ և ուսոյց սուրբ մի և վախճանեցաւ ։
Այլ մնացաք մեք սակաւ այս վեց ամ է․ զհինգ աւուրսն
զրաւիւք և աղօթեւք առանձինն, և զշաբաթ և զկիրակէ
ժողովիմք 'ի հակումն, և զայս հրեշտակ տեառն հաղորդե-
դէ զմեզ զերկու աւուրսն, և մխիթարեալ ժուժկալեմք
ամ նեղութեանց և փորձանաց ։ Այլ մինչ զայս ասէին,
բուրեաց հոտ զարմանալի նոր և անծանօթ ։ Այլ եկեալ
հրեշտակն տեառն հաղորդեցոյց նոցա մարմնոյ և արեանն
տեառն․ նոյնպէս և վաղիւն ։ Այլ առի հրամանս և չոգայ
յԱղեքսանդրիա և պատմեցի եղբարցն 'ի փառս այդ ։

ՊԱՏՄԵԱՑ մեզ երանելին Պաքմէոս վանահայրն Մ՝ ա-

վաղուց և Մակարի թէ նստէին 'ի գաւթին և խօսէին ընդ նմա. և ահա բազմութեան զղջացեալ գաւթին մատուցին ա-ռաջի նմա՝ որ 'ի բազմամարդ կարկեա մի ունէր կոյր. և ընկեցեալ զկարիճն առ ոտսն, և ինքն անդէն զանգի կաւս: Իսկ երանելւոյն Մակարի առեալ զկարիճն 'ի ձեռս իւր տարաւ 'ի նմանս առ Մակար, և աղօթս արա-րեալ եդին ձեռս 'ի վերայ նորա, և համբերեալ եւ զա-րիւնն աղջկացուցեալ զայս նորա: Իւր յետ միոց աւուր ե-րեր նմա մայր կաթնեղէնի եղին զոր յանձնառեալ էր յոր-դորդացն: Իսկ Մակար եւ զայն Մակարայ և Մակար եւ Աթանասի արքայ եպիսկոպոսին և նա Մեղինիսէ մե-րձն Աղեքսանդրի: Այս Մակար զմանրանին իւր ոչ եառս մինչև ցմահ իւր:

Այր ոմն 'ի մեծ հարցն անապատին. առ միայնեցեալ և ա-սէ՝ թէ զզօրութիւն զոր ունիս 'ի վերայ կենդանեաց 'ի ժամ բժշկութեանց, ունիս և 'ի վերայ միայնակեցաց ձեռայն յորժամ առնու զկերպարանս:

Զ Ո Գ Ա Ւ՝ աշխարհական ոմն որդւովն իւրով առ հայրն Սիսոյ 'ի լեառն հօրն Անտոնի, և 'ի ճանապարհին մե-ռաւ որդի նորա. և ոչ ինչ խռովեցաւ, այլ հաւատովք առեալ տարաւ առ ծերն, և անկեալ համբերեաց որդւովն իւրով առաջի նորա զի օրհնեսցին 'ի նմանէ. և յարու-ցեալ հայր մանկանն եթող զմանուկն առ ոտս ծերոյն և ել արտաքս 'ի խցէն: Իսկ ծերոյն կարծեալ եթէ 'ի պաղատանս է, խոնարհեալ առ մանուկն ասէ. արի գնա արտաքս, զի ոչ գիտէր թէ մեռեալ է. և առժամայն յարուցեալ գնաց: Իբրեւ հօր նորա տեսեալ զարմացաւ, և մը-տեալ երկիր եպագ ծերոյն և պատմեաց զիրսն: Իսկ լը-ւեալ ծերոյն տրտմեցաւ, զի ոչ կամէր ընդ լինել իրացն. և պատուիրեաց աշակերտին, զի մի ումեք ասասցէ մինչև ցվախճան ծերոյն:

Գնացեալ ոմն այր աշխարհական առ հայրն Սիսոյ 'ի լեառն Ան-տոնի՝ ունելով ընդ իւրն և զորդի իւր մանուկ հասակաւ, և 'ի գնալն ճանապարհ մեռաւ մանուկն յանկարծակի. իսկ հայրն ոչ շփոթեցաւ, այլ առեալ գնաց գնաց առ ծերն, և անկեալ հաւատով անկաւ առաջի ծերոյն 'ի ծունկս իւր երկրպագեալ՝ զի օրհնեսցի 'ի նմանէ, և եդեալ զմանուկն անդ՝ ել արտաքս. և իբրեւ ել նա, յարեաւ մանուկն և եկ ընդ նմա, և ծերն ոչ գիտաց եթէ մեռեալ էր և յարեաւ: Իբրև ել մանուկն առ հայրն իւր, և եւս գնաց՝ զաւհի հարցաւ այրն, և մտաւ առ ծերն՝ ակաւ երկիր պագանել և շնորհս խոստովանէր և յայտնեաց զգործն զայն: Իսկ լուեալ ծերն տրտմեցաւ յոյժ, զի ոչ կամէր թէ գիտասցէ ոք զնա. և պատուիրեաց նմա մի ումեք ասել զայն մինչև յօր վախճանի ծերոյն:

Digitized by Google

Ասաց՝ ոմն 'ի հարանց՝ թէ երկու եղբարք դրացիք էին միմեանց յանապատի անդ, մինն օտար էր և միւսն բնիկ. և էր օտարն հեզգագոյն 'ի վարս, իսկ բնիկն յոյժ առաքինի։ Արդ դէպ եղև զի վախճանեցաւ օտարն. իսկ ծերն վասն զի տեսանող էր, ետես զի հրեշտակք բազումք սպասաւորէին նմա։ Արդ իբրև կամեցաւ մտանել յերկինս, եղև խնդիր վասն նորա, ձայն եղև յերկնից որ ասէր. վասն հեզգութեան դորա գիտասջիք զի հեզգ է, բայց վասն օտարութեանդ բացէք դմա։ Յետ այնորիկ ննջեաց և բնիկն, և եկին ամենայն ազգք նորա. և ետես ծերն զի ոչ ուրեք երևէին հրեշտակք, և զարմացաւ և անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց պաղատելով առաջի այ՝ թէ զիարդ օտարն հեզգ էր և այնպիսի փառս ունէր, իսկ սա առաքինի՝ ոչ ինչ եղև սմա։ Արդ եղև ձայն որ ասէր. այս առաքինի յորժամ վախճանեցաւ, եբաց զաչս իւր, ետես զազգն իւր զի լային և մխիթարեցաւ անձն նորա. իսկ օտարն թէպէտ և հեզգ էր, ոչ զոք ետես յիւրոցն, և յոգւոց հանեալ ելաց, և ած մխիթարեաց զնա։

Պատմեաց՝ ոմն 'ի հարցն և ասէ. էր ոմն միայնակեաց յանապատին՝ Նիկոպօլիս, և սպասաւորէր նմա աշխարհական ոմն։ Էր 'ի քաղաքին այր մի մեծատուն և ամբարիշտ. դէպ եղև նմա մեռանել, և յուղարկէին զնա

1 Ասէր ոմն 'ի հարանցն՝ եթէ եղբարք երկու բնակէին մերձ առ նմա, մինն օտար և միւսն 'ի գաւառէն. և օտարն այն էր հեզգ փոքր մի, իսկ երկրացին էր փոյթ յոյժ։ Դիպաւ մեռանել օտարի եղբօրն, և տեսանէր ծերն գունդս հրեշտակաց զի գային ցնծալով առաջի հոգւոյ նորա և հանէին յերկինս. և իբրև կամէր մտանել, եղև խնդիր վասն նորա, և եկն ձայն 'ի վերուստ որ ասէր վասն նորա. դա սակաւիկ մի ծոյլ էր, այլ զի համբերեաց օտարութեն՝ բացէք դմա և մուծէք այսր։ Զկնի նորա ննջեաց և որ ոչն էր օտար. և եկին առ նա ամենայն ազգականք իւր. և ոչ ինչ ետես ծերն վասն նորա՝ ոչ հրեշտակ և ոչ ել յերկինս, և զարմացաւ և անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց առաջի այ և ասէ. զի՞ է, տէր, զի օտարն այն ծոյլ էր և այնպիսի փառաց արժանի եղև, և սա փոյթ էր յոյժ և ոչ ինչ եգիտ այնպիսի։ Եւ եկն ձայն յերկնից որ ասէր. փոյթդ այդ մինչ մեռանել հանգերձեալ էր, ետես զընտանիս իւր և մխիթարեցաւ. իսկ հեզգն այն ոչ զոք ետես զիւր, այլ ողբաց առ ած 'ի մեկնել հոգւոյն իւրոյ, և ած մխիթարեաց զնա, զի օտար վասն այ լեալ էր։

2 Պատմէր մեզ ոմն 'ի հարանցն՝ եթէ էր ոմն միայնակեաց սուրբ և ճգնաւոր մեծ 'ի լեառն Նիտպօլսոյ, և սպասաւորէր նմա աշխարհիկ ոմն այր երկիւղած այ։ Եւ էր 'ի քաղաքին յայնմիկ այր մի մեծատուն և անօրէն և չար յոյժ. և մեռաւ մեծատունն, և յուղարկէին զնա ե-

Digitized by Google

եպիսկոպոսացն և քահանայն ընծայից և մատուցմանց : Այլ աշակերտս միաբանակեցին առաքեալ զՀոգին ըստ առաքելութեան և դասանէ զմիաբանակեացն հանգուցեալ և բարեխօսս կեցեալ զնա : Ննջեաց 'ի վերայ երեսաց իւրոց առաջի սեղանոյն և ասէ . ոչ յառնեմ մինչև կատարեսցին կամք քո . զի է այս ՚զի այն ամբարտաւան այնքան փառս ունէր , և սա որ ծառայէր քեզ 'ի տուէ և 'ի գիշերի՝ զայս կերաւ : Այնժամ հրեշտակն և ասէ ցնա . այն ամբարիշտն գործ մի բարի արար և ընկալաւ զայն աստէն , զի անդ ոչ գտցէ և ոչ մի հանգիստ . իսկ սա սուրբ միաբանակեաց յի ամենայն աշխարհութեան՝ ունէր մարդկօրէն սակաւ յանցանս՝ ընկալաւ զայն աստէն , զի անդ արքեալ դասեսցի առաջի նոյ : Այլ կատարեալ կամք եղբօրն՝ զարմանս փառաւորեցաւ զնոյն վասն դատաստանաց նորա , զի Աշխարհիս էր :

Եւ 'ամն հիւանդութ և սպասաւորէր յամենայն կասանէ . իսկ մարդիկն ասէին՝ թէ չէին սուրբ 'ի միաբանաց : Այլ ըստ ծերին : Այլ իբրև վախճանեցաւ նա , ասաց ցհայրն՝ եթէ յորժամ վախճանեցայ , ամփոփեցէք զգաւազանն իմ 'ի վերայ գերեզմանի իմոյ . և եթէ դալարասցի և բերցէ պտուղ , յայնժամ գիտասջիք եթէ սուրբ եմ ես 'ի դասանէ . ապա թէ ոչ բուսցի , գիտասջիք զի

եպիսկոպոսաց և քահանայից ամենայն օրհնեալ ընծայ նոյն բաշխեալ պատարագ և մատուցմանց և սպասաւոր : Եւ առաւել այլքն որ սպասաւորէր՝ զմիաբանակեացն , հրամայէր թէ օրհնեա չար գործել միաբանակեացն՝ այնպիսի փառաւորութեան արժանացաւ : Եւ զնոյն յանդիմանէ առ միաբանակեացն իւր . և իբրև ետես զնա նիրհեալ 'ի բարեխօսս . և ամբարտաւան զնոյն իւր աշխարհեան այն սպասաւոր եղբայր զաւազակս , և անկեալ 'ի վերայ երեսաց իւրոց առաջի նոյ ասէ . ոչ յառնեմ ասէ , ասէր . մինչև ասասցես ինձ թէ որպէս է . զի ամբարիշտն այնպէս այնպիսի պատուով գերեզմանաց յիւր իւր , և սա 'ի մանկութենէ սպասաւորէր քեզ և այսպէս կերեալ եղև և գազան մահուամբ եղ յանկարծ : Յայնժամ եկն առ նա հրեշտակ նոյ և ասէ . նա թէպէտ ամբարիշտ էր , այլ ունէր մասն ինչ բարութեան , և առա էառ զփոխարէնս նորա , զի անդ տանջեսցի . իսկ ծերս այս սուրբ էր , այլ զի մարդ էր և ունէր բիծ 'ի մեղս , վասն այն առա էառ զհատուցումն նորա , զի երթիցէ առաջի սեղանն անմեղ սուրբ և մաքրեալ : Եւ հաստատեալ այսպէս և փառաւոր ասէր զնա :

: Գրեալ մեզ հայրն պատմեաց՝ եթէ էր ծեր մի որոյ սպասաւոր էր եղբայր կրօնաւոր մի սուրբ . իսկ մարդիկ ասէին՝ եթէ ոչ են նոքա սուրբ 'ի մեղաց : Այլ լսեալ ծերն լռէր : Եւ իբրև եհաս ժամ վախճանի ծերոյն , ասէ ցհայրն . գաւազանս այս զատուած առ 'ի ձեռին իմում է , արդ տնկեսցէք զնա 'ի գերեզմանի իմում , և եթէ դալարի և ծաղկի և բերէ պտուղ , գիտասջիք զի սուրբ եմ ես յայն մեղաց . ապա թէ

չեմ առնել։ Այս խորհ փախուցանելոյ, անկելոցն զգուշա-
ցանեն ի մերոյ գերբերականեն, և բառս և երբեր ստուգ.
և ամենեցուն տեսանել նոցին փառս նոյ։

ՊԱՏՄԵԱՑ՝ Հայրն Դանիէլ փարանացի աշակերտն Արսենի աշակերտն և ասէ. պատմեաց մեզ Հայրն մեր Արսէն վասն ումեմն սկիւթացւոյ և ասէ՝ թէ էր բարեպաշտ ի կրօնս, բայց տգիտաբար ի հաւատս. և վասն անմտութեան յանդգնէր և ասէր՝ թէ ոչ է ճշմարտութեամբ հացն զոր առնումք՝ մարմին Քրիստոսի։ Այս լուեալ երկուց ծերոց զբանս զայս, և գիտէին զմեծ վարս նորա և ըզգործս, և ծանեան եթէ անմեղութեամբ ասէ զբանս զայս, չարութեամբ ոչ, և ասեն. Հայր, բանս լուաք անհաւատալի վասն ումեմն, որ ասէ թէ հացն զոր առնումք՝ ոչ է ճշմարտութեամբ մարմին Քրիստոսի, այլ օրինակ է մարմնոյն Քրիստոսի։ Յայնժամ ծերն ասէ. ես եմ որ ասեմ զայդ։ Այս աղաչեցին զնա և ասեն. մի ունիր զայդ բանս, Հայր, այլ որպէս աւանդեցին մեզ սուրբ ընդհանրական եկեղեցի՝ հաւատամք թէ այս հացս զոր առնումք, ճշմարիտ մարմին Քրիստոսի է և ոչ օրինակ. այլ զոր օրինակ հող առեալ յերկրէ՝ ստեղծ Աստուած զմարդն ըստ պատկերի իւրում, և չկարէ ոք ասել թէ ոչ է ըստ պատկերի իւրում, վասն զի անհաս է խորհուրդն զորմէ ասաց՝ թէ հացս մարմին իմ է և բաժակս արիւն, և մեք այսպէս հաւատամք ճըշմարտութեամբ եթէ մարմին և արիւն Քրիստոսի է։ Իսկ ծերն

ոչ առեալ ստուգ, անխորհրդաբար նմա։ Այս խորհ թագաւորեցին զնա զգաստացուցեալ ծերքն, անկելոցն զգուշացեն ի գերբերականեն, և ամենայն ստուգ նահանջել, և զինքն երկրորդ առաւել ստուգ. և այսք լուան՝ որհնեցին զնա։

Պատմեաց մեզ Հայրն Դանիէլ եթէ ասաց Հայրն Արսենիոս, եթէ էր ծեր մի որ էր Սկիւթացի մեծ յոյժ, այլ ի հաւատս յողդողդ յանգիտութեան. զի ասէր նա՝ թէ սուրբ հացն զոր հաղորդիմք, ոչ է ստուգապէս մարմին Քրիստոսի, այլ օրինակ մարմնոյ է նորա։ Իսկ ծերքն լուեալ զի ասէր զայս, և տրտմեցան յոյժ. զի գիտէին զնա մեծ ճգնաւորութեամբ, և գիտէին զի անմեղաբար ոչ գիտելով ասէր զայն։ Եւ գնացին առ նա և ասացին ցնա. Հայր, լուաք զումեմնէ անհաւատալի որ ասէր՝ թէ հացն սուրբ զոր հաղորդիմք, ոչ է ճշմարտութեամբ մարմին Քրիստոսի, այլ օրինակ նորին։ Ասէ ցնոսա ծերն. ես եմ որ ասեմ զայդ։ Իսկ նոքա աղաչէին և ասէին. մի այդպէս ասեր, Հայր, այլ որպէս աւանդ կաթողիկէ եկեղեցւոյ. զի մեք հաւատամք զի հացն այն և բաժակն մարմին և արիւն Քրիստոսի է ճշմարիտ. և որպէս ի սկզբանէ զհողն առեալ ստեղծ մարդ ըստ պատկերի իւրում, և ոչ ոք կարէ ասել՝ թէ ոչ է մարդն պատկեր Այ, այսպէս և հացն որ ասաց՝ թէ այս է մարմին իմ, հաւատամք զի ճշմարիտ մարմին է Քրիստոսի։ Պատասխանի ետ ծերն՝ եթէ ոչ

ասէ. Եթէ ոչ կատարեսցին կամք իմ, ոչ հաւատասցից երբեք: Այլ նոքա ասեն. աղաղակեսցուք զշնորհաց զայս առ Աստուած վասն խորհրդոյս այսորիկ, եւ յուսամք յԱստուած որ յայտնեսցէ մեզ: Ապա ծերքն խնդութեամբ ընկալան զբանս զայս, եւ չոգան յիւրաքանչիւր խուցս: Այլ ծերքն աղաչանս մատուցանէին առ Աստուած եւ ասէին. Տէր, դու գիտես զի ոչ ինչ չարութեամբ թերահաւատեցի. այլ զի մի անգիտութեամբ մոլորեցայց, յայտնեա ինձ, Տէր Յս Քս: Նոյն այլ ծերքն աղաչէին զԱստուած եւ ասէին. Տէր Յս Քս, յայտնեա ծերոյն զխորհուրդս զայս, զի հաւատասցէ եւ մի կորուսցէ զվաստակս իւր: Այլ լուաւ Աստուած պաղատանաց երկոցունցն: Այլ իբրեւ կատարեցաւ շաբաթն, եկին կիւրակէն որ յեկեղեցին եւ նստան երեքեան ՚ի վերայ ապաւանեղէն միոյ, եւ բացան նոցա իմանալի աչք. եւ յորժամ եդին զնշխարսն ՚ի վերայ սրբոյ սեղանոյն, երեւէր երեւելով նոցա իբրեւ զմանուկ. եւ իբրեւ կամէր երէցն բեկանել զհացն, եւ ահա հրեշտակ տեառն իջեալ յերկնից ունելով սուր, եւ զենեալ զմանուկն եւ հեղու արիւնն ՚ի բաժակն. եւ յորժամ բեկանէր երէցն եւ մանրէր, եւ հրեշտակն մանրէր նոյնպէս ՚ի մանկանն: Իբրեւ եկին առնուլ ՚ի սուրբ օրհնացն, տուաւ ծերոյն միայն միս հում արիւնոտ: Այլ իբրեւ ետես ծերն՝ զարհուրեցաւ, աղաղակեաց ՚ի ձայն մեծ եւ ասէ. Հաւատամ, Տէր, զի հացդ մարմին քո է եւ բաժակս արիւն: Այլ նոյնժամայն եղեւ

Ի ՏԱԲԵՆՆՈՍ անուն միայնակեաց բնակեալ էր յոյժ առաքինի և աշխատասիրագործ և հաճոյ Այ ամենայն վարուք իւրովք, ուր և Պաքումիոս եղև աշակերտի. վասն զի զամենայն ժամանակս կենաց իւրոց 'ի ճանապարհս ուղղութեան եկաց նա, և արժանի եղև շնորհաց մարգարէութեան։ Սա էր աղքատասէր և առաւել մարդասէր. և մինչ նստէր սա յայրին, յայտնեցաւ նմա հրեշտակ Այ և ասէ. Պաքումիէ։ Եւ նա ասէ. աւասիկ եմ, տէր։ Եւ ասէ ցնա. զքո ճանապարհսդ ուղղեցեր, եւ այժմ յարեդ և ժողովեա զմիայնակեացս և բնակեա ընդ նոսա, և որպէս ուսուցից քեզ՝ այնպէս խրատեա զնոսա։ Եւ գրեաց տախտակ մի հրեշտակն և ետ ծերոյն, և այս էին սկիզբն գրոյն. շնորհեսցես իւրաքանչիւր ըստ զօրութեան ուտել և ըմպել և ըստ զօրութեան իւրաքանչիւր գործ դիցես, և մի արգելուցուս որք պահեսցեն և մի որք ուտեն. և արա զօրս 'ի գործ մշակութեան նոցա, և աղօթք նոցա անձանձրոյթք։ Իսկ առաւօտն որք ծերքն են՝ արասցես խրճիթս և արկցես 'ի ներքս երիս երիս, և կերակուրք նոցա՝ զինչ և խորհրդեսցեն. նստել և ուտել և ըմպել. և աղօթք նոցա անձանձրոյթք, և ապաւինելք նոցա ցերեկին մաշկեայս և գիշերին այծեայս, և առնուլ նոցա օրէնս ղաւրքաթ և ոչ զաւրքաթ և զհիւրանէ, և 'ի ժամ օրհնութեան զօտեւանք եղիցին. և այս նշանակ կնգղայ նոցա, զի եղիցի նա առանց խաւսու, և խաչ ծիրանի յաջակողմանն։ Եւ արար Պաքումիոս որպէս և հրամայեաց հրեշտակ տեառն. շինեաց վանս և ժողովեաց 'ի նմա եղբարս իբրև եօթն հազարս, ուր են մինչև ցայսօր, ուր և մեռաւ երանելին Պաքումիոս։

Այր և այլ վանք և կայր 'ի նմա արս հազար և երեք հարիւր, որ են մինչև ցայսօր, և զայս վանս ես խակ Սա-

կար անդ․ և կայր 'ի նմա կարկատիչս հնգետասան և Թափիչս քսան և հիւսունս հինգ, տասն դարբին, եօթն ուղտապան, քառասուն որ վաստակէին և իւրեանց բաւական առնէին, և 'ի բանտս և յաղքատս բաշխէին։

ՊԱՏՄԵԱՑ՝ մեզ հայրն Ստակար յԱղեքսանդրի՝ թէ մինչդեռ նստէի ես 'ի Սկիւթ; իջին անդ երկու պատանեակք օտարականք, միոյն մօրուօք և միւսոյն սկիզբն էր արտաբերել մօրուաց դալոյ։ Իբրև տեսին զիս՝ ասեն․ ո՞ւր է խուցն հօրն Ստակարայ։ Իսկ ես ասեմ․ ես եմ Ստակար։ Եւ նոքա արկեալ զինքեանս առաջի իմ ասեն․ կամիմք մեք աստ լինել։ Եւ իմ տեսեալ զնոսա փափկունս, զի մեծութեան էին թողեալ և հարստութիւն, ասեմ ցնոսա․ ոչ կարէք կալ աստ։ Ասէ ցիս աւագն․ եթէ ոչ կարեմք կալ աստ, երթամք այլ ուրեք։ Եւ ասեմ 'ի խորհուրդս իմ․ ընդէ՞ր հալածեմ զնոսա և գայթակղին, աշխատութիւն իսկ անապատիս հալածէ զնոսա։ Ապա ասեմ ցնոսա․ եկայք շինեցէք ձեզ խուց։ Եւ ասեն․ ցոյց մեզ զտեղին։ Եւ ետու նոցա փայտատ և մարկեղ և քուրձ մի հաց, և ցուցի նոցա զվէմն ուստի զքարն հատանիցեն։ Եւ ասեմ ցնոսա․ բերէք փայտ յանապատէդ, և արկէք ձեզ ձեղուն և այնուհետև նստարուք։ Եւ կարծէի թէ առժամայն փախչել ունին յանապատէս վասն աշխատութեանն։ Եւ հարցին ցիս՝ թէ զինչ գործ

1 Պատմէր մեզ հայրն Բիմափին զայս ինչ՝ եթէ պատմեաց մեզ հայրն Մակարի, եթէ նստէի երբեմն 'ի Սկիւտէ, և եկին առ իս անդ երկու մանուկ կրօնաւոր օտարք, միոյն ունէր զծնօտն ծածկեալ մօրուօք և միւսոյն բնաւ սկսանէր մօրուաց։ Եւ եկեալ առ իս ասեն ցիս․ ո՞ւր իցէ անձնաւոր հայրն Մակարայ։ Եւ ես ասեմ ցնոսա․ զի՞նչ կամիք 'ի նմանէ․ Եւ նոքա ասեն․ լուաք 'ի բազմաց զնմանէ և զվասն Սկիւտեայ, և եկաք տեսանել զնա։ Եւ ես ասեմ ցնոսա․ ես եմ։ Եւ նոքա անկեալ առ ոտս իմ ասեն ցիս․ կամիմք զի բնակեսցուք աստ։ Եւ ես իբրև տեսի զնոսա մանկունս և փափկունս և 'ի մեծատանց լեալս՝ ասեմ․ և միթէ կարէք կեալ աստ։ Ասէ կրտսերն երկուցն․ եթէ ոչ կարասցուք կեալ, գնասցուք այլուր։ Իսկ ես ասեմ 'ի միտս․ ընդէ՞ր արտաքսեմ զնոսա և գայթակղեցուցից զնոսա, այլ նեղութեանց պատահեսցեն փախիցեն և արտաքսեսցեն զնոսա։ Եւ ասեմ ցնոսա․ գնացէք շինեցէք ձեզ սենեակ և բնակեսջիք անդ։ Եւ նոքա ասեն․ ցոյց մեզ, հայր, տեղի ինչ և շինեսցուք անդ։ Եւ ես ետու նոցա անօթս և փայտահատս և պարկս և այլ ինչ որ պիտոյ էր և հաց խորդ մի և աղ, և ցուցի նոցա վէմ մի զծակաւորին և ասացի․ զայս վէմ հատեալ տեղի արարէք և բերէք փայտ 'ի գաւառէն և ծածկեալ բնակեցէք աստ։ Կարծէի թէ 'ի խստութեան վասն հովացուցանողին փախիցեն։ Եւ նոքա հարցին զիս․ և զի՞նչ աշխատեալ ձեռագործեն

ունիցին առաս : Այլ ասեմ. սիրոյ գործեն : Այլ ասեալ աւերեւս արմաւենեաց ցուցի նոցա զսկիզբն գործոյն և ասեմ ցնոսա. արարէք զայս փխրուածս և տուք ցարահանորդսն, և նոքա բերեն ձեզ զհացիկն : Այլ զայս ասացի ցնոսա և գնացի 'ի խուցն իմ : Իսկ նոքա զամենայն համբերութեամբ կատարէին, և ոչ եկին առ իս զերիս ամս : Այլ ես կայի մնայի պատերազմեալ ընդ խորհուրդս իմ ասելով. զինչ արդեօք են փառք նոցա, զի այլ հեռաւորք առ իս գան, և սոքա որ մերձաւորքս են ոչ գան, բայց միայն յեկեղեցին հաղորդել օրհնութեանն լռութեամբ : Այլ աղօթս արարեալ առ Աստուած պահեցի շաբաթ մի, զի ցուցցէ ինձ զգործս նոցա. և յարուցեալ գնացի առ նոսա տեսանել թէ զիարդ կան : Այլ բախեալ իմ զդուրսն՝ բացին ինձ և ողջունեցին զիս լռութեամբ. և ակնարկեալ երիցագոյն եղբօրն կրտսերին, և նա ելեալ արտաքս նստէր, և միւսն առ իս հիւսէր զսիրայն՝ ոչ ինչ խօսեցեալ : Այլ յիններորդ ժամուն եկն կրտսերն, և նա նշան ակնարկեաց, և նա ելեալ արտաքս եփեաց սակաւ մի ոսպնաթան. և մատուցեալ ակնարկեալ նմա եդ սեղան և երիս պաքսիմատս լռութեամբ : Այլ ես ասեմ. արիք ճաշեսցուք : Այլ յարուցեալ ճաշեցաք և բերեալ զկուժ ջրոյն ար-

առաս ծերքս 'ի պէտս եղբարանց, հայր : Իսկ ես ասեմ. սիրոյ հիւանդն : Իսկ բերէր 'ի զօշակէ սերկէ արմաւոյ և ցուցի նոցա զսկսանել սիրայիս և ըն-հիւսել և զկարել նորա, և ասեմ. այսպէս արարէք սիրիկս և տուք ցարահաւագան պահապանին զի բերցեն հացս : Իսկ զայս ասացեալ իմ մեկ-նեցայ անտի : Իսկ նոքա արարին բազում համբերութեամբ զոր ուսուցի նոցա, և չեկեալ սենեակ նստան անդ, և ասպնէին զաղօթս և զձեռա-գործս եղբարանց. և կացին այսպէս զերիս ամս, և ոչ առ ոք ելանել գնա-ցին նոքա : Իսկ ես խորհէի 'ի միտս և ասէի՝ եթէ զինչ է գործ նոցա զի ոչ եկին առ իս հարցանել վասն խորհրդոց. այլք 'ի հեռաստանէ գան առ իս, և դոքա մերձ են և ոչ գան և ոչ առ այլ ոք գնան, բայց միայն լռութեամբ յեկեղեցին յաղագս հաղորդութեան մարմնոյն Քրիստոսի : Իսկ ես պահեցի շաբաթ մի և խնդրեցի յԱյ աղօթիւք յայտնել ինձ թէ զիարդ կեան անդ. և յարուցեալ գնացի անդ տեսանել զնոսա : Իսկ իբրև բախեցի զդուռն, բացին ինձ և ողջունեցին զիս լռելեայն, և արարեալ աղօթս և նստաք. և ակնարկեալ երիցն կրտսերոյն ելանել, և նա ելեալ արտաքոյ նստաւ և գործէր զսիրայն լռելեայն, և բնաւ ոչ ինչ խօսեցան : Իբրև եղև իննն ժամ, բախեաց զդուռն 'ի ներքուստ երեցն, և կրտսերն վաղվաղակի յարուցեալ եմուտ 'ի ներքս հնազանդութեամբ և արար կերակուր խարշեալ, և դրեալ սեղան՝ եդ 'ի նմա երիս պաքսիմատս ակնարկութեամբ աւագին, և կացին լռելեայն : Իսկ ես ասեմ. յարուցեալ կերիցուք, օրհնեսցուք : Իսկ յարուցեալ ճաշակե-

Digitized by Google

բանք ։ Եւ իբրև երեկոյ եղև ասեն ցիս. Հայր, երթամք 'ի խուցն քո ։ Եւ ասեմ. ոչ, այլ աստ ննջեմ այսօր ։ Եւ արկին ինձ պղտառէ մի առաւազ, իսկ յայլում անկեան ննջեանց, և լուծին զանապաղափին առաջի իմ և զզօտիսն և կօշկացան 'ի մաշկոյն. իսկ ես աղաչեցի զԱծ ցուցանել ինձ զգործս նոցա ։ Եւ բացաւ ձեղունն և եղև լոյս սաստիկ զոր նոքա ոչ տեսանէին, և վասն իմ կարծէին թէ 'ի քուն իցեմ ։ Եւ զարթոյց երէց եղբայրն զկրսերն, և յարուցեալ ածին զզօտիս իւրեանց և ամբարձին զձեռս իւրեանց յերկինս, բայց զիս արգելու 'ի քուն կարծէին ։ Եւ ահա տեսանէի ես զդևսն՝ որ իբրև ըզճանճս գային 'ի վերայ կրսերոյն և կամէին նստել 'ի վերայ աչաց նորա և բերանոյն, և տեսանէի զհրեշտակ մի՝ զի ունէր սուր հրեղէն և զդևսն հալածէր և զնա պարսպէր, և յաւագն ոչ իշխէին մերձենալ ։ Եւ իմ զայն տեսեալ փառաւորեցի զԱծ, և իմացայ թէ աւագն 'ի

ցայց և բերելով լոյս [illegible] ։ Եւ իբրև մերձեցաւ երեկոյն, ասեն ցիս. կամիս գնալ, Հայր ։ Եւ ես ասեմ. ոչ, այլ աստ ննջեցից ։ Եւ արկին մահճիճս ինձ մի փսիաթ, և նոցա երկոցունցն մի փսիաթ, որ է նստճայ. և լուծեալ զզօտիս իւրեանց և հանեալ զկնգուղս եդին ընդ սնարիւք և ննջեցին ։ Իբրև ննջեցին նոքա, խնդրեցի յԱյ ցուցանել ինձ զգործս նոցա ։ Եւ ահա բացան առաստաղք խցին, և էջ 'ի վերայ նոցա լոյս յերկնից, և եղև սենեակն լոյս իբրև զտիւ, իսկ նոքա ոչ տեսանէին զայն լոյս ։ Եւ իբրև կարծեցին նոքա թէ ննջեցի ես, խթեաց զկող կրսերոյն աւագն, և յարուցեալ զգեցան զզգեստս և զկնգուղս իւրեանց և ածին զօտիս, և համբարձեալ զձեռս իւրեանց յերկինս աղօթէին անմռունչ. և ես տեսանէի զնոսա, և նոքա զիս ոչ տեսանէին, և համարէին թէ 'ի քուն էի ։ Եւ տեսանէի զբազմութիւն դիւաց որք իբրև զմեղուս և զճանճս փարէին զկրսերաւն, և ոմանք նստէին յերեսս նորա և ոմանք յաչս նորա. և տեսանէի զհրեշտակ մի որ ունէր 'ի ձեռին իւրում սուր հրեղէն և պահէր զնա և վարէր 'ի նմանէ զդևսն. իսկ առ աւագն բնաւ ոչ իշխէին մերձենալ ։ Եւ իբրև մերձեցաւ առաւօտն, ընկողմնեցան դարձեալ 'ի մահիճս, կարծէին զարթեալ արդեօք զիս, և ես այսպէս ցուցի զիս թէ արդ զարթեայ. զայս և նոքա ցուցին ։ Եւ ասէ ցիս աւագն եղբայր. կամիս, Հայր, զի սաղմոսիցուք երկոտասան սաղմոսս ։ Եւ ես ասեմ. այո, արդարև ։ Եւ սաղմոսէր կրսերն զհինգ սաղմոս, և յաւելն առ մէկ կրկնէր ծունր, և մի ալէլուիա ասէր. և ելանէր զամենայն հրոյ 'ի բերանոյ նորա [illegible] ելանէր յերկինս. նոյնպէս և աւագն եղբայր մինչ երգէր, ելանէր սիւն հրեղէն 'ի բերանոյն և հասանէր յերկինս ։ Եւ ես իսկ սակաւ փոքր սաղմոս 'ի թիւ, և խնդրեցի աղօթս 'ի նոցանէ և ելի անտի ։ Իսկ նոքա կրկնեալ ծունր լռութեամբ [illegible] և դարձան 'ի սենեակս իւրեանց ։ Եւ ծանեայ զի աւագն կատարեալ էր, իսկ ընդ կրսերոյն դեռ ևս պատերազմէին դևք ։ Եւ զկնի սակաւ աւուրց հանգեաւ աւագն եղբայր, և զկնի աւագին երից աւուրց վախճանեցաւ և կրսերն ։ Եւ յորժամ գային

Digitized by Google

կատարելութիւն եհաս, իսկ ընդ կրտսերոյն զեռ պատե-րազմէին զեւքն ։

ԻՍԿ Սոկրատ ոչ գայթէր գոգով, մնացեալ առ նմին ուսա-նել սաղմոս, և լուեալ զառաւօտին զտուծնն քնարն և ութ սաղմոսին՝ ասացի թէ պահեսցի զճանապարհս իմ, երկ-բարդէին լսել ոչ անսացեալ զնոյն, բաւականացեալ ասա-ցեալ այսուիկ միայն բանիւս, եթէ կարասցէ զաս գոր-ծով ուսանել ։ Իսկ բազումք եղեալ աւանդողքն զբանն՝ ընդդէմ մեկնեցանէին ժամանակի անցելոյ ոչ ուսանելոյ զնոսա, պատասխանէր՝ եթէ զբան սաղմոսին չև ևս գործով ու-սայ ։ Այնմ Սոկրատի ուրուամն առեալ ոսկի 'ի մեռանող աղ-քատաց և ասացեալ թէ թուեա որում տամ՝ ասէր. ո՞չ թուելոյ պէտք ոչ են ։ Օգնա զՍոկրատ Աթանասի և-պիսկոպոսի աղաչեալ՝ էջ յանապատէն յԱղեքսանդրիա, և տեսեալ անդ կին մի Թէատրոնականն՝ յարդարեալ հե-րաւ ։ Իսկ որոց մերձն էին հարցեալ թէ ընդէ՞ր արտա-սուեաց, երկու իրք, ասէ, զիս շարժեցին, մին նորա կո-րուստն, երկրորդ զի ես ոչ ունիմ այնքան փոյթ առ 'ի հաճոյանալ ո՞յ որքան նա զի հաճոյասցի մարդկան զազ-րալեաց ։

ԻՍԿ ՚ այլ ոմն ասէր յաղագս նորին երանելւոյն Սոկ-րատի՝ եթէ 'ի բազում ամս աղօթէր ասելով. տէր, մի փառաւորեր զիս յերկրի ։ Եւ այնքան պատուական ա-րար զնա աստուած և փառաւորեաց որպէս զՄովսէս. քանզի որպէս զնորա երեսն ոչ էր տեսանել 'ի փառաց երեսաց նորա զոր ետ նմա աստուած, այսպէս և սա զնոյն շնորհ էառ և ոչ ոք կարէր հայել 'ի նա 'ի յերեսն աւուրս նորա ։

ՍԻՄՈՆ ոմն միայնակեաց մերկ զինքն ոչ երբեք էր տե-սեալ, ասելով՝ անվայելուչ զոլ միայնակեցաց մերկ զիւր մարմինն տեսանել ։ Եւ երբեմն ընդ զետ մի անցանել կամելով՝ զանդաղէր մերկանալ, և աղօթեաց առ Տէր լինել նմա անցին ոչ 'ի հաստատ կամացն, և հրեշտակն

ոմանք առ հայլին Մակարի, առնէր զնոսա 'ի սեռնառաքս նոցա և ասէր. եկայք և տեսէք զկեցաղական մանկանց տապրոյ, և փառաւորեցէք զնա զպատահման ամենայն բարեաց ։

։ Էր ոմն 'ի սրբոցն որ կոչէր Պամբոյ. սա զերիս ամս աղաչէր զՏէր և ասէր. տէր, մի փառաւորեր զիս յերկրի ։ Եւ զի այնչափ փառա-ւորեաց զնա Տէր, մինչ զի ոչ կարէին մարդիկ յերեսս նորա հայել 'ի փառացն զոր ունէր ։

փոխեաց զնա յայնկոյս գետոյն։ Այս մանուկ գոլով հրաժարէր յամուսնութէ. բայց իբրև ոմանք 'ի կամողացն յորդորէին ոչ թշնամանել զամուսնութի, այլ կին առնուլ, հաւանէր և գայր յամուսնութի։ Իսկ անդէն յառագաստէն առեալ զկոյսն և ածեալ յօթանոցն սովորական հոչակօքն, և յետոյ զնայեալ պատշաճից նորա առնլով զխորս առաքելականս զոր առ կորնթացիսն թուղթ՝ կարդայր և առ ամուսինն, զառաքելոյն առ ամուսնացեալսն պատուիրանս մեկնէր. իսկ բազում ինչ և արտաքսուստ իւր յաւելեալ ուսուցանէր՝ որքան ամուսնութիւնն ունի բեռինս, և զիարդ չարչարանք որ 'ի մէջ առն և կնոջ համամալարութիւք, և որպիսի երկունք զյղին ընդունին. և զառ 'ի սնուցանելն յաւելուր զտարժանմանսն ; արդ և զառ 'ի որբութենն զքաղցածսն, և զիարդ մաքուր վարքն են ազատ և անշաղախելի և յամենայն աղտեղութէ արտաքոյ, և զի կուսութիւն առաւելի ոչ կալանէ։ Զայսոսիկ և այլս այսպիսիս բազումս առ ամուսինն կոյս գոլով ասացեալ, հաւանեցուցանէր զնա հանդերձ ինքեամբ յառաջ քան զմերձենալն զոյգն հրաժարել յաշխարհական վարուց։ Իսկ զայս ուխտ երկոցունցն եդեալ՝ 'ի լեառնն որ կոչի Նիտրիա գնացին. և անդ առեալ ինչ ժամանակս հովանաւոր ամփոփեցեալք՝ ճգնաւորական ունէին համարակացն, ոչ ունելով խորհ փառացն և զարդն, այլ գոլով ըստ առաքելոյն աներամն։ Իսկ յանցանել ոչ բազում ժամանակի նորա հարսնն և անշաղախ կոյսն առ Ամոն ասաց. ոչ վայելուչ է, ասէ, ճգնաւորին զզգաստութէ տեսանել յիւրում բնակարանին զկին։ Ապա որոյ թուէր երկոցունցն զճգնաւորութիւն առանձինն առնել, և այս դարձեալ ուխտքս համաձայնութիւն երկոցունց. և մեկնեալք 'ի միմեանց այնպէս յետ այնորիկ զվանքսն առնէին, և 'ի բաց կացեալք 'ի գինւոյ և 'ի ձիթոյ, բայց միայն հաց չոր, և զայն երբեմն յետ միոյ աւուր, երբեմն յետ երկուց ; եւ զի յետ բազում աւուրց ուտէին։ Զայս զԱմոնայ զհոգին յետ մահուանն վերացուցեալ 'ի հրեշտակաց որ ըստ նմին վարեալ զկեանսն Անտոնիոս ետես, որպէս ասէ 'ի վարս նորա որ Աղեքսանդրացւոց եպիսկոպոսն Աթանասիոս։ Նախանձեցան զվարս Ամոնայ և այլք յոյժ բազումք. և ըստ կողմանն լցաւ Նիտրիոյ լեառնն և Սկիւթայ 'ի բազմութենէ միաբանակեցացն։

Ասէին՝ երբեմն ոմանց Մակարիոս 'ի լեառնն Նիտրիայ յառաջագրութեամբ աբբայ Պամբովի։ Եւ ասեն ցնա ծերքն. ասա բան եղբարցս, հայր։ Եւ նա ասէ. ես ոչ երբէք եղէ ևս միայնակեաց, այլ տեսի միայնակեացս որք նստեալ էին ընդ իս երբեմն յանապատին 'ի ներքնակին իմ 'ի Սկիւթ. բանադատէին զիս մտածութիւնք իմ և ասէին. գնա յայս անուն անապատ և տես՝ թէ ինչ տեսանիցես անդ։ Եւ բանադատեալ 'ի մտածութէ անտի դադարեցի զհինգ ամ, կարծելով թէ 'ի դիւաց է. և յորժամ դադարեաց մտածութիւն իմ, գնացի յանապատն յայն և գտի անդ լիճ ջրոց և կղզի 'ի մէջ նորա, գազանք անապատին և ըմպէին 'ի նմանէ։ Եւ ահա 'ի մէջ նոցա երկու այր մերկք զորս տեսի, և զարհուրեալ անձին իմոյ կարծէի եթէ ոգիք դիւաց են։ Նոքա իբրև տեսին զիս զարհուրեալ, խօսեցան և ասեն. մի երկնչիր և մեք մարդիկ եմք։ Եւ ասացի ցնոսա. ուստի եկիք աստ յանապատս։ Եւ նոքա ասեն. 'ի միաբանից եմք. եղև առ մեզ ձայն ազդման և եկաք աստ. ահա քառասուն ամ է մեզ աստ. մին 'ի մէնջ եգիպտացի և միւսն լիբէացի։ Հարցին զիս և ասեն. որպէս կեայ աշխարհս. գա՞յ ջուրն 'ի ժամու իւր և ունի աշխարհս զառատութիւն իւր։ Եւ ասացի ցնոսա. այո։ Եւ ես հարցի ցնոսա. որպէս կարող եմ լինել միայնակեաց։ Եւ նոքա ասեն. եթէ ոչ հրաժարես յամենայն աշխարհէ, ոչ կարես լինել միայնակեաց։ Ասեմ. ես տկար եմ, և ոչ եմ կարող լինել իբրև զձեզ։ Նոքա ասեն. եթէ ոչ ես կարող լինել իբրև զմեզ, դադարեա 'ի սենեակ քո և լաց 'ի վերայ մեղաց քոց։ Հարցի ցնոսա՝ եթէ յորժամ լինի ձմեռն ոչ սառուցք, և յորժամ լինի տօթ ոչ խանձանա՞յ մարմին ձեր։ Եւ նոքա ասեն. աստուած ած տնօրէնութիւն իւրով զի ոչ սառուցանեմք և ոչ տապանամք։ Եւ ես վասն այսորիկ ասացի ձեզ՝ եթէ ոչ եղէ ես միայնակեաց, թողութիւն արարէք ինձ։

¹ Եւ երբեմն հայրն Մակարիէ 'ի Սկիտեայ 'ի լեառն Նիտրիայ 'ի յիշատակի հօրն Պամբոյի, և ասեն ցնա ծերք լերինն. ասա մեզ, հայր, բանս կրօնաւորաց։ Իսկ նա ասէ. ոչ կարացի լինել կրօնաւոր, այլ տեսի կրօնաւորս որք անմարդաբնակ նախանձէին վարուց յանապատի անդ. ըստ ժամ 'ի խորհրդոցս յաղթեալ ելի անդ տեսանել զբնակիչս նորա, զոր տեսեալ զարհուրեցայ վասն անմարդաբնակ վարուց նոցա. գիտացանէ ասել պարտ է, և ոչ յիմիք խորամանկ զձեզ՝ որ ոչ եղէք կրօնաւորեալ եմ ես, քանզի տեսի կրօնաւորս։

Digitized by Google

[illegible]

[illegible]

Digitized by Google

[illegible]

յարուցեալ ընթացաւ արտաքս և եկաց յաղօթս. և իբ-
րև կատարեաց զաղօթսն՝ եկն առ իս, և իմ տեսեալ
զերեսս նորա զուարճացեալս և պայծառացեալս, վասն զի
տեսի զերեսս նորա որպէս զհուր։ Եւ նա զմտածեալ ա-
սաց ցիս. Մի երկնչիր, վասն զի ինձ առաքեաց զքեզ ազա-
տել զմարմինս իմ։ Եւ իբրև ընթացաւ ՚ի խօսելոյ, պարզեաց
զոտս իւր և զձեռս և հանգեաւ։ Եւ իմ քաղեալ զգե-
րեզմանն զոր ունէի, զգեցուցի նմա և կտաւիւ պատեցի
զմարմինն սրբոյն և տարայ զհողն հողոյ։ Եւ իբրև թա-
ղեցի զնա, առաջնորդն չորացան արմաւենիքն և աղբիւ-
րն այն ցամաքեցաւ. և իմ յանգեալ աղաւթեցի զինչ զի սա-
ցէ զարմաւենիսն զի կատարեցից ՚ի տեղւոջն զաւուրս իմ,
և ոչ հանդիպեցայ, խորհեցայ առանձնութեան և ասէի՝ եթէ ոչ
են կամք այ։ Եւ զարթեալ կացի յաղօթս և գնացի յաշ-
խարհս, և ահա այրն որ յառաջին զօրացոյց զիս։
Եւ այսպէս ժամանեցի զայս և պատմեցի եղբարց, և ա-
ռաջեցի զնոսա մի տալ ... յուսահատութեան, այլ համբե-
րութեամբ զգաստանալ ամէն։

Յետ ... ... յոյժ, այր ... , ...
... ... ... ... ... Ս...
...

յարուցեալ փութապէս ել արտաքս և եկաց յաղօթս ընդ երկար ժամս,
և կատարեալ զաղօթսն եկն առ իս։ Իսկ ես իբրև տեսի զնա, զարհու-
րեցայ յոյժ, զի էին երեսք նորա լցեալ իբրև զփայլակն և ինքն ողջոյն
փայլէր իբրև զհուր։ Եւ իբրև ետես զիս զարհուրեալ, ասէ ցիս. Մի
երկնչիր, զի տէր առաքեաց զքեզ թաղել զմարմին իմ։ Եւ իբրև կա-
տարեաց զբանս իւր, ընկողմնեցաւ և պարզեաց զձեռս և զոտս իւր և
ուղղեաց զհոգի իւր ՚ի ձեռս տեառն և կատարեաց զկեանս զայս։
Իսկ ես փիլոնով իմով պատեցի հանդերձ արտասուօք զսուրբ մարմին
նորա և եդի ՚ի գերեզմանի, և խոկոյն արմաւենիքն չորացան և աղբիւրն
այն ցամաքեցաւ և տաղաւարն նորա քակտեցաւ և կործաւ։ Իսկ ես
իբրև տեսի զայն՝ ողբացի յոյժ, և խնդրեցի ՚ի տեառնէ տալ ինձ ըզ-
ջուրն զայն և զարմաւենիսն, որպէս զի անդ կատարեցից զաւուրս իմ։
Եւ իբրև ոչ հանդիպեցայ խնդրոյն իմոյ, ծանեայ զի ոչ էին այն կամք
ա՟յ. և ապարեալ աղօթս ելի գալ աստ։ Եւ ահա այրն այն դարձեալ
եկն առ իս և մերձեցաւ ՚ի շրթունս իմ մատամբ և զօրացոյց զիս, մինչև
եկի առ եղբարսն իմ և պատմեցի նոցա զայս և ասացի՝ մի երբէք յու-
սահատիլ ումեք, այլ համբերութեամբ խնդրել զա՟ծ որ յամենայն
ժամ գտանի։

[illegible]

թեպէտ և հարիւր ամ խոստացաւ լինէր, զհնազանդութեն զփառսն ոչ կարէր առնուլ։ Իսկ զգեցոյց ծերն պարեգօտ և ասէ. գնա 'ի Սաբենոյն։ Իսկ երթեալ բաշխեաց զինչսն կարօտելոց և գնաց 'ի Սաբենոյն և եկեաց ընդ նորա եղբարս ամ և վախճանեցաւ մեծաջան առաքինութեամբ։ Իսկ ծերն իբրև լուաւ, աղաչեաց զԱծ յայտնել նմա՝ եթէ այնպիսի չարեաց ըստեալն օգտեցաւ ինչ յապաշխարութեան։ Ասէ հրեշտակն. 'ի չարեացն ազատեցաւ և մեծ փառաց հանդիպեցաւ. այդ ուրախ լեր զի քո վաստակ է, քո ջան է, զի զԱծոյ բարերարութիւն ցուցեր առ գերեալն. այդ պատրաստ լեր զի 'ի սակաւ աւուրս զան ընդ առաջ քո սուրբ հարքն և տանեն յերկնաւոր հանգստարանն, և փառաւորեսցիս ընդ մեզ ամ սուրբս 'ի յարկս լուսեղէնս զոր պատրաստեաց սիրողաց իւրոց Քրիստոս Ած մեր, որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

# ՄՆԱՑՈՐԴՔ

## յերկրորդ թարգմանութեան

ԱՍԱՑ* հայրն Պիմէն, երիս գործս ձգանց տեսանել ունէր հայրն Պամբոյ. սովեալ մինչև ցերեկոյ զամենայն աւուրս իւր, և լռութիւն անչափ, և ձեռագործ անդադար։

ՍԱՑԻՆ վասն հօրն Պիմենի՝ եթէ մինչ նստէին առ նմա խօսել ծերքն և յիշէին ինչ զհօրէն Սիսոյէ, ասէր նա. Թոյլ տուք յիշել զհայրն Սիսոյի, զի ոչ ստորագրի գործ նորա 'ի չափ պատմութեան լեզուի։

ՍԱՑԻՆ վասն հօրն Պամբոյի՝ եթէ որպէս փառաւորեցան երեսքն Մովսէսի մինչ ետես զԱծ, այնպէս երեսք հօրն Պամբոյի պայծառացան իբրև զփայլակն յորժամ նստէր յաթոռ 'ի մէջ հարանցն խրատել զնոսա. և նոյն շնորհաց հաղորդք էին հայրն Սիլուանէ և Սիսոյի առք փայլակնատեսիլք։

ՄԻՆՉ մերձեցաւ 'ի մահ հայրն Ամմոնաս, շուրջ կացին եղբարքն և ասեն. որպէս պարտ իցէ կեալ մեզ, հայր։ Եւ նա ասէ. ոչ յիշեմ երբեք թէ ասացի ձեզ ումեք բան թէ արասցես զայս գործ, եթէ ոչ նախ եդի 'ի մտի զայս՝ եթէ ոչ բարկացայց, եթէ ոչ առնիցէ նա զայս. և այսպէս կացի ես և դուք զամենայն ժամանակս մեր խաղաղութեամբ և անշփոթ. և դուք այնպէս առնիջիք՝ խաղաղութեամբ կալով ընդ միմեանս և սիրով և հնազանդութեամբ։

ՊԱՏՄԷՐ երբեմն հայրն Սիսոյի 'ի լեառն հօրն Անտոնի, և յամեաց սպասաւորն իւր գալ առ նա ամիս տասն,

* Նոյն բան դարձեալ յերկրորդ թարգմանութեան. Ասէին զծերոյն՝ եթէ զերեքին զայսոսիկ տեսանել ուղղեաց քան զամենայն մարդ այժմու աւուրցս, պահք խիստ, տքնութիւն զօրաւոր և ձեռագործ անդադարելի։

և ոչ ընաւ ետես այլ մարդ, և ել խնդրել զնա։ Եւ մինչ գնայր 'ի Ճանապարհին, ետես այր մի որսորդ փարանացի յանապատ որ որսայր զայծս վայրի, և ասէ ծերն. ուստի՞ ես և քանի՞ ժամանակ ունիս յայս վայրի։ Իսկ նա ասէ. հաւատա, հայր, զի երկոտասան ամիս է որ կամ աստ և ոչ տեսի զերեսս մարդոյ բաց 'ի քէն։ Իբրև լուաւ զայս ծերն, դարձաւ և գնացեալ եմուտ 'ի սենեակ իւր և ասէ. սև Սիսոյի, կարծէիր թէ գործեցեր ինչ համբերութիւն, և ոչ միոյ որսորդի աշխարհականի չափ գործեցեր։

ՆՈՅՆ սա հայրն Սիսոյի մինչ մտէր 'ի խցի, միշտ փակէր զդուրս. և թէ ոք հարցանէր ինչ զհօրէն Պամբոյէ, նա ասէր. Պամբոյ մեծապէս մեծ էր 'ի գործս իւր։

ԱՍԱՑ ոմն 'ի հարանցն՝ եթէ խօսէր ոմն ընդ հայրն Սիլուանէ, և ետես զնա զի պայծառացան երեսք նորա և եղև իբրև զհրեշտակի. և անկաւ եղբայրն 'ի վերայ երեսաց իւրոց և երկիր եպագ նմա, զի յոյժ երկեաւ։ Ասէ ցնա հայրն Սիլուանէ. որդեակ, մի՛ ինձ, այլ ա̃յ երկիր պագցուք՝ որում և պարտիմք իսկ։ Եւ երկիր եպագ ծերն ա̃յ հանդերձ եղբօրն այն։ Եւ այնպէս ահիւ կայր եղբայրն, և օրհնութի̃ առեալ 'ի նմանէ գնաց շինեալ և ուրախացեալ։

ԱՍԷԻՆ վասն հօրն Սարմատայ՝ եթէ բազում անգամ զքառասուն օր իբրև զմի օր պահէր հրամանաւ հօրն Պիմենի։ Եւ եկն առ նա հայրն Պիմէն և ասէ ցնա. ասա ինձ թէ զի՞նչ տեսեր 'ի վերայ այսչափ աշխատութե̃։ Իսկ նա ասէ. ոչ ինչ տեսի երբէք։ Ասէ ցնա հայրն Պիմէն. ոչ թողում զքեզ եթէ ոչ ասասցես ինձ եթէ զինչ տեսեր երբէք։ Եւ նա ասէ. զայս միայն տեսի, որպէս զի ասիցեմ ցքուն՝ եթէ եկ առ իս և գայ, և թէ ասեմ՝ մի՛ գայցես և ոչ գայ։ Եւ փառաւորեցին զա̃ծ։

ԱՍԱՑ հայրն Փիլորոմոս. յորմէհետէ ծնեալ եղէ 'ի ջրոյ և 'ի հոգւոյն սրբոյ մինչև ցայսօր, ոչ Ճաշակեցի հաց այլոյ ումեք, այլ իմոյ աշխատութե̃ցն և 'ի ձեռագործէ։ Եւ ասէ. ետու երկերիւր դահեկան հիւանդաց և աղքատաց. և ոչ ինչ պահեցի 'ի վաստակոց իմոց, ասէր։ Քանզի էր նա գրիչ խոհեմ և պատուական, և գրէր միշտ մինչև 'ի մահ, և եղև ութսուն ամաց և ոչ պակասեաց լոյս աչաց նորա։

ԱՍԱՑ հայրն Փեսենթասիոս և հայրն Սորոս և Փսոյիոս՝ եթէ լուաք զբանս հօրն Պախումիոյ և յոյժ շահեցաք, և յարոյց զմեզ 'ի նախանձ բարւոյ, զի խօսելն նորա և լսելն գործ է կատարեալ. զի կարծելի էր ոմանց եթէ զամենայն սուրբսն այնպէս ստեղծեալ էր ած յորովայնէ մարց սուրբք և անդառնալիք 'ի չարիս, նոյնպէս և զմեղաւորս պատահմամբ գոլ արդար կամ մեղաւոր և ոչ կամաւ։ Այլ ոչ այնպէս իցէ, այլ կամաւ մերով իցէ լինել արդար կամ մեղաւոր. որպէս տեսեալ եղև 'ի վերայ բազմաց 'ի սկզբանէ, նոյնպէս և 'ի վերայ հօրն Պախումի յայտ է. զի որդի հեթանոս ծնողաց էր նա, և այնպէս յառաջեաց յածպաշտութի և 'ի սրբութի, և զարդարեալ ամենայն առաքինութբ. և աստի յայտ է եթէ մեք և ամենեքեան յայ բարի ստեղծեալ եմք և վասն բարւոյ, և կամաւ մերով հետևիմք բարւոյ և չարի ըստ բանին տեառն որ ասէ՝ եթէ եկայք առ իս ամենայն աշխատեալք և ծանրաբեռնեալք և ես հանգուցից զձեզ. առէք զլուծ իմ 'ի ձեզ։ Արդ դիցուք զկեանս մեր և զմահ յայսպիսի հարս, զի ուղիղ առաջնորդեն մեզ 'ի ճանապարհն այ. և մի դիցուք պատճառս մեղաց զած, յորմէ ամենայն բարութի և խնկապէս ողորմութի և գթութիւն և քաղցրութիւն պարգևի։

ԱՍԷԻՆ զայս հարքն վասն հօրն Սիլրի՝ եթէ ոչ ել բան սուտ բնաւ 'ի բերանոյ նորա. ոչ երդուաւ երբէք և ոչ անէծ զոք յաշխարհի և ոչ բան ինչ խօսեցաւ ընդ ումեք, բայց միայն 'ի կարևոր ինչ բանից։

Այր միայնակեաց ոմն 'ի Սկիտէ որ արածէր 'ի վայրի իբրև անասուն ընդ գոմէշս, և աղօթէր առ ած և ասէր. տէր, ցոյց ինձ եթէ իւ իւիք պակաս իցեմ։ Եկն առ նա ձայն որ ասէր. գնա յայս անուն վանս եղբարց, և զոր հրամայեսն քեզ արասցես։ Եւ գնացեալ բնակեցաւ անդ, և ոչ ինչ գիտէր սպասաւորութի սպասաւորել եղբարցն։ Եւ ասէին ոմանք. արասցես զայս ինչ, յիմար դու։ Եւ այլք ասէին. ասասցես զայս ինչ, տխմար և անուսումն։ Եւ լլկէին զնա յոյժ։ Եւ ձանձրացեալ յոյժ աղօթեաց առ ած և ասէ. տէր, ոչ գիտեմ սպասաւորել մարդկան, արդ առաքեա զիս 'ի տեղի արօտոյ իմոյ։ Եւ առաքեաց զնա ած 'ի տեղի իւր առաջին՝ արածել անդ իբրև անասուն ընդ գոմէշս յանապատի։

Այր ոմն կրօնաւոր յանապատին Սկիտոյ ճգնաւոր յոյժ. բազում ամս խնդրեաց յԱյ և ասէ. տէր, յայտնեա ինձ եթէ հաճոյ եղէ քեզ: Եւ եհաս առ նա ձայն, որ ասէր նմա հրեշտակ տեառն՝ եթէ ոչ հասեր դեռ ևս 'ի չափ պարտիզպանի ումեմն 'ի քաղաքին: Իսկ ծերն զարմացեալ ասէ 'ի միտ. գնացից 'ի քաղաքն և տեսից զնա թէ զինչ է գործ նորա՝ որ վերագոյն է քան զայսքան ժամանակաց վշտս և տառապանս և զճգնութիս իմ: Եւ յարուցեալ ծերն եկն 'ի տեղին զոր ասաց նմա հրեշտակն, և եգիտ զայրն զի նստեալ էր 'ի փողոցի վաճառել ըզբանջար իւր, և նստաւ ծերն առ նմա մինչև ցութ ժամ աւուրն: Երբ պարապեաց այրն և յարեաւ գնալ, ասէ ցնա ծերն. կարո՞ղ ես, եղբայր, հիւրընկալնուլ զիս յայսմ գիշերի 'ի տան քո: Իսկ նա ցնծացաւ յոյժ և զուարճութբ ընկալաւ: Եւ իբրև մտին 'ի տունն, պատրաստեաց այրն հանգստարան և սեղան ծերոյն: Իսկ նա ասէ. արա սէր, եղբայր, և պատմեա ինձ զքաղաքավարութի քո. զի ոչ ինչ ճաշակեցից մինչև պատմեսցես, զի վասն այսր իրի առաքեցայ 'ի տեառնէ: Իսկ այրն ոչ ինչ կամեցաւ ասել: Եւ ծերն կայր և մնայր յաղաչանս և ասէր. պատմեա ինձ, զի ոչ է բարի ընդդէմ կալ բարւոյն: Յայնժամ ասէ այրն ցծերն. ես, հայր, այր մեղաւոր եմ և աղքատ և ոչ ունիմ մասն ինչ բարւոյ. բայց 'ի փոքր ինչ յօժարութէ մնաց յերեկոյէ յերեկոյ ճաշակեմ զհաց իմ, և 'ի գնոց աշխատութեց իմոց առնեմ զկերակուր իմ, և զայլն բաշխեմ չքաւորաց և կամ 'ի հիւր կրօնաւորս ծախեմ զայն. և զտիւ և զգիշեր զայս խորհիմ 'ի միտ՝ եթէ բոլոր այս քաղաք ժառանգելոց են զարքայութիւնն երկնից վասն արդարութե իւրեանց, և ես միայն իջանելոց եմ 'ի դժոխս վասն մեղաց իմոց: Երբ լուաւ զայս ծերն՝ ասէ. բարւոք իցէ այդ, այլ զի՞րդ վերագոյն իցէ քան զվիշտս այսչափ ամաց իմոց: Երբ զայս ասէրն, լուաւ ծերն ձայն երգոց և թմբկաց և պարուց 'ի դրացեաց նորին, և ասէ ծերն. եթէ ըստ Այ խորհիս կեալ, եղբայր, ո՞րպէս կարող ես լսել միշտ զայս ձայն վտի և ոչ շփոթել մտաց քոց: Ասէ այրն. Ճշմարիտ ասեմ քեզ, հայր, ոչ երբէք գայթակղեալ եմ, և ոչ շփոթեալ յայսպիսի ձայնից երգոց: Ասէ ծերն. և զի՞նչ համարիս զսոսա 'ի միտ քում իբրև լսես: Իսկ նա ասէ.

աղօթս և երգս համարիմ զայս ես և զամենայն ձայն կենդանեաց, և 'ի զեղջ եկեալ արտասուեմ և գոհանամ զայ: Երբև լուաւ ծերն, զղջացաւ և ասէ. այս է որ առաւել է քան զամենայն ճգունս իմ: Եւ ասէ. թողութի արա ինձ, եղբայր, ես ոչ հասի յայդ չափ: Եւ մեկնեցաւ անտի և գնաց 'ի սովորականն իւր:

ՊԱՏՄԷՐ մեզ զայս ոմն 'ի հարանցն՝ եթէ էին երկու ընկերք վաճառականք ամիրեցիք, և շրջէին 'ի միասին և վաճառէին յօտար երկիրս. և էր մինն ընչաւէտ անթիւ և միւսն չափաւոր, և էր մեծատանն այնորիկ կին գեղեցիկ յոյժ և սրբասէր, որպէս և ցուցանեն բանքս որ զկնի: Քանզի մեռաւ այրն գեղեցիկ կնոջն այնորիկ մեծատունն, և սիրեաց երկրորդն այն վաճառական որ էր ընկեր մեծատանն զգեղեցկութի կնոջ ընկերին և զխոհեմութիւն նորա և զընչաւէտութի, և կամէր առնուլ զնա իւր կին. այլ պատկառէր ասել, գիտէր զի երկիւղած էր և ոչ հաւանելոց էր նմա: Իսկ համեստ տիկինն զի իմաստուն էր՝ ծանեաւ զայն և ասէ ցնա. տէր իմ Սիմէոն, զի այս էր անուն նորա, տեսանեմ զքեզ զի շփոթեալ ես մտօք. արդ ասա ինձ զխորհուրդս քո, և ես հանգուցից զմիտս քո: Իսկ նա նախ երկեաւ ասել, և յետոյ խոստովանեալ ասէ. կամիմ, տիկին, լծակցել զքեզ և հետևել կամաց և իմաստութե քո: Ասէ կինն. եթէ առնես զոր պատուիրեմ քեզ, ես լցից զկամս քո: Նա ասէ. զամենայն զոր հրամայես՝ առանց յապաղելոյ արարից: Ասէ կինն. գնա 'ի վաճառ քո և մի ընաւ ճաշակեսցես ինչ մինչև կոչեցից զքեզ, և տէր 'ի միջի, զի և ես ոչ ճաշակեցից ինչ մինչև գայցես դու: Եւ նա ուխտեաց երդմամբ առնել զայն. կարծէր յայնմ աւուր կոչել զնա, զի ոչ եդ պայման հրաւիրելոյն: Անց ընդ մէջ օր մի և երկու և երիս և ոչ կոչեաց զնա, և նա համբերէր վասն երդմանն և վասն տարփական սիրոյն. և Ած յաջողէր զհամբերութիւն, զի կամէր զկեալ նորա, քանզի եղև յետոյ անօթ ընտրեալ նա: Եւ կոչեաց զնա յաւուրն չորրորդի յորժամ վհատեալ և նուաղեալ էր 'ի սովոյն՝ մինչ ոտիւք գնալ ոչ կարէր, այլ 'ի վերայ երիվարի բարձեալ տարան առ նա: Իսկ կինն եդ սեղան լի խորտիկօք, և պատրաստեաց մահիճս և անկողինս յառաջ քան զմտանել Սիմէոն վաճառականին՝ որ գայր սո-

վայեալ։ Իսկ իբրև եմուտ 'ի տունն այրն Սիմէոն, ասէ ցնա կինն մեկուսի և 'ի ծածուկ․ ահա եկ և տես զի պատրաստեցի սեղան և անկողին։ Եւ իբրև ետես Սիմէոնն այր, ուրախ եղև յոյժ։ Ասէ ցնա կինն իմաստուն․ ահա սեղան և ահա մահիճս ըստ կամաց քոց, ո՞ր կամիս զի երթիցուք նախ։ Ասէ այրն․ աղաչեմ զքեզ, կերակուր տուր ինձ, զի ահա պակասի հոգի իմ, զի ոչ յիշեմ թէ զինչ իցէ կին 'ի բաղում սովոյ և 'ի պակասելոյ զօրութեան իմոյ։ Յայնժամ ասէ ցնա կինն․ ահա մինչ ովեցար, քան զսէր իմ և ամենայն կանանց զկերակուր ախորժեցեր․ արդ յորժամ այդպիսի խորհուրդք նեղեն զքեզ, զայդպիսի դեղ կրէ 'ի քեզ, և ազատիս յամենայն ախտակիր խորհրդոց մարմնոյ․ և ճշմարիտ հաւատա ինձ, զի զկնի վախճանի առն իմոյ ոչ քեզ և ոչ այլ ումեք մարդոյ մերձաւոր լինիմ, այլ կացից յայրութիւն հովանեաւն Քրի։ Օ այս յատկութիւս յետ սեղանոյն յագենալոյ ասաց՝ իբրև խրատելով զՍիմէոն վաճառականն 'ի հոգևոր գիտութիւն իմաստուն և հոգևոր տիկինն այն։ Իսկ իբրև լուաւ զայս այրն այն, զղջացաւ յոյժ՝ տեսանելով զբարեպաշտութիւ կնոջն և զածսիրութիւն նորա, և վաճառեաց զինչս իւր և ետ աղքատաց և եղև կրօնաւոր և բնակեաց 'ի վանս՝ որ էր յԱպամիա, և եղև հաճոյ աստուծոյ։ Նոյնպէս և կինն եմուտ 'ի կուսանաց վանս, և ստացաւ կեանս սուրբ և պատուական, և գոհանայր զաստուծոյ։

ԵՐԿՈՒ կրօնաւորք ուխտեցին ընդ միմեանս ստանալ ճգնութիւնս խիստս, բայց հաւասար առնիցեն զոր ինչ ճգնեսցին, և ոչ առաւել մի քան զմի գործեսցէ զաշխատութիւն․ և արարին այնպէս, և ունէին կեանս հաճոյ այ̃ և քաղաքավարութ̃ի ընտրեալս։ Իսկ դիպեցաւ միոյն հայր լինել հասարակաց վանաց, և միւսն մընաց 'ի միայնակեցութիւն իւր և կատարեաց այնպէս զընթացս իւր մինչև սքանչելիս մեծամեծս առնէր, քանզի զդևս հալածէր, զհիւանդս բժշկէր և զգալոց գործս մարգարէանայր։ Իբրև ետես և լուաւ այն որ հայր էր վանից՝ եթէ այսպիսի շնորհաց արժանի եղև ուխտադիր եղբայրն իւր, զարմացեալ հիանայր թէ երկաքանչիւրքս միապէս աշխատիմք և ոչ առաւել ինչ մի քան զմի, արդ զի՞արդ նա սքանչելի և ես և ոչ մի ինչ։ Յայնժամ հան–

ղարտեաց երիս եօթնեակս և մեկնեցաւ 'ի մարդկանէ և աղաչէր զա̃ծ 'ի խորոց սրտէ և ասէր. աղաչեմ ըզ-քեզ, տէր, յայտնեա ինձ թէ ընդէ՞ր ընկերն իմ սքան-չելիս առնէ, և ես ոչ մի ինչ ստացայ այնպիսի: Յայն-ժամ երևեցաւ նմա հրեշտակ տեառն և ասէ. վասն այ-սորիկ եղև այն, զի նա վասն սիրոյն ա̃յ նստի միայն համ-բերութ̃բ, և հառաչանօք և հեծութ̃բ անցուցանէ զժա-մանակս կենաց իւրոց, և ողբայ զտիւ և զգիշեր, և է միշտ քաղցեալ և ծարաւի 'ի սէրն ա̃յ. իսկ դու 'ի բա-զում հոգս և 'ի շփոթս ես, և բազում ինչ մխիթարու-թիւն ունիս 'ի բազմաց. և այն ամենայն որ 'ի մարդկա-նէ 'ի քեզ գործի, բաւական է քեզ փառք և պատիւ և ոչ պիտոյ է այլ:

ԱՍԷԻՆ վասն սկիտացւոց՝ եթէ ոչ գոյր 'ի նոսա ամ-բարհաւաճութ̃ի, վասն այսորիկ զի մի զմիւսն յաւել առաքինութ̃բ: Իսկ պահէին նոքա ոմանք զերկու ա-ւուրբք; ոմանք զերեք և ոմանք զչորս. իսկ ոմանք 'ի շա-բաթէ միանգամ ճաշակէին և ոմանք հաց բնաւ ոչ ուտէին և ոմանք գինի ոչ ըմպէին: Այլ զի համառօտ ա-սացից՝ ամենեքեան զարդարեալ էին ամենայն առաքի-նութեամբ, և միապէս փառաւորէին զա̃ծ:

ԽՈՐՀԵԱԼ ուխտեցին առ միմեանս երբեմն երկու եղբարք համահարք՝ գնալ լինել կրօնաւորս: Այլ իբրև ելեալ բնակեցան 'ի միասին և ճգնեցան բարւոք առա-քինացեալս, և ապա եդին 'ի մտի շինել սենեակս իւրա-քանչիւրն առանձին հեռի 'ի միմեանց և բնակեսցեն մի այն միայնակեացս, և այնպէս արարին. և զամս բազումս ոչ երբեք ելին 'ի սենեկացն և ոչ տեսին զմիմեանս: Դի-պեցաւ միոյն հիւանդանալ, և ժողովեալ եղբարքն առ նա տեսանել զնա, զի մերձ էր 'ի վախճանել: Այլ իբրև նստէին շուրջ՝ պակասեալ նորա աւանդեաց զհոգին. և իբրև բազում ժամ էանց 'ի վերայ, դարձաւ անդրէն ոգի իւր, և հարցին ցնա հարքն և ասեն. զի՞նչ տեսեր: Իսկ նա ասէ. տեսի զհրեշտակս ա̃յ որ եկեալ տանէին զիս և զեղբայրն իմ և հանէին յերկինս, և դիպեցան մեզ յօդս բանակք դիւացն և կամեցան արգելուլ, և ոչ կարացին խափանել զելս մեր. և իբրև 'ի վեր անցաք զնոսա, սկսան գոչել՝ մեծ է համարձակութ̃ի սրբութ̃ե և համբերութ̃ե: Այլ զայս իբրև ասաց, առժամայն դար-

ձեալ ննջեաց։ Եւ իբրեւ տեսին զայս հարքն, առաքեցին առ եղբայրն իւր ծանուցանել նմա զի եկեսցէ անդ։ Եւ իբրեւ գնացին որք առաքեցանն՝ գտին զի եւ նա փոխադրեալ էր յայնժամ. եւ զարմացան յոյժ եւ փառաւոր առնէին զա̃ծ 'ի վերայ այսու եղելոյ սքանչելեաց։

ՔԱՂԱՔԻ ումեմն վախճանեցաւ եպիսկոպոսն. եւ ժողովեալ արք կողմանցն այնոցիկ գնացին առաջի արքեպիսկոպոսին եւ աղաչէին զնա, որպէս զի ձեռնադրեսցէ նոցա եպիսկոպոս փոխանակ փոխադրելոյն այնմիկ։ Ասէ ցնոսա արքեպիսկոպոսն. տուք ցիս զայր՝ որում վկայէք դուք եթէ ունի զօրութ̃ի հովուել իմաստութ̃բ զհօտն Ք̃ի, եւ ձեռնադրեցից ձեզ եպիսկոպոս։ Իսկ նոքա ասեն. մեք ոչ զոք ունիմք, այլ դու տուր մեզ զոր հաւատացուցանէ քեզ հրեշտակ քո։ Ասէ ցնոսա արքեպիսկոպոսն. ամենեքեան դուք աստ էք։ Եւ նոքա ասեն. ոչ։ Ասէ ցնոսա. գնացէք ժողովեցէք ամենեքեան եւ եկայք աստ, որպէս զի հասարակաց հարցմամբ եւ վկայութ̃բ ընտրեսցուք զորս կացուսցուք եպիսկոպոս։ Իսկ նոքա գնացեալ ժողովեցան ամենեքեան եւ եկին առ նա։ Ասէ ցնոսա արքեպիսկոպոսն. արդ ունի՞ք զոք ընդ ձեզ վկայեալ յամենեցունց, որպէս զի ձեռնադրեցից ձեզ։ Եւ նոքա ասեն. ոչ ունիմք մեք այնպիսի զոք, այլ զոր տայ մեզ հրեշտակ քո, նա եղիցի մեզ եպիսկոպոս։ Դարձեալ ասէ արքեպիսկոպոսն. արդ ամենեքեան է՞ք աստ։ Եւ նոքա ասեն. մի ոք 'ի փոքունց յօթեվանս նստեալ պահէ զյաւանակ մեր, եւ այլ ամենեքեան աստ եմք։ Ասէ արքեպիսկոպոսն. արդ հնազանդի՞ք զոր ինչ ասեմ ձեզ։ Եւ նոքա ասեն. այո հաւանիմք յօժարութեամբ։ Յայնժամ կոչել հրամայեաց զայն որ զյաւանակն պահէր. եւ իբրեւ եկն, ձեռնադրեաց զնա եպիսկոպոս եւ ետ ցնոսա. իսկ նոքա ընկալեալ խնդութ̃բ եւ մեծաւ պատուով՝ գնացին 'ի տեղիս իւրեանց, որպէս եւ ընկալան պատուել զնա որպէս զսուրբն ա̃յ։ Իսկ եղեւ երբեմն երաշտութ̃ի սաստիկ յերկրին յայն, եւ աղաչեաց զա̃ծ եպիսկոպոսն այն վասն երաշտին այնորիկ։ Ասէ ցնա ա̃ծ. գնացեալ կացցես ուխտիւ քո 'ի դուռն քաղաքիդ, եւ ո ոք նախ մտցէ 'ի քաղաքդ՝ զնա կալցես զի աղօթեսցէ առ իս, եւ տաց ձեզ անձրեւ։ Եւ ընդ լսել բանին վաղվաղակի գնաց ուխտիւն եւ նստաւ 'ի դուռն քաղաքին։

Եւ ահա գայր կրօնաւոր մի սեւ Հնդիկ աղքատ եւ բարձեալ փայտ ուսովն բերէր վաճառել 'ի քաղաքն: Եւ յարուցեալ փութապէս եպիսկոպոսն կալաւ զնա եւ 'ի բաց եդ յուսոց նորա զփայտին բեռն: Ասէ ցնա եպիսկոպոսն. ով որդեակ դու, հրամայեալ է քեզ յԱյ մի կալ հակառակ ընդդէմ, այլ աղօթել եւ աղաչել զՏէր, զի տացէ անձրեւ յերկիր, զի կորեաւ ամենայն պտուղ նորա: Իսկ նա թէպէտ ոչ կամէր, պատկառեալ ամենայն խոնարհութեն իւր՝ ոչ եկաց հակառակ հրամանացն. այլ իբրեւ սկսաւ աղօթել, բացեալ եղեն սահմանք երկնից եւ եկն անձրեւ սաստիկ՝ մինչեւ ողողէր զդաշտս. եւ ապա աղօթեալ դադարեցոյց զանձրեւն, զի մի հեղեղեսցէ զերկիր: Եւ առեալ զծերն եպիսկոպոսն աղաչէր զնա եւ ասէր. արա սէր վասն տեառն, եւ պատմեա ինձ զկենցաղավարութի քո առ 'ի յօգուտ բազմաց, միթէ նախանձեսցին գործոց քոց բազումք: Ասէ ցնա ծերն. թողութիւն շնորհեա ինձ, տէր, ահա որպէս տեսանես ելանեմ օր ըստ օրէ եւ բառնամ զայս սակաւ փայտ, եւ բերեալ աստ վաճառեմ, եւ առնում 'ի գնէ նորա զպէտս իմ միայն, եւ յերեկոյին գնամ յեկեղեցին եւ կամ անդ եւ սգամ 'ի գիշերի զմեղս իմ. իսկ եթէ լինիցի ձմեռն աւուրս ինչ եւ ոչ կարացից բերել փայտ՝ ոչ ինչ ճաշակեմ յաւուրսն յայնոսիկ զայլ ինչ, եւ է արդեօք այսպէս կեանք իմ քառասուն եւ եօթն ամ: Եւ լուեալ զայս եպիսկոպոսն եւ ուխտն՝ շահեցան եւ փառս մատուցին Այ:

ԱՂԱՉԷՐ զԱծ ոմն 'ի ծերոցն, զի ցուցցէ նմա թէ յորում չափու հասեալ իցէ: Եւ ասէ ցնա տէր. է եղբայր ոմն յայս անուն վանս, նա վերագոյն քան զքեզ իցէ: Եւ յարուցեալ ծերն գնաց 'ի վանսն յայն: Իբրեւ լուան զգալուստ ծերոյն անդ, ընդ առաջ ելին նմա հայրն եւ ամենայն եղբարքն, զի էր մեծանուն եւ հռչակելի յոյժ ծերն: Ասէ ծերն ցհայրն. կամիմ զամենայն եղբարսն տեսանել եւ ողջունել: Եւ հրամայեաց հայրն, եւ ժողովեցան ամենայն եղբարքն, եւ ոչ եկն այն եղբայր զոր խորհէր ծերն: Ասէ ծերն. Է՞ ոք այլ եղբայր որ ոչ է աստ: Ասեն ցնա. է մի ոմն այլ, այլ յիմար եւ կատաղի է նա, եւ է արտաքոյ եւ սրբէ զպահէզս 'ի փշոց եւ 'ի խոտոյ: Ասէ ծերն. կոչեցէք եւ զնա. եւ կոչեցին: Եւ իբրեւ ետես զնա ծերն զի գայր, յարեաւ եւ գնաց ընդ առաջ եւ համ-

բուրեաց զնա, և առեալ զնա մեկուսի ասէ. պատմեա ինձ, որդեակ, զգործս քո հրամանաւ տեառն վասն որոյ իսկ եկեալ եմ ես։ Իսկ նա ասէ. ես, ով հայր, մարդ մեղաւոր և յիմար եմ և ոչ ինչ ունիմ ասել քեզ։ Իսկ ծերն բռնադատեաց զնա երդմամբ։ Յայնժամ ասէ. մի ինչ է զոր առնեմ. քանզի զեզն պատնիշոյ 'ի սենեակ իմ արգիլէ միշտ հայրն, և յամենայն աւուր ուտէ զխի-լայ իմ զոր աշխատեալ գործեմ. և արդ երեսուն ամք են յորմէհետէ համբերեմ այսմ, և ոչ երբէք ել բան չար 'ի բերանոյ իմոյ կամ խորհուրդ բարկութեան 'ի միտաց իմոց զհօրէն իմմէ, և ոչ երբէք զանեցի զեզն կամ ձանձ-րացայ, այլ երկայնմտութեամբ դարձեալ հիւսեմ զպա-կասեալսն սորայ և գոհանամ զԱյ։ Իբրև լուաւ զայս ծերն, զարմացաւ յոյժ, զի այսչափ համբերութիւն վկայ-եաց գոլ 'ի նմա, որ ունի զամենայն առաքինութիւնս։

Ոմն 'ի հարանցն նստէր 'ի սենեկի իւրում, և մտեալ 'ի ներքս մահճաց ծերոյն դեն և ընթեռնոյր զԹուոց գիրք. իսկ ծերն լռեաց։ Եւ ձանձրացեալ դեն՝ եղև 'ի կերպս աղքատի և եկաց ընդդէմ պատուհանի ծերոյն, և էր նա կաղ և ունէր 'ի ձեռին իւրում գաւազան և մախաղ։ Ասէ ցնա ծերն. գիտես դու թէ զինչ ընթեռ-նուիր։ Պատասխանի ետ դեն. այո գիտեմ, զհին օրէնս ընթեռնուի։ Ասէ ծերն. և նոր շնորհաց ինչ ոչ գիտես։ Իբրև լուաւ դեն զանուն նորոյ շնորհացն, կորեաւ և անյայտ եղև։

ՊԱՏՄԵՑԻՆ մեզ ումանք վասն եպիսկոպոսի ումեմն եթէ գնաց նա երբեմն յաւուր կիրակէի 'ի գիւղ մի, և ասէ ցընկերս իւր. կոչեցէք զերէց գեղջս այսորիկ, զի եկեալ մատուցէ պատարագ մարմնոյն Քրիստոսի։ Եւ գտեալ զքահանայն բերին առ նա, և էր գեղջուկ յոյժ և անքիծ և ուղիղ մտօք։ Ասէ ցնա եպիսկոպոսն. մա-տուցես մեզ այսօր զխորհուրդն Քի։ Եւ նա առժա-մայն հետևեցաւ առնել զպատարագն։ Եւ ետես եպիս-կոպոսն զքահանայն զի իբրև եկաց առ սուրբ սեղանն, եղև նա բոցակերպ իբրև զհուր և կայր 'ի մէջ հրոյն և ոչ բոցակիզէր։ Եւ իբրև կատարեաց զամենայն խորհուր-դըն քահանայն, առեալ զնա մեկուսի եպիսկոպոսն ե-մուտ 'ի սարկաւագանոցն և ասէ ցնա. օրհնեա զիս, ար-ժանի ծառայ Այ։ Իսկ նա ասէ. դու օրհնեա զիս, զի քո



Digitized by Google

է իշխանութիւն օրհնել զիս օրհնողիդ իմոյ : Ասէ եպիսկոպոսն . ոչ կարեմ ես օրհնել զմարդ՝ որ է հուր և կացցէ 'ի հուր 'ի ժամ ընծայիցն . զի վատթարն 'ի լաւէ անտի օրհնեսցի գրեալ է : Ասէ քահանայն ցեպիսկոպոսն հեզաբար . թողութիւն արա, տէր, և է՞ հնար քահանայի որպէս թէ ընծայեսցէ զմարմինն և զարիւնն Քրիստոսի, և ոչ 'ի հուր ընծայիցն կացցէ : Զայս իբրև լուաւ եպիսկոպոսն, զարմացաւ ընդ սրբութիւն և ուղղութիւն նորա :

ԱՍԱՑ ծերն . ոչ ինչ պարտ է հոգալ ունել ինչ, այլ միայն զերկիւղն այ . զի որչափ և հոգասցէ ոք վասն պիտոյից մարմնոյ, ոչ ինչ շահեսցի 'ի նմանէ :

ԱՍԱՑ ծերն . զոր օրինակ հուր կիզէ զփայտ, այնպէս պարտ է գործ կրօնաւորի ստանալ որ ծախեսցէ զախտս 'ի միտաց նորա :

ԷՐ ոմն բնակէր 'ի սենեակս, և ունէր կանոն այսպիսի . չորս ժամս 'ի գիշերի ննջէր, չորս ժամս աղօթէր, չորս ժամս գործէր և աղօթէր բերանով . իսկ յաւուրն գործէր վեց ժամս, և զերիս ժամս ընթեռնոյր գիրս, և զկնի ինն ժամու ուտոյր կերակուր . այսպէս կատարեաց զամ աւուրս իւր, և միշտ փառաւորէր զած :

ԷՐ ոմն հոգեւորս ունէր աշակերտ և բնակեցուցեալ էր զնա բացագոյն յինքենէ իբրև երկու մղոնաւ, որում պատուէր տուեալ էր գիտել և ճանաչել զխաբէութիւն և զբազմադիմի խարդախութիւնս սատանայի, որպէս և տեսեալ և ուսեալ էր 'ի ծերոյն զամենայն եղանակ խորամանկութեան չարին : Իսկ յաւուր միում եղեւ սատանայ 'ի կերպարանս եպիսկոպոսի և եկն առ աշակերտ ծերոյն և նստաւ յանդիման նորա բացագոյն 'ի նմանէ իբրև աշխատեալ 'ի ճանապարհէն : Իսկ եղբայրն իբրև ետես, ոչ ծանեաւ եթէ երեւմունք չարին է . այլ ընթացաւ ընդ առաջ նորա և երկիր եպագ նմա որպէս եպիսկոպոսի : Եւ ասէ սատանայ . եղբայր և որդի, ողջամբ տեսի զքեզ . այլ արա սէր և ընկալ զիս, զի վշտացայ 'ի քաղաքէ և յամբոխմանէ նորա և յանկուր ժողովրդենէն, որք սատանայի առաւել անսան քան այ . և փախեայ 'ի նոցանէ և եկի բնակել յանապատի հանդարտութեան, որում ցանկացեալ էի 'ի մանկութենէ իմմէ . բայց և զայս խնդրեմ 'ի քէն, զի մի ոք գիտասցէ զինէն, և մի և հայրն քո ծերն մեծ, զի մի խնայեալ քա-

ղաքացիքն եկեսցեն թախանձել զիս։ Իսկ եղբայրն հաւատաց չարին իբրև եպիսկոպոսի, և արար զամենայն կամս նորա. քանզի չյիշեացն նա բնակութե՛ 'ի քարայրի անդ մերձ իւր, և յաւուրն մի անգամ տեսանէր զեպիսկոպոսն, և լսէր 'ի նմանէ խրատ խաղաղութե՛. և շփոթմանց և բարկութե՛ լցեալ եղև եղբայրն և ոչ իմանայր, քանզի փակեցաւ 'ի նմանէ գիտութի՛ն, զի աւանդ հօրն հրամանի էր. և այսպէս ամենայն խնդակամ յօժարութիւն չար է մանկանց և երիտասարդաց։ Իսկ յայտնեաց Աճ զայս ծերոյն մեծի, և նա աղօթեաց խնդրուածովք վասն փրկութե՛ եղբօրն, զի մի կորիցէ իսպառ։ Նաև եպիսկոպոսն, որ էր սատանայն, ոչ կարաց ծածկել զխորամանկութի՛ն իւր, այլ ասէ ցեղբայրն. որդեակ, ո՞յր է փայտատս այս։ Իսկ ասէ եղբայրն. հօրն իմոյ է, ասէր։ Ասէ եպիսկոպոսն. տես, որդեակ, զսէր հօրն քո, զի ոչ արար զքեզ արժանի միոյ փայտատի, վասն որոյ ոչ ասացեր թէ իմ է։ Ասէ եղբայրն. նորայն իմ է, ասէր, և ոչ ինչ է որ ոչ կամի նա ինձ։ Ասէ եպիսկոպոսն. ոչ այդպէս, որդեակ, այլ թէ կամիս գիտել զճշգրիտ մտածութի՛ հօրն քում, դու երթեալ առ նա ասա իշխանաբար՝ եթէ փայտատն այն իմ է և ոչ քո, և փորձեա այնու զճշմարտութի՛ նորա որ ընդ քեզ։ Իսկ ոչ իմացաւ չարին թէ այնու յանդիմանելոց էր խարդախութի՛ն իւր։ Նաև եղբայրն դարձեալ ոչ ծանեաւ զեպիսկոպոսին զխռովութե՛ խրատն աշխարհային տգիտութե՛, այլ շփոթեալ խռովեցաւ յոգի իւր զայրացմամբ ընդդէմ Աճասէր ծերոյն։ Իսկ 'ի գիշերին յայն աղօթումն ունէր զմիտս նորա, և ոչ այնու իմացաւ. այլ 'ի վաղիւն երթեալ առ ծերն իւր շփոթմամբ զերկրպագութիւնն ետ և ասէ. եկի, հայր, զի գիտասցես և ծանիցես թէ իմ է փայտատն այն և ոչ քո, և ոչ այլ տացես զնա քեզ։ Ասէ սուրբ ծերունին. այո, որդեակ, քո է և ոչ իմ, և ոչ միայն այն, այլ ամենայն որ ինչ գտցի առ իս՝ առեալ տարցես ընդ քեզ, և մի այլ առ իս եկեսցես, զի և ես քո եմ հնազանդեալ ընդ իշխանութեամբ քո։ Լուեալ զայս մոլորեալ եղբայրն զարթեաւ աղօթիւք սրբոյ ծերոյն, և ապաշաւեալ անկաւ առ ոտս հօրն իւրոյ և ասէ. թողութի՛ արասցես ինձ մոլորելոյս, զի ոչ գիտեմ զինչ խօսեցայ։ Ասէ սուրբ ծերն. օրհնեալ է տէր Աճ, զի ես

ինձ դարձեալ զորդեակն իմ զմոլորեալ։ Եւ ասէ ցեղ-
բայրն. ով որդեակ, միթէ եպիսկոպոս տեսեր և առ
քեզ պահեցեր, որ այդպէս խօսեցար։ Եւ ասէ եղբայրն.
այո, հայր, եպիսկոպոս տեսի և ունիմ առ իս առանց
հրամանաց քոց, վասն որոյ այս մոլորութիւն պատահեաց
ինձ։ Ասէ ցնա ծերն. ով որդեակ, որքան աշխատ եղէ
ուսուցանելով քեզ զամենայն խարդախութիւն չարին, և
դու ոչ ծանեար. արդ ո՞չ էր բաւական քեզ այն առ 'ի
ճանաչել զչարն սատանայ զի ոչ ետ քեզ ողջոյն. վասն
այնորիկ ոչ եկն առ քեզ, այլ նստաւ անդէն զի դու եր-
թիցես առ նա, և նա ինքն է սատանայ. և ո՛չ 'ի խրա-
տու նորա ծանեար զոր ելից զքեզ չփոթմամբ։ Իբրև ե-
տես եղբայրն զի մի ըստ միոջէ պատմեաց զեղեալսն, և
զի գիտէր զհոգետեսութիւն հօրն իւրոյ, գոչեաց առ հայ-
րըն իւր անկեալ առաջի նորա ասելով. ողորմեա մոլո-
րելոյս և աղօթեա առ տէր ած, զի մի անկայց 'ի փոր-
ձութիւն նենգաւորին այլ։ Քանզի մինչև պատմեաց
հայրն, ոչ գիտէր եղբայրն եթէ եպիսկոպոսն այն սա-
տանայ է։ Եւ աղօթեալ հօրն գնացին 'ի միասին մինչև
'ի խրճիթ եղբօրն, և 'ի յայրին և ոչ գտին զեպիսկո-
պոս երևեալն զայն. քանզի յայտնի եղև նենգութիւն
նորա և հալածեցաւ 'ի սահմանաց անտի աղօթիւք սըր-
բոյ ծերոյն, և փրկեցաւ եղբայրն և զգաստացեալ եղև։

ԺՈՂՈՎԵԱԼ 'ի միասին միայնակեացք սուրբ լերինն՝ սուրբք և իմաստունք և հոգևորք՝ թուով երկոտասանք, և բանս խօսեցան ընդ միմեանս վասն առաքինութեանց եղելոց 'ի սկզբանէ 'ի սուրբս. և թէ զոր ձգնութիւն ոք 'ի նոցանէ ստացեալ էր, և որպիսի կատարէր զաւուրս իւր 'ի խցի իւրում։

Առաջինն և աւագն որ 'ի նոսա՝ ասէ. ես, եղբարք, յորմէհետէ սկսայ հանդարտել 'ի խցի, բոլորովին խաչեցի զմարմին իմ մեկնեալ յամենայն արտաքին գործոց, և 'ի մտի ունիմ միշտ զբանս գրոց որ ասէ՝ եթէ խզեսցուք զկապանս նոցա և ընկեսցուք 'ի մէնջ զլուծ նոցա։ Եւ շինեցի պարիսպ ամուր 'ի մէջ հոգւոյ և մարմնոյ իմոյ գործոց և ասացի 'ի մտի՝ եթէ զոր օրինակ ոչ տեսանեն զմիմեանս որք պարսպին ներքոյ և արտաքոյ իցեն, նոյնպէս և դու միտք՝ մի բնաւ տեսցես զարտաքին գործս մարմնոյ, այլ 'ի քեզ միայն նայեաց և ած ելից

Digitized by Google

քոց և դատաստանին ա̃յ ։ Իսկ զչար խորհուրդս այսպէս տեսանեմ իբրև զօձս և զծնունդս իժից . և մինչ զգամ զնոսա եկեալ 'ի միտս իմ, բարկութ̃ե չորացուցանեմ զնոսա . և ոչ երբէք դադարիմ 'ի բարկանալոյ մարմնոյ և մտաց, զի մի գործեսցեն զանպատշաճն ։

Երկրորդն ասէ . ես յորմէհետէ հրաժարեցի յաշխարհէ , ասեմ ցանձն իմ. այսօր նորոգ ծնար վերստին, այսօր սկսար աստ բնակել և պանդխտել . արդ այսպէս բնակեա աստ իբր օտար՝ իբր թէ վաղիւ գնալոց ես աստի՝ թողեալ զտեղի քո , զայս խորհեաց 'ի տուէ և 'ի գիշերի ։

Երրորդն ասէ . ես յառաւօտէ ելանեմ մտօք առ տէր իմ և երկիր պագանեմ նմա , և անկեալ առաջի նորա խոստովանիմ նմա զյանցանս իմ, և այսպէս իջանեմ 'ի վայր և երկիր պագանեմ հրեշտակաց նորա և խնդրեմ 'ի նոցանէ, որպէս զի աղաչեսցեն զտէր վասն իմ և վասն ա̃մ ստեղծուածոց իւրոց ։ Եւ ապա իջանեմ յանդունդս և դիտեմ զտանջանս որ 'ի նմա . յիշեմ և զանցս Հրէիցն և զկոծս նոցա մինչ գերէին զնոսա բաբելացիքն, նոյնպէս և ես առնեմ. անցանեմ մտօք ընդ ամենայն տանջանս որ 'ի դժոխս են , և տեսանեմ զամենայն անդամս իմ դատապարտեալ 'ի տանջանս , և այնպէս լամ ընդ լացողսն 'ի տուէ և 'ի գիշերի ։

Չորրորդն ասէ . ես այսպէս կամ մտօք միշտ՝ իբր թէ նստիմ 'ի լեառն Ձիթենեաց ընդ տեառն և ընդ սրբոց առաքելոցն և ասեմ ցանձն իմ. յայսմհետէ մի բնաւին ինչ խորհեսցիս մարմնաւոր , այլ ընդ սոսա կացցես զօրհանապազ և խնդրեսցես ընդ դոսա և նախանձեսցես կենաց սոցա . և որպէս Մարիամ նստաւ առ ոտս տեառն և լսէր զբանս նորա մինչ ասէր՝ սուրբք եղերուք զի ես սուրբ եմ, և եղերուք գթածք որպէս և հայրն ձեր երկնաւոր գթած է , և ուսարուք յինէն զի հեզ եմ և խոնարհ սրտիւ , և գտանիցէք հանգիստ անձանց ձերոց . և այսպէս կատարեմ զկեանս իմ ։

Հինգերորդն ասէ . ես տեսանեմ մտօք յամենայն ժամ զհրեշտակս զի ելանեն և իջանեն կոչել և տանել զհոգի իմ, և միշտ մնամ վախճանի իմոյ և ասեմ միշտ՝ պատրաստ է սիրտ իմ առ քեզ, ա̃ծ, պատրաստ է սիրտ իմ ։

Վեցերորդն ասէ . ես նստեալ զտիւ և զգիշեր և զայս

Digitized by Google

խորհիմ 'ի մտի իմում, թէ զայս լուայց 'ի տեառնէ՝ եթէ դուք աշխատեցայք վասն իմ, և ես հանգուցից ըզձեզ. և զայս՝ թէ ճգնեցուք սակաւ մի, ես ցուցից ձեզ զփրկութիւն իմ. և զայս, եթէ որդի իմ էք դուք, որպէս 'ի հօրէ պատկառեցարուք յինէն. և թէ եղբարք իմ էք դուք, պատուեցէք զիս իբրև զաւագումն համբերեալ վասն ձեր. և եթէ ոչխարք էք իմ, լուարուք զձայն հովուին ձերում. և թէ ծառայք՝ երկերուք 'ի հարկանելոյ և հեռանելոյք իմէ։

Եօթներորդն աւէ. ես զերեքին զայսօրիկ հանապաղ խորհիմ և անդադար խրատեմ զանձն իմ ունել զսոսա, այսինքն են հաւատ, յոյս, սէր. որպէս զի յուսով խնդացից, և 'ի հաւատոյ հաստատեցայց, և 'ի սիրոյ ոչ երբէք տրտմեցուցից զոք բնաւ յաւուրս իմ։

Ութերորդն աւէ. ես տեսանեմ միտօք միշտ զդևս թառուցեալ և խնդրիցէ թէ զո՞ կլանիցէ. և սուր և շրջի նա, տեսանեմ ես ներքին տեսարանօք և աղաչեմ զՏէր զի ընդունայն արասցէ զհնարս նորա, զի մի ումեք կարասցէ յաղթել երկիւղածացն այ̄ և մի գայթակղել զոք։

Իններորդն աւէ. ես միշտ տեսանեմ միտօք զիմանալի զօրսն և զտէրն փառաց զի կայ 'ի մէջի նոցա և առաւել փայլէ պայծառութբ̄, և 'ի ձանձրանալ իմում առաքեմ զմիտս իմ յերկինս և տեսանեմ զանճառելի գեղեցկութիւն հրեշտակացն, և լսեմ զանլռելի երգս նոցա զոր անդադար մատուցանեն այ̄, և լուեալ զձայն նոցա ցնծայ և քաղցրանայ հոգի իմ, և յիշեմ յայնժամ զբանս գրոց որ ասէ՝ եթէ երկինք պատմեն զփառս այ̄. և զերկրաւորս զամենայն հող և մոխիր համարիմ։

Տասներորդն աւէ. ես միշտ տեսանեմ զհրեշտակն որ պահապան իմ իցէ, զի կայ մերձ իմ և պահէ զիս, և յիշեմ զբանն գրոց որ ասէ՝ թէ յառաջագոյն տեսանէի զՏէր զի կայր ընդ աջմէ իմմէ զի մի սասանեցայց. և երկուցեալ 'ի նմանէ պահեմ սուրբ զանձն իմ, զի տեսանէ նա զճանապարհս իմ, և տեսանեմ զի եղանէ նա առաջի այ̄ յամենայն աւուր պատմել զգործս իմ։

Մետասաներորդն աւէ. ես խորհիմ 'ի տուէ և 'ի գիշերի թէ զինչ իցեն առաքինութիւնք, որպիսիք են պահք, սրբութիւնք, սէր, երկայնմտութիւնք. և քննեմ զայն յորս 'ի սոցանէ պակասիցեմ, և առնեմ զանձն

իմ՝ ուր իցեն արգելք մուցանողքն քո, մի ձանձրացիս, մի երկմտիցես, աՀա ունիս զսոսա մերձ առ քեզ. զոր կամիս առաքինութի՝ գործեա զնոսա, և յոյժ գովեն զքեզ առ ած և վկայեն քեզ եթէ գտանիցեն առ քեզ Հանգիստ։

Աշխատասիրողքն ասէ. գաւք, ով Հարք և եղբարք, թէ եք երկնաւորք ունիք և քաղաքավարութի երկնաւոր ստացեալ էք. և ոչ եմ զարմանք զոր ինչ և ասէք, զի տեսանեմ զձեզ բարձրացեալ յերկրաւոր գործոց յերկինս, զի վերագոյն զօրութե՟ն բարձրացեալ էք յերկրէ և օտարացեալ էք 'ի մարմնաւոր գործոց. և ես ոչ գիտեմ թէ զինչ ասացից զձէնջ և կամ զինչ կոչեցից ըզձեզ։ Այլ ես զինչ գործեցից եղկելիս, որ ոչ ունիմ խորՀուրդ ինչ պատմելոյ արժանի, նա և ոչ կենաց այսու արժանի իսկ իցեմ. որ ոչ ինչ տեսանեմ իմ, այլ բազմութիւն մեղաց. և ուր և նայիմ մտօք, տեսանեմ զնոսա իբրև զլեռինս եղեալ առաջի իմ. վասն այսորիկ 'ի ներքինս դժոխոց խորՀիմ դատել զՀոգի իմ և ասեմ, թէ յետ սակաւ միոյ և ես անդ դատապարտելոց եմ. և տեսանեմ միշտ զոր անդէն կոծումն և արտասուս անդադարս և լաց անմխիթար, և տեսանեմ զկրճտումն ատամանց և զդողումնս անՀանդուրժելիս. և վասն այսորիկ անկանիմ միշտ առաջի այ 'ի քուրձ և 'ի մոխիր, և ամենայն խոնարՀութե՟ և աղաչանօք, զի գուցէ ողորմեալ՝ ոչ առաքեսցէ անդ զիս։ Զի տեսանեմ անդ ծով Հրեղէն առատակայակէս եռացեալ, որոց ալիք բոցոյն Հասանեն մինչև յերկինս, տեսանեմ և 'ի Հուրն այն արկեալ անթիւ բազմութի մարդկան, և անողորմ Հրեշտակք Հրեղէնք կան 'ի վերայ նոցա, որք վառեալ այրեն միշտ և ոչ մեռանեն, որոց միապէս ելանէ ձայն վայոց և կոծոյ, որք իբրև զխուիւ կիզլին և ոչ բոցակիզլին. և տեսանեմ զի քաղցրութին և ողորմութիւնն այ յայնժամ յետ դարձեալ և պակասեալ իցէ 'ի նոցանէ։ Եւ զայս ամենայն միշտ զմտաւ ածեմ, և ողբամ զամենայն ազգս մարդկան, և զարմանամ թէ որպէս իշխեն նայել յերկինս կամ ասել բան ինչ մարմնական, որովՀետև այսպիսի անցս և աՀ և դողումն կայ առաջի նոցա յելս իւրեանց աստեացս։ Զայս ամենայն իբրև մտախորՀ լինիմ 'ի տուէ և 'ի գիշերի և անարժան Համարիմ զանձն իմ

Երկնի և երկրի, և որչափ հնար է կատարել՝ կատարեմ զամենայն զոր ինչ ասէ՝ եղեն ինձ արտասուք իմ կերակուր 'ի տուէ և 'ի գիշերի։ Այսոքիկ են խնամատածոյն այնոցիկ հոգևոր առաքինութիւնք և խորհուրդք և այս բանք քաղաքավարութեան նոցա։ Նաև մեք արժանի յիշատակի նոցա առատացուք կեանս, որպէս զի հանգոյք տեսան Հօր Որդւոյ երևեցուք։

# ԽՐԱՏՔ

# ՍՈՒՐԲ ՀԱՐԱՆՑՆ

Digitized by Google

Digitized by Google

# ԽՐԱՏՔ

## ՍՈՒՐԲ ՀԱՐԱՆՑ

ՅԱՂԱԳՍ ՀԱՄԵՍՏՈՒԹԵԱՆ ՍԿՍՆԱԿԱՑ
ԵՒ ՅԱՂԱԳՍ ԿԱՄԵՑՈՂԱՑՆ ԲՆԱԿԵԼ Ի ՀԱՒԱՍԱՐ՝
ԿԵՆՑԱՂՈՒՄՍ ՍԻՒՆԱՄՏԱՑ ԵՒ ՅԱՂԱԳՍ ՄԵՆԱՒՈՐԱՑ

### ՍԵՐԱՊԻՈՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԹՄՈՒԱՑՒՈՑ*

Ոչ կամիմ զձեզ անգիտանալ, եղբարք, զի 'ի սկըզբանն յորժամ արար Աստուած զմարդն՝ եթող զնա 'ի դրախտին՝ ամբողջ ունելով զզայութիւնս 'ի բնականութեան. և իբրև լուաւ պատրողին, նա յայնժամ ընկեցաւ 'ի փառաց իւրոց: Իսկ տէրն մեր Յիսուս Քրիստոս արար ողորմութիւն ընդ ազգս մարդկան, վասն բազում իւրոյ գորովոյն եղեւ մարմին՝ առնելով կատարեալ մարդ ըստ ամենայնի առանց մեղաց, մինչ փոխեսցէ զոր ըստ բնութեանն 'ի բնականն 'ի ձեռն սրբոյ իւրոյ մարմնոյն, և դարձուսցէ զամենեսեան զհետևեցեալսն հետոց նորա և պատուիրանաց նորա, մինչ զի կարասցուք յաղթել հանողին զմեզ 'ի փառացն մերոց, ցուցանելով մեզ սուրբ բարեպաշտութիւն և օրէնս յստակս, իբր զի կացցէ մարդ 'ի բնականութեան յորում արար զնա Աստուած:

Արդ որ ոք կամիցի գալ յիսկզբանն բնականն, 'ի բաց խզեսցէ զկամս ըստ մարմնոյ: Միտք իւր է ցանկութիւն, և առանց ցանկութեան և ոչ սիրելութիւն առ Աստուած. սակս

* [illegible] հրատարակեալ ըստ [illegible] օրինակաց վերնագրեալ Սերապիոնի Թմուացւոյ, 'ի [illegible] հայոց հատ. ԺԲ. 385-387 երես [illegible] ընծայեալ են [illegible] [illegible] որ զիմի նոյն Յաղագս [illegible]ութեան, և [illegible] [illegible] [illegible], [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible] էն:

այսորիկ կոչեցաւ Դանիէլ այր ցանկութեանց: Իսկ փո-
խեաց թշնամին զցանկութիւն զառ 'ի յԱ՟ծ՝ ցանկութիւնս
զարուութե՟ առ 'ի ցանկալ զցանկութի՟ անարգութեան:
Ախտք իւր է նախանձ ըստ բնութե՟, և պատճառ նախան-
ձու յԱ՟ծ և ոչ յառաջահասութի՟, որպէս և գրեալ է
յառաքելումն՝ եթէ նախանձեցուցէք զշնորհս գեղե-
ցիկս. և փոխեցաւ նախանձն որ յԱ՟ծ 'ի նախանձ չարու-
թեան, նախանձելով ընդ միմեանս և խանդալով ընդ
միմեանս և ատելով զմիմեանս: Ախտք իւր է ցասումն
ըստ բնութե՟, և պատճառ ցասման և ոչ չարութի՟ 'ի վե-
րայ ախտից՝ եթէ ոչ զայրասցի 'ի վերայ մտածութեանց,
որպէս Փենեհէզն որդի Եղիազարու յորժամ զայրա-
ցաւ՝ փողոտեաց զայրն և զկինն, և արգել զբարկութի՟
տեառն 'ի ժողովրդենէն: Իսկ դարձոյց զմեզ թշնամին
յոչ ըստ բնութե՟ բարկութիւն՝ հակառակելով ընդ մի-
մեանս և ատելով զմիմեանս. վասն ամենայն ապականա-
ցելոցն և ապականացու անձինն՝ նուաստացաք ախտիւքն:
Ախտք իւր է ատելութիւն ըստ բնութեանն. և որպէս
եղիտ զնա Եղիա, մեռոյց զմարգարէսն ամօթոյ. նմա-
նապէս և Սամուէլ 'ի վերայ Ագագայ թագաւորին Ա-
մաղեկայ. և պատճառ ատելութե՟ 'ի վերայ ախտիցն՝ ոչ
եւս բացայայտին շնորհք անձինն. և փոխեցաւ 'ի մեզ ա-
տելութիւն 'ի միմեանս, արհամարհելով զմիմեանս, զբա-
խօսելով զմիմեանս. և ատելութի՟ հալածէ զամենայն
առաքինութի՟ 'ի բաց յանձնէ: Ախտք իւր է բարձրա-
խոհութի՟ 'ի վերայ ախտից. և որպէս եղիտ զնա Յոբ,
անպարտեաց նա զթշնամին ասելով. անպատիւք չարք,
խորշակահարիչք ամենայն բարւոյ, և ըստ միոջէքն: Այլ
փոխեցաւ 'ի մեզ բարձրախոհութի՟ առ թշնամին. բարձ-
րախոհեցաք առ միմեանս, և արդարացուցաք զմեզ ին-
քեանս քան զմիմեանս, և 'ի ձեռն ամբարտաւանութե՟
թշնամիք եղաք Ա՟յ: Ահաւասիկ այսոքիկ շինեալ են ընդ
մարդոյն. իբրև կերաւն 'ի ստուգամանելոյն, փոխեցաւ
բնականն յայսոսիկ ախտս անարգութեան:

Արդ փութասցուք, սիրելիք, խնամելով 'ի բաց խը-
ղել զայսոսիկ, և ստասցուք զոր եցոյց տէրն մեր Յ՟ս Ք՟ս
'ի սուրբ իւրում մարմնին, զի սուրբ է և բնակէ 'ի սուրբս:
Խնամ տարցուք մեզ ինքեանց առ 'ի հաճոյանալ Ա՟յ ըստ
կարի մերում, կատարելով զկրաւորականն մեր, և կշռե-

Digitized by Google

լով զամենայն անդամս մեր, մինչ զի կարասցուք կալ 'ի բնակմանումն, որպէս զի գտցուք զողորմութի 'ի ժամու փորձութեն հանդերձելոյ գալ 'ի վերայ բնակութես ։ Ո՛չ ժամանեսցուք այսուհետև, եղբարք, հեղգութե. այլ աղաչեսցուք, եղբարք, զբարերարութիւն նորա աննուազապէս, որպէս զի առաքեսցէ առ մեզ զօգնականութիւն իւր և ապրեցուսցէ զմեզ 'ի ձեռաց թշնամեաց մերոց ընդդէմ զինուորելոցն 'ի վերայ մեր. կամեցողացն արգելուլ զմեզ առ 'ի յոչ մտանելոյ մեզ 'ի հանգիստն մեր զոր շնորհեաց մեզ տէր մեր Յս Քս 'ի ձեռն սրբոց իւրոց պարկեշտութեամբ. զի նմա են փառք յաւիտեանս. ամէն ։

## ՑԱՂԱԳՍ ՀԱՄԵՍՏՈՒԹԵԱՆ ՍԿՍՆԱԿԱՑ

[1] Նախ քան զամենայն յամենայնում իրի պիտանանամք զնուաստախոհութի, պատրաստելով յամենայնում բանի յորում լսեմք ասելով՝ թէ թողութի արա. քանզի 'ի ձեռն նուաստախոհութեն ամենայնքն հակառակորդին խափանին ։ Ո՛չ կամիր չափել զքեզ ինքն յիմիք իրի, իբր զի անվրէպ՝ եղիցի միտս քո ։ Եղիցիս տրտմագին 'ի վերայ մեղաց քոց. իսկ զուարճացեալ ընդ օտար եղբարս, իբր զի երկիւղն այ բնակեսցէ 'ի քեզ ։ Եթէ յուղի գնասցես ընդ եղբարս, հեռացո զքեզ ինքն դոյզն 'ի նոցանէն, զի լռեսցես. և մի՛ յածեսցին աչք քո անդր կամ այսր, այլ խոկասցիր 'ի սրտի քում կամ աղաչեա զած. և ուր իջավանեսցես, մի՛ համարձակեսցիս, այլ եղիցիս նուաստ յամենայնի ։ Որ առաջի դնիցեն քեզ, ընկալ 'ի նոցանէն որպէս հարկաւորեալ. մանկագոյն գոլով՝ մի՛ համարձակեսցիս առնուլ 'ի սեղանոյն և արկանել 'ի բերան ընկերին քո յորժամ ուտիցէք դուք ։ Այլ և ննջելով մի՛ ծածկեսցես կապերտ ընդ այլում, այլ հարկաւորեցո զքեզ ինքն 'ի բազում աղօթս նախ քան ըզքուն մտանելն ։ Եթէ վաստակեսցիս 'ի ճանապարհի և կամեսցիս փոքր իւղով օծանել, զոտս քո միայն օծ՝ պատկառելով մերկանալ զնոսա. իսկ զմարմինս քո մի՛ ումեք թողուցուս օծանել առանց հարկաւորութե 'ի հիւան-

[1] Օրինակ Գ անփորձով ։

ղութենէ։ Եթէ գայցէ առ քեզ օտարական, այսպէս արասցես և դու նմա. զոտս նորա օծ և ասա նմա՝ թէ արա սիրելութիւն. առեալ դոյզն՝ արկ 'ի ներքսագոյնս քո. եթէ ոչ կամիցիս հանդերձ, հանգստեամբ տուր նմա հանգիստ։ Նստեալ քո 'ի սեղանն՝ տակաւին մանկագոյն գոլով՝ մի խշխեսցես ասել ումեք թէ քաղց կեր. այլ յիշեա զմեղս քո, զի մի կերիցես հեշտութեամբ, և ուտելով քո յանդիմանն կեր։ Պատմուճան քո եղիցի 'ի ծածկել զոտս քո, և ծունկք քո մածուցեալ առ միմեանս. և ուտելով քո մի յածեցուսցես զաչս քո այսր և անդր, այլ և ոչ խօսեսցիս յունայնաբանութիւնս. մի արկցես զձեռն քո 'ի սեղանն, եթէ ոչ նախ ասասցես՝ բարեբանեա։ Ըմպելով զջուր քո մի թողացուսցես զկոկորդ քո աղաղակել անուանաբար։ Նստեալ ընդ եղբարս քո՝ եթէ խօսս եկեսցէ 'ի բերան քո, մի ընկեսցես զնա առաջի նոցա, այլ արտաքս եղցես մինչ 'ի բաց հանցես զնա։ Եթէ յորանջ նեղեսցէ զքեզ, անդեա զըրթունս քո առ 'ի յոչ բանալ զբերան քո, և հանգիցես 'ի նմանէ. խոկ զգետ ամենեւին մի հաներ։ Եթէ եղիցի հարկաւորութիւն ծաղու, մի բացցես զբերան քո, զի բաւական է ժպտելն միայն բանութեամբ[1]։ Մի ցանկանայցես զինչ և իցէ մերձաւորին քո թէ տեսանիցես, կամ հանդերձ կամ կընդուղ կամ գօտի կամ աղաբողոն կամ թէ այլ նմանագոյն, և ոչ յագեցուսցես զցանկութիւն քո առնել քեզ ինքեան նման այնոցիկ։ Եթէ ստասցիս զրկանս, մի տր-տնջեսցես զզարդարութիւն նորա, վասն զի ոչ օգտեցուցանէ զանձն քո։ Եթէ գթեսցես յիմիք իրի, մի ասեր վասն ամօթոյ և մեղանչիցես, այլ արկ ապաշաւութիւն՝ թէ թողութիւն արա, և հանգիցես։ Եթէ լուիցես բանս խիստս կամ նախատինս, մի սպառնասցիս, այլ արագապէս արկ ապաշաւութիւն՝ թէ թողութիւն արա նախ քան զլինել բարկութեան։ Եթէ ոք քեզ սաստիցէ՝ եթէ ընդէր արարեր զայս իրս, մի խռովիր, այլ արկ ապաշաւութիւն՝ թէ թողութիւն արա ինձ, եթէ գիտես զիրան և եթէ ոչ գիտես. քանզի ամենայն այսոքիկ յառաջահաստութիւնք են մանկութեան։

1 Օրինակ մի լաւութեամբ։

## ՑԱՂԱԳՍ ԿԱՄԵՑՈՂԱՑՆ ԲՆԱԿԵԼ ԱՌ ՄԻՄԵԱՆՍ

Եթէ իցես բնակեալ ընդ եղբարս, պահեա զքեզ խոքըն ոչ համարձակիլ, իբր զի կարասցես կատարել զաւուրս քո խաղաղութ՟բ։ Գործելով զձեռագործ քո՝ խակացիր զնա երկիւղիւն այ, իբր զի մի մեղանչիցես անգիտութ՟բ. յամենայն ձեռագործս եթէ տացես զքեզ ուսանել, մի ամաչեր հարցանել զուսուցիչն քո՝ թէ արա սիրելութ՟ի, տես զայս՝ ազնիւ գործեմ արդեօք թէ ոչ։ Եթէ զքեզ կոչեսցէ եղբայր քո, գործելով քո՛ի ձեռագործական քո, փութացիր տեսանել զինչ կամի տալ եղբայրն քո առնել քեզ՝ արա և թող զքոյն։ Ուտելով քո եթէ սպառեսցես, մուտ ՚ի սենեակ քո և արա սպասաւորութ՟ի ՚ի սենեկին քում, և մի նստիս խօսել զվնասակարս անձին քո. իսկ եթէ հարք ուտեն և խօսին ըզբանս այ, ասա աբբային քո՝ եթէ կամիս՝ մնացից զի լուայց, եթէ երթայց. և զոր ինչ ասէն քեզ՝ արա հանդերձ հանգստեամբ։ Եթէ առաքեսցէ զքեզ վասն պիտոյից ՚ի քաղաք կամ ՚ի գեօղ, հարց զնա թէ ո՞ւր կամիս զի իջեվանեսցիս, կամ զինչ գնեսցիս կամ ո՞ր պէտս ունիս. և զոր ինչ քեզ ասէ, մի հատցես ՚ի նմանէ և մի յաւելցես։ Եթէ լուիցես բանս արտաքոյ, մի բարձցես զնոսա և եկեալ ասասցես զնա այլում. այլ եթէ խցցես զլսելիս քո, ոչ մեղանչէ լեզու քո։ Եթէ կամիս ինչ առնել, և ընդ որում կեաս՝ ոչ կամի զայն, թող զկամս քո, իբր զի մի եղիցի հակառակութ՟ի և տրտմութ՟ի։ Եթէ մերձցես բնակել ընդ եղբարս իբր պանդուխտ, մի հրամանս տար նոցա յինչ և իցէ իրս։ Եթէ մնասցես բնակել ընդ եղբարս, մի կամիցիս զնոսա չափել ընդ քեզ յիրս ինչ իւրեանց. և եթէ հրամայեսցեն քեզ բան զոր ոչ կամիս, պատերազմեցիր ընդ մտածութ՟ե քում և արա զի մի տրտմեցուսցես զնոսա։ Եթէ բնակէք ընդ միմեանս, և է գործ առնել սենեկին, վաստակեցէք ընդ միմեանս, մի խնայեսցես քո ինքեան մարմնոյդ։ Եթէ յարիցես հանապազ վաղագոյն, նախ քան զգործել խոկացիր ըզբանս այ. յետ այսորիկ եթէ է ինչ կազմել, եթէ ամանս լուանալ, եթէ յօրինել, եթէ այլ իրս առնել, հանդերձ փութով մի վեհերեսցիս. եթէ գործն է սակաւ,

և ասասցէ ոք եղբօր իւրում, եթէ բաւական եմ առնել զնա միայն, երթ գործեա զնա 'ի սենեկին քում, արա ունկնդրութի. զի որ հաւանի, ինքն է մեծ: Եթէ եկեսցէ առ քեզ օտարական, զուարթագին դիմօք ողջունեա զնա, և զոր ինչ բարձեալ է՝ առ 'ի նմանէ, եթէ մաշկեակ և եթէ քրձակ, առ 'ի նմանէ. տուր զնա խնդութե 'ի սենեակն քո և արա նմա աղօթել. ապա ասա նմա՝ թէ իբր ունիս, աբբայ, բաւական մինչև ցայս. և տուր նմա զրկունս զի խոկասցի: Իսկ եթէ եկն խոնջեալ, նախ լուա զոտս նորա, և առ զնա 'ի հանգնուլ. եթէ կամիցի խօսել յունայնաբանութիս կամ յաղագս զրպարտութե եղբարց կամ յանդիմանելոյ զոմանս, աղաչեա սիրով՝ եթէ թողութի արա ինձ, զի տկար եմ և ոչ կարեմ բառնալ. և մի համբերեսցես լսել: Եթէ իցէ հիւանդոտ և հանդերձք իւր աղտեղի իցեն, լուա նմա զայն. եթէ շամբուշ և ձորձ իւր պատառոտեալ իցեն, կարկատեա նմա զայն. իսկ եթէ շրջող է, և ունիս առ քեզ զոմանս սուրբս օտարս, մի մուծցես զնա առ նոսա, այլ արա ընդ նմա սիրոյն այ. իսկ եթէ իցէ եղբայրն օտարական, մի արհամարհեսցես զնա, այլ ընկալ զնա խնդութե ընդ սուրբսն. և եթէ աղքատ է, մի արձակեսցես զնա ունայն, այլ տուր նմա յօրհնութենէն այ, իբր գիտելով զի զոր ունիսն՝ այ է: Եթէ ոք եղբայր յաւանդ տայցէ քեզ զինչ և իցէ, մի իշխեսցես բանալ զայն առանց նորա. եթէ պատուական է իրն, ասա նմա՝ թէ տուր ինձ զայդ 'ի ձեռս իմ: Եթէ երթիցես յօտարութե կամ 'ի սենեակ եղբօր, և նա արտաքս ելցէ վասն իրաց ինչ և թողցէ զքեզ միայն, մի ամբարձցես զաչս քո նկատել զսենեկին ամանս, այլ և ոչ բացցես ինչ կամ պատուհան կամ անօթ ինչ կամ զրկունս. այլ ասա նմա յարտաքս ելանել նորա՝ եթէ զինչ կամիս զի արարից մինչև եկեսցես. և զոր ինչ ասէն քեզ՝ արա մի վեհերելով:

Մի՛ գովեսցես զոք զոր ոչ տեսին աչք քո. իսկ զոր լուարն, մի ասեր զայն որպէս թէ տեսեր: Մի՛ անարգ համարիր զոք վասն ձևոյ. մինչև զջուր քո արտաքս հեղլով՝ մի արհամարհեսցես, յիշեա զած զի հայի 'ի քեզ: Եթէ յառնիցես առնել զպաշտաւորութի քո, մի հանդերձ հեղգութե, և փոխանակ փառաբանելոյ զած զայրացու-

նես զնա, այլ կաց հանդերձ երկիւղիւ ։ Մ՛ի առ կողմնակա-ցես զքեզ յորմն. մի թողացուցես զոտս քո որպէս զան-ասուն ։ Մ՛արտիր ընդ մտածութեն քում. մի յախուռս խօսել 'ի գերութեն, իբր զի ընդունելի լիցի զոհ քո ա-ռաջի այ ։ Եթէ սաղմոսիցէք ընդ միմեանս, և իցէ օ-տարական ընդ ձեզ, ասա նմա զի արասցէ զաղօթսն. ա-ղաչեա զնա երիցս և չորիցս առանց հակառակութեան. Իսկ եթէ ոչ հաւանեսցի, որ սաղմոսէն՝ արասցէ զաղօթս իւր. Իսկ եթէ մանուկ է, ոչ ունի իշխանութիւն առնել մինչև յերիս ամս[1], և մարմին նորա ապառաժեալ եղիցի յամենայն խոնջութեն, պահեսցէ զինքն 'ի պճնողութէ հանդերձից. քանզի գլորումն անձին իւրում է ։ Զգու-շասցի ինքն 'ի գինւոյ, մինչև յերիս ըմպելիս 'ի հարկա-ւորութեան ։ Մ՛ի մերկասցի զատամունս իւր ծաղու, և դէմք իւր հայեսցին ընդ առաւելն հեզութեամբ ։ Իսկ 'ի քուն լինելումն եղիցի պարեգօտեալ, և սովորեսցի մի 'ի ներքս տանել զձեռն իւր 'ի ներքոյն իւր ննջելով. քանզի բազում ախտք մարմնական լինին զօրութեան յանդի-տութեն ։ Եւ հողաթափս սովորեսցի մի զգենուլ 'ի սե-նեկին իւրում. իսկ եթէ արտաքս ելցէ 'ի ճանապարհ, զգեցցի վասն հարկաւորութեն. պարկեշտ եղիցի հան-դերձիւքն իւրովք ։ Ուղևորելով ընդ աւագագոյնս քո, մի գնասցես առաջի նոցա. կալով ընդ լաւագոյնս քո, մի արհամարհեսցես նստելով, եթէ ոչ ասասցեն քեզ ։ Ե-թէ երթայցես 'ի քաղաք կամ 'ի գեօղ, պահեա զաչս քո, զի մի 'ի ներքս ժողովեսցես քեզ ինքեան պատե-րազմ 'ի սենեակն քո ։ Եւ մի ննջեսցես 'ի տեղւոջ կաս-կածելով անկանել 'ի մեղս. մինչ 'ի հանդերձս կանանց՝ եթէ հնար է՝ ոչ հայեսցիս. զի եթէ պահեսցես զաչս քո, ոչ ևս շնասցի սիրտ քո ։ Եթէ ուղևորեսցես ընդ ծերոյ, և ունի ինչ բառնալ, մի թողցես զնա բառնալ. Իսկ եթէ իցէք մանկագոյնք ուղևորելով, և ունիցիք ինչ բառնալ, բարձէք առ սակաւ սակաւ. որ բառնայն, ինքն առաջին գնասցէ ։

1 Օրինակ՝ է ամս ։



Digitized by Google

## ՅԱՂԱԳՍ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ

Եթէ ուղևորիցէք 'ի միասին, և իցէ հիւանդոտ մարմնով 'ի ձեզ՝ թողացուցէք զնա առաջի երթալ, զուցէ երբէք նեղեսցի՝ եթէ յետոյ ձեր գնասցէ, և ճանաչիցէք զգիտակցութիւն նորա։ Եթէ իցէք եղբարք 'ի միասին և երթայցէք յաւարութիւն, պատուեցէք զմիմեանս. եթէ յանձնառութեան, եթէ յաղօթս, եթէ 'ի սեղան, առնել զկրսն համօրէն համբաստեանք առանց հակառակութեան. եթէ միոյն երթիցէ մի հաղ, միւսն երթիցէ այլ երբեմն։ Եթէ հարցանիցես զծեր յաղագս միաբանութեանց քոց, մի թաքուցաներ 'ի նմանէ. իսկ եթէ կաս ընդ եղբարս, ազնիւ է քեզ լսել քան խօսել։ Եթէ լուիցես զյանցումն մերձաւորին քում, մի ասեր ումեք, վասն զի զշրջումն է անձին քո։ Եթէ լուիցես յեղբարց որ խօսիցին յաղագս միաբանութեանց, որ առակաւ լինին ընդ քեզ ոչ պատերազմեցան, մի կամիցիս լսել զայնպիսիս, զուցէ երբէք եղիցին քեզ պատերազմ։ Հարկեցո զքեզ 'ի բազում աղօթս 'ի գիշերի, զի լոյս է անձին քում աղօթքն. զնտա ած զքեզ լինել համապազ եթէ զինչ զթեցեր. և եթէ աղօթեսցես յաղագս նոցա, քեզ թողացու ած։ Եթէ հարկեսցի եղբայր բամբասել զեղբայր իւր առաջի քո, մի պատկառեսցես 'ի նմանէ և հաւանեսցիս նմա և մեղիցես յած. այլ ասա խոնարհութեամբ՝ թէ թողութի արա ինձ, եղբայր, զի առաւ պետ եմ, զայսպիսիս զոր ասես՝ ոչ բառնամ, զի իւք են։ Եթէ ոք զքեզ չարչարիցէ, և այլ ոք բամբասիցէ զնա առաջի քո, պահեա զսիրտ քո, զուցէ չարութի առաւելեսցի 'ի նմա. այլ յիշեա զմեղս քո։ Եթէ կամիս զի ած թողցէ քեզ, մի հատուսցես մերձաւորին քում։ Եթէ երթիցես յաւարութէ և ոչ գիտիցես զնոսա, թէ պէտ և իցեն փառաբանեալք, թող զանեցին աւագութէ. և եթէ երթիցես առ սիրելին քո, թող նոցա զանեցին յամենայնի, եթէ յանձնառութէ, եթէ 'ի սեղան. և մի եղիցիս իբր թէ յաղագս քո ընկալեալ զնոսա, այլ յաւէտ տացես նոցա զպատիւն ասելով թէ վասն ձեր աբարեալս ընդ իս ողորմութի։ Եթէ ուղևորեսցիս ընդ եղբարս, և եկեսցես 'ի տեղի և եղիցի անդ սիրելին քո,

Digitized by Google

և կամեցայ ասել նմա բան և թողցես զեղբարս 'ի սեղանոյն մեծաւ քեզ, եթէ սիրելին քո արգելցէ զքեզ որ չարաչարն վասն բանին ճաշակել, մի՛ ինչ ճաշակեր՝ եթէ ոչ կոչեսցէ զեղբարսն քո: Եթէ ուղևորեցայ ընդ եղբարս, և եղեն բարկութեք և երկեցեն 'ի սեղանս և է անդ սիրելին քո, և պատճառեցես ասել զնոսա իջևանիլ առ նմա զի բարկութեք են, մի արհամարհեցես թողուլ զնոսա և երթալ առ սիրելին քո. այլ խոնարհեցայց ընդ նոսա թէ զինչ պարտուպք ասել, և որ ինչ ասեն՝ լուր նոցա. այլ և զնալով ընդ նոսա եղիցիս նուաստախոհ յամենայնի: Եթէ երթիցես յօտարութի, և կամիցիս լուծանել առ ումեք եղբօր, և ոչ կամիցի զքեզ ընդունել, և տեսցես զնա 'ի ճանապարհի, կամ առ քեզ եկեսցէ լուծանել իբրև ստորակայն, արա ընդ նմա ողորմութի սաստել յողորմածոյն, և մի՛ ինչ նմա ասիցես, բայց միայն խնդա ընդ նմա: Եթէ լուիցես յաղագս եղբօր եթէ բամբասեաց զքեզ կամ չարախօսեաց զքեզ, և դիպեսցիս նմա կամ եկեսցէ 'ի սենեակ քո, զուարթագին զերեսք ողջունեա զնա, և ըստ զօրութե քում խնդացիր ընդ նմա, և մի՛ ասիցես նմա բան ամենևին յայնց լուարն. քանզի գրեալ է՝ թէ թողէք և թողցի ձեզ: Եթէ իջէք եղբարք յօտարութե և կամիցիք իջևանիլ առ ումեք եղբօր աղքատի, մի ծանրանայցէք նմա յաղագս կերակրոց. այլ գնեսջիք ձեզ զպէտսն մինչ առաւելեսցէ ձեզ, և բաւական եղիցի ձեզ ծածկոյթ իջևանի նորա, զի մի՛ տրտմեսցի եղբայրն: Եթէ բնակիցեն ընդ քեզ եղբարք և լսեն քեզ, հոգասցիր նոցա պիտոյս զիւրեա, զի համբերձեալ ես բան տալ այ յաղագս նոցա: Եթէ յօտարութի երթիցես յաղագս այ, մի կամիր խառնել ըզքեզ ինչն ընդ բնակիչս տեղւոյն, այլ և մի գտցի բան քո 'ի մէջ նոցա. զի լաւագոյն է քեզ առ քոյն ըստ մարմնոյ: Եթէ կամիցիս երթալ առ հայր 'ի լեառն կամ 'ի մենաստան, և երթիցես նախ առ սիրելին քո, մի երթիցես յայլոց սենեակ, եթէ ոչ նախ ասասցես նմա արդեօք կամի եթէ ոչ. և որ ինչ ասէ քեզ՝ արա, մինչ արտաքս ելցես 'ի նմանէն. և եթէ գնասցես 'ի նմանէն խաղաղութե, զխոնարհութի խոնարհեցելոցն հանգիցէ: Եթէ ասցես քեզ սենեակ իբր ստորակայն, մի թողուցուցեր քեզ ինչեան բազում սիրելիս. բաւական եղի-

Digitized by Google

ցի քեզ մի առ 'ի պատճառս հիւանդութեան, զի մի կո-
րուսցես զզօրութիւն աղօթութեան քո: Եթէ արասցես ո-
ղորմութիւն ընդ եղբօր աղքատի, մի կշտեսցես զնա 'ի պա-
հանջութեան քո, զի մի կորուսցես զվարձս ողորմութեան քո:
Եթէ մտցես առաւօտեան զղջ յեկեղեցին, և առաջացէ քեզ
նիստ աստ սակաւ մի, մի մտցես յայլ անկիւնս նորա առ 'ի
նկատել տեսանել նորա: Աղաւթելով քո 'ի սենեկի, մի առա-
ջիս ինչ երբէք խափանիչ քեզ 'ի պատուիրանաց եղբօրն
քո, եթէ պէտս ունիս նորա: Եթէ զպէտսն քո միայն
ունիս, և աւելորդ ոչ ունիս, մի կամիցիս զայն ցրել և
զտանիցիս ծախել. քանզի օգուտ բերէ մի 'ի պատուի-
րանաց քոց կորուսանել, քան զամբար մարմնոյդ քո երթալ 'ի
գեհեն: Եթէ հրաժարեսցես ըստ մարմնոյ վասն այլ, մի
թողացուցես զհեշտութիւն նոցա ձգել զքեզ, նստելով
'ի սենեկին, կամ գթալով 'ի հայր կամ 'ի մայր կամ
'ի սիրելութիւն եղբարց կամ քերց կամ զաւակաց ու-
սերաց կամ դստերաց կամ հեշտութիւն կնոջ զորս թո-
ղեր վասն այլ. յիշեա զժամ հարկաւորութեան մահուան,
զի ոչ ոք 'ի նոցանէ կարէ քեզ օգնել. և ընդդէմ ոչ թո-
ղուցուս զնոսա վասն առաքինութեան: Աղաւթելով քո 'ի սե-
նեկի, եթէ յիշեսցես յազգս սրտին չարչարանաց քեզ,
արի արագապէս աղօթեա բոլորով սրտիւ քո, խնդր զի
թողութիւն լինել նմա. և այսպէս մաքրութեամբ ընդդէմ
հալածեսցեն դադարէ 'ի քէն: Եթէ փորձեսցեն զքեզ
'ի գիշերի յանուրջս հեշտ ցանկութիւնք, պահեա զմիտս
քո 'ի տուընջեան. մի 'ի գերութեան վարել 'ի հեշտութէ
նոցա, խոյս զի մի 'ի վերայ բերցես զգուշութիւն անձին քում.
այլ անկիր առաջի նորա բոլորով սրտիւ քո, և օգնէ քեզ,
զի գթած է առ տառապեալս մարդոյ: Եթէ ես 'ի խոր-
տամբերութեան, մի քաջալերեսցի սիրտ քո 'ի նմա եթէ
նա զքեզ պահպանէ. այլ առաւ խոնարհութեամբ քում, եթէ
'ի ձեռն չարչարանաց մարմնոյս նոյն լուէ տառապանաց ի-
մոց: Եթէ ոք զքեզ թշնամանեսցէ կամ նախատեսցէ,
մի ընդդիմանար նմա մինչև լռեսցէ. եթէ քննեսցես ըղ-
քեզ խիղճս, դատեսցես 'ի քեզ խիղճ զոր լուար 'ի նմանէ.
այլ փութացիր նմա առնել ապաշխարութիւն, մինչև բարկու-
կեսցես զնա, և արագապէս ասել նմա ընդդէմն զմեղս: Ե-
թէ ուղևորեսցիս յուղւոջ ընդ եղբարս և է միաբանդ քո
ընդ քեզ, պահեա զքեզ խիղճս ոչ համարձակել ընդ նմա,

Digitized by Google

դացէ երբէք միջամտութեամբ զգիտակցութիւն այլոցն և մեղիցես: Եթէ երթիցես յաստուածութեան և մտցես առ առաջի իշխանաց, մի ակնկալցիս թէ ամենեքին ունիցին խնդալ ընդ քեզ. զի թէ միայն ընկալցին զքեզ, գոհասցիս զնա: Եթէ անկցիս 'ի հիւանդութիւն նստելով քո 'ի սենեկին, մի տրտմեսցիս, այլ առաւել գոհասցիս զնա: Եթէ տեսցես զանձն քո խոտեալ, ասա նմա թէ ընդէր խոտեալ. ոչ լաւագոյն է քեզ այս քան զգեհեանն յոր երթայոց ես. և մտածութիւն այս զարդարէ 'ի քեզ: Եթէ երթիցես առ եղբայրն, և ասասցէ քեզ մի ոք 'ի նոցանէն՝ թէ ոչ համբերեմ ասա, այլ ընդ քեզ կամիմ բնակել, մի տայցես տեղի, զի մի զբաղմունս գայթակղեցուսցես. ապա թէ ասասցէ քեզ՝ եթէ ունիմ կորուսանել զանձն իմ վասն ծանրակ մտածութեան, տուր նմա տեղի առ 'ի փախչել այլ ուրեք, և մի թողցես զնա բնակել ընդ քեզ: Զամենայն մտածութիւն պատերազմիչ քեզ մի պատմեսցես զնա յայտնել առաջի հարանց քոց, և համբերեսցես. զի ոչ է խնդրութիւն զիւրացն, եթէ ոչ յոր ժամ մարդ ծանէ զմտածութիւն իւր: Նստելով քո 'ի սենեկին, տուր զգուշութիւն մարմնոյ քո ըստ բաւականութեան, զի կարասցես կալ երկար 'ի սպասաւորութեան քում. մի կամեսցիս երթալ 'ի տեղիս բազումս. իսկ արտաքոյ ելեալ սենեկին քո, զամենայն կերակուր առաջի եդեալ քեզ մի կերիցես յագուրդ հանդերձ ցանկութեամբ: Եթէ հաւանեցուսցեն զքեզ գալ 'ի կրօնաւորութիւն զոր ոչ կարես համբերել, մի լուիցես նոցա. քանզի ջերմուցանեն զմիտս մարդոյն յոր ոչ կարէ, մինչ զի անկցի 'ի ձեռս նոցա, և խնդասցեն 'ի վերայ նորա. զի ամենայն ինչ դիւաց յանհնարաւորութենէ է: Ի հաց կերիցես յաւուրն և տացես զպէտս մարմնոյ քում, զի յարիցես տօնականին կատարելով զհսկումն քո: Եղիցիս համբերող պնդակեցութեամբ, և մի վերջացուցես 'ի նմանէ զպէտս իւր, այլ զպատուաւորութիւն քո արա յօժարութեամբ հանդերձ երկիւղիւն այ: Բաւականասցի քեզ կէս գիշերոյն առ 'ի հանգիստ մարմնոյ քո, իսկ մնացորդ գիշերոյն առ 'ի սպասաւորութիւն պաշտամանն քո: Եթէ տեսցես ըզմտածմին քո վհատեալ, ասա նմա թէ համբերել կամիս 'ի փոքր ժամանակիս յայսմիկ և երթալ 'ի յաւիտենականն տանջանսն, եթէ չարչարել կամիս առ փոքր մի ժամա֊

նակ և հանգչել ընդ ատրբա․ և եթէ հարկեցուցանէ ըզ-
քեզ ամսաւ ամսաւ, գայ 'ի քեզ զօրութիւն։ Եթէ մե-
նակ ես և ունիս քեզ ծառայ, և թողցես զնա քեզ ին-
քեան, նախատես զձեռն․ եթէ շնորհես զնա այլում, մե-
ղանչես Տեառն․ իսկ եթէ կամեսցիս մենակ լինել, մի
թողցես զնա բնակել ընդ քեզ, զի ոչ օգտեցուցանէ
զանձն քո․ այլ ազատեա զնա, և ուր կամի բնակել բնա-
կեսցէ։ Եթէ ես հրաժարական ոչ թողուլ քեզ ինքեան
զինչ իցէ, և տեսցես զքեզ ինքն կամեսցես շինել լի-
նել՝ առակաւ լինելոյ քո ակամ զգայութիւնք՝ թափծէ
անձին քում շինող լինել․ այլ առաւել վաստակեսցիր 'ի
գործս ձեռաց քոց, զի դադարեսցես 'ի սնոտեկենն քում,
ուտելով զհաց քո հանդերձ հեզութեամբ։ Եթէ երթի-
ցես 'ի քաղաք կամ 'ի գեօղ վաճառել զձեռագործական
քո, մի հակառակեսցիս 'ի գինս նորա որպէս զաշխար-
հականն ոք․ այլ տուր զնա որպէս և վայելուչ է, զի մի
կորուսցես զզօրութիւն սնոտեկեն քո։ Եթէ գնես այլա
ինչ սնոտեկեն, մի հակառակեսցիս 'ի գինս նորա թէ ոչ
այսքան՝ ոչ տամ․ թէ ոչ ունիս զգինս, թող զնա հանդերձ
տեառն հանդերձ։ Եթէ առաւել ոք քեզ յեղանակ
թէ առա սիրելութիւն՝ գնեա ինձ զայս ինչ, երթեալ 'ի
վաճառ քո՝ որպէս գնես քեզ ինքեան, և նմա գնեա։
Եթէ եղիցի քեզ հարկաւորութիւն երթալ 'ի գեօղ վասն
հարկի այլաշխարհի, առաքեա զքեզ ինքն 'ի կամսանց․ մի խառ-
նակեսցիս ընդ նոսա, զի մի 'ի նմանէ ընդ քեզ բերցես զե-
րութիւն 'ի սնոտեացն քո։ Եթէ փոխ առցես եղբօր աղ-
քատի զինչ և իցէ, և գիտիցես զի ոչ ունի հատուցա-
նել, մի ինչ նմա ասիցես, եթէ կերակուր իցէ, եթէ
հանդերձ, եթէ զինչ իրք և իցէ։ Եթէ երթիցես բնա-
կել 'ի անապատ և առցես սնոտեակ, և ծախս հանցես 'ի
նմա առ 'ի շինուածն, և յետ ժամանակի խոյս զնա-
ցես 'ի անապատէն յաղթանակաւ, և այլ եղբայր առցէ զսե-
նեակն, և դարձցես յետ ժամանակի 'ի անապատն, մի հան-
ցես զեղբայրն 'ի սնոտեակէն և մեղանչիցես յոյժ․ այլ ե-
թէ կամի խաղալ կամակցութեամբ առաքեա եղանել 'ի սն-
նակեկին, անապարտ ես։ Եթէ առաքեա կացես 'ի սնոտեակն,
ամ․ս մի առցես զաղէտան 'ի նմանէ, այլ թող զնա վասն
այլոյ եղբօր աղքատի, և քեզ հոգայ զգեստ տուր և երթաս։
Հայեսցես 'ի քեզ ինքն 'ի ժամու հաղորդութեանն խոր-

Digitized by Google

հրդոյն, գուցէ ունիս ինչ զումերքէ և առնուցուս 'ի դա- տապարտութիւն անձին քո: Եթէ յայտնեսցի քեզ բան 'ի գիտութէ առ 'ի յայլաբանել զնա, այլաբանեա. բայց մի դիր քեզ ինքեան մի խափանել զգիրն, զի մի հա- ւատասցես քոյին գիտութեանդ քան սուրբ գրութեանն. զի նշանակ է այս ամբարտաւանութեան: Եթէ մոլորեսցի եղբայր քո 'ի սուրբ հաւատոց անգիտութբ, կամ թէ պատրեսցի 'ի հերձուածողէ, եթէ դարձցի՝ մի արհա- մարհեսցես զնա, զի ոչ իւրովք կամօք գլորեցաւ: Պա- հեա զքեզ ինքն 'ի հերձուածողաց առ 'ի յոչ դատել ընդ նոսա՝ կամեցեալ հաստատել զհաւատս, իբր զի մի շփոթեսցի սիրտ քո թունիւք բանից նոցա և վտանգես- ցես: Եթէ գտցես զգիրս հերձուածողացն, մի կամիր վերծանել զնոսա, զի մի լցցի սիրտ քո թունիւք մահու. այլ յոր միաբանեցարն՝ այնպէս ողջոյն կալ, մի յաւելուլ և մի պակասեցուցանել. իբր զի արասցես զամենայն ժա- մանակս քո 'ի հանգստեան: Եթէ մանկագոյն ես և տա- կաւին ոչ կատարեցեր զծառայութիւն չարչարանաց մար- մնոյդ, և լուիցես յաղագս մեծամեծաց առաքինութեանց հարանց, մի կամիր հասանել յայնոսիկ աներկբայ. քանզի զի ոչ գան քեզ, եթէ ոչ արասցես զերկրագործութիւն նոցա նախկին. իսկ եթէ կատարեսցես զերկն նոցա, են- քեանք 'ի քեզ գան. և պահեա զքեզ 'ի տխմարութէ, զի սա կորուսանէ զամենայն պտուղ մենակեցի: Եթէ հարցանիցեն յաղագս ախտից, մի վեհերիր, այլ անկիր ասա- ցիր մի բոլորովն սրտիւ քոյով՝ եթէ, տէր, ես ինչ ոչ գո- րեմ. և օգնէ քեզ արագապէս: Եթէ մարտնչիս ընդ թշնամիսն քո և տեսցես զնոսա հեռացեալս 'ի քէն, մի խնդասցես 'ի սրտի քում. քանզի չար թոյնք դիւացն յետոյ իւրեանց է. քանզի պատրաստեն պատերազմ չարագոյն քան զառաջինն, և թողուն զնա հեռոյ քաղա- քին և պատուիրեն նմա ոչ շարժել. և եթէ ընդդիմա- ցես պատերազմելով ընդ նոսա, յանկարծ փախնուն 'ի քէն խորամանկութբ: Իսկ եթէ բարձրագոյն ելցես և քաջալերեսցես 'ի զօրութեան քում, և թողցես զքա- ղաքն հալածելով զհետ նոցա, և նոքա տեսցեն զի թո- ղեր զքաղաքն, ոմանք ընդդիմանան առաջոյ, իսկ այլքն քամնեն 'ի յետոյ և պաշարեն զթշուառականն 'ի միջի իւրեանց՝ ոչ ունելով ուր փախիցէ. բայց ամենայնիւ ա-

Digitized by Google

առաջի Ած ամենատաղաւարին, այս է քաղաքին. որ որք պատուահեալ առաջի Ած ամենակալին բողոքով սրտիւ խորով, օգնեացէ նմա յամենայն 'ի փորձութենէ։ Եթէ աղաչես զԱծ օգնել յաղագս փորձութեան, և ոչ լուիցէ քեզ, մի վհատիցիս, զի ինքն գիտէ զօգուտն քո քան զքեզ. Եթէ աղաչես զԱծ վասն ամենայն հայցմանն քո, մի ասեր եթէ բարձ զայս յինէն կամ տուր ինձ զայս, այլ աղօթեա այսպէս. Տէր Յս, դու ես օգնական իմ, 'ի ձեռս քո եմ, դու գիտես զօգուտն իմ, օգնեա ինձ։ Մի թողուր զիս հեռանալ 'ի կամաց քոց, մի թողուր զիս կորնչել 'ի մեղս իմ. գթա 'ի ստեղծուածս քո. մի ընկենուր զիս յերեսաց քոց վասն մեղաց իմոց, զի առ քեզ ապաւինեցայ։ Բժշկեա զանձն իմ, զի մեղայ քեզ. առաջի քո են ամենայն նեղիչք իմ, և ոչ գոյ ինձ ապաւէն բայց 'ի քէն, Տէր Տէր։ Կեցո զիս ըստ ողորմութեան քում, և ամաչեսցեն ամենայն յարուցեալքն 'ի վերայ իմ որք խնդրեն զանձն իմ կորուսանել զնա. զի դու, Տէր, կարող ես յամենայնի, և քո են փառք յաւիտեանս։ Ա՛չ. յայնժամ գիտակցութիւնն խօսի հանդերձ սրտիւ քո ծածկաբար, թէ վասն որոյ իրք կամ որոյ ոչ լուէ քեզ Ած։ `Ոչ է այսուհետև ոչ արհամարհել զնա, այլ զինչ ասէ քեզ՝ առնել։ `Քանզի անհնար է Այ լսել մարդոյ, եթէ ոչ 'ի բաց հատցէ զկամս իւր և լուիցէ Այ. զի ոչ է հեռի 'ի մարդոյ, այլ չարութեան գործքն մեր պարապեն զմեզ 'ի նմանէ առ 'ի յոչ լսելոյ մեզ։ Կացցուք պատուհեալ, սիրելիք, յերկիւղն Այ պահպանելով, կատարելով զձեռագործսն մեր, ոչ տալով զայթակղութիւն գիտակցութեանն մերոյ, այլ հայելով 'ի մեզ ինքեամբ երկիւղիւ, իբր զի ազատեսցէ զմեզ և եղիցի մեզ պահպանութեան ապաքերուցանելով զմեզ ի խրախճանչիւք որք յորս անկանիմքն. գուցէ երբեք հեռացցի 'ի մէնջ, և անկցուք 'ի ձեռս թշնամեացն մերոց և ոչ ողորմեսցին մեզ. որպէս ուսոյց զմեզ Տէրն մեր Յս ասելով՝ եթէ ծանիր զոսոխն քո մինչ 'ի ճանապարհի ես ընդ նմա, գուցէ երբեք մատնեսցէ զքեզ դատաւորին, և դատաւորն առաքելոյն տացէ զքեզ սպասաւորացն, և սպասաւորն արկցէ զքեզ 'ի բանտ. ամէն ասեմ քեզ՝ ոչ ելցես անտի, մինչև զվերջին խերևէշն հատուցես։ Ոսոխն զգիտակցութիւնն ասէ զսա, զի ընդդիմամարտ մեր-

զայն կռամոլեցելոց պանծալ զկնանն իւր ընդ մարմնոյ. և ե-
թէ ոչ ընկեցէ նմա, մատնեսցէ զնա թշնամեաց իւրոց։
Սամն այսպիսիկ՝ սգացեալ Ովսէէ զԵփրեմեան աւէր. յաղ-
թահարեաց Եփրեմ զատոխ իւր և կոխեաց զիրաւունս.
խնդրեաց զԵգիպտոս, և թանուբեամբ յափշտակե-
ցաւ յասորացիս։ Արդ զԵգիպտոս՝ զի խնդրեաց սիր-
տըն զախտս. իսկ յափշտակեալն յասորացիսն ասէ, զի
կամելով և ոչ կամելով ծառայէ թշնամեացն իւրոց։
Զգուշասցուք այսուհետև զմեզ, սիրելիք, առ 'ի յոչ
անկանել 'ի ձեռս կամացն մերոց ըստ մարմնոյն. զուգէ
առնուն զմեզ յասորացիսն, և լսիցեմք դառնում բանք՝
եթէ եկն թագաւորն ասորացւոց յերկիրն Իսրայէլի, և
փախստականեցոյց զԵփրեմ և զԻսրայէլ յասորացիս, և
բնակեցոյց զնոսա յԱլաթ, և Յաբովր առ գետովն Գոզա-
նայ և 'ի լերինս Մարաց մինչև 'ի սերկեան օրս։
Յայտնեաւ առաքեաց թագաւորն Ասորւոց յազգէն իւր-
մէ առ 'ի բնակել յերկիրն Իսրայէլի, և իւրաքանչիւր
ոք աստուած իւր դրօշեալ պաշտել զնա. և այս եղև Եփ-
րեմի, զի յաղթահարեաց զատոխն իւր և կոխեաց զիրաւ-
ունս։ Տեսէք, եղբարք սիրելիք, զհետևացեալն կա-
մաց իւրեանց ըստ մարմնոյ զինչ եղև նոցա։ Մի նմանե-
ձեսցուք այսուհետև ընդ նոսա, եղբարք սիրելիք. այլ
նախանձեսցուք ընդ ամենայն սուրբս, որք ոչ լսեցին մե-

· 1 Ճառընտիրն այսպէս ներբողեան-
ներանն առ այսպէս. Եւ արդ զի
այն լեզի, նախանձաւոր լեզուք
արտօցն, որք ոչ լսեցին մեղացն մին-
չև 'ի մահ, այլ լսեցին սրբոյ գի-
տակցութեան ըստ այդ, մինչ զի ծա-
ռանդեցին զայրացայրութիւնն յաւի-
տենական. քանզի նախատակեցան
ընդդէմ թշնամեաց իւրեանց և ոչ
անձանց ձաստակեցին։ Ոչ որպէս
մեք առնեմք. զի առնեմք զկամ-
սակն մեր, այլ ոչ պահեմք զնա.
նուաճեմք 'ի սենեկի, և ներքին մարգա
մեր աղտեղութեամբ յանդիմանեայ. առ-
նեմք առաքինութիւն, այլ գե-
րութեան կորուսանէ զնա 'ի մենջ.
առնեմք զպահս, այլ բամբասան-
քըն զերծուն զնա 'ի մենջ. յաղ-
ագեցուցանեմք զմարմինս մեր յաղ-
խստութեան և յերգս, այլ մեծափառ-
ութեան կորուսանէ զնա 'ի մենջ.
խոնարհեմք 'ի բանս այդ, այլ խոստեղն
մեր զունայնաբանութեան աշխարհի՝
խափանէ զնա 'ի մենջ. տամք ող-
ջոյն մեր կարօտելոց, և սնոտիու-
թիւն և արհամարհանք մերձ կա-
լով կորուսանէ զնա. գտանեմք սե-
րն Աստուծոյ մերում, և ագահութեան
և չարակնութեան կորուսանէ զայն
'ի մենջ։ Յամենայն յայսպիսի ան-
կանիմք, զի ոչ հետեւանիմք զխոստ-
ութեան մերոյ որ ըստ այդ։ Նմանա-
տակեսցուք այսուհետև, եղբարք,
պահելով զաշխատութիւն մեր. և
մի կորուսանել, որպէս զի գտցուք
զողորմութիւն ընդ սուրբս ամենայն,
որ պահեցին զաշխատութիւն իւ-
րեանց 'ի ձեռն շնորհին այդ։

Digitized by Google

ղացին մինչեւ 'ի մահ. այլ սիրեցին զառաւել զխոնարհութիւն իւրեանց ընդ մեզ, մինչ զի ժառանգաւորեսցուք զարքայութիւն յաւիտենականն 'ի Քս Յս 'ի տէր մեր. որում փառք այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից։

## ՑԱՂԱԳՍ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ

Որ ոք պահէ զնոսա, կարէ ապրել 'ի գեհենէն, եւ հանգչի ուր եւ կամի բնակել՝ եթէ 'ի վանս, եթէ յանապատի, եթէ 'ի մէջ մարդկան։ Նոյն ծերն՝ եթէ պարտ է մարդոյ մեռանել յընկերէ խորշէ առ յոչ դատել զնա յինչ եւ իցէ իրս։ Որ ոք տեսանէ զիւր մեղս, ոչ տեսանէ նա զընկերին իւրոյ. եւ եթէ ոչ կարծի մարդ զինքն առ մեղաւորս, ոչ լսէ նմա Ած։ Իսկ՝ եթէ ոչ բառնի գործն միաբանեսցի ընդ աղօթիցն նորա, ընդունայն վաստակի. եւ յորժամ մարդն թողու զկամս իւր, յայնժամ առնու Ած ընդունելի զաղօթս նորա։ Իսկ մեռանելն յընկերէ խորշէ այս է. յոչ դատել զնա եւ անհոգ լինել յամենայն մարդոյ. մի առնել թէ սա աղքատ է եւ միւսն չար. մի առնել չար ընկերին. մի անարգանել զայն որ առնէ չար ընկերի իւրում. մի հաւանեսցիս երբեք չարախօսին ընկերին իւրում. մի անսեր առնէր զայն որ առնէ չար ընկերին իւրոյ։ Մի չարախօսեր զումեքէ, եւ մի հաւանիր ընդ նմա որ չարախօսէն, եւ մի խնդար ընդ նմա որ չարախօսէն եւ կամ ընդ չարախօսութեան նորա։ Մի ատեր զայն որ թշնամին լինի ընկերին իւրոյ, եւ մի հաւանեսցիս թշնամութեան նորա. մի ունիր թշնամութիւն ընդ ումեք։ Իսկ կատարած ամե այս է՝ ոչ դատել զոք. եւ այս իսկ ինքն է մեռանելն, եւ այս է՝ թէ մի դատէք զի մի դատիցիք. եւ այս է խաղաղութիւն ընդ ամենեսին։

Յիշեա զարքայութիւն երկնից, զի ցանկութիւն նորա ձգեսցէ զքեզ առ ինքն. յիշեա զգեհեն, զի ատեսցես զգործս չարս. յիշեա զի բան պարտիս տալ Այ, եւ ոչ մեղանչես Այ. պատրաստեա զքեզ պատահել Այ, եւ պատ-

1 Եթէ ոչ հաւատարիմ ամենայն գործք աղօթիցն, ունայն աշխատանք յաղօթս. քանզի յորժամ զայն ինչ ոչ արասցուք յորմէ աղօթեմք թէ փրկեա զմեզ, եւ դարձեալ թողեալ զկամս մեր արասցուք զկամս Այ, յայնժամ գիտեմք զի լսէ նա զաղօթս մեր։

Digitized by Google

ցես զամենայն կամս նորա․ դատապարտեա զքեզ աստ, և ոչ աշխատեսցիս 'ի ժամ մահու դատապարտանելոյ․ փորձեա զքեզ իբրև թէ զիր ամառ յաղթեցեր, և յայնժամ ունիս համարձակութի մեծ առ ած․ Մի՛ ունիր զքեզ առաւել այլոց, քանզի ամենեքեան ընդ ախտիւք եմք․ մի բարձրամտիր որպէս թէ ուղղեցեր զքեզ, քանզի ոչ կարես հաւատալ թշնամեաց քոց մինչև ցժամ վախճանին քո․ մի վստահանար դու յանձն քո, մինչև անցցես ընդ իշխանութիս խաւարի․ զուարթ կաց 'ի շնչեան որ բերեն քեզ սրտմտութի, զի մի արասցեն քեզ նեղձել և տրտմեցուցանել․ քանզի տրտմութի որ ոչ է ըստ այ՝ մահ գործէ։ Նախ՝ սիրտ կալ 'ի խորհուրդս քո, և թեթևացին 'ի քէն 'ի բաց, զի զերկնչաս 'ի նոցանէն ատենեն խոատել 'ի ծանրութենէն խղճեանց։ Որ երկնչի յաղգալեացնոցա, յայտնի զինքն առնէ թէ անհաւատ է առ ած․ իսկ եթէ ընկեսցէ զինքն առաջի Տն, հզօրագոյն եւս քան զնոսա լինի։ Ահա հնազանդացաւ, նա ինքն գիտէ զզօրութիւն Տն․ որ ոք խնդրէ զանձն իւր կեցուցանել, պարտաւէ ինքն կորուսանել զամենայն ախտ իւր զմարմնականս յինքենէ 'ի բաց․ պատկանն պսակի, զի յաղթեաց զթշնամիս թագաւորին․ և եթէ ոչ էին ախտք, ապա ոչ իսկ լինէր գոյին առաքինութիւնք։

Իսկ եթէ եմք ձանձրացեալք յայժ, յայտնի եմք իբրև զմատնիչս․ քաջ սիրտ օգնութի է անձին յետ այ, որպէս օգնութի է չարութե ձանձրութի։ Իսկ զօրութի անկեալոցն 'ի փորձութի այս է, չկարծանել և չնեղել․ իսկ զէնք առաքինութե են աշխատութիւնք հանդերձ գիտութե․ իսկ յուլութի և դանդաղութիւն մեր ծնանի զախտս․ քանզի ոչ դատելն զընկերն՝ պարիսպ է ամուր, որ գիտութե պատսպարեալին․ իսկ պարսաւելն զընկերն իւր՝ աւերէ զպարիսպն հանդերձ գիտութե․ իսկ պահելն զլեզուն՝ յայտնի առնէ թէ գործունեայ է, քանզի չժուժկալութի լեզուին նշանակէ թէ միտքն իւր չեն յառաքինութե։ Գիտութե հանդերձ ողորմածութեն ծնանի զյառաջատեսութիւն․ իսկ ոչ գթալն նշանակէ թէ չէ առ նմա սէր։ Աներեսութի ծնանի զլրբութիւն․ իսկ զբաղելն ծնանի զախտս, և խստասրտութիւն ծնանի զպարկութի և զզուր ցասումն։ Ճգնութի անձին այս է, զի ոչ ուրեք յանձնեսցի ընդ վայր․ իսկ ձրգ-

նութիւն. մարմնոյ է անձկութիւն նեղութեան ։ Իսկ յանգումն անձին է զբաղումն. բայց ուղղութիւն նորա է դադարումն 'ի տան հանդերձ գիտութեամբ ։ Յագումն քնոյ է զօրութիւն ախտից, բայց փրկութիւն անձին է տքնութիւն. քուն հանդերձ յագմամբ՝ բազմութիւն երազոց է, բայց տքնութիւն հանդերձ գիտութեամբ զուարթացուցանէ ըզմիտսն. քուն բազում թանձր առնէ զմիտսն, բայց տըքնութիւն անօսրէ զնա. բարի է քուն հանդերձ լռութեամբ, քան տքնութիւն ընդվայրաքննութեամբ ։ Իսկ սգալն հալածէ զչարութիւնն հանդերձ անխռովութեամբ ։ Իսկ ոչ հարկանել բարանօք ինչ զխիղճ ընկերին ծնանի զխոնարհութիւն յոգւոջ, բայց փառասիրութիւն ծնանի զհպարտութիւն. և հայելով 'ի դատաստանս ա̃յ ծնանի զերկիւղն ա̃յ, բայց շշնջելն հանդերձ բարանօք զխիղճ ընկերին՝ հալածէ զառաքինութիւն ։ Մեր մեծ առ ա̃ծ դարձուցանէ զգերութիւն, իսկ աներկիւղածութիւն մեր զարթուցանէ զնա. բայց ուղղել զխորհուրդսն հանդերձ լռութեամբ ածէ զգիտութիւն ։ Իսկ շատխօսութիւն մեր ծնանի ձանձրութիւն և մոլորութիւն. և ոչ կատարել զիւր կամսն՝ նշանակէ եթէ են միտք յառաքինութեան, և առնել զիւր կամսն՝ նշանակ է անգիտութեան ։ Բայց խոկումն յերկիւղն աստուծոյ պահէ զանձն յախտից. իսկ շաղփաղփութիւնք և խօսք մարմնականք՝ գերեն զնա յառաքինութենէն ։ Սիրել զհիւթս խափանէն զմիտսն յառաքինութենէ, բայց հրաժարելն 'ի հիւթոց երկրաւորաց նորոգէ զմիտսն. և ոչ ասել զխորհուրդս իւր՝ զարթուցանէ զնոսա, իսկ որ համարձակին ասել զխորհուրդս իւր առաջի հարցն՝ հալածէ զնոսա յինքենէ ։ Որ խառնէ ըզբանս իւր ընդ աշխարհականս, խռովէ զնոսա և զսիրտ իւր, և ամաչեսցէ յաղօթելն իւրում առ ա̃ծ ։

Մի կապեր զքեզ 'ի բազում պատճառս կամ յիրս ինչ երկրաւորս, և խորհուրդք քո ոչ ևս խռովեն զքեզ ։ Մի ունիր թշնամութիւն ընդ ումեք, ապա թէ ոչ՝ ևս անընդունելի լինին աղօթք քո ։ Խաղաղութիւն կալ ընդ ամենեսեան, զի համարձակութեամբ հանդերձ աղօթեսցես[1] ։ Մի կամիր լսել զյանցանս զայնոր որ տրտմեցուցանեն

1 Յաւելուած յերկրորդ Եւրոփանաւինէն. Պատմեա զյանցանս քո ըստ իւրաքանչիւր կերպարանացն, զի ուսանիցես թէ յումմէ առնուս թողութիւն, զի այնպէս շնորհակալ առ բարերարն լինիցիս ։ Ցանկալիք

Digitized by Google

զքեզ, զի մի և դու անկցիս. եթէ խորհուրդք քո խոր-ճեն ինչ եթէ եղբայրն քո տրտմեալ է վասն քո, դու մի արհամարհեր զնա, այլ անկիր 'ի զեղջ յոտս նորա, մինչև հաւանեցուցես զնա գալ 'ի զղջումն։ Մ'ի լինիր խստասիրտ յեղբայրն քո, զի մի անընդունելի լիցին աղօթք քո. և եթէ բնակես դու ընդ եղբարս, մի հրամայեր ստորնոցն յիւր ինչ, զի մի կորուսցես զպտուղն քո։ Կործեա զձեռագործն քո, զի հանգիցէ եղբայրն 'ի հացէն' քումմէ. քանզի զաստուածպաշտութիւնս բերէ և յաճ-ցանս մեծ անձինն, և անընդունելի են աղօթք նորա։ Որ ոք հայի յիւր մահն, ոչ մեղիցէ շատ. իսկ որ ոչն յիշէ, ընդ բազում մեղս շաղապատի։ Որպէս որ պատրաստեալ է զինչս տալ բանս այ, հոգասցի յաղագս մեղաց իւրոց յամենայն ժամ։

Եթէ մնացէ 'ի սիրտ քո խորհուրդն հպարտութեան, յիշեա զի այն է որ կորուսանէ զաշխատութիւն քո, և ոչ գոյ 'ի նմա ապաշխարութիւն։ Իսկ եթէ արհամարհութիւն պատերազմեսցի ընդ քեզ վասն ընկերին քո, յիշեա զայն եթէ յաղագս այսորիկ իսկ մատնէ զքեզ 'ի ձեռս թշնամեաց քոց։ Եւ եթէ չարախօսութիւն ընդ քեզ պատերազմեսցի, յիշեա զի եթէ լսէ' ցաւ է նմա ընկերին քում, և այսպէս դու ամօթ հաճոյեսցիս պատուհասել նմա։ Պահեա զաչս քո, և սիրտ քո ոչ անկցէ բազում չարիս և անօրէնութիւնս. պահեա զլեզու քո, զի մի անձամբ անձին ժողովեսցես քեզ պատերազմ, և մի արհամարհեսցես դու զպաշտօնն քո զլուսաւորեր անձին քո։

Ընդ այսր ամենայնի որոշողութիւն խորհրդոյն է պէտս և կատարումն. և անհնար է լինել որոշողութեան, եթէ ոչ նախ զերկրպագութիւն նորա ստասցես։ Յառաջ-ապաշխարութիւն 'ի մտին. իսկ զապաշխարութիւն ծնանի զհեզութիւն, իսկ հեզութիւն ծնանի զպարտաւորս, իսկ արտասուաց ծնանի զերկիւղ, երկիւղ զխոնարհութիւն, և խոնարհութիւն ծնանի զյառաջատեսութիւն, իսկ յառաջատեսութիւն

զխորհուրդս քո անուաղութիւն կերակրոց, զի մի զձայն պատռնկութեան այլ զգաստութիւն խօսեսցի։ Ամենայն ոք ընդ զգոյր ծառայի իւրոց, իսկ որ թշնամանեսցէ է՝ ստակամ ամենայն զնա. Գայլ զգացեալ ընդ նորա եկեղեցւոյ և մնացէ խաղաղութեան և այսպէս պատանեկութեան որ զնա զգուշացեալ իսկ կենցաղս։ Ի զօրն է յաղթս բանտարկեալ զանձինս. քանզի այսու ոչ զատանէ 'ի մեղ նմա յաւիտեան։

[1] Ի հոգիս քո.

ծնանելի զաւէր, և սէրն ծնանելի զանձն անցոյց և անապատ: Այլ որ ոք կամի գալ յառաքինութիւն յայսմանիկ, անհոգ եղիցի յամենայն մարդոյ՝ եթէ նա ազնիւ է և մեծատուն չար. և պատրաստեսցէ յամենայն ժամ զինքն 'ի մահ, և քննեսցէ թէ զինչ է որ մերժէ զնա յԱյ, և խափանեսցէ զայն 'ի բաց, և ատեսցէ զաշխարհ և որ ինչ յերկրի է, և յայնժամ ապա բարերարութիւն Այ ընդունելի զնա:

Արդ. աղաչեմ զամենեսեան ոյք սիրէք զաւէր, պահել զինքն 'ի գինւոյ, քանզի նա յարուցանէ զամենայն ախտս և հալածէ զերկիւղն Այ յանձնէ, և ապա թշնամիքն մեր վաղվաղ 'ի զօրականութիւն պատերազմի և մարտի 'ի վերայ տառապելոց անձինն, կամելով նոցա մերժել և արտաքսել զնա յԱյ, մինչև ժառանգեսցեն զնա: Յաղագս այնորիկ անունն և զօրէն յինքեանս 'ի բաց զզօրութիւն խորեանց զընդդէմ ճակատեալք մարդոյն: Այլ մի հաւատար դու քեզ եթէ տեսցես զքեզ առ ժամանակ մի հանգուցեալ յախտիցն. քանզի 'ի բացեայ զօրէն զինքեանս, առնլով առ վայր մի և ժամանակ մի հանդերձ խորամանկութեամբ, զի անձն յուլասցի, կարծելով 'ի մտի խորհուրդ այսպէս՝ եթէ հանգեայ: Այլ յայնժամ ապա յանկարծակի վազեն 'ի տառապեալ անձն և յարձակեսցեն զնա իբրև զձագ ձնձղուկ մի, և թերևս զօրագոյն քան զնա լինին. յամենայն մեղս մեծս և չարագոյնս խոնարհեցուցանեն զմարդն անողորմաբար չարագոյն և դժնդակաբար քան զառաջինն:

Վասն որոյ աղաչելով զձեզ յաղագս այսորիկ տէր մեր պատուիրեաց ասելով՝ եթէ լերուք պատրաստք յամենայն ժամ, քանզի ոչ գիտէք զժամն յորում գալոց. մի գուցէ յանկարծակի եկեսցէ և գտցէ զձեզ 'ի քուն: Այլ դարձեալ ասէ. ահա առաքեմ զձեզ իբրև զոչխարս 'ի մէջ գայլոց. մի ինչ բառնայք ընդ ձեզ 'ի ճանապարհս: Արդ. յորմէհետէ ոչ ինչ ունէին նոքա զգայլոցն, ոչ ևս զօրէին նոքա զնոսա ուտել և վնասել: Այլ դարձեալ ասէ. եթէ որ սիրէն զիս, զբանս իմ պահեսցէ. և որ սպասէ զբանս նորա, գայ ընդ նմա 'ի խաչն. քանզի խաչն Քի է ժուժկալութիւն յամենայն ախտս մինչև խափանեսցին: Քանզի սուրբ առաքեալն կարելով յինքենէ զախտս իշխեաց ասել՝ եթէ ընդ Քի 'ի խաչ ելի, և կեամ ոչ ևս ես, այլ կեայ յիս Քս: Արդա

քեն յորժամ խառնեալ ՚ի բաց ընկեցին յինքեանց զախտսն, կենդանանայ է ՚ի նոսա Քս։ Այլ դարձեալ ասէ. եթէ մեռաք ընդ նմա, և կեցցուք ընդ նմին. և եթէ համբերեսցուք, ընդ նմին և թագաւորեսցուք. և եթէ ուրասցուք, և նա ուրասցի զմեզ։ Որ ոմն է որ ուրանայ զնա, եթէ ոչ որ գործեն և կատարեն զկամս մարմնոյն, և թշնամանեն զսուրբ մկրտութիւն զոր ընկալան ՚ի նմանէ։

Ողջնեսցուք այսուհետև, եղբարք, զի մերձեցաւ ժամանակն. քանզի սպառումն հասանէ եղև, և ժամ է հրաձայնին. Երանելի է որ ապաշխարեսցէ զյանցանս իւր, քանզի ժողովեսցեն զնա հրեշտակք յաւիտենական արքայութիւնն։ Մերձեցիք, ասէ, յայժմհետէ ժամանակս կատարեալ են, և ոչ ոք կարէ հագալ իւրում անձինն որչափ հոգւոյ զաշխարհի իրս։ Այլ որպէս ոչ ոք կարէ մտել [illegible] նայել յերկինս և մնասցէ յերկիր, այսպէս ոչ կարեն մնալ հագալ զմեզ և զաշխարհս. և որպէս ոչ կարէ երկիր պըտուղ բերել առանց սերմանն և ջրոյ, այսպէս ոչ ոք կարէ ապաշխարել առանց նուաստախոհութեան և աշխատութեան մարմնոյ։ Իսկ պահել զպատուիրանս այս է՝ հաւատքն յամր. և երկիւղն այն է՝ զի ոչ տրտմեցուցանէ զիւր զխոստովանութիւնն և զխորհուրդ մտացն որ է ընդ Այ։ Որ հաւատայն եթէ է զատաստանն, ոչ կարէ դատել զընկեր իւր յերես ինչ երկրաւորս, որպէս և գրեալ է՝ թէ մի դատիք, զի մի դատիցիք։ Որ հաւատայն թէ արքայութիւն գոյ է, փութայ պահել զպատուիրանս Այ, զի արժացուսցէ զհոգին իւր յարքայութիւնն երկնից։

## ԽՐԱՏՔ

## ՎԱՍՆ ԵՐԿԻՒՂԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Ասացեալ ՚ի քեզ խրատ զճշմարիտս՝ եթէ մեծ մեղք երկիւղ Աստուծոյ և կորուստ անձինդ, և որպէս ճշմարտութեան ճանապարհ է. և մեծ պատճառք են հոգւոյն և յաւիտենական տանջանացն։ Որք կատարելապէս սիրեն և զարշելուցն, և ընթացեալ փախիցէ զու յամենայն խոնարհութենէ և ՚ի փառասիրութենէ, և ՚ի կամակոր ըմբռնութենէ և զսարսափ և կամ զզուշութիւնս ինչ [illegible] ՚ի

մարդկանէ, և զբազում խոկ զցանկութիւնս և զհեշտութիւնս որովայնամոլութեան և զաչացդ և զականջացդ և զշօշափե-լեացդ և զդատարկաբանութեան, իբրև թէ ծիծաղիս խոկ վասն սորա ստորագրեալ պատճառաց է չարախնդութեան և նա-խանձու և զրպարտութեան և պատերազմի և կռուոյ։ Եւ բազ յոյժ ատեաս զքեզ և զարշեաս և պարսաւեաս զքեզ հա-նապազ, իբր թէ մահ և կորուստ է անձինդ և մարմնոյդ, և յաւիտենական տառապանութեանցն։

Պահեա զքեզ ճշմարտութեամբ իբրև ոչ գործակցեալ քեզ, իբր թէ արդարև մեծ մահ և կորուստ է անձինդ։ Եւ ի վաղուս յայտնապէս զարշեցիր, և որոշեա ի քէն զցանկութիւնս աշխարհիս և զամենայն մարդկային հեշ-տախտութիւնս և որ ինչ աշխարհիս պարարեալ է. զի այս-պէս միտք զբաղեալ յայցանէ, և ոչ մի ինչ ցանկու-թիւն քո ունելով և պաշտելով նմա, այլ ամենևին խոկ ի քեզ լինելով որպէս եղև ի սկզբանէ և այժմ։ Մ՛իշտ և հանապազ զմահ առաջի աչացդ ունիցիս, իբր թէ մերձ է և սպանանէ զքեզ. և հանդերձ ամենայն խոնարհութեամբ և արտասուօք և երկիւղիւ բարձր զաչեաս առ նա ան-նուաղաբար։

Պահեա զքեզ ճշմարտիւ հաւատով, որ հանդերձ ճշմարտութեամբ մեծ շահ անձինդ և արդարութեան լինի քեզ յոյժ. և զի խոնարհութեամբ և անխռով և անվրէպ կեց-ցես. և որչափ է քո զօրութիւն, կատարելով զքո գործն նուաստախոնարհութեամբ նմանեալ ըստ կամացն նորա։ Եւ ու-նիցիս զքեզ միշտ ճշմարտիւ, իբրև հեզի լինելով քո յի-րաքանչիւր առաքինութեանց և ի պատուիրանացն նորա. քան զամենայն մարդ անարգագոյն և քան զամենայն մեղաւորս ևս մեղաւոր համարեա զքեզ։ Եւ եթէ որ-չափ ըստ համեմատութեան քրիստոնէի եմ ես՝ հող և մոխիր գոլով և իբրև սուտերք են ամենայն արդարու-թիւնք իմ, և եթէ ոչ ողորմութիւն մեծաւ և շնորհօքն նորա ողորմեցայց. այլ եթէ ըստ ճշմարտութեան գրոց է, ոչ ևս ունիմ ակն ապրել, այլ միայն անկանել յաւիտե-նական տանջանսն, եթէ կամիցի դատել զիս վասն մե-ղաց իմոց, և կամ վասն կարծեացս ինչ բարեաց. ոչ կա-րեմ ի վեր հայել, վասն զի ոչ եմ անարժանաւոր։

Պահեա զքեզ ճշմարտութեամբ, զի առ ուր առաւել յիշեա-ցես զոր զմեղս քո, և եթէ ոչ չափ հեռի ես ի պատուիր-

լսանայց Այ. և միշտ յիշել և առաջի աչաց ունել զհուրն անշէջ և զխաւարն արտաքին և զյաւիտենականն տանջանսն, և որք անդն տանջին և հեծեծեն հառաչանօք. և որչափ զոյ քո զօրութիւն՝ հառաչել և արտասուել և ողբալ, և այսպէս յամենայն օր ակն ունել մահու: Նոյն այսպէս ազատեսցիս քեզէն զքեզ, աւուր աւուր աշխատեալ աղօթա-սութիւն և հեծութիւն. մի երբէք զուարթանալ, մի ծի-ծաղել. այլ յամենայն ժամ ծաղր քո՝ ի սուգ դարձցի և խնդ-ութի քո՝ ի տրտմութիւն, և միշտ և յարաժամ տրտում և տխուր շրջել. զի անձն իմ լի եղև չարչարանօք:

Պահեա զքեզ ճշմարտապէս իբրև քաջանձնեալ ըզ-քեզ յինքն, և հաւատայով եթէ Տէր վասն մեր մեռաւ և եկաց, զի մեռելոց և կենդանեաց առ հասարակ տի-րեսցէ. և արեամբն իւրով գնեաց զմեզ, զի ոչ մի ևս քեզ կեցցես, այլ կատարեալ ծառայ նորա լինիցիս: Եւ որչափ է քո զօրութիւն, աւելցցես զանհնարինութիւն քո՝ որ եթէ ՚ի սրտիդ իցէ: Որպէս հեղ անսասան անխախտ լեռ մեծամեծ իւրում, այնպէս պարտ է լինել քեզ առաջի Այ: Որչափ զոյ քո զօրութիւն, մեռո զքեզ ՚ի մարդկայինս ախ-տից և յամենայն հեշտութեանց, և բնաւ մի ունել յանձին քում կամս կամ ցանկութիւնս երկրայինս. այլ լինել յա-րաժամ ընդ Այ և սպասել զպատուիրանս նր հանապազ:

Պահեա զքեզ ճշմարտապէս, զի այնպէս երկիցես զու-յամենայն ժամ որպէս և վայել է Այ, հանդերձ երկիւ-ղիւ և դողութբ և բազում նուաստախոնարհութբ, և միշտ պատրաստ կալ և լսել կամաց նորա, եթէ ՚ի կեանս, ե-թէ ՚ի մահ, եթէ յոր և իցէ նեղութիւնս հանդերձ բա-զում յօժարութբ. և միշտ և հանապազ զամենայն օր և զցերեկ գիշերն ակն ունել գալ ՚ի վերայ քո բազում և զանազան փորձութեանց, եթէ ՚ի վտանգս, եթէ ՚ի բան-տս, եթէ ՚ի գանս, եթէ ՚ի քաղց, եթէ ՚ի ծարաւ, ե-թէ ՚ի ցուրտ, եթէ ՚ի մերկութիւն, եթէ յամենեցուն [illegible] թշնամեաց, և մեծ անտրտնջանս հաստատէ քեզ կրել ՚ի զանազան տանջանս և յախտս, մինչև ՚ի մահ տանել և համբերել յօժար կամօք և անխռով մտօք:

Պահեա զքեզ ճշմարտապէս, զի մեծ ճգնութիւն և ժուժկալութիւն քեզ լինիցի. հանապազ լռութբ ամե-նեւին մի խօսել մինչև զպէտս ինչ իցէ: Նոյն եթէ ՚ի հարկէ քեզ խօսել, և զայն նախ փորձեա եթէ կամիցի



Digitized by Google

են քո լսելն քան խօսելն. և այնպէս խոստովանեաւ ըզ-պատճառանան առաջի քո՝ եթէ ոչ վասն իմ ինչ կարևոր և հեշտութեան կամիմ խօսել, բայց գիտեմ եթէ կարէ քո են խօսել քան լսել. և ապա բանալ զերեսն քո բանիւ քո և խօսել որպէս և վայել է առաջի քո հանդերձ եր-կիւղիւ և զգօնութեամբ և ամենայն հաստատախոհութեամբ և հեզութեամբ, և զբանս ածելով միշտ հեզ և ցած, իբր ապա-ւորելով զամենեսեան և հնազանդելով նոցա:

Պահեա զքեզ ճշմարտապէս, զի այնպէս եթէ պա-տահեսցես դու ումեք՝ մի բանն և կամ երկու վասն որ-լոյ խօսել, և ապա լսել. և եթէ նա քննեսցէ ինչ ըզ-քեզ, պատասխանի տուր նմա լոկ միայն զպիտոյսն. և եթէ յաղագս վարդապետութեան ինչ բանք իցեն, պարտ է քո զգուշութիւն պահել զքեզ՝ համարելով եթէ անար-ժան և տգէտ ես, ապա հարցիւ հանդերձ բանութեամբ խօ-սել սակաւ մի բանս: Նոյնպէս քննեա զքեզ ամենայն իրօք այգուն և վերջ ժամուն և երեկոյեան, կարգել ու-ղղել զքեզ յաղագս այսոցիկ. ապա եթէ գտցես զքեզ յաղագս այսոցիկ եթէ խօսեցար աւելի քան զչափն, և պատմեցեր ումեք դու, և եթէ որպէս և զինչ կամ թէ զինչ իցէ այս իրք, աղօթեա առ Տէր հեծելով և հա-ռաչելով առաջի նորա միշտ, և այսու զքեզ ապաշխարես-ցես: Նոյնպէս զգուշասցիս ի մտանելն, մի վաղվաղակի յան-ցանել քեզ լիցի. և մի ևս արհամարհեր զխրատսն, և ի մեծ և ի ծանր մեղս ոչ անկցիս: Նոյնպէս ի տեղւոջ դա-դարել շատ լիցի քեզ, և ամփոփեա զքեզ ի մտադրանէ, և կալ զմիտս քո անխափան միշտ ի հսկումն սուրբ զգաց և յաղօթս յամենայն. զի այսպէս եղիցիս դու հանապազ մտօք քո իբրև կանոն պաշտաման կատարել:

Պահեա զքեզ քաջ հաւատաւ. զի որպէս ժուժկա-լես ի հեղգլոյ զարթուն և ի հայհոյելոյ, նոյնպէս և ժուժկա-լեա և պահեա զքեզ, զի մի բերանով կամ մտօք դա-տել զընկերն քո և մի չարախօսել զումեքէ և մի բամ-բասել զոք, մի զփոքր և մի զմեծ: Այլ եթէ տես-ցես իրս ինչ զուարթ, կամ եթէ չարախօսեսցէ ոք զու-մեքէ, մի ունկնդիր լինիր, այլ պահեա զքեզ քաջ և պինդ, և մի ինչ ամենևին չարախօսեր զընկերն. այլ ասա թէ զերեալ է՝ իբր պարգանացիք ոք ի մէնջ ըստ անձին իւրում հաւանօր ասացող է դա: Արդ, եղբարք, մի զարմանք

զմիմեանս, այլ առաւել զայս դիր 'ի միտ չդնել զայթակղութիւն եղբօրն. զի դու ով ես որ դատես զայլոյ ծառայ, իւրում տեառն կայ կամ անկանի։ Արդ ես բազում ինչ ըստգտանեմ զիս, և ոչ ունիմ համարձակութիւն առաջի ա̃յ։

Պահեա զքեզ ճշմարտապէս, որպէս զի ա̃ծ հայեսցի 'ի սիրտ քո, և մերձ իսկ առ քեզ կայցէ յամենայն ժամ. և այսպէս հաւատալով 'ի նա, սովորեցո զքեզ միշտ ժուժկալել և զգալ, իբր թէ տեսանիցես իսկ այժմ զնա մօտ քովք առաջի քո հանապազ. և հեծել և հառաչել և աղօթել յերկար, զի այսպէս մի պարապիցես խորհել ինչ յանօգուտս, և մի զիւք գտցեն 'ի քեզ տեղի արկանել խորհուրդս չարս և վնասակարս։

Պահեա զքեզ ըստ կամացն ա̃յ, և մի ամենևին խօսեսցիս ինչ, բայց զոր փորձեսն զխօսելն բարի, և լսել 'ի կամս ա̃յ, և սիրել զամենայն մարդ սրտի մտօք և գործովք ճշմարտութ̃բ։ Եթէ չար ինչ կրեսցես յումեքէ, ընկալ զայն յօժարութ̃բ և անխռով, ասել զքեզ ինքեան՝ եթէ արժանի եմ և աւելի ևս քան զայս չարչարել վասն մեղաց իմոց։ Վարս և մրցումն ճգնաւորին և վշտաբերին այս է, իբր զի մտցէ ինքն 'ի սիրտ իւր առնել պատերազմ ընդ սատանայի և սատել զնա, և ուրանալ զանձն իւր, և զի բարկացի և ևս զչարացի ինքն ցանկութեանցն իւրոց, և բոլոր իսկ 'ի հեշտութեանց հրաժարեսցէ, և միշտ կռուիցի ընդ իւր խորհրդոցն, և մարտիցէ ինքն ընդ ինքեան։ Իսկ եթէ յերևելիս պահիցես զմարմինդ քո յապականութենէ և 'ի պոռնկութենէ, և 'ի ներքոյդ չնաս խորհրդովք, ոչ ինչ օգտիցիս ունել զմարմինդ քո կոյս. և ահա քանզի պոռնկիս իսկ, և շնաց սիրտդ ընդ սատանայի, և յայժ անպիտան լինի երկնաւոր փեսային։ Իսկ քանզի թշնամին մեր գողանայ զանձինս խմաստունս, և ոչ այլ այն որ զգուշացեալն եղև, և որոշեալ 'ի միմեանց զխորհուրդսն 'ի վնասակարացն, և այնպէս անկանի յորոգայթսն և 'ի մեծ կորուստն սատանայի։ Այս մեզ պարտ է զուարթ կալ միշտ հանդերձ որոշութ̃բ խորհրդոցն, զի մի անկանիցիմք 'ի բարւոյն։ Արդ մի ուրեք մինչև ցխոստովանութի անզգամ 'ի ձեզ ձանձրութիւն բնաւ դիցէ. քանզի որ համբերեսցէ 'ի սպառ, նա կեցցէ։ Պիտանութիւն համբերողի հանդերձ ճշմար-

Digitized by Google

տութք, անստացուածութիւն հանդերձ ուղիղ հաւատով, և պարկեշտ մարմնով և անխիղճ գիտակցութեամբ և անբծով 'ի ներքս նստել, և 'ի գործն իւր զձեռան շարժել, և տուրս տալ այնոցիկ որ պէտս ունին։ Որդ մի զարհուրեցուսցէ զքեզ մտօք փառք վարուցս այնոցիկ որ վաղվաղակի ապականին, որպէս և գրեալ է։

## Ի ԹՂԹՈՅՆ ՄՈՎՍԷՍԻ ՄԻԱՅՆԱԿԵՑԻ

### ՈՐ ԱՌ ԱՄՈՆ ԲԱՆ ԽՐԱՏՈՒ*

Երկիւղն այ մերժէ զամենայն չարախօսութիւն, իսկ հեղգութիւն մերժէ զերկիւղն այ. իսկ զերեւելոցն խորհրդով 'ի սատանայէ՝ լքեն ամենայն առաքինութիւնք յանձնէ։ Չորք են այսոքիկ առաքինութիւնք որ պահեն զանձն. ողորմածութիւն առ աղքատս և առ ամենեսեան, և նուաստախոհութիւն, և ժուժկալութիւն։ Չորք են առաքինութիւնք այսոքիկ որ պահեն զանձն. ողորմածութիւն առ ամենեսեան, և ոչ բարկանալ, և երկայնամիտ լինել, և պահել զլեզուն 'ի մոռացութէ։ Մինչ պէտս ունին չորից առաքինութեանցս այսոցիկ. յամենայն ժամ անդադար աղօթել, առաջի անկանել այ որտիւ իւրով և սգալ 'ի վերայ անտից, և համարել զլեզուն մեղաւոր, և ոչ դատել զընկերն. այսպէս լուեցեն խորհուրդք քո։ Չորք են այսոքիկ առաքինութիւնք որ օգնեն մանկան միայնակեցող. կրթութիւն յամենայն ժամ, տքնութիւն, և անհեղգութիւն լռութեան և առ ոչ ինչ համարել զանձն։ Յաղագս չորեցս այսոցիկ եղծանի հոգի. գնալ 'ի քաղաք և ոչ պահել զաչս իւր, և ընդ իւրս ծանօթութիւն ունել ընդ կնոջ, և ունել սէր ընդ փառաւորեալս, և անխորժել զմարմնական անխտս։ Առան չորից իրաց զարթ-

* Ի ձեռագրի մատենագրութեանց մատ-
[illegible] էջեալ մէջ զճառս զայս
[illegible] 181 բաց Գրիգոր օրինակի նորին,
օրինակս հին Թարգմանութեան Հայոց
վարուց հանգոյցականութեան Եկեղեցի
Թարգմանութեան Մովսէսի Գործակցի
Միանձագրեն, Բեգլէր և երեւելի թար-
գմանութեան. այլ 'ի Մատենագրութեան հայոց
հատ. ԺԲ. 391-392 հորն Եսայեայ
ընծայի, և յընթերցողին [illegible]
[illegible] մերն։

չի բարկութիւն. 'ի տուրեւառից, և 'ի կատարել զիւր կամսն, և սիրել 'ի վարդապետել, և 'ի կործելոյ զինքն իմաստուն գոլ: Վասն չորից իրաց յառնէ չարութիւն. վասն ուտելոյ և ըմպելոյ առաւելապէս և ննջելոյ յագ, և 'ի դատարկութէ, և 'ի ծաղրուէ և յընդունայն բանից, և 'ի պաճուճանաց հանդերձից: Վասն չորից իրաց խաւարին միտք. յատելոյ զընկեր և յարհամարհելոյ և 'ի նախանձելոյ և 'ի չարախօսութենէ: Վասն չորից իրաց անապատանայ հոգի. յոչ լալոյ և 'ի սիրելոյ զողջոյնս և 'ի ցանկալոյ նիւթից և յագահելոյ: Երեք են այսոքիկ առաքինութիւնք որ դժուարաւ կարէ ստանալ մարդ. ողալ հանապազ, և հայել յիւր մեղսն, և ունել առաջի աչաց միշտ զմահն: Իսկ կատարումն այսր ամենայնի այս է. յորժամ լսես ինչ, ասասջիր եթէ ոչ ինչ ունիմ իրս, զի ես մեղաւոր եմ և մեռեալ. քանզի մեռեալ վասն ուրուք ոչ հոգայ. և յաղագս այսորիկ ա՟ծ զօրացուցանէ զքեզ: Այլ որ փութայ ստանալ զառաքինութիւնս զայս, կարէ ապաշխարել շնորհօքն Քրիստոսի:

Ահաւասիկ գործառնութիւնք նորոյ մարդոյ և հնոյ. որ կամի այնուհետև կեցուցանել զանձն իւր, հոգասցի պահել զնորոյն մարդոյ: Իսկ որ կամի զհանգիստ իւր ըստ մարմնոյ 'ի փոքու ժամանակիս այսմիկ, կատարէ զկամս հնոյն մարդոյ, և զանձն իւր կորուսցէ 'ի հանդերձեալ յաւիտենսն: Վասն զի տէրն մեր Յ՟ս Ք՟ս յայտնապէս զնորոյն մարդ 'ի սուրբ մարմինն իւր ասէր. որ սիրէ զանձըն իւր, կորուսցէ զնա. իսկ որ կորուսանէ զանձն իւր վասն իմ, գտցէ զնա: Իսկ ինքն է տէր խաղաղութե, և նովաւ լուծաւ միջնորմն թշնամութե. և ասէ. ոչ եկի արկանել խաղաղութի յերկիր, այլ սուր: Այլ դարձեալ ասէ. հուր եկի արկանել յերկիր, և զի՞նչ կամիմ թէ ահա վառեսցի: Այլ արդ բորբոքեսցուք զա՟ծային հուր սիրոյն յոգիս մեր, զի արժանաւոր լիցուք լսատացելոց բարեաց նորա ընդ ամենայն սուրբս, և ընդ նոսին փառս վերառաքեսցուք ամենասուրբ Երրորդութեանն յաւիտենս յաւիտենից:

Digitized by Google

# ՃԱՌ ԱԲԲԱՅ ՄՈՎՍԷՍԻ

## ՎԱՍՆ ՈՒՍԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Եթէ ոք առցէ յուշ զայն որ ոք խոտորեցոյց զնա կամ թամբասեաց կամ զրկեաց կամ արհամարհեաց, պարտի յիշել զնա որպէս բժիշկ առաքեալ 'ի Քսէ, և պարտի սիրել զնա որպէս բարեգործ: Քանզի նոյն խոտորեալք քո հիւանդութեան գուշակէ անձինդ. ոչ խոտորել պարտէիր, այլ պարտ էր ուրախանալ յաղագս եղբօրն, քանզի նովաւ ճանաչես զհիւանդութիւն. այլ աղօթել 'ի վերայ նորա, որպէս դեղ բժշկութեան առաքեալ 'ի Քսէ: Ապա եթէ տրտմիս 'ի վերայ նորա, հաւաստեաւ ասես ցԱծ՝ ոչ կամիմ ընդունել զդեղն քո, նեխել կամիմ 'ի վէրս իմ: Որ կամի բժշկել 'ի դժնդակ վիրաց անձին, զի 'ի բաց բուժեսցի 'ի հիւանդութենէ իւրմէ, հարկ է նմա համբերել 'ի մատուցելոց նմա 'ի բժշկէ անտի: Քանզի որ հիւանդն է, ոչ է հեշտեաւ կամ հատանել կամ խարել կամ սրբադեղ առնուլ, այլ և յիշելով խոկ զնոսա տաղտկանայ. սակայն հաւանեցուցանէ զանձն, եթէ առանց նոցա անհնար է նմա բուժել 'ի հիւանդութենէ իւրմէ: Նոյն ապա տայ զանձն իւր 'ի ձեռս բժըշկին, գիտելով եթէ փոքր ինչ թախծանօք բուժել 'ի բազում մաղասոյն և 'ի բազմաժամանակեայ նեղուէն: Խարան Յսի է, որ արհամարհէ զքեզ կամ բամբասէ, այլ բուժէ զքեզ 'ի մնափառութենէ. սրբադեղ Յսի է, որ ածէ 'ի վերայ քո զրկումն, և բժշկէ զքեզ յագահութենէ: Որ փախչի յօգտակար փորձութենէ, փախչի 'ի կենացն յաւիտենից. ո՞ շնորհեաց Ստեփաննոսի այնպիսի փառս, զոր ստացաւ 'ի ձեռն քարկոծելոյն զնա:

Ասաց դարձեալ. ես որոց զխելքն ամբաստանեն ոչ մեղադրեմ, այլ բարեգործս կոչեմ, և ոչ անդամանեմ զբժիշկըն ոգւոց՝ որ դեղ անարգանաց մատոյց մնափառ անձին: Քանզի երկնչիմ մի գուցէ ասիցէ և վասն իմ անձինս. բժշկեցաք զԲաբելոն, և ոչ առողջացաւ: Մի գուցէ մեղադրեցայց 'ի Քրիստոսէ 'ի վերջնում աւուրն. հիւանդ էիր 'ի մնափառութենէ, և մատուցի քեզ դեղ

Digitized by Google

անարգութեան, որպէս զի նոքօք սրբեսցիս. իսկ դու ոչ բժշկեցար:

Ասաց դարձեալ. ոչ ոք է 'ի մեզ որ խօսի զճշմարտութիւն, բայց միայն որ պատուաւորեն զմեզ. սակայն եւ ոչ այնպէս զատանեն առնել զամենայն չարութիւնս մեր եւ զզգաստանալս. քանզի թէ լինիցին ամենայն բերանք մարդկան լեզուք առ 'ի բամբասել զմեզ, ոչ են բաւական արժանապէս ան- արգել զմեզ: Ամենայն որ ոք որ հանդիմանէ զմեզ կամ բամբասէ, մեզ ինչ առնէ. իսկ զամենայն ոչ կարէ գի- տել. յամենայն 'ի մերս խոնարհեցուցց զմեզ սատանայ: Իսկ որ մանկտիքն լինին, խոնարհութիւն ուսանելոց խոր- տակեն զսատանայ. որպէս ասացին հարքն՝ եթէ իջանէ խոնարհութիւն մինչեւ 'ի դժոխս՝ յերկինս վերաբերէ: Ով խոնարհեցուցանէ զխոնարհս խոնարհել ինչ զմեզ. քանզի զինչ եւ մշտանայցէ խոնարհն, կամ լուիցէ պատա- ճառս առ 'ի նուաստացուցանել զանձն իւր, եւ որ ինչ լինիցի նմա, 'ի նմին յաղթէ. պարտապէս եւ զամենեսեան ունի երախտաւոր:

Դարձեալ ասաց. զգոյշ լեր անձին. զի եթէ ոք որ ինչ եւ իցէ գործով խռովեցուսցէ զքեզ, լուիցես եւ ա- մենեւին մի խօսեսցիս ընդ նմա, մինչեւ անդադար աղօ- թիւք ցածցի սիրտ քո. եւ աղաչես զեղբայրն եւ ասա ցանձն քո. ընդէ՞ր մոլեգնիս, ընդէ՞ր խռովիս որպէս ոք փրփրեալն. տեսանե՞ս զի հիւանդ ես. զի եթէ ոչ էիր հիւանդ, ոչ մշտանայիր:

Ասաց դարձեալ. զխաչն Քրիստոսի տեսանեմք եւ զչարչա- րանս նորա ընթեռնումք որ ինչ չարչարեցաւ, եւ մեք եւ ոչ մի իրաց համբերեմք. այսպէս խոստովանեցաք յաղթող ճանապարհէ անտի:

Ասաց դարձեալ. եթէ ոչ ստանայցէ մարդ խոնար- հութի, ոչ յաջողեսցի. եւ եթէ կացցէ մարդ զաւուրս Մաթուսաղայի, եւ ոչ գնասցէ զճանապարհս զոյս զոր գնացին սուրբ հարքն՝ զարհամարհանաց եւ զանարգա- նաց, այնպէս որպէս դարբին որ կռէ շանթ երկաթի եւ անօթ ոչ կարասցէ առնել պիտանացու մարդոյ, եւ քաղց- րութիւն՝ որով քակի ամենայն զօրութի թշնամւոյն: Իսկ նշանն 'ի բաց առնելոյ զաշխարհիկս ինչս այս է՝ ան- խռով կալ. քանզի թէ քանդէ ոք զպաշտումն կանձկիսք, եւ կացցէ առաջի մեր, եւ բարձայ առաջնոյ, կամ զոյց կամ

այլ խելք, և ոչ են ծառայք Քի, որպէս ասէր առաքեալն ընտրէ՝ թէ յորմէ պարտեալ ոք է, նորին և ընդ ծառայութեամբ է։

Ասաց դարձեալ. Հոգի կամի զաղօթելն, բայց մտածեաց մարմնոյն ցանկացեալ և ընդ նորին պատապատեալ փախչի յաշխատութենէ։ Այլ առաւելութիւնք ոչ են ծանր պատուիրանք, այլ կամք չարք. որ սովորէ մեզ վասն ծուլութեան երկիւղի և աւազակաց զինչս մեր ընկենուլ անմեհեր, զի տեսլով եթէ փոքր ինչ յետոյ սակայն մեռանիմք։ Դարձեալ վասն սակաւ ինչ կերպ ամենայն ընչից հանդերձեալք, և երանութենի հանարտեսք, եթէ զանձինս աղքատասցուք. և զխորդ և ոչ վասն յաւիտենական կենացն զնոյնս խորհիմք. զխորդ ոչ առաւել ես զօրանայ 'ի մեզ երկիւղին ոյ քան զերկիւղն ծուլու և մարդկան։

Ասաց դարձեալ. աղօթեա 'ի վերայ թշնամեաց, և գոհացիր յորժամ անարգիս, և եղեր աշակերտ սուրբ առաքելոցն՝ որք գնացին խնդալով, զի վասն անուանն արժանի եղեն անարգելոյ։ Իսկ զայս սուրբքն ասէին, այլ մեք մեղաւորք և զհաստատուն ոչ ընդունիմք. ոչ ասեմ վասն անուանն, այլ և ոչ վասն անձանց։ Ոչինչ է մարդոյն սիրելն և սիրելն յամենեցունց. իսկ զնորին հանգիստ ոչ ունին պատուիրանք ոյ, որոց բարիոք յօժարութիւն ունիցին։

Ասաց դարձեալ. որքան զորոց երանեն զմեզ զրկիմք, և այնքան զորոց անարգեն զմեզ և բամբասեն՝ շահիմք. որպէս աբբայ Մակարիոս զրպարտեալ և համբերեալ փառաւորեցաւ, և դարձեալ խորշելով 'ի փառաց անտի գնաց 'ի Սկիւթ։ Որ կամիցի շահել արհամարհանս, սիրէ զնեղութիւնս. քանզի ասէ. երանի է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ և հալածիցեն, և որ 'ի կարգին է. մինչ զի վարձք ձեր բազում են յերկինս։

Ասաց դարձեալ. ոչ է պարտ քրիստոնէի առ մարդիկ բարկանալ, բայց միայն առ դևս. որ սիրէ բարկութիւն, սիրէ դիւաց. քանզի զոր և ասիցէ ախտ, եթէ ոք պարտիցէ՝ զնորին և զգեհն պարտիցէ։ Իսկ սկիզբն սիրելոյ բարկութեան՝ խառնելն է և ոչ խօսելն, այլ արհամարհելն և անփոյթ համարելն բազում չարեաց պատճառ և գեհենին արժանի. որպէս ունելով սպացեալ զմիտս, կերեցես նեղութիւնս գոհութեամբ, հանապազ զօգնականու-

թիւնն ինչ և զողորմութե նորա խնդրելով որպէս շա-հաւետ իրաց, զնեղութիւն, զարհամարհանս, զնախա-տինս. քանզի 'ի խոնարհութիւն առաջնորդեն, և թե-թևացուցանեն 'ի մեղաց. խորտակէ զսատանայ խոնար-հութիւն, քանզի տեառն պատուիրան է։

Ո՛րչափ զարմանալ. որ բարկութեն համբերէ, սուրբ աղօթս առանայ, այնպիսին յանախտութե զարգանայ շնորհացն Քի. իսկ որ զայս մերժեսցէ յիւրմէ, զմեծութե և զփառս արհամարհէ, և ևս և զմարմինն իւր վասն սիրոյն Քի, որ 'ի ձեռն հեզութե և բարութե շահին շնոր-հացն Քի. նմա փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ Ք

# ՍՐԲՈՅՆ ԱԲԲԱՅ ԵՓՐԵՄԻ

ՎԱՅ այնմ որ անփոյթ է. վայ անամօթիցն, վայ որկրամոլիցն, վայ հպարտացելոցն, վայ պոռնկաց, վայ ար-բեցողաց, վայ խաղալկաց, վայ արծաթասիրաց, զի հուրն փորձէ զնոսա յորժամ իջանէ 'ի խորխորատս գժո-խոց և 'ի տարտարոսս մահու. ոչ ինչ առաւել բարձրա-գոյն քան զերկինս ինչ. Մ՛ի զուարճացուսցէ զձեզ բա-զանիք կամ արբեցութիւն կամ յաճախութե մեղաց կամ ձիանց, զի մի անկանիցիք 'ի կործանումն անօրէնութե և այնու յանդգնաւ մեղօք։ Սրբութե զգեցիր փառս, սիրելի, ուղիղ հաւատով։ Մ՛ի ոչ երանեսցէ զայնպիսի այր որ յե-լանելն 'ի տնէնէ իւրմէ 'ի պաշտօն կամ յընթացս՝ կա-փուցանէ զաչս և բանայ զմիտսն բարեպաշտութեն մտա-ծութե, որով ասէ՝ միթէ կենդանանայցեն առաքեցայ ա-ռանձինն, զի զպատուիրանս մարգարէին ձգգրոսես։ Մարդ, դու քեզ ինքն զգուշացիր, թշուառացելոց և հեզոց։

### ԹՈՒՂԹ

# ԽՐԱՆԵԼԻՈՑՆ ՓԵԼԻՔՍԻԱՆՈՍԻ
## ՅԵՐԱՊՕԼՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

### ԶՈՐ ԳՐԵԱՑ Ի ԽՆԴՐՈՅ ԵՂԲՕՐ ՈՐ ԱՂԱՉԵԱՑ ԶՆԱ ՈՒՍԱՆԵԼ ԶՍԿԻԶԲՆ ԸՆԹԱՑԻՑ ՄԻԱՅՆԱԿԵՑԱՑ ԵՒ ԶԿԱՏԱՐՈՒՄՆ ՈՐՈՑ ԼՌԵՆ Ի ՍԵՆԵԱԿ

Քանզի տեսի զհոգի քո, ով անդրանիկ որդւոյ իմոյ, զի ընթանայ ուսանել զճանապարհ կենաց, զոր ուսոյց և հորդեաց տէրն աշակերտացն իւրոց. և իբրև խնդացայ զհայցուածս քո զայրքանեաց զի գտանել կամիս վաճառաշահութիւն քո բազմապատիկ արդիւնս հատուցման իբրև զիմաստուն վաճառականն զայն, և արդ զոր խնդրեցեր ՚ի մէնջ բան, թէ և փոքր է ՚ի թիւս բանից, բայց մեծ է արդեամբք, ոհաւասարիկ յայտ արարեալ նշանակեալ սիրոյ քում. վասն նստելոյ ՚ի միայնութեան և վասն չարչարանացս այսոցիկ, մանաւանդ թէ վասն խաղաղութեանն և վասն փորձութեացն որ գայ հասանել ՚ի վերայ վանականութեանն որ ՚ի նմին ՚ի խաղաղութեան իցեն, և վասն շնորհաց օգնականութեան որ պարգևի նոցա յաղթութենէն նոյ ՚ի վերայ չարչարանաց կրիցն, զոր ՚ի քէն պատմեցաւ ինձ՝ նշանակեցից քեզ: Արդ ծանիր, սիրեցեալ և անդրանիկ եղբայր իմ, զի խորհրդոց այսոցիկ առաջնորդութիւն ոչ եթէ ամենայն որդւոյ ՚ի շահ օգտի լինիցի, այլ միայն գիտողացն զանձինս. իսկ անգէտքըն և տկարացեալքն լսողացն զբան սրբութեան օգուտ գտանիցեն: Հաճոյ թուեցաւ ինձ, ով սիրելի, կարգել քեզ զգրուածս հայցուածոց քոց ՚ի շահ և յօգուտ ամենայն հասակի: Վասնզի տեսի զպատրաստութիւն ցանկութեան քո եթէ աստուածային է տենչումն, և կամիմ տալ քեզ գրով զընթացս և զճգնութիւն անձուկ ճանապարհիս այսմիկ՝ թէ որպէս պարտ է կենցաղավարել ՚ի սմս ընդդէմ պատերազմաց թշնամւոյն, յորում օրէ բաւան հարկանեմք զճանապարհէն կենաց մինչև յօրն ընդ որ ոչ ումեք է հնար անցանել մարմնոյ կենաց:

Digitized by Google

Արդ զառաջին սկիզբն ելանելոյ մարդոյ յաշխարհէս
յայտնանէ օրինակէ ելք որդւոյն Իսրայէլի յԵգիպտո-
սէ. զի որպէս առաքեաց Տէր զՄովսէս 'ի Քորեբ լեռ-
նէն և ետ նմա գաւազան և իշխանութիւն իջանել և փր-
կել զորդիսն Իսրայէլի 'ի ծառայութենէ եգիպտացւոցն և
հանել զնոսա յանապատն, նոյնպէս և հրեշտակ պատ-
րաստական հարկիւ առաքի յաստուծոյ առ հոգի և ընու-
զնա ահիւ և դողութեամբ, մինչև հանէ զնա յաշխարհիս
ծառայութենէ և ածէ զնա յանապատ հանդարտու-
թեան, որ է չափ մարմնոյ, մանաւանդ 'ի միայնաստա-
նս: Այլ պարտ է գիտել եթէ ջան և վաստակ առա-
քինութեան նորա 'ի սկիզբն գալոյ 'ի հանդարտութիւն անա-
պատին այս է՝ խոնարհութիւնն: Նուան հարցէ զչափոյ
առաջին կարգիս, այսինքն զխոնարհութէ, յորմէ ծնա-
նի ունկնդրութիւն խրատուց, և յայտնանէ տայ զպտուղ
հոգևոր 'ի ժամու իւրում, որպէս ասէ երանելին Պաւ-
ղոս՝ թէ խրատ առժամայն տրտմութիւն է, բայց յետոյ
պտուղ խաղաղութե տայ նոցա որ կրթին նովաւ 'ի յար-
դարութիւն: Արդ 'ի խոնարհութենէն և յունկնդրու-
թենէն ծնանին ամենայն բարութիւնք. զի և տէր մեր
խոնարհեցոյց զանձն՝ լեալ հնազանդ մահու չափ և մա-
հու խաչի վասն անունկնդրութեանն Ադամայ, որով տի-
րեաց մեղաց և մահու զօրութիւն 'ի վերայ ազգի մարդ-
կան: Արդ յորժամ զճշմարիտ ունկնդրութիւն ստանայ,
պատրաստէ նմա զամենայն հանգիստ և զհոգևոր քաղց-
րութիւն: Այլ ոչ է արժան աշակերտին առնել զինչ և կա-
միցի. այլ պատուիրեմք նոցա թողուլ զամենայն զկամս
անձանց և կալ 'ի սահման հրամանի վարդապետացն իւ-
րեանց, զի այս իսկ է ճշմարիտ ունկնդրութիւնն:

Այսուհետև զգոյշ լեր, ով եղբայր, որ վաստակիս
'ի հանդարտութե անապատի և կամիս ժառանգել զեր-
կիրն աւետեաց որ բխէ զկաթն և զմեղր: Այլ որպէս ա-
ռար Յեսու որդի Նաւեայ և Քաղեբ որդի Յեփոնեայ
զունկնդրութիւն Մովսէսի, որք գնացին զհետ պատուի-
րանաց նորա և մտին յերկիրն պարգևաց, այսպէս և դու
արասցես՝ գնալով զհետ ճշմարիտ ունկնդրութեանն և մը-
տանել 'ի վերին երկիր աւետեացն: Քանզի եթէ ոք ոչ
պարապեցուցանէ և աղատէ զզգայարանս իւր յամենայն
զանձուց աշխարհիս, եթէ զգալի ելանելովն և եթէ

Digitized by Google

իմանալի, ոչ կարէ մերձենալ առ նմա և առնուլ զհոգի իւր: Այլ քանզի երկու են ելք յաշխարհէս և օրինաւորութիւն սուրբ ճանապարհի միայնութեան, մի մարմնոց և միւս մտաց. և ոչ թէ ամենայն ոք որ ելանէ յանապատ՝ ազատի և 'ի վարուց կենցաղոյս այսորիկ. զի բազումք այն են որք ելանեն յաշխարհէ արտաքին ձևով և այլափոփոխք վարուն, յաղագս այնր երկուս ասացաք զելսն. քանզի բազումք ելեալք են սոսկ յաշխարհէ, իսկ ազատեալս 'ի վարուց սորա մի 'ի հազարաց:

Եւ որպէս ասացաք զելս որդւոցն Իսրայէլի յԵգիպտոսէ՝ օրինակ մարդոյ որ հրաժարէ յաշխարհէ. այսպէս և իմանալիք զսիւնն զոր կանգնեաց երանելին Մովսէս 'ի մէջ իսրայէլացւոցն և եգիպտացւոցն, իսրայէլացւոցն լուսաւորիչ և եգիպտացւոցն խաւարեցուցիչ. ապացոյց հրեշտակին որ պատրաստէ 'ի տեսանել զլոյսն աստուածային հովանի 'ի վերայ մտաց միայնաւորին և զխաւարն արկանէ 'ի վերայ իշխանութեան չարին և չարխորհրդոցն որ 'ի նմանէն ծնանին. վասն զի որչափ 'ի ձեռն ելանելոյ յաշխարհէս լուսաւորի աչք հոգւոյ, այնչափ խափանի 'ի նմանէ ամենայն խորհուրդք չարք յիմանալի ելին յայնս: Այս է տեսանել յայնմհետէ եգիպտոսի զելեալն յաշխարհէ և զնստեալն 'ի միայնութեան խուցս, յաղօթս և յօրհնութիւնս և 'ի հնազանդութիւն հարց: Նման է Յեսուայ որդւոյ Նաւեայ որ լուաւ երանելւոյն Մովսէսի և բարձաւ զգաւազանս որդւոցն Իսրայէլի և սրբեաց զձեռս իւրեանց 'ի տէր: Այսպէս և դու, պատուական եղբայր, եթէ ունիցիս ճշմարիտ ունկնդրութիւն առ հայրս քո հոգևորս, լսես զերանելի բըձայնն զոր լուան որդիքն Իսրայէլի՝ եթէ այսօր լցէք զձեռս ձեր տեառն. և փառաւորիս երանելի ձայնիւս այսուիկ 'ի սրբել զհոգի քո հոգւովն սրբով: Իսկ որ անունկնդիրքն են և ոչ բնակեն խաղաղութեամբ 'ի միայնութեան խուցսն, այլ չար խորհուրդք ագահութեան և հպարտութեանն զօրանայ 'ի նոսա, և ոչ թողուն զկամս իւրեանց վասն այլ և ունկնդիրք լինին, 'ի նոսա ծնանի ատելութիւն և զօրանայ վատթարութիւն: Քանզի 'ի կատարել զկամս իւրեանց պատճառս տան ամենայն վատթարութեանց, որպէս ասաց ոմն 'ի սրբոց հարցն՝ եթէ զամենայն ինչ զոր ատէ տէր, բնակէ յանձինս վատացն և

անխրատիցն. իսկ պսակք ունկնդրողացն բազմապա-տիկք են: Արդ տես և զգոյշ լեր, ով ունկնդիր եղբայր, զի բազում օրս պահեն առ քեզ դեւքն յանապատին, զի դարձուցեն զքեզ յԵգիպտոս չարութեն, այսինքն 'ի կենցաղս և յաղտեղի գործս իւր:

Դարձեալ և յայսմանէ զգուշացիր 'ի հանդարտու-թեան անապատն. զի բազում օձք են խածանողք, այս-ինքն նախատինք, բամբասանք, տրտունջ, զրկանք՝ որ 'ի սատանայէ և 'ի մարդկանէ: Արդ եթէ կամեսցիս փըր-կիլ 'ի նոցանէ, արասցես որպէս և արարին որդիքն Իս-րայէլի, այնորիկ որք լուան երանելւոյն Մովսէսի. զի ա-մենայն ոք որ հարկանէր, նայէր յօձն պղնձի զոր բարձ-րացոյց Մովսէս 'ի գլուխ լերինն, և բժշկէր 'ի թունից օձիցն: Այլ դու յորժամ վիրաւորիս 'ի միոյ յօձիցն զո-րոց ասացի՝ բարձրացո զտեսութի մտաց քոց և նայեաց 'ի տէր մեր Յս Քս որ բարձրացաւ 'ի վերայ խաչին վասն փրկութե մերոյ, և յայնժամ բժշկիս 'ի թունից օձիցն յորոց հարկանեն զքեզ, որպէս ասէ առաքեալն Պաւղոս՝ թէ նայեցարուք 'ի զօրագլուխն հաւատոց և 'ի կատարիչն Յս, որ փոխանակ ուրախութեն որ նմա առաջի կայր՝ յանձն առ զխաչն, արհամարհեաց զա-մօթ, նստաւ ընդ աջմէ աթոռոյն այ: Նման, ով սիրելի, թէ որպէս նախակարգէ զխաչն և զչարչարանսն, և ապա յետ այնորիկ յաւելու զմտանելն յանձայն փառսն: Արդ օրինակաւդ իմա զի ամենայն ոք որ մեղկի առ չարչա-րանս ախտից կամ պարտի յանօթոյ փառաց և հարկա-նի յայսպիսի օձից, ոչ կարէ մտանել յերկիրն աւետեաց ուր հայր զմիածինն իւր փառաւորեաց: Այլ թէ որպէս պարտ է նայել 'ի նա, լուր և 'ի միտ առ: Յորժամ հա-սանէ քեզ նախատանօք անարգիլ յումեքէ, նայեաց զի և նա նախատեցաւ վասն քո, և համբերեա և դիւահար կոչեցաւ: Այլ եթէ կապտեն և հարկանեն զքեզ, տես զի և զփրկիչն արարածոց հարին և կապտեցին և կըռ-փեցին և թուքս նախատանաց յերեսս նորա ձգեցին. քա-ցախ լեղւով զատնութեան ետուն ըմպել նմա, և եղե-գամբ զգլուխն սուրբ ծեծէին: Իսկ թէ փառասիրու-թիւն ընդ հարկանէ զքեզ վասն առաւելութե վաստա-կոցն, յիշեա զասացեալն տեառն՝ թէ յորժամ կատա-րիցէք զամենայն հրամայեալսն, ասասջիք եթէ ծառայք

Digitized by Google

անպիտանք եմք, զոր պարտէաքն առնել՝ արարաք։ Իսկ եթէ եղբայր քո արհամարհ թուեսցի յաչս քո վասն տկարութեան իւրոյ, նայեաց 'ի տէր մեր Յս Քս թէ որպէս 'ի վերայ մաքսաւորաց և մեղաւորաց առաւել ցուցանէր զհարկաւոր գութս իւր։ Իսկ թէ չարչարանք և նեղութիւնք ծանրանան քեզ, նայեաց 'ի նա՝ որ փոխանակ ուրախութեան որ կայր իւր առաջի՝ վասն բարերարութեան յանձն առ զխաչն անպարտականն։ Այս յարաժամ գիր 'ի սրտի քում, և տկարանայ և անհաւաք թոյնք օձիցն 'ի միտս քո. քանզի արդարեւ մերձաւոր է առ քեզ խաչիւն Յս քան օձն պղնձի առ հեբրայեցիսն. 'ի գաղտնիս սրտի քում բնակեալ է և 'ի ներքին մարդդ քո օթեվանի և 'ի տեսութէ նորա ծագի առ քեզ լոյս փառաց։ Որչափ ցուցանես ունկնդրութիւն զվաստակոյ քում զառաւելութիւն, այնչափ ցուցանէ նա զգեղեցկութիւն իւր յոգւոջ քում և թագաւորեցուցանէ 'ի վերայ քո զուրախութիւն. և որչափ ծուլութեամբ նուազին վաստակք քո, գողացեալ լինի լոյս գիտութեան փառաց նորա 'ի ծածուկ օթեվանաց սրտի քում, և ոչ քաղցրանայ հոգի քո 'ի խորհուրդս փառաց նորա։

Արդ ըստ խոնարհութեան ունկնդրութեանս զոր ասացի, պարտ է առանձնակ կարգի կրօնաւորաց և զլռութիւնն և զպահպանութիւն լեզուոյ 'ի պատարկ բանից, յընթացս համդարտութեան, գձուձ զգեստուք, անպաճոյճ յօգ ոտից. և բնաւ ոչ այլ ինչ ստանալ, բայց միայն զծածկոյթս բաւական անձինն, որպէս և տէր մեր յայտ առնէ 'ի բանըս պատուիրանի իւրոյ աւետարանին՝ մի ստանայք ոսկի և մի արծաթ և մի պղինձ 'ի գօտիս ձեր և մի երկուս հանդերձս ունիցիք և մի պարկ 'ի ճանապարհ և մի հաղաթափ յոտս ձեր։ Իսկ առաւել քան զամենայն ինչ սէր սերտ ունիցիք յանձինս ձեր, զի նովաւ կարող լինիցիք առաւելապէս ստանալ զոգիս ձեր. զի և գիտէ հայրն ձեր երկնաւոր զինչ պիտոյ է մինչ չև ձեր իցէ ինչ խնդրեալ. վասն այսորիկ խնդրեցէք նախ զարքայութիւնն Այ և զարդարութիւն նորա, և այդ ամենայն յաւելցի ձեզ 'ի հօրէն ձերմէ որ յերկինսն է։

Ի վերայ այսր, ով որդիք իմ անդրանիկք, ապաւինեցէք զանձինս ձեր պահօք և աղօթիւք և յարաժամ ճգնութեամբ և ողջնութեամբ ընդդէմ համանազանց կերակրոց,

Digitized by Google

և մի ապականեցուցանէք զմիտս ձեր 'ի յիշխանութեան այդ, ոչ 'ի տուէ և ոչ 'ի գիշերի։ Իսկ եթէ յաճախէ 'ի վերայ ձեր պատերազմ չարին արգելուլ յերկրէն աւետեաց, սպառազինեք զմիտս ձեր սուրբ հոգւովն Քրիստոսիւ և յաղթեցէք թշնամւոյն պատերազմի, որպէս և Մովսէս Ամաղեկայ։ Այլ որք 'ի տես երկնաւորդութեան են, պարտ է նոցա ոչ ընկղմանել 'ի վերայ երկրի 'ի ժամ քնոյն, այլ նստեալ ննջեսցեն, և կալ 'ի վերայ ոտից իւրեանց 'ի կայն տացեն սակաւիկ ինչ տեղի քնոյն, ածելով զմըտաւ զմարգարէութիւն սուրբ հօրն մեր Աբրահամու՝ որ 'ի քառասնամենից հացով և ջրով և քնով ամենեւին ոչ յագեցաւ, որպէս ինքն իսկ երանելին ասէ՝ եթէ ընհաց իմ աւուրէ կշռով և ջուր իմ ըմպելի չափով և յորմ ինչ յենլով սակաւիկ ինչ յափշտակէի 'ի քնոյ։ Նայեաց զկարեւոր և զմի որ այլ 'ի հարցն սրբոց զի զժամանակս քանի ամաց ոչ ննջեաց ամենեւին 'ի վերայ միոյ 'ի կողմանց անձինն իւրոյ, բայց թէ 'ի պատահել հիւանդութեանց, և այն զի անդադարապէս մնացէ 'ի կանոնաց սրբոցն։ Այս և դուք, եղբարք, որք կամիցիք սասնալ զգաստութիւն, պահեցէք զզգուշութիւն և կատարեցէք և մի երկմտիցէք 'ի սոցանէ. զի եթէ պահիցէք զսոսա յանապատաւորական կեանս, ծագեսցէ Տէր զլոյս գիտութեան իւրոյ 'ի միտս ձեր, և յայտնի առնիցէ ձեզ զխնամաթիւն իւր որպէս երբեմն սրբոյն Աբայելի. որք թէպէտ և մեղանչէին յանապատին, սակայն ոչ զրկէր զնոսա Տէր յողորմութենէն իւրմէ և 'ի յարաժամ խնամակցութենէն իւրմէ 'ի ձեռն Մովսէսի։ Նոյնպէս և ամենայն վանականաւորաց օգնական լիցի Տէր 'ի յառաջանալն 'ի մարմնական առաքինութեան ամուր 'ի հոգեւորն, և ողորմութեան իւր զշնորհ ընկերակից մխիթարութեան իւրոյ երբեմն երբեմն ծագէ առ նոսա. ժամանակ մի զխնամս գիտութեան սուրբ գրոց քաղցրացուցանէ նոցին, և այլ երբեմն յաղաչանս թողութեան մեղաց իւրեանց ուրախացուցանէ զնոսին. յայլ ժամու պարգեւս արտասուաց յորդառատ տացէ նոցա։ Բայց ոչ ասեմ զարտասուսն զոր ստացանէին սուրբ հարքն երկիր աւետեաց, որ 'ի չափ հասակի հոգեւորութեան պարգեւի այնոցիկ որք ժամանեցին 'ի սոյն, այլ զայն զոր սուրբն Եփրեմ կարդայ քաղցրութիւն արտասուացն ամբաւականէի։ Այլ այնոցիկ որք 'ի մարմ-

մտական թմբրութեն բուռն հարկեն զառաջնորդութեն՝ ընծայ ՚ի զարթմունս այսպիսի յառաջատութեն սրտատուաց եր- բեմն երբեմն ։ Այլ ՚ի գալ այսպիսի սրտատուացն՝ երբեմն ներզգայութեն ածէ հնազանդեցուցեալս չմնալ ՚ի հնազան- դութիւնն, այլ ինքնիշխանութեն յետս անձուկ վարս փո- փոխել. և երբեմն ուրախանայ ՚ի վերայ սրտատուացն անձանց զոր ոչն ունէր յառաջ, և ծնանի ՚ի միտսն փա- ռաւորութիւն, և ժամանակ մի որոնէ սրտատուացն ՚ի յի- շատակ մեղացն գործեցելոց, և ածէ տրտմութիւն յու- սահատութեն ։ Այլ յաղագս այսր ասացեալ Ցանկալ կարգ- դաց զնա անկանելումն, քանզի յուրախութենէն նուաթէ զփառաւորութեն և ՚ի տրտմութենէն զանյուսութիւն ։

Արդ յայնմ վայրի ասացեալ է եղելոցն՝ որք յայս չափս յառաջեն՝ վարդապետս իմաստուն, որ զօրութեն յու- սահատութեանն ՚ի յայս հատանանէ խրատուն և զուարթու- թեան ՚ի սէր դարձուցանէ խոնարհութեան ։ Ապա թէ ոչ պատահէ բարի և իմաստուն ուսուցիչ, վերացուցանեն զմիտս նորա դէպ ի մնափառութեն և աւերեալ ածեն յան- յուսութիւն տրտմութեան ։ Այլ դուք, իմաստուն եղբարք, որոց յառաջատութեան պատահէ փոփոխմունք այս, նու- աստուք առ ասա վարդապետաց և նախանձեցելոց ՚ի վարս յայս, և լսել ՚ի նոցանէ զօգտակար խրատսն՝ ՚ի նոյնն զարգարեցէք, ոչ յաղթ խոտորել և ոչ յաւհեալ. քանզի պարտ է և վարդապետին խնամութեան իւրում վկայութիւն ունել ։ Այլ դուք, ով վարդապետք, ՚ի գալն առ ձեզ ումեք յեղելոց նեղեալ յայսպիսի աղէկածութեանց՝ զգոյշ լինիջիք ՚ի խրատելն զնոսա. եթէ բարբառեալ է որոնիւ և ուրախ է մնօք, կոփեա զնոսա և յաւել զմտա- նաւական առաջնորդութեցն աշխատանօն՝ զպահս և զճգնու- թիւն և զգիշերային աղօթութեն և զերկրպագութեն հան- դերձ խոնարհութեամբ առաջի ամենայն ումեք. և զգոյշ լերուք ոչ իւիք հեղգանալ յուսուցանելոյ զճշմարիտն, և զատուարապարտեցէք վասն հոգւոց աշակերտացն ձերոց։ Ա- պա դարձեալ և զյառաջատութիւն սրտանութեան և զար- կարութիւն յուսահատութեան, որ սաստկութեամբ իւրով ածէ զհոգիս մնալ խորի զընեմ. որ ասացա եթէ ոչ կարծէր անէր, ոչ մարթէր ամենայն մեղացն ։ Արդ որ որք յայնմ վտանգեալ գտցէ առ ձեզ, տեսէք և զգոյշ լերուք թէ մարթէ պարապէք խրատել զնոսա, այսպիսեան սեր.

մանել 'ի սիրտ եղբօրն զայս ապաշխարութեան և զխոստումն տեառն զոր ուխտեաց դաշամբք 'ի ձեռն Եզեկիէլի՝ ոչ կամիմ, ասելով, զմահ մեղաւորին, այլ զդարձ նորա 'ի չար ճանապարհէն և զկեալն։ Իսկ յետ այսպիսի փոփոխմանց և այլև այլ ծփմանց շնորհ օգնութեան 'ի վերուստ եկեալ է առ հոգի համբերողին, և սկսանի յառաջանալով աւուրց հուր սիրոյն իւր բորբոքել առ մարդն՝ որ և զտխուր և զգիշեր խաւարէ զհոգին յաշխատութեան կիրս 'ի վեր քան զբնութիւն մարմնոյն կամեցեալ լինել։ Արդ զգոյշ լերուք, եղբարք, ոչ անձամբ անձին ընթանալ, այլ ուսուցչին ձերոյ հաւատալ զանձինս և այնպէս կատարել զառաջեալսն որպէս թէ 'ի բերանոյն իւր լուեցէք զայն. և օգնեալ ձեր 'ի շնորհացն իւր հասանիցէք 'ի նաւահանգիստն խաղաղութեան։ Այս թէ յերկարի առ ոք յեղբարց այսպիսի այլայլմունքս և ընդունի յինքն զփառասիրութիւն, խաւարի ընտրողութիւն մտաց նորին և փոփոխի առաւելութիւն սիրոյն 'ի բորբոքումն պոռնկութեան անօսր և նուրբ մոլորմամբ, և ոչ տեսանէ զախտն ինքն յայտնապէս և ոչ կարէ հաւանել առողջ, և մտանի այնուհետև 'ի խռովեալ աղխս ծովու. և յաղագս այսր կոչեցաւ բորբոքումն այս ամբոխումն։ Ահ որչափ դժուարին է ճանապարհս այս այնոցիկ որք ոչ են կարող ընտրել։ Պատանօր պիտոյ է ամենեւին վարդապետ իմաստուն, զի 'ի ձեռն նորա դադարեցուցանող քաջալերութեանն՝ այսու ջերմութիւն բորբոքեալքն և արտասուաց առատութիւն դիւրաւ կարեն հասանել վաստակաւորքն 'ի սրբութիւն՝ որ է կատարումն մարմնական վարուց, և այնուհետև առնու սկիզբն հոգեւորական տեսութեանց, որպէս և ասէ դարձեալ սուրբն Նիլոս՝ եթէ բորբոքումն այս է դուռն ընդ որ մտանեն ամենայն վաստակաւորք 'ի սրբութիւն։ Այլ գիտասցէ թէ ոչ ամենայն մարդոյ է ընտրել և որոշել ընդ սէրն բնական և ընդ չարչարանս պոռնկութեան, բայց թէ միայն այնոցիկ որք զփորձն ունին անձամբք։ Նմանի որպէս և ասացաք՝ հեղեղք և յարուցմունք բորբոքմանս այսորիկ 'ի վեր քան զբնութիւն ներքին զնա նկրտել. ըստ որում և գրեալ է վասն երանեալ հօրն մերոյ Յոհաննու՝ եթէ յորժամ եհաս 'ի բորբոքումնս յայս, ասաց ցեղբայրն իւր. կամիմ յանհոգս մնալ և լինել իբրև զհրեշտակ իւր որք ոչ ունին

զՀոգս երկրաւոր Երաց · և այսու բարբառելովն ընկերաց յանձնէ զՀանդերձս իւր և ել յանապատ, և ոչ կարա-ցեալ ժուժել անվայելչուց կրիցն՝ դարձաւ անդրէն ։ Այս-պէս զպաշտօնն մաքրեցուցանէ սատանայ բարբառելովն-քըս այսուիկ և Հանէ 'ի միայնութե կեանս մինչդեռ ոչ իցեն Հեռացեալք 'ի կամաց իւրեանց և ոչ ունայնացեալք 'ի խորհրդոց մարմնոյ · և յոչ կատարել զպատուիրանս Հնա-զանդութեան առ վարդապետսն և ուսուցիչսն իւրեանց՝ վաղվաղակի չիջանի բարբառումն բարի սերմանն բնակա-նի և զօրանայ 'ի նոսա բարբառումն չար և այնպէս ցան-կութեց · վասն այսորիկ պարտ է աշակերտացն ունկնդիր լինել վարդապետացն՝ որք իմաստունք լինիցին զխոսութիւն, կարող լինիցին ընտրել զերկուս ձայնապարՀս զայսուիկ · Նայց վայ իցէ վարդապետաց, որք ոչ լիցին ազատեալք 'ի չարչարանաց կրից և լինիցին ուսուցիչք այլոց · քանզի արդարեւ պարտաւորանք մեծամ Հոգւոց աշակերտացն իւ-րեանց, որպէս և աշակերտացն մեծամ պարտաւորան առնեն անունկնդրութեամբ և Հեզգութեամբն առ խրատս նոցին ։ Պատրձեալ երանի իցէ վարդապետաց իմաստնոց, որք ա-զատեալք իցեն 'ի կրից չարչարանաց և պաՀեցին զկարգ սրբութե, մինչև 'ի Հոգւոյն սրբոյ տաւս ուսուցանելն նոցա ։ Նչրանի իցէ և ունկնդիր աշակերտացն, զի ըն-կալցին 'ի տեսանել զվարձս Հնազանդութեանս, այսինքն զի 'ի տառապելոյն յանապատս Համբերութե՝ մեռանի 'ի նոցանէ ամենայն չարչարանք մեղաց, և ծնանի փա-խուստ նոցին խորՀուրդք գիտելիք 'ի բնաւորական բա-րոյից ուղղութեց, և այնուՀետև սկսանիցի ունել զկիրս Մովսէսի առ ատէր՝ յորժամ մեծք պարապեալ յոյժ խո-նարՀութենն, և կատարեալ զկարգ Հնազանդութեան առ Հովուէ Հօրն՝ եղանէ նորա ատամնձինն 'ի խաւզ Հնա-զանդութե յապացոյց օրինակի երկրին աւետեաց, և սկսանի մարտնչել ընդ օտար ազգս Հեթանոսաց որք բնակեալք են 'ի նմա, այսինքն ընդ այսոցն պղծոց, և Համանէ 'ի չար Համակի Հոգեւորութեանն որ 'ի նմանէ պարզելի զպղծութի մտաց և ուսումն ծածուկ խորՀրդոց և զխոտութի ամենայնի 'ի Քրիստոս եղելոց տնօրէնութեց և աստուածայնոցն ։

Պարտ է ինձ այժմ ասել և զանցանելն ընդ Աբր-ղամեան · քանզի տեսեք զՀոգի քա զի ընթանայ զՀետ սի-

բոյն ՚ի Քսի, եւ վասն այսորիկ յառաջ առի կատարել զխնդրուածս քո, ով սիրելի եղբայր։ Այլ քանզի խնդրեցեր ՚ի մէնջ թէ որ ջանիւք պարտին աշխատել որք նստին ՚ի խուցս հանդարտութեան, եւ թէ որ օգնութիւնք ՚ի շնորհացն Այ պարգեւի նոցա, եւ թէ որ են չարչարանք որք պատերազմին եւ նեղեն զնոսա ՚ի համբերութեան որ յարգելական խցին, եւ թէ որ են դժուարինք ՚ի պատերազմացն դիւականաց որ գան ՚ի վերայ նոցա, եւ թէ զինչ յաղթութեան այսր ամենայնի յոր չափս հասանեն։ Արդ քանզի այսպէս դժուարութիւն ունէր խնդրուածք քո, եւ չափ ՚ի չափոյ առաքինութիւնքս այսոքիկ ունին ընդարձակ հեռաւորութիւնս ՚ի միմեանց, վասն այսորիկ եդի նշանակս օրինակաց ՚ի սուրբ գրոց ՚ի մէջ նոցա, եւ հասեալ մինչեւ ցայս վայր յառաջեմք կատարել զխնդրուածս քո զօրութեամբ եւ օգնականութեամբ սրբոյ երրորդութեանն, ով սիրելի եղբայր։ Այլ արդ ահա հասեալ է ժամանակ զի անցանիցէ ժողովուրդ առեալ զերկրորդ անցս ընդ Յորդանան եւ մտցէ յերկիր աւետեաց եւ պատերազմեսցի ընդ եօթն ազգս որ ՚ի նմա եւ յաղթեալ ժառանգեսցէ զքաղաքս նոցին եւ կերակրեսցի ՚ի բարութեանց երկրին այնորիկ կաթամբ եւ մեղու։ Արդ առաջին անցն որ Եգիպտոսէ ընդ ծովն կարմիր՝ օրինակեաց զելսն յաշխարհական ծփանաց եւ գալ յանապատն ՚ի հնազանդութիւն հոգեւոր հօր եւ ՚ի մարմնական առաքինութիւն չափ որպէս եւ ասացաք, յորում զատանց ընտրութիւն վարք եկաց եւ զամբոխանանն կրեաց։ Իսկ երկրորդ անցքս ընդ Յորդանան եւ մուտք յերկիրն պարգեւաց՝ ապացուցց յետ առաջին կարգին ժամանելոյ ՚ի չափ հոգեւորութեան եւ նստելոյ իւր առանձինն ՚ի խաղաղական խուց, որ կատարեաց առ եղբարս եւ առ վարդապետս զունկնդրութիւնն. յետ այնորիկ դատարկանալոյ յամենայնի հոգոց եւ ՚ի զբաղմանց եւ մտանել ՚ի հարցն իւրոց հոգեւորաց։ Այլ մինչդեռ զգեցեալ էին զպատառաքինութիւն հարուստն արքայ, եկեալ է պատերազմել ընդ այսոցն չարաց, որպէս եւ Յեսու որդի Նաւեայ ընդ ազգս քանանացւոց յանցանելն ընդ Յորդանան, որում եւ ասացաւ՝ Նստեալ թլփատեսցես զորդիսդ Իսրայելի կրկնակի. որպէս զի ՚ի ձեռն այդր թլփատութեան թլփատեսցի ՚ի սրտից ձերոց ամենայն չար ունակութիւնք եգիպտացւոցն. եւ զգեցցէ նոցա

զա̃ծային զօրութիւն, որպէս զի պատերազմեսցին ընդ օտար ազգս և ընդ կռապաշտս որ յերկրին աւետեաց բնակեալ էին ։ Այսպէս և նոա որ մեկնին 'ի հոգևոր հօրէն որպէս և Յեսու 'ի Մովսիսէ, և անցանէ ընդ Յորդանան մարմնաւոր խորհրդոյն, թլփատէ յոգւոյ իւրմէ զմարմնական մտածմունս, որպէս և յառաջ քան զայս 'ի սկիզբն առաքինութեան զմարմնական գործսն, և նըստեալ լռութեամբ 'ի միայնութեան խուցն որպէս յերկիր աւետեաց յոր եմուտ հոգւով՝ զգենու զա̃ծային սուրբ զօրութիւն և պատերազմի ընդ եօթն խորհրդոյն որոշմունս՝ որք 'ի միմեանց փոփոխմամբք մտցին ընդ նմա յանդգնութեամբ ։

Արդ այսմ միայնացելոյս պարտ է պահել զլռութիւն իւր ըստ այսմ օրինակի ։ Նախ և առաջին հեռանալ յազգականաց և 'ի մերձաւոր ծանօթից, և ոչ տալ ումեք համարձակութիւն ընտանութեան առ ինքն ։ Ի վերայ այսր զտիւն ողջոյն արտաքոյ խցին ոչ ելանել, բայց թէ կարևոր պատճառանօք, մանաւանդ յառաջին ամին, եթէ փափագէ ճաշակել զքաղցր պտուղ հանդարտութեան, և ոչ արտաքոյ յարկին օթագանել ։ Եւ յայս առաջին ամի զպահս 'ի կերակրոց և զարթնութիւն չափով արասցէ, այսինքն զտիւն ողջոյն պահել և յերեկոյն ճաշակել, և ըղկէս գիշերոյն արթնել և զկէսն հանդարտութիւն տալ մարմնոյն, որպէս և սուրբ հայրն մեր Եղիա ասէ 'ի բանս իւր ։ Ով եղբայր, յառաջին ամի յորժամ նստիս յառանձնակի խղի, ոչ է պարտ քեզ յաւելուլ ճգնութիւն ապահել և աշխատ առնել զմարմինդ, զի մի ծաղր լիցիս 'ի սատանայէ, վասն զի նոքա բորբոքեն զմիայնաւորն առաւել քան զչափն նկրտել, որպէս զի յոչ հանդարտելն արտաքս ձգեսցեն զնա յարգելականն խղէն ։ Եւ քանզի հնուտ են չար դևքն եթէ յառաջին ամի դիւրալուրք են անձինք միայնացելոցն, վասն այսորիկ 'ի բազում աշխատութիւն զրգեն առ 'ի կարճմտեցուցանել զնա ։ Վասն զի ընդ աշխատութիւն նուաղեն զմնափառութիւն, և նա է դեռ ևս որպէս զխեցեղէն անօթ որ մինչդեռ ոչ է հրով թրծեալ՝ յարկանելն 'ի նա ձէթ կամ ջուր կամ գինի կամ այլ զինչ և իցէ 'ի նուէթոյ՝ փշրի և հեղու արտաքս զամբարեալն ։ Այսպէս իմա և զմարմինդ ։ զի առաւելեալ 'ի վերայ նորա զաշխատութիւն ա-

առաքինութեանն յառաջին ամին մինչդեռ ոչ է թրծեալ անխառն սիրտն և գիտութիւն՝ փշրի կարճմտութիւն և ոչ ժուժկալէ. իսկ յորժամ կրթի միայնութիւն, և առաւելուս 'ի վերայ նորա զոր ինչ կամեցցիս՝ տանի. քանզի ուղղէ զմտացն հայեցողութիւնն, այլ և զմարմնոյն պարկեշտութիւնն: Վասնզի որ ըստ օրէ ամփոփի ընդունող կերակրոյ որովայնն և սրբի ըղեղ գլխոյն յաղտեղի գոլորշեացն և պայծառանայ տեսութիւն աչացն, ցամաքի չորս հիւթոցն յաւելուածքն 'ի պարկեշտութենէ, և վասն թեթևութեան մարմնոյն ոչ վաստակի 'ի ժուժկալութենէն և ոչ հիւանդանայ: Նմանի այնոցիկ որք զառաջին ամն գիտութեան և զգօնութեան վաստակին. զի որչափ առաւելուն 'ի վաստակսն, ոչ յագի անձն նոցա, և որչափ յամեն յաշխատութիւն՝ պայծառանայ միտք նոցա և լուսաւորի և ընդարձակի ճառագայթիւք գիտութեանն. վասն զի ամենայն պատուիրանք տեառն լոյս են, և անգիտութիւն նոցին խաւար: Յաղագս որոյ թէ որ ըմբռնեալ է յանգիտութենէ և մարմին նորա կրէ 'ի միայնութեան զաշխատութիւն, խաւարով խաւարեալ է այնպիսին և կուրացեալ ընտրութիւն 'ի հոգւոյ նորա սնափառութիւն չար խորհրդով որ ամբարեալն է 'ի նմա: Վասն այսր որք կամիցին 'ի ճանապարհս միայնակեցութեանս ընթանալ, եթէ ոչ կրթեն զանձինս և զմիտս իւրեանց լուսով գիտութեան, անկարգ է ընթացք նոցին: Որք թեթևաբեռն ճանապարհ արքայութեան երկնից յառաջին ամն այս է որպէս և ասացաք, պահս անձին 'ի կերակրոց մինչև ցերեկոյն, և 'ի ճաշակելն ոչ լնուլ զորովայնն որկրամոլութեան ախտիւ, զի զհետ երթայ առաւել յագեցմանն ծանրութիւն քնոյ և տեսութիւն երազոց պատրանակարաց: Եւ յետ առաջին ամին այսպէս կրթեալ 'ի սովորութիւն պահոցն, յորժամ է զերկուս աւուրս պահել. և եւս յառաջացեալ՝ զերիս աւուրս անսուաղ անցուցանել, այլ և զշաբաթն ողջոյն. նա և օրինաւորի ոչ կարօտի, այլ որպէս կամի կենցաղավարի և որպէս տացէ նմա աստուած զօրութիւն և օգնականութիւն: Բայց թէ գիտութեան և խրատու գիտնականի ոչ վաստակի, 'ի բեկեալ անօթ նմանէ, յորում զոր ինչ արկանեն՝ հեղու 'ի կորուստ: Նմանի այնոցիկ որք առնեն և ուսուցանեն, վասն զի քաղցրանայ հոգի նոցին 'ի պտուղ գիտութեան իւրեանց:

Իսկ սահման աղօթիցն յառաջինն ամն 'ի նաւանէն 'ի մի-այնութեան՝ այս լիցի : Ընդ տիւն և ընդ գիշերն կատարել զբովանդակ երգս սաղմոսացն Դաւթի, և յետ այսր ող-չափի և կամի առաւելու յաղօթսն. և ըստ այսմ բերել զխոնարհութիւն հրեշտակաց միայնակեցին ոչ դանդաղելով ամել՝ որք անդադաղաղք են 'ի փառաբանութեան տեառն, զի և նոցա վայել է զօրութեամբ հոգւոյն որքոյ սպասաւորել անդադար փառաւորութեամբ տեառն : Այլ յետ գիշերայն աղօթիցն յորժամ ծագէ առաւօտն, լուանալ պարտի զձեռս իւր և ծունր կրկնել առաջի կենսականի խաչին Քրիստոսի. և յաւելու 'ի ծնրադրութիւն քառասուն անգամ, որպէս զի անդիմաւեսցի միտքն և բարբառեսցի հրով սիրոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոր և աղաչեսցէ քաղցր ա-տասուօք և ասասցէ : Աստուած իմ, արժանաւորեա զիս զի քաղցրասցի 'ի յոգւոջ իմում անուշնութիւն սիրոյ քո սիրելւոյ : Աստուած իմ, մերկացո յոգւոյ իմմէ ընդ-պատրուակ ախտից չարչարանաց որ անձրոյթեամբ զտեսու-թիւն մտացս 'ի քէն, և պայծառացո զլոյս փառաց ե-րեսաց քոց 'ի սրտի իմում, զի տեսից աչօք ոգւոյ իմոյ զծածուկ խորհուրդս գաղտնի պատուիրանաց քոց : Ա-ստուած իմ, յօգնել ինձ նայեաց, և տէր, յօգնել ինձ փութա. ամաչեսցեն և յամօթ լիցին ամենեքեան որք խնդրեն զանձն իմ. և տուր ինձ զշնորհս քո և արժա-նաւորեա զիս ողորմութեան քո, զի անընդհատ եղիցի յի-շատակ սիրոյ քո 'ի մտաց իմոց 'ի տուէ և 'ի գիշերի, որ-պէս զի երգեսցեմ զփառաբանութիւն քեզ, տէր հայր, և միածնի որդւոյ քում և ամենասուրբ հոգւոյդ յաւի-տենաս յաւիտենից :

Այլ յորժամ ամփոփես զխորհուրդս քո, ով եղբայր սիրելի, արտաքոյ աղաչանօք և համբուրեա զկենսաբեր խաչն, առցես 'ի ձեռս զաւետարանն սուրբ և դիցես զնա 'ի վերայ աչաց քոց և տացես գոհութիւն այնմ որ արժա-նաւորեաց զքեզ քաղցրանալ 'ի խորհուրդսն որ ծած-կեալ էր 'ի յաւիտենից և յազգաց : Այլ յորժամ զայս ամենայն երկրպագութիւնս մատուցանես, ծնանիր 'ի քեզ ի-մաստալի երկրպագութիւն և խոնարհականութեամբ գոհութիւն՝ զոր ոչ բաւէ լեզու ասել ըստ որում է : Արդարեւ ե-րանելի այնոցիկ որք արժանաւորին խորհրդոցն որ յայտ-նի մտացն 'ի ժամ աղօթիցն, վասն զի առհաւատչեայ

Digitized by Google

է նա երանութեան այնմիկ զոր տալոցն է Տէրն զկնի յարութեան սիրողաց իւրոց։ Խնամատարութիւն հաւատոյ, ով սիրելի որդւոյ իմոյ, զի գիտեմ զանձն 'ի միայնակեցաց որ յաւուր միում մինչդեռ տարածեալ էր զձեռս իւր խաչանման յաղօթս և անձկաբեկեալ յերկինս, յանկարծակի քաղցր սիրտ հոգւոյ և լցեալ անձայնին լուսովն զոր ոչ կարէ լեզու պատմել։ Արդ յորժամ առնուս 'ի ձեռս զաւետարանն սուրբ՝ ընթերցցիս մինչև յերրորդ ժամ աւուրն, և ապա յարուցեալ տարածեսցես զձեռս քո առաջի կենդանատու խաչին և անձկաբեսցես զաչս 'ի յերկինս, սրտն՝ անձկափակեալ զխորհուրդս առ ած. դիցես ծունր և աղաչեսցես զնա արտասուօք, զի տացէ քեզ իմաստութիւն իմանալ և 'ի միտ առնուլ զերգս որդւոյն Յեսսեայ. և 'ի սկզբանէն քո սաղմոսել, մի փութասցիս զբազում երգել 'ի նմանէ, այլ միայն ուշ եդեալ քննեսցես զխորհուրդն որ ծածկեալ է 'ի նմա։ Վասն զի այսպէս ասացին հարքն սուրբք՝ եթէ բարուք է և օգտակար մի տուն հանդերձ մտաւոր փառաւորութբ̄ քան զբազում առանց մտադրութ̄ք։ Արդ տես և զգոյշ լեր յերգելն զի իմասցի միտք քո զիմաստս երգոյն զոր փառաբանես լեզուաւ. ապա թէ ոչ՝ ունայն է երգ լեզուիդ առանց իմաստից մտաց։

Իսկ յորժամ կատարեսցես զաղօթս երրորդ ժամուն, որպէս և օրինադրեցին սուրբ հարքն, տացես 'ի ձեռս զԳիրս հարց և զվարս և ընթերցցիս մինչև 'ի միջօրեայ ժամն, որպէս զի մի դադարեսցին միտք քո 'ի քննութենէ իմաստից, և մի թող տացես զգայարանս լեզուոյդ յառաջ ընթանալ յընթերցուածն քան զիմաստ մտացդ, այլ հաւասարեսցես զնոսա միմեանց ընթացակիցս լինել։ Իսկ յայլ կարգ աղօթից 'ի ժամէ 'ի ժամ զառաջինն պահեսցես սահմանն ծնրադրութեան, և զկեանսն առաջի սրբոյ խաչին և նայել 'ի տէր մեր Յս Քս որ խաչեցաւն վասն փրկութեան մերոյ, համբուրելով քո զոտսն սուս նորա 'ի խաչին։ Իսկ 'ի հասարակօրեայ աղօթից մինչև ցինն ժամն եթէ ունիցիս ձեռս ձեռագործ՝ արասցես, և 'ի նոյնն յիշատակին այ անդադար եղիցի 'ի մտաց քոց։ Իսկ յինն ժամէ աղօթիցն պատրաստեսցես կերակուր քեզ՝ յառաժամ փառաւորելով 'ի գործարանի քո զտէր և 'ի հոգևոր միտս քո։

Digitized by Google

Այլ իբրեւ զայս հասանէ ժամ երեկոյին, կանգնեալ ուրախացեալ զուարթ հոգւով եւ բարի խորհրդով, եւ մատո գոհութիւն այ որ այց արարեալ պահեաց զքեզ 'ի խաղաղութեան զօրն ողջոյն : Այլ առաւել քան յամենայն ժամանակս յերեկոյին եղիցի զգուշութիւն քեզ 'ի վերայ խորհրդոց քոց, որպէս եւ երանելին Դաւիթ ասէ. Համբարձումն ձեռաց իմոց որպէս պատարագ երեկոյի : Այլ դու եղբայր, սրբութեամբ մատուցես զպատարագ աղօթից քոց Աստուծոյ, զի 'ի նմանէ զգեցցիս սպառազինութիւն ընդդէմ գիշերային թշնամեացն : Այլ յորժամ կատարես զերեկոյին աղօթս սովորականս, դիր զծնգանս առաջի խաչին եւ ասա զսաղմոս զայս. տէր հովուեսցէ զիս եւ ինձ ինչ ոչ պակասեսցի : Այլ կատարեալ զսաղմոսն տուր գոհութիւն այ, որպէս զի մարմինն քո առցէ զկերակուրս զգալի եւ հոգի քո կերակրեսցի հոգեւոր կերակրովն :

Տես, ով եղբայր, զուցէ պատճառանօք զգալի կերակրոյդ զրկի ոգի քո յիմանալի կերակրոյն, եւ լինիցի սեղան քո որպէս զգազանաց. եւ եղիցի ոչ 'ի զանազան համադամաց պատրաստութիւն, այլ յարդարեսցի սեղան քո ցամաքային իրօք : Այլ 'ի նստելն յուտել յիշեա զգիշերային պատերազմունս չարին, եւ արգել զմածութիւն առաւել ուտելոյն : Զի յորժամ սկսանիցին բարեկեցիքն բորբոքել զհուր հնոցի մարմնոյդ խորհրդովք ախտիցն չարչարանաց, յարիցեն զօրութեամբ դատաստանականացն առահօք Անանիա, Ազարիա եւ Միսայէլ 'ի խաղաղութիւն եւ 'ի փառաւորութիւն այ, այսինքն մերք խորհուրդք եւ զգայութիւնք, որք ուրկեալ կան 'ի մէջ հնոցի մարմնոյս եւ մաղթեն այ, որպէս զի ցօղէ զքաղցրութիւն իւր եւ շիջուսցէ ըստոշորումն հրոյ ախտից չարչարանաց. բարեկեցիկն զարճ ցին ամօթով եւ սուգ պայծառացեալք մանկունքն լուսաւորեսցին ուրախութեամբ 'ի վերայ յաղթութեան որք ոչ թողին զերկրպագութիւն հարցն իւրեանց եւ ետուն պատկերին զոր կանգնեաց Նաբուգոդոնոսոր իշխանն դիւաց :

Արդ ճաշակեալ զկերակուրն՝ տացես գոհութիւն այ տեսութեամբ ամենապարգեւ շնորհացն նորա. յետ այնր ընդ գիշերն զուարթութեամբ հանգցես 'ի գլուխ բաժանեալ զնա յերիս մասունս, զմինն 'ի սաղմոսերգութիւն ծնրադրութեամբ եւ զմիւսն յընթերցումն գրոց եւ զերրորդն երգովք, որք 'ի հոգւոյն այ տուեալք են եւ գրեալք : Ս

Digitized by Google

զի միայնաւորն այն որ տքնոր յերեւեցաւ մինչեւ ցասա-ւոտն զուարթ մտօք, բերէ զնմանութի լուսաւոր հրեշ-տակացն այնոցիկ որք զխորհրդական երեքսրբենութիւն 'ի վերին աշխարհին սրբաձայնեն ։ Ո՛րքանի իցէ միայնա-ւորին այնմ, որ արժանաւորի խնդութեանցն այնոցիկ զոր տքնութիւն գիշերայնն տայ նոցա որք յայսմիկ վաճա-ռաշահութիւնս հրաժարեցին զանձինս իւրեանց ։ յայն ձգտեալ յոր երանելին Պաւղոս հրացմամբ նայեցեալ ասէր ։ զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ պատրաստեաց ա՟ծ սիրելեաց իւրոց ։

Արդ միայնաւոր որ վաստակի զամենայն գիշերն տքն-նութբ, խորհուրդ մտածութեանց նորա 'ի բարութեն որ յաշխարհն վերին է՝ ոչ վրիպի ։ Վասնզի տքնութիւնն զզօրութի մարմնոյն տկարացուցեալ և զմտածութիւն խորհրդոցն նըբեալ և պայծառացուցեալ՝ տեսող առնէ երկնաւորացն անձառ բարեաց ։ այլ և 'ի տքնութէ գի-շերոյն պատերազմունք՝ զօրն ողջոյն թեթևանայ 'ի նմա-նէ ։ զի զուարթութի գիշերոյն հալածէ զնաս, որում և տէր մեր Յս Քս օրինակ ետ զանձն՝ հանեալ 'ի գը-լուխ զգիշերն յաղօթս ա՟յ որ վասն մարդկան փրկու-թեան ։ Գրեալ է և յաղագս հօրն մերոյ Արսենիոսի, եթէ 'ի կալն յաղօթս թողոյր զարեգակնն յետուստ կու-սէ անձինն, և տարածմամբ ձեռաց աղօթէր մինչև 'ի ծագել ճառագայթիցն 'ի դէմս երեսացն իւրոց ։ Նոյն-պէս և այլ հարքն մեր սուրբք ամենեքեան տքնութբ և աշխատութբ մերկացան յանձանց իւրեանց զհին մար-դըն, և զգեցան տեսութի որ է ամենեւին լոյս, այսինքն զհայեցողութի փրկչին, ըստ որում և Դաւիթ վաս-տակէր հեծութբ յամենայն գիշերս, լուանայր զմահիճսն արտասուօք և զանկողինսն թանայր ։

Տեսէք և զգոյշ լերուք, ով եղբարք, ոչ խափանել յեղեալ կարգաց սուրբ հարցն զոր կանոնեցին 'ի պահ-պանութիւն փրկութե մերոյ ։ զի մի մատնիցիք 'ի ձեռս սատանայի որ է թշնամի կենաց մեր և փրկութե, բայց թէ կարևոր պատճառաւ իմիք ։ Այլ եթէ ոք պակա-սեցուցանէ վայրապար 'ի կարգէ աղօթիցն զոր սահմա-նեցին սուրբ հարքն եօթն անգամ յաւուրն զա՟ծ օրհ-նել, ունայն է նմա մնալ 'ի խուղ խաղաղական և չար-չարել 'ի վաստակս իւր ։ Իսկ որ ջանայ և աշխատի, զոր-

Digitized by Google

ծաղկեաց լինել նմին ած. եւ զօրացուցանել զնա 'ի կարգ իւր
պաշտպանեալ 'ի գիւտական փորձութեանց, եւ տացէ նմա
զխաղաղութիւն քաղցրութեամբ եւ հանդարտեամբ 'ի խաղաղ
իւր : Սակայն սեա, ով եղբայր, եւ մի վասն զի բազմա-
ցուցի 'ի վերայ քո զսաղմոսերգութիւն, հեղգանաս առ
կարգաւորութիւն ժամուց աղօթիցն. զի այս ոչ է գործ
իմաստնոց. զառաւել սաղմոսաղօթութիւն պատճառ ծուլու-
թեան առնել, այլ յայս պատերազմի ժամանակի միով
գորովալից բաւականացեալ մի անցուցանել զպահման
աղօթիցն : Այս թէ եւս ջանաս զօրանալ 'ի վերայ քո
երկբայեցուցանող դեւն յերկարցուցանելով զաղօթսն,
զօրացո զանձն քո յիշխանմին այ. եւ յարուցեալ 'ի սահ-
մանեալ ժամն կացցես յաղօթս առաջի պատուական խա-
չին, եւ տեառնագրեալ զերեսս քո երգեսցես միայն զըն-
փոխս սաղմոսիս այսորիկ. օրհնեցէք զտէր ամենայն ա-
զինք, գովեցէք զնա ամենայն ժողովուրդք. զօրացաւ ո-
ղորմութիւն նորա 'ի վերայ մեր. Ճշմարտութիւն տեառն
մնացէ յաւիտեան : Յետ այսր ասասցես եւ զերկիրպագ-
ութեան երգն 'ի դէմս որդւոյ որ խաչեցաւն վասն մեր՝ ծըն-
րադրութ առաջի խաչին, եւ ընդունելի լիցի պաշտամունքն
քո առաջի այ : Զանզի զեղեալ հարկս օրհնացն եթէ
հատուցես որչ իսկ զղջահեկանն, ընդունելի է. եւ թէ
տացես նաչքարակիսս մի, եւ զայն ընդունելին զուարթու-
թեամբ. միայն հատուցմամբ տացես զպարտսն 'ի ժա-
մու, եւ ոչ կշտամբիս 'ի սակաւն եւ 'ի նուազն. զի գտով
'ի մրցումն պատերազմացն միով օրհնակաւ տացես ըզ-
վարձս հատուցմանն :

Արատմեաց ինձ ոմն 'ի հարցն եւ ասաց՝ թէ մինչդեռ
նստէի 'ի սենեակն իմ, եկն եհաս 'ի վերայ իմ պատե-
րազմ ծուլութեան, եւ ոչ տայր թոյլ յառնել ինձ յա-
ղօթս, եւ ոչ կարէի ածել զյիշումն աղօթիցն 'ի սրտի
իմում 'ի մեծապղյն ծանրութենէն. եւ հատուցի զայս
կենաց իմոց անկեալ կալով 'ի վերայ երկրի, մինչ զի ա-
սել ցանձն իմ թէ զնայն ինձ յաշխարհ բարուք եւ օգ-
տակար է քան մնալ 'ի խաղաղական կենաս յայս եւ ոչ
ինչ վաստակել : Իսկ իբրեւ յարեայ եւ ժողովէի զպարգևան
իւզեն առ 'ի յերթալ, յանկարծակի լուայ բարբառ որ
խօսէր ընդ իս քաղցրութեամբ եւ ասէր. մի երթիցես յաշ-
խարհ մի, այլ քաջալերեաց եւ պինդ կաց յարգելանոց

խաղից, և երգեցէք յաղօթս քո մի զառաղմուս զայս, օրհնեցէք զտէր ամ ազինք և գովեցէք զնա ամ ժողովուրդք։ Այլ իբրև լուայ զձայնս զայս, քաղցրացայ և կանգնեցայ 'ի վերայ ոտից իմոց և աղօթեցի լուռ սովորութեամբ զոր ունէի. և այնուհետև ոչ յաւելի ամենևին բերան իմ յաւելուլ զառաղմուս զայս, ոչ զտիւ և ոչ զգիշեր։ Այլ յաւելուլ ասել ցկս ծերս այս՝ թէ այսպիսի պատերազմունքս 'ի թոյլ տալոյ կամացն իմ զան, որպէս զի փորձեսցէ միայնաւորին զչափ իւրոյ զօրութեան առ պատերազմն դիւացն։ Որ և ասաց դարձեալ՝ թէ յորժամ հաստատեսցեն այսպիսի պատերազմունք 'ի վերայ քո, ոչ պարտիս թողուլ զանձնական քո, այլ զօրացուցանել և պնդել զանձին յուսովն այ, և ած ողորմութեամբն իւրով բանայ քեզ զդուռն գանձուց իւրոց՝ որոց անթիւ և անչափ են պարգևքն, և զշնորհ մխիթարութեան հեղու 'ի վերայ քո։ Այլ այսպիսի պատերազմն որ հասանէ 'ի վերայ եղբարց 'ի միայնութեան խուցս 'ի ծուլացուցանող և յերկբայեցուցանող դիւացն, 'ի պնդելն նոցա զանձինս իւրեանց՝ անցանէ փոյթ ընդ փոյթ զօրութեամբ և օգնութեամբն աստուծոյ։

Նոյնպէս և 'ի վերայ իմ եհաս, եղբայր, պատերազմ յերկբայեցուցանող դիւէս յայսմանէ, և ոչ թոյլ տայր ինձ աղօթել 'ի բազում ծանրութենէն զոր ածէր 'ի վերայ իմ։ Այլ յայսպիսի դառնութեան կործանմանէ զձնշեալ անձն իմ կանգնեցի, և կացեալ առաջի որոյ խաչին երկրպագէի և տեառնագրէի զնշանն տեառն 'ի վերայ երեսաց իմոց արտասուօք, և 'ի պնդելն իմ 'ի համբերութեան, յայն ցրուեցան դևքն 'ի զօրութէ սուրբ խաչին, և զերծեալ լեզու իմ յաղօթս՝ տեսանէի ձգումն ձեռին որ էառ 'ի պարտանացէ իմմէ միշտ ծանրութի. և այնուհետև լցաւ սիրտ իմ ուրախութե և ցնծութեամբ զոր ոչ բաւական եմ պատմել, մինչ զի զաւուրս երեսուն միայն ինձ յուրախութեան յայն օգնականութե լուսոյն. և զտիւ և զգիշեր ամենևին ոչ նստայ՝ գոլով արբեալ 'ի հոգևոր բաժակէն, և ոչ գիտէի զոք զիս ամենևին 'ի կենցաղս։

Արդ և դու, եղբայր, 'ի հասանելն 'ի վերայ քո այսմ պատերազմի, թէ և միայն 'ի վերայ ոտից յարուցեալ կանգնեսցիս և 'ի սուրբ գործարանի աղօթեսցես, ած

որ տեսանէ զստուգանումն ժուժկալութեան քո, առաքես-ցէ քեզ վարձատրելի զօրութիւն օգնականութեան։ Այլ եւ յաղագս այսորիկ, ով սիրելի աղայ իմոյ, կարգեցի քեզ ՚ի գիրս յայս զոր խնդրեցեր բովանդակապէս զյեղանակ պատերազմացն եւ զկոչումն նոցին, զի ուսուցես զհամբերութիւն ընդդէմ յերկուացուցանող դիւին, զոր եւ ամենեքեան որք ընդ գիրս՝ զգուշացեալք ՚ի չար յուսահատութենէ նոցին. քանզի խնդրն է սկիզբն ամենայն պատերազմաց, եւ խնդրն որ բանայ զդուռն նոցին. այլ եթէ համբերես, յաղթես նմին զօրութեամբ օգնութեանն Այ։ Այլ յորժամ սորա մարտն ընկրկի, այլոց դիւաց պատերազմունքն դիւրաւ յաղթահարին։ Նոյն կարճամիտքն եւ յայս պատերազմ եւ ոչ համբերողքն՝ թողուն զանձնականս իւրեանց եւ գնան, եւ այնուհետեւ խնդրեանք առ խնդրեանս ՚ի խղճէ մտացն կշտամբելոյ տրտմութեամբ փոխանակ ուրախութեան որ պատահէ համբերողացն. զի դեղ բժշկութեան պատերազմիս այսորիկ ոչ այլ ինչ, բայց միայն համբերութիւն միայնակեցին ՚ի խուց իւր անդադարակացութեամբ մինչեւ ժամանէ յանզգայ աղօթելն։

Նոյն զկնի պատերազմող դիւիս այսորիկ է եւ այլ դեւ՝ որ պատերազմի ընդ եղբարս ՚ի խաղաղութեան, եւ հրարի մոլորեցուցանել զնոսին։ Քանզի յորժամ տեսանէ զեղբայրն զի վաստակի ՚ի ճգնութիւն առաւելութեամբ, ՚ի վերայ համանէ անխնայելն առ ՚ի մոլորեցուցանել զնա ՚ի մտափառութիւն, եւ արկանէ ՚ի միտս նորա զմտածմունս զքանչելագործութեան եւ զառաջնորդութեան վերակացութեան, եւ թէ ոչ է բաւական անձին օգուտ՝ այլ եւ զաղունս շահել։ Այլ այսպէս ՚ի գրոց զօրութէ եւ ՚ի մտաց դիւրութէ հնարի աշխատակալմամբ գայթակղութեամբ ձգել զնա յաշխարհ, եւ զհոգեւոր տեսողութիւն եւ զաղօթից յերկարաձգութիւն առնէ ՚ի միտս նորին պատճառ անախտութեան. եւ թէ կարող է, այնուհետեւ յանկախ միտաց եւ ՚ի զօրութենէ հաւատոց սքանչելագործութեամբ եւ վարդապետութեամբ զբազումս յուղիղ ճանապարհն դարձուցանել, յորոց տգիտութեանն վերայ հեծէ, մինչեւ արտասուէ եւ զոփայ ձգիլ առ նոսին ՚ի պէտս փրկութեան նոցա անախտ մտաց։ Ընդանուր պիտոյ է ուսուցիչ խնամոցն. զի թէ ուսուցիչ ոչ ունիցիս, ով եղբայր, եւ ընդբաղութեամբ ոչ կարես արտաքել զնոսա խորհուրդս զայս, ՚ի

գայթակղութիւն մտանելոյ . քանզի յոյժ դժուարին է շատ պատերազմելոյ այսմ յանփորձ անձինն ։

Նաև որք կրեցին զփորձութիւն անձամբ և հասեալ 'ի գործ խորհրդոցն նկուն եղեն յանձինս և վերստին դարձան 'ի լաւութեանն, նոցա դիւրին է ուղղել զգայթակղեալսն ։ Այլ և որպէս ասէ տէր մեր՝ թէ 'ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա ։ Որք եթէ պտուղ առատութեանց և հոգևոր խնամոտիցն այս լիցի գնալ յաշխարհ և այլոց յայտնել՝ զգոյշ լեր և կաց 'ի կայի քում, զի մի գայթակղեսցիս ։ Նաև եթէ բարուք են խնամողքն, զայս տացես նշան . և թէ 'ի սպասաւորութեան հրեշտակաց է և 'ի հոգւոյն սրբոյ շնորհաց և 'ի յարաժամ ընթերցմանէ և 'ի բնական բարոյից ուղղութեց, յորժամ բարբաքի 'ի սիրտ քո հոգևոր խնամողք, և յայսպիսի խնամողքս ժողովին խորհուրդք քո և հեշտանայ 'ի չարչարանաց օտար խորհրդոցն զերծեալ, և ուրախութիւն լինի հոգւոյ, և յայս խնամոտիցս և յուրախութեանս նկրտիս յառաւել՝ խոնարհութիւն և յեւս բաղձանք միայնութեան և լռութեան որք նուիրեցին քեզ զայս, գիտելով պարզաբար թէ առանց լռութեան ոչ կարես ունել զայս ուրախութիւն, յորժամ ձանձրանալ ունիս թէ յաղթահարմանն դասակն են զօրացուցիչքն ։ Եւ 'ի վերայ այսորիկ որչափ և զօրանան աղբիւրք խնամոտից 'ի սրտիդ, տուր նոցա տեղի . և անդհայեցողութիւն մտաց քոց յանձնառելի լիցին որ 'ի պարգևաց շնորհէ խնամոտիցն ծագի առ քեզ, և կրեա յանձին քո և պարապեսցես նովաւ որչափ և տացէ քեզ տէր ։ Եւ գիտեա զի յայսպիսի շնորհացս զայս միայնաւորին բըխմունք արտասուաց տանին չարչարանաց, և զգուշութիւն խնդութեան յածեցին զմտաւ զմեծագոյն շնորհսն և զգութարտաշութեանն ոչ առ իւր արարածս . և թէ որչափ պատուեաց ած զազգս մարդկան՝ փութացեալ 'ի փրկութիւն նոցա յամենայն աւուր և ժամու . և որքան մեք զրկեմք զնոսա յանողորմութիւն մերում ոչ ջանացեալ 'ի ձանձրանալ զնոսա, այլ և դատապարտեցուցանեմք չար գործովք մերովք ։

Եւ խնա, ով՝ սիրելի, զի ընդ այսպիսի խնամոտս արտասուսք անչափ յաշաց և խնդրումք միամտաբար վասն համաքրական աշխարհի, և ամենեցուն վշտակցի միւսք միայնակեցին և խնդրել յոյս նոցին ողորմութիւն . և յորժամ ոչ դադարեսցեն միւսք նոցա յերգելով զերգս սաղմոսաց և 'ի

յիշատակելոյ զիմաստս սուրբ գրոց ուշիմ մտօք։ Այլ սկսանի այնուհետեւ հոգւոր հասակն աճել և մտանել յերկիրն բարի և հեշտալի, այսինքն 'ի խոկումն խորհրդոցն Այ՝ որք իբրև զհուր բորբոքեն յանձն նորա, և զտիւ և զգիշեր խաչէ զանձն իւր աշխատութեամբ և ըղձիւք ընդ նմա, և զպտուղ աշխատութեանն առնու մտա-նաւորապէս օր ըստ օրէ 'ի լրմանէ ծածկելին խորհրդոցն։ Քանզի առնու ածէ հրեշտակն զմիտս մեր 'ի մեծ զբաղմունս նախախնամութեան Այ՝ թէ որպէս յոչէից գոյացոյց զամենայն արարածս, և որչափ նախախնամութեամբ պահպանէ. մինչ զի և անարգ զեռուններն որ 'ի վերայ երկրի սողան՝ ոչ մնան առանց խնամոցն Այ, և զիւրաքանչիւր որ յարարածոցս տեսեալ լինին յիւր միտս սքանչանաց իբր թէ վասն իւր տնտեսեալս. և ցնծացեալ սիրտ նորին յուրախութեան սքանչելի խնամոցն իբրև 'ի գինւոյ։ Այլ ինքն խոկ հոգւոյն յայս խնամոցս աստիճանս այսպէս զօրանայ, նախ 'ի բնաւորական բարոյիցն ուղղութենէ՝ յորմէ բղխէ արդարակի հաւատք, երկրորդ 'ի հրեշտակական ազգականէ՝ որք են զօրացուցիչք մեր և բանակեալ շուրջ զերկիւղածովքն Այ, երրորդ 'ի զգենուլ հոգւոյն զհուր ջերմութեան սիրոյ և խնամոց սուրբ հոգւոյն։ Նոյն յորդիկ են նշանակք խնամակալ խնամոց որ յաջակողմեան դասեցն ըն-ծայեցի, ըստ որում և ցուցաք. և բղխումն ամենայնիւ 'ի խոնարհութենէն լինիցի։

Այլ այսուհետեւ սկսանի ծնուլ 'ի հոգւոյ միայնակեցին հուր քաղցրութեան խնամոցն անսահմանութեան, մինչ զի և մարմինն զուարճակից լինիցի 'ի վաստակ ջերմութեանն այնմ անսահմանութեան. և որչափ շարժումն հոգևոր գիտութեան բանայ զմիտսն առաջէ, 'ի խոնարհութիւնն յառաջէ և յամենեւին արհամարհութեան իւր. և որչափ լոյս խնամոցն պայծառանայ 'ի ներքս 'ի սրտին, վաստակք արտասուացն բղխէ առանց աշխատութեանն և անձկաւորի ուրախութեամբ և ցնծութեամբ և յաւել հանդերձեալ կենացն հանգստեան։ Այլ զայս արտասուաց շնորհ անուանեցին հարքն մեր երկիր աւետեաց. յոր իբրև ժառանգէ մենաւորն, այնուհետեւ այլ ոչ աշխատի 'ի զինւորական մարտիցն. և որչափ յայս խորհուրդս խնամոց և յայս շարժումն խոնարհութեան և արտասուաց իջէ միայնակեացն, առանց մեղանաց կենցաղոյս

մնայ ։ Նշանակ այնոցիկ որք արժանաւորին այսմ, և ճաշակեն 'ի քիմս մտաց իւրեանց զքաղցրութիւն անձայնին խորհրդոյն ․ քանզի յայսպիսի անճառապատութիս զբաղեալ մտացն, է զի մնայ զաւուրս առանց կերակրոց, մոռացեալ զհարկաւոր պէտս նոցին, քանզի բաւական ոչ կերակրի ․ և ժամանեալ յայս ծագեսցէ 'ի վերայ նորա լցեալ անձայնին, մինչ զի անկարօտ մնայ արտաքոյ և լուսնի աղաւաղութե, վասն զի տիւն և գիշերն հաւասար է նմա ։ Տես, եղբայր, և զգուշացիր յաւուրս յորս յայսպիսի անճառարութիւնս կանխէ ոգի քո յեղեմնից եղբարց ․ որպէս և ոմն 'ի միայնակեցաց եղբարց յորժամ ընդունէր 'ի դրանէն զողջոյն կարգաւորաց իւրոց, 'ի մեծութե շնորհիս այնորիկ գոլով աստ ուր բախէր ընդ-դունէին՝ թէ ամենայն բանք ողջունից և հարցմանց քոց խնձորք ունիք են, իբրև զարդ անպիտան են առ իս հաւանեալ ընդ շնորհի պարգևացս զոր ընկալայ 'ի տեսանել 'ի ժամու յայսմիկ ։ Նոյն այնոքիկ որք վասն փառաց և գովութե մարդկան նստին 'ի միայնութե սննեալս, այնպիսեացն չար օրինակաց լինիցին տեսիլք ․ առակեն զհոգիս և այլայլեն զմիտս, և իբրև զանուրս երկաթիս ծանրացուցանեն 'ի պարանոցս նոցին զանարիւութիւն և մատնեն 'ի ձեռս պոռնկական դիւին, որպէս և փորձեցան ոմանք որք ոչ վասն այ նստան 'ի խաղաղութե ․ քանզի թուլացեալք 'ի շնորհացն այ մատնեցան 'ի ձեռս դիւաց, և անկրօնեալք 'ի պէսպէս ախտից գայթակղեցան 'ի սպառ ։ Նոյն որք վասն այ նստին 'ի խաղաղական կեանս, երանութե և շնորհաց տուրք հագոյն արժանաւորին, որպէս և առաջարք ։

Արդ այս եղիցի քեզ նշանակ ընդ ճշմարտութիւն և ընդ ստութիւն ․ քանզի տեսիլք որ յանօրէն դիւացն սերմանեսցին, ամենայնին խաբէութիւք են ․ և յորժամ տեսանէ թէ ոչ հնազանդի հոգին չարչարանաց պոռնկութեանն՝ արկանէ 'ի նմա զանազան խորհուրդս տեսլեանց և ամբոխէ զնա մնասերաութբ և ընդ այլանդակ մտածութիւք, որք յուժգին բախմանէն խռովեցուցանեն զմիտսն և պղտորեն զհոգին ։ Նոյն 'ի սկսանել տեսլեանցն որ 'ի շնորհացն այ է, հոտ խնկանոյ քաղցրութե և անուշութեան բուրէ 'ի սրտէն, և զշարժմունս հոգւոյ և մարմնոյ թմբրեցուցանէ, և որպէս 'ի քուն թանձրութե

Digitized by Google

ընկղմէ 'ի սէրն և 'ի գիտութիւն իւր. և հանապազ այսպէս իմաստք դիւրացոյն հաս գարշութեան և ախտից ըմպէն 'ի սրտէն, և 'ի չարահոտութենէ նոցին խառնելի ամենայն խորհուրդք հողեղէնք և մարմնականք։ Այլ դու, եղբայր, յորժամ հասանիցէ 'ի վերայ քո այսպիսի պատերազմ, մի թողուր տագնս խորհրդոց քոց հաստանել. այլ լիցի յարաժամ ընթերցուած սուրբ գրոց և ծնրադրութիւն աղօթից պատուականն խաչին և Ճգնութիւն և արտասուք, և անցցէ 'ի քէն զօրութեամբ և օգնականութեամբ անուան մերոյ Տեառն Քրիստոսի։

Պարծեալ միայնութիւն որ նստի 'ի խաղաղական սենեակ, ոչ է պարտ նմա խռովիլ բազմօք, բայց այնմ միայն՝ որում յայտնէ զծածուկս իւր և առնու 'ի նմանէ զօգնականութիւն բարի խրատուց և օգտակարաց. և այն զի լիցի խորտակեալն փորձ 'ի գիտութի իմաստից և մերձաւոր առ նմ և պահող խորհրդոց։ Ոչ է զօրացեալ յանձնիւրոյն վարդապետութէ միայնաւորն, նմանէ առն որ զգեցեալ է զամենայն սպառազինութիւն պատերազմական, և ոչ երկնչի 'ի սրոյ թշնամեացն որք գան 'ի վերայ նորա։ Յաղագս այսր և դու, եղբայր, լուր վարդապետացն քոց, որպէս և լուան առաքեալքն Ճշմարիտ վարդապետին իւրեանց, և կացին մնացին յԵրուսաղէմ մինչև ընկալան զօրութի 'ի բարձանց և եղեն քարոզք արքայութեանն երկնից։

Ոչ և այլ պատերազմող զի որ մտցէ ընդ մեռանել եղբարս. քանզի գայ հասանէ արտաքոյ սենեկին և ընդ առաջ նմա ձայնս ուժգինս աղմկի և խռովութեց որպէս 'ի բազմաց հնչեցեալ։ Նախէ և զգուանէ՝ կարծիս առնեալ մեռանողին եթէ խնդրի յումեքէ. զի եղանակեսցէ 'ի սեռութի խնդրողին՝ խափանեսցէ զնա 'ի կարգէն և 'ի խոնարհութենէն որ առ նմ։ Նա եթէ ժուժկալէ միայնակեացն և ոչ ելցէ արտաքոյ, փախչի զայրացեալ իւր դեւն, շարժէ զարմս տանն և զաղաղակեսցէ զմեղուանս և առնէ առ միայնակեացն. զի թէ ոչ ելեալ փախիցէ, յարեկս այս գերեզման լիցի քեզ։ Իսկ թէ պարծեալ ժուժկալէ և ոչ ելցէ արտաքս, զկնի այսր պատերազմաց երկեացէ նմա օգնականութի 'ի շնորհացն իւր, և տաչօք սիրոյ նորա հրով սիրոյն իւր և մնայ 'ի խաղաղութե և յերկրայ ասպնջաց ամրոց, 'ի ծնրադրութե և 'ի յաղօ-

ժամ ընթերցմամբ, և նովաւ քաղցրութիւն լսամատոյցն 'ի քիմս նորա որպէս զմեղր բան գրեցելումն՝ քաղցր են 'ի քիմս իմ բանք քո քան զմեղր բերանոյ :

Նա և այլ գե որ կերպարանէ 'ի յարկ միայնակեցին առ աչս երկիւղածից տեսիլս . զոր իբրև տեսանէ, յուժգին երկիւղէն հեղու յամենայն մարմնոյ նորա քրտունք իբրև ջուր յաղբերաց, և կայի լեզու նորա և ոչ կարէ բարբառել . և թէ ոչ փութանակի ժամանէր ողորմութիւնն այ̃ և հաստատէր զնա, հոգին քաղէր 'ի մարմնոյն : Այլ դու, եղբայր, յանկանել յայսպիսի փորձանս երթեալ զառաջմասս զայս . յարիցէ ա̃ծ և ցրուեսցին ամենայն թշնամիք . և մի տասցես, ասէր, զզանակութիւն ամբարշտին, այլ ուրախացո զիս փրկութեամբ քո . յամօթ արար զատեալս իմ, և օգնութեամբ քո փրկեաս զիս, ասէր . դարձցի ամբարշտութիւն ատելեացն 'ի գլուխ իւր, և առել երկիւղ և զարհուրումն 'ի վերայ թշնամեացս որք պատերազմին ընդ իս : Այս յորժամ հարկանես զնոսա այսպիսի նեխութեամբ աղօթից, կնքեաս զանձն քո ամենազօր խաչիւն, և խոկոյն պակասին յերեսաց քոց :

Ասէր ամն 'ի հարցն՝ թէ որք պատերազմին ընդ այս դևօք, ոչ պարտին փախուցանել կամ փախչել 'ի սենեկէն, այլ ժուժկալել և մնալ և արիութեամբ քաջել զդրունս տեսեան մերոյ զտիւ և զգիշեր . և օգնական լիցի նոցա տէր ողորմութեամբ իւրով, և ոչ ընդերկարեսցի 'ի վերայ նոցա պատերազմն յաղաւժամ . յորմէ զօրացեալ հոգին որպէս բոց զի հրդեհէ զնիւթ՝ այնպէս պակասէ 'ի նմանէ ամենայն երկիւղ . այլ և ընու սիրտ նորա ուրախութեամբ և ցնծութեամբ, և բերկրի սիրովն Քի, առաքելէ ընծիւք զամենայն սրբոյն Պաւղոսի և ասէ՝ թէ ոչ հուր և ոչ սուր և ոչ նեղութիւնք և ոչ անձկութիւնք, ոչ հալածանք և ոչ մերկութիւն կարող են մեկնել զմեզ 'ի սիրոյ ածայ որ 'ի Քս Յս 'ի տէր մեր :

Ճանաչարուք սակաւ ինչ, ով եղբարք, և սպառազինեցէք ընդդէմ փորձութեանցն որք նեղեն զմեզ . զի պարզ երեսօք և համարձակ դիմօք կարող լինիցիք աղաղակել և ասել՝ թէ մեք խաչեցաք զփորձութիւնս աշխարհիս, և փորձութիւնք աշխարհիս խաչեցին զմեզ վասն սիրոյն Քի : Պիտանի լիցի ձեզ, զի առանց համբերութեան և ժուժկալութեան ոչ արժանաւորիմ խօսել զխորհուրդս

ննջայինս որ պատահէ աղօթականին 'ի լռութեան ան- ձնականս ։ Նմանօրինակ ասացին սուրբ հարքն եթէ ամենեւին միայնացելոյն է լռել օրինակի բարեկամականն հնազին, և երեք ամենակալնօքն որ 'ի նմա՝ պատուհեր են հոգւոյ մտաց և մարմնոյ լռեցելոյ 'ի նմա Ձգնաւորին . որ եթէ առաջի ժամ ժխալոյն հրոյ փորձանացն և հաւատոյքն որ ուր ակը՝ արհամարհէ զնա, յայնժամ իմանէ հրեշտակ տեսան 'ի վերայ իւր և զզօղ ննջայինն զիտութեն հեղեալ ան- խռովպ պահէ զնա 'ի հուր փորձանացն ։ Նմանօրէն որպէս հուր ոչ այրեց երից մանկանցն չիկլայ զհուր հնոցին, այս- պէս և ամենայն միայնակեցին եթէ կայցէ զհուր ննջայինն յորժամ մտանէ 'ի հնոց խորհին՝ զալոյն հրոյ անդինին խռ- ովոյ չիկլուցանէ զհուր չարչարանաց ախտիցն ։ Այլ որպէս հաւաքելութի անմահանգն փոփոխեալ զսեւալ մարմնոյ նոցա 'ի պատուհեր լուսաւոր հրեշտակաց, այսպէս և ամե- նեքեան որք հաւատերեն հնոցի փորձանաց, փոխեսցեն 'ի մարմնաւորութենէ 'ի հոգևորութի, և լուսաւորեն անեղ երկնաւոր նոցա սուրբ լուսոյն որ ծագէ 'ի պուրից ննջիս ։

Լուսոյն աշխարհի տեսան մերոյ Յիսուսի Քրիստոսի հաւա- զերձ հայր և սուրբ հոգւոյն փառք յաւիտեանս յաւի- տենից . ամէն ։

ԹՈՒՂԹ

# ԵՐԱՆԵԼՒ ՀՕՐՆ ՄԱԿԱՐԱՅ

ՅԱՌԱՋ յորժամ ախիզբն արարեալ մարդ և առաջի զնինոս իւր 'ի զիտութի Աստուածութեանն, և խնդրեալ յոյց և աղաղակեալ զգործս իւր զօր 'ի ժամանակս հեզութե և զաստրկութե իւրոյ, յայնժամ շնորհէ նմա լռութի տրամութե 'ի վերայ գործոյն առաքինոյ ։ Այլ

Համառօտութիւն թղթին 'ի հին թարգմանութեան

Թուղթ մեծի հօրն Մակարայ

Հայրն Մակար գրէ աւանդեայն որ- դեկաց որդւոց իւրոց աղաչելով և ողջունելով ։ Զառաջին եթէ մարդն մարդ առաւ զինքն 'ի զիտու- թեան և 'ի խնդրել զնա և աղաչ- խարել վասն իւրոց գործոյն, յայն- ժամ բարերարն աստուած տայ նմա արդարութե փառս լալեաց զոր

Digitized by Google

զարմանալ զհետ այնորիկ վասն մարգարէութեան իւրոյ ճշմարտեաց նորա ամ. աշխատութեն մարմնոյ և կրօնաւորութեն և յօժարութեն աղահաց, հեզութեն զուարթութեն և քաղցրութեն ազօթից յորդութեն, հրաժարութեն 'ի հոգւոց աշխարհիս և յամենայն սնոտեացս, և համբերութեն սա 'ի թշնամանելոյ ուրուք զնա, և ատել զպատուասիրութեն և զգովեստ ուրուք, և սիրել զայլ առաւել քան զինքնագլուխ, և միանգամայն ամենայն ատել զամենայն հանդերձ մարմնոյ և յօժարութե սիրել զամենայն աշխատութիւն մարմնոյ։ Ոչ հետ այսորիկ ճշգրիտ նմա աշխատութեան և ողջ և քաղցր խոնարհութի և վաստակասիրութի. և ոչ համել ընդ մեզ ուրուք, այլ զինքն մեծագոյն քան զամենայն մարդիկ համարել. և իւրոյ յանցանացն միայն հայել, և քան զինքն զամենայն որ արդար համարել, և յամենայն ժամ յիշել զօր վախճանին իւրոյ, և կամ թէ որպէս կարասցէ պատահել և առանց ամօթոյ անցանել զմահ, և զամենայն պատուիրանս աստուծոյ պահել 'ի սիրտ մտացն, և զխոստովանութիւն և զաղօթս արդարոց որք սիրեցին զնա։

Ես յորժամ քաղցրութի նմա այս ամ., այնուհետև փորձութեան զնա 'ի մեղաց. և եթէ իցէ հրաժարել 'ի զնա- ւոյ և յանձնելոյ զկամս մարմնոյ իւրոյ, և կարասցէ ընդդէմ կալ խորհրդոց պատերազմնաց սրտի իւրոյ՝ որ խարեցան ըստ կամաց իւրոց երթալ յառաջնորդն։ Ոչ բամբասանս նման է այս, եղբարք, զհետ իւր կատարել, թէպէտ և բազում իցէ. այլ երթալ ըստ կամացն ող մինչև ցմահ, և քաղցրութե լսել աստուածայինն իւրոյ։

Ես զարմանալ արկանէ փորձութիւն որ յառաջագոյն վարդապետեալ համարձակ կենդանի կերպարանս է, և ածել այս

զործեացն. և յետ այնորիկ՝ իմն էած զթութեն իւրոյ այս նմա Ճգնութեանս 'ի նոյնպիսի առանձնութե և յաղօթս, և հրաժեշտ 'ի կենցաղոյ յաւիտեանս այսորիկ, և նախատանաց համբերել, ատել զամենայն մարմնական հանդերձ և սիրել զայլ առաւել քան զինքնագլուխ. և յետ այսորիկ այս նմա ասէ, և խոնարհութեան սրտի և մարմնոյ սա 'ի հնազանդել 'ի յանցանս մարդոյ. այլ

միայն յիւր մեղսն և յիշել զելն իւր յաշխարհէս, և եթէ որպէս պարտ է պատահել նմա, և զաստուածային պատուիրանս պահել 'ի սրտի իւրում և զխոստովանս արդարոցն։

Ես յորժամ քաղցրացին նմա այսորիկ, փորձէ զնա եթէ զխորհուրդս եթէ հրաժարեալ է 'ի կամաց իւրոց, և եթէ կարէ ընդդէմ կալ պատերազմացն՝ յորոց յաղթահարեալ ենթէր յառաջնորդն, և ու-

Digitized by Google

զմտաւ վճարողութեան մարմնոյ, զմնացուածն արտաքին և զծխա-րութեան ամենայն մարմնոյն, մինչև ցանկարագացուցանել, և ոչ տալ տակաւ մի պատճառ։ Մտաւ ածել այս զանկարութիւն մարմնոյն և զերկարութիւն ժամանակաց, և այս ասել թէ ուստի կարեմ զայսչափ երկայնութիւն ժամանակաց աշխատութեան համբերել։ Նա զի հիւանդոտ ես ես և տկար մարմնով, և մեծ բեռն է մարդոյ զանձն ընտանեցուցանել յմեղկեան, և մտանանօք քեզ որ բազում մեղս գործեալ է քո յառաջագոյն, և այժմ յաղագս մեղացն չես 'ի բնաց, և որպէս չհարհէ քեզ մեծ։ Նա եթէ իցէ յայսմ փորձութեանց ոչ թերացեալ միտքն, այլ աղաղակալ եկաց 'ի պատերազմի խորհրդոց և ոչ յաղթեցաւ, զան 'ի վերայ նորա փորձութեան պատճառեալ զփառաւորութիւնն՝ արդարութի. և որ ոչ կարաց թխարել զնա 'ի ձախակողմ 'ի մեղս, գլորէ զնա յաջակողմն։ Մ՛ի համարութիւ, ուստի ոչ կարէ յանձնել։

Նայլ դուք, ով եղբարք իմ սիրելիք, մի յաղթ խաւարիք և մի յաւհեալ. մեր զիք խորհրդոց համարութեան։ Նայէ. Թէպէտ և մեղար յառաջագոյն, պատրաստեցեր և արբեցեր զամենայն մեղս քո. Նա այս նոքա յիշել զանձն մեղուցեալ և արդ արդարացեալ, որպէս զՊաւղոս և զայլսն։ Յայսժամ ստրանիթի մնափառութեան 'ի սիրտ նորա. և ոչ միայն զայս, այլ և յաւելու խանն 'ի մնափառութեան տալ, և յօժարագոյն ասէ զնա կրթանալ մինչ զայն զոր ոչ կարէ առնել։ Սերմանեն 'ի խորհուրդս նորա աստուած ես անկարգ պաճոյ և անօգուտ հսկումն և աղօթութեան, և այլ բազում մինչ զոր ոչ կարեմ թուել։ Սատանան զի փորձութիւն ամբարձանակ արարածս զխորհուրդեն նորա և զամենայն աշխատութիւն մարդեան զնորա

խորժից կերակրոց՝ որք լցուցանեն զմարմինն 'ի չզգել և ոչ գործե ժամ մի պահոցն յերկարել, զնելով առաւել նորա ակարութիւն և յերկարութիւն ժամանակի. եթէ մեղջական, ասէ, կարիցես համբերել յաշխատութիւն, զի կատարեալ լինիս. Վասն զի մեծ շահ է ընտանեցուցանել զանձն 'ի մեղս, և մտանաւանդ քեզ բազում յանցուցելոց. և որչափ մինչ Թողութեան արժանի քեզ։

Եւ եթէ ծանիցէ եթէ ոչ ըն- կալու մխտ նորա զհրապարակս զայրափի, փոխան յայլ ասելով նմա՝ զի թէ և մեղար, այլ և պատրաստեցեր։ Եւ ածեն զնա 'ի յիշատակ այլոց մեղուցելոց և չապաշխարելոց, սերմանելով 'ի նմա մնափառութիւն, և պատրաստել զանձն 'ի մարգարէանալ փառաւորել և զովել զնա, և զգալն զնա 'ի զորս այս ոչ համբերել, սերմանելով 'ի նմա խորհուրդս անպէտս, անպարս և անկոչս և չար եւ այլ ինչ, որ-

տանին, յորում կարծեմ՝ քան մեղօքն՝ այսու առաւել զգալէ զնա. այս է զղջումն 'ի կողմն անձին, որ զմիտսն համակ առ արդարոյն ունին, և առաւել աղաչախառնութեամբ վճարէ զխնդրելիս իւր: Նմին իրաւամբ եղբարք, յառաւելախառնսն՝ մի՛ տալ, խոստովանեցիս 'ի յաղջ և մի յանձնեալ: Յայսմ ժամ ունեին ոչ քաջերանու՝ եթէ ոչ շնորհ զհետ խորհրդողացս այսոցիկ և ոչ զնոյն, որպէս և Պաւղոս նշանակեալ ասէ վասն այսորիկ՝ եթէ փորձեցեր զսիրտ իմ և քննեցեր 'ի գիշերի, ջեռուցեալ հրով փորձանօքն, և ոչ գտաւ յիս անիրաւութիւն: Իսկ ընթերցեալ առաւ թէ փորձեցեր զիս 'ի գիշերի, և ոչ 'ի տուէ. վասն զի և Պաւղոս ասէ. չեմք որդիք գիշերոյ, այլ որդիք լուսոյ. վասն զի որդւոյն ոչ լոյս է, խել գենն չար գիշեր է.

Իսկ յորժամ անցցէ խորհուրդքն սրտի մերոյ զայսու փորձութիւնք, և ոչ 'ի մերս խանդարհեալք և ոչ 'ի հպարտութիւն, և լաւութիւն և ցածութիւն և առաւել կերպարարութեան հարթ կրօնաւորութիւն ընկալեալ, զարձեալ մխատանեզամ ակնոցքն աստեն յաւելեալ 'ի վերայ նորա խորհուրդք ցանկութեան և սրտագիտութեան. 'ի յայս պատերազմունս լքեալ լուծանեն զսիրտն, որպէս թէ անհնար իցէ նմա կեալ սրբութեամբ և առաւել աղօթս պահել զկուսութիւն. արկանեն 'ի միտս նորա երկայն ժամանակս և զկրօնաւորութեան աշխատութիւնս. զնոսն առաւել նորա հիւանդութիւն և զտկարութիւն մարմնոյ: Նմին դարձ, ով եղբարք, յայսմ փորձութեան զհանգիստ մարմնոյ 'ի բաց թողէք, և ուժգին յաշխատութիւնս պահոց և աղենականս զմարմինս մաշել ջանացարուք: Իսկ յորժամ յօժարեալ զմեզ յաշխատութիւն պատերազմիս այսմիկ տեսցէ մեծ, առաքէ զզօրութիւն իւր սուրբ և հաստատէ ըզ-

ոմնս զի կարասցեն զնա այսպիսեաց խոստովանեցուցանել. այլ մի խոստովանեցիս մի յաղջ և մի յանձնեալ: Իսկ կարգ սկսցէ պատերազմն ամ՝ եթէ ոչ խոստովանեսցես զմեղս նոցա, որպէս Դաւիթ ասէ՝ եթէ փորձեցեր ըզսիրտ իմ, այց արարեր 'ի գիշերի: Իսկ ընթերցեր 'ի գիշերի. վասն զի հրապոյրք թշնամւոյն 'ի գիշերի լինին, այրելոցն 'ի խաւարի. զի որդին ոչ լոյս է և տիւ, խել սատանայ խաւար է և գիշեր:

Իսկ եթէ անցցէ մարդն ընդ պատերազմունս ընդ այսոսիկ, զայլ պատերազմ պատճառաւ և սրտացանկութ, որով տկարացեալ մեղք սիրտն, մինչև համարել զինքն անզօր և տկար (կամ անկատար) 'ի պահս և 'ի սրբութեան, առաւել արկանել զնմա պատերազմութեան ժամանակս, և Ջան և վաստակս առ 'ի սրբութեան, և մարմնոյ տկարութիւն անժուժութեան: Իսկ եթէ մեղկեսցի սիրտ նորա այսոցիկ, յայնժամ, զզօրութիւն մեծ

միտս , և չհարհէ սրտատրտս ուրախակցութեան և հանդերձ խորհրդոց , և զօրացուցանէ աստուծոյ քան զթշնամիս , և ոչ առայ չարեօք խորհրդոց նեղել յերկինսն զօրութեանն զոր չնորհեաց . որպէս և Պաւղոս ասէ . Զինեցարուք բազում աշխատութեամբ և աւելի զզօրութեամբն Այ : Նայս է զօրութեամբ զոր և Պետրոսն ասէր՝ եթէ ժառանգութիւն անապականելի և անթառամ պատրաստեալ է մեզ յերկինս , որ տուաւ մեզ զօրութեամբն Այ յարութեան հաւատոց :

Նաև յորժամ բարերարն աստուած ետես եթէ ոմանք մեր զօրացան 'ի վերայ թշնամեացն , յայնժամ առաքեաց 'ի մէնջ զզօրութիւն իւր մինչև 'ի ժամ մի , եթէ խորհրդին ուշ դնեմք , ով սիրելիք , զիարդ ձանաչել զմեծ իւրաքանչիւր որպէս մարմնոյ 'ի պատերազմ , կամ թէ որպէս հանդերձեալք յաղթութեան . և թագաւորացեալ զթշնամիս պատերազմել ընդ մեզ խորհրդոց գիտութեամբ , և յայլ ցանկութիւնս հեշտութեան և անառակութեան և մեծամտութեան , որպէս նաև առանց ողջոյն կածեացի յայսկոյս և յայնկոյս . այսպէս զմեզ մարդ յայսց փորձութեանց : Յորժամ և սիրոյն իւր անհրաժեշտ յայտ , և կամի մեծարել 'ի յարաձայնութեան թշնամեացն , յայնժամ Այ բարերարն փայլ առաքեալ պատերազմաւորացն խաղաղ՝ առաքէ 'ի նոս զարձեալ զբարբը զզօրութիւն իւր և հաստատէ զախորժս և զօգնին և զանապականն նոցա , և չնորհէ նոցա մխիթարութեամբ զլուծին հեշտութեան , որպէս և զերեալ խեղ է . աւելի զլուծ իմ 'ի ձեզ և ուսարուք յինէն , զի հեզ եմ և խոնարհ սրտիւ : Յայնժամ մարդասէրն ած բակեալն սատանայ քանզի զաշխ որոտ նոցա , և 'ի զարձեալ

առաքէ զզօրութիւն սուրբ և հաստատէ զնա , և այս նոցա զզինուն և ուրախութեան , մինչև զօրագոյն զինել նոցա քան զթշնամիսն . որպէս զի մի կարասցեն նոցա նեղել , զնա մանաւանդ զօրութեան 'ի նոսա . որպէս առաքեալն փրկի ասէ՝ եթէ պատերազմականացն և առաւել զօրութիւն :

Այնուհետև յորժամ տեսցէ բարերարն ած՝ զզօրացեալ զսիրտ նոցա , առնու մի անգամ յինքն զզօրհն իւր և թագաւորացեալ զթշնամեան պատերազմել ընդ նոսա զի

շնորհս մարմնոյ և աշխարհ ցանկութեամբք , նախանձու թեամբք . երբեմն զնոսա առանց թէ ոչ : Նաև յորժամ տեսանէ զորացեալ սիրոյ առ 'ի պատերազմելն թշնամեացն , յայնժամ բաղձումն ած հասցէ ցարձակել առաքեալ , առաքէ նոսա զարձեալ զիւր զօրութիւն և հաստատէ զնա ընդ նեղս ընդ մխիթարութեան , որպէս և ասէն . աւելի զլուծ իմ 'ի ձեզ : Յայնժամ բարերարն ած բանեալ զմեզ նոցա , զի ծանիցէ թէ նա է զօրացուցիչ նոցա և հաստատիչ : Եւ այնուհետև առ

վարուցն յանմախաղ գիտնականութենէ հաւանել։ Եւ յայնժամ ծանուցեալ գիտասցէ եթէ ով է որ զօրացուցանէ զնա, եւ կամ զիւր ընտրողական կրօնաւորութիւն արժանի է ըստ կամացն նոյ գնալ։ Յայնժամ մարդն գիտէ զպատճառն նոյ հաստատելոյ բաշխում խոնարհութիւն եւ կրօնաւորութիւն, որպէս Պաւղոս ասէ. պատուիրանք նոյ հոգի խոնարհ։ Օ ի յաշխատութենէց պատուիրանացն զխոնարհութիւն եւ զզօրութիւն ուսանի 'ի խորհրդոց սրտին։ Իսկ յայնժամ զօրութիւն [illegible] ասէ յայտնել նմա զերկնային [illegible] խորհրդոց սրտի նորա, եւ տայ գիտել նմա որպէս արժան է առաջնորդել, եւ յայտնէ նմա զպատճառ հանդերձեալոյն որք յառաջ հանդերձեալն. եւ ուղղեկացեալ գիտասցէ եթէ աշխատութիւնք մարմնականք փոքր եւ սակաւք են առ մեծամեծ պարգեւսն նոյ զոր շնորհէ վաստակաւորաց իւրոց, որպէս եւ գրեալ է. ոչ ինչ արժանի են չարչարանք ժամանակիս այսմիկ առ հանդերձեալ փառսն նոյ՝ որ յայտնելոց է առ մեզ ըստ սիրելեաց իւրոց։ Յայնժամ բարերարն [illegible] յայտնել նմա զպատուասիրութիւն [illegible], եւ եղեալ յայտնի [illegible] խորհրդոց սրտի նորա, որով կարասցէ զինքն յամէն ցանկութենէ զզուշութեամբ պահել [illegible]։ [illegible] եւ այլ ինչ ընտրողութիւնք են [illegible] յայնժամ վայրի, զոր ոչ է ժամանակ ասել զամէն. այլ յորժամ յայս վայր եկեսցէ, շնորհի նմա ընտրողութիւն գիտել զամենայն։ Յայնժամ մխիթարէ բարերարն զնա [illegible] խորհրդոց սրտի սրբութիւն հոգւոյն՝ հանդարտել նմա 'ի նեղութեանց [illegible], եւ առանց փորձութեանց գիտել եւ համբերել, եւ մխիթարել յուրախ [illegible], եւ [illegible] զամենայն [illegible], եւ յուսադրութիւն նայել [illegible] նորա, եւ պահպանու-

նմա զպատճառն 'ի բաղում խոնար- հութենէ սրտի. որպէս եւ [illegible] Պաւղոս ասէ. [illegible] նոյ հոգի [illegible] է. [illegible] եւ 'ի [illegible] եւ 'ի [illegible] որ առ [illegible] խոնար- հութիւն եւ [illegible] սրտին [illegible]։ Յայնժամ շնորհէ [illegible] [illegible] [illegible]. եւ եթէ [illegible] [illegible] է [illegible], եւ [illegible] հանդերձեալոյ, եւ [illegible] հանդերձեալոց. եւ [illegible] ոչ [illegible]

են չարչարանք ժամանակիս առ 'ի [illegible] նոյ։ Յայն- ժամ [illegible] նմա յայտնել զհան- դերձեալ [illegible] եւ [illegible] զոր ոչ [illegible] ասել, [illegible] ամէն։ Յայն- ժամ մխիթարէ զնա [illegible] եւ [illegible] առ 'ի [illegible] եւ խոնարհութեան. եւ [illegible] [illegible], եւ [illegible] 'ի [illegible]

Digitized by Google

թիւն դնել լեզուի իւրոյ, և մեզ ամ տուրէք յանձնարարձ՝ ե-թէ զօրն ամենայն ասելաւ՝ լինէ ասել, լաւ՝ և ասել խակ ոչ. զի ասէ Յովհաննէս 'ի կաթողիկէսն. եթէ որ ոչ սանձահարեսցէ զլեզու իւր, այնպիսւոյն ընդ վայր է կրօնաւորութիւնն: Նոյն մեզ ամ տուրէք և ասելաւ ասել, բայց լսել և լուռ լինել. քանզի ասէ. լուր Իսրայէլ և լուռ լեր: Ոչ յորժամ առնիցէ չարխօսել և քաղցրութեան զգանս իւր, յայնժամ զասս իւր գնացուսցէ յուղղութիւն, և զձեռս իւր ձգեսցէ յարդարութիւն, և ընկալցի զպարգեւսն հանապազորդ աղօթից, և յամենայն ժամ տացէ զմարմին իւր յաշխատութիւն և 'ի հսկումն: Օ այս ամենայն արասցէ չարխօսել և կշռով և ընտրողութեամբ, և մի ամբոխութեամբ, այլ հանդարտաւոր կարգաւորութեամբ:

Նոյն թէ խորհուրդք մտաց իւրոց արհամարհեսցեն զհանդարտութիւն կարգաւորութեան հոգւոյն սրբոյ, որով արժանի իցէ ցանծութեան կալեալ զհոգին, և քաղցր բանիւ և լաւութեամբ և համբերութեամբ, եթէ զայս ամենայն անփոյթ արասցէ, յայնժամ զօրութեան հոգւոյն սրբոյ արտաքս 'ի նմանէ. և յարձակեսցին այնուհետև 'ի վերայ նորա փառաձութիւնք խորհրդոց և խռովութիւնք արտի և սրտազ մտածմանց և զբաղմունք խորհրդոց շարժմանց, և աներևոյթ չար և չարութիւն և լեզուաց անլռութիւն և յանդգնութիւն և ցասումն և ծաղր՝ որ ոչ վայել է սրբոց, և տրտմութիւն խռովական՝ որ նեղէ զտրտմական հոգին. Նա և արտասուս ևս զաճառութեան: Նոյն եթէ ջնջեսցէ ուխտ և զպարձուսցէ զխորհուրդ սրտին իւրոյ յանխրատ խռովութենէն, և ընկալցի զհրաման սուրբ հոգւոյն, այցելութիւն լինի 'ի վերայ նորա և օգնութիւն յայն. յայնժամ ծանուցեալ զխառնեսցէ մարդն այն, եթէ անպղծանէ լինի խորհուրդն իւր յայն, համապատաղորդ այս մխիթարութիւն և

բարոյ, և զպահ լեզուի և առակց ուղղութեան և ձևոյ արդարութեան և խնդրութեամբ աղօթից և վասն մարմնոյ և աղքատութեան աղօթ. այլ զամենայն չարխօսել և համբերութեամբ և ընտրողութեամբ:

Նոյն եթէ միտքն արհամարհեսցեն զհանդարտութիւն հոգւոյն սրբոյ, յայնժամ ջնջեսցէ հոգւոյն սրբոյ անփոփոխելին, և արտաք մարմնոյ խռո-

մեկնութենէն զնա: Իսկ եթէ կալցի զհանդարտութիւն հոգւոյն սրբոյ. համանի լինի նմա. յայնժամ զպաշ մարդն, եթէ արդար է անկարողա կալ և մնալ և արտաքսել անդամն: Իսկ այսուհետև զայս ասեմ. եթէ ոչ քակեսցէ որ յամենայն հեթոյ յառաջնորդ այսուհետև, ոչ կարէ համառօտել անխորհութեամբ բարութեանցն:

Digitized by Google

հանգիստ՝ որ առնէ զմեզ կատարեալս, և ոչ այնուհետև խռովիցէ ոչ յահէ և ոչ յանհետև, որպէս երանելին Դա-ւիթ խնդալով գոչէ և ասէ. առ քեզ աղաղակեցի և բը-ժշկեցեր զիս։

Այլ առեալ խոկ սիրելութեան ձերում խրատ մի. մեծ է ընդունել զայսպիսի հանգիստ յոգի և լինել կատարեալ։ Այլ արժան է մարդոյն այնմ ստանալ իւր հեզութիւն խո-նարհութեամբ և ցածութիւն լռութիւն յոյժ 'ի խորհուրդս սրտին 'ի ծածուկս և յերևելիս մարմնոյ իւրոյ. և առ-նել զինքն արհամարհել զթշնամանս ուրուք և զպա-տիւ մարդկան, ատել զկեանս իւր 'ի սուտակապաշտ ծառայութէ, հաճել մարդկան, և կամ դարձեալ հա-կառակել և տրտմեցուցանել զկեանս ուրուք. այլ յամե-նայն ժամ յայտնի աղատարաբարոյ, և յամենայնի յայտ-նի զգուշութբ սանձահարել զինքն, և զմահ առաջի իւր նշանակել հանապազ, և հրաժարել յաղտոյ և 'ի մե-ծութէ և 'ի փառաց աշխարհիս, մանաւանդ որպէս ա-ռաքեալն ասէ. եթէ աջ ակն քո գայթակղեցուցանէ զքեզ՝ խլեա զնա և ընկեա 'ի բաց, այսինքն սիրելիք ազ-գատոհմք։ Եթէ կարեմք ըստ Այ կեալ, ոչ նոքա միայն չկարեն գայթակղեցուցանել զմեզ, այլ թէ և մեր խոկ մարմինս սխալեցի, արտաքսցուք ըստ այնմ, եթէ որ կորուս-ցէ զինքն՝ գտցէ զնա։ Քանզի ոչ եմք մեք կենդանիք, այլ կենդանի է 'ի մեզ Քս։ Եթէ այսու ամենայնիւ անսասան և հաստատուն վարիմք, և ընտրողութբ և որոշո-ղութբ բանից և գործոց զգուշանամք, պարգևէ մեզ Այ զհանգիստ իւր, և լինիմք կատարեալք շնորհօք և մար-դասիրութբ Տեառն մերոյ Յսի Քսի, որում փառք յա-ւիտեանս. ամէն։

### ԵՐԱՆԵԼՒՈՅՆ

# ՄԱԿԱՐԱՅ ՃԳՆԱՒՈՐԻ

## ԲԱՆ

Որոց լսեն զբանն այս և առնեն, քաջի պտուղ նշանք ՚ի նոսա այսոքիկ են. հեզութիւն, լռութիւն, քաջութիւն, երեսաց տրտմութիւն, ՚ի նմին մնալ, պարապումն, հառաչանք, ցաւ սրտի յաղագս բարեպաշտութեան եղեալ: Նաև գործք՝ տքնութիւն, ժուժկալութիւն, պահք, հեզութիւն, երկայնմտութիւն, անպակաս աղօթք, ընթերցումն ամենայն գրոց, հաւատք, խոնարհութիւն, եղբայրսիրութիւն, վշտակցութիւն, սէր, հնազանդութիւն, բարեսիրութիւն, պարկեշտութիւն. և քաղցրն լոյս, որ է տէրն: Նաև ոչ ապաշխարողացն պտուղ կենացն յաւիտենից՝ նշան այսոքիկ են. ձանձրութիւն, զբօսասիրութիւն, այլք և անմիտ հայել և միտ անձինն ոչ դնել և ոչ կամել լսել զօգտակար բանս, տրտմութիւն, ցանկութիւն: Նաև գործք՝ անյագութիւն, շուայտութիւն, արբեցութիւն, բարկութիւն, չարախօսութիւն, փքացեալ միտք, հպարտութիւն, անհաւատութիւն, ընդվզութիւն, անկարգաւոր սայթաքումն, մոռացկոտութիւն, զօշաքաղութիւն, արծաթսիրութիւն, նախանձ, գրգռութիւն, արհամարհութիւն, անհնազանդութիւն, չարախօսութիւն, անժամ ծաղր, փառասիրութիւն, ոչ ընդունել կամել զխրատ. և քաղցրն խաւար, որ է սատանայ: Զօրաւոր է՝ ա̃ծ պահել զմեզ յամենայն չարէ և ՚ի փորձութենէ և ՚ի հանդերձեալ ժամանակէն՝ որ գալոցն է ՚ի վերայ ամենայն տիեզերաց, զի գտցուք զողորմութիւն ՚ի Տեառնէ ՚ի ձեռն սուրբ հոգւոյն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

1 Այգ. եղբայր. ընկալ զբարին ՚ի քեզ և լեր պտղաբեր կենացն յաւիտենականաց, իբրև զարմաւենի պտղալից և քաղցրաճաշակ տնկեալ ՚ի տանն տեառն և ՚ի գաւիթս միանձանց ՚ի Քն Յս ՚ի տէր մեր, որում վայել է փառք:

# ԱՌ ՀԱՅՐՆ ՄԱԿԱՐ

## ՀԱՐՑՈՒԱԾՔ ՎԱՍՆ ՈՐՈՇՈՂՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ[1]

ԱՐԱՐ տէր զմարդն և եդ զնա 'ի դրախտին փափկութեան, զամենայն իսկ զգուշութիւն առաջ ունելով նորա 'ի փրկութեան իւրում։ Որպէս եթէ և լուաւ նա այնմ որ խաբեցողին զնա, յայնժամ առ նա զխրատս՝ ամենայն և խոհեցին ընկեցեալ եղև աստուստ 'ի չքնաղ և 'ի մեծ փառացն իւրոց. զի ծածկեաց մարդն՝ եթէ զանձն ախտաք որ մերձ ձեռն զնա յայն, և զի աղաչեաց զաւրինապահն տէր, որպէս զի օգնեսցէ նմա, և ապա կարասցէ կալել 'ի բաց յինքենէ զամենայն ախտս։ Այս ամենայն մեղք են յանձինս մարդոյ, որ կարեն՝ և քակեալ որոշեն զնա յայն։ Առաջնորդն է որ սիրեաց զինքն յամենայն ախտից և յամենայն արդարութենէ առնելոյ և մարդկան. զի ոչ խոր բանաւոր է ընդդէմ նորա տառապանաց այդ, և լսէ զձայն տեառն որ ասէ. բարձի ծանր և համառատութիւն, 'ի սակաւուց եղեւ համառատութիւն, 'ի մեծաց բարձմանց կարաւացոց զերեղ, եկ մուտ յուրախութիւն տեառն քո։ Նախ ոչ կամին կատարել զխրատ իւրեանց որ բան մարդկանց է, և ոչ կամին բժշկել զինքեանս 'ի բժշկութենէ ասացեալ տառապանաց, և անկանին 'ի խառնակս աղտեղեաց ուր է ամենայն կայեկտ. զի մանուկ մեծքն 'ի սուրբ պատուիրանին 'ի ժամ հարկաւորութեանն։ Նախ պատուիրանք ախտից այսոքիկ են. պոռնկութիւն, արծաթասիրութիւն, չարախօսութիւն, բամբասանութիւն, նախանձ, փառասիրութիւն, հպարտութիւն. այսոքիկ և որ նմանն են սոցին. Ո՞րն է պոռնկութիւն. պոռնկութիւն է ցանկութիւն, յաղագս մեղաց, զառաքելութիւն, զառաքինութեան չարութիւն, պատճառ ճշգրիտ մարդոյ, զղջումն, ընդ վայր ծառայ, անասնութիւն, թշնամութիւն, զանգիտութիւն. Ո՞րն է արծաթասիրութիւն. արծաթասիրու-

[1] [illegible]

[2] [illegible]

[2] [illegible]

րութիւն է անհաւատութիւն, անյուսութիւն, անգթութիւն, անողորմութիւն, ագահութիւն, արհամարհութիւն, անբարեմտութիւն, ամբարտաւանութիւն, անձնահաճութիւն և յոչ հայել 'ի դատաստանսն այ ։ Ո՛ ինչ է չարակնութիւն ․ չարակնութիւն է չարախօսութիւն, նախանձ, չարակամութիւն, մարդահաճութիւն, անձնասիրութիւն, անգիտութիւն, ատութիւն, սուտ վկայութիւն ։ Ո՛ ինչ է բարկութիւն ․ բարկութիւն է հաստատել զիւր կամսն, հակառակութիւն, վիճումն, նենգութիւն, սուտ գիտութիւն, կարծմտութիւն, նեղկոտութիւն, ծանծրութիւն ոչ բառնալով զթշնամանս ուրուք, տալ և առնուլ ։ Ո՛ ինչ է փառասիրութիւն ․ փառասիրութիւն է անզգամութիւն, սիրել զաշխարհս և որ ինչ 'ի նմա է, և լինել անտանելի 'ի մէջ մարդկան, և կատարել զախտս անգիտութեան ։ Ո՛ ինչ է հպարտութիւն ․ հպարտութիւն է խստասրտութիւն, անհնազանդ լինել ամենեցուն և քաջալերել յիւր զօրութիւնս, և համարելով զինքն իմաստուն, և առնելոյ զիւր եւեթ կամսն, և արհամարհել զընկերն, և կարծել զինքն գիտուն զոլ, և ունելով զինքն իբր ոչ խելք կարօտ զոլ ։ Այս ամենայն գործք յանձն մարդոյ, մինչ որոշեն զնա յայ ։ Այս է զոր եբարձ Ադամ յորժամ եկեր 'ի պտղոյ ծառոյն ։

Արդ որք կամեսցին այ հաճոյ լինել և Քի սիրելի, յառաջ քան զամենայն զխոնարհութիւն և զհամբերութիւն և զերկայնմտութիւն ստանալ պարտին 'ի պատահել նեղութեանց, թէ մարմնական ախտիւք ինչ և ցաւք, կամ թէ որ գան 'ի վերայ մեր 'ի չար զօրութեանցն ․ եթէ վնասք ընչից և եթէ անարգութիւնք, եթէ թշնամանք որք խափանիչք անտի լինին, զի մի մերժեսցուք առ այ ։ Այլ յայտնապէս պարտի խնդալ խնդութեամբ և գոհանալ զայ, և նախ քաջութեամբ բառնալ 'ի վերայ այնքան նեղութեանցն ամենայնի որ գան սիրողին Քի ։ Իսկ թէ ոչ այսպէս պատրաստեսցի, վշտանայ և նեղի՝ ոչ քաջանալովն իւրով ․ զի այսպիսիս որդի կենաց ոչ կարէ լինել, վասն զի ոչ եղև նմանող սրբոցն որպէս 'ի սկզբանէ հարքն և հայրապետքն և մարգարէքն և առաքեալքն և մարտիրոսքն և ամենայն իսկ արդարքն գտան 'ի նեղութիւն և 'ի հարկաւորութիւն և 'ի փորձութիւն զանազանս, և յաղագս այսորիկ եղեն սիրելիք այ ․ Այլ դարձեալ ասէ ․

որդեակ, եթէ գաս ծառայել տեառն ա̃յ, պատրաստեա զանձն քո 'ի փորձութիւն։ Որպէս և այլուր ասէ՝ եթէ ոչ պատահեն քեզ վիշտք՝ իբրև զաւրի ինչ ընկալ, գիտելով քո թէ առանց տեառն ոչ ինչ լինի, որպէս և գիտացաք յաղագս սրբոյն Յովբայ՝ մինչև ցմարմինն և ցուղեղն տանջեալ նորա, և զայն միայն որ առ ա̃ծ սէրն էր՝ ընկալաւ. հանդերձ համբերութե̃ և գոհութեամբ յաղթեաց իւրում փորձութեանցն, և յաղագս այսորիկ յաղթող քան զամենեսեան եղև։ Իսկ առս զկատարելագոյնսն ասէ իբրև ա̃յ սպասաւորք 'ի համբերութիւնս բազումս, 'ի նեղութիւնս 'ի վիշտս 'ի բանտս յանձկութիւնս 'ի հալածանս։ Եւ դարձեալ յորժամ անշարժ եղև Պաւղոս, գոչէր ասելով. ո՞վ մեկնեսցէ զմեզ 'ի սիրոյն Քի. նեղութիւն, թէ անձկութիւն, թէ հալածանք, թէ սով, թէ մերկութիւն, թէ վիշտք, թէ սուր. զի վասն քո մեռանիմք զօրհանապազ։ Եւ դարձեալ ասէ՝ թէ ոչ մահ և ոչ կեանք և ոչ հրեշտակք և ոչ իշխանութիւնք և ոչ զօրութիւնք և ոչ որ կանս և ոչ հանդերձեալքն, ոչ բարձրութիւնք, ոչ խորութիւնք և ոչ այլ ինչ արարած կարէ մեկնել զմեզ 'ի սիրոյն ա̃յ որ է 'ի Քս Յս 'ի տէր մեր։ Եւ տէր մեր ասէ. նեղ և նուրբ է ճանապարհն որ տանի 'ի կեանսն։ Իսկ երանութիւն սգաւորաց ես. և որ նեղին յաղագս տեառն, պահի նոցա կեանք. երանելի էք, ասէ, յորժամ նեղեն զձեզ, և զձեզ հալածեսցեն և թշնամանիցեն և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ. ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են։ Ո՞ իսկ է արժանի որ վասն Քի հալածի և օտարանայ և 'ի փորձութիւնս զանազանս մտանիցէ և չարչարիցի, և յայսր ամենայնի վերայ խնդայցէ և գոհասցի զա̃յ։ Երանի այսպիսւոյս, զի մեծ համարձակութիւն կայցի յաւուրն դատաստանին առաջի բեմին Քի մեծի և ահաւորին, որում փառք յաւիտեանս։

Digitized by Google

Բ. Ասէ՝ որպէս պարտի իւրաքանչիւր ոք ժողովել զիւր զմիտսն և զխորհուրդսն յամենայն յաշխարհս. և մի ինչ այլ խնամել, բայց միայն զանձնկալութիւն այս և զսէրն որ առ Նա է՝ ամբողջ պահեցուցանել:

Գ. Որպէս և մայր ունելով մանկունս, և նոքա երթիցեն այլուր, և կամ որպէս յանպէտս յածիցին ընդ վայր, ոչ ապաքէն պատեալ մօրն ժողովէ զնոսա 'ի նոյնն՝ խրատելով և օրինադրելով զնոսա. դոյնպէս և անձն պարտի ամենայն ուստեք զիւր խորհուրդսն յածեալս ժողովել իբրև զիւր մանկունս: Մի թէպէտ և 'ի հոգոց աշխարհիս և կամ 'ի մեղաց ինչ ցրուեսցին, բայց սակայն որչափ իւր կարողութիւն գոյ՝ միշտ և անդադար պարտի ժողովել զխորհուրդսն 'ի տուն մարմնոյ իւրոյ առ ինքն, և հանապազ ակն ունել տեառն. կալ 'ի հաւատոն հաստատունս և 'ի սուրբ սէրն որ առ Նա է, և ասել թէ երբ եկեսցէ տէր ողորմութեամբ ժողովել զայնոսիկ առ ինքն, և արասցէ զխորհուրդս մեր ծածկեալս և երկնայինս և բանականս, և ուսուսցէ նոսա աղօթս ճշմարիտս և անպղտորս և անյածս: Իսկ եթէ մեք յաղօթս կալով և զխորհուրդս մեր արտաքոյ յածեսցուք, և մեզէն իսկ մատնեսցուք զմեզ և թողացուցանեսցուք 'ի մտածութիւնս մեղաց և ոչ ժողովեսցուք զնոսա: Դարձեալ և ոչ զկամս մեր ձգեսցուք առ Նա, և բռնադատեսցուք մեք իսկ մեզէն զխորհուրդս մեր առ տէր. որպէս զի ինքն իսկ տէրն կամօք իւրովք եկեսցէ առ մեզ, և ողորմութեամբ իւրով ժողովեսցէ զմեզ առ ինքն: Իսկ արդ մեր թուլութեամբ և ածելով արտաքոյ ընդ վայր զմիտսն, և մարմինն մեր թէ կայցէ յաղօթս առանց մտացն, այլ ոչ թէ

[1] Ասաց հայրն Մակարի՝ թէ պարտ է անձին զխորհուրդ իւր ժողովել 'ի յաղօթս և 'ի սաղմոսերգութիւն զգուշութեամբ, և մի այլ ինչ 'ի մտի կալցէ քան զմնալ գալստեան տեառն և մտածել զսէր Նորա և ունել 'ի մտի և սրտի. և ընդ Նմա միայն բնակել լիցի: Եւ որպէս մայր զի ժողովէ զորդիս իւր և ուսուցանէ զնոսա, այնպէս և անձն ժողովեսցէ զցրուեալ խորհուրդս իւր իբրև զորդիս, թէպէտ և 'ի մեղս ցրուեալ իցեն. և օրինադրեսցէ մնալ գալստեան տեառն հաստատուն հաւատով, որպէս զի եկեսցէ և ուսուսցէ զհոգին նորա ճշմարիտ և անպղտոր աղօթիւք ըստ կամաց իւրն հաճութեան:

Digitized by Google

զնա զանձն տալ առ քեզ քեզով կամօքդ, որպէս և ոչ դու քեզով կամօքդ փութաս առ նա։ Ամենայն իսկ մեր հաճոյ լինել տեառնն և միայն անձինն ՚ի խորհուրդսն են։ Այլ փութա ՚ի ներքոյ հաճոյանալ նմա ՚ի խորհուրդսդ, և յամենայն ժամ ՚ի ներքս ակն ունել քո տեառն. և միշտ և հանապազ փութացիր ՚ի ներքոյ խնդրել զնա խորհրդովք, և բանաբար իսկ հարկեցո զկամս քո բարեգործութեան՝ զախորժակս մտացդ ունել առ տէր. և ապա տեսցես որպէս ինքն կամօք իւրովք գայ առ քեզ, և օթեվանս առ քեզ արասցէ։ Ըստ որչափ զմիտս քո բանաբարես, իբր եթէ կամօքդ առ ՚ի խնդրել բաղդով սրտիւ քեզով զնա, նոյնպէս և առաւել նա հարկեսցի յիւրոց գթութեանցն և ըստ իւրում բարերար քաղցրութեանն գալ առ քեզ և հանգուցանել զքեզ հոգեպէս։ Ամենևին իսկ ոչ եթող զքեզ երբէք, այլ եկաց անսասաբար մօտ առ քեզ, տեսանելով նորա զքո զմիտսդ և զխորհուրդսդ, և հայելով ՚ի մտածութիւնս քո և տեսանելով թէ որպէս կարդաս առ նա. եթէ յամենայն անձնէ և կամ թէ ծուլութեամբ, մինչև յաւիտենականով և կամ թոյլ մտօք. մի՛ ախտակիր մեղացն գործառնութեան ինչ. Արդ յորժամ տեսցես զնա եթէ յամենայն ժամ հանգերձ գործառնութեամբն սիրելիս զխորհուրդս քո առ տէր ած և առ նորա միայն հայեցուածսն, յայնժամ ինքն տէրն իսկ յայտնի քեզ, և երևեցուցանէ զինքն անձին քում անճառութեամբ, և ցանկալի գեղեցկութիւնն իւրով պայծառացուցանէ զքեզ, և նոյնպէս օգնականութեամբն իւրով առլցուսցէ զքեզ, և զյաղթութիւն իւր զամենայն առ քեզ առնէ, և զերծուցանէ զքեզ յաներևոյթ թշնամեացն քոց. հայելով տեառն յառաջագոյն ըզքո առ նա զանձկալից զխնդրուածս, և զմտացդ քոց զանկեկալութիւն անսխալ, և անպակասաբար միշտ ունել առ նա զուղիղ սէրն սրտի մտօք. և այնպէս ուսուցանէ ըզքեզ և տայ քեզ ճշմարիտ աղօթս և զսէրն հաւատոց և զճշմարտութեան, և զխնդութիւնն իսկ զերկնայինն և զճշմարիտն՝ որ է ինքն իսկ Քրիստոս ամենայնի առ քեզ եղեալ։

Հ. Է՞ է որպէս պարտ է դադարել ումեք ՚ի չարն։

Պ. Ո՛չ, ի մի բնաւ ամենևին իսկ ունիցի ոք յերկնաւն յիշողութիւն ինչ մեղաց։

Հ. Արդ՝ զինչ գործս բարիս արդեօք պարտ իցէ առնել ՚ի սրտին, զի ինքեան պատրաստիցէ միայն մտօքն։

Գ. Այս է բարի կատարեալ գործառնութիւն հաւաքե-լոյ, հայեցեալ յԱծ հանապազ անխզելով մտօք։

Հ. Արդ՝ որպ պարտին միտքն հալածել զխորհուրդսն։

Գ. Ոչ կարէ ամենեւին յինքենէ, քանզի և ոչ զօրութիւն իւր ունի. այլ յորժամ խորհուրդ ինչ անկանիցի յանձն, առժամայն իւր ապաւինել պարտի առ այն որ ասացին զնա՝ հանդերձ աղաչանօք և պաղատելով. և նա ապա հալէ զնոսա իբրև զմոմ, քանզի Ած մեր հուր ծախիչ է։

Հ. Որպէս՝ կամ ի՞նչ հայրն Սկիւթայ, որ է յԵգիպ-տոս անապատին, ընդդիմանալ խորհրդոցն ևեթ վարեսցին միշտ։

Գ. Այս այն բարի գործառնութիւն նոցա մեծ էր և ըն-տիր, բայց աշխատութիւն մեծ ունէր, և ոչ ամենե-ցուն է դիւրաշահելի։

Հ. Արդ՝ որպէս ոչ ամենեցուն է դիւրաշահելի։

Գ. Քանզի զարհուրանս և ցնորս զխելացն ունի։

Հ. Որպէս։

Գ. Որդ յորժամ խորհուրդ ինչ եկեսցէ յանձն, և կարասցէ ինքն ապա բազում ջանութեամբ հանել զնա յին-քենէ, դարձեալ և այլ խորհուրդ գալով նա ընդունի զհողմն մարդոյն յինքն. և այսպէս ապա զամենայն իւր օրն անձն ընդդիմանաբանել ընդ խորհրդոցն իւր, ընդ-դիմելով ընդ նոսա յարուցեալ հակառակութեան. ապա ոչ և երբէք պարապէ անձն Ածային տեսութեանն։

1 Հ. Որպիսի՞ ինչ գործ պարտ է առնել ՚ի մտի լաւելեայն և պարա-պել յայն։ Գ. Այս է կատարեալ գործ կրօնաւորի, զի միշտ տեսցէ զԱծ ՚ի մտի անխափանելի։

2 Հ. Որպէս պարտ է մերժել ՚ի մտաց զաղտեղի խորհուրդս։ Գ. Ոչ կարող իցէ որ առնել զայս անձամբ իւրով. այլ յորժամ այնպիսի խոր-հուրդք անկանին ՚ի մտի, արժան է դիմել ՚ի պաղատանս առ Աստուծոյ իւր, և նա հալածեսցէ զնոսա իբրև զմոմ, զի Ած մեր հուր ծախիչ է։

3 Հ. Իսկ որպէս հարքն սկզբանցն ընդհակառակս խորհրդոց գործէին։ Գ. Իսկ այն ևս գործ մեծ է և բարձրագոյն, այլ յոյժ աշխատութիւն ունի, և ոչ կարեն առնել զայս ամենեքեան։

4 Հ. Որպէս ոչ ամենեքեան առնեն։ Գ. Յորժամ խորհուրդք ան-կանին ՚ի մտի, և բազում պատերազմաւ արտաքսեսցես, յայնժամ այլ խորհուրդք գայ մտանել յանձն քո. և այնպէս միշտ զհանապազ պա-տերազմիս ընդ խորհուրդս, յայլ է ձանձրութիւն և պակասէ տեսութիւն և այնպէս ընկղմի ՚ի խորհրդոցն։ Այլ այնպիսին որք կարողացեալ յաղ-թել խորհրդոցն, նոցա քաղցրագոյն անձամբ պատերազմեցան ...

Digitized by Google

Հ. Ապա՛ որո՞վ օրինակաւ այժմ խորհուրդ մեր ապաւինեսցի յԱծ։

Գ. Այլ եթէ առ քեզ խորհուրդքն պատանեկութեն լինիցին մերձ, դու առժամայն իսկ կորզեալ ձգեա զնա, և բաց զուշդ քո և զմիտսդ, 'ի վեր զնա հանջիր հանդերձ փութով, մի յամեսցես. քանզի յամելն 'ի քեզ յերկար խորհրդոյն՝ ըստ նմա զիջանելոյ առ հեշտանս ածէ։

Հ. Ապա՛ եթէ փառասիրութեան խորհուրդն եկեսցէ առ քեզ եթէ ուղղեցեր զքեզ, ո՞չ պարտի ընդդիմաբանել ընդ նմա խորհրդոյն իւր։

Գ. Այլ դու յորժամ և այնպէս ժամու հակառակիս ընդ նմա բանիւք, նա ևս քան զևս յայժ հզօրագոյն լինի, և առաւել իսկ քան զքեզ նա ևս շատ գտանէ ընդդիմաբանութիւն. և ապա ոչ այսչափ հոգիքն կարեն առընդունել. քանզի փառասէր դու որպէս թէ ասելով 'ի քեզ՝ եթէ ես ինձէն իսկ եմ բաւական կասել ընդդէմ մարտիցն։ Որպէս ով՝ հայր հոգևոր ունելով, զամենայն իսկ զհոգսն իւր 'ի հայրն ընկենու, և ինքն անհոգ կայ ամենայնիւ, և դատաստանս ոչ ևս ունի առ 'ի յԱյ, դոյնպէս և որ իւրն ապա զանձն՝ չպարտի ամենևին իսկ հոգ

չալ. և յօժարութիւն ունէին առնչանալ նոցա յամելով 'ի նմին պատերազմի, և 'ի ձեռն պաղատանաց որ առ Ած՝ շարժեցին 'ի գութ ողորմութեանն Այ. և ապա այնպէս օգնութեամբն Քի յաղթեցին և խորհրդոցն։

1 Հ. Որո՞վ հնարիւք զինեսցեն խորհուրդք առ Ած. որովհետև այսպիսի յուզմունք խորհրդոց խափանիչք են։ Գ. Եթէ գայցէ 'ի միտ քո պատանեկութեն խորհուրդ, յափշտակեսցես զնա և կացո առ դատաստանին Այ. այսպիսի օրինակաւ և զամենայն խորհուրդ արասցես. մինչ գայցէ առ քեզ՝ դու առեալ զնա կացուսցես առաջի ահաւոր թագաւորին Այ, և խորհուրդքն ցրուեալ հալին յահէ մեծին Այ՝ և դու զերծեալ 'ի չարէն մնաս անվնաս առ ողորմութեանն Այ. և եթէ թոյլ տասցես խորհրդոց կալ յայն ատան յորս եկին, զխառնեսցես զի յամելն 'ի չար խորհուրդս հեշտութիւն մեղաց լիցի։

2 Հ. Եթէ անխորհրդականութիւն խորհրդոց մնալով ասեն՝ կատարեցեր զամենայն առաքինութիւն, մի՞չ պարտ լիցի խօսել ընդ խորհուրդս։ Գ. Յորժամ գտանել և խօսել ոք սկսանիցի զայն, նա այլ ևս զօրաւորապէս սկսանի մարտնչել. զի բազում պատճառս գտանէ նա՝ թէ ընդդէմ կացցես նմա առանց զօրութեան Այ կամ ոչ ինչ համարելով զնոսա առ սէրն Այ զոր կարծես ունել, և դու ինքնակամ պատերազմել համարձակիս առ նոսա զօրաւոր զքեզ համարելով, և ոչ հոգին սուրբ օգնեսցէ քեզ. քանզի հպարտացեալ դու գտանիս լինիս առանձին քո և թշնամւոյն պատերազմի։ Զի զոր օրինակ յորժամ ունիցի ոք հայր հոգևոր, զամենայն գործ իւր 'ի նա յանձնէ զհոգւոյ և զմարմնոյ և ինքն ոչ ինչ հոգայցէ, այսպէս և որ յանձնեսցէ զանձն իւր յԱծ, ոչ



Digitized by Google

տանել իւրոց բազում խորհրդոցն, և թէ հակառակել և կամ թէ ընաւ տեղի իսկ թողուլ նոցա մտանելոյ 'ի քո անձնդ: Արդ եթէ մնացէ եւս 'ի քեզ աղտեղի խոր-հուրդք, դու անդէն 'ի վեր առ հայրն քո հանձիր փութով. և աստանաւ՝ թէ ոչ ունիմ ես ընդ քեզ իրս, ահաւասիկ է հայրն իմ, նա գիտէ: Այլ եւ՝ մինչ դու դեռ տանջիս, 'ի մէջ ճանապարհի թողու զքեզ և փախչի, քանզի և չկարէ իսկ գալ առ հայրն քո ընդ քեզ և ոչ ընաւ կալ առաջի նորա: Արդ քան զայս բարի գործանութի մեծ և յոյժ անհոգ ոչ եւս այլ գոյ իսկ յամենայն եկեղեցւոջ:

Հ. Այլ՝ արդ որպէս և թէ ինքն սկիւթացի հարքն ընդ-դիմակ և հակառակող խորհրդականքն իւրեանց միշտ հա-նապազ ընդ թշնամիսն՝ զասան նոքա հաճոյք են:

Գ. Վասնզի նոքա պարզամտութբ և հանդերձ երկիւ-ղիւն էին առնելոյն զինչ և գործելոյնն, յաղագս այսորիկ ա̃ծ էառ և ընկալաւ զնոսա. և յետոյ ապա ինքն իսկ բարի գործանութեանն իւրեանց հանդերձ իւրովք իսկ տեսութե̃ն եկն առ նոսա կամօքն ա̃յ, և յաղագս բա-զում նոցա աշխատութեանն զոր միշտ վաստակէինն՝ և յոյժ իսկ ա̃ծսիրութի նոցա: Որպէս իսկ նա մեծն այն, որ զայսպիսի ասոյց մեզ՝ եթէ եղեալ իմ 'ի Սկիւթ, չա-գայ տեսանել անդ զմեծ ոմն 'ի սուրբ հարանցն՝ որոյ բա-զում իսկ ժամանակս կեցեալ էր անդ: Այլ տեսեալ նո-

իցէ պարտ հոգալ ինչ: Այլ թէ գործեալ գայ առ քեզ, հան զնա 'ի վեր առ հայր քո և ասասցես. ահա դու և ահա հայր իմ, ես ոչ ինչ գիտեմ: Այսպէս բարբառեսցես զնա յարաժամ 'ի վեր առ ա̃ծ. յայն-ժամ թողեալ զքեզ փախչի 'ի քէն, զի ոչ է կարող գալ ընդ քեզ առ հայր քո, և ոչ կարէ կեալ առաջի փառաց երեսաց նորա. և քան զայս յաղթութիւն մի և իցէ առաքինութիւն ոչ ոք բարձրագոյն և մեծ ի-ցէ առաջի ա̃յ:

Հ. Եւ որպէս սկիւթացիքն հակառակէին խորհրդոց, և հաճոյ ե-ղեն ա̃յ: Գ. Զի նոքա հեզութբ և երկիւղածութն ա̃յ առնէին զայս, վասն այսորիկ ա̃ծ օգնէր նոցա. և զի պարտ է հակառակ կալ խորհրդոց որք գերել ջանան զմեզ, և ոչ տալ տեղի նոցա և ոչ մի, այլ պաղա-տանօքն առ ա̃ծ, զի զօրութբ տեառն ընկճեսցուք զնոսա որպէս յա-ռաջագոյն ցուցաւ, և աստ կրկնեցաւ վասն այն, զի զգուշասցուք յամ-բարտաւանութե̃ որոյ հակառակն ա̃ծ է, և կործանութն մեծ: Իսկ որք 'ի վերայ հիման խոնարհութե̃ և հեզութե̃ շինեցին զպատուարն խոր-հրդոց, նոքա յետոյ շնորհաց հոգւոյն հասին և տեսութե̃ ա̃յ արժա-նացան: Որպէս և պատմէր մեծն այն որ զայս ուսուցանէր մեզ՝ եթէ գնացի երբեմն 'ի Սկիւթէ, մտի առ ծեր ոմն մեծ և սուրբ որ անդ ծե-րացեալ էր: Եւ իբրև ողջունեաց զիս և նստաւ և ոչ ընաւ խօսեցաւ ընդ

Digitized by Google

րա զկա՛ միայն ողջոյն ետ ինձ և նստաւ, և այլ ոչ ես նա ինձ պատասխանի ետ. բայց միայն նստեալ իմ և ՚ի ատեսութեն պարապելով, և նորա զօրհնայն գործելով, համբ բաւն ոչ կոանդնեցաւ և նայեցաւ յիս և ոչ ուտել հրամայեաց ինձ. և սակայն ունելով զկեց որ պահեալով եկաց զկեց որն ամենայն ատամնց ուտելոյ. և նա ինքն եկաց մինչ զօրն որն մաննելով զջուանն: Այլ ինքն երեկոյ եղև, զարդեալ ինքն արմաւենի թերթեաց և զամենայն գիշերն նստաւ գործելով: Այլ ՚ի առաւօտուն առ ուրն պատասխանի առեալ առէ ցիս. եղբայր, ուստի գտեր դու զգարի գործանաւութիւն զայդ: Այլ ես ասացի ցնա. զաւ, աբբայ, ուստի ունիս զբոյդ, և քանզի մեք ՚ի մանկութենէ զայս բարի գործանաւութիս ուսաք անձել ՚ի հարանցն մերոց: Այլ ծերն ասէ ցիս. մեք այսպէս ինչ ուսանեմք ընտելութէ ՚ի հարցն մերոց. այլ որպէս տեսանես ինձ աստ, զոյնպէս մնացի զամենայն ժամանակս իմ. ասկաւ մի ձեռագործ, ասկաւ մի խոկումն սուրբ գրոց և սակաւ մի յաղօթս կալ, և ըստ զօրութեան իմոյ աղօթել զխորհուրդս, և ընդդիմամարտութիւն հակառակել ընդ այնոսիկ որ գան ՚ի վերայ մեր չար խորհուրդքն: Այլ այսպէս, ասէ, առնելով իմ, ասպա տեսութեան հարկն ինքնին եկն առ իս, իմ ոչ գիտելով ըստ ամենայնի եթէ այսպիսի տեսութիւն անմահ ունէին: Այլ ես ասացի նմա, թէ և ես ՚ի մանկութենէ իմմէ այսպէս ուսայ որպէս գիտացեր վասն իմ:

Հ. Ո՞րպէս ինձ՝ թէ պիտոյ օգնականս աղաւօթի այսպիսի հայել ՚ի տեսութիւնսն:

իս. և ես նստեալ նայէի և նա հիւանդի զախմայն, և ոչ նայեցաւ յիս և ոչ կերակրեաց զիս, զի էի տեսանել զասացեալ մեզ. այլ գործեաց սուրմանում մինչև ցմեասասանեբորդ ժամն: Իսկ ապա ասէ ցիս. եղբայր, ուստի գտեր զառաքինութիւն զայդ հանգերութեան: Իսկ ես ասեմ. և դու ուստի գտեր զառաքինութիւն լռութեան և զանշփոթութեան խորհրդոց. այլ մեք ՚ի մանկութենէ յայս կիրթ եմք ՚ի հարցն մերոց հանգերութեան ժուժկալութեան: Իսկ ծերն ասաց այն ասէ ցիս. զայսպիսի առաքինութիւն ՚ի հարցն ոչ ընկալայ, զի զհոգւոյն ասմնել կարողութիւն ոչ էր իմ, զի ՚ի վեր եմն զան զխոր մտացն. այլ որպէս տեսանես զիս այժմ, այսպէս մտադիր զասացեալ իմ. սակաւ ինչ գործել և ընթերցեալ կեալ, և ՚ի աղօթել ըստ կարի ոխնաս և ընդդէմ կալ խորհրդոց, որով եկն առ իս հոգևոր տեսութիւն, և ես ոչ գիտէի թէ իցէ այս բնաւ առաքինութիւն: Անտ ասեր զի սկսեալ է ՚ի ձեռն խոնարհութեան յաղթեցին խորհրդոցն. արդ և դու այնպէս կարգես ընդդէմ խորհրդոցն.

Գ. Գիրք սուրբ ցուցին մեզ թէ որպէս կամ իցէ ։

Հ. Ո՞րպէս ։

Գ. Դանիէլի Գաբրիէլ իբրև զհինաւուրց ատեանսն զնա, իսկ Եզեկիէլ ՚ի վերայ կառացն քերովբէից. բայց Եսայի ՚ի վերայ բարձրացեալ աթոռոյն և վերացելոյն, իսկ Մովսէս զանտեսանն իբրև զտեսանելին համբերելով ։

Հ. Ո՞րպէս կարեն միտք տեսանել զոր ոչ երբէք տեսեալ ։

Գ. Զթագաւոր ո՞չ երբէք տեսեր ՚ի վերայ աթոռոյ իբրև զպատկերս կանգնեալս ։

Հ. Այս պատրաստին այժմ միտք մարդոյ գրել յինքեան նշան զանձայինն ։

Գ. Չէ բարի գրել ՚ի միտսն, և կամ անուամբ խորհրդովք ըստագիտանել կամաւ մտացն յայն յանձայինն ։

Հ. Մի՞ թէ գուցէ իբր թէ մեղք ինչ համարիցին ։

Գ. Ընկալ զայս այսպէս, և մարգարէքն տեսին պատմութիւն. և այս ինքնին իսկ կատարեալն զայս առ քեզ, որպէս և առաքեալ ասէ. տեսանեմք այժմ իբրև ընդ հայելի օրինակաւ, իսկ յայնժամ դէմ յանդիման ։ Այս քանզի յայնժամ յայտնի ասէ՝ թէ իբրև խորհուրդն կատարեալք եղիցին, յայտնեսցէ այս համարձակութեամբ իսկ տեսանել զնա ։

Հ. Այլ[1] արդ չունի առ այժմ ցնորս և կամ զարհուրումն մտացն ։

Գ. Այս ոչ բնաւ իսկ անհնարին, եթէ որ ճշմարտութեամբ ճգնիցի ըստ օրինին ։ Ասէր իսկ ինքն՝ թէ զամենայն շաբաթն ասէի, և ոչ մի ժամ յիշեցի զանդորրկան ինչ յիշողութիւն, նկատելով և ասելով ՚ի միտս իմ զոչ յիշելն զայն ։ Այս այլ ասէր՝ եթէ եղէ և մնացի ՚ի Ճանապարհի շրջելով երեքամ, և հրեշտակս երկուս տեսանէի զի փայլեն ընդ իս աստի և անտի իմ. և ես, ասէ, ոչ հայեցայ ՚ի նոսա ։

Հ. Զաղագս[2] էր ոչ ։

[1] Հ. Եւ արդ կարողութիւն իցէ խորհրդոցն և մտացն այնքան ազատել՝ մինչ ոչ ունիցի մնալ ՚ի անյոյութեան այլ ։ Գ. Ոչ ունի բնաւ եթէ ճշմարտութեամբ ճգնեսցի, վասն զի ես կացի շաբաթ մի և ոչ յիշեցի բնաւ ՚ի մտի յիշատակ մարդկութեան ։ Եւ այլ անգամ ասէր՝ եթէ եղեալ երթայի ՚ի Ճանապարհ ուրեմն, և տեսի երկուս հրեշտակս յաջակոյս և յահեկոյս ՚ի ճանապարհին, և ես ոչ բնաւ նայեցայ ՚ի նոսա ։

[2] Հ. Ընդէ՞ր ոչ նայեցար ։ Գ. Վասն այսր զի գրեալ է՝ եթէ ոչ հրեշ

Digitized by Google

Գ. Վասնզի գրեալ է՝ թէ ոչ հրեշտակք և ոչ զօրութիւնք կարեն մերժել զմեզ 'ի սիրոյն Աստուծոյ:

Հ. Յամենայն՝ ժամ կարէ՞ն խորհուրդքն մարդոյն տեւելեան պարապել:

Գ. Այլ եթէ ոչ յամենայն ժամ, բայց յորժամ խորհուրդն բանաստացեալ յայլոց ինչ խորհրդոց չարաց. բայց դու մի ինչ յանձնեսցես ապաւինել 'ի սէր. սոսկ խոկ քեզ, եթէ կատարեսցի խորհուրդն յայսմիկ առանց աշխատութեան, դու զլեռանց շարժես: Վասնզի եթէ զխորհուրդս քո ինչուցես մանր 'ի վերուստ, որպէս զդատապարտեալ որ 'ի խաւարայինն 'ի բանտ արկանիցի, և արդ յորժամ արձակիցի և զձգս տեսանիցէ՝ ոչ ևս առաս կամի յիշել նա ինքն զխաւարն յորում կայրն. դոյն օրինակ և խորհուրդն մեր յորժամ սկսցի զիւր խոկ զլուսաւորութիւնն տեսանել, ոչ ևս կամի 'ի խաւարին և 'ի չար խորհրդոյն կալ: Ասէր ոմն 'ի կատարելոցն՝ եթէ երբեմն կատարելով իմ զխորհուրդսն փորձել թէ արձակեսցից զնա, թող երթիցէ և թափառեալ շրջեսցի յերս երկրիս այսորիկ, և արձակեցի զնա. և նա եկաց մնաց 'ի նմին՝ ոչ գիտելով թէ ուր երթիցէ, և մնաց 'ի տեղւոջ իւրում անշարժ. խոկ ես, ասէ, դարձեալ առի զնա 'ի վեր. և գիտէր խոկ ինքն նա՝ եթէ երթեալ էր 'ի յանձեռն, ես, ասէ, 'ի վտանգել ունէի զնա: Զայս բարի գործառնութիւն դադարումն հանգերձ աղօթիւք ուղղէ 'ի սմա. քանզի ասէք նա ինքն, եթէ միշտ յաղօթս կալ՝ փոյթ և երագ յաղջողութիւն առնէ զմիտս մեր:

Հ. Որպէս՝ կարէ ոք յամենայն ժամ յաղօթս կալ,

տակք և ոչ զօրութիւնք մեկնել կարող իցեն զմիտս մեր 'ի սիրոյն աստուծոյ մերոյ:

1 Հ. Եւ յամենայն ժամ կարող իցէ միտքն տեսանել զանձնութիւնն իւր: Գ. Կարելի է՝ որք բառ այս խանդարհութեան ուղղեցին զնա: Որպէս պատմեալ մեզ ոմն 'ի հարանցն՝ եթէ կամեցայ երբեմն փորձել զխորհուրդս իմ թէ մրցեսցի իցէ, և թողի շրջել զնա ուր և կամեսցի. իսկ նա եկաց 'ի տեղւոջ իւր և ոչ գիտէր թէ յո երթիցէ, մինչև կալայ զնա և հանի 'ի վեր. զի գիտէր նա՝ որ թէ շրջեալ էր յերկիրս, տանջելոց էր 'ի տեսանել: Իսկ յայսմիկ չափ՝ հանդարտութիւն խնդահրհութեան հաւասցանէ, զի անդադար աղօթից և խաղաղութեան ուղղէ զմիտս:

2 Հ. Եւ մրցեա կարող է ոք աղօթել անդադար, զի մտաւոր անկար իցէ: Գ. Ոչ եթէ մինչ կայցէ յաղօթս՝ այն միայն կոչեցեալ իցէ ա-

Digitized by Google

զի առակաւ է մարմինս մեր առ 'ի ժամանակս աղաւաղու-
թիւն աղօթից նոցա որոց:

Պ. Այդ ոչ միայն կալով մեր 'ի ժամանակս աղօթից միայն առնի աղօթք, այլ յամենայն իսկ ժամ:

Հ. Ո՞րպէս յամենայն ժամ.

Պ. Եթէ ուտիցես և եթէ ըմպիցես և կամ եթէ 'ի ճանապարհի շրջիցիս և եթէ գործ ինչ առնիցես, մի 'ի բաց կայցես երբէք յաղօթից քոց:

Հ. Նոյն եթէ ընդ ումեք խօսիցի, որպէս կարիցէ կատարել ինքն զայն բանն՝ եթէ յամէն ժամ յաղօթս կացցէ:

Պ. Յաղագս այսորիկ իսկ առաց առաքեալն՝ ամենայն աղօթիւք և խնդրուածովք: Նոյն զու յորժամ շաղախիցես ընդ այլում խօսելով յաղօթս կալ, հեծութեամբ աղօթեսցիր:

Հ. Ո՞ր աղօթս պատշաճի աղօթել:

Պ. Հայր մեր որ յերկինս, և որ զկնի է:

Հ. Պատճառ ինչ չափ առժամն է մեզ ունել աղօթից մերոց:

Պ. Ոչ չափն չասաց յայտնի. և քանզի ասէ եթէ յարաժամ յաղօթս կացէք, այս ինքն է անպարագիր չափ ունի: Նոր եթէ ոք միայն յորժամ ինքն առանձինն յաղօթս կայ հաւանեալ, և զայն միայն աղօթեսցէ, այս ակնաւ մարդ չկայ երբէք յաղօթս*: Նաև խոկ նա՝ եթէ պարտ աշխատիս զամենայն մարդ նաև զմի ոք առնաւ-նել, և 'ի շարախօսութենէ արգելուլ զանձն: Նաև մա 'ի կատարելոցն՝ եթէ ուշադրութ ամ Հինգիցս մի երբէք թողուլ առ իս սատան խորհուրդս մտանել 'ի միտս իմ. և առնասնէր, ասէր ինքն, եթէ մինչև զմեղսն ժամն զամենայն աւուրս զխանութիւն ամբարտաւանայ, զի աղեղն ունէր լարեալ ինքն 'ի ձեռս իւր, և կամէր ձգել 'ի միտս իմ. և ապա նետեալ նորա և աղբեցեալ, ասէ, մինչև այնպէս երթայք զնայք աւուր աւուր: Ո՛վ բարի քաղաքավարութեան և ընտիր բարուցն բարի գործա-

ղոխք, այլ հանապազ և անհաւան յիշեսցեն ոչ յետինս մնաց՝ և զկե-
րպին խորհրդոյն առ ՔՆ նորա՝ աղօթք էր:

* Աւ. որ միայն յորժամ ինքն 'ի հին ձեռք. յաղօթս, այսինքն ոչ երբէք կայ
հաւանել. Այսոց ծ եր. միայնակեաց յաղօթս:
եթէ 'ի ժամանս աղօթից միայն կայ.

նութիւն, և կարի խակ գիտրաւ յայս համեմութիւն։ Տեսի ես, ասէ, կատարեալ զամս մի յընթրիս եղբարցն մենաստանաց, որ թէ և էր ժամանեալ նորա, և յերկար ըմպելեաց գինւոյն ներգեղոյ յաղագս եղբարցն համբերժակութեան, և նա, ասէ, ոչ եկաց 'ի բաց յաղօթիցն իւրոց և յայս մինչև ցլոյսն, և ոչ զմի բաժակին յանքեալ 'ի բաց դարձոյց յառնելոյ ընդ նոսա. և խնդրն էր զարմանալի այր։ Նա ասէր՝ թէ թուեցի երբեմն զաղօթս իմ զոր առնէի, և զայն հիմն համար զոր առնէի յաւուրն, և նախնչափ եւս 'ի գիշերի զի առնէի զաղօթսն։ Որ ոչ կամիցի 'ի Տէր ոչ համձոյ լինել, յառաջ քան զամենայն ըղխոնարհութիւն պարտի ստանալ և զհամբերութիւն։

Հ. Որպիսի՝ խնչ պարտ է լինել միայնակեցին։

Գ. Միայնակեաց աղաւնի է. քանզի որպէս աղաւնին ելանէ յօդս թօթափել զթևս իւր, և եթէ յամենայն արտաքս 'ի բունոյ իւրոյ՝ 'ի վայրենի թռչնոց կատարեալ կորուսանէ զվայելչութիւն իւր, այնպէս և միայնակեաց որ ելանէ 'ի ժամ աղօթից 'ի խցէ իւրմէ թօթափել զխորհուրդս իւր, եթէ յամեսցէ արտաքոյ խցի իւրոյ՝ կորուսանի 'ի գիւաց անտի, և խաւարին խորհուրդք իւր։

Հ. Որո՞վ խորհրդով արտաքսէ սատանայ զմիայնակեաց 'ի խցէ իւրմէ։

Գ. Սատանայ թռչիւն է. քանզի որպէս թռչիւն կախեալ բանիւք արտաքսէ զգազանն յորջոյ իւրմէ, և ըմբռնեալ զնա շրջեցուցանէ 'ի հրապարակս քաղաքաց, և արձակեալ զնա առ 'ի կատակել 'ի մարդկանէ, խակ յորժամ արասցէ ընդ նմա զամենայն զխաղս, յետոյ կամ

1 Հ. Զինչ պարտ է առնել մարդոյ, զի եղիցի կրօնաւոր։ Գ. Կրօնաւոր աղաւնի իցէ. և զոր օրինակ ելանէ աղաւնի 'ի ժամու իւրում և թափուցեալ յօդս մաքրէ զթևս իւր և դառնայ անդրէն, խակ եթէ յամեսցէ 'ի բացեայ, 'ի վայրի թռչնոց կալեալ լինի և կորնչի կեանք և փետուրն վայելչութիւն նորա. այսպէս եթէ կրօնաւոր ելցէ 'ի խցէ իւրմէ 'ի ժամու աղօթիցն, և երթեալ յեկեղեցին մաքրէ զխորհուրդս իւր. խակ թէ յամեսցէ արտաքոյ՝ հարկանի 'ի խայթոցէ դիւաց ընդ ամենն և ընդ ամն իւր, և խաւարեսցին խորհուրդք նորա։ Զայսպիսի զգուշութիւն եթէ ոք կարիցէ առնել, և այսպիսի եղանակաւ 'ի խցիանին կարիցէ ժուժկալել և քաղցրապէս համբերել, կարիցէ նա լինել և է կրօնաւոր։

2 Հ. Որով խորհրդով հանէն զևս զկրօնաւորն 'ի խցէ իւրմէ։ Գ. Դև իբրև զթռչիւն իցէ. և զոր օրինակ թռչիւն քաղցրաձայն բանիւք հանէ զձն 'ի զարդանէ իւրմէ, խակ մինչ ասէ նմա՝ առնէ զնա 'ի փողոցս քա-

Digitized by Google

հրով կործանանէ զնա կամ ջրով ընկղմէ, նոյն օրինակ է միայնակեցի՝ որ կորիցէ կիրս յորժամ 'ի խորհրդոց անտի ծագեալ թողցէ զխուց իւր:

Հ. Եթէ՝ ելանիցէ եղբայր 'ի սպասաւորութիւն պաշտամանն և հանդիպեսցի կնոջ մարդոյ, զիա՞րդ կարէ փախչել 'ի մարտէ անտի պատանկութեանն:

Պ. Ի մարտէն ոչ կարէ փախչել, բայց 'ի գործոյ անտի կարէ փախչել եթէ լռեսցէ 'ի ժամ պատահմանն. քանզի որպէս հուր յարանց* հրահանաց ընդ միմեանս բախեալ՝ հանդերձ ծծմամբ արտաբերէ զհուր, նոյնպէս և խօսք առն ընդ կնոջ զմեղս գործեն:

Հ. Որո՞վ խորհրդով մտանէ պատանկութիւն 'ի մարդն:

Պ. Ոչ միով և ոչ երկու և ոչ հինգ և կամ տասն ձեռնասպարհ բովանդակեն պատանկութիւն. քանզի ամենայն խորհուրդք սատանայի զպատանկութիւն ունին զգործ ծածկեալ:

Հ. Զարի՞ք իցէ ստանալ երկուս հանդերձս:

Պ. Ստացիր երկուս հանդերձս և մի ստանար չարախօսութիւն, որ արտաքուստ զամենայն մարմինս. քանզի անձին ոչ ինչ է 'ի չարախօսութիւն, բայց մարմնոյ պէտք են արկանելիք. սակայն ունելով զպէտս և զպատուականսն, այսու շատասցուք:

զորին և տանէ զնա նախատինք և խայտառակ մարդկան, և յետոյ կամ 'ի հուր այրէ զնա կամ 'ի ջուր խեղդէ, այնպէս գիտասցի կրօնաւորն՝ յորժամ 'ի խորհրդոց գրգռեալ խարի 'ի գխուց և ելեալ մնիցէ 'ի վանէ իւրմէ:

1 Հ. Եթէ գնասցէ եղբայր 'ի սպասաւորութիւն ուրեք և դիպեսցի նմա կին 'ի ճանապարհին, որպէս պարտ է փախչել 'ի պատերազմէ մտացն պատանկութեան: Պ. Ի պատերազմէն զերծանել ոչ է կարող, այլ 'ի գործոյն լռել զբերանն իցէ և զանց առնել զխօսիւ անխօս և անզգամ եղեալ. զի զոր օրինակ երկաթ ընդ քարի հարեալ ելանէ հուր, այնպէս և ձայն և տես կնոջն մինչ հարկանի 'ի սիրտ առն՝ ելանէ հուր շնութեան:

2 Հ. Որո՞վ խորհրդով գայ 'ի միտս մարդոյ մեղք պատանկութեան: Պ. Ոչ 'ի մի կամ յերկուս կամ յերիս խորհուրդս սատանայական պատանկութիւն, այլ յամենայն խորհուրդս գիտակաւն կայ պատանկութեանն 'ի թագուն, և ոչ մի խորհուրդ գայ զիտակոն՝ յորում ոչ իցէ սերտ 'ի նմա պատանկութեան 'ի թագուն:

3 Հ. Բարւո՞ք է ստանալ երկուս հանդերձս եթէ ոչ: Պ. Ստացիր երկուս հանդերձս և մի ստանար չարութիւն անձին, զի մի աղիղծ արասցէ զքեզ. քանզի մարմնին հանդերձի պէտս ունի, բայց անձն պէտս ոչ ինչ ունի չարեաց, զի ոչ ինչ հարկաւոր է նմա չար լինել. այլ թէ ունիս մարմնոյդ չափաւոր հանդերձ, նովաւ բաւականասցիր:

* Այգեկս յօրինակն:

Digitized by Google

Հ. Ո՛վ խորդ՝ պարտ է կատարել զպաշտօն սաղմոսերգութեան և զերախտաւորութիւն պահոցն։

Գ. Մ՛ի ինչ աւելի քան զհրամայեալսն իմանալ. քանզի բազումք կամեցեալ առաւել քան զչափն, յետոյ և ոչ սակաւ կարացին կատարել։

Հ. Եթէ՝ բռնադատեսցէ զիս եղբայրը՝ որպէս զի արբից բաժակ մի գինի ՚ի խցի նորա, բարւոք է երթալ։

Գ. Փախիր ՚ի գինւոյ և ապրիս որպէս զայծեամն յորոգայթից, քանզի բազումք յաղագս այնմ պիտոյից կալեցան ՚ի գլորումն խորհրդոց։

Հ. Ընդէ՞ր՝ ոչ կարեմք բնակել ընդ եղբարս։

Գ. Վասն զի ոչ երկնչիմք յԱյ. զի եթէ յիշէիր ըզգրեալսն եթէ Ղովտ ՚ի Սոդոմ ապրեցաւ՝ ոչ զոք դատապարտեալ, և դու արդեօք զանձն ՚ի մէջ գազանաց արկանէիր բնակել։

Հ. Եթէ՝ ոք դայթակղեցուցանէ զիս, կամիս զի արկից նմա ծունր։

[1] Հ. Որպէս կատարել պարտ է զսաղմոս յաղօթս, և կամ զպահս կեալ. եթէ դոյցէ ՚ի վերայ յաւէտն՝ առնել, եթէ ՚ի չափու կեալ։ Գ. Ոչ ինչ աւելի պարտ է առնել քան զհարգեալսն. քանզի բազումք կամեցան ընդ առաջինսն նախ մեծամեծս առնել զչարչ աղօթից և պահոց, և յետոյ և ոչ զփոքունս կարացին գործել։ Այլ թէ յառաւելուն և ՚ի մեծամեծս ցանկաս բուռն հարկանել, մի նախ զպահոց և զմարմնաւոր աղօթից, զի դիւրաւ եղծանելիք են յետոյ՝ առանց հիմանն խոնարհութեան և հնազանդութեան, այլ նախ բուռն հար հնազանդութեան հեզութեան և համբերութեան և սիրոյ, և զսոսա մեծացո և առաւելեա որքան կամիս ՚ի վեր քան զլեռունս, յորոց և ոչ մի ինչ անկման կասկած և ոչ խոտելութեան դիւական հպարտութեանն. յորոց յետոյ զինքն ընթանալ և պահեցողութեան [illegible] և առաւելեալ և աղօթք արժանաւորք. յորոց յառաջագոյն ըղձայիր, նոյնք յետոյ դիւրեսցին քեզ անդրդուելի և անվրիպելի ՚ի քէն։

[2] Հ. Եթէ բռնադատէ զիս եղբայրն գնալ ՚ի սենեակ իւր և ըմպել գինի, բարւո՞ք իցէ հնազանդել և գնալ։ Գ. Փախիր յորմանէ գինւոյ և կեցցես իբրև զայծեամն յակնատէ, զի բազումք ՚ի սոցանէ գթեցին յանկումն խորհրդոց չնութեան։

[3] Հ. Ընդէ՞ր ոչ կարեմ բնակել ընդ եղբարսն։ Գ. Վասն այնորիկ զի ոչ երկնչիս դու յԱյ. զի թէ յիշէիր դու զբանս գրոց՝ եթէ որպէս Ղովտ ՚ի սոդոմայեցւոցն փրկեցաւ, զի ոչ դատեաց զոք, նա դու ՚ի մէջ գազանաց ընտրէիր բնակել։

Այլ օրինակ [illegible]. Ընդէ՞ր ոչ կարեմք բնակել ընդ եղբարս առանց պժգալոյ և դատելոյ։ Գ. Վասն զի ոչ երկնչիս յԱյ. զի եթէ յիշէիր զգրեալսն եթէ Ղովտ ՚ի Սոդոմ ապրեցաւ՝ ոչ զոք դատապարտեալ, և դու արդեօք զանձն ՚ի մէջ գազանաց արկանէիր բնակել, և ոչ ընդ չարանայիր նոցա։

[4] Հ. Եթէ դայթակղեսցէ զիս եղբայրն իմ, կամիս զի խոնարհեցու-

Digitized by Google

Գ. Մարկ նման ծունր և 'ի բաց անջատեա զքեզ 'ի նմանէ, վասն զի արքայ Մարմէնիոս ասէր. ընդ ամենեցուն սէր կալջիր, և յամենեցունց խորշեսջիր :

Հ. Ո՞ր է մարթ մատուցանել պոռնկական յեկեղեցին

Գ. Պոռնիկ այս զանձ է որ կայ առաջի մոյ. և զոր առ կանեա այսր, 'ի վեր երթայ նա :

Հ. Ո՞րինչ են մեղք չարախօսութեան :

Գ. Մեղք չարախօսութեան ոչ թողացուցանէ զմարդ զայլ առաջի տեառն, քանզի գրեալ է. որ չարախօսէ զընկերէ իւրմէ, հալածէի զնա :

Հ. Կամիմ՝ մարտիրոսանալ վասն մոյ :

Գ. Եթէ ոք 'ի նեղութեան ժամու համբերեսցէ եղ-բօրն, հաւասար է նա հնոցի երից մանկանցն :

Հ. Ընդէ՞ր յորժամ կամիմ կալ յաղօթս, զբաղեն զիս խորհուրդքս :

Գ. Վասն զի սատանայ 'ի սկզբանէ ոչ կամեցաւ եր-կիր պագանել մին ամենեցուն, անկաւ յերկնից և օտա-րացաւ յարքայութենէն մոյ, և վասն այսորիկ զբաղեցու-ցանէ զմեզ յաղօթիցն :

Հ. Ուստի՞ ցանկութիւն կերակրոց մատուցանէ ինձ խորհուրդքս, և զիջուցանէ զիս յաղօթիցն և 'ի պահոցն :

Գ. Քանզի զմարդ 'ի ձեռն կերակրոց պատրեաց, վասն այսորիկ մեզ նոյն օրինակաւ ներգործէ :

Հ. Ընդէ՞ր` այսպէս պոռնկութիւն թախանձէ զմարդ :

Գ. Քանզի տեսանէ սատանայ եթէ պոռնկութիւն օտարացուցանէ զմեզ 'ի հոգւոյն սրբոյ, որպէս և ասէ տէրն՝ եթէ ոչ ևս բնակեսցէ հոգի իմ 'ի մարդիկս յայս վասն գործոց դոցա :

ցից նման զծունկս իմ : Գ. Խոնարհէ զծունկ և փոյթ հրաժարեսջիր 'ի նմանէ, զի այսպէս խրատէ զմեզ հայրն Արսէնի և ասէ. սէր կալջիր առ ամենեսեան, բայց մեկնելով մեկնեսջիր յամենեցունց :

1 Հ. Զի՞նչ օգուտ իցէ մարդոյ ընծայել յեկեղեցի : Գ. Այս գործ գանձանակին իցէ եդեալ առաջի մոյ. և զամենայն ինչ՝ բայց միայն որ-քան ոք գնիցէ աստ, յերկինս եդեալ առ ի այն, ուր և բազմապատիկ առնլոց իցէ :

2 Հ. Կամիմ վկայութիւն կրել վասն տեառն, և ոչ լինի առ ձեռն պատճառ, և զի՞նչ առնիցեմ հասու լինել յայնմ շնորհաց : Գ. Եթէ ոք 'ի ժամանակի փորձութեան համբերէ, այն հաւասար հնոցի երից մանկանցն իցէ :

3 Հ. Ընդէ՞ր այնպէս գժնեայ նեղէ զևն պոռնկութիւն զմարդ առա-ւել քան զայլ ախտս : Գ. Վասն այսորիկ զի գիտէ զևն զօրութիւն պոռ-նկութեան զի նա մերժէ 'ի մէնջ զհոգին սուրբ, և զի լսէ զբանն մոյ որ ա-սաց՝ եթէ ոչ մնասցէ հոգի իմ 'ի զաւակ վասն լինելոյ զոյգս մարմին :

Digitized by Google

Հ. Ուստի՞ այսպէս տատանմանց ձգէ զիս 'ի զբաղմունս, և խափանէ զիս 'ի ձեռագործէ անտի։

Գ. Իմանալի զիտել տատանմանց թէ պղտորութիւն 'ի ձեռագործէ անտի լինի։

Հ. Ո՞րքան կարէ մարդ արգելուլ զդաւաճանութիւն զիւրոց։

Գ. Որպէս ձկունք ոչ կարեն արգելուլ զձկնորսն առ 'ի չարկանելոյ զկարթն 'ի ծովն, այլ յորժամ զխոտացեն զնենգութիւն կարթին, 'ի բաց դարձեալ աղխին, և մնայ դատարկ ձկնորսն, նոյնպէս և մարդ։

Հ. Եթէ ունիցի արդեօք մեղս վասն մտածելոյ իւրոյ։

Գ. Որպէս զզէմ ինչ ոչ վնասեն այլք, նոյնպէս և դաւաճանութիւն դատարկացեալ ոչ ինչ մեղանչէ մարդ. քանզի գրեալ է, թէ ամենայն մեղք չեն եւս կատարեալ՝ ոչ եւս համարին մեղք։

Հ. Ո՞րպէս իցէ բնակել յանապատի։

Գ. Որդիքն Իսրայէլի յորժամ դադարեցին 'ի զբօսանաց անտի յանապատին և բնակեցին 'ի տապանակս, յայնժամ ծանուցաւ նոցա զխորդ պատուէր երկնչել յայն. քանզի և նոքա այլեւայլ ծեալք 'ի մէջ ծովուն մնան դատարկք, իսկ յորժամ մերձենային 'ի նաւահանգիստն՝ յայնժամ զգուշանան 'ի շէկ տատանմանն, նոյնպէս և մարդ եթէ ոչ 'ի նախն ուրեք ժուժկալեսցէ, ոչ առնու զգիտութիւն փրկութեան։ Վասնզի և յաւէտ քան զամենայն առաքինութիւն զխոնարհութիւնն խնդրեաց ած. զի գրեալ է՝ թէ յո՞ բնակեսցեմ ես, եթէ ոչ 'ի հեզս և 'ի խոնարհս և որք դողան 'ի բանից իմոց։

Հ. [1] Ո՞րքան կարէ մարդ բնակել առանձինն։

Գ. Նահատակն եթէ ոչ ճանաչիցէ ընդդէմ բազմաց, ոչ կարէ ուսանել զպատերազմ յաղթութեան, որպէս զի կարասցէ այնպէս ընդ ոսոխին իւրում ամրութեամբ կռուել։ Նոյնպէս և միայնակեացն եթէ ոչ խրատեալ ընդ եղբարս ուսանիցի զպատերազմ խորհրդոցն, ոչ կարէ առանձինն բնակել և ընդդիմանալ խորհրդոցն։

1 Հ. Որպէս կարող իցէ ոք հանգարտել առանձինն։ Գ. Մարտիկ և զինուոր եթէ ոչ 'ի մէջ ժողովոց ուսանիցի զգործ և զպատերազմ պատերազմին, ոչ իցեն կարող միայն մարտնչել և յաղթել։ Այնպէս և կրօնաւոր եթէ ոչ նախ վարժի զառաքինութիւն ընդ եղբարսն և ուսանիցի զպատերազմ խորհրդոյն պատերազմացն, ոչ կարող իցէ նա միայն հանգարտել, և ոչ ընդդէմ կալ ախտից որ 'ի վերայ նորա։

Digitized by Google

Հ. Եթէ լինի՛ ի հարկէ գալ ընդ կնոջ՛ ի խօսս, զիա՞րդ պարտ է պատասխանել նմա։

Պ. Վարկաւորութիւն այս գործ սատանայի է, քանզի բաղդաւ ծառայս հարկաւոր ունի. այլ թէ լինիցի պէտք գալ՛ ի խօսս ընդ կանանց, մի՛ առ նմա խօսել ինչ աւելի. և դու եթէ խօսիս, բովանդակեա սակաւուք բաջատ ինչ, և փութացեալ արձակեա զնա. այլ եթէ յամեսցես ընդ նմա, գիտեա եթէ ցանկութիւն նորա զխորհուրդս քո զիջուցանէ։

Հ. Որո՞վ խորհրդով կարասցէ մարդ ապրել՛ ի չարախօսութենէ։

Պ. Որ ընդունի զհաց ՛ի ծոց իւր, մխիթարի. նոյնպէս և որ ընդունի զխօսս մարդկան, ոչ անդադար լինի ՛ի չարախօսութենէ։

Հ. Զի՞նչ են գիշերային երևակերպք սատանայի։

Պ. Որպէս ՛ի տուընջեանն օտարոտի խորհրդովք զբաղեցուցանէ զմեզ առ ՛ի չպատրաստել մեզ աղօթից, նոյնպէս և ՛ի գիշերի թուլացուցանէ զմիտս մեր առաջօք երևմամբք, և խափանէ զմեզ ՛ի գիշերային աղօթիցն։

Հ. Զի՞նչ արասցէ մարդ զփորձութիւն, որ լինի նմա ՛ի կատարումն մարմնոյ յանուրջս։

Պ. Որպէս որ գտեալ զդատախազ իւր ՛ի քուն՝ սպանանիցէ զնա, մի՞թէ սպանողն կատակե՞լ կարիցէ զոր սպանն՝ որպէս զյաղթող. և ո՛չ երբէք. քանզի չիք նմա յաղթութի, այլ և տանել ևս պարտի է։

Հ. Զիա՞րդ՝ կարասցէ մարդ շնորհս առնուլ սիրել զաստուած։

Պ. Եթէ որ տեսանիցէ զեղբայր իւր ՛ի յանցանս, և կարդասցէ առ ա̃ծ վասն նորա յօգնութիւն, յայնժամ առնու զգիտութի թէ զիա՞րդ պարտ է սիրել զա̃ծ։

Հ. Զո՞ր պատուիրան ստացեալ մարդ կարէ ապրել։

Պ. Զորք առաքինութիւնք են յարեալ ՛ի մարդ. պահք և աղօթք առ ա̃ծ և ձեռնագործ և մարմնոյ զգաստութիւն. Այսոցիկ առաքինութեանց ընդդիմամարտեալ առ

1 Հ. Զիա՞րդ կարասցէ մարդ շնորհս առնուլ սիրել զա̃ծ։ Պ. Եթէ որ տեսանիցէ զեղբայր իւր ՛ի յանցանս. և կարդասցէ առ ա̃ծ վասն նորա օգնութի, յայնժամ առնու զգիտութի թէ զիա՞րդ պարտ է սիրել զա̃ծ. զի ինքն տէրն ցուցանէ նմա խանդաղատելով ՛ի վերայ նորա, որպէս և նա եղբօրն իւրում։

Digitized by Google

սատանայի եհան զԱդամ. ՚ի սկզբանէ ՚ի ձեռն մարմնոյ պատրեալ և կրկին յանձն արարեալ փախստական լի-նել՝ հաւանեցոյց թողուլ. որպէս զի մի գայցէ առաջի Ա՟յ, զի մի դարձցէ երկիր պագանիցէ Ա՟յ, և թողութիւն ընդու-նիցի մեղացն։ Իսկ յորժամ արտաքսեցաւ Ադամ, դատա-կացեալ եկաց սատանայ, ՚ի ձեռն դատարկութեան յայլ մեղս դատապարտեալ, ՚ի վհատութիւն անանձնման ունել զնա կամեցեալ։ Իսկ մարդասէրն Ա՟ծ տեսեալ զխարդա-խութիւն սատանայի, ետ Ադամայ գործ. ասէ. գործեա զերկիր, ուստի առար։ Որպէս զի Ադամայ՝ գործոյն հոգ տանելով, զհրապուրանս սատանայի ՚ի բաց ընկե-նուցու։ Իսկ սատանայի և այսու պատրեալ, ՚ի հրեշտակ զինքն նմանեցուցեալ, զգաստերս մարդկան ՚ի պաճուճս պղծութեան զարդարէ, և զհրեշտակաց փառս խոնար-հեցուցեալ ՚ի ցանկութիւն մարմնոյ զինքեանց դնոսա։ Պա-նայ այսու հետև սատանայ ընդդէմ պահոց և ընդդէմ աղօթից և ընդդէմ ձեռագործի, քանզի ձեռագործ ըղ-ձալով զչար արուեստս նորա խափանէ. Ջանայ և ընդ-դէմ առաքինութեանցս գործոյ. այպս և ամենայն առա-քինութեանց տիրեսցէ։

Հ. Եւ զի՞նչ արասցէ մարդ զի առնուցու շնորհս առաքինութեան։

Պ. Եթէ ոք կամեսցի ուսանել արուեստ, զամենայն հոգս թողեալ և նկուն արարեալ զանձն, ՚ի ձեռն խո-նարհութեան առնու զշնորհս արուեստին. նոյնպէս և մխրճնակեացն եթէ ոչ թողուցու զամենայն հոգս մարդ-կայինս, և առնել զանձն նուաստ և չհամարել եթէ լա-ւագոյն եմ քան զոք և կամ թէ հաւասար ուրուք, և յայնժամ գտեալ զառաքինութեանցն զգործն իւրովի ե-կեալ, մինչդեռ դու խօսիս, ասէ՝ ահաւասիկ եմ։

Հ. Ո՞րով՝ կարէ մարդ գիտել եթէ աղօթք նորա ընդունելի են առ Ա՟ծ։

Պ. Յորժամ մարդ զգուշասցի առ ՚ի չզրկել զընկեր իւր, յայնժամ համարձակեսցի ՚ի միտս իւր եթէ ընդ-ունելի են աղօթք նորա առաջի Ա՟յ. այլ եթէ ոք զըր-

[1] Եթէ ոք պահեսցէ զանձն ոչ զրկանել զընկերն. յայնժամ ընդու-նելի լինին Ա՟յ աղօթք իւր. իսկ եթէ զրկէ զընկերն, աղօթք իւր խոտան և անընդունելի լինին. զի հաւատացանք զընկերին ՚ի նմանէ արդեօքեան զնա ոչ մտանել առաջի Ա՟յ։

կեացէ զմերձաւորն իւր, աղօթք նորա զազրելի և անընդունա-նելի են. քանզի հեծութիւն զրկելոյն ոչ տայ թոյլ աղօթից զրկողին մտանել առաջի նր̃յ։ Ապա եթէ ոչ փութայ հաշտեցուցանել ընդ ընկերին, ոչ անպարտ եղիցի ՚ի մեղաց խռովոյ յաւիտենից. զի գրեալ է. զոր կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս։

Հ. Պարտի՞ք է՝ ՚ի բերան առնուլ զգիրս սուրբս։

Պ. Աղօթքն տանս Քրիստոսի ՚ի խորոց սրտի զբարիս զալարս, տալ և Քրիստոսի զբազում անմոռացութեան. և յա-ժամ խօսեսցուք ՚ի փրկչական, որպիսին զզօրութիւն և քաղց-րանայ բերան իւր, և զաղաղէ թմբիկ փրկչին։ Այս-պէս և մարդոյ բարւոք է ուսուլ զորոց ընթերցուածս սու-՚ի զաւառականութիւն չարին։ Վասնզի եթէ որ աղօթեսցէ եթէ բազմօք և եթէ սակաւուք ՚ի սաղմոսերգութիւն, և պապանձեսցէ զբերան իւր և ոչ զօշեսցէ առ նծ, այն-պիսին զիւրոց գործ գործէ. վասն զի գիտէ ոչ կարէ ընկ-զզօրութեան Ա՛ծոյ, և զասպնջականութիւն խոստմանն*։

1 Հ. Բարւոք իցէ, հայր, ածաւշաւեք զորոց ընթերցուածս։ Պ. Աղօթս տանս կերակուր զգայի զալարս, տանել և զխուշս. և ՚ի փրկչ մնչ խօսելոյ բերան նորա, զայն զօրձեալ որոմայ և քաղցրացուցանէ զնա։ Այսպէս և մարդ խորհի ՚ի մտի զբարիս և զչարս. այլ յորժամ ըն-թեռնու զսուրբ գիրս, հրահանգի և քաղցրացուցանէ զմիտս. քանզի զխմասնակս են բանք զորոց ամենայն խորհրդածութեանց գիտացն։ Իսկ եթէ զնասցէ որ յեկեղեցին յաղօթս ընդ այլ եղբարսն, և խցցէ զբե-րան իւր և ոչ բանայ զնա ընդ նոսա յօրհնութիւն և յերգս և յաղօթս, այնպիսին զերկս սատանայի գործէ. քանզի գիտէ ոչ կամի ընկել զզօ-րութիւնն Քրիստոսի։

* Այս օրինակ տողքս ՚ի հին Բարգ-մանութենէ. Այսպէս ծերն. ոչխար ուտէ զխոտ գաղտնի շահեկանս, ուտէ և փուշ, և խածանէ[1] բերանն, սա-կայն բերէ յորոց և քաղցրանայ նմա. այսպէս է ընթեռնուլ զգիրս հոգեկանս։ Եւ որ ՚ի ժամ աղօ-թամանն խցէ զբերան իւր և զա-կանջս, այնպիսին թշնամի է փա-ռաբանութեանն նոյ։

1 Օրինակ Գ. խածանել. այլ օր. ծամել։

ԽՕՍՔ

# ԻՊԵՐԻՔԵԱՑ ՄԻԱՅՆԱԿԵՑԻ

Ասաց ծերն. որպէս առիւծ ահարկու է 'ի վերայ իշավայրեաց, նոյնպէս և միայնակեաց փորձ՝ խորհրդոց ցանկութեանց: Պահք որպէս սանձք են միայնակեցի ընդդէմ մեղաց. որ զնայն ընկենու, որպէս ձի խեռ գտանի: Չորացեալն 'ի պահոց մարմին միայնակեցին՝ զհոգին 'ի խորոց 'ի վեր բերէ, և չորացուցանէ զվտակս հեշտութեանց պահք միակրօնին: Պարկեշտ միայնակեաց յերկրիս պատուի, և առաջի բարձրելոյն պսակեսցի 'ի յերկինս: Միայնակեաց որ ոչ արգելու զլեզու իւր 'ի ժամ բարկութեան, այնպիսին և ոչ զախտս մարմնականս կարէ արգելուլ: Բանս չար մի երբէք հաներ ընդ բերան քո, զի ոչ բնաւորեցաւ այգի բերել փուշ: Լաւ է ուտել միս և ըմպել գինի, և ոչ ուտել չարախօսութեամբ զմարմինս եղբարց: Շշնջելով օձն զԱդամ 'ի դրախտէն եհան. սորին նման է որ չարախօսէ զընկերն, զհոգին լսողին կորուսանէ, և զիւրն ոչ ապրեցուցանէ: Պանծ՝ միայնակեցի անսասանութիւն է՝ կամաւոր աղքատութեամբ. գանձեա, եղբայր, 'ի յերկինս, քանզի անանց են հանգիստն յաւիտենականք: Մտածութիւք քո միշտ եղիցին յարքայութիւն երկնից, և փութով ժառանգես զնա: Կեանք միայնացելոյն ըստ նմանութեան հրեշտակաց եղիցին կիզելով զմեղս: Ի փորձութիւն պարտ է մեզ զինքեանս զինեալ և սրեալ, զի յորժամ 'ի վերայ գան՝ փորձ երևեսցուք: Տիւ զգիշերն գործէ միայնակեաց.

ա Ասաց հայրն Իպերիքիոս. գանձարան մեծ է կրօնաւորի կամաւոր անընչութիւն. և դու գանձեսցես յերկինս, զի անհատ են հանգիստն և յաւիտենականք: Ի միտ կալջիր միշտ և հանապազ զարքայութիւնն երկնից, և զիւրաւ մտցես 'ի նա: Պարտ է կրօնաւորի նմանել վարուց քերովբէից՝ որ միշտ կիզու զմեղս. քանզի եթէ ոչ պահեսցէ ծեր ամենայն զգուշութեամբ զմիտս իւր, և զամենայն ինչ զոր լսէ զբան բարի՝ մատուցի զայն, առաջ այնպէս գայ 'ի ծուլութիւն, և թշնամին կալեալ ձգէ զնա 'ի կենաց: Աղօթք սուրբք եղիցին միշտ 'ի բերան քո և խորհուրդ բարի 'ի միտս քո, քանզի սոքա թեթևացուցանեն զփորձութիւն քո. և պարտ է նախ քան զգալ փորձութեան պատրաստել և պահել զանձինս մեր, զի յորժամ գայցեն՝ գտցուք յաղթօղք և ընտրեալք:

Digitized by Google

արթնեալ և աղօթիւք հրճուեալ զղջանայ ոգւոյ. եհեղ զարտասուսն և յերկնաւոր հայցեաց զարքայութիւնն ։ Այլ է սպասեցէ միայնակեաց լռութեանց, որ զայս սասանայ, և նա լսելի լինի այ. քանզի և ՚ի վերայ խաչին ասէրն լռող եղև մինչև ցմահ ։ Ուսա կենաց ՚ի բարձրութիւնս յարուցեալ՝ սասապելախոհութիւն ։ Ամենեաց մաքսաւորին, զի մի ընդ փարիսեցւոյն զուգադատապարտեսցիս. զՄովսէսի հեզութիւն ընտրեա, զի ծայրատելով զսիրտս՝ զլինն ՚ի Ջուրցն փոխանակիցես ։ Փրկեա զընկերսն ՚ի մեղաց նախատանաց որչափ կարող իցես. քանզի այծ զդարձեալսն ոչ մերժէ ։ Որան չարութեն և յայտնութեն մի հաստատեր ՚ի սրտի քում զեղզօրէն քումմէ, զի կարող իցես ասել՝ թող մեզ զպարտս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանացն ։ Ճշմարիտ իմաստուն է՝ որ ոչ բանիւք ուսուցանէ, այլ գործովք վարժէ ։

## ՊԱՓՆՈՏԻ ՄԻԱՑՆԱԿԵՑԻ

### ԼՌՈՒԹՈՒՄՆ ՀԱՐՑՈՒԱԾՈՑ ԵՒ ԿԱՄ Ի ՎԵՐԱՑ ԱՆԿՈՒԱԾՈՑ ԵՒ ԿԱՄ ՎՐԻՊԵՑԵԼՈՑ Ի ՊԱՏՇԱՃ ԿԵՆԱՑ

ՔՐԻՈՆԻ ումեմն և Յակոբու մերձ բնակեցելոց և ողջացի հանդիպեցաք ես որ գրեցի և երանելի սարկաւագունքն Աւագրիոս և Ալբիոն. հայցեցաք ուսանել ՚ի նոցանէ զպատճառս յանցանաց, կամ ՚ի վերայ անկուծոյ եղբարց և կամ ՚ի վրիպեցելոց ՚ի պատշաճագոյն

Հարստութեն և գանձարան կրօնաւորի հնազանդութիւն իցէ. և որ ոք սատանայ զնա՝ լսէ այծ աղօթից նորա, և համարձակութիւ կայցէ առաջի խաչելոյն տեառն՝ որ հնազանդ եղև այս հօր մինչև ՚ի խաչ և ՚ի մահ և զամենայն կատարեաց վասն մեր ։ Նմանող լեր մաքսաւորին, զի մի ընդ փարիսեցւոյն դատեսցիս. և առ յանձն զհեզութիւնն Մովսէսի, որպէս զի քարացեալ սիրտ քո եղիցի խոնաւ և բղխեսցէ աղբիւր յոյզ ։ Փրկեա զեղբայր քո ՚ի մեղաց որչափ կարող ես՝ առանց արհամարհելոյ, զի այծ զդարձեալսն ոչ եա յետս դարձուցանէ. և բան չար և նենգաւոր մի եղիցի ՚ի սրտի քում վասն եղբօրն, զի կարիցես ասել՝ թող մեզ զպարտս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանացն ։ Ճըշմարիտ իմաստուն այն է, որ ոչ միայն բանիւք ուսուցանէ, այլ և գործովք վարդապետեսցէ ։

Digitized by Google

կեանսն ։ Քանզի դիւալեցաւ յաւուրսն յայնոսիկ Քեր-մանի կրօնաւորի ՚ի Նատեյն վախճանել, և գտանել զմե-ռեալն յաթոռն՝ ունելով զգործ ՚ի ձեռն . դիւալեցաւ և այլ ումեմն եղբօր փորել ջրհոր և թաղել ՚ի նմին, և այլ ումեմն Մակիպեայ գալ և մտանել ՚ի ծարաւոյ ջրոյ ։ Յիշեցաք և զՄակեդոնիոսն՝ որ անկաւ ՚ի գարշելի ան-արգութիւն, և զԿարպոս և զՀրոմէոս զաղէքսանդրա-ցի և զԱղէս պաղեստինացի և զՊտղոմէոս ՚ի Սկիւթէ զեգիպտացի ։ Ի հարցանելն մերում թէ զինչ է պատ-ճառն այնպէս կեցեալ յառաքինութեան մարդիկ ՚ի վերջ յանապատի, և այնքան ամենայն մեղօրեալ՝ մնացեալք ՚ի խելաց, կերոց ըմբռնել յորոգայթս անմտութեան, և այլոց երգիծանել պագշոտութեամբ, զայս մեզ սուրբքն պա-տասխանի արարին . Պաֆնուտիոս գիտնագոյնն՝ եթէ ա-մենայն լեալքն բաժանին յերկուս, ՚ի հաճոյութիւն այ և ՚ի ներել նորուն . որ ինչ միանգամ լինի ըստ առաքի-նութեան ՚ի փառս այ, այնոքիկ լինի հաճոյութեամբ այ . իսկ որք միանգամ դարձեալ վնասակարք և վտանգաւորք և անմաքրականք և արատաւորք անկողք, այնոքիկ լինին ըստ ներելոյն յանքննութեան կամ յանհաւատութեան թուլա-ցելոցն . վասն զի անհնարին է որ ուղիղն խորհին և բա-րեպաշտութեամբ կեան՝ թողանիլ և անկանիլ ընդ յանցա-նօք անձնոյ կամ ընդ խաբէութեամբ դիւաց ։ Արդ որք միանգամ աւարականեալք են խորհրդովք, կամ ախտիւք մարդահաճութեամբ, կամ ամբարտաւանութեամբ մտաց, կամ ՚ի նեղնգել յառաքինութիւն, այնպիսիքն ընդ սխա-լանօք անկանին . ամն ըստ նոցա թիւր դիտաւորութեանն թողու փառս, զի յաղագս թողլոյն սգասցեն, և փո-փոխմամբ դարձեալ ուղղեսցին, կամ զառաջադրութիւն և կամ զգործն . վասն զի երբեմն յառաջադրութիւն կա-մացն մեղանչէ, և երբեմն գործ ։ Այլ յորժամ աւա-կանութեամբ է, ըստ որում պարտ իցէ, օրինակի ոչ ինչ լի-նիցի . որպէս համբերողի բազում անգամ և պաշտօնին առաքինացեալ մեծք անկանել զազրութիւն ՚ի մանկականութեան յաղագս գարշելի կատարածին, և զգործն դիւրաբար իբրև որբոց և կամ միայնացելոց և կամ կրօնաւորի տալ զօգնականութիւն ։ Պիտոյի և ուղիղ խորհրդով առնել զողորմութիւնն յախտաժէտս կամ ՚ի ծերս կամ յան-կեալս ՚ի ձախութէ, այլ խնայելով և տրտմելով . և է



Digitized by Google

խորհուրդն ուղիղ, բայց գործն՝ անարժան. վասն զի արար և արժան է որ տէրամբն՝ զուարթութիւն առաքեսցէ և անխնայաբար։

Արէին սուրբքն և զայս՝ եթէ յառաջադիմութիւնք են 'ի բազում յոգիս, յանձնս քաղցրութիւն մտաց, և 'ի նեղս պատահումն կրօնաւորութե։ Այլ յորժամ ոչ ընկեցի յաղագս նորին լինելեան բանին ոչ ըստ մոյ զխոստա-ւորութեանն և ոչ յառաջադիմութե գործն և ոչ քաղցու-թե, և ոչ որք զքաղցրաբարութե բանիցն սուսանան՝ 'ի մի-բայ զրեն զշնորհօն տուողին բարեացն մոյ, այլ խորհեալ յօժարութեն և բաւականութե, այնպիսիքն թողեալք 'ի նախախնամութենէն՝ անկանին յանձնթողք գործս կամ 'ի զարշելի ախտս և 'ի վատթարութիւն. և թողեալք յաղագս եղելոց 'ի նոսա նուաստութեն և անկարգութե, հանդարտագոյն լինին առ սակաւ սակաւ 'ի կործեցեալ յառաքինութե նոցա ընտանենայ հպարտութեն՝ յին-քեանս վստահանալով, այլ ոչ յայծ՝ որ շնորհէին զամե-նայն որ խոստովանին զշնորհսն։ Վասն զի ամբարտա-ւանեալն զտանելով զամբարտաւանութիւն[1]՝ ամբարհա-ւանէ, և ոչ ևս վերադարձէ զպարգևս՝ քաղցրութեան մոյ և ոչ զնուաստակարգութե զխոստութեան, այլ խորամ կրօ-նաւորութեան և կամ բաւականութեան[2]։ Իսկ կալցա-ցանէ մծ զհրեշտակ նախախնամութեան, որ է 'ի վերայ շնորհին այնորիկ կարգեալ. որոյ 'ի բաց կացեալ բանսա-րկուաւ լինի 'ի հակառակամարտէն ամբարտաւանելոյն քաղցրութեան, անկանի ընդ պագշոտութե. զի կամ շնաբարոյ կամ անասնական անարգելութեան վարեալ զգլխական բնութիւն, որպէս զվկայի ողջախոհութեանն 'ի բաց բարձելոյ՝ անարժան հաւատոյ լինի տասցեալ 'ի նոյանէ։ Փախչելին երկիւղածք յայնպիսի բերանոյ վար-դապետութէ որպէս յաղբերէ որ զազրունկան ունի, մինչ զի 'ի կատարել զերեցելոյն. Աղաւաղին ասէ մծ՝ զու ընդ-դէր պատուէս զարդարութեն իմ կամ սանձս զաւխոս իմ 'ի բերան քո։ Բանիցդ նմանեցան Հրեշտակապետ աստուա-ւածային տերևն զանազան ազգական ապականեալ՝ որ արծա-թանկէք են և աւելաստացուք, ապականեալ որ զգոյն ու-նին։ Նաև յաշակերտացն և ամբարտաւանիցն, որք զան-

1 Յօրինակն գործոյն։ 3 Միւսն բանաւորութեանն։
2 Միւսն զանհաւատութիւն։

[illegible]

[illegible]

Այս թողլոյն զանազան են պատճառք. զի ոմն լինի յաղագս ծածկելոյ առաքինութեան զի երեւեսցի, որպէս 'ի մեծ համբերութեան նահապետին Յոբայ։ Աստուծոյ խոստացաւ եւ տուեցաւ նմա պայքար. մի 'ի բաց առներ զիւր զկրատունս եւ մի կարծէր այլ ազգ ընդ քեզ խօսել, այլ զի երեւեսցիս արդար. վասն զի խիստ ծանօթագոյն էիր 'ի սկզբանն ատեանիս ըմբամբակում, եւ որ հայեցեալ յան֊դունդս խորոց մարդկայնոց. բայց զի անգիտացեալ էր քո ուղղութիւն 'ի մարդկանէ, որք կարծէին չար պատրուա֊կանի յաղագս փարթամութեան պաշտել զիս, 'ի վերայ ածելով զայդ՝ քան զխոտորութիւնս, 'ի բաց հնձեցից զծուլութիւնդ։

Այս եւ այլ ազգ թողեալ լինել յաղագս խոնարհման ամ֊բարտաւանութեան եւ փախչելոյ 'ի կարծեաց ամբար֊տաւանութեան, որպէս զերանելւոյ առաքելոյն է ան֊սանել Պաւղոսի. վասն զի թողեալ եղեւ նա 'ի խաւա֊րութիւնս անկանել եւ 'ի չարչարանս եւ յազգի ազգի նե֊ղութիւնս, յաղագս որոյ եւ ասէր. տուաւ ինձ խայթ մար֊մնոյ հրեշտակ սատանայ. նա աւանդեցաւ զիս, զի մի ամբար֊տաւանեցայց։ Զի մի երբէք այնքանեաց ազանչելեաց համբերութեան եւ բարեմտութեան եւ պատիւ նմա լեալ, 'ի սա֊տանայական ամբարտաւանութիւնս արկանիցէ զթուլա֊ցեալն ընդդարձակութեամբ։ Թողու եւ անզգամանացն յա֊ղագս մեղաց, որպէս եւ ասէր Յն. ահա ողջացար, մի եւս մեղանչեր, զի մի չար եւս լինիցի քեզ։ Թողու եւ Յուդայի պատուելով զարծաթն քան զհեծեալ բանն, յա֊ղագս որոյ խեղդեցաւ։ Թողու եւ Եսաւ, որոյ աղագաւ ընդ պապշոտութեամբ անկաւ, նախապատիւ անկելով զարդ֊արուլայնի քան զհայրենի օրհնութիւնն։

Արդ զայսոսիկ զամենեսեան զգացեալ 'ի հոգւոյն սրբոյ երանելւոյն Պաւղոսի առաքելոյ՝ ասէր յաղագս այս֊պիսի օրինակի թողացելոցն. եւ որպէս ոչ ընտրեցին զԱստուած ունել 'ի գիտութեան, մատնեաց զնոսա Աստուած յանարգ միտս՝ առնել զոր ոչ արժանաւորն։ Այս յաղագս այսոց որ եւ կարծէին զգիտութիւնն Աստուծոյ ունել, համարձակ առաքեա֊նեալ վարուք եւ մտօք ամբարտաւանութեամբ՝ ասէ. վասն զի ծանեան զԱստուած եւ ոչ իբրեւ զԱստուած փառաւորեցին կամ գոհացան, այլ ընդունայնացան 'ի խորհուրդս իւրեանց եւ խաւարեցաւ անհանճար սիրտ նոցա, ասելով՝ իմաստ֊

Digitized by Google

տունքը զօրով յինքնեցան, որք կործեաց և անհաւատա-ւանութեան զիւրեան եղջիւրան. յաղագս որոյ մատնեաց զնոսա ած յախտս անարգութեան անպատուել զմարմինս իւրեանց։ Որպէս զի ստուգաւ ճանաչել մեզ պարտ է եթէ անհնարին է անկանել ումեք ընդ պաշտպանութեամբ, ոչ լքեալ յիւր նախախնամութենէն, 'ի պղերգութենէ և 'ի ծուլութենէ իւրեանց թողացելոցն այնոցիկ հանդի-պեալք նոցա։

Այլ այս տուհանս Պղատոնականեայ աստուածոց փիլիսոփա-յի և ընտրեցելոց միայնակեցաց՝ մերձ լեալք ընդ նմա և ընդհանրականք սուրբք և երջանիկ հարքն յաղագս առաջնորդութեան անկանելոց. Իրիսիոս և Յակոբոս՝ որք աշակերտի վարուց են պայծառացեալք։

ԹՈՒՂԹ

# ՍՈՒՐԲ ՀՕՐՆ ԱՄՈՆԻ

Հոգին սուրբ ուր և կամի հանգչի, և հանգչի 'ի սուրբս և 'ի հանգստաւորս և 'ի ցած ոգիս մարդկան. և եթէ որք քաղցրութիւն լոկ հոգւոյն որոյ, տայ նոցա զերկնային իւր, և արկանէ ջերմութիւն 'ի սիրտս նոցա 'ի սկըզբանն։ Այլ յորժամ շնորհի նոցա ջերմութիւն սիրոյն իւր, տայ նոցա ատել զամենայն պէտս աշխարհիս, զոսկի և զարծաթ և զամենայն հոգս նոցա, զհայր և զմայր, եղկինս և զորդիս և զեղբարս և զկանայս և զամենայն որ է յաշխարհիս զաղաղմունս. և շնորհէ նոցա լինել անձինց, անոթք, անուշեալ նման որդւոցն իւր, և քաղցրացուցանէ նոցա զգործս իւր առաւել քան զխորխուխ մեղու, եթէ զաշխատութիւն, եթէ զպահս, եթէ զհսկումն, եթէ զլաւթի հանգստութեան և զողորմածութիւն. զամենայն խաղաղութիւն իւր քաղցրացուցանէ նոցա, մինչև զամենայն ինչ ուսուցանէ նոցա։ Այլ յորժամ զնոյն ուսուցանէ նոցա, զայս այնուհետև նոցա փորձութիւն, և յայնժամ իմ որ յառաջին քաղցրութիւն նոցա գործէին էին, ծանր և զառն հանէնի զնոսա։ Նաղուածք յորժամ փորձէին, քաղցրանան նոցա խոտոր ըստ մտածմանց խորհրդոց. և միջամտեալ հարկեն, և ոչ ունին զնչին արդարութեան.

Digitized by Google

այս է զոր Պաւղոս ասէ. սկսեալ հոգւով՝ և արդ մարմնով վախճանիք, և այսչափ աշխատեցայք ընդունայն, եթէ է իցէ ընդունայն:

Արդ եթէ մարդն ընդդիմակացի սատանայի յառաջնումն պատերազմին, և յաղթեսցէ չար դիւացն նոյն ժամահիւն, զի պատրաստ է մարդոյն զիւր յաղթութիւն նոյն հասանելոյ, ապա այնուհետև առնու նմա մեծ զօրութիւն հաստատուն սիրոյն իւրոյ և համբերութիւն անխախտ: Ով զի զօրութիւն առաջին յաղթող է և անհասանելի, իսկ զօրութիւն երկրորդ առաւել քան է և հաստատուն և անշարժ. և ի սմանէ ծնանի սովորել և զիտել զքեծութիւն զանձանցն երկնաւորաց, և որ ունի յինքեան համբերութիւն անխոնջ և անյաղթ, և որպէս նա ի քաղաքս և յաւիտենս հաղորդ հանդերձեալ երեսացն կշիռ՝ զատաւորեալ լցեալ օրհնութիւն իւրեւ զթագաւորն սպասեալ յառաջ զինեացի, և նաւորդքն հանդերձին ուրախութեամբ հանդերձ: Արդ այժմ զուք, սիրելիք իմ և որդեակք, աստուածասէրք զերկրորդ զօրութիւն ի խորհուրդս սրտից ձերոց, զի լիցի հանդերձեալ ձեզ յաւիտենական. զի որ ըստ այսմ երկրորդ զօրութիւն է, կարէ զամենայն սատանայ խորհրդականաց զանձուցանել, և սա զամենայն հնարութիւն նորոգէ զմարդոյ, և սա որքէ զիշխանութիւն մերոյ մարդոյն ի խորհրդոց, և սա առնու քննակել ամենայն մենութիւն ընդ մարդկութեան, զի լինիցի մարդն աստուածոյ նոյն, որպէս և զրեալ է՝ թէ բնակեցայց ի նոսա և զնացից ի նոսա:

Նոյն յարժամ կամիցիք զերկրորդ զօրութիւն ընդունել՝ որ ի զաւ փորձութեանցն աստուածային զօրութիւն հեռացոյց ի ձէնջ, այս զարդ սատարելութիւն է՝ որ առնէ զսա ձեզ զերկրորդ զօրութիւնն. զի դիւցէ մարդ ուխտ ընդ Քրիստոսի և ընդ նոյ, եթէ չխորհեսցի նմա զմեղանս աստուածային զոր հեղզացոյց, և ոչ ևս այսուհետև անզգամեալ զղջանալ բուլ: Արդ առաջակէ ասացէալ նմա զի այսուհետև մի մարդ զք, մի խորհուրդք մարդկեղինք հանգիցեն ի նմա և զաւ զարդեսցեն. և մի ասացէ զզաստա մարդկեղէն մարմնոց իւրոյ կամս հոգւոյ, այլ յամենայն ժամ ամենայն սատարեալ զխորհուրդս իւր աստուծոյ նոյ: Արդ ուրախացաւ սատանայութ սորանութիւն յանդդիմանակեալ զհոգիս իւր և ասէ. ընդդէմ հեղզացար մինչև ցայժմ և խուսափեցայ զպարշափ առուրբ և զժամն: Արդ զարդեալ յիշեսցէ և ս զաւե-

նոյն տանջանաց և զանազան աղքատութեան, յանդիմանելով զհոգին իւր յամենայն ժամ, և ասելով զայս՝ եթէ. մնալ է ինձ չարչարեաց քեզ և պատրաստեաց զայսչափ պատիւ, և դու հեղգացար և կարճամտեցեր։

Այլ յորժամ զայս ամենայն առնիցէ հոգին ընդ իւր՝ յանդիմանելով զտիւ և զգիշեր և զամենայն ժամս և զժամանակս, վաղվաղակի զայ մարդն յերկրորդ ջերմութիւն սիրոյն աստուծոյ որ է լաւագոյն քան զառաջինն։ Նախնի երանելին Պաւղոս յորժամ ուսանէր ելեալ ՚ի վերայ իւր ծածկութիւնս խորհրդոց, ստիպեալ ասէր այսպէս՝ եթէ զամս յաւիտենից լռեցի և խօսեցայ։ Այլ դարձեալ. լռեցի զառաջինսն և խօսեցայ յամենայն ՚ի գործս քո, յարարածս ձեռաց քոց խորհեցայ և տարածեցի առ քեզ զձեռս իմ հանդերձ աղօթիւք։ Այլ դարձեալ Եսայի ասէ. յորժամ դարձցիս և հեծեծեսցես, յայնժամ կեցցես, և գիտասցես եթէ ուր էիր զառաջինն։ Արդ սիրելիք աղաչեմ զիս, եթէ այսպէս ամենեցունց զխորհրդոց մեր, և սանձահարեսցուք զհոգի և զմարմինս մեր, և հանդերձ ցածութեամբ և լաւութեանն զաւետս ամենայն ՚ի մէջ ՚ի բաց ընկեսցուք չարհոգին [illegible], որում փառք յաւիտեանս. ամէն։

## ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՀՕՐՆ ԱՄՈՆԻ ԱՅԼ ԹՈՒՂԹ

ՍԻՐԵԼԻՔ, անտանելի այժմ զի պտուղ ձեր ամենեքին կենդանի է. և յորժամ պտուղ մարդոյն ամենեքին կենդանի լինի, տայ նմա ամ ժառանգութիւն, և հաշուելով ՚ի բանդին իւր զնա, և հաստատեալ է նմա հաստատութեան բարի փափագէն աշխատութեան նորա. վասն զի ձգնեցաւ պահել զպտուղ պտուղ իւր կենդանի։ Իսկ եթէ պտուղ մարդոյն մեռանի, ոչ հաշուի նմա ՚ի կողմ մոյ, այլ առաւել ևս մեղանչէ ամ ասել զնոսա մարդասպանիւն այսպէս. գոչեա զօրութեամբ և մի խնայեր. բարձրացո՛ իբրև զփողոյ զբարբառ քո, պատմեա ժողովրդեան իմում զմեղս նոցա և տանն Յակոբայ զանօրէնութիւնս նոցա. զիս օր ըստ օրէ խնդրեն և ճանաչել զճանապարհս իմ ցանկան. զի է զի պահեցաք մեք և դու ոչ տեսեր, և խոնարհեցուցաք զանձինս մեր և դու ոչ գիտացեր։ Պատասխանի ետ նոցա և ասէ՝ թէ յաւուրս պահոց ձերոց

Digitized by Google

զատանելին կամք ձեր կատարել։ Եւ որք ընդ ձեռամբ ձերով են՝ չարչարէք զնոսա և կապէք զանառակս. և զինչ պէտք են ինձ այնպիսի պատիժք, և ձեր աղաղակելով զայլ բողոքել առ իս և ինձ ոչ լսել ձեզ. ոչ զայնպիսի պահս ընտրեցի ասէ տէր. և եթէ խոնարհեցուցանես իբրև զանուր զպարանոց քո, և քուրձ և մոխիր 'ի ներքոյ քո տարածանիցես, և ոչ այնպէս կոչեսցի պահս ընդունելի։ Ո՞հա այս է պատուաս մեռեալ, յաղագս այսորիկ ոչ լսէ նոցա, եթէ յաղօթս կացցեն առ նա. քանզի զգործս զոր առնեն, 'ի հաճոյս մարդկան առնեն և ոչ յԱյ. վասն այսորիկ ոչ բնակէ 'ի նոսա շնորհքն Ք՛րի։

Այլ եթէ ոչ ուրասցի մարդ զկամս և լուիցէ այնոցիկ որ ըստ հոգւոյն ծնեալքն են նորա, ոչ կարէ ընտանենալ կամացն Այ. իսկ եթէ խնասցի զկամսն Այ և խնդրէ, ոչ զարմասցի ունայն։ Տեսէք այժմ, եթէ խնամել զկամըս Այ մեծ է, իսկ առնել զկամս նորա որչափ լաւագոյն։ Իսկ եթէ ոք սիրէ զտէր 'ի բոլոր սրտէ և 'ի յանձնէ և 'ի զօրութենէ և 'ի մտաց, և կացցէ յերկիւղ նորա, և առաս երկիւղն ծնանի զարտասուս և արտասուսն զխոնղութի և զուրախութի, և յաղագս նորա անձինն պտղաբերէ յամենայն առաքինութիս. և յայնժամ տեսցէ Ած զպտուղ մարդոյն գեղեցիկ, տայ նմա Ած պահապան՝ որ պահէ զնա յամենայն 'ի ճանապարհս իւր։ Որոց ծոյլքն զերկիւղն Այ ոչ ունին, և ոչ զսէրն նորա և ոչ զջերմութի նորա, այլ զհետ կամաց իւրեանց գնան. և եթէ երթան առ ոմանս որք խօսին զապաշխարհիս, և վասն ցնոր խօսից և ընդ վայր բանից՝ զջերմութիւն և զսէրն որ առ Ած է՝ կորուսանեն և շիջուցանեն. վասն այսորիկ գրեալ է, զհոգին մի շիջուցանէք։ Գիտեմ ես զի դաւօք սրտի էք ընդ փորձութի անկեալ, այլ քաջութի տարեալ այսմ ընդունիցիք զխնդութիւն. և եթէ ոչ եկեսցէ ձեզ փորձութի, ոչ կարէք առնուլ յաւելուած առաւել քան զչափն ձեր։ Այլ նոքին իսկ սուրբքն յայժամ խնդրեցին յինքեանս յաւելուլ զհաւատս, 'ի փորձութիս անկան։ Եթէ ոք առցէ օրհնութիս յԱյ, առժամայն իսկ յաւելու 'ի նա փորձութիւնս թշնամեաց՝ որք կամին արկանել զմեզ 'ի յօժարութենէց 'ի վայր, գիտելով չար դևն եթէ օրհնեալ անձինն յառաջադիմութիւն տանի, և ընդդէմ իսկ մարտնչի։ Քանզի յա-

ժամ օրհնեցաւ Յակոբ 'ի Հօրէն իւրմէ, և նախաժամայն իսկ փորձութիւն Եսաւայ մերձեցաւ առ նա. քանզի սաստկանայր շարժեալ զաւրա նորա ընդդէմ եղբաւրն իւրոյ, զի ապականեսցէ զօրհնութիւնն. բայց ոչ եթող ած. գրեալ է՝ եթէ ոչ թողու տէր զգաւազան մեղաւորաց 'ի վիճակս արդարոց:

Սիրելիք, փութացարուք և դուք լաւագոյն լինել 'ի փորձութիւնս որ գան 'ի վերայ ձեր. քանզի որք պատահեն օրհնութեանց, հարկ է և փորձութեանց համբերել. քանզի ես և հայրն Աբրահամ մեծամեծ փորձութեանց համբերեցաք յայտնի և գաղտնի. և համբերեցաք կամաւն այ՝ անձն ունելով և խնդրելով 'ի նմանէ ապրեցուցանել զմեզ: Եւ արդ այժմ դուք, սիրելիք, քանզի օրհնութիւն այ եհաս առ ձեզ, զհետ եկին և փորձութիւնքն մինչև անցցէք ընդ նոսա: Իսկ եթէ ընդ նոսա անցանէք, յայնժամ առաւ և զմեծ հասկն ընկալջիք, և յաւելցի ես առաւել յառաքինութիւն ձեր, և տացի ձեզ մեծ խնդութիւն յայ զոր ոչ ունէիք 'ի սկզբանէ: Իսկ անցեալ ընդ փորձութիւնս զինչ դեղ է նոցա, զի մի նեղիցիք. այլ յաղօթս կալ առ ած 'ի տուէ և 'ի գիշերի, և բոլորով սրտիւ գոհանալ զտեառնէ, և երկայնամտել յամենայնի, և անցցէ ընդ ձեզ որպէս Աբրահամ փորձեցաւ և երևեցաւ ընտիր: Արդ տեսէք թէ որպէս ամենայն սուրբքն մտեալ 'ի փորձութիւնս գտան սիրելիք այ: Բայց արդ յաղագս ուղղութեան սրտից մերոց խնամով բարի գործ առնիցէ ընդ մեզ ած. և եթէ ոչ սիրէր զմեզ, ոչ ածէր 'ի վերայ մեր փորձութիւնս, որպէս և գրեալ է՝ եթէ զոր սիրէ տէր, խրատէ. տանջէ զամենայն որդի զոր յանձն առնու: Բայց զի 'ի հաւատացելոց վերայ գայ տեսակ փորձութեանց. իսկ որք անփորձքն են, խորթք են և ոչ որդիք. զի թէպէտ և զհանդերձն և զպայութիւն ձևոյս զգեցեալ են, սակայն զզօրութիւն նորա ոչ գիտեն. քանզի աբբայ Անտոնիոս ասաց՝ թէ ոչ որ անփորձ կարէ մտանել յարքայութիւն երկնից: Գրեալ է եթէ որ պարծիցի այժմ, թէ արժան իցէ ձեզ արքամել 'ի զանազան փորձութիւնս, զի ընտրի ձեր հաւատն առաւել քան զոսկի պատուականն, որ կորնչի և հրով փորձեալ գտցի անդ: Այլ և վասն ծառոց, եթէ 'ի ծաղմնց նեղեալք առաւել ես արմատս արձակեն և աճեն:

Նմանապէս և փորձութիւնք 'ի հաստատեցելոց վերայ գան, ոչ 'ի վնաս, այլ 'ի շահ մեծ. և առանց փորձութեանց միտք ոչ կարէ աճման համարձակութիւն և լինել սիրելի այ: Յաղագս այսորիկ գան փորձութիւնք, զի փորձեսցին միտքն և եղիցի մաքուր յանձանձանօթութիւն և յառաջադիմութիւն. և յորժամ անցցէ ընդ փորձութիւնս և յաղթիցէ հանդերձ գոհութեամբ հոգւոյն փառաւորութեամբ, յայնժամ տայս աղօթելով նորա առ ած ընդունելի եղիցի. և յետ այնորիկ տայ նմա ած զօրութիւն իւր, զի զատեալ որոշեսցէ 'ի բաց 'ի միմեանց զպանծագանութիւն բարւոյն և չարին. և լինի յայնժամ յառաջադէմ և վայելուչ, և օրհնէ զնա ած յամենայնի և տայ նմա զխնդրուածս իւր. և նա յաւելցէ և տացէ նմա շնորհս սուրբս և զօրութիւն ածայինս որ պարարէ զանձն նորա, մինչև փոխադրեսցէ զնա 'ի տեղին իւր հանգստեան:

Այլ արդ տէր պահեսցէ զձեզ ողջ հոգւով և մարմնով և տացէ ձեզ հանճար և իմաստութիւն յամենայնի, զի ապրեսջիք յօրացեալ ժամանակիս 'ի մերձակայ չարեացս, մինչև փոխեսցէ զձեզ յարքայութիւն ընդ սուրբս իւր 'ի Քս Յս. Ողջ լերուք 'ի տէր մեր, սիրելիք:

## ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՀՕՐ ԱՅԼ ԹՈՒՂԹ

ՍԻՐԵԼԻՔ իմ 'ի տէր, գիտէք և դուք եթէ յորժահետէ եղև յանցուածն՝ ոչ կարէ անձն մարդոյն զխորաճանաչել զած, եթէ ոչ անփոփոխեսցէ զինքն 'ի մարդկանէ և յամենայնէ 'ի փորձութեանց ընդդիմանայնեաց. և յայնժամ տեսցէ զպատերազմն որ ընդդէմ կայ նմա: Այլ եթէ ճգնեսցի յաղթել ըստ ժամանակին որ գայ 'ի վերայ նորա, յայնժամ բնակէ 'ի նմա հոգին այ, և ամենայն աշխատութիւն նորա դարձցի 'ի խնդութիւն և 'ի ցնծութիւն. Նոյնց եթէ յաղթեսցի խելքն միտքն 'ի պատերազմի թշնամեացն, գան 'ի վերայ տրտմութիւնք և ձանձրութիւնք և բազմապատիկ հարուածք. յաղագս այսորիկ և մեր սուրբ հարքն յանապատի կեցին հրաժարեալք յաշխարհէս, Եղիա, Յովհաննէս և այլ սուրբ հարքն ած: Մ՛ի ինչ կարծէք եթէ որ 'ի մէջ մարդկան կեցին սուրբքն՝ կարացին զարդարութիւն ուղղել, այլ բազում դադարմամբ ունէին յառաջագոյն տառապեալք և ընկալեալք զին

քեանս, և բնակեցուցեալ զզօրութիւն աստուածութեան։ Յայնժամ առեալ Աստուած առաքեաց զնոսա 'ի մէջ մարդկան, և ունէին զամենայն առաքինութիւնս։ Յետ այսորիկ տեսուչք եղեն մարդկան և բժշկեցին զամենայն հիւանդութիւնս նոցա. քանզի բժիշկք իսկ եղեն անձանց մերոց, և զհիւանդութիւնս աշխարհիս այսպէս առաւ կարացին բժշկել։ Յաղագս այսր յիւրեանց դաստարմանէն գնացին և 'ի մարդիկ առաքէին. քանզի յայնժամ առաքէր զնոսա, յորժամ յառաջ բժշկեցան նոցա ախտքն իւր։ Վասնզի անհնար է նմա առաքել զանձն ուրուք 'ի մարդիկ 'ի տեսչութիւն նոցա, որ ունիցին յինքեանս հիւանդութիւնս կամ երկեանս մեղաց։ Այլ որք գնան նախ քան զպատուիրեալն նոցա յնմ, իւրեանց իսկ կամօքն գնան և ոչ նմ. Աստուած իսկ ասէ յաղագս այսպիսեացս. Ես ոչ առաքեցի զնոսա, և նոքա ընթանային. յաղագս այսորիկ և ոչ զինքեանս կարեն պահել, թող թէ այլոց օգնել։ Այլ որք յնմ առաքին, 'ի բաց կալ 'ի դաստարմանէն իւրեանց ոչ կամին, գիտելով թէ յայտնանէ առաջան զանձային զօրութիւն, և զի մի որպէս թէ անուանկնաւորք եղիցին առաքչին իւրեանց՝ զան ինքեանք կամօք իւրեանց յայլոց շինութիւն։

Ահա ծանուցի ձեզ զդաստարմանն 'ի տան, 'ի միւսում տեղւոջ զզօրութիւն և զպատուէն. և զայս եթէ ընդունիք, և աստուած զձեզ ընդունի. զօրացարուք 'ի տէր, յարում և գործէք զբարիս։ Այլ որք 'ի բացն կան 'ի բարի դաստարմանէն, ոչ կարեն ուղղել և յաղթել կամաց իւրեանց, և ոչ մերձենալ ընդ կուսողին, որ միշտ պատերազմի ընդ մեզ. յաղագս այսորիկ ոչ ընկալան յինքեանս բնակել զսուրբ զօրութիւնն նմ, քանզի սուրբ շնորհն նմ ոչ բնակէ յայնս որք ծառայեն իւրեանց ախտից և մեղաց։ Այլ դուք ախտիցն յաղթեցէք, այնպէս առաւ զօրութիւն նմ իւրովք զայ առ ձեզ։ Ողջ լերուք 'ի տէր և յուղիղ հաւատս Քրիստոսի նմ մերոյ, որում փառք յաւիտեանս. ամէն։

ՎԱՍՆ ԿԱՐԳԻ

# ՍՐԲՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԷԻՑ

## ԵՒ ՄԱՆԿԱՆՑ ՈՒԽՏԻ

Զի եթէ ոք 'ի հաւատս կայցէ կամ մտանելոց ըն-նել կամ զինչ և իցէ որբութեան և զկուսութեան պահել և կենացն յաւիտենից հասանել, ընդ ընկերս կայցէ ընդ ճշմարիտս և ընդ միաբանակեացս, զի 'ի միմեանց շինեսցին սիրովն Քրիստոսի. զի եղբայր յեղբօրէ օգնեալ՝ իբրև զքաղաք պարսպեալ. և եթէ՝ ում բնակեցուցանէ զմիակրօնս 'ի տան տն. և եթէ երկու և երեք ժողովեալ են յանուն իմ, 'ի միջի նոցա եմ. և դարձեալ. ուր երկու և երեք միաբանութեամբ խնդրեսցեն ինչ 'ի Հօրէ իմմէ, տացի նոցա. և եթէ՝ յայսմ ծանիցեն զձեզ եթէ իմ աշակերտք էք, յորժամ միաբանիցէք և զմիմեանս սիրիցէք: Մի՛ ևցի սովորութիւն մի մի լինել. այլ զնոյնք կարասցեն գիտել զկարգ և զպայման հաւատոց, և կամ զյանցուածս իւր 'ի միտ առնուլ, և կամ զհնազանդութիւն և զսէր առ ընկերս ցուցանել: Այնպէս զաղանք են 'ի լերինս, եթէ ոչ ոք մերձենայ և խաւսէ, խաղաղ կան: Այլ հաւատք կատարեալ և ճշմարիտ այս է, հնազանդութիւն առ ընկերս, և սէր առ միմեանս և առ Քրիստոս. 'ի մէջ մարդկան լինել օրինակ բարի և տիպք նախանձու, զի շահեալ 'ի միմեանց և նախանձեալ 'ի գործս բարիս՝ տեսցեն և փառաւորեսցեն զՀայրն 'ի յերկինս. և զանարգ և զգայթակղեալ եղբայրն 'ի ձեռն հոգևորն խրատու 'ի պատուականս հանեալ՝ բերան տն կոչեսցի:

Այժմ արդ եկայք, որդիք, և լուարուք զերկիւղ տեառն և զկենաց յաւիտենից, և 'ի կենդանութեան զաւուրս իւր տեսանել 'ի բարութեան: Ծանուցանեմք, լուարուք և ուսարուք որ տեառն հաճոյ է, և զկենս յաւիտենականս ձեզ առնել: Արգել զլեզու քո 'ի չարութենէ և 'ի նենգութենէ: Այլ, լեզու չար՝ հուր հաստատեալ է 'ի մարմինի. լցեալ զինչ անիրաւութեան. դիր դուռն ամուր շրթանց և պահպանութիւն բերանոյ, և մի խորհեսցի

Digitized by Google

սիրտ քո 'ի բանս չարութեան. զարծաթ 'ի վարձու ոչ տալ, տոկոսեօք ոչ պահանջել, զգլուխ պարտապանին վաղվաղակի դարձուցանել: Որդիք մարդկան, մինչև յերբ էք խստասիրտք, ոչ մերկեալ նեղապատեալ. առ նեղարանի ո՞ ունիցի ժոյժ: Յարեանէ հեղձելոյ, 'ի շնութէ, 'ի պոռնկութէ, 'ի գողութէ, յագահութէ, յարծաթսիրութէ, 'ի սուտ երդմանէ, 'ի սուտ խօսելոյ, 'ի բամբասկութէ, յարբեցութէ, յորկորստութենէ, յանձնակամութենէ, 'ի կամակորութենէ, 'ի սիգութէ. մի հպարտ, մի չարակամ, մի ամբարտաւան, մի 'ի խաղ երգոց, մի յերգս լկտեաց, մի 'ի ժպտանս, մի 'ի վայրապար ծաղր, մի յանհուր, մի զրկող, մի տրտնջող, մի յանդուգն, մի ատեցող, մի շատախօս. մի խօսիր զումեքէ, մի լսեր զումեքէ. որ քեզ չար թուի, ընդ ընկերին մի առներ. մի ցանկացող, մի քինոտ, մի կամակոր յուսմանէ, զի մի 'ի չարիս անկցիս. մի հեղգալ յաղօթս, մի ատել զաղքատս, զի յաւուր չարի փրկեսցէ զքեզ տէր, և ոչ մատնեսցէ 'ի ձեռս թշնամեաց. մի ատել ըզպահս և զճգնութիւնս, որ զհուր շիջուցանէ, զառիւծ սանձէ, ընդ այս բանս 'ի կիր արկանէ. և այլ որ ինչ բարի գործք բարեպաշտին կատարումն: Սիրել զտէր այ յամենայն սրտէ և զպատուիրանս նորա կատարել, ընդ ամենայն մարդոյ զխաղաղութիւն ունել, հեզ լինել և խոնարհ. և յամենայն ժամ զղջալ և երկիւղիւ կալ և լսել բանից նորա որ ասէ՝ յո՞ հնազանդեցայց, եթէ ոչ 'ի հեզս և 'ի խոնարհս և ոյք դողան 'ի բանից իմոց: Խնդրեա զխաղաղութիւն և երթ զհետ նորա. յուսոյն աչս ունել, և մի վայրապար բնակեսցես յաւիտեանս յաւիտենից. յերկինս մարդ կատարեալ, և 'ի յերկիրի հրեշտակ երևեալ: Որ մենակեաց կամի լինել և կուսան և պահեցողութիւն յանձն առնուլ, կանոն զայդ կալցի ամենայն ոք որ 'ի հաւատս կացցէ, զի 'ի ձեռն անապատականին մեղաւորքն սրբեսցին:

## ԹԷ ՈՐՊԷՍ ՊԱՐՏ Է ՍՐԲԵԼ ԶԱՆՁԻՆՍ

Եւ արդ բազում երկիւղիւ անձանց զգուշացարուք և մեծաւ փութով զխաւարն անզգաստութեան փարատեցարուք, զանիրաւ բարկութեան և զԹշնամանողութիւն 'ի բաց ընկեցարուք. զխորամանկութիւն, զքինահանութիւն և զնախանձ մերժեցարուք. զստութիւն և զյիմարութիւն և զունանց բարբառոյ զանզգամս 'ի բաց մերժեցարուք. յագահաց և 'ի բամբասողաց և 'ի զեղխեցելոց սորեցողացն փախիցուք. զչարակնութիւն և զաղտեղութիւն և զպղծալից նենգութիւն զատապարտեցուցուք. ընդ Թշնամիս հաշտեցարուք, և զյանցանս 'ի սրտէ Թողցուք միմեանց. միմեանց ծառայեցարուք, միմեանց հնազանդեցարուք և զմիմեանց բեռն բարձցուք. զմիմեանս սիրեցարուք, զմիմեանս պատուեցարուք և զմիմեանս լաւ քան զանձինս համարեցարուք. զաղքատս սիրեցարուք, զաչս ցածուցուք և զլեզուս 'ի բամբասանաց լռեցուցուք. զմեղս քաւեցուք, զյանցանս ապաշխարեցուք և մի միւսանգամ անդրէն ըղձեցուք. զխիղճ փարատեցուք, զյիմարութիւն Թօթափեցուք, և զծուլութիւն 'ի փոյթ դարձուսցուք. աղօթիւք աշխատեցուք, և յողորմութեան յօժար լիցուք. գործովք առաքինասցուք, 'ի չարեաց ազատեցարուք, և հաստատուն կատարեալք լիցուք։ Զի այսպէս ամենայն առաքինութեամբ և արդարութեամբ և անմեղութեամբ արժանաւորք եղիցուք մեծի խորհրդոյն, և բազում փափաքանօք և կատարեալ սրբութեամբ վայելեսցուք 'ի մարմնոյ տեառն մերոյ Յ̃ի Ք̃ի, որում փառք յաւիտենից. ամէն։

### ՅԱՂԱԳՍ

## ՅԻՇԵԼՈՅ ԶԳՈՐԾԵՑԵԱԼ ԶՄԵՂՍՆ

### ԹԷ ԶԻՆՉ ՕՐԻՆԱԿԱՒ ԱՌՆԵԼԻ Է

Եթէ եկեսցէ յիշատակն տրտմութեան բերելով, ընկալ և տարացիր. իսկ եթէ հեշտութիւն, 'ի բաց հալա-

ծեա. քանզի թշնամին է այս խրագործութիւն։ Ո՛չ եթէ ժուժկալութիւն ստանալ կամիցիս, մի միանգամայն քաղց սաստիկ և ծարաւ մարմնոյդ ՚ի վերայ յարուցանիցես, քանզի խաբես զքեզ ինքն. և մի առաւել քան զչափն, քանզի ոչ տարցի բնութիւնդ, և դարձեալ զառնացցես յառաջին անկարգութիւնն. այլ առ փոքր փոքր ողջերգելով զխորհուրդս շատակերութեան հանդիսագացես, և ժուժկալութիւն քո մինչև ՚ի վախճան եղիցի։ Ո՛չ եթէ խորհուրդք պոռնկութեան պատերազմեսցին ընդ քեզ, ձգնեալ՝ աշխատեալ զամենայն զօրութիւնս քո, այս ինքն է պահս, արթնութիւնս, յաղօթս խոնարհութիւն, և զձեռս զքեզ երևեցուցանելով ձգնեցիր զանձն. ապա թէ ոչ մաքրիցիս, ասա եթէ ոչ ես ինչ արարի. և ընկեցեալ զքեզ առաջի Այ և զտկարութիւն առաջի դնելով՝ եթէ քեզ միայն կարելի է ամենայն ինչ, աղաչեա և հանգիցես։ Իսկ եթէ այսպէս ես ոչ մաքրիցիս, մի լինիցիս անյոյս, այլ ասասցես՝ եթէ չեմ արժանի, զի ըստ եղկելեաց խնդրուածք իմ, և հանգիցես։

## ՊԱՏՈՒԷՐՔ ՍՈՒՐԲ ՀԱՐՑՆ

ՓՈՒԹԱՑԱՐՈՒՔ, միանձնեայք, մի ինչ յանցանել, զի մի զլռակիցին ձեր զՀոգին թշնամանեսջիք և հալածիցէք ՚ի հոգւոց ձերոց։ Սկիզբն է միայնակեցին անստացուած կեանաւ ստանալ, հոգւոյ և մարմնոյ զխաղաղութիւն և զպարկեշտութիւն անձին, ձայն շարժաւոր և բանս կարգաւորս, կերակուր և ըմպելիս անխառն և հանդարտաբար. առաջի երիցանց լռութիւն, առաջի իմաստնոց լսողութիւն, առ ընկերակիցս սէր, առ կրտսերագոյնս խրատ բարի, ՚ի ժանտացն և ՚ի մարմնեղինաց և ՚ի չարախոսողաց հեռանալ. յաճախ իմանալ, և սակաւ ձայնել. մի յանդգնել բանիւք, մի շատախօս լինել, մի պատրաստ լինել ՚ի ծաղր. պատկառանօք զարդարել, ՚ի վայր ունել զաչն, և ՚ի վեր զխորհուրդսն. մի հակառակող լինել, այլ հնազանդ. աշխատել ձեռօք, յիշել հանապազ զկատարածն, յուսալ խնդալ, անդադար աղօթս առնել, յամենայնի գոհանալ, նեղութեանց համբերել, ամենեցուն խոնարհել, ատել զամբարտաւանութիւն. մի նախանձոտ լինել, պահել

Digitized by Google

զսիրտն 'ի չար խորհրդոց, դարձուցանել զաչս յօտար գեղեցկութենէ և պահել 'ի չարէ։ Զաղքատութիւն կցորդակից ունել, զպարկեշտ զգեստ զանձնել պատուի-րանաւն յերկինս, զանձն դատել վասն խորհրդոց և վասն գործոց որ ըստ օրէ։ Մի՛ շաղապատել յաշխարհիս շատա-խօսութիւն, մի՛ քննել զպղերգացն զկեանս, այլ միայն նախանձել ընդ սրբոց հարցն վարս։ Աշխատակից լի-նել որք ուղղութեամբ վարիցին, և մի՛ չարախօսել. վշտա-կից լինել վշտացելոց, մի՛ դատապարտել և մի՛ թշնամա-նել զայն որ դարձեալ իցէ 'ի մեղաց։ Մի՛ երբէք արդա-րացուցանել զքեզ, այլ քան զամենեսեան մեղաւոր ա-ռաջի աստուծոյ և մարդկան խոստովանել զքեզ։ Խրա-տեա զանկարգսն, մխիթարեա զնեղանձինսն, սպասա-ւոր լեր հիւանդաց, զոտս սրբոցն լուա, եղբայրսիրու-թեամբ և օտարասիրութեան հոգ տար, ընդ ընտանիս հա-ւատացելոցն խաղաղութեամբ կեաց, 'ի հերձուածողաց 'ի բաց դարձիր, զկտակարանս սուրբս ընթերցիր, որ 'ի ծածուկն են՝ մի՛ ամենեւին հայիր 'ի նոսա. վասն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ մի՛ ընդ խնդիրս ինչ անկանիր, այլ անստեղծ և միասնական երրորդութի համարձակու-թեամբ ասել և իմանալ. և որք հարցանեն, ասել՝ եթէ մկրտեցարուք որպէս ընկալայքն, հաւատալ որպէս մկր-տիմքն, փառաւորել որպէս հաւատացայքն։ Ի գործս բարիս ընթանալ. մի՛ երդնուլ ամենեւին, մի՛ տալ զար-ծաթ 'ի վարձու, և ցորեան և գինի և ձէթ բազմացու-ցանել. մի՛ տալ ումեք և առգելուլ զիրաւականն, յարբե-ցութէ և 'ի ցնորմանց և 'ի հոգոց աշխարհականաց 'ի բաց որոշել։ Անգութ մի՛ չարախօսել և ախորժելով լսել չարախօսաց. մի՛ վաղվաղակի հաւատալ վասն ու-րուք, և մի՛ բանաբարիլ 'ի բարկութէն, և մի՛ յաղթիլ 'ի ցանկութէ, և մի՛ ընդ վայր բարկանալ մերձաւորին։ Մի՛ օխակալ լինիր ընդ ումեք. մի՛ չարի չար հատուցա-ներ, մանաւանդ եթէ չարախօսիլ քան թէ չարախօ-սել, հարկանիլ քան թէ հարկանել, զրկիլ քան թէ զրը-կել, տալ քան թէ առնուլ, անիրաւիլ քան թէ անի-րաւել։ Եւ քան զամենայն ինչ պարտ է միայնակեցին ժուժկալ լինել 'ի պատահմանէ կանանց և 'ի գիներ-բուաց, վասն զի կանայք և գինի զիմաստունս դայթակ-ղեցուցանեն։ Ուղղել ըստ զօրութեան իւրոյ զպատուի-

Digitized by Google

րանս. մի՛ ձանձրանալ, այլ զփորձն և զզօրութիւնս յոյժ ածել ունել և զյաւիտենականն կենացն վայելչութի. յա-մենայն ժամ առաջի աչաց ունել զբանն Պաւղոսայ՝ թէ տեսանէի զՏէր առաջի իմ յամենայն ժամ։ Նոյն որպէս զՏէրն յամենայն սրտէ և ՚ի զօրութէ և ՚ի մտաց սիրել զնա, և իբրև զծառայ զարհուրել և երկնչել, երկիւ-ղիւ և դողութբ զփրկութի գործել, հոգւով ջեռնուլ. զգենուլ հանապազ սէր որ է զգլխաւորն հաւատոյ, և ըն-թանալ ոչ յանհոգութեան, և կռուել ոչ զօդք հարկա-նելով, և պատերազմել ընդ թշնամւոյն ամպար մարմնովս և աղքատ հոգւով, և զամենայն ինչ կարգաւորութբ վարել. անդորր զկեանս անել և հաճոյ լինել աՀաւորին այ։ Նա մի՛ ինչ հպարտութբ և ամբարտաւանութբ գործել, այլ զամենայն ինչ վասն այ և ըստ նորա կամացն առ-նել. զի ած ցրուեաց զոսկերս մարդահաճոյից։ Մի՛ պարծիր ամենեւին, և մի՛ զովութիւն վասն քո ասել, և մի՛ թէ այլ ոք վասն քո զովութի ասիցէ՝ ախորժելով լսել. ՚ի ծածուկ ամենեւին ծառայել այ, և մի՛ մարդկան երեւեցուցանել, այլ միայն ՚ի տեառնէ խնդրել զգովու-թիւն. զահաւոր և զխոստովանել զպատուիրանս նորա զգու-շաւ ածել և զխոնարհութիւնն յաշխարհէս և զպատարագա-ւորեալ բարիս այ ստորագրեալս, նոյնպէս և զպատրաստեալ հարսն սրբոյն և հրեշտակացն իւրոց։ Նա յայսմ ամենայնի յիշելով զառաքելականն բանն՝ եթէ ոչ են ար-ժանի չարչարանք ժամանակիս այսորիկ հանդերձելոց փառացն, որ յայտնելոց է ՚ի մեզ։ Նա ընդ Պաւղոսայ մարգարէին ասել. զոր պատրաստեաց զպատուհասն այ, հանդեր-ձեալն բարգաւաճ և վայելչագոյն և պսակ արքայութե, զգեստ անապականն, յաւիտենական բնակութիւն, կեանս անվախճանս, խնդութի անպատմելի, օթեվանս անհա-սանելի առ Հօր ՚ի յերկինս, երկնաւոր դիրս առ դէմս, ընդ հրեշտակս պարել, ընդ հարս և ընդ հայրապետս, ընդ մարգարէս և ընդ առաքեալս, ընդ մարտիրոսս և ընդ աւետարանիչս, ընդ խոստովանողս և ընդ եպիս-կոպոսս, և որ ՚ի սկզբանէ հաճոյ եղեն՝ ընդ նոսա փա-թագաւորք լինել, և աղօթս արասցուք շնորհօքն Քի. և նմա փառք յաւիտեանս. ամէն։



Digitized by Google

# ՅԱՂԱԳՍ ՃԳՆԱՒՈՐԱՑ*

Որ ոք կամիցի վ͞րդի մի հանձն լինել, յառաջ քան զամենայն զխոնարհութիւն և զհամբերութիւն և զերկայնմտութիւն պարտի ստանալ 'ի պատահել նեղութեանց. ըստ այնմ որ ասէ. որդեակ, եթէ գաս ծառայել տեառն, պատրաստեա զանձն քո ամենայն փորձութեանց. որպէս գիտացաք յաղագս առաքինոյն Յոբայ, մինչև 'ի մերկանալն և յաղխուղ նորա մանչեալ, և սիրոյն ո͞չ յաղթեաց փորձանացն. Ո՞չ իսկ է արժանի որ լինի վ͞րդի հալածի և տառապեսցէ, և 'ի փորձութիւնս զանազանս մտանիցէ և համբերիցէ, և 'ի վերայ այսր ամենայնի խնդասցէ և գոհանայ զ͞այ: Արժանի է այսպիսին զի մեծ համարձակութիւն ընկալցի յաւուրն դատաստանին աստուծոյ ընկալեալ վ͞րդի մեծին և ահաւորին:

Նոյնպէս պարտ է այսպիսին ճգնաւորին չանկանել մեղկելութեամբ և 'ի զբաղմանէ ամբոխաւոր. 'ի խռովութեանց փախչել և յանօգուտ ունայնաբանութենէ և 'ի բազմախօսութենէ և 'ի բարկութենէ, որք են ամպ և խաւարք հոգւոց: Այս են կուրութիւն և մթութիւն է հոգւոյ. և պարտ է զամենայն առաքինութիւն գործել՝ մի 'ի փառս մարդկան, այլ 'ի փառս ա͞յ: Նոյնպէս պարտ է գիտել զի և 'ի հոգևոր ճգնութեանցն ծնանին հպարտութիւնք և մեծամտութիւնք, որ ապականեցուցանէ զհոգին յոյժ, և խաւարեցուցանէ և խանգարեցուցանէ, և 'ի հակառակութիւնս և 'ի բարկութիւնս գրգռէ, և արկանէ յամենայն աշխարհական ախտս և 'ի կորուստ: Նոյնպէս զհեշտութիւնս կերակրոց 'ի մէջ, և զբազմութիւն ամենայնի, և զանձնահաճութիւն և զայլ և զխոստովանութիւն և զհաստատութիւն հոգւոց՝ որ է պարզ մտաց և նմանութիւնն որ առ վ͞րդ. ընդ այս հանդէպ ա͞յծ և յայսմ համայնք և այսգիտութիւնս տառապալով և 'ի խոստովանութիւն յաւիտենականն կենացն ամենայն առաջնորդէ և յանձնաւոր բազմօքն վայելեցուցանէ. և Նմա փառք յաւիտեանս յաւիտենից:

* Առաջին հատուած այսր ճառի ըստ հատուածի է Ճառընտրին Վեն. տպելոյ է զետեղեալ 'ի հարցմանցն առ հայրն Մովսէս յէջ 572. իսկ երկրորդ հատուածն է ճառընտրին Մնացորդաց, որ է երկրորդ հատոր հարցն յէջ 633.

# ԽՐԱՏՔ ԾԵՐՈՑ ՄԵԾԻ

Ծեր՝ ոմն նստէր 'ի գեղջի երանելւոյն Մենասի յայնկոյս քան որ կոչի Կելլի. և գնացեալ վասն պիտոյից յԵգիպտոս, առեալ ընդ իւր և զաշակերտն իւր, և իջեալ 'ի քաղաք մի որ կոչի Նիկիոյ և դադարեցին անդ շաբաթ մի: Եւ տեսանէին 'ի նոյն աւուրս յայտնի կանայս որ ելանէին 'ի գերեզմանս և լային իւրաքանչիւր զմեռեալս իւրեանց մինչև յերրորդ ժամն: Ասէ ծերն ցաշակերտն իւր. տեսանե՞ս, եղբայր, որքան առաւօտեն սոքա. հաւատա ինձ՝ որ եթէ մեք ոչ արտասուեմք այսպէս, 'ի կորուստ երթիցուք: Եւ դարձան 'ի խուցս իւրեանց. շինեցին և նոքա 'ի նոյն գերեզմանս իւրեանց հեռի 'ի միմեանց, և զօրհանապազ նստեալ յայտնէ լային իւրաքանչիւր որպէս զմեռեալ: Եւ եթէ երբէք սակաւ ինչ 'ի քուն մտանէր աշակերտն ընդ առաւօտն, ասէր ծերն. արի, եղբայր, զի նոքա արդ ժամ ունին 'ի գերեզմանս և 'ի կոծս իւրեանց:

Եւ՝ 'ի միում աւուր ասէ եղբայրն ցծերն. աբբայ, սիրտ իմ խիստ է և ոչ կարեմ լալ: Պատասխանի ետ ծերն և ասէ. Ընտանեցիր, եղբայր, սակաւ ժամանակ և

1 Ծեր ոմն նստէր յանապատ 'ի գեհի մեծին Մենասի յայնկոյս գետոյն՝ որ կոչի Կելլիա: Սա գնաց յԵգիպտոս երբեմն առնս պիտոյից ինչ, և ունէր ընդ ինքն զաշակերտ իւր. և իբրև մերձեցաւ 'ի քաղաքն որ կոչի Նիկիոյ՝ եկաց անդ ծերն շաբաթ մի: Եւ տեսանէր ծերն զմարդիկ քաղաքին այնորիկ զարս և զկանայս զի ելանէին ընդ արշալուսն առաւօտուն 'ի գերեզմանս և լային զմեռեալս իւրեանց մինչև ցերրորդ ժամն և ապա գնային: Ասէ ծերն ցաշակերտն իւր. տեսանե՞ս, ով որդեակ, եթէ փոքր ծննդին սոքա և հակէն զդիմերն 'ի սուգս մեռելոց իւրեանց. հաւատա ինձ, որդեակ, եթէ ոչ արտասուեմք և մեք այսպէս, 'ի կորուստ գնասցուք: Եւ մինչ դարձան 'ի սենեակս իւրեանց, շինեցին փոսեթաղէս իւրաքանչիւր գերեզման իւր հեռի 'ի միմեանց, և ընդ առաւօտն ելանէին անդ և նստեալ ողբային զանձինս իւրեանց մինչև ցերրորդ ժամն: Իսկ եթէ երբեմն նիրհէր յառաւօտուն աշակերտն 'ի ծանրութենէ կարգի զգիշերոյն, զարթուցանէր զնա ծերն և ասէր. արի, որդեակ, արի, զի նոքա այժմ ժամ մի ունին զի եկին 'ի գերեզմանս իւրեանց:

2 Եւ յաւուր միում ասէ աշակերտն ցծերն. զինչ արարից, հայր, զի խիստ է սիրտ իմ և ոչ կարեմ լալ: Ասէ ցնա ծերն. ընտանեցաւ, որդեակ, և նեղեա զքեզ փոքր ինչ ժամս, և տեսանես տեր զքանս քո և

աշխատեա, և տեսանելով նոյ տայ զվաստակս իւր ՚ի քեզ և ոչ եւս վաստակիս. քանզի ասեմ քեզ, որդեակ, որպէս սիրտ խոցեալ ՚ի նետէ ոչ եւս առնի բժշկութիւն, նոյնպէս եթէ Ա̃ծ խեթէ զնա ՚ի սուգ, ոչ երթիցէ ՚ի նմանէ սուգն, այլ կայ և մնայ մինչև ՚ի մահ. և եթէ ուտէ և եթէ ըմպէ և եթէ ՚ի քուն մտանէ, անձին իւրոյ սուգ է: Ոչ ՚ի միում աւուր տեսեալ զեղբայրն ծանրացեալ ՚ի կերակրոց, քանզի եկեալ էին առ նմա ոմանց՝ ասէ ցնա առանձինն. Եղբայր, ո՞չ գիտես եթէ սուգ որպէս ճրագ է լուցեալ, և եթէ ոչ զգուշանաս ծածկեա զնա՝ շիջանի. քանզի բազում կերակուր շիջուցանէ զնա, և բազում քուն խափանէ զնա, և բազմախօսութիւն կորուսանէ զնա, և միանգամայն որ ինչ հանգիստ է մարմնոյ՝ խափանէ զնա. Իսկ պարտ է որ սիրեն զՏ̃ր, յամենայն ընչից իւրոց անանեղ բաժինս: Ասաց եղբայրն. զինչ է բանդ, Հայր: Ասէ ծերն. յորժամ գտանես հաց մաքուր, թող զայն հիւանդին և դու կեր զյաւէն վասն Ք̃ի. և եթէ անկանիցի քեզ գինի անոյշ, խառնեա սակաւիկ մի քացախ. և եթէ ուտես միրգ, մի յագենար, այլ թող սակաւիկ մի ասելով՝ ահաւասիկ վասն Ք̃ի. և եթէ գտանիցես բարձ փափուկ, թող զայն և դիր քար և ասա՝ վասն Ք̃ի. և եթէ յանկողնի քում կրտանայցես, համբերեա ասելով՝ եթէ այլք համբառն

տայ սրտի քո զեղջ և աչաց քոց արտասուս, և յայնժամ կենաս այլ ոչ եւս վշտասցիս. Ճշմարիտ ասեմ քեզ, որդեակ, զի զոր օրինակ սիրտ մարդոյ եթէ խոցեսցի նետիւ՝ բնաւ ոչ ողջասցի, այսպէս և մարդ զորոյ սիրտ խոցեսցէ տէր զղջութեամբ՝ ոչ բնաւ ելանէ այն ՚ի սրտէ նորա, այլ կացցէ ՚ի նմա խոցն այն մինչև յօր վախճանին իւրոյ. և ուտէ և ըմպէ և կամ կացցէ, մշտնջենաւորապէս յողբ և յարտասուս կացցէ: Իսկ ՚ի միում աւուր ետես ծերն զեղբայրն զի ծանրացեալ էր կերակրովք, զի օտարք ոմանք եկին առ նա յերեկոյին, և ասէ ցնա առանձինն. Ոչ գիտես, եղբայր, զի ողբ ճրագ իցէ վառեալ, և թէ դու ոչ յաճախութեամբ զգուշացուսցես զնա՝ վաղվաղակի շիջանի ՚ի բախմանէ հողմոյ. այսպէս է և ողբք, անյայտ լինի և կորնչեալ անցանէ, զի յղփութիւն և բազմութեան կերակրոց շիջուցանէ զնա, և զի շատախօսութիւն եւ աւաւեալ կորուսանէ զնա, և ամենայն հանգիստ մարմնոյ կորուսանէ և աւերէ զնա. այլ և զի պարտ է որոց սիրեն զԱ̃ծ, զի յամենայն գործս իւր թողցէ զբաժինն Ք̃ի: Ասէ եղբայրն. և մի իցէ բաժին Ք̃ի, Հայր: Ասէ ցնա ծերն. եթէ գտանիցէ քեզ ունել հաց սուրբ, թողցես զնա այլոց և կերիցես դու զվատթարն վասն Ք̃ի: Եթէ ունիցիս գինի անոյշ, խառնեա ՚ի նմա քացախ և արբ վասն Ք̃ի՝ որ արբ վասն քո քացախ. և մի յագեսցիս նովաւ, այլ թող զմասն Ք̃ի: Իսկ եթէ դիցեն քեզ բարձ կակուղ, թողցես զնա և դիր քար զգլխով քով վասն

Digitized by Google

ոչ ննջեն. և եթէ արհամարհիցես, լաւս ասելով՝ վասն Քրի, զի և նա վասն իմ արհամարհեցաւ. և եթէ տանես ջերմ, անհամբերեա սակաւ մի ասելով՝ եթէ այլք արժանիք և հաց ոչ ուտեն, իսկ ես անարժանս և խորտիկս ուտեմ, որ արդար էր ինձ ուտել մոխիր և մղեղ։ Այլ միաբանականն յամենայնի իրս քո խառնեա սակաւ մի նեղութիւն հանապազ, և յուտել և յըմպել և 'ի ննջել և 'ի զգենուլ. անձկութիւն և խոնարհութիւն կաց հանապազ, զմտաւ ածելով եթէ զիարդ կեցին սուրբքն, և որպէս զի եկեսցէ ժամն և գտցէ զմեզ 'ի նեղութեան, և գտանիցեմք անդ զհանգիստն։

Մի՛ ունիցիս 'ի խցի քում զգեստ կամ հանդերձ կախեալ զպատարկ, զի մահ է քեզ, եթէ այլ արդարք ցրտանին և դու որ մեղաւոր ես՝ աւելի ունիս։ Մի՛ ստանար անօթ իւիք աւելի և զպատարկ մինչև ցքերիչ մի, ապա թէ ոչ՝ բան տացես Այ վասն նորա։ Մի՛ ստանար ոսկի 'ի կեանս քո, ապա թէ ոչ՝ Տր ոչ հոգասցէ վասն քո. իսկ եթէ անկանիցի քեզ ոսկի, 'ի նոյն գնեա կերակուր կամ հանդերձ. ապա թէ ոչ է քեզ պիտոյ, մի ստանար 'ի կենդանութեան քում։

Եթէ՝ ասիցէ ցքեզ խորհուրդք քո՝ 'ի տօնի անդ ուտենել այլ և այլ կերակուրս, մի՛ լսեր նմա, ապա թէ ոչ՝ հրէաբար տօնես, քանզի նոքա պատրաստեն զայնպիսիկ. իսկ

Քրի. և եթէ ցրտասցիս, համբերեա վասն Քրի. եթէ անարգեսցիս, լաւեա վասն Քրի, որ և անարգեցաւ վասն քո և լաւեաց. և թէ արտացես քեզ կերակուր եփեալ, խոնարհեցո զնա փոքր մի և ասասցես ցքեզ՝ թէ արդարքն և հաց իսկ ոչ ունին, և ես եռացեալ ուտեմ, շատ է ինձ։ Իւ զի կարճառօտ ասասցուք՝ յամ հեշտալի գործս քո խառնեսցես վշտաց ինչ յուտել և յըմպել, 'ի քուն և 'ի զգենուլ ինչ, և յամենայնի խոնարհութիւն զմտասցես, և յիշեսցես միշտ զինչպիսի հարց արդարոց թէ որպէս կեցին նոքա յաշխարհի նեղութեամբ և վշտօք. և յիշեսցես հանապազ և զօր մահուան քո, որպէս զի յօժարութեամբ համբերեսցես վշտաց և նեղութեանց 'ի կեանս յայս, և գտցես դու անդ զհանգիստ և զկեանս յաւիտենից։

Մի՛ ունիցիս կրկին հանդերձս կախեալ 'ի սենեակի քո, զի այն մահ է հոգւոյ քո. քանզի և բազում աղքատք մերկ և 'ի ցրտին գնին։ Իւ մի՛ ունիցիս անօթս զատուցեալս 'ի սենեկին քո և մի մինչև ցասեղ մի, զի և նմա պատասխանի տալոց եմք։ Իւ մի՛ ստանար ոսկի 'ի կեանս քո, ապա թէ ոչ՝ Տր ոչ հոգասցէ զքեզ. և եթէ անկանի 'ի քեզ, թէ կարօտ իցես՝ ծախեսցես զայն 'ի պէտս քո, ապա թէ ոչ՝ մի՛ թողցես այն ընդ քեզ։

Եթէ ասիցեն քեզ խորհուրդք քո բազմահամ կերակուրս պատրաստել 'ի տօնի աղօթից, մի՛ լուիցես նմա. ապա եթէ լուիցես, հրէաբար տօնեսցես, զի պատրաստեն 'ի տօնս իւրեանց բազում խորտիկս. իսկ

Digitized by Google

միայնակեցի կերակուր սուգ և արտասուս է ։ Եթէ լսի-ցես զումեքէ եթէ առնէ զքեզ կամ բամբասէ, առաքեա և տուր նմա օրհնութիւն ըստ զօրութեան քում, կամ սակաւ մի հաց կամ փոքր մի մախաղ, որպէս զի ունիցիս համբե-րութիւն ասել 'ի ժամ դատաստանին՝ թող մեզ զպարտս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց ։

Եթէ՝ ունիցիս խուց որ միայն ծածկէ զքեզ, մի՛ շի-ներ այլ համբաւն, որպէս զի անդ ստանայցես ընդար-ձակութիւն և լայնութիւն ։ Եթէ ելանիցես 'ի խցէ քումմէ և երթայցես առ ոք, մի՛ թողասցի սուգ քո ․ դարձեալ 'ի նոյն վաղվաղակի բուռն հար, դարձեալ հաստատեա յառաջին քո կարգն ։ Եթէ եկեսցեն եղբարքն առ քեզ, յորժամ տեսանիցես զնոսա բացագոյն՝ կաց յաղօթս և ասա ․ ասէր Տէր Տէր, փրկեա զմեզ 'ի չարախօսութենէ ․ և խաղաղութիւն յուղարկեա զեղբարսն ։ Եթէ սուգ կա-միցիս ստանալ, ճանաչիր որ եթէ անօթ քո որում ըն-նիցի որպէս այնոցիկ որ մուրացիկ նստիցին ։ Եթէ ստա-նայցես քեզ գիրս, մի՛ պաճուճեր զշարագիր նոցա ։

Մի՛ ստանար արկանելի մեծագին յորում երկրպա-գիս ։ Անօթ ոսկեղէն կամ արծաթեղէն մի՛ շօշափես-ցեն ձեռք քո 'ի խցի քում մինչև ցփոքր ինչ ․ համդերձ նոր մի՛ արկաներ զմարմնով քո մինչև ցհնդունեղ նոր ։ Մի՛ ստանար եղջեր և մի՛ կախեր զգօտւով քո, քանզի այս

---

խորտիկք կրօնաւորի և սուգ ողբք և արտասուք են ։ Եթէ գիտես ոք որ առնէ զքեզ կամ չարախօսեսցէ զքեն, առաքեա առ նա օրհնութիւն ըստ կարի քո զոր ինչ և ունիս, որպէս զի ունիցիս համբերութիւն ասել յաղօթս՝ Թէ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց ։

1 Եթէ ունիցիս սենեակ որ փակեսցէ զքեզ, մի՛ շինեսցես այլ մեծա-գոյն, զի անդ հանգիցես ։ Եթէ ելցես 'ի խցէ քումմէ և գնասցես ու-րեք և փոքր ինչ հեղգասցիս յողբս, դարձիր փոյթ 'ի սենեակ քո և կալցես յառաջին զսովորութիւն կանոն քո ։ Եթէ եկեսցեն առ քեզ ոմանք, և կամիս տեսանել զնոսա, կացցես նախ յաղօթս և ասասցես ․ Տէր Յիսուս Քրիստոս իմ, փրկեա զիս 'ի չարախօսութենէ և բամբասանաց և 'ի գայթ-ման ընկերին ։ Եթէ կամեսցիս ստանալ սուգ, ծրագիր, որպէս զի ամենայն պէտք և անօթք քո անարգ և աղքատիկ եղիցին որպէս այ-նոցիկ որք 'ի հրապարակս մուրացիկքն են ։ Եթէ ստանայցես գիրս, արտաքոյ մի՛ զարդարեսցես զնա ։

2 Մի՛ եղիցի վարագոյր և կամ անօթ մեծագին 'ի սան քում, որ է եկեղեցի տոյ ։ Անօթ ոսկի կամ արծաթի մի՛ մնասցէ բնաւ 'ի տան քո ․ և հանդերձս նորս մի՛ զգեցցի անձն քո, և մի՛ մինչև ցհնանալ են ։ Վար-շամակ մի՛ կապեսցես 'ի գօտի քո, քանզի այս ամենայն խորհրդոցն ըղ-

Մերձեցիր մանաւանդ 'ի հուր փախեալ քան 'ի կին աղջիկ: Դու պատանեակ, ըմբռնեալ 'ի հրոյ և ջռւեցեալ քեզ, երագ փախիցես արտաքս. այլ 'ի կանանց բանից ըմբռնեալ, ոչ կարասցես զփուրա զերծանել: Դալարի զուարճանայ որ մերձ է 'ի ջուր, և ախտ ցանկութեան 'ի պատահել կանանց: Որ ընդ զորովայնն և խոստանայ համբերել, նման է այնմ որ խոստանայ զհրոյ զընացս այրելեօք չխթուցանել. Նոյնպէս անհնարին է ըղձարժմունս զխթութե առ 'ի յագմանէ ցածուցանել: Սին հաստատի 'ի խարոյկի, և ցաւ պոռնկութեան 'ի լցմանէ որովայնի:

Ի նաւահանգիստ փութայ նաւ խռովեալ, և անձն

---

այնու ամենայնիւ պաշարեն. . և այնորիկ լինին քեզ կարթք պատրաստելով 'ի մահ, և որսարանք (կամ որոգայթք) բազմապատիկք առ 'ի քարշել 'ի կորուստ: Զգոյշ կացիր (կամ զգուշացիր) ով մարդ, մի պարեսցեն զքեզ բանիւք յաճախագոյն զթովք. մի թողացուցանիր ըզքեզ 'ի նոցա ակռն, զի ծածկեալ է 'ի նոսա թիւնք մահաբերք ևս չար քան զքարբից:

Մերձեցիր անկարկիւղ ևս տաւել 'ի հուր բորբոքեալ քան 'ի կին մանկամարդ, ով երիտասարդ. զի 'ի հուր մերձեցեալ, 'ի բոցոյ համզիկեալ փաղփաղուկն առաքցես. իսկ 'ի կանանց խօսից մեղկեալ ոչ կարես զերծանել զփախուստ: Աճէ դալարի որ մերձ է 'ի ջուր և կացցէ ջերմութ̄բ, և ախտ զեղխութ̄ե 'ի բանս կանանց: Որ ոչ ընդ զորովայնն և խոստանայ զգաստ լինել, նման է այնմ որ արգելուլ ասէ զհրոյ ներգործութի փառեալ յեղէգն. այլ զոր օրինակ զհրոյ սաստկութիւն 'ի խաւիւ փառեալ անհնար է չխթուցանել, նոյնպէս և զյարձակումն զեղխութե առ 'ի յագմանէ զայրացեալ ցածուցանել անհնար է (կամ փառեալ յեղէգն ցողուածս ասանձել. քանզի որպէս զհրոյ զնացս 'ի ցողուածս դժուար է արգելուլ, նոյնպէս անհնար է արգելուլ զըղձմունս զխթի փառեալ 'ի յագմանէ:) Սին հաստատեալ է 'ի խարոյկի, և ախտ պոռնկութեան յորովայնամոլն հանգուցեալ է:

Ի նաւահանգիստ ձգեալ ալեկոծեալ նաւ (կամ կործանեալ) և անձն

Digitized by Google

ժուժկալ խնդրէ փութապէս զանապատս։ Այլ փախչի անտի յանկարծ ծաղու, զի սատանիկ է 'ի կորուսանել. և զեղ զարդարեալ՝ չարագոյն քան զամ ընկղմեն։ Յանկարծ ասացի զուգելով՝ զանկացեալ կենաց, իսկ 'ի գեղեցկութեանն կնոջ ըմբռնեալն և գլխատեալ արհամարհեալ հաւատի։ Մ՝արմնի որ է յանապաստ, առանց մտանելոյ աղերբ 'ի հրոյ. և համբերող հեռացեալ 'ի կանանց՝ ոչ բացահայրեցու 'ի ցաւոց գիջնութեանց։ Որպէս յիշելով բուհուր ոչ այրեն մինչ, նոյնպէս և ոչ ախտք կարեն եթէ ոչ մերձ իցեն յումէ ցանկն զխիթն։

Այլ թէ ողորմիս թշնամւոյն, եղիցի քեզ 'ի թշնամութիւն. և թէ խնայես ախտից, յարիցեն 'ի վերայ քո։ Ո զանկացող այր յարուցեն 'ի ցանկութի ախտից գեղեց կնոջ, իսկ համբերողն ցանկայ 'ի փառաւորանել զմն։ Այթէ խաղաղեցի ցանկութի 'ի պատահել կանանց, մի համարիր նմա զանաղխտութիւն խոստանալ. քանզի և շուն քծնի ըմբռնեալ 'ի բռնութեան, այլ եկեալ քան զառաջինն թէն եղեւեցուցէ զչարութիւն իւր։ Յորժամ լինի քեզ յիշատակ կնոջ առանձին 'ի տեղւոջ 'ի ցանկութի, և 'ի յիշելն մնա ոչ յարիցես 'ի ցանկութիւն, յայնժամ համարես թէ եկեր 'ի սահմանս անախտութեան։ Այլ յորժամ պատկեր նորա գայցէ քեզ 'ի յանգիտանութե անդրեալք, և կարասցես զնա հոգւոյն զօ-

զգաստանալ յանապատս փութասցես։ Քանզի նա մտանէ ալեացն խաղաղութե փութոյ զերծանել, իսկ զգաստանալն 'ի փորձոյ կանանց։ Խորհրդոցն զխաղաղութիւնն 'ի կորուստ անձանց՝ ծածկագոյն քան 'ի ծովն ընկղմեալ է 'ի խորս. քանզի նմա հեար և յուսալ եկից կենացս (կամ քանզի նա հեարի ըղձալով կենաց ցանկացեալ), իսկ կերպարանօք կնոջն պատրելով քամահել հաւանէ և զանանց կեանս։ Մարմնի անապաստանոյ ապաբերցա 'ի բոցոյ հրոյ անմխիթար, և զգաստ մերձեալ 'ի կանանց ոչ կիզու զեխութե (կամ 'ի զեխութե) ախտից. քանզի որպէս յիշատա հրոյ զմիտսն ոչ կիզու, նոյնպէս յաղթահարեսցի յոչ գոլ նիւթոյ։

Եթէ ողորմեսցիս մարտնչողին, եղիցի քո թշնամի. և եթէ խնայեսցես ախտի, 'ի վերայ քո յառնէ։ Զեխ զգաստ 'ի ցանկութե 'ի հայեցուած կնոջ (կամ Զգեղ. այր յարուցանէ 'ի ցանկութե գեղեց կնոջ.) իսկ զգաստանալն 'ի փառաւորանութե տոյ։ Եթէ գոգցեսցէ ախտ 'ի խօսս կանանց, մի համարիր նմա խոստանալ զանախտութիւն. նա և շուն շողոքորթէ շողոմելով 'ի ժողովս, իսկ յանկարծակի (կամ յանկարծ ծամեն) եկեալ՝ զիւր չարութիւն ցուցանէ։ Յորժամ կնոջ մարդոյ յիշատակ առանց ախտից լինի (կամ ոչ յարուցանէ զցանկութի քո), և որ խորհրդով երկայնք նորա ոչ խռովէ զմիտս, յայնժամ գիտես 'ի սահմանս հասեալ զգաստութեան։ Իսկ յորժամ անուան նորա զեղեց ոչ ըմբռնէ և ոչ յուզմանց մինչև խորհրդոց, յայնժամ հասանելոյ 'ի

Digitized by Google

ութեան խոկալ՝ թէ մարթես առնուլ ևս քան զանմարմնոյն, յայսն զփառս Հրեշտակաց թէ յառաքինութեն ես։ Այլ և այնպէս մի յանձնիր յայնպիսի խոկմանն, և մի բաղձալ անդգամ զմեծաւ ածել [illegible] կենաց. քանզի փոփոխել տիրէ ախտն, և մերձ առ ինքեան ունի զկորուստն։

Որդ որպէս կեղեւ բուսոյ ուտելով զարծաթն, խոկ առաւելն այրէ և կորուսանէ, նոյնպէս և զիւրաքան զմիտսն ախտացեալ [illegible] յամենայն [illegible] կնոջ։ Մի տար ամենևին զմիտս քո խոկալ զկինս. մի խօսիր բաղձալով անդամ յերեսել երեսաց նորա, զի լուցցէ 'ի քեզ զցանկութեան զբոցն և այրեսցէ զշերտն անձին քո։ Որպէս փայտակն 'ի յարդ յանձեան և յարուցանէ բոց, նոյնպէս և խոկումն կնոջ յանձեան 'ի քեզ՝ վառեալ բորբոքէ զչար ցանկութիւն։

Գ

## ՎԱՍՆ ՀՈԳՒՈՅ ԱՐԾԱԹՍԻՐՈՒԹԵԱՆ

ԱՐՄԱՏ է ամենայն չարեաց արծաթսիրութիւնն, և սնուցանէ իբրև զոստս չարեաց զամենայն ախտս. և եթէ հատանես ոստ մի, ընդ նորա այլ արմատ ելանէ, և ոչ տայ ցամաքել ծաղկելոյն 'ի նմանէ։ Որ կամի հատանել զախտս, յառաջ զարմատն հատցէ. քանզի մնա-

[illegible] առաքինութեանց։ Այլ և այնպէս մի անհոգ լինիր յայնպիսի խորհրդոց, և մի համարձակիր տեսանել և խօսել. քանզի զարձակք են այսոքիկ (կամ ախտին) ցանկութեան, և ունի մերձ զկորուստ յառաջինն մերձ։

Զի որպէս [illegible] բոյսք որդեն զարմատ, խոկ առաւելն կորուսանէ [illegible], նոյնպէս և [illegible] (կամ [illegible]) [illegible] յարդարելոյ, որ մինչ [illegible] հոգւոյ և մարմնոյ։ [illegible] զմիտս քո 'ի յիշումն կնոջ, և մի [illegible] 'ի խօսս և [illegible]. այլ և մի յանձնիր 'ի խօսս [illegible], զի մի [illegible] 'ի քոյ ցանկութեանց և այրեսցեն զշերտ անձին քո. քանզի որպէս 'ի [illegible] (կամ [illegible]) հուր յարուցանէ բոց, նոյնպէս և յիշումն կնոջ բորբոքէ հուր ցանկութեանց չարաց [illegible]։ [illegible] յայսոցիկ [illegible], [illegible], 'ի հրոյ ցանկութեանց, զի մի այրեսցիս յանդէնջ հոգին 'ի [illegible] [illegible]։

ԱՐԾԱԹՍԻՐՈՒԹԻՒՆ է արմատ ամենայն չարեաց, և սնուցանէ որպէս զոստս չարս զայլ ախտսն. եթէ կտրես մի ոստ 'ի նմանէ, 'ի նորա այլ ոստ արձակէ լինի, և ոչ տայ թոյլ չորանալ [illegible] ախտիցն։ Որ կամի [illegible] զախտս, զարմատն կտրեսցէ. զի 'ի [illegible] արծաթսիրու-

ցեալ արծաթսիրութեն ապականան՝ թէ և ասեն հաստանեն, ոչ ինչ օգտեն. զի թէ և հաստատեն, երրորդ ծաղկէ։ Միայնակեաց ընչաւէտ նաւ ծանրաբեռն է, և 'ի խառվութենէ ալեաց երագ ընկղմի. քանզի 'ի ծանրութենէն 'ի խոնարհ ձգի, և վասն այնորիկ յամենայն ալեաց երագ ընկղմի. նոյնպէս և միայնակեաց 'ի հոգոց։ Միայնակեաց անինչ ճանապարհորդ է սակ, և յամենայն տեղիս հանգիստ գտանէ։ Միայնակեաց անինչ արծուի է բարձրաթռիչ. և վասն կերակրոյ յայնժամ թռչի, յորժամ պէտքն պահանջեն։ Վասն զամենայն փորձութիւն անխախտքն վերագոյն են. ծաղր առնեն զմերձաւորս, և բարձրացեալք վերանան հեռանան յերկրաւորաց և շղթին 'ի բարձունս. թևս ունին թեթևս, և 'ի հոգոց չծանրացեալք. ներգութիք եկլին, և առանց տրտմութե զտեղեակն թողլին. մահ եկն, և ուրախութբ երթան, վասն զի յոչինչ 'ի կապանս երկրաւորս զանձինս ոչ կապեցին։ Իսկ ընչաւէտն կապեալ է 'ի հոգոց որպէս շղթա զի կապեալ է սարիւք։ Իսկ թէպէտ և փախիցէ այսպիսին 'ի բանութէ, սակայն զհոգսն ընդ իւր շղթեցուցանէ։ Սէրն ծանր և տրտմութիւն անշահ՝ ծակաւի 'ի տրտմութենէն, և միտքն խարշի զօրագոյնս. եթող զինչս, և 'ի տրտմութենէն տանջի։ Եթէ եկեսցէ մահ նմա, ողորմելի եթող զոր ունէրն. արձակէ զոգին, և զաչս

թեանն՝ կորուսեալ զախտան՝ չօգտէ. քանզի թէպէտ և կորուսցեն, նոյնժամայն այլ ծաղկեալքն յինչասիրութեան արծաթոյն։ Ընչաւէտ միայնակեաց նաւ ծանրաբեռն է (կամ ծանրաբեռնի է), և յաղմկեալ ալեացն փութով ընկղմի. զի որպէս ծանրաբեռն նաւ 'ի վերայ իւր բերէ զաղբս, նոյնպէս և բազմաստացուածն զհոգսն։ Անստացուած միայնակեաց ճանապարհորդ թեթևագնաց, որում ամ ուրեք գտանի տեղի։ Անստացուած միայնակեաց արծուի է բարձրաթռիչ սրաթևեալ. 'ի կերակուր յայնժամ իջանէ, յորժամ պէտք լինին։ Ամ փորձութեանց այնահին վերագոյն է. ծիծաղի զներկեայս (կամ զներկեալս, զներգործեալս), և վերամբարձեալ վերանայ, մինչև 'ի հողեղինացս, և երթեւեկեալ յինի վերնոյ գտանացն. քանզի թեթևաթռիչ է, և ոչ ծանրաբեռնեալ 'ի հոգոց 'ի վերայ բերել ընչասիրութեան արդարեւ. ներգութիւ եհաս, և անտրտում եթող զտեղւոյն. նա և 'ի մահ խաղ երթայ յօժարութբ. ոչ ինչ 'ի հողեղինս կապեալ զանձինս։ Իսկ ընչաւէտն որպէս շուն շղթայիւք կապի։ Եթէ հասանէ փախել 'ի տեղւոյ, յինչսն ստացուածոյն արարբերեալ տրտմեցուցանէ զնա։ Խոցի 'ի ակնակէս ընչիցն կորուսանէ, և ընդ միտսն յոյժ ցաւալիեալ ինչսն։ Եթող զստացուածսն տեսանելով, այլ ոչ եթող զինչսն սէր 'ի կամաց տրտմութեամբ ընկղմեալ։ Եթէ մահ հասանիցէ, ողորմելապէս և տարաշխարհիք թողուցու զինչսն. առանցէ

ոչ հեռացուցանէ յընչիցն ։ Առանց կռանաց քաղցի իբրեւ զծառայ փախուցեալ․ բարժանի ՚ի մարմնոյն և ոչ բարժանի յընչիցն, առաւել ընկենեալ ՚ի քաղցրալոյն քան ՚ի ցաւոցն ։

Որով ոչ լինու՝ զբազմութիւն գեղոց ընդունելով, և ցանկութիւն արծաթասիրի ոչ յագի ՚ի բազմութենէ ընչից․ կրկնակի զինչսն առաք, և դարձեալ կրկնել ջանայ, և ՚ի կրկնելոյ երեքք ոչ դադարէ յանօգուտ փութոյն յայնմանէ ։ Միայնակեաց իմաստուն պիտոյից միայն ցանկայ հոգալ, և զպակասութիւն որովայնին հացիւ և ջրով լնու․ ոչ թէ մեծատան փափաքէ վասն ցանկութեան որովայնի, և ծառայեցուցանէ զազատ միտս իւր տերանց բազմաց․ շատ են ձեռքն սպասաւորել մարմնոյն, և յամենայն ժամ լնու զբնութէ պէտս ։ Միայնակեաց անխինչ ըմբիշ է՝ որ ոչ ՚ի միջոյն ըմբռնի, և ընթացող թեթև՝ որ երագ հասանէ ՚ի պսակ վերին կոչմանն ։ Ընչաւէտ միայնակեաց ուրախ լինի ՚ի բազում արարս ամի, իսկ անխինչն խնդայ պտուղ ջանից իւրոց ։ Արծաթասէր միայնակեաց գործէ յոյժ, իսկ անխինչն աղօթից և կարդացմանն պարապէ ։ Արծաթասէրն լնու զշտեմարանս իւր ոսկւով, իսկ անխինչն գանձէ յերկինս ։ Անիծեալ լիցի որ առնէ պատկեր և դնէ ՚ի ծածուկ, նոյնպէս որ ունի զախ-

ողջին, և զայլն յընչիցն ոչ վերացուցանէ ։ (Ցանկացող երկրորդ թարգմանութեան, ոչ է ՚ի յոյնն․ կողկողի և կաթոգին, և քան զմահն զայն չար համարի, զի զինչսն ՚ի ձեռս օտարաց եթող․ զի կամիք ընդ իւր տանել, և չերկ ձեռնհաս ։) Ցանկանայ ձգի որպէս ծառայ փախուցեալ․ բաժանի ՚ի մարմնոյն, և ոչ բաժանի ՚ի ստացուածոցն ձգելով յինքն (կամ զինքն) ՚ի պնդելոյ ստացիցն ։

Որով ոչ յագի ՚ի բազմութենէ գեղոցն ընդունել (կամ ընդունելով), և ցանկութիւն արծաթսիրութեան ոչ լնու․ կրկնեաց զէութիւն, և զայն դարձեալ ցանկայ կրկնել և ՚ի կրկնելոյ ոչ երեքք դադարէ․ նա և ցմահ զանօգուտ զայս շահ մնալ ձեռք (կամ մնալ ձեռք) տանի, և ոչ թողու ՚ի մեռ զվշտաւն նորա ։ Հանդարտեալ միայնակեաց պիտոյիցն բաւականանայ, որ զպէտս որովայնին հացիւ և ջրով լնու․ ոչ տղրքէ զմեծատանն վասն զբօսանս և կերակրոց մարմնոյ, ոչ ծառայեցուցանէ զազատական միտս բազում տերանց վասն ընչասիրութեան իւրոյ․ քանզի բաւական համարի զձեռս սպասաւորել անձին, և զմնաւոր հարկաւորութեանն լնու միշտ ։ Անխինչ կռուանոր ճգնաւոր անըմբռնելի, որ փութով հասանել պսակին յաղթութեան վերին կոչմանն ։ Ընչասէր կրօնաւոր ուրախանայ ընդ ստացուածս իւր, իսկ անխինչն ընդ առաքինութիւնս ։ Արծաթասէր կրօնաւոր լնու զշտեմարանս ոսկւոյ և արծաթոյ, իսկ իմաստունն յերկինս ամբարէ ։ Անիծեալ է որ կուռս պաշտ-

Digitized by Google

ազգս արծաթսիրութե․ քանզի սա երկիր պատուանէ պղղ-ծոց և անօգտից, և սա պատկերապաշտեաւ ըմբի ցանկու-թեանն արծաթսիրութե և մեծութեան։

Դ

## ՎԱՍՆ ՀՈԳՒՈՑ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ

ԲԱՐԿՈՒԹԻՒՆ է ախտ մոլեկան, և որ ունի զնա՝ ընդ իւրեաւ յիմարի․ իբրև զգազանի զանձն առնէ, և փախ-չել տայ յամենայն ումեքէ։ Ողջմն սաստիկ շարժէ զաշ-տարակ, և զանձն հեզ ոչ շարժէ բարկութիւն։ Որպէս շարժի 'ի բռնութենէ օդոց, և բարկացող 'ի խորհրդոց բարկութե։ Նմանեաց բարկացող վարազ անապա-տի․ իբրև տեսանէ զոք, զատամունս իւր կրճէ։ Նոյն-ման շոգի թանձրացուցանէ զհաստատութի, և բարկու-թեան շարժումն զմիտս բարկացողի։ Խաւարեցուցանէ զարեգակն ամպ մթացեալ, և զմիտս իւր խորհուրդք չարայուշի։ Առիւծ զգառագողն զղջանակս յանձախ շար-ժէ, և բարկացող 'ի ոնկան զխորհուրդս զօրութեան։ Տեսիլ ցանկալի է ծովու, այլ ոչ որպէս զժամանակս խաղաղութե։ Որպիսի է ցանկալի․ 'ի խաղաղութեան ծովու խայտան դելփինք, իսկ 'ի խաղաղել մտաց մրան-ձանց կայտռեն միաք ծածականք։ Նմանակերաց երկայ-նամիտ աղբիւր է խաղաղութե, և տայ ամենեցուն ըմ-

ալէ, նոյնպէս և արծաթասէրն․ զի նոքա ապաստուգութք են գիւղոց, իսկ սա զնոյն բերէ մոլորութե գիւղոց․ վասն որոյ յերկնցուցանց 'ի բաց կաց։

ԲԱՐԿՈՒԹԻՒՆ է ախտ զայրական, և զհետեւողս իւր յիմարեցուցանէ գիւրեաւ․ գազանացուցանէ զանձն սրտմտութե (կամ սրտմտութք), և յամենայն խուսից բացագործ առնէ։ Հողմ սաստիկ շարժէ զաշտարակ, և զանձն անբարկացողի ոչ շարժէ սրտմտութե (կամ զանձն բարկացողաց շարժէ սրտմտութե։) Ջուր շարժի 'ի սաստկութե հողմոց, և բարկա-ցող խռովի 'ի խորհրդոց սրտմտութե․ Նմանակերաց բարկացող վա-րազ անապատի․ տեսեալ զոք, և զատամունս սրեաց սրտմտութք։ Մէ-գի տարածումն թանձրացուցանէ զօդ, և սրտմտութե շարժումն զը-միտս բարկացողաց։ Խաւարեցոյց զարեգակն մթացեալ ամպ, և զմիտս խաղաղս խորհուրդք ոխակալք։ Առիւծ անկեալ յորոգայթ՝ առնդուժ շարժի 'ի չար․ նոյնպէս և բարկացողն․ Զուարճալի է հանդարտութի ծովու՝ նաւորդաց․ նոյնպէս և խաղաղական կարգաւորութք։ Ի հան-դարտել ծովու խաղան ձկունք, և 'ի խաղաղական կարգաւորութեան

Digitized by Google

խաղաղականն աղբաւմնն։ Միտք բարկացողի՝ ՚ի խռովու-
թեանն են, և ոչ տայցէ ծարաւոյ ջուր. այլ թէպէտ և
տայցէ, պղտորեալ և ոչ պիտանացու։ Աչք բարկացողի
խռովեալ են և արիւնալից, և սրտի խռովելոյ կարապետ
է երեսք. երկայնամիտ միայնակեացք խոնարհայեացք,
և աչքն զհեզութիւն գուշակեն։

Հեզութիւն ամն յիշի առաջի Տր՚յ, և անձն ոչ բարկա-
ցողի տաճար լինի սուրբ Հոգւոյն։ Հանգուցանէ Քս՚
զգլուխ իւր յերկայնամիտ յոգւոջ. վանք լինին Երրոր-
դութեան խաղաղամիտք։ Աղուեսք բնակեն ՚ի չարայուշ
անձին, և գազանք որջիցեն ՚ի խռովական սրտի։ Փախ-
չի այր խնտամն ՚ի չարութէ վանաց, և օձ ՚ի չարա-
յուշ սրտէ։ Ջուր յուզեալ պղտորէ քար ընկեցեալ
՚ի ներքս, և բանն խռովէ զմիտս բարկացողս։ Հեռացո
՚ի քէն զխորհուրդս բարկութե, և մի հանդիպեսցէ բարկու-
թիւն ՚ի սրտի քում, և ոչ խռովիցիս ՚ի ժամանակի ա-
ղօթելոյ։ Որպէս ծուխ յարդի պղտորէ զաչս, նոյնպէս
և չարայուշի միտք ՚ի ժամ աղօթելոյ։ Խորհուրդք բար-
կացողի ձագք են քարբի, և ուտեն զմիտսն զծնողսն իւ-
րեանց։ Բարկացողի աղօթք խունկ են ժահահոտ, և
սաղմոսն նորա բարբառ ատելի։ Ընծայ չարայուշի մրջ-
մնակեր պատառատարագ է, և ոչ մերձեսցի սրբեալ հուր ՚ի

խաղաղն խնդացք ով։ Երկայնամիտ միայնակեաց աղբիւր քաղցր, ամե-
նեցուն համեղ ըմպելի ամենուն պատրաստ. իսկ միտք բարկացողի հա-
նապազ պղտոր, և ոչ տայ երբէք ծարաւելոց յառաջ ջուր։ Աչք բար-
կացողի պղտոր և արիւնախառն, և խռովեալ սրտին պատմողական ՚ի
չարէ (կամ ՚ի չար)։ Իսկ երկայնամիտ երեսք ամփոփեալ ժուժկալու-
թեանք հեշտապագոյն տեսանել ունին։

Հեզութիւն ամն յիշումն Տր՚ի է, և անբարկացող անձն տաճար է
հոգւոյն սրբոյ։ Խոնարհեցուցանէ զգլուխ Քս՚ յերկայնամիտ անձն, և
օթեւան լինի շնորհաց նորա։ Աղուեսք նենգաւորք են անձինք ոխակա-
լաց, և գազանք վայրենիք բարկացողք։ Փախչի այր պարկեշտ և պար-
կեշտ ՚ի զուարճ օթեւանաց. նոյնպէս և օձ յախտակալէ և ՚ի բարկացողէ։
Ջուր պղտորեալ քար անկեալ, և զմիտս յառաջ բան բարկացողի
(կամ յառաջ բարկութիւն։) Ի բաց արար ՚ի սրտէ քումմէ զխորհուրդս
սրտմտութե, և բան չար և բարկ (կամ չար բարկ կամ չար բարկութեան
կամ չար և բարկութեան) մի եկեսցէ ՚ի բերանոյ քումմէ։ Զի որպէս
ծուխ յարդի խռովեցուցանէ զաչս, նոյնպէս և սրտմտութիւն զմիտսն
յաղօթս։ Խորհուրդք սրտմտողին ծնունդք իժից, և ուտեն զծնողին
միտսն, և ոչ տայ կեալ ՚ի խաղաղական կեանս։ Սրտմտողի և ոխակալի
աղօթք որպէս խունկ (կամ ծուխ) անընդունելի են. և սաղմոս բարկա-
ցողի որպէս հնչիւն քարբի։ Ընծայ ոխակալին անշնորհակալ պատա-
րագ, և ոչ ընդունելի ՚ի տաճար սրբութեան որպէս մեհեկան։ Ըմպելիք

Digitized by Google

զոհարանն։ Նշխարս խառնակեալս տեսանէ բարկացողս, և զզարդարանաց յարձակմանն խուլոյ սիրտ նորա. իսկ երկայնամիտն զպատուհասել սոցա, վարժի 'ի բանս հոգևորս, և 'ի գիշերի գտանէ զլուծումն խորհրդոց։

## Ե

## ՎԱՍՆ ՀՈԳՒՈՅ ՏՐՏՄՈՒԹԵԱՆ

* ՏՐՏՄՈՒԹԻՒՆ խաւարութիւն է անձին, և ժողովումն 'ի խորհրդոց բարկութեան։ Բարկութիւն չար հատուցման ցանկութիւն է, և 'ի չպատահել հատուցմանն ծնանի ըղ-բարկութիւն։ Տրտմութիւն բերան է առիւծու, և զտրտմեալն զիւրաւ կլանէ։ Որդն սրտի է տրտմութիւն, և ուտէ զմայրն՝ զծնողն իւր. Երկնէ մայր 'ի ծնանել զորդի. այլ յորժամ ծնանի, ազատի յերկանցն։ Իսկ տրտմութիւն եւս առաւել յարուցանէ ցաւս և յետ երկանցն. և յամեցեալ 'ի նմին առաւել երկնեալ, և ամենևին ոչ գիտաց զցանկութիւն հոգևոր սիրոյ։ Միայնակեաց տրտմեալ և ոչ զմեղուի ճաշակ կարէ գիտել, վասն զի չերևեցաւ է յայժ։ Տրտմեալ միայնակեաց չյարուցէ զմիտս 'ի խոկալ, և ոչ աղօթս սուրբս 'ի վեր երբեք առաքել կարասցէ։ Որդեկիչ է ամենայն բարեաց տրտմութիւն, կապանք ոտից, արգելիչ ընթացից։ Տրտմութիւն խափանիչ է հոգւոյ.

խառնակեալն տեսանէ սրտմտողն, և զարդարանց յարձակմանցն առ աչօք լինի բարկացողին. իսկ երկայնամիտն 'ի խոյս սոցա կրթի 'ի առ ընթերցման և 'ի բանս հոգևորս (կամ հոգևորականս), և 'ի գիշերի ընդունի մեկնութիւն խորհրդոց։

ՏՐՏՄՈՒԹԻՒՆ է մթութիւն անձին, և բազմանայ առ 'ի խորհրդոց բարկութեան և 'ի նուաղելոյ իրացն, զի հատուցմանց բարք են տրտմութեան. իսկ վրիպումն հատուցման ծնանի զտրտմութիւն անձին։ Տրտմութիւն է որպէս բերան առիւծու, և զտխրեալն կլանէ դիւրաւ. նա և որդն սրտի, և ուտէ զծնեալ մայրն՝ ուստի մաւծանի։ Յաւաղին մայր ծնանելով մանուկ, և ծնեալ ուրախ լինի. իսկ տրտմութիւն բազում ցաւս ծնանի յետ երկանց իւրոց այլոց։ Ոչ գիտէ ցանկութիւն զհոգևորականն զանձն տրտմեցուցանել. որպէս և ոչ մեղուաց 'ի ծաղկաց ժողովեալ զանուշութիւն 'ի առ ինքն իւրեանց։ Տրտմեալ միայնակեաց ոչ չարժէ ըզմիտս իւր 'ի տեսութիւն, և ոչ սուրբ աղօթս մատուցանէ. քանզի ամենայն բարեաց խափան է տրտմութիւնն ուր գտանի, և չարութեան յորդորիչ։ Կապանք և բանդ խափան են գնացելոց և գործաւորաց. այսպէս և տրտմութիւն խմասաց։ Գերեալն յայլազգեաց և կապեալն եր-

Digitized by Google

գերի վարի յայլազգեաց, կապի երկաթով, սանձի 'ի ցաւոց, կապի տրտմութե̃ ։ Ոչ զօրէ տրտմութիւն, թէ ոչ մօտ լինիցին և այլ ախտքն. որպէս և ոչ կապանք առ 'ի չլինելոյ կապողաց ։

Որ կապեալ է 'ի տրտմութեան, յաղթեալ է յախտից, և զկապանս շրջեցուցանէ ընդ իւր ։ Տրտմութիւն ծնանի 'ի չպատահել ցանկութեան, իսկ ցանկութիւն հաղորդի ամենայն ախտից ։ Որ յաղթեաց ցանկութեան, յաղթեաց ախտից. իսկ յաղթող լեալ ախտից, ոչ յաղթահարի 'ի տրտմութենէ ։ Ժուժկալ ոչ տրտմի 'ի չպատահել կերակրոց, և ոչ ժուժկալ 'ի չպատահել չար ցանկութեան ։ Նա որ ոչն է բարկացող, ոչ պատահի չար հատուցման. և ոչ տրտմի խոնարհ 'ի չպատահել մարմնաւոր պատուոյ. և ոչ արծաթասէրն 'ի պատահել վնասուց ։ Հեռացեալ 'ի նոցանէ արծաթ, նոքա առաւել ցանկութեամբ զայն ախորժեն ։ Որ վաճառեալ է զպահեօքն, նա ոչ յինքեան ընդունի. նոյնպէս և անախտ միայնակեաց ոչ հարկանի 'ի տրտմութենէ ։

Վահան զինուորի և քաղաքի պարիսպ, իսկ անախտութիւն կրօնաւորի ամրագոյն է քան զնոսա ։ Ո՛չ ի ընդ վահան անցանէ նետ 'ի մարդ՝ յուժգնաբար արձակեալ, և զպարիսպ քանդեաց մեքենայ. իսկ զանախտն ոչ յաղթահարեաց տրտմութեան վտանգք ։ Որ յաղթեաց ախտից, կոխեաց զտրտմութիւն. իսկ որ յաղթի 'ի ցանկութենէ, ոչ ապրի 'ի չարէ ։ Որ տրտմի յաճախ և առնէ առանց ախտից զայն, նման է հիւանդի՝ որ կեղծաւորի զառողջութիւն. զի որպէս հիւանդն 'ի գունոյն յայտ է, սոյն-

կամեցելոց օգուտ լիցի է. Նոյնպէս և կապեալն 'ի կապանս աւուրս ։ Ոչ յաղթահարէ տրտմութիւն 'ի չգոյէ ախտից. որպէս և ոչ կապանք առ 'ի չլինելոյ կապողաց ։

Որ կապեալ է 'ի տրտմութենէ, կապեալ է յախտից և զցաւս կրէ պարտելոյն (կամ կապելոյն) 'ի յանդիմանութիւն ։ Զի տրտմութիւն բաղկանայ 'ի վերայ լինելոյ ըղձից մարմնոյն. ասկոյն ընդոստեալ (կամ ընծայեցեալ) 'ի անասուն ըմբռնմն է ։ Որ յաղթեաց բաղձանաց, պարտեաց զախտս. իսկ որ զախտս պարտեաց, ոչ ըմբռնի 'ի տրտմութիւնս ։ Ժուժկալն ոչ տրտմի վրիպեալ 'ի կերակրոց, և ոչ զգաստն վրիպեալ 'ի ցանկութէ ախտից. նա և ոչ անբարկացողն վրիպեալ 'ի հատուցանելոյ զախտակալութիւն և զվրէժս վնասու. այլ և ոչ խոնարհն զրկեալ 'ի մարդկային պատուոյ, կամ անարծաթասէրն 'ի տուգանան անկեալ. քանզի բացագարձ է 'ի սոցին ախտից ըղձմանէ ամենեքին ։ Որպէս զպահաւորն նետս ոչ ընդունի, այնպէս անախտն ոչ խոցի 'ի տրտմութենէ ։

Digitized by Google

պէս և ախտաւորն 'ի տրտմութեան յանդիմանեալ։ Որ սիրէ զաշխարհս, տրտմի միշտ. իսկ որ քամահէ զկեանս աշխարհիս, ուրախ է 'ի Տէր հանապազ։

Արծաթասէրն տուժեալ տրտմի դառնապէս. իսկ որ քամահէ զընչիւք, անտրտում կայ միշտ։ Փառասէրն տեսայցէ յորժամ գայցէ անարգութիւն, իսկ խոնարհն որպէս կենակից ընդունի։ Ոսկիք ընտրեցին զարծաթ անայլայլան, և տրտմութիւն զխիղճս ներքնագունացն։ Հալումն հնոցագոյն մաքրէ զկապար, և տրտմութիւն աշխարհական նուաղէ զմիտս։ Ծայրագոյն ներգործութիւն նուաղէ մեզ, և զմիտս տեսանել քննէ տրտմութիւն։ Ըստ խորութեան ջրոյ լոյս ոչ անցանէ, և 'ի սիրտ տրտմողի ոչ ծագէ տեսութեան լոյս։ Ընդդէմ են ամենայն մարդկան ողբերգք, իսկ տրտմող անձին և այն դժուարահաճ է[1]։ Զգայութիւն[2] հաւաքեալ բանակայ զտրտմութիւն. իսկ որ քամահէ զկենդանութիւն աշխարհիս այսորիկ, ոչ թախանձի 'ի խորհրդոց։

Զ

## ՅԱՂԱԳՍ ՁԱՆՁՐՈՒԹԵԱՆ

ՁԱՆՁՐՈՒԹԻՒՆ է լքումն անձին. և լքեալն անձն որ ոչ ունի սփոփութիւն ըստ բնութեան, և ոչ կայ ընդդէմ փորձութեանց արիաբար. զի զոր օրինակ կերակուր է առողջացելոց մարմնոյն, նոյնպէս և փորձութիւնք առն անձին։ Հողմ հիւսիսի բուծանէ զարդիւնս սերմոս, և փորձութիւնք հաստատեն զանձն քաջս։ Ամպ անջրդի հալածի 'ի հողմոյ, և միտք որ ոչ ունին արդարութիւն 'ի հանդիսի ձանձրութեան։ Յօդ գարնանային աճեցուցանէ զպտուղս, և բան հոգևորական արթուցանէ յառբաւնս տեսանն։ Գիշեր ձանձրութեան հալածէ զմիայնակեաց 'ի տեղւոջէ իւրմէ. իսկ որ ունի համբերութիւն, ժուժկալէ 'ի վտանգս։ Հիւանդաց այցելութիւն պատճառէ ձանձրութիւն, և հաւանեցուցանէ ծուլանալ։ Ձանձրու-

1 Եւրէ+ օրին. դժուարահաճոյ է։

2 Այսպէս ամենայն օրինակք մեր. Բնաբանն Զգայութեան հաւաքել- լեաց բանակայ միտս զակեան, և զզգայութեան մասամբ բանակայ տրտմութիւն. . 'ի խորհրդոց տրտմութե։

ցող միայնակեաց՝ ի պաշտօն սպասու արագ է, և ՝ի գործ և յաղօթս թեթև ։ Օտար տունն կատարեցուցանէ՝ առ-կար սիրք, և խորհուրդ ճանապարհի ձգեաց զհեղգն ։ Ծառ բարիոք կացեալ ոչ շարժեաց սաստկութիւն հողմոյ, և ձանձրութիւն ոչ խլէ զհաստատուն անձն կրօ-նաւորի ։ Շրջող միայնակեաց խոտ ի անապատի . սակաւ-լինչ զովացի ունի, և դարձեալ տարաբերի[1] ։ Տունկ փո-փոխեալ ոչ պտղաբերէ . նոյնպէս և շրջող միայնակեաց ոչ պտղաբերէ ։ Որ հիւանդն է՝ ոչ շատանայ միով կե-րակրով, և ոչ ձանձրացող միայնակեաց միով գործով ։

Ակն՝ ձանձրացողի միայնակեցի հարթուցեալ է՝ ի դուրս-անդր, և մտօքն երևութանայ յեղս լինչ ։ Դարձուցի՝ դուռնն, և նա թնդեաց . ձայն լուաւ, և ընդ պատու-հանն խոնարհեալ նայի, և կանգնի մինչև ընդարձակեսցի ։ Ընթերցանել զգիրսն արամեծ, և ՝ի քուն լինի[2] զիւրաւ . մտածէ զերեսս, և ձգտէ զձեռս ։ Ի զբոյսն զաչս բարձեալ՝ աչեա ընդ որմանն . և դարձեալ սակաւ ընթեռնու, և փոխադարձ ձայնին խուզէ ։ Թիւէ զթուղթսն, և տպոս պնդէ զգիրսն և զննէ ընդ գլխովն, և հոգէ ոչ կա-րի խոհեմ, քանզի քաղցն զարթուցանէ ՝ի կերակրոցն զանձկութիւն ։ Պատրաստական է յաղօթսն հանապազորդ, և ոչ յորդորի զանձկութիւն՝ ի աշխատասիրութիւն ոչ . քան-զի որպէս հիւանդին ծանրացեալ ցաւոք, նոյնպէս և նա յաղօթս և ՝ի գործս ։ Պակասեալ հիւանդ ՝ի զօրութենէ մարմնոյ ցաւօք, խոկ տղայս ՝ի թուլութենէ լքեալ ։ Ձանձրութիւն բժշկէ ժուժկալութիւն աշխատութիւն, առնէ զամենայն համբերութիւն ընդ կամացն ։ Կարգեա չափ անձին քո գործոյ և աղօթից, և մի թուլանար մինչև կատարեսցես զամենայն ։ Նոյն և յաղօթսն զզերմութիւն մնայլին սիրոյն աստուածոյ մի լքանիր, և զձանձրու-թեան ոչ մերձենայ ՝ի քեզ ։ Պրծեալ որ ՝ի հանդէս մնայլին կռուեցան, և մի թողուր ՝ի մտաց զհրաժարումն յաշխարհէս ։

1 Մի օրինակ խափանեցուցանէ նո-ւաղ սիրտ ։
2 Երեք օրինակք տարաբերի ։
3 Չորս օրինակք Անձն ։
4 Մի օրինակ Ճարբեշէ զդուռն, և նա թնդաց ։
5 Մի օրինակ ՝ի քուն զիրեանէ ։

Digitized by Google

# է

## ՑԱՂԱԳՍ ՍՆԱՓԱՌՈՒԹԵԱՆ

Սնափառութիւն է ախտ անբանական, և ամենայն գործոց առաքինութեան դիւրաւ շաղապատի։ Պատատողին ճիւղաւոր պատէ զծառն. և յորժամ հասանէ 'ի ծայրըն, չորացուցանէ զծառն։ Նոյն սնափառութիւն առաքինութեանց մերձ բուսանի, և ոչ մերժի մինչև հատցէ զզօրութիւնս։ Ողկոյզ որ 'ի հող կայցէ, արագ նեխէ զնա. և առաքինութիւն կորնչի յերեւալ 'ի սնափառութենէն։ Ո՛ խոյանակեաց սնափառ մէջակ անմնազաճ. զաշխատութի կրեաց և զվարձն կորոյս։ Իբրև ծածկեալ ոչ արտահէ զաւերեալսն, և սնափառութիւն կորուսանէ զվարձս առաքինութեան։ Ալիւր սնափառի ծուխ հնոցի, և երկոքեանն յօդս խառնեալ կորիցեն։ Հողմ եղծանէ զհետս ամն, և զզօրութիւն սնափառութի։ Իբրև յարձակումն ոչ հաստանէ յերկինս, և ազօթք մարդահաճոյի ոչ ելանեն առ ած։

Սնափառութիւն վէմ ընդ ջրով է. եթէ բախեալ զթիւրս 'ի նա, զնաւն կործանէ։ Ծածկէ զգանձ այր իմաստուն, և զառաքինութիւն վաստակ այր հանճարեղ։ Մեղուի նմանի միայնակեաց խոնարհամիտ. ծածկեալ 'ի ներքս լինու, և զմեղրն 'ի պէտս մարդկան։ Ի հրապարակս խորհրդակից լինի ազօթել սնափառութեն, իսկ զգաստն 'ի տան ազօթէ։ Հրապարակայոյց առնէ զմեծութիւն իւր սնափառն, և զաշխատանս գործէ 'ի դատաւորութեան. բայց դածանեալ գործն, որ 'ի ներքուստ է առաքինին, մինչև հասանիցեն 'ի քաղաքն խաղաղութեան և անդր երեւեսցին։ Ճանապարհ կարծեաց զներկայ վայրս ելեալ առաքինեացս, և քաղաք բարի գալստենից կեանսն։ Ո՛ք պարծի 'ի ճանապարհի, զի զդաւաճանողս դիւրաւ գրգռէ 'ի քեղ. ապա եթէ հասանիցէ մտանել 'ի քաղաքն, վայելեսցէ

¹ Բաղեղն (կամ բաղեղն պատատողին) ճիւղաւոր.. զծառն. առաքէն և սնափառութեն.. և ոչ հեռանայ.. կորնչի յարեալ.. Սնափառի համ բերութեն ծուխ է հնոցի, և երկոքեան յօդս ցրուին...։

Սնափառութիւն վէմ է 'ի ծովու. եթէ հարկանիս զնաւն 'ի նա՝ փշրէ.. Մեղուի նման միայնակեաց խոնարհն. արտաքուստ բերէ ծաղիկ, և 'ի ներքս լինու խորիսխ։ Ի հրապարակս ազօթել խորհի սնափառութեն.. Մի ցուցաներ զմեծութեն 'ի ճանապարհի.. վայելեա-

անդր։ Առաքինութիւն մնափառի զուարակ է գազանաբեկ, որ ոչ մատչի 'ի սեղան այ։ Շ փոխթի գիր գրեալ 'ի վերայ ջրոյ, և առաքինութիւն վայնառակ յանձին մնափառի։ Ի գիշերի կեր զգառնիկն ըստ օրինացն, և մի հրապարակեր զառաքինութիւն ըստ աւետարանին Քրի։ Մի առ 'ի ցոյցս առնես զբարին վասն գովից. զի տեսանէ հայրն քո 'ի ծածուկ, և հատուսցէ քեզ յայտնապէս։ Այլապէս եղև ձեռն արկեալ 'ի ծոցի, և թաքուցեալ առաքինութիւն քան զլոյս եւս պայծառագոյն ծագեսցէ։ Զանձրութիւն լքանէ զախողութիւն, իսկ մնափառութիւն կառուցանէ զխորտս թուլացեալս. զտկարն առողջացոյց, և զծերն քան զմանուկ հզօրագոյն առնէ։ Իսկ եթէ գտանիցին միայն լինելոցն վկայք, թէ եթե են յայնժամ պահք և հեկումն և աղօթք. քանզի գով բազմացն յորդորէ զյօժարութիւնն յերևել։ Մի՛ վաճառեր զվաստակս քո մարդկային փառաց, և մի՛ զատարունի փառսն մատներ վասն նկուն գովեստից. քանզի փառք մարդկայինք 'ի հող բնակեսցէ, և գովեստ նորա չիջանի յերկիրս. իսկ առաքինութեան փառք մնայ յաւիտեան։

Արդ ով անձն պարտեալ 'ի մնափառութենէ, զգոյշ կաց, մի զջան վաստակոց քոց կորուսաներ. այլ յամենայն ջանս բարեպաշտութեան ընտակից առասցես քեզ ըզխոնարհութիւն, զի այնպէս ած փառաւորեսցի և փառաւորեսցէ զքեզ 'ի վերջին աւուրն։

ցես անդր, և ոչ պք յափշտակեսցէ զվաստակս քո։ Առաքինութիւն.. Ամփոփակացաւ ձեռն թաքուցեալ 'ի ծոց, և գործք բարիք ծածկեալք (կամ թաքեալ) քան զլոյս պայծառագոյն լուսաւորին։ Զանձրութիւն լքանէ զխնդութիւն անձին, իսկ մնափառութիւն անգէ զթուլացեալ անձն. զտկարն զօրացուցանէ.. հզօրագոյն առնէ։ Իսկ եթէ գտանիցին միայն լինել և ոչ գուցէ վկայք եղելոցն, թէ եթե են.. գովութիւն բազմացն յորդորէ զյօժարութիւնն։ Մի՛.. և մի զյաւիտենից փառսն.. պարտեալ 'ի մնափառութենէ...։



Digitized by Google

## Ը

## ՑԱՂԱԳՍ ԱՄԲԱՐՏԱՒԱՆՈՒԹԵԱՆ

ԱՄԲԱՐՏԱՒԱՆՈՒԹԻՒՆ է ախտ զազրացեալ, ուռուցեալ է փքով. ուր հասանէ, պայթէ և տանէ զհետ ժահահոտութիւն։ Փայլատակման ձայն՝ հնչիւն նշանակէ որոտման, և ամբարտաւանութեան գալստեան աւետիս տայ սնափառն։ Ի բարձրութիւն յոյժ վերամբառնայ անձն ամբարտաւան, սակայն անտի յանդունդս զինքն ընկէց։ Վէմ հատեալ 'ի լեռնէ սաստիկ գլորմամբ վայրաբերի, և բացակայեալն յԱյ անկցի 'ի վայր։ Ամբարտաւանութեամբ ախտացեալ է՝ որ 'ի բաց կացոյց զանձն յԱյ, և իւր գրէ զառաքինութիւն։ Որպէս որք ելեալ 'ի սարդի ոստայնս և ոչ զգան, սոյնպէս վստահացեալն յիւր զօրութիւն։ Պտուղ բազում խոնարհեցուցանէ զոստս ծառոց. այսպէս առաքինութիւն անձն զիջուցանէ։ Ինչ բարձեալ կրէ զոստս պտղալիցս, և երկիւղ Այ զառաքինի անձն. քանզի որպէս ծանրութիւն պտղոց խզէ զոստս, սոյնպէս ամբարտաւանութիւն խորտակէ զանձն առաքինի պտղալից։ Պտուղ նեխեալ ոչ է պիտոյ երկրագործաց. այսպէս և առաքինութիւն ամբարտաւանին։ Մի տար ամբարտաւանութեան զանձն քո, և ոչ տեսանես առաջօք 'ի գիշերի որ խռովեն զքեզ. քանզի անձն ամբարտաւանին թուլացեալ լինի յԱյ և խնդալի լինի դիւաց և ընդունակ չարի. 'ի գիշերի առաջօք տեսանէ բազմութիւն գազանաց դիմեալ, և 'ի տուընջեան ատագնապի 'ի խորհրդոց զանգիտեալ։ Ննջեալ ընդոստնու յաճախ, և

ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ է ախտ զազրացեալ և ուռուցեալ փքով.. Փայլատակման հնչիւն ձայն որոտման նշանակէ, և ամբարտաւանութեան գալուստն աւետէ սնափառութիւն.. և իւրոյ քաղցրութիւն զառաքինութիւնն համարի։ Որպէս որք ելեալ յոստայն սարդի ոչ զգան, սոյնպէս վստահացեալքն 'ի զօրութիւն իւրեանց անկանին 'ի խորխորատ.. Ծառոց. այսպէս և առաքինութիւն բազմութիւն զիջուցանէ միտս։ Պտուղ նեխեալ անօգուտ է երկրագործի. նոյնպէս և առաքինութիւն առն ամբարտաւանի իսկ անպիտան է։ Ինչ բառնայ զոստս.. որպէս ծանրութիւն պտղոց բեկանէ զոստս, նոյնպէս հպարտութիւն զանձն առաքինի։ Մի տար.. որ խռովեն զքեզ տեսլեամբ.. թուլացեալ լինի յԱյ և ծաղր լինի դիւաց.. 'ի տուէրէ թռչնոց և յայլ իրէ. և 'ի ննջելն աներկեղ զարհուրի

զարթուցեալ զարհուրի 'ի հովանւոյ թռչնոց և յայլ իրէ ։ Խայրշափ աներկեայ զարհուրեցոյց զամբարտաւանն, և հնչիւն հրոյ տագնապեցոյց զնա. քանզի որ փոքր մի յառաջ հակառակ անկեր զխնդիր Ա՟յ և զնա 'ի նմանէ ուրանայր զօգնութիւն, յետոյ զարհուրի 'ի նուաստ ասաչօք տեսլենէն ։

Ամբարտաւանութիւն յերկնից ընկէց զհրեշտակս, և իբրև զփայլակն ետ անկանել յերկրի. իսկ խոնարհութիւն զմարդն յերկրէ վերացուցանէ, և ընդ հրեշտակս պարել պատրաստէ ։ Ընդէ՞ր հպարտանաս, ով մարդ, հող գոլով և թշուառ. ընդէ՞ր հպարտանաս և քան զամենայն 'ի վեր ամբառնաս ։ Հայեաց 'ի բնութիւն քո, զի հող ես և մոխիր, և յետ սակաւ աւուրց դարձեալ 'ի մոխիր դառնաս. այժմ հպարտ, և յետ սակաւ աւուրց որդն ։ Ընդէ՞ր զպարանոցդ բարձրացուցանես, որ յետ սակաւու նեխելոց ես 'ի հող ։ Մեծ է մարդ զոր վայր օգնէ Ա՟յ, և թողեալ 'ի նմանէ՝ ծանեաւ զտկարութիւն բնութեանն ։ Ոչ ինչ ունիս բարի, եթէ որ ոչ յԱ՟յ ես առեալ. արդ ընդէ՞ր պանծաս որպէս քոյով. ընդէ՞ր շնորհաւն Ա՟յ որպէս քոյով գեղեցկանաս, և ոչ յիշես զբարերարն քո ։ Ծանիր զպատուողն քո, և մի հպարտանար արարածդ առ արարիչն, զի մի արհամարհիցես 'ի նմանէ ։ Օգնէ Ա՟յ, և մի արհամարհեր զբարերարդն. 'ի բարձրութիւն վարուց ես, այլ նա առաջնորդեաց. առաքինութիւն ստացար [illegible], այլ նա եղև գործակից քեզ յաղթութեան 'ի շնորհսն ։ Պատուեա զբարձրացուցիչն, որպէս զի կացցես 'ի նոյն բարձրութեան հաստատուն ։ Մարդ ես, կաց 'ի սահմանս բնութեան քո. ծա-

ամբարտաւանն (կամ յղփին աներկեայ զարհուրէ զամբարտաւանն). և հնչիւն հրոյ և խախտիչն ձայնոյ ընկէանէ զնա նոյն. քանզի . . յետ սակաւ միոյ դարձեալ 'ի հող լուծանիս (կամ մոխիր դառնաս). այժմ հպարտանայցես, և յետ սակաւ միոյ որդն ես ։ Մեծ ես որչափ ունիս զԱ՟յ օգնականութիւն. այլ յորժամ ընկեցեալ լինիս 'ի նմանէ, ծանիցեն երեւի տկարութիւն բնութեանդ ։ Ոչ ինչ ունիս բարի զոր ոչ յԱ՟յ առեր. զի որ զայլոյ ունիս, երբ 'ի քոյոց մեծանաս. ընդէ՞ր շնորհօքն Ա՟յ իբր զառաքինութիւն քո զարդարես, և ոչ յիշես զպատուողն քո ։ Ծանիր զպատիւն և մի հպարտանար ։ Արարած ես Ա՟յ, մի արարչին զարարիչն, զի մի արհամարհեսցիս 'ի նմանէ ։ Օգնէ Ա՟յ, մի արհամարհեր զօգնականն քո. 'ի բարձրութիւն վարուց ելեր, այլ նա առաջնորդեաց. գործեցեր զառաքինութիւն, այլ նա եղև գործակից . . խոնարհեցուցանես զբարձրացու-

Digitized by Google

նիր զազգակիցս քո, զի նոյն բնութիւն են։ Մի՛ ամբարտաւանիր և հպարտանար ուրանալով զազգակիցսն քո, թէ և նա տկար է և դու մեծ. վասն զի նոյն տէր է հասարակաց, այլ որպէս կամի՝ բաժանէ զշնորհս առ արարածս իւր։

Մի՛ քամահեր զխոնարհսն, զի հաստատագոյն է՛ի բարձրութենէ որ ոչ խոնարհի 'ի վայր. այլ դու ամբարտաւանեալդ 'ի վեր, ընդ խոնարհս զբջանիցես, զի մի խորտակիս ամբառնալովդ։ Փուշ կարք են ամբարտաւանութիւն. և որ ելանէ 'ի վեր, յանկարծակի խորտակի 'ի վայր. իսկ խոնարհն հաստատուն կայ միշտ, և ոչ սասանի 'ի խորհուրդս ամբարշտաց։ Ամբարտաւան միայնակեաց ծառ է առանց արմատոյ, և ոչ համբերէ սաստկութեան հողմոց։ Նաւաք պարապեալ անհաստատ բարիք. և որ բնակէ 'ի նմա, անկայուն է 'ի դրժողաց թշնամեաց։ Տարաբերէ հողմ զխաւս այսր անդր, և զամբարտաւանն մեծամտութիւն շարժէ։ Պղպջակ պայթեալ եղծանի, և յիշատակ ամբարտաւանին յետ մահուանն կորիցէ։ Նման խոնարհին սպեղանի անձին. իսկ ամբարտաւանին լի է ամբարհաւաճութեամբ։ Աղօթք խոնարհամտին հասանեն յերկինս. իսկ աղօթք ամբարտաւանին 'ի բարկութիւն ածէ զբարերարութիւն նորա։ Նաւ պատուական վայելուչ է ընդ ոսկւոյ, և առաքինութիւն բազում պայծառանայ այր խոնարհութեամբ ընդելուզեալ։

Սկիզբն և աւարտ է խոնարհութիւն, և զշարժեալսն ընդ իւր ոչ իւիք 'ի դրժանաց 'ի վայր ընկենու։ Ոչ ի

ցիչն քո, զի հաստատուն պահեսցիս 'ի բարձրութեանդ.. Մի ամբարտաւանիր.. թէպէտ և դու մեծ ես և նա տկար, բայց հասարակաց մի և նոյն տէր է, և որպէս կամի...։

Մի քամահեր զխոնարհն, քանզի հաստատուն քան զքեզ է. զի նա յերկրի չէ և ոչ արդեօք անկանի, իսկ բարձրացեալդ անկեալ արագ խորտակիս։ Փուշ կարք է.. Միայնակեաց հպարտ ծառ է.. որ ոչ համբերէ զնացից սաստիկ օդոց։ Քաղաք պարապեալ են միայն անհպարտք (կամ անհպարտ բարք). և որ բնակի 'ի նմա, յուսայ ոչ յամբշտակի.. և զամբարտաւանն շարժեն յարձակմունք հպարտութեան։ Պղպջակ.. Աղօթք խոնարհին 'ի գութ ածէ զնա. և աղօթք ամբարտաւանին բարկացուցանէ զնա։ Քար պատուական վայելուչ է ընդ ոսկւոյ, և առաքինութիւն բազում պայծառացուցանէ զայր խոնարհ. զի խոնարհութիւն է քար պատուական 'ի վերայ ոսկւոյ առաքինութեան։

Գործոյ ամուր է խոնարհութիւն. և որ ելանէ 'ի նա, պահի հաստատուն։ Ցորժամ ելանես 'ի բարձրութիւն, յայնժամ զհաստատութեան

յորժամ ելցես 'ի բարձրութի առաքինութեց, յայն-ժամ զխոնարհութի մերձ դիցես, զի մի ոք կործիցէ 'ի վայր. զխոնարհութի ընդ մերձ ոչ լեալ 'ի բարի գործոն՝ եր-կիւղ է յամենայն վտանգից լուծանել։ Անխնամը ուսոյ որ աւանէ զպատիկն. և անձն առաքինի բուծանի անհպար-տութեամբ 'ի վիշտս։ Զի որպէս խմորեալն հպեալ 'ի հուր՝ փքացեալ վերանայ, նոյնպէս և ամբարտաւանն փքացուցանէ առաքինութի. իսկ զխոնարհն ոչ ածէ 'ի մեծութի։ Եթէ փախուցեալ ես 'ի Լաբանայ, գաղտ փախիր, և մի հաւատար խոստանալ յղարկել. քանզի որովք ասէ յղարկել, նոքօք խափանեսցէ։ Զի տաւղիւք և փողովք և թմբկօք արձակելովք 'ի կորուստ ձգեալ օ-գուրի զփախուցեալ միտսն, բարբառոց հնչմամբք դիւ-թելով, և զյօժարութիւն վհատելով հանգչմամբք երգոցն։

Գաւազան խրատու նշանակ է, զորով ոք ունելով ան-ցանէ ընդ Յորդանան կենցաղոյս։ Գաւազան 'ի ձեռին Ճանապարհորդի առ ամենայն ինչ կարևոր է։ Գաւա-զան 'ի վայր անկեալ՝ եղև օձ, և խրատ յառաքինագոր-ծէ մերժեալ՝ եղև ցանկութի. խրատ յառաքինութիւն ուղղէ զվարս առն։ Մի երկեցուսցէ զքեզ յերկրի տա-զեալ օձ, և մի ախտ ցանկական զեռալով 'ի հողեղէն նիւթս։ Զի եթէ բուռն հարկանիցես զատանէն, դար-ձեալ եղիցի գաւազան 'ի ձեռին քում. և եթէ պար-տիցես ախտի, եղիցի խրատ։ Յանապատի հարեալ օձի,

խոնարհութեան մերձ դիցես, զի մի գլորիցիս 'ի վայր. զի խոնարհութիւն է որ պահէ հաստատուն զամենայն առաքինութի քո։ Քանզի որ գլորի յերկրի, դարձ. անդրէն յառնէ. իսկ որ անկանի 'ի բարձրութէ, բա-զում անգամ և մեռանի։ Բաղցրոյն անխնամ ուսոյ.. և անձն առա-քինի անհպարտութ. կերակրի. զի խմոր է հպարտութիւն և քացախե-ցուցանէ զամենայն առաքինութիւն։ Զի որպէս խմորեալն.. նոյն-պէս և ամբարտաւանութիւն փքացուցանէ զառաքինութիւնն. իսկ զխո-նարհն ոչ փքացուցանել կարէ հպարտութիւն.. 'ի Լաբանայ ստորւոյ, գաղտ փախիր, և մի հաւատար նմա՝ թէ խոստասցի յուղարկել.. նո-քօք արգելեալ խափանեսցէ։ Քանզի երգօք.. և թմբկօք հնարի ար-գելուլ զփախուցեալ միտսն, և կախարդէ զնա ձայնիւ տաւղացն, և զընթացսն խափանէ ձայնից ցանկութեամբ։

Գաւազան.. զոր թէ ունի ոք, անցանէ.. առ ամենայն ինչ պիտա-կար է. նոյնպէս խրատ նեղութեան փորձանաց ուղղէ զկեանս առն։ Գաւազանն 'ի վայր ընկեցեալ՝ եղև օձ, և խրատ 'ի գոհացողութէ հե-ռացեալ՝ լինի թշնամի։ Մի երկեցուցանիցէ զքեզ օձ գալարեալ յերկ-րի, և մի ախտ ցանկութեան.. նիւթս քո.. և եթէ յաղթես ախտի, դարձեալ լինի խրատ։ Յանապատի թէ խածանէ օձ, սպանանէ զանձն.

սատակէ զանձն. և ցանկութիւն հարեալ կորուսանէ զայր: Որ հայի 'ի պղնձի օձ, ապրի 'ի մահուանէ. և որ անձն զխորաւ զգաստութեան, կեցցէ: Օձ հարկանէ զզարշապար երեխայի, և ասա ցանկութիւն զանզգուշալի որբութեան: Գանձանակերաց նախնեաց վէրք բժշկի դեղովք ամենեքք, և բարք մտափառութեան ինքնարհամարհութիւն և խոնարհութիւն միշտ: Հատումն սրոյ և խարումն մարմնոյ ցաւագին են յոյժ, բայց զձարակ վիրաց ամենայնին յոյժ օգտակար: Այլ արհամարհանք թէպէտ և տրտմեցուցանեն զայն որ բժշկելոցն է, սակայն զազատեցուցանեն զախտս չարաչարս՝ զմտափառութիւն և զանձնապաշտութիւն, և որ 'ի նոյնս յարանալին խորհուրդ և բան և գործ և փառասիրութիւն մտրութեան երեսկի և անհեթեթութիւն՝ չնորհաց և մարդասիրութիւն տեսանն մեզ Տէր Աստուած բարձցէ 'ի մէնջ, և ինքն երկցի օրհնեալ յաւիտեանս:

Թ

## ԽՐԱՏՔ ՈԳԵՇԱՀՔ ՄԻԱՆՁԱՆՑ

### ՄԻՆՉ ՆՍՏԷՐ ԱՌԱՆՁԻՆՆ Ի ԼԵՐԻՆՆ ՍԻՆԵԱՑ *

ՍԿԻԶԲՆ հրաժարելոյ յաշխարհէս երկնից աստուած, և անհերկելւոյն տրտմութեան դրանն օթևանի: Սկիզբն բարի կենաց միաբանակենաց զլխաւութիւն է, քանզի անզգայութեան

և ասա ցանկութիւն եթէ հարկանէ, կորուսանէ զմիտս.. ապրի 'ի մահուանէ. և որ հայի 'ի հաստատուն զգաստութիւն և ժուժկալութեան, կեցցէ ոչ մեռանի: Օձ հարկանէ.. Նախնեաց վէրք բժշկի խարանաւ. Նոյնպէս բարքն մտափառի բժշկի յանդիմանութեամբ և նախատանաց անարգել: Հատանն և խարանն վէրք (կամ զատուածն սրով և խարանն հրով) ցաւագին կսկծեցուցանեն, բայց կարծեն զձարակ վէրին և առողջացուցանեն: Նա անպատուութիւնք արհամարհանաց՝ թէպէտ և տրտմեցուցանեն զայս բժշկեն, սակայն զազատեցուցեալ հանեն զախտս չարաչար մտափառութեան և ընդդարձութեան, և որ 'ի նոյնս յարանալին մալութիւնք փառասիրութեան և խորհրդոց նորին և գործ և բան երեսկ և անհեթեթ շնորհաց...:

* Վերջերին օրինակին մեր՝ Նեղոսի ձայնափոխութեան, 'ի ձեռնագրական հայոց հայր. Իէ. 466 թղթերիեան ընծայի. որում համաձայն վկայի և հաւան. տիր հայաստանի խօսք խորհրդեալ երեւալ մեզ 'ի վեր անդր յէլ 591 բառ իրին թարգմանութեան:

ծոյ խաւարէ զմիտս : Ակիզբն բարի ժառանգութե՛ միա-նձանց կուսութիւն սուրբ է, իսկ անսուրբն տարագիր է : Ճ՛գնութիւն միանձանց խոկումն՝ սուրբ գրոց է, և զնո-սին առնել շնորհօք և ընթերցութեամբ : Աշխատութիւն միանձանց առնել զկամս ծոյ է, և ընդդէմ երգս երգս տաղնապաց. այլ և մարմնականս պէտքն կարօտութեամբ եղիցին 'ի դէպ ժամանակի միանձանցն : Պնագք միանձանց ցածութեամբ շարժելով տանել 'ի տուն որպէս տաք աւետարանչի բա-րութե : Սարք միանձանց առանց գայթակղութե եղիցին 'ի գնալ, 'ի նստել, 'ի ննջել, 'ի յառնել:

Միանձինք զգոյշ լինիցին մինչ 'ի կանանց շրջա-կուտելոց մեղօք որպէս 'ի սպանողաց. զի նոքա մահա-բերք են պատճառ յիշատակի, որ խոցանեն փորձանօք հրոյ : Խորհուրդք միանձանց ընդ համաձայնելոց լինիցին, և մի ընդ անխոհեմս՝ որ ոչ գիտեն զօրէնս : Հսկելով միան-ձունք օրհնութեամբ և հոգևոր երգովք՝ հերքեսցեն դևս : Մեծաբանելով միանձունք 'ի վերայ ուղղութեանց և ննջելով, որպէս սարդի ոստայն լուծանին : Խոնարհ հոգւով միանձունք նշանաւ խաչին պահպանեսցեն յորո-գայթից սատանայի : Երկրպագեր միանձունք յերկիր փո-խարկելով՝ զփորձ-անուն որոգայթից սատանայի : Խոր-հուրդք միանձանց եղիցին 'ի գործս բարեաց, 'քանզի բարք անգործունականք ոչ լինին բարեաւ : Սպասաւորու-թիւնք միանձանց խոնարհութեամբ յառաջանեսցին 'ի բարե-պաշտութի ածսիրութե : Արթնութի միանձանց հա-ւատովք համբերութեամբ հանդարտեցուցանէ զխորհուր-դս ալեկոծիս : Ժուժկալութի միանձանց 'ի գործս բա-րիս պատուաւորի ըստ աւետարանին մնայականս և հո-գևորականս : Մշակելով միանձունք զերկիր արդիւնա-կատարութեամբ ըստ ծոյ, ընծայեսցեն զպտուղս երկնաւորս : Զօրութի միանձանց անսասանութեամբ, 'ի բառնալ զխաչն Քնի և աշխարհի մեռանել. քանզի դժուարին

Հակառակ սուրբ գրոց է . . և ընդդէմ հոգևորական երգ տաղնապաց. այլ և մարմնականքն 'ի պէտս կարօտութեան եղիցի միանձանց. և 'ի դէպ ժամանակի . . որ ոչ գիտեն զօրէն : Հսկելով միանձունք սաղմոսիւք և օրհնութեամբ և . . նշանաւ խաչին արտաքսեսցեն յորոգայթից սատանայի. Երկրպագեալ միանձունք յերկիր ամփոփելով զմարմին անուան որոգայ-թից սատանայի մերժեսցին . . Մշակելով միանձունք զերկիր արդարու-թեամբ (կամ արդիւնակատարութեամբ) . . բառնալով զխաչն Քնի . . ըն-

Digitized by Google

է միանձանց ընչասիրութիւն ըմբռնելոյ զաղքատութիւն իւնն ծոյ սահմանալ :

Տուք զմիտս ձեր, միանձունք, յուսմունս մտաւորականս, և գործով յանդիմանն լիցի սէրն որ առ Ած : Պարզև բարի միանձանց կուսութի, կատարելապէս զնա յերկինս ընդ որդւոյն Աշխարհի : Այս տարփող եղեալ, միանձունք, ելջիք 'ի վերայ հրեղէն կառաց, ցօղելով արտասուաց ոչ ձայնիւ : Նա կենաց է կրօնաւորել, և բարեկարգութեան և խոնարհութեան բարձրանալով. չնորհօքն Քնի սնուցեալ ձեր զհրախտն՝ արտասուօք սաղեսջիք զնա, միանձունք : Զօրութի կուսութե ժուժկալութիւն է, իսկ շռայտեալն և հեշտն բծաւորի : Հրապարակելով զասուրս և զաղօթս, միանձունք, և 'ի ցոյցս, անչնորհ և ունայն են 'ի վարձուցն Քնի. իսկ 'ի ծածուկ զայս արարեալ ածգիտութե աղաղակ միանձունք՝ առցեն զերևելին : Տալով զայն ծոյ միանձունք՝ մի հպարտասցին, այլ ընդ խոնարհս զիջանիցին և լիցին չափաւորս : Աղօթելով զգիշերն ամենայն միանձունք մաքրապէս, լուիցէ տէր և որպէս տիւ լուսաւոր զնա լուսարէ : Ողորմութի միանձանց մարդասիրութի է 'ի պէտս եղբարցն. տալն ոչ ամենեցուն է, այլ որ ոչն ունին : Համբարտաւան միանձանց հեռի է տէր. իսկ 'ի խոնարհըն հանգիցէ հոգին սուրբ : Մտածութի միանձանց եղիցին հանապազ վասն արքայութեն, և յետ աստեացս ժառանգեսցեն զնա :

Յամենայն ժամ եղիցին միանձունք տաճարք աստուծոյ և սուրբ, և սուրբն սրբոց բնակիցէ 'ի նոսա : Ընչէզ պահիցեն լապտերք կուսութե միանձանց հանապազ, զի մի շիջցին և ոչ լուսաւորեսցին : Բարեգործութի ողղեալք միանձունք անմնուայ, զի մի յառաջագոյնէն արտաքսցին : Սեանք միանձանց նմանք հրեշտակաց եղիցին՝ հանապազորդ սաղմոսիւք կիզել զմեղս, և վարք նոցա յերկրի որպէս յերկինս : Աւրք միանձանց Յոհաննու նմանեսցին յանապատի հողւովք բերկրեալք՝ մեռուցանելով զհամանդամս : Նփուռն դիւաց 'ի միանձանց ածսիրութեն խաղաղականայ՝ հրեշտակայինս կարգա-

ընչասիրութիւն ըմբռնելոյն զաղքատութեան ույ սահմանելով. . չնորհօքն Քնի սնուցեալ զառաքինութե զհրախտ. . զայս արարեալ աստուածպաշտութե աղաղակ. . և որպէս որ լուսաւոր. . տալն ոչ ամենեցուն է, այլ որք

Digitized by Google

ւորութիւն ։ Օրինակք գիտականաց մեծապանծեալ միան-ձանց ժուժկալեցին 'ի սրտմտութէ զգուշանալով ։ Կեանք միանձանց հեզութբ̃ և համբերութբ̃ յօրինեցին որ-պէս լուսաւորս յերկրի ։

Նախանձելով միանձանց իրաւարար ընդ եղբարս, դառնագոյն յինքեանս ձգեն զբանտարկուն ։ Խոնարհ չա-րութի̃ մի լիցին 'ի միանձունս՝ որ բաժանէ զեղբարս, այլ սէր սերտ՝ որ 'ի միասին պահէ ։ Արեգակն մի մտցէ 'ի վերայ բարկութի̃ միանձանց, այլ արեգակն արդա-րութեան 'ի սիրտս հանգիցէ ։ Հանգարտ կրօնաւոր ոչ խռովէ զեղբարս, իսկ նախանձոտն և բանտարկուն կոր-ծանէ զվանսն ։ Օ հնչումն հոգևոր երգոց և սաղմոսաց մի ոք պակասիցէ, զի օրհնութիւնք հրեշտակաց են ․ իսկ 'ի հնչմանց որ 'ի տեսարանս են՝ փախիր, զի այնպիսիք որ-սանք բանսարկուին են ։ Եղիցին յամենայն ժամ 'ի ըն-դայարանս միանձանց խաչին ․ Ընդի ապաւորութիւնք հա-ւատովք ։ Սրբութի̃ միանձանց հանդերձ մաքուր արտա-կոչէ զսուրբ հոգին ․ իսկ անսուրբն հալածէ ։ Պատշա-ճեալ միանձունք հոգւով և ճշմարտութբ̃ մի պատկա-ռեսցեն երբէք 'ի դիւաց ։ Վահան պատերազմի միան-ձանց օրհնութիւնք հրեշտակայինք են, յորմէ փախչին դեւք ։

Մահ միանձանց սրբոց թեթևագոյն է քան զքուն, զի փոխին 'ի ճգանցն 'ի հանգիստն յաւիտենից ։ Գանձ միանձանց անկողոպտելի անապականութիւն է, որ ոչ ոք կարէ յափշտակել զնա ։ Վաստակութի̃ միանձանց հանդերձեալքն են անեզրական հանգստեանն 'ի փառսն յաւիտենից ։ Պատուաւորութի̃ միանձանց զգեստք սրբոյք է սուրբ գրեալ ․ համբուրեսցին ոք տեսողք ։ Դուռն միան-ձանց 'ի մուտս արքայութեան երկնից նեղ և անձուկ է, այլ յաւուրս կենաց թեթևագոյն է ։ Աստուածպաշտու-թիւն միանձանց սրբութբ̃ ուղղի, և եղբայրսիրութբ̃ ծաղկեցեալ լինի ։ Քաջութի̃ միանձանց ոչ ուժոյ մար-մնով, այլ հոգւով 'ի պահս ճգնեալ զօրաւոր ցուցա-նէ ։ Բժշկութի̃ միանձանց ցաւոց 'ի ձեռն աղօթից և

ենն ․․ յաւազանակն արտաքոյ գօտին ․․ հոգւով բերելովք ․․ Ծփանք 'ի դիւաց միանձանց ․․ որպէս լուսաւորաց երկրի ։

Նախանձելով միանձանց անիրաւարար ․․ որ 'ի միասին պահէ ․․ զի հրեշտակաց է օրհնութիւն ․․ փախիր, զի այն են պատրանք բանսար-կուին ․․ Պատուաւորութիւն միանձանց զգեստք սրբոյք ․․ այլ յաւուրս

Digitized by Google

պահոց լինի, որք բժշկեն զամենայն ախտս: Զուարթ-առատ ձգնաւոր խրախուսեալ յամն՝ խորհրդոց չարաց արտահալածումն առնէ հանապազ:

Յոհաննէս՝ որ յանապատէն գաղափարէ զմիանձունս, և եղիցին խոշոր վարք իւրեանց: Եղիայի մաշկեակն, ով միանձունք, ուսուցանէ զորպիսի զգեստ 'ի սկզբանէ առաքինւոյն մեր եա մեզ: Յակոբոս անմեկնելին 'ի սա-ձարէն հանապազորդ աղօթիւք ուսուցանէ՝ մի թուլանալ 'ի վանից քոց: Յոհաննէս առ անմխիթարն քանն առաջնորդէ 'ի փրկութիւն կուսութեան նահատակել: Մերձա-խոհ միանձունք մտաքանեն զերդ կայք 'ի քարի գործս, խոկ ապարասանքն ցրուեն զնոսա: Համբերութիւն միանձանց զխստութիւն շիջուցանէ և 'ի խոնարհութիւն առնէ: Հրեշտակաց համառօտեցին պարկեշտութիւն 'ի կերակուրս և յըմպելիս: Միանձունք որ ոչ պահեն զանեղութիւն կանանց, այլ և զխօսս վարկպարազի հանարին, ոչ առաքին նոքա: Չարաչար միանձունք որոց զկուսութիւն իւրեանց բծաւորեալք, եղկելիք և արհամարհեալք են: Աշխարհասէր միանձունք և զբաղեալք յանցաւոր կրս՝ ոչ կարեն հաճոյ լինել նմա: Անձն սրբեալ և անընչասէր՝ քարոզ հաւատարիմ է կենացն յաւիտենականացն: Զարդ երիտասարդի միանձին ողջախոհութիւն է որբութեան 'ի հնազանդութիւն հարց:

Անհնդրութիւն միանձանց ոգեշահ խրատուց արխացուցանէ զանձինս 'ի հոգևոր մարտս: Չարութիւն մի օթեսցի 'ի սիրտս միանձանց, այլ բարութիւն յորդեսցի երևելի և աներևոյթ: Ի բանս բարիս զբաղեսցին միանձունք յամ ժամ, բայց զղութիւն մի մոռասցին: Զժուժկալութիւն միշտ ընկալցին միանձունք մեռուցանելով զանդամս զերկրաւորս: Ճշմարտեալ բանս խօսեսցին միանձունք յամենայն ժամ, և սուտ ամենևին մի: Բանս խիստս լսելով միանձունք մի խռովեսցին, զի տիրապէս դարձցի բարկութիւն 'ի խաղաղութիւն: Զխաղաղութիւն զհետ լիցին միանձունք և զսրբութիւն, զի առանց սրբո-

Թեթև. . Քաջալերութիւն միանձանց ոչ ուժով մարմնոյ. . արտահալածանս առնէ հանապազ:

Յոհաննէս որ յանապատէն՝ ձեզ գաղափար, միանձունք. եղիցի խոշոր վարուց իւրոյք. . եղկելիք և արհամարհելիք են. . զբաղեալք յանցաւորս, ոչ կարեն հաճոյ լինել մեզ. Քարոզ հաւատարիմ է անձն սրբեալ և անընչասէր կենացն յաւիտենականացն. . բարութիւն յորդեա-

Digitized by Google

ցիկ չէ հնար տեսանել զանէր : Արգասաւորեալ միանձանց զլաւն խոնարհութիւն և զզգօնանն լուծանել զխորհուրդս անմտութեան : Առիւծ ահարկու է իշավայրեաց · այնպէս և կրօնաւոր քաջ 'ի վերայ անմաքուր խորհրդոց չարին : Լուծանելով միանձանց զարգասաւոր պահս և զաղօթս այ, խափանէ զցանկն 'ի մուտս չարին :

Հողմ անզգուշին ամբոխէ զծով, և հպարտացեալ անձինք բարկութիւն ամբոխեն զմիաբանականս : Նուահանգիստ խաղաղութիւն է անձն բարեսէր, և հանգստարան 'ի մէջ միաբանականաց սիրով : Նմանութեամբ զատուց հրեշտակ են յերկիր մաքուր կուսութեամբ միանձունք : Պաւղոսի սրբութեան նմանեալ միանձունք, զի այնպէս յափշտակեսցին 'ի դրախտն : Մովսէսի զհեզութիւն ուսանիցին միանձունք, զի այնպէս զերծցին 'ի խորանն 'ի քարկոծչացն :

Մի լինիք ամբարտաւանք, միանձունք, յորժամ փառաւորեսջիք 'ի մարդկանէ, զի մի անարգեսջիք : Նման մաքսաւորին խոնարհեալք միանձունք, և մի ընդ փարիսեցւոյն 'ի վայր անկջիք 'ի տեառնէ : Մի նախանձիք ընդ եղբօր 'ի խորհուրդս մահու որպէս Կայէն, զի մի զնոյն պատիժս կրեսջիք : Հալածել զմի նախանձն ուսուցանէ հանճարեղ պատուիրանն . որ թէպէտ մեռաւ, սակայն քարոզէ 'ի սուրբս : Սուսք, միանձունք, միշտ զխոնարհութիւն, զի նոքաւք ապրեսջիք յորոգայթից բանսարկուին : Արձք բարիք 'ի տեառնէ խոնարհաց, և մի զրկիք յայնմանէ, միանձունք, զի ընդ Քրիստոսի բարձրասջիք յերկինս : Նորամուտ միանձունք բաւն հարցեն ընդհնազանդութեան ահիւն այ յորդով աշխատութեամբ : Տնկեալն 'ի տուն տեառն և 'ի գաւիթս միանձանց զգոյշ կայցէ, զի մի տարիցէ 'ի բանսարկուէն :

Սկզբնահաս միանձունք ինքնաբուղխ արտասուօք տագեսցեն զփափկանալի ապաքինութիւնս : Ոտս սրբոց լուանալ, 'ի պէտս նոցա օժանդակեա հոգևոր սիրով, և երանեցիր 'ի Քրիստոսէ : Զփշերն սուր գործեն միանձունք, որք շնորհացն այ եղեն միշտ ընդդիմակք : Փորձի 'ի հողմոց շարժեալ անձն որ այսր և անդր տարաբերի և ոչ

ցի.. զզգօնանք լուծանել զխորհրդածութեանցն: Առիւծ.. զխորհրդաւոր պահս.. Նմանութեամբ զատուց հրեշտակաց.. 'ի մարդկանէ, զի մի անկջիք.. սակայն քարոզէ սուրբս.. Զոտս սրբոց լուանալ, 'ի պէտս նոցա օժանդակել..

կայ 'ի սահմանի խելոյ։ Փայտ զար՝ ձեռաց է կրօնաւոր հեռ և անհնազանդ, որ ոչ անկանի 'ի շինուած եկեղեցւոյ ա՟յ։ Փայտն կենաց պտղաբերեալ անձն արդիւնական, կերակրելով զմիաբանսն ամենայն։ Հրեշտակական վարս ունելով հանապազ սաղմոսերգութբ անձին՝ 'ի յերկինս վերաթեւէ։ Զոր փայտիւ Եղիսէէ զերկաթն 'ի խորոցն հանէ. նոյնպէս և կրօնաւոր՝ որ զկարտութիւն 'ի սրտէն 'ի բաց ձգէ։ Զօրացուցանէ զախտակցն հոգւոյն անստուարութբ կերակրոց և ըմպելեաց և սիրն ա՟յ։ Սուր ընդդէմ ախտից աղօթք արտասուալիցք արթնութբ, և պահք խոնարհեալ հոգւով։ Ընծայք 'ի մարդկանէ վայրաբերեն զմիաբանսն անհանճարս, և զխոնարհսն 'ի վեր ձգեն։ Յոր վայր է սահման պահոց միաբանից. մինչև ցխախճան. առաւել ևս աղօթիցն մշտ։

Որ նախատէ զմիաբանսն առաջի մարդկան, այրող է առաջի ա՟յ. իսկ բարեպաշտեանն օգտի։ Որ ոչ պահէ զլեզու իւր ընդդէմ բարկութե՟ 'ի թշնամանս, ոչ անպատուհաս առցի յա՟յ։ Բարկութիւն մարդոյ ապականէ զմիաբանսն, և զարդարութի ա՟յ ոչ գործէ 'ի մերձաւորս։ Մեծ վնաս առնէ անձին՝ որ արդարանայ բանիւ և ոչ գործովք առաջի տեսողին զինքն։ Զանձնութիւն լուծանէ զկարգ և զկրօնաւորութիւն միաբանից, զի նա է սկիզբն կործանման մերոյ։ Բարկութիւն յարուցանէ միաբանից մարտ բանսարկուն. իսկ խորագէտն զզղջմամբ լուծանէ։

Որ պանծայ 'ի գործս իւր յաջողակս, կորուսանէ զվարձս. իսկ որ 'ի փառս ա՟յ ընծայէ, առցէ զվարձս։ Որ անարգէ զմերձաւորս որպէս զմեղաւորս, և խիղճ անարգեալ և արհամարհեալ յամենեցունց սուտանէն։ Արհամարհանանեալ միայնակեացք զկարգեալն փոխարկեն, և պարզեալքն 'ի նախին միոյն։ Նախ քան զմարտն տառապի-

և երանեացին.. փորձիւ հոգւոյն.. այսր և անդր բերի.. փայտ զարդ ձեռաց.. որ ոչ կայ (կամ կամի) 'ի շինուած.. ագահութե՟ և պահոց.. Ընծայքն 'ի մարդկանէ 'ի վայր բերեն.. իսկ որ բարեբանէ (կամ իսկ բարեբանողն) օգտի.. Բարկութի՟ յարուցանէ բանսարկուն միաբանից 'ի մարտ (կամ Բարկութի՟ յարուցանէ բանսարկուն միաբանից 'ի մարտ).. և խիղճ արհամարհեալ յամենեցունց 'ի սուտանէն։ Արհամարհանաւ.. և պարզամիտքն 'ի նախն միոյն.. զիւրաւ պարտիք (կամ պարտեցիք).. մի

1 Այսպէս 'ի Հնագոյն օրինակին, զոր յոյժ. ծառ. գաւազ կրօնաւոր առէ։

նեալ, միանձունք, զի մի ըմբռնեալք 'ի չարէն՝ դիւրաւ պատրեսջիք ։ Ցածութիւն բազմազբաղ մտօք, միանձունք, մի արասցուք, զի նեղ է յարքայութիւն մտանել ։ Արկղանս համարեսցուք զանցաւորս, միանձունք, ըստ Պաւղոսի, զի զՔս շահեսցուք ։ Հուր կիզանող 'ի մարմնոյ ցանկասիրաց. այլ ծնանէր միանձունք հրով հոգւոյն սրբոյ լուցանել ։ Աղբիւր շնորհաց հոգւոյն սրբոյ 'ի միանձունս բղխէ, որք ողջախոհ միաբան կարգեալ են ։ Ի մարմնական 'ի զբաղման լեալ միանձունք՝ չաւայտեալ գթեն, և ոչ բերեն զգաստութիւն ։ Ի պարծանք մի տռնաւրիցեն միանձունք, զի մի արտաքոյ բարւոյ և առաքինութեանն գտցին ։

Հանապազ յիշեա զԱծ և մի մոռանար, և երկինք միտք քո լինին արքեայ: Սանձեա զլեզուն, քանզի որպէս ոչ գիտես՝ յածի և բազում վնաս հասուցանէ քեզ: Խնամեա զլեզու 'ի լաւութեն, քանզի բազում

Digitized by Google

դու, քանզի յառաջ բերէ յոլովակի զոր լաւագոյն է ճանաչել: Աշակերտ կրթութիւն օրինաց զմիտս, զի խոնարհեսցէ 'ի խոնարհողաց զչար յոլովացեալ կրթութիւն: Զառաքինութիւն ճանաչես. զվկայս բազում կենաց ստացիր: Ատեա զհեշտութիւն մարմնոյ, քանզի ընդ մարմնոյն և զոգին աղտեղի գործէ. այնքան միայն տուր որովայնի որքան պէտս ունիցի առնուլ, այլ մի որչափ ախորժէն: Մի՛ սիրեր զփափկանալ. վասն զի զբարեկամութիւն առ կենցաղս առնէ, և թշնամութիւն առ Ած յերկոցունց ծնանի: Ի բաց դարձիր 'ի կենցաղական խրախութեանց, քանզի այնպիսիք գայթակղեցուցանեն և ընկճեն զզուարճացեալսն: Ընչեղութի՞ւն եթէ ունիցիս՝ ցրուեա, և եթէ ոչ ունիցիս՝ մի՛ ժողովեսցես:

Զէն վարկիր զպահս, և զաղօթս պարիսպ, և լուալի զարտասուսն: Զոր մեղարն, զամենայն հառաչելով յիշեա, քանզի լինի անտի հոգւոց մշտնջենաւոր ապաշաւանք: Խնամ տար աղքատաց, վասն զի նոքա ընդ մեզ զդատաւորն հաշտեցուցանեն: Ի պէտս որբոց հաղորդեսցիր, զի 'ի ձեռն նոցա հաղորդութիւն քեզ լինի առ Ած: Զեկեղեցի իբրև զերկինս կոխեա, և մի ինչ 'ի նմա ասիցես և կամ խորհիցիս երկրայինս: Հաւկաւոր կարծեա զպատուականութիւն, և թող յԱծ յաղագս այնպիսիկ զհոգս: Աշխատեա զմարմինդ բարի վաստակովք, բայց ամենևին զգոյշ 'ի վայր ընկենուլ մի փու-

ինչ լաւեն գովելի է քան զանել: Գործեա խոնարհելով զխոնարհութիւն օրինացն, քանզի խոնարհեն զմիտս արմատակիլ առնէ զչարեացն խորհուրդս: Զառաքինութիւն քո ծանիր. իսկ վարուց վկայս բազում ստացիր, նա և զխիղճ: Ատեա զցանկութիւն մարմնոյ, քանզի ընդ մարմնոյն և զհոգի աղտեղացուցանէ: Մի՛ սիրեր զփափկութիւն կամ զզովութիւն աշխարհիս, զի թշնամութիւնս առ Ած յերկոցունց առաւ ծնանին: Հրաժարեա յերկրաւոր ուրախութենէ, քանզի կարող է տրտոկելով զխորախճանն: Մեծութիւն թէ ունիցիս, ցրուեա 'ի կարօտեալս. իսկ եթէ ոչ ունիս, մի ժողովեր:

Զէն համարեա զպահս ուրեք, և զաղօթս պարիսպ ամուր, և լուացան զարտասուս: Զմեղս խոստովանեալ նկատ առնէ զգեւս և լուծանէ զյանցանաց ամօթն: Զոր ինչ մեղուցեալ ես, զամենայն հառաչանօք յիշեա. և լինի այնուհետև անձին հանապազորդեալ զղջումն: Դարմանեա զաղքատս, քանզի նոքա զդատաւորն ընդ քեզ հաշտեցուցանեն: Ի պէտս որբոց հաղորդեա սիրով, քանզի նոքօք լինի քեզ հաղորդութիւն առ Ած: Լու համարեա զպատուականս, և յանձնեա այլ վասն ամենայն հոգաբարձութիւն: Աշխատեցո զմարմինդ բարեաց վաստակօք, իսկ ամենևին մի տկարացուցաներ: Գինի սակաւ ըմպիցես. զի

Digitized by Google

թացիս ։ Նոր գինի սակաւ․ զի որքան կարձեսցի, այն-քան բարեգործէ զըմպողն ։ Սանձեա զորովամոլութիւն, վասն զի մոլութեան է հայր՝ ըստ չափն արտաքս եղանելով ։ Ի հիւանդութիւնս աղօթիւք՝ նախ քան բժշկօք և դեղովք՝ վարեսցիս ։

Զքահանայս զամենեսեան պատուեա, իսկ առ բա-րիսն առաւել ևս ընթա ։ Սիրեա զԱյ տունս, տուն Այ և զքոյն պատրաստեա․ յեկեղեցւոջ դեգերեսցիս, վասն զի յամբոխից և 'ի դանդաչմանց յարտաքնոցն 'ի բաց վճարէ ։ Որքան յերկրի ժամանակեայքս են, մի զքեզ տրտմեցուցանեն հեռանալովն ։ Յորժամ խորհուրդ ինչ հեշտականի լինիցի քեզ, ընդդէմ կացո որ 'ի մարդկանէ թշնամութիւն է՝ և զԱյ զերկրպագութիւն ։ Մանաւանդ ամրացո զլսելիս և զաչս, վասն զի ընդ այդոսիկ ամե-նայն նետք չարութե 'ի ներքս մտանեն ։ Յորժամ աղօ-թեսցես, զխորհուրդսդ 'ի վեր առ Ած տար․ և եթէ հակեալ անկանիցի 'ի վայր, դարձեալ անդրէն հան ։ Ոչ դադարեն միտք ծնանել զխորհուրդս, բայց դու զվատթարսն 'ի բաց թողեա և զբարիսն մշակեա ։

Ուրախացիր 'ի խոնարհութիւնս․ քանզի 'ի նմանէ բարձրութին յոլով է, և անկանելն ոչ կարելի ։ Ճգնե-ցիր այնքան, որքան զինչուցանել զմարմնոյդ շարժումս կարասցես․ և եթէ հիւանդանայցես, յառողջութիւն զմարմինդ 'ի փափկութիւս մի բժշկեսցես ։ Զչար խոր-հուրդսդ այլոց բարի խորհրդովք ջնջեա․ զմտաւ ած

որքան նուազ է, այնքան օգտակար է որք ըմպեննն զնա ։ Ցանկեա ըղ-բարկութե, քանզի հայր է մոլեգնութեանց, և զանցանէ զչափովն ։ Ի հի-ւանդութե խնդրեա 'ի տեառն յառաջ քան զբժիշկս և զդեղս զաղօթս մատուցիր ։

Զքահանայս զամենեսեան պատուեա, սակայն լաւացն հնազանդ լեր և հպատակ ։ Սիրեա զտաճար Այ, սակայն և զանձնդ տաճար ամե-նասուրբ երրորդութեն արա ։ Որ ինչ յերկրի են, առժամանակեայ են․ այսուհետև մի տրտմիր մերժեալ 'ի նոցանէ ։ Յորժամ խորհուրդ անկանիցի 'ի քեզ չարութեան, յիշեա զամօթ մարդկան և զԱյ 'ի քեզ ։ Զգուշացիր լսելեաց և աչաց, քանզի ընդ նոսա առաւել նետք չարին մտանեն ։ Յորժամ յաղօթս կայցես, զմիտսդ առ Ած վերացո․ եթէ ցրուեալ իցէ, դարձո ։ Ոչ դադարեն միտք 'ի խորհուրդս ծնանելոյ, իսկ դու զապիրատսն կորզեա և զլաւսն ստացիր ։

Ուրախ լեր ընդ խոնարհութե․ քանզի որ 'ի նմանէ բարձրութիւնն է, չէք անկումն ։ Ճգնեա այնչափ, որքան ճնշել զշարժումն մարմնոյ․ այլ եթէ տկարանայ մարմինդ, զառողջութիւն տուր և մի զգդումն ։ Զչար խորհուրդս բարւոք խորհրդովն արտաքսեա, և մի անսար նո-ցա մերժանել․ խորհեաց զերկնաւոր բարեացն զվայելչութիւն, և ցան-

Digitized by Google

զերկնային բարեացն վայելչութի, և ոչ մի ցանկութիւն երկրի և որ աստէն՝ 'ի քեզ մնասցեն: Յորժամ յաղագս այ ինչ խնամայցես, եթէ նուաստ ինչ իցէ՝ բարձրացո, և եթէ բարձր՝ չափեա մի զած, այլ զքեզ. զի և ոչ զգուշագոյն իցէ առաւել քան զչափն որքան տանիցիմքն՝ ամբառնալ: Զվարթար մտածութիւս սերմն լեալ սատանայի հաւատա, և այնպէս նորա դադարեն, և որ սերմանեացն՝ ամաչէ: Պահեա զյոլով ծաղր, վասն զի թուլացուցանէ զոգին, և մեղկեալ զօրինացն սանձս մերկանայ: Զանձն 'ի գործ և յաղօթս որոշեա, զի այնպէս ոչ յողալս գտանէ առ մեզ մուտ սատանայ: Ի գործ լեալ և զօրինացն ընթերցուածս համարեա, յորժամ ընդ լեզւայդ և միտք կրթեսցեն զոր ինչ կամիցին կերքն գործել. Թէպէտ և 'ի գործ զձեռնդ կարկառեսցես, լեզուդ սաղմոսեսցէ և կամ միտքդ աղօթեսցէ. քանզի պահանջէ զմեզ ած միշտ յիշել: Զամենայն զգործս աղօթիւք կնքեա, և զնոյն ինքն զաղօթս: Եթէ կամեցիս զձեռաց գործս՝ ածայինս և ոչ հողեղէնս առնել, հաւատար քեզ լինիցին այնորիկ առ կարօտեալս:

Զուարճացիր սրբոցն պատահմամբ, վասն զի նոքօք և ած երևի. զճշմարիտ սուրբսն 'ի գործ որոշեա, զի խրախճանչիւք ծառ 'ի պտղոյն ճանաչի: Միշտ շահել ինչ 'ի տեսանելոյ զսուրբսն փութա, և պահեա զնոցա հայցուածսն և զջերմութիւնս, վասն զի օգտակարք են

կութի երկրաւոր քեզ ոչ տիրէ: Յորժամ վասն այ ինչ 'ի միտ առնուս, եթէ խոնարհ ինչ է՝ բարձրացո, իսկ եթէ բարձր՝ չափեա մի զած, այլ զանձնդ. զի ոչ սակաւ վտանգ է քան զչափն յանձնառնելեան մտաբերել հպարտութբ: Զապիրատ մտածութի սերմ սատանի զոլ հաւատա, քանզի այսպէս դադարէ, իսկ սերմանողն յամօթ լինի: Խնայեա 'ի ծաղուէ, քանզի թուլացուցանէ զանձն, և մեղկեալ՝ մերկանայ զշնորհօն: Ի գործ և յաղօթս զանձնդ բաժանեա, քանզի այսու ոչ գտանէ 'ի մեզ մուտ սատանայ: Գործ համարեա և զսուրբ գիրս ընթեռնուլ, յորժամ միտքն հանգերձ լեզուաւն ամբարեսցէ զհոգևոր շահն. Թէպէտ և 'ի գործ զձեռս շարժիցես, լեզուդ սաղմոսեսցէ և միտքդ աղօթեսցէ. քանզի խնդրէ ած միշտ յիշել 'ի մէնջ: Զամենայն գործ աղօթիւք սկսիր և գոհութբ կատարեալ կնքեա, և այնպէս ուղղեալ միշտ լինիս: Եթէ կամիս զգործս ձեռաց քոց աստուածով լինել, հատուցանեաց եղիցին՝ քեզ և կարօտելոց:

Ուրախացիր 'ի պէտս սրբոց, քանզի նոքօք յայտնի ած 'ի մեզ. որք արդարեւ սուրբք են, 'ի պտղոյ անտի ընտրեա, քանզի 'ի պտղոյ անտի ծառն ճանաչի: Հանապազ ջանացիր 'ի սրբոց վարուց շահել, և միտ դիր նոցա օգտակար հայեցմանց և խրատուց: Եւ յերկոցունց զանձն-

Digitized by Google

երկաքեան։ Զյանձնըղութիւն նահատակեցիր սրտիւ և 'ի սրբութիւն մարմնով, քանզի այսպիսի երկաքեան զքեզ տաճար իմ գործեն. այսպէս քո տաճարն պահեսցի որպէս ստացողին նորա և դատել հանդերձելոյն և զկերպարանս զիւր քեզ մաքուր հնարեցաւ տալ։ Աշխարհական խօսք զխորհուրդս յիմ որոշեն. յաղագս որոյ մի զայնօսիկ դու խօսեսցիս, և 'ի խօսողացն խորշեսջիր։ Յորժամ բամբասիցիս, դիտեա մի ինչ 'ի քեզ գործեալ իցէ լուտանս արժանաւոր. և եթէ ոչ իցէ գործեալ, ծուխ լեալ զլուտանսն համարեա։ Յորս զրկիցին, 'ի համբերութիւն ապաւինեա, և միայն անիրաւութեան առ զրկողն փափախեսցի։ Յորժամ ընչեղութիւն կամ փառս տեսանիցես կամ կենցաղական զօրութ, զմտաւ ած որ 'ի նոսա ապականութիւք են և փախչիս 'ի պատրանաց։

Ժուժկալեա 'ի նեղութիս, վասն զի յայնսիկ են առաքինութիւք, զոր օրինակ 'ի փուշոն վարդք բուսանին և մնանին։ Մի ինչ լեալ առաքինութեան զուգահաւասար պատուով վարկիր. վասն զի աչք են իմ, որպէս և ինքն անփոփոխելի է։ Զղջա զմեղաւոր պատուեալ, քանզի սուր նորա դատաստանին 'ի վերայ ձգի։ Մայր չարեաց զպղերգութիւն համարեա. զբարիս զոր ունիս՝ կողոպտէ, և զոր ոչն ունիս՝ ոչ ներէ ստանալ։ Յորժամ վատթար ինչ ոք գործիցէ և յայնսիկ չամաչիցէ, ծանր վէր և կործանումն 'ի յուսահատութիւն հասանէ։

ղութեան յարեա յանձն և զսրբութիւն մարմնոյ, քանզի սոքա երկոքեան տաճար առնեն իմ. իսկ դու այնպէս պահեա զտաճարն, որպէս հաճոյ է ստացողին և որ դատելոցն է զքեզ ած։ Աշխարհական խօսք ըղձիտս մեկնեն յիմ. վասն այնորիկ մի անսար նոցա, զի մի վրիպեսցիս յօգտակար խրատուցն։ Յորժամ բամբասիցիս յումեքէ, զգոյշ լեր՝ գուցէ յորմէ բամբասեցարն՝ գործեալ իցես. եթէ այնպէս իցէ, ուղղեա զախալանսն, ապա թէ ոչ՝ որպէս ծուխ լիցի։ Յորս զրկիս ինչ, 'ի համբերութիւն ապաւինեա, և միայն անիրաւութեան 'ի զրկողն գործեցին, և պատիժն 'ի վերայ 'ի քեզ։ Յորժամ մեծութիւն կամ փառս կամ երկրաւոր զօրութիս տեսցես զովեալ, ած զմտաւ զապականութիւն նոցա, և պարիս 'ի պատրանաց նոցա։

Համբերեա նեղութեց, քանզի 'ի նոցանէ առաքինութիւնք որպէս վարդ 'ի փշոց բուսանին և բուծանին։ Մի ինչ առաքինութեան նախապատիւ համարիր, քանզի աստուած իմ է, վասն որոյ անփոփոխելի է որպէս և նա։ Ակա զմեղաւոր 'ի փառաւորութեան իւրում, քանզի սուր դատաստանին գայ 'ի վերայ նորա։ Մայր չարեաց զպղերգութիւն իմա. զի որ ինչ բարին ունիս՝ կողոպտէ, և զոր ոչ ունիս՝ արգելու։ Յորժամ չար ոք գործելով ոչ ամաչէ, ծանր է վէրն և վհատութեան գլորումն։

Digitized by Google

Որքան ձանձրանայցես, զմտաւ ած զպսակն բարիք հաւատացելոց են պատրաստեալք և պտուղ 'ի քեզ հոգւոյն ուրախութիւն մերձենալ։ Պարտ և արժան է հաւատացելոցն նուաստանալ առ ամենեսեան, զի ամենից խոնարհութիւն՝ ստեղծականն նուաստութիւն ցուցանէ։ Ո՞ր ընկերին սիրոյ աղագաւ մի ինչ դանդաղեսցիս, որքան 'ի յաջողանել սէրն որ առ ած է՝ ոչ վնասիցի։ Մի առ որ տանց օրինաց ճյ անկեալ կայցես, և մի ախտասցիս. զի որ ինքեան է անարժան՝ որ պատուելն զնա նախապատիւ կարծէ։ Մի խօսակցիր չարաց, վասն զի զնոսա 'ի չարութիւն յորդորես, և դու պղծիս հաւասարութեամբ վերոյացն։ Նախատեա զմեղուցեալն և մի չարախօսեր զյանցուցեալն, վասն զի լուտանք յերկրորդումն և ցաւակից լինիցիք յառաջինումն։ Կեղ միշտ և խօսել զորացն իմ փութա, զի 'ի բարի նախանձ զոգին զրգռեն։

Եկեղեցի առանին իւրաքանչիւր ոք զմիտս ունիցի, և կատարել 'ի նոսա զօրէնս եկեղեցւոյ պարտիմք։ Եթէ կատարեսցին ժողովուրդք յեկեղեցւոջ, մերձեցիր անդ. և եթէ ոչ կատարեսցին, քեզ սաղմոսք և առաքեալ և աւետարան եղիցին խօսք։ Առաքինութեանց փառս 'ի սրբոցն տես. վասն զի անմահ են նոցա փառքն, և զկնի մահուն կան մնան։ Զչարութիւն մեռանողաց յայնժամ տեսցես, յորժամ զմտաւ ածցես զգեհեն եթէ հակառակ մեզ ունին զսուրն։ Եթէ խորտակեսցես զյանցաւորն, խառնեա և զցաւակցութեան բանս. ընկերն կակղանան և սիրեն լուսաւորն։ Եթէ ընդ սուրբս խօսեսցիս, համդերձ հոգւով և երեւելի կենօք զծածկեալսն մաքրեսցես. վասն զի հոտ ոչ առաքինութեան ծածկի։ Ի գործս բարիս միշտ ձեռնեցիր, մի երբէք ըն քանելով զայնոսիկ՝ կիսակատար անցեալ զնայցես. այնպէս ընթա զի հասանիցես, այն է առանց դադարելոյ. քանզի պարտ և արժան է յառաքինութիւն ընթանալ, մինչև արտաքս ելանիցեմք 'ի մերձաւոր կենցաղոյս յառպարիսէ։

Մ՚ի լինիր 'ի գործս առաքինութեան տաղտկացեալ,

Այս են՝ մեզ մեղեւալք յանձինս անմտաց, և որքան արտասուալից աղօթիւք և պահօք և խոստովանեալ ճշմարիտ։ Այսպէս խոնհեմագոյն և հանճարեղ խրատուք վերարկեալ 'ի գեղեցկագործեալս 'ի փառս ամենասուրբ երրորդութեան այժմ և յաւիտեանս։

վասն զի այնպիսեացն վաստակ անշահ 'ի վերայ վաստակոյ դնի։ Ի համբերութիւն նախ քան զվտանգսն նահատակեցիր, որպէս զի գտցես զնոսա 'ի վիշտսն սպառազինութիւն պատրաստական։ Մարտիր ընդ անկարգ խորհուրդս, և խօսեա առ նոսա որ օրհնաւոր ինչ խօսեցեալ իցէ։ Նազում փութով զակն 'ի կենցաղականացս 'ի բաց փախիցես. քանզի ծուխ 'ի նմանէ պղտորիչ է ոգւոյ, չարն 'ի վեր առեալ լինի։ Եթէ վատթար ինչ սովորութիւն յաղթիցես, առ սակաւ սակաւ 'ի բաց խլեա, և առանց աշխատութեան զանձինդ փուշ արտաքս մերժես։

Մաքուր լինելով՝ զԱծ մաքրապէս սիրեա, և քան զայն ամենեւին զամենայն վարկիր վերջացեալ։ Մի ինչ լինել քան զխնամատարութիւն փառաւորագոյն համարեսցիս. վասն զի մայր է օրհնաց, և Այ Թագաւորութեանն աթոռակից։ Եթէ կամիցիս տաճար լինել Այ, պատարագ մշտնջենաւոր զաղօթսն հանապազորդեան ընծայեա 'ի նմա։ Որ պղերգութեամբ կեցեալ է, մի առնուցուս խորհրդակից. զի որ 'ի չարիսն հրճուի, և զբարիս ատէ և խրատ տալ ամաչէ։ Զամենայն ապականութենէ 'ի բաց կացցես, և 'ի խորհրդական ընթերս հանապազօր մերձեցիր, քանզի այնպէս Քն մտաւմն մեր լինի։ Որովք խրատեսցիս, զայն մի տրտնջեր, վասն զի խրատէ իբրև զհայր, և գոհացուք իբրև բարի գործոյ արժանաւորք։ Զորժամ անպատուեսցիս՝, բերկրեսցիր. եթէ անիրաւապէս՝ վարձն յոլով, եթէ իրաւացի՝ ողջախոհանաս, թեթևանաս 'ի պատուհասիցն։ Ստուեր և ծուխ զարտաքին իրս կենցաղոյս և զհրճուելիս վարկիր, զի իբրև ստուեր ոչ կայ մնայ, և որպէս ծուխ փախչի, և իբրև զանիւ հոլովի։ Միշտ յառաջադիմանալ 'ի բարիսն փութա. զի որ փոքր 'ի վերայ նուազին ցնդէ զընչեղութիւն, առ սակաւ սակաւ հաւաքէ զամենեցուն նախանձելին։

1 Այսպէս ոմն. յօրինակին պատուեսցիս։

Digitized by Google

## ՃԶ

## ՅԱՂԱԳՍ ԱՂՕԹԻՑ*

Որ ոք կամեսցի անուշահոտ խունկս կազմել, զե-րեւելի կնդրուկն և զկասիա և զեղունգն և զստաշխն առ հասարակ համագերձեսցէ ըստ օրինացն, այս է չորից առաքինութեանցն ցոյցք. քանզի եթէ կատարեալք և հա-ւասարք համբերեսցեն, ոչ երբէք թուլասցին միտքն 'ի ճանապարհն : Արբեալ անձն 'ի ձեռն պատուիրանացն տեառն՝ յորջորջումն պատրաստէ, և ընդունող առնէ զնա հայեցական կարգաւորութեան և ուղղութեան : Աղօթք խունկ են մտաց առ Աստուած. արդ որպիսի՞ ինչ կարգաւորու-թեամբ պարտ է կալ մտացն առ Աստուած, զի զօրասցի 'ի հո-գեւորն առ արարիչն իւր, և խօսակից նմա եղեալ ա-ւանց միջնորդի : Եթէ երկրաւոր մարմնոյ երեւեալ փորձեալ Մովսէսի՝ արգելու մինչեւ լուծցէ զկօշիկս ո-տիցն, զիա՞րդ դու զգերական յամենայն զգայութեանց և մտաց տեսանել կամելով և խօսակից լինել նմա՝ ոչ լուծցես 'ի քէն զամենայն իմացուածս ախտաւորս : Նախ յաղագս առնլոյ արտասուս աղօթեա, որպէս զի 'ի ձեռն այդոյ կակղեսցես զներգոյացեալ անձին քում զխստու-թիւն, և պատմել զանձնէ քումմէ զանօրէնութիւն՝ տեառն քո, և 'ի նմանէ թողութեան համբերեսցիս : Պի-տանի լիցի քեզ աղօթս յառաջ քան զամենայն խնդ-րուածս առ 'ի յուղղութիւն, քանզի յոյժ բաղձայ տէրն քո արտասուալից աղօթս ընդունել 'ի քէն : Որպէս և ողբերս արտասուաց ունիցիս յաղօթսն, մի հպարտա-նայցես յանձին քում որպէս առաւել գոլ քան զբազումս. քանզի շնորհ օգնականութեան առաւել աղօթից 'ի տեառ-նէ է, որպէս զի յօժարութեամբ կատարեսցես 'ի պատմել զմեղս քո, և հաշտեցուցանել զԱստուած 'ի ձեռն արտասուաց :

Արդ մի այսու հետև յախտ փոխադարձցիս սրբեալ արտասուօք, զի մի առաւել բարկացուցես զտուողն

* Ի սորուն միոյ 'ի հին օրինակացն բանիցն մականունագրեցաւ յա-
ռոյ ընէղոսէ Փիլոքսենոս անուն էր նոյն գրուածոյն Նեղոսի :
սուրբ հօրս, և միւսն յորդասուա

շնորհաց. քանզի բազումք արտասուելով յաղագս մեղաց իւրեանց, և դարձեալ 'ի մոռացումն եկեալ արտասուաց, 'ի վաստակոցն մոլորեալք խոտորեցան յաղղութենէն: Այցջիր տաժանաբար և արտասուեա ըղձողութեամբ, և բացադարձուսցես զհոգեկան խորհրդոց պատահմունս. քանզի խռովեցուցանեն և աղմկեն զքեզ, որպէս զի լքանիցեն զքեզ 'ի պնդութենէ անտի: Յորժամ տեսանիցեն զքեզ դէպ ճշմարտապէս յօժարեալ յաղօթել, յայնժամ ստորագրեն իմացուածս իմիք, իբր թէ կարևոր իցէ. և յետ սակաւոյ բառնան 'ի քէն զյիշումն որ յաղագս նոցա, յապաղելով զմիտս առ 'ի խնդիրս նոցա. իբր զի ոչ գտանելով՝ յոյժ իմն հոգայ և տրտմի: Իսկ յորժամ կացցէ յաղօթել, յիշեցուցանէ նմա զխնդրեալսն և զուշաբարձեալսն. որպէս զի մեղմացեալ առ 'ի ծանրութի նոցա, կորուսցէ զներբպտղական աղօթսն: Ջանացիր կացուցանել զմիտս քո 'ի ժամ աղօթիցն խուլ և համր, և անսահ մնալ յամենայն արկածէ, զի ընդունելի լիցի: Յորժամ հանդիպեսցի քեզ փորձութի կամ հակառակաբանութիւն կամ զրգռութի առ 'ի հատուցմունս դիմակցողին[1], առ 'ի տրտմութի կամ անհեղեղ գոչել բանս, յիշեա զաղօթսն որ 'ի տէր, և ըստ նմին իրաւանց և որ 'ի նոյն ինքն 'ի քեզ է սոսահակեալ շարժումն՝ լռեսցէ բարի յիշատակօք: Ո՛ր ինչ արասցես առ 'ի վրէժխնդրութիւն եղբօրն որ զրկեացն զքեզ, ամենայն յոչ բարի լինի քեզ 'ի ժամ աղօթիցն:

Աղօթք են հեզութե և անբարկութե և անյիշաչարութե և սիրոյ բղխումն: Աղօթք են խնդութե և խաղաղութե և գոհութե առ 'ի լաւագոյնսն: Աղօթք են տրտմութե և տարակուսանաց և վշտաց հրաժարաղեղ և սփոփանք: Երթեալ վաճառեա զինչս քո և տուր աղքատաց, և առեալ զխաչն ուրասցիր զանձն և զաշխարհըս, որպէս զի կարասցես անզբաղապէս կալ յաղօթս: Եթէ կամեսցիս գովապէս աղօթել, ուրասցիս զանձնդ միշտ, և բազում դժնդակութիս կրելով յաղագս աղօթիցն իմաստասիրեա ստուգապէս: Որով ինչ և տաժանեան համբերեալ իմաստասիրեալ 'ի խորհուրդս մտա

1 Օրինակ մի զդիմակացողին. Երկու օրինակք զդիմացողին:

միոյ, զորս պտուղ 'ի ժամ աղօթիցն գտցես ։ Ջանկա՛ս աղօթել որպէս պարտ է, մի տրտմեցուցաներ զանձըն ուրուք. ապա թէ ոչ՝ 'ի նանիր վաստակիս և ընթանաս յայսմիկ ։ Թող, ասէ, զպատարագն քո առաջի սեղանոյն, և երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քո, և ապա եկեալ աղօթեսցես անխափանապէս. քանզի ոխակալութիւն տխրեցուցանէ զմտաւորական հոգին, և խաւարեցուցանէ զդիտաւորութեան աղօթսն ։

Որք տրտմութիւնս և ոխակալութիւնս կուտեն անձանց և կարծեսցեն աղօթել, նմանող են այնոցիկ՝ որ զջուր չափեն և 'ի ծակ կարաս արկանեն ։ Եթէ համբերող լիցես և հեզ և երկայնամիտ, միշտ պտղաբերեսցեն աղօթքն ։ Աղօթելով քո իրաւաբար, և այսպիսի ինչ լինիցին հիւանդքն, և կարծեսցես զքեզ իբրու 'ի տրտմութիւն ձգեալ, 'ի բաց տար՝ զի ոչ իրաւաբերիս առ ընկերն. և եթէ խուզես՝ գտցես, և եթէ մարթի՝ առանց տրտմութեանց տրամադրել 'ի գործոցն. վասն որոյ սահմանն հնարիւք ստացիր չգօշել տրտմական բանս ինչ ։ Զգոյշ լեր մի թէ կարծելով զայլ ոք բժշկել, զքեզ ինքն անբժշկելի կացուսցես առաջի տեառն, և տացես խափանումն աղօթիցն քոց ։ Ճգնելով յաղագս սրբութեան՝ գտցես խնամս 'ի տեառնէ, և իմաստուն երևեսցիս մարդկան, և ընդ աղօթականս լիցիս առ ա̃ծ ։ Ընդդէմ տրտմութեան սպառազինեալ բարկութեամբ և ոչ երկայնմտութեամբ՝ առաւել նիւթէ զտրտմութիւն, և այսպէս խռովեցուցանէ զիմանալիսն, և աղաւաղանէ զկարգաւորութիւն սուրբ աղօթիցն ։ Մի միայն բացադէմ տարապազով աղօթեր, այլ փոխեա զմիտս քո 'ի զգայութիւն՝ հոգևորական աղօթիցն ։ Ջերմեռանդ յանկարծակի կացեալ յաղօթել, խոկ երբեմն և յայժ վաստակեալ՝ ոչ հանդիպի դիտաւորութեան, զի ևս առաւել հայցեսցես և առաւել ունիցիս անկապուտ զուղղութիւնս ։ Երակացու եղեալ յանկարծօրէն հրեշտակի, 'ի բաց մերժէին 'ի մէնջ ամենեքեան՝ որք մարտնչին ընդ մեզ, և դառնին միտք յապահով բազում ողջամտութեամբ յաղօթս կալով. և երբեմն սովորական մտարիւ յաղաղակելով՝ մինչև

¹ Օրինակ Գ 'ի զգայնաւորութիւն. այլ օրինակ 'ի դիտաւորութիւն. յորինս զմտակցութիւն ։

միտք և ոչ թողման 'ի վեր հայել, քանզի նախկին որ-սացեալ է պէսպէս ախտիւք. սակայն խստաբար՝ հայ-ցեալ գտցէ, և բախեալ պնդութեամբ բացցի նմա:

Մի՛ աղօթեր քոց կամացդ կատարել, քանզի ոչ իսկ զուգին կամացն իմ. այլ մանաւանդ որպէս ուսարն՝ ա-ղօթեա ասելով, եղիցին կամք քո ինև. և յամենայն ախտից և 'ի ցասմանէ սրբեալ, այնպէս եղիցին կամք նո-րա 'ի քեզ. քանզի կամի և գիտէ զբարին անձանց մե-րոց առաւել քան զիմանալն և զխնդրելն մեր: Բազում աղօթելով խնդրեցի լինել առ իս որ ինչ լաւագոյնն հա-մարէի, և պնդեալ կացի 'ի խնդրուածսն վայրապար բռ-նաւորելով զկամսն իմ, և ոչ թողեալ 'ի նա՝ զի որպէս գիտէ զօգտակարն՝ զայն տնօրինեսցէ. և սակայն առեալ զոր ինչ կամէի՝ թախծեցայ յետոյ յոյժ, զի ոչ խնդրե-ցի որպէս զի կամքն իմ լիցին, քանզի ոչ այնպէս հան-դիպեցայ իրին որպէս կարծէի: Զինչ է բարի, եթէ ոչ ած. ապա աւրեմն նմա յանձն արասցուք զամենայն ինչ որ ըստ մեզ է, և բարի լինի մեզ. քանզի բարե-րարն ած բարեաց տուող է: Մի՛ հաւաստի ամենայն-ժամեայն յիմ զխնդիրսն խնդրեր, քանզի կամի առաւել ևս խնամով հաստատել աղօթիցն քոց. քանզի զինչ իցէ վերագոյն այլ, եթէ ոչ խօսակից լինել իմ և որ ըստ նորին զուգագոյութեան է անձառիցն հաղորդ լինել:

Անզբաղ աղօթելն է ծայրագոյն իմացուածք մտացն՝ որ յածայինսն միշտ խոկալ: Աղօթք են մտացն առ ած վերամբարձեալ յերկրաւորացս բերմանց: Եթէ աղօ-թել փափաքես, հրաժարեա յամենայնէ, որպէս զի զնա միայն շահեսցիս: Աղօթեա նախ սրբել յախտից, և երկ-րորդ փրկիլ յանգիտութենէ և 'ի մոռացմանէ, երրորդ յամենայն փորձութենէ և 'ի ծուլութենէ: Միայն խնդրեա յաղօթելն քո զսրբութիւն և զարդարութիւն և զարքայու-թիւնն իմ, նա և զամենայն վարս առաքինութեան, և այլն ևս տացի քեզ: Իրաւունք են ոչ միայն յաղագս ան-ձին աղօթել սրբութեան, այլ և յաղագս ամենայն հա-մատոհմից, որպէս զի հրեշտակացն օրինակի նմանեսցի միշտ: Զգոյշ լեր եթէ առաջի իմ կաս յաղօթելն քո, եթէ 'ի գովեստէ անտի պատրեալ ես և 'ի ստորին յու-

1 Նոր օրինակն՝ ի ժամաւր:

տուածն ձեռպեալ, և որպէս քօղ ստացեալ զերկպառածն ա-
ղօթից 'ի վերայ հոգւոյ քո: Եթէ ընդ եղբարս կացցես
յաղօթս և եթէ սաղմոսիցես, չանայցիր մի ձևով միայն,
այլ և զզգայութիւն մտքաւ աղօթել: Օ զգայութեն աղօ-
թից՝ բաղդատութիւն երկիւղիւ և զղջմամբ, և անձկու-
թեամբ հոգևորացն, պատմութեամբ յանցանացն յան-
ձանձնչ հեծութիւնս: Եթէ այսր և անդր դեռ ևս յա-
ծեսցին միտք քո 'ի ժամ աղօթիցն, ոչ ևս ծանեար՝ ե-
թէ միայնակեցաբար աղօթես, այլ և աշխարհական ի-
ցեն՝ զարտաքին բնականութիւն գեղեցկացուցանելով: Յա-
ղօթս կալով՝ զուշաւորութիւն քո զգուշութեամբ պահես,
զի մի գուցէ զերումն[1] առաջի դիցէ քեզ, այլ առ 'ի զե-
տուութիւն յառաջակայութեան յորդորեսցէ զքեզ. քանզի
յոյժ բնաւորեալ են միտք կողոպուտ լինել յուշաւորու-
թենէ անտի 'ի ժամ աղօթիցն որ առ Աստուած: Անմխեալ
'ի բաց անցցէ զքեզ, և կամ երևմանս ինչ ցուցցէ յա-
ղօթելն քո, և կամ նոր ինչ բերելով հոգս, և կամ զե-
րեսս տրտմեցուցանողին:

Յոյժ չարանախանձ է դևն մարդոյ աղօթելոյն, և ա-
մենայն մեքենայիւք հնարաւորի ապականել զարդս զե-
տուորութիւն, և ոչ դադարէ խնացուածս իւրոց շարժե-
լով 'ի ձեռն յուշաւորութեան և յամենայն ախտս դրդե-
լով 'ի ձեռն մտածմոյն, որպէս զի խափան արասցէ բա-
րիոք ընթացիցն և առ Աստուած ելողութեան: Յորժամ բա-
զում ինչ արարեալ դժնդակ դիւին և ոչ կարասցէ խա-
փան լինել փութոյ ջանացողի աղօթիցն, դոյզն ինչ թոյլ
տայ, և ապա վերստ հատուցանէ յորժամ յաղօթս կա-
ցեալ լինի. և կամ 'ի բարկութիւն բորբոքեալ վնա, եղ-
ծանէ զառ 'ի յաղօթիցն հաւաքեալ իւրու զբարիոք
մտածմունս, կամ առ 'ի ցանկութիւն անառակական գրգ-
ռեալ զմիտսն: Յորժամ յաղօթս կացեալ որպէս պարտ
է, ահն կալ որոյ ոչ է պարտ, և կացջիր քաջութեամբ՝ պա-
հելով զպատուղ քո, քանզի յայս 'ի սկզբանէ կարգեցար
գործել և պահել. արդ մի այսուհետև գործեալ՝ թո-
ղուս անպահեստ զվաստակեալն, ապա թէ ոչ՝ ոչ ես
օգտիցիս: Ամենայն որ հաւաքեալ աղօթիւքն լինի ձգա-
կատաւմարտ 'ի մէջի մերում 'ի սիրտ դիւացն, ոչ յա-

1 Ցօրինակն դաշտակէր զերումն առաջի դիցէ. յառաջեալ 'ի յառաջակայն.

Digitized by Google

ղագս այլ իրի լինի, բայց վասն հոգեւորական աղօթիցն. քանզի յոյժ դիւրամարտ է նոցա կործանումն եւ մարդոյ փրկութիւն առ ած: Զինչ կամ է դիւացն ներգործել 'ի մեզ. որովայնամոլութիւն, պոռնկութիւն, արծաթսիրութիւն, բարկութիւն, ոխակալութիւն եւ այլ ամենայն ախտք. եթէ այսոքիւք զանձն գրաւէ, ոչ կարէ աղօթել որպէս արժան է. քանզի միոյ' մասին ախտից տիրեալ, ոչ տայ բնաւորապէս նմա շարժել 'ի հոգեւոր ջանսն:

Զառաքինութիւնս գործեմք վասն բանից եղելոց, եւ զսոսա յաղագս բնաւորեալ Բանին. իսկ սա 'ի կարգաւորութիւն աղօթից երեւել սովոր է սրբոց: Կարգաւորութիւն աղօթից են անկիրք[1], ծայրագոյն փափաքմամբ 'ի բարձրութիւն իմանալի կատարելով զիմաստասէր եւ զհոգեւորական միտս: Ոչ միայն ցանկութեան եւ սրտմտութեան պարտ է տիրել՝ որ ճշմարիտ աղօթելն կամեսցի, այլ եւ ախտաւոր իմաստից արտաքոյ լինել 'ի սրբութիւնս: Ոչ որ անախտութեան պատահեալ՝ անդէն եւ ճշմարտապէս աղօթէ. քանզի մարթէ ինչ եւ սակ իմաստ գոլ, եւ 'ի տեսակս նոցա զբաղեալ եւ հեռանալ յայ: Որ սիրէ զած, ընդ նմա որպէս ընդ հօր միշտ խօսակից լինի, բացադառնալով յամենայն ախտաւոր իմաստից 'ի հոգեւորսն: Ոչ եթէ յորժամ ոչ յամեն միտքն 'ի սակ ինչ իրաց իմաստս՝ արդէն եւ յաղօթիցն տեղի հասեալ. քանզի մարթ է 'ի տեսութիւն լինել իրացն, եւ 'ի բանս նոցա խորհել. որ եւ եթէ սակ ինչ բանք իցեն, այլ սակայն որպէս տեսակ ինչ իրաց գոլով տպաւորեն ձեւով իմն զմիտսն եւ հեռի առնեն զնա յայ: Թէպէտ եւ գերատեսիկ[2] քան զմարմնաւոր բնութիւն միտքն լինիցին, ոչ եւս կատարելապէս զտեղի այ տեսին. քանզի մարթի յիմանալիս գոլ ծանօթութիւն եւ պէսպէս[3] առ նոսա:

Եթէ կամեսցիս աղօթել, այ հաւատա, որ կատարէ զուխտ ուխտաւորին. եւ կարդա առ նա ասելով. սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո. այս ինքն սուրբ հոգիդ եւ միածին որդիդ, որ հոգւով եւ ճշմարտութեամբ սրբեն զմեզ: Որ հոգւով եւ ճշմարտութեամբ աղօ-

1 Զօրս օրինակէ միւսոյ:

2 Յօրինակին անկիրք. յոյնն անախտ:

3 Օրինակ մի գերատեսակ. այլ օրինակ գերատեսիկ:

4 Յոյնն պէսպիսանալ:



Digitized by Google

թէն, ոչ եւս յարարածոց ատտի զխմբագործողն մեծարէ, այլ յանձնէ իւրմէ զնա վերագոյնէ: Եթէ ա̄ծաբան իցես, աղօթեսցես ճշմարտութբ̄ եւ ստուգեալ ուղղափառութբ̄. միոյ ա̄ծութեան հանցես զփառս եւ զօրհնութիւնս երկրպագութբ̄: Յորժամ միտք քո 'ի բազում ցանկութէ մի ըստ միոջէ որպէս մերժի իմն 'ի մարմնոյ, եւ զամենայն ինչ որ 'ի զգայութեանց կամ յուշաւորութէ կամ 'ի բարուց լինել կարծեաց բացադարձ լինիցի, յայնժամ համարեաց մերձ լինել 'ի սահմանս աղօթիցն: Սուրբ հոգին վշտակից լինի տկարութեան մերում. թէպէտ եւ պղծաբարոյ' գոլով եմք, սակայն գայ առ մեզ. եւ եթէ զմիտս մեր գտանէ ճշմարտասիրութբ̄ աղօթելով, հանգչի 'ի վերայ մեր, եւ զամենայն շրջափակեալ զմեօք' զխորհրդոց կամ զխմաստից փաղանգս եղծանէ, հրաւիրելով զմեզ 'ի ցանկութիւն հոգեւորական սուրբ աղօթիցն: Այլք ամենեքեան այլայլութեամբ մարմնոյն ներքսանկեն մտացն խորհուրդս կամ կարծիս կամ տեսութիւնս. իսկ ա̄ծ ընդդէմ սոցին առնէ, յինքեան իսկ միտս հանգուցանէ եւ ներքսադրէ 'ի նմա զգիտութիւն որպէս կամի, եւ զշարժումն մտաց եւ մարմնոյ 'ի սահմանս ինչ յապահովէ: Նա որ, բաղձալով ճշմարիտ աղօթիցն' եւ 'ի բարկութեան յանձնեալ կամ յոխակալութեան, արտաքոյ իցէ խելագարութեան. քանզի նմանն է որ արտես կամի լինել, եւ զաչս իւր պղտորէ անլոյս:

Եթէ աղօթել փափաքես, մի ինչ' յորոց հակառակեն աղօթից' գործեր, որպէս զի սուրբ հոգին ճանապարհորդեսցէ ընդ քեզ: Մի ձեւով ինչ համարեսցիս զա̄ծութիւն յանձին քում' աղօթելով, եւ մի ինչ 'ի կերպարանս թոյլ տար տպաւորել մտացդ. այլ աննիւթապէս առ աննիւթն մատիր, եւ հանճարեղ իցես: Պահեսջիր յորոգայթից հակառակորդաց. քանզի դէպ լինի յաղօթելն քո պարկեշտաբար եւ անխռովապէս' յանկարծօրէն վերակացու լինել քեզ կերպարան ինչ օտարապէս եւ այլազգէմ առ 'ի հպարտութիւն ձգել զքեզ, կարծել զա̄ծութիւնն անդ գոլ, որպէս յանկարծօրէն յայտնեալ քեզ քանակութիւն գոլ հաւանեցէ. բայց ա̄ծութիւն անքանակ է եւ անձեւ: Յորժամ ոչ կարացէ

1 Օրինակ մի բծաբարոյ:

Digitized by Google

զուշն շարժել զաղօթելոյն մախող դևն, յայնժամ ըղխառնումն մարմնոյն քննաւորէ՝ առնել օտարոտի ինչ առ աչօք երևումն, և կերպարանել զնա 'ի նորուն՝ իսկ սովորութի ընդդիմակաց լինելով, հանապազորդելով, դիւրաւ զկշեալ խոնարհի. և որ առ աննիւթ և անտեսակ գիտութիւն ձեացեալ է, և ոչ պարտի զծխոյ փոխանակ լուսոյ բուռն հարեալ անգիտութեան: Կացջիր 'ի վերայ պահու քո՝ պահելով զմիտս քո 'ի մտածութեանց 'ի ժամ աղօթիցն, և կացուցանել ըստ իւրում լռութեանն. որպէս զի որ վշտակիցն լինի ոգիստացն, և առ քեզ եկեսցէ, և յայնժամ եկեսցէ պարգև աղօթից բարգաւաճեալ 'ի շնորհսն: Ոչ կարասցես սրբաբար աղօթել 'ի մարմնաւոր՝ իրս պատաղեալ. քանզի աղօթք են բացադրութիւն կարծից հիւթոցս: Ոչ կարէ կապեալն ընթանալ, և ոչ միտք ախտից ծառայելով՝ զհոգևորական տեղի տեսանելով. քանզի ձգեն և տարաբերեն յախտաւորական մտաց, և ոչ ունին կացումն սուրբ:

Յորժամ սրբաբար և անախտաւորաբար աղօթեն միտքն, յայնժամ ոչ ևս ձախակողմանն, այլ աջակողմանն դղրդին 'ի վերայ դևքն, և ստորագրեն նմա փառս այ և ձեռողութի ինն՝ որ զգայութեանն հեշտական է, ըստ կարծեաց և կատարելապէս հանդիպել նմա յաղագս աղօթից դիտաւորութե. և զայս մեկնեաց առաքինազործ՝ ամն այր 'ի անափառական ախտէն լինել և 'ի դիւէ անտի՝ որ մերձենայ ըստ լսելեաց տեղւոյն: Կարծեմ զիւէն հպելով յաստացեալ տեղին, որ զմնօքն է լոյս՝ փոփոխել որպէս և կամեսցին. և այսպէս շարժեալ անափառական ախտին խորհուրդս, կերպարանելով ըղմիտս թեթևական առ 'ի կարծիս աստուածայինն և էական գիտութեան. և ոչ ևս թախանձեալ այնոյիկ 'ի մարմնաւորական և 'ի այլուծ ախտից, այլ սրբաբար որպէս եթէ կացեալ առաջի կարծէ, ոչ ևս ներգործութի ինչ հակառակելով լինել նմա. ուստի և կարծէ աստուածայինն յայտնութիւն զայ, որ լինի առ նմա դիւէն յոյժ դժընդակութեամբ ստանալով և 'ի ձեռն խելաց ծորդեալ լոյսն

1 Յոյնն իսկ նա ունելով սովորութիւն 'ի խորհուրդս դիւրաւ զկշեալ. և առ աննիւթ և անտեսակ գիտութիւն ձեացեալ՝ պարտի զծուխս փոխանակ լուսոյ ընդունելով:

2 Օրինակ Գ 'ի նիւթաւոր:

3 Օրինակ Դ աղօթքնաւոր:

Digitized by Google

այլայլելով և կերպարանելով զնա որպէս կամիցին ասացի։ Աստուծոյ հրեշտակին 'ի վերայ կացեալ՝ բանիւ միայն զամենայն հակառակին ներգործութիւն դադարեցուցանէ 'ի մէնջ, և շարժէ զմիտս մտացն անմարմնապէս ներգործելով 'ի լուսաւորութիւն Ս. Հոգւոյ։

Յաւելն՝ 'ի Յայտնութեան՝ կրել հրեշտակին խունկ, որպէս զի տացէ՝ զաղօթս սրբոցն, թուի ինձ զայս շնորհըս գոլ 'ի ձեռն հրեշտակին ներգործել. քանզի զխութիւն ներքսանէ ճշմարիտ աղօթից, կալով այնուհետև արտաքոյս ամենայն սասանութեան ձանձրութեան և ցրուութեան մտաց։ Տաշտք խնկոց աղօթք գոլ ասին սրբոց, զոր քսան և չորս ծերքն կրեն։ Տաշտք համարեալ սէրն որ առ Ած, այս ինքն զկատարեալ և զհոգևորական սէրն՝ յորում աղօթս ներգործեն հոգւով և ճշմարտութեամբ։ Յորժամ համարեսցիս չև ևս պիտոյանալ արտասուաց վասն մեղաց յաղօթելն քում, գիտեա որչափ հեռի ես յԱյ. հարկաւորեալ ընդ նմա գոլ հանապազ, և ջերմեգոյն ևս արտասուեսցես։ Այլ գիտելով զչափ քո՝ մտադիւր ևս սգայցես թշուառացուցանելով զանձն ըստ Եսայեայ. զխորդ պիղծ գոլով և 'ի մէջ նոյնպիսի ժողովրդոց բնակեալ, այս ինքն հակառակորդաց, իշխել առաջի տեառն զօրութեանց կալ։ Եթէ ճշմարտապէս աղօթեսցես, բազում հաւանութիւն գտցես. և հրեշտակք կցորդեսցին քեզ որպէս և Դանիէլին, և զբանն որ լինելոցն են՝ լուսաւորեսցեն քեզ։ Գիտեա եթէ սուրբ հրեշտակք հրաւիրեն զքեզ յաղօթս և բաղկացուք լինին մեզ ուրախանալով 'ի նմին և աղօթելով. ապա եթէ պղերգանամք և ընդունիմք խորհուրդս հակառակորդս, յոյժ զարհուրեցուցանեմք զնոսա. որ եթէ նոքա վասն մեր այսչափ ինչ ջանան, իսկ մեք և ոչ վասն անձանց կամիմք աղաչել զԱծ. այլ քամահելով զմեր սպասաւորութիւնս, և զնոցունց տէր և զԱծ թողեալ՝ դիւաց պղծոց խօսակից լինիմք։ Աղօթեա հեզաբար և անխռովաբար և սաղմոսեա իմաստասիրաբար և յորջորջմամբ, և եղիցիս որպէս ձագ արծուոյ 'ի բարձունս համբարձեալ։

Սաղմոսերգութիւն զախտս խաղաղէ և զխառնակութն

1 Օրինակին Յաւելն.. և կրել. Եղաւ ըստ յաւելին։

2 Օրինակին զանձանց տացէ. յաւելեալ 'ի յաւելն։

Digitized by Google

մարմնոյն հանդարտեցուցանէ, իսկ աղօթք ներգործեն և պատրաստեն միտս զիւր ներգործութիւն: Աղօթք են վայելչական ներգործութիւն արժանաւոր մտաց, այս ինքն լաւագոյն և սուրբ ազդումն և պիտանի: Սաղմոսերգութիւն պէսպէս իմաստութիւն է, իսկ աղօթք յառաջադէմ է աննիւթական և պէսպէս գիտութիւն իմաստի առ Ած: Գիտութիւն բարիոք է, քանզի բաղկակից է աղօթից. զիմանալի զօրութիւն մտաց զարթուցանելով՝ 'ի տեսութիւն Ածային դիտաւորութեան լուսաւորէ: Եթէ ոչ երբէք իցես առեալ զշնորհս աղօթից, սաղմոսերգութեան հպատակեա և առցես: Մնէր, ասէ, նոցա առակ առ 'ի յաղօթել հանապազ և մի ձանձրանալ. ապա և դու մի ձանձրանար և մի տրտմիր, զի 'ի նմին ոչ առեր, քանզի յետոյ առցես. զի ասէ հուսկ յետոյ յառակի անդ. Թէպէտ և յԱյ ոչ երկնչիմ և 'ի մարդկանէ ոչ ամաչեմ, այլ վասն աշխատ առնելոյ զիս կնոջդ՝ արարից զիրաւունս դորա. Նոյնպէս և Ած արասցէ վրէժխնդրութիւն՝ գոչելով առ նա 'ի տուէ և 'ի գիշերի: Փութանակի քաջալերեա այսուհետև ժուժկալեալ տաժանաբար յաղօթսն: Մի կամիր որպէս քեզ թուի, այլ որպէս Այ հաճոյ լինել որ լաւ քէն. և եղիցիս անխռով հոգացող յաղօթսն քո: Թէպէտ և ընդ Այ կարծիցես գոլ, զգոյշ լեր 'ի պոռնկութեան դիւէ, քանզի յոյժ է պատրող և մախացող. և կամի որոգայն իսկ գոլ քան զշարժումն և սթափումն մտաց քոց, որպէս զի յԱյ անջատել զնա՝ առաջի նորա կալով ահիւ և երկիւղիւ:

Եթէ աղօթից խնամ ունիս, պատրաստեա զանձն քո 'ի հարուածս դիւաց, և ժուժկալութեամբ զառ 'ի նոցանէ տանջանացն համբերեա. քանզի որպէս վայրենի գազանք դիմեսցեն 'ի քեզ, և զամենայն մարմինդ քո չարչարիցեն: Պատրաստեա որպէս հմուտ ձգնող զանձն քո. և եթէ յանկարծօրէն տեսցես երևումն ինչ, չհիանալ. և եթէ սուր համբարձեալ 'ի վերայ քո կամ ջահ ինչ լուցեալ առաջի աչաց քոց, չխռովել. և եթէ կերպարանս ինչ վտիտ և արիւնատես, ամենևին չտագնապել յանձնէ. այլ կացջիր՝ դաւանելով զբարիոք դաւանութիւն, և դիւրաւ տեսցես 'ի վերայ թշնամեաց քոց ընդկործանումն: Որ զցաւագինսն կրէ տևելով, և խնդագունիցն պատահեսցէ. և որ վտտիցն ժուժայ, և 'ի հեշտականացն ոչ ելցէ անմասն:

Զգոյշ լեր մի երբէք պատրեսցեն զքեզ չար դեւքն երեւմամբք իւրք, այլ լեր միտացի փոփոխմամբ յաղօթսն. և աղաչեա զԱծ, որպէս զի թէ 'ի նմանէ իցէ խնացուածն, նա լուսաւորեսցէ զքեզ. ապա թէ ոչ՝ փութանակի զմոլորեցուցիչն հալածէ 'ի քէն, և քաջալերեա զի ոչ կացցեն շունքն՝ քո ջերմապէս զգաւազանէն որ առ Ած պաղատանացն բուռն հարեալ. քանզի նոյնժամայն աներեւոյթ և անյայտ զօրութբն Այ գանահար եղեալք հեռաւոր հալածականք եղիցին: Զիրաւի է զնենգութիւն նոցա անգիտանալ, զի 'ի ժամանակի բաժանեն զինքեանս դեւքն. և եթէ համարեսցիս օգնութիւն հայցել, մտանեն այլք 'ի ձեւս հրեշտակաց զառաջինսն հալածելով առ 'ի պատուել քեզ 'ի նոցանէ, և կարծել զդեւսն 'ի սուրբ հրեշտակս գոլ: Խոնարհութեան բազում խնամ տար և արութեան, և ոչ երբէք զըկուսին դիւաց մերձեսցի յանձն քո, և տանջանք ոչ մերձեսցին 'ի յարկս քո. զի հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո պահել զքեզ. և անյայտաբար զամենայն հակառակներգործութիւնս հալածէ 'ի քէն: Դայթմունս և թնդմունս և խաշափս ձայնից և տանջմունս դիւաց լուիցես՝ որ մաքուր աղօթից խնամ տանիցի, այլ ոչ զանգիտեսցէ և ոչ զխորհուրդսն մատնեսցէ, այլ ասասցէ առ տէր. ոչ երկեայց ես 'ի չարէ, զի դու տէր ընդ իս ես. և որ սոցին նման են աղօթիցն բանք: Ի ժամու այսպիսի փորձութեանց սուգ լըտոյգ և յերկարեալ աղօթս մատուցիր առ Ած: Եթէ սպանայցեն քեզ դեւքն յանկարծօրէն երեւեալ և զարհուրեցուցանել զքեզ և յափշտակել զմիտս քո, կամ որպէս գազանք մխասել զմարմինս քո, մի հիանար 'ի նոցանէ և մի հոգ տանիր սպառնալեաց նոցա. քանզի երկեցուցանեն զքեզ փորձել, եթէ արդեօք ուշ դնիցես նոցա, կամ թէ ամենեւին քամահեսցես զնոսա: Եթէ Այ ամենակալի և խնամագործի և նախախնամողի ամենեցունց առաջի կաս յաղօթելն քո, ընդէ՞ր այսպէս անամնաբար կաս առաջի. որպէս զի թողեալ զանազայծ[1] երկիւղ նորա, 'ի ձանձէ և 'ի մժեխէ երկնչել. կամ թէ չլցէ՞ լուեալ 'ի տեառնէ Այ քումմէ երկիցես. և դարձեալ՝ յորմէ սարսեն և դողան ամենայն յերեսաց զօրութեան նորա:

1 Օրինակ մի զանազայծ:

Digitized by Google

Որպէս հաց բուծանէ զմարմին և առաքինութիւն զհոգին, նոյնպէս և մտաց հոգևոր աղօթք են սնունդ։ Մի՛ փարիսապէս, այլ մաքսաւորաբար աղօթեա՛ 'ի տեղի տաճարի աղօթից, որպէս զի և դու արդարասցիս յայն։ Ջանացիր չանիծանել ումեք յաղօթսն քո. զի մի դուցէ զոր շինեսն՝ զնոյն քակես, գարշելի առնել զաղօթսն քո։ Հազարապետն բիւրուց քանքարաց խնդրատեսցէ զքեզ, որպէս զի ոչ թողցես պարտաւորին, և ոչ հանդիպեսցիս թողութեան. քանզի մատնեաց, ասէ տէր, 'ի ձեռս դահճաց։ Ացաղլեա զկարիս մարմնոյ յառաջակացմանն աղօթից քոց, զի մի դուցէ խթեալ 'ի լուոյ կամ 'ի մըժխոյ՝ կամ 'ի ճանճոյ՝ զջլեսցես զմեծ շահավաճառ աղօթիցն։

Ազդ՝ եղև մեզ որպէս զի ումեմն 'ի սրբոցն աղօթելով այնչափ ինչ հակառակէր չարին, որպէս զի 'ի նմին 'ի տարածել նորա զձեռսն յառիւծ ձևանալ, և կանգնեալ 'ի դէպ՝ զառաջինսն իւր զձիրանսն առաջի և անտի 'ի վերայ երկուց թիկանցն ցցեալ ճանկղին. և ոչ կամէր անջատել 'ի նմանէ, մինչև զձեռսն խոնարհեցուցէ. իսկ նորա ոչ երբէք զնոսա զիջուցեալ՝ մինչև զառաւօտական աղօթսն կատարէր։ Այսպիսի ինչ ծանեաք, և որ 'ի դքին լսեաց, զՅովհաննէ ասեմ, որ մենաւոր էր հաստակաւ և առոյգ շնորհիւ, մտաւորութեամբ միայնացեալն, որ անշարժ կայր յամս կցորդութեան. որ դիւրին 'ի տեսիլ միշտակայ պատարագեալ զնուաստ և ծամեալ զմարմին նորա և յերեսս նորա զգայնելով, ոչ ինչ յիւրոց հանդիսիցն դադարէր։ Ընթերցեալ արդեօք իցես զվարս տաքենեացւոց միայնակեացն, որպէս ասեն՝ եթէ մինչ զեռ խօսէր և ուսուցանէր աբբայ Թէոդորոս զեղբարսն, իժք

։ Մի ոմն 'ի սրբոցն աղօթելով այնչափ ինչ հակառակէր չարին, որպէս զի 'ի նմին 'ի տարածանել նորա զձեռսն՝ յառիւծ ձևանայր և կանգնէր ընդդէմ նորա, և զձիրանսն առաջի և անտի 'ի վերայ երկուց թիկանցն եդեալ ճանկացողքն. և ոչ կամէր անջատել 'ի նմանէ, մինչև զձեռսն խոնարհեցուցանէր. իսկ նորա զձեռսն ոչ զիջուցանէր՝ մինչև զառաւօտական աղօթսն կատարէր. քանզի ոչ ինչ զանգիտէր յայնմանէ, մինչև յաղթեալ եղև թշնամին յաղօթից սրբոյն, և փախստական եղեալ ոչ ևս այլ երևէր։ Ընթերցեալ իցես զվարս տաքենեացւոց միայնակեացն, որպէս ասեն՝ եթէ մինչդեռ խօսէր և ուսուցանէր աբբայ Թէոդորոս զեղբարսն, իժք երկու ելին կացին առ ոտս նորա։ իսկ նորա անխռով

1 Երկու օր. 'ի ծխոյ։

երկու եկին կացին առ ոտս նորա. իսկ նորա անխռովաբար մնացեալ՝ ունելով զոտսն 'ի վերայ նոցա, կայր անշարժ՝ մինչև դադարումն եղև հոգևորական խրատուն և աղօթիցն. և ապա եցոյց զնոսա եղբարցն, և պատմեաց զիրսն զոր ոչ գիտէին։ Յաղագս այլոյ ուրումն դարձեալ ընթերցմաք հոգևորական եղբօր, եթէ յաղօթել նորա իժ մի եկեալ մերձեցաւ յոտս նորա. իսկ նորա ոչ յառաջեալ խոնարհեցոյց զձեռսն մինչև զսովորական աղօթսն կատարեաց, և ոչ ինչ վնասեցաւ՝ որ սիրեացն զԱծ առաւել քան զինքն։ Զգաստ կացցես յաղօթսն քո, և ուրացեալ զանձն քո հանդերձ ամենայն զգայութեամբ 'ի միամիտ խորհուրդս մաքուրս։ Այլոյ ուրումն սրբոյ պնդաբար աղօթելով յանապատի առանձինն, դիւաց եկեալ որպէս զնդակ ինչ, և յօդն թօթափեալ, և ընդունէին դարձեալ 'ի վերայ լաստի մինչև յերկուց շաբաթուց աւուրս. և ոչ ամենևին կարացին առ փոքր մի զինչուցանել զմիտս նորա 'ի ջերմեռանդն աղօթիցն որ առ Ած էր։ Այլոյ ուրումն դարձեալ Ածասիրի աղօթից խնամատարողի՝ յանապատի անդ ճանապարհորդելով, հրեշտակաց երկուց 'ի վերայ կացեալ 'ի միջօրէին ճանապարհակցեալ ընդ նմա. իսկ նա բնաւ ոչ նայեցեալ ընդ նոսա, զի մի զուցէ 'ի լաւագունիցն զրկեսցի. քանզի զմտաւ ածէր զառաքելոյ բանն որ ասէ. ոչ հրեշտակք և ոչ զօրութիւնք և ոչ այլ ինչ արարած կարեն մեկնել զմեզ 'ի սիրոյն Քրիստոսի։ Լուսաւոր հրեշտակաց լինի միաբանակեաց 'ի ձեռն ճշմարիտ աղօթից, անձկալով տեսանել զերեսս հօրն ամենակալի որ յերկինս է։

Մի խնդրեր ամենևին կերպարանս ինչ կամ ձև՝ կամ գոյն ընդունել յաղօթսն։ Մի փոխանակ[3] հրեշտակ տե-

վարար մնացեալ, ունելով զոտս 'ի վերայ նոցա կայր անշարժ՝ մինչ դադարումն եղև հոգևորական խրատուն և աղօթիցն. և ապա եցոյց զնոսա եղբարցն և պատմեաց զիրսն, քանզի ոչ գիտէին զչար իժիցն 'ի ներքոյ ոտից նորա։ Առէին և վասն եղբօր ուրումն՝ եթէ յաղօթելն նորա իժ մի եկեալ մերձեցաւ յոտս նորա. իսկ նա յառաջեալ ոչ խոնարհեցոյց զձեռսն մինչև զսովորական աղօթսն կատարեաց, և ոչ ինչ վնասեցաւ եղբայրն այն՝ որ սիրեաց զԱծ առաւել քան զինքն։

1 Օրինակ մի խնամատարողի։
2 Օրինակ մի ձևագոյն ընդունելը։
3 Յոյնն Մի՛ ցանկար հրեշտակս տեսանել։

Digitized by Google

սանելոյ կամ զօրութիւնս կամ զՔրիստոս զգայապէս, զի մի գուցէ բոլորատար[1] խելաքախ եղիցիս, զգայլ փոխանակ հովուի տեսանելով և երկրպագելով թշնամեացն դիւաց: Սկիզբն պատրանաց մտաց սնափառութիւն է, յորմէ շարժեալ մտացն՝ ձևօք և կերպարանօք պարագրել փորձէ[2] զաստուածութիւն: Այս զիմն ասացից. երջանիկ են միտք, որ 'ի ժամ աղօթիցն կատարեալ անկերպութիւն ստացեալ մաքուր: Երջանիկ են միտք, որ անզբաղ աղօթելով առաւել փափաքումն առ Աստուած միշտ յաճախ յարէ: Երջանիկ են միտք, որ 'ի ժամ աղօթիցն աննիւթական և անստացիկ լինի որբեալ յամենայնէ: Երջանիկ են միտք, որ 'ի ժամ աղօթիցն կատարեալ անզգայութիւն ստացեալ յերկրէս: Երանելի է միայնակեաց, որ զամենեցուն փարելի միշտ զանձն ունիցի 'ի հոգևորսն: Երանելի է միայնակեաց, որ զամենեցուն փրկութիւն և զզարգացումն որպէս զանձին՝ ուրախութեամբ և մտադիւրութեամբ տեսանէ և լսէ և խորհի: Միայնակեաց է, որ յամենեցունց անջատեալ է 'ի չար զբաղմանց, և յամենայն բարիս մերձ է: Միայնակեաց է, որ միայն յամենեցունց անարգ զանձն համարի, և անվրէպ զանձն տեսանիցէ: Արդ այսպէս աղօթեա առ տէր, միշտ 'ի բարի գործս պարապել և ոչ նուաղել 'ի սիրոյն որ առ Աստուած. յամենայն 'ի ստութենէ և յերդմանէ և 'ի բարկութենէ 'ի բաց լեր, և փափաքեա աղօթել, և գտցես շնորհս 'ի տեառնէ:

Եթէ հոգւով կամիս աղօթել, մի զոք ատեր, և ոչ ունիցիս մնացախուղ՝ դիմադրել քեզ 'ի ժամ աղօթից լուսաւորութեան: Յանձնեա Աստուծոյ զպէտս մարմնոյդ. յայտ ևս եղիցի և հոգւոյն յանձնառութիւն Աստուծոյ: Եթէ պատահեսցես խոստովանութեան, թագաւորեսցես. նմանապէս և վտանգաւոր աղքատութեան տարեալ գոհութեամբ: Մի անգամներ հրաժարելով զպրուատեալ աղքատութիւն և զնեղութիւն զնիւթս աղօթիցն: Միջնորդեսցեն քեզ մարմնաւորական առաքինութիւնք առ անձնաւորականս[3], և անձնաւորականքն առ հոգևորականսն, և սոքա առ աննիւթ և էական գիտութիւն: Զգոյշ լեր աղօթելով ընդդէմ խորհրդոց, եթէ դիւրաւ զօղեսցիս, եթէ ուս-

1 Օրինակ մի բոլորաքար:

2 Օրինակն չկայր փորձէ. յաւելաւ 'ի յաւելն:

3 Օրինակն առ անձնաւորական և զհոգևորականս և առ աննիւթ. եղաւ 'ի յաւելուածն:

Digitized by Google

տի այս եղև. մի՛ գուցէ դարանամուտ կրեսցես, և պատրեալ հատուցես անձինդ վնաս:

Յորժամ դևք ստորագրեսցեն քեզ խորհուրդս և դարձեալ դրդեն զքեզ, որպէս թէ աղօթել ընդդէմ նոցա կամ հակառակել, որք կամին երբէք տեղի տալ, որպէս զի պատրեալ հպարտասցիս յաղագս քո, որպէս թէ աղօթիւք որբովք երկեցուցեր: Եթէ աղօթես ընդդէմ ախտից կամ դիւաց՝ որք մրցին ընդ քեզ, յիշեա զասացեալն. հալածեսցես զթշնամիս իմ և հասից նոցա, և ոչ դարձայց 'ի նոցանէ մինչև սպառեսցին նոքա: Եւ զայս 'ի դէպ ժամու առասցես, բազում խոնարհութեամբ զանձինդ սպառազինեալ ընդդէմ հակառակորդաց: Մի՛ կարծեր սանձեալ զառաքինութիւն՝ եթէ ոչ ցմարմին և ցարիւն վասն նորա ճակատամարտիցես. քանզի պարտ է մինչև 'ի մահ հակառակ կալ մեղացն ջանաւոր և անպարտասանապէս ըստ աստուածայնոյն առաքելոյ: Եթէ օգուտ լինիցիս այլոց և վնասիցես զանձինդ, որպէս զի արհամարհեալ՝ ասիցես ինչ կամ գործիցես ապիրատ, ցուցիցես չարիւն զբարիս հաւաքեալսն. քանզի գիտողութիւն է և այս չար դիւացն, վասն որոյ զգուշանալ արժան է մտաւորաբար: Գործանաց դիւացն միշտ ակն կալջիր հոգալով՝ զխորդ բացակայցցես 'ի նոցա ծառայութեանց որսացեալ 'ի կորուստ: Ի գիշերի խուսեսցանել անձամբք խնդրեն զհոգևորական վարդապետն ամենաչար դևքն, և 'ի տուընջեան 'ի ձեռն մարդկան 'ի նեղութիւս և 'ի զրպարտութիւս և 'ի վտանգս արկանելով: Մի՛ հրաժարեր 'ի թափչաց. զի թէպէտ և կոփեսցեն կոխելով, և ձգելով քերեն, այլ սակայն ողջոյն առնել պայծառանան 'ի տէր հոգևորական հանգերձիւ: Որովհետև ոչ հրաժարեցեր յախտից, այլ միայն քո հակառակ են ճշմարտութեան և առաքինութեան, ոչ գտցես խունկ անուշութեան 'ի սրտի քում:

Աղօթել անձկայ որ փոփոխեալ է յաստեացս և ըղձալիս յերկինս ունի հանապազ, ոչ միայն սոսկ բանիւ, այլ և գործով հրեշտակային՝ և գիտութ. աստուածոյն: Եթէ միայն 'ի դժուարակրութեան յիշեսցես զդատաւորն որպէս ահաւոր և անաչառ դատով, ոչ ևս ուսոր ծա-

1 Օրինակ մի հրեշտակային աստուածայնագոյն:

ռայել տեառն ահիւ և ցնծալ առաջի նորա երկիւղիւ. զայս գիտացես զի և հոգևորականդ թերևս յուրախութիւն առնել ևս դողութբ պարտ է պաշտել զարարիչն ած։ Մտացի է այր որ յառաջ քան զկատարեալ ապաշխարութիւն 'ի բաց եկաց 'ի տրտմողական սգոյ մեղաց իւրոց, և որ հրոյն յաւիտենից որպէս դատեալ 'ի տեառնէ 'ի խոստովանութիւն փութացաւ։ Որ մեղօք ըմբռնեալ է և բարկութբ, և համարձակի անպատկառ ձգիլ 'ի գիտութի ածային կամացն և կամ յաննիւթական աղօթս յածային խորհուրդն, այնպիսին ընդունի զառաքելական սաստն և զվտանգն և զդատապարտութիւնն. վասն այսորիկ ասէ. պարտի անձին շուք դնել վասն հրեշտակաց այ, և պատկառանս և զխոնարհութի վայելչաբար ունել յաղօթսն այ։ Որպէս աչացաւի ոչ է օգուտ յոր հասարակ, և յոյժ ջահալի արեգական տեսիլ յերկար և առանց .քօղոյ, նոյնպէս ախտաժէտ և պիղծ մտաց. որ ըստ հոգւոյ և ճշմարտութե ահաւոր և գերազանց յաղօթից սպասաւորութի ամենևին օգտի ինչ ոչ, այլ առաւել 'ի ցասումն զարթուցանէ զածութիւնն։ Եթէ որ ընծայիւ մատեաւ 'ի սեղան անդ՝ ոչ ընկալաւ անկարօտն և անաչառն մինչև հաշտեցաւ ընդ մերձաւորին իւրոյ տրտմեցելոյ առ նա, տես որչափ պահրստեան պէտք են և ընտրութե, որպէս զի ընդունելի լիցուք այ խունկ իմանալի սեղանոյն։

Մի ուրախանար 'ի նիւթականս և մի 'ի փառս սոցա. ապա թէ ոչ՝ ոչ ևս 'ի թիկունս քո, այլ յերեսս հարցեն մեղաւորք, զի եղիցիս նոցա ուրախութի 'ի ժամ աղօթիցն՝ ձգեալ և պատրեալ 'ի նոցանէն 'ի խորհուրդս տարօրէնս։ Աղօթք աղօթս խնդրելով՝ աղօթս գտցեն. քանզի աղօթք զգուշալի են, թէ և այլ ինչ ևս հետևեացին բարի գործք, որ և պարտ է միշտ ճեպել։ Որպէս ամենայն զգայութեց լաւագոյն՝ տեսանելիք են, նոյնպէս և ամենայն առաքինութեց աղօթք են վերագոյն։ Աղօթից գովեստ ոչ եթէ քանակութին է, այլ որակութիւնն. և զայս յայտ առնեն նոքին եկեալք 'ի տաճարն կալ յաղօթս. և դարձեալ. դուք յորժամ յաղօթս կայցէք, մի լինիք շատախօսք. և որ ինչ նոյնպիսիք զհետ ասացան։ Զորքան 'ի համեմատութիս մարմնոյ հայիս, և միտք քո 'ի վայելչական յարկիցն շրջա-

հայլեն, ոչ ևս երբէք զոտեցլի աղօթիցն տեսեալ, այլ դեռ ևս հեռի է 'ի քէն երջանիկ սորա ճանապարհ։ Վասն զի յորժամ կացեալ յաղօթել և զերազանց լինիս քան զայս ամենայն ուրախութիւն, յայնժամ ճշմարտապէս կրեալ ես զպտուղ աղօթից՝ որ 'ի փառս ամենասուրբ երրորդութեանն կատարի այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԺԵ

# ԽՐԱՏ ԳԻՏԱՆԻ *

Լաւ է յստակ խորհրդով ննջել, քան պիղծ խորհրդով աղօթս մատուցանել և վարձս ոչ առնուլ։ Եթէ սխալանս գիտես զեղբօրն, խրատեա զնա և յանդիմանեա. եթէ չանսայ քեզ, խորշեսջիր 'ի նմանէ. և եթէ զայդ չառնես, հաղորդ ես չարեաց նորա, և ոչ ունիս սէր ընդ նմա։ Վասնզի եթէ վասն ա̃յ տրտմեցուցանես զեղբայրն, մի խիղճ պահեր. այլ եթէ վասն նախանձու, երկիր յայնժամ։ Նոյն որ վասն ա̃յ կամի ճգնել, յամենաւորացն ասանիցի զօրհնակն և զպատուհասն։ Սպասուածասէրն իւր կամացն որպէս թշնամւոյ զգուշանայ։ Մխեա զմարմինդ նեղութեամբ և զխորդ երկիւղիւն ա̃յ, զի աներկիւղ լիցիս։ Որ զերկիւղածն ա̃յ սիրէ, սիրոյ արձան կանգնէ առ ա̃ծ, և անհաշտ թշնամութիւն առ սատանայ։ Զսէր և զերկիւղ բնութիւն առաւ քեզ, որ ընդ վայր չաշխատիս։ Որչափ զրկիս և նեղիս և համբերես, անապական գանձ գտանես պատրաստեալ քեզ յերկինս. ապա թէ տրտնջես և նեղապրտիս, ընդ վայր դատիս և անվարձ ելանես։ Զօրացիր չարչարանօքն Ք̃ի և համբերեա վասն նորա, զի թագաւորեսցես անանց բարուեցն։ Տրտնջողն թերահաւատ է, զի տրտունջն թերահաւատութեան նշանակ է. զի ոչ հաւատայ՝ թէ դատաւորն կայ և հատուցումն։ Արդ եթէ դու ես պատճառ չարին, արտաքոյ լեր սրբութեանն մինչև առողջացիս. և եթէ այլ ոք է, փախիր 'ի տրտնջողէն։

* Քաղուած է կիստամանէայ 'ի ճառէ աւուր որ յանուն Եղիշէայ էրեմի յօրինակս ծնէ։

Digitized by Google

Հոգևոր առաջնորդն ն̃ծային հուր է․ զապականարար ախտն այրէ, և զգիջութի̃ ցամաքեցուցանէ, և կրօնաւորական հանդիսիւ փորձէ որպէս զոսկի 'ի բովս, և անաղտ սրբութ̃բ զեղբարս ա̃յ ընծայէ, և ինքն ըստ հաւատարիմ ծառային թագաւորէ 'ի վերայ տասն քաղաքաց։ Տգէտ և անընտրող առաջնորդն 'ի բժշկելն խօցէ, և 'ի յուղղելն խոտորակէ, 'ի սիրոյ տեղին զատելութիւնն դնէ և յատելութե̃ տեղին զսէր, և խառնափընդոր կենօք զեղբարսն անվաստակ առնէ։ Արդ որ 'ի գարունն 'ի հանգստեան կայ, ձմեռն 'ի սովս և 'ի սառնամանեաց սատակի։ Որ աստ զմարմինն փափկացուցանէ, 'ի յաւիտենական հանգիստն ոչ կարէ մտանել։ Հնազանդեա սիրով, աղօթեա յուսով, աշխատեա հաւատով, և պայծառացիր յերկնաւոր հարսանիսն։ Օ ինչ շնորհս որ տայ քեզ ա̃ծ, 'ի պէտս կարօտելոց սպասաւորեա զայն․ զի շնորհքն աղքատացին, և դու փառաւորեսցիս։

Կրօնաւոր մարմնասէր խոզի նման է, և 'ի ծովացեալ մեղացն հեղձնու։ Կեղծաւոր կրօնաւոր պարտակ է սատանայի, ընդ իւրեաւ ունելով զսատանայ։ Արտասուք լուացումն է մեղաց, և յոգւոց հանել՝ ապաշխարութի̃։ Ապա որ զամենայն ժամանակս կենաց իւրոց կրօնաւորական հանդիսիւ անցուցեալ է 'ի սուգ և 'ի տրտմութիւն, նա զարդիւն̃ զերանական փառսն ոչ ժառանգեսցէ․ զի նմա ամենայն փառս երանականս պատրաստեալ կան 'ի ժառանգութիւն նորա։

Յարաշափորձութի̃ բազում պատերազմս ունի, քննեա և 'ի վերայ հասիր․ եթէ դու ես պատճառ յաճախ կերակրելով և պարարտ, և 'ի խորհրդոցդ թողլ տալոյն, արտաքոյ լեր սրբութե̃ մինչև առողջասցիս։ Ի մարմնական պէտսն արգել զսաղմոսն։ Սանուկ կրօնաւոր թէպէտ և զերկինս բանայ, մի մտաներ․ թէպէտ և զհրեշտակի վարս ունի, մի հաւատար՝ որ ընդ հնազանդութե̃ չէ։ Որ զեղբայրն տեսանէ և տրտում կայ, յաղթեալ է նա 'ի կեղծաւորութե̃ն։ Որ առանձինն նստի և զուարթ կայ, գերեալ է 'ի սատանայէ։ Պարտ է կրօնաւորին տրտում և տխուր կալ իբրև սգաւոր ա̃յ․ իսկ որ զըւարթ կայ և ծաղր արձակէ, չէ բարձեալ նա զխաչն Ք̃ի։ Բերանք մեր հոտեալ են 'ի պահոց, և լեզուք մեր

Digitized by Google

ընդարձակեցեալ 'ի սաղմոներգութիւն. և զոր ած խնդրէ՝ ոչ ունիմք, այս ինքն զսէր, զխոնարհութիւն. և չըթամիք սիրեմք զած, և 'ի զուր աշխատիմք: Զյօժարութիւն արգել, թէպէտ և բարեգործութիւն իցէ, և զհնազանդութիւն հաստատես: Չէ պարտ կրօնաւորի 'ի զբօսանս երթալ ընդ մօր կամ ընդ քեռ, և ոչ հաց ուտել անդ, և ոչ համբուրել պարտ է զմայր կամ զքոյր, և ոչ նըստել մերձ անպատշաճաբար, այլ ամօթխածութեամբ իբր ընդ օտարի. քանզի կրօնաւորութիւն է կարգ սրբութեան և պարկեշտութեան:

*Տուր զսիրտ քո ածոյ. և յորժամ ցանես խորհուրդ քո, դու տես՝ թէ չունիմ սիրտ որ ցանեսում: Կրօնաւոր որ ցանկալ է, ոգին դիւահարեալ է. արտաքոյ լինի սրբութենէ մինչև առողջանայ: Եթէ չունիս աղօթք հոգևոր, ստացիր աղօթք մարմնաւոր, և տայ քեզ ած աղօթք հոգևոր: Նախ քան զմիաբան ժամ աղօթիցն զարթուցեալ լուսաւորեսցէ զքեզ խորհուրդք. գոհացիր զածոյ, չեն վտանգ. աղօթք անբաւղձանք զէն են քո, նետանձնութիւն ընդդէմ սատանայական նետանձնութեանն և խաբէութեան: Զսատանայի նետանձնութիւնքն տես որպիսի խորհուրդք են: Չէ պարտ կրօնաւորին զիւր ծննդեան տեղիս տեսանել: Կրօնաւոր յորժամ վախճանի, եթէ հարկաւոր զգեստ իցէ, զայն չէ պարտ կրօնաւորացն տանել, այլ յաղքատաց տալ, զի յանարժանս համարեալ է: Չէ պարտ կրօնաւորին մանկանց կենակից լինել, և ոչ զգեղ նոցա տեսանել: Չէ պարտ կրօնաւորին ընդ կանայս յուխտ մտանել, և աղօթել ընդ նոսա բնաւ չէ պարտ կրօնաւորին: Յորժամ 'ի խո-

